



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

**B**

1,170,691





ԵՐԵՎԱՆԻ ԳԱԱՐԴԱՐԱԿԱՆ

三九四

ԳԱՐԴԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ

Digitized by Google

七

中译本由U.S.小仲马著

မြန်မာနိုင်ငံ၊ ရန်ကုန်တော်မြို့ပြည်နယ်၏



4. b'1, b'8 + 9

• S9HEP050 • 世界和平 • 全球共存

1903 - 983

Digitized by srujanika@gmail.com



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՂԻՋԵՒ

ԵՒ

Ք Ն Ն Ա Դ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

ՄԻԳՈՅԱԼ, ՓՈՀԱՐԻ ՓՈՐԹՈՒԳԱԼ.

ՆՈՒԻՐԵ

ԱՌ

ԳՈՒՍՏԱԿ ԻՒՐ ԱԶԻՔՆ

ԵՂԻՇԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՎԱՍՆ


# ՎԱՐԴԱՆԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԵՒ

ՔՆՆԱԴԱՏՈՑՈՒԹԻՒՆՔ

ՄԻՔԱՅԵԼ ՓԱՇՈՅԻ ՓՈՐՓՈԽԳՈԼ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ԴԱՅԱՐՈՒ

1903 - 06ՆԲ

$$(\mathcal{O}^{\otimes k})^t$$

$$\mathbb{C}\times\Lambda_{\mathbb{C}}$$

$$\mathbb{C}=\mathbb{C}^N$$

$$v_0 \in \mathbb{C}^m$$

EREN  
840  
2109198

1



Андрей Чарльз.

## ՄԻՔԱՅԵԼ ՓԱՇԱ ՓՈՐԹՈՒԳԱԼ

**Մ**իքայել, փաշա ծնաւ յօրթաքէօյ, 1842ին։ Հայրը, Յովսէփ Փորթուգալ, արքունի ակնագործաց վերատեսուչն էր փողերանոցին մէջ, ուզիղ և պարկեշտ անձնաւորութիւն մը, որ իւր խզճին դէմ երբեք չէր մեղանչած, և ինքզինքը յարգել ու մհծարել տուած էր իւր պաշտօնակցաց։ Հայ կաթողիկէ հասարակութեան պատուաւոր անդամներէն մին ճանչցուած էր։

Կանուխէն ջանացած էր տափաւորել իւր զաւկին մտաց մէջ խըստարարոյ առաքինութեան մը առածները, տաածներ՝ որոց Միքայէլ Փորթուգալ նախանձախնդիր պահպանողն եղաւ։ Ահաւասիկ օրինակ մը այն բարուց տապինութեան, որ գոհացում մը եղաւ իւր անձին համար և բարի օրինակ մը զաւկին։ Օր մը, կանչելով զաւկը, Յովսէփ Փորթուգալ կը բանայ իւր զգրոցը և կը տարածէ պատանեկին աշաց առջե բազմաթիւ մեծագին ագամանդներ, զոր իրեն յանձնած էին։ Կը տեսնե՞ս, կ'ըսէ, այս գանձը որ ահագին հարստութիւն մը կը ներկայացնէ։ լաւ, կարող եմ ափ մը առնել տակէ և պահել առանց նշմարուելու, որով և քեզ մեծ հարստութիւն թողուզ։ Գիտե՞ս ինչ է որ կ'արգիլէ զիս։ Չեմ մտածեր երկնաւոր պատուհասը հանդերձելոյն, այլ զիս իմ անձիս առջե անարգելու երկիւղը՝ կորսնցընելով զայն որ աշխարհիս ամենամեծ հարստութիւններէն վեր է, այսինքն պատիւս, որ միշտ առաջնորդած է զիս կենաց մէջ։ Մանուկը, չափահաս եղած, պիտի ապացուանէր թէ այս դասը լաւ ըմբռանած էր։

Միքայէլ Փորթուգալ իւր նախական ուսումն առաւ Օրթաքէօյի թագոյին Ա. Լուսաւորչեան վարժարանին մէջ, ուր սկսաւ յանախել երբ վեց տարեկան էր։ Կանխահաս իմացակամութիւն մը, անյազ փափաք մը ուսանելու, յարատեսութիւն մը զոր ոչինչ կարող էր կասեցնել, և որ զարմանք կը պատճառէր այնշափ մատաղ

Հասունի մէջ, կ'ընեն զինքը միշտ իւր դասունիկերաց առաջինը։ Մինչ գեռ ասոնք զանազան խաղերով կ'անցընեն իրենց զրոսանաց ժամերը, Միքայէլ գտասրանին մէկ անկիւնը քաղցւած կը կարգայ կամ դաս կը սերտէ։ Հայրը իւր զաւկին այնշափ ուսմանց ցանկութենէն քաջալերուած՝ կ'որոշէ զայն Բարիդ դրկել, որպէս զի կարենայ հետեւիլ հոն լիկէնի բարձրագոյն ընթացքին։

Մուրատեան գարժարանը, ուր ժամանակին բաղմաթիւ հայ երիտասարդներ առած են հաստատուն ուսմունք և գիտութիւն Գաղղիական մեծ գարժարանաց ծրագրին համաձայն, ընդունեցաւ զինքը իւր ծոցին մէջ։ Ազնիւ բնաւորութեամբ, ուշիմութեամբ և ինքնամփոփ մասադրութեամբ, ինչպէս նաև հաճելի կերպարանկով, Միքայէլ խոյն զրաւեց իւր զաստիարակաց համակրութիւնը և աշակերտակցաց ուշըն ու յարգանքը։ Հ. Գարրիկէ Վ. Այվազովսկիի, Հ. Աստվածայէլ Վ. Թրեսնացի և Հ. Վ. Կոնդ Ամիշանի նման գաստիարակաց ազգեցութեան ներքե, որք զինքը մասնաւոր գործով մը կը սիրէին և ուշի ուշով կը դիտէին իւր մասց զարգացումը, արագընթաց կը յառաջադիմէր ուսմանց մէջ։ Քաջ խելամուտ եզաւ ազգային մատենագրութեան, զոր չափազանց կը սիրէր, և առանձինն ուշագրութեամբ ուսումնասիրեց հին ազգաց պատմութիւնն, ինչպէս նաև քաղաքային զիտութիւնները. — երեք տարրերն՝ որ պիտի կադմէին պետական և զրագէտ մարդուն հանգամոնքը։ Ուսումնասիրեց նաև Գաղղիկէն և Անդղիկէն լեզուներն, զորս կը խօսէր և կը զրէր անսխալ։ Վարժարանին մէջ ընդհանուր տիրութիւն մը տիրեց, ինչ որ կը յայտնէր զաստիարակաց և աշակերտաց տածած ուշըն որ Միքայէլ, երբ սա վեց տարիէն ստանալով իւր բարձրագոյն ուսմանց վկայագիրը՝ մեկնեցաւ Բարիդէ 1858ին և գարձաւ կ, Պոլիս։

Այլ այն խթանն՝ որ անդադար կը մղէր զինքը ստանալու նորանոր ժանօթութիւններ, չպիսի դագրէր գործելէ ընտանեկան հանգարակին մէջ ևս, այնշափ քաղցր, երկարատե պանդխութենէ մը յետոյ։ Խոկոյն իրաւագիտութիւն և Տաճկերէն, Պարսկերէն և Արարերէն լեզուաց ուսմունք յաջորդեցին լիկէնական ընթացքին և զրաւեցին իւր բոլոր ժամերը։ Ի զուր մայրը կը յորդէր զինքն զրօսանք ընելու։ «Մայր, անկարելի է ժամերս կորսընել, հարկ է որ մարդ ըլլամ»։ Ահա իւր մօր տուած պատմախանը, մինչդեռ իւր սիրելի զաստիարակներէն մէկուն կը զրէր Բարիդ, «Հակայարար կը յառաջանամ Տաճկերէնի մէջ»։

Արքապէս 1860ին կը սկսի իւր քաղաքական առարկէզգին, և Յ. Գրոն թարգմանութեանց Սենեկին մէջ պաշտօն կը վարէ: Քիչ առենէն արտաքրոյ կարգի պաշտօնով Կրեաէ կը զրկուի, ուրկէ յրած յայտաբարութիւններովն ու տեղեկագիրներով ինքզինքը կը ծանօթացնէ: Տարի մը վերջը աղերտազրաց Գննիչի պաշտօնին կը կոչուի Պետական Խորհրդոյ Հանրային շխութեանց ձիւղին մէջ, և յետոյ, 1867ին, Վերատեսուչ կ'ընտրուի Պալաթիոյ Արքատան: Ետակ կը տարակուաէին, նկատելով իւր երիտասարդ տարիքը, թէ կարող ըլլայ այնպիսի զժուարին և կարեոր պաշտօն մը վարել: Բայց երիտասարդ Տեսուչը ցայց առուաւ իւր ձեռնչասութեամբն ու յարատեսութեամբ՝ թէ կարողութիւնը չէր պակսեր իւր քով, և մտնաւանդ թէ երիտասարդական առուգութեամբ զօրացած իւր կորուին պէտք կար հիմնապէս բարւոքերւ և կանոնաւորելու համար հնաւանդ գրութիւնը՝ զոր կը ներկայացնէր նոյն ժամանակ Պալաթիոյ Արքատանունը: Այս կարգուեցաւ Նախագահ Անուղղակի Տրոց Վարչութեան: և յետոյ թողլով այս պաշտօնը, ուր կոչուած էր իւր տնտեսագիտական ծանօթութեանց համար, ընդունեցաւ Դրոշմաթղթոց Վարչութեան Վերատեսութիւնը, հաստատութիւն մը՝ զոր կատարելապէս վերակազմեց: Երբ այս Վերատեսչութիւնը ջնջուեցաւ, քիչ ժամանակուան համար անցաւ վերատին յառաջազոյն վարած պաշտօնին, և 1887ին անուանուեցաւ Խորհրդական Ելեմոնից Նախարարին Ալլ իւր անողոք ուղղութիւնն ու անխոնջ փոյթը Պետութեան բարգաւաճութեան համար՝ միշտ կը մղեն զինքը իւր Վեհապետին և երկրին շահերը անհատական շահերէ գերազան համարել: Վերջապէս անլողիչատ մաքառելէ յետոյ, փոթորիկը կը ծագի և հետեւանք կ'ունենայ Նախարարին պաշտօնէ մէկուսացումը: Յաջորդը կ'ընդունի նախարարութիւնը՝ պայմանաւ որ Արքայէլ Փորմուգու քաշուի իւր պաշտօնէն: Վեհ. Առւլթանը կը յանձնէ Արքայէլ Էֆէնտիի Երկրագործական Դրամատան Տեսչութիւնը, և միանգամայն Անուղղակի Տրոց առժամկայ մատակարարութեան պաշտօնը, մինչև ցանուանումն Բայկի փաշայի:

Երկրագործական Դրամատանը սաղմաային վիճակի մը մէջ կը գտնուէր, երբ Արքայէլ Փորմուգու կոչուեցաւ անոր Տեսչութեան, և չէր ակնկալուեր արագընթաց զարգացումն ու փայլուն կացութիւնը զոր պիտի ստանար ընդ հուպ:

Ահա ինչ որ կ'ըսէ «Վերջէթ» օրաթերթի յօդուածագիր մը այս դրամատան մասին, որ հիմնուեցաւ 1886ի վերջիրը. «Արքայէլ

Փորթուգալ անմիջապէս ստանձնեց Դրամատան Տեսչութիւնը։ Կազմակերպման կանոնագրութիւնը պատրաստած էր Նուրի Պէյ, յայնժամամբ Վերատեսուչ Երկրագործութեան։ Մատակարարութիւնը յանձնուած էր Տեսչին, օժանդակ խորհրդով մը, որուն կը նախազահէր Պետական Խորհրդուկան մը։ Միքայէլ Փորթուգալ այս դրամատան Տեսչութիւնը վարեց երեք տարի, և խիստ բարգաւաճ զիրգի մը հասուց զայն՝ հաստատելով ոչ նուազ քան 450 գործակալութիւն։ Դրամատան արգի կացութիւնը կը յենու նախարարական հրամանագրի մը վրայ, որով հաստատուած է նորոգ կազմակերպութիւնը վերաբննեալ կանոնագրութեան՝ զոր յօրինած է Միքայէլ Փորթուգալ, և յաւելուածական յօդուածի մը վրայ՝ որ պատրաստուած է նոյն Տեսչութեան ձեռամբ։ Կը Հետևի արեմն թէ Երկրագործական Դրամատառը կերպով մը անձնական ձեռակերան է Միքայէլ Փորթուգալի, զոր կայսերական հրովարտակ մը կոչած էր Տեսչութեան զրուխը»։

Եւ ինքն իսկ կ'ըսէր երբեմ։ «այս հաստատութիւնը ինձ կը պարտի իւր կեանքը, և կը սիրեմ զայն զաւկի մը պէս՝ որուն ծնունդ կու տաս, որուն զարգացումը անձկանօք կը զիտես, և զոր կը ինամես ու կը զօրացնես ապոգայ մաքառումներու զէմ»։ Միթէ սա այն հաստատութիւններէն է՝ որոց արգիւուիլ կը թուի ամէն զարգացում, անոր համար որ համրուած են անոնց օրերը։ Վեց տարիէ ի վեր կարգուած էր Համբարար կայսերական Գանձուն, երբ մահուընէն քիչ առաջ արաստուալից աչօք կը լսէր՝ թէ որպիսի վանդի մէջ կը գտնուէր Դրամատառնը։ Կ'առաջարկուէր հասարակաց դրամագլուխը գործածել երաշխաւորելու համար Ելեւմսից պաշտօնարանին զործողութիւնները»։

Ակային հակայսափայլ յառաջադիմութիւնը, զոր Դրամատառնն ունեցած էր Միքայէլ Փորթուգալի Տեսչութեան ներքեւ, անծանօթ շպիտի մեար։

Գաղղիոյ տէրութիւնն իսկոյն նուիրեց անոր երկրագործական Արժանեաց շքանշանը։ Կը սիրէր նայիլ անոր ազխոտակ կիտուածէ աստղին՝ որ իւր աշաց առջեւ կը բերէր դժուարին աշխատութեամբ պարապած օրերն և կը յիշեցնէր իրագործեալ յոյսերն ու յաջուզութեամբ պատկուած ջանքը։ Վեհ։ Սուլթանն ալ քիչ վերջը պիտի վարձատրէր անոր անհուն վաստակը և յայտնէր իւր գոհութիւնն ու մեծ վատահութիւնը՝ կարգելով զինքը, 1891ին, նախարար իւր Անձնական Գանձուն, Յակոր Փաշայի մահուընէն յետոյ։

Ալիքայէլ Փորթուզալ կը թողու Դրամատունն՝ ոչ առանց կոսու կածելու այդ հաստատութեան ապագային նկամմամբ, որուն վրայ այնշափ կը հագարտանար, և կ'ընդունի գոհութեամբ նոր սրաշտօնն, վասն զի կարող պիտի ըլլար ուղղակի Կայսերական անձին օգտին իսկ նույրել իւր բոլոր ջանքն և աւազ, իւր կհանքն իս' :

Իւր նախորդին վարչուկան դրութիւնն ընդունելով, և սակայն խափանելով տեսակ մը զեղծումներ, բոլոր փոյթը կենդրոնացուց մեծամեծ ձեռնարկութեանց հետամտութեան մէջ, ինչպէս Եփրաս գետին վրայ նաւարկութեան ծրագրն և Ալեանիկի քարափանց շինութիւնը; Այս վերջնը միակ առաջարկութիւնն էր որ ի գործ զըրուեցաւ:

Նոյնժամայն նոր մզում մը կու տայ Հերէքէյի Կայսերական գորգի գործարանին, և անոր արագործութիւնը կը տարածէ Եւրոպիոյ ու Ամերիկայի մէջ իսկ: « Ինքն է առաջն և զիմաւոր պատճառն ամէն կերպ յառաջադիմութեանց որ հոն կը կատարուին » , զրած է Լեւանդ Հերալտ:

Վեհ. Առվթանը անոր խորհուրդը կ'ուզէ ամէն գրամական գործառնութեանց վրայ, և սաէպ կը հրաւիրէ զինքը նախարարաց խորհրդին ներկայ գտնուելու:

Փօխարէն իւր բաղմաթիւ ծառայութեանց և անխոնջ ջանից՝ բարձրացաւ վէջիրութեան ամենաբարձր աստիճանին (1893), և ստացաւ չետպշետէ Վէճիտիկէյի և Օսմանիկէյի ականակուռ պատաւանշանները, ինչպէս նաև Խմբիազի և Լիազաթի ոսկի ու արծաթ շքաղրամեները:

Բայց այնշափ վաստակ, այնշափ երկարածիգ աքնութիւնք անշգար հարուած կու տային իւր առողջութեան, առանց սակայն նախատեսել առլու ազետալի վախճանն, որ տեղի ունեցաւ 1897ի վերջերն, իւր առոյզ հասակին մէջ, և զրկեց վեհապետն իւր ամենահաւատարիմ մէկ պաշտօնեայէն, ինչպէս նաև Օսմանցի ժողով վուրդը՝ իւր իրաւանց յայժ նախանձախնդիր մէկ անձնաւորութիւնէն:

\*  
\* \*

Իւր արգարասիրութեամբ և ուղղութեամբ, որ վինքը գերի ըրբն իւր պարտուց, իւր խորին հմտութեամբ և վերջապէս անձնական բարեմանութիւններով միայն պիտի կարենար Ալիքայէլ վաշտ, - եթէ չունենար իսկ քաղաքական փայլուն դիրքն ու բարձր պաշտօ-

նը, — դասուիլ առաջին կարգը անոնց չետ՝ որ պատիւ կը բերեն Օսմանեան տէրութեան և Հայ ազգին:

Մեծ եղաւ նու ոչ միայն ամենաբարձրք սատիճանաւն և տիսղուալիս ու բազմաթիւ շքանշաններով, այլ նաև մանաւանդ բարոյական յատկութիւններովն, արգարութեան հաստատ սկզբունքներովը և կենաց ու պատուոյ նշարիս և ազնիւ գիտակցութեամբը։ Արգարութիւն, սկզբունք և անսահման անձնանութիւններին զայն պաշտպանելու համար, ահա իւր բոլոր կեանքը, զոր սիրեց իւր հանրային պաշտօնափարութեան, ինչպէս նաև բնուանեկան յարկին մէջ։ Կը սիրեց կեանքը, վասն զի կարող կ'ըլլար գարգացնել, աղնուացընել, և գործածել այն պատուական ձիրքերը՝ զոր բնութիւնը չնարհած էր իրեն շասյլաբար:

Ոչ մէկ վայելք, ոչ մէկ ընկերական գրօսանք այնշափ քաղցր եղան, որշափ ընտանեաց մէջ անցուցած ժամերն, երեկոյին կամ սպաս օրերը, մօրս քով, իւր հնագ զաւակներէն շրջապատեալ։ Քոյրերս շատ փաքրիկ էին զինքը կարենալ հասկնարու համար։ անոնց բաժինն էր զգուանքը, մինչ եղօրս և իմ բաժինն էին իւր խօսքերը՝ զոր կ'ընդունէնք իրրե նշարտաթիւն և կենաց կանոն, այնշափ մեծ էր մեր հաւատաքն անոր վրայ։ Եզաւ ինքը մեր ամենասիրելի բարեկամը. համբերութեամբ և ժպիտ ի շրթունս մտիկ կ'ընէր մեր այլ ընդ այլոյ եռանդուն տեսութեանց՝ պարագայից թողով զայն մեզմացնելու հոգը։ Ստէպ բարձրաձայն կը կարգար մեզ։ Կարծես իւր առոյգ արտասանութիւնը կը պարզէր խրթին կէտերը, և իւր քաղցրահնչիւն ձայնը կը թափանցէր մեր սրտին խորերը։ Ազու կը մեկուսանար իւր մատենազարանին մէջ, որ մեր վրայ կ'ազդէր իրրե նուիրական աեզ մը, և ուր կը մանէինք բուռու մունջ ընթրիքէն յետոյ, երբ զիշերուան ժամութիւնն յատաջացած էին, զիսպող վայրկեանին ըսկու համար։ « Հայր, բարի զիշեր », և խլերու հանգստեան համբոյըը։

Այն մատենազարանին մէջ անցուցած ժամերուն արգիւնք եղաւ « Եղիշեայ Փննագատութիւնը », զոր սկսած էր 1878ին, և զոր աւարտեց 1886ին, թափելով անոր վրայ իւր բոլոր հմտութիւնը՝ պատմութեան, բանասիրութեան, կրօնագիտութեան և քաղաքագիտութեան մէջ։ Այն տքնութեանց արգիւնք եղան նաև բազմաթիւ զրութիւններ իւր ժամանակին քանի մը անձնաւորութեանց և զանազան պատմական զիսպատծոց վրայ։ ինչպէս նաև Կրեաէի պատմութիւն մը, և Պարթեաց պատմութիւն մը, որուն առաջին հատորը միայն աւարտած է և որք կը կազմեն իւր անտիւպ երկերը։

Պետական մարդը, որ այնչափ յարգանք և հիացում՝ կ'աղջէր ամենուն, և հմուտ գրագէտը՝ մեաց միշտ պարզ և խոնարհ իւր բարձր զիբքին մէջ։ Իիւրամատչելի եղաւ ամենուն, և մանաւանդ խոնարհներուն։ միշտ լսեց անոնց խնդիրքը և ջանաց զոհացում տալ առնոնց բացց երբեք շրբաւ խոսաւում մը զոր ձեռնհաս չէր կատարել։ Ետակը կու զային խորհուրդ հարցնել իրմէ։ առանց ընդմիջելու մտիկ կ'ընէր իւր խօսակցին, և անգամ մը խնդրոյն տեղեկանալէ յետոյ՝ կարծիքը կու տար ու կը պարզէր զայն ծանրութեամբ և մեկին ոճով։ Չէր վարաներ ճշմարտութիւնը յայտնել մեծամեծաց անդամ, երբ տանք շեղէին արդարութենէ։ իւր հմտութեամբն և յատակ բացատրութեամբ պաշտելի եղած էր Միքայէլ աշակերտաց, որ անհամբերութեամբ կը սպասէին իւր գասահօսութեան ժամերուն, և անոնց ու անոնց յաջորդներուն թողուցած է ելեմտական ուսումնաց վրայ պատրաստուած դասահօսութիւնները։

Վերջապէս, կարելի է ըսել Միքայէլ փաշայի համար՝ թէ ոչ ինչ կը պարտէր բախտին, և թէ ինքն իսկ պայծառացուց իւր աստղը։

\* \* \*

Երբ անկենդան մարմեոյն քով, իւր լայն մարմարեայ ճակտին վրայ խօնարհած, կը մտածէի Աքարշութեան այնչափ զեղեցիկ հրաշակերտին անշետացման վրայ, և կ'ողբայի մեր անդարմանելի կուրուսաը, թուեցաւ ինձ լսել իւր սիրելի ձայնը, որ կ'ըսէր ինձ։ « Չեղ կը թողում յիշատակ մը և օրինակ մը մշտնչենական »։

ԱՆԻՔՆ ՓՈՐԹՈՒԳԱԼ,

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

—♦♦♦—

Ա. Եղիշե իրքեւ մատենագիր և Գառամութիւն Վարդանանց: — Բ. Միհրներս սեւ: — Գ. Փոքրն թէսդու և Արեւելեան կայսերութիւն: — Դ. Յաղկերու և Սասանեան իշխանութիւն: — Ե. Վասակ: — Զ. Քաղաքակրթութիւն Հայոց: — Ե. Եղիշեի պատրիարքութիւնը: — Ը. Կենազգութիւն Եղիշեայ: — Թ. Զանազան տպագրութիւնք և թարգմանութիւնք:

## Ա

Եղիշեի «Վարդանն և Հայոց Պատերազմը» աւելի դիւցազներական քերդուածոյ կերպարանկն ունի քան պատմական դպրութեան: Երբ ազգի մը կենաց մէջ կը պատահի դէպք մը որ ամենուն միտքը կը գրաւէ, ու արանց՝ կանանց և տղայոց եռանդը կը բորբոքէ, այնպէս որ ուրիշ ամենայն հոգ և պարապումն ի բաց թողլով զայն միայն կը մտածեն ու նորա համար կը շարժին ու կը գործեն, այդպիսի վիճակի մէջ գտնուող ազգը ի հարկէ դիւցազնական նաւհատուածեանց կը ձեռնարկէ: Այս մեծ դէպքս սրտերուն մէջ կարգէ դուրս բռնութեամբ հաստատուած նոր և սուրբ հաւատոց դէմ յարուցեալ վտանգին երկիւղն էր, որոյ ներքեւ ալ կը ծածկուէր քաղաքական ազատութեան տենչը: Եղիշե որ քարտուլար և զինուորակից՝ ըլլալով Վարդանայ, ժամանակին իրաց կատարեալ տեղեակ և գործոցն ալ մասնակից էր, որում բաժին ընկած էր վառվռուն երեւակայութիւն, անկեղծ ջերմեռանդութիւն, զգայուն

և դիւրատիպ բնութիւն, ընտել և սիրելի բարք՝ որով Հոյոց աշխարհին խիստ շատ գաւառաց մէջ հիւրընկալութիւն զտած էր, որ ոչ միայն նախարարաց և պատերազմողաց հետ անձամբ ծանօթացեր էր, այլ և յաւագագոյն և ի գեռահասակ «կանանց երանելի տուգինեացն և կասպելոցն և անկելոցն ի պատերազմին՝ հինգ հաւրիտով շտփ յականէ յանուանէ ճանաչէր», այդպիսի ոմն նոյն ժամանակին զգացմանց և գաղափարաց անձնաւորութիւնն և իւր գրուածն այլ ընդհանուր վիճակին հշմորատափ պատկերը միայն կրնար ըլլալ:

Աւելորդ է հարցնել՝ թէ Եղիշէ պատմութիւն ուզեց զրել թէ զիւցազներգութիւն. նմանօրինակ պարագաներու մէջ ուրիշ բանասունդ հանձարներու արտադրածն յեանոց կողմանէ ազգային երգոց կարգը գրուեցան, թէպէտ սոցա հեղինակները մի միայն եղելութիւնը պատմել ու իւրեանց ազգակցացը աւանդել խորհեր էին, և անհմուտ կամ անտարեր իսկ էին զիւցազներգութիւնն կանոնաց: Եղիշէ առ տեսածը և զգացածը առանց արուեստի մեզ երկրորդել ուզեց. բայց եթէ զիւցազներգութիւնը նշանաւոր ձեռնարկութիւն մը քերդողաբար պատմութիւնն է<sup>1</sup>, իւր երկասիրութիւնը ողգային վիսպի ամենայն հանգամանքը ինքիրեն ստոցաւ: Իւր արձակ շարադրութիւնն անգամ այնպիսի ներդաշնակութիւն և շափակցութիւն մը առաւ, զոր ի զուր կը փնտուեմք սոկեղարեան ուրիշ ընտրելագոյն մատենագրաց մէջ:

Արդարեւ նիւթ ընտրուած գործոյն շքեղ և ահաւոր երեւոյթ մը ընթայելու համար մասացածին կազմած կամ մերենայ մի յօրինել, և ընթերցողին մտացը հանգիստ տալու համար՝ զուարձալի զրուացներ միջարկել, սովորական եղած է համացեղ քերդուածոց մէջ: Առաջնոյն պակասը զգալի շէ յԵղիշէ, նորա պատմած իրաց սկզբնապատճառը Պարսից դՔրիստոնէութիւնը ջնջելու կամքն էր: Ուստի պարտ էր մեզ ցուցանել հանգիստապէս՝ թէ ոքք և ինչպէս յլացան այդ շար մասձութիւնը, որոյ վերայ պիտի շրջէր բոլոր իւր զրութիւնը: Մինչ աւելի մօտ ժամանակի քերդողք, նմանօրինակ պարագայից մէջ, սանդարձամեաից ժողով մը հնարեցին, Եղիշէ աւելի պարզութեամբ և ճշմարտութեամբ մեր առջեւը կը զումարէ Մոդոց ակումբը՝ զոր կը նախագահէր անձամբ արքայից արքայն, և յորում հաստատուեցաւ ստուգապէս այդ խորհուրդը:

1. Blair's Lectures on Rhetoric and Belles Lettres. 507.

Փրիստոնէական կրօնքը և գարուն բարեպաշտական դպացմունքը բնական կերպով կը հայթայթէին նմա հարկաւոր և վայելուչ մեռքենայն, նահասակութեան մեծ խնդրայն մէջ՝ միայն մարդիկ չեն որ կը գործեն, երկնային և անդնդային զօրութիւնք այլ կը մասնակցին նոցա:

«Եթէ գիտէիք և երեւէր ձեզ յայտնի», կ'ըսեն Հայք արեգական պաշտօնն յանձն առնազ նախարարաց՝ որք դառնային յԱպար աշխարհէ, «առւգ առին երկինք ի վերայ ձեր, և թաղծեցաւ երկիրս ի ներքոյ ոտից ձերոց: Հրեշտակք ի վերուստ են ձեզ բարերացեալք, և ի յերկրէս՝ մարտիրոսքն են ձեզ ցասուցեալք»:

Երբ աշխարհին մեծ ամրացները քրիստոնէից ձեռքը կ'անցնին ու մոխրապաշտութիւնը կը վերնայ, բնութիւնը իւր կանոններէն դուրս կ'ենէ, և յերկինս մեծ լուսաւորութիւն կը մնի.

«Քանզի ուր ոչ էր ակնկալութիւն՝ եթէ զանուն Աստուծոյ ոք յիշեսցէ, արհաւիրք մեծ անկանէին ի վերայ նոցա, և ամենայն մարդ պատմէր ընկերի իւրաւմ տեսիլս նորս և գարմանալիս: Այնպէս և ասաեղք ի յերկինս երեւէին յոյժ լուսավիր պայծառացեալ, զոր ոչ ունէին յառաջին բնութեանն»:

Իսկ երբ մոգերը Հայաստան կը մանէին, «Եինէր զունդ զօրաց բազմաց, և շարաւէրն սասանայ իրեւու զօրավար ի մէջ նոցա երեւէր, և անզագար յարգորելով զամենեսեան ճեպեալ փութացաւցանէր»: «Եոյնպէս Վասակ՝ իւր նենզութիւնքը զործադրելու սկսած տաենը, «ի ձեռն էառ զատանայ իրեւու զլահան, և ագաւ զնա իրեւու զրահս, և եղեւ իր զինուար կատարեալ կամաց նորա»:

Անշուշտ փափագելի էր որ Եղիշէ իւր զլամաւոր նահասակաց միոյն՝ ընտանեացը տուած հրաժեշտին առթիւ, տանուտեարց ամրոցներուն ներփին վիճակը մեզ ցուցանէր, կամ զրահաւորեալ կանանց միոյն սրտաշարժ մէկ դէպքը ի մէջ բերէր: Այդպիսի մի կամ երկու զրտացներ կրնային մեծ զեղեցկութիւն մը յաւելու և փոփոխութիւն տալ զրտաթեան, տուանց ճշմարտութենէ խստորելու: Այդպիսի պակաս մը թերութիւն մի այլ ըլլոյ, զրտւածոյն ոչ էութիւնը կը փոխէ և ոչ կատարելութիւնները կրնայ մեզ մոսցնել տալ:

Գրութեան նպատակը յաջողութիւն կամ յաղթանակն է, բայց ոչ մարմառուոր իշխանութեան վերականգնումը, այլ Փրիստոնէութեան ազատութիւնն և վրայ ելլելն յերկիրն Հայոց, այդ ալ ոչ զինուց տուաւելագոյն զօրութեամբ ու Պարսից բանակները ի սպառ խոր-

տակելով պիտի ըլլար, այլ մարտիրոսութեամբ։ Միջոցը գործադրեցաւ ու նպաստակը ձեռք բերուեցաւ։

Եղիշէի «Վարդանն» ուրեմն դարսւ մը զիխաւոր անցիցը ժամանակագրութեամբ և ցուրտ դատողութեամբ զրուած յիշատակարանը չէ։ այլ նշանաւոր մէկ գէպքի և անոր մէջ հանդիսացող անձանց կենդանի ներկայացումն ։ Բնաւորութիւնները այնպիսի զօրաւոր գոյներով կը նկարագրէ, որ կարծես տեսնել աչօք Ասամնեանց միահեծան ինքնակալը՝ բազմեալ ի հրապարակին, ու կը լսես դու ալ նորա «ահագին ձայնը» որ «շարժէր և ասաւանէր զամենայն բազմութիւն զօրացն, իրրեւ զհորմն ասասիկ զի բաղսիցէ զծով մեծ»։ Վարդանայ քաջութիւնը զքեզ կը վասէ իրրեւ թէ իրեն հետ զինուորակից ըլլայիր, ու կը հարուիս անոր սիրովն՝ որպէս Եղիշէն։ Վասակայ՝ նենգութիւն դուելու համար՝ խիզախ, ի պատերազմի երկշու, և աշխարհավարութեան մէջ զեղծ ըլլալը կ'իմանաս։ Կեր Միհրներսէի խորագիտութիւնը և երկայն տաեն աւագ պաշտօնի մէջ ստացած փորձառութիւնը և Արեաց տէրութեան մէջ ունեցած մեծ ազդեցութիւնը կը հասկնաս։ Ստորեւ մի առ մի պիտի քննեմք սոցա իւրաքանչիւրին բարքը՝ որպէս կը ցուցանէ մեզ Եղիշէ։ Առքան երր ի հրապարակ կ'իջնեն, իրենց բնութեանը և կրիցը համեմատ կը բարբառին և գործեն միշտ։ Հեղինակն ալ տւելի զիւր զիւցագունս կը խօսեցնէ քան ինքը կը խօսի։ Յայտ է թէ ազգային կենսական մեծ եղելութեան մը մէջ երեւելի եղող անձինք, եթէ սիրելի ըլլան կամ եթէ ատելի ընթերցողաց, սասնց խօսքը աւելի կենդանութիւն կու տայ զրութեան և տւելի համակրանս կամ բարկութիւն կը հրաւերէ՝ քան եթէ հեղինակն ինքովնքը մտիկ ընել տայ նոցա տեղ։ Վասն որոյ խօսակցութիւնք բնական կերպով բաւական մեծ տեղ մը բանած են յԵղիշէ։

Հայտաստանի կրօնական յուզման մէջ՝ եռանդեամբն ամենէն նըշանաւոր և խորհրդոց և բարբառյն բոնութեամբը իրաց մզումն տոււան երէց մի էր, որոյ անտւամբն յորջորջնեցան աստիճանաւ շատ աւելի վեր եկեղեցականք ալ։ Մինչ ժողովուրդը գարուց ի զարս Վարդանայ անտւամբը փառաւորեց զաշխարհիկ զինուորս և զզօրագլուխա՝ որք սպարապետին մարտակից կամ վկայակից եղան, «Ունուգեան» կոչեց այն սրբակրօն, արի ուխտաւորներն՝ որք իրենց արեամբ հասուատել ուզեցին իւրեանց քարոզած կրօնին ձշմարտութիւնը։ Դեւոնդ որ քան զամենեսին ճոխացեալ էր կրօնական զիւութեամբք, և զոր պարսիկը եւս «աւագագոյն խրատատու և պատ-

հասու Համարէին ամենայն իրացն Ավարդանայ և գործոցն որ ի ժամանակին յայնմ գործեցան յաշխարհիս Հայոց<sup>1</sup>», ալեւոր ծերունի մի էր, « ախտացեալ մարմառվ » (անշուշտ այնպիսի հիւանդութեամբ մը որ զբնութիւնը կը դառնացնէ), « և ձեռնարկութեամբ բժշկաց չէր զտեալ զառողջութիւն, և հիւանդու կենօք ձանձրացեալ էր և փափագէր ի մահ քան ի կեանս<sup>2</sup>»: Ասոնք իւր դահճապեաբն Պենշապհոյ խօսքերն են, բայց և այնպէս կը ցուցանեն զպային խառնուածոյ յորում կը զանուէր մարմառվէս լլ. Պետնդ, և որ իւր բարոյական վիճակին վրայ ալ պէտք էր ներգործել: Տարակրոյ շկայ թէ նոյն խոկ աստուածային նախանձը անհատին բնութեանը և հանգումանաց Համեմատ տարրեր երեւոյթներ կրնայ ընծայել:

Պետնդ առաջին անգամ կը ներկայանայ մեղ երրորդ Յեղանաւ կին մէջ: Հարիւրաւոր մոգեր զօրաց բազմութնամբ ի Բագրեւանդ կը հասնին, ի գիւղաքաղաք մի մեծ՝ յԱնզզ, և կ'ուղեն կոտրել եկեղեցւոյ զուոք և կրազի պաշտօն հասսատել: Պետնդ, որ անդ էր յայնժամ, առանց նախարարաց հաւանութիւնն առնելու, առանց անգամ եպիսկոպոսաց խօրհուրդ հարցնելու, կամ թշնամւոյն և իւր զօրութիւնը կը զուելու, անմիջապէս կը հաւաքէ զժողովուրդը, ջարդել կուտայ վիրգերով զկառափունս մոգաց, և կը սարսափեցնէ ու կը ցրուէ զամբոխն: Այդ եղաւ ապասամբութեան ոկիզրը:

Երկրորդ անգամ կը տեսնենք զՊետնդ հինգերորդ Յեղանակին մէջ, երբ Վարդանայ բանակին հետ Աւարայրի զաշտը երթալով, պատերազմին նախընթաց գիշերը զօրաց կը խօսի: Ճառիս առաջին կէսը զուցէ Եղիշէի ամենէն տկար մասն է՝ բայց հետզհետէ մտածութիւնները պարագայից և խօսողին բարուց համեմատ կը սասականան: Վերջին կիսոյն մէջ բացատրուած զգացմունքն այնպիսի ուժգին զառնութեամբ խմորեալ են ու մարզկային տառապանքը, նոյն խոկ բնութեան տկարութիւնքը՝ որպէս քաղց և ծարաւ, կամ եղանակաց փոփոխմունքը՝ զորս ամենիմասս Արարիչը միացուցած է պէսպիսի ախորդից և չեշտութեանց հետ՝ զկետնս սիրելի ընելու Համար մարդկան, այնքան սեաւ զոյներով նկարազբուած են, որ ամենէն հոգեռանդն կրօնասիրութիւնը միայն չի բաւեր զայն մեկնելու համար:

1. Փարզ. 1873, էջ 304: – Պենշա – առուէ աւելի եւս կորեաւ աշխարհն Հայոց.

ողուէ ալ Պետնդի կըսէ. Մեր լոււեալ նոյն 297:

Ե զամբ քո՛ թէ օրինաց քրիստոնէից իր- 2. Եղիշէ, լ. 68:

րիւ զքեզ ոք տեղեակ չէ. և ի քո խրա-

քննադ. Եղիշէի

Ութերորդ Յեղանակին մէջ նոյնօրինակ զգացումներ կը գնէ Լողիշէ Պետոնդի բերանը, « Ո՞չ ահա ամենայն լի են ախտիք, է որ ի ներքոյ, և է որ արտաքոյ, ցուրտ և տօթ, քաղց և ծարաւ և ամենայն աղքատութիւն կարստութեան։ Արտաքոյ՝ անիրաւութիւն, յափշտակութիւն, գէճ պղծութիւն անառակ յարձակմամբ։ ի ներքոյ ամբարշտութիւն, ուրացութիւն, տղիտութիւն, անգարձ մոլորութիւն ի կամաւոր ազատութենէն »։

Վերջապէս երբ անապատին մէջ ատեանը կը գոցուի ու դահիճք կը պատրաստաւին կառափելու, այն վերջին ահաւոր վայրկենին ալ Պետոնդ կ'երեւի մեզ իրեւ տուղնորդ և հրամանաստար նահաստաշութեան գործոյն։ ինքն երէց՝ կը հրամայէ կաթողիկոսին։ « Մատիր, յառաջեն ընզգէմ սրոյն, զի զու աստիճանաւ ի վեր ևս քան զամենեսեան »։

Ո՛քան կը տարբերի Պետոնդեայ անյողգողդ և անընտել եռանշգէն՝ Սահակայ Ռշատնոյ վարպետ և խոչեմ վարմոնքը։

Լողիշէի ամեն ընթերցողք գիտեն զԱռանձար, զակուհն Ամառաւունի, որ Ամիշան Վարդապետին զեղեցիկ Տաղիքէն միոյն նիւթեղած է, և որոյ համար սակայն մեր հեղինակը ութ տասը փոքրիկ տողեր միայն յատկացուցած է։ Դիւթական գործութիւն մի կայ այդ տողերուց մէջ, թէպէտ եթէ մի առ մի քննեմք զնոսա, կարգէ զուրս բան մը չենք գոներ։ Տեսայ մատանոյ փոքրիկ զմբուխտի մը վրայ փորագրուած հին Աթենաս մը, որ վահան ի ձեռին օգերուն միջէն կ'ինչէ ի պատերազմ։ եթէ քանդակին խրաքանչիւր մատունքը զննես, դոքս իրենց փոքրիութեանը մէջ չեն կրնար քու հետաքրքրութիւնդ յագեցնել, բայց ամբողջին այնպիսի կորով մը, հոգի մը տուած է անսանեան արուեստագործը, որ կը ապաւորուի մտացգ մէջ, և կարծես թէ ահա հեռուն այերց մէջ կը տեսնես բարկացայտ զիցուհին որ կը սահի կու զայ դէպ յերկիր։

Մէկ քանի տող զարձեալ բաւական են ծանօթացնելու համար երկու ուրիշ անձինք ալ, զՎարեզին և զվաճառականն խուժաստանցի։

Եղիշէ իւր նիւթովն այնքան վառեալ է՝ որքան կրնայ պահանջիւղիւցաղներգակ քերթողէ։ զրութիւնը այնչափ յարաւեւ եռանդն, աշխոյժ երեւակայութիւն, վսեմ և գեղեցիկ իմաստներ կը պարունակէ, որչափ պէտք են սազաշափեալ քերթուածոյ։ Նոյն իսկ քրիստոնէական և մողական վարդապետութիւնք, յորգորակք և պաքարք, որ այսօր մեզ քիչ քերթողական կ'երեւին, այն ժամանակին ամենէն աւելի ուշագրաւ, կարեւոր և ախորժական խնդիրներն էին։

Նկարագրութեանց մէջ կը գերազանցէ Եղիշէ. Այստաղու պատերազմը այնչափ աշխայժ և կենդանի է որքան Համերոսինները. ակն յանդիման կը տեսնես զօրավարաց կարգագրութիւնքը, պարսկական և հայ զօրաց տեսակները և զինուց տարագքը: Դիմէ շատ սակաւաթիւ մատենագրաց նման, խառնել յանկարծ զուարձալին և հեշտալին՝ տիսուր և վաևմին մէջ: Բազմակոյտ խոցելոց մնշիւնը և բեկելոց մոնշիւնը ակնջիդ հնչեցուցած տաենը, կու յիշեցնէ քեզ « գարնանային ժամանակը և ծաղկալից գաշտքը », որով յորդահուսան արեանց գորոշչիւն թմրած և վիրաւորներու թաւարգուր խազալէն սովալէն, վահոնաց կոփմանէն և լարից աղեղանց ճայթմանէն և մեծ գալարափաղոց հնչմանէն սահշած միտքը՝ յանկարծ կը սթափի ու գառնակալիծ աղիտին սաստկութիւնը կ'ըմբռնէ:

Իսկ երր Հայոց վագիկասուն Տիկնանց վիճակին սիրտդ ճմրած, կը սպասեն որ սոցա ամուսնիքն ժամմ յառաջ գառնան ի Հըեւայ (Հերագ քաղաքն արդի Աֆղանաց),

« Բազում ճմերաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք, տեսին և խնդացին կենցագասէր մարդիկ, և նորա ոչ երրէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Ծաղիք գարնանայինք յիշտառկեցին զպուկասէր ամուսնու նոցա, և ոչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա: Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց »:

Կամի՞ս զաղոսփար մը ունենալ Աստանեան Արքայից արքային արքունեացը վրայ. ահա թագաւորին սիրելիներէն մէկը հիւանդ է, և թժիչէլ կը կանչէն որ արտօրնօք պալատ կ'երթայ. դու ալ ընկերացիր նմա.

« Եւ հասեալ ի մեծ հրապարակն՝ տեսանէ զբազմութիւն պատուառացն և զառողջութիւն գեղցիկ երիտասարդացն, և եւս ի ներքս մատուցեալ ի սրտհան արքունիք, և անդ տեսանէ զամենայն սպասաւորացն զձնադ և զպանչելի տեսիլն, և ոչ ինչ գարմանայ ընդ հրաշակերտ տեսիլն: Նաեւ եթէ զահոյք ականակասք իցեն և համակ ուկեղէնք՝ յորոց վերայ հիւանդն անկեալ զնիցի, չէ ինչ նմա փոյթ զայնմ ամենայնէ. այլ ի բաց հրամայէ առնուլ զոսկեաւու վերարկուան, և ձեռն ի ներքս տարեալ, զննէ զամենայն մարմինն, եթէ ջերմ իցէ բնութիւնն, և եթէ սիրտն ի տեղւոջն հանդրտ կայցէ, և կամ թէ լեարդն կակուղ իցէ, և կամ թէ շարժք երակացն յարմա՞ր իցեն. և ըստ նմին զզարման թշկութեանն առնէ՝ չնորհելով նմա զառողջութիւնն »:

Արքան չի հոգնիր և չի տկարանար Եղիշէ երկայն նկարագրութեանց մէջ, նոյնքան ազգու է կարճերուն մէջ: Բաղդատէ Տիկնոնց նկարագրին հետ որ տուածին տեսակին կը պատկանի, ոոցա արանց համար զրուցածը:

« Առաւել բնդ այն եմք սքանչացեալ, զի մարդիկ փափուկ իրեւ զնոսա՝ ընդարձակառուն բնակիցը ձիւնեղին լիրանց՝ եղին բնակիչը խորշակարեր դաշտաց: Որ գորէն ազատ երկոյ յուշին ի մէջ ժադկարեր լերանց, ընկեցան ի բացակէզ աշխարհն արեւելից, կապեալ ոտիքը և կապեալ ձեռօք»:

Ինչպէս որ տեսանք, Եղիշէի մէջ որտաշարժ և գողարիկ զգացմունք պակաս չեն. բայց վսեմը և զօրաւորը շատ աւելի յաճախ են: Առուածին եօթն յեղանակքն, ի բաց տաեալ մէկ քոնի վիճարանական կամ խրատական հատուածները, ժայրէ ի ժայր վիճ և կորովի իւմաստներ և պերճ և բարձր տացուած ունին: Կմանութիւնները վսեմ են. զիմաննաթիւնք, հակազրութիւնք և ուրիշ զանազան ձեք բանից լի են քերթողական սաստկութեամբ. բացարութիւնքն երբէք չեն նուաստանար:

Կարելի չէ Եղիշեաց զրութեան գեղեցկութիւնը մի առ մի դնել աստ, զայս միայն յիշեցնեմք, որ երբ Յաղկերտի վրայ խօսի, կամ նորս հրամանները և սպառնալքը ի մէջ բերէ, իմաստները սովորականէն աւելի կը բարձրանան:

Նարուքոգոնոսոր օր մը իւր քաղաքին պարապաց վրայ ճեմելու ատենք ըսեր էր. «Ո՞չ այս այն մեծ Բարելոն է զոր եան շինեցի ի տուն թագաւորութեան հաստատութեամբ զօրութեան իմոյ՝ ի պատիւ փառաց իմոց»: Յաղկերտ՝ երբ Հայոց Տանուտեարք կը մերժին զիւր հրամանն ու կը յայտնեն նմա թէ պատրաստ են ի մեռնել..., «Ոչ կարէք աւերել, առէ, զանխար ամուրս իմ, և ոչ որում ցանկացեալդ էք՝ վաղվազակի սամ զտանել ձեղ»:

Բնաւորութեանց և բարուց սեփականութենէն, իմաստից և ըգղացմանց վսեմութենէն, սասցուածոց և ոնց պերճութենէ զատ, Եղիշէի «Վարդանն» պանչելի յատկութիւն մի ալ ունի, այս է ժամանակին հանգամանաց, զուգակից զիպաց՝ սովորութեանց՝ ճշշմարտափակ պատկերն ըլլալ:

Թէպէտ պատմութիւնը և Եղիշէ ինքնին մեզ կը զրուցեն՝ թէ Արշակունեաց թագաւորութեան բառնալէն ետքը «ի նախարարսն անկանէր իշխանութիւնն», Հայոց աշխարհին մէջ իշխեցողք՝ չէին նախարարք և ոչ իսկ մարզպանն, այլ Եկեղեցականութիւնը, որ

կարող էր՝ եթէ հարկ ըլլար՝ ամենայն բնական և քաղաքական կարգ և կապ խզելու և նոցա տեղը հաստատելու հետեւեալ զարդարելի օրէնքը.

« Զեան եղօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի՝ որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ, և մի խնայեսցէ հայր յորդի. և մի ակն առնուցու որդի հօր պատուոյն, կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ զարձցի ընդդէմ տեառն իւրոյ. օրէնք առատուածայինք կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս գատապարտութեան»: Ուրոյ ձայնին ամենեքեան ոտք կ'ելլէին « զինեալք և սաղաւարտեալք, ոտք ընդ մէջ և վաշան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականանց», և որ մէկ զիշերուան մէջ վառեց կազմեց երեք բանակը<sup>1</sup>: Եղիշէ զենք հանդիսակից կ'ընէ մազաց խորհրդոյն և հմուտ նոցին օրինոց և բարուց: Աշացդ առջեւ՝ մեծ հազարսապեալ տաեւանը նասած՝ հրապարակաւ կը հարցափորձէ ու կը զատէ հետզհետէ՝ իշխանութեան զէմ զէնք վերցնող նախարարները, եպիսկոպոսները և գլաւակի: Աստանեանց զատաստանական և վարչական ձեւին տեղեակ կ'ըլլաս: Գրացի ազգաց ովլ ըլլանին ու Հայոց հետ ունեցած վերաբերութիւնքը կը հասկնաս: Կը տեսնես գարձեալ Հայոց կանանց վիճակը, իրաց մէջ նոցա ունեցած մասնակցութիւնը, առտնին կեանքը, տներնուն ձեւը, սենեակներնուն զարդարանքը և կարասիքը, կերակուրներուն տեսակներն և զբաղմունքը: Կոյնոպէս կը ցուցանէ քեզ՝ թէ Հայոց աշխարհին ժողովուրդը քանի կարգի մարդկան կը բաժնուէր, և թէ ինչ էր իւրաքանչիւրին վիճակն ու գործը. որչափ հարկու կը հատուցանէին. ինչ էին շինականաց տառապանքը և հոգերը. բարեկեցիկ ճոխութիւնը ինչ աստիճանի հասած էր ազատաց մէջ. երկիրը որքան հարստացած էր:

Վերջապէս դոցա ամենուն հանդիսարանն եղող աշխարհին «անտառախիտ» և «անկոյս» վայրերն, «ձիւնեղէն լերինքն», սառնամանիքը, ձմերային սարսափելի բուքերը, «ծաղկարեր» բլուրները, «անկասակածելի» և «անխար» ամրացներն, «ազատ» էրէքն, բնակչաց որտորդութեան սէրը, ազգու յիշատակութեամբք քեզ կը ներկայանան:

Զայդոսիկ և այլ բազմապիսի տեղեկութիւններ, զորս մի առ

1. Եղիշէ. գ. 10, 32:

մի ի համար տառ արկանել անկարելի է, կը գտնես յԵղիշէ՝ բայց նո տառնց ամէնքը քեզ հասկցներու դիտմամբ յառաջ շրերեր, այլ երկրորդաբար և զրեաթէ պատահմամբ։ իրեն միակ նպատակը՝ իւր և Արտուծոյ սիրելեաց նահատակութիւնը պատմել է։ բայց որովհետեւ հանձարոյն եղական մէկ յատկութեամբը ամենայն ինչ կը տպաւորէր իւր մտացը մէջ, քեզ ալ կը հազորդէ ամէն տեսածները։ Կման քաղաքի մը կամ բնութեան զիսաւոր դիրքի մը լուսանկար պատկերին, որ կը ցուցանէ ի մօսուստ և խոշոր չափերով զառարկայն՝ որոյ աղազաւ այդ պատկերը շինուած է։ միանգամայն շատ մ'ուրիշ ներկայ մանրամասն հանգամանք, ինչպէս շրջակայ լերանց պարեր և ծուսատանք, այդեստանք, արտորայք, հողագործք և արշառք որք դիպմամբ անդ կը դանուին, և որք աւելի փաքք չափերով նկարուած ըլլալնուն համար, նուազ ճշմարիտ և ճշգրիտ չեն, բայց աւելի մեծ ուշագրութեան կարօտ։

Սակայն «վէպ» ըսելով ամենեւին չեմ ուզեր հասկցնել՝ թէ այդ գրութիւնը առասպելով խառնուած ըլլայ. կամ թէ ինչպէս սմանք ասացին, «արձակ շարական մի է, այլ ոչ պատմութիւն»։ Եղիշէն աւելի անսուս և անկեղծ ըլլալ կարելի չէ. նա յաջողած է իւր ժամանակակից դիպաց և անձանց և բարուց այնպիսի հաւատարիմ նկարագիր մը տալ, որպէս քիչ պատմագիրք կրցած են ընել։ Կա ոչ մի կարգի և ոչ մի կուսակցութեան կը պատկանէր. հայրենի սուրբ կրօնին ազատութիւնը միայն վիստուելով ո և է եղելութիւն կամ ճիզ որ այդ նպատակին ծառայէր, ուրիշներն ինչ աչօք ալ նկատէին զայն և որքան ալ ջանային ծածկել, ինքն արշար և բնական կը դատէր առանց քողայ, զգուշաւորութեան կամ սեթեւեթից հոչակել.

«Յայնմ ժամանակի սփուեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին գքորեավիսկորոս ի գիւղս և յագարակս և ի բաղում ամուրս լեռնային գաւառացն։ Դրգեցին և ժողովեցին զբագմութիւն արանց և կանանց, շինականաց և ազտաց, զքահանայից և զմենակեցաց։ յարաւ եղին, պեղեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի»։

«Ճառագրեմք, ասէ Եղիշէ, զբազում հարուածս յորում պատահէցաք և մեք իսկ ականատես լինելով»։ Կա զրեաց «ոչ ի կարծ ընդպատուցեալ և ոչ ի լուր զարթուցեալ, այլ զոր ինչ ինքնին անձամբ անդէն ի տեղովն պատահեաց և ետես»։ Աւելցնենք՝ զոր

ինչ որտափը զգաց ու հաւատաց, կամ զոր ժողովուրդը առհասարակ կը հաւատայր ու իրեն ալ բնական և հաւատալի կ'երեւար<sup>1</sup>:

Եւ որովհետեւ ուր սովորական պատմագիր մը զիմաւոր դէպք մը միոյն կը տեսնէ ու բոլոր ուշազրութիւնը անոր վրայ ամփոփեւ լոյն կարգաւ և օճով կը ճառագրէ զայն, Եղիշէի ամէն առարկայէ տապաւորուող միոյն հազար ու մէկ ուրիշ պարագայներ ալ կը գըտնէ, իւր նկարազրութիւնքը թէպէտ հիանալի կենդանութիւն և իւրականութիւն ունին, սակայն չորեքտասան զարուց յետոյ եկող ընթերցողաց գժուարաւ հասկնալի կ'ըլլան, որչափ ալ բացատրութիւնքն զիւրիմաց ըլլան և ընտիր:

Հայոց աշխարհն Անձին Աղեքուանզրի արշաւանքէն ի վեր առարկէղ եղած էր երկու քաղաքակրթութեան, Յունականին և Պարսկականին: Քրիստոնէութիւնը առաջնոյն աւելի հաստատութիւն տարով երկուքին մէջի անհամաձայնութիւնը սաստկացոյց, մինչեւ որ հուսկ յետոյ նշանազրաց գիւտամի՛ նոր զարութիւնք արեւմտեան քաղաքակրթութեան խմբին մէջ մտուցին զշայ ազգն: Եղիշեայ գրրքուիր ճշգրիս պատկեր մի է այն երկրին՝ որ մրցարան եղեւ այդ հակառակ ազգեցութեանց:

Եւրոպացի հեղինակ մը երեք չորս գարեկ եռքը՝ առանց լուսարանութեան գրեաթէ անիմանալի կ'ըլլայ իւր ազգակցաց, ուր մնաց՝ երբ այն հայկական ընկերութիւնը, որոյ ինչ ըլլալը կ'ուզեմք գիտանալ, խորտակուծ ու առանց յաջորդութեան լմնցած ըլլայ, երբ աշխարհազրական գրից քիչ տեղեակ և ի նոցանէ հեռի գտնուինք, երբ՝ զանազան աստեղաց ներբեւ՝ բազմագարեան թմրութիւնէ արթընցած, նոր բարք, նոր լեզու, նոր գաղտնիք ունենալու կը նկրութինք, երբ գրացի և իշխող Աստանեան Պարսից կրօնքը և սովորութիւնքը<sup>2</sup> բոլորովին կերպարանափոխ եղած՝ պատմութիւննին անզամ

1. Եղիշէ կը պատմէ երկու մեծամեծ բերդաց պարագաց հրաշխաք ինալը և նալի շեխն կրնար ըլլալ՝ քանի որ Աստանեղաց բնականէն աւելի լուսալիր սանեան իշխանութիւնը կանգուն կայր և պատճառ երեւելը. Գ. 42:

2. Եղիշէի գժուարիմաց բառերն շատ ի հաւաց ազգայնն ընթերցողաց հետաքրքրութիւնը շարժեր են: Բանասէր ոմն, որ թուի բաւական չին, հարցուցեր է զանանք պարբերէի մի և գրեր է բառերն ալ, մեկնութիւնքն ալ, որ հին բառանաց մէջ գտնուին զատ յայլոց:

Ասդ բառերդ Հայոց համար անիման կամ շեխն կրնար ըլլալ՝ քանի որ Աստանեան իշխանութիւնը կանգուն կայր այլ միայն յորժամ լուսամական կրօնը ընդհանրանալով Պարսից աշխարհն մէջ, վանեց ջնջեց զմողական օրէնսն և Զքաղաքաց դաշտայ գենին յատուկ բացատրութիւնը քնն ալ ի բաց թօթափեցան պարկերէն լեզուէ: Եւ երբ այդ բացատրութիւնքը անհասկնալի եղան, պարթեւ ալ մնացած չէր: Ասկէ զատ, ինչու դիմել պարթեւի:

մեր պատմագրօք լուսաւորուելու կը կարօտի. եթէ նոցա լեզուէն ժանգահար մեղազի բեկորներու և առա անդ մոռացեալ քարերու և խարակներու վրայ մնացած մի քանի բառ միայն գիտնանք, և անհմուտ լինիմք այն բազմահատոր պարսիկ զրչագրաց՝ զորս եւրոպական հետաքրքրութիւնը և յարատեւութիւնը մոռացութենէ հանելով հաւաքեց, ուստիմասուիրեց, թարգմանեց և մեկնեց վերջին երեսուն քառասուն տարուան մէջ, և որոյ այն ազգերը միայն անտեղեակ են տակաւին, որք ամենէն աւելի պարտէին հետամուտ լինել նոցա: Չի բաւեր՝ որ հայկական հզօր և ճոխ բարբառն, որ հազար չորս հարիւր տարի յառաջ կենդանի էր, իւր հրաշազան կերպաւորութեամբքը՝ երեւելի և գաղտնի կանոններովը՝ ճշգրիտ ուղղացրութեամբը այսօր յանկարծ երեւան ելած ըլլայ՝ մոխրի տակ ծածկուած Պոմպէային նման: Չի բաւեր՝ որ Բագրատունի մը զոյն զործածած ըլլայ այնքամ տիրութեամբ և ճարտարութեամբ, որ Ամակայա և Մեսրոպայ անգամ զարմացումը պէտք էր շարժել: Յստակախոսն Եղիշէ անթիւ խրթնութիւններ պիտի պարունակէ մեզ համար, եթէ քերականութեամբ միայն ջանանք զայն հասկնալ ու նորանկարագրած հանգամանաց անգէտ մնամք:

Եւ որովհետեւ Եղիշէի «Վարդանն» աղգային վիպի ամենայն կերպարանքն ունի, զժուարութիւն մի ալ կը ծագի զրուածոյս բնութենէն: Այդ տեսակ քերդուածք — և յայդմ իսկ է նոցա զիսաւոր արժէքը — խիստ շատ կիրք կը պարունակեն, որով կը գունաւորուին քիչ շատ ամենայն ինչ. շարը երբեմն իրրեւ շարագոյն կը ներկայանայ, անպիտանը իրբեւ պիտանի, ու արժանաւ յարգն իրբեւ անարդ և անգունելի: Բարկութիւնը արդարեւ չի կուրացնէր զԵղիշէ, իւր սիրելեացը սխալանքը՝ ինչպէս և աստելեացը բարեմասնութիւնքը՝ կը յայտնէ շատ անգամ ու կը խոստավանի:

Երբ մինչեւ ցայժմ Պարսկաստանի մէջ պատկանին և կամ չկան այժմեան պարսկենին մէջ, անոնց բոլորովին երեւալի ճիշտութիւնն առաջան կայսկան իմաստներ տրուած են. այս իրենց պաշտամ դենին նկատմամբ: Հին բառագրոց մէջ գտնուած մեկնութեանց ժահմետականութիւնը բաւական ետքը շարագրուած ըլլալուն մէկ ապացոյցն ալ այն է, թէ՛ այն բառերը որ նոր պարտէրքնի մէջ կան ցարդ՝ ուղիղ մեկնուած են. բայց անոնք որ մազգեզն օրինաց կը

Բայց՝ «թէպէտ և ոչ ունիմք, ասէ, հրաման բամբառել զիշխանն, և ոչ զովողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտ լինին»։ Ըսթերցողք պարտին մոքերնին պահե Եղիշէի այդ խօսքը։ Որ ոք քրիստոնէութեան զարգանալուն ցանկացազ է, սիրելի է և զովելի։ ամենայն թշնամիք հաւատոց՝ սեաւ և ժանդ կ'երեւին աշաց նորա։

X

## Բ

Սասանեանց պատմութեան մէջ՝ Արշակունիք իւր երկար և խելացի պաշտօնավարութեամբը հոյակասպ թագաւորաց չափ նշանուոր եղած է։ Ծառ Թապարիի և Արքանուայ, որ հին աւան դութիւններէ քաղելով կը զրէին, առ էր իշխան աւագագոյն և առնուտէր իմաստնախորհ, յարքայական ցեղէ Խսֆանտեարաց որդւոյ Վշտասապայ<sup>1</sup>։ Ժողովուրդը կը սիրէր ու կը մեծարէր զնս յոյժ։ և որովհետեւ իր ժամանակին ամենէն ուսեալ անձերէն մէկն էր, Հիրսպատմ Հիրապատ «իմաստնոց իմաստաւն» կոչեաց զնա։ Յազկերտ Ա. (399-419), որ անզթութեանցը և վէս բարուցը, զուցէ եւս Օրինականաց և Աւագանուոյն ազգեցութիւնը կոտրել ուզելուն համար, Պազարար յարջորջեցաւ ի Պարսից և Ալ-Ասիմ յԱլուրացւոց, ճանչցեր էր նորա կարողութիւնը և զնա Վզուրկ Հրամանատար կարգեր էր պետութեան։ բայց կ'երեւի թէ քիչ անգամ կ'անսապը խրատուց նորա։ Յաջորդը՝ Վռամ Ե՛ Հոռոմոց դէմ պատերազմի զնացած առենը, զօրսապետ կարգեր էր զնա իւր քառասուն հազար հեծելոց։ և դՔուշանս Պարսկաստանէ վանտելէ յետոյ, վերտին հազարապետ անուաներ էր ու աէլութեան ամենայն գործերն նմա էր յանձներ՝ ի մեծ գոհութիւն հպատականց իւրոց։ Այս վիճակիս մէջ մնացեր էին իրերը երկու տարի, երբ արքայից արքայն՝ որ ան հանգարատ բնաւորութեան տէր մարդ մի էր, և զար որսոյ և մանաւանդ վայրի ցուոց արշաւանքը չէին կրնար զբաղեցնել և զոհացնել։

1. Դիտելի Է՛ թէ ըստ պարսկական հին պարիի առած ցեղագրութիւնը. Արշամութեանցութեանց՝ Արտաշեր Արտամեանն աերսէ որդի հոսարայ, որդւոյ Վէնաւալ Աքեմենեանց ցեղէն կ'իջնէր (Տես առյ. որդւոյ Փուհեարայ, որդւոյ Ախաւ Միւճէլ-Խոթ-Թագարիի և Թապարի)։ Խակ բայց, որդւոյ Տէհրայ, որդւոյ Աշաբայ Արշակունիքի դալով ահաւասիկ թա-

Հեռաւոր աշխարհաց և դժուարին պատահարաց և արկածից ի խընդիր՝ ճամբայ կ'ելէր գէպ ի Հնդիկս, տեղակալ կարգելով զնա: Եւ երբ յէտ երկարժամանակեայ պանդխառութեան, զարձեալ կու զարի տթուուը, կ'առաքէր զնա ի Բիւզանդիոն թէուզոսի հետ զաշինս կակլու համար:

Մեծ պատիւ և չքեղ հիւրընկալութիւն զտեր էր Միհրներսէն Կոստանդնուպոլսայ արքունեաց մէջ, և յարժամ իւր պաշտօնը յաշողութեամբ կատարելէ ետքը կը վերտպանայր ի Գուռն Պարսից, զիւր բազմամեեայ վաստական և զալեւոր ծերութիւնն կը յիշեցնէր թագաւորին և հրաման կը խնդրէր յիւր բնիկ սատանն յԱրտաշիր-Խավառնա երթալ ու անդ անցնել մնացած կեանքը: Վասմ իւր քովը պահեր էր Միհրներսէնի երեք որդիքը, զ Զարաւանդ՝ այր իւմաստուն՝ որ Մովկեան Մովկեան էր ի ժամանակին, զ Մահպէշ՝ համարական արքունի (բայտաչթ), և զ Պիւրճ Ջարզանտ՝ այր քաջ և կրտպի որ սպարապետ էր Արեաց, և արձակեր էր զհայրն: Աա իւր երիբ երթարով շորս զիւղ շիներ էր անդ յանաւն իւր և որդուցն, և ամէն մէկուն մէջ աստրուշաններ կանգներ էր. սոցա եկամաւան հայթայթերու համար ալ մեծամեծ ազարակներ յատկացուցեր էր, որոց իւրաքանչիւրն ունէր 1000 ձիթենի, 1000 նոճի և 1000 արմաւենի:

Բայց Միհրներսէն չկրցաւ մինչեւ վերջը վայելել իւր առանձնաւթիւնը. Ջագկերս Երկրորդ աթոռը եւանելաւ պէս, կոչեց զնա վերստին ու յանձնեց նմա կաստվարութիւնը: Միհրներսէն հանձաւրեկ օրինօք և օգտակար կարառպրութեամբք՝ մեծամեծաց և փոքունց առ զահն ունեցած վատահութիւնը և համակրութիւնը աւելցուց:

Աադ է ահա պարսիկ պատմչաց քիչ մը ծանծաղ՝ բայց նպաստ տաւոր նկարագիրը: Տեսնենք արդ Եղիշէինը:

Եսպակուպսունք զնա իւրեանց նամակին մէջ «յոյժ իմաստուն» կը կոչեն: Նորա յիրաւի այդպիսի զովասանոց արժանի և յոյժ պատկառելի անձ մի ըլլալուն ապացոյց է այն իսկ, որ երկու ասիական ինքնակալք՝ Վաստ և որդին Յագկերս Բ՝ իրենց երկար բացակայութեանց ժամանակ չէին երկուացեր փոխանորդ կարգելու զայն՝ որում «չէր ոք ամենեւին որ իշխէր ըստ ձեռն նորա եւանել. և ոչ միայն մեծամեծք և փոքանք, այլ և ինքն թագաւորն հրամանի նորա անսույր<sup>1</sup>»:

Միհրներսէհ թէպէտ արտաքին դիմաք մեծարէր զվասակ, քանի որ ապատամբութիւնը յատին էր, ոյլ ի ներքոյ յոյժ դարովեր զնա՞ւ։ Անոր անաշառ դատաւորն եղաւ, և կապեալ նախարարաց հաստատամբութիւնը տեսնելով՝ «մկաւ արկանել սէր ընդ նսաւ իրրեւ ընդ սիրեիլո Աստուծոյ, և բազում ոգրքանօք ածէր զթագաւորն ի հաւանութիւն, զի թողութիւն արացէ նոցա ի կապանացն իւրեանց... և զկապելոցն ոչ երբէք չարախօս կամէր լինել մինչեւ ցօր վախճանի կենաց իւրոց»։

Զատարրապաշտութիւնը չքարոզեց Հայոց, ու ի զրագաշտական օրինաց կ'երեւի թէ միայն երկարմատեան սկզբունքը կ'ընդունէր<sup>2</sup>, որ միայնոյ Աստուծոյ կրօնքէն ետքը ամենէն բանաւորը կրնայ համարիլ։

Ասկայն Միհրներսէհ կը նկարագրի եւս իրրեւ «Վեր մի լի զառնութեամբ, յորում հանգուցեալ էր սաստանայ զօրութեամբ իւրով, և բազում զործեալ էր նորա նախճիրս. որոյ կերակուր կամոց իւրոց էր ի մանկութենէ անսպաս մարմին սրբոց, և ըմպելի անշագութեան նորին՝ արին անմեղացն»։

Եւ յորժամ ապատամբութիւնը ձնէլու միջոցները խորհելու համար կու զայ ի քաղաքն Փայտակարան, ուր «զօղեալ և թաքուցեալ» յապահովի կրնար կարգադրութիւններն ընել, իրրեւ «չին վիշտ չարաթոյն յամուր որչն մտեալ՝ որ բազում կեղծաւորութեամբ զինքն թաքուցանելով յաներկիւզութիւն, հեռաւորացն աշագին ձայնիւ սաստէր և ի մերձաւորսն իրրեւ զօձ սողալով փչէր»։

Այդ չափազանցութիւնքդ կը մեկնուին, երբ ի յուշ ածեմք՝ որ Միհրներսէհ միակ բայց ահազին յանցանքն էր կարծել՝ իրմէ ետքը եկող զեռ ուրիշ շատ քաղաքագիտաց հետ, թէ այլազգ ժողովուրդ մը իշխանութեան հնազանդ և հաւատարիմ պահելու համար բաւական չէ զայն արդարութեամբ կառավարել և անոր բարօրութեանն աշխատիլ. այլ թէ հարկ է նորա կրօնքը՝ լեզուն և էութիւնը խանգարել և հնարիւք կամ բռնութեամբ՝ տիրոզ ազգին նմանեցնել։ Ուստի զՀայո ի Յունաց բոլորավին օտարացնելու համար, պէտք էր զանոնք կրակապաշտ ընել։ «Գիտէք, կ'ըսէր Միհրներսէհ ցՅազկերտ, զաշխարհն Հայոց՝ թէ որպէս մեծ է և պիտանի, և մօտ սահմանակից է կայսեր իշխանութեան, և զօրէնս և պաշտօն զնոյն անի. զի կայսր զիշխանութիւն նոցա ունի։ Եւ եթէ մերոց օրինաց ըն-

առնեցուցանեք զնսսա և ընդելնուն... այնուհետեւ զձեղ սիրեն և զԱրեաց աշխարհս, և ի կայսերէ մերժին և չեռանան ի բաց։ Եւ մինի այնուհետեւ աշխարհն ընդ մեր սերտ սիրով և միաբանութեամբ<sup>1</sup>»։

Իրաւամբ կամ՝ կարծեօք՝ Միհրներուհ՝ այդ ծուռ և աշխարհակարծական սկզբան նախածնողը կը համարուէր, և որովհետեւ իւր մտածութիւնները երկար քննութեամբ<sup>2</sup> և բողոքմ պատրաստութեամբ կը յաջողէր ի գրուխ հանելու, եզած չարեաց և վեսանոց զիմաւոր պատճառը կը սեպուէր։

## ¶

Մեծին Թէոդոսի մահուամբը (395ին) Հռովմէական կայսերութիւնը բարձեալ յերկուս բամբուեր էր. բայց այսուհետեւ մէջ մ'ալ պիտի չմիանար։ Արեւելեան մասը բաժին ընկած էր Արկադիոսի, և Արեւմտեանն՝ Ոնորիոսի (395–423)։ Թէոդոս վերջինն եղաւ ի յաշնորդացն Օգոստեայ և Կոստանդիանոսի, որք պատերազմի դաշտին մէջ բանակաց զլուխը անցած՝ պատկառելի ըրեր էին իրենց իշխանութիւնը պետութեան ամէն կողմբ։ Առնեց ջանիւքը, այդ ահազին շէնքը որ շատօնց ի վեր սկսեր էր ի ներքուստ փափէ ու խարիսխի, տակաւին կանգուն կը կենար։ Բայց Թէոդոս իւր հետը տարեր էր հռովմէական հանճարը, և անոր անարժան զաւակացը ժամանակ՝ վիթխարի կազմածը յանկարծ կ'իյնար ու կը փլանէր։

Արկադիոսի յաջորդեց 408ին՝ ութ տարեկան որդին՝ Թէոդոս երկրորդ, որ քառասուն և երկու տարի թագաւորութիւն քշեց։ Խւր կրտսերութեան ատենը, որ կրնայ ըստել թէ կենացը չափ տեւեց, աէրութեան հոգը երկու ամօք երիցագոյն Պողբերիս քրոջը և յետոյ Խրիզափիսս ներքինւոյն թօղուցեր, ու ինքը պատկերահանութեամբ, քանդակագործութեամբ և կրօնական զրքեր օրինակելով օրերը կ'անցնէր, վայելագիր ըստելու կ'արժանանայր։ Ժուժկալ, առատաձեռն և զթած էր բնութեամբ։ բայց այս ձիրքերս՝ զորս պէտք չէ առաքինութիւն կոչել՝ եթէ կորովոյ և շափաւորութեան

1. Փարագեցի, էջ 418–424։

2. Եղիշէ, դ. 19–21։

Հետ միացած չեն, քիչ անգում օգտակար կ'ըլլային, երբեմն ալ վասակար։ Պահոց, սազմաներգութեանց ու եկեղեցականաց պատուիրանաց կարգէ զուրա ուշադիր էր։ Կրօնաւոր մը զինքը բանացրելուն համար՝ կերակուր ուտելէ հրաժարեցաւ, մինչեւ որ լիր պատուհասողն հաճեցու իւր թագաւորին վրային վերցնել բանացրանքը։

Ո՞նչուշտ տարբեր յատկութիւններ կը փնտռուէր իշխանէ մը, երբ զերմանական և հոնական անհամար ցեղեր ամէն կողմանէ խորտակելով Արեւմտեան կայսերութեան առհմանները, կ'ողողէին զիտալիս, զՓարզիս և զԱպանիս։ Երբ Ալարիկ՝ արքայն Վիսիզոթաց՝ սովու բանելով զՀառմ, բնակիչները անօթութենէ կը մեացնէր ու վերջողէս ներս մտնելով աւարի կու տար զոթացի և հոնական կոտադի հրասակաց (410ին) գքաղաքն կայսերաց, որ յերկոտասան դուրսց ի վեր աէր և գաստիարակ եղած էր հին աշխարհին մեծագոյն մասին։ Երբ Ոնորիոս՝ այլ եւս ասպահովութիւն չգտնելով անոր պարագացը մէջ՝ աթոռը փոխազրեր էր ի Շավեննա, իշխանութեան ոսուեր մի ճահիճներով և ծովով պահպանելու համար։ Երբ Վանդակը Գենսերիկաց առաջնորդութեամբ յԱքրիկէ կ'անցնէին ու Ովելիսանուէն մինչեւ ցՏրիպոլիս սպասարուս կը խորտակէին Հռովմայեցոց վեցգարեան տիրապետութիւնը (430ին), կողսապելով զԼարքեզոն և ուրիշ բազմահարուստ վաճառաշահ քաղաքներ, և աւերելով այն բերրի և արգաւանդ նահանդներն որուն ցարենովը կրնարմիայն ապրիլ Խտալիս։ Բայց երկու կայսերութեանց մէջ այլ եւս կոսպ և զործակցութիւն չէր մեացեր, մանաւանդ որ իրերաց զէմ առաւել նախանձ և ատելութիւն կը տածէին քան օտար ազգաց։ Արեւելեանը արհամարչ եղած էր արեւմտեայց իրեւ յունական իշխանութիւն, և արեւմտեանն ալ հոսմէական նշան և կերպարանք մը չպահելով, աւելի Խտարական ըսուելու արժանի էր։ Եւ թէպէտ բիւզանդիան Կայսերութիւնը տակաւին ենթակայ չէր եղած նոյնքան սոսկալի տառապանաց, որովհետեւ բարբարոսաց սաստկութիւնը զիստորապէս զէպ յԱրեւմտես գիմեր էր, բայց աննց բազմութիւնը հետզեաէ ասիական խորերը եկած նոր յաւելուածօք կը խտանայր, ու Գաղղիոյ և Խտալիոյ մէջ յափշտակելու նիւթ մեացած ըրլալով՝ Դանուերը անցնելու և Պալքանեան թերակղղւոյն վրայ յարձակելու կը պատրաստուէին։ Բարբարոս զօրավարաց և իշխանաց իրարու հակառակութիւնէն և զիրար չնշելու յօժարութիւնէն օգուտ քաղել անհնար էր այժմ։ Ատակղաս իւր հրամանաց ներքեւ միա-

ցուցեր էր Գերման և Հռն ցեղերը, ու Հունգարիոյ մէջ հաստատելով զիւր պթուն՝ կը տարածէր իշխանութիւնը մինչեւ Վոլկա և պատկառելի կ'ընէր զայն Ականդինաւեան աշխարհաց մէջ իշխեցող խուժուժ զօրագլուխք, ինչպէս և Գերմանիկ Ալբինէ, նորա հրամանին կ'անապյին։ Քուշանաց ահաւոր տէրութիւնն ալ անոր լուսանաց և ստակութեան համեմ տաեր էր։

Ատափաս պահանջեր էր ի Թէոդոսէ որ Դանուրի հիւսիսային ափանցը վրայ ազատ վաճառատեղի մը հաստատուի. տարեկան հարկ մը վճարուի իրեն. ձեռքը յանձնուին կայսեր իշխանութեան մէջ սպատինող բարբարս փախստեամք, ու Կայսրը խոստանայ դաշինու չկուել Ատափասայ թշնամեաց չետ։ Խնդիրքը կատարուեր էր. բայց սակաւատեւ խաղաղութենէ մը ետքը նորանոր պահանջումներ յառաջ կը բերէր, որոց մերժուելով պատերազմի կը պատրաստուէր։ Խոստանդնուալուսոյ արքունիքը մօսալուտ վասանզը տեսնելով՝ սուհմանագլուխները և սախական գաւառները պարզեր և բոլոր զօրութիւնը եւրոպական մասին մէջ ժողվեր էր։ Ատափաս երեք ճակատամարտիւք խորտակեց կայսեր բանակները, ու Սեաւ ծովէն մինչեւ ցԱզրիականը և Դանուրէն մինչեւ ցըրջակայն Բիւզանդիոնի իւր հրոսակօք լեցուց՝ ասպասակեց ու զերեց զբնակիչս (444ին)։

Թէոդոս՝ որ տակաւին անյազելին Օգոստոս ախտղոսը կը կրէր առանց յազթութիւն մը տարած ըլլարս կամ բանակի մը գլուխը կենալու, Ատափասայ գթութիւնը հայցելու համար դեսպաններ զրկեց անոր ոտքը։ Հռնաց զարհուրելի ինքնակալը պահանջեց լայնածաւալ երկիրներ ի հարաւոյ Դանուրայ, զյաւելումն տարեկան հարկին և պատերազմի ծախուց փոխարէն գումար մը։ Ուզուած զրամը մեծաքանակ չէր. բայց տէրութիւնը՝ կայսեր շռայլութեամբը և կառավարութեան անիմաստ ընթացիւքը այնքան ազքանացած էր, և արոց հասոյթը այն տատիճան նուազեր էր, որ պահանջեալ տուգանաց վճարման համար ծերակուտի անզամոց պաշտանաց զարգարանքը և կանանց գոհարեղինքը աճուրդի ծախուեցան։ Բայց տոկէ Ատափաս պայմանն զրաւ՝ որ Հռն գերիները առանց փրկանաց իրեն յանձնուին. իսկ իւր ձերբակարած յոյն գերեաց իւրաքանչիւրին համար տասն և երկու ոսկի վճարուի, և իր իշխանութենէն փախչելով Յունաց ապաստանալիներն իւր ձեռքը արուին։ Այդ վերջին պայմանդ գործադրելու համար Թէոդոսի պաշտօնեամք կը խողիսողէին փախստէց շատերն որք չէին հաւաներ Ատափասայ երթարու, ուր անվրէալ մահ կը սպասէր նոցա։

Բայց Հոնաց արքայն ետևէ ետև պնդագեսպանս կ'առաքէր յարքոնիս Քիւզանդիոյ, որոց հիւրընկալութեան համար ահագին ծախքեր կ'ըլլար և զանոնք շահելու կամ բարեկամոցնելու համար թանկագին պարգեներ կը արուէր։ Աստիղաս բազմահարուստ օրիորդ մը ուզեր էր իւր կոստանդիսս քարտուղարին տալու համար ի կոութեան. բայց Սատուրնինս կոմսին ազջիկը զոր թէոդոս ընտրեր էր, չհաւանեցաւ հարս երթալ Հոնաց։ Գանգատեցաւ Աստիղաս. «Զվայլիր, կ'ըսէր, որ կայսր մը սուս զրուցէ, նա խոստացաւ իմ հպատակներէս միոյն Սատուրնինեայ գուստը տալու։ Եթէ խոստումը կատարել չուզեր, ահա պատերազմ տամ։ Եթէ անկարող է և կը յանդգնի ոք անսաստել նմա, կը վազեմ անոր օգնութեան»։ Թէոդոս ստիպուեցաւ Արմատիսի մեծատոհմ այրին զրկելու, որ հարսութեամբը և գեղեցկութեամբը նշանաւոր էր տիկնոնց մէջ։ Նքել գեսպանութիւն մի ալ կ'երթար յարգունիս Հունգարիոյ՝ առ կախ մնացեալ խնդրոց վրայ բանակցերաւ. և Խրիզարիսս ներքինին՝ որ այն ժամանակ կը կառավարէր փոխանակ Պողքերիա իշխանուհանցն, գաղտնի հրահանգ մը տուած էր զաւանանութեան՝ գիտակցութեամբ կայսերն, զոր գեսպանաց ընկերացող Վիզիլիսս անուն թարգման մը միայն զիտէր ու պիտի գործադրէր։

Պատգամաւորութիւնը գեռ Աստիղասայ չներկայացած՝ այդ ժածուկ հրահանգ հասեր էր նորա ականջը. բայց նա յարգեց աղքաց օրէնքը, ոչինչ վնասեաց գեսպանաց. ու թարգմանը միայն նեղերով՝ երբ խոստավանեցուց զշարանենդ խորհուրդն, պատգամաւորներ զրկեց ի կոստանդնուպօլիս, որք խորխատարար թէոդոսի զիմացն ելլարով զրուցեցին յանուն արքային Հոնաց. «Թէոդոս մեծահռչակ և յարգելի ծնողաց զաւակ է. Աստիղաս ալ ազնուական տոհմէ կ'իջնէ, ու իւր անձնական զործերավը հայրենի փառքը պահպանեց։ Բայց թէոդոս զրժեց հօրմէն ժառանգած պատույն, և հարկատու մինելով՝ գերւոյ չափ նուաստացաւ. պարտի ուրեմն յարգել այն անձը զոր բախտն ու արժանիքն իրմէ վեր զասեցին, և ոչ թէ անպիտան սորդի նման՝ գաղտնի որոգայթիւք իւր տիրովը զէմ զաւաճանել» (448ին)։

Կողայր թէոդոս։ Աստիղասայ բարկութիւնը իշեցնելու համար անմիջապէս աւագագոյն նախարարներէն զնոմիսս և զԱնատոլ զրկեց։ Աստիղաս քամահրանօք ընդունեցաւ բայց ուրիշ կերպով վրէժ տանել հարկ շտեսու. հաշտութիւն ըրաւ. ու այդ հաշտութիւնդ՝ բիւզանդացոց զօրաւոր զիմոկալութեան չափ յոգնածախ եղաւ։

Այդ էր թէոգոսկ որոյ օգնութիւնը կը խնդրէին եպիսկոպոսունք  
և նախարարքն մեր՝ Յաղկերտի դէմ:

Բայց Եղիշէ և Հայք գուցէ բաւական տեղեակ չէին վերջին իւ-  
րաց, ու թէոգոսի ժամանակէն՝ միայն Պաղքերիայ խռչեմ և մեզմ  
կառավարութիւնը և զնացքը տեսներ կոմ լսեր էին: Առժամանա-  
կեայ պանդիստութեամբ ի քաղաքն կոյսեր, Առհակայ և Մեսրոպաց  
աշակերտքն գուցէ չէին անդրագարձեր՝ թէ հոնուեղի արքունեաց  
մէջ՝ միայն չողուարարք էին յարգելի, իսկ իմաստունք և հանձաւ-  
րեղք՝ արհամարհք: Բայց քիչ մը վերջը (441ին) Եղիշէ անձամբ  
պիտի տեսնէր ու իր զրշաւը վկայէր թէոգոսի ապիկար և վաս-  
ընթացքը, որ վասն քրիստոնեաթեան հալածեալ և կայսեր քաղաքն  
ապաւինեալ պարսիկները բանեց ու մասնեց նոցա դահճին՝ Յաղ-  
կերտի ձեռքը, որուն ուրիշ ամէն ուզածն ալ կատարեց<sup>1</sup>, ու տա-  
կաւին կշտամբանաց խոսք մը չգտնելով նորա համար, «Երանելի և  
այր խաղաղուաէր ի Քրիստոս» և «մեծ թագաւոր» կը կոչէ զնաւ-

## Դ

Այդ հակասութիւնքն աւելի նշմարելի են Յաղկերտի նկատմամբ  
զրուցածներուն մէջ:

Ասսանեան պետութիւնը որ այն ատենը Յունաց աշխարհէն մին-  
չեւ ի Հնդիկս տարածանէր, սահման ունէր զկալկաս, գնալի Կասպից  
և զԱքսոս, և հարուային կողմէն զՊարսկային ծոցը և Հնդկաց  
ծովը<sup>2</sup>:

1. Եղիշէ: Ա., 3:

2. Դժուարին է կատարելասէս ճշշ-  
դել արեւմտեան հիւսիսային սահմանաց  
այն մասը որ և զՀայս յերկուս կը բա-  
ժանէր. մեր պատմագրաց մէջ գոհացու-  
ցիչ տեղեկութիւն չգտանք. գուցէ եւս  
Պարսից և Յունաց մէջ երբէք այնպէս  
ճշդիւ որոշուած չէր. ինչպէս սովոր են  
ընէլ այժմ սահմանակից տէրութիւնք:

Ըստ Պրոկոպիոսի՝ (Aneodata, էջ 623, Isambert), Բիւզանդեան կայսե-  
րութիւնը կը յանդէր ի Իրէ. Տրայանոս

արդարեւ աւելի անգին բանակ անցու-  
ցեր և մինչեւ Լազերու և Սագիդաց աշ-  
խարհին մէջ զրանիստ բերդեր կառու-  
ցեր էր, բայց հռովմէտկան իշխանու-  
թիւնը տեսողութիւն չէր ունեցեր ան-  
դանոր և ոչ իսկ Լազերու և Շիզէի մէջ-  
տեղը՝ լեռներու վրայ բնակող Շանիւս  
կոչեցեալ վայրենաբարոյ և զրեա թէ ներ-  
նազոււխ ժողովրդեան վրայ: Բաղդատե-  
լով եւս Եղիշէի Բ. 26 և 27 հատած-  
ներն և Փարագեցուն 184, 219, 220 է-  
շերը, կընանք մօտ ի մօտոյ հաստատել:

Այս ընդարձակածաւալ տէրութիւնս՝ ինչպէս Հռովմայեցւոցը, հիւսիսային աղգերէն խորտակման դարչուրելի վտանգի մէջ էր: Հոնք՝ կովկասեան գոներէն, Քուշանք կամ Հեփթառք՝ Ոքսոսէն, յորդուխաղաց հոսանաց նման կը վագէին զէպ ի հարաւ: Հարկատու աղգերէ՝ Հայք, Վիրք և Ողումնք, կէս մը քրիստոնեայ ըլլաւնուն, կէս մի այլ տուելի եւրոպականացեալ գտնուելնուն համար, չէին կրնար յօժարի ասիսկան քաղաքականութեան լծին տակ մը նոլու, և երբ քիչ մը նեղուէին, աշուշնին Հոռոմոց կը դարձնէին. մանաւանդ որ իշխող աղգը՝ Պարսիկը՝ մոգական օրինաց գորութեամբ վերստին կանգնելով, հիմն էին զրած կառավարութեան զգենն իւրեանց:

Կովկասային անցքերէն՝ Աւանաց դուռը որ այժմեան Ալատիքավշաս քաղաքէն ի Մցխէթ իջանող կիրճն է, գիւրին էր մէկ երկու մանր զգեկօք բռնել: Բայց լեռնագոտւոյն արեւելեան բազկաց և Կատաղից ծովան մէջտեղի տափարակ վայրն ուր ի հնուց հետէ բերդաբազ մը և պահակ որմ մը շմուռած կայր, բաւական ամրութիւն չունէր զարշաւանս արգիլելու համար: Խակ Խորասանի կամ Հերագայ կողմէն երկիրը բոլորովին անպատճապար էր, ու Յաղկերտի նախորդին Վասմայ Եթ ատենը Քուշանք այնպիսի բազմութեամբ եկեր էին, որ արքայից արքայն Ատրպատականի լերանց մէջ տախչելու և Տէրութիւնը հիւսիսայնոց խոստանալու ստիպուեր էր. Հոռոմք ալ լերանց արեւելեան սահմանացը վրայ Կարնոյ ամրացեալ քաղաքը կանգնելով՝ Ասուննեանց ներքեւ գտնուող մերձակայ հայ գաւառաց մէջ աղգեցութիւննին օր ըստ օրէ կը տարածէին:

Յաղկերտի առաջին մոտածութիւնը եղաւ Յունաց հետ զարնուիլ, զորս իւր թշնամիներէն հզօրագոյնը կը կարծէր. բայց նորա Ատար-

թէ սահմանագիծդդ Թիգէէն միսեալ կը բաժնին մէջ դուրս ցցուած գիրք մը կուրարանայ դէա ի հարու ի գաղաթն այնուհետեւ Ապերայ և Որջըն-հաղայ մէջտեղէն կը կորէր զձորիս, և Տէրութիւնայ հիւսիսակողման լերանց վը- բաժնին մէջ դուրս ցաւանալով կը հասնէր ի Տէրութիւնու: Ապա վերստին քիչ մը ի մուտա չեղելով ներս կ'առնէր զՄա- դիւրս էր. այդ ենթագրութեամբ աւելի նաևնի գաւառը, և Պինկէօլ լերանց վը- բայցէն և Պաթման-Ալու վտակաւ կ'իջա- դիւրին կ'ըլլայ մեկնել թէ ինչու համար թիւրին կ'ըլլայ մեկնել թէ ինչու համար զեւ արիւնակեղ պատերազմի (420-422)

Ասոնկով Կարնոյ դաշտը Պարսից ընդ մէջ Յունաց և Պարսից:

զասոյ յարուցած տառապանաց պատճառաւ ամենէն դիւրաւ զիջաւ նողն եղան։ Այնուհետեւ բոլոր ուշադրութիւնը կարձուց Դարբանագոյ և Ճորայ պահակին վրայ, զոր ահազին ժախիւք այնպէս ամրացուց՝ որ Հոնք դադրեցան անցնելէ<sup>1</sup>, և մանաւանդ Քուշանաց գէմ՝ որոց հետ կարելի չէր յաջորդւթեամբ պատերազմ վարել ի թագաւորանիստ քաղաքէն։ անոր համար հաստատեց զիւր բնակութեան տեղին ի Նիւշափուր՝ Խորասանի մէջ, ու ասիական ինքնակարաց անսովոր յարաւեւութեամբ եօթը տարի շարունակ կռուեցաւ և վերջապէս զալեց զանոնք։

Այդքան յաջորդւթեանց վրայ ալ զիւրին երեւեցաւ՝ Հայոց, Վրաց և Աղուանից իւր կամքը կատարել տալ և զանոնք իւր միւս հայատակացը պէս զրադաշտական օրինաց հնագանդեցնել, մանաւանդ որ Հայաստանի մէջ զօրաւոր կուսակցութիւն մը կը խստանոյր իւր այս նպատակին օժանդակելու, և եթէ Հայք զամ մի ընդունէին զպարակական գենը, Վիրք և Աղուանք նոցա պիտի հետեւէին։ «Եւ յորժամ Հայք սերտիւ մեր լինին, Վիրք և Աղուանք այնուհետեւ մեր իսկ են», Կ'ըսէր Միհրներսէն ցՅազկերտ (Փարազ, 119)։

Այդպիսի քաղաքական օգուաներ ձեռք բերել կարծեցին իմաստագոյնքն ի կայսերաց Հայվմայ՝ Տրայիանոսք և Աւեղիոսք, երբ հալածեցին զԱկեղեցին։

Մէք որ այժմ աւելի հանդարա և անկողմնակալ աշօք կը նկատենք զիրս այնր ժամանակի, սխալմաւնք մի համարելու եմք մեր նախնեաց տաելութիւնը Պարսից դէմ և համակրութիւնն առ Յոյնս, որով և Ասսանհեանց անվասահութեանը և թշնամութեանը պատճառ կու տային։ Հայաստանի հնացեալ ձորձոյ նման յերկուս ծուէնս պատառելէն<sup>2</sup> և այս զրացի և մեծազօր պետութեանց մէջ բաժանելէն ի վեր (յամի Տեսան 384), խելահաս ոք ալ չէր կրնար յուսուլ զայն վերսաթին միացնելու անկախ թագի ներքեւ։ Մինչդեռ Հռոմեակայ մահուրնէն եաքը իւրեանց մասը այլէւայլ գաւառներու բաժանելով, յոյն կամսերու ձեռօք կը կառավարէին և զրնակիչս հոռամացնելու համար կ'արգիլէին հոյկական դպրութեանց ծառալումը, Արեւելեան բաժինը, որ կարեւորագոյնն էր, դեռ շատ առեն ունեցեր էր իւր արշակունի թագաւորները։ Պարսիկք ոչ միշտ կրօնից կատարեալ ազատութիւն տուած էին, այլ մասնաւոր

1. Տես Եղիշէ, Ա, 14. Ե, 18. և ծան.<sup>2</sup> Ա, 9. 2. Փարազ. էջ 2:

փոյթ ունէին Հայոց ազգութիւնը ամբողջ և յունականութենէ անշխառն պահերու, քաջալերերով և պահանջելով հայերէն լեզուին դորժածութիւնը:

Արգարեւ՝ Սասանեանց վարչութեան կերպը աւելի կեդրոնացեալ էր քան զՊարթեւացն, որք տէրութեան խրաքանչիւր նահանգը յորդւաց յարդիս յաջորդող մէկ մէկ թագակապ-կուսակալի յանձներ էին: Արդպիսի ինքնուրոյնութիւնք ուրիշ ամէն կողմէրէ վերցուեր էին. բայց Հայք, Վիրք, Ազուանք և Լիմնք տարբեր բարուց և քաղաքականութեան աէր՝ և զօրաւոր և թշնամի ազգի մը մերձակից գտնուելնուն համար, գես կը վայելէին իրենց բնիկ իշխանները, և Արտաշէս Գ Արշակունիաց վերջինը չէր ըլլար, եթէ անխաղաղասէր և անիմաստ նախարարաց թախանձանքը չհրաւիրէր զմարզպանութիւնը:

Չմոռնանք սակայն՝ թէ ինչ պակասութիւն որ ըրած ըլլան մեր նախնիք յառնչութիւնն զօր ունէին դրացի ազգաց հետ, տառնք բաւական չին արգարացնելու Յագկերափ յարուցած հալածանքը. որալիսեւ Արտաշէս Երրորդի թագաւորելէն ի վեր, այս է զրեա թէ երեսուն տարի, տանց ապատամբութեան և խլոտման հպատակեր էին Պարսից: Չմոռնանք որ Սասանեան կառավարութեան հիմունքը հաստատեալ էին կրակապաշտ մոլեւանդութեան վրայ, որ հետզհետէ կը սասականայր քանի որ Փրիստոնէութիւնը կը ծաւալէր տէրութեան ամէն կողմը: Դարսովենք այն կուրութիւնը, որ զկրօնական գգացմունս բռնարարելով՝ աւելի կը զօրացնէ զայն:

Եւ երբ «այնպիսի պատուական զինուորութիւնն հասեալ էր ի չարաշուք անարգութիւն, և հայրենի պատութիւնն չարաշար կայրի ծառայութիւն մարգախոշոշ բռնաւորին»,

Երբ «քաջ նուհատակին մեր անկան ի մեծ պատերազմին և բազում վիրաւորք տապալեցան յարիւն ապաժոյժ ի մէջ դաշտին և ամենեցուն մարմինքն եղին զէշ թռչուց և կերակուր վագանաց . . . և ամենայն փափկութիւնն Հայոց ի վիշտ վտանգի և յանհնարին ապականութիւն»,

Երբ մարդիկն Հայոց ազազակէին, «Զի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք, և կամ ընդէ՛ր տեսանիցեմք զարեւ յետ մերոց սիրելեաց», շղարմանանք եթէ Յագկերափ երեւի Եղիշեաց՝

«Իրեւ պատկանգարան զոր ելից սասանայ գեղեալ նետիւք», կամ իրեւ «զգազան մի կատաղի» որ «եղջիւր ածէր անօրէնութեամբ և \*զոռալով հող հանէր ընդ չորս կողմանս երկրի», որ

« նեղեալ տաղնապէր անխաղսողասէր կենօք . քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն, արիւնչեղութիւն » . « մերթ շանթէր գալարէր իրրեւ զօձ թիւնաւոր, մերթ պարզէր զոշէր իրրեւ զատիւծ զայրացեալ, զելոյր, զլորէր, տապալէր երկդիմի մոօք, զխորհուրդս կամացն կամէր կատարել » :

Կամ « իրրեւ զշարագեւ մի՝ որ ոչ եւս զտղարէր յուզել և շարժել զրուք ձմերայնւոյ, որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ ալէկոծ խռովութեան, և ոչ զուզնաքեայ վեր ի վերոյ, այլ անդստին յանդնդոց բարձրանալ փրփրել կուտակել՝ վիշապաձայն որտալով, զազանարար գոչելով առհասարակ զողացուցանէր զտիեզերական իշխանութիւնն, որպէս փլեալ տարածանիցի համատարած ամենայն ի վերայ լերանց, խորոց, ձորոց, ապականեալ միանգամայն զլայնութիւն դաշտացն վայելութեան » :

Նմանութիւնները իրարմէ վսեմ և իրարմէ սասափիկ կը հոսին ետեւէ ետեւ, բայց առանց պաղատկելու հեղինակին սիրուը : Եղիշէ որ Յաղկերտի որդւոց Որմղայ և Պերոզի միմեանց դէմ մզած քաղաքական պատերազմին ատենը ձեռնարկեր էր իւր պատմութեան, մօտալուս կը աեսէր Սասանեան ինքնակալութեան կործանումը . « Կա և արջկ օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզօրագոյնք կը սուին...» և այլն : Բայց ասով ալ չգոհանալով և իրրեւ թէ Յաղկերտի հետ դէմ առ դէմ մոքասի ուզէր, խաղայ բանիւք ի վերայ նորա . « Այր՝ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբռքիս, զի՞ շիջանիս, զի՞ կոչես ի խորհուրդ զայնսուփիկ, որոց զոգիսն ձեր ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականց յապականութիւնն, և զապականելի մարմինդ գէշաքարշ արարեալ՝ իրրեւ զազիր մեռելուի ի բաց ընկեցեալ : Ազաքէն զայդ կամիս զի ծածկեսցի զխորհուրդ ամբարշտութեանդ . տեսջիր յորժամ յայտնեսցի , ապա զիտացես զելս կատարածի դորա » :

Այս քաղուածներէս կրնայ ոք կարծել, թէ Յաղկերտ վայրագ և արիւնարրու իշխան մի էր, և Սասանեան կառավարութիւնը՝ այդպիսի գտղանի մը ձեռքը զարհուրեի զործի՝ հպատակ ազգերը թըշուաս ընելու համար :

Ոչ այդպէս սուկայն Եղիշեայ զրութեան ընդհանուր տպաւորութիւնը : Թէպէտ երբէք հեղինակին մտքէն անցած չէ յարգելի ընել Յաղկերտի նկարագիրը, ու պատշաճ զովութեամբը կը մեծացնէ միշտ զի՞ հւոնդ, զՍահակ, զՎարդան, և այլն, այդքան հանդիսացելոց մէջ Յաղկերտ կը ներկայանայ մեզ գարծեալ իրրեւ ամենէն հոյակապ

պատկառելի անձը, որոյ զվարուն մէջ կ'ամփոփին Ասաննեան կառավարութեան բոլոր խորհուրդքը, և ձեռացը մէջ՝ տէրութեան համայն ոյժը, և որուն քով փոքր կ'երեւայ նոյն ինքն « յոյժ իմաստնոյ » մեծի հազարապիտի Միհրներսինի կերպարանքն<sup>1</sup> :

Պետութիւնը օտար թշնամիներէ ապահովելու համար անխանջ յարատեւութիւնը արդէն աեսանք. և թէպէտ նոյն հաստատամտութեամբ որով խորազմի անապատի մէջէն կը կոռուէր Փուշանաց չետ, ջանաց և զքրիստոնէութիւնը ջնջել և անպատեհ միաձեւութիւն մը հաստատել տէրութեան ամէն կողմը, թէպէտ Հայոց ապստամբութիւնը ահագին վտանգ մը եղեր էր և Վասակայ ձեռօք յաջողեր էր զայն նուաճել, բայց երբ իմացաւ թէ նա իւր առաջին նինդութիւնքը ժածկելու համար երկպառակեց զգունդն Հայոց, « Դառնացաւ յանձն իւր և ասէ անսուտ երգմամբ, եթէ ապրեսցի անօրէնն այն ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել նմացրաժակն զառնութեան մահու » :

Իսկ որշափ ցաւ կը յայտնէ Վարդանայ մահուան վրայ :

Վազգեզն օրէնքը կը պատուիրէին չէն, բարեկարգ և բազմամորդ պահել զաշխարհ<sup>2</sup>. քանզի աւրշակել և կրծանելը Հարամանոյ ծառայել էր : Խնչպէս կը տիրի Յազկերտ Հայաստանի աւերմունքը լոելով, կ'ուզէ իրաց սկզբնապատճառը քննել. Միհրներսին Վասակայ վրայ կը ձգէ յանցանքը, բայց կասկածու ինքնակալը չհամոզուիր. — « Զայդ ևս ասեմ քեզ, արքայ քաջ, կը կրկնէ Միհրներսին, եթէ կամիս ստուգութեամբ լոել զարդարն, որք զըլիստորք քրիստոնէիցն են ի Հայոց, առևր կոչել և գան յօժարութեամբ և ասեն քեզ զամենայն արդարութեամբ » :

Իրաւասիրութիւնը Ասաննեան կառավարութեան ամենէն աւելի յարգեալ սկզբունքներէն մէկն է, վասն որոյ կարգէ դուրս կը զգուշանային պատժելէ զոք առանց զատելու: Վասակ առանձին տեսութեամբ կը ջանար Յազկերտի աշքը մտնել, « սակայն ի միտսթագաւորին ոչ կարէր զանձն արդարացուցանել. այլ պատտախանի տրար նմա և ասէ. Յորժամ քրիստոնեացքն եւս եկեցեն, հասարակ լուսաց յատենի »: Վերջապէս հրապարակաւոր հարցուփորձը Վասակայ մեզապարտութիւնը երեւան հանեց, ու թագաւորը Մի-

1. Պարսիկ Յազկերտ Բէ կրկնեան տիառ Այիֆան-Շօոր « սիրոզ ապայից » կամ զոս տուած էին. Ա. Կորմ որ է « քաղ- « բարեկամ » զօրաց ». Միհրիսնաւ ցրաբարոյ. ( Միհրամիթ-թագարին. 2. ՏԵ՛ս մոզգետին իսուակցութեան Journal Asiatique 1841, 273). Բ. զերջին մասը. Գ. 21, 24:

Հըրներսէցէ լսելով անոր դէմ եղած վկայութիւնքը՝ « բարկացաւ յօյժ և ի խոր խոցեցաւ » : Բայց և այնպէս չէր ուզեր տակաւին դատապարտութեան վճիռը տալ . « Լուս եկաց աւուրս երկուասանն մինչ ի զրուխ չոգաւ փուրսիշ ամբաստանութեանն » :

Յազկերտ իւր իննեւտասանսեայ թագաւորութեան միջոցը ըգ-Միհրներսէց հազարապետութեան պաշտօնին մէջ պահեր էր, նոյն պէս և Գևնչագհոյ շարունակ թագաւորին մտերիմ և հոմբարապետ մնալէն հետեւցնելու եմք՝ որ Յազկերտ լաւ ընարել և գործած՝ լ զիտէր զիւր պաշտօնեայու:

Բայց ասոնք ի՞նչպէս կը պատկառին իրսէ . « Եիւսալաւուրտ աւ հազին յազմութիւն մը քիչ մը սուզ ձեռք բերելուն համար՝ կը վախէր եղած վկասը թագաւորին իմացնելու, բայց և այնպէս չէր համարձակեր ծածկել : Իսկ մայպետը, անդարձապետը և համբաւ բապետը՝ անսպատին մէջ մահապարտուց՝ աստուածոց դէմ արտա-բերած հայհոյութեանց առանց այլայլութեան մտիկ կ'ընէին, բայց նոցա բերանէն թագաւորին անձին նստաստակոն խօսք կամ եր-զիծանք լսելէն անզամ կը զողային » :

## Ե

Սակայն Երիշեայ զրքուկին մէջ Յազկերտէն աւելի սեւ մարդ մը կայ . որոյ վրայ խօսած ասենը կարծես՝ հեղինակին վառվուն հանձարը կը պաղի, և միայն անոր վախճանը պատմելու աղագաւ կը բորբռքի . սոսկալի նկարագրութիւն մի կու տայ նորա սաստակ-ման, ու ասով եւս շատանալով՝ կ'իշեցնէ զնա ի գժոխս, ու աշ-խարհիս վրայ նորա ստուերը հալածելու համար յաւիտեան՝ կը զրէ այդ յիշատակարանդ՝ « ի կշտամբումն յանդիմանութեան մեզաց նորա, զի ամենայն որ զայտ լուեալ զիտասցէ՝ նզովս ի հետ արկցէ և մի լիցի ցանկացող գործոց նորա » :

Զհայրենիս անձնական շահուց սոնակոխ ընովին՝ զարհուրելի

4. Ը. 87. — Միհրիման իւր պատշ սունը այսպէս կը վերջանայ . « Բոլոր մութեան մէջ Յազկերտի վրայ շարաւ կենացը մէջ իբրեւ զօձ տաժանեցաւ և դրուած տաղ մի կը դնէ, որոյ վերջին իբրեւ զմրջիւն աշխատ եղեւ » :

պատուհաս, որոյ սասառկութիւնը տասնեւչորս դարէ ետքն ալ չամքեցաւ տակալին:

Բայց մենք պահ մը ձեռուընիս բռնենք այն քարը՝ զոր կը պատուիրէ մեզ Եղիշէ նետել նորա գերեզմանին վրայ, ու տեսնենք թէ ովք եղաւ Վասակ<sup>1</sup>, ինչու համար մատնեաց զանձն իւր այդպիսի քառմենիլ զատակնիքի. և միթէ իրաւացին է այն սոզգային վճիռը որ զնա միակ պատճառ և պատասխանատու կը համարի եղած չարեաց և մնասուց:

Վասակայ նախաընթաց վարուց և զնացից վրայ քիչ տեղեկութիւն ունիմք<sup>2</sup>, որդի էր սա Բարկայ, որդւոյ Անդովկայ անուանի իշխանին Ախնեաց և հօրն Փառանձեմայ. Պապայ երկու որդիքներէն՝ զորս մեծն թէոզոս միանգամայն թագուորեցուցեր էր Հայոց վրայ, մոտածելով որ երկուքը չեն կրնար միարանիլ յապատամբութիւն, Աքշակ Գ. իրեն կին առեր էր Բարկայ անդրանիկ աղջիկը, մինչ Վաղարշակ Բ. ամուսնացեր էր ընդ դատեր Ատհակայ տապետի Բաղրատունուոյ:

Բայց Անդովկայ մեծ յանդգնութեամբ Տիզրոնի ապարանքը աւարեէն ի վեր (350) Շապուհի ցասումը հայածեր էր զնա և զաշխարհն Ախնեաց աւրշտկեր էր: Դա չկարելով մնալ ի Հայաստան՝ Մեծին թէոզոսի էր ասպալիներ, իսկ որդին Բարիկ աստանդական կը պատէր մերժեալ ի հայրենի տէրութենին: Բազում տարիներ առանց նահապետի մնաց Ախականը, մինչեւ որ Բարիկ Հոնոց Հոնագուր իշխանին մենամարտութեամբ յալթելով (յամի տեսոն 378)<sup>3</sup>, արքայից արքայն մոռացաւ հօր յանցանքը ու Բարկայ դարձուց Ախնեաց տէրութիւնը: Երբ քսոն և մէկ տարի իշխանութիւն

1. Ի՞նչ է անուանդ սառուզանոււ. 2. Ահա ըստ պատմշաց ազգատահմեթիւնը, և Բազանա, և արդի պարսկերէն՝ Վասակայ.  
վազայ՝ «Ճաղէզ»<sup>4</sup>:

ԱԿԴԱԿԱՅ			
Բարիկ	Վաղինակ	Ասմ	Փառանձեմ (կին գնելոյ)
Դարա	Վասակ ուրացեալն	Ա. Ա. կին Գ. Աքշակայ	
Առբներսէ	Բակուր	Բարեէն	Ա. Ա. կին Վարազվազանայ
3. Օրբելեան, Համ. Ա, 90-91:			

վարելէ և երկիրը բարեկարգելէ յիսոյ մեռանէր Բարիկ, որդին Վասակ, զեռ պատանի, Պարսից զուռը կը զանուէր՝ անշուշտ իրբեւ պատանդ։ Բարկայ սենեկապետը Սամ Վնթունի՝ արտօրնօք կու դար յարքունիս, և իւր տիրոջը մահը արքայից արքային իմացնելէ ետքը կը աեսնուէր Վասակայ հետ, ու անոր կը զրուցէր՝ թէ թաղաւորը<sup>2</sup> կը խորհի զնա տէր ընելու Սիւնեաց։ — «Զիս առնէտէր, մինչ բնական իմ հարցն է ժառանգութիւն Սիւնեաց<sup>3</sup>», կը զոշէր Վասակ։ Այս խոխտ պատասխան արքային ականջը կը հասցունէր Սամ, և Սիւնեաց իշխանութիւնը տիրաննենդ ժառանգին կը տրուէր։ Բայց նա չէր կրցեր երկար վայելել իւր մեղմեխանաց պտուղը։ տարի մը ետքը մոլեխինդն խմելով դաւաճանութեամբ՝ մեռեր ու տեղն անցեր էր Վաղինակ եղբայրն Բարկայ (401-410)։ Այս երկրորդ զրկանքս ալ պէտք է մեծ ազգեցութիւն մը ըրած ըլլայ գեռահասակ Վասակայ մոտաց և բարուց վրայ։ Բայց ինչ առելութիւն որ զգաց Պարսից գէմ, կ'երեւի թէ վարպետութեամբ ծածկեց, ու օրէ օր արքունեաց համակրութիւնը և վասահութիւնը զրաւելով, փոխան հայրենի իշխանութեան՝ ընդունեցաւ Վրաց մարդպանութիւնը<sup>4</sup> և իրեն յանձնուեցաւ նաև ձորայ պահակը։ Վաղինակայ բնական նախանձորդը Հայոց և Հոնաց մէջտեղ զնելով Սասանեանք, ազահով և կարող ձեռաց մէջ կը համարէին պահակին պահպանութիւնը։ Թագաւորք ստէպ կը գործեն այն սիսականքը, որով կը վատահին իրենց անիրաւած պաշտօնէից, կարծելով որ նոր երախտիք մուցնել կու տան հնագոյն և մեծագոյն զրկանքը։ Վասակ ալ չէր մոռացեր իրեն եղածը, և Սասանեանց լուծը թոթվելու հնարը կ'որոճայր մոտացը մէջ։ Այս նպատակիս հասնելու համար, որովհետեւ կրնար ի վերջոյ կարօտիլ Հոնաց օգնականութեանը,

1. Բառ բանից բուզանդայ սակայն Բարիկ ի վերայ երդրին և զերկում եւս Սամ Սիսական տոհմէ էր. քանզի առէ, ըստ իւրաքանչիւր չափու. և էր Բարիկի ի նուաճեն Մանուէլի Մամիկոնէի յետ նիզակակից զամենայն աւուրս կենաց վտարանգութեան Վարազդասոյ (377-80) և ի գալ առ նա մեացորդացն «ի կայ հօրեղբայրը կ'ըլլայ»։  
տանէն Սիւնեաց, պատանեակը երեք 2. Այս է Վասամ Դի, կոչեցեալն Աըր-  
թեացեալը ի կոտորածէն Պարսից ... և ման։  
անուանք նոցա՝ միում Բարիկ և միւ- 3. Օրբելեան, հու. Ա., 90-91։  
սումն Սամ, միսումն Վաղինակ, և ըն- 4. Տե՛ս Եղիշէ, ի, 32. «Հաւատա-  
կալաւ զնոսս զօրավարն Հայոց Մանուէլ, ցէք գմա զաշխարհն Վրաց»։ և Փարոզ։  
և եղեւ նոցա օգնական, և դարձ արար 247. «Ես մինչ Վրաց մարզպան էի և  
նոցա յերկիրն իւրեանց, և կացոյց ըզ- դուռն Աղուանից յիմում ձեռին էր ...»

նոցա զօրագլխաց հետ կը բարեկամանայր և գաղտնի ուխտիւ և երդմամբք զաշինս կոէր նոցա հետ<sup>1</sup>: Արանգամայն և դհայրենի ժառանգութիւնը հօրեղբօրը ձեռքէն հանել ուղելով, « ետ սպանաւնել նենգութեամբ և քութեամբ » գլաղինակի<sup>2</sup>, անշուշտ բանարշեամբ հասկցնելով Դրան՝ թէ Հայք Վաղինակայ միջոցաւ Հոնոց հետ գաղտ կը բանակցին: Աինեաց իշխանութիւնը առնելէ հաքը<sup>3</sup> Վասակայ անունը և ազգեցութիւնը հետզհետէ բարձրացաւ և ամենայն նախարարաց աւագ եղաւ<sup>4</sup>, որպէս և Վէհ-Միհրշապհոյ տեղ կարգեցաւ մարզպան Հայաստանի (442ին): Բայց նու չկարէր այս շափովը շատանալ, հիմայ որ աշխարհին դրամական միջոցները և իշխանութեան երաստանակը ձեռքն անցուցեր էր, իւր նախակին տենչն ի զլուխ հանելու համար պիտի ջանայր օգուտ քաղել առաջին առաջէն որ ինքնովին պիտի ներկայանայր, կամ զոր ինքը պիտի յարուցանէր:

“Ե՞րին միջոցին Հեռան՝ Հոնաց զօրավարը՝ Ճորայ պահակէն անցանելով խորասակեց զպարակական զօրսն զորս Ասաննեանք կը կեցնէին միշտ Ազուանից երկրին մէջ՝ զպահակը պաշտպանելու, միանգամայն և զշայս զոգելու համար եթէ խրատէին<sup>5</sup>: Հեռան իրեն դաշնակից ըրած էր զբազասական արքայն, և Հայոց Մարզպանին հետ արդէն համամիտ ըլլալով՝ արձակ համարձակ կ'ասպատակէր Յունաց երկիրը և շատ աւար և զերի կը ժարավէր ի Հոսունց և ի Հայոց և ի Վըրաց և յԱզուանից<sup>6</sup>: Պատեհ էր Վասակայ ազատութեան դրոշը կանգնելու, բայց Ասաննեանց թագաւորը արթուն գտնուեր ու զբազասական արքայն մեսցնել տալով՝ զործը խափաներ էր<sup>7</sup>:

1. Եղիշէ, լը, 32. և Փարզ, 247:
  2. Եղիշէ, լը, 37:
  3. Վասակ Վասահապհոյ ժամանակ իշխան եղեր էր (Որբել, էջ 91), գասն որոյ ասոր թուականը 412Էն ասդին չի կրնար անցնիլ:
  4. Եղիշէ, գի, 20: Տես և Գանաւակն ի Սոփեր Հայկ. հաւ. 6, էջ 133:
  5. Այդ բանակդ 10,000 այրումի էր. Եղիշէ, գի, 23:
  6. Եղիշէ, լը, 30:
  7. Բրիսկս Պանիդէն իւր պատմութեանը մէջ կը յիշատակէ Հոնաց մէկ արշաւանքը, որ գուցէ Հեռանայ առա-
- ջնորդութեամբ եղածն է. Առախղասայ զօրավարներէն մին անապատ և ճախճառուած երկրէ մը (զոր Հառվելյայեցիք Մէսփեան լիճը կը կարծէին) անցնելէն ետքը, լերանց մէջն յառաջ խաղացեր ու տասն և հինգ որ արշաւելէ ետքը Մարաստանի սահմանը հասեր էր. անդ գաշտի մէջ Պարսից զօրաց հետ յաջուածութեամբ պատերազմելէն ետքը, թշնամույն բազմութենէն տախուեր էր ու րիշ ճամբով մը ետ քաջուելու, թողլով զմեծագոյն մասն աւարին զոր ժողովեր էր: Կիպրըն, հաւ. գի, 556:

Այդ մէկ քանի մանրամասնութիւնը բաւական են մեզ յայտնելու վասակայ բարոց ընթացքը և խորհուրդքը։ Բայց պէտք չէ փութալ զավեռու զշայասահան ինքնազլուխ ընելու փափազը։ այդպիսի մեծ գործ մը կամ անձնական մեծամեծ շահատակութեամբք և կամ այլոց քաջութեանը և աշխատութեանցը օգտակար և պաշտամ գործածութեամբը կրնար յաջողիլ։ Վասակ որի մարտի վզերուն կռնակը պահուըտող անձ մի էր<sup>1</sup>, և որ գուրկ ըլլալով ի պատերազմական հանճարոյ, բաւական անձնուրացութիւն ու շունէր այլոց յաղթանակներէն չզշարելու համար, չէր յարմար այդ նպատակի ի զուտիս հանելու։

Առաջին սոսիթը փափացնելէ յետոյ՝ Վասակայ ուրիշ մը ներկայացաւ։ Եսպիսմարտաց խիստ և խրսխս պատասխանին վրայ Յաղկերտ ի գուռն կոչեր էր Հայոց զիխաւոր նախարարքը, և անոնց՝ բանութեամբ և սպառնայեօք արեգական պաշտօն մատուցանել տալէ յետոյ, իրենց երկիրը նրկեր էր բազմաթիւ մոգերով՝ մնացած հայերն ալ մազդեզն օրինաց գարձնելու համար։ Քրիստոնէութեան տեղ տարերաց պաշտամոնքը հայ մատաց մեծազոյն մասին մէջ սոոզորելը շատ գժուարին էր, բայց աւելի գժուարին պարակական պիոդ և այլանդակ բարքը ընդունելի ընել Հայաստանեաց։ Ուստի քահանայք և աշխարհիկք, արք և կանաքք, աղատաք և շինականք միահամունք ելաւ։ Երբ ամենայն կողմանէ կը պատրաստուէին ուժագին զիմանալութեան, որուն յաջող ելք կը խստանայը ամենեցունց միութիւնը, յանկարծ պատմիշը կը զրուցէ մեզ՝ թէ Վասակ իւր զօրսքը Աիսնեաց երկիրը քաշուեցաւ։

Ի՞նչ էր այդ անջատման պատճառը։ ըստ Եղիշեայ՝ «Վասակ սրտի մտօք կալեալ ունէր զպարսկական օրէնս» և «ոչ ի բաց կացեալ էր յուխտէն հեթանոսաց ըստ ներքին խորհրդոցն իւրոց»։

Այդ մեկնութիւնդ եթէ բառական նշանակութեամբը առնեմք, անընդունելի է։ Վասակ՝ թէպէտ Աիսնեաց ամստէրութիւնը ձեռք անցնելէ ետքն ալ «այր խորհրդուկան և հանճարեղ և յառաջիմաց շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ» երեւէր ժամանակակցացը և կատարեալ հպատակութիւն յայտներ էր Մեսրոպայ և Աահուկայ<sup>2</sup>, անշուշտ երբէք չէր եղած անկեղծ քրիստոնեաց։ բայց և այնպէս նոյն իսկ պարակական զօրսք իւր հակառակորդքը ընկճելէն ետքը։

4. Եղիշէ, 9, 17.

2. Տես Կարեն, 1833, 45. – իսր. թէն, 1827, 500։

ինքզինքը միշտ քրիստոնեայ կը ցուցանէր, և քրիստոնէութեան աշ-  
ղատութիւն խստանալով՝ կը չանայր որսալ գժողովուրդն։ Չյիշտիր  
ալ որ իւր փեսին Վարազվաղանի պէս՝ կրակտոռն կանգնած ըլ-  
լոյ։ Դաստապարտութենէն վերջն անգամ մինչ քանի մը տարի դեռ  
տարրեր էր ի դառն Պարսից, մոխրապաշտ երած ըլլալոն տեղ մը  
խօսքը չկայ։ Քանի որ տակաւին մարզպան էր, Հայոց եռանզը  
պաղեցնելու համար «Հանապաղորդ առաստացուցանէր զռոճիկան  
տաճարին և յերկարէր զնուազմն ուրախութեան, մաշելով վերկայ-  
նութիւն գիշերացն յերգս արբեցութեան և ի կաքաւս լկտութեան,  
քաղցրացացնէր ոմննց զկարգս երաժշտական և զերգս հեթանո-  
սական։ Աերեալ էր յարգունուստ բազմութիւն կարտույց և միում  
միում կաշտ գողար խթէր ի պատճառս պարզեւի և պատույց։  
Աւելի բնական է կարծէլ՝ որ այզպիսի քաղաքավարութիւն ունեցող  
մը բանի մը չէր հաւատար, և ոմենացն միջոցք կը դորձածէր եթէ  
իր նպաստակին ծառայէին։

Միթէ Սասանեանց զօրութենէն վախնալով՝ զղջաց այնքան յու-  
ռաջ նեսուելուն։ Ինչո՞ւ ուրեմն երկար տարիներէ ի վեր կը խորհէր  
իւր անձին վրայ Հայոց թագուարութիւնը վերականգնելու ու կը  
տեսնուելու մինչեւ այն օրերը Հանաց զօրապլասց հետ որ շարունակ  
կ'երթեւեկէին առ նու։ Աշխարհին բովանդակ հարկին իրեն կ'եր-  
թար և գործակակը ամենայն յիւրում ձեռին էին, անրաւ հարըս-  
տութիւն դիզեր էր, յորոց մէկ մասը եթէ տայր Հանաց, անտի  
այնշափ սասասիկ Հանս կրնար հանել, որչափ զի հողն Պարսից շրա-  
ւէր նոցա յաւարի<sup>2</sup>։ Միթէ բաւական տաեն չչը ունեցեր կշաելու  
արգելքներն և դժուարութիւնները, Սասանեանց զօրութիւնը, իր և  
դաշնակցաց ոյժը։ — Դարձեալ՝ ինչ կերպավ որ դասենք զՎասակ,  
պէսաք է որ մեր դասասատանը պարունակէ յինքեան և այլոց այն-  
քան հոյակապ նախարարաց ընթացից մեկնութիւնը՝ որ նորա հետ  
ձեռնոտու եղան Պարսից, աղքային և կրօնական ազատութիւնը խոր-  
տակելու համար։

Եղիշեայ Հայսասանի ընդհանուր վիճակին և հանգամանացը  
վրայ մեզ տուած հաւատարիմ և անկեղծ նկարագիրը, միանգամայն  
և Փարագեւոյն և ուրիշ ժամանակակից հեղինակաց ծանուցած մի  
քանի մասնական պարագայները նշմարել կու տան մեզ Վասակայ  
գնացից ներքին շարժառիթը, ոոր կը մնայ արդ բացատրել և քըն-

նել կարգաւ, կարելի եղածին չափ թօթափելով առ ժամ մի մեր սրտէն անոր անձին գէմ զգացած դարաւոր կիրքերնիւ և ատելու թիւննիւ:

Ասկէ յառաջ տեսանք, որ Արշակունիաց թագաւորութեան վերանալէն եաքը՝ իշխանութիւնն իրօք ոչ նախարարաց, այլ եկեղեցականութեան անցեր էր: Այս նշանաւոր յեղափոխութիւնս Արտաշէս Երրորդի մերժուելուն միայն արդիւնք չէր, այլ աւելի յառաջ եւս՝ քրիստոնէութեան հաստատուելէն ի վեր սկսեր ու հետզհետէ ընդուռձակեր էր:

Ո և է կրօնի պաշտօնեայք ամէն տեղ ժողովրդեան վրայ մեծ ազգեցալութիւն ունեցող կարգ մի կը կազմեն: Աւք քաղաքական իշխանութիւնը միահեծան է, թագաւորէն զատ ուրիշները քիչ չառ իրարու հաւասար են, ամենեցուն ոյժը կ'ամփոփի մէկ հոգոյ ձեռքը և քահանայութիւնը անոր օժանդակ և հպատակ կ'ըլլայ: Բայց ուր երկրին ձեւակերպութենէն կամ ուրիշ հանգամանց պատճառաւ աւատական կամ տանուտէրական զուութիւնը կը տիրէ, անդ ժողովուրդը երկու կարգի կը բաժանի. մին թուով սակաւագոյն, բայց բանութեամբ տիրապետող, կեղեկիչ և այլոց քրամանց պատուզը վայելող, և միւսը շատ աւելի բազմաթիւ, բայց աղքատ, տգէտ և սորուկ: Մինչ Հայոց ազատանին զուողացեալ զինուորութեամբ՝ որսի արշաւանօք կը զուարձանայր և կալուածոց եկամտօք կը ճողիանայր, շնականք կրկին արքունեաց՝ թագաւորին և նախարարին՝ գանձը լեցնելու համար կրկնակի հարկաց և որոց ներքեւ կը ճընշուէին, և եթէ յանցանք մը զործէին, բաց ի զրամական տուգանց՝ և զան ըմպէին յոլով<sup>1</sup>: Քրիստոնէութիւնն ի Հայաստան, ինչպէս և Միջին գարուց մէջ յԵւրոպա, անբանական ուժոյ յափշտակութեանց և հարստահարութեանց տեղ հաւասարութեան սկզբունքը քարոզելով ու զրկեալ և խեղճ ժողովրդեան միտքը արթնցներով ու բարձրացնելով, կը բարձրացնէր նաեւ անոնց նիւթական վիճակը ու ի հիմանց կը քանդէր նախարարաց զօրութիւնը: Միւս կողմանէ՝ ոյդ նոր վարդապետութիւնը ներկայացնող եկեղեցականք՝ որք ինքնինքնին ազատաց կարգը զասեր էին և նոցա առենայն առանձնաշնորհութիւնքն ունէին<sup>2</sup> ժողովրդեան անհամեմատ մեծագոյն բայց

1. ՏԵՇ Շահապիվանի ժողովոյն կառ հանագը ազատ էին ի հարկաց մինչեւ նոնքը որ հաստատեցան յասին 445. ցգալն Դիենապհոյ ի Հայու. Եղ. Բ. 16. Զամշ. Պատմ. Հայոց. Հայոց. Հայ. Բ. 16: 17: Ա. 16:

2. Նախակողոսունք, երիցունք և բա-

զրկեալ մասին պաշտպան և ավտոտարար կանգնելով նախարարաց դէմ, բնականաբար և նորա իրական տէրն և հրամանատարը կ'ըլլային։ Արդար է եւս ասել՝ որ կրօնական մեծարեալ կերպարանքներէն զատ, ուսմամբ, զիտութեամբ, աշխարհաշէն և ազգօգուտ ձեռնարկութեամբք, նա մանաւանդ և հայրենի ազատութեան սիրովն, մեացեալ ժաղովրդէն և նոյն ինքն տանուտեարց խմբէն զեր ի վերոյ գտանէին։ Յայս սակա մեր հայրապեաքն քաղաքական իրաց մէջ աւելի կարեւոր մասնակցութիւն ունեցան քան իրենց հաւասար կամ աւելի նշանաւոր եպիսկոպոսունք Հռովմէական միապետութեան մէջ<sup>2</sup>։ Արքայական աթոռոյն առընթեր՝ կանգներ էին կաթողիկոսական աթոռը, որոյ տէրը թագաւորին պէս Արշակունի Պարթեւ իշխանաց ցեղէն կ'իջանէր, և անոր նման որդոց յորդիս կը յաջորդէր<sup>3</sup>։ Բարոյական մեծ ազգեցութեամբն զոր ունէին՝ շատ անգամ յաջողութեամբ կռուեր էին քաղաքական իշխանութեան հետ, և անոր ակարացած տառենք՝ նմա նեցուկ և պաշտպան եղան։ Արքունի գահուն խորտակաւելէն ետքը ոչ միայն իրենց իշխանութիւնը պահեցին Հայաստանի մէջ, այլ և կը հրամայէին տակաւին Վրաց և Աղուանից ալ։ Նոցա պահանջմամբ կամ խորհրդով կը կարգուեէին շատ անգամ սպարապետք, տանուտեարք և երրեմն ալ թագաւորք։ Նոցա թափանձանքը և խնդիրքը աւելի ազգու էին զրացի և զօրաւոր արքունեաց առջեւ քան բնիկ թագակապ իշխանաց։ Խնամութեամբ կամ ազգակցութեամբ և կամ հու հնազանդութեամբ նոցա հաճելի եղող նախարարք նախապատի կ'ըլլային քան պազ և անտարբեր շարժողները։ Այսպէս մեծն Սահակ որ մասնաւոր փոյթ և խնամ կը տանէր իրեն խնամի Մամիկոնեան ցեղին որեարք կրթելու և լուսուորելու<sup>4</sup>, և թափանձելոյ դստերն՝ Հայոց սպարապետ անուանել կու տայ զիւր փեսայն զՀամապատ Մամիկոնեան, հակառակ կամաց աւելի խոնհեմ և հեռաւես Վասե շապուհ արքայի<sup>5</sup>, և թշնամի կ'ընէ Բագրատունեաց տանուաէրը զՃիրոց, որոյ հայրը կամ նախորդը քաջ ասպետն Սահակ այնքան շքեղ յաղթանակօք և ծառայութեամբք պայծառացուցեր էր զապա-

1. Թէ նախարարաց և սեպհաց շատերը կարդալ, գրել չէին գիտեր, անս որդուոյն Ա. Գրիգոր Լուսաւորչ, «Պայ

իդէլէ, Ը, 437։

2. Տես Կիզըի Պատմ. Քաղաքական գաղղիոյ, Դասախոսութիւն գ. էջ 67, և Յուզանդ. Մեծն Կերուէս։

3. Սահակ Պարթեւ թռոն էր թռոն տերը կառական գաղղի պարմէական արքունի տան

Սուրբնեան ճիւղէն էր։

4. Տես Կորին, 13։

5. Տես Կորին 15։ Խորենացի 500։

բազեառութիւնը։ Բնական էր որ երեսէ ընկած նախարարք մասնաւոր ատերութիւն մը զգային եկեղեցականաց դէմ, ինչպէս որ ունեցեր էին այն թագաւորաց դէմ ալ՝ որք նոցա կոթներ կամ համամիտ գտնուեր էին։ Կարելի է պնդել, թէ ոժանք ի հայրապետացն մերոց մոռացան՝ թէ շատ անզամ ինչ որ սովորական անհատի նըկատամամբ առաքինութիւն կամ բնական պարտաք մի կրնայ համարուիլ, իշխանաց համար պակասութիւն կամ յանցանք կ'ըլլայ. թէ իշխեցաք՝ աշխարհիկ ըլլան թէ քահանայ՝ մտշուչափ խորշելու են կուսակցութիւն յարուցանող առաջներէ, և թէ պարտին համարակաց օգտէն զատ՝ մերձաւոր կամ ազգակից չունենալ։

Կորիւն իւր ժամանակի Հայոց քաղաքականութեան հետեւաղ դրացի ազգերն ալ ի միսաին առնելով՝ յերկուս կը բաժանէ կրօնական տեսակէտով, ի կայենական և ի Հերանոսաց երկիր։ Կայենականք բաելով կ'իմանայ Հայաստանի այն գաւառները, յարս քրիստոնէութիւնը և քաղաքակրթութիւնը զարգացած էին։ Աւեաւացի մէջ ալ սուէպ կը աւեանեմք Ետէրա՛ իբրեւ բնակավայր կամ կայանք նախնի Երանեանց, զոր հոգագործութեամբ մշակեցին և զոր ցցովք փակեր էր Աճուրամզզա, առ ի պաշտպանել զնա ընդդէմ վրանարնակ և թափառիկ ազգաց։ Այն գտառաց մէջ՝ ուր քրիստոնէութիւնը կատարելապէս հաստատեալ էր, ազատք և շինուական ալ վարժեր էին ընկերական նոր ձեւին, ու մոքերնէն չէին անցներ զայն յեղափոխել, գուցէ եւս չկարողանային, քանզի իշխանութիւնը ի տանուտէրական ապարանից անցեր զնացեր էր յաթոս եպիսկոպոսին։

Բայց Ախականի պէս լեռնոտ երկիրներու մէջ՝ ուր ամենայն նոր ոկզրունք գտաւարաւ մուտ կը զտնէր, ինչպէս և աւելի հեռաւոր Վրաց և Ալբաւանից աշխարհին մէջ, ժողովուրդը մեծաւ մասամբ գեռ նախկին վիճակին մէջ մնացեր էր, ու տանուտեարց նիւթական ազգեցութեանը միայն ենթարկուած էր։ Տրդատայ զօրութեան ահը մառացեր էր արգարեւ զքրիստոնէութիւնը լեռնազմաւառաց մէջ ալ, բայց չէր կրցեր վանել անտի զհեթանոսութիւն, որ գաղտնի կը յարատեւէր. ու նորա յաջորդաց ժամանակ կեզրոնական իշխանութեան հետպահուէտ նուազելովին՝ արձակ համարձակ երեւան ելեր էր։ Այսպէս Լուսաւորչաց քարոզութենէն դար մը ետքը, շուրջ 400ին, Մեսրոպ՝ որ իր ճգնութեան տեղէն կը տեսնէր Գողթամայ «անկարդ

և անդարձնն » վիճակը, լեռնակեցութենէ և բանջարաճաշակութենէ առելի պիտօնի սեպեր էր իջանել ու քարոզել անգր : « Զաւեխուրանակոն արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն՝ հանդերձ միամիտ աստարութեամբ իշխանին, գերեալ զամենեսիան ի ձայրինեաց աւանդելոց, և ի սառանայական դիրապաշտ սպասարուրութենեն ի հնագանդութիւն Փրիստոսի մասուցանէր » : Եւ թէպէտ վարդապետութեանը սաստկութենէն, երկու ժամանակակից պատմը շաց՝ Խորենացոյ և Կորեան նկարակերպ բացատրութեան համեմատ, « Հալածական լեալ գեւք մարմնաւոր անպեսմը՝ անկանէին ի կողմանու Մարտաց », սակայն և այնպէս Մեարոպ՝ որ ի մանկութենէ վարժեալ էր հեղէն գարութեամբք, որ Արշակունիաց արքոնական դիւնին մէջ քարտուղարութեամբ՝ տեղեակ և հմուտ էր աշխարհական կարգաց<sup>1</sup>, Գողթանայ մէջ բնակութեան ատենը փորձով խմացեր էր՝ թէ որքան գժուարին պիտի լինէր առանց գպրութեանց այդ եղական գաւառին բնակչաց վառգուն և երեւակայոտ միազը զրաւել ու սանձել : Անդ զգացեր էր հայկական նշանագրաց անհրաժեշտ պէտքը, զոր հնարելէ ետքը նորէն քարոզութեան կը ձեռնարկէր՝ թողլով գլայենականն « Տէր Եպիսկոպոսին » և ինքն « ոկիզրն առեալ զխուժագուժ կողմանս Մարտաց, որք ոչ միայն վասն դիւական, սաւատնայական բարուցն ճիւազութեան, այլ վասն խեցքեկազոյն և խոչըրտգոյն լեզուին դժուարամատոյքը էին » : Եւ միանդամայն Ալհակայ և այլոց հետ թարգմանութեանց պարապետով՝ հայաբարսուա և հայերէնախօս մարդարէիւք և տառքելովք վերստին կը մըտնէր ի Գողթան : Այս անգամ « ի առնէր զգաւառն ողջունիւ Աւետարանին և կարգէր յամենայն զիւլու դասս վանականաց, օժանդակութեամբ Շաբիթայ՝ Գողթան իշխանին » :

Անսի անցեր էր ի Սիւնիս, ուր բագում օգնականութիւն գտեր էր ի Վաղինակայ ի տեառնէ նահանգին, « Ծողովէր մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանաւիտ զվայրենազոյն զձիւադարարոյ կողմանցն » : Գրիգորիոէ ի վեր Սիսականի մէջ մեարտապոլիս չէր նսաեր, Մեսրոպ « մինչեւ ի նոցունց իսկ վայրենեացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգէ զԱնանիսս զայրն սուրբ և զերեւելի », և զերկիրն՝ վանականաց դասուք լեշնելով՝ առնէն կողմ՝ կը տարածէր գԲրիստոնէութիւն :

Բայց Կորեան այդ նկարագրոյդ և Վասակայ զբուրը զիւր աշ-

խարհն ապստամբեցնելուն՝ և հեթանոսական երգերով դժողովուրդը զբաղեցնել ուզելուն թէ նոյինք, Մեսրոպայ երկրորդ քարոզութենէն երեսուն տարի ետքն անգամ դեռ քրիստոնէութիւնը պէտք եղածին չափ ամրացած չէր, և հեթանոսական բարք և սովորք զօրաւոր և սիրելի էին Ալսականի մէջ:

Ալկայն այդ վիճակի չէր կրնար յարատեւել. արդէն Հայոց մեծամասնութիւնը անդառնալի կերպով ընդուներ էր գքրիստոնէութիւնը, որ ազգային նոր գործութեանց<sup>2</sup> ազգեցութեամբը և ժողովրդեան համակրութեամբը օր ըստ օրէ պիտի զօրանայր ու զրոշմուէր մնացածներուն մտաց մէջ: Ալհակայ և Մեսրոպայ առաջին աշակերտքն, որ արեւմտեան քաղաքականութեան և գրականութեան հետամուտ եղեր էին, այժմ եկեղեցական բարձրագոյն պաշտամանց հասած անվեհեր ուժգնութեամբ կը մաքառէին պարսկական բարուց և ազգեցութեան գէմ, ու չարկ չէին սեպեր իւրեանց մեծ վարդապետաց չափ անգամ երբեմն զիջողութիւն ընել կամ տեղի տալ պարագայից բնութեան և նախանձընդգէմ շահուց և զգացմանց: Բզնունեաց եպիսկոպոսը Առւրմակ, զոր Ահակայ և Մեսրոպայ մահուընէն եաքը Յաղկերտ Կաթողիկոս անուաներ էր, չուզելով հաստատել նոցա ընտրած յաջորդը զնովսէփ, հինգ վեց տարի այդ պաշտօնդ անուանապէս վարելէ յեսոյ՝ հրաժարեր էր ու թողուցեր էր զայն Յալսեփայ<sup>3</sup>, որ արդէն իրապէս կը կատարեր զհայրապետութիւնը: Խոկ Հայոստանի երիտասարդներէն ընտրուած կորո-

1. «Եւ բովանդակ զիւր բոլոր աշխարհներու յուրացութիւն, ոչ միայն ըստ աշխարհին բազմութեանն, այլ և գրազումն յուխտէ Եկեղեցւոյն».

Եղիշէ, Դ, 40:

2. Այսրուբնից գիւտը՝ որ սոսկ մատենագրական երեւոյթ ինչ ունի, պատճառ եղեւ ի սպառ բաժանելու զՀայոց Արեւելից միւս ազգերէն. դա զՀայու առանձին ժողովուրդ կազմեց: Ամենելով կամ գոնեա իրերն անսուրբ մերժել տալով զատար այլուրելնս, որը սփռուած Հայոց երկրին մէջ, առիթ էին ծառալման հեթանոսական ազանդոց և Զրադաշտական մատենից, հաստատեց զՀայու քրիստոնէական կրօնից մէջ: Այդ նշա-

նազբաց գիւտով պահուեցաւ հայ լեզուն և մատենագրութիւնը. հաւանական է, որ եթէ դա չլինէր, այդ ազգը չէր յապազեր խանին Պարսից և Անորուց հետ և ջնջիլ ի սպառ, ինչպէս Շնջուած<sup>4</sup> են այնքան հին ասիսական ժայռուրդը: Կողման գարձեալ հայ ազգն և Եկեղեցին յատուկ կերպարանդ մի սոտացան, նորվառ պահեցին իրենց քաղաքական և կոռական անկախութիւնը երկար ժամանակներ և նովար կան մեան մինչեւ ցայրօր: — ԱԷն-Մարթէն ի Պատմ: Ստորին կայսեր. 1824, հունիս, 230:

3. ՏԵ՛ս Պատմ: Յովհաննէս Զ կաթողիկոսի:

վասիր և աշխատասեր վաթառունի չափ անձինքն որք ինն տարի յԱշղեամնդրիս, ի Յիւզանդրիսն և յԱթէնս ուսմամբք պարապէք էին, յունական զազափարօք և ոգւոլ լցեալ և զարեւելեան զիւրաթեք ընութիւնը փոխանուկելով ընդ անյոդգոզդ մկզրանց և մոաց, զարձեր էին ի Հայրենիս, սոքա հւս նախարարաց վանոց և ամրացաց մէջ՝ քարառուզարութեամբ և խորհրդատութեամբ՝ զազգն բոլորովին զէսդ ի յունական բարս և ի կրթութիւն կը մղէին։ Վազ կամ անազան՝ չին զրութիւնը պահել ուզող նախարարք պիտի փախցնէին ձեռքերնէն իրենց հպատակները։ Վասն որոյ կը չանային հաճոյանալ Ուստանեանց, որոց Հայտաստանի մէջ բանած քազաքականութիւնը նոցա աւելի բարեկամ և ձեռնատ էր քան աւելի զօրաւոր և բազմաթիւ մասմին։ Եսան ինքն Պարսիկ թագաւորի (±16ին) և աւելի եաքը (429–441) սասարազգի մարզանի զրկութիւն ի Հայո՛ աւելի նպատառուր էր նոր վիճակին զժգոհ ասնուաեարց, և վերջերս մարզպանութեան ասոնց միայն արուելովը՝ (441ին) կրնային յուսուղ իւրենց փափագած նախակին զրութիւնը երկարածգելու։

‘Նախարարաց’ Եկեղեցականութեան հետզհետէ բարձրացող ազգեցութեանը շնանդուրժելը ընտական էր, և որովհետեւ ամենայն բացարձակ իշխանութիւն վնասարեր կ'ըլլայ թէ զարծածողին և թէ կրողին, ազգին ընդհանրութեանը համար ալ օգտաւէտ և նոյն ինքն եկեղեցականաց բարուց անարատ մասլուն համար հարկաւոր պէտք էինք համարիլ, եթէ մէկ կողմը զիտնար շատանալ բարոյական և մուաւրական սատանարդութեամբը և չափաւորել իւր աշխարհային ընչից և տիրապետութեան ցանկութիւնը, և եթէ միւս կողմը ինքն զինքը տկար տեսած տուենը չդիմէր օտար և նախանձու տէրութեան մը՝ հակառակ կուսակցութիւնը խորտակելու համար։

Բացց երկու կուսակցութեանց վէճը մոզերուն ի Հայտաստան զրուկուելը (449ին) սատզազալց կէտին հասած էր, և կիսկազմունք և քահանայք զիւղերը՝ ազարակները մէկիկ մէկիկ երթալով ժողովուրդը սոք հաներ, ու ամենայն աշխարհիկ կարգ ու կանոն գաղրեցրներով՝ աստուածապետութիւն մը հաստակեր էին։ Այք և կանայք մի սիրու մի հոգի, զասած զէնքերնին ձեռք առած՝ ոչ յարաւաքինան ինայէին և ոչ յեզրարս և յորդիս և ի մերձաւորա<sup>1</sup>։

Ոնմիջապէս երեք ահազին բանակք կազմուեր էին, և եօթանասուն և հինգ տարիէ ի վեր պատառառեալ աշխարհ մը այժմ եկեւ

1. Եղեւէ, Գ. 14. — Ե. 10:

ՔՄԱԶ. ԵՂԵՒԷ

զեցականաց հրամանաւը<sup>1</sup> Աստանեանց իշխանութիւնը կը թոթվէր ու կ'արհամարհէր:

Բայց այս բնդէանուր վրդովումը վասակայ վճառածը չէր. ի՞նչ պիտի շահէր, եթէ քրիստոնեայ Հայք յաղթանակէին դրանակս մոխրապաշտ Պարսից, որք անշուշտ պիտի գային ողողել զջայաստան: ԶՎահան Ամստանին՝ գչազարապեսն աշխարհէին և զիւր երկրորդն՝ զրորեր էր պաշտօնէն, բայց տակաւին ունէր իւր զիմաց աւելի հայակապ այր մը՝ որ յաղթող ելեր էր քառասուն մեծ ձաւկասամարտի մէջ<sup>2</sup>, որոց վէրքն և սպիտին տակաւին կը կրէր իւր մարմանյն վրայ<sup>3</sup>, ափոյեան մը՝ որոյ կանգնած յաղթանակաց մեծագոյն մասին ականատես եղած էր նոյն ինքն Յագկերտ՝ Մերգիսուտ գետոյն եղերքը և Խորազմի անսպասին մէջ, զոր Հոռոմաց կայսրն և Խաքանն Հոնաց սաստիկ ջանացեր էին հանել յարքայից արքայէն, և նա ամենայն Արեաց ուժովը կուռեր էր անդուլ անդադար՝ մինչեւ որ յաջողեր էր դարձեալ յինքն թափելու զնա:<sup>4</sup> Այս էր որպի Կամազապայ տեսան Մամիկոնէից և Հայոց սպարապետի և երբեմն իշխանապետի, և թոռն Աահակայ Պարթեւի՝ որ յիսնամեայ հայրապետութեան միջոցին մէջ գաստիարակ եղած էր հայ ազգին, պաշտպան թագաւորական բնիկ աթոռոյն և իրաւարար կուռասէր նախարարաց: Թէոդոս զնա սարատելաս և Վռամ<sup>5</sup> սպարապետ կարգեր և հաստատեր էին Հայոց: Վարդան որ այդ պաշտօնդ քան սարիէ ի վեր կը վարէր, տուն մը մինչեւ թաշ զաւորի տեղակալութեամբ պատուեալ էր ի Յունաց և ի Պարսից: Տանուտէր էր արգուանդ և բազմամարդն Տարօնյ, որում յաւելցեր էին Մեծին Աահակայ սեփականութիւնքն ալ, և Տայոց նաշանգին մեծի մասին:<sup>6</sup> Երկու հարիւր սարիէ ի վեր Հայք վար-

1. Եղիշէ, գ. 29. «Աղաւեմք գձեզ զամենենեան սուրբ աւետարանաւու» են:

2. Ուիշան Վ. ի Յուշիկը, 265, և Եղիշէ, լ. 5:

3. Եղիշէ, լ. 5:

4. Փարսկեցի, 252:

5. Աահակ Պարթեւ արու զաւակ չէր ունեցեր, ոյլ գուստը մի միայն Անոյշ կամ Աահականոյշ, զար էր տուեալ կը ռութեան Համազապայ Տեան Մամիկոնէից և Հայոց սպարապետի. ի սոցանէ ծնան երեք արու որդիք՝ Վարդան, Հմայշեակ և Համազապետն: Երբ Յազ-

կը բնի նախորդը Վռամ զօքք դրկելով ի Հայոց կը վրդովէր զերկիրն: Աահակ Յունաց մասը զնացեր էր, բայց անդ լու ընդունելութիւն չգոնելով, ըզ-Մերգար և զիւր թոռն զՎարդան կոստանդնուպոլիս առաքեր էր՝ ինդրել ի կայսերէն որ համայէ կուսակալացը՝ որպէս զի Հարգիլեն Յունաց բաժնին մէջ հայերնենի ուսումը: Լայսրը կատարեր էր հայրապետի ինդրել և զՎարդան ըստատելաս էր անուանէր: Քիչ մը վերը (421թ) Աահակ արեւելեան մասին մէջ անցեր ու զնախարար Վռամայ հետ

Ժեր էին երթալ ի պատերազմ՝ առաջնորդութեամբ Մամիկոնեան տան որոյ գլուխը այժմ իւր եղբարցը Հմայելոյ և Համազասպեանի հետ, Լուսաւորչայ և Ալահակայ յետին շտաւովին սերունդն էր<sup>1</sup>: Դրացի ազգաց բգեաշխք և քրիստոնէութեան և հայութեան սիրող տանուտեարք՝ ազգականութեան, խնամութեան և բարեկամութեան

հաշտեցնելու համար դարձեալ դրեկեր էր զվարդան Ամբատ ասպետին հետ յարքածիս Աստանեանց, ուր հաշտութիւն հաստատուելով՝ Առամշապհայ որդին Արտաշես թագաւոր դրուեր էր Պարսիկ Հայաստանի: Քանի մը տարի եռքը (428ին) երբ Վաստ զԱրտաշէս մերժելու համբար աթոռակն Արակայ հաւանութիւնը էւուզէր առնուլ, ի զաւը կը խօստանցը նմա զիւր թռան զԱրդան կարգել ի վերայ Հայոց զողահաւասար թագաւորի հ համազատիւ: Վաստ, ժամանակ մը անարգանոր պահելէ յետոյ զԱրակի ի դուռն, Հայաստան զրկեր էր և «դարձեալ հաստատելով զթռան նորա զվարդան ստրատելան ի տերութիւն իւրոյ ազգին Մամիկոնէից, արձակեր ի Հայու:» — Առակ վախճանեցաւ ի գաւառին Բագրեանոց 439ին, ու թռաներուն թռողուց կատառ զստացանձն զիւզից և ապարակաց և որ ինչ միանգամ էր իւր, ի ժամանութիւն և զաւակի նոցա մինչ շեւ ցրաւիսեան: Որոց առեալ զնշխար որբոյն հանդերձ աշակերտան և Տիգրնու Մամիկոնէից, նորին նուաւ, որուն անուն էր Դամբրիկ, կին վարդակայ Աստա-

տելատի, տարան ի գաւառն Տարօնոյ և հանգուցին ի բնիկ գիւղն իւր սեփական յանուանեան Աշտիշատ: (Խորհն. և Փարագ.): — Տայոց մէջ Մամիկոնեան տահմին բնակութեան աեղն Կյահանեի կոչ շուած ամուր ըերդ մի էր. Բուզանդ՝ Գ, Ժ.՝ Ճենացիք զՄազուլ կոշին Մազմանու որում նմանի յոյժ Մամիկոն կամ Մամիկոն. Տես Histoire des Huns par Deguignes. Հատ. Ա. էջ 275, տպ. 1756: Գիտենք ի Խորհնացոյ թէ Մամիկոնեան տան նախահայրը Մամիկոն Աստանեան Արտաշրի օրերը Ճենաց աշխարհին մէջ իշխանցող թագաւորաց մէկուն գայեկարդին էր. այս է թէ Մարդունայ հայրը դայեկութիւն ըրած էր թագաւորին մինչ առ տակաւին մանուկ էր և չէր հասեալ յարրուն: Մամիկոն փախուցեալ յերեսաց արքային, Պարսկաստան էկեր էր և անոի ի Հայու: Խորհն. Բ. ԶԱ:

1. Ճենացիքութիւն (Գամթրճ. Տիգրիկ. Պատմ. Հատ. Բ., էջ 606-608 և Կաստանեանց) աւելի մեկին կը ցուցան: Վարդանայ ազգակցութիւնքը և խընամութիւնքը.

ա. Ամանկ Պարքիւ (վ. 439) թռան թռոնորդույն Լուսաւորչի. սորա միակ գուստը Ամանկանց:

բ. Համազաւոց Մամիկոնեան այս Ալահականուշի. ի սոցանէ ծնան Ապրդան, Հմայեակ և Համազասպեան:

գ. Վարդան Մամիկոնեան (վ. 451) Դատրիկի կին վարդանայ յարոց ծնաւ:

դ. ա. Շուշանիկ վարդենի, որոյ այրն Ապղեն սրդին Աշտազոյ

գ. Հմայեակ Մամիկոնեան (վ. 453) Ջուիկի կին Հմայեկայ յարոց ծնան

դ. ա. Վանան Մամիկոնեան բ. Վարդ Մամիկոնեան գ. Վասակ Մամիկոնեան

կապերով իրեն սպասագումաթիւնը, ուրը կամ փասացը մասնակցութիւնը սպահավեր էին։ Անզբանիկ գուստով՝ Շարդենի-Վաշանիկ հարս զնացեր էր ի Յուրասու, ի մայր քաղաքն Գուգարաց, և էր կին Վազգենի որդւոյ Աշուշայ մեծ րգեշխին։ իսկ երկրորդը Վարդանաց փեսայ ըրեր էր սպարապետին՝ տանուածեարց ամենէն ուշիմ և կորիներէն մին զԱրշաւեր Կամսարական, դՏէրն Արշարունեաց, և Հայոց ամենէն բարերեր և հարուստ զաւառին Շիրակոյ։ Արծրունեաց տանէն երկու օրիորդք, Անուշ-Վուամ<sup>2</sup> և Հարազատ ու սրասկից քոյր նորին Չուիկ՝ «որ եզեւ կին անուանի և առաւելեալ ամենայն լաւ և մտաւոր մասամբք յամենայն կանայս ի Հայաստան աշխարհի<sup>3</sup>», — առաջինը սիկին Աշուշայ Գուգարաց բղեշխին, և երկրորդը Հմայեկայ եղրօր Վարդանայ, — սերտ միութեամբ կը կոտէին Արծրունեաց և Գուգարաց սպարապեր Մամիկոնէն առն հետ։ Մոկաց «մեծ իշխանն» Արտակ, այր «մտացի, համեստ և քաղ»։ անսյրայլակ կը պահէր հինաւուրց բարեկամութիւն մը որ հաստատուեր էր յառանձնութեան, երբ սպարապետը Արշակունեաց բառնալէն ետքը, չժռմժալով Պարսից մարզպանաց։

բ. Վարդանոյ, սորա այրն  
Արշաւեր Կամսարական.

դ. Արտակ Մամիկոնեան  
սորա սրգին

ի սոցանէ Տնան

ե. Գրիգոր Մամիկոնեան։

և. ա. Կերոսէն Կամսարական

բ. Հրանտոս Կամսարական

գ. Անձակ Կամսարական

1. Առփերը Հայկականը. հա. թի., և  
Յուշիկը Հայրենեաց Հայոց՝ Շուշան Վարդէնի։

վահանայ Մամիկոնեի։ Նախընթաց և  
հետագայ ցեղագրութենէդ կը տեսնուի

2. Փարզ. 148։

թէ կրկին խնամութեան կապեր կային

3. Փարզ. 334։ սու է մայր մեծին

ընդ մէջ Աշուշայ և Մամիկոնեան տան։

ա. Վահան իշխան Արծրունի. սորա զաւակներն են

Արդիոք

բ. ա. Անուշվանմ' կին  
Աշուշայ բղեշխի

բ. Զուիկ' կին  
Հմայեկայ Մամիկոնեի

ա. Արշան Արծրունի  
բ. Մեհրուժան Արծ-

րունի

գ. ա. Վազգեն՝ այր  
Ենշանայ՝ դատեր  
Վարդանայ։

բ. Զովիկ.

ց. Վահան Մամիկոնեան  
եւ Եղբարք

Վարդանայ։

որք եկեր էին հայ աշխարհին կարգերը վեր վար ընելու, քաշուեր էր Ասկաց Զերմանոր (Յատախ) գտառին ափափայից մէջ յամուր բերդն Զաղայի<sup>1</sup> ու մեծ պատիւ և ազնիւ հիւրընկարութիւն գտեր էր յիշխանէն Արտակայ: Խոկ Ամառունին Վահան « Խորհրդական և Հանձնարեղն » զոր Պառմ Հապարապես կարգեր էր Հայաստանի, և որ քանի տարիէ աւելի խնամեր էր զաշխարհն ընդ մարզպանութեամբ Պարսից և ինքզինքը « իրրեւ հայր վերակացու համարել տուեալ էր աշխարհականաց քրիստոնէից », ոչ միայն զգացմամբք և զաղափարօք համամիտ էր ընդ Վարդանայ, այլ և մասնաւոր ոխ և բարկութիւն կը ասծ էր Վասակայ դէմ, որ քսութեամբ պաշտօնանկ ընել տուեր էր զնա և փոխանակ նորա Պարսիկ մը զրուած էր: Վասակ ոչ կրնար աւերել այդ մեծամեծ նախարարաց և Վարդանայ մէջ եղած բնական դաշնակցութիւնը, և ոչ ուժացընել կամ յինքն զարձնել այն յարգանքը և հապատակութիւնը՝ զոր ուրիշ տանուտեարք ունեին Մամիկոնեան իշխանին: Վասակազմաց և զինուորական զործոց մէջ երբէք պիտի շկարոզանայր փայլի Ապարագեամբն չափ, որոյ ոչ առիւծի սիրոն ուներ, ոչ կայծակի արագութիւնը, ոչ փորձառութիւնը և ոչ զօրաց ազդած վատահամբիւնը և համակրանքը:

Արգարեւ ինքն ալ ուներ հզօր նիփակալիցներ, բայց սոքա իրեն չետ այնքան անկեղծ և հասաստուն կասկերով չէին կապուած՝ որքան իրեն հակասակորդ նախարարք ընդ Վարդանայ: Ապարագեամբն դէմ անհցած նախանձուն և ատելութեանը համար միայն Բագրատունին Տիրոց բարեկամացեր էր Վասակայ հետ, և իթէ Վարդանայ փառքը նուազէին, հաւանական էր որ այդ ատելութիւնը Աբենեաց իշխանին դէմ զառնար: Արծրունեաց մէկ կարեւոր մասը իրեն հետ էր, և թէպէտ սոքա լայնասարած զաւառաց կ'իշխէին ու մեծ ազդեցութիւն ունէին ի հարաւոյ Հայաստանի, բայց աւելի անկախ աէրութիւն մը վարելու հետամուս էին և յոյժ անոտարեր կրօնից կամ ազգին ազատութեան: Խոսխոռունիք՝ որ

1. թողմա Արծրունի, 81: — Այդ անուամբ ըերդ մի դուռու ին ի Ասկո յրի նշանաւոր է, եթէ արդարեւ վազդէացւոց առաջին բնակալայր եղած է յեսնաշխարհու որ ի հարաւոյ ծովուն Վահակ: Վանդի էր երբեմն Զիրկուլա անուն քաջար մի մեծ ի Բաբելոնասան հին Առամբեր գաւառին մէջ, քիչ հեռի ի Թել-լոչ կոչեցեալ բլրակաց որը հոչակաւոր

եղան վերջերս Պ. Արդէքի պեղմամբք: Ամդի քաղաքից անունը մինչեւ ցայծամ պահուած է և գիւղ մի որ կոչէ Զէրզուլ: Տես Babelon, Hist. anc. de l'Orient. հա. 4. էջ 80: — Է եւս այժմ յաշխարհին Ասկաց գիւղ մի Զարխակ առնուն, որուն քավէն կ'անցնի Զարխակ գետն, որ կը թափի ի Պոչթան - Առ:

արդէն բացէ ի բաց զլլոգական օրէնս կը դաւանէին, անշուշտ դէնք քերնին վասակայ զէմ պիտի դարձնէին, եթէ նա Աստանեանց տան հետ թշնամանայր: Ծոփաց, Ազնեաց վրայ կոթնիլ անհնար էր, որտիչետեւ դոքա բաւական ժամանակէ ի վեր յունական և պարսկական վեհապեսութեաններքեւ ինքնիշխանութեան վարժած ըլլալով, փափագ չունէին նոր տեարց հնագանդելու և Հայաստանի խառնաշփոթութեանց և տաղնապաց մասնակցելու: Խոկ Վիրք<sup>1</sup> և Ազուանք, որք Հայոց տկարութենէն օգուտ քաղելով մերձակայ հայ զաւաններն յափշտակեր ու իշխանութիւննին առաւել եւս տարածելու ջանապիր էին, առաւել վնասարեր պիտի լինէին երկոցունց կողմանց ալ քան օգտակար:

Վասակ իւր զործունէութեամբը<sup>2</sup>, հրամանաւը և խորագիսութեամբը յոյժ պիտանի կրնար ըլլալ<sup>3</sup> Վարդանայ. բայց որտիչետեւ Վարդան Ակեղեցականաց պատուարն և գործիքն էր, Վասակ եթէ նմա ձեռնառու լինէր, իւր սիերիմ թշնամեաց<sup>4</sup> Ակեղեցականաց համար աշխատած պիտի ըլլար: Պարզ նախարարաց կարգը պիտի իշնէր իւր ստոհաննը, մինչ այժմ մարզպանութեամբ նոցա մէջ աւմենէն վեր էր: Խոկ եթէ նոյն ինքն Վասակայ դաշնակցութեամբ Վարդան չկարենար վանել զՊարսիկս, որ շատ հնար էր, այն ու տեն Վասակ պիտի կորսնցնէր ոչ միայն զՊարզպանութիւնն այլ և Ախնեաց Տէրութիւնը: Խոր փեսայն Վարտզվազոն՝ կնոջը հետ ունեցած առելութեանը պատճառաւ, Պարսկաստան փախնէր էր յերեսաց աներոջն<sup>5</sup>, որ մախացեալ կամէր սպանմամբ խնդրել զվրէժ քի-

4. Վիրք տիբեր էին Գուգարաց. այս հայկական նահանգս որ իններորդ դաշտան վերջերը վերատին Բագրատունեաց հարստութեան անցեր էր, առաներորդ և մի, գարուց մէջ նոցա մէկ չիւզին աէրութիւնն եղաւ: Աննուհեաւ Վիրք նորէն առն զայն Մահմետականաց ձեռքէն ու առանձին զաւա մ'ըրին որ Այս իուշեցաւ Ազուանը ալ զէշխանութիւննին տարածակար էին Ռուիոյ, Արձակոյ և Փայտակարանի մեծագոյն մասին մէջ, ու Գանձակայ և Պարտաւայ մէջ հաստատեր էին արքայական և պատրիարքական աթոռնին:

2. Տես Վասակայ մասաւորական կա-

բողութեանը վրայօք Մոգուետին վկայութիւնը. Եղ. Գ. 20:

3. Տես Եղեշեայ ըրած նկարագիրը. «Մարտեաւ հարիկ ընդ իմաստունու, և յոյժ խորագիտութեամբ ընդ գիտունու, յայսնի ընդ աննեղս, և ի ծածուկ ընդ խորհրդականու, ձեռն էարկ և եհան ըղբազումս ի զնդէն Քրիստոսի և խառնեաց այն. Գ., 8:

4. Տես Եղ. Գ., 72. «ամենայն ամբաստանութիւնն ի սուրբ Եկեղեցւոյն կրթեալ էր»:

5. Վարազվազանի վանուուիլն 447 էն յանաշ եղած կ'երեւի. Տես Գալթրճ. Տիեզ. Պոու. Համ. Բ., էջ 529, Ց. 4:

նուն, և անդ Արհրներտէնի խորհրդական և մտերիմ ըլլալով և Արքայից արքային առջևն ալ երես գտնելով, անհամբեր կը սպասէր ընդունելու զիսոտացեալն նմա զտէրութիւն Ախնեաց, ի վարձատրութիւն ուրացութեան և չար խրասուցն։ Ասկէ զատ՝ ներելի էր Վասակայ զանդաղիլ Աստանեանց գէմ զէնք վերցնելու, քանի որ զիւր երկու որդիսն՝ զԲարիկ և զԱտրներսէ սպասանդ թողուցեր էր յարքունիս Յաղկերտի։

Իսկ եթէ Պարսից հետ միանար իւր ազգակցացը դէմ, կը յուսուր թագաւոր լինել ըստ խօսամանն Արհրներտէնի ու սպասողուու խորտակել զիւր հակառակորդս։<sup>1</sup>

Վասակ Հայրենեացը և ազգին կորուսու ընտրեց, չուզելով նոցա զոհել իւր փառասիրութիւնը և սիսր։

Քաղաքական վրդավումը սակայն անմիջական սաստակումն կը սպասնար յայտնի զիմազրութեան յանդզնազին։ Կախարարներէ մին՝ որ սպարապետին առներ գումարեալ ժողովոյն մէջ հակառակ կարծիք յայտներ էր, անմիջապէս ի տեզուցն քարկոծեցաւ յամբուժն։ Վասակ ժամանակ մը զաղանի որսզայթիւք աշխատեցաւ գործը խափանելու, նենգութիւնը խմացուեցաւ, ձերբակալ եղաւ, եղիսկոսրաց ոսքը կ'իշնար, «կրկնէր, երեկինէր զանսուտ երդումն առաջի բազմութեան ի սուրբ աւետարանն»։ և աւելի վրտահութիւն տալու համար երկրայսովաց, զրավ խօսամամբք ետ կը դորձնէր զՎարդան՝ որ գէմ եղեալ Յունաց երկիրը կ'երթար, անդ քրիստոնէարար սպրելու, թողարք զՀայս իւրեանց ճակառազրին։

Կայսեր՝ Վայոց՝ Աղուանից՝ Աղձնեաց րդեշխին՝ Անգեղ տան՝<sup>2</sup> Ցոփաց՝ Հաշտենից՝ Եկեղեցաց՝ Անտիպայ սպարապետին և այլոց իշխանաց ոգնութիւնը խնդրելու համար գրուած նամակները իւր մասանեաւ կը կնքէր, իւր զրաւոր հրամանաւը բերգերէն սպարսիկ զորքը կը վանառէին, և Զարեհաւանի մէջ մողերը կը սպանաւէին։

Այդպէս կը ծածկէր զանձն Վասակ, ժամանակ տարու համար յԱզուանն զանսուող պարակական զօրաց՝ որ իւր ծածուկ հրահանաց համեմատ Հայտասան վաղեն։ Եւ երբ նոցա յառաջ խաղարսն զոյժը հասու ու Վարդոն զնսաս վանելու համար բանակաւը հեռացաւ Հայոց սահմաններէն, չողանեց Վասակ զիւր խարդաւանքը, ու համամիտներովը Ախնեաց լեռները քաշուեցաւ։

1. Եղեշէ, Դ. 5:

2. Այժմ ինկիր, Տեղերի եղեցքը,  
ի հետիւոյ Տեղարկերին։

Վնացածը զիտես, ով ընթերցող՝ բայց Առասկայ և նորա հաւամահից ըրած վիտար՝ միտյն Աւարայրի մէջ անկեալ քաշերուն կամ Առգգեսի անսապատին մէջ չարաշար տանջանօք տպանեող նահատակաց թուէն մի չափեր։ Առնք անշուշտ վեհ և առաքինի անձինք էին՝ որք իրենց ազգին դեռ օգտակար կրնային լինել։ բայց Արտազու ճակատամարտին մէջ զրեաթէ խոնարհեցաւ փառաւոր քաղաքամիթութիւն մի ոյլ, որոյ մատենողրական մահարձակն մեր ամենէն չօշափելի և աներկրայելի պարծանքն էն։

## Զ

Այս քաղաքակրթութիւնա երեք զիտաւոր տարրերէ կազմուեր էր. Տանուտէրական զրութիւն, Քրիստոնէութիւն, և Յունական և Ասորի դպրութիւնք։

Հայաստանի կառավարութեան հիմնական ձեւը տանուտէրական եղած ըլլալուն կարելի չէ, կարծեմք, տարակուսիլ։ Եզան անշուշտ հանձարեզ թագաւորք կամ Այրարատ նահանգին տանուտեարք, որք ուրիշ ազգաց աշեղասաստ ինքնակալաց հաւասար միահեծան վարեցին զաղգն համայն։ բայց որքա բացառութիւններ կրնան համարիլ մեր ընդհանուր պատմութեան մէջ, երբ թագաւորին անձնական կարողութիւնները պարագայից ծանրութեանը անզուգական ըլլային, կամ օտար պետութեանց ճնշումը անոր ազգեցութիւնը տկարացնէր, տանուտեարք զլուխ կը վերցնէին և թագաւորը կը ստիպուէր նոցա հետ բաժանել երկրին իշխանութիւնը։ Այդ տանուտէրական զրութիւնն աւելի միակերպութիւն և օրինական հաստատութիւն առա. Պարթեւաց ժամանակ, որք իրենց լայնածաւալ պետութիւնը՝ յորդւոց որդի յաջորդող կուսակալ – ստորագից կամ աշխարհապետաց ձեռօք կառավարեր էին։ Բայց ինչ որ սորեստ առնի ու Պարսկաստանի մէջ ժամանակաւոր՝ և Պարթեւական հարստութեան յատուկ ձեւ մի էր, Հայաստանի մէջ սովորական և յարտանել եղած էր<sup>1</sup>։ Գորա պատճառը վնասելու է զլխաւորապէս

1. Արշակունեաց զերջին ժամանակ, մուէր. Ա., ի թագաւորէն. Բ., ի Կախակաց հայկական ընկերութիւնը կը կազ- բարաց կամ՝ ի տանուտեարց՝ որոց թիւը

Հայկական յեւնաշխարհին կազմակերպութեանը մէջ՝ երկիր մը որ բարձրաբերձ լիրոնց պատերով և յաղթաջուր գետերով ի գմնացան մասունա տրոհեալ էր։ Այդ բնական անջրագետքն Կոմիլանեան յեւնագօտուոյն պէս դիւրին չէր պաշտպանել թշնամի մեծամեծ բանակաց գէմ, որովհասի առհասարակ չեն ննըրկայացներ բաւական անրնդաս բարձրութիւն կամ գժուարութիւն, բայց և այնովէ ո այլեւայլ նահանգաց ժողովրդոց իրարու միացման և ձուլման արգելք էին, միանգամցն և ներքին բարեկարգութեան և միութեան հոկերու պաշտօնն ունեցող արքունի զօրաց խաղացման խոշընդուն կը լինէին։ Հայկական բարձրաւանդակին անհամբոյք կլիմայն ուրիշ լրջակայ աշխարհաց նման հրապար չէր ազդեր արշաւող ազգաց, ոյսու հանդերձ ընդունարան եղած էր այլացեղ և այլարարարու ժողովրդոց, որոց շատերուն ճանապարհին վրայ կը գանուէր։ Անշուշտ այժմեան հազորդակցութեան զօրաւոր միջոցները կարող են այդպիսի երկրի բնակիչները իրարու կապել և հաւասարել, բայց այդ միջոցներդ չկին տանը, և նախնի ազգաց մէջ միայն Հասմիմյեցիք հասկցեր էին ամրակառոյց պարուայից օգուտը։ Հայսասանի նահանգաց և ոչ մին մնացածներէն ըստ բաւականի ոչ անելի ընդարձակ և ոչ ալ բազմամարդ էր՝ զանոնք կտուարելազէս ճնշելու և նուռանելու համար, ինչպէս որ Եւրապացի պատմագէտք իրաւամիք զրուցեցին՝ թէ Աննայի և Լուանի գաշտամիայրք, որ Գաղղիական միապետութեան խանձարուրքն եղան, եթէ աւելի

120ը անցնելու չէր. Գ, յԱզատաց՝ որը նախարարներէ անհամեմատ աւելի բազմաթիւ էին և ժողովրդեան ընտրելացոյն մասը կը կազմէին. Գ, ի Շինականաց. Ե, յԵկեղեցականաց։ Ազգային պատմազրութեանմէծ ծառայութիւն պիտի մատուցանէ այն՝ որ այդ հինգ կարգի մարդկան կացութիւնը, իրարու նկատմամբ ունեցած իրաւունքը և պարտականութիւնը, հոգաւորութեան և ժառանգութեան օրէնքը վաւերական փաստիւք հաստատէ։

Այսաշխատ միայն յիշեցնեմք ասու թէ նախարարը մագաւորեն անկախ կ'իշխէին մասանդութեամբ ստացած երկիրներուն մրայ, իրենց հոգաւակաց կենաց և մահուն գատաստանը կը տեսնէին.

Հարկ կը հաւաքէին իրենց երկրին ընտկիշներէն, և ի սոցանէ իրենց յատուկ զօրք կը կազմէին։ Այդ արտօնութեանց կամ իրաւանց փոխարէն որաբոսաւոր էին իւրեանց զօրքը օգնել թագաւորին՝ ընդհանուր վասնի ատեն, և հարկ հատուցանել նմանաւունքներդ և պարտականութիւններդ միշտ չէին յարգուէր. երբեմն թագաւորը նահապետական իշխանութենէ կը զրկէին զօրինաւոր ժամանակը և այլում կը պարզեւէին զայն շատ անգամ ալ նախարարը առ զանունեցած պարտքերնին չէին կատարեր։ Եթէ այսպէս և եթէ այնպէս, խաղաղութեանը կը վրտովէր և մեծամեծ շարիք կը հետեւէին։

գորաւոր անջրապետօք բաժանեալ լինէին յիրերաց, այդ երկու նահանգաց միացութե անշնարին եղած կ'ըլլար, որով և Գաարվաս զուցէ մինչեւ ցայժմ բաժանեալ մնայր յինքնուրայն իշխանութիւնս, որպէս էր Արքին Դարուց մէջ. նոյն օրինակ մարթ է կարծել որ եթէ Ալյարասաայ նահանգը կրկին ընդարձակութիւն ունենար, կամ եթէ շրջակայ նահանգները անկէ զանազանող անջրապետ կամ բնական հանգամանք աւելի ակար լինէին, Հայաստանի մէջ իշխանութիւնը միահեծան կ'ըլլար, որպէս յԱստիճանն և ի Պարսկաստան։ «Ասմակոն Զուփերի» անունը զոր տուին աշխարհազէսք ոմանք Հայոց երկրին, կը յարմարէր ամա հին առենը ոչ միայն բարձրութեանը, զոր և հզօր պետութեանց մէջ ունեցած դրիցը պատճառաւ, այլ և ներքին քաղաքական կազմակերպութեանը համար։

Եթափարաբական դրութիւնը սակայն, որ զշայս աւելի պինդ կազմութիւն ունեցող ազգաց բազգատմամբ ակար պահեց, նոցու անհասական կորովոյն աւելի դիմանալու պատճառ եղաւ։ Փոխանակ խառնամբոխ քաղաքաց մէջ դիզուելու և աղականութեան ենթարկուելու, ժողովրդեան աշխայժ և գործունեայ մասր բնահերապէս ակարակներու մէջ և նահապետաց դղեկաց և աւանց բոլորտիքը ափառած կը բնակէր. և թէպէտ Երասխայ դաշտին մէջ թագաւորաց կապուցած գասակերտքն տակավին կանգուն և մարդաշատ էին, Հայաստանի մէջ՝ մանաւանդ թագաւորութեան վերնալէն ի վեր՝ զիւգերը համեմատարար աւելի կարեւորութիւն սուցեր, բազմացեր և չենցեր էին։ Անդ ազատանին որորդութեամբ և մեացած ժողովուրդը հողագործութեամբ պարապելով մարմիննին առողջ և սրտերնին առոյզ կը մնար. մինչ նախանձը կամ փառափրութիւնը վառ կը պահէր տանուտեարց պատերազմական ողին<sup>1</sup>։ Թաղ այն երրորդ կամ չորրորդ հարատութիւնները

1 Երասխայ ձորադաշտակին մէջ, որ յարեւելից ի Հայաստան արշաւանաց և առաւերայ մեծ ճանապարհն է, ամէն ժամանակ գտնուած էր ամրացեալ և հոյակապ քաղաքներ։ Արմաւիրէն եւըը մայրաքաղաք եղար էր Հայոց Արտաշատ. Ախորեանի կանակը և սորա Երասխայ խառնուած տեղը՝ իրբեւ երկրորդ պատուար կանգնեալ էր Երուանդաշատ։ Արտաշատաց շուրջը բազմաթիւ գիւղեր և աւաններ գտնուելէն (Եղ. Գ. 64) կը

հետեւի՞ որ ի կէս ի գարուն բազմամարդ էր տակաւին, անդ ժողովնեցան լրպիսկուպատճեր և նախարարը, բայց իրբեւ թագաւորանիստ վայր կամ պաշտանատեղի. նորա նախակին շքեղութիւնը փոխադրուեր էր ի վաղարշապատ կամ ի նոր քաղաք, որ իւր բարձրաբերձ շինուածօքն և անթիւ ապարանօքն, մեծ եկեղեցեան և վկարասնօքն կեդրոն եղած էր Հայաստանի (Փարու. 28-29)։ Եղիշէ կը յիշատակէ և զՊատանի քաղաք, զՓայտա-

գոր ունեցան Հայք յետագայ ժամանակաց մէջ, ի՞նչ հետք մնացեր էր ի հինգերորդ դարու՝ Ասորեստանեաց, Բարելացւոց, Մարաց, Պարթեւաց և Խորայելացւոց իշխանութիւններէն, որք Հայկազնաց հետ կամ աւելի ետքը ծներ և մեծցեր էին: Կոյն ինքն Հռովմէական մեծագոր ազգէն անուն մը կամ առուեր մը միայն կայր: Իւտարամիան բանակները կազմողներն և առաջնորդողները վարձկան խուժդուժ զինուորք և զօրագլուխք էին: Խոկ արեւելեան կայսերութիւնը ջատառթեան, ապիկարութեան և ապքատութեան օրինակ մը միայն կրնար ըլլալ: Մինչդեռ մարզպանութեան ներքեւ զըունուող Հայք, որք Յունաց բաժին ընկնող զաւառաց և առանձինն կառավարուող Կորգուաց, Աղճնաց և Արգնարզիւնի բազդատամամբ մէկ կէսն անգամ չէին, իննաւն հագար զօրք կարող կը մինէին հանելու ու երեք բանակք կազմելու: Յազկերտի՛ Յունաց և մանաւանդ Քուչանաց գէմ բրած պատերազմներէն պարզուած արքունի զանձը կը լեցնէին կրկնապատկեալ արոց և հարկաց կանանաւոր վճարմամբ<sup>1</sup>, ի մեծ ապշութիւն Պարսից, որ նոցա կեղեքմանէն ուելի Հայոց իրական հարստութեան սպացոյց էր, և Խորազմի անսպասան մէջ հայկական այրուձին մեծամեծ ծառացութիւններ կը մատուցանէր ապերախտ տանն Ատամեանց:

Խոկ եթէ ուզենանք զիանալ թէ ինչ ազգեցութիւն ունեցաւ քրիստոնէութիւնը Հայոց բարուց վրայ, բաւական է բազրատել Բնուզմնդայ՝ Արշակայ և Պապայ գարսւն ըրած նկարագիրը Եղիշեայ աքսորեալ նախարարաց Տիկնանց նկարագրին հետ: Վասմաշապհոյ քանանամեայ իմուստուն կառավարութեամբ, ուսեալ և եռանդուն հայրապետաց ջանիւքը՝ աւետարանական սկզբունքը Հայոց մասաց և սրախին մէջ առզարուեր էին: Հայկական ընսանիքը սրբուեր էր ի հեթանոսական խառնակութեանց, և առանին կէնաց մաքրութեամբ անհատից կորովը և կործութիւնն ալ աւելցեր էր: Ամէն կողմ զպրցնէր, ուսումնաբաններ բացուեր և բևմասացութիւնք հրապարակային գասախօսութեանց տեղը բռներ էին: Նախարարք ալ առեն առեն վէճերնին մոռանալով՝ ուսմանց և ընթերցման կը պարապէին ու կը յորդորէին զգարութիւնս: Երկրին ընտրելազոյն

կարան քաղաք: Կ'երեւի թէ Ե դարուն վերջերը Դուքին կարեւորութեամբ մնացել քաղաքները անցեր էր: Միջին Դարաց մէջ յէւրոպա եւս, աւատական իշխանութեան առենք, քաղաքները նուա-

զեր և ամայացեր, խոկ գիւղօրէից կարեւորութիւնը աւելցեր էր: Տէ՛ս Guizot, Civilisation en Europe.

4. Եղիշէ, Բ. 47. 69:

երիտասարդները ծաղկագրադ մեղուաց նման, այն ժամանակի քաղաքականութեան գլխաւոր կեզբաններուն մէջ, չեղէն և առորի գորութիւնքը և գաղափարները հաւաքերաց գործեր էին ի հայրենիս. և թէպէտ զոցա Հայուստան բերած զիտութեանց ծիլերն հնացեալ կամ հիւանդ արմաններէ առնուած էին, բայց արգաւանդ հողոյ և կազդաւրիշ բնութեան մը ազդեցութեամբ՝ գորաւոր կերպով աճեր և գեղեցիկ պատզներ արտազրելու ոկսեր էին: Եթէ Աստանեանք կամ մեր կոռւասէր նախարարք միջոց առւած ըլլային, հուժկու քաղաքակրթութիւն մը և ճոխ մատենագրութիւն մը պիտի գոյսնար, յատուկ հայկական կերպարանօք, որոյ նախրնծայքը և բեկորքը եւեթ մեր այնքան հիացումը և օտարաց գարմացումը կը շարժեն այժմ:

## Է

Մինչեւ ցայս վայր քննադատեցինք զիղիչէ՝ միայն վարդանոց պատմութեան վրայէն՝ որ նորա զլիստաւոր գործն համարուած է: Ակայն մատենագիր մը լու ճանաչելու համար, նորա ամբողջ երկասիրութիւնքը տեսնել պէտք է: Քննադատք համօրէն համամիտ են գոյասանօք խօսելու առ Միանձունս ուղղեալ խրասուց վրայ, որ թէ իմուստից և թէ ողորկ ոճոյն համար ազդային մատենագրութեան ամենէն գեղեցիկ արտազրութիւններէն մին կրնաց համարուիլ: Չորս ու կէս գար յառաջ Փիրոն Երբայցին Աղեքսանդրիոյ մօտերը բնակող Յեսուսեանց (Eesseniens) կենցազոյն վրայ գեղեցիկ ճառ մը զրած էր, զոր հաւամօրէն առաջին թարգմանիչըն վերած էին էին ի հայ բարբառ, և որոյ վրայ Եւսերիս եւս ընդարձակ տեսութիւն մի կ'ընէ իւր Աւետարանի պատրաստութիւն անուն երկասիրութեան մէջ: Եղիչէ այդ ճառէդ և տեսութենէդ հաւաքերովի ինչ որ քրիստոնեայ ճգնաւորաց կրնար յարմար զալ, կասարիւազոյն և գեղեցկազոյն պայմանաց մէջ միանձնական հասարակութիւն մը կը գծազրէ, զոր անորոշ կերպով կը զնէ «ի կորման հարաւոյ», օրինակ տալով զայն հայ վանականաց: Եւ թէպէտ Եղիչէի նպատակը տեսական կ'ենաց (vie contemplative) և խմառութեան առաւելութիւնները ցուցանել է, բայց իւր արգակից

վանուկանաց ընշից և ստացաւածոց, ապարանից և կոպուածոց և բարեկեցիկ կենցաղոյն և լրգիւթեանց վրայ կարեւոր տեղեկութիւններ կու տոյ, և այդ հեղդութեանց իրր երկնոռուաք պատուհան՝ երկրաշարժի և սախու աշաւոր նկարազիր մ'ընելով, յետին սրասուոչ հառաջանք մը կ'արձիէ իւր օկրտեատես եղած քաղաքական աղիւթից վրայ: Այդ պատճառաւ մեք իսկ յարմար դասեցինք յարել զսա Վարդանաց պատճառաթեան՝ իրրեւ շարունակութիւն կամ լրացնող մտան նորին: Այսու հանդերձ այդ փոքրիկ հառդ մեր հեղինակին մասց գորութեան և սրպիսաթեանը նկատմամբ՝ «Վարդանէն» աւելի բան մը շի սորվեցներ մեզ: Այս նշանաւոր քերդուածը զրազը անշաւշա Միանձանց հասն ալ զրելու կարող էր:

Են բազում այլ երկասիրաթիւնք Եղիշեայ նուիրեալ, զսրութեանուկոյ Մխիթարեան Հարք կրկին անգամ տպազրեցին:

1. Մեկնուրիւն Յեսուաց և Պատաշորաց, 31 էջք,
2. Յազօթոն որ ասէ՝ Հայր մեր որ յերկինք, 8 »
3. Ի Մկրտուրիւն Քրիստոսի, 6 »
4. Ի Թափոր թրիմ՝ Յայտնուրիւն Տեսան առ Պիտրունեաց, 27 էջք,
5. Ի Զարչարան Տեսան (և ի խաչելութիւն, ի թաղումն, և ի Յարութիւնն, յԵրեւումն աշակերտացն առ Տիրերեայ ծովոն և ի քարտզութիւն Առաքելոց) 114 էջք.

6. Վասն դատաստանին և միւսանցամ զարտեանին, 2 էջք.
7. Վասն Յիշատակաց մեսելոց ի Եաննաց Գրոց, 5 »
8. Կամոնք վասն զիշաձարաց, 5 »

9. Վասն նորոց մարդկան ք ուստի զան և առ ով երրան, 8 »

Այդ զանազան մեկնութիւնքով և հառերդ Վարդանանց պատճեան Աւթ Յեղանակաց հինգ շորբորդին չափ են:

Արարածոց մեկնուրիւն մի ալ շարազրած էր Եղիշէ, որոյ կորուսոր մեծ զրկումն է հայերէն զպրութեանց, և այս կորստեան ցաւը աւելի զգալի կ'ընեն նորա հատուածները, զոր համանոն երկասիրութեանը մէջ յառաջ կը բերէ Վարդան՝ մատենազիր ՓԴ գարու, յանուն Եղիշեայ<sup>1</sup>:

Զգրութիւնն զորա յիշատակեցինք ի վերոյ, ոմանք ժամանակաւ կաւ երիցագոյն համարեցին քան զպասմութիւնն և գնան Միանձանց, և նոցա ոճոյն մէջ այնքան զանազանութիւններ տեսան, որ կը կարծեն թէ Եղիշէ զդոսս այնպիսի հասակի մէջ շարազրեր էր,

1. Պատմութիւն Հայերէն Պարութեանց, էջ 242:

որ սասկաւին չէր ստացած այն լեզուի դարմանալի մաքրութիւնը և հմտութիւնը որ ուրիշ գրուածոցը մէջ զմեզ կը զմայլեցնեն։ Միիւն թարեանց 1859 տարւոյն հրատարակած Եղիշեայ ամրողի երկասիւրութեանցը մէջ յետազայ ծանօթութիւնը կը զանենք ի ստորեւ մեկնութեան դաստաւորաց և Հայր մերին։

«Յաջորդ ճառքդ գտանին յանուն Եղիշէի Վարդապետի, այլ հորազատութեանն և խմասորիցն չիք երաշխաւորել»։

Ասանկավ զվերոյզրեալ երկուսն հարազատ կը թուին համարել և երկրայութեան տակ կը դնեն մնացեալ զրութիւնքը։ Գարեգին Վարդապետը իւր Հայերէն զպութեանց պատմութեանը մէջ կ'արձանագրէ այդ զրութեանց հարազատութեանը վրայ ոմանց յայտնած կասկածը։ բայց որովհետեւ մի քանի պատմիչք, և ի մասնաւորի Կիրակոս ըստն է՝ թէ «Եղիշէ զրեաց զպատմութիւն որբոց Վարդանանց և զգիրս կանանցն և այլ մեկնութիւնս զրոց որբոց և զշարչարանաց փրկին», կ'ուզէ հուտառալ և նոցա հարազատութեանը։

Արդ Կիրակոս ԺՊ. դարսւ մատենագիր է և Եղիշէէ 800 տարի երգը արտած վկայութիւն մը ստուգութեան շատ ակար արժէք մը կրնայ ունենալ։ Վարդանանց պատմութեան ոճը, իմաստները, շարադրութեան ձեւերն այնքան որոշ և յասուկ կերպարանք մի ունին, որ մեզ թոյլ չեն տար շփոթել նորա հեղինակը այսց հետ Եւ եթէ չգտնեմք այդ յատկութիւններդ Եղիշեայ ընծայեալ ուրիշ զրութեանց մէջ, պարտիմք մերժել զնոսա իրեւ անհարազատ, նաև եթէ մի քանի դար յետոյ վկայող զանազան պատմիչք իրարմէ երկրորդելով հակառակը պնդեն մեզ։ Եղիշեայ ոճը յատկ, զիւրսասէ և ողորկ է՝ երբ նու մեծ զգացմունք մը կամ զօրաւոր կրքեր բացարէ, մթին՝ սեղմեալ և կրնամք տաել ևս խանամ՝ երբ բնազանցական և տառուածարանական խորհրդածութեանց մանէ։ Վարդանայ պատմութեան ճակատը զրտած ընծայականը, զոր շարադրեց եօթն Յեկանակները զրելէ, այս է՝ որպէս պիտի առէին երկրայտքն՝ լեզուին կատարեալ հմտութիւն և մաքրութիւն ուսանալէն յետոյ, այնքան խթին և սեղմեալ կ'երեւի՛ որքան Յեսուսայ և չարչարանաց մեկնութեանց ամենէն մութ մասունքը։ Դիւտելիի է միայն՝ որ տառուածարանական խմասոք Վարդանանց պատ-

1. Եղիշէի անանուն կենապետն ալ և առաւելեալ ի վարս արդարութեան կ'ըսէ. և որ եւ այլ գիրս ստացեալ կանու հաճայ լիներ Ասոււծոյ և մարդկան։ ճական եւ զգուշաւորս սրբոյ Եղիշեցոյ, Սոփ. Հայկ. հու. ՃԱ. 40:

մութեան մէջ քիչ կը հանգիպին, մինչ միւս զրութեանց մէջ մեծ տեղ բանած են: Ասոր հակառակ երբ Մեկնութեանց մէջ տեղ տեղ բան կիրք մը կամ սրաւաշարժ զգացմունք մը բացատրելու կը ձեռնորդէ, ոճը այնքան կը պարզի ու կը մաքրուի, որբան Վարդանանց պատմութեան ընտրելազոյն էջից մէջ: Եղիշէի զրութեան զիմաւոր յատկանիներն են նմանութեանց առատութիւնը և վահամութիւնը, զիմանութեանցը մէջ ցուցուցած բարկութիւնը, հաւեկազրութեանց յաճախ զործածութիւնը և չափակցեալ կազմութիւնը, պատկերակերպ նկարագրութիւնքը, մորդկային սրտի և կրից առատանմանց խորին ճանաչողութիւնը, վերջապէս սասարիկ տպաւորուող և մանրակրկիտ միաքը՝ որով առարկայի՛ իրաղութեան կամ խնդրոյ մը զիմաւոր և երկրորդական բազմապիսի երեւոյթները և հանգամանքը միանգամայն կը տեսնէ: Այդ վատահելի նշաններուդ ամէնն ալ կը գտնեմք երկարագոյն զրուածոցը մէջ, և զոմանս միայն համառօս ճաւերուն մէջ, քանզի այս վերջնոց նիւթը և կարձութիւնը ընդարձակ սասպարէզ մը չէր հայթայթեր և զիշէի հանճարոյն: Կմա նուիրեալ երկարութեանց մէջ կը տեսնեմք նմանօրինակ իմաստներ յար եւ նման բացատրութեամբք, որ նոցա ամեննեցւն իրարու քիչ շատ մօտ ժամանակի մէջ զրուած ըլլալուն ապացոյց է: Կը թողուժք միւս մանր զրութիւնները, ամփափելու համար մեր ուշազրութիւնը երկու երկարագոյն մեկնութեանց վրայ՝ դաստաւրաց և Զարչարանաց:

Գիտեմք՝ թէ ի չորրորդ դարուն քրիստոնէութեան ոգին ափառալով այն ժամանակի մոտաց և որոտից վրայ, կրօնական պերճ մասենազրութիւն մը յառաջ բերեր էր Հռոմէական և Յունական աշխարհին ամէն կազմերը: Մասուրական այդ մեծ շարժումզ Հայոց բարձրաւանգակին վրայ ելլելու և անդ տարածուելու համար զրեա թէ կէս դարու չափ միջոցի պէտք ունեցեր էր: Բայց առա ևս արդիւնքը եկեղեցական մասենազրութիւն մը եղած էր: Քանի որ նախնի հեթանոսութեան սովորութիւններն և մեծամեծ դէպքերն ալ ոչ կարեւորութիւն ունէին և ոչ ախորժ կ'աղզէին, աղզգոյին հանճարներն եւս քրիստոնէութիւնը հասկնարու՝ հասկցնելու և հերձուածները հերքելու պարապեցան: Եթէ մասենազիրք ունանք մէկ հոյակապ անձմնոց հրամանաւ (Խորենացին՝ Ամբատայ Բագրատունոյ և Եղիշէ՝ Դաւթի Մամիկոնէի հրամանաւ), զրիշնին ժամանակ մը անցեալ կամ ժամանակակից աշխարհական իրաց եղելութեանց պատմութեամբը զբաղեցուցին, զայդպիսի զրութիւնքս

պարտիմք բացառութիւններ և իրր, ոյդ երկու հոյսկազ մասենագրաց զրական զրօնանքն համարել։ Ապաքէն զոր ինչ նոքա երկուրդական և զուգնաքեայ կը վարկանէին, մեք իրաւոմք զլուխ զործոց նոցու կը զատիմք, վասն զի հանձարոյ բնական և ոչ բանագրասեալ ճնունդքն էին. բայց և այսպէս ողէտք չեմք մոռանալ թէ Խորենացին և Եղիշէն կեսանքերնուն և աշխատութեանցը մեծագոյն մասը, ինչպէս իւրիանց ընկերակիցքը, կրօնական վարդապետութեանց, կառակարանաց թարգմանութեան և մեկնութեան և բեմասացութեանց սեփականեցին ։

Վասն որոյ Եղիշէ եւս երբ զինուորութիւնը թողուց և կրօնաւորեցաւ, այլ և այլ մեկնաւթեանց ձեռնարկեց, զօրս մեծ առներու առթիւ շորագրած և խօսած կ'երեւի։ Բայց այդ աեսակ երկուութիւնք նորա վասովուն և զօրուոր հանձարոյն անյարմար էին, որ դժուարաւ կը հանգուրժէր սրբազնն մատենից անտրգելի պահանջմանց։ Նա որ մարդկային կրից յուրմանց հարսար նկարուն էր, պատճառարանելու սլոտի ստիպուէր։ Նա որ զիւցազներգութեան լայնարձակ ասպարդիցին մէջ վագելու կամ աստաւածերգութեան բարձրութեանց և խորոց մէջ համբելու ճնած էր, այժմ կրօնական վարդապետութեանց ամուռ հանգուցիւք կը կաշկանզուէր։ Բայց ինչ որ ալ ըլլար սպարսապմանցը տեսակը, Եղիշէի հանձարը չէր կրնար փոխուիլ, և երբ առիթը ներկայանայր, երբ կիրք մը բացատրել կամ պատկեր մը նկարագրել հարկ ըլլար, իւր կրակառ երեւակայութեանը նշանները պիտի տար մեզ։

ԱՌ յիշէք Յեփթայկայ ուխաը, որ Ամսնացոց զէմ պատերազմի գնացած տուենը երգուընցեր էր նուիրել Աստուծոյ, ևթէ յազթող դառնայր, զոր ոք իւր անէն զիմացը երանէր։ Յորժամ կատարեալ յաջողութեամբ կու զար իւր բնակարանը, միտմօր աղջիկը զհայրն չնորհաւորելու կը վազէր։ «Ոզրո ի վերայ ան Յեփթայէ և ասէ. Վայ ինձ, զուսար իմ, ընկճելով ընկճեցեր զիս. և ես զրերան իմ բացի վասն յուխտ պատարագաց. և արդ ոչ կարեմ դարձուցանել։ Երաց զրերան իւր աղջիկն և ասէ. Յիս դարձ հայր իմ. ևթէ ինեւ ետ Աստուծ զյազթութիւն խորայելի և ապեկցոյց ի ձեռաց Աշմոնացոցն, որպէս և ելին բանքն ի բերանոյ բո՞ արա համարձակ։ Բայց խնզրուած մի իմազրեմ ի քէն, հայր իմ, մի արգելուր յինէն. թող երթացց ամիսս երկուս, բացից զկուտութիւնն իմ, ոչ ի

4. Պարդապետ կոչուելուն պատճառն ալ այս եզած է։

զիւզու և ոչ ի քաղաքս, այլ ի ւերինս։ Եւ հայրն վաղվաղակի յանձն էտ և տաէ։ Երթ դռասար իմ՝։

« Եկն եհաս ժամանակ պատարագելոյ նորա։ Անդ ժողովեցաւ ամենայն խօսյէլ ի Դանայ մինչեւ ցՔերտարէէ՛ մարդախողիսաղ տեսանելով զհայր առ որդուով։ Երկու ամիսս լացին ի ւերին, Հնչեաց բարբառ զուժի նորա ընդ ամենայն երկիր, ժողովեաց և ած զբաղմութիւն մարդկան։ քանզի կարծեցին ամենեքեան՝ թէ նոր օրէնք զնին՝ ոչ ի մարզկանէ։ այլ յԱստվացան վերջին լալինքըն քան զատաշին երկուց տանցն։ ի միտս իւրեանց այսոր և անդր էոծեալ մինէին, յիշելով զԱբրահամ՝ և զժամանակ փորձութեան նորա։ Ամենայն բազմութիւնն արանց և կանանց զայս խորհուրդ ի մտի եղեալ՝ կարծեն զԱստվածած այցելութիւն եկեալ Հոսանել նոցա։

« Եւ ընդդէմ պատարագին իրրեւ կարծիք մտաց նեղեալ տաղնոպէին, և յայտնութիւն ձայնի ոչ եղեւ վերուստ ի վայր, փութացաւ Ցեփթայէ և եհան զսուրն վաղվաղակի, կափոյց զաշն մըտացն յանսահսութիւնն, մինչեւ աղքին գտարէին ի գութ խանգաղատանց, թէպէս սիրան ի րերանն էր, հարաւ սուրն ի փոստ զսուրն և կարեաց։ Առ ի զոշիւն չեղման արեանն և ի հոնչիւն կոկորդին, և ի շարժումն բոլոր մարդկանն առհասարակ ամենայն բազմութիւնն բոլոր մարդկանն միաձայն միաբարբառ ճշեցին, իրը թէ երկինք և երկիր լացին զմահ միամօրին, զանտանելին յողակէդ յանհրաման սեղանոյ անտի»։

Ի Սուրբ Գրաց զիտեմք թէ Ամենան պատանեկութեան ատեհնը առիւծ մը սպաննեց։ « Եւ էջ Ամենան և հայր նորա և մայր իւր ի թամաթաւ և խոտորեցաւ Ամենան յայգեստանն թամաթայ, և ահա կորիւն մի առիւծոց գոչեաց ընդդէմ նորա։ Եւ յաջողեցաւ ի վերայ նորա Հոգի Տեան և ձեղքեաց զնա իրրեւ զուլ մի այծեաց։ և ոչ ինչ զոյր ի ձեսին նորա, և ոչ պատմեաց հօր իւրում և մօր իւրամ զոր արար»։ — Տես ինչպէս կը մեկնէ Եղիշէ ու կը նկարագրէ այդ եղելութիւնդ։

« Գործի հաստատեցաւ նա բարկութեան ի վերայ այլազգեացն։ Նովաւ կամէր առնուլ Աստուած զվրէժ որդւոցն Ենակայ։ Եւ անդ էր շնուպէս մի յառիւծոց, զաչեաց և յարձակեցաւ ի վերայ նորա։ Առիւծ առիւծոյ պատահեցաւ, մինն հինաւուրց լի չարութեամը, և

1. Ասկէ վերջը Աստուածաշունչ ամնոցն, գարձաւ առ հայր իւր, և արար գիրքն յետադայ խօսքերը միայն կը գընեն։ Եւ եղեւ յետ կատարելոյ երկուց նովաւ զուխտն զոր ուխտեաց ։

ՔՄԱՊ, Եղիշէի

մինն այն ինչ կորիւն առիւծու մասաղ յաւուբց, և լի երկնաւոր զօրութեամբն. հին առիւծն գոշէր մեծաձայն՝ ոչ արկանելով մատագ կորեանն, իսկ նու զօրութեամբ մոնչէ՝ քամահելով զանոյժ բանս, և փափուկ մարմնովն հեղձուցանէր : Անդ ուրեմն շարասէր թշնամին մարգկան, մինչդեռ հրեշտակն Աստուծոյ գաւեափա չքնաղ մարդկանն հօրն և մօրն աւետարանէր, լուսու զամենայն ըստ կարգի զոր ասաց նմա հրեշտակն, դէտ ակն ունէր նմա թէ ուր կորուցէ զնս ի գեղս<sup>1</sup> : Եւ յորտվայնէ ի աննպեանն ոչ կարաց վետակի նմա . և ին և մուտ ի չար գազանն մոլեգնեալ, կատաղեցոյց և յարոյց ի վերայ նորա, թերեւու կարացէ զաստուծատուր շնորհան խափանել, զցանկալի ծաղիկն խամրեցուցանէլ, զարծարծեալ ույսն իսրայելի շինուցանել : Բազում զունդք զիւացն ընդ նմա եկեալ յօդնականութիւն եկին մոխն յառիւծն գազանացեալ, մոնչեաց ընդգէմ եօթնագիսակ մանկանն : Խոկ նո՞ւ իբրեւ զուխտաւոր քահանայ՝ զաջ ձեռն զնէր ի վերայ զիւացն և զահեակն արկանէր զներքին կրակաւն, ի գիրկո իւր առեալ հեղձուցանէր զերեւակի սրտմտութիւնն, և թմրբեցուցեալ զանմահ շարութիւն՝ ընդ նմին և զշունչ զազանին քաղեալ հանէր : Բազուկ առ բազուկ կարկառէր, և ձայն առ ձայն բարբառէր, զրազում զունդք զիւացն ի բաց հարծէր, ոչ բրածախտիւն և սրով հատեալ զգեղեցիկ բնութիւն առիւծոյն ոչ ապականէր, որ էր խորհուրդ բոլոր աշխարհիս» :

Բայց այն զրութիւնը՝ յորում Եղիշէի Հանճարոյն մեծութիւնը և կորովը զուրս կը ցայտէ առաւել եւս քան ի պատմութիւնն Վարդանանց, Քրիստոսի չարշարանաց և յարութեան Մեկնութիւնն է՝ զոր չարազրած և ըստ Յակիսնու աւետարանի, և որ «Վարդանայ» եօթն Յեղանակաց շափ ընդարձակութիւն ունի : Անշուշտ ոս՝ պատմական երկասիրութեանը հաւասար ոչ զուարձալի և ոչ անստգիւտ է, և այդ պատճառու զուցէ յերեսէ ընկած ի բանասիրաց : Աւելայն ի՞նչ պէսպիսի և սքանչելի հնարքներ և միջոցներ կը զանէ հեղինակին բեղմնաւոր միաքը : Իւր զրչին տակ աւետարանշին խօսքերը զարմանազան երեւոյթներ կը ներկայացնեն մեզ : Հաետորական և բանաստեղծական ձեւերն յաճախ են և յոյժ աշխատեալ . և երբ բնազիրը թոյլ առյ նմա, շղթայի զարնուած հզօր արծուի նման, որ կապերը յանկարծ թուլցած կամ արծակած զանէ, կը թեւակոխէ ու կը սաւառնի այերց կամ անդնդոց մէջ, և այնպիսի

1. Հրեշտակը պատուիրեր էր Սամիւանի մորը՝ իւր յըութեան առենը չիսել ոչ գինի և ոչ օգի և շուտել զամենայն

անստրբ, քանզի Ասմիստն Աստուծոյ ուխտաւորը պիտի լինէր:

վահմութեան մը կը հասնի, որոյ նմանը չեմք տհանել նոյն ինքն Վարդանայ պատմութեան մէջ, որ սակայն հած է վումի ընտիր օրինակօք։ Ազացոյց մը ապրու համար մեր բատին, միանգամայն և յորդորելու զազգայինս որ այդ Զարշարանաց Մկնութեան արժանաւոր յարգ և ուշապութիւն ընծայեն, ասս կը գնեմք քաղաւած մը։

Քրիստոն՝ յետ աւանդելոյ զհոգին ի վերայ խաչին՝ իշեր էր ի զժոխս, առ ի լուծել զիշխանութիւն մահու։ Այդ վարդապետութիւնդ որ ի Զ զարուն լատինական հանգանակին մէջ մտաւ, արդէն իսկ յերկրորդ դարէն ի վեր վասվառուն և ճոխ նիւթ մը հայթայթած էր առհասարակ թէ արեւելեան և թէ արեւմտեան Եկեղեցւոյ հարց երեւակայութեան և բնմասացութեանց, ինչպէս և միւսինակերտ պատկերաց, որոց նկարագրութիւնքը գորգես ամփոփեալ են Նիկոպետան Ամետարան կոչուած հինգերորդ դարու անգամուեր զրութեան մէջ։ Ամենուն մէջ կայ զժոխոց յանկարծական լուսաւորութիւն կենդանի լուսովն Քրիստոսի, երկաթեայ և պրնձանիդ զրունքն՝ որպէս ի Հոմեր (Խլիական Բ, 15), կամ պրնձակուռ զրունք և նիգք երկաթիք՝ որպէս յԱսպիր (ԽԱ, 2), մահուան փախչին ու թափշչիր և ասպա կաշկանդին ու պրկին ի Քրիստոսի։ Ամանք զՄահ և զԴժոխս կ'անձնաւորեն՝ որպէս ի Յայտնութեանն Յովհաննու (Զ, 8 Խ, 14), և Մահն ահարեկ՝ կը հարցնէ։ «Ո՞վ է աս»։ Այլք զԱստան և զԳժոխս, և զէմ առ զէմ կը խօսեցնեն զնոսա, զՄահ կամ զԱստան շարութեան մէջ յամտու և զԳժոխս աւելի վարանեալ և տարատմ ցուցանելով։ Ասկերերան Դաւթի բերանն ալ խօսքեր կը զնէ, «Համբարձէք զգրուն ձեր ի վեր» և այլն, նոյնպէս և յԱսյեայ, այլք ի մէջ բերեն և զՅովհաննէս Մկրտիչ որ Քրիստոսի մօտալուտ զալսաւեան լուրը բերեր էր ի Դժոխս։ Որոզինէս կ'ըսէ՝ թէ Քրիստոս յաղթութեամբն աւար ասաւ ու տարաց Սեթայ զաւոկները։ Են ի հայրապեսաց՝ որք զյանական Տարտարոսը կը յիշեցընեն երեքդիսեան Կերպերաւն, այլք Հրեկից պէս տափարակ կը համարէին զերկիրս՝ զմբեթայարկ և բիւրեղեայ երկնաւ, ի ներքոյ երկրի՝ Դժոխք կամ Շեշտ, ահազին և խաւարչուտ վայր, ուր իջանեն ամենայն հոգիք արդարաց և մեղաւորաց։ Տեսնենք Եղիշէ ինչպէս կ'ըմբանէ զվարդապետութիւնդ։

«Այլ աէր մեր Յիսուս Քրիստոս զառ ի ներքոյ արեգականս զամենայն զիրկագործն կատարեաց, և ի սոսորին կողմն երկրիս ամենայն զօրութեամբ իւրով խաղաց գնաց իջանել տեսանել զզօրու-

1. Տե՛ս Alfred Maury, Croyances et légendes de l'Antiquité, 1863. և Ath. Coquerel fils, Histoire du Cre-

do, 1869.

թիւն մահու և միմիթար տալ Աղամեան զաւակին՝ որք յուսահաւառթեամբ նստէին ի խաւարի և ի ստուերս մահու։ Եւ իրրեւ եւ հաս յամուր պարխապն դժօխոց և յերկաթի պղնձանիդ գուանն, ձայն աշագին մեծ կարապետին զպարխապն տոհասարակ զովացուցեալ կործանեաց, և զօրութիւն կենդանի հրցին զիարծրանիդ զրուանն իրրեւ զմոմ հալեալ սպասեաց, և ճառապայթք ինքնածագ լուսոյն առ հասարակ ափաեալ տարածեցան ի զուս և ի խորչս անմասոյցո տմուր վայրացն նորա, մաշեցաւ և սպասեցաւ թանձրացեալ խաւարն, և երեւեցաւ մերկ խայտառակեալ զազրատեսիլ զարդ սանցարամետականին<sup>1</sup>։

«Յայնժամ մահու զժիչ սահալ, զազրակ բարձեալ և լոյր զառնապէս, զոչէր բարձրածայն և ասէր, Ո՞վ է սա որ եկն եմուա յանմասոյց ամուրոն իմ, մեկնեաց զիս ի բնական խաւարէն զգեստէ իմէն, և այրիմ ի տապ տապակիս յաշագին ի հրեղէն փառաց նորա, ոչ մնաց ինձ խորչ խաւարի և ոչ մութ զիշերոյն, ոչ դաշտ փախատեան և ոչ լեռան թաքստեան և ոչ ծործոր սպասինի, չիք հեռաստան թէ փախեացց, և ոչ խորխորատ մօտաւորութեան թէ կացցէ։ Անդունդք աղաղակին թէ աստ է, և յերինք իրրեւ զմոմ հալին առաջի փառաց նորա, զերեաց զամենայն տարտարոսա, զուզացոյց զօրս խաւարին՝ զձախոյ մանկունան իմ։ Վայ է զինեւ, եղուկ եմ ես, կողոպտեաց զգանձս իմ, յաւարի էառ զամենայն զմեծութիւնս իմ, ոչ եթող ինձ յոյս մխիթարութեան, և ոչ զմի ոք յիմոց սեփականաց։ Ո՞վ արգեօք իցէ սա, զի ես ոչ զիտեմ։ Ենովք և Եցիս այսորէն ոչ եկին։ Այրահամ և Աահակ և Յակոբ ընդ իս զայս ոչ գործեցին։ Նոյ և Արէլ և ամենայն արդարքն ընդ ինեւ անկեալ զնին, Մոլսէս և մարգարէքն ինձ հնազանդեալ են, Մերքիսեղեկ և ամենայն թագաւորք արգարք յինէն ոչ ապատամբեցին։ Եւ զի՞ մի մի թուիցեմ յանուանէ զազգս արանց կամ կանանց։

1. « Drove them before him thunder-struck, pursued  
With terrors, and with furies, to the bounds  
And crystal wall of heaven; which, opening wide,  
Roll'd inward, and a spacious gap disclosed  
Into the wasteful deep: the monstrous sight  
Struck them with horror backward, but far worse  
Urged them behind; headlong themselves they threw  
Down from the verge of heaven; eternal wrath  
Burnt after them to the bottomless pit ».

ահա ի սկզբանէ մինչեւ ցայսօր արդարք և մեղառորք, հզօրք և տը-  
կարք, ծերք և տղայք, նա և որք շտեսին զլոյս աշխարհի, առ իս  
ժաղավեալ են, ամենեքեան ընդ իմով իշխանութեամբ կան հնագան-  
դեալ։ Խակ ով իցէ սա, տայր ոք գիտացեալ։ Եթէ զաեղին կարէի  
զիսել, թերեւ և չնարս ինչ իմանայի, եթէ յերկրէ է, ապա և  
զգաւառն զիսէի և զազգաւահմե, զբնութիւնն զոր տեսանեմ, ըստ  
ամենայն ազգատօհմի մարդկան բերէ նա զննունութիւն, մանաւանդ  
զթիւ մասանց մարմնոյն ոչ աւելի և ոչ պակաս գտանեմ, այլ ըստ  
ամենայնցն և զորպայօ։ Բայց յերեսաց սորա կարի իմն զարհուրեալ  
եմ, զի եթէ յիջանելն իւրում տա իս զրազումս կորզեաց եհան յի-  
նէն, վայ ինձ եթէ շարակամաց սա անդրէն երանիցէ, երկնչիմ  
եթէ բնաւ խակ զամենայն ընդ իւր տանի, և ես յիմոցս միայն մը-  
նացից։ Ես և յանձնէ մեծ երկիւդ է ինձ, զի ոչ միայն զիմն հանէ  
յինէն, այլ և զուելի խաւարինս ինձ ոչ թողու, և որպէս իմանամ,  
յայսմ խաւարէ զիս յայտ խաւար տառքերց է, և երանմէ եթէ այս-  
պէս էր խաւարն՝ ուր տանելոցն էր զիս։ Բայց եթէ այսպէս էր  
ուր տանէրն, նա և հանէր խակ ոչ զիս տասի՛։ Այլ արդ և աչա  
յայտնի եղեւ, որպէս ոչ զիսացի զգաւառ սորա, սոյնպէս և ոչ  
զիսեմ զիսաւարն յոր զիսն տանելոց է։ Բայց չար այս խակ է ինձ  
քան զամենայն, որպէս երեւի՛ զի ոչ միայն վասն արդարոց եկեալ  
է այօր, այլ և վասն ամենայն մեղաւորաց։ Եւ եթէ ածէ և հո-  
մար տանէ ընդ իս, և պահանջէ յինէն զոսկերս վախճանելոցն որք  
տա իս եկին, թերեւ կարեմ տալ։ Խակ արդ եթէ զինովք և  
զիզիա յինէն իննդրեացէ, և եթէ զայս եւս արտացէ ընդ իս, յայն-  
ժոմ ինձ վասնդ տապնապի և վարան աարակուսի, զի ոչ ուրեք  
գտանեմ երթալ։

« Արդ իբրեւ այսու ամենայնիւ Մահ յանձն իւր տապնապէր,  
և ոչ յումեքէ զատնէր բան միմիւրութեան, զժոփք ետուն պո-  
տասխանի մահու և տահն։ Զընութիւն սորա զիսեմք մեք, և զազ-  
գաւահմե զորա ճանաչեմք, զա է վասն որոյ տասաց յառաջադրյն  
չողին սորրը։ Համբարձէք իշխանք զգրուն ձեր ի վեր, և համ-  
բարձցին զրունք յաւիտենից, և մացէ թագուր փառաց։ Եթէ  
կրկնեացիս և երեքինեացիս և բազում անզամ հարցցես, զնոյն  
լուիցես։ Տէր զօրութեանց, սա ինքն է թագաւոր փառաց։

« Եւ իբրեւ լուաւ Մահ զոէր անունն և գհզօր և զպատերազ-  
մող և ի կախ եկեալ ընդ իշխանութեամբ մահու, լուծաւ լքաւ և  
բեկաւ ամենայն զօրութիւն նորա, և հատու յոյս թագաւորութեան

նորա, զահի հարեալ յերեսաց նորա՝ ձեզէր փութայր փախչել և  
թափչել, և տեղի ոչ զատնէր<sup>1</sup>. ձայն բարձեստ յաղերս մեծ ազա-  
չէր և ասէր, Գիտեմ զքեզ, Յիսուս Նազովրեցի, զու ևս սուրբն  
Աստուծոյ, մի յատաջ քան դժամանակն տանչեր գմեզ: Այդ իրրի  
կապեաց զնա, և բեւեսեաց բեւեսօք, բեւեսեաց զոտո և զձես  
նորա, և պրկեաց կապեաց ընդ զօրութիւն անպարտելի խաչին, և  
ետ իշխանութիւն ամենայն մարդկան՝ որ խաչեղայն հաւատան և  
կատարեն զատառուիրանն Աստուծոյ Յանի, զնալ ի վերայ իժից և  
քարրից և ամենայն զօրութեան Մահու, էտո աւար բազում և  
բերեալ բաշխեաց ամենայն հաւատացելոց »:

Ի՞նչ է այդ մեր կարգացածը: Քրիստոսի պարագանատ դժո-  
խոց վրայ յարձակիլը կը յիշեցնէ մեզ « Կորուսեալ Դրախտին »  
մէջ Արգւոյն Աստուծոյ ապատամը Հրեշտակաց դէմ երթալը: Զաս-  
տուածութիւնը պատերազմող մարդոյ կերպարանաց տակ նկարա-  
գրելու ձեռնարկելը մեծ յանդզնութիւն մի է, որ յայնմամ միայն  
կրնայ ներելի ըլլու՝ երբ հեղինակը նիւթոյն զուգաչափ կորով դի-  
զելու և խոնելու կարօղ ըլլոյ: — Խակ Մահուան մենախօսութիւ-  
նը, որ իւր « բնական զգեստէն՝ ի խուարէն » մերկանալուն զայ-  
րացած՝ կ'ուզէ փախչիլ, և թափստեսն տեղի չզանելով կը յուսա-  
հատի, որ քիչ մը վերջ սանդարամեսաց աղջամդին մէջէն՝ Քրիս-  
տոսի լուսաճածանչ դէմքը զննելով՝ կը տեսնէ որ մարդոյ նմանու-  
թիւն ունի, և մտածելով որ համայն մարդկութիւնը իւր հրամա-  
նին ներքեւ կեցած է, սիրա կ'առնու և ճար և ճնար կ'որոճայ  
զայն ալ իւր ճիրանաց մէջ անցնելու, որ ըմբռանուելով վերստին  
ի զարհուրանաց՝ խորամանզութիւնը մէկդի կը թողու, կ'ողրայ  
« զձախոյ մանկունս իւր », և այնուհետեւ սաստիճան սաստիճան  
լքանելով՝ ամենայն յոյս կը կորսնցնէ, — կրնայ բազզաստուի  
այն հաշակաւոր խօսքերուն զոր Միլիոն կը զնէ Աազայելի բե-  
րանը, յորժամ սա Անդնդէն բարձրանալով ասաջին անդամ Արե-  
գական կը հանդիսի: Քըլութօք իւր Մեսիսականին վեշտասաներորդ  
երգոյն վերջը՝ Քրիստոսի դժոխք իշնալը նկարազրած է. կարգու  
տես թէ Եղիշէինը իւր պարզութեամբը և զսեմութեամբ անկէ վար  
կը մնա՞յ:

1. « Hell heard the unsufferable noise, hell saw  
Heaven ruining from Heaven, and would have fled  
Affrighted; but strict fate had cast too deep  
Her dark foundations, and too fast had bound ».

Եթէ քիչ մը շարունակեմք մեր ընթերցումը, մանկամարդ կնոջ գողարիկ զգացմանց և սրաաշարժ վարանմանց զեղեցիկ օրինակ մը կը զանեմք յետագայ մենախօսութեան մէջ զոր կը դնէ Եղիշէ ի բերան Մագգաղենացւոյն:

« Եւ քանի հատեալ էր քուն յաշաց նոցա (կանանցն) զոյն երիս տիւս և զերիս զիշերս, կանխազպյն արիստ Մագգաղենացի եկն եհաս ի զերեզման անդր, և քանդի զվէմն ի բաց թաւալեցուցեալ էր Հրեշտակացն, Հայեցաւ ի ներքս, և զտէրունական մարմինն անդ ոչ ետես, վասն այնորիկ լայ կոծի ողբարով և առէ, « Զբնչ արարից, յո՞ւ երթայց, ո՞ւր խնզրեցից, ի խաչէն իջուցին, ի զերեզմանիս եղին, զդուրս վիմով կնքեցին և պահեն զգուշութեամբ, աշակերտացն վիրայեմ, զի ոչ ուրեք շարժեցան զզիշերս ամենացն, ի Հրէիցն դայս ոչ առնէր վասն մեծի շարաթուն պատուոյ, չեթանասաց չէր ինչ փոյթ, նու և ումեք ի մարդկանէ չէ օրէն զիտազ շրջել, ի գաղանաց կասկած ինչ ոչ է վասն մեծի վիճիս ծանրութեան, և առաւել վասն զինուորացն պահպանութեան: Եւ եթէ յարութիւն կարծեցից, այս վաղ կարի է, ընդ երեկո ուրբաթուն թաղեցաւ, զիշերքս աշտ երկու են, խոկ տիւս օր մի է և ժամիք երկու, և նա զերիս տիւս և զերիս զիշերս ասաց լինել ի սիրտ երկրի: Եւ զիարդ, որ յամենայնի արդարն խօսէր, յայսմ վայրի ստեանց արգեօք, քաւ լիցի ոչ կարեմ վասն նորա յերկրոյս լինել, սուս և ոչ երրեք խօսէր, այլ արդար յամենայնի, քանի զամենայն զոր ասաց ի կենդանաւթեան խրում, եղիւ և կատարեցաւ, խոկ արդ յայսմ միայն ստիցէ արգեօք: Այդ ես ոչ զիտեմ եթէ արդարիւ յարուցեալ իցէ և կամ նենպեալ յումեքէ»:

## Ը

Եղիշեայ ծննդեան վայրն և թուականը չգիտեմք: Պատանեւ կոթեան ատենը՝ Մեսրոպայ և Ատակայ պատրաստած վարժարանաց մէջ ուսիր էր Հայերենի գլուխթեանց հետ՝ դյունական, զտասրի և զպարսիկ լեզուս: Երդն միջոցին (412-426) Հայրապետքն իրենց երիցագոյն աշակերտօքն թարգմաներ էին զաստուածաշունչ զիրս նախ յատրիերենէ, յետոյ Եօթանասնից թարգմանութեամբը պրագրեր էին կամ վերստին թարգ նաներ: Աւելի վերջը, երբ

Եսիեսոսի ժողովէն (431) ետքը՝ Պետակ Ելրէց, Յալշան Ավեղեցացի, Յալսէփ Պալնացի, Արձան, Եզնիկ և Արիւն կը դանային ի Կոստանդնուպոլսոյ, Հետերնին բերելով աւելի ընտիր և սոսյդ Եօթանասնից օրինակ մը, ինչպէս և ուրիշ մատեանք, այդ նոր օրինակին հետ համեմատեր և փոփոխեր էին առաջին թարգմանուածը:

Բայց Եօթանասնից վերծանութիւնը՝ որ Փրիստոսէ յառաջ երարդ դարուն մէջ եղած էր, զիւրին չէր կատարելսալէս հասկնալ, շատ բառեր և խմաններ ստուգուելու կամ ճշդուելու կը կարօտէին, որոց համար բաւական չէր առաջին աշակերտաց զիստութիւնը: Ուստի քաջաշեղ, երկարոցի և աւելի առոյդ և կրտսեր աշակերտաներէն՝ Մովսէս Խորենացին, Դաւիթ, Եղիշէ, Պալար Փարագեցին և այլք ընտրուեցան երթարու յԱզեքսանդրիա, որ յայնժամ զիստութեանց, լեզուաց, վաճառականութեան և արուեստից զիստուր կեղրանն էր:

Եղիշէ իւր ընկերներովը ճամբայ երաւ (434ին), ու դէպ ի հարաւ իջնելով՝ հասաւ նախ յԵղեսիա, անտի զնաց ի Պաղեստին: Նատ աեղեր այցելեց ու քննեց անշուշտ, բայց իւր զբուածոցը մէջ — այն ալ նիւթոյն յարմարութեամբ — միայն երկու տպաւորութիւններ մեզ կը պատմէ, Ասորի միայնակեցաց վարքը և Թօսփոր լերին գեղեցիկ նկարազրութիւնը՝ ուր հետիսոն ելեր էր:

Պաղեստինէն անցան յԱզեքսանդրիա, անդ հարուստ զրաստանց և սուրբ Կիւրզի վարդապետարանին մէջ երկար ստեն կեցան մեր պանդուխարքն, որովէս զի կատարելսալէս հմտանան յոյն լեզուին: Այնուհետեւ ուղեցին նաւել շիտակ յԵլլազա, բայց հողմոց բոնութենէն յԽոտալիա ընկան<sup>2</sup>, զնացին ողջունել առաքերացն Պետրոսի և Պօղոսի գերեզմանը, առանց սակայն երկար մնալու ի Հոռո: Անտի անցան ընդ Ելլազա յԱտարիէ, սակաւ ինչ կեցան յԱթէնս,

1. Տես Միանձանց ճառը, և մանաւանդ՝ Յայլակերպութիւն Փրիստոսից էջ 236. — « Լսելով յաւետարանէն ամենաերեան զիսէք զաեղին, բայց մեր եւ անձամբ իսկ հասեալ եւ այօյ տեսեալ, ոչ յասուկ միայն առանձինն, այլ բազում բնիկերակցը, որոց և կամ իսկ եզեւ ոմանց մեալ ի լերինն, ոչ ըստ մարմեոյ ախործութեամբ բաղձանաց, այլ առ ի գութ սիրան Փրիստոսից». և այլն: Տես և յէջ 239, Մատենազրութիւնք, 1859:

2. Եղիշեաց յԽոտալիա զնացած ըլ-

լալուն անձնական վկայութիւնն մի մարթէ է համարել՝ մարդկային մոսաց ամենուրեք համեմելուն նկատմամբ զիւր հնտագայ խօսքը. « Դաւ քոյսցդ մոսացդ չկարեւս պահապան լինել, մինչդեռ կամ ի սուրբ տեղիս, գտանիս յանարժան տեղուջ, զու արդ ի շաղաբի, և տեսանես խոտայիս, գործես ի ցամարի, և ի ծովունուիս ի նաւի. կամ ի յերկրի, և ի գեր յերկնից երկնի շրջիս ընդ զնանոս հրեշտակաց ». Մատենազրութիւնք :

էջ 296:

ուր սպասեցին ձմերուան անցնելուն. և երբ Կոստանդնուպօլուց համբով գործան ի Հայս (442ին), Առաքակ և Մեսրոպ արդէն վախճանեալ էին<sup>1:</sup>

Ի՞նչ ըրաւ այսուհետեւ Եղիշէ: Երին յատուել անանուն կինս սպառաթեան<sup>2</sup> մը նայելով՝ «զինուորեալ էր Արքոյն Վարդանայ և սպասաւորեր նմա, և էր Հաւասարիմ յամենայն իրս աստուածային և մարդկային»: Ըստ այլոց Հեղինակաց՝ քարտուզար և մերձաւոր ազգակից էր Սպարապետին:

Քարդի բանասիրաց մանք Արտաշատայ ժողովոյն մէջ (448ին) ներկայ գտնուազ Աւաստունիաց եղիսկոսոսը զԵղիշայ կարծեցին զնա: Արգարեւ Առակայ և Մեսրոպայ աշակերտաց շատերը յեւ պիսկոպոսական աստիճան բարձրացան. բայց Յովակի, Եզնիկ, Մուշէ, Թաթիկ, Երեմիս եղիսկոսոսնք, ինչպէս և երէցն Պետոդ, որք նախազահ կամ անդամ էին նոյն ժողովոյն, առաջին աշակերտներէն են<sup>3:</sup> մինչ երկրորդ կարդի աշակերտքն, որոց զամանէն էր Եղիշէ, հոգիւ թէ վեց եօթը տարի էր որ ուսումնին աւարտելով գործեր էին ի Հայրենիս: Եւ որովհետեւ Համօրէն սպատամագիրք զնա Վարդապետ կը կոչեն, վերջնոց այս կարծիքու մեղի Հաւանական չի թուիր<sup>4:</sup>

Վարդանայ պատմութեան ճակարտ՝ Գաւթի երիցու Մամիկոնի ուղղեալ ընծայտկանէն կը հետեւի՝ թէ առա Հեղինակը եպիսկոս ըլք չէր: Միաց որ Եղիշեայ վարուցը վրայօք ունեցած անօսր անեղեկութիւնքս ալ այդ ենթագրութիւնդ չեն Հաստատեր: Երբ Միհրնեսէի նամակին արուած անվեհէր պատասխանին վրայ նուխարարք ի Տիգրան կոչեցան, նոցա ընկերացան բազում քահանայիք՝ որք ուրացուց հետ Համամիս զնուուցան<sup>5:</sup> Թէ Եղիշէ ալ Վարդանայ ուղեկցած էր, կը հետեւի նոյն իսկ իւր պատմութենէն<sup>6:</sup>

1. Խորենացի (523-527): Վարք Առակայ և Մեսրոպայ ի Առփերը Հայկ. Հու. Բ:

2. Պատմութիւն Եղիշէի Վարդապետի Առփերը Հայկ. Հու. Ժ.Ա:

3. Տես Գարեգին Վ.ի Պատմ. Հայ Գորբութեանց:

4. Վարդապետ Docteur ախազոս՝ Եղիշէայ եկեղեցական եղած ըլլալուն անգամ սպացրց չէ. գասախոսելու և քարոզելու պաշտամը գիտութենէ և

ճարտարիստութենէ կախեալ էր, և քահանայից սեփական առանձնաշնորհութիւն մի չէր:

5. Տես Եղիշէ. Յ. Գ., 250 + Եւ յոյժ գորովեցին զուիս քահանայութեանն... վարդապետը էիր առաքելական քարոզութեանցն + և այն:

6. «Թէզէտ և ոչ իցեմը բառական ասել զամենայն շարիսն, որ անցք անցին անգէն ի կարաւանին ընդ զունդն Հայոց, սպահն և ոչ լուի կամիմը ճած-

Հնարաւոր շերեւիր սակայն՝ որ բարձրասահման եկեղեցական մը այդպիսի պարագայներու մէջ զնացած մնի յարքունի զուռն, և Փարագեցին և ուրիշ պատմագիրք չմիշտակեն զնա: Եղիշէի՛ Վարդանէն անբաժան՝ ամենայն իրաց և պատերագմաց մէջ նորա հետ գտնուած բըլալուն բոււական սպացոյց է զրութեանը մէջ ցացուցած սագմագիտական հմտութիւնը, զօրաց մէն մի շարժմունքը, ասոնց եղանակը, պատճառը, նպատակը՝ այնպիսի ճշգութ'ամբ և խելահաս մոռք կը նկարագրէ, որքան կրնար սպասուիլ այն ժամանակի զօրավարէ կոմ պատերագմափորձ մատենազրէ մը: Այդ գիտութիւնդ չէր կրնար ստանալ՝ բայց միայն զինակիր կոմ բարտուղար-վարդապետն ըլլալով Վարդապետ: Տարակոյս չկայ' թէ այդ երկու պաշտօնէդ որն որ ըլլալ Եղիշէի վարածը, առքա չէին կրրնար պատշաճիւ թէմական եղիսկոպոսի մը, որոյ բազմապիսի զրագմունքը և հոգերն ալ պէտք էին արգիլել զԵղիշէ ի զինուորական պարապմանց:

Բարերախտաբար Աւարայրի նահատակութեան օրը՝ Եղիշէ՝ պատահմամբ կամ զործով պատերազմին անենէն վատանգաւոր կոզմը չէր գտնուեր: Ինքը պէտք էր սարիլ դեռ՝ այդ մեծ ճակատամարտին յիշտատակը անմահացնելու համար: Այնքան սիրելեաց կորստեան և հայրենեաց աւերման կակիծը իւր գտնութիւնը տակաւին չամոքած՝ և Գաւթի երիցու խնդրանոք ձեռնարկելուն նայելով՝ հաւանորէն Մամիկոնեանց զղեկին մէջ ի զիր սառւ վերջին եղելութեանց պատմութիւնը, այսինքն զառաջին հօթն յեղանակոն, քանզի ութերորդին հանգարատ և պատմական ձեւը և իմաստափական խորհրդածութիւնքը բոլորովին կը տարբերին միւսոց վասկոսն և բանաստեղծական ոճէն: Վնաց որ Եղիշէ ընծայուկանին մէջ, զոր հօթն յեղանակները աւարտելէ յետոյ շարազրած կ'երեւի, կը հաստատէ թէ յօթն մասունս բաժաներ է իւր սաստաթիւնը, և հօթներորդ յեղանակին վերջին տներէն ալ կը հետեւի՝ թէ ի սկզբան իրապէս անդ կը վերջանայր: Հարկ է ուրեմն ժամանակի միջոց մը — ու բաւական երկար միջոց մը — զնի կ'օթներորդին և Աւթերորդին շարազրութեան մէջ: Առաջին յեղանակին մէջ պարբերութիւն մի կայ որ ճշգել կու տայ մեզ կ'օթն Յեղանակաց զրութեան թուականը:

Կերով զդիշտու նեղութեանն. այլ ասասւ զակաւ արտասուս նեղուցուս ի վերայ ցուք փոքր ի շատէ, զի ձայնակիցք լիցուք պիտի ուրք գառնապէս զմեզ ողբային. զի և դուք լուսական ամենա վարդապետի Հայ.

ազգին թշուառութեան: Տես Յ. Գ. 1:

1. Տես Աւելշան վարդապետի Հայ.

բանի, էջ 273:

« Նու և արջք օրմասականից ընդ վախճանել չնշոյն հզօրագրոյնք կռուին, յորոց և խմաստունք տեղի տուեալ վախչին ի նսցանէ, Այսպիսի իմե եկեալ հասեալ է վախճան տէրութեան. եթէ ձարկանին ցցան, և երկ ձարկանին չիմանան, իբրև ոչ գասանի արտաքին թշնամի, ընդ ամեանին իշրեանց մարտ եկեալ կռուին: Ի դէպ իսկ երանէ բան մարգարէին ի վերայ նացա: « Այս, ասէ, առ քաղցի խրում շրջեսցի, և կերից զին անհին իշրոյ »: նման ամին և Տէր ինքնին ասէ: « Ամենայն առն եւ բազաւորութիւն՝ որ յանձն իշր բաժանի, ոչ կարէ կալ ձաստառուն: »:

Այդ խօսքերդ Եղիշէ չեր կրնար գրել բայց միայն յամին 458, յոր ժամանակ Պերոց և Որմիզզ՝ որդիք Յազկերտի, իրենց հօրը թողուցած ոթուոր իրարու ձեռքէ յափշտակերու համոր քաղաքական պատերազմաւ կը պատառէին զպեսութիւնն՝ զոր Յազկերտ այնքան անխոնջ ջանիւք ամրապնդեր էր: Երկուց եղարց վէճը 457 և 458 տարիներն ամբողջ աեւեր էր, մինչեւ որ 458ին վերջերը Պերոց Քուշանաց օգնութեամբ, որոց քով ապահներ էր, Որմիզզայ յաղթելէն և զայն սպանանելէն ետքը քսան և չորս տարի (459–483) միաշեծան և անվրդով և մեծաւ պայծառութեամբ կոռուպտեր էր վերատին զպեսութիւնն: Ուրիշ ներքին վրդովման յիշատակութիւն շունիմք մինչեւ Վազգարշայ որդւոյն Զարեհի զրոխ վերցնելը հօրը դէմ, որ աւելի ապատամբութիւն մի էր քան քուղարկան պատերազմ և որ հայկական այրուծիոյն հասնելովն դիւրաւ ընկճեցաւ:

Եթէ Եղիշէ իւր ընկերներալը Ազեքսանդրիա զնարու համար Հայաստանէն ճամբայ ելուծ առենէր (434ին) քսան քսանեւհինդ տարեկան մը կար, եօթն Երանակները ի զիր առած առենը 44–49 տարեկանէն առելի չեր<sup>1</sup>:

Այսուհետեւ թողուց իւր այնքան սիրած և շրջազայած աշխարհը և այցելած զերդաստանները<sup>2</sup>, ու առանձնացաւ Մոկաց լեռներուն վրայ քարանցաւի մը մէջ ապրելու համար, հեռի յամենայն ընկերութիւնէ և նոյն իսկ ի Միայնակեցաց:

Ի չորրորդ և ի հինգերորդ դարուն, Քրիստոնեայ աշխարհին՝ մանաւանդ Ասորւց և Եզիզտոսի մէջ, հանձարեղ մտաց և զգայուն սրաի տէր անձանց շատերն ուսումնին աւարտելէ և քաղաքական շփու

1. Իսրիւն զրեաց զվարս Մեռ է 480ին: Իսկ Փարոպեցին՝ 488 – բարայ յամին 445–450: Խորենացին 490:

2. Քաստութիւնը զրած բլուլու: 2. Տէր յէջ 2 ի վերոյ:

թութեանց և յուզմանց փոքր ի շատէ ականատես և մասնակից լինելէ յեռոյ՝ անապատները կը քաշուէին, խոսաճարակք՝ խարազնազգեստ և գետնատարած անկազնօք կ'անցնէին զառօրեայ կենցաղան. ազօթիւք, հիացմամբ և խորհրդածութեամբք կը բարձրացնէին մոքերնին, ոմանք լեռնաձորոց մէջ կը վերջացնէին իւրիանց օրերը. այլք ինքնարեր կամօք կամ ժողովրդեան թախանձանօք եկեղեցական կարգ և աստիճան ընդունելով՝ նորէն քաղաքական կենցաղ կը դունային։ Խոսամբեր առանձնակեցութիւնը միայնակեցին խառնուածոցը համեմատ՝ տարրեր ներգործութիւն կ'ընէր նորա բնաւորութեան վրայ։ Ողջ և կարիճ մտաց կարգէ դուրս կորով կու տար, անապատին մէջ զմարդիկ առանց կրից և հանդարտօրէն գատելու վարդելով, աւելի սէր և դութ կը զգային, մարդկային տկարութեան աւելի ներզատիս և աշխարհիս վշաերը սփափելու աւելի յօժարտակամ կ'ըլլային։ Այդպիսիներն իւրեանց երկրորդ քաղաքական ընթացից մէջ մէծամեծ զործոց ձեռնորդեալով, անյոզգոզդ և արիութեամբ և յարատեւութեամբ ի գլուխ հանցեցին և յոյժ օգտակար գատան աշխարհի, զոցա կարգէն հն Ուկրեան և Մեսրոպ։ Խոկ զհիւանդոտ և տափզուխ բնութիւնները՝ անապատի կեանքը աւելի կը զայրացնէր ու ժայրայեզրութեան և երբեմն ալ յիմարութեան կը տանէր, այս վերջիններս եթէ պատահմամբ կամ պարագայից ստիպմամբ ի քաղաք իջանէին, բարկութիւն՝ կոխւ և շվութութիւն միայն կը յարուցանէին։

Ենային կեանքը Եղիշէի ալ հանդարտութիւն բերաւ երբ արդէն շարադրած եօթն յեղանակաց վրայ տասն կամ տասներկու տարի եաքը ութերորդ մը աւելցնել և հոյ միանձանց մի քանի խրատներ տալ ուզեց, միաքը և սիրաը մեծ փոփոխութիւններ կրեր էին. բարկութիւնը իջեր, անոյշ տիրութիւն մը յաջորդեր էր։ Ասուծոյ և կրօնից սէրը անշուշտ չէր նուազ անխառն և զօրաւոր, բայց մարդկային յանցանքը առաջինին չափ կիրք և զայրայթ չէին պատճառեր։ Վառվառն երեւակայութիւնը տեղի տուեր էր փիլիսոփայական խորհրդածութեանց, փոխանակ մարդկային նենզութեանց՝ կոհիւներու, բնութեան կանոնաւոր և զեղեցիկ երեւոյթքը զբաղեցուցեր էին զինքը։

1. Են ոմանք՝ որ այդ տարրերութեանց պատճառակալու չէ. թեանցը պատճառաւ Ութերորդ Յեղանակը ուրիշ մատենագրի երկասիրութիւն կը համարին։ Խրամամբ կ'ըսէ հայագէտ Երրուայի մը՝ որ այդ ինդիրու Հայոց

համար մատայուզութիւն պատճառակալու չէ. վասն զի մէկ Եղիշէի տեղ երկու Եղիշէ կ'անենան, ինչպէս որ Երբայցեցիք ալ երկու Եսայի ունեցած են։

Առկայն Եղիշե չկրցաւ մինչեւ վերջը իւր միայնութիւնը ան-  
վրդով պահել Մոկաց այրին մէջ, որ իւր անուամբը յետոյ կո-  
չուեր էր « Առւրբ այրն Եղիշեի » : Բացօթեայ հովիւներ տեսեր  
ու գնացեր հաջակեր էին ամէն զի զայրն և զտեղին : Ամէն կող-  
մանէ հետաքրքիր և բարեպաշտ այցելուք կու զայրն աեսնելու գծըց-  
նաւորն . իսկ նա խոյս տարով և ուզելով զինքն անյայտ ընել,  
Ոչտունեաց զաւառն անցաւ ու անդ վանայ ծովուն եղերքը զար-  
ձեալ քարայրի մը մէջ հաստատեց զիւր բնակութիւնը : Միայնու-  
կեցութեանը մեծագոյն մասը Մոկաց աշխարհն անցուցեր էր .  
վերջին բնակարանին մէջ առկաւ ամս միայն ունեցաւ ապրելու :  
Անցաւորք պատահմամբ անկենդան մարմնոյ մը հանդիպեր էին,  
քննութիւններ կատարուեցան և ստուգուեցաւ թէ Եղիշեն էր՝ որ  
յասովնումն Մոկաց զաւառին մէջ կը բնակէր : Անդ՝ քարայրին  
մօմ՝ շննեալ հանգիստ՝ փախէին ի տեղի հանգստեանն , բագում  
բժշկութիւնք լինէին և զերեզմանն եղեւ ոխտանելի:

Երբ Եղիշեայ նշխարաց գոնուելուն լուրը հասաւ Մոկաց իշ-  
խանին ականջը , տրամեցաւ յոյժ որ իւր երկրէն զուրս զիսպեր էր  
նորա մահը . բժշկութիւն հայցելու կեղծեաք եկաւ օթեւանեցաւ  
նորա զերեզմանին մօմ կ'ուզէր մաս մի ունենալ ի նշխարէն ,  
բայց չէր համարձակեր յայտնի մերձենալ և առնուլ՝ ակնածելով ի  
բնակչացն աշխարհին և ի նահապետէն Ոշտունեաց : Ուստի ձեռքը  
և սաքը ծածուկ կարելով՝ փախաւ զնաց իւր երկիրը : Գողութիւնը  
շուտով իմացուեցաւ ու ահագին աղաղակ մը յարոյց . Մոկը և  
Ոշտունիք իրարու հետ կռույ պիտի սկսէին , բայց շատ շանցու-  
երկու կողմն ալ խաղաղեցաւ : Մոկաց իշխանը վկայարան մը շի-  
նել տուաւ Եղիշեայ առաջին այրին մօմ ու անդ ամփոփեց Որդ-  
րոյն նշխարքը : Ամենայն ջանք ըրաւ՝ որ այս վայրս աւելի մեծ  
ուխտատեղի մի ըլլայ քան զայն յարում փախճանեալն էր Երա-  
նելին . այնպէս ալ եղաւ ու նորա մահուան տարեղարձին մեծ  
տօն կը կատարուէր <sup>2</sup> :

1. « Որ և այժմ ամենեցուն յայտնի  
է . , կըսէ անանուն կենսագրութիւնը ,  
և վկայ աղգաց յազգս երանելոյն : Ասի .  
Հայկ . հաւ . ԺՈ . 42:

2. « Նշխարըն Եղիշեայ փոխադրեալ  
գուանին այժմ ի Զագոր-Աստուածածին  
զանու . ի ստորոտ բարձր և ծաղկաւէտ  
Արտոս լերին՝ որ ձզի ի հարաւոյ գե-  
տոյն խօշապայ և յարեւելից հարաւոյ

ծովուն վանայ և որ գործէ զձորն Աստա-  
նայց (Ալիշան Ա. Տեղագիր, 95): Գերեզ-  
մանն վանուցս տաճարին անշուք զաւթին  
մէջ էր : Չորս հինգ տարի յառաջ Աղթա-  
մարայ կաթողիկոսը զայն բանալով՝ տա-  
ճարին մէջ փխադրեց , և իրը յիշատակ՝  
Եղիշեայ մատն և աստմերէն մին վերցը-  
նելով յիշմամար տարաւ : (Արեւելք  
լրագիր, 23 Ապրիլ 1887):

Այսուհետեւ Եղիշէի մահուան թուարանը չհասաւ մինչեւ ցմեղ՝ ոմանք զայն 480ին կը դնեն։ Ութերորդ Եղանակին վերջերը, յետ առելոց թէ Պերող արձակեց զկապեալ նախարարան (յամի 8+ 463-464), Եղիշէ կ'ընդհատէ պատմութիւնը, և նախարարաց զարձը չյիշած՝ կ'ուզէ նոցա բացակայութեան միջոցին՝ կանանց կրած տասապանքը նկարագրել, և ապա վերասին ձեռք առնուլ իւրաց շարքը, այս է պատմել նախարարաց վերագրան ի հայրենիս՝ որ արդէն տեղի ունեցեր եր։ Այդպէս պէտք է իմանալ անշուշտ առ խօսքս, «Բայց ի տեղի այսր ինձ զարձեալ դալ պիտի»։ և ոչ թէ Եղիշէ ուզեց խօսանալ ապագայ դիմոց պատմութիւն մը։ Յայտ իսկ է՝ թէ կանանց նկարագիրն ալ անցեալ ժամանակի կը վերաբերի և ոչ ներկայի։ Ուրեմն Եղիշէ նախարարաց զարձէն (464) և առքը շարագրեց զՈւթերորդ Յեղանակը։ Այրահամ խօսապանպին համար զրածէն ալ պարտ է հետեւցնել՝ թէ սա ի Հայաստան գառնալէն եագը (463ին) մէկ քանի տարի գեռ ապրեցաւ։ Այսնկալ Ութերորդ Եղանակը 470էն շամ յառաջ շարագրուաց չկրնար ըլլալ։ Այսու ամենայնիւ եթէ տառը տարի զեռ կեանք ունեցած ըլլար, հաւանական է թէ Եղիշէ կը շարունակը զիւր պատմութիւնը։ Աւելի յարմար կը թուի մասց՝ թէ նա 470էն ասդին չապրեցաւ։ Գալով հաւանական հասակին, որովհետեւ աւելի առոյդ և կրտսեր աշակերտներէն էր իւր ընկերաց հետ ճամբայ ելած սանենը գէալ յԱզեքսանզրիսա, ի Համ և յԱթինս, քսան՝ քսան և հինգ տարեկան ըլլալու էր, և քանդի ութինը տարի անցուց ի պանդխառութեան՝ ճանապարհորդութեամբք և ուսմամբ, Հայաստան զարձած տաենը 34 տարեկան կ'ըլլար, այս է 442ին։ Այդ հաշուալ Եղիշէի ծննդեան տարին հինգերորդ զարուն սկիզբները կ'իմասց, և տարիից վաթսունը քիչ կ'անցնի, որ անոր կարգէ զուրս զգայուն ընութիւնը, ժամանակին խառնաշրջութիւնքը, հայրենի աշխարհին գմնզակ աղէտքը, և վերջապէս քարանձաւի մէջ վարած խստակեցութիւնքը ի նկատողութեան եթէ առնենք, աւելի երեւալու է քան պակաս։

## թ

Եղիշեայ պատմութիւնը առաջին անգամ՝ տպագրեցաւ 1764ին ի Կոստանդնուպոլիս՝ ի ձեռն Լյմիտածնայ միաբան Արքահամ՝ վարդապետի, որ միայն մէկ զրչազիր մի ունեցեր էր: Երկրորդ տպագրութիւնն եղաւ ի Բեղրամուրկ 1787ին ի ձեռն իշխանացն Յովուսի Արքութեանց արքեպիսկոպոսի: Երրորդը՝ նոյն տարին ի Կոր Նախիջևան: Չորրորդ տպագրութիւնն եղած է դարձեալ ի Կոստանդնուպոլիս յամին 1823, ըստ ՈՒՄԸ թուականաւ ձեռագրի միոյ՝ զոր օրինակեր էր ի Հայաստան Գէորգ գողիրն Պալացի, հեղինակն Պարսկերենէ ի Հայ բառարանին, և որ ինքնին իսկ օրինակուած էր աւելի հնագունէ մը, զրհաւ յԱյլարատեան աշխարհի ի թուականութեան Հայոց ՈՒԾ, յաւուրս հայրապետութեան Տեսան Ներսէսի, եղբօր Գրիգորիսի, որ նոտէր ի Կայն Հռովմէական:

Վենետիկյ Միսիթարեանք 1825ին և 1828ին կրկին տպագրութիւն ըրած ատեննին, վեց ձեռագիրս ունէին, յորոց ՈՒԾի թուական կրտքն սառւագոյն էր քան մինչև ցայն վայր գտնուածները, և որոյ հետեւութեամբ և մնացածներուն ալ ուշիմ՝ բազգատութեամբ, յաջողեցան բաւական ուղիղ բնագիր մը ի լոյս ընծայելու: 1838ին հրատարակեցին առաջին անգամ Եղիշէի ամբողջ մտահնագրութիւնքը: 1842ին նոր տպագրութիւն մը ըրած ատեննին, եօթներորդ զրչազիր մը ձեռք ձգեր էին, որ առջի տպագրութեանց ուղղութիւնը հաստատեր էր և պատճառ տուեր էր կրկին հարցափորձի և ընտրութեան ոչ սակաւ տեղեաց: Ուրիշ տպագրութիւնք ալ եղան նոյն Միսիթարեանութենէն երելի մօտ ժամանակներս. ինչպէս 1852ին, որոյ առաջին երկու յեղինակները բազգատուած էին Վիմ գտնուած հին երկաթազիր՝ բայց թերի ձեռագրի մը հետ. 1859ին՝ Եղիշէի ամբողջ երկասիրութիւնքը երկրորդ անգամ, և վերջապէս 1864ին, զոր վերջինն ըլլալուն համար մարթ է ընտրելագոյն համարել, թէպէտ առջի տպագրութեանց բազգատմամբ՝ կրած փոփոխութիւնքը միշտ ուղիղ չեն:

Եղիշէ տպագրեցաւ և ի Մոսկուա 1861ին. ի Թէսդոսիա՝ նոյն տարին՝ ըստ ՈՒնձեւացեացն կոչուած օրինակի. ի Բարիզ, յԵրու-

սագէմ 1865ին, ի Կոստանդնուպոլիս 1866ին, ի Զմիւռնիս 1867ին  
և ի Տփիսիս 1879ին։ Տպագրութիւն մի այլ եղած կ'երեւի Կալ-  
կաթա յամին 1816։

1877ին Պ. Ա. Կոստանդնուպոլիս տպագրել առւաւ ի Վիեննա եր-  
կասիրութիւն մը՝ որ կը բաժանի յերիս մասունս, առաջինք՝  
Արշակունիաց անկրտնէն մինչեւ ցվահան Մամիկոնինի մարզ-  
պանութեան սկիզբը, այս է կէս գարու շափ միջոցի պատմութիւնն,  
զար հիւսած է՝ քաղելով, իրարու կապելով և ընդմիջելով Աղիշէի՝  
Փարագեցւոյ՝ Խորենացւոյ և այլ տոհմային պատմչաց բնագիրները։  
Երկրորդ մասը առաջնոյն վերծանութիւնն է յաշխարհիկ բարբառ  
Խուսահայոց։ Երրորդը կը պարունակէ տեղագրական, պատմական  
և լեզուաբնական կարևոր ծանօթութիւններ, յորոց և մեք օգտե-  
ցաք ոչ ասկաւ։

Ներկայ տպագրութեանս օրինակ առինք Վենետիկոյ 1864ի  
հրատարակութիւնը, բարդատելով զամ 1842ի տպագրութեան կրո-  
նակը ամփափեալ զանազան ընթերցուածօք, Կոստանդնուպոլոյ  
երկրորդ և թէոդոսիոյ տպագրօք, և նշանակելով ի տեղովն երր  
փափախութիւն մը ընել հարկ սեպեցինք Միսիթարեան բնագրին։

Թէպէտ այլեւայլ օրինակաց իրարու բարդատմամբ՝ ազիսու-  
թենէ յասած եկաց ակամայ կամ կամաւոր գրչագրի սիսակները  
մեծաւ մասամբ ուղղեալ են արդէն վերջին տպագրութեանց մէջ,  
առկայն պէտք չէ կարծել՝ թէ Միսիթարեանց այլեւայլ տպագիրնե-  
րը, ինչպէս և Անձեւացեաց բառուծ օրինակին համեմատ եղածն՝  
անհասապէս՝ ամենայն մասամբք անսարդիւտ ըլլան, սոցա պարու-  
նակած թերութիւններէն ոմանք հասարակ են ամենեցուն, ոմանք  
ալ յատուկ են մէն մի ձեռագրաց՝ որ օրինակ եղած են իւրաքան-  
չիւր տպագրին։ Առջիններէ՝ որ թուով սակաւագոյն են, պիտի  
ուղղեմք երբ կարելի ըլլայ, զրագաշտական հետազօտութեանց և  
երբեմն ալ ժամանակակից պատմչաց լուսով. իսկ երկրորդները,  
որք աւելի լեզուի կամ իմաստի կը վերաբերին, մատենապրական  
քննագատութեամբ։ Այսու ամենայնիւ կ'ուզե՛ք ազգաբարել ասա՛  
թէ զոր ինչ թերութիւն համարիմք ներկայ ընտրելագոյն տպա-  
գրաց մէջ, մասնական բաներ են, և թէ ուրիշ կողմանէ չունիմք  
պատճառ կարծելու՝ թէ այժմ մեր ընթերցած Աղիշէն յօշատեալ  
կամ ազաւազեալ գրութիւն մը ըլլայ։

Թողմա Արծրունին սակայն պատմագիր իններորդ գարու, պա-  
կասեալ կը համարի զայն։ Այս հեղինակիս նայելով 428էն մինչեւ

451 թուականը՝ Արծրունեաց տան ամենէն հոյսկառ անձը Վահան մի էր. « այր սրտեայ և ուժեղ, քաջախորհուրդ և իմաստնախորհ, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ », որում՝ նախարարք յանձներ էին « զթագաւորաբանակ տեղին Անձին Տրդատայ, շնոր նմա տան թագաւորաց, քանզի խորհեցան թագաւորեցուցանել զնո ի վերայ Հայոց »: — Այս կ'երեւի որ Տանուտեարք քիչ մը վերջ մտքերնին կը փախեն ու զՎարդան իրենց գլուխ կը ճառ նաշնեն, նոյնպէս կ'ընէ և արծրունին Վահան: Աւարայրի պատերազմին մէջ ալ Վահան՝ միշտ Վարդանայ քով՝ մեծամեծ քաջութիւններ կ'ընէ, ու նորա հետ ի միսափն կը նահատակի:

Վահանայ Արծրունեաց նկատմամբ Եղիշէի մէջ ամենեւին յիշատակութիւն շգոնուելուն պատճառը հետեւեալ եղանակաւ կը պատմէ մեզ թովմա:

Պարսից Պերոզ թագաւորին տաենը՝ Բարձումա նեստորական եպիսկոպոսը կու գայ յԱրզնարզին և ի Մոկս, իւր մոլորութիւնը սերմանելու. և որովհետեւ Եղիշէ այն միջոցին Մոկաց մէջ կը բնակէր, Բարձումա պատմութեան գիրքը խնդրեց ի նմանէ և խնդիրը ընդունեցաւ: Բայց Արծրունեաց Մերշապոհ իշխանը (անշուշտ Եղիշէի Կերշապուհը) որ յայնժամ բերդի մը մէջ ամրացած էր ի Տմորիս, խատիւ հրաման կը զիկէ նմա ելանել զնալ ի սահմանացն: Բարձումա յոյժ զայրացեալ ի պատգամէդ, վրէժ խնդիր ոգւով՝ Եղիշէի գրոց մէջէն Արծրունեաց տան և Վահանայ մարտիրոսութեան վերաբերեալ յիշատակութիւնները կը հանէ: Երբ գիրքը ետ տուեր էր, Եղիշէ Ոչտունեաց գաւառին մէջ առանձնացած ըլլալով՝ տուեն չէ ունեցեր միւսանգամ աչքէ անցնելու, որովհետեւ անդ եղաւ իւր փոխումը: Իսկ այլք մաքերնէն անգամ շանցնելով եղած խարդախութիւնը, կարծեցին, կ'ըսէ թովմա, թէ Եղիշէ այնպէս շարագրած է:

Դժուարին է համաձայնեցնել Արծրունեաց տան պատմշին այդ խօսքերդ Եղիշէի և Փարպեցւոյ հետ: Եթէ այսպիսի Վահան մի ալ եղած է, Արծրունեաց մեծ տան նահապետը ըլլալու չէ, այլ երկրորդ կամ երրորդ տան իշխանը<sup>1</sup>: Միթէ Եղիշէն հինգ դար վերջ գրոց թովմասը իւր ցեղին պատմութիւնը աւելի շքեղացնելու համար այդպիսի աւանդութիւն մը յառաջ չի՞ բերեր. և ինչո՞ւ համար Բարձումա չնչէ Վահանայ յիշատակութիւնքը՝ որ իրեն

1. Պատմութիւն Կերսեսի Պարթեւի, Կանոնի. էջ 433: Սով. Հայի:

վասա մը չէր ըրեր, ու նորա տեղ զնէ՝ Ներշառպուհինները որ զինքը կը հալուծէր։ Եթէ Եղիշէի գիրքն հերետիկոսապեսին ձեռքն անցանելով, Վահանայ պէս նշանաւոր մարդու մը անունը վերցուեր էր, ի՞նչ պատճառ կար որ ժամանակակից հեղինակաց և ոչ մին զնաշխիշէր, և Փարափեցին եւս մուսանայր, կամ լաւ եւս ասելով՝ փոխանակէր զնս ընդ այլում։ Փարափեցին որ թէպէտ Եղիշէի չափ այն ժամանակի իրաց չէր մասնակցեր, բայց մինչեւ պատերազմին տանը կամսարականաց և աւելի ետքը Արմենիկնէից տան մէջ երկար տանը բնակեր էր<sup>1</sup>, և նախարարաց գերութենէ դառնալէ ետքը՝ ի սոցանէ և մանաւանդ Արշարունեաց իշխանէն խիստ շատ տեղեկութիւններ հաւաքեր էր, և որ իւր ազատորէն խորհրդաւծութեամբը շատ անգամ կ'ուզլէ կամ կը լրացնէ զիշղիշէ, և առհասարակ այնքան կը տարրերի ի նմանէ, որ ընթերցովը կրնայ իրաւամբ կարծել՝ թէ աշացը առջեւ չէր ունեցեր մեր հեղինակին զրութիւնը<sup>2</sup>։

Վերջերս 1893ին, Հայոցէտն Փր. Կոնկրիր, Լիոնի մատենագարանի հայկական ձեռագրի մը կազմին մէջ մազազաթեայ երկու հատակոտոր գտաւ յԱշղիշէ՛ երկաթագիր, այս է չորս էջ, ամէն մէկը բաժանեալ յերկուս սիւնակս՝ որք քսանական տոզս ունին, ընդ ամէնը 160 տող։ Առաջին էջին առաջին սիւնակին ձախակողմը վերէն ի վայր աւրուած է, և միայն մէն մի տողի վերջի տառերը մնացած են։ միւս սիւնակները բաւականապէս ամրող կրնան համարիլ ներկայ օրինակաց հետ բազգաստութիւն մը ընելու համար։ Ծնթեռնի մասը վեցերորդ ջեղանակին 10դ տան «ոչ սակաւ նախաձիր ի տեղուչն զործէր» բառերէն սկսելով՝ ներկայ օրինակաց հետ միահետ կ'ընթանայ մինչև 11դ տան վերջը։ «զմիւմեանս սատակէին սիւնէւ ի մուտս արեգական»։ Անմիջապէտ ետքը 12դ տնէն՝ «Քանզի ոչ երկ կողմ էր որ յաղրեաց, և կողմ էր որ պարտեցա» պարրերութիւնը միայն կու զայ։ Այնուհետեւ 13, 14, 15 տուններու հետ համաձայն կ'երթայ ու « ճազար երեսուն

1. Տես զթուղթն զոր զրեաց յՈւժիդայ։

քննադատաւթեան նիթե եղած է յՈւժշան վարդապետէ (տես Բազմավէտ 1851: Օգոստոս), ապացոյց չի կրնար ըլլալ Վարդանայ նիդակակից Արծրունի Վահանայ մը դոյութեանը, մինչեւ որ չհաստատուի — որ կարծեմ անկարելի է — թէ այդ կողքիդ վրայի ճաշցի մասն Եղիշէ քիշ վերջը կարգադրուած է. վասն զի են ուրիշ վահաններ որք նահատակեցն վասն վրիստոսի։

2. Միսիթարեանը հին երկաթագիր մատենի կողք մը գտան, աւելի հին երկաթագիր մազաղաթէ, որոյ վրայ գըրուած էր. «Ակայութիւն արբան Վարդանայ և Հմայեկայ և Վահանայ և Սահակայ շայրց սպարապետաց, և ամենայն սուրբ արածց որք մեռան ի Քրիստոս։ ու երկայն մեղ այդ զրութիւնդ, որ երկայն

եւ վեց այր» բառերէն հաքը կ'առելցնէ « Արք մեծաւ ձգնուքիամբ վասն առշրջ ձևաւաց ի վերայ առշրջ եկեղեցւոյ պատերազմամբ կատարեցան ի Քրիստոս : Ասոր հատեւէն կու գայ 16դ տասնը մինչև « բան զՀայոցն » : Երկաթագիրը արտուհետեւ կը ցատքէ Եօթներորդ Յեղանակին Յդ տան, զոր խառնաշփոթ կերպով կը կազէ նախընթաց իրաց, ու միաշետ կ'երթայ ներկայ օրինակաց հետ մինչեւ այն տանը վերջը : Ազա կու գան երկու տողք՝ որոց սկզբը խանգարեալ է, ու վերջին բառերը միայն կան՝ որք չեն համեմատիր ներկայ օրինակաց հետ, ինչպէս առաջին էջին առաջին տողերուն վերջին բառերն : Այդ զանազանութիւններէդ կը հետեւցնէ Կոնիքիր՝ որ ներկայ ձեռագիրք չափէ զուրս կերպարանափոխ եղած ու ընդմիջարկութիւններ (Interpolations) առած են՝ հաւանօրէն Ժ զարէն հաքը :

Ըստ մեզ այզպիսի եղբակացութեան տեղի չկայ բնաւ : Ինչ որ հասուկոտորքդ աւելի ունին կամ պակաս բաղդատմամբ այժմեան օրինակաց հետ, յայտնի կ'ընեն թէ այդ երկաթագիր ձեռագիրը յիր բնագիր Եղիշեայ, այլ քարուածոյ, որ Արքոց վարքի ոճով՝ նահաւակութեանց որպիսութիւնը ցուցանելու համար պէտք եղածը միայն առեր էր ի բնագրէն, և ի բաց թողուցեր էր քաղաքական հանգամանքն և քերթողական նկարագրութիւնքն : — Տես Հանդես Ամսօրեայ, Վիեննա, 1893, Մայիս :

Եղիշեայ գրութեան ազաւաղման կասկած տուող բան մը եթէ կայ, այս է՛ թէ գրչագրաց մէջ ընդհանրապէս հինգերորդ յեղանակը վեցերորդ կոչուած է նորին վեցերորդին վերնազրով, ու միահետ կը շարունակի մինչև ցեօթներորդն, մէկ ձեռագրի մէջ միայն տպագրաց հինգերորդ յեղանակին հինգերորդ գրուցուած է՛ վեցերորդին խորագրավ : Եղանակին մէկը արգեօք բոլորմին պական է, պատմութեան անընդհատ կարգը շատ ինչ հաւաստի զուշ շակել :

Եղիշէի պատմութիւնը Եւրոպացւոց առաջին ծանօթացնողն եղաւ Կայման գերմանացին արեւելագէտն իւր անզպիսկան թարգմանութեամբը, զոր տպագրեց ի Լոնտոն յամին 1830<sup>2</sup> : Անկէ եաքը՝ 1840ին խաղական թարգմանութիւն մը հրատարակուեցաւ ի Վենետիկ՝ Գարէլլէդդի հայագէտ քահանային աշխատասիրութեամբը : Քանի մը տարի յետոյ՝ Գաղաքանեան Կարապետ վար-

1. Տես Եղ. Տպագրութիւն Միհեթ . Ալլահ Ֆաթուլլիհ յէջ 379:

2. The History of Vartan, by Elisoeus, bishop of the Amadou-nians, 1 vol. in 4. 111 էջը :

դապեաը կը հրատարակէր ի Բարիզ « Քրիստոնեայ Հայաստանի ընդդիմակալութեան պատմութիւնը » որ աւելի ազատ վերածութիւն մի է քան հաւատարիմ թարգմանութիւն<sup>1:</sup>

1853ին հրատարակեցաւ ի Տփղիս ռուսերէն թարգմանութիւն մը աշխատասիրութեամբ հայազն Պ. Պետրոս Զանչէյէֆի:

1863ին Պ. Սիմեոնեանց տպագրեց ի Մոսկուա թարգմանութիւն մը յաշխարհիկ բարբառ ի պէսս հայազգեաց:

1869ին Պ. Վիկթոր Լանկլուս նշանաւոր գաղղիացի հայագէտն՝ հայկական Պատմչաց շարակարգին<sup>2</sup> մէջ ընտիր թարգմանութիւն մը տուաւ Եղիշէի՝ հանդերձ պատմական և քննադատական ծանօթութեամբք:

1. Soulèvement national de l'Arménie Chrétienne au Ve. siècle. 1 հատ. ութածալ, 358 էլ. տախտակաւ:

2. Collection des historiens de l'Arménie. Paris, Firmin Didot, en 2 vol.



# ՅԱՂԱԳՍ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԴԵՆԻՆ ՊԱՐՍԻՑ

Ա

Եղիշէի պատմութիւնը լուս հասկնալու համար ամենակարեւոր կը դատեմք զբացի և իշխող Սասանեանց լեզուին՝ զպրութեանց և կրօնից վրայ քննութիւններ ընել, զոր մեծապէս կը զիւրացնեն մեզ Եւրոպացի հնագիտաց վերջին խուզարկութիւննքն։ Վարդանանց պատմութեան՝ ինչպէս և Եղնկայ Ազանդոց զրքին մէջ ամփոփեալ տեղեկութիւննքն թանկազին են անշուշտ, և եթէ նախկին պարսից կրօնական մատեանք յետին ժամանակները երեւան ելած և մեկնուած չըլլայլն, զայդ երկու զրութիւննադ Սասանեանց դենին և բարուց նկատմամբ իրրեւ ճոխագոյն պատմական ազրիւրներ կրնայինք համարել։ Բայց որովհետեւ գոքա Պարսից հետ առօրեայ յարարերութիւն ունեցող և նոցա կրօնական վարդապետութեանց և ներքին իրաց տեղեւակ՝ ժամանակակից Հայոց համար՝ զրուած են, բնուկան է որ այժմ անկատար և երբեմն ալ մթին երեւան մեզ։

Ազգի մը ինչ ըլլալը իմանալու համար չի բաւեր՝ որ անոր պատերազմաց և նշանաւոր զիսպաց հմուտ ըլլանք, պէտք է որ նորամտաւրական զարգացումը և վիճակն ալ տեսնենք։ Թէ Հայք աշխարհին հնագոյն ազգերէն մին են՝ ոչ ոք կարէ ժխտել. բայց եթէ ուղենանք զիտնալ այդ ազգին հինգերորդ կամ չորրորդ դարէ առջի վիճակը, կառավարութեան ձեւը, կրօնքը, բարքը և լեզուն, անյաղթելի գժուարութեանց կը հանդիպինք՝ որք կը

4 . \* Զօրէնա՝ զոր ճանաչեմք եթէ սուս են և անմիտ մարգոյ բարբանջ-  
մունք, զոր բազում անգում մեր լուսալ  
և ի մեր անհամեկայ սուս վարդապետացր,

և տեղեակ եմք իրրեւ զձեզ, զայն ոչ  
կարգալ պարու է և ոչ լսել > Փարպեցի,  
էջ 128-129:

սաստկանան և բազմապատկին որքան հնագոյն դարուց խորը մըտնենք : Հեթանոսական ժամանակաց հայկական ընկերութիւնը առանց յաջորդութեան սպառած կը տեսնենք . վասն զի լեռնաձորոց կամ առանձին տեղույ մը մէջ չկայ հայ հասարակութիւն մը՝ որ Երուանդեան Տիգրանէն ի վեր նախնի տւանդութիւնք, դպրութիւնքը և կրօնը որդւոց յորդի մինչեւ ցայսօր պահած ըլլայ : Քրիստոնէութեան հաստատուելէն յետոյ ի Հայո՛ կուսաշտական մատեանք և այլ յիշատակարանք մասնաւոր խնամօք խորտակեցան : Վանայ, Բարուայ և Հայաստանի ուրիշ տեղեաց մէջ գտնուած և արմենական կոչուած բեւեռագիրք, զորս մեր չորրորդ դարու հայրապետքն հարկ չսեպեցին փացնել, — որովհետեւ ասոնք այն տաէնն ալ կորուսած ըլլալով իրենց նշանակութիւնը՝ բնաւ չեին կրնար վեասակար ըլլալ, — նոր լոյս պիտի տան Հայկազանց աւելի հին ժամանակի իրաց և լեզուին վրայ, երբ յաջողին հնաշ զէտք նացա երկու երեկ հազար տարիէ ի վեր պահած գաղտնիքը դուրս հանել : Բայց ասոնք քառասնամեայ յոդնաջան և անձանձիր ճգանց հակառակ տակաւին վստահելի լուծում մի չունեցան : Հայ Արշակունի թագաւորք, ցեղակից Պարթեւ արքայից նման, կ'երեւիթէ արձանագրութեանց փոյթ չունէին : Իսկ Հայաստանի հողը դեռ կը սպասէ՝ որ իւր Լայարտներն և Շիմանները երթան պեղին զնա ու երեւան հանեն զոր ինչ քրիստոնէից եռանդը՝ ջախչախտվ, և հեթանոսական նախանձը՝ ճողովրելով, թաղեցին նորս ծոցոյն մէջ : Մեր ազգային պատմիչներէն Խորենացին միայն զերծ՝ հնութիւնները բնաջինջ առնելու փափագէն, այս ընդհանուր մոռացութենէս յիշատակաց քանի մը բեկոր կ'ազատէ ու կը թողումեգ, բայց նորս ականջովը լսած Վահագնի երգը կրնայ շատ հին ըլլալ, կրնայ ալ մնացած երգոց հետ Գողթան գաւառին բնակչաց ժառանգական վասվուն երեւակայութիւնը աւելի մօտ ժամանակի՝ ոյս է Քրիստոնէութեան առաջին և երկրորդ զարու ծնունդ եղած լինել : Երբ աներկրայէլի փաստեր վնասումք մեր նախնեաց բարքը և մոտաց որպիսութիւնը հաստատելու համար, շատ անհօր տարերք ձեռուընիս կը մնան : Եւ քանի որ ամէն կենդանի լեզու տարուէ տարի ու բերնէ բերան կը փոփոխի ու իւր նախնական արմատէն կը հեռանայ, և միայն զրականութեամբ մնայուն և որոշ ձեւ կ'առնու, անհնարին կ'ըլլայ մեղ ապացուցնել՝ թէ հինգերորդ զարուն սկիզբը Անսրուպեան նշանագրաց միջոցաւ հաստատեալ կամ սոլացեալ հայերէնը Քրիստոսէ հինգ կամ տասն դար յառաջ մա-

տենագրութեամբք կազմմաւորեալ լեզուաց հաւասար կամ ի նուցանէ աւելի հնութեան դրոշմը կը կրէ: Եւ թէպէտ ուրիշ պատմական ստուգութիւնք կասկածել չտան մեզ Հայ ազգին երիցազյն ազգաց հաւասար հնութեանը վրայ, սակայն Հայերէնը պէտք է որ իւր գրականութեան ժամանակին կերպարանքը և կնիքը կրէ և իւր սկզբնական ձեւը կորուսուծ ըլլայ<sup>1</sup>: Ազգաքէն մեր սկզբարեան գերապանձ լեզուն գոնէ մէկ քանի հարիւր տարուան կարօտէր՝ ստանալու համար այն կազմութիւնը և ընդարձակութիւնը որ մեր հիմացումը կը շարժեն այժմ: Վասն որոյ կրնամք տաւանց երկրացութեան պնդել՝ թէ Եղիշեայ բարբառը քիչ տարրերելու էր Արտաշէս ԲՇ՝ գուցէ եւս նոյն ինքն Միջին Տիգրանայ խօսածէն: Բայց երբ ակն յանդիման կը տեսնենք այն այլայութիւնքը՝ զոր կրեց պարսկերէնը Վշտասպեան Դարեհի օրէն մինչև ցԱսանեանն Արտաշիր և ապա ցՖիրտէվսի, դժուարին է հաւատալ՝ թէ Հայկազն Տիգրան և Վասահապուհ իրարու զրուցածը պիտի հասկնային, եթէ երբէք հանդիպէին իրերաց, ինչպէս որ յայտնի է՝ թէ Արտաշիր, Յազկերտ և Ֆիրտէվսի պիտի չկարէին հասկնալ Դարեհի լեզուն, և տաւել եւս մազգեզն օրինոց հիմնադրին քարոզութիւնքը :

Նախնի յիշատակաց և մտտենից խորտակումը աւելի զարհուրելի եղեր էր Պարսից Պետութեան մէջ Պարթեւաց օրերը, և մանաւանդ Մահմետականութեան անդ տիրունալէն ի վեր: Այժմ՝ Պարտկաստանի հնագոյն մատենագիրը Ֆիրտէվսին է, որ զրեաց զիւր Շահնամէն Փրիտասի 1003դ թուականին, այս է մեր ձեռքը հասած նախնագոյն հայ հեղինակութիւններէ 6-700 տարի ետքը: Այս հազի՞ն միջոց ժամանակի, որ կը բաւէ շատ ազգերու և լեզուներու՝ ծնանելու, մեծնալու և անյայտ ըլլալու համար: Պարսկական ազգը և բարբառը անցան այս աղմկալից և խառնաշփոթ զարուց մէջէն, բայց ոչ առանց ահազին փոփոխութիւններ կրելու. և եթէ Պարսիկք համօրէն Մահմետականութիւնը ընդանած ըլլային, ինչպէս Հայք առհասարակ ընդունեցան գԲրիտաննէութիւնը, պարսկական լեզուին այժմեան ձեւը միայն պիտի դիտնայինք և նորանական կերպաւորութեանը անտեղեալ պիտի ըլլայինք: Վըշ-

1. Հայկական լեզուն պէտք չէ նկատել իրրեւ հին պարսկերէնի կամ չին բակտրիարէնի հետ միասին անհատեցաւ սկզբնական (Grundsprache) լերանեան լեզուներէն ու Ֆա. Մելլէր: – Տես Պ. Բ. Պատկանեանի գեղացիկական լեզուի արդուածը ի Փորձ, 1880, մարտ:

տասպեան Գարեհի և Աստանեանց արձանագրութիւնքը, զորս այսօր նոյնքան ստուգութեամբ կ'ընթեռնուն հնագէտք որքան հին յունական և Հռովմէական արձանագրութիւնքը<sup>1</sup>, գուցէ վանայ և Բալուայ բեւեռաղբաց շափ անլուծանելի առեղծուած պիտի համարէինք։ Աակայն Զբաղաշտականութիւնը աւելի բռնութեամբ և յամառութեամբ մաքառեցաւ Խալամեկան օրինաց հետ՝ քան հայկական լոյժ և անկցորդ դիցապաշտութիւնը քրիստոնական հաւասարոց դէմ։ Եւ երբ մի եւ նոյն հոգոյն վրայ մօտ առ մօտ կենալը Մազգեզանց անկարելի եղաւ, ասոնք թողուցին զիւրեանց բնագաւառը, և յեօթներորդ գարուն բազմամբոխ գաղթականութեամբ զնացին ի Հնդիկու Պոմպայի մօտ, Կիւմէրագ նահանգը, ուրանօր գրադաշտական Պարտիկը՝ կամ ինչպէս կը յորջորջին Փարսիք՝ գորտուր և բազմահարուստ հասարակութիւն մը կը կազմեն այժմ, պահելով իրենց նախնի կրօնը, արարութիւնքը և սովորութիւնքը<sup>2</sup>։ Հետերնին տարեր էին զԱւեսպան և զայլ սրբազն ձեռագիր մատեանս, զորս ունէին կամ կրցեր էին ժողովել իւրեանց հայրենի երկրէն հեռացած տուննին։ Եւրոպացիք քիչ ծանօթութիւն ունէին այս գաղթականաց վրայ, մինչեւ որ անցեալ ութեւտասներորդ դարուն կիսուն մօտ՝ 1754ին, Անքըթիլ Տիւրէրօն անուն գաղթիսցին ի Հնդիկս երթալով և յետ բազում գժուարութեանց մտերամանալով Տէսթուր Տարապ անուն մովակետի հետ, սուկի ուժով ձեռք ձգեց սրբազն մատենից զանազան օրինակներ, զորս բերանացի կը թարգմանէր նմո Տարապ և նա ի զիր առնոյր, և բազում տարիներէ յետոյ վերադառնալով ի Գաղղիա՝ կը հրատարակէր (1771ին)։

1. Տես Ամբո-Ակլերի Contemporary Review 1878, Օգոստ. յէջ 41։

2. Ըստ ազգահամարի 1881 տարաց, են ի Հնդիկս 85397 Փարսիք, 43598ը այր, 41799ը գիւն 72065ը Պօմպայի նահանգին մէջ են, և յայսցանէ միայն Պօմպայ բազարին մէջ 48597 հոգիք կան՝ ուր ընդհանուր ժողովրդեան հարիւրին 6.3ը կը կազմէն։ 12593 հոգիք ի վեհակն Առաջ Առաջամայ, 6118 ի զաւառն Պարուա և 1908 յայեւեայլ տեղիս նահանգին։ Պենկարայ նահանգին մէջ ընդամէնը 156 և Ատարասայ նահանգին

մէջ ալ միայն 143։ Կ'երեւի թէ 1891ի ազգահամարը 89887 Փարսիք յայսնած է։

Պարսկաստանի մէջ 8500ը չեն անցնիք. յորոց 6483ը յԵզու և ի շրջակայս նորա. 1756ը ի կրօն, 150ը ի թէւրան, 58 ի Պահապահապատ, 25 ի Շիրազ, 15 ի Քաշան, և 12 ի Պուշիր։ Ասմէր բոլորովին անհետացած Կ'ըլլային՝ եթէ չհասնէր հնդկարբնակ կրօնակցաց պաշտպանութիւնը և օգնութիւնը որ զաննիք գլխահարեկ (ձիգէ) ազատեց։ — (Տարմէսթէթէր. հատ. Ա., 37 և 38)։

Բայց Անքըթիւ Զբաղաշտաց ընծայեալ զրութեանց լեզուն չէր կրցեր սովորիւ, որովհետեւ զայն զիտցող չկար նոյն իսկ փարսի գողթականաց մէջ, որք թէպէտեւ զայն կ'ընթեռնութիւն և անոր մէջի շարականները և տաղերը բերնուց սերտած էին, բայց խմասոր քահանայի այս է պահաւիկի թարգմանութեամբ միայն կարող էին ըմբռնել:

Դժբաղդաբար Փարսի մովակետաց պահաւերէնի զիտութիւնն ալ յոյժ ծանծաղ և պակասաւոր էր, վասն որոյ Անքըթիլի հրատարակութիւնը աւելի նուազ վստահութիւն պարտ էր ազդել:

Կ'երեւի թէ Պապէքան Արաւաշրի ժամանակն անդում՝ Աւեսդայի լեզուն ժողավրդեան մեծագոյն մասին համար անհասկնալի և մեռնեալ լեզու մը եղած էր: Վասն որոյ Քրիստոսի թուականին առաջ ին դարուց մէջ Պահաւիկի թարգմանութիւնք աւելի զործածական էին: Քան զրնազիրն: Ամկայն պահաւաիկի թարգմանիչքն չէին կրցեր հաւատարիմ թարգմանութիւն մը յառաջ բերել, մէկ բառ մը շատ անգամ երկայն պարբերութեամբ բացառորեք և բնագիրը յաւելուածոյ մեկնարանութեամբք ընդլայներ էին: Պահաւաիկի բարբառն եւս տակաւ տակաւ մոռցուեր և Հնդկաստանի Փարախներուն սոուկ կրօնական և անկենդան լեզու մը դարձած էր: Անքըթիլի բարեկամացեալ Տամթուրն Տարսաց զպահաւաիկի Աւեսդան՝ աւանդութեամբ և մաս ժամանակի պահաւերենէ ի պարսկերէն և ի կիւճերագերէն թարգմանութեամբք կը հասկնար՝ քան քերականական հմտութեամբ: Վասն որոյ գաղղիացի Հնագիտին վերծանութիւնը թէպէտ Փարսի Մովակետաց անցեալ գարուն տւանդութիւնքը ամրողապէս կը պարունակէր, բայց Աւեսդայի հաւատարիմ թարգմանութիւնը չէր կրնար ըլլալ, շարադրութիւնը և հիւսուածքը այնքան կը տարբերին ի բնագրէն, որ զայս վերջինս ուստամեասիրելու և երեւան հանելու ալ անբաւական է:

Ամկայն Աւեսդայի լեզուն կը նմանի Ամնաքրիտի՝ որքան Աւտտիկէի, Յանիոյ, Դորիոյ և Յւտփիոյ հեղեն գաւառաբարբառք նման են իրերաց: Եւ ինչպէս Յանիացիք, Դորիացիք և այն մի և նոյն հեղեն ազգին զանազան ցեղերն էին, նախնի Պրահմանք և Պարսիկք ալ երկու ցեղք են այն ազին՝ որ թէ Վէտայի և թէ Աւեսդայի մէջ Արիք յորջորջեալ է:

Մեծահանձարն Լոմէն Պիւրնուֆ գաղղիացին, որ Ամնաքրիտի կատարեալ հմտութիւն ունէր, իւր սուր գատողութեամբը տեսաւ այդ երկու լեզուաց իրարու մերձաւորութիւնը: Յոյժ պիտանի եղաւ նման Աւեսդայի Երանեա զրոց սանաքրիտ լեզուաւ թարգմանութիւն

մը՝ զոր ՚Նէրիօսանկ անուն Փարսի մը աշխատասիրեր էր ի ժե դարս՝ սբահաւիկ վերծանութեան վրայէն։ Ուստի ձեռք առաւ զայտ և զթարգմանութիւնն Անգլիայ, և Աւեսդայի բառերը մի առաջ մի ստուգարանելավ և բաղդատերով Անգլիայի և ասոր համացեղ՝ յունական, լատինական, գերմանական և արդի պարակական արմատոց հետ, Ասանայի մէկ մասին նոր և ճշգրիտ թարգմանութիւն մը ի լոյս Հաննեց, յամին 1835, Հանգերձ պիտանի լուսաբանութեամբք և գեղեցիկ ճառագրութեամբք, յորում կ'ապացուցանէր Աւեսդական և Անգլիայի լեզուաց իրարու հետ սերա նմանութիւնը և կը հաստատէր առաջնոյն քերականական կանոնները։

Պիւրնուփի զրութիւնը ուղիղ և անկասկածելի էր, նու հիմն զրեր էր իւր աշխատութեանը Անգլիայ Հաւաքած աւանդութիւնքը և ՚Նէրիօսանկի թարգմանութիւնը որ հնագոյն աւանդութիւն մը կրնայ Համարուիլ, և զնոսա կը Հասատաէր, կը մերժէր կամ կը փափոխէր Աւեսդայի Համացեղ լեզուաց և ի մասնաւորի Անգլիայի դիտութեամբ։ Ասկ բաղդատական լեզուագիտութիւնը վտանգաւոր և մոլորեցուցիչ էր յոյժ։

Կանխաչան մահը չներեց Պիւրնուփի որ իւր արդիւնաւոր ձեռնարկը լրացնէ։ Բայց նու ճանապարհը Հարթեր էր։ Խրմէ ետքը Տանիմարքացի և մանաւանդ Գերմանացի հնագէտք շարունակեցին նորա գործը։ Վէսթէրկաստու, Սրբիէլ, Ասութի՛ Պիւրնուփի ոճոյն հետեւեցան։ Պաւերացին Հաւկ ի սկզբան մերժեց աւանդութեանց օգտակարութիւնը, պատճառելով՝ թէ ոչ պահաւիկ թարգմանիչք բաւական տեղեակ էին Աւեսդայի լեզուին և ոչ պահաւերինէ ի պարսկերէն կամ ի Անգլիայ լեզու փափողները՝ պահաւիկ լեզուին։ Ուստի արմատոց ստուգարանութեամբ և բաղդատութեամբ միայն ուղեց մեկնել զԱւեսդան, և երկար ժամանակներ բանակառեցաւ Պիւրնուփի հետեւողաց հետ։ Այս գրութիւնն շտու աւելի տոմֆանելի էր և վրիպական քան զՊիւրնուփինը։ Բայց երկու հազար տարիէ ի վեր մոռացեալ լեզու մը երեւան հանելու համար՝ լաւ էր որ հնագէտք տարբեր ճամբայներով և ընդդիմակաց վարդապետութեամբք փորձէին այդ գժուարին նպատակդ ձեռք ձգել։ Պ. Հաւկ որ կը գասախօսէր Միւնիքի Համալսարանին մէջ, զնաց ի Բունաքաղաք Հնդկաց ու անդ Հաստատեց զիւր բնակութիւնը, ուր ի մօտոյ կրնար քննել և կշռել Փարսի մովակետաց աւանդութիւնքը։ Անդ՝ թէպէտ իւր առաջին սկզբունքը բոլորովին չփոխեց, բայց աւանդութեանց արժանահաւատաց լինելը խոստավանեցաւ Աւեսդայի մեծագոյն

մասին համար, մինչդեռ իւր հակառակորդքն ալ իրեն հետ հաւա-  
նեցան՝ թէ աւանդութիւնք յիրաւի քիչ նպաստամատոյց կրնան լի-  
նել Աւեսդայի հնագոյն մատենին՝ կաթայից ընթերցմանը (որ Զրո-  
դաշտայ հարազատ զբութիւնը կը կարծուի, մինչդեռ մեացած զըր-  
քերը նորու աշակերտացը և հետագայ դարսուց երկասիրութիւն են),  
և թէ զայն մեկնելու համար բազդատական ինքուագիտութենէ զատ  
միջոց և ճար չկայ:

Եւրոպիոյ հնագէտքն՝ իւրեանց անխոնջ և մեր արեւելեանն ձան-  
ձրացկոտ մտաց համար սարսափեցուցիչ պարապմանց մէջ, որոց  
աղադաւ մէջերնէն ոմնանք տիեզերակաչալ անուան և փառաց ար-  
ժանացան, օժանդակ ունեցան զՓարսի գիտնականն, որք իւրեանց  
կողմանէ հետամուռ կը ըլլային հայրենաւանդ դպրութիւնքը աւելի  
բացայաց ըլլունելու, երբեմն ուզզութիւն ասալով Եւրոպացի խոռ-  
զարկուաց և շատ անգում օգտուելով ի նոցանէ: Հայերէնն ալ պի-  
տի մատուցանէր իւր նպաստը զհարազատ եղայրը լեզուն կորստենէ  
ազատերու համար. Հաւեկ, Ետութի և ուրիշ երանագէտք ուշի ուշով  
քննեցին և մեր հայրենի բարրառը. իսկ Տըլակարտ գերմաներէն  
մասնաւոր զբութեան մը մէջ՝ Աւեսդական շատ մը բառեր հայե-  
րէնով քննադատեց ու լուսարանեց: Հարիւրամեայ աշխատութենէ  
յետոյ յաջողեցան հնագէտքն ի խաւարէ հանելու զմազդէական  
դպրութիւնս, որք՝ մանաւանդ զըշտգրաց աղաւազման պատճառու.  
թէպէտ տակաւենի խիստ շատ չմեկնուած տողեր կը պարունակին,  
սակայն մեծաւ մոսամք թարգմանեցան ի Գերմաներէն, ի Գաղղիա-  
րէն և յԱնդզիարէն: Միանգամայն և աչքէ անցուցին և բազդա-  
տեցին Հելլէն, Հոռմայեցի, Հայ և Մահմետական մոտենագրաց և  
պատճաց զրադաշտական օրինաց վրայօք տուած տեղեկութիւն-  
ները: Աւեսդայի լեզուին ուսումը նպաստեց մեծապէս Աքեմենեան  
բեւեռազրոց ընթերցմանը, որոց լեզուին հետ յոյժ սերտ նմանու-  
թիւն ունի, և պահաւերենի զիտութիւնն՝ ալ Ասանեան արձու-  
գրութեանց և զրամոց:

Այդ երկասիրութեանցդ շնորհիւ և մեք՝ կրկին բարրառոցդ ծո-  
վածաւալ և տաժանելի խրթնութեամբք և դժուարութեամբք ու-  
ռանց յոգնաշխատ լինելու, կրնամք հասկնալ և հասկցնել՝ թէ ինչ  
են զրազտաշտական կամ մազդէական օրէնքը. որոնք են Պարսից

սրբազն մատեանքը, ինչ էր նոցա նախնական լեզուն, և ինչ փոփոխութիւններ կրեց գարուց յաջորդութեամբ<sup>1</sup>:

## F

Դիտելի է նախ՝ թէ Եւրոպացիք Արաբացի մատենազրաց հետեւելով, զԳրադաշտոկան մատեանսն « Զէնդ-Աւետա » յորչործեցին. Փարավիք անուանց կարգը լրջելով՝ աւելի ճշգութեամբ « Աւէսդա և Զանտ » կը կոչեն Աւետա անունը կու տան նոյն ինքն Զրադաշտաց և նորա անմիջական աշակերտաց զրութեանց, և զանտ ասելով կ'իմանան պահլաւերէն թարգմանութիւնքը և մեկնութիւնքը: Եւ որովհետեւ այս վերջոցու միջոցաւ միայն կը հասկնային զԱւետան, Աւետացի հաւատար՝ արժանահաւատա և ճշմարտապատում համարեցան՝ ընծայելով զնոսսա նոյն ինքն Զրադաշտաց: Եւրոպացի հնագէտք սակայն նոյն ինքն Աւետացի մէջ կը նշմարեն այլեւայլ տներ և պարբերութիւններ՝ որք վերջէն աւելցած են իրրեւ լուսաբանութիւնք. և որք բուն Աւետացի լեզուաւ զրուած ըլլաւնուն համար խառնուած ըլլալու են բնագրին հետ, իրրեւ թէ մի և նոյն չեղինակէ մինէին: Հաւանական է՝ որ առաջին Զանտքն կամ մեկնութիւնքն Աւետացի լեզուաւ զրուեցան, և թէ բահլաւի մեկնութիւնքը սոցա թարգմանութիւնք են մերթ ընկ մերթ յաւելուածով: Վասն որոյ մարթ է անխտիք՝ « Զէնտ-Աւետա » կամ « Աւ-

1. Մեր ընելու համառօտ տեսութեան համար առաջնորդ առինք մեզ գրեիսաւրաբար Պ. Հաւկի նշանաւոր երկասիրութիւնք՝ Essays on the sacred language, writings and religion of the Persis by Martin Haug. London 1878. Հարլէզ Պելճիացովն և մանաւանդ Շէմս Տարմէսմէմէրի Աւետացի գաղղիարէն թարգմանութիւնքը, Շործ Իուլինունի պատմական հոյակապ աշխատութիւնները. Պ. Աւէսդ անզիացցուն՝ Մարգմանութիւնքը. Տէսդու Հուշակաց Համաստակած Զանտ-Բամբաւի և Բամբաւի - Բազմաւ բառագիրը, և Պ. Եսուսթիի բառարանը: Խոստովանելու եմք սակայն՝ որ գերազդարաբ գերմանէրէն լեզուին անհմուս ըլլալնուս համար շկրցանք պատրաճապէս օգուտ քաղել գերման մատենազրաց երանեաւ հընութեանց ամէն ձիւղին մէջ ըրած կարեւոր հետազօտութիւններէն, զորս միայն կարող եղաք ուսումնասիրել որշափ հնար էր, նորա հետեւող գաղղիացի հեղինակաց միջոցաւ:

Ճամասրի հրատարակած Զանտ-Բամբաւի և Բամբաւի - Բազմաւ բառագիրը, և Պ. Եսուսթիի բառարանը: Խոստովանելու եմք սակայն՝ որ գերազդարաբ գերմանէրէն լեզուին անհմուս ըլլալնուս համար շկրցանք պատրաճապէս օգուտ քաղել գերման մատենազրաց երանեաւ հընութեանց ամէն ձիւղին մէջ ըրած կարեւոր հետազօտութիւններէն, զորս միայն կարող եղաք ուսումնասիրել որշափ հնար էր, նորա հետեւող գաղղիացի հեղինակաց միջոցաւ:

ւեստա և ԶԵՆԱ « յորչորչել նախնական կամ աւետական լեզուաւ զրուած մատեանքը, թէպէտե Փարսի աւանդութիւնը Զամո ու նունդ մի միայն պահլաւերէն թարգմանութեանց և ծանօթութեանց կը յատկացնէ :

Աւետպա՝ Աւա-սպա բառերէ բարդեալ կ'երեւի, որք նշանակեն « հաստատեալ ինչ » կամ հաւասափը : Պ. Հաւկ աւելի կ'ընտրէ ա-չիսդա կամ Աւետիք բառէ հետեւցնել որով Աւեսդա, Վետա, Աւետարան համանիշ կ'ըլլան<sup>1</sup> : Խակ Զամո, որոյ պահլաւիկ ձեւն է Զաինդի, ելած է Զամ արմատէ, որ է ճանաչել, զիսել, ինչպէս ի մեջ « ծանօթութիւն » ժանհայ, ժանիր, ժանուցեալ արմատէ կազմուած է<sup>2</sup> :

Պահլաւիկ թարգմանութեան և ծանօթութեանց վրայ Սասանեանց ժամանակ նոր ծանօթութիւնք կամ մեկնութիւնք աւելցան, որք կը կոչին Բազանտ, հաւանօրէն աղաւաղեալ կրմատումն Բաիդի-Զամդի բարդութեան, որ ըսել է վերստին կամ կրկին ծանօթութիւն : Բազանտ անունդ կը տրուի եւս այժմ այն զուտ երանեան լեզուին՝ որ Ֆիրտէվսիինէն քիչ կը տարբերի և որ հինգերորդ դարուն Պարսից կենցանի բարբառն էր :

## ¶

Պարսկաստանի լեզուները, զորս սովոր է Երանեան կոչել, յատուկ առհմ մի կը կազմեն այն Արիական լեզուաց մեծ խմբին մէջ՝ որ Երանեան բարբառներէ զատ կը պարունակէ զսանաքրիզը (սերնոգոք իւրովք), և զՅունական, Լատինական, Հայկական, Տեւոսնեան, Արաւետան, Միթզօնեան, Կեղուական և այլ համացեղ լեզուները :

1. Եւրոպացիք ասէք յառաջ ԶԵՆԱ կը կոչեին Աւետպայի լեզուն, որով կը սէին Langue zend, grammaire zend. Բայց որովէետե այդ անունդ աւելի պահւաւիկ թարգմանութեանց և մեկնութեանց կը պատկանի, և պահլաւերէնն աւ մեծապէս կը տարբերի Աւետպայի լեզուէն, չփոխութիւն չպատճառելու հա-

մար, լաւագոյն համարեցանք զայս վերջինն Աւետպայի լեզու կոչել :

2. Դարեհ իւր արձանագրութեանը մէջ կ'ըսէ. ավարիյ աղաւարամ ուրարիյամ. « ըստ Աւետպայի վարեցի ։ ասութերէն սիւնակին մէջ սպասրութարդմանի տիեզար՝ որ է դեն, օրէնք Պահլաւիկ ձեւն է արասդար :

Երանեան տոհմը կը բռվանդակէ Երանայ հին, միջին և նոր լեզուները, իսկ Երան ըսկը իմանալի է Պարսկաստան, Արքաստան և Բակորիա, որք Զենա-Աւեսդայի մէջ Այրիաօ-տաճճավո «Արքական աշխարհք» կամ «ղեհք» կը յորջորջին:

Երանեան լեզուք յերկուս ցեղս կը բաժանին. ա, Այսեւելեան Երանայ կամ Բակորիոյ բարբառք, զորս միայն Փարսի որբազան մատենից՝ այս է Աւեսդայի միջնորդութեամբ կը ճանաչեմք: Այս բարբառքս եւս կրկին են, տուաջինն՝ զոր պարտ է անուանել Իսրայիլց «Ազոթից», «Օրհներգութեանց» լեզու, հնագոյն է. միւսը Աւեսդայի մնացեալ զրոց բարբառ, որ առաջնոյն յաջորդեր է, ու հարիւրաւոր տարիներ Բակորիոյ զրական և խօսեալ լեզուն մնելէ յետոյ, Քրիստոսէ յառաջ երրորդ դարուն մէջ առանց սերբն-դոյ վերջացած կ'երեւի:

Աւեսդայի լեզուն թէ իւր հնագոյն և թէ վերջին կերպարանաց մէջ՝ մեծապէս զարդացեալ բարբառոյ մը ամենայն յատկութիւնքը կը կրէ: Խոնարհմանց և հոլովմանց փոփոխմանքը յոյժ ճոխ են: Անուանք՝ ճիշդ Վեստայեան Սանաքրիտի պէս՝ երեք տեսակ թիւ և ութ տեսակ հոգվմանք ունին. իսկ բայերու շատ աւելի զանազան ձեւեր կան քան ի Սանաքրիտ: Բարդութիւնք յաճախ են և բազմատեսակ. բանից իրարու յօդաւորութիւնք՝ հեշտ, որով և խօսից ընդհանուր իմաստը զիւրբմրոնելի: Աւեսդայեան լեզուն հարազատ եղացը կը համարուի Սանաքրիտի, Յունարենի, Լատիներենի և Գըթարենի. բայց չերեւար մեզ իւր երիտասարդութեան պայծառ և կաստակալ հասակին մէջ, այլ սակաւիկ մի անկման և ծերութեան ժամանակի երերուն կերպարանօք:

ԱՀաւասիկ Կաթայից լեզուին օրինակ մը, զոր կը քաղեմք Ուշգաշախիդի կոչուած երկրորդ Կաթայէ. (Եանա, 94, 3):

Գատ բշա բերեսա երեջ մ՞ի վոլա Անուրա

Զոր քեզ հարցից ճշմարտի ինձ ասա, ԱՀուրա.

Գասնա զարս բշա աշանիյա բուրիցյօ

Ո՞ այն արարիչ հայր բարութեան սկզբնական

Գասնա բենկ սդարեմշա տատ ատուանիմ.

Ո՞ արեւու և աստեղաց արար զմանապարհ.

Քի համաստեղ ուխցիկիդի ներփառիդի բվատ  
Ո՞ (է) որ զլուսին լրացուցանէ և մաշեցուցանէ բոց ի քեն.

Կայալիս Արագուա վասէմի ամենալավ վիտեն.

Զայդուսիկ, Արագուա, կամիմ և զայլս զիտել:

Աւեսդայի մնացած զրոց լեզուին ալ օրինակ մը տալու համար,  
ստորեւ կը գնեմք, քաղելով յԱպան Եւազդէ՝ այն աղօթքը՝ որ ան-  
վրէս կը հասցնէր հայցողին՝ Անահտայ օգնութիւնը.

Եյտի բահդի ավա-ձասա  
Եկ ընդ տառ էջ ի վայր

Այսպիսուրա Անահիդի

Արտվիսուր Անահիս,

Հաւա աշատպիյօ սդարեկպէօ  
անդուստ ի հեռաւոր աստեղաց

այի զամ Անորատադնամ  
ի վայր յերկիր Ահուրակերտ

րիմամ հազաօնրէ աշրիմանն  
դքեզ յազեցեն (պաշտեցեն) հնարագէտ

անորամնո տանձուրադայօ  
տերք դեհապետք

բուդրաօննո տանձուրահիմամ  
որդիք դեհապետաց:

Բ. Արեւմտեան Երանայ, այս է Արաւատանի և Պարսկաստանի  
րարբառք: Յայցանէ միայն զմին զիտեմք իւր նախնական, միջին  
և այժմեան ձեւերովլը<sup>1</sup>: Հին ձեւին օրինակներն են Աքեւմենեան

1. Աէյտ Հիւսէին Շահ Հագիպա-  
թէր քեզվեդ-իւշ-Անտ անուն պարսկե-  
րէն քերականութեանը, բնչուսն և Պիր-  
ձանի Գարդի մէջ եօթն տեսակ դաւա-  
ռարարառներ յեշտատակեալ են, զորս  
բաժանեն յերկուս դասս. Ա., մեռեալ  
լեզուք. 1. Առաջուի, այս է նախնի Առգ-  
դիանարէն (Առաջու ի Զէնտաւեսդա).

2. Զաւշի, այս է Զավէլիստանայ. 3.  
Սագի, այս է Սագաստանի. 4. Հերկի  
կամ Հերադայ (Հարօյու ի Զենտաւես-  
դա): — Բ, Խօսեալ լեզուք. 4. Ֆարսի,  
զոր խօսին ի Ստախոր. 2. Տորի, այս է  
դրան կամ արբունական, զոր խօսին,  
ասեն, ի Բահէ, ի Պուխարա, ի Մէրլ  
և ի Պատախշան. 3. Բահլավի կամ

Հարստութեան բեւեռազիր արձանագրութիւնները որ ի Պերսեպոլիս, ի Փիհիսթուն առ Եկրաստանու և յայլեւայլ տեղիս Պարսկաստանի: Այս արձանագրութեանց լեզուն յայժ նման է Աւետացինին, բայց և այնպէս ունի իւր սեփական հանգամանքը, այսպէս Աւետացիի զ կը փախուի ի տ. ազեմ՝ դերանուն «ես» կըլլայ առամ արձանագրութեանց մէջ. ինչպէս և զատկա՝ «ձեսն» յԱւետացի փախի ի տապա: Դա անշուշտ այժմեան պարսկերէնի մայրն է. բայց զաւակը այնչափ քիչ կը կըէ ծնողին նմանութիւնը, որ ցեղակց Սահաբրիս և Աւետական լեզուներն անկէ չատ աւելի նպաստամացոյց են արձանագրութեանց ընթերցման:

Ասու կը զնեմք Վշտասպեան Դարեհի Քրիստոսէ 516 տարի յառաջ Պիհիսթունի քարածային վրայ փորագրել տուած սեպազրոց Հայոց վերաբերեալ եօթն տներէն մէկը.

1. Թանգիյա Տարայավուշ խշայարիյա,  
Ասաց Դարեհ արքայ (շահ) \*
2. Բասանիա Տատարչիշ նանա, Այսինիյա, մանա պատարա,  
Յայնժամ Դագարսէս անուն Արմէն հպատակն ինձ,  
ավամ տուամ ֆրայշայտ Այսինամ.  
զնա ևս առաքեցի յԱրմէնա:
3. Ավարանիյա արանամ.  
Ասացի ցնա.
4. Բրիտիյա, բարս նիյա համիդրիյա, մանա նիյա կարպանը  
յերթ յերկիրն ապատամը, որ ոչ ճանաշէ  
դիյա, ավամ ձատիյա.  
զիս, յաղթեան նմա:
5. Բասանիա Տատարչիշ աշխավա.  
Յայնժամ Դագարսէս խաղաց զնաց :

Բանդավանի, զոր բարբառին ի Բահլա աշխարհ ու բանօր են իիէյ (Որադա ըստ Զէնոսու եսդայ), և Հրագա ըստ Աստուածաշունչ զրոց), Ասպահան և Տինավար նահանգք: Տարի ասելով, առէ Պիհրհների  
աշխարհ, Վիրտէվսեայ լեզուն կիմանան. և ասոր փարսէի հետ ունեցած տարբերութեան գուցնելու համար օրինակներ յառաջ կը բերէ՛ արքունեաց լեզուաւ.

ալլամ (որովայն) և ազու (ընդ) ըսելու է եղեր՝ փոխանակ շրամ և պա ըսելու: Յայց այդ տարբերութիւնքը արտասանութեան չնչն զանականութիւններ են, ուստի և անբաւական այդ երկու լեզու:

ները իրարմէ որոշելու համար: Տարի Կրանադիսաց Բագանան է, որոյ վերայ պիսի խօսինք ասորէ:

6. Եսրաւ Այսինամ բարարասաւ, բասավա ձաւիդրիյա  
Երբ հՀաս յԱյմէնիս, յայնժամ ապստամբքն,  
հակամագաւ բարարիդաւ բարիշ Տատարչիմ ձամարանամ  
ժողովելով, եկին անդրէն յանդիման Դադարսեայ տալ  
չարդանիյա:  
պատերազմ:
7. Զօգա<sup>1</sup> նամա, աւանանամ Այսինիյիյա, ավաստ  
Զօգա անուն, աւան Այսինիոյ, անդանօր  
ձամարանամ աբունագաւ.  
մղեցին զպատերազմ:
8. Արամազտա մաիյա իշրասդամ ապարա.  
Արամազդ (Արմիզդ) ինձ նպաստ երեր:
9. Վաշնա Արամազտանա, բարաւ ձիյա մանա, ավամ  
Շնորհօքն Արամազդայ, զօրքն իմ բոլորովին  
բարաւ դիյամ ձամիդրիյամ աճա փասիյա.  
խորտակեցին զրանակն ապստամբ:
10. Թուրավանարանիյա մանիյա թ բաւչապիշ, դաքարաւ անտ  
Յութերորդ օր Թուրավահարա ամսոյ, յայնժամ էր  
ավարանամ ձամարանամ բարդամ.  
տուեալ պատերազմդ այդ:

Այժմեան պարսկերէնը հին լեզուէն որոշող զլիսաւոր հանգաւ-  
մանկներն են՝ հոլովմոնց և խոնարհմանց զրես թէ բոլորովին կոր-  
սուիլն, և սեսի բացարձակապէս ի բաց թողուիլն, մինչդեռ Քրիս-  
տոսէ 500–300 տարի յառաջ Աքեմենեան արձանագրութեանց մէջ  
տեսնուած հոլիվական փոփոխմունք Աննաքրիստի, Աւեսդայի և ուրիշ  
հին արիստոն լեզուաց համաձայն են: Գիտուարին է ասել՝ թէ  
երբ պարսկերէնը անդինարենին պէս պարզեցաւ և խոր նախնի հան-  
դերձանքը մերկացաւ՝ օտար բաւերու ընդունակ ըլլալու համար:  
Բայց մարթ է կարծել՝ թէ անտւանց և բայից վերջաւորութիւնքը տա-  
կաւ առ տակաւ անխմանալի լինելով, Քրիստոսէ շատ յառաջ սկսան

1. Պատուաի կըսէ թէ նմառէի հիմ-  
նագիրն եղաւ Պատու սացւ անուն  
հզօր թմագաւոր մը որ թելոյ որդին էր. Պատու  
Պատու պատեաց զքաղաքդ պարազօք և  
թմագաւորեաց ամս 52: Նմա յաջորդեց  
իշխանուէն Շամիրամ ամս 40: Այս

վերջնոյս պետառթիւնը կը տարածէր ցը-  
սահմանս Արմենիոյ, բովանդակէր զԱ-  
մըրպատական, զեզր Միջագետաց, ըլ-  
լեան ձուաթ, զւեան թիթել, լին,  
զերկիրն Զաւզան պայտ և լազու-  
գաւառս Արմենիոյ:

խանակիլ և վերնալ, որովհետեւ այդ քերականական ձեւերն Աշքեմենեանց վերջին սեպաձեւ արձանագրութեանց՝ ինչպէս և Աւետարյի մի քանի զրոց մէջ՝ արդէն շփոթ են: Եւ որովհետեւ Արշակունի Պարթեւաց ժամանակէն՝ որք յաջորդեցին Աքեմենեանց, պարսկերէն արձանագրութիւնք չկան բնաւ, կարելի չէ մեղ գիտնալ՝ թէ պարսիկ լեզուն ինչ այլայլութիւններ կրեց նոյն միջոցին: Մեծին Աղեքսանդրի յոյն յաջորդացը հարկատու մէկ քանի պարսիկ իշխանաց կամ նահանգապետաց զբաններ կան արգարեւ (այս է Քրիստոսէ 2–300 տարի յառաջ), որոց վրայ սեմական նշանագրօք կոխուած բահլաւի բառեր տեսնուած են, ինչպէս և Պարթեւ Արշակունեաց ժամանակը գուաւաւաց ոմանց մէջ տպեալ զրամոց ումանց վրայ՝ բայց այդ անօսոր տարերքու, որք բահլաւի լեզուին հնութիւնը կ'ապացուցանեն, բաւական չեն այդ լեզուին որպիսութիւնը մեզ յայտնելու, մինչեւ որ համնինք Սասանեաց առաջին երկու թագաւորաց օրերը (226–271), որոց արձանագրութեանց և զբանց մէջ զարմանօք կը տեսնենք սեմականով խառն պարսկերէն մը, այս է բահլաւի լեզուն: Այս պահլաւիկ բարբառս ալ մինչեւ ցվերջ երրորդի դարուն Քրիստոսի փոխսութիւններ կը կրէ. բայց այնպիսի փոխսութիւններ միայն՝ զորս կրած է օրինակ իմն անգաղարէնը Զօսրի գարէն մինչեւ մեր օրերը, ու այնուհետեւ յոյժ կը մերձենայ Սասանեանց Բահլաւի մատենագրութեան լեզուին, որ զորածածուեր էր նոցա բառնալէն ետքն ալ մինչեւ ց881 տարին: Այդ մատենագրութիւնէդ բաւական ընդպարձակ զրութիւնք պահած են մեզ մինչեւ ցայսօր Փարախք. յայսցանէ ոմանք Աւեսդայի թարգմանութիւնքն են, այլք հեղինակութիւնք, որպէս պիտի տեսնենք սոսրեւ: Տասներորդ դարէն ետքն ալ կան բահլաւի զրութիւնք, բայց սոքս հետեւողութիւնք են և ոչ հարազատ հեղինակութիւնք:

Երանեան լեզուաց սերունդքն համարին հնագէտք բաշդու յորջորջեալ Աֆղաներէնը, ինչպէս և Կովկասարնակ Օսէզաց բարբառը:

## 7

Թէ ինչո՞ւ համար Սասանեան արձանագրութեանց սեմականաւ խառն պարսկերէնդ պահլաւիկ կամ բահլաւի կոչեցաւ, պատմագիրք և հնախոյզք զանազան մեկնութիւններ կու տան: Անքըթի՛ Բահլու՛ «սահման» բառէ կ'ուզէ հանել, իբրեւ բարբառ սահմանազիմոյ վրայ գտնուող նահանգի միոյ. այս կարծիքս անընդունելի է.

քանդի կորելի չէ որ լոյնածաւալ տէրութեան սահմանաց մէջ մաս սին մէջ խօսուած լեզու մը այդ տէրութեան ընդհանուր և պաշտօնական լեզուն ըլլայ: Պարսիկ քերտականներէ սմանք բանլա առնուն աշխարհի մը լեզուն էր, կ'ըսէն, որ ըստ նոցա՝ իւր մէջ ունէր զԱրագահան, զԱՀ, զԱկրատան, զՆիհաւէնս և զԱրագատահան, հանդերձ նախնի Մարաստաննաւ, բայց այդ աշխարհաց բահլա կոչուելուն չկայ այլուր յիշատակութիւն մըւ Ըստ սմանց ալ բահլա հասարակ անուն մի է և կը նշանակէ «քաղաք»: որով և բանրաշի բանէ կ'ըլլայ «քաղաքացւոց լեզու»: Պիւրհանի-Գաթիի հեղինակն՝ Պավրիժեցին Հիւսէին՝ այդ զանազան մեկնութիւններդ տալէ յասած, կ'ըսէ թէ այդ լեզուն բահլաւայ, որդւոյ Ասմայ, որդւոյ Նոյայ անուամբն բանրաշի կոչեցաւ, նշանաւոր խօսք մը, որ սեմական արմատոց ծագմանը վրայօք Պարսից մէջ ալ աւանդութիւն մը եղած ըլլալը կը ցուցանէ:

Ըստ Խորենացւոյ Պահլաւ: Էր անուն Բահլ քաղաքի և սորա աշխարհին, որ էր սեմական իշխանութիւն Պարթեւաց թագաւորական գարմին<sup>1</sup>: Ասանկով Պահլաւ բան Պարթեւատան (Parthia ըստ Յունաց և Parthya բառ բեւեռազրոց) կամ նորա մի կարեւոր նահանգը կը նշանակէ: Մեր ծերունի պատմազրին սուսած մեկնութիւնը սմեննէն աւելի ընդունելութիւն գտած է, հնագէտք «պահլաւ» և «պարթեւ» լծորդ կը համարին, որովհետեւ գիտեր են՝ թէ և բաղաձայնը չկն երանեսն լեզուաց մէջ, փոխան որոյ բառութ գործածուած է: Իսկ չին երանեսն բառից մէջտեղը կը տնուած ու կամ բ վերջին ժամանակաց մէջ կը փոխուի ի ձ, ինչպէս Mithra կ'ըլլայ նոր պարսկերենի մէջ Միհր: Արդի պարսկերէն գոյականն բանրաշ, բանրաւան, որ կը նշանակէ «զիւցազն, նահատակ, ըմրիչ, այր կորովի», նոյն բառն է անշուշտ: Այն ազգը՝ որ այնքան յաջողութեամբ կռուեր էր հսովմայեցի լեզունաց հետ, պէտք էր որ Արեւելից մէջ Կտրճութեան օրինակ եղած ըլլար, որով և յատուկ անունը տակաւ տու տակաւ հասարակ անուն մի եղաւ<sup>2</sup>: Ուսմայտնա և Մահապարագա սանաբրիտ զրոց մէջ յիշատակեալ Բահլաւան անուն կորովի և կորիճ ազգն ալ անշուշտ Պարթեւականն էր:

Առ այս կրնայ ոք առարկել՝ թէ Պարթեւք Ակիւթական կամ թուրք ցեղ մի էին, և թէ բանրաշի չի կրնար սոցա յատուկ լեզուին

1. Տե՛ս Խոր. Էջ 314, 360, 364:

թէ ։ ըսելով՝ կ'իմանանք այր քաջ, զօ-

2. Մինչեւ ցայծոց մեք ևս չայր պար-

րաւոր:

անունն ըլլալ, քանի որ այդ բարբառդ հոծ է սեմական արմատօք։ Կը պատասխանեմք՝ թէ պարսիկ պատմագիրք, որ բանաւի կոչեցին հին պարսկական լեզուն, կրօնը, դպրութիւնքը, կը հասկնային առվաւ ոչ զպարթեւականն միայն, այլ ընդհանրապէս ինչ որ հին էր։ Վասն զի երր սոքու կը զրէին իւրեանց պատմութիւնը, Ատասնեանց հարստութիւնը արգէն վերջացած էր, և սոցա նախորդաց՝ այս է Պարթեւաց հինգհարիւրամեայ իշխանութեան ժամանակին մեծածեծ պատերազմաց և յաղթութեանց համբաւը կանգուն կեցած էր տակաւին Արեւելից մէջ, մինչդեռ աւելի հին պատմութեան յիշատակաները գրեա թէ բոլորովին մուտացեալ կամ շփոթ էին։ Այսպէս Միամել-իւր-րավարիսի մէջ՝ Պերսեպոլեայ սեպաձեւ արձանագրութիւնքն բանաւի կոչեալ են. և իպն Հաւգալ՝ արարացի աշխարհագիր տասներորդ դարու, Ֆարս նահանգին նկարագրութիւնը ըրած տունը կը գրուցէ՝ թէ երեք լեզու կային անդ, ա, Ֆարսի (պարսկերէն) որ ժողովրդեան խօսածն էր և համայն Պարսկաստանի մէջ կը գործածուէր. բ, Բանաւի, որ հին Պարսից լեզուն էր որով Մոզք գրեցին զյիշատակարանս իւրեանց, բայց նորա՛ Իպն Հաւգալի ժամանակը տունց թարգմանութեան օգնութեան անիմանալի եղած էր Ֆարսիստանի մէջ. զ, Արարերէնը որ պաշտօնական լեզուն էր։ Պարսկաստանի ուրիշ խօսեալ լեզուներէն կը յիշատակէ եւս զիտուզի, այս է Խուժաստանի, զորմէ տոէ թէ Երրայեցերէնէ, Ասորերէնէ և Պարսկերէնէ բոլորովին տարրեր է<sup>1</sup>։

Նոյնպէս Ֆիրաէվսիի տակնը ոչ միայն բեւեռագիրք, այլ և Աւեսդան, այլ և Ատասնեան պաշտօնական լեզուն բանաւի սեպուած էր, մինչ այժմ՝ քանի որ առջի երկուքը ըստ բաւականի ծանօթացան, հնագէտք այդ անունգ՝ միայն Ատասնեանց ժամանակի խօսն բարբառյն կը սեփականեն։ Աւրեմն յայտ է՝ թէ բանաւի սմբատիր իբրեւ « հին պարսկերէն » ի կիր տակալ է ի պարսիկ հեղինակաց, որ ժամանակի որ ըլլայ՝ Ատասնեանց, Պարթեւաց, Աքեմենեանց, Փայտանեանց կամ Բէշատեանց։ Ոզդի մը անուան ուրիշ ազգի մը համար գործածելը պարօիկ մատենագրաց մէջ ուրիշ առթիւ ալ կը ներկայանայ մեզ, այսպէս Մեծն Ազեքսանդր Հոռվմայեցի կոչեալ է Ատասնեան Արտաշրի առաջնոյ ժամանակից զըրութեան մը մէջ, որովհետեւ սա այն կողմէն եկեր էր ի Պարսկաս-

1. Խուժաստանի բարբառը Աքեմե-

նագրութեանց երկորդ կարգին լեզուն

կը կարծուի լինել.

տան որ կողմանէ որ յետագայ դարսուց մէջ արշաւեցին Հռովմէաւ կան լեզէոնք, ինչպէս որ ալ աւելի վերջի ժամանակները բիւզանդեան Յունաց հոռվմայեցի կամ հոռոմ անունը կու տային ու կու տան ցարդ Պարսիկը և Հայք:

Արշափ ալ անորոշ խմասով ի կիր առնուած ըլլայ տահնօք Բանդրաշի անունդ, ինչպէս որ ըսինք ի վերոյ՝ սովու Սասանեանց ժամանակի զպրութեանց լեզուն միայն կ'իմանանք, այս է Սասանեան նշանագիր արձանագրութեանց, զրամոց և Փարսիներուն պահած նոյն ատենի հատուկարի մատենից: Այդ զանազան զրութիւնքդ զարմանալի կերպարանք մի ունին: սոցա լեզուն՝ փոխանակ զուտ երանեան ըլլալու՝ (ինչպէս որ յուսալի էր, քանի որ զաս ժամանակաւ զրական կարգու մէկ կողմանէ Աքեմենեան բեւեռազրաց բոլորովին անխառն, և միւս կողմանէ Ֆիրակվիի զրեաթէ նոյնքան զուտ պարակերենին մէջ ներփակեալ կը տեսնեմք), խաստ շատ սեմական բառով խառն է: Օտարամուտ արմատոց թիւը աւելի մեծ է Սասանեանց՝ ժամանակաւ երիցագոյն արձանագրութեանց մէջ, և շատ աւելի նուազ վերջնոց մէջ: Անանկ որ Արտաշրի և նորա յաջորդին Շապուհ առաջնոց արձանագրութիւնք սեմական լեզուաւ զրուած են սակաւաթիւ պարսկերէն բառերով և պարսկական շարազրութեամբ:

Արդ ուստի՞ ոպրդեցան այդ սեմական բառերդ: Այժմեան պարակերէնը արարերէնէ շատ բառ առած է, բայց ասոնք մաշմետականութենէ յետոյ մուտ գտան, և կրօնական կամ ուսումնական զագափարներ կամ առարկայներ բացատրող անուանք են, արարացի բայ և մասնիկը չպարսկացան ամենեւին: Այսուայիկ եկամուտ բառ սերն ալ բնաշխարհիկ չկրցան ըլլալ, այլ յաւէտ անհարազատ և խորթ մեացին: Ասկէ զատ՝ բանլաշի արձանագրութեանց մէջի սեմական արմատներն այն տեսակ բառեր են միայն՝ որոց արարերէնը զործածական չէ արդի պարսկերէնի մէջ: Այսպէս՝ գերանունք, նախղիրք, շաղկապք, սովորական բայք, ստէպ զործածելի մակրայք և գոյականք, թուական անուանք մինչեւ ցտանն՝ սեմական են, և այժմեան պարակերնի մէջ մուտ գտած արարերէն մէն մի բառին հոմանիշ երանեան բառ կը գտնուի բահլաւի արձանագրութեանց մէջ: Մնաց որ եթէ ենթաղբենք թէ Միջագետաց կամ Տաճկատանի բնակիչք իրենց յարարերութեամբքը բերին այդ սեմական արմատները, սոցա առնչութիւնքը աւելի շատ էին Սասանեանց վերջի առենները. վասն որոյ եթէ յԱրտացւոց առած ըլլային Պարսիկը, այդ սեմական բառերդ պահուելու՝ մանաւանդ թէ հետզետէ աւելնալու էին փոխանակ անհետ լինելոյ: Եւ որովհետեւ այդ սեմական

բառերդ աւելի Ասորեստանեայց կամ Քաղզէացուց լեզուին ձեւերուն նման են քան Այսարականին և Երբայականին, պարս է կարծել՝ որ եթէ խառնուրդ մի եղաւ երանեան և սեմական բարբառոց մէջ, Աքեմենեան Պարսից և Պարթեւաց պետութեան մէկ կարեւոր մասին մէջ տիրող ասորերենին կամ քաղզէարենին չետ եղած է:

Ոմանք ալ կարծեցին՝ թէ որովհետեւ Քրիստոնէութեան առաջին դարուց մէջ զարութիւնք յոյժ ծաղկեալ էին յԱսորիս, և ասորի գրութեանց ընթերցումը մեծապէս ծաւալեալ էր ի Պարակաստան, այդ խառնուրդդ այն ժամանակները եղած ըլլարու էր: Բայց զժուարին է հաւասարական որ Եզեկիայ զրականութիւնը, որքան ալ ծաղկած ըլլար, առանց աշխարհակալութեան օգնութեան կարենար դրացի մեծ տէրութեան մը լիզուն Ծննկէ և զիւր բարբառն նորա պաշտօնական և սրբագան մատենագրութեան լիզուն ընել, մանաւանդ երբ ի յուշ ածեմք՝ որ այդ զրացի տէրութիւնդ Հնուանդ դպրութեանց, կրօնի և սովորութեանց կարգէ գուրս նախանձախնդիր Ասսանեան ինքնակալութիւնն էր:

Արձանագրութեանց քննութենէն կը հետեւի սակայն՝ թէ այդ սեմական արմատոցդ կիրառութիւնը սովիազական չէր. այս է՝ թէ պարսկական և սեմական համանիշք անխտիր կը գործածուէին իւրաքանչեղաղթ ընդ մերթ, բաց ի մի քանի նախգիրներէ, շաղկապներէ և զերանուններէ, որոց պարսկերէնը այնքան քիչ կը հանդիսի՝ որ սոցա ուղղագրութիւնը մինչեւ ցայժմ անստոյդ է: Այսու հանդիրձ բահմակին կերպարանքը որչափ ալ սեմական ըլլայ, անուանց հողովմունքը զարսկական են, ի բաց տեսալ մէկ քանի հնագոյն Ասսանեան (հնագիտաց Քաղզէա-պահականիկ կոչած) արձանագրութիւնքն, որոց մէջ յոդնակի ուղղականի և սեռականի ին վերջաւորութիւնը կը տեսնեմք փոխանակ պարսկական ան վերջահովոյ, օրինակ իմն, «արքայից արքայ» ըսկու համար մալքին մալքա գրուած է. մինչ մեացած արձանագրութեանց մէջ առհասարակ կը գրուի մալքան մալքա, որպէս Եղիշեայ ատենը կ'ըսէին եւս մովսիւտան մովսիւտ: Եղինպէս և սեմական բայցից խոնարհական փոփոխմունքը երանեան են, ի բաց առնելով գարձեալ վերոյիշեալ մէկ քանի հնագոյն արձանագրութիւնքդ յորս այդ փոփոխմունքդ բնաւ նշանակեալ չեն: Այդ մէկ քանի հնագոյն և մեացած համեմատարար նոր արձանագրութեանց մէջ տեսնուած մասնական տարբերութիւնքը եթէ զանց առնեմք, պէտք է ընդունի՝ թէ սոցա ամենուն շարագրութիւնը և խօսից յօրինուածքը երանեան են:

Առաջ կը դնեմք Պերսեպոլեայ աւերակաց մօս Հաճիապատ զիւ-  
ղին մէջ՝ քարանձաւի մը բերանը գտնուած արձանագրութիւն մը  
որ տարրեր պարեխաց վրայ իրարու աննման պահլաւիկ նշանագրոք  
քանդակեալ է: Յայտցանէ վմին Փաղպէա-պահլաւիկ կոչեցին հնա-  
գէտք, որովհետեւ սորս նշանագիրները յոյժ կը նմանին քաղղէա-  
կանին. միւսը սովորական Աստանեան արձանագրութեանց և զրա-  
մոց տառերով փորագրեալ է և քիչ կը տարրերի բահլաւի գրչա-  
գրաց տառերէն: Փաղպէա-պահլաւիկ նշանագիրք 19 են, իսկ Ուա-  
սանեան կոչուածները 18 պարզ և 1 բաղադրեալ, այս վերջնոցս  
շատերը յօյժ նման են հայկական տառից, բայց յաջէ ի ձախ կը  
զրուէին: Երկար ա՛ ձայնուորը, ինչպէս և պ, կ, տ, հ, խ, զ, գ,  
թ, մ, ն, ս, չ, թ բաղադայններն յատուկ նշաններ ունին. վ նը-  
շանագիրը երկար ոչ և թ ալ կը կարգացուի. յ և ի երկար, ինչ-  
պէս և յ և թ, փ և թ մէկմէկ հասարակ նշանագիր ունին: Ուող  
ձայնաւորները չեն զրուիր, ինչպէս արարերենի մէջ: Փաղպէա-պահ-  
լաւիկ նշանագրաց վրայ չկարողացանք տեղեկութիւն մի տալ,  
չունենալով սոցա ըստ բառականի ճշգրիտ օրինակը:

Ասսանեան-Պահլաւիկ. — Պակարանի գենման լի մազտայտն  
Փաղպէա-Պահլաւիկ: — Փարզավանի զէնման լի մազտայտն  
պածի Շամբուհարի, մալքան մալք Այրան ոչ Անիրան, մինօ-  
ալահան Շահիրուհարի, մալքին մալք Արեան վա Անարեան, մինօ-  
շիդրի մին Եսադղան, պարման մազտայտն պակի Այդախշադար  
շիհար մին Եսադղան, պարի մազտայտն ալահան Արդախշադար  
մալքան Այրան, մինօ շիդրի մին Եսադղան, նորի պակի  
մալքին մալք Արեան, մինօ շիհար մին Եսադղան, բուհարի բուհար  
Բարահի մալք, աֆսան ամադ գենման խիրայն շատիցուն  
պակ Բարահ մալք, վա ամադ լանզէնման խիրէրայն շատից  
տափիման լիվինի շադրաստարան վա պարսիդան վա վաշտրան վա  
քատմադան խչադրաստարին պարպիդան բազան վա  
նզադան շատից +. . .  
նզադան շատից +. . .

« Պատուէրս այս է մազգեղն վեհ Շապուհի արքայից արքայի Արեաց և Անարեաց, ծնեալն հոգւով յԱստուծոյ, որգւոյ մազգեղն վեհի Արտաշրի, արքայից արքայի Արեաց, ծնեալն հոգւով յԱստուծոյ, թռախն վեհի Փափազայ արքայի։ Մեք յորժամ զայս նետս արձակեցաք, ի ներկայութեան աշխարհավարաց, զօրագլխաց, աւագաց և ազատաց արձակեցաք » ։ ։ ։

Բայց ինչպէս ձեւացած էր այդպիսի լեզու մը, որոյ բառերը մեծաւ մասամբ սեմական և հիմուածքը կամ քերականութիւնը եւրանեան էր։ Այդ գժուարին խնդիրդ լուծելու ձեռնարկելէ յառաջ հարկաւոր կը դատիմք պահաւիկ զրչազրաց նշանազիրներուն վրայ եւս համառօս տեղեկութիւն մի տալ։ Առք, որք տասն և չորս են թուով, ոչ միայն ամէն սեմական այրութենից հասարակ պակասութիւններն ունին, այլ և ուրիշ թերութիւններ՝ որք պահաւիկ զրութեանց սեփական են։ Շատ տասեր երեք չորս զանազան ձայներ կը բացատրեն, և այդ արդէն շփոթ և անորոշ զիրերը շատ անշպամ խառն ձեւեր կը կազմին՝ որք երբեմն տասն կամ տասնեւհինգ կերպով կրնան կարդացուի, և որոց ձայնը երբեմն պարզ տասի մը ձայնին նման է։ Վասն որոյ երբ բառի մը ճիշդ արտասանութիւնը ուրիշ միջոցներով կարելի չըլլայ հաստատել, սոսկական տառափաց զօրութեամբ ամենազժուարին կ'ըլլայ քակելը։ Այդ ձայնաւորք երբեք չեն զրուիր, ու ընթերցողը ունակութեամբ և ի մոտաց պէտք է աւելցնէ։ ի բաց տոեալ բառից սկիզբը գտնուած ու ձայնաւորը որ միշտ կը զրուի, ինչպէս ամենայն սեմական լեզուաց մէջ :

Այդ սեմական արմատոց ընթերցման եղանակը և նշանակութիւնը զտնելէն բոլորովին յուսահատելու էին հնագէտք, եթէ հին ժամանակաց մէջ յօրինուած չըլլար պահաւերենէ ի բազանտ բառարան մի, յորում մէն մի սեմական բառին առընթեր բազանտ կամ պարսկերէն համանիշը զրուած է։ Այդ բառարանիդ ձեռազիր օրինակաց մեծագոյն մասին մէջ՝ սեմական բառից աւանդական հնշման եղանակն ալ Աւեսդայի՝ երբեմն ալ արաբացի տառերով ցուցուած ըլլալով, այդ կնճոռոս լեզուն կամ զրութեան ձեւը այսօր նիւթական մեծ գժուարութիւն մը չի յարուցաներ ոչ Փարսի և ոչ ալ օտարազգի հնագիտաց, բայց միայն յորժամ աւանդական նշանակութիւնը կամ ընթերցման եղանակը կասկածելի և ստուգութեան կարօտ երեւի։ Բարեբախտաբար եւս Սասանեան արձանացութեանց այրութենքը, որք, ինչպէս ասացինք ի վերոյ, տասն և

ութ տառերէ կը բաղկանան, աւելի որոշ և անշփոթ են քան ձեռապրացը, ուստի այս շնորհիւ մարթ է եւս ճշգել չառ մը դրշագիր բառից հնչումը:

Տարակոյս չկայ ուրեմն, թէ Պարթեւաց օրերը՝ եթէ ոչ աւելի եւս յառաջ՝ Պարսիկը սեմական ազգի մը այրութէնքն առած էին: Այդ Պ. Հաւկ կը կարծէ՝ թէ սեմական նշանապրաց հետ սեմական շատ մը բառերու ամբողջ գրութեան ձեւերն ալ ընդունեցան, և թէպէտ գիտէին, առէ, մէն մի նշանապրաց յատուկ ճայնը ու կըրնային սոքօք ամենայն պարսկերէն բառ գրել, բայց ոտէպ գործածական սեմական բառից ձեւերն գծագրելով, պարսկերէն հոմանիշը կ'արտասանէին: Այդ կարծեօք՝ Ատանեան արձանագրութեանց, գըրամոց և գպրութեանց մէջ տեսնուած սեմական բառերը սոսկ գաղափարագիր կ'ըլլան: Այդ գաղափարագրերը երբէք խիստ շատ եղած ըլլալու չեն, վասն զի մեր ձեռքը հստած բաշլաւի մատենից մէջ նացա թիւր հապիւ հաղ չորս հարիւրի կը հասնի. բայց որովհետեւ ամենէն աւելի գործածելի բառերն են (ի բաց առնելով ըզկրօնական բառերս), բանաւի գրչագրաց մէջ կիսէն աւելի տեղ բոնած են: Ի հաստատութիւն՝ յառաջ կը բերէ Պ. Հաւկ՝ Ամմիանոս Մարկեղինոսի մէկ խօսքը. Կաստանդիան կայսեր և Շավուհ երկրորդի մէջ (350ին) տեղի ունեցած պատերազմին պատմութիւնը ըրած ատենը՝ Հասմայեցի պատմագիրդ կը զրուցէ՝ թէ Պարսիկք ստանասն և Շիրօգին կը կոչէին իւրեանց թագաւորը: Շահանշահ և Պիրոզ (յաղթող) երանեան բառեր են: Ասկէ յայտ է, կը յաւելու Պ. Հաւկ, որ թէպէտ Շապհայ երկրորդի արձանագրութեանց մէջ մարքան մարքա կը յորջորջի նու, Պարսիկք այդ բառերդ Շահանշահ կ'ընթեռնուին, բայց Բիրուզ կը գրէին ու կը հնչէին, որավհետեւ սորա սեմական համանիշը չկար: Ամմիանոսէ 400 տարի յետոյ՝ արարացի մատենագիրն Խան Մուզաֆֆան ալ կ'ըսէ արզարեւ՝ թէ «Պարսիկք հազարի չափ» բառերու համար յատուկ գրութեան ձեւ մի ունին, զոր զավարիչ (ուրիշ գրութեանց մէջ՝ Խազիւրիչ կամ Ճիւզիւրիչ<sup>1)</sup>) կը կոչէն... օրինակ իմն՝ եթէ կօշդ «միս» զրել ուղեն, պիստ կը զրեն՝ բայց կօշդ կ'ընթեռնուն. երբ նաև «հաց» ուղենան զրել,

1. Զավարիչ անունդ ունանը հիւզիւրիչ— զումի, ունանը ալ զիւզարիւրին և հնանալ»  
Աւար ։ Եկառ Ասուրաց բառից ազաւա-

բաննա կը գրեն և նաև կ'արտասանեն<sup>1</sup>: Այն բառերը որ այդպիսի փոփոխութեան չեն կարօտիր, հնչուածին պէս կը գրուին»:

Ուշագրութեան արժանի է եւս՝ որ այժմ Փարսիք բահաւի ձեւ սազիր մը կարդարու տաեննին սեմական բառերը երբէք չեն արտասաներ, այլ սոցա պարսկերէն համանիշը կ'ընթեռնուն, և ասոր համար առաջին գործերնին վերայիշեալ բահաւի ի բազանտ բառ զիրքը թութակի պէս բերնուց սերաելն է: Այսէ պարտ է հետեւցընել՝ թէ այդ սովորութիւնդ ի հնուց անտի աւանդութեամբ մնացած է, և թէ միջնադարեան Պարսիկը ալ նոյնպէս սովոր էին ընելու, վասն դի եթէ այնպէս եղած չըլլար, արարացի նշանագրաց զարծածութեան սկսուած ատենը այդ նշանագրաք պարտէին զրուիլ սեմական բառերը, որով և արդի պարսկերնի մէջ ալ պահուած կը լինէին, մինչ այժմ բնաւ գործածական չեն:

Այդ զարմանալի բայց արժանահաւատու վկայութեանց և իրուգութեանց կարեւորութիւնն ուրանալ կարելի չէ. ուստի հարկ է ընդունիլ՝ թէ Ամմիանոսի և Խանի Մուգաֆֆայի ժամանակի Պարսից՝ որպէս և այժմ Փարսիներուն համար՝ այդ սեմական բառերդ սուկ գաղափարազիր եղած հն<sup>2</sup>: Բայց խնդիր մի կը ծագի յայնժամ, որոյ պարտիմք համոզիլ մեկնութիւն մի տալ, երբ Պ. Հաւկ և Պ. Ուէսդ կը հաստատեն՝ թէ երանեան և սեմական համանիշք հեղինակին կամ օրինակողին ճաշակին կամ քմացը համեմտու շատ անգամ

1. Նուն և կուշդ երանեան՝ իսկ պիւր և շանմա սեմական բառեր են, որ բաղդէարենի և Ասորեսինի մէջ կառ. տես լամ և և: sariâ ի Տէսթուր Հօշանկէի ձամարձի. Old Pahlavi – Pazand Glossary, Bombay, 18 0:

2. Այժմ իսկ ձամանացիք գրութեան մէ մի ունին զր Յօմ կամ ՎԱԿԱՆ կ'անուանեն, և ըստ որում Շնացի բառեր և պարբերութիւններ կը գրեն, ու առող համանիշ ձամոներէն բառերը և պարբերութիւններ կ'արտասանեն: Ասորեստանեայք ևս իրենց բեւեռագրաց մէջ շատ մը Արքան կամ հին Քաղաքացոց լեզուաւ բառեր ի կիր առած են՝ որոց ասորերէնը կը հնէին. և թէ պէտ առոնք ալ կրնացին պրտ աբրաստ բառից ասորերէն համանիշները ձեւ-

կերպել բեւեռագրաք, բայց միջնադարեան Պարսից նման-նա մանաւանդ պրտ վերմինք Ասորեստանեայց հասկելով՝ լաւագոյն սեպեր են սուր լեզուի մը բառեր գծագրել իրրե գաղափարազիրն և անոնց վրայն ընիկ լեզուաւ համանիշներն արտասանել: Ամսուեի աղիւ-սեայ գրատան մէջ գտնուեցաւ նոյն բնքն Ասորեստանեայց շինած բառգիրքը-ճիշդ նման բահաւի-բազանտ բառազրոյն ուրոյ վերայ խօսեցանք-և յորում պրտ գաղափարազիրերուդ իւրաքանչիւրին ձախ կողմը դրուած են բեւեռագրոք՝ սոցա ձայնական ընթերցումը. և աջ կողմը ասորերէն համանիշը: Lenormant<sup>+</sup>, Langue primitive de la Chaldée, 1875, էջ 45 և 31:

անխտիր գործածուած են, երբ յայտ է՝ թէ այդ պահլաւիկ նշանազրօք մարթ էր պարակական բառը զրել, ինչու համար այդքան կնճռոտ ու գժուար եղանակ մը ընսրեցին, ու փոխանակ շխոկէ շխառէ պարակերէնը զրելու, օտար և անձանօթ լեզուի մը բառը կը դազրէին, նորա պարակական համանիչը արտասանելու համար:

Եթէ այդ երկու մեծանուն Հնագիտաց կարծեաց վրայ ներելի ըլլայ մեր կողմանէ ալ խորհրդածութիւն մի յաւելուլ, հիմն առնելով նոյն ինքն Հաւկի՝ Զանտ-բահլաւի բառազրոյն սկիզբը դրու երկար քննադատութիւնը, միանդամայն և նոյն հրատարակութիւնն մէջ Տէսթուր Հօշաննէ Համասրի նսխազրութիւնը, կարելի է պնդել՝ թէ այդ բահլաւին կամ պարթեւարէնը պարակերէն լեզուն չէր որ սեմուկան բառեր ընդուներ էր, այլ Բարելաստանի տառերէնը, որ պարագերով խառնուեր էր պարակերէնի հետ, ինչպէս առիկ քառն երկուն տարի յառաջ Կոստանդնուպոլսոց Հայոց հայերէնը՝ թուրքէրէնի հետ: Թէպէտ մեր հարց խօսած լեզուն շատ տաճկական բառ կը պարունակէր և շարադրութեան ձեւն ալ տաելի թուրքական էր, բայց յաճախ գործածելի անուանք և բայք և այլ մասունք բանի հայերէն էին:

Գիտեմք՝ թէ Աքեմենեան հարսութենէն յառաջ Միջագետաց և բուն Պարսկաստանի տեարք Ասորեստանեայք էին (1230—708 նախ քան դՔրիստո), և թէ սոցա լեզուն ասորերէնը սեմական էր: Այդ հինգ հարիւրամեայ իշխանութիւն ժամանակ՝ ասորերէնը անչուշտ տիրող և պաշտօնական բարբառն էր Միջագետաց: Բայց եօթներորդ գարուն սկիզբը իշխանութիւնը Մարաց և Պարսից անցնելով՝ պարակերէնը պաշտօնական լեզու եղաւ ու ասորերէնը սկսաւ գերաւթեան նշանները կրել ու տակաւ առ տակաւ տիրող լեզուին հետ խառնուիլ: Թէ նոյն ինքն Աքեմենեանց ժամանակը՝ պետութեան մէջ պարակերէնի շափ գործածական ուրիշ մի կամ երկու լեզուներ կային, Պարեհի և Քաներքսենի և նոցա յաջորդաց բեւեռաց զրաց զրեա թէ միշտ երեք լեզուօք զրուած ըլլալն ապացոյց է<sup>1</sup>:

1. Թուկիդիկէս կը պատմէ: թէ Աքեմենացի Արիստիդէս զօրավարը Ասորի ման գետին մօտ Արտավեռն պարսկին հանգիստեր էր, որի Աքեմենց արքային (Երկայինաւեռն Արտաշեսէ) կողմանէ դեռ պահութեամբը է Լակեդեմոն կ'երթար 425 տարի նախ քան դՔրիստոս: Այ-

տափեռն յԱթէնս տարսւեցաւ: տառեւստանեաց լեզուան նամակներ ուներ առ Սպարտացիս ուզգեալ, սրց պարունակութեանը հասու լինելու համար՝ Աթենացիք թարգմանել տուին: զրուած էր ի մէջ այլոց, թէ աբբայից աբբայն չէր հասկցած՝ թէ ինչ կ'ուզեն Լակեդեմոնաւ:

Առդ լեզուաց միզն սեմական ըլլալուն տարակոյս չկայ այսօր։ Եւ որովհետեւ իշխանութիւնը Պարսից ձեռքն էր, բնական էր որ նոցա լեզուն աւելի աղնուական համարուելով՝ արտղ և անխառն ի կիր առնուէր։ ասոր համար է՝ որ Աքեմենսկան սեպածեւ արձանագրութեանց պարակերէն օրինակին մէջ մի միայն երանեան արձանագրներ կը գտնեմք։ Աքեմենսկան հարատութեան մեր Հայկազանց ցեղին հետ Արքելոյի պատերազմու բանալէն ետքը (330 նախ քան գՔրիստո) միջոց մը Ակեւկիացիք և աւելի ետքն ալ Պարթեւէք յաջորդեցին։ Պարթեւէք՝ որ հինգ գարուց չափ տիրապետեցին, ատար եկամուս ազգ մի էին, որք իրենց սեփական ոչ մատենագրութիւն ոչ քաղաքականութիւն ունեցան։ Եւ որովհետեւ Պարսից իրաւոնքը յափշտակեր և զՃիգրոն մայր քաղաք ըրեր էին, չէին յորդորամիտա անարատ պահելու և մեծացնելու պարակական լեզուն, կրօնքը և սովորութիւնքը, մանաւանդ թէ սմենայն պատճառ և շահ ունէին զայն նուաստացնելու և խանգարելու։ վասն որոյ արքունական լեզու ըրին Միջագետաց ուամկական բարբառը՝ որ պարակերէնի հետ խառնուած ասորերէնն էր<sup>1</sup>։ Եւ քանզի հպատակ այլեւայլ ազգաց ինքնօրէնութեանց չէին զպեր և սմենեւին ինամ չէին տաներ զնոսա միացնելու և ի մի ձուլելու, տարակոյս չկոյ որ պարակերէնը շարունակեր էր զուտ և անխառն գործածուիլ բուն Պարսկաստանի կամ Ստահրի նահանգին մէջ։ Յետոյ երբ Արտաշրի առաջնոյ ձեռօք պարսիկ տարրը նորէն աիրող ազգն եղաւ (Քրիս-

տէր, թէ մինչև ցայնժամ իրեն զրկուած գեղանականները իրարէ տարբեր առաջարկութիւններ ըրած էին, և թէ դիսառութիւննին որոշ իմացնելու համար պարտէնն պատգամաւորներ ընկերացնել Արտաֆեռնի։ Գիբբ Դ., զլուխ ՚Յ։

1. Առդ էր ահշուշտ Ազաթանգեղոսի յիշած պարթեարէնը. էջ 594 և 612։ — Bagh, ուստի և մերս «բագին», է բառ բահլաւի և նշանակէ ասասուած, բաժին։ Սորա ածանցը կերեկի Սասանական արձանագրութեանց մէջի պակի ածականն, որ կը թարզմանի «վէճ, դիւցական»։ Գիտելի է սակայն՝ որ Աւեսդայի և Աանըրիտի մէջ ես կայ bagha իբր աստուած և բաժին։ Ծառ վկայութեան դիմու կասսիոսի և չերտղիանու։ Հոռով-

մայեցոց և Պարթեաց մէջ բանակցութիւնը յունարէն կըլլայէն, և որովհետեւ պարթեական արձանագրութիւնն է դըրամոց վերտառքն ալ յունարէն են, հարկ է որ աւագաց մէջ այդ լեզուն բաւական ծաւալած ըլլար։ Ցովսեզոս սակայն իւր պատմութիւննը յունարէն շգրած, զայն ասորերէն լեզուաւ ի գիր էր առեր, իւր բազմաթիւ պարթէ ընթերցողաց համար. յորմէ կընանք հետեցնել՝ թէ նոյն իսկ առաջին դարուն մէջ ասորերէնը կամ քաղցեարէնը գիխաւոր բարբառն էր Պարթեաստանի, որոյ վերջին թագաւորաց գրամոց վերտառութիւննը ալ սեմական են, հաւանօրէն յունարէնին հետզհետէ մոռցուած և անհետացած ըլլալուն համար։

տոսի 226 թուականին), պաշտօնական և գրական լեզուն այդ բահարկան կամ պարթեւարէնը մեաց ժամանակ մը: Այս կարծիքու այնքան աւելի հաւանութիւն կը գտնէ, որ Պարթեւոց մայրաքաղաքը Տիգրանի Սասանեանց ալ թագաւորանիստ սատան եղաւ, վասն զի Եփրատոյ և Տիգրիսի գաշտավայրքն տակուին աւելի կարեւոր մասն էին պետութեան քան Ստահրի կամ Պերսեպոլեայ նահանգը: Սակայն Սասանեանք մոգական օրինաց և պարսկական ոգւոյն զօրութեամբը բարձրացեր ու տապալեր էին զՊարթեւս, ու ամենայն ջանք կ'ընէին նախկին Աքենենեանց իշխանութիւնը և գրութիւնը վերահաստանելու: Հիմայ որ նիւթական ոյժը Պարսից անցեր էր, բնական էր որ բուն Պարսկաստանի մէջ պահուած պարսկերէնն ալ ուրիշ լեզուաց նկատմամբ ազնուանայր ու պաշտօնական բարբառ ըլլար: Ինչպէս և մոգական օրէնքը վանեցին ու չնչեցին Պարթեւոց ատենը մտած յունական զիցապաշտութիւնը և սովորութիւնքը, ինչպէս որ ալ աւելի վերջերս Ֆիրտէվային իւր մեծահաստոր զիցազներգութիւնը չանացեր և յաջողեր էր ի զլուխ հանել՝ առանց զօրծածելու արարական բառեր՝ որք մուտ գտած էին Մահմետականութիւնէ ետքը: Այդ յեղափոխութեանդ կատարումը Արտաշրի և որդւոյն՝ Շապիոյ առաջնոյ պէս երկու ահեղ ինքնակալաց ջանից կարօտ էր, առոր համար է զուցէ՝ որ երրորդ զարուն վերջին տարիներէն կը սկսին արձանագրութիւնք աւելի պարսկական կերպարանք մի առանուլ<sup>1</sup>: Բայց նշանագիրը նոյնը մեացեր էին՝ խառնակ, շփոթ և խրթին, բառ մը՝ աւելի զայն բաղկացնող զրերուն ընդհանուր երբութէն աչաց զարժութեամբ կը կարգացուէր՝ քան իւրաքանչիւր տառին անհատական զօրութեամբ, ինչպէս նուազ սատիճանի մէջ սովոր եմք ընթեռնուլ այսօր թուրքական ձեռագիր շատ բառեր: ու այդ անորոց զրերու կամ նշաններու խմբիկները մէկմէկ զաղափարագիր եղան Պարսից նկատմամբ, մինչ հաւանօրէն զեռ նշանագիր էին անոնց համար՝ որք ազաւալեալ ասորերէնը միայն զիւէին, ինչպէս որ մի եւ նոյն թուանշանք յիւրաքանչիւր ազգէ տարրեր տարրեր կը կարգացուինչ և տագիտակ ասորերէնի նուազելով:

1. Թէպէտ բուն Պարսք նահանգին մէջ զոնուած Սասանեան արձանագրութիւնն բահւաւի են, մարթ է սակայն պնդել՝ թէ այդ գրութեանց սեմական բառերը նոյն իւր Արտաշրի և Շապիոյ:

գոնեա Ստահր գաւառին մէջ. վասն զի դուռարին է հաւատալ՝ որ Պերսեպոլեայ մէջ իսոսուած լեզուն պարսկերէնով խառնուած Միջագետաց ասորերէնն եղած ըլլայ:

այրուրենքն պարսկերենի միայն ծառայեցին, ու գաղափարագիրեն ալ պահուեցան պարսկերէն համանիշը միայն ցուցանելու համար :

Այդ գրութեամբ բահաւի գրութեանց սեմական բառերն Պարթեաց օրերը կը հնչուէին որպէս և գրուած էին. և աւելի վերջերը միայն գաղափարագիր եղան :

## Ե

Ի վերայ ըստնք՝ թէ Փարսիք Աւեսպայի բահաւի թարգմանութեանց զանուանութեամբ կու տան, և թէ այդ թարգմանութեանց վրայ զուտ պարսկերէն լեզուաւ յաւելեալ լուսաբանութեանց ալ բազանա կ'ըսեն : Բազանա անունդ կը տրուի եւս Սասանեանց ժամանակի գրութեանց, երբ սոքա Աւեսպայի և կամ արդի պարսկական նշանագրօք գրուելով՝ ամենեւին սեմական բառեր չպարունակին ու անոնց տեղ պարսկերէն համանիշքն գործածուած ըլլան. միանգամայն և բահաւի գրուածոց այն մասին որ սեմական չէ, ինչպէս և ի մասնաւորի բահաւաւի արմատոց համանիշ պարսկերէն բառից : Արդ՝ բազանա բառերը կը գրաւին բահաւաւի նշանագրօք՝ եթէ պահաւիկ արձանագրութեանց մէջ ընդմիջեալ են, և Աւեսպայի նշանագրօք՝ եթէ ամբողջ գրութիւնդ այդ նշանագրօք գրուած է, ու այն ատեն ձեռագիր օրինակը բազանա կ'ըսուի : Են և բազանա օրինակք այժմեան պարսկական սասուիք գրեալ. սոցա լեզուն ֆիրտէվաիի պարսկերենէն այնու միայն կը տարբերի, որ հնագոյն բառեր և ձեւեր աւելի կը պարտւնակի :

Այդ բազանա կոչուած բարբառն է Այղեշեայ գարուն պարսկերէնը, վասն որոյ մեր սակեզարեան հայերէնը բազանափ հետ շատ աւելի սերտ նմանութիւններ ունի՝ քան արդի պարսկերէնին հետ, երկու լեզուացդ հասարակ եղող անունները, որ այժմեան փարսիի մէջ քիչ շատ հեռացած են հայկական ձեւէն, բազանա գրութեանց մէջ հայերէններէն զրեա թէ ամենեւին չեն տարբերիր. նոյն խակ պարսկական յատուկ անուանք այնպէս հնչուած են, որպէս կը զանենք մեր հինգերորդ գարու հեղինակաց մէջ։ Հայերէնի դիտութիւնը շատ անգամ աւելի նպաստամատոյց կրնայ լինել բահաւի և բազանա գրութիւնները հասկնալու համար՝ քան սպարկերէնի հնագոյն և նորագոյն ձեւերը :

Ահաւասիկ Արտաշրի Ակունոյ նուիրեալ Քարմամաք անուն բահը լաւի՝ մասենէն հասոււած մը՝ որոյ դէմ առ դէմ կը դնենք բազոնու օրինակը ըստ Նէրիօսանկի ուղղագրութեան։ Նօարգիր բառերը սեմական են, վերին տաղը բահբաւի է՝ որպէս զրած էր Արտաշրի, իսկ վարինը կը ցուցանէ՝ թէ ինչպէս կը կարգացուէր ու կը հնչուէր, կամ ինչպէս պէտք էր զրաւիլ՝ եթէ ամբողջապէս պարոկերէն կամ բազանու լինէր։

Բամիլալի. Բարագ ամադաշ նամաք տիտ անտուհքուն յեռկունում,  
Բազմանտ. Բարագ քաշ նամա տիտ անտուհին պուտ,  
ափաշ բազան բասուխօ վալ Արտախշիր քարտ նիրիշդ աիկ, լար լա  
վաշ բա բասուխ օ Արտաշիր քարտ նաւաշդ քու. թօ նէ  
տանաքնիշ քարտ . . . . . վա լար պենաֆշման տանէտ  
տաննիշա քարտ . . . . . թօ քարտ տաննոէ  
աիկ Արտաւան մատամ լի վալաք վա բապետան անշուդա-ի  
քու Արտաւան աւար մէն ու թօ ու վասան մարտում-ի  
տէն ճէչան բաշան գանու վա խայա վա չապուն վա խվասդաք  
անտար ճէչա բա դան ու ճան ու խիր ու դասդա  
քամքաղար բատախշաի աիդու  
քամքարդար բատիշահ հասդւ

Որ թարգմանի. « Փափագ յորժամ զնամակն ետես, մտացոյզ  
եղեւ (անդոչեցաւ), և ի պատասխանի առ Արտաշիր արար զզրու-  
թիւնս զոյս. Դու ոչ խմաստութեամբ զործեցեր... Եւ դու քաջ  
զիտես զի Արտաւան ի վերայ իմ և քու և բազում մարդկան աշ-  
խարհիս, նկատմամբ մարմեյ, հոգւոյ, ընչից և վաստակոց բոնու-  
որ իշխան (բգեաշխ) մի է »։

Դիտելի է՝ թէ բահլաւի օրինակին տիտ, բարտ, նիրիշդ և ոյլ  
բառերը բազանու են, թէպէտեւ դոցա սեմական համանիշներն ու  
կան և այլուր փոխան ոոցա ի կիր առեալ են, ինչպէս խատի  
դունու, վատունու, երդիպունու։

## Զ

Պարսից կրօնական դպրութիւնք չուտ աւելի ընդարձակ ըլլալու էին քան ինչ որ մեզ հասած է: Թէ՛սպոմազս Փիտոցին Քրիստոսէ 300 տարի յառաջ և Զմիւռնացին Հերմիապոս խմաստասէրը 250 տարի յառաջ, ծանօթացուցեր էին զնոսա Հելլենաց: Սոցտ երկոշունց եւս երկասիրութիւնքը կորուսնալ են այժմ. բայց ըստ վկայութեան Պլինեայ<sup>1</sup> Հերմիապոս « Յաղագս մողուց » անուն յատուկ զրութեան մը մէջ զրադաշտական մասենից վարդապետութիւնքը երկարօրէն և մի առ մի բացատրեր ու նոցտ պարունակութիւնը երկու միլիոն տոզի հաներ էր: Ասկէ մարթ է հետեւցնել թէ Հերմիապոս իւր քննութիւնները բնագրաց վրայէն կատարեր էր, քան որոյ իր երկասիրութեանը կորուսոը շատ ցաւալի է: Առ բարացի պատմշի մը՝ Ազուճափիր Աթթավարիի վկայութեան ալ նայելով՝ Զրադաշտական օրէնքն 1200 հորթի կաշւոյ վրայ գրուած էին: Զեռութնիս հասած Տիեզրատ, Այտավիրաֆնամար, Վահանացարի-Տիեզի անուն Աստանեանց ժամանակի բահւափ զրոց և Պարսից յայամաւուրաց՝ թիվայէրաց վկայութէնէն ալ յայտ է՝ թէ Աւելագան կը բաժանէր ի 21 Կարս կամ զիրս+ յորոց գվենայտատն ունինք աժմ ամրող: Կ'երեւի թէ Ետանայք ալ Աթօթ-Եւաշ կոչեալ միւս զիրք մը կը կազմէին: Անացածներէն ալ կան հասուլիսորք, բայց սատնց նիւթոց ցուցակը կամ համոռօսութիւնը զիտեմք վերոյզգրեալ պահւափի զրոց չնորհիւ: Դոցտ նայելով՝ Աւելագայի մէջ պիափ գտնուէին ոչ միայն հաւասար և բարոյականի պատուիրունք, ոյլ և ստեղծագործութեան, աստեղագիտութեան, թժկութեան, աշխարհազրութեան, հաղագործութեան, բուսաբանութեան, փիլիսոփայութեան, աշխարհավարութեան վերաբերեալ մկրունք և վարդապետութիւնք. միով բանիւ՝ նախնի Պարսից ամէն աւեսակ ծանօթութիւնքը և զիտութիւնքը: Բառ Տիեզրափարի, այդ մասենից կրկին օրինակքն Վշտասպեան Պարեհի օրէնի վեր պաշտօնապէս կը պահուէին, մին Պերսեպոլեայ զիւանատան և միւսն ալ հասպիկանի արքունի գանձատան մէջ. թէ առաջինը

Հրոյ ձարակ տուեալ էր յելուզակէն Ազեքսանզրէ՝ հրբ ու քանդեաց գքաղաքամայրն Արեաց, և թէ միւսը նոյն արշաւանաց առենք Յունաց ձեռքն ընկած էր, զոր փոխեցին յիւրեանց գեղուն։ Արտավիրաֆնամաքի մէջ մէկ օրինակ մը միայն կը յիշատակի, որ կը պահուէր ի զրատանն Ատախորի։ Դիւրէն է համաձայնել բահաւէի մատենիցդ տուած տեղեկութիւնքը Դիսորոսի և որիշ հելւեն պատմոզրաց այն խօսքերուն չետ, թէ մեծն Ազեքսանզր՝ զմրիւալ ի գինուց, Թօայիս անուն սիրուհւոյն թելազրութեամբ և ի վրէժ Քսերքսեսի յունական տաճարները կործանելուն, այրեւ տուաւ զմիջնարերդն և զազպարանն Պերսեպոլիս, ինչպէս և Համբազեայ պարսկական գենին վրայօք ըլլած բազմաքնին և մեծաշխատ երկասիրութիւնը, որում վկայէն Պլինիոս, Պլուտարքոս և Դիսոգենէս Լայերտացին, կարծել կու տան մեզ՝ թէ զրադաշտական մատենից ամբողջ օրինակը նորա ձեռքն անցած էր։

Բայց այդ սրբազն զրութեանց մասնական օրինակներ ալ կային այլեւայլ քաղաքաց մէջ՝ զատաւորաց, մոգուց և այլ առանձնականաց քոլ։ Ճինդ հարիւր յիսուն տարւոյ օտարազգի բանակալութիւննէ և մերթ ընդ մերթ անհշանութենէ յետոյ, ահա այդ օրինակներդ ժողովել տուաւ Սասանեանն Արտաշիր։ Եւ թէպէտ նմա կարելի չէր եղած զատա ամբողջապէս հաւաքել, բայց և այնպէս մէն մի նասքի պարունակութեանց և այժմ կորուսեալ զիսոց վրայօք Արտաշրի ժամանակակից հեղինակաց տուած ծանօթութեանց նայելով, պէտք է որ 21 նասքին ալ մեծաւ մասսամբ զանուած ըլլան և յետոյ մահմեստականութեան ատեն ընաշխնչ եղած ըլլան, բաց յայն զրքերէն և հատուածներէն՝ որք ազօթից և կրօնական պաշտամանց կը յարաբերէին, և որոց օրինակներն յոյժ բազմաթիւ էին ժողովրդեան մէջ։ Այն եզաւ Աւեսդայի ինչ որ կ'ըլլար Աստուածաշունչ զրոց՝ եթէ սոցա ժամազրոց և աղօթամատուցաց մէջ անցած մատունքը միայն ունենալիքնէ։

Այդ ահազին մատենազրութիւնդ որ Ազեքսանզրի օրը կար, զննեա Քրիստոսէ 400 ամօք յառաջ ձեւացած և լացած ըլլալու էր։ Կարելի չէ սակայն՝ որ մէկ մարդոյ և մէկ դարու գործն ըլլաց։ Ինչպէս որ ըսինք ի վերոյ, այդ քառն և մէկ զրքէդ Վէնափառար ամբողջ մեղ հասած է։ Ամկայն Փարսիներուն գործածած Աւեսդան Վէնափառարէ զատ ուրիշ զրքեր ալ կը պարունակէ, որք են՝ Ետանա, զոր աւելի ճշգութեամբ Յասնա պարտէինք զրել հայերէն։ Վիսրարատ։ Եթաշդքը կամ նախնի հայկական հնչմամբ Յաշտը։

և կարձ շարականներ և աղօթներ, որք կը կոչին Նիյայիլ, Աֆրին-կան, Լան, Ափրօգան: Յայսցանէ Եասնա և Վիսրարատ առանձին զիրք կը թուին լինել, մեացածները՝ այլեւայլ նառքից բեկորք: Եասնան՝ որ պատաշտական զրոց հնագոյնն է, Զենտ-Աւետայի նկատմամբ այն զիրքն ունի, ինչ զիրք որ բռնած են Մովսիսական մատեանք ընդհանուր Աստուածաշունչ զրոց մէջ, կամ Վետան՝ Պրահմանաց մատենազրութեան մէջ:

## Է

**Եասնա**<sup>1</sup> սոսկ աղօթք՝ նիյայիլ չի նշանակեր, այլ զոհական արարողութեանց շարականներ հանդերձ զոհագործութեամբ: Այդ մազգէական պատարագամասուցիդ հանդիսաւոր ընթերցման առենը կը կատարուին այլեւայլ արարողութիւնք, յորս կը դորժածեն օրհնեալ ջուր (գարորա կամ զուր): տեսակ մը հաց (գարեղի), կոզի, կոթ, միս (միազտա) <sup>2</sup>, Հօմայի և նոնենեւոյ սատք, Հօմայէ քամեալ յոյզ, եզան վարս (վարաս) և սիզաւ կապեալ խորձ մի սասոց, այս է բարսմունք (պարհամա, այժմ պարսօմ): Ասոնք բուլոր նուիրագործութեան գեռ չսկսուած՝ պատրաստ պիտի ըլլան մարմարեայ սեղանոյ մը վրայ դէմ յանդիման ջատկան կոչուած մոխրանոցին <sup>3</sup>:

Եասնայի մէջ եւս երկու գլխաւոր մասունք նշմարելի են. մին՝ կարայը, որք աւելի հնագոյն են և լեզուաւ կը տարբերին մեացած մասէն. միւսն՝ Եասնա և ափրանականիի, այս է « Եասնա ևօթնա զըլմեան », և այլեւայլ Եասնայք, որոց լեզուն Վենտիտատինին նման է, վասն որոյ Կաթայից նկատմամբ՝ ժամանակաւ կրուրագոյն:

Կաթայք կամ « Ա-գօթք » բուն Զրադաշտայ զրութիւնքն են, մինչ մեացեալ Եասնայք՝ ինչպէս և քսան և մէկ Նասքըն՝ նորս աշակերտաց կամ հետագայ դարուց շարազրութիւնք: Կաթայք, յու-

1. Եասնա (հայ. յազումն) կը բազկանաց եագ կամ եաս արմատէ, որ է «ապաշտել աղօթիւք և զոհիք», և հա մամնկէ՛ որով կը կազմուին վերացեալ անուանք, ինչպէս հայերէնի մէջ ունեն վերջաւորութեամբ:

2. Ափրագուա՝ է «յազածոյ միս » եզան կամ զօգու:

3. Ամէն մէհենի կամ Դարբիհէրի մէջ երկու մոխրանոց կայ. մին Տառկան, այս է սովորական կրակ Խլէշնէրանէի (կամ ուն է տան). միւսն Որբաղան կրակ Ատարան կամ Պէհրամ. այս վերջինս Եղիշէի մէջ և Վասմական կրակ և Պուշտահէի մէջ Վասնամ Արա: կոչուած է, և որ կարգէ դուրս ինամօք վառ կը պահուի:

բաց միայն հինգ ձեռուընխո հասած են կաթա Անումակախիղի, կաթա Անչդասակախիղի, Արենդա-Մահենց, վաճու-Խարբեմ, վաճիշչօխիղի, շափեալ և տնատեալ քերթութիւնք են և նմանին յոյժ վետական երգոց։ Յանդ չունին բնաւ. վանկերը միայն կը համրուին, թէպէտ սոցա թիւը ձշդիւ չպաշուիր միշտ, և երբեմ կ'աւելայ կամ կը պակասի։ Առաջին Կաթային կրաքանչիւր տունը կը բազկանայ ի քառասուն և ութ տոից, բաժանեալ յերիս տողս վեշտասանունեայ։ մէն մի տողոյ առաջին եօթներորդ վանկին վերջը կը հանգչի ձայնը, որով երկրորդ անդամը կը մինի իննուսնեան։ Երկրորդ Կաթային մէն մի տունը հինգ տող ունի, և մէն մի տող մետասան ուսու։ Չորրորդին ամէն մէկ տունը երեք տող կամ վեց անդամ կը պարունակէ, իւրաքանչիւր անդամ յեօթն տոից բազկացեալ։ որով վանկերուն համագումար թիւը կ'ըլլայ քառասուն և երկու<sup>1</sup>։

Կաթայից իմաստները փիլիսոփայական և բնազմանցական են։ Զսոսա Զարաթուշդրա լսեր էր, երբ մտօք յափշտակեալ յերկինս՝ հրեշտակաց պար մը կ'երգէր իւր մտաց ականջին։ Իւր յաջորդներն ալ կրեցին Զբագաշտ անունը՝ որ Պարսից քահանայապետաց տիտղոսն եղաւ. բայց աստուածային յայտնութիւնք միայն մեծին Զբագաշտայ չնորդեցան, որոյ սեփական անունն է Արիդամա։ Կաթայից ուշի ուշով ընթերցումը և Աւեսդայի մնացեալ զրոց հետ բազգատութիւն մը բաւական են համոզելու զմեկ՝ թէ նոքա բուն իսկ մեծի մարգարէին գործն են։ Բնազրին ըրած տպաւորութիւնը մարթ է եւս հասաւաել արտաքին ապացոյցներով։ մինչ Զէնո-Աւեսդայի ուրիշ զրոց համար աեղ մի յիշտատկութիւն մը չկայ Զբագաշտայ երկասիրութիւնքն եղած ըլլալնուն, Արօշ Եաշզին մէջ բացորոշ կերպով զրուցուած է՝ թէ Կաթայյք նորա շարադրութիւնն են։ Մինչդեռ մնացեալ զրոց մէջ Զբագաշտ երրորդ գէմքով միշտ կը խօսի կամ կը գործէ, կամ երբեմ ալ իրեւ աստուածացեալ էակ մը կը ներկայանայ. Կաթայից մեջ առաջին դիմօք կը բարսաի ու անձամբ կու զոյ կատարել այն մեծ պաշտօնը որ նմա յանձնուեր էր յերկնուատ։

Արիդամայ մեծ արդիւնքն է մերժել հնդկական բազմաստուած ծութիւնը ու հաւասար միայնոյ Աստուծոյ՝ որ է Անչրամազտա կամ Մազտա, որոյ նշանակն և արարածն է հուրը։

1. Աւեստիսակ մէջ ալ աեղ աեղ վանկէ կը բազկանայ, որը կը բաժանին նշարելի է երկայն հասուածներ որը յերկուս հաւասար մասունս ութավանդ շափեալ են. մէն մի պարբերութիւն 46 կամ շորսունեան։

Ունեն Զբագլաց սրբազնն կրտակին յանդիման կայնած՝ մեծա-  
խոռոչը ակմրի մը կը խօսէր այսպէս.

« Ասացից ձեզ որ աստ ժողովեալքդ էք, զիմաստոն բան Մազ-  
տայ, զիմաստանութիւնս Ահուրայ և զերգս բարի Ոգւոյն, ծշմարտու-  
թիւնք երկնահրաշը, զորս ահա անսանեմզի ի սուրբ բոցոյդ ի վեր զան:

Ի սկզբանէ էին երկուորեակք, ողիք կրկին, որիշ որիշ գորութեամբ, սոքա ևն բարի և չար՝ ի խորհուրդս, ի բանս, և ի գործս, ընտրեցէք զմին յերկողունց յայլցանէ. եղերաւք բարի, ոչ չար:

Երկոքին միացեալ՝ արտօրին (զնիւթական աշխարհս), մին գոյութիւն և միւսն զչգոյութիւն։ Ուրացողաց (դիւապաշտից կամ բազմաստուածից) կեանքն եղիցի դժնեայ. երջանկութիւն՝ բաժին այնորիկ որ հաւասար ճշմարտին Աստուծոյ։

Ոչ կարէք երկուց միանգումայն ծոռայիլ, մինչ ի վարանի կայք, մի ոմն ի զիւաց որուն հետ կը մարտնչիմք, պիտի սպաշտէ զձեղ և շշէ յունկն ձեր խորհուրդս շարս (աքէմ-մանօ<sup>1</sup>), և յայնժամ դեւք կը յարձակին ի վերայ երկոցունց կենաց (Հոգւոյ և մարմնոյ)»:

Զարմանալի է որ գեւ կամ տեփա կոչուածն Պրահմանեան գրոց պաշտելի աստուածքն են, յունական տեռ կամ զեւ և Հայկական «դիք»<sup>2</sup>: Մինչ Զբագաշտ հնդկական աստուածութիւնները կ'իջեցը-ներ ի կարգս այսոց՝ իրեւ ամենայն պղծութեանց և շարեաց պատճառ, Հնդիկը ալ իրենց աստուածոց հակառակող էակները ասուրա<sup>3</sup> կը յորջորջէին:

Անձ կրօնական կոփ մը տեղի ունեցեր էր Արքական երկու ցեղերուն մէջ։ Վենախտատի առաջին երկու զվարդ քննութենէն կը հետեւի՝ թէ Արքի հիւսիսային ցուրտ երկրէ մը արշաւեր էին դէպի հարաւ ու զրուեր զաշխարհն Բէնճապ։ Ոնդ աստանդական կենօք և աւագակութեամբ և հազիւ հազ անօթութենէ չմեռնելու չափ գործելով զերկիր, կ'ապրէին բազում դարեր, այդ վիճակի մէջ կը դանեմք զնոսա Վետայի հնագոյն ժամանակաց մէջ։ Բայց մէջներ

4. Այսկմ-մանօ՝ « շար իմացութեա »,  
վերացական անուն մի կը թուի, որպէս  
Զբագլած կը բացատրէ զգացյութիւն  
պատճառ ամենայն շարի:

2. Գի, սեռական Դիմայ, որ է՝ Դիմուհայից աստվածոց. իսկ ընդհանրապէս ասացեալ գիքը—աւելիս:

3. Առար, յարմէ Առարա, սուրեա, և  
պլին, պատասխանէ ըստ ամենպայնի մե-  
ռումը գոյ, գորեմը, գորաշքիչն բառեա: Առարա

Նշանակէ առ Ներկիս ունազ զօրութեան ,  
գոլով սկզբնականն ա մասն ենթակայա-  
կան . տառըրա ասացին երկնային զօրու-  
թեանց անձնաւորելոց՝ ասուուածացե-  
լոց , և Այսուրա Մազար իսկ՝ յԱսուրա  
ձայնէ : Բայց Երբ զսկզնականն ու ժիստա-  
կան մասն համարեցան , յանմամ միայն  
զատուրա անզօր՝ անսուրք՝ անլոյմ հակա-  
ռակող լուսոյ և ճշմարտութեան՝ իսա-  
ւար . որի շար և հակառակոտ ասադին :

նէն ցեղ մը, որ յետոյ Երանեան կոչեցաւ, ձանձրանալով այդ թառ փառական կենցաղէդ, Բակորիոյ բարձրաւանդակն անցեր, ու թողով զհայրենի խաշնարած բարքը, հոգագործութեամբ սկսեր էր պարապիլ ու հաստատ բնակութիւններ հիմնել։ Այդ անջատումզ անշուշտ մեծ զայրայթ յարուցեր էր երկու ցեղերուն մէջ։ Մինչ Բակորիոյ գաղթականք օրէ օր կը զարգանային բարօրութեամբ և ընչեւք կը ճախանային, Բէնձապ մնացողներուն նախանձը և ագահութիւնը կը գրգռուէր, որք յաջող ասպատակութեամբք և աւտարառութեամբք շարունակ կը վեասէին նորահաստատ գաղթականութեան։ Քաղաքական երկպառակութենէ և ատելութենէ յառաջ երկու, որպէս սովոր է, կրօնական պատակումը։ Արիք՝ որք հետրզէնտէ կը սփուէին ի Հնդկաստան, իրենց յաղթանակները աստուածոց (տէկվայից) օգնութեանը, մանաւանդ Աօմայի զոհագործութեան գաղտնի և զիւթական արարողութեանց կ'ընծայէին, ու նովար կը պարծէին։ Յափշտակութեանց և աւազակութեանց քաջալերիչ և պաշտապան զիքն՝ Բակորիացոց համար չէին կրնար ճշմարիտ աստուած լինել, այլ աւերիչ և ապականարար զեւք։ Վասն որոյ ուրացան և մերժեցին զհայրենի կրօն ու Ահուրայ միայն պաշտօն մատուցին։

Ե՞րբ և որո՞յ ձեռամբ կատարեցաւ այդ մեծ իրողութիւնդ, անշուշտ ոչ մէկ անձի կարտղութիւնը և ոչ ալ միոյ մարգոյ կեանքը բաւական էր։ Առշիանդո կոչուած կրակաքուրմք ահա նոյն ժամանակները փայլեցան։ Նոքա արկին զառաջին հիմունս Ահուրայեան կամ հողագործական կրօնից, որով և անհաշտ թշնամութիւն ընդ մէջ երկուց ցեղից, և պատրաստեցին զնանապարհ վասն Արիդոմայ Զրադաշտայ։ Աորա արդինքը սակայն նուազ չէ ուրիշներէ ետքը գալուն համար։ Կա եղեւ օրէնսդիր երանեան ազգին, շինեաց և կազմեաց զԴինիմազդէզն, խառնելով և ձուելով ի նմանախնի կրակաքրմաց ահուրայեան կրօնը։ Կը ինքն եւս Աօշիանցօներուն կարգէն, որովհետեւ ինչպէս տեսանք, Ահուրամազտայ պատգամները կրակի մէջէն կ'ընդունէր։

Դժուարին է սակայն ճշղել զդարն յորում ապրեցաւ Զրադաշտ։ Վասնթոս Լիւդացին, որ զնա յիշատակող յոյն հեղինակաց երիցագոյնն է (470 տարի յառաջ քան զՔրիստոս), իլիոնի պատերազմէն 600 տարի յառաջ կը դնէ, այս է 1800 տարի նախ քան զթուական Փրկչին։ Բայ Արիստոտելի՝ նոյն պատերազմէն 5000 տարի յառաջ էր։ Փարսիք զնա Դարեհի հօրը Վշտասապայ ժամանակակից կը համարին (521-486)։ Արդարեւ Զրադաշտայ օրերը եղեր էր Փառա Վիշտասարա անուն թագաւոր մը՝ որ նորա քա-

բողոքիւնը ընդուներ էր, բայց կարելի չէ որ այդ Աշխատան  
Դարեհի հայրն ըլլայ<sup>1</sup> : Ազաթիսս յայն պատմագիրն՝ որ Գրիստոսէ  
500 տարի ետքը կը գրէ, կը վկայէ մեզ թէ Աստանեանց ժամա-  
նակն անգամ Պարսիկք չեին կարող որոշելու թէ որ դարու կը  
պատկանէր Զրագաշտ, որա Վշտասր անուն արքայի մը ժամա-  
նակակից ըլլալը կ'երկրորդէին, կ'ըսէ, առանց գիտնալու՝ թէ  
Վշտասպդ Դարեհին էր հայր թէ ուրիշ Վշտասր մը: Բայց որով-  
հեաւ Զրագաշտայ հարազատ գրութիւնքը կամ վարդապետու-  
թիւնքը Հնագոյն մասն են Զէնո-Աւեսպայի, որ արգէն՝ ինչպէս  
տեսանք՝ Գրիստոսէ 400 տարի յառաջ լրացեր էր, և որովհետեւ  
այդպիսի կրօնական մատենագրութեանց կազմութիւնը դարերու  
կը կարօսի, պարտ է զնա զննեա Քրիստոսէ 1000 տարի յառաջ  
դնել, եթէ ոչ մէկ երկու զար եւս հնագոյն:

Այդ պատմական խորհրդածութիւններէդ յետոյ գառնանք վե-  
րըստին Կաթայից քննութեան:

Մազտա կը պատուիրէ Զրագաշտայ մասնաւոր կերպով և կը  
պահանջէ իրրեւ կրօնական պարտաւորութիւն զհողագործութիւն և  
զսկականութիւն ընչից և սասցուածոց:

« Երանին անոր, կ'ըսէ Զրագաշտ ուրիշ Կաթայի մը մէջ, որում  
ԱՀուրամազտա շնորհէ զառողջութիւն և զանմահութիւն. Վասն որոյ  
ազաշեմ զքեզ, իցիւ թէ բարեպաշտութեան հրեշտակիդ՝ Արմափ-  
դիի միջոցաւ տայիր ինձ զերջանկութիւն, զաշմարիտ բարիս և  
զուղիդ միտս:

« Հաւատամ զի զու ես ամենաբարի և ազբիւր լուսոյ վասն  
աշխարհի, ամենայն ոք պիսի ընտրէ զքեզ (հաւատայ ի քեզ) իր-

1. Պիհիստունի արձանագրութեան վեր-  
շնու առւնն ալ կ'եղծանէ այն կարծիքը  
թէ Զրագաշտ ժամանակակից էր Վշտաս-  
պեան Դարեհի: Այդ առնդ բաց ի մէկ  
բառէ Շնջուած է պարսկական մասին մէջ.  
բայց Մարականն ամբողջովին ունի զայն,  
զոր Պ. Oppert այսպէս կը թարգմանէ.  
«Et Darius le roi dit: Par la grâce  
d'Ormazd, j'ai faict une collection de  
textes ailleurs en langue arienne qui  
autrefois n'exista pas. Et j'ai fait  
un texte de l'Abasta, et un com-  
mentaire de l'Abasta, et le Zend et

les traductions. Et ce fut écrit et  
je le promulguai en entier; puis  
je rétablis l'ancien livre dans tous  
les pays, et les peuples le recon-  
nurent ». Տես « Le peuple et la lan-  
gue des Mèdes » par Jules Oppert.  
1879. Էջ 155 և 186: — Դարեհ ու-  
րեմն ըրէր էր ինչ որ իրմէ եօթն ու կէս  
դար ետքը ըրաւ. Արսաշիր Աստանեան.  
ցրուած կրօնական մատեանքը հաւարել,  
կարգադրել, թարգմանել և լուսաբա-  
նել առաւ:

բեւ աղքիւր լուսոյ, զքեզ ովկ Մազտա, ամենաբարերար ոզի, զու արարեր զամենայն իրս ճշմարիսս և զբարիս՝ քո բարի մտացդ զօրութեամբ, և խոստանաս մեզ որ հաւատամք ի քեզ՝ երկայն կեանս:

« Հաւատամ՝ զի զու ես զօրավիզն բարւոյ, քանզի տեսանեմ զի զու ես սկզբնական պատճառ և արարիչ կենդանութեան արարածոց. որ բաշխես վարձս ըստ գործոց և ըստ բանից. տաս զրարին բարւոյ և զշարն չարի »:

Ներկայ ներածութեանս չտալու համար չափազանց ընդարձաւ կութիւն մը որ մեր նպատակին ալ անյարմար կը լինէր, կը վերջացնեմք տաս մեր քաղուածները ու համառօտիւ կ'եղբակացնեմք ըստորեւ կաթայից ընդհանուր վարդապետութիւնը:

Թէպէտ Զբաղաշտայ փիլսովայութեանը մէջ նշմարելի է երակարմատեան զրութիւնը, զոր կը կոչէ « Վոյութիւն և Չգոյութիւն », բայց աստուածաբանութեանը մէջ մէկ Աստուած մը միայն կը ճանաչէ, և բարոյական վարդապետութիւնն ալ կը հիմնէ Խորհրդոյ, Բանի և Գործոյ Երրեակին վրայ<sup>1</sup>:

Նոքա որ իբրամէ անկախ և ընդդիմակաց երկու էութեանց հրանարողը կարծեցին զնա, շփոթեցին նորա աստուածաբանութիւնը փիլսովայութեան հետ: Զբաղաշտ գերագոյն խակին մի և անբաժանելի ըլլալը հաստատելէ յետոյ, ուզեց մեկնել իմաստասիրապէս րնութեան մէջ երեւցած անկատարութիւններն և թերութիւններն, ենթազրելով երկու կամք կամ միտք՝ սկզբնական կրկին պատճառք՝ որք ի միասին ստեղծեցին զամենայն նիւթական և զաննիւթ արարածս: Բարի խորհուրդը՝ վաճառ-Մանօ՝ արար զգոյութիւն՝ իտայա: Զար խորհուրդն՝ Աքեմ-Մանօ՝ արար զգոյութիւն՝ Աքեախի: Ամենայն ինչ որ բարի է, ճշմարիտ և կատարեալ, բարի մտաց զործն է: և որ ինչ չար և խարէական՝ չգոյութեան կը պատիանի ու չար մտաց է ծնունդ: Այս երկուորեակ պատճառքս յաւիտենից անտի անբաժան են յիրերաց և են ամենուրեք, որպէս յԱհուրամազտանոյնպէս և ի մարդիկ:

1. Ամէն երանագէտք համարիս չեն յայսմ ընդ Պ. Հաւկի, որ միասուած ծութեան վարդապետութիւնը կաթայից մէջ որոշ կը կարծէ տեսնել. այլք այդ համագոյն երգոց որուած մեկնութիւնը, և Աւետայի լաւ համեցուած մնացած զրոց վրայ հիմնուելով, մազդէականութիւնը ի սկզբանէ անտի երկարայելի համարելով մինչեւ ցայծը կար մատեան կուզեն համարել:

Երբ այդ կրկին ոկրունքդ նկատուին յԱհուրամազտա, ուշ այս  
չու մանօ և Աքէմ՝ մանօ չեն յորջորջիր, այլ Արենդո-մահնեռչը՝  
«ոգի բարերար», և Անկրո-Մահնեռչը՝ «ոգի վեստակար»:

Բայց Անկրո-Մահնեռչը դարձեալ որիշ և ընդդիմակաց էակ  
մի չեր, ինչպէս որ յայտնի կ'երեւայ ԺԹ Ետանացի թո տնէն, յո-  
րում Ահարամազտա կ'ըսէ.

«Իմ երկու ոգւոց մին՝ որ աւելի բարերարն է, բարբառելով  
զԱհուրա-վախրէա<sup>2</sup> արար զհամօրէն ուզիղ և բարի արարչութիւ-  
նը»... Ուրիշ տեղ մի այդ կրկին ոգիքդ կոչուած են «երկու  
արարիչն», երկու տեարքն» (բայց):

Արդարեւ Կաթայից մէջ տեղ մը չենք տեսներ զԱնկրո-Մահնեռչը  
իրրեւ մշտնջենաւոր հակառակորդ Մազտայի, որպէս կը ներկայացը-  
նեն մեզ յետազայ մատեանք: Չարը, որոյ գէմ կը կռուին Ահուրա-  
մազտա և ամենայն արգար մարդիկ, արուշաչ<sup>3</sup> կոչեալ է, որ սոսկ  
ամենաորութիւն մի է Տէվայից կամ Դիւաց, և որ թարգմանի  
«սոսութիւն» և «աւերումն»:

Ինչ որ բնութեան մէջ պայծառ՝ բարի և օգտակար է, Արէնդո-  
մահնեռչը արար զայն, և որ ինչ մթին և վեստակար՝ Անկրո-մահ-  
նեռչը կը վերաբերի: Առաջինը սահեղեց զրյա տուրնջեան և եր-  
կրորդը զիստար գիշերոյ. մին կը զարթուցանէ ի զործ և յաշխա-  
սութիւն, միւսն կը թմրեցնէ յանգործութիւն և ի քուն: Արէնդո-  
մահնեռչ է պարգեւիչ կենաց, զարս Անկրո-մահնեռչը կը զրաւէ,  
բայց զրաւելով կը խորառակէ հոգւոյն շղթայներն և զայն կը բարձ-  
րացնէ ի կեսնա յաւիտենականնա:

Երբ մոտածենք թէ Զրագաշտ այնպիսի հին ժամանակի մը մէջ  
տաղրեր էր, յորում Հելլենք տակաւին և ոչ իսկ սկսեր էին պարտ-  
պելու բնազանցական գիտութեամբք պարտիմք խոստովանե՛ թէ  
արդարեւ իր ժամանակակիցներէն՝ ինչպէս և հետազայ դարուց մէջ

1. Ահաւասիկ Եղնկաց տուած մեկ-  
նութիւնը. «Այլ թէ Արէնն շար կար-  
ծիցի նոցա, վասն զիստամանի անունն  
յանձնն կրելոյ՝ առ ի յարեւ զարեգակ-  
նատենչիկն արկանելոյ, ուստի և զա-  
նունն իսկ զիստամանոյ էաւ»:

2. Ահութա Վահրա կամ Հօնօվար ա-  
զօթքն կոչուած է և բանն և մասն Ա-  
հուրամազտայ», և էր բանս այս յառաջ  
քան զարարածն և քան զգես: Ասկէ  
զատ կան ուրիշ երկու կարճառօտ ա-

զօթներ՝ Աշեմ-Աօնչ և Եթէ-հատամ:  
զոցա երեքին ձեւերն ալ Ահուրամազտա  
ուսուցեր էր Զրագաշտայ. ամենասուրը  
են սորա, յոյժ հոգեշահ և ազգու: Փար-  
սիք այդ ազօթներդ կը զրուցեն ոչ միայն  
պաշտամանց ատեն, այլ և որուան այլ  
և այլ զործոց մէջ:

3. Բահլաւի զրութեանց մէջ այդ ա-  
նուանդ ձեն և տրուժ՝ որ նոյն և ընդ  
հայկական «գրուժ» բառի:

սպայծառացող հօյսակատ անձերէ՝ դեր ի վերոյ գոնուեր էր, և թէ ըստ ամենայնի արժանի էր այն մեծ համբաւոյն զոր ուներ առ նախնի Հելլենու և Հոովմայեցիս:

ԵՌերեի թէ Զրադաշտայ վարդապետութիւնքը մինչև Վշտառապետն Գարեհնի օրերը (516 տարի նախ քան գՔրիստոս) քիչ շատ անխառն մնացեր էին, որովհետեւ Պիհիսդունի արձանագրութեանց մէջ<sup>1</sup> Գարեհն, որ զիւր ամենայն յաջողութիւնս և զյաղթութիւնս Արտամազայ կը ընծայէ և որոյ անունը եօթանանէ աւելի անգամ կը յիշատակէ, որիշ աստուածոց խոսքը շըներ, և ոչ իսկ Արհմիկամ Անկրօ-մահնեռչի: Փոխան սորա այդ արձանագրութեանց մէջ ևս կը գտնեմք տրուիչ անունդ:

Բայց Զրադաշտայ վարդապետութիւնը տակաւ առ տակաւ կորոյ իւր պարզութիւնը: Կորա աշակերտքը Ժողովրդեան սրտերուն մէջ արմտացեալ հինաւուրց դիցապաշտական զգացմանց և աւանդութեանց զիշումներ ընելու տոփառուեցան: Զրադաշտայ բնագանցական և վերացեալ գաղափարները թիւրիմացութեամբք կամ ծուռ մեկնութեամբք անձնաւորութիւնն առին, և Մաղտայի այլ և այլ յատկութիւնքը մէկ մէկ հրեշտակապետ եղան:

Այսպէս զերագոյն Լամին արարշագործ կրկին մոսունքն՝ որք յար ի նու միացեալ էին, անջատեցան յիբերաց: Արէնդօ-մահնեռչ նոյն ինքն ԱՀուրամազտայ անունն եղաւ, յորմէ Անկրօ-մահնեռչ բամնուելով՝ նորա նախանձորդ և սոսին համարեցաւ, ասունկով ձեւացաւ Ահտուծոյ և Գիւի երկարմատեան վարդապետութիւնը: Այդ իրարմէ անկատ կրկին Գերագոյն Լամկաց զործն էր իրերաց արարշագործութիւնքը խանգարել կամ խորտակել և անդագար մարտնչվի: Երկու Անձանց ինքնուրյունութիւնը գաղափարաց մէջ հաստատուելէ ետքը, աշխարհային թագաւորաց նման իւրաքանչիւրը խորհրդականներ կամ պաշտօնեայներ ունեցան: Մէն մի Տէր վեց պաշտօնեայս ունէր որք վարէին իրապէս զտիեզերս՝ իւրեանց առաջնորդին որոշած սահմանին մէջ: Ահուրամազտայ կամ Արենդօ-Մահնեռչի՝ երկնային ժողովոյ նախագահելէ աւելի զործ մը չմնաց: Շատ անգամ սա՝ միւս խորհրդականաց կարզը և իրքե համհարզ նոցա կը յիշատակի. և յայնժամ ամենուն մէկուեղ «Եօթն

1. Այս ահազին արձանագրութիւնս ի բարելոնէ յիշկատան գնացող համապարհն ու նախին Արամատանի սահմանացը վրայ 1700 սահմաչափ բարձր ապառաժի մը վրայ գետնէն 300 սահմա-

շափ տեղ բռնած է՝ բեւեռագիր և երեւ լեզուեան, յորոց մին՝ հին պարսկերէն կատարեալ սատուգութեամբ կը կարդացուի այժմ, երկրորդն՝ Ահեգաց լեզուաւ, երրորդն՝ Ասորելէն:

Ամշասրէնդայք (այժմ՝ կրօնատելով՝ Ամշասրանոք) անունը կը տրուի,  
որ թարգմանի «անմահ բարերարք»<sup>1</sup>:

Ահուրամազոսյ խորհրդականաց անուանքն՝ Վահու-Մանօ, Ա-  
շավահշտա, Խչաթրա-Վահրեա, Սրէնդա-Արմափիդի, Հաւրվագատ  
և Ամրդատ, ստէպ կը հանդիպին Կաթայից մէջ։ բայց ինչպէս  
որ այդ գրութեանց ընթերցմանէն և բառական ստուգաբանութենէ  
յայտնի է, սոքա իրրե վերացեալ գաղափարներ և իրրե հստարակ  
անուանք ի կիր առեալ են անգ, և նշանակեն սոսկապէս այն բա-  
րեմասնութիւնքը և պարգևները՝ զորս կը չնորչէ Ահուրամազոս  
այնոցիկ՝ որք ուղիղ սրտով, ճշմարիտ բանիք և բարի գործովք կը  
պաշտեն զնա:

Վահու-Մանօ (Պահման) «Բարի միաք»<sup>2</sup>, համայն բարի արար-  
չութեան կենդանարար ողին է։ Ի սկզբան Ահուրամազոսյ բարի  
միտքը միայն կը նշանակէր զոր նախ քան զամենայն սուեղծեր էր,  
վասն որոյ Ահուրամազոսյ Վահու-Մանօյի հայր կը կոչի։ Կովաւ  
Ահուրա արար ի սկզբանէ զտիեզերս, զդէն և զկենդանի արարածո,  
և անոր խորհրդով կը շարժի յամենայն զործու իւր։ Կա համօրէն  
կենդանի արարածոց կը ներշնչէ, և ամենայն բարի խորհուրդք՝  
բանք և զործք ի նմանէ եւանձն:

Աշա- Վահիշտա (Այսավահիշտ)<sup>3</sup> կը ներկայացնէ զհուր գերա-  
զոյն, զարփիս լուսալիր և ամենայն տեսակ փայլ և պայծառու-  
թիւն։ Ջառ (յոզնակի աշկուի) նշանակէ սրբութիւն, ուղղութիւն, ար-  
դարութիւն, ճշմարտութիւն, իսկ Վահիշտա՝ ի սկզբան «սքանչելի»,  
«գեղեցիկ», և վերջերս աւելի ընդարձակ սումամբ «գերտզոյն»։  
Եւ որովհետեւ լոյսը Ահուրամազոսյ ընութիւնն է, և բոլոր արար-  
չութիւնը լուսով լցուած է, Աշավահիշտա՝ Արտուծոյ ամենուրեք  
ներկայութիւնը կը ցուցնէ։ Եւ ինչպէս որ լոյսը ոյժ և աճումն  
կու տայ կենդանի և անկենդան արարածոց, այսովէս ալ Աշավահիշ-  
տա կենաց և ամենայն բարույ պահապանն է համարեալ։

Խշադրա-Վահրեա (Շաձրիմար), ոգի բարի «աշխարհավարու-  
թեան»։ իշխէ ի վերայ մետաղաց, և է պարգևիչ հարասութեան։

1. Եպիսկոպոսաց պատասխանւոյն մէջ  
յիշեալ եօթն աստուածքն ահա այդ եօթն  
ամշասրանտքն են, այս է Ահուրամազոս  
կամ Որմիզդ և իւր վեց խորհրդականքը։  
Բայց ինչպէս որ պիտի տեսնենք սոս-  
րե, վերջերս Միհր և Անահին դիք ալ  
սոցա աստիճանին բարձրացան. վասն

որոյ Միհրի համար և համհարզ քաջ  
Եզօմներորդացն աստուածոց ըսուած է.  
Եզէկէ, թ. 44:

2. Լծորդ ժուրի մեզ հայերէն ածա-  
կանն է Բարեմյոն։

3. Արոր կրնառեալ ձեն է անշուշտ  
և Արտաւազդ յատուկ անունը։

Արենդա-Այսմահղի (Արենդատարմատ կամ Խաֆենտարմատ) «բարերարն Արմայիղի», կը ներկայացաւնէ զերկիր<sup>1</sup>: Բայց Արմահղի կը նշանակէ ևս «բարեպաշտութիւն», «հուռթիւն», և յոյնժամ կը ներկայացունէ Ահարսումագատայ ճշմարիտ երկրպագուաց բարեպաշտ և հուռ սիրտը: Երբ «երկրի» իմաստով առնուի, ծառայ է մարդոյ, որ եթէ լու խնամուի, այս է մշակուի, առատ կերտելուր կու տայ նմա: Վետայից մէջ՝ Արամահղի իգական ոգի մի է և անդ ևս երկու նշանակութիւն ունի: Այս բարեպաշտութիւն, հպատակութիւն, Բ, Երկիր: Կարարագրի իրրեւ աղջիկ մի՝ որ առաւօտ իրիկուն կողի կը մատակարարէ Ակնի դից:

Հաւրվադադ և Ամրդատ, (Խօրտատ և Ամարտատ) կ'իշխան ի վերայ բաւոց և կը գոյացնեն ոմէն կարգի պատուղները: Հաւրվադատ է «լուռթիւն, տուղութիւն»: և Ամրդատ «անմահութիւն»: Երկոքին ի միասին կը յիշատակին: վասն որոյ և յօդուածոյ գտափար մի կը յայտնեն:

Երկնային ժողովականներէդ զատ Արաօշա անուն հրեշտակապետ մի կայ, որ Կաթայից մէջ ոչ իրրեւ վերացեալ գաղափար մը կը ներկայանայ որպէս Աշշարանագին, այլ իրրեւ գոյութիւն ունեցող էակ մը: Այս է միջնորդ ընդ Ահարսումագատա և ընդ մարդիկ: աւագ ուսուցիչ վեհի կրօնին (վեհ-տէն, պահ-տին), որ և հրահանգեաց զջրադաշտ: Այս կը զատէ զգործու մարդոյ յետ մտհու և կ'անձնաւորէ զիրօնական պաշտամունս, զազօթս և զոհից արարողութիւնս: Երբ տաեն զնմանէ թէ կը պահէ զտիեզերս, և թէ առանց նորա՝ աշխարհս զիւաց ձեռքը կը մատնի, իմանալի է թէ պարտ է յազօթս կալ, ապա թէ ոչ՝ բարի խորհուրդը՝ Վանչ-Մանօ՝ կը տկարանայ ի մարդիկ, և չարն Արեն-Մանօ կը զօրանայ, յորդորելով զնոսա ի մեղս և յօնիրս, որով կը կորսուին թէ այս աշխարհիս մէջ և թէ ի հանդերձելումն: Երբ ըսուի թէ Արօշ կը կռուի Տէվայից հետ, իմա՞ Զրադաշտական պաշտամունք կը չնչին զիւաց վասաները:

Ահարսումագատայ պէս Անկրօ-Մախնեռւ զիւապետն ալ (Ճակալնամ Ճակալ, «Դիւաց Դիւ») ունէր զիւր վեց պաշտօնեայս, որք թէպէտ Զէնտ-Աւեսդայի մէջ յիշատակեալ չեն, բայց Պունտահշիդի

1. Առաջի հայ, «ապանդաբանեաւ»: Հէ, Երկիր պանդոկի՝ ապանդաբանեաւ առտուած է: Թուվմա Արծրունի, էջ 27: և յիսույ երկրորդ բազաձաննն թօմափելում՝ «Ապանդաբանեաւ», խոր Երկրի: սոսրեր-

կրեայ վայրք, Այս վերջինս այլ փոխեցաւ ի ապանդաբան, իրրեւ համառատութիւն և ապանդաբանեավետի: բայց սոսկ սոնդոր չիք ի հայերէն և ոչ յայլ լեզու: և նշանակութիւն ալ շունի:

մէջ կարգաւ դրուած են: Գոցտ առաջինն էր Արեմ-մահո, որ ինչպէս տեսանք, Զրադաշտայ վիլխասփայութեան երկրորդ ոգին է: ուս կը ներշնչէ մարզկան զխորհուրդն շարս, բարբառել տայ նոցա զատութիւն և յորդորէ ի մեզ: «Եորա ազգեցութիւնը կոտրողն է Վանա-Մաս: Բ, ինտրա, որ Վետայեան տառուածոց գիշաւորն էր, սատ մի է ի զիւապետաց և իշխէ մըրկաց և փոթորկաց: Կըրորդն Մարտ և չորրորդն Նաօննափրիյա՝ Հնդկաց Շելտ և Աշվին առատուածներն են: Ե, Գարիք՝ զիւապետ Խաւարի, և Զ, Գարիք իշխան և յորդարարող թիւնից:

Զէնա-Վէեսուայի մէջ կան շատ մը ուրիշ զիւաց անուններ որք մոլութեանց անձնաւորութիւնք են: այսպէս Ակչնան նշանակէ «բարկութիւն», «յափշտակութիւն», «յարձակութիւն», ուստի մերն Հեշմակ, և արզի պրակի, խիշմ. Տրիվիչ, «ազքատութիւն» (տրուպ). Ցախիվչ՝ «դաւ, խարեւութիւն», և այլն: Մինչ երկնային կաճառը շարունակ միջոցներ կը խորհի զիւանս զարգացնելու և ճշմորտութիւնը տարածելու համար, զժոխային ջողիբը նորանոր մեքենայներ կը դաւազըէ զիւանս խորտակելու և զատութիւն և զիարէութիւն աճեցրնելու համար:

Եօթնազիւեան Աւաննեայք, զորս Կաթայներէն ետքը ամենէն հին զրութիւն պարտ է համարել, աղօթներ են նուիրեալ ոչ միայն Ահուրամազուայ, այլ և Ամշասրաննոից, Ֆրազաշիներու՝ այս է Նրեշտակաց, Կրակի, Երկրի, շատ մը իգական Ոգւոց (որք կենա կոչեալ են, հայ. «կին»), Զուրց, արարշութեան ներշնչող Ոգւոյն և ամենայն բարի արարածոց: Բայց այս Աւաննայից մէջ տակաւին չենք գտներ պաշտաման յիշաստակութիւն կամ ապացոյց մը՝ ոչ վեց Աղանակաց տարւոյ, ոչ օրուան հինգ բաժանմանց կամ պահուց, ոչ Զրադաշտայ, ոչ բարամանց և ոչ խոկ սրբազն օշարակին Հօմայի, որոց համար յատուկ պաշտօն և աղօթու կը պատուիրեն աւելի յետազայ մատեանք: Ահաւասիկ մի քանի հատուածք յԱւաննայից 1:

«Պաշտեմք (եազամայտէ, բառ մը զոր չենք տեսներ կաթայից մէջ) զԱհուրամնոպտա, զարդար Տէրն արդարութեան, պաշտեմք զԱհամարանսո զպահպանիչս և զտուիչս բարւոյ, պաշտեմք և զհամօրէն արարածս արդար ոգւոյն, զնիւթականն և զաննիւթն, և զամենայն որ կը նպաստէ բարի արարշութեան և ծաւալէ զմազդեղն բարի կրօն:

«Պաշտեմք զԱհուրամազտա հոգւով և մարմինով իբրև հողիք (Փրաւաչիք) արդար արանց և կանանց »:

ԺԲ Եսանան դաւանութիւն մը կը պարունակէ, որ կը պահանչուէր յայլադենից՝ երբ մազգէականութիւնը ընդունէին և հրաժարէին յաստանդական կենաց:

«Զեմ այսուչետե ջեվա (զիցապաշտ)։ Խոսառվանիմ զանձն իմ զրագաշտական մազույան (մազդեզն՝ որ ըսել է Որմդդապաշտ), թշնամի դիւաց, երկիւղած յԱհուրայ, պաշտող և գոհաբանող անմահ բարերարաց (ամշասրանտից): Ամենայն որ բարի է՝ յԱհուրամազտաց ելանէ, և նա է բարի, արդար, պայծառ, ամենափառ և սկզբնապատճառ ամենայն բարեաց, ոգւոյն բնութեան (կաւչ), արդարութեան, լուսաւորաց և ինքնափայլ լուսոյն աստեղաց:

«Ծարեմ զբարերարն Ազմափդի, և գարշիմ յամենայն նենդութենէ և յամենայն վեստուց ընդդէմ ոգւոյ երկրի, և յամենայն չարագործութենէ ընդդէմ կայենից մազգեզանց:

«Կը թողում որ այս աշխարհիս բարի կենդանեաց (կով, ոչխարհն) մէջ բնակող բարի ողիք աղատ թափառին ուր և կամին: Կ'օրհնեմ զնուիրեալսն ազօթիւք վասն աճման և զարգացման կենդանութեան...

«Հրաժարիմ ի դիւաց պրծոց . . . Հրաժարիմ ի կախորդաց. Հրաժարիմ խորհրդով, բանիւ և գործով:

«Որպէս Զբագաշտ հրաժարեցաւ ի դիւաց, յորժամ խօսէր և տեսակցէր ընդ յԱհուրամազտայ, նոյնպէս և ես Հրաժարիմ ի դիւաց, որպէս արդարն Զբագաշտ:

«Որ կողմն են ջուրք, ծառք, բնութեան կենդանաբար ոգին, որ կողմն է Ահուրամազտա որ ստեղծեց զայր ոգին և զայր արդար, որ կողմն էին Զբագաշտ, Քաւառ Վիշտասրա, Ֆրաշօշդրա և ձաւմարտութեան, նոյն կողմէ և դաւանութենէ եմ և ես:

«Ես եմ մազգեզն. զրագաշտական մազգեզն. զաւանիմ զգէնս զույր՝ բարձրացուցանելով զնա գեր ի վեր քան զայր համօրէն: Գուվեմ զիսրհուրդ բարի, զբան բարի և զգործ բարի:

«Գովեմ զմազգեզն հաւասար և զարդար եղբայրակցութիւնն զոր հաստատէ նա և պահպանէ ընդդէմ թշնամիաց. զրագաշտական և յԱհուրայի կը ոնքը՝ որ վեհագոյն, լաւագոյն և գերաբաստիկ է քան զայրն ամենայն որք են կամ լինելոց են»<sup>1)</sup>:

1. Դիտողութեան արժանի է՝ որ յԱհուրայի մէջ աֆրիկամին՝ հայերէն «աւրհաւել» բայց բայց նման, նշանակէ «զովարաւեսպայ» մէջ աֆրիկամին՝ հայերէն «աւրհաւել» բայց միանգամայն և «անիծանել»:

Ուակայն մազգեղն քահանայապետք հետղհետէ նորանոր արաւ բողութիւններ և վարդապետութիւններ փոխ առին ի նախնի բազմատուածութիւնէն՝ զոր տապալեր էր Զբագաշտ, բայց տակաւին հեշտալուր էին ժաղավրդեան իրբե հայրենաւանդ կամ առաջին կրօնք՝ Բաօփրեա-արակ:

Այսպէս՝ զոհագործութիւնք վերահասաւատեցան, և հնդկական զլաւոր Աօմա օշարակին տեղ անվասս և կազզուրիչ ըմպելիք մը՝ (Հօմա) զրուեցու, որ երանեան լեզուաց յատուկ տառագարձութեամբ՝ միւսոյն անունը կրեց: Պիտի մանաց թուրատաշա կոչեալ սրբազան պաքսիմաթին տեղը նուիրագործեալ հաց մը (Տարուն) հաստատեցին:

Իններորդ և տասներորդ Եսանայք նուիրեալ են Հօմայի: Այդ անունդ Զէնտ-Աւեսդայի մէջ երկու իմաստ ունի. մերթ նշանակէ Պարսկասասանի յատուկ՝ գեղին ծաղկով բուսոյ մը ճիւղերն, որոց ճիւթը կը քամեն և կը խմեն յանդիման կրակի, մերթ Ոչի մը՝ որ իւր կեանքը և զօրութիւնը զրեր է եղեր այդ բուսոյն մէջ: Հին ժամանակները խիստ շատ աւելորդապաշտութիւններ եղած են Հօմայի նկատմամբ՝ զոր ամենայն հիւանդութեանց և ախտից բուժիչ կը համորէին. ուստի և մտած ըլլարու է այն հաւատքը՝ թէ Հօմայի արարողութիւնը (որ յայտ նման է Պիտի մանաց Աօմայինին), խիստ օգտաւէտ զործ մի է թէ հոգեւորապէս և թէ մարմարէս: Փարսկք այդ ճիւղերդ բերել կու տան այժմ՝ ի Պարսկասասանէ ու վրան աղօթներ կատարելով՝ մետաղեայ հաւանի մը մէջ (Հաւանա) կը զնին նոնեննոյ ուստի մը հետ, ու կը զնմին զնոսա սանդիտուամբ (տասդ՝ զասդա). յետոյ ջուր լեցնելով՝ հոյզը կ'առնուն, զոր ինն սորով պարզուաէ մը (տասդա ևս սուրաբ) անցնելէ ետքը, նուիրաւ զործող քահանայից (զասդա) մին կրակին ցուցանելով գեղնագոյն և չարահամ ըմպելիքդ, կը ճաշակէ փոքր ինչ և ապա թակոյկի մը մէջ կը պարտէ: Չոր ճիւղերուն ճամուելովը թէպէտ և Հօմա տառուածն կը սպաննուէր, բայց հօմա բայսը կ'անէր ու կը զօրանայր, և ամէն մի նուիրագործութեան բաւական էր հազար գեւս խորտակելու:

Հօմայի առաջին պատրաստողն եղեր էր Վիւանհօ, որում այդ նշանաւոր զործոյն փոխսրէն չնորհուեր էր յերկնուսա Եիմա-Խըշակա (Ճէմշիտ) անուն զաւակ մը: Այսա թագաւորութեան օրերը մահ չկար ոչ մարդոց համար և ոչ ալ անասնոց: ոչ բայսք ցամաքէին և ոչ ջուրք պակասէին: հարք և որդիք հնգետասանամեայ պատանոյ կերպարանօք կը ճեմէին:

Երկրորդ պատրաստողն Ագւիյա՝ հայր եղեւ Թրաէզօնա (հայ. Հռուգեն) անոն դիցավին, որ սատակեաց զօձն (ազճի) Տահագա՛ վիշապ երեքգլխի սոսկավիթիսար, զոր Անկրօ-Մահնեուշ ստեղծեր էր ու ի քանդել և ապականել զիայանս արդարոց (կաէթա):

Երկրորդ պատրաստողն Թրիդա ի Սամասեան տոհմէ՝ երկուորեակ մը ունեցեր էր, յորոց մին Ուրւախչայա արդարակորով դատաւոր եղած էր, միւսն Գերեզմարա՛ զիւցազն պատանի՛ սպաններ էր զիւշապն Արուարա, որոյ վրայէն բազկի հաստութեամբ զեղնագոյն թոյն մը կը ժայթքէր, և որ կը լափէր ու կլանէր զժխան և զմարդիկ:

Չորրորդ պատրաստողն եղեր էր Բուրուշ ապար՝ հայր Զրադաշտայ, որ առաջինն զրուցեր էր չորիցս Անումա-Ափահրա կոչեալ ու զօթքը, կանկ առնելով խրաքանչիւր տաղին վերջը, և զօրացնելով զժայն իւր մէն մի կրկնութեան: Զրադաշտ երկրին յատակը վաներ էր զդեւո՛ որք մինչեւ իւր տաենը մարդկան կերպարանօք աշխարհիս վրայ կը յածէին:

Հօման կու առայ զիտութիւն, կորով, յաղթութիւն, առողջութիւն, բժշկութիւն, աճումն և բեղմնաւորութիւն մտաց և մարմնոյ համայն արարածոց. կը վանէ զմահ ու կը չնորհէ ամուսին՝ սպասող աղջկանց:

Այդ հատուածներէզ հարկ է հետեցնե՛թէ թէ Զրադաշտ չէր կրրնար լոելեայն անցնել այնքան կարեւոր արարողութեան և վարդաշտեան մը վրայ՝ եթէ իւր ժամանակը եղած ըլլար: Ըստ յետնոց՝ Զրադաշտ ընդուներ էր զայն: Բայց որովհետեւ Կաթայից մէջ՝ ինչպէս Անահայ, Միհրի, Ամասիանտից և Բարսմանց, նոյնպէս ալ Հօմայի բնաւ յիշտատկութիւն չկայ, մանաւանդ թէ չնդկական Աօման խստիւ կը գատապարտուի, կարծուած է իրաւմամբ ի հնաւ զիտաց՝ թէ նո մերժուծ ըլլալու է զայն, և թէ այդ աւելորդապաշտութիւնդ իրմէ ետքը մուտ գտած է մազդէականութեան մէջ: Զարմանալի է ստկայն՝ որ Հօմայի վարդապետութիւնը, որ այնքան մեծ տեղ մը բռնած է յԱւեսգա, որպէս և Աստանեանց ժամանակի կրօնական զրուածոց մէջ, և որ մինչեւ ցայժմ կարգէ դուրս յարդութեամբ կը պահուի ի Փարսիներէ, բնաւ յիշուած չըլլայ ի հայ մատենագրաց:

ԺԹ Եսանան նուիրեալ է Ամազեպանց ամենէն սրբազան և հրաշագործ աղօթից, որ է Ահունա-վայրեա, բաղկացեալ երեք տողէ և ի քան և մէկ բառից<sup>1</sup>: Այդ շափեալ աղօթքդ է բանն Ահուրա-

1. Այս բառերս Աւետայ քան և եղան, որովք և կը յորջորջին մինչեւ նուցերուն միումը միումը անունն ցայժմ:

մազուայ, որ բարբառեր էր զայն մինչ չե էին երկինք և երկիր, և ոչ խի հուրն՝ որդի Ահուրայ, և ոչ այլ ինչ բնաւ։ Սորա միանգամ և անտխալ զրուցուիլը՝ Կաթաներէն միոյն հարիւր անգամ ծայրէ ի ծայր զրուցելուն հաւասար է։ Ախալով զրուցելն ալ տասն Կաթայից շափ արդիւնաւոր է։ Ահուրամազան կը խոստանայ Զբաղաշտայ՝ թէ որ ոք Անունա-վախեայի մի մասը մտքէն յիշէ, կամ յիշելու առենը մրմիջէ զայն, կամ մրմիջելու առենը երգէ, կամ երգելու առենը աղօթէ նմա, նորա հոգին՝ ինքն Ահուրամազան պիտի անցնէ ի կամրջէն՝ որ կը տանի ի հանդերձեալ կեանս (Պաժիշտէմ անուն<sup>1</sup>)։

Մէ Եսանան նուիրեալ է Արաւշտ կամ Արօշ հրեշտակապետին՝ որ մազգեզանց համայն սրբազն պաշտամանց անձնաւորութիւնն է։ Աս առաջին եղեր էր յարարածոցն Մազուայ՝ որ պաշտօն մասուցեր էր նմա՝ հնարեալ զբարամունս, և Ամշասրանախց (հրեշտակապետաց կամ խորհրդականաց) որոց կը բարեխօսէ վասն մարդկան։ Արօշ հաստատեր էր բարամանց այլ և այլ տարագրքը՝ երեք, հինգ կամ եօթն տառավք, ինչպէս և զայնս՝ որք մինչեւ ցծունկան կամ ցիէս լանջացն կը հասնին։ Կա առաջինն՝ երգեր էր Արիգամայ Զբաղաշտայ Կաթաները, զանազանելով բարձր և ցած խազերը։ Կը սատակէ զգեն աւերիչ (տկիխ տրուխ) որ կը խուփանէ զանումն բնութեան։ Միշտ անքուն՝ յորմէ հետէ Ողիքն կրկին ստեղծեցին զտիեզերու, կը պաշտպանէ զբարածու Մազուայ, և գիշեր ցերեկ կը մարտնչի Մազանեան Դիւաց հետ։ Կա Հարօպերայի իշխան բարձր, այս է Եւպուրդ լեռնագուտին՝ որ ի հարաւոյ ժայռն Կատպից) զագաթանց վրայ հազար սիւնալ պալատ մի ունի, ի ներքուստ ինքնածագ լուսով լուսաւորեալ և արտաքուստ զբարգարեալ աստեղօք։ Ահունա-վախեան, Եսանաներն և Ֆրուշտ անուն յաղթատուր աղօթքն նորան սուսերներն են։

Ա. Խնշպէս որ կը աեմնենք այդ խօսքէդ, աղօթքը մը չորս կերպով կրնայ ըլլալ. նախ՝ մոքէն զուրցել. Յ, տրեմաց ծած ձայնով և մրմռալով կարգալ. Գ, սրաւայ կամ ֆրարաշայ, բարձրաձայն և երգախան կարգալ. Դ, անձնաւորել զազօթս և պաշտել զնա ասելով «Լոգամայումնէ Ահունեմ զաիրիմ»։ որ թարգ-

մանէն պաշտեմք զԱհունա-վախեալ։ Պաշտ Փարպեցին անշուշտ երկորդ ձե ին կ'ակնարկէ։ Տ Տուեալ ընդ նախարարն բազմութիւն սուստ վարդապետաց վոր և մոդ անուանեն յորդորէին ուսանել զուսման ծաղրելի յնչմանց և բեղուն յարբինանց։ Խօսն որպէս զօձակոչման և զորովայնախօսս։ Էջ 454։

## Ը

Վախարաստ (այս է վիսրերագաւու, «Համայն պետք կամ՝ զըլ-խառորք»), հաւաքածոյ մի է բաղկացեալ ի քսան և յերից աղօթից, որք Օրչնեալ ջոյ և հացի, Հօմայի ոստոց և հոյզին, պաղց, կողուց, կաթի և մսոյ նուիբագսրժման կը վերաբերին։ Այդ պատաշագներդ կրակին բոլորտիքը պատացնելէ և անոր ցուցանելէ յետոյ՝ կը ճաշակէ զնոսա քահանայն կամ այն անձը՝ սրում ի նսպաստ այդ հանգէսը կը կատարուի։ Այդ արարողութիւնդ հացկերոյթ մի է ի փառս աննիւթական մարմեաւոր աշխարհի պետաց կամ առաջնորդաց, որք են՝ Ահուրամազտա, Հրեշտակապետքն, ինչպէս և Կախատիպքն համայն կենդանեաց՝ որք բնակին ի ջուրս, կամ ծնանին ի ծուռյ և շրջին յերեսս երկրի։ Այդ նախատիպքն իւրաքանչիւր տեսակ էակաց՝ կը յորչորչին սադու։ Կենդանեաց առաջնորդներէն ետքը՝ կը կոչեն զվեց պետոյ, այս է զվեց Յեղանակս կամ կահանապարան։ Ահուրամազտա մէն մի կահանապարի համար տօն մի հաստատածէ էր, զորմինչեւ ցայժմ տմենայն ճշդութեամբ և չքեցութեամբ կը կատարէն Փարտիք՝ ի յիշատակ վեց ժամանակաց յուրա ստեղծեր էր նա զտիեզերս։

Վեց յեղանակներէն ետքը կը կարգան զզլուխս տէրունական աղօթից (այս է ի մասնաւորի՝ Կաթայից), որք եւս իրրեւ զհրեշտակս նկատեալ են. ապս զիգական Ոգիս՝ (կենա) զպարգեւիչս սուստութեան և բեղնաւորութեան ամենայնի. զԱրտի-Աուրա, Անտիկա (երկնային ջուրք), զերինս, զհրեշտական Պահրամ՝ Միհր, Բամագաստար (որ հսկէ ի վերայ կերակրոյ), զթագաւորն աշխարհի և զԶբաթուշթրօդէմս, այս է զքահանայապետն կամ զՄոլզետան մովզետն՝ որ այժմ կոչի Ցասդորի Ցասդորան։

Այդպէս ամենայն կարգի պետք կամ զլուխք կը հրաւիրուին ի կոչումն սուրբ. ապս մատուցանեն նոցա զօրչնեալ ջուր և զբարսմունս ի նշան ողջունի։ Այլ և այլ աղօթներէ ետքը հանգիստագիր քահանայն (Զատօքա) կը պատուիրէ իրեն սպասաւորող ուրիշ քահանայի մը (բարդի) յառաջ կոչելու զերիս կարգս քահանայից՝ որք կը ներկայացնեն զերիս կարգս ժողովրդեան, որք են քահանայք, զօրականք և շինականք, զՏեարս տոհմից, աւանից, քաղաքաց և

զաւասաց . զՃիկնայս զերգատանաց և զայլ սրատուաւոր կանայս և այլն : Կ'երեկի թէ Կահանպարի հանդիսի ներկայ գտնուելու պարաւաւոր էին ժողովրդեան ամէն նշանաւոր մարդիկն : Վիսրարատ ալ այս վեց տօնից մաշթոցն էր , և ասոնց համար ևեթ կը զործաւծուի այժմ :

Այնուհետև ժողովուրդը միաբերան կ'օրհնեն զգոյս բարիս , ապա Զաօգան կը հոչակէ՝ թէ ինքն փառաբանող է և երկրպագու Աճուրամագտաց և Հրեշտակապետաց . յայնեւամ կը կարդան զԱրօշ , ըզ-Միհր և զայլ ողիս :

Այդ նախապատրաստական աղօթներէդ ետքը կը սրբագործեն կերակրոց զիխուաւոր մասունքը , Հօմայի սատերը նունենոյ սստի մը ձետ , կողի , նոր կաթ , հաց , միրզք և միս . և կը նուիրեն զնսաւ համօրէն արարշութեան առաջնորդաց , և հանդէոը կը վերջանայ այլ և այլ աղօթիւք :

## Շ

Եաշողք<sup>1</sup> կը կոչին քսանի շափ օրհներգութիւնք , որք Ետանաներէն և Վիսրարատէն այնու միայն կը տարբերին , որ մինչդեռ այս վերջնոց մէջ համայն զիք միահամուռ և անխտիր կը կոչին , Եաշողք առանձին առանձին մէկ մէկ աստուածոյ շահատակութեանց , հրաշից և բարեմանութեանց գովարանութիւնք են . զորս աղերսարկուն մի առ մի յիշելով , կը չանայ համոզել զնա՞ որպէս զի իջնայ յերկնից և ընդունի զիւր պատարազը կամ ընթրիքը , և չնորհէ հայցողին զոր ինչ ընձեռած է նախնի ժամանակաց մէջ երկրպագողաց իւրոց : Այսպէս Եաշշ մի կայ Որմզդայ , Եաշշ մը Անահոտայ՝ այս է երկնային ջրոց . ուրիշ մը Միհր աստուածոյ , Գիշզրիյա զից և այլն : Այդ երկնային էակաց մեծագոյն մասին եազադա<sup>2</sup> անունը կը տրուի , որ թարգմանի «պաշտելի » :

Եաշողք , որ ընդհանրապէս յոյժ բանաստեղծական և գեղեցիկ ու տեղ տեղ ալ շափեալ զրութիւնք են , հիմն եղած կ'երեկին հահնամէի վիզաց :

1. Երակ՝ որ մեր և Յաշտ՝ բառին լծորդն է , նշանակէ պաշտամունք աղօթիւք և զոհիւք :

2. Պարսկերէն Եազաման՝ որ է Ակա-

տուած , յոզնակի է եազադակի :

Որմղայ Եսազին մէջ կը հարցանէ Զքաղաշտ Ահուրամազտայ՝  
թէ շար ոգոց դէմ մ'ըն է ամենէն ազգու խօսքը կամ կապը  
(մարտ<sup>1</sup>): Ահուրամազտա կը պատասխանէ՝ թէ ամենէն զօրաւորն  
իւր անուանցը յիշատակութիւնն է. ու ի խնդրանաց Զքաղաշտայ՝  
քսան անուն կը սովորեցնէ նմա. որոց առաջինն է անմի, «ես եմ»,  
չորրորդը՝ աշա-վաճիշդա, «գերազոյն բարութիւն»: (սո է անուն  
Արտիպահիշդ հրեշտակապետին). վեցերորդը՝ «ես եմ իմաստու-  
թիւն», երկուասաներորդը՝ անուրա «կենդանի»: Քսաներորդը  
«Ես եմ որ եմ Մագտա» անմի եատ անմի Մագտա: Եթէ զիս  
կորդաս, կ'ըսէ Ահուրամազտա, այդ անուամբքդ, զիշեր ըլլայ, ցե-  
րեկ ըլլայ՝ կը հասնիմ օդնութեանդ. և յետոյ հրեշտակն Արօչ, Ոզեք  
ջուրց և ծառոց և Արուոք մեռեալ արդարոց կը վաղեն քեզ ի թի-  
կունա: Արիշ անուններ ալ կ'ուսուցանէ. ինչպէս՝ «պահպանիչ»,  
«ոզի», «ամենասուրբ», «կրակաքուրմ»: «ամենալաւ» և այլն, որք  
դօրութիւն ունին սպառապուռ վանելու զշարագործու, զկախարդու և  
զՊարիկո<sup>2</sup> (բարիկա):

Հափեան եաշզն, այս է եօթանց վեհագոյն աստուածոց, զու-  
գարանութիւն մի է Ահուրամազտայ և նորա վեց խորհրդականաց՝  
որք կը կազմեն զկահատոն չերկնային:

Արտիպահիշը եաշզին մէջ Ահուրամազտա կը պատուիրէ Զքա-  
ղաշտայ՝ պաշտպանել և գորացնել զԱշ-Վաճիշդա (այժմ Այսի-  
պահիշդ՝ որ թարգմանի գերազոյն բարութիւն), զովարանութեամբք,  
հայցմամբք, երկրպագութեամբ, երգօք, միանգամայն և հրաւիրելով  
զնա յընթրիս նուիրականս, որպէս զի պահէ նա զպայծառութիւն  
լուսաւորաց՝ որք անհրաժեշտ պիտոյ են բարի արարածոց զարգաց-  
ման: Զքաղաշտ կը հարցանէ՝ թէ ի՞նչ զիւթական բանիւք կրնայ  
պատշաճապէս և ազգու եղանակաւ կատարել զպատուէրդ: Ահու-  
րամազտա կը պատասխանէ՝ թէ ամենէն հզօր ազօթքը (մաթրա)  
Ահրեմա իշես ազօթքն է: Այնուշետե այլ և այլ հիւանդութեանց և  
տիստից դէմ զանազան կարդացմանք կը յիշուին, որք մինչեւ ցայդմ  
Եւրոպիոյ մէջ անգամ զործածելի են ի կախարդաց. «ի բաց կացէք  
հիւանդութիւնք», «ի բաց մահ», «ի բաց զեք»: Ապա կը պա-

1. Մարտը՝ ազօթք երգմենեցուցչու-  
թեան. ես պարզապէս ազօթք կամ հա-  
կիք ազօթք առ ի հալածել զգես, զախտա-  
և զպատահար:

2. Զէնո-Ահուրդայի Բերձները շար  
ոզիներ են, որք իրենց զեղեցկութեամբք  
կը հրազուրեն և կը պատրեն:

տուիրէ Ահարամաղամ սաստակել «զսերմանս իժի» (աղձի-յիրբա)՝ — այս է զամենայն վնասակար կենդանիս, որպէս գայլ, գորտ, մուկն, մրջիւն, օձ և այլն, որք չար ոգւոց բնեղունարան և հանդերձքն համարեալ են, — իրրե կարի արդիւնաւոր և պիտանի վասն աճման բնութեան և պահապանութեան լուսոյ, որոց երկոցունց խոկ ներկայացուցիչն է Հրեշտակապեան Արտիպահիշդ:

Մեր Զէնա-Աւեսպայի քննութիւնը չափէն աւելի չերկարելու համար կը թողումք մնացեալ եաշգերը, ու միոյն անոնց վրայ դեռ կ'ուզեմք խօսիլ, որք կը վերաբերին այն զից՝ որ հեթանոս Հայոց համար ալ պաշտելի էին կամ սոէպ յիշատակուոծ մեր մատենագրաց մէջ:

Ապան եաշգն նուիրեալ է Արավի Սուրա Անահիդա մեծաղօր զիցուհւոյն նախնի Պարսից, նա մաննուանդ և Հայոցս: Բարելացիք զզիցուհին իւրեանց կոչէին Մէլիդզա. Ասորեստանեամք՝ Պէլդիս. Հելենք ունէին զԱվրասիդէ և զԱրտեմիս կամ Տիանա: Բայց եթէ դոցա իւրաքանչիւրին յատկութիւնքը քննեմք, կարելի չէ ժխտել՝ թէ հայկական և պարսկական Անահիաը տարբեր կերպարանք և անձ մի կը ներկայացնէ մեզ միւս օտարազգի զիցուհիներէդ: Հայ Անահիտը՝ որ «Ասկեծին, սոկիհաստ, սոկիամայր զիք» կ'ըսուէր, սոկեծոյլ պատկեր մի ունէր յԵրիզայ, որում պասկս և թաւ ոստո ծառոց կը նուիրէին. յորմէ բժշկութիւն և բազում կեանս խնդրելու համար Արտաշէս Բ Արեգէնից տոհմէն նահապես մը զրկեր էր, և զոր, ըստ Պէնիսոփ, Մարկոս Անտոնինոս կողոպտեց Պարթեւաց գէմ պատերազմի գնացած ատենը<sup>1</sup>: Տրգատ արքայն բանդ, կապանս և մահ կը սպառնայր Գրիգորի՝ եթէ յանձն չառնոյր զից պաշտօն մատուցանել. «մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոչ՝ որ է փառք ազդիս մերոյ և կեցուցիչ, զոր և թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թագաւորն Յունաց, որ է մայր ամենայն զգաստորեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, և ժնունդ է մեծին արին Արամազդայ»: (Ազաթ. Էջ 51): — . . . «Եւ որ են խոկ ճմարտիւ արարի՛ թշնամանես, և զմեծն Անահտ՝ որով կեայ և զիենդանուրիւն կրի երկիրս Հայոց, և ընդ նմին և զմեծն և զարին Արամազդ՝ զարարիշն երկնի և երկրի» և այլն. (Եոյն, Էջ 61): — «Լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, ինաւակարուրիւն յԱնահիտ տիկնոջէ, և քաջութիւն հասցէ ի քաջն Վահագնէ ամենայն Հայոց

1. Անահտայ միւս մեհեաններն էին ջին նշանաւոր եղած էր հարստութեամբ Արտաշատ և Յաշտիշատ. այս վերը և գանձիւքը:

աշխարհիս » . (Եղին, 106) : Դժբախտաբար եր ազգային պատմչաց մէջ գտած աեղեկութիւննիս յոյժ անօսր են : Տեսնենք այժմ՝ ԶԵՆ-տաւեսդային սուսածները :

Պարսկական Անահիտը երեք անուամբք ալ կը յորչորջի . Այսպի՛ Թարգմանի « բարձր » , Առարա « հզօր » , և Անահիդա՝ « անրիծ , ան-ախտ , ան-աղտ , սուրբ , մաքուր » . և սոքօք կ'իմանան զերկնային ջուրս՝ զորս կը ներկայացնէ Դիցուհին : Ահուրամազտա կը պատուիրէ Զրադաշտայ երկրպագել Անահատայ՝ որ կը թաւալի ի ներբոյ կամըր-ջաց , տայ զառաղջութիւն օդոց , ընկճէ զգեւու , և իբրև պարգեւիչ արգաւանդութեան՝ սրբէ զերմանա արանց և զարգանդս համայն իգականաց , հասուցանելով վերջնոցս զկաթի ժամանակին : Աս կ'իշ-նայ Լըպտւրզի զագաթներէն , երբ կը հսուի ի ծովն Վուրու-բաշա , կ'ընդարձակէ զեղերս նորաս : Արտվխառուրա հազար առուստկու և հա-զար ջրանցս ունի , իւրաքանչիւրը սրբնթաց ձիոյ քառասուն օրուան ճանապարհի երկայնութեամբ : Զրանցք մը կ'երթայ ոռոգել զեօթն աշխարհոն (քէշվար) երկրի , ամենուրեք հայթայթելով զերկնային ջուրս :

Ահուրամազտա ստեղծեց զԱնահիտ յօգուտ տան (մնանա) , տ-ւանի , քաղաքի և աշխարհի , որպէս զի պահէ պաշտպանէ զնոսա և հսկէ ի վերայ նոցա : « Ո՞վ պիտի պաշտէ զիս , կ'ըսէ Անահիտ , նուիրելով ինձ զորհնեալ ջուրն ընդ Հօմայի և մասյ՝ սրբագործելոյ ըստ արարողութեանց » :

Անահատայ կառքը լծեալ է չորիւք սպիտուակ ձիովք՝ որք կ'արհու-մարհէն զգես համօրէն :

Ահուրամազտա ինքնին յաշտ առեր էր Անահատայ՝ նուիրելով նմա-զչօմա , որպէս զի սա համօզէ զԶրադաշտ իւր մարգարէն լինելու . և Անահիտ կատարեր էր անոր ինդիրը :

Հօշխաննա պատարագեց նմա հարիւր ձիս , հազար եզն և տանն հազար խաշինս . ի վարձատրութիւն ընդունեցաւ ի « սուրբ և կեն-դանարար » զիցուհւոյն զօրութիւն տիրելու ի վերայ ամենայն զի-ւաց և մարդկան և ի վերայ քահանայից սուստ աստուածոց (որք քաշի և քարարան կը կոչին) , և հասաստելու իւր թագաւորու-թիւնը :

Եիմա խշակդա (Ճէմշիտ) նոյնպիսի պատարագօք նմանօրինակ վարձուց արժանացաւ . բայց « սուրբ և կենդանարարն » Անահիտ մերժեց զպարգես Աժդահակայ (Ազհի-տահաքա) որ կ'ուզէր սպա-նանել երկրիս երեսը զանուսով բոլոր մարդիկը . և իւր օդնութիւնը

շնորհեց թրանդամեայ (Յերիտուն և հայ. Հռուդեն), որ սառուակեաց գեռազլիի, գեռաբերան, զվեցաշուի, զհազարթեան զօձն Տահաք (աղհի Տահաքա) զտրութաշն սոսկալիթիսար, յորմէ աւելի վեստարեր այսոյ գոյութիւն չէր տուած Անկրօ-մանեռու:

Այդ մեծաքանակ զնէրդ հարկաւոր էին դուցէ ի նախնի ժաւմանակս մեծամեծ շահատակութեանց համար: Վայց զգիցուհին նըսպաստաւոր ընելու կամ սորքելու համար բաւական էր մատուցանել նմա զջուա ընդ միազարյա, զբարսմունս, զմակերրայս որք ուզգեն զբարբառ, զազօթս, զկարգս սպաշտամունց, զջուրն օրչնեալ և զձրշմարտապատում բանս:

Մոլորեալ ուղեւորի մը հասեր էր Անահիտ՝ զեղեցիկ, անձնեայ, շքեղաշուք երիտասարդուհուց մը կերպարանօք, լսյն գօտի ընդ մէջ արգեալ, հասակագեղ, վեհ և պայծառ զիմօք, ցած կոշիկներ յոտին և ոսկի վարսակալ ի գլուխն, աղերսաւորին ձեռքէն բռնելով՝ առաջնորդեր էր նմա մինչև անոր բնակարանը:

«Երթ, ասէ Ահուրամազտա ցԱյսուիսուր, Երթ սաստի յերկիրն զոր ստեղծեցի: Զքեղ պիտի պատուեն զեհապեաք և որդիք զեհապեաց: Քաջամորտիկ զօրականք պիտի հայցեն ի քէն զարագութիւն ձիոց և զյաղթանա՛ր: Աթարվանք, որք կատարեն զպաշտամունս և պահեն զանօթս սրբազնս, պիտի խնդրեն զիմաստութիւն, զորբութիւն, զյաղթութիւն՝ զոր տայ Ահուրա, և զգօրութիւն որ գերազանցել տայ ամենայնի: Կուսանք պիտի ուղեն յառազաստ իւրեանց զայր երիտասարդ: զեղեցիկ աղջկունք՝ մեծազօք տանուտէր, և մանկամարդ կանայք՝ յաջողակ ծնունդ: Կատարէ նոցա խնդրուածքը, դու որ կարես»:

Արտուիսուրա բազմեալ ի զահոյսն բարբառի և ուսուցանէ կերպարանօք զեղասեսիկ՝ անձնեայ՝ մեծաշուք օրիորդի, լսյն կամար գօտի ընդ մէջ արգեալ, լուսապայծառ և կանգուն զիմօք, ունելով ուկեհուռ վերարկու ի թիկունս, և բարսմունս ի ձեռին ըստ օրինի, քառակողմանի օսկի զինդս յականչս ի ծածան: Անահիտ իւր չքնազ պարանոցին վրայ կը կրէ զմբուխտ մը՝ շքեղազարդ պատմուճանեալ զսպէ զմէջոն, հաճոյական և հրապուրիչ ձեւ մը տալով իւր լանչանցը. ի վերուստ ունի ութածալ և հարիւր սատեզաց շափ ոսկեփայլ զեղեցիկահիւս պատան մը՝ վերջաւորօք փաղփաղեալ: Հանդերձ նորա երեքհարիւր քառածին՝ ջրշունէ ընտրուած մորթ մի է՝ ոսկե-

Դ. Կանոնաւոր ծնունդ ունեցող ջրշունը չորս ձագ կը բերէ:

դէն և արծաթեղէն զարդուք, յորմէ աւելի ընտիրն և գունագեղն անհնար է տեսնել ջրասուզակ ջրչնոց վրայ»<sup>1</sup>:

Խորշեւոյ եաշգը նուիրեալ է արեգակնան, որ Աւեսդայի մէջ հւարե խշաւեգա, «արե արքայ» կը կոչի. ուստի և արդի պարսկեւ րէն խորշիտ՝ արեգակ, և Եղնկայ Խորաշէտն: Սա է լոյս նիւթաւ կան և Հայելի Միթրա աստուածոյ՝ որ կը նիւթայացնէ զոյսն անհիւթական և Համասփիւռ: «Երբ արեգակը կը փայլի եթերաց մէջ, երկնային Եազագաները բազմերաց կը վազեն կու զան, և Հաւաքելով զոյսն՝ կը բաշխեն ի վերայ երկրի.... Քանի որ արեգակը կը բարձրանայ. Ահուրայ ստեղծած երկիրը կը սրբի, նոյնպէս և Հոսանք, զետք և լիճք: Բայց մինչեւ որ արեւ ծագի, Տէվայք կը սպանանեն զամենայն ինչ, կ'աւերեն և կ'ապականեն. և Եազագայք անկարող կը մնան վանելու զնոսա յորժամ բնութիւնն ի քոյն կայ: Որ ոք անմահ, բոցանանենչ արեգական յաշտ առնէ (որ ունի սրբնթաց ձիս), առ ի վանել զիստարային զես, զաւազակս, զԵազուսայս և զՊարիկս, նա Ահուրամազուայ՝ Ամշասրանտից և իւր հոգւոյն կը զոհէ:

Եզէրագեղ լուսինն ալ՝ որ կօայիրրա՝ «Կովագէմ» կոչեալ է, ունի իւր յասուկ եաշգն, անմահ բարերարքն (Ամշասրանտից) կ'եւրեն ու կը սփուն լուսնոյ շողը ի վերայ աշխարհի:

Դիր եաշզն գովարանութիւնն մի է դիշդրիս աստեղ, այս է փայլածուի. (Փաշդար՝ փարսի լեզուաւ, և Դիր՝ արդի պարսկէրէն<sup>2</sup>): Սա Հաւանսորէն Հայկական Տիւր կամ Տիւր աստուածն է. թէպէտ Պարսից և Հայոց դիցաբանութեան մէջ մի և նոյն պաշտօնը չի վարեր: Հայոց մէջ Տիւր՝ Արմեղայ զպիրն էր, երազները կը մեկնէր ու մեշնական զիտութեանց և ամենայն արաւեստից ուսուցիչ էր<sup>3</sup>:

1. Տես Հարլեզի Աւետա. Հատ. Բ., էջ 207 և 213:

2. Դիր պարսկէրէն է ևս չնետ չ, չ ուաք >. այդպէս կոչեալ էր մոլորակդ՝ արագ ընթացիցը պատճառաւ:

3. Տես Արաթանզեղ. էջ 584, և Պ. Էմինեանի *Recherches sur le Paganisme Arménien*. — Հայկական Տիւրն մի և նոյն կերպարանքն ունի ընդ Ասորեստանեաց Դիր կամ Նեկո դից, և ընդ յունական Հերմեսի և Հռոմէական Մեցւութեան: Ասորեստանեաց բեւե-

ապրաց մէջ ուաքը՝ որով կը կազմուին բեւեսագիրը Տիւր դից նշանն է. և էր սո պաշտապն և հնարող դպրութեանց և ուսուցիչ: Անատայեան մատենից մէջ ալ նիսո, որ կը ներկայացնէ դՓայլածու, կը կոչի՝ «Դագիր»: Ըստ վկայութեան Արիւդենեայ Նարուքազնոսոր քաղաք մի շինած էր Եփրատայ բերնին մօս, զոր անուաներ էր Տիւրիստագիս կամ «Տըրդացաւ»: այս է նուիրեալ կամ տուեալ Տիւր դից: Տես Թուինսընի Herodotus. հատ. Ա., էջ 661-664:

Պարսկական Դիբի զիստուր պաշտօնն է կռուիլ երաշտութեան դիւնքն գէմ, կամ երկնային Ավկիանու՝ Վուրու-քաշայի ջրերն հոսեցնել երկրիս վրայ, զայն արգաւանդելու համար։ Դժուարին զործ մի է եղեր այս որովհետեւ Պարփկք լուստուր որդանց ձևով կը թափին այդ ծափան վրայ, ու կ'արգերուն որ ջրերը դուրս չելլեն իւրեանց սահմանէն։ Յայնժամ Դիբ՝ աշխատ նժոյզի կերպարանօք կը մտնէ ծովուն մէջ, և զայն ուռուցանելով՝ կը հոսեցնէ ջրերը անձրւի պէս երկրիս « Եօթն աշխարհացը » վրայ։ Աակայն Դիբ առանց հաւատացելոց աղօթից և յաշտից կարող չըլլար ընկնելու զդես, մանաւանդ որ երեք օր և երեք զիշեր մաքաւելէ յետոյ Աշբաօչ անուն դիւնքն հետ՝ կը յաղթահարի ու ծովէն դուրս կ'ելլէ գոչելով, « Եղոնկ եմ ես, եղոնկ զջուրս, եղոնկ զժառս, վայ մազգեզն զենի, մարզիկ ինձ չեն յաշտ առներ որպէս այլոց հրեշտակաց, եթէ յաշտ առնէին՝ տասն ձիոց, տասն ուղտուց, տասն եղանց, տասն լիրանց և տասն գետոց հաւասար ոյժ կ'ունենայի »։ Եւ երբ մարզիկ նմա օգնութեան հասնին աղօթիւք, կ'իջանէ վերստին ի ծով, այս անզամ կը յաղթէ դիւնքն ու կը տարածէ զջուրս առնայն կողմ։

Մինիր եաշդն նուիրեալ է աստուածոյն որ կ'իշխաէր արեգական և վարէր զընթացս նորա։ Միհր՝ որոյ հնագոյն ձեն Mithra, է « հրեշտակն արեգական, արեգակ, բարեկամ, ուխտ, դաշն »։ Բառ Աւելայի երկու զիմաւոր կերպարանս ունի, աստուած է՝ Ա, ստեղծեալ լուսոյ. Տ, ճշմարտախօսութեան և ուխտապահութեան։

Միհրօ-տրուխչ կ'ըսուէր ուխտազրումն, աստախօնն և պարտքը շվճարողը։ Զաս կը պաշտէին ոչ միայն Պարսկաստանի մէջ, այլ և ի Հայաստան<sup>1</sup>, ի փոքր Ասիա, ի Յունաստան և ի Հունական<sup>2</sup>։ « Ես

1. « Գայր հասանէր (Գրիգոր) ի Մհրական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդաց, ի զիւզն զոր Բագայառին կուշեն (այժմ Բէգէռիք զիւզ՝ ի Դիբըն գաւառի բարձր Հայոց) ըստ Պարթևեական լեզուին։ Եւ զայս ի Հիմանց բրեալ խլէին և զգանձս միթերեալս աւար հարկանէին և աղքատաց բաշխէին, և ըզտեղին նուիրէին եկեղեցւոյ... և յանո՞հետէ փոյթ ի վերայ ունէր, զառընթերակաց արքունիսն հանդերձ մեծամեծ աւագանւովն և ամենայն ազատագունդ բանակաւ, աստուածելէն իմաստութեամբն վարդագետէր ։ Աղմանդանդ. Էջ 593։

2. Միհրի պաշտօնը Հոռվմայեցւոց մէջ Քրիստոսէ 60–70 տարի յառաջ միայն սկսաւ ծաւալիլ, յորժամ գիցապաշտութիւնը իւր պազած անդամները կը չանայր կենդանացնել արեւելեան երեակայութեան եւ կրօնից ջերմութեամբը։ Դիբն կասիս կը պատմէ, որ երբ Պարթևաց Առջողէս արքային եղբայրը Տրրատ Հոռվմայ հասաւ թագաւոր պատկւելու համար (61–62), կը զրուցէր Ներոն կայսեր՝ թէ աղերսաւոր կու զարա առ նա որպէս առ նոր ոմն Միհրա. (ԿԳ. 5):

ստեղծեցի, ասէ Ահուրամազտա, զՄիհր աստուած՝ որ կ'իշխէ ի վերայ լսյնածաւալ արօտից, որպէս զի ինձ հաւասար պաշտօն մատուցանեն նմա և կարգան զնա, մի զրժեր երթէք զուխտն զոր կռեցիր կրօնակցի կամ այլադենի չետ: Միհր աստուած չնորհէ սրբնթաց ձիս այնմ՝ որ ոչ դրժէ նմա: կրակն՝ որդին Ահուրամազտայ, պահէ զայնպիսին ուղղութեան մէջ, և Ֆրաւաշիք պարզեն նմա ընաթիր գաւակունն»:

Առեղծեալ աստուածն յետ ժամանակաց ստեղծողէն աւելի պաշտամանց և երկրպագութեանց արժանացաւ, ու յինքն ամփոփեց և անձնաւորեց մաղդէական հաւատաքը: Աա էր որդի Ահուրամազտայ և միջնորդ ընդ հայրն և ընդ մարդիկէ, լոյն ամենասպիտու և կենդանարար, արեգակն ճշմարիտ՝ տարրեր ի նիւթական աստղէն, որ աւելի վերջերը խառնեցաւ միացաւ բուն աստուծոյն չետ: Ի պատիւ նորա մեծաշուք և խորհրդաւոր հանդէսներ կարգեալ էին: Նմա նուիրեալ էր օրուան մէկ պահը արշալուսոյ ծագմանէն մինչև ցկէս օր: ամէն ամսոյ վեշտասաներորդ օրը, ինչպէս և պարսկական հին տումարին եօթներորդ ամիսը՝ նորա անուամբ յորջորջեցան: Միհր ամսոյ հնգետասաներորդ օրէն՝ սկսելով՝ վեց օր Միհրական տօն կը կատարուէր, յորում արքայից արքայն միայն կրնար ինք զինքը տալ արքեցութեան և ի կաքաւա հեշտութեան, պանի իւղով կ'օծուէր, գոյնզգոյն փառաւոր պատմուան մը կը զգենոյր, գտուիը կը զնէր զիսոյրն՝ որոյ վրայ կը փարփէր արևուն բոլորչի պատկիրը, և ժողովրդեան զգեստներ կը բաշխէր: Ասոնք այլ իրարու ծաղկներ, պտուղներ, արմաւ, նուռն, բրինձ և խունկ կ'ընծայէին: Անշուշտ այն տօնին առթիւ էր, որ Հայոց թագաւորն ըստ վկայութեան Ասրարոնի՝ քսան հազար քուռակս ձիոց կը զրկէր ի հարկ աշխարհի:

«Միհր աստուած՝ որ յաւէտ ճշմարտախօս է, հազար ականջս ունի, բիւր աշկունս (լրտես ամենադէտ և ամենաքնին), և անդուլ և անքուն հսկէ վասն բարօրութեան արարածոց»: Կորա չնորհիւք կանգենեն իշխանք զդղեակս բարձրարերձն, լերինք կը զարդարուին ազգի ազգի ծաղկօք և բուսպք, գետք կը թաւալին յորդահոսան: Սա բերէ զրյոյ համօրէն աշխարհի, առաջնորդէ բանակաց, կազմէ զնակասս տայ յաղթութիւն այնոցիկ որք զիսեն պատշաճ աղօթիւք:

1. Այս է՛ ըստ Պիւրհանի Գաթիի՝ իսարհիս ստեղծումը, միանգամայն և Հըմանանային գիշերահաւասար: Աթեւեւան ուողենայ ձեռօք Աժդահակաց սատարանագիրք նոյն որերուն կը զնեն աշ-

և արարողութեամբք յաշտ առնել նմա։ Պատուհանէ կուրութեամբ, խլութեամբ կամ կողութեամբ զստախօսս և զուխտադրուժս։ Բնակարան նորա է ի բարձունա Երպուրզայ, ի պարատան՝ զօր Ահուրամազտա կառոյց վասն նորա, յորում չիք զիշեր և ոչ խաւար, ոչ հաղմն ցրտաշունչ և ոչ խորշակ տոշորիչ, ոչ մառախուզ և ոչ ապականութիւն։ — Ամենայն զեք խոյս կու տան ի նմանէ, աջ կողմէն կ'երթան Որաօշա՝ հրեշտակն պաշտամանց, և Բաշնուրասդ' հրեշտակն արդարութեան, Ազիք ջուրց, ծառոց և այլն։ Երբ երկնային դրախտէն (կարօ-տման) գուրս կ'ելլէ, սպիտակակ և սպիտակ չորիք ձիովք լծեալ կառք մը հեծած է. որս արէ զէնքեր կը կրէ խորհետ՝ ուս ի խորտակել զդեւս, որոց ամենէն սարասփելին է վազրա։

Ձբասարտն եաշզն՝ որ երկարագոյնն է, նուիրեալ է պահապան հրեշտակաց՝ որոց թիւն անհամար էր։ Աւեսպայի մէջ սոցա անունն է ֆրաւշի՝ «պահապան», բեւեռազիր արձանազրութեանց մէջ ֆրաւշադիշ, որ պահուած է ֆրաւշրտ յատուկ անուան մէջ։ Ահուրամազտա կարգեր էր զնոսա ամենայն ուրեք՝ բարի արարութիւնը պահելու և չոր ոգւոց զէմ պաշտապանելու համար։ Դոցա ձեռօք կը բանէր զերկինս և զերկիր, զուրս և զհամօրէն արարածու, որք կը խոտնակէին և կ'աւրուսէին՝ եթէ անոնք շրպային։ Ամենայն բարի էակ՝ կենզանի, մեռեալ կամ տակաւին անծին, ունէր խոր յատուկ ֆրաւշին<sup>2</sup>, որ անզստին յաւիտինից եղած է։ Տեսակ մը նսխատիսկ էին նման գաղափարացն Պղստոնի, որոյ կարծեօք ամենայն ինչ կրկին զոյութիւն ունէր, առաջին՝ գաղափարական, երկրորդ՝ իրական։ Ի սկզբան ֆրաւշի սաելով՝ մեռելոց և նախահարց ողիքն կամ Աւրուքն միայն կ'իմացուէր. ինչպէս Բիդարս՝ «Հարք» ի Որտհանս և Manes ի Հռովմայեցիս։ — Բազանս մատենից մէջ՝ ֆրաւշ, երբեմն ալ ֆրաւշ։

1. Աիշրդ՝ արդի սպասկերէն է ։ տառար, կացին։ Հայերէն և Ապղը ։ ալ նոյն նշանակութիւնը ունել կը թուի։ Վայրում՝ վետոյի մէջ նշանակը ։ Կայծակն ։ որ ինտրայի մեծ զէնքն է։ Երաշդ մի ալ կայ վանանդ աստեղ և աստուածոյն նուիրեալ, որոյ պաշտօնն էր խորտակեր զաւերիչս բարսոյ արարչութեան։ Վանանդ՝ ըստ Փարսի Տաստրաց, է

Եթիր կամթին, որ շեշտակի գծոխոց վըրայ կեցած է՝ զարհութէեցնելու համար զգես. և է սա Միհր աստուածոյն Վազր կուեալ զէնքն զոր զիւաց զլխուն վրայ կախեալ կը բռնէ միշտ։

2. Բյաւասիմ՝ առաջնաբնակ, նախեղակ, ի վաս՝ ընակեմ, կամ՝ արմատու ֆրում, նախկին։

## Ճ

Նեյայշշք<sup>1</sup> կամ «նուագք, ազօթք» հինգ են. նուիրեալ Արէգուկուկան (Խուրշիտ), Հրեշտակին արեգական (Միհնը), Առանց (Մահ). Զուրց (Ազան), և Կրակի (Աղաչ): Այսօր ամենայն բարեպաշտ Փարսի պարտի օրը երիցս զրուցել Խուրշիտոց և Միհնի նիյայիչները. եթէ յայսմ անհոգութիւն բլայ, մահուընէ եաքը հոգին չի կրնար անցնիլ Զինւատ կամքչէն: Լուսնոյ ազօթքը ամիսը երեք անգամ հարկ է տաել: Չբոց և կրակի ազօթները հոգեշահ են, այլ ոչ ասիստուկան:

Ոքրիկանքն կամ Օրհնութիւնք կը զրուցուին ի ոկզրան ընթրիաց՝ որք ի պատիւ հրեշտակի կամ հանգուցելոյ հոգւոյ ուրումն կը արուին: Ծնթրիքդ կը բաղկանան ի զինւոյ, կոթէ, հացէ և ի մրգաց. յիս որբագործութեան՝ զոր քահանայն միայն կրնայ կատարել, բազմականք կը ճաշակին: Այս արարագութիւնս պարա է ընել վեց յեղանակաց (կանանցպարաց) տօներուն, որոց իւրաքանչիւրը հինգ օր կը տեւէ. միանգամայն և տարւոյն աւելեաց հինգ օրերուն մէջ:

Հինգ կանքն նուիրեալ են հինգ հրեշտակացն՝ որք կը հոկեն ի վերայ հինգ պահուց, յորս կը բաժանին զիշեր և ցերեկ: Մէն մի կան կը զրուցուի խր յասուկ պահուն:

Սիրօզան ազօթք կամ տեսուկ մի Օրացոյց է, յորում նշտանակեալ են կարգաւ երեսուն հրեշտակին՝ որոց իւրաքանչիւրը կը հոկէ ամսոյ մէկ մէկ օրուան, և որոյ անուամբը կը յորջորջի օրն: Այս ազօթքս կը զրուցուի զիստարապէս մեռելոց համար, մահուըն և երեսուն օր եաքը:

1. Բազանու լեզուաւ՝ նեղէ կամ հավիք, որ է յօրդ հայերէն և նուագ և բառի:

## ԺԱ

Արդ մեզ մեզ համառօտ տեղեկութիւն մի տալ վեճախառի<sup>1</sup> վրայ, որ նախնի Պարսից կրօնական՝ քաղաքական և պատմական օրինագիրքն էր, և որ իւր այժմեան վիճակին մէջ՝ կը բաժանի ի քան և երկու ֆարկարտ կամ հասուածս։ Ոճոյ զանազանութենէն մարթ է կարծել՝ թէ ոչ միոյ հեղինակի և ոչ իսկ մէկ ժամանակի զործ է։

Ըստ նիւթոց կրնամք բաժանել զվէնոխտառ յերիս մասունս, առաջինը՝ (Ա-Գ. Փարկարան) աշխարհագրական և պատմական տեղեւիութիւններ կը պարունակէ։ Երկրորդը (Փարկ. Գ-Ժէ) ունի զօրքնս, զպատուիրանս, զփարզս և զձեւս պաշտամանց։ Երրորդին պարունակութիւնքը զանազան են, և մարթ է համարել զայն իրեւ յաւելուած առաջնոց։

Առաջին Փարկարատին մէջ կը նկարագրին մազդէական վեշտառն աշխարհք։ Ահարամազտա՛ յետ սաեղծելոյ զերկիր, շինէ նախքան զայլ աշխարհս զվիրիանա-վահմօ<sup>2</sup> զվայրն երանութեան կամ զզրախան, ասոր դէմ մահարաբն Անկրօ-մահինեուշ կը կանգնէ զօձն աշազին և զձեւուն՝ որ է զործ զիւաց<sup>3</sup>։ Ահարամազտայ երկրորդ ձեռակերան եղաւ կաւ, յորում զտանի Սուլտան չար ոգին ալ սորա փոխարէն զոյութիւն տուաւ ժանամահի՝ որ սատակէ զարդառս և զոյշարս։ Երրորդն եղել Մուրիւ (Մէրլ), չար Ողին ալ հնարեց զապանութիւնս և զաւեր։ Չորրորդն է երջանիկն Պախտի (Բակարիա), որոյ դէմ չար Ողին կը վանէ զվասակար ճճիս և զթիւնալից բոյս։ Հինգերորդը՝ Նիսա՝ ի միջոց Մուրուի և Պախտիի։ սորա փոխարէն

1. Կրճատումն Այսական—տաղեմ բարձրց՝ որք նշանակեն և տուեալ ընդդէմ Դիւաց։ Բահլաւի զրութեանց մէջ բառ առ բառ կը թարգմանի Ճռատ-դիսա-տաս։

2. Ալիւեանա-վահմօ, որ թարգմանի և Արեւաց վիճակ։ Է բնազաւառ Արիանան ազին, ըստ մէջ Արսոս և Եաբսարտէն գետացաց։ Պարսիկ մատենազիրք զայն զնէն յԱմրագառական։

3. Զարմանալի է՝ որ ձմերան նը-կառմամբ Աւեսդայի տուած վարդասկետութիւնդ ազրդած ըլլայ Եղիշեայ Զարշարանաց ճառին մէջ։ Յ Յուրոս ոչ դուզնաքայ, այլ պարզ, հուրաստաց, նմանեալ է անպալարեր ձմերայնոյ, և ձմեռն եղանակ տակութիւն յարին, որ և զորձեցաւ իսկ առ ժողովուրդն։ Էջ 288։

մահարար ողին կը ստեղծէ զմեզս և գկասկած։ Ապա կու գան կարգաւ Հարօյիշ (Հէրազ), Վակրերէցա (Գապուէ)։ Խըզիւ արօտաշատ։ Խնենդա ի Վհրքանս (ի Վրկանս), Հարսագուիդի գեղեցիկն (Այտքոսիա՝ ըստ Յունաց, ի Հարաւոյ Գանտահարայ)։ Հակոբունադ (այժմեան Հիմանտ և ըստ Հնոց՝ Հափմանտէր)։ Ապա (այժմեան Ուժ)։ Զախրամա (Կրման), և ըստ ոմանց Վիւն)։ Հափրահինուն կամ աշխարհն եօթնավտակեան, որ է Խնդոսի գաշտավայրը, և վերջապէս Երովիզերեայ Գաւառը։ Ասոնց Խրագանչիւրին գէմ ալ Անկրո-Մահնեւչ մէկ մէկ նորանոր աղէտներ կը նիւթէ, կարկուտ և շքաւորութիւն։ Բաիրիիքա (պարիկ) որ սուտ աստուածներ կը պաշտէ, սուդուական ախտ, թագումն մեռելոց, կախարդութիւն, անհաւասութիւն, այլումն դիականց, տապ տոչորիչ և այլն։

Երկրորդ Փարկարտը կը ճառէ զիշիւն նահապետէն, որ երրեմն Ագամայ և ընդհանրապէս Նոյայ նկատմամբ աստուածաշնչական աւանդութիւնքը կը յիշեցնէ մեզ։

Երրորդ Փարկարտը կը պատուիրէ մշակել զերկիր, շինել բնականի հանգերձ տամր, կրակով, արջառօք, կանամբը և որդուովք, և ի բաց կալ ի թափառական կենաց։ Գարւոյ և արմուեաց մշակութիւնը աւելի կը նպաստէ մազգեզն կրօնից ծաւարման՝ քան հազար պատարագք և բիւր աղօթք։ Այս Փարկարտս նշանաւոր է յոյժ։ Քանզի կը ցուցանէ՝ թէ Մազգեզունք առաջին եղան Արփական աղդաց մէջ, որք քաղաքականութիւն ընդունեցան և թողուցին զարդանական և զաւազակարարոյ կենցարս։

Չորրորդ Փարկարտը կը սահմանէ զդաշինս՝ որք վեց տեսակ են, առաջինը՝ բերանացի խսումամբ կ'ըլլայ, երկրորդը՝ ձեռաց խսունրմամբ, երրորդը՝ ոչխարի չափ արժէք ունեցող բանի մը համար, չորրորդը՝ եղի մը արժէքին համար, հինգերորդը՝ մարդոյ մը (զերւոյ) արժէքին համար, վերջապէս վեցերորդը՝ որմանափակ և բարերեր երկրի կամ կալուածոյ մը արժէքին համար։ Դրժողաց մերթ տուշանք և մերթ առատ գտն որոշեալ է։

1. Թէպէտ այդ աշխարհագրական աշխատանցին մի քանին տեղերը տակաւնն սուսպուած չեն, բայց հնագէտը համամիտ կը կարծեն՝ թէ սոցս ամէնն ալ խնդոս և Աիր-Տարեա գետոց, ինտուքուշ լեռնագոտուդն և Դիազեսի անապատին մէջ տեղը գտնուող աշխարհին

այս է Պտիսարայի, հիւսիսային Պտրակաստանի երանաստանի մէջ են։ Այս Փարկարտս շատ հին ժամանակի մէջ շարագրուած կ'երեւի, հաւանորէն յառաջքան զարշաւեն Արփական աղդաց դէոյ յարեմուտս։

Հինգերորդէն ցմբ ֆարկարտից մէջ մանրամասն պատռւիրանք կան դիականց նկատմամբ . թէ ինչ ձևով պարտ է կառուցանել ըզ- ջախմայս<sup>1</sup> կամ « զաշապակու խութեան », այս է զգերեզմանա- տեղիս , և թէ ինչ պէտք է ընել սրբուելու համար , երբ մէկը դիակի մը զպած ըլլայ : Վեհափառատի հիմնական սկզբունքներէն մէկն է դիակը ամենապիզծ համարել . վասն զի յորժամ մարզու մեռանի , Նազուշ այսը կը մտնէ նորա մարմայ մէջ ու կը յարձակի ևս անոր դպչողներուն վրայ : Եւ որովհեաւ հողը , հուրը և ջուրը ամենա- սուրբ տարերք են , չի կրնար ոք թաղել՝ այրել զմեռեալ կամ ար- կանել ի ջուր՝ առանց մեծամեծ պատռւասներ հրաւիրելու աշխար- հիս վրայ : Այդպիսի ոճիր մը ոյժ կու տայ դիւացն՝ ոքք տիրացած են անկենդան մարմայն : Խսկ Նազուշի ազգեցութենէն և պրծու- թենէն զերծ մնալու համար՝ զօրաւոր միջոց մը կայ , զոր յառաջա- զոյն զօրժապրելու պարտական են անոնք՝ որ դիակի մատչելու ստի- պեալ են : Պէտք է մասնաւոր հանգամանոք շուն մը<sup>2</sup> բերել ու մե- ռելոյն տոջե այնպէս կեցնել՝ որ անոր նայի , շան հայեցուածքը զնապուշը կը վանէ ու կը խորտակէ : Եթէ մարդ մը հայի դիակի՝ տանց այդ ամենակարեւոր պայմանգ կատարելու , կը բռնուի ի Նա- զուշէն . և եթէ այնուհետեւ ուրիշի դպչի , այն ալ Նազուշի ընդու- նարան կ'ըլլայ , և այսպէս հետզետէ մինչեւ ցմեռասաներորդ այր . յորմէ ազատելու համար հարկ է՝ որ ամէնքն այլ ինն դիշեր ասպաշ- խարեն և ստէպ լուացուին՝ նախ զումիզաւ և ապա ջրով :

Պարտ է դիակը բնակութենէ հեռի , անբեր կամ լու ևս ա- պասած լերան կամ բլրոյ գագաթան վրայ յատկապէս պատրաս- տուած զերեզմանատեղին տանել : Տախման քառակուսի և որմա- փակ պարտի մինել : Վեհանէն հողը պատշաճ խորութեամբ փորելէ

1. Այս անունս լծորդ է մեր Շմաշ- զել : և թաղութեն բառի : Եւ և արդի պարսկերէն՝ տախմ կամ տախմա , որ ըստ Պիերհանի Գամթի նշանակէն Ա . սառ- բեկրեայ տեղի , ուր զնեն զմեռեալս տապանոք . Բ . քարայրի մէջ կամ լերան վրայ շինեալ սենեակ , յարում մի քամի դիսկ միանգամայն կը դնեն . Գ . դա- դազ . Դ . զերեզմանատեղի կրակապաշ- տից (կորիսանի մէճաւոի) :

2. Պղձութեան փախագրականութիւնը արգիւելու համար՝ շունը աչացը կոպե-

րուն վրայ մէկ մէկ սեաւ բիծ ունենալու է . կամ եթէ ձերմակ է , ականջները դեղին ըլլալու են : Այդպէս կը պա- հանջէ Վէնդիսատը . բայց ըստ Պառ- տահիցի ո՛ւ և է շուն կը խորտակէ զնապուշն , բաւական է որ դիական հայի . եթէ շան հայեցուածքը մեռելոյն միայն մազերուն կամ եղունգներուն հան- դիպի , Նազուշը խորտակուած չըլլար : Անզը , սեաւ ագռաւը , ձինն ալ կը վանեն զնա՞ւ երբ սոցա ստուերը հան- դիպի դիական :

և հանելէ յիսոյ՝ ազիւսով կամ քարտվ կը յատակեն։ Ո՞էկ կողմէն միւսը երկու ուզի պիտի ձգուի՝ որ զիրար կտրեն ի միջավայրն։ Դուռը արևելից կողմը յանդող հանապարհն ծայրը պիտի ըլլայ։ Տախմային մնացած տեղուանքը՝ դիակունք կը զետեղեն առանց ծածկութի, երկաթեայ կասկարաներու կամ քարի վրայ, ի զիշատումն ազուուց, անդեղ և շանց և յօգուտ կենդանեաց բարի արարչութեան, որք կը բառնան զպզտութիւնս յերկրէ։ Ո՞եսելոյն երեսը արեւոն դարձած պիտի ըլլայ, մազերը և ոսքերը մեծամեծ քարերու պիտի կապաէն, որպէս զի ըլլայ թէ թռչունք կամ զազանք ուկերուուիքը բառնալով ջրոց մէջ ձգեն։ Ո՞եսելակիրք առնուազն երկու պիտի ըլլան, իբարու պարանաւ կապուած և ձեռքերնին քսակներու մէջ անցած։ Խոկ եթէ մեռեալը յդի կին մի է, չորս անձինք պիտին։ Ո՞քա տախմային մէջ մոնելու տակնին շունը երկու անգամ կը կեցնէն դարձեալ՝ որ զիական նայի, ապա մասնաւոր արարուութեամբք կը սրբուին<sup>1</sup>։

Ութերորդ ֆարկարախն մէջ կրակի վրայօք վարդապետութիւններ կան, զորս մարթ է Հետապայ եղանակաւ եղբակացնել։ Կրակը յինքեան սուրբ տարր մի է, նշան աստուածային գօրութեան և սրբութեան։ Ո՞մենայն կրակ արժանի է յարգանաց, ու ներկի չէ

1. Եարտէն կը պատմէ (1670ին), թէ Ազատանէն կէս փարախ հեռաւորութեամբ համակենական կրապաշտու բոլորան աշտարակ մի կար Յ սոնաշափ բարձր, որ ամենենին գուռն կամ ճուռոք շոշէք։ Ո՞անդզօք կը հանելին դրսէն կրակապաշտու զմռեալն, ու մէջը կը ձգէին ի կուր ազաւուց, որոց կարդէ գուրս բազմերամ թռչակիլը տեսէր եր այն կողմերը։ Ո՞յդպիսի աշտարակներ շատ կը գտնուին նաև Հնդկաստանի պյն գաւառաց մէջ յորս բնակին փարսիք։ Երբեմն աշտարակին մէջ երկաթեայ կասկարայ մը կայ՝ որ գէտ ի միջավայրն հակեալ է, և որոյ վրայ կը դրսէ դիակը։ Յետ քայլայելոյ մարմարին, ուկրսուին երկաթեարու մէջտեղէն վար կ'իյնայ ու կը գիզուի աշտարակին յատակը։ Տախմային մէջտեղն ալ երբեմն փսո մը փուրած է մէկ քանի ուստաշակի խորութեամբ, այս փոսիս բոլորուիքը իբարեւուի մոռուցեն էին, որ յայտ ատելի եր Զարդարչտականաց։ (Տես Ո՞ւլինսընի Պատմ։ Աստանեանց, էջ 9:— Պ. Ուսոգի՝ Շայաստլա-Շայաստ, էջ 247) :

մարգաչափ հեռաւորութեամբ համակենական կրոն և շրջանական զորդաններ շինուած են, զորս կը կարեն ուրիշ զորդաններ ուրիշ կը ձգին ի շրջազատէն ի վայր ցիտոն։ Զորդանաց մէջտեղը մէկ դիակ՝ մը միայն գնելու շափ տեղ թռչուած է։ անդ կը զետեղեն զայն գլուխը դէպ ի շրջափակ որմն։ Յետ ժամանակաց կը հաւաքեն զուկերստին և կը դիզեն փոսին մէջ, որ երբ լցուի, պարս է ծածկել զայն ու նոր տախմա մը ճարել։ — Զմեսեալու թռչնոց և գազանաց զիշատել տալու սովորութիւնը Մողուաց մէջ ալ կը տեսնուի։ Պարթեւ թագաւորք իրենց պետակեան մէջ դիակը այրելու սովորութիւնը մտուցեր էին, որ յայտ ատելի եր Զարդարչտականաց։ (Տես Ո՞ւլինսընի Պատմ։ Աստանեանց, էջ 9:— Պ. Ուսոգի՝ Շայաստլա-Շայաստ, էջ

զայն սպանանել, ոյս է՝ մարել։ Եթէ ոք պղծէ զլրակ դիակամբք  
կամ աղուեղութեամբք, որ ամենամեծ մեղք է, պարտ է սրբագոր-  
ծել զայն անմիջապէս։ Այդորեւ վառել միայն վայել էր զնոտ ի  
վերայ սեղանոյ և ի պատիւ Բարձրելոյն։ Բայց Ահուրամազոս  
չնորհած է մարդոյ՝ որ իւր աշխարհային պիտոյիցը համար առ  
ծառայեցնէ, պայմանաւ՝ որ տան՝ խոհանոցի կոմ գործարանաց մէջ  
վառուած կրակը որոշեալ ժամանակէ մը ետքը ազատ ըլլայ այդ  
գերութենէդ ու տարուի ջատկան ատրուշանին վրայ զրուի։ Այս  
պատուէրս կատարազին արդիւնքը մեծ կը լինի յօյժ<sup>1</sup>։

Տատիահին կրակը տառն և վեց տեսակէ պարտի բազկանալ .  
զոր օրինակ՝ բրուտի, աղիւսագործի, երկաթագործի, ներկարարի  
և այլն, սոցա մէջ անհրաժեշտ պէտք է զտնուի ևս մեռելուոյ  
զպած կրակ։ Թէպէտ զմեռեալս այրելն աններելի յանցանք մի է,  
այսու հանդերձ այլադենի կամ մեղադործի զիակ այրելու համար  
ի կիր տառած կրակը յետ գտուարին արարողութեանց պարտ է  
տանել զնել ի վերայ տատկահին, քանզի սու կենդանի մարմար  
մէջ գտնուած ջերմութիւնը տուած կը համարուի։ Արդ բազազրեալ  
հուրդ կը ներկայացնէ բնութեան զօրութիւնը՝ որ գհամայն կը  
կենդանացնէ, զօրացնէ ու պայծտառացուցանէ։

Իններորդ ֆարկարաին մէջ երկարօրէն կը նկարագրի իննօ-  
րեայ ապաշխարանաց եղանակը, զորս պարտի գործադրել ոք՝  
զիակի զպչելով սուացուած պղծութենէ և Նազուշի աղղեցութենէն  
աղասելու համար։ Նախ գումէզ պիտի ընթիւ։ յետոյ բազմի քա-  
րակրյաներու վրայ, որոյ բորորտիքը քահանայն զիւթական շրջա-  
նակներ կը գծէ հողոյն վրայ, և մէկ քարակրյաէն միւր երթալու  
տաենը մարմինը պիտի չփէ գումիզաւ, ապա տւազով. և հումկ  
յետոյ լուանայ ջրով։ Գումիզաւ սրբուելու սովորութիւնդ անշուշտ  
շատ հին ժամանակէ մնացած էր. կովը նախնի Արեաց յօյժ սըր-  
բազան կենդանին էր, վասն որոյ և անոր մէզը սրբարար և օգ-  
տաւէտ համարած էին։ Պիտելի է սակայն՝ որ Արէք ամպի առ  
կով կ'ըսէին. միթէ անձրեկ կամ ամպի ջուրը յետոյ կովու միզի  
փոխուեցաւ։

Տաններորդ ֆարկարատը Նազուշի աղղեցութենէն՝ աղատելու հա-  
մար աղօթներ կը սուհմանէ։ Մհամասներորդը՝ բնակարանները,  
արջառը և ոչխարը սրբելու համար պէտք եղած աղօթները կը  
ցուցանէ։

1. Տես Պ. Հարէզզի Աւետառն. էջ 162, հատ. Ա.

Երկոտասաներորդին մէջ սահմանեալ են՝ թէ քանի որ պարու է սուզ ունել հօր, մօր և ուրիշ ազգականաց համար։ Եթէ հանգացեալն իւր բնական մահուամբ և արդար մեռած է, սպոյ օրերը կիսով չափ նուազ են՝ քան երբ մեղաց մէջ կամ անձնասպանութեամբ։ զրաւի ի կենաց։

ԺԴ և ԺԴ ֆարկարոները կը խօսին շանց և չնջրեաց<sup>2</sup> վրայ, զորս պէտք չէ չարաշար գործածել, վիրաւորել, խեղել, անօթի ձզել և մեռցնել։ Եթէ որ այդպիսի յանցանք մը գործէ՝ խատիւ կը պատժուի։ Մանաւանդ չնջրի մը սպանանելը սոսկալի եղեռն մի է, վասն զի այդ կենդանին հազար արու և հազար էզ շանց ողին ունի իւր մէջը։ Ոճրագործը պարտի կամ հազար գան ըմպել խարազանաւ, և կամ տասն հազար վեստակար կենդանիս սպանանել, որպէս օձ, մուկն, մողէզ, գորտ, մրջին և այլն, և տասն հազար բեռինս փայտի կրել ի կրակատուն։

Շունը մեծ տեղի մը բռնած է մազգեզն գենի մէջ։ որչափ որ այլանդակ երեւի մեզ այն կարեորութիւնը՝ զոր կու տային նախնի Պարսիկը այդ անասնոյդ, նոցա գաղափարաց համաձայն էր։ Բնութիւնը յարատե պատերազմ մի էր ընդ մէջ բարի և չար աշրածոց։ արդ շունը ոչ միայն կը սպահպանէ զիւր տէրն և նորա զանձերը, այլ և զանդեայս և զհօսու ոչխարաց և զհաւու՝ որք Աճուրայ արարածքն են, զբնակարանս, զագարակս և զուանս՝ որք Վազայ հաճայսական վայրքն են։ Կենդանի մը՝ որ այդքան նշանաւոր ծառայութիւններ կը մատուցանէ բարի արարչութեան, մեծ խնամոց և յարգանաց արժանի կը թուէր և Աճուրամազսայ յոյժ սիրելի։ Շնջրին, ազուէսը, ողնին՝ շան այլ և այլ տեսակները համարեալ էին։ շան մեռելուտին մարդկային զիսկի չափ վտանգաւոր և պղծիչ էր։

ԺԵ ֆարկարոն ցուցանէ թէլորդանոս կոչուած յանցանքն և նոցա պատիմները։ Մազգէսկանը գենազարձ ընողը, սպահապան

1. Անձնասպանութիւնը մարկ-արգան  
(մահու արժանի կամ մահացու) կոչուած  
մեղքերէն է, որպէս և չնութիւն, որք  
զնոպին կիջեցնեն ուզզակի ի դժոխա։

2. Աճուրայի մէջ գործածուած անունն  
է խորա, զոր Պ. Հաւկ Noter dog և  
Otter (զազ. Loutre) կը թարգմանէ։

շան կարծր ոսկը կամ՝ վեասակար ուտելիք տուողը, ծոցւոր շան զարնողը թէշոդանու են:

ՓԶ ֆարկարտը կը վերաբերի գաշտանկի, զոր պարտ է անէն դուրս և ի կրակէ և ի բարամանց հեռի տեղ մը բնակեցնել, և կերակուր պաշտել նմա երկաթեայ կամ կապարեայ անարդ սպասուք: Ախվիլեան վարդապետը որ Եզու գնացեր էր, կը պատմէր մեզ՝ թէ կրակապաշտք մինչեւ ցայժմ՝ կը բնակեցնեն զգաշտանիկն առանձին խուզի մը մէջ՝ որ ամեննեին հաղորդակցութիւն չունի տան հետ. անդ ոչ զարեգակն պիտի տեսնէ, ոչ զաստեզս և ոչ զանասուն. ոչ որ պիտի խօսի ընդ նմա: Մէկ քանի օր մնալէ ետքը՝ նախ գումիզաւ, և ապա պարզ և անուշահոտ ջրերով կը լուցուի և տուն կը վերադառնայ:

ՓԷ ֆարկարտը կը տնօրինէ այն աղօթները՝ զորս պարտ է առնել եղունգ կամ մազ կտրելու ատեն. եթէ պատշաճ աղօթքն չըրուցուին, կտրուած եղունգներն և մաղերն աշաւոր գէնկեր կ'ըլլան դիւաց ձեռքը՝ բարի արարչութիւնը վեր ի վայր ընելու համար, մինչեւ անգամ ամպք և հոգմունք անձրև բերելէ կ'արգելուին յեղանակին: Անշուշտ այդ գաղափարդ ալ կը հետևէր այն վարդապետութենէն, թէ որ ինչ ելանէ ի մարմնոյ՝ պիզծ է և պատկանի Արշմենի: Կտրուած հերը և եղունգները մեծ զգուշութեամբ գաղտարնի և մեկուսի տեղ մի պարտ է թաղել ի հող, որոշեալ խորութեամբ բացուած երեք ծակի մէջ, կարդալով այն աղօթներն որ զնոսա դիւաց իշխանութենէն սպաս կը պահեն, և ծակերուն բուրտիքն վեց կամ ինն շրջանակս զժել:

ՓԲ ֆարկարտին մէջ Ահուրամազտա կ'ըսէ Զրագաշտայ. « Են բազումք՝ որ զքահանայական փանդամն, զիրափզդրագնա՝ և ըլրաբարունա կը կրեն, սակայն մերկ են ի դենէս. մի անուաներ զնոսա քահանայո. նա որ զգիշերն ի բուն քնոյլ կ'անցնէ՝ առանց աղօթից և առանց կրօնական պարտքերն ընելու, նա որ ոչ ուսանի զօրէնս և ոչ կատարէ զահմանեալ կարգս պաշտամանց, չէ « աշրաւո » (կրակաքուրմ):

Ահուրամազտա Բարուար թռչնոյ (աքաղաղի) գովեստը կ'ընէ, որ ի ծագել այգուն կ'աղաղակէ. « Զարթիր մահկանացու, օրհնէ զարբութիւն որ ամենէն թանկագին բանն է. չի վայլեր քեզ երկ կար քուն » և այլն:

4. Տեսակ մի գաւազան էր ճճիները մեռցնելու. միանգամայն և նշան քահանայութեան:

Դրուխաշ այսը Արտօնա հրեշտակին ահազին լախտէն սարսափած, կը յայտնէ նմա զմեղաւորսն՝ որոց չետ խառնակելով կ'առնեցնէ զսերունդ իւր, նա որ բնաւ նոր զգեստ չի տար՝ յորժամ խնդրեն ի նմանէ. նա որ կը միզէ ստից ծայրէն միայն ոտնաշափ մի հեռաւորութեամբ:... Այդ երկու յանցանաց քաւութիւն կայ. բայց երբ ոմն տասն և հինգ տարեկանէ տաելի ըլլալով, պոռնկի հետ առնշութիւն ունենայ, նմա քաւութիւն չկայ. այդպիսին իսպառ կորուսեալ է և պիտդ:

Իսկ Ահուրամազտայ ամենէն տաելի տաելին՝ երբ մազգէական մը ամուսնանայ ընդ դիւսպաշտի, երբ մէկը զիսութեամբ մերձեանայ դաշտանկի, այս վերջինս՝ յանցանացը քաւութեան համար պարտի հաղար ոչխարս նուիրել, տալ քահանային սոցա որոշեալ մասունքը, որպէս զի կրակի ճարակ ըլլան. Հաղար բեռինս փայտի բերել կրակի. երեսուն կամուրջ հաստատել. Հաղար խթան և հաշտար հարազանի (սրաօշաքարանա) ըմբկել:

ԺԹ ֆարկարտին մէջ կը տեսնենք՝ թէ մահազործ դիւսպետն Անկրո-Մահինեռւշ խաղայ զայ ի հիւսիսոյ և կը պատուիրէ Տրուխշ այսին երթալ սպանանել զջարաթուշզրա: Բայց սա Ետրա-ահնուշ վահրեօ աղօթքը կը զրուցէ, բարի ջրերը և զմազգեղն զենը օգնութեան կը կանչէ: Տրուխշ ահարեկ կը փախչի ու իւր տիրոջը զառնապով « Ստախոս Անկրո-Մահինեռւշ, կ'աղաղակէ, ա՛ կարեկի չէ ինձ վեսել Զարաթուշզրայ »: Յայնժամ Անկրո-Մահինեռւշ անձամբ կ'ուզէ փորձել զմարդարէն. « Մի խորտակեր զիմ արարածու անիծէ զմազգեղն դէն և ես զքեզ Վատհազազն արքային չափ կը ճոխացնեմ »: — « Մարմինս, հոգիս և կեանքս թող բաժնուին յիշրեաց, քան անիծեմ զմազգեղն դէն », կը պատասխանէ Զարաթուշդրաւ: — « Ի՞նչ խօսքերով և որպիսի զինուք կարես դու խորտակել իմ արարածներս », կը հարցնէ չար Ոզին: Որում Զարաթուշզրաւ. « Սանդը, բաժակը, հօման և Մազտայի բարբառած խօսքերն իմ հզօրագոյն զէնքերս են. այս խօսքերով պիտի զարնեմ և խորտակեմ, ոչ չարագործդ Անկրո-Մահինեռւշ: Բարերար Ոզին արար զնոսա անսամբան ժամանակին մէջ (զրումի արարանէ), և գործակից եղեն նմա անմահ Աշխարանաքն՝ բարի կառավարիչքն այն և բարի յարդարողքն »<sup>1</sup>:

1. Անքըթիւի ժամանակի մովակեռք հետազայ կերպով թարգմանել տուեր էին նմա այդ եարի պարբերութիւնդ: « Ա հասահման ժամանակը ստեղծեց զքեզ, Անսահման ժամանակը (Զարուան արարանա) ստեղծեց զքեզ. նա ստեղծեց և զԱմշարանաս ։ Աւես շարագործդ Ահրիման, ամենափառ էակը

Զբագլաց տեղեկութիւններ կը խնդրէ յԱհուրամազայ հան-  
գերձեալ կենաց վրայ։ «Երբ մէկը մեռնի՝ դեք բոլորովքը կը  
շրջին երեք զիշեր։ Երբորդ զիշերուան լուսնալու տաեն, և յօրժամ  
Միթրա լուսաճաճանչ զինուք կը բաձրանայ ի կատարս լերանց,  
վիզարէշ՝ անուն գեն կ'առնու զհողին, ու զիւազաշտից երկրէն՝  
հինաւուրց համբայններէ անցընելով՝ կը հասուցանէ ի կամուրջն Զին-  
վատ։ Անդ բարի գործոց խիզճը կը ներկայանայ նմա զեղատեսիլ  
առոյգ աղջկան կերպարանոք, կը նետէ զնա ի խաւար եթէ չարա-  
գործ է. խել եթէ բարի՝ կ'անցնէ կամրջին վրայէն ու կը տանի ի  
լեան երկնային (Հարօ-պէրկերախիդի) առաջի ոսկեղէն աթոռոյ Ա-  
հուրամազայ, ի գրախան երկնային (կարօ-տմանա)՝<sup>2</sup> որ է բնա-  
կավայր Ահուրայ, Ամշասրանտից և արդարոց։

թիւն մ'անգամ բաւական է ցուցանելու,   
թէ այս պարբերութեանս մէջ և անսահ-  
ման ժամանակ՝ բաւերդ ու ուղղական  
այլ պարապական հոլով կը կրեն, ուստի  
և չեն կրնար տէր բայի ըլլաւ։ Ասկէ  
կարելի է զատել՝ թէ որքան անհմուտ  
էին Աւետայի լեզուին Փարսի վար-  
դապետք, կրնանք ևս ըսել Սասանեան  
Ավագետք, որոց ատենէն մնացած եր  
անշուշտ այդ ծուռ մ՛նկնութիւնդ, յորտէ  
և ծագած կը կարծուի Որմղայ և Արհ-  
մենի Նախածնորդի, այս է Զրուանաց  
վարդապետութիւնը, որը կը տեսնենը  
Եղնկայ, Եղիշեայ և Խորենացոյ, ինչ-  
ովէ և Սասանեանց ժամանակակից յոյն  
պատմաց մէջ, և որ բոլորին հակա-  
ռակ է Աւետայի սկզբանց։ Եթէ նախ-  
նի Փարսիկը Որմղայն հնագոյն հակ մը  
ձանչնային Զրուան անտամը, անիմանալի  
կըլլար՝ թէ սա ինչուս ուրիշ տեղ մը  
չի յիշատակիր Աւետայի մէջ, քանի  
որ գրեամէ ամեն գլխայ մէջ Ահուրա-  
մազայ կը ներկայանայ մեզ իրրե անս-  
կիզըն և ինքնազոյ Աբարիչ։

1. Դիւազաշտից երկիր, այս է Հընդ-  
կաստան։

2. Կար է երգ. տման կամ նման՝  
բնակատեղի, տուն։ Կարօ-տմանն է ու-  
րեմն ։ Տուն Երգոց ։ Բազանտ մատե-  
նից մէջ այդ բաղադրեալ բառդ ճանայուր  
բարօւման գրեալ է. յորմէ արդի պար-  
կերէն ճանայուր քարազման, որ նշանակէ  
«Արքայութիւն», աթօռն Աստուծոյ ։  
Տարակը ջոնինք որ մեր ցերեղիննց  
բառն ալ նոյն է: Թազման տեղին միութ  
կը բերէ զհանգերձեալ կեանս։ Ինչպէս  
որ Եղաւաց ումանց մէջ և գծոխը ։ կը  
գործածուի անխտիր իրրե և գերեզման,  
չիրիմ։ միանգամմայն և իրրե ։ տար-  
արսոս, սանդարամեաք ։ նոյնագէս ալ  
ուրիշ աղգեր դրախտ կամ արքայութիւն  
կարօւման յորչօրջեցին զդիր հանգստեան։  
— Խիկ Սահմարամետաց անունն է կրա-  
մայից մէջ Տունժա-տմանն որ թարգ-  
մանի և ընակարան տրուժի կամ սուռ-  
թեան ։ Աւելի վերջերը կըմատեցաւ ի  
տուզնանն, ուստի և Բազանտ՝ Տուզոյի  
և արդի պարսկ. Տուզախ, որ է լծորդ  
հայկ. «զժոխը» բառի։ Արդի պարսկ.  
տախմա-ին-ֆիրուզի նշանակէ և երկինք։  
տախմա կամ տախմ է չչիրիմ։ տեղի  
թազման ։ սրակս մեկնեցինք ի վերոյ-  
և ֆիրուզի է քար պատուական երկնա-  
զայն որ և կոչի բերուզի։

Ի և Ի Ա. ֆարկարտքն ճառեն զբժշկութենէ, և ախտերը վաշելու համար գիւթական ազօթներ կը պարունակեն: Զմարդիկ հիւանդութենէ առաջին ազատողը թրիթա անուն ոմն է. իսկ բժշկութեան հրեշտակն է Այրեաման, որում Ահուրամազուա ինքնին կը զրկէ զառարհանդակն իւր Կարես-Անհա, որպէս զի զայ բաւծէ զարարածու իւր Անկրօ-Ամինեուչի հնարած 99.999 ահասկ ախտերէն :

## ՃԲ

Որչափ որ Վենտիտատի այլեայլ զլուխները շատ մեծ հնութեան նշաններ կրեն, կարելի չէ սակայն նկատել զառ իրրեւ հարազատ զրութիւն Ջրագաշտայ, որ Կաթայից մէջ չի յիշեր բնու ոչ այն բազմապիսի պարտականութիւնները՝ զորս կը սահմանէ Վենտիտատ ճշմարիտ հաւատացելոց, ոչ դիտկանց վերաբերող վարդապետութիւնքը՝ որք այդ Օրինազրոյն շարադրուած ատենը ամենակարեսոր և հիմնական բաններ էին, և ոչ իսկ իննօրեայ քաւութիւնը՝ որ այնքան նպաստամատոց պիտի ըլլար մտզդէական աշխարհին: Յայտ է՛ թէ Ջրագաշա այդ սկզբանց ծանրակշռութիւն մը չէր տուած, առա թէ ոչ՝ երբ կը հարցնէր Ահուրամազուայ՝ գիւտաց չար ազգեցութիւնները չնշելու միջոցները, հարկ էր զոցա նկատմամբ ևս պատուիրանս տալ իւր հետևողաց, փոխան զոցա՝ նու մի միայն կրակին պայծառութենէն, Ահուրամազուայ իրեն սու վրեցուցած խօսքերուն կամ ազօթներուն զօրութենէն, հողագործութեան օգտակարութենէն, և մատաց, բանից և գործոց սրբութենէն միայն կը խօսի: Ակզրունք մը կայ սակայն հասարակ Վենտիտատի և Կաթայից, այս է անզրժելի նկատել զիսսամունս և զդաշին՝ որք Այրեա կոշուած են: Այդ սկզբան վրայ ուզեր էր հիմնել Ջրագաշտ իւր կրօնական նոր հասարակութիւնը:

Վենտիտատը հաւանաբար նմա յաջորդող քահանայապետոց դորձն է, որք Ջարաթթուշգէմօ<sup>1</sup> կը յորջորջէին, և որոց՝ ինչպէս և թագաւորաց համար կը կարծուէր՝ թէ ուզդակի Ահուրամազուայ հետ կը խօրհրդակցին և ի նմանէ պատգամներ կ'ընդունին: Վասն

1. Դեմո գերադրական վերջաւորութիւն է. որով զարարուշգէմօ ըսել կ'ըլւաց զրադարսապես կամ քահանաբարակես:

որոյ և նոցա պատուիրանքն ալ հետզետէ մեծին Զրադաշտայ քարոզութեանց հաւասար պաշտելի եղան Մազդեզանց:

Գալով Եաշդից, տարակոյս չկայ թէ սոքա չեն կրնար ընծայիլ Զրադաշտայ, և ոչ խոկ նորա անմիջական յաջորդաց: Եաշդիք, ինչպէս և աւելի կարճառօտ տաղքն՝ Աֆրինկանք, Կահք և այլն, Զէնասաւեսայի նորագոյն մասերն են: Սոցա շարադրուած ատենք մազդէականութիւնը չափէ զուրս աղաւազեր ու նախնի բազմաստուածութեան յոյժ մօտեցեր էր: Երկու զրութեան ձև ունին Եաշդիք, չափեալ տաղքը՝ որք պարսիկ վիպասանաց երգերն ըլլալու էին, և որովք հիւսեց վերջերս Ֆիրոշվսին զիւր զիւցազներգուգութիւնը. երկրորդ՝ խօսակցութիւններ ընդ Ահուրամազտայ: Ամենուն մէջ տիրող ոգին է՝ բարձրացնել զՄիթրա, զԴիշուրիյա, զԱնահիս և զայլ հրեշտական, և զնոսա համհարզ և զուգաստիճան առնել Ահուրամազտայ. մինչեւ անգամ Զրադաշտայ հոչակած գերագոյն Լակը մերթ ընդ մերթ պաշտօն մատուցանող կ'ըլլայ միւս դից, և Զրադաշտ ինքնին երկրապացու կը մինի նոցա: Ի զուր կը փնտուենք այդպիսի աղճատանք Կաթայից մէջ:

Եաշդիք, որ Հնդկաց Բիւրանական կոչուած դպրութեանց մասմի իւկը կը համապատասխանեն, մեծապէս նպաստեցին Զրադաշտայ հաստատած կրօնը խանգարելու և վերականգնելու զոր ինչ նա տապալել ջանացեր էր: Խոկ նոցա զրութեան թուականը մօտ ի մօտոյ կարելի է զնել Փրիստոսէ յառաջ հինգերորդ զարուն սկիզբները: Ֆրաւարտին հաշըր կը յիշէ զկաօգէմա՝ այս է Կաւզամա Պուտուհա՝ հիմնարկողն Պուտուհայութեան: Ուրիշ վկայութիւններէ զիտեմք՝ թէ հնդկական կրօնդ ծաւալեր էր ևս Բակուրիոյ մէջ: Բայց որովհետեւ Պուտուհա Փրիստոսէ 543 տարի յառաջ մեռեր էր, և գոնէ հարիւր խօսն տարի մը պէտք էր որ իւր կրօնքը հասնէր ու տարածուէր Բակարիոյ մէջ, Ֆրաւարտին եաշդին թուականը կ'ըլլայ 450–400 նախ քան գԲրիստոս: Ասկէ աւելի վերջը դնել անհնար կը թուիք. որովհետեւ Փրկչին թուականէն յառաջ սորտ լեզուն արգէն անհետացեր էր, և Ֆրաւարտին եաշդը ոնոյ և զաղափարաց նկատմամբ միւս եաշդերէն չի տարբերիր. մինչդեռ ասոնց ամենուն լեզուն յոյժ նման է Վենտիտատի մի քանի Փարկարաներուն լեզուին, առանց աւելի քերականական սխալներ կամ փոփոխութիւններ ունենալու: Պատճառ մ'ալ ունինք գոնէ զլխաւոր Եաշդերն 400էն ասդին չդասելու, վասն զի ինչպէս որ Արտաշէս Մնեմոնի բևեռագիրներէն յայտնի է, Միթրայ և

Անահտոյ պաշտամունքը Պարսից պետութեան ամէն կողմը տարածուած էին (404–362), մինչդեռ Վշտասպեան Դարեհի բազմաթիւ արձանագրութեանց մէջ նոցա յիշատակութիւնը չկայ ընաւ :

## ՃԳ

Պահաւիկ մատեանք յերկուս կարգս կրնան բաժանիլ. Ա. թարգմանութիւնք յԱւեսպայէ. Բ. գրութիւնք որոց Աւեսպայի ւեզուաւ բնագիր մը ձեռուլնիս հասած չէ: Թարգմանութիւնքն ընդհանրապէս յոյժ բառական են, և ստէպ ընդմիջեալ՝ Աւեսպայի բնագրօք կամ երկար լուսարանութեամբք: Ազատ գրութիւնքն զրեաթէ ամբողջապէս կրօնական են, մէկ քանին միայն պատմական վիպաց կը վերաբերին: Թէ թարգմանութեանց և թէ ազատ գրուածոց ոմանց բազմանտ վերծանութիւններ ալ կան Աւեսպայեան կտմ և արդի պարակական տառիւք: Երբ բազանտ ձեռագիր մը Աւեսպայի նշանագրօք գրուած է; Աննագրիս կամ Կիւձերագերէն թարգմանութիւն մ'ալ կ'ունենայ իւր հետը շատ անզամ: Եթէ արդի պարակական տառիւք գրուած ըլլայ, պարսկերէն թարգմանութեամբ ընդմիջեալ կ'ըլլայ: Են և մատեանք՝ որք պարսկերէն զատ ուրիշ լեզուաւ չկան: ասոնք են զիսաւորաբար թիվայար կոչուածքն, որք յիշատակարանք են արարտական կարգաց և որոշմանց և զանազան կրօնական խնդրոց: Թիվայտթքս սովորաբար սոնկ պարսկերէն բառ ունին: բայց ոմանք ալ այնքան խառն են արարերենի հետ, որքան Պարսից մահմետական մատենագրութիւնը:

Պահաւիկ թարգմանութեանց մէջ կտրեորագոյնն է պահաւիկ Վենտիտատն, որ շուրջ 48.000 բառ ունի<sup>1</sup>: Ասկէ ետք կու դայ Պահաւիկ Եասման: 39.000 բառ:

Պահաւիկ Վիսրարատն. 3.300 բառ:

Հասոխադ նասքն, 1.530 բառ, աս հասուկտիր թարգմանութիւն մի է համանուն նասքին, և յերիս Փարկարոս կը բաժանի, որոց առաջինը Աշկեմ-Վօնու աղօթից՝ պարագայից համեմատ այլեւայլ գորութիւններէն կը ճառէ: երկրորդ և երրորդ Փարկարոսն կը նկարագրեն արդարոց և մեղաւորաց հոգւոց վիճակը յերիս աւուրս որ զինի մահուան:

1. Այս և հետագայ թուոց մէջ ի և ոչ ի վերջաւորութիւնը զոր կ'առնեն: ամար առեալ չեն վա՞ և ե չ շաղկապն, յատկացեալք և բացայաբռեալք:

Վիշտասր-Երաշյն, 5,300 բառ, են և պահւափկ թարգմանութիւք, ուրիշ զանազան Եացափ և աւելի կարճառօտ Ազոթից (Ախայիշը, կահանպարը և այլն):

Նիրակիսդան, 30,000 բառ, հատուածներ կու տայ Աւեսդայի Հուսարան նապէն որոյ բնագիրը կորուսեալ է, և կը լուսարանէ զնսա պահւափկ լեզուաւ: Արարողաթեանց և ծիսից վերաբերեալ մանրամասն պատուիրանս կը պարունակէ:

Գարնք այժմ՝ այն պահւափկ զրուածոց՝ որը Աւեսդային լեզուաւ բնագիր չունին:

Վաձարաբարտի-Ծինի, 19,000 բառ, հաւաքածոյ մի է պէսպիսի կրօնական պատուիրանաց:

Ծինքարտ, որ երկարագոյն պահւափկ զրութիւնն է՝ 170,000 բառ, թէպէտ առաջին և երկրորդ զիրքն պակաս են: Երրորդ զիրքն կրօնական խնդրոց և պարտուց վրայօք մեկնութիւններ կը պարունակէ՝ ի զիտութիւն հաւասացելոց և ի փարասումն տարակուանաց, և կը վերջանայ լուսնային և արեգակնային տարւոյ նկարագրութեամբ: Չորրորդ զրքին մէջ վարդապետութիւններ կան՝ զորս ժողովեր էր Ֆարուխատան անուն ոմն յայլ և այլ կրօնական մատենից, և կը պատմուի միանդամայն՝ թէ ինչ ջանաքեր ըրին թագաւորք՝ ոկսեալ ի Վշտարայ մինչև ցլուսրով Քաւատան (Խուշրէվան), առ ի հաւափել և պահպանել զտոհմային մատենագրութիւնը: Զինգերորդ զիրքը պատմական, աստեղագիւտական և կրօնական դժուարին խնդրոց վրայօք զատաստաններ կը պարունակէ: Վեցերորդը՝ Զրադաշտայ նախնական կրօնին վարդապետաց, այս է Բորիոտքէցաց պատմական և բարոյական գաւանութիւնքը կը ցուցանէ: Եօթներորդը մազգեզն գենի միջոցաւ կատարած հրաշքները կը պատմէ: Ութերորդ և իններորդը հին Աւեսդայի քան և մէկ նասքերուն պարունակութիւնները համառօտիւ կը յայտնէ:

1. Ֆարմանկ կամ ֆրամանկ է հրահանք՝ արական պահպան և մէկ՝ Աւեսդայի լեզուաւ, նորմական և խառոչք՝ պահւափերէն. այդպէս յորջորջեալ է հրահանգ՝ վասն զի արդ երկու բառերով կը ոկսի: Կրօ-

նորինակ բառից հաւաքածոյներ կան յԱրաբերէնէ կամ ի Պարսկերէնէ ի թուքերէն՝ որպէս նյասադ իւս ոբակոն, թէկազէի Վէհայի և այլն:

Տասթուր Փեշօթանճի տպագրեց Տիմքարտի բնագիրը՝ հանդերձ Կիւճերագերէն և Անգղիարէն թարգմանութեամբք:

Տատասպանի-Ցինի. բառ 30.000. իննառուն երկու հարցմունք և պատասխանիք՝ կրօնական պարտուց, պաշտամանց և զիսպաց վրայ: Հեղինակն է Տատարը Մինօչիհար Եռուտա-Տաման, որ Մովահետան Մովահետ էր ի Պարս և ի Կրման ի թուականին Յաղկերտի 350, այս է յամի Տեան 981: Նոյն մակագրով ուրիշ գրչագիր մ'ալ կայ, որ եթէ ամբողջապէս վերոյգրեալ հեղինակին երկասիրութիւնն է, 78.000 բառ կը պարունակէ: Զաս թարգմանեց Պ. Ուէսթ. 1882: Pahlavi texts.

Շիքանտի-Լուսմանի-Ռիհառ. 18.000 բառ: Վիճաբանական գրութիւն մի է, յորում հեղինակը կ'ապացուցանէ Աստուծոյ գոյութիւնը, կը հերքէ զառարկութիւնս անաստուածից և անոնց, որ ուրանալով զգայութիւն չար Ոգոյն՝ զամենայն բարի և զարմիանգամայն կը վերադնեն Աստուծոյ, և կը քննադատէ Հրէից, Քրիստոնէից և Մանկեցւոց վարդապետութիւնները: Սա եւս թարգմանեցաւ ի ձեռն Պ. Ուէսթի, (Pahlavi texts), և հրատարակցաւ ընդ Մատարի՝ որ մազգեզանց կրօնի քրիստոնէականն է:

Պունտանիշ, որ և կոչի Զանո-աբաս՝ որ է Զանտագէտ, 13.000 բառ: « Ճառէ զարարչագրորդութիւնն Ահուրամազաս, և զբնդղեմակարութիւնէ չար Ոգոյն, և ապա զբնութիւնէ արարածոց ի սկզբանէ մինչև ցկատարած, այս է մինչև ցհանդերձեալ կեանս, ըստ յայտնութեան որ եզեւ Մազգեզանց »: Վիճակշման զերմաններէն թարգմանութիւն մը հրատարակեց 1863ին և Պ. Խուս զի 1868ին. Պ. Ուէսթ ալ թարգմանեց յԱնգղիարէն 1880ին:

Մայնօ-Խրատ կամ Ոգի իմաստութեան. 12.000 բառ: Վաթուուն և երկու պատասխանիք՝ զորս տայ Ոգին առ Խոհական Ոմն, յաղագս կրօնական և բարոյական և այլ զանագան խնդրոց: Ոոր արնագիրը Բագանա լեզուաւ զրուած կ'երեւի և ապա փոխադրեալ ի Բահրամի և ի Սանաքրիտ: Պ. Ուէսթ հրատարակեց զանոքրիտ և զրագանտ օրինական՝ հանդերձ անգղիարէն թարգմանութիւնը՝ յամին 1871: Երկրորդ թարգմանութիւն մի Pahlavi texts հաւաքածոյին մէջ 1885ին; Պ. Ատրիէն Պարթէւմի ալ զաղղիարէն ընտիր թարգմանութիւն մի յամին 1888, Paris, Leroux:

Շայասդ-րա-շայասդ. 10.000 բառ: Կը ցուցանէ՝ թէ ինչ են բարի զործք և զինչ մեղք, զիականց և այլոց սրբութեանց, որպէս պարա է զարմանել և սորիի ի նոցանէ. զիարդ պատշաճ է ի

կիր առնուլ գնուիրական գօտին և գշասլիկն և այլն։ Այդ խնդիրներդ Ռիվայէթներուն մէջ ալ կան, բայց ասա կը գտնեմք հին վկայութիւններ, որոց հեղինակաց երկասիրութիւնքը մեզ հասած չեն, ինչպէս և Աւետարյի նասքերու հասուածներ՝ զորս ուրիշ մասենից մէջ չենք տեսներ։ Պ. Աւետ հրատարակեց թարգմանութիւն մը 1880ին։

Արտա<sup>1</sup>-Ալիրաֆ-նամաք, այս է Վիրք Արտավիրաֆայ, 8.800 բառ։ Արտավիրաֆդ սրբակաց մովսես մի էր՝ որ եօթն օր ճանապարհորդեր էր ի հանգերձեալ աշխարհն և տեսեր էր արդարոց համար պատրաստեալ վարձքը և մեղաւորաց պատիժները։ միանգումայն և այն անորոշ վիճակը, յորում կը գտնուէին անոնք՝ ուրոնց մեզքն հաւատար էին առավիճութեանց։ Դժոխոց նկարագրութիւնը զարմանալի նմանութիւններ ունի Տանթէի նկարագրութեանց հետ։ Պահլաւիկ օրինակը հանգերձ անդղիարէն թարգմանութեամբ հրատարակեցաւ յամին 1872։

Պահման Եաշդ. 4.200 բառ։ Յայտնութիւն մի է յԱհուրամազայ առ Զրադաշտ, յորում կը պատմուին Մազգեզն Գենի կրած տառապանքը և ունեցած յաղթանակները Զրադաշտայ օրէն մինչեւ ցկասարած աշխարհի։ Մէր ձեռքը հասած օրինակը Մահմետականաց յարուցած հարածանքն ալ կը յիշատակէ, ուրեմն յայտ է՝ թէ Արտարացոց արշաւանքէն վերջը գրուած է։ Հաւանական է սակայն որ բնագիրն աւելի հին էր ու յետոյ ձեռք խառնուեցաւ։ Սորս բազանա օրինակներ աւելի տարածուած են։ Պ. Աւետ ասոր ալ անզգիարէն թարգմանութիւնը հրատարակեց յամին 1880. — Pahlavi Texts. Oxford։

Քարմամաքի-Այրախշիրի Բարաբան, 5.600 բառ։ Պատմութիւն Արտաշրի և որդույ նորա Շապհոյ, սկսեալ ի Ասսանայ՝ որ էր ըստ զրուածոյս հայր Արտաշրի, մինչև յԱրմիզդ՝ որ թագաւորեաց զինի Շապհոյ։ Բայց այս վիրքս համանուն երկասիրութենէ մը համառօտեալ կամ քաղեալ ըլլալու է, որովհետեւ այս պարբերութեամբ կը սկսի. « զրեալ է ի քարմամաքն բարաքան Արտաշրի թէ » . . . .

Եատրարի գարիրան, 3.000 բառ։ Պատմութիւն պտտերազմին զոր մղեաց Վշտար արքայ ընդ Արձատրայ։

1. Երբեմն ալ կը դրուի արտայի, զոր գամայն և յատուկ անուն է. տես Պ. Մարթ է ևս ընթեռուլ Արտակ. Ար- Հաւկի Essays, ծն. յէջ 106։  
տայի նշանակէ ուղիղ, արդար, միան-

« Քաղաքք Երանայ » . 880 բառ : Քաղաքաց անուանքը կուտայ՝ համառօտ անդեկութեամբք :

« Հրաշալիք Աէիսդան աշխարհի » . 290 բառ :

Անտարձի Խիւսրո-ի-Շաւատան : Կտոր կամ յետին բանք Կուշրէվանայ արքայի . 380 բառ :

« Պատճէն ամուսնական գային » . 400 բառ : Հնագոյն ձեռաշիքը Յազկերտի 627 թուականը կը կրէ . այս է 1258 :

Գրանակի Աշասեւուն . այս է բառզիրք կամ հրահանգը ի Պահաւաքենէ ի Բազանա , որոյ վրայ արդէն առիթ ունեցանք խօսելու :

Բաց յայզցանէ են և երեսունի շափ զանազան փաքք երկասիրութիւնք :

Պահաւիկ Յարզմանաթիւնք 104,000 բառ , իսկ ազատ երկասիրութիւնք 413,000 բառ կը պարունակեն : Մինչև ցարդ Հնագիտաց կողմանէ քննագուտեալ և ուսումնասիրեալ պահաւիկ զրութեանց բառից համագումարը 517 հազարի կը հասնի ուրեմն , որ քառասուն անգամ Պունտահիշի և մետասուն անգամ պահաւիկ Վենտիտատի շափ ըսկէ է :

Այսու հանդերձ պէտք չէ կարծել , թէ վերոյգրեալ ցանկին մէջ յիշասակեալ գրութիւններէ զատ պահաւաւիկ և բազանա մատենազրութիւնք ի սպառ փճացած ըլլան : 1878էն ի վեր գտնուեցաւ շատ աւելի ընդարձակ Պունտահիշ մը՝ որ Մեծ Պունտահիշ կը կոչուի . Պահաւիկ Ծիվայաթ մի . Աստանեան զատասատանազիրք մը . նոյն իսկ Աւեսպայհան լեզուաւ այլ և այլ հատուկոտորք , որք կորուսեալ Նասքերու բեկորքն են , և շատ հաւանական է՝ որ որ ըստ օրէ ուրիշ ձեռագիրք ու երեսն ելլան :

## Ճ Դ

Յայս վայր քննեցինք զմազդէական վարդապետութիւնն՝ ինչպէս որ կը ներկոյանան մեզ Պարսից հին մատենից մէջ : Տեսանք՝ թէ ինչ մեծ յեղափոխութիւն մը յառաջ բերեր էր Զրադաշտ , քարոզելով փոխան հնդկական բազմաստուածութեան՝ միայնոյ Աստուծոյ վարդապետութիւնը . թէ ինչպէս նորա յաջորդները հետազայ զայ զարուց մէջ արարշագործ էութիւնը յերկուս բաժանեցին , ի բարի և ի չար , որ այնուհետեւ զրագաշտական օրինաց հիմաշկան սկզբունքն եղաւ : Այս երկու չափաց ալ ընկեր և օգնական տուին Պրահմանաց բնապաշտութեան այլևսց աստուածութիւնքը :

Զրադաշտայ պարզ զրութիւնը այնքան խճողեցաւ, որ քրիստոնեայ Հայք իրաւունք ունէին հարցնելու իրենց Պարսկաստանէն դարձող ուրացեալ եղբարց. «Ե՞րբ ուսանիցիք զրազմաթիւ անուանս աստուածոցն նոցա»<sup>1:</sup>

Սակայն պարտ է զիտել՝ թէ նոյն ինքն Զրադաշտայ օրերէն ետքը Աւեսդայի մէջ քարոզուած վարդապետութիւնը բացարձաւ կապէս երկարմտաեան չէ: Արդարեւ՝ Անկրո-Մամինեռու համազույակից լինելով Ահուրամազտայ և անկախ ի նմանէ, միանգամայն և ստեղծագործելու կարողութիւն ունենալովն, կը տարրերէր լեռնածագործանէն բարձրին անբաւական էր Բարի Արարչին գէմ, եթէ զիտնային մարդիկ և պահէին ըստ պատշաճի Արմեզայ պատուիրանքը: Մշաց որ Արհմէնի իշխանութիւնն ինչ որ ալ ըլլար, ժամանակաւոր էր<sup>2:</sup> մեռելոց ընդհանուր յարութիւն մը վախճան պիտի տայր այդ իշխանութեան, և այնուհետեւ Ահուրամազտա բացարձակ պիտի ինքնակալէր համայն տիեզերաց: Այդ յարութեան վարդապետութիւնը արդէն բաւական որոշ տեսանելի է Աւեսդայի մէջ, բայց աւելի մանրապատում կ'ընծայի մեզ ի Պունաահիշ, որ աւանդութեանց և այժմ կորուսեալ հին մատենից հաւաքածոյ մի է<sup>3:</sup> Այդ յարութիւնդ, զոր պահմանիկ զպրութիւնք Ջրաշաքերտ կը կոչին (անշուշտ մեր «Հրաշակերտը» զոյտկանարար զործածուած), յիշնեայ ևս յիշտասակեալ է<sup>4:</sup>

### 1. Եղիշէ, Գ, 3:

2. 9000 տարի պիտի տեէր ըստ Եղիշէ կայ. ըստ Պաւստահիշի 12,000, յորմէ եմէ զեղչենք զառաջին 3,000 ամսն, յոր ժամանակ արարածք տակաւին անսիւթական՝ անշարժ և անշօշափելի վիճակի մը մէջ էին, երկուց էակաց կոռույն տեսականութեան պահանակ պահանակի մը պիտի համար առնեն և անման ըլլան, և ամենայն ինչ պիտի կարգադրուի ըստ խնդրուածոց նոցա:

4. «Քարձեալ՝ եթէ ասուածք նոցա (Պարսից) մահկանացուք իցեն, ինքեանք յարութեան զիարդ ակն ունիցին. և մասնաւենք երեքմտականն յարութեամբ զոր չէ պարտ յարութիւն համարել, այլ չյարութիւն»: Էջ 143: — Ի՞նչ է սակայն երեքմտական յարութիւնդ: Մաքենիս նախ Պաւստահիշից կընական մատենին կըդիմէ՝ որ Դրիբիդաքս կը կոչի. զոր մարմէ է մարզմանել ևսափիտոկ կամ երեքմտական: Պուտահիշի կընի, որ

Ապային մազդեզն կրօնից վերջին՝ կերպարանքն Աւեստայի և այլ հին մատենից մէջ տեսածնիս չէ։ Աւեստայի լեզուն արդէն Քրիստոնէ յառաջ սկսեր էր մոսցութիւն և անհետանալ։ ընթերցողք թարգմանութեանց և մեկնութեանց կը կարօտէին զայն հասկնաւլու համար։ Ի վերջին կէս երրորդ գարուն Մանի անուն ոմն Աւեստայի այժմ կորուսեալ մեկնութիւն մը՝ Զանտ մը՝ հիմն առանելով, կամ մոտացածին զանտ մը յօրինելով, բացարձակ երկարամտան գրութիւնը քարոզեց, այս է անսկրինակից, ինքնագոյ և յաւիտենական երկու արարչագործ Խութիւնք՝ Բարւոյ և Զարի։ իրարու բնդգիմակաց և հոււասարազօր։ Եւ ի Զրադաշտականութենէ, ի Քրիստոնէութենէ և ի Յալմուտեան Որինաց շատ մը գաւանութիւններ առնելով և խանելով յօդուածոյ կրօն մը կարկասեց, զամուսնութիւնը պիղծ կը համարէր և զիստակեաց բարս

Վետայեանին բուրովին հակառակն էր, երեք չարուց միջոց աճելէ և զօրանալէ յետոյ՝ ընկճեցաւ ի հալածանացն զորս յարուցին Պրահմանք, և արտաքուսելով ի Հնդկաստանէ տարածեցաւ Թուրանեան ազգաց մէջ. բայց և այնպէս մեծ ազդեցութիւն մի ունեցեր եր Վետայեան կրօնից վրայ։ Պուտահայի գրութեամբ մարդոյն վերջին և գերազանց նպատակն է՝ յեւ այլ և այլ հոգեփոխութեանց հանգչել ի նիդը յաւետենական կամ յուշեւութեան, զոր նիրվագն կը կոչէ. այս ալ ուղրումութեամբք, համբերութեամբք, բարուց ուղղութեամբք, կործութեամբք և միմեանց սիրով կը ստացուի։ Այդ էր արտեօք Երջնկայ յարուցրիւն հօշածը. կարելի է բայց յայնեամ պարտ է Ենթագրել՝ թէ Պուտահայութիւնը շատ աւելի խառնաւած էր ընդ մազդեական օրինաց քան զոր ինչ կարծել կու տան մեզ պատմական յիշակարանք։

Սասանանց մամանակը Զանտի Առինում նշանա վերնայրով պահաւիկ գրութիւն մի կար՝ որոյ համառութեանցին մունինք այժմ՝ Պահման Եաշդ (առև ի վերոյ, էջ 142), և որ հանդերձեալ կենաց և ընդհանուր յարութեան նկատմամբ յայտնութիւն մի է յԱհու-

բամազտայ առ Զրադաշտ։ Այդ զանադ որ յերիս գիրս կամ գլուխս կը բաժանի, մազդէական գորութեանց մէջ այն գիրքը բանած է ինչ գիրք որ ունի Յավանանու Աւեստարանչի Յայտանութիւնը Այրը Գրաց մէջ՝ կարելի է թէ Եզնիկ այդ մատենակի ակնարկէ, զոր աւելի գիւրաւ կրնար ընթերցած ՌԱԱՌ՝ բան Պուտահայի բազմահասոր գրութիւնը, որոյ վարդապետութիւնը չի համաձայնիր մազդէական գորութեանց։

Ըստ Աւեստայի, արարչագործութիւնը որոշ նպատակ մի ունի, այս է Որմջայ հնար և միջոց պատրաստել առ ի խորտակել զԱմարն 9000 տարի պիտի առէ։ Առաջնն շշանը Զրադաշտաւ կը փակի. առ գիւրաց գորութիւնը կոտրեց, բայց չկարողացաւ ընաշինջ ընէլ զնոսա, քան որոյ կախը կը շարունակի։ Ի սերմանէ Զրադաշտայ, զոր Անահիս մոզգամած պահած է, յետ ժամանակաց (1600 տարի եռքը, որ ըստ հաշուոյ մազդեզանց՝ յամի Տեառն 1193) նոր մարգարէ մը պիտի ծնանի խորլը նեղուար անուն, որ զարարածս իրենց պատշաճ վիճակին պիտի գարձնէ, և որում պիտի հնազանդին թուրքք, Արաբացիք և Հոռվայեցիք։ Յայտանէ (1593ին) Երկրորդ մարգարէ մը պիտի

կը ջատագովէր։ Հեղինակին կենդանութեան առենը այդ նոր աշխադդ փայլեցաւ յոյժ և տարածեցաւ, բայց յետոյ թէ ուղղափառ մազդեզանց և թէ քրիստոնէից կողմանէ իրրե մոլորութիւն դաշտապարտուեցաւ<sup>1</sup>։

Ամկայն մոզք կը մերժէին այդ բացարձակ վարդապետութիւնդ, ու մեծ ատելութեամբ կը հալածէին զզանդիկս<sup>2</sup>։ Աւ ասուաւուածութեան միութիւնը պաշտպանելու համար ձեռք առին հաւանօրէն հին աւանդութիւն մը, որ մազդէականութեան տկարացած և երեսէ ընկած ժամանակները ձեսցած էր, և բատ որում՝ Որմիզդ և Արհմե չէին ինքնազոյ, այլ ճնունդք աւելի հնազոյն Էակի միոյ՝ զոր Զրուան կը կոչէին։ Արդի Փարսիք ևս կը նկատեն զԶրուան իրրե հիմնական և աներկրայելի դաւանութիւն հաւատոց իւրեանց<sup>3</sup>։ Բայց առիշ յառաջ տեսանք, թէ ինչպէս Աւես-

Տնանի՛ Խորչեաման, որ ուրիշ բարեկարգութիւններ պիտի ընէ։ Հուսկ յետոյ երրարդ մը՝ Առշիսո՞ւ «վէհազայն» քան զամենայն մարմնաւորս<sup>4</sup>։ Սա մեծ պատարագ մը պիտի նու իրէ երեսան ուրբաւաց ընկերակցոք — տասնիններն այր, և տասնիններն կին, — որը անդսաին ի սկզբանէ խազազական քննոյ մէջ կը սպասեն այդ հրաշավառա պաշտօնին։ ամենայն մարդ պիտի վերածնի և նոր մարմին զգենու՝ հասուն և կատարեալ, արք քառասուն տարեկան, իսկ մանկունք տասն և հինգ տարեկան հասակի մէջ։ ամէնքը մազդեզն օրէնքը պիտի դաւանին, և այսուհետեւ բարի խորհուրդն և բարի խոս և բարի գործն և եթ պիտի ունենան։ Մեռելոց յարութեամբն չար սպիր ընաշինջ պիտի ըլլան։ Արհմեն և Օձը (Աղմէ-Տամէց Պիւրասը) միայն պիտի մասն։ Քիչ մը վերջը Օձը հաւեալ սպինձոյ մէջ պիտի այրի և սպասի։ Արհմեն ալ պիտի զահազիքի դժոխոց անգունդը՝ որ բոցերու մէջ պիտի անհետանոյ, և աշխարհս պիտի սրբի յամենայն պղծութենէ։

Այդ և անջուշտ Եղնկայ ակնարկած յարութիւնը, որ բատ մազդեզն մատենից, յաջորդաբար երեց մարգարէից ձեռք որը պիտի կատարուի։ Գուցէ երեքմա-

տեսմ զրչագրի վրիպակ է և փոխան սորա երեքմասն կամ երեքմասնեան պարու և ընթեռանուլ։

1. Յայց զի Մանի կամեցաւ վերագոյն քան զնոցայն (մազդեզանց) կեղծօք վարս ցուցանել՝ թէ ամենենին իսկ ազաւ ի կարեաց ցանկութեանց իցէ, և ոչ քան զնոցայն միայն այլ և քան զամենայն քէշից, ուստի յանդիմանեալ յաղնականց խազակեց մորթազերծ մահուածը պահանցաւ ի կենաց։ Եղնիկ, 117։

2. Եղնիկ, էջ 116։

3. Հուակաւոր արարացի մատենացիրն Եահրաստանի որ 1153ին մեռաւ ի Պազտաւ, իւր Յազադս Ազգաց և Ազանդոց զբքին մէջ կըսէ՝ թէ Արդք յաղնեալլ ներծուածս բաժանեալ են։ զոր օրինակ Ապատազեանի՝ որ հոգեփախութեան հաւատան Պլահմանաց և Պաւու հայեանց պէս։ Քայօմարդեամբ՝ որը կը հաւատան մէջ աստուածային յայտնութիւն մը եղած է առաջին մարգոյ, զոր Փարսիք կայօմարը կը կոչեն։ Զրուանեանի՝ որը կը գաւանին զԶրուան Արարատանայ ակնարկած յարութիւնը, որ բատ մազդեզն մատենից, յաջորդաբար երեց մարգարէից ձեռք որը պիտի կատարուի։ Գուցէ երեքմա-

գոյ երկու բառից քերականօրէն յայտնապէս սխալ մեկնութիւն մը զոյութիւն կամ հասառատութիւն առելք էր այդ լուկին, որոյ յիշատակութիւնն անգամ կարելի չէ գտնել ի նախնի մատեանու Այսու ամենայնիւ տարակոյս չկայ՝ թէ այդ վարդապետութիւնդ առհասարակ ընդունուած էր Ասանեանց օրերը, որուն մանրամասն բացատրութիւնն մի ունինք Միհրներսէկի նամակին, և աւելի ևս երկարօրէն Եզնկայ Երկրորդ գրքին սկիզբը: Այդ Զբուան կամ Զարուան, որոյ համար Եզնիկ կ'ըսէ թէ « բախտ » կամ « փառք » կը թարգմանի, և զո՞ր՝ ըստ վկայութեան յոյն մատենագրին Դամասկոսի, մազուց մէկ մասը « միջոց, տարածութիւն », և միւսները « ժամանակ » կ'իմանային, այժմ՝ ստուգապէս հաստատեալ է՝ թէ «ժամանակ» կը նշանակէ: Սա յաշտ առնէր զհազար ամ, որպէս թէ Որմիզդ (այս է ոգի սմէնիմաստ) ծնանի, բայց երբ հազար տարի անցաւ ու արդիւնք մը չերեւցաւ, սկսաւ տարակուսի՛ թէ արդեօք ի զար յաշտ առնէր. յայնժամ երկուս զաւակի յդացաւ՝ Որմիզդ և Արշմի, այս է Ահուրամազտա և Անկրօմանինը, առաջինն ի յաշտն առնելոյ ծնունդ բարեպաշտութեանն, և երկրորդն ի յերկուանարդ անտի՝ ծնունդ թերահաւատութեան: Եւ որովհետեւ ուխտեր էր՝ թէ որ ոք ի նոցանէ առաջ զայ, զնա թագաւոր կարգէ, չկրցաւ ջրել զուխտն, և հակառակ կամացն սովհպուեցաւ տալու զթագաւորութիւնն ինն հազար տարի յԱրշմի՝ որ նախ քան զՈրմիզդ պատասեր էր զարգանդն, կացուցեալ զերմիզդ ի վերայ նորա. և յետ ինն հազար տարւոյ Որմիզդ բացարձակ պիտի թագաւորէ, և ինչ որ կամենայ՝ ընէ<sup>2</sup>:

Թէպէտ Եզնիկ հաւասարապէս երկարմատեան կ'ուզէ՝ համարել զազանդն Մանեայ և զքէչն մոզուց, դիւրին է ասկացուցանել՝ թէ նոյն խոկ իւր տուենը մազզեզն օրինաց մէջ Արշմի կարողութիւնը

1. Այսպէս և Մազառեամայ եպիսկոպոսը Թէոդորոս (350–428) որ գիրք մը շարսդրած էր մոզակն Օրմիաց վրայ, և ուզգեր էր զայն հայազգի Մասթութիւն անուն մէկու մը՝ որ քորեպիս կողասի պաշտօն կը վարէր: ԱԷս–Մարդէն իրաւամբ կը կարծէ՝ թէ Մասթովսդ Մաշմանդ Մաշմանդն է. բայց դժբախտաբար Թէոդորէայ գրութիւնը կորուսեալ է, և միայն Բագրամիզն վաս քանի մը քաղաւածներ պահած է մեզ:

2. Տես Եզնիկ, 115. — Միհրներսէկին մէջ փոխանակ 9000 տարւոյ, միայն 1000 տարի դրուած է որ գրչագրի սխալ կը թուի. քանզի Պունուահիշն ևս (տես զլ. Ա. 18, 19, 20) 9000 տարի կը հաշուէ երկուց հուզոց կախը, զատ համարելով անկէ առջի 3000 տարին՝ յորում արարածքն առկային անմարմին էին և անկերպարան:

Հաւասար չէր Որմղին։ Չոր Ողին ոչ ամենագէտ է, ոչ ամենասկարող<sup>1</sup>։ մանաւանդ թէ ագէտ է յոյժ։ քանզի Որմղայ գոյութեան յայնժամ միայն տեղեակ եղեւ, երբ յանզնդոց ելլելով տեսաւ զլոյս<sup>2</sup>։ Կանխագէտ չէ՝ եթէ Որմիզդ շյայտնէնմա զհանդերձեալու<sup>3</sup>։ Իւր արարածքն պիտի ոչնչանան յաւուր մեծի յարութեան<sup>4</sup>։ Եւ ինքն իսկ պիտի անկարողանայ և ոչնչանայ։ Չի կրնար երբէք միանդամայն երկու տեղ գտնուիլ, և զայն միայն կը տեսնէ որում ներկայ է։ Այդ տեսակէտօք Արհմի յոյժ ստորե կը գտնուի Սաղայելէն՝ զոր շատ աւելի հանճարեղ և բազմուրեք էակ մը կ'երեւակայեմք։ Փրիստոնէութեան Դիւտպետին վրայ առաւելութիւն մի ունի, այն է կարողութիւն ստեղծելու զգեւս և զվասակար արարածու, մէկ մ՛ալ ինն հազար տարուան միջոցին մէջ Որմիզդ անզօր կ'երեկի զայն խորտակելու, որով և ստիպեալ հանդուրժելու և կրելու նորա չարքը և վեսաները։ Մազգեզն Դենի շար Լակը սահայն մշտառե չէ։ մինչ քրիստոնէութեան մէջ յաւիտեանն պիտի մնայ։ Ազա ուրեմն ընդդիմակաց Լակի՝ այս է Արհմենի գոյութիւնը բաւական չէ երկարմատեան համարել տալու համար Յազկերտ Երկորդի ժամանակի պարակական դէնը, ինչպէս որ Սաղայելի ներկայութիւնը չի կրնար երկարմատեան ընել զբրիստոնէութիւն։

Բայց Զբուանայ վարդապետութենէն զատ՝ են և ոչ սակաւ առասպելք և կարկատանկք, որք բնաւ հիմունք չունին մատենից մէջ։ Արդէն տեսանք՝ թէ Աւեստայի վերջին գրեանք որքան հեռացեր էին սկզբնական գրոց պարզութենէն։ Այդ աղաւաղումը շարունակեր էր Պարթեաց՝ և նոյն ինքն Սասաննեանց որերը։ Աւեստայի լեզուն բոլորովին անիմանալի եղած էր՝ պահպահիկ թարգմանութիւնք, մեկնութիւնք և հեղինակութիւնքն ալ, սոցա զրութեան կնճռուտ եղանակին պատճառաւ՝ խիտա շատերուն համար անմատչելի էին։ աւելցնենք ևս Պարսից անհանգարս երեւակայութիւնը, որ նորանոր ազանզներ և կրօններ հնարելու միշտ պատրաստական գտնուած է։ ու այն ատեն կը հասկնամք՝ թէ ինչպէս ծնած ըլլալու են այն անհեթեթ և հակասական աղճատանկքը, որք Եղիշէի մէջ համառօտիւ յիշատակուած են մերթ ընդ մերթ, և զորս Եղնիկ երկարօրէն կը պատմէ ու կը ծանակէ։ «Եւ քանզի ընդ զրոյ չեն կրօնքն, կ'ըսէ Եզնիկ, երբեմն զայն ատեն և այնու խարեն, և երբեմն զայս՝ և սովին պատրեն զախմարս<sup>5</sup>»։

1. Պունաահիշ, գլ. Ա. 16:  
2. Նոյն, գլ. Ա., 3, 9:  
3. Նոյն, գլ. Ա., 21:

4. Նոյն, գլ. Ա. 3: գլ. Ա. 32:  
5. Էջ 142:

Այսպէս Որմիզդ զերկին և զերկիր և զիւր արարածո ստեղծելէ ետքը՝ զանոնք խաւարի մէջ ձգեր էր: Յայնժամ ի խորհուրդ կոչէ Արհմի զգես. « Զի՞նչ օգուտ է Որմիզդի, ասէ, զի այնպիսի զեղեցիկ արարածո արար, և ի խաւարի կան, զի լոյս ոչ զիտաց առնել. արդ եթէ իմաստուն էր, ընդ մօրն մօսանէր, և արեգակն որդի լինէր. և ընդ քեռն անկանէր, և լուսին ծնանէր », և պատուէր այսր Արհմի զի մի ոք զիտորհուրդն ի վեր հանցէ:

Ժողովական գերեւէն մին՝ Մահմի, կը յաւելու Եղնիկ, այդ պատուէրիդ չանասր և կ'իրթայ անմիջապէս յայտնելու զգաղանի խորհուրդն առ Որմիզդ. որով առ կարող կը լինի ստեղծել զարեցակն և զլուսին<sup>1</sup>: Այդ բանդապուշանաց վրայ պարսիկ իմաստնաց մէկը աւելի կարեւոր վարդապետութիւն մը կը հիմնէ, ասելով թէ Արհմատ առաջած « մայրածին է ի մարդկանէ և թագաւոր առաջածազաւակ<sup>2</sup> ». այս է « ի մայրենի առականաց<sup>3</sup> », « իսկ զլուսին ի քեռական առականաց արարեալ համարեցան, զի ընդ այն հայեցեալ ազգին՝ ի նոյն պղծութիւնս անխափի լինիցին<sup>4</sup> »:

Մօտ ազգակցաց մէջ ամուսնութիւնը իրրե յայտ զովելի և շահաւէտ գործ մը պատուիրեալ է արդարե Աւեստայի մէջ, բայց արեգական և լուսնոյ այդ եղանակաւ ստեղծիլը օտար է ամենեին ի զրոցդ. վասն որոյ Եղնիկ յանիրաւի կ'ընծայէ զառասպելով Զբարդաշտոյ:

Այլք սակայն առարեր կ'ըմբռնէին արեգական արարչութիւնը, Արհմի ճաշի հրաւիրեր էր զՈրմիզդ. « Եկեալ Որմիզդի՝ չկամեցաւ զնաշն ուտել, եթէ ոչ նախ որդիկին նոցա կառիցեն. և ի խեթիւ որդւոյն Արհմենի զորդին Որմիզդի, ի ինզիր եղեն զատաւորի և ոչ զտին. ապա (երկոքին միանդամայն) առեալ արարին զարեցակն, զի լիցի նոցա զատաւոր<sup>5</sup> »:

1. Մահմեայ այդ երախտեացը փուարէն Պարսիկը առարին երիցա զոհս կը մատուցանէին նմա. Եղնիկ. 140.—Եղնիկայ Մահմի կուած գէն Ահուրամազաւայ առաջին համհարգն և խորհրդականն է՝ Վահումասո, որ Աւեստայի մէջ երբ բէմն սոսկ Մահման կամ Մայնու ալ կը կուշի. չէ նա ընկեր և օգնական Արհմենի, այլ բարի միարի Ահուրայ: Տես ի վերոյ էջ 107:

2. Երիկէ. Բ, 43:

Քննակ. Եղնիկի

3. Եղնիկ. Էջ 122-123 և 141: Տես և ծանօթ. Եղնիկէ. Բ, 36:

4. Եղնիկ. « Դարձեալ և նորա (Հեթանոսութ Յունաց) Տնունդս աստուածոց բազմաց ասեն. և սոքա (Մարկինուք) յամունաւթենէ որինացն աստաւծոյ և Հիւզեայ ասեն արարեալ զամենայն արարածու. և զինչ աւելի իցեն քան ըզմոնդս որը յամունաւթենէ դնեն զատաւածու իւրեանց ». Էջ 252:

5. Եղնիկ. Էջ 140:

Ուրիշ առասպել մ՞ալ յառաջ կը քերէ մեզ Եղնիկ. « Դարձեալ և միւս ևս ասեն, թէ իրրե մեռաննէր Ուրմիզդ՝ զուրմին իւր յաղբիւր մի արկ, և մօտ ի վախճան՝ յայն սերմաննէ կոյս մի ծնառնեաց է. և ի նմաննէ որդի եղեալ՝ հարկաննէ զրազումն ի գօրացն Արհմենի, և երկու ևս նոյնպիսիք նոյնգունակ եղեալք հարկանեն զնորս զօրսն և սպառեն՝ » :

## ԺԵ

Պաշտամունք և Երևան Մազդիզն Պետի:

Եթէ արդի Պարսկաստանի մէջ խուզարկելու ելանէինք՝ թէ ինչ էին այն պաշտամունքն և արարողութիւնքն զորս այնքան բռնութեամբ և յամառութեամբ կ'ուզէր կասարել տալ Յազկերտ Երկրորդ, մեր ակնկալութիւնը ի գերեւ կ'եղէր: Այն դէնը՝ զոր ծաւալելու համար բանակներ քալեցին ի Հայո, ոչ միայն բնաջինն եղած է Հայկական բարձրաւանդակէն, այլ և նոյն իսկ իւր բնագաւառին մէջ՝ անշքացեալ և մերկացեալ ի հանդերձանացն՝ անձանաչելի և անարդ կը մնայ: Եթէ ի մազդեզանց բազմամբոխ հատած մը հետն առնելով զնախնի սրբազան և կրօնական մատեանս, զաղթած ցինէր ի Հնդիկս, ուր ազատօրէն կարողացաւ կանգնել կրակատունս, կամ որպէս ասի՝ զրունս կամ տաճարս Միհրայ, և կոսուարել զամենայն կրօնական կարգս որպէս ի ժամանակս Արտավիրաֆայ, մեք նոցա նկատմամբ յոյժ անօսր զիտութիւն մը պիտի ունենայինք: Հայ մատենազիրք — հաւանուրէն ամենուն զիտածը և իրենց մոոցնել ուզածը չերկրորդելու համար — Պարսից կրօնական արարողութեանց վրայ զրեա թէ ոչինչ կը հազարդեն մեզ: Են սակայն օտարազդի երեք ականաւեաք և ժամանակաւ իրարմէ հեռի վկայք՝ Արտարոն, Անքըթի

1. Եղնիկ էջ 142: — Այդ երեք զաւակունքը երեք մարդարեն են, որ վերջին 2400 տարբներուն մէջ պիտի զան յաջորդաբար՝ վերանորոգել և սըրբել զաշխարհ և յարութիւն տալ մէկնելոց: Երեքն ալ՝ ըստ Տինքարտի Եօթներորդ Գրոց՝ Զրադաշտայ սերմաննէն և ոչ Ուրմիզդ (որպէս առէ Եղնիկ) պիտի ճնանինքնին: Այդ սերմի մը մակի մը մէջ կը մնայ. (Ա. եսդայի լեզուաւ՝ Անահիտ ջուրց ասոսուածուհին կը պահէ զայն). և Զրադաշտայ շրջանին լրման երեսուն տարի մնալով, կոյս մը լքակին մէջ լուացուելու ատեն չըէն պիտի խմէ և պիտի յշանայ զառաջին մարդարէն զիսչէգուար: Տես ի վերոյ ծն. 4, յէջ 144:

Տեր Յերան և Հաւեկ, որք հետազօտեցին և մանրամասն տեղեկութիւններ թողուցին։ Եւ որովհետեւ Փարսիները քան դայլ հալուծեալ կամ նուռաճեալ ազգս նախանձախնդիր կ'երեւին նախնի աւանդութեանց և պաշտամանց, և վերոյգրեալ երից հեղինակաց վկայութիւնքը համաձայն են իրերաց, վասն որոյ որքան ալ ահաւգին հորմիմամբ զարուց բաժանեալ ըլլանք Երիշեայ ժամանակէն, մարթ է արդի մազգեզանց սովորութիւնքը և արարողութեանց հանդէսը քննելով հասնել ի ճշգրիտ գիտութիւն այն պաշտամանց՝ զոր եօթն հարիւր մոզք եկան հաստատել ի Հայս ի հինգերորդ դարուն՝ փոխան կարգաց եկեղեցւոյ։

Ինչպէս որ տեսանք, այսօրուան Աւեսդան, ի բաց առնելով զվահնարիտան որ նախնի Պարսից օրինագիրքն էր, կը պարունակէ զվիսրարատ, զիսանայս և զիաշզո։ Այս վերջի երեք մատեանքս կը կազմեն Փարսիներուն ժամասացութիւնքն և Ծիսարանը։

Վիսրարատան ասանձին զիրք մը չէ. քսան երեք զլուխքն կամ բարտերն՝ յորս կը բաժանի, այլ և այլ Եսանայից վերջարան կամ աւարտի ազօթք կ'ըլլան։ Եթէ այդ երկու մատենից վրայ ասկէ յառաջ զատ զատ ձառեցինք, պատճառն այն է՝ որ Եսանայք ասանձին ալ կը զրուցուին՝ առանց ի Վիսրարատէ յաւելուածոց։

Եսանայքն Աւեստայի ամեննէն կարեւոր մասն են. զայսոսիկ Մազգեզունք պարտին ընթեռնուլ ստէպ։ Բաժանին ի 72 հասու, յորց 1-27 և 42-48 մազգէական արարողութեանց ծիսարանն են։ Երկրորդ մասը՝ 28-41, կը բազկանայ ի Կաթայից կամ ի քարողութեանց Զրագաշտայ։ Խոկ երրորդին (53-72) նպատակը որոշ չէ։ Երբեմն այդ երեք մատոնքդ անընդհատ կը կարդացուին։ Երբեմն ալ ինչպէս զոհագործութեան համար, առաջին մասը միայն հը զործածուի։

Ի Կաթայից զԱվիյա եսաս ազօթն երկիցս ասել պարտ է. զԱվիյա վօնու՛ երիցս. զԵարա անու վահրեօ՛ չորիցս. վասն որոյ ազօթքդ անուանեալ են՝ պիշամրուզաս, պրիշամրուզաս, զարրուշամրուզաս

Ուրարտն կ'ըսէ՛ թէ Պարսիկք զլիսաւորասպէս կրակի և յրոյ կը զոհեն։ կրակին՝ չոր և առանց կեղեւոյ շերտեր տալով ի ճարակ, որոց վերայ կը գնեն սակաւեկի մի ճարակ, կը սրսկեն իւլով, չնն չնչեր ի կրակն, այլ կը հորմահարեն։ Եթէ ոք բերնովը վչէ կամ մեռելուին և կամ ծիւս արկանէ ի կրակն՝ մահու մեռանի։

« Խոկ երբ չուրց զոհեն, ծովու կամ գետի մը եղերքը և կամ աղբերական մը քով կ'երթան, ու անդ փառ մը փորելով՝ կը զենուն

զսպանդան, ուշ դնելով՝ որ շրջայ թէ պղծի մերձակայ ջուրն աւ բեան կայլակօք։ Ապա զնեն կարգաւ զմիս ի վերայ մրտենւոյ և զարնիի ոստոց, զորս մոգքն բարակ ոստերու միջոցաւ կը վառեն, և մողական աղօթներ կարգալով՝ կը չեղուն կաթով և մեղրաւ խանն իւզ, ոչ կրակին կամ ջրին վրայ՝ այլ ի վերայ հողոյ։ Այդ աղօթներդ կ'երկարածդին յայժ, բայց մոգքն հանապազ ունին ի ձեռին մրտենւոյ ոստոց խուրձ մը։

«Կապագովկիոյ մէջ (քանզի այս աշխարհս մեծ բազմութիւն մ'ունի մոգուց՝ որք Պրաթի (կրակավաց) կոչեալ են, և բազմոթիւ մեհեանս նուիրեալս պարակական զից), դանակաւ չեն փողստեր զպատրուճակս, այլ կարծ բրաւ իրեւ բախտիւ՝ զարնելով կը մեռցնեն։

«Զոհարար մոգը պատրուճակին միսը կը բաժնէ հանդիսաւ կանաց։ մաս մի այլ իրեն կ'առնու և ապա կը չեռանայ՝ առանց ամենախն զից բան մը թողոյ, քանզի, ասեն, միայն զողիսն անանոց կ'ուզեն զիք, և ոչ այլ ինչ։ Ասկայն ըստ հեղինակաց մանց՝ ի թաղանգոյ մաս մ'ալ կրակը կը նետեն։

«Պարսկաստանի մէջ հոյակապ չէնքեր կան՝ որք ասորուշան (Պրաթեա) կը կոչին։ Ոսցա մէջտեղը՝ առատ մոխրով ծածկուած սեղան մը կը գտնուի, որոյ վերայ մոգք զկրակ միշտ վառ կը պահեն։ Յերեկները կը մտնեն անդր և ժամի մը չափ կ'աղօթեն՝ ոստոց խուրձն ի վեր բռնելով դէմ յանդիման կրակին։ Դլուխնին թաղեայ խոյրեր ունին, որ երկու կազմանէ վար կ'իջնեն ու կը ծածկեն զշրթունս և զծնօսո»։ Գիրք ՓԵ, գլ. Գ., 13-15։

Սարարոն կը յաւելու՝ թէ զայդոսիկ իւր աշօքը տեսեր էր, և թէ Անահտայ և Օմանսոի (այս է՝ Պօհումանայ կամ Պահմանայ) մեհենից մէջ կատարաւած պաշտամունքը նոյն են։ բայց չի յիշեր ընաւ զշօմաւ։

Այդ տեղեկութիւնքդ համաձայն են Անքըթիլոյ և Հաւկի աւելի մանրապատում նկարագրաց. վասն որոյ երից հեղինակացդ վկոյութիւնքը առաւել ևս պարզելու համար կ'ամփոփենք ստորեւ, գտասկարգելով ըստ նիւթոցն։

Մեհենան Անգլեզանց։ Շատ հին ժամանակաց մէջ պարսիկը իրենց ասորուշանները լերանց գագաթանց վրայ կը կանգնէին դերրկօք։ Տակաւ առ առկաւ կոփածոյ և մեայուն ասորուշանք սուփորական եղան։ յետոյ զնոսան յարկածածուկ շենքերով փակեցին, որպէս պասմէ մեզ Սարարոն։ Անցեալ գարուն մէջ Անքըթիլի տեսածներն ալ ի կիւճէրագ գմբեթայարկ էին։

Այսպէս ական մեչեանը երեք զլիաւոր մասունա ունի. միջաւ վայրն ընդարձակ գաւիթ մի է՝ ուր կը կենան հասարակ հաւատացեալք հանդիսի ատեն, սորա ձախակողմն է կրակատունն (առաջիան) և աջ կողմն Յաշտից տեղին (իգելնեխանէ): Աթաշկահին մէջ է սրբազն կրակի ատրաւշանն կամ բազինը և անոր վերաբերեալ սպասքն: Ատրուշանը երեք ունաշափ բարձրութեամբ կճեայ անօթ մի է՝ մախրով լցեալ, և հաստատեալ քառակուսի և կէս ոտնաշափ թանձրութեամբ խարսխի մը՝ վրայ՝ զոր առօչդ կը կոչեն: Ատրուշանին քովը կը գտնուի մովպեատին կճեայ բազմարանը, և յանկիւնա կրակատան դարաններ՝ յոր կէ պահեն զփայտ և զծըխանելիս: Աթաշկահը վասմական կրակն ունի՝ եթէ մեչեանդ անոր նուիրեալ է, և կամ զկրակն ատարան՝ եթէ սոլորական կրակատուն է: Անդ մի միայն քահանայից ներելի է մանել, և այն ալ յետ թողրոյ ի գուրու զկոչիկս և զկրկնոց: Հասարակ ժողովուրդը վանդակեայ գոներու կոնկէն միայն կրնայ զիտել անոր ներքնաւ կողմը: Երկու կամ երեք մոգք զիշեր ցերեկ կը պահեն զկրակն: Որուան իրաքանչիւր պահուն (կամ) նոր փայտ կը յաւելուն՝ ազօթս տաներով, ու այդ գործողութեան ատեն պարտին զդէմն ծածկել փանդամաւ և զծեռս տասպամօք<sup>1</sup>: Իգելնեխանէին կամ զոհարանին մէջ կ'ըլլան պատարագքն և զոհագործութիւնք Աա երկայն քառակուսի սալայատակ սրահ մի, որ փոքրիկ ջրանցիւք կը բաժանէնդամաւ և զծեռս տասպամօք<sup>2</sup>: Իգելնեխանէին կամ զոհարանին մէջ կ'ըլլան պատարագքն և զոհագործութիւնք Աա յորջորջին: Արքան արվիս ըլլայ յիգէշնէխանէ՝ այնքան կրակագուրմք կրնան զատ զատ պատարագս մատուցանել միանգամայն: Իւրագանչիւր արվիսոյ աջակողմն է նստարան մը զոհարար մոգին յատուկ. վիմատաշ սեղան մի՝ արվիս՝ որոյ վրայ կը զնեն զսպասս զոհից և զգործիս, և քարէ պատուանդան մը որ՝ կը կրէ զլւանտ՝ այս է սրբուելու յրոյ կոնքը: Ի ձախակողմն՝ ատրուշան մի փոքրիկ՝ յաշտից սեփականացեալ, որ արաշիանին կրակը կը ներկայացնէ՝ տունց անոր հաւատարազօր ըլլալու, և զոհագործութեան առթիւ միայն կը վառի: Առընթեր սմա՝ զոհարար մոգին և անոր սպասաւորին համար մէկ մէկ նստարան, և այլ վէմք՝ որոց վրայ կը դրուին պահեստի շերտերն և կնդրուկ:

Աշխարհիկ Փարսիները՝ եթէ ազատ են ի պղծութենէ, կրնան մանել յիգելնեխանէ ի ժամ յաշտից: Եթէ զիտութեամբ նուիրա-

1. Տասդամդ քսակի ձեռք թաթպան մի է: Ճեմ թէ հայերէն ։ բազին ։ նոյն նշա-

2. Արվիս է ևս անուն սեղանոյն ու նակութիւնն ունէր. թէ իրրե յաշտից որ վերայ գնին զոհական սպասքն: Կարս տեղի և թէ իրը սեղան:

գործող քահանային պիզմ ոք ներկայ դանուի, պաշտամունքն ոչինչ  
կը լսան և հարկ է վերստին ոկաննել:

Պաշտօնեայք կը մի: Նախնի Բակորիոյ մէջ քահանայք առ  
ունձին դասակարգ մը չէին կազմեր, և ոչ իսկ քահանայութիւնը  
ժամանգական էր: Խրեւ Օրինաց վարդապետ՝ ակրաբախիլի՝ և  
իրեւ սպասահարկու պաշտամանց՝ արրաւան կը կոչուէին:

Աթրաւանը իւր կատարած պաշտօնին համեմատ այլ և այլ ա-  
նուն ունէր.

Ա. Զարօրար, որ կը հայցէ զգիս ու կ'ընթեռնու զազօթու. սա  
է հանդիսադիրն, մինչ հետեւելուներն նորա օգնականներն են:

Բ. Հաշանան որ պատրաստէր զշօմա:

Գ. Սրաշափարէզա՝ որ լախտ մի կը կրէր (Արաշայ զէնքը)՝  
զոհագործութեան ժամուն՝ առ ի վանել զգեւա. զուցէ եւս ապաշ-  
խարանաց գործազրութեան կը հակէր:

Դ. Ասնադար՝ որ կը սրբէր և կը պահէր զարրազան անօթու:

Ե. Ադարէփարսա՝ որ անչէջ կը պահէր զկրտկ:

Զ. Ջրասպէրէդար՝ որ կը կրէր զանօթու:

Է. Բակադիսարէզա՝ որ քառութեանց վերաբերեալ արարողու-  
թեանց կ'առաջնորդէր:

Յետոյ երբ մոգութիւնը խառնուեցաւ Աւեսդայի վարդապե-  
տութեանց հետ, քահանայութիւնն ալ Աւեսդայի կարգաց և մե-

1. Ակրաբախիլի՝ որ Ասսանեանց ժա-  
մանակ ամփոփեցաւ ի ներկաս, և որ  
նոյն է ընդ Ատրապատ-ունիք. կը բազ-  
կանաց յերկուց բառից. բաիդի է «պետ»  
որպէս ի տաճնու-բաիդի՝ «գեհապետ»:  
Թէպէտ սոսկ ակրրա՛ չիք Աւեսդայի  
մէջ, բայդ ակրրեա՝ որ առաջնոյն ա-  
ծանցը կամ ածականը կ'երեի, սոէպ  
գործածուած է, և բահւարի ժարգամ-  
նիչն զայն կը մեկնէ ճաշէցան բառով՝  
որ կը նշանակէ «աշակերտ» կամ «այր  
աշխարհիկ»: ակրրաբախիլի է ուրեմն  
աշակերտապետ կամ գլուխ աշխարհա-  
կանաց: Է արդի պարսկերէն բառագրոց  
մէջ վիրա ձաց որ նշանակէ «աշակերտ»  
(առև Պիերհանի Գամթի և Johnson),  
որ կարծել կու տայ մէտ ակրրեա բառի  
կրծառութե և աղաւազութե ըլլայ: Ունանք  
մեր «վարդապետ» բառի առաջին մասը

Աննոքրիդ «վարդ» կամ զերմաներէն  
Wort բառի լորդ կը համարին: Աւելի  
հաւանական կը թուի մեջ՝ որ «վարդա-  
պետ» համանգամայն՝ նոյն ըլլայ ընդ  
Աւելիթրաբախիդի անուան, որոյ նշանակու-  
թիւններն ալ ամբողջապէս ունի: Են  
և այլ օրինակներ՝ յարս զանգիկն առ  
փոխուած է հայերենի մէջ ի վա: Եթէ  
«վարդապետ» և «աւելիթրաբի բախի»  
միենայն բարդեալ բառն են, մարմէ է  
ասկայն ատրակուսիլ «աւելիթրաբ» սուս-  
պարանութեան վրայ: Պ. Հաւկ աւելի  
կ'ուղէ զակրրա լծորդ համարել ատր  
«կրակ» բառի, որով աւելիթրաբախիդի կ'ը-  
լլայ «կրակապետ» կամ քրմապետ, որ-  
պէս արարիս, առէ, է համարակ քա-  
հանաց կրակի: Ըստ այլոց՝ ակրրա՛ է  
doctrine, վարդապետութիւն:

դական մոգութեան խառնուրդ մի եղաւ։ Այժմ մազդեզն քահանացք յերիս ասափճանս բաժանին։

Ա. Տեսդուրի (տասպօպար), որք ոչ միայն պարախն բերնուց զիտնալ զԱւեպան, այլ և մեկնել զնա։ Առքա են ուսուցիչք և վարդապետք օրինաց, սահմանողք ապաշխարութեանց և պատուիրողք քաւութեանց։

Բ. Մովակետք (մօկու-բախիի), որք կ'ընթեռնուն զազօթու և արարողութեանց կը մասնակցին։ բաւական է որ զարրապան զիրս բերնուց զրուցեն, չի պահանջուիր որ հասկնան զայն։

Գ. Հերպէտք (աերա-բախիի) որ այժմ ստորնազոյն աստիճանը կը կազմեն, սոքա պէտք եղած ուսմունքը սովորած կամ նոր քահանաներ կամ քահանայութեան պատրաստուազներ են։

Խոկ սեղանոյ պաշտօնեայք յերկուս միայն կը վերածին։

Ա. Զաօդա՝ զոհարար կամ պատարազող։

Բ. Բարձի՝ սպասաւորող։

Եղշէի ժամանակ պարզ քահանային « մոգ » կ'ըսուէր, « մոգ-պէտը » (մովպես) մեր եպիսկոպոսին կը համապատասխանէր։ Հերպատ կը կոչուէին վարդապետքն Օրինաց, և Մովակետան մովպիտ՝ դենպետը կամ քահանայութեան վարդապետը։

Եերողոսոսի պատմութենէն գիտենք՝ որ ո՛ւ և է զոհ կամ պաշտօն առանց մոգի կատարել սրբազնութիւն էր, և ըստ վեպայութեան Ամմիանոսի, մոգութիւնը Սասանեանց օրերն ալ յորդւոց որդիս ժառանգական էր : Մոգք՝ Պետացոց նման՝ մնացած ժողովրդեան քահանայքն, գատաւորքն և գատափարակքն էին։ Այժմ Փարսիներուն մէջ ևս քահանայութիւնը ժառանգական է, մոգական ցեղէ եղողն միայն կրնայ մոգ ըլլալ բայց ազատ է ուրիշ վիճակ մը ընտրելու<sup>2</sup>։

Կարգ պաշտամանց։ Մազդեզն օրէնքն Աթարվանաց ծանր պարատկանութիւններ կը զնին և երկար ազօթներ կը պատուիրեն։ Մովպետը<sup>3</sup> կէս զիշերէն վերջը պէտք է ելլայ ու կրակատունը երթայ, անդ բարսմունքն ի ձեռին պէտք է կարգայ նախ զվենա տիտաստ, և ի հաւանի պահուն՝ այս է ի ծագել արեւու՝ զվիսրարստ և զԵսանա, այս վերջնոցու հետ կը կատարուին զոհից արտողութիւնքն։ Եաշդքն՝ միայն իւրաքանչիւր դից նուիրեալ օրեւ-

1. Տես զւ, ի՞նչ

2. Տես Hovelacque, L'Avesta, Zoroastre etc. էջ 449.

3. Աստ և ստորեւ և մովպետ և առաջանդ Փարսիներուն այժմ առւած նշանակութեամբը կ'իմանանք, որ Եղշէի « մոգին » կը համապատասխանէ։

բուհն կը զրուցուին։ Հանտարագօրեայ և պարտաւորիչ աղօթներէդ զատ կ'ընթեռնուն ևս զվենտիտատ առ ի վանել զգես, կամ ի քաւութիւն յանցանաց հանդիսադիր մոգակտին կոմ' այն աղաշտուրին՝ որ այդ ընթերցման համար վարձք հատուցած է։ Կաթագբ, Եսաննան և Պիշտամրութապն ուրիշ զանազան առթից մէջ եւս կը զրուցեն։

Աէն մի տօն ունի իւր յատուկ աղօթբը։

Յաշտ կամ Զոհագործուրիւն, (իյաշնե)։ — Յաթվիի պաշտանը կատարող մովակեաը պարտի նախ սրբել զվէմն, պատրաստել զահոթս և զայլ սպասս, որոց զվսաւորներ են։

Ա. Բարսմանք (պարեամա և այժմ պարտում), առանց որոյ անհնար է յաշտ առնել։ Բարսմունքն զոր քահանայն ձախ ձեռօքն ի վեր կը բռնէ, արմաւենւոյ, նոնեննուոյ և մոշայի (tamarisque) սասոց ուժգնապիրկ խուրձ մի էր։ Այժմ Փարսիք ոչ եւս ծառի ճիւղերէ կը կազմեն, այլ անազազօծ պղնձի թելերէ՝ որոց թիւը հինգէն ցերեսոն և երեք կը տարբերի ըստ պաշտամանց, զոր օրինակ՝ սովորական յաշտից (հազին) բարսմունքն քսան և մի թել է, իսկ Վենտիտիտի և Վիստրատի ընթերցմամբ զոհագործութեանց բարսմունքն երեսուն և երեք թել։ Պարապոյ ատեն բարսմունքն մահիկաձեւ կրկին յենարանաց վրայ պառկեցնել հարկ է։ Գահանայն որ նուիրագործէ զրարսմունս՝ յամենայն պղծութենէ պարտի առաստ լինել, ու սորս յատուկ արարողութիւններն և առզօթները կատարելով, նախ կը լուայ ջրով զսոսա կամ զթելս, և ապա կը պրկէ գոտուով միով զոր քուստիր կը կոչեն, և որ յարմաւենւոյ տերենէ ճեղքուած վեց բարակ ժապաւենէ կը բազկանայ։ Այս գոտիս երկիցս թելերուն բոլորտիքը դարձնելէ ետքը կապ մը կ'ընէ, և ապա երրորդ անգամ մ'ալ զարձնելով՝ առաջին կապին ներհակ կողմը ուրիշ հանգուցիւ վերջնական կերպով կը պնդէ։ Ճիշտ այդ եղանակու կը կոսպուի եւս այն գոտին (քուսորիք) զոր ամենայն այր հաւաստացեալ և կին պարտի կրել ի մէջս իւր։

Բ. Զաօրրա՝ սրբազան ջուր, այժմ զուր։ Վովակեաը նախ կը սրբէ զանօթս յորս պիտի զրուի օրհնելու ջուրը, ասելով երիցս զաշիմ-վօնու, յետոյ կը լեցնէ զնոսա թակոյկին (աշանո) ջրով և Արտվիսուրայ նիյայիշին սկիզբը զրուցելով։ Ապա զանօթս յերկինս կը բարձրացնէ ու կը դնէ ի վերայ Այսիս վիմին, կը կար-

1. Անշուշտ մեր «Հուր» բառը. ո շատ անգամ՝ կը փոխուի ի և կամ ի չ։

կուռէ զձեսս վրանին՝ ասերով երկիցո զԱհունս-Ամիրեօ և Հուսկ յհոոյ զվիրջին մասն Արտիխոուրա ազօթից:

Գ. Հօմա և այդ հոյզդ քամելու համար պէտք եղած գործիներն, որք են Ամադ (հարանա) Ամադիսուն (տասդա ևս սուրաբ), և Անօթ մի (հոմ փիյաշի) յորում կը քամեն զհոյզն:

Դ. Ակուտեղք (դալի), որոց մէջ կը դրուին նուէրքն կամ պատրագք, կաթի կոնք կամ տաշտք (դաշտա):

Իսկ ապաչաւորին բերած գահամունքն են՝ Ա. Խորված միո՛ զոր մավպետը կ'օրէնէ, և որոյ մէկ մասը կ'ուտեն արարողութեան միջոցին. Բ. նուռն, արմաւ, բրինձ, կաթ, հոստաւէտ բոյսեր, ազգի ազգի անուշունք, Հօմացի սատեր, և արանա կոչուած հաց կամ նշխար:

Տրասնա (այժմ տարուն) կը կոչի փոքրիկ, կոր և տափակ նկանակներ: Դիտելի է՝ որ Շարտէնի ի Պարտկաստան ճանապարհորդած տահն առվորական ուտելու հացն ալ նոյն ձեւով կը շինուէր: Այժմ Փարսիք գտարուն տանց հայսի կը զանգեն, և սոցամհծութիւնը հինգ ֆրանքնոց արծաթ դրամի չափ է:

Տարունի նուէրագործութիւնը մասնաւոր արարողութեամբք կը կատարուի. այս հացերէս չորս հատ սկուտեղի մը մէջ կը շարեն, և յայոցանէ միայն վրայ կը դրուի խորված միաը: Երբեմն Տարունի նուէրագործութիւնը տառնձին կը կատարուի. ու յայնժամ յիշանայից այլեւայլ դրուիներ կ'ընթեանուն:

Զոհելի Հօմայն սոկեզոյն կամ զեղին բոյս մի է:

Զոհագործութիւնը հետազայ եղանակաւ կ'ըլլայ.

Ա. Հանգիստագիր մավպետը կը քարոզէ զիւր կատարելու գործը և կ'աղերսէ զզիս որոց կ'ուզէ նուէրել զպատարագն:

Բ. Մովպետը կ'տանու զբարամունս, օրհեալ ջրով կը որսկէ զայն ու կը կրկնէ զբարողն և զաղօթու:

Գ. Մովպետը կը զետեղէ զբարամունս և կ'օրէնէ զպատարագն՝ զմիս, զկաթ և զմիրզս: Երեքնէ զբարողն և զաղօթու:

Դ. Այդ օրէնուած նիւթոց կը յաւելու զՀօմա և անոր հոյզդ (բարանամա), կրակի արուելու փայտը և զանուշունս, և իւր մտացը մէջ կը միացնէ զնոսա ընդ ամենայն սուրբ խորհուրդն՝ բանս և զործու, զորս կը նուէրէ զից՝ չորրորդ անգում ասելով զբարողն և զաղօթու:

1. Այժմ մասն աեղ Փարսիք կովու կաթ կը գործածեն. աես Новеласque, լ' Avesta, էջ 423:

Ե. Զոհագործութեան սկսելէն յառաջ մովզեաը կը զովտրանէ զԱՀուրամազտա և զզիս մինչև ցարդ խնդրած էր որ նպաստաւոր լինին զոհին, այժմ կը փառարանէ զնոսա:

Զ. Յայնմամ կը մտառւցանէ զպատարադու և կը կարդայ զոնուանս զից որոց կը նուիրէ:

Է. Մովզեաը կը ճաշակէ մասնաւորապէս ի խորոված մասց (միազտա, որ է Եզիշէի «միս յազածոյ»), և կը հրաւիրէ զշանդիսականս որ աննք ալ մասնակցին: Ապա կ'օրէնէ զժողովաւրդն, և Գիւաց և զիւապաշտից դէմ դիմական խօսքեր կ'արտասանէ:

Այդ նախապատրաստական արարութիւններէ եաքը կը սկսի բուն զոհը կամ պատարագը՝ որ է Հօմա: Մովզեաը նախ կ'ընթեռնու զշանահաշզն, ապա զովարանութիւն մը առ Հօմա, յուրում ժամու նուիրագործողը կը քամէ զհոյզն թակուկի մը մէջ, զոր կը զետեղէ արվիս վիճին վրայ: Անուհետեւ հորդին մէկ մասը կ'ըմբէ և մեացածն ալ սպասաւորող ֆաշանային կու տոյ: Ապա մովզեաը այլեւայլ ազօթներ կը կարդայ, որոց մին հաւատարմութեան ուխտ մի է առ սուրբ հաւատոս (ՓԲ Եասնա), երկրորդը՝ հանգանակ մազգէական օրինաց (ՓԳ Եասնա). երրորդ՝ զովարանութիւն առ ԱՀուրամազտա, Ամշասրանաս և այլ ոգւոց, որոց մեծարանս առաջ պատուիրեն զիրիք. չորրորդ՝ երեք օրհներգութիւնը, որք լուսարանութիւնք են երեց զիմաւոր ազօթից, այս է Ահունավիրեօ, Աշէմ-վօհու, Ենէ-հազամ (Եասնա ՓԲ-ՓԱ): Ասցա մէջտեղուանքն ալ Վիսրարատէ այլեւայլ ընթերցուածք կը մինին: Կուիրագործող քահանային կը վերջացնէ վիսրատին երկիցս մասուցանելով զզահամունս և հայցերալ զոգիսն զորս ազերսեր էր յառաջազոյն (Եասնա ԻԲ, ԻԳ, ԻԳ և ԻԶ): Այս անգամ Ֆրաւաշեաց մասնաւոր զովութիւններ կ'ընէ: Աւարտի ազօթքը մազթանք մի է առ ԱՀուրամազտա, որպէս զի խորտակէ զշարս և յաղթանակ պարզեէ բարի արարածոց (Եասնա ԻՀ), ու զոհագործութիւնը կը լինայ: Անուհետեւ զմազգեզունս ամրապնդելու համար ի հաւատոս, ի Վենտիտատէ և ի Վիսրարատէ այլեւայլ զլուխներ կ'ընթեռնուն, որոց մէջտեղուանքը կաթաններ ալ կ'երգեն:

Արդ երկայն ազօթներդ սոսկ ընթերցմանը չէին ըլլար. Աւետան զանազան խաղերով կը զրուցուէր, որ հին առենը աւելի բազմաթիւ էին, միանգամային և նուագարանօք, այս է ծնծղայիւք, թմբկօք և սրնզօք՝ զորս ունին մինչեւ ցայսօր Փարսիք:

ԵՂԻՃԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Վ Ա Ս Ն Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ց

ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

# ԵՂԻՋԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

## ՎԱՍՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՅԻ

ԵԽ ՀԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԴԱԼԻԹԻ ԵՐԻՑՈՒ ՄԱՍԻԿՈՒԻ<sup>1</sup> ՀԱՅՅԵԱԼ,

1. Բանն՝ վասն որոյ պատերազմից արարի, ով քաջ՝ վասն հայոց պատերազմին հրամայեցեր, յորում բաղումք առաքինացան քան զատկաւ։ Ահա նշանագրեցի յայնու եօթն յեղանակիս, առաջին զժամանակն, երկրորդ՝ զիւցին պատահումն յիշանեն արեւելից, երրորդ, զմիաբանութիւն ուխտին եկեղեցւոյ, չորրորդ զերկպառակութիւն ոմանց բաժանելոց ի նմին ուխտէ, հինգերորդ՝ զյարձակումն արեւելայց, վեցերորդ՝ զբնդդիմանալն Հայոց պատերազմաւ, եօթներորդ՝ զյերկարումն իրացն խոսվութեան։

2. Յայսմ յեօթն զլուխո կարգագրեալ և եղեալ ծայրալիր պարապմամբ զսկիզբն և զմիջոցն և զիստարածն։

1. Յերիցանց, որը եպիսկոպոսաց և նախարարաց հետ ներկայ էին ի ժողովին որ գումարեցաւ յլլատաշատ (Յ. Յ. 26) Միհրենեհէինամկն արտելու պատասխանը որոշելու համար, Պազար Փառզեցին երեքին անունը կուտայ. « Այուրդն Պետոդ, խորէն ի Մրենեայ և Դաւիթ ։ անշուշտ Մամիկոնեանը, ուրոյ հրամանաւ կը զրէ Եղիշէ այս պատմութիւնս, ինչպէս որ Մովսէս Խորենացին գրէր էր Հայոց Պատմութիւնը

Ասհակոյ Բագրատունուոյ և Փարոպեցին Վահանայ Մամիկոնուոյ խնդրանոք։ Դաւիթ՝ Մամիկոնեան Տան մեծամեծներէն մէկն ըլլալու էր, բայց շզիսեմք թէ ինչ ազգականութիւն ունէր Վարդանայ հետ գուցէ հօրեղբարոն կամ հօրեղբօրորդին էր։

2. Բանն, Միհիթ այլ գրշագիրք և թէոգոնիոյ տագ. ։ Զբանին ։ կամ ։ Բանն զոր պատուիրեցիր ։

զի հանապազորդ բնթեռնուցուս, լոելով զառաքինեացն դքաջութիւն և զյեսոս կացելոցն դվասաթարութիւն, ոչ յանձին կարօտութիւն երկրաւոր առաս գիտութեան լրման, այլ այցելութիւն՝ երկնաւոր տնտեսութեանն՝ որ մատակարարէ յառաջդիտութեամբ զհասաւցումն երկրցունց կողմանցն, որ երեւելեօքս զաներեսոյթն գուշակէ:

Յ. Այլ դու, ով մեծ ի գիտութեանն Աստուծոյ, առ ինչ արդեօք հրամայեսցես, քան եթէ հրամայիցիս լաւագունացն<sup>2</sup>: Որպէս երեւի ինձ և քեզ<sup>3</sup> և այնոցիկ որ գեգերեցին յիմաստութիւն: Երկնաւոր սիրոյ է նշանակուայս, և ոչ երկրաւոր փառասիրութեանն. որպէս և ասացին ամանք ի քաջ պատմագրացն. Չուզութիւն է մայր բարեաց, «անզուզութիւն ծնող չարեաց: Որպէս և մեր խոկ հայեցեալ ի սուրբ սէր քոյս հրամանիդ, ոչ ինչ զանդաղեալ վեհերեցաք հայեցեալ ի մեր տգիտութիւնս: Քանզի բազում ինչ է որբութիւն՝ սատար լինել անօսրութեան, որպէս ազօթք՝ գիտութեան, և սէր սուրբ՝ միաբան օգտից:

1. Ուզերձիս մէջ այլեալի աներ կան, որոց բացատրութիւնքն սեղմեալ ու խըրթին են: Բայ մեզ հասկեալու է, «Ոչ յանձին կարօտութիւն երկրաւոր առաս գիտութեան լրման», այլ իրեւէ այցելութիւն երկնաւոր տնտեսութեան՝ որ մատակարարէ յառաջդիտութեամբ զհասուցունց երկողունց կողմանցն (յայսմ՝ աշխարհի ևս փառաւորելով զառաքինիս և պատուհասելով զյետս կացեալս), և այդ երեւի հաստոցմանք զաներեալթն ցուցանէ: Նման բացատրութիւնն մի է Հայոց մերի՝ մեկնութեան մէջ. «Խօսի աղքակցան և ուսուցանէ զաներեալթն աստուծութիւն յերեւելիս, զի երեւելեօքս զաներեալթ ալբայութիւնն ծանիցես»: Մատենագրութիւնը լուիչեայ. էջ 202:

2. Ումակը մեկնոցին. «Այլ դու, ով մեծ ի գիտութեան Աստուծոյ, ինչու ինձ կը հրամայես զրել այդ պատմութիւնը, մինչ այլք պէտք էին հրամայել:

քեզ զրել աւելի լաւերն: — Բայ մեզ՝ և առ ինչ արդեօք կը հրամայես ինձ զրել այս աստուծային հասուցմանց պատմութիւնը, եթէ ոչ անոր համար՝ որ այդպիսի հոգեշահ գործոյ միզյ պատճառ լինելով՝ երինային վարձուց հրամայութակամ արժանանա. քո խնդիրոյ երկնաւոր սիրոյ նշանակ է և ոչ աշխարհային կամ տահմային փառասիրութեան. (քանզի Դաւիթը Ամմիկոնէից ցեղէն էր, և յեզիւէ ուզածը Ամմիկոնեան Տանուտեար նահատակութեան պատմութիւն էր). դու այս պատմութիւնս զրել տաւլով կուզես հռակել՝ թէ անմիաբանութիւնը Հայոց համար բխոր չարեաց պատճառ եառ եղէ:

Յ. Թէսոգոսիոյ տոպ. «Որպէս երեւի ինձ և այնոցիկ որ գեզերեցին յիմաստասիրութիւն՝ երկնաւոր սիրոյ է ի քեզ այս նշանակ»:

4. Զոր և մեր ընդ հրամանին քոմ՝ ընկալեալ, յօժարութեամբ ձեսնարկեցաք զայս ինչ, որ է միսիթարութիւն սիրելեաց և յայս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամսկարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան, առաջի տեսաներավ զօրքագուխն յաղթաթեան՝ որ ոչ ումեք ստնհար լինի թշնամութեամբ, այլ անդ ուսուցանէ զիսր անպարտելի զօրութիւնն: Եւ ահա ո ոք կամեսցի՝ ընդունի իրքի զնահատակ առաքինի: Եւ քանդի բազմադիմի է նահատակութեանդ անուն, և նա բազմադիմի չնորհս բաշխեաց ամենեցուն. զոր և մեծ իսկ քան զամենայն՝ սէր սուրբ յաննենդ մասաց դիտեմք:

5. Այս պարզութիւն զվերնոյն բերէ զնամնութիւն. զոր և մեր ի քեզ տեսուեալ, մոտացաք զմեր բնութիւնս: Եւ ահա վերաբերիմք ընդ քեզ ճախրելով, և իրքն բարձրաթռիչս եղեալ՝ զամենայն վնասակար միրկածին օգովքս անցանիցեմք. և փոքր ի շատէ ծծելով յանապական վերին օգոցն՝ առնուցումք զգիտութիւն ի փրկութիւն անձանց և ի փառու ամենայաղթ եկեղեցւոյ: Ռւսոփի և բազում սուրբ պաշտօնեայքն զուարթութեամբ կատարեացեն զապաս վիճակին խւրեանց ի փառս Հօրն բոլորեցուն. ուր ընդ նմին սուրբ Երրորդութիւնն ցնծացեալ բերկրիցի յանտրումնական յիւրում՝ էութեանն:

6. Արդ սրբինեան ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ՝ քսյոց բարուց բնութեանդ, սկսցուք ուստի արժան է սկսանել. թէպէտ և ոչ յօժարիցեմք զթբշշուառութիւն մերոյ ազգիս ողբալ: Ահա ոչ ըստ կամաց արտօրալիբ ողբավմք ճառագերմք զբազում՝ հարուածու, յորում պատահեցաք և մեք իսկ ականատեսք լինելով :

1. Այս է Քրիստոս. քանի մը տող ի սոսր ընդունի բայը նմա կը վերաբերի:

2. Ի փառս, պարսկերէն թար:

3. Յաննախանձ. այս է գերծ յաշխարհացին կրից կամ ի փառասիրութենէ. այս առմունքս աւելցնել պարտ է կարծեամ մեր բառազրոց մէջ:

4. Եղիշէ Վարդանայ քարտուզար կամ զինուորակից ըլլալուն՝ ականատես

վկայ և մասնակից եղած էր Հայաստանի գլխաւոր դիմաց: Պարսկաստան ալ զնացեր ու զՅազկերտ անձամբ տեսեր էր, բայց պատահմամբ հանդիսական որ մը կամ բանակաց դէմ ի վուշանս խաղաւու ատեն, և ոչ թէ իրեն ներկայացեր էր նախարարց հետ (Տես Յ. Բ. 3): Իսկ թէ երբ զնացեր էր Եղիշէ ի Պարսկաստան, առև Յ. Ա. Ա. Տես 2:

# ԱՌԱՋԻՆ ՅԵՂԱՆԱԿ

Ժ Ա. Մ Ա. Ն Ո. Կ Ք Ն

1. Քանիզի ի բառնալ ազգին Արշակունեաց<sup>1</sup>, տիրեցին աշխարհիս Հայոց Ազգն Սասանայ պարսկի, որ վարէր

1. Արշակունիք ըսելով, Հառմայեցի պատմագիրք՝ և սոցա հետեւելով Եւրոպացիք՝ կը հասկնան զցեց Պարթեա թագաւորաց միանգամայն և այս վերջնաց ազգակից զմագաւորոց Հայոց: Բայց Եղիշէ զՊարթեա չիմանար ասու, որին թարգմանէքը ոմանք կարծեցին, և որ պատմական մեծ անձդութիւն մը կը լուրսը: Պարթեաց բառնալէն (յամի Տ. 226) ետքը Հայաստան Մեծին խորժաց և Տրոտոսոյ նման տակաւնի անկախ և զրաւոր որշակունիթ թագաւորներ ունեցեր էր. մացածներն ալ աւելի Հառմաց կայսերութեան պաշտպանութեան ներքեւ գտնուեր էին: Սասանեանք թէպէտ ստեղի պատերազմեր էին Հայոց հետ, բայց շատ վերջը (յամի Տ. 384) յաջողեր էին տիրելու, և այն ալ միայն արեւելան մասին: Երբ Եղիշէ ի գիր առնյոր զպատմութիւնս (458ին) երկու հարիւր երեսուն և երկու տարի անցեր էր, յորմէ հետէ Պարթեաց պետութեան նահանգներէն բուն Պարսկաստանի կուսակալ – իշխանն Արտաշիր Սասանեան ապստամբելով սպանաներ էր վերջին պարթե – արշակունիթ թագաւորն, ու Պարսից ինքնակալութիւնը վերահաստա-

տեր էր: Ազգաթանգեղոս, Յուզանդ և խորենացին ալ Արշակունիք ըսելով միայն զհայ Արշակունին կ'իմանան, և միւս, ներուն միշտ չՊարթեց անունը կու տան. «Եւ ինչ որ յետ Վաղարշակայ եղեն թագաւորը աշխարհին մերայ ի նորին սերմանէ, որդի ի հօրէ առնելով զաւրութիւն՝ անուանեցան Արշակունիք յԱրշակայ»: Խորեն. 153: — Ուրեմն «ի բառնալ ազգին Արշակունեաց» ըսելով կ'իմանայ Եղիշէ Արտաշէս Երրորդի մերժումը (յամի Տ. 428), յորմէ երեսուն տարի ետքը կը զրէր: Մինչեւ ցայդ թուական (384–428), Հայաստանի արեւելան՝ բայց կարեւորագոյն մասը՝ թէպէտ հարփառու էր Պարսից, բայց ուներ իւր յասփառ կը Պարսից: Բայց ուներ կառավարութիւնը. այնուհետու Սասանեանք մարզպանաց ձեռօք կառավարեցին զայն:

2. Արտաշրի հօրը նկատմար տարածայնութիւն կայ պատմշաց մէջ. Սասանը ըստ Ազգաթանգեղեայ, Խորենացոյ, Եղինկայ, ինչպէս և բահլաւի ձեռագիր մատենից՝ և չայր Արտաշրի առաջնոյ: Բարենամացի – Արտաշրի – Փափազան անուն գրւածոյն մէջ որ Արտաշրի առաջնոյ երկասիրութիւնը կը համարուի, որ-

զիւր իշխանութիւնն օրինօք մոգուցն։ և բազում անդամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ ընդ նովին օրինօք մոտանէին, սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կոռէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Ստահրաշապհոյ։ Եւ

շակի զրուցւած է թէ Արտաշիր որդի է Աստանայ և գտակը Փափաքայ Փափաքս իշխան էր նահանգին Պարսից և հարկաւու յետին Աշխանեան արքային Արտաշանայ։ Սակայն թէ Արտաշիր և թէ որդւոյն Շապհոյ առաջնոյ արձանագրութեանց մէջ ։ Արտաշիր որդի Փափաքայ ։ կը յիշատակուի (Տես Ուոլինսկին՝ Պատմութիւն Աստանեանց, էջ 32)։ Ըստ մահմետական պատմագրաց Սասան էր պապ կամ մին ի նախահարց Արտաշիր, և թափազարդ կուսակալ Պարս աշխարհին։ Մասուտի երկու ճիշդագրութիւն կը դնէ մին՝ որ համաձայն է Թափարիի տուածին, և այսպէս։ Արտաշիր, որդի Պապէքայ, որդւոյ Սասանայ, որդւոյ Պապէքայ, որդւոյ Սասանայ, որդւոյ Պապէքայ, որդւոյ Միհրեմանայ, որդւոյ Սասանայ, որդւոյ Պապէքայ, որդւոյ Կիսուտափայ, այս է հոր Վշամապեան Պարեհի։ Միւսձեւ յւթմթափարիին հեղինակը, որ մահմետական պատմչաց մէջ ամենէն աւելի քննադատողն է, այդ երկու աւանդութեանց զանազանութեան պատճառը մեզ կ'ուզէ բացարկել։ Արեմնեանն Պահման, կ'ըսէ. (այս է Արտաշիս Երկայնաձեան), որդի մի ունէր Սասան անուն, որ մենակը որ Պահման իւր աղջկանը կ'ուզէ բացարկել ու իշխանի թուածին կ'ուզէ աղջկանը աղջկանը ու իշխանի թուածին բացարկանը ու միակ աւանդապահը Օրինաց, մինչդեռ մոգուց օրէնքը Շերիար մի էր, որ ոչ միայն կրօնական վարդապետութիւններ կը պարունակէր, այլ և աշխարհային կարգաց և առջաւթեանց եղանակը կը սահմանէր ու կը պատուիրէր, և գատարանը և գպրոցը մոգուց ձեռքն էին։

2. Եզէկ համառօսիւ կ'ուզէ պատմել մեզ նախնի Սասանեանց առ Հայս հասուցած աղէտները բայց շփոթ եղանակաւ կը բացարկել ու պատմական անձը գութիւններ կ'ընէ։ Սասանեանը Մեծին խոսրավայ օրէն ի վեր սկսեր Էին մարտնչեւ Հայոց հետ՝ ու Արշակայ Երկրորդի ատենէն միացն այշափի կ'ընանք

իրք<sup>1:</sup> զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախաւարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն<sup>1</sup> յարբունիս Պարսկաց երթայր, սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի: Վասն որոյ և աստուածաշատիթինն բարձրագրուխ կամակարութեամբ երեւելի լինէր յաշխարհին Հայոց՝ ի սկզբան տէրութեանն Շապհոյ արքայից արքայի մինչեւ յամն յերկրորդ Յաղկերտի<sup>2</sup> ար-

յառաջ ըերեւ ի նազասա մեր հեղինակին, որ մինչեւ Արշակոյ որերը (341-364) Հայաստանի մէջ աւելի Հռովմայեցոց ազգեցութիւնը երեւելի էր քան Պարսիցը, մինչդեռ այսուհետեւ ներսակը եղաւ: Խակ աշխարհին Հռովմաց և Պարսից մէջ բաժնուելէն (384ին) մինչև Յաղկերունի ատենը, արեւեանն մասը որ Պարսիցն էր, աւելի խազակ քան յուղեալ փիճակ մ'ունեցեր էր: Եղիշեայ քիչ մը սոսորի ըսածն ալ այր միջոցիս համար է: « աստուածաշատութիւնն բարձրացլուին կամակարութեամբ երեւելի լինէր յաշխարհին Հայոց՝ սկզբան տէրութեան Շապհոյ արքայից արքայի (այս է Շապուհ Գր, որ թագաւորեց յամի Տ. 383) մինչեւ յամն երկրորդ Յաղկերտի որդույ Առամաց»: — Ստորաշապուհն կամ որպէս այլ օրինակը դնեն՝ Վաստիպուհ: Թէպէտ խորենացին և Փարագեցին այս վերջինս միայն կը գործածեն, կրկնի աշուններդ ալ Պարսիկը դրած ըլլալու են վերջին Արտաշեսի հօրը, սորա Պարսկաստան պատանդ մեացած ժամանակ. Ատահր՝ ի յիշատակ բնակութեան նորայուսանին Պարսից, քանզի այդ անուամբ կը յորջորջէնն Պարսիկը դքաղաքն և զգաւառն Պերսեպոլեայ, որ բնիկ էր Ատանահան ցեղին: — Եւ Առամաց ըստ սովորութեան Պարսից, որը յասուկ անուանց կը յաւելուն ընդհանրապէս աստուածոց կամ հրեշտակաց միայն անունը, իբր պաշտպան դիբ: Վաստիպուհ կը պարագանական վերտառ Արտանեան գրամական կար են, երբեմն մազուկն քատի Շապուհի, երբեմն քատի Շապուրիդի միայն.

ամ, այժմ Ովերամ, էր հզօր հրեշտակն յազմութեան. Նոյնպէս կը կոչուէր ես ամենէն սրբազնն և մեծ զրակը՝ զումական կրակը, Անուան արուց, մէկ քանին Աստանեան թագաւորը ալ Վաստ անունը կրեցին: — Խակ Շապուհ, որ արձանագրութեանց և չին մատենից մէջ շահփառը կը զրուէր, նշանակէ ու արքայութիւնը յարդի»:

1. Գանձն է հարկերէ հաւաքեալ ստակը. և ևս պարակերէն՝ յէ Կառ. աւելի զորածական է այժմ յէ գանձ:

2. Յաղկերտ նի, որդի Վաստայ իի, որ Եղիշեայ նկարագրած իրաց ասենը Պարսից թագաւոր էր, զահակալեց յամի Տ. 438ին, Օգոստասի կամ Անգումանը մէջ, (Փարզ. 103. Խորեն. Գր, Ալ), այս է Արշակունեաց բարձրանէ տառն տարի ետքը: Քիմիթըն, Աւս-Մարթէն և Խոլինըն դնեն յամի 440. Մօրթման՝ 444ին. Միիթարեանը և Պ. Պատկանեան՝ յամի 438ին: Ազգային պատմը. չաց քննութենէն մեզ ալ այս վերջի թուական ընտրելի թուեցաւ: — Յաղկերտ նի դրամերը Վաստայ իի դրամոց պէս անարուեստ են. զլուխը՝ ատամնասը պարազի ձեւով թագ մը կը կրէ, որոյ մէջոնէն կը բարձրանայ մահիկ մը և բոլորակ կամ դնդակ մը՝ ի նշան լուսնոյ և արեգական վերտառ Արտանեան գրամական բազգաւումամբ կար են, երբեմն մազուկն քատի Շապուրիդի միայն.

քայից արքայի որդւոյ վրամայ. զոր եղիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնան թափեաց ի բաց, և ելից զնա իրրե զպատկանդարան<sup>1</sup> գեղեալ նետիւք: Եւ սկսու եղիւր ածել անօրէնութեամբ, և զո-

զոր՝ կարծեմ աւելի ուղուժեամբ պարտ է ընթեռնու քառայ Եազարերդի, որպէս ի բազանու գիրա: Մազակսն է մազգեղն՝ կամ Արմզապաշտ: քառայ կամ խառայ կամ խօսայ, արդի սարսկ. Աձ, Աձա, թարգմանի չ արքայ, տէր, տէր արքայ չ: Հարանակ կողմը ատրուշանի կամ կրակարանի պահպերը առկեալ է, որ սովորական է Սասանեան դրամոց, հանդերձ պահապանօքն որ հոկեն ի վերայ կրակին: Յազկերոտի դրամքը շատ առատ չէն, ու երկը փողերանցաց նշաններ կը կրեն, որ կը մեկնու ին խուժաստան, Տիգրոն և Կէհաւէնոս: Դրամոց նայելով Յազկերս յաղթանգամ և անձնեայ էր կազմուածքով. աշերն և երեսացը գծաւ գրութիւնն խոյսոր, խոյսքիթ և պակասամնուու: Միւնքէլ-իւթ-թափարիսի հեղինակը կը կայէլ: թէ Սասանեան արքայից ։ Պատկերաց զրբին ։ մէջ Յազկերս Բնկարեալ է կանաչ պատմուճանաւու: (نـاـرـسـ فـهـرـسـ էـنـ) և սոկեհսու սհաւ վէջի անդապարտեօք. (شـلـوـ, լալիւր, վէջի բեկեղեալ կերպան մի էր, և այսպէս կը յորչորչէր յանուն վէջ քաղաքին թուըքաստանու: ուրսնոր կը գործուէր. ունէր կապայու թագ ի գուսիւ: բազմեալ էր յաթու և յեցեալ ի սուսեր: Մասուտի ալ կը պատմէ: թէ Հիւրէթի 303 թուականին Ստարի մէջ տեսէր էր գիրք մը, որ Սասանեան թազաւորաց միոյ միոյ վարը և գունաւոր պատկերը կը պարսնակէր. թագաւորները նկարուած էին երիտասարդ կամ ծեր, իրենց մահուան ժամանակի կերպարանց համեմատ, քան և հինգ թազաւորս և երկու թագուիսն համբեր էր, և ամրող Սասանեան հարստութեան

433 տարութնե եօմն օր պակաս տես զութիւն տրուած ըլլալը տեսէր էր: Մասուտի տեսածը սակայն բնազիրը չէր, այլ պարզերէն ընագրին արարեցն վերծանութիւնը, որ կատարուեր էր 113 թուականին Հիւրէթի վասն Հէշամայ, որդւոյ Աւտուլ-Մէլիբայ, որդւոյ Մէրուանայ: Թարգմանին կը զրէ՛ թէ թագաւորաց պատկերին ի սկզբանէ անակարգուածնի պահատան մէջ պահել սովոր էր, և թէ այդ զանձատան բնազրաց վրայէն յօրիներ էր իւր թարգմանու թիւնը: Մասուգէ միայն Արտաշրի առաջնոյ և վերջին Յազկերատի գէմքը և ըզգեստուց ատրապազքը և դոյները մեզ կ'աւանդէ: բայց Միւնքէլ-իւթ-թափարիսի հեղինակը մէն մի թագաւորաց նկարագիրն ալ կը դնէ: Տես Մաշուդի. Prairies d'or. Հա. 9, 331: — Եազարերդ թարգմանի ։ Աստուածակերտ ։ արքացեալ ձեն և Եազարէրտ:

1. ի հայ մատենազրաց ոմանք կը զատեն յերկուս բառո՞ պատկան դարան, և ինանան պատաճ դարան. ոմանք այլ իրերն մի բարդեալ բառ կը հոլովին: Անփահանեալ անուն մի է կազարեցի՞ ուր դնին նետոք. սուսկարամութիւնը անյայտ. է պրսկ. պատկան կամ պայկան նական կամ պահապան, զանձապահ. և դիրսն, որ հին ատենը պէսը էր կարգացուիլ դեպան նետք: Է ևս یکան Բայ-

ուալով հող հաներ ընդ չորս կողմանս երկրի<sup>1</sup>. և թշնամի և հակառակորդ երեւեցուցանէր իւր գհաւասացեալքս ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղամէր կենօք:

2. Քանզի յոյժ սիրելի էր նման խոսվութիւն, արիւն հեղութիւն<sup>2</sup>, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո թափեցից զգապնութիւն թիւնից, կամ ուր բացարեցից զբազմութիւն նետիցն: Եւ առ յոյժ յիմարութեան իբրեւ զգազան մի կոստաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. Եհար մինչ ի քաղաքն Մըծրին<sup>3</sup> և զբազում զաւասս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիդ արար. կուտեաց զաւար և զգերի, և ահարեկ արար զամենայն զօրս աշխարհին:

1. Եղիշէ ցւու կը նմանեցնէ զՅազկերու. Բնէ կենդանի նկարագրութիւն: Այլ զբշագիր որպէս և առ. Թէսոդոսիոյ և սկսաւ Եղիշիւր ածել անօրէնութեամբ, գուռզանայր, և գոռալով հող հաներ ընդ չորս կողմանս երկրի »: Յաւելեալ բայց նկարագրութեան կորովը կը պակսեցնէ. և քանի որ ուրիշ գրշագիրը չեն դներ, անյարմար թուեցաւ մեզ:

2. Տես Յազկերուի լարուց վրայօք էջ 82-88:

3. Մըծրին. լատ. Nisibis, արար. Նիսիբ Նիսիբին. քազաք մեծամուր, 100 քիլոմետրը շափ յարեմուս Տիգրիսի, զոր Հասկմայեցիք դուռն կը համարէին Միջագետաց, և ուր առաջին հայ արշակունի թագաւորք հասանած էին իրենց ամոռու, որպէս պատմէ Խոսրենացին: Յետ երկար պատերազմաց Շապուհ: Յ ամրած էր սմա (յամի 8. 364) և տակաւին, Պարսից ձեռքն էր. Յազկերուի Հոռոմոց զէմ խաղացած ատելը Եղիշէ դեռ Հայաստան չէր դարձած յուղերութենէն: Պատերազմիս պատճառն Հայաստանի անհատաւած վիճակն էր. վասն որոյ Յազկերու իւր զիսաւուր բար բանակաւ էր Պիշտագետ կամ իսկ անկանութիւն մէջ աշակերտները զծերունի հայրապետը պարսիկ զօրաց տուած նեղութիւններէն ազատելու համար, Բլուր կոչուած գիւղ մը փոխադրեցին՝ ուրանոր վախճանեցաւ. (Խորեն. Գ., Ալ.):

զօրաց՝ որ Բագրեանդ մտնեն: Հոռոմը Մըծրին մտաերը զօրք ժողովեր էին. ու եթէ յանկարն քաղաքն արիէն, կընար նոցա մեռքը երկրորդ թէսոդոսուազէիս մի լինել, ու յայնժամ Պարսից կացութիւնը ի Հայաստան բոլորովին կը վըտանդէր: — Եղիշէ ըսել կ'ուզէ ուրեմն թէ Յազկերու խաղաց զնաց մինչ ի քաղաքն ի Մըծրին, Եհար զզօրս Յունաց (Խորեն. Գ., Ալ.) և աւերեաց զբազում զաւասս նոցա: Բայտ Միրիանասայ՝ Միհրներսէն հրամանատար էր բանակին. և Մարկեղինսս ալ կը յանելու՝ թէ պարսկական զօրաց մէջ կը զսնուէին բազմաթիւ Արարացիք, Tzanni (Ճանիս Փանտացիք կամ Խաղակիք՝ ուր ինքնազլուխ ծովագութք մի էին, զաշնակից Պարսից), և բազում՝ Հոնք՝ զոր Ճորսու պահակէն բերել տուած ըլլալու էին: Իսկ Բագրեանդ մտնող զօրքը և եկեալ բանակեցան անկարգապէս հուզ առ Բագրեանդին անկողնոյն մէջ, աշակերտները զծերունի հայրապետը պարսիկ զօրաց տուած նեղութիւններէն ազատելու համար, Բլուր կոչուած գիւղ մը փոխադրեցին՝ ուրանոր վախճանեցաւ.

Յ. իսկ երանելին թէոդոս կայոր, քանզի խաղաղատէր էր ի Քրիստոս, ոչ կամեցաւ երանել ընդ առաջ պատերազմաւ, այլ այր մի Անաստալ՝ անոնն, որ էր նորա սպարապետ արեւելից, առաքեաց առ նա բազում գանձիւք: Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէոթեան և էին ի քաղաքին կայսեր, կալու և ետ ի ձեռու նորա<sup>2</sup>: Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժա-

1. Այս այն Անատոլ է որ շնուաց և ամրացոյց գրազաքն թէոդոսովուույ, և կռեաց դաշնան ընդ Վահամայ Եր յամի Տ. 422: Երբ Յաղիկերտի արշաւանաց լուրը հասաւ ի Բիւզանդիոն, ճիւպատուութենէ նոր Կելլէր ու պատրիութեամբ արեւելից սպարապետ եղած էր: Ըստ Պրոկոպիոսի, Անատոլ հրահանդ ու նէր անտիջապէս խաղաղութիւն առաջարկելու: Յաղիկերտի վեհանձնութիւնն ալ զիսնալով իջաւ յերիվարէն, ու հետափան և միայնակ զնաց ի բանակեազն Պարսից: Թշնամունը այդքան խոնարհմանէն իջաւ Յաղիկերտի բարկութիւնը, բայց շաղկց սառար հազոյ վրայ դաշնա կռել: Ետ գարձաւ, ու երբ մասաւ ի սահմանա Պարսից պետութեան, տարուան մը համար զիսնագագար յանձն առաւ և ապա հաշուութիւն ըրաւ: Հոռոմոց խաղաղութիւն հաստատելու այդ աստիճան շատօքման պատճան Աստիղասայ յարձակութեան և կայսերութիւնը տակն ու վրայ ընելն էր, (տես յէջ 18): Բայց ինչ շուտ յաղթական արբայից արբայն այնքան շուտով հաւանեցաւ: Յունաց սպարապետին իւր առջեքը ընկած էր կրտսելու ըլլալ: Որովհետեւ եթէ, ինչոքէս Հոռոմ պատմագիրը կը զրուցէն, առենենին դիմակալութիւն չէր գրուցէն, առէար էր յառաջ երթաւ, անշուշտ ինքն ալ իւր տէրութեան մէջ շատ մը հոգեր ունէր. եթէ Աստիղասայ Հանք առաջնազ հասուցէր էին կոյսերութեան, Քուչանք ալ զՊարսիկս կը նեղէին շարաշար, ասկէ զատ՝ պատերազ-

մին նազատակը ձեռք ձգաւ էր, հօրը Վամայ ազատել ուզած բայց շյաջողած գերիները ետ առեր էր, ու Անատոլայ ուրիշ ծանր պայմաններ ընկունել առեր էր, զորս տես Յ. Ա. 9. Տե. 2:

2. Յաղիկերտ Ա. Յաղիկերտ Բի հաւը, մոպուց բարեկամ չէր, ու նոցա զօրութիւնը և ազգեցութիւնը կոտրելու համար Փիրիստոնէից աղէկ աշօք կը նայէր. մինչեւ անզամ հրաման ըրեր էր՝ որ եպիկոպոսներ ունենան ի Միջագետ և ի Տիգրոսն: Բայց թագաւորութեանը վերջի տարին (419) Տիգրոսնի եղիսկոպոսը Ապահան՝ վկայանալու անտեղի փափակու քաղաքին մեծ կրտսեանը հրամատունը հրձիգ ըրեր էր: Մոլեանգն մոզերը բանահաւով թագաւորին վրայ, սոսկալի հալածանք մը յարտցեր էին քրիստոնէից գէմ, յուրց բազումք ապաւ իներ էին յաշխարհն Հոռոմոց: Վասմ կ յամուն ելլելուն պէս՝ պահանջեր էր որ իրեն յանձնուին փախտականք, ու երբ խնդիրը չկատարուեցաւ, պատերազմ՝ հրատարակեր էր՝ որ երկու տարի տեսած էր (420-422): Հոռոմը կը պաշտրէին զՄիջրին և Պարսիկը զմիոդագուուիս: Բայց ոչ մէկ կողմը կը յաջողէր միւսոյն բերդաբարձին տիրելու: Վերջապէս Վասմ, որոյ բանակներն սաստիկէս վնասեալ էին, հաշուութիւն ըրաւ: Ենուս կասելով ի պահանջմանէն: Հաշուութիւնը հարիւր տարուան համար էր, տամ և եօմն տարի միայն տեկց: Ասմ փախտականքը՝ զորս երկար պատերազմաւ չէր կրցեր Վասմ ձեռք ձգել, այժմ Յաղիկերտի կը յանձնուին:

մանակին՝ կաստարեաց լստ կամաց նորա, և արդեւ զնա  
ի բազում՝ բարկութենէն. և գարձաւ անդրէն յիւր քա-  
ղաքն Տիգրսն :

4. Եւ իբրեւ ետես անօրէն իշխանն, եթէ յաջողեցաւ  
չարութիւն նորա, սկսու այլ ևս խորհուրդ յաւելուզ, իբր  
ոք զի ի հուր բորբոքեալ յաւելով բազում՝ նիւթո փայ-  
տից: Քանիզի ուստի սակաւ մի կասկածոտն էր, անտի  
աներկիւզ հաստանեցաւ. վասն այնորիկ գրգուեցոյց  
զբազումն ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր՝ զոր բանիւք  
սպասնալեօք, էր՝ զոր կապանօք և տանջանօք, և էր՝ զոր  
չարաչար մահուամբ վախճանէր: Յափշտակութիւն առնէր  
բնչից և արարոց, և մեծաւ անարդանօք տանջէր զամե-  
նեսեան :

1. Տիգրսն, պարսկ. Թիգրան. այժ-  
մեան Պազտատէն 16 քիլոմետրք չափ  
սոսորե, Տիգրիսի ձախակողմեան ափանցը  
վրայ՝ դէմ յանդիման Ալեկիոյ, որուն  
աննշան մէկ թազն էր Ալեկիացց ժա-  
մանակը: Պայծառացաւ հետզհետէ Պար-  
թեաց օրերը. և երբ Հռովմայեցի զօ-  
րավարը առին և այրեցին զԱլեկիա,  
այնուհեաւ Տիգրսն ոստան եղեւ Արեւե-  
լից ու յաջորդեց Ալեկիոյ և Բարեւո-  
նի: Ըստ Միհամալ-իւթեալ Պազտարիսի:  
Տիգրսն Պասանեանց ալ մայրաքաղաքն  
և մեծոցն էր, մանաւանդ Շասուն Եր-  
կրորդէն ի վեր, մինչ նորա նախօրդքը  
աւելի Ստահը հաստատած էին իրենց  
ընակութիւնը: Թախօթի-Պասթանի, Շա-  
փուրի և Գանձակայ հոյակապ պալա-  
տանց աւերաներէն ու Դաստակերտի  
պազտանից վրայոք պատմագրաց յիշա-  
տագութիւններէն պարու է ևս հետե-  
ցնել, թէ Սասանեան թագաւորը ըստ  
քմաց՝ եղանակաց կամ՝ պետական պա-  
հանջմանց՝ իրենց բնակութեան վայրը  
ստէպ զի փոփուէն. ինչպէս և Եղիշէ  
ևս կ'ուսուցանէ մեզ թէ Յաղկերս Բ  
բազում տարիներ ի Նիւշապուհ անցաւց:

Տիգրսն և Ալեկիո, Մհաման կը կո-  
չուին մինչև ցայդմ յԱրարացց: Տիգ-

րսնի մէջ կանգուն մնացած է տակաւին  
հնուշըզան Խոսրովայ թաքի-քեսրա ու-  
նուանեալ պալատան վեցայարկ հակատը,  
որոյ բարձրաթիւնն է 30 մեդր, երկայ-  
նութիւնը 81: Շենքին մէջտեղը ահագին  
գուռ մը կամ բացուած մը կայ կամա-  
րակազ, որ Սասանեան ճարտարապետու-  
թեան յատուկ է. կամարին լայնըն է  
21½ մեդր, խորութիւնը 34½ և բար-  
ձրութիւնը բովանդակ շէնքին հաւասար:  
Այս վիթիարի ապարանէս զատ չինու-  
թիւնը մնացած էն: Երջակայ և հանդի-  
պակաց եղերց վրայ մեծածաւալ տարո-  
ծութիւն մը՝ աղիսի, խեցւոյ, պարը-  
պաց և աւերակաց թանձր ծածկութով  
ծածկուած է. (Տես Baron Thielmann  
և Խոլինսըն Պատմ. Սասանեանց):

2. Այս հալածանկս Հայոց՝ Վշաց և  
Աղուանից մէջ շէր զործազրուեր, այլ  
տէրութիւնն աւելի կերպունակն նահան-  
գաց մէջ, ուր պաստամբութիւնն երկիւզ  
չկար. ինչպէս Եղիշէ ևս կը վկայէ սուո-  
րե (Յ. Ա., 14). « Ես ևս հրաման յափը-  
տակել զքրիստոնէից զինչ և զստա-  
ցուածս, որք էին ի մէջ Պարսկաց աշ-  
խարին : Այս քրիստոնեացը մէջ ցրուած  
բազմաթիւ Ասորին էին, որոց մեծա-

բազում կողմանս, ի խորհուրդ կոչեր զպաշտօնեայս ձախակողմանն՝, որք կապեալ էին ի կոսպաշտովթեանն անդուծանելի հանգուցիւք, վառեալք և ջեռեալք իրեն զհնոց առ այրել զուխտ սուրբ եկեղեցւոյ:

5. Քանիզի էին իսկ այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իրեն ի թանձրամած խաւարի, և ողիքն արգելեալք ի մարմնի իրեն զկենդանի ի գերեզմանի, յորս ամենեւին չծաղէ նշոյլ սուրբ բառոյն թրիստոսի: Նու և արջը օրհասականք ընդ վախճանել նշոյն հզօրագոյնք կուտին. յորոց և խմաստոնքն տեղի տուեալ վախչին ի նոցանէն: Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տէրութեանն՝. եթէ հարկանին՝ զգան, և եթէ հարկանին՝ չխմանան. և իրեն ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ եղեալ կուտին: ի գէպ իսկ ելանէ բան մարդարէին ի վերայ նոցա. « Այլ, ասէ, առ քաղցի իւրամ շընեցի և կերիցէ զկէս անձին իւրոյ ». Նման դմին և ցէրն ինքնին ասէ. « Ամենայն տուն և թագաւորութիւն՝ որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատոն »:

6. Աբդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբղիս, զի՞ շինանիս՝, զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ,

զոյն մասը հեսոտրի հետեւելով և ուղղափառ Եկեղեցւոյ հետ հաղորդակցութիւն չունենալով վատանգաւոր չեին համարուեր: Յազկերուի յարուցած հալածանքը ոչ այնքան հերձուածոցաց գէմ էր որպան ուզգափառաց: Մանաւանդ երբ Հօրվան գաւառին մողը քրիստոնէութիւնը ընդունելով կրօնաւոր եզաւ. ու զատառապետը և անոր աղջիկը քրիստոնէուեան դարձաց, Յազկերուի զայրալը վերջին ծայր:

1. Կիմանայ զմոգո՞ւ աւետարանական լեզուաւ: Կռազաշտ անունդ անյարմար է. քանզի Պարսիք Որմշայ հետ ուրիշ անմարմին Էտկաց, Բնապէս և արեգական և տարեց պաշտան կը մատուցանէին, բայց կուռք չունէին:

2. Այնուշտ ամբողջ արդ պարբերու-

թիւնդ ակնարկութիւն մի և Յազկերոսի որդւոց Պերոզի և Որմզդոյ գահակալութեան համար իրարու գէմ յարուցած քաղաքական պատերազմին: Յարադրութենէս պարտ է հետեղնել: թէ Եզիշէ զիւր այս երկասիրութիւնը՝ այս է զեօթն Ցեղանակ՝ ի զիր առաւ այդ պատերազմին արբին (458), կամ անմիջապէս եւոքը. վամ զի Պերոզի միահեծան իշխանութեանը հաստատուելէն և երկրին իրազալելն վերջը չէր կրնար այդպէս մըսածել և գրել. (Տես էջ 74): Այսու ամենայնիւ Սասանեանց Բնիքակալութիւնը առկաւին պայծառ օրեր զիսի ունենար ու Արաբացաց զարհուրելի յարձակմամբը միայն պիտի խորսակէր յամին 651:

3. Թէոդոսիոյ և Ախմաթարեանց վերջին սպազիբբը միայն դնէն՝ չզի՞ ոչ

սրոց զողիսն ձեր ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն, և զապականելի մարմինդ գէշաքարշ արարեալ՝ իբրև զաղիր մեռելոտի ի բաց ընկեցեալ: Ապաքէն զայդ կամխ, զի ծածկեացի խորհուրդ ամբարշտութեանդ. տեսնիր յորժամ յայսնեսցի, ապա դիտացես զեր կատարածի դոր:

7. Ասեն մաղքն. Արքաց քաջ՝, աստուածքն ետուն քեզ զտէրութիւն և զյաղթութիւն, և ոչ ինչ կարօտեն նոքա մարմնաւոր մեծութեան, բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգու և աղինս, որ են ի տէրութեան քում. յայնժամ և աշխարհն ըտնաց հնազանդեալ մոցէ ընդ օրինօք քովք: Արդ զանս զայտափկ փաղփաղկի կատարեալ դու, արքայ. զօր զումարեա և զանդ կաղսեա, խաղա գնա դու յաշխարհն Քուշանաց<sup>2</sup>. և զա-

շիջանիս ։ որ անդէզ է, և այդ գեղեցիկ դիմանաւութեանդ իմասոր կ'աւրէ: Եղիշէ կը հարցնէ. ինչու բնրզինքդ, կը տանջես. մերթ կը բորբագիս ու մերթ կը շիջանիս: Քանզի այդպէս էր Յաղեկերոտ, իիստ հրամաններ կու տար, և երբ նոցա աշխարհակործան հետեւանքը կը տեսնէր կը զարհուրէր և առ ժամանակ մի աւելի խոհեմ ընթացք մը կը բանէր, մինչեւ որ հապատակ ազգէրը ի մի կրօն զարմանելու փափազը, որով միայն կարծէր ամբաղնդեղ զպետութիւնն, վերըստին բանանայր իւր մոտաց վրայ. ինչպէս որ պատմութեան մէջ այսուհետեւ պիտի ցուցանէ մեզ Եղիշէ այլ և այլ անպամ: (Տես յեղ. Գ, 73. ։ Եւ անդէն շիջանէր ի բազմարոց բորբոքանէն ։ և այն, և 77. ի նոյն. ։ ունին գնէին յեղյեղուկ ւեզուի նորա ։):

1. Առզուց բերանը դրուած խօսքը վսին է յոյժ, միանգաման մազդեզանց գաղափարաց համեմատ: Ոիհիսթունի արձանագրութեանց մէջ վասասպեանն Դարբեհ զհամայն յաջողութիւնս իւր Առառուծոյ կ'ընծայէ (Քրիստոսէ 516 ամօք յառաջ)։ ։ Ենորհօք Արքամազտաց եղէ թագաւոր, Արքամազտ եւ ինձ զտէրու-

թիւն. Արքամազտ եհաս ինձ ի թիկունս ։ և այլն: (Տես Իուինսընի Herodotus, համար. Բ. 592):

2. Գուշակը կը բնակէին յարեւես Խորասանու, մասնաւորապէս այժմեան Պուխարայի և Բալխի աշխարհները. և ի սկզբանէ հնոգերորդ դարու մինչև ցեկս վեցերորդին զօրացան յոյժ և այլ և այլ անզամ ի վտանգի դրին զպետութիւն Պարսից: Մերթ Խորազմի անապատին մէջն Արքի և Խորասանու վըրայ, և մերթ Բալխի կողմէն Պարսից արեւելեան նահանգաց վրայ կը յարձաւէին: Պարսիկը և Արքացի պատմիչք Հեյրալ կոմ Հեյրալ անունը կու տան նոցա, որ նոյն է մերայնոց ոմանց Հեփթազդ և Յանաց Եփրայիր և առջ մի այլ Եղիշեայ (Յ. Բ. 8) ։ Իտազական ։ Կոչուածին հետ: Ելրբեմն ալ ։ Թօւուց ։ կ'անուանեն զնոսա: Բայց այդ կրկին անուններդ անորոշ և ընդարձակ առմամբ գործածուած կ'երեմն, որպէս երբեմն Ակիրացի ի Հելէնն և ի Հռովմէացիս: Մէկ քանի յոյն պատմագիրք զնոսա Ասիստակ Հներ ալ կը յորջործին, զանազանելու համար ի Անաւ Հոնացն որը արշաւեցին յԱրոպա: Այս վերջնաներս

մենայն աղքս ժաղովիու և անցն ըստ պահ դուռն՝ ի

Քուշանաց արեմուեան աշխարհաց, Ապարից ծովան հիւսային և արեմուեան եղերաց վրայ և անդր և մինչև ի Մանաստան բանացած էին: Այսափայալոյն Եթէ Քուշանը փինաւ-թօւրացին ցեղ մի էին, և Գրիսոսնէ 200 տարի յառաջ սկսեր էին ահարկու լինել: Ճենացի պատմագիրը Եռու-ի անուն ազգ մը կը յիշառակին, որ նոյն ժամանակինը սկըսեր է յառաջ խաղալ Ասոյ խորերէն դէպ ի հարաւ. մէկ մասն ի թիգելօն անցեր ու անդ հաստատուեր է, մեացածք եկեր են յարեւլու կասրից ու տիրեր են Ուսոսի հիւսային կողմի աշխարհաց: Խուշանաց սերեալ էին Պարթեաք: (Խոսրւն. Բ. Բ. Ա. Ալ): Եղիչէ տեղ մը (Յ. Ա. 14) գիւշանս Հոնք ։ ալ կը կոչէ. այդ անուանըդ կ'իմանայ անշուշտ որպէս յոյն պատմագիրն՝ առ հասարակ զամենայն խուժգում ազինն որը կը գրանուէին քաղաքականացեալ աշխարհին հիւսիսակողմը, և ընդհանրապէս խորասանու. և Հիրամի վրայ յարձակող ազգերը < Քուշան > կը յարջորջէ. իսկ Ճորաց պահակին և Կովկասու կոնակը վրանուզները խաղիրը, խոյնդուրք կամ Հոնք կ'անուանէ: Քուշանը կ'ըսէ Հոնքականակիր էին Ապարից մուսուլմանները և անդ հարաւակու լինելու մէկ մը կը յարթիւ առ Կովկասու մէկ մէկ մը կը յարթակեաւութիւն քարդապեաւութիւն քարդեց: — Բայ Պիւրհանի Պաթիի նկյրալ՝ Պուխարացոց ւեզուաւ կը նշանակէր: այդ հումկու, յաղթանգամ >:

Այսա բնակած երկիրը Խիդլան Ոլէն կոչէին Պարսիկը, մէկպէտ Քուշան անունը անձանութէ էր նոյցա. քանզի Պիւրհանի Պաթի ևս < Քուշան > Կաշանի թուրանայ աշխարհին մէկ նահանգին անունն է, կ'ըսէ:

— 1. Միայն թէոդոսիոյ ապ- և և անցո ըստ Պահէ գուռն ի ներքս >: — Այս պահ գուռն Կովկասային պահակ որմը չէ. վասն զի այդ կողմանէ կարելի չէր երթալ, ուր Հոնք բռնացեր էին և ահազին գետեր անցնել հարկ էր. հնար և ըլլար, պատշաճ չէր. այդ ճանապարհ Քուշանց կոնակը կը հանէր, որոց նպատակը արդէն դէպ ի հարաւ իշնալ էր, և անոնց ապատակութենէն պարաւ էր ազատել զտէրութիւնն Պահէ կամ Բալի քաղաքն ալ չէր կընար ըլլալ որ իւր շրջակայ գաւառներով Քուշանաց գլխաւոր կեդրոնն էր յայնեամ: Ամենէն բուռն ճակատամարտքն Մէրլիսոսի (այժմեան

ներքս, և դու անդէն արտ քեզ բնակովին: Յորժամ՝  
արգելուս և փակես զամենենեան ի հեռաւոր օտարու-

Միւրղապի) մօտերը տեղի ունեցան, որ-  
պէս վկայէ և Փարագեցին: Անշոշտ այս  
պահ դուռը Հայաստանէն ի նմաշափար  
երթալու ամերուն վրայ էր. և թէպէտ  
լշղէչ նորա դիբը և անոնք չի յայտ-  
ներ, հար է մեզ աշխարհագրական հե-  
տազօտութեամբք սաւուգել և հաստա-  
տել: Այժաշատէն Խորասան երթալու  
համար պէտք է Դավթէմէն անցնելով  
Մէկանա իշնել, այնուհետեւ թէպէտ Աէ-  
ֆիտ-ռոտի ձորը բնելով կոնայ երթը-  
ցուի ի հարաւոյին յեզր կասրից ծովոյ,  
զոր օրինակ ի թէշդ, բայց ի հիւսիս-  
կողմն Ելպուրգի, հեղեղատից դարեւոր  
աշխատանքն անհամար խորանորեր ճեղ-  
քած, և դերքիզ և աղմաւ ծածկած են  
ծովուն և լեռնազօտուոյն մէջտեղի նեզ  
տափարակ վայրերը. և Ելպուրգի բա-  
զուկներն ալ ամապէս կը կարգանի դէպ  
ի ծով անվերջանալի գծուարտմիւներ  
հանելով անցուգարձի, որ այդ կովմանէ  
ո՛ և է երթնեկութիւն անվարելի կը  
լինի: ուստի հարէ է փոխանակ ի թէշդ  
իշանելու՝ թողուէ Աէֆիտ-ռոտի ձորը  
երբ արդ գետ դէպ ի հիւսիսային տ-  
րմելս կը խոտարի, Շահ-ռոտի ձորն առ-  
նուէ, ու հետեւով մօմ՝ Ելպուրգի հա-  
րաւակողմն անցնիւ: Լեռնազօտուոյդ և  
պարսկական մեծ անապատին միջն նեզ  
և երկայն և յայց բարերեր երկիր մի  
կայ, որ էր ի հուց Հռապակ կամ Ուէջ  
բազարը. բայց այդ երկզանձ երկիրդ ալ  
կը լմանայ ի 52° 20' աստիճանին երկայ-  
նութեան, որ Ելպուրգ դէպ ի հարա-  
կ'արձէ ապառաժ բազուկ մը, որ յիսուն  
քիլոմետրօք շափ անապատին մէջ կ'եր-  
կընայ. և որովհետեւ այդ բազին բո-  
լորտիքը շրջել անհար է բանակի կամ  
կարստնի համար, այս կողմանէ ևս ա-  
նանց կը լինէր ձանապարհը՝ եթէ բա-  
զուկը շունենար երկու կիրճ, որոց հա-

րաւայինն և գիւրամատչելին այժմ Ուիր-  
տառա կոչի, և էր համակին Դուռն կաս-  
րից (Pylae Caspiae), ուսկից միայն  
հար էր բանակաց երթալ յԱտրազասա-  
կանէ ի Վրկանս կամ ի Վրկանաց յա-  
րեմուս: Ույս դուռս կամ անցքս մեծ  
կարեռութիւն ունէր, քանզի այդ էր  
միակ ճանապարհ ցամաքային՝ արևմաեան  
և արևելեան Ասիրի մէջ, և զայն պաշա-  
պանելու համար կառուցեալ էր Ուեյ  
քաղաքն: Ցաղկերս ալ ուրիշ ճանապարհ  
չունէր Տիգրոնէ ի Վրկանս և յԱսպար  
աշխարհ երթալու համար: Տարակրյու շու-  
նին՝ որ պահ է Ելպիշեայ ակնարկածը  
աստ և Յեղ. Բ, 9 և 10. « գառագիշ  
ամուր և անել, չիք անդ տեղի փախառի  
և թաքսուի, վան զի շուրջանակի մշնա-  
միք են բնակեալ ։ Պողինը՝ Աէծին Ան-  
տիքոսուի ի Վրկանս արշաւանաց պատ-  
մութիւնը ըրած ասեն կ'ըսէ՛ թէ այդ  
կրծիք մէջն անցնող ճանապարհը յօյժ  
անձուկ է և զառ ի վեր, երեքհարիւր  
ասպարեզ երկայնութեամբ և լրացա-  
ռակալ զարնուրելի բազմուրեամբ բարբա-  
րուց, (գիրք Ժ, 29, 30):

Պ. Կաստանեան սակայն կարծէ՝ թէ  
այդ պահ դուռդ Աէֆիտ-ռոտի և Շահ-  
ռոտի իրարու խանուած տեղւոյն մօմ  
գոնուած նեղ և լեռնափակ կիրճն է,  
ուրանոր Ռոտապար անուն քաղաք մը և  
համանուն կամուրջ մի կայ. քիշ մ'ալ ի  
վերայ՝ Աէֆիտի աջակողմեան ափանց վր-  
րայ՝ աշտարակ մը կամ բերդ մը Տէր-  
պին կամ կետառար-գուշի կոչեցեալ:  
Յայս է թէ արևելքի լեռնային գաւա-  
ռաց մէջ գրեա թէ մէն մի անցք կամ  
կիրճ ունի իւր աշտարակը կամ Տէր-  
պինը: Եթէ ի Հայաստանէ Պարսկաս-  
տան երթալու համար անհրաժեշտ ըլլար  
Աէֆիտ-ռոտի ձորով մինչեւ միասպար  
կամ ցլեաւոր-գուշէ երթալ, Պ. Կաս-

թեսն, կատարին խորհուրդք կամաց քոց, և որպէս  
երեւիս մեղ ի գենիս՝ մերում, տիրես զու և երկրին  
վուշանաց, և Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ քոց իշխանու-  
թիւնութ; Բայց միայն զազանդ քրիստոնէից բարձ ի միջոյ:

8. Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծա-  
մեծացն, որ էին ի նմին բանի. Հրովարտակս գրէր,  
պնդագեսպանու առաքէր յամենայն տեղիս տէրութեան  
իւրոյ: Եւ այս է պատճէն հրովարտակին:

տանեանի կարծիքը մասամբ կը յարմա-  
րէր. քայց աւելի դիրին և սովորական  
ձանապարհ մի կայ, որ Գաղվինէն կը  
տանի և Միանա՞ առանց այդ ձորէն  
կամ կեաւուրդուրէի մօտերէն անցնե-  
լու. Ռատի Խօսպարի կիրճ ժակեւ տա-  
լով Յաղկերու, և ոչ իսկ զնայ փախը-  
տական զինուորս կրնար արգելու իրենց  
երկիրը դառնալէն: Մնաց որ մոգերը  
կ'ուսաջարկեն իրեն. « զամենայն ազգս  
ժողովեա և անցո՞ ընդ պահ գուման ի  
ներցս. և դու անդրին արա քեզ բնակու-  
րիւն »: Ուրիշ անդ մը կ'ըսէ Եղիշէ.  
« Անդրէն ի ներցոյ պահ դրանն արգելոյր  
զրագութիւնն այրումիոյն Հայոց և Վրաց  
և Աղուանից, և զամենեցուն (քանդի ու-  
րիշ ազգէ ալ բազում քրիստոնեալք  
կային Ասորեստանի և Պարսկաստանի  
մէջ), որ Էին հաւատացեալ սուրբ աւե-  
տարանին. և հրաման ասստիկ ի վերայ  
գոնապանացն առնէին, թէ որ յարեւելու  
առ մեղ (այս է յԱղար աշխարհ կամ ի  
Խորասան ուր հասսաւուած էր Յաղ-  
կերու) զայցեն՝ թողցեն. իսկ յարեւելից  
յարեւեւու անանց լիցի ձանապարհ »:  
Ուեւրոդ է ըսել՝ թէ այդ խօսքերդ Աւ-  
ֆիտուուի կրճին և զգեկին չեն կրնար  
պատշաճիւ: — Խորասան, որ ըստ արա-  
բացի մատենագրաց՝ զոնեա իններորդ  
դարէն ի վեր Աղար աշխարհի անունն  
է, նշանակէ պարսկերէն՝ « արեւլք »:

1. Դեռ, պարսկ ծեմ, Աւեստայի մէջ՝  
daēno, է կրօնք, հաւատոք, պաշտամունք,  
Օրէնք, որ ըստ Պարսից, մի միայն մազ-  
գեզն ուղիղ հաւատոց կը պատշաճի.

մինչ քէշ (պրակ. քէշ կամ բուշ) նշանակէ  
ու և է կրօնք, հաւատոք, ազանդ:

2. Մոգերն, որ իրեւ երազաւան և  
նշանագէտ կը մեծարուէին, և բարտմանց  
միջնցաւ տեսակ անսակ գուշակութիւն-  
ներ և պատվամախօսութիւններ կ'ընէին,  
խորհուրդ կու տան, որ պէտութեան  
քրիստոնեայ ազգերը կրակապաշտու-  
թեան գարնելու համար, թագաւորը  
առիշ առնելով զալատերազմ՝ Քուչանաց՝  
զօրք ուղէ ի նոցանէ ու իւր բանակին  
հետ անին բոլոր նշանաւոր և կարիք  
որեարը: Զասորի քրիստոնեայս բացէ ի  
բաց հալածելով պետութեան վանդ մը  
չէր կրնար դաւ, բայց Հայք՝ որ Յունաց  
գրացի և մասամբ ևս նոցա հպատակ  
էին, Պարսից լուծը արգէն գծուարաւ կը  
տանէին: Նոցա եկեղեցականը մէծ ազ-  
գեցութիւն ունէին և ուղղափառութեան  
չերմ պաշտպան մեացեր էին. իսկ տա-  
նուաեաը պատրաստ էին մարտնչելու: Ալյուիսի ժողովրդեան գէմ՝ բռնութիւն  
բանեցնել ուրիշ հետեւանք չէր կրնար  
աւենաւ, բայց միավան յայսնի պատամ-  
բութիւն յարուցանել և զշայաստան  
մէռքէ հանել: Աւելի նենգաւոր և ան-  
ուղղակի մէ մը կ'առաջարկեն մոզք-  
յառարութեան աւելի գիւրին պիտի ըլ-  
լար ստիուել զնախարար և զզօրականն.  
Հայ ժողովրդու ալ անառաջնորդ և ան-  
պաշտպան մեաւով պիտի հնազանդէր. և  
անզամ մը որ Հայք պարսկական քէշը  
ընդունէին, Վերը և Աղուանիք նոցա  
պիտի հետևէին:

9. « Առ ամենայն ազգու տէրութեան իսնց՝ Արեաց և Անարեաց<sup>1</sup>, բազմասցի ի ձեզ ողջան մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք գիցն օգնականութեամբ:

« Առանց զձեզ ինչ աշխատ առներց խաղացաք գնաց յաք յերկիրն Յունաց, և առանց դործոյ պատերազմի՝ սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն սեզ ի ծառայութիւն<sup>2</sup>. դուք զբարի զմտաւ ածէք, և անսպառ լերուք յուրախութեան. բայց բան զայս կատարեցէք վազվազակի, դոր ասեմքու:

« Մ'եք ի մտի եղաք անվրէու խորհրդովք խաղաղ

1. Արեք և Անարեք: որոյ պարսկերէն եք Եղելէի ժամանակը՝ Երևան ու Աներան, և որ Ասսանեան դրամոց և արձանազրութեանց վրայ Այրան վել Անիքուած է. արդի պարսկերէն Երևան ու Թագարան: Անարեք կամ թուրան կը գուշէն պարսկերը զԱկի թացիս, զշման, զԲուշանս և զԹուրբս, միով բանիւ զհամայն անդր-պատուան ազինս. յորոց ոմանկի հնուց հետէ եկեր հաստատուեր էին ի Վրանան և ի Խազաստան (որ Ասկա կամ Ակիւթ արբատէն բարդեալ է) և նուաճեալ էին ի Պարսից: Վասն որոյ դրամոց և արձանազրութեանց վըրայ Ասսանեան թագաւորաց՝ մալրան մալրան Այրան պատուանունը տրուած է, զոր ընթեանուին Շահանշահ Երան ու Աներան, այս է Աքբայից արբայ Արեաց ու Անարեաց»:

2. Պէտք չէ իմանալ թէ Յազկերտ տիրեց Հոռոմոց երկրին. այլ թէ նոցածնիր պարմաներ ընդունել տուաւ, ինչպէս ի վերոյ զրուցեց Եղելէ. թէ զամենայն զոր ինչ ասաց Յազկերտ ի ժամանակին՝ կատարեաց Անաստ ըստ կամաց նորա ։ Ո՞ր էին այդ պարմաներունք: Յզմէր սովոր էին բերդաբազներ կանգնելու իրենց սահմանաց վրայ. որով չըջակայ տեղեաց ալ կը տիրանալին այդ գիտմամբ արդացուցեր էին զինուազունը:

կնալ յաշխարհն արեւելից, աստուածոցն օդնականութեամբ գարձուցանել ի սեղ զաէրութիւնն վըուշանաց. դուք իրեւ զհրովարտակս զայս տեսանէք, անխափան վազվազակի այրեւձի՝ դումարեցէք առաջի քան զիս, յանդիման լերուք ինձ յԱպար աշխարհին<sup>2</sup> »:

10. Բատ այս պատճենի հրովարտակ եհաս յաշ-

1. Ասկէ ինչպէս և Եղիշեայ այլուր բասմերէն (Յ. Ա. 1. Յ. Բ. 15. 64. Յ. է. 22) յայտ է, թէ Հայք Վարց, Աղուանից, Լինաց և Եցուէից պէս այրուձի միայն կու տային Պարսից, «որ ի մեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի »: այց կողմանէ Խրկուած հետեւակ զրաց կամ առեղնաւորաց յեշտակութիւն շկայ ընաւ: Ասսանեան այրուձին սպառազնն էր, այսինքն թէ հեծեալ և թէ ձիուն առաջքը զրահաւորի էին, և որովհետեւ Հայոց գունդը կը կազմուէր յազատաց, յազատորդեաց եւ յարշունի տանե յոստանիկ մարդկանց, բնական է կարծել՝ որ Հայոց զրկած այրուձին ալ սպառազնն էր: Խուզանդայ մէջ ալ կը տեսնեմք, « Ժողովէր սպառազինն Հայոց Մեծաց Առաջէ զագուշակ բանակ նախարարկոյտ զօրացն» . (26): — « Եւ զատենայն տպասն Հայոց կայսերական թօշակօքն զինուորել » . (235): — Արշակ երր կուզէ զփախըտական Տիրիթի բանել, « հրաման տայր ազատուունից բանակին զէկա լինել Տիրիթայն » . (122): — « Առեալ ընդ իւր (Փառանձեմ) մարդիկ իրեւ մետասան հազար՝ տպաս ընտիրս սպառազինն պատերազմու, և հանդերձ նորոք դիմեալ եմուս ի բերդն Արտակերից » . (169-170):
2. Ապար աշխարհ, կամ Ասպէտամ, (Խորեն, Աշխարհ. էջ 40. քանզի » աշխարհ «, շամբ և սորս հնագոյն ձեն Խաչարա լճորդն են, ասի և յաշ ան այս իշխան շամբ՝ « Արեաց աշխարհ »), է այժ-
- մեան Խորասանու արեւելեան մասը, « և գնացեալ Ցագկերս ի Վրկանէ և եւեալ յԱպար աշխարհ... ի քաղաքն նիւշապուհ Յ. Ը. 1: — « Ի մեծ անսպատին յԱպար աշխարհի ի սահմանս նիւշապուհ քաղաքի » . Յ. Ը. 101: — Եւսուրզ լեռնագոտին Կասպից ծովուն հաշրաւային արեւելեան անկինը չըջելէն երքը զուգահեռական երեք թէկեր արձակելով յարեւելս, լեռնագաւառ մը կը ձեւցնէ շուրջ 500 քիլոմետր երկայն և 200 քիլոմետր լայն, որ ի հիւսիսոյ և ի հարաւոյ կը սահմանի Խորազմեան և Երանեան անսպատօք: Այս անտառախոխ ջրարբի և բարեբեր նահանգս այժմիկ կոչի Խորասան, որ թարգմանի « արեւելք »: Սորս արեմանեան մասը, այս է Եմբէր և Կուրկան գետոց Առերը մինչև ցիուռն Կասպից, Վրկանաց աշխարհ էր. իսկ արեւելեան մասը որ ի հնաց բան Պարթեաստան կը յորջործէր, Եզիշէի գարուն Ապար անունը կը կրէր, որ թարգմանի « Աերին », բարձր « . Տես և Յ. Ը. 40: Հարաւային կողերէն իջնող զետիրն ոռոգած առեւելնին արգաւանդելով, անսպատին մէջ կը խորասուզին: Տեղացիք ջրամբարներ չինած են. ու այժմ լերան սուրսուը երկու քիլոմետր լայնութեամբ տեղ միայն մշակեալ է: Բայց չին քաղաքաց աւերակները կը ցուցանեն՝ թէ նախնիք աւելի օգուտ քաղել գիտէին ջրերէն, և թէ այդ Եմբէր կոչուած երկիրդ առենոր քան կամ քան և չինդ քիլոմետր լայնութիւն ունէր:

Խարհն Հայոց, ի վրաց և յԱղուանից և ի Լինաց<sup>1</sup>, ի

1. Հին Հայաստանի աշխարհացոյց տախտակաց վրայ Լիինք Դարբանդաց հիւսիսակոզմը գրուած են, որ սխալ է, որովհետեւ Հայոց, Աղուանից և Վրաց պէտ հարկառու էին պարսից և այրուձի կու տային. որ չէր կրնար ըլլալ՝ եթէ պահակին անդիի կոզմը գոնուէին: Դարձեալ երբ վասար արգիլել կուզէ զշոնս՝ որովհու զի վարդանայ օգնութեան շտան. «արգել և փակեաց զդրուն ելին նոցա. յդէր և կոչեր զգունդու բազումս ի պահակին հորայ և զվարաց աշխարհին բռավակ գումարէր, զջորս Լինաց և զձզրաց և զվատն և զդաւն և զՊառարն և զիրսանն և զչեմատակն, զՓասին և զՓոսին և զՓիւրնան և զամենայն զօրսն թաւասպարանն զեռնայինն և զդաշայինն. Եր զոր մեծաւ պարզեօք և Եր զոր հրամանաւ թավառորին սաստիտագնապէր > (Յ. Գ., 15): Յայտ է թէ բուլոր այդ ազգերգ և ցեղերդ պահակին ասգիի կողմել եին. ուժոնք կատարեալ հապատակք, ոյլք պարզե ընդունելով կը հնագնդէին. քիչ շատ ամէնքն ալ Ասանեանց իշխանութեան ենթարկեալ էին: Այժմեան թափանականն հարաւային անդամուային կողմէ, թաւասպարանն է անշուշչ: Տաղըտանի մէջ այսոր իսկ տեսակ տեսակ լեզուներ և ցեղեր կան. զուցէ Գուլապ նոն ըլլայ ընդ Գաւին. և Խրասնն այժմեան Քրիստու է հինգ կուզէ բաղկացած անդամն, որ ի բնեանակիրս Քրոնական առանձին բգեշխութիւն (Principatu.é) մի ունէր: Էպահաւերէն Բաղդայիւ և հին պարզէրէն Բաղդայիւ. (Տես Զանտ-Բահլախի Glos-sary, էջ 182): — Մարթ է կրծառութեամարել զանունդ՝ բաժդի-խլորրա պարական բազագրաւլ բասի, որ է ոպեա կամ տէր աշխարհի >. Թագաւոր, փափիլան, կամ լծորդ աւելի հին փարեսի կամ փարեսիք անուան, որ ի բնեանակիրս Քրոնական առանձին կրօնական և քաղաքական զլուխ կամ իշխան >:

Այլ հշան վարդապէտ զԼինս և զՎորդէացիս Շերվանի Լահիչ և Քօթուն գաւառներուն մէջ կը զնէ, որ յոյժ հաւանական է, թէսկան մեր քննած տոհմային հեղինակաց մէջ զտանքը տեղեկութիւն մը որ սրոշ հասկցնէր մեզ նոցա դիբը: (Տես Տեղագիր, էջ 91): Լիինք ունէին առանձին թագաւոր մը (Յ. Գ.,

59), և քրիստոնէութիւնը մէջերնին ծաւալէր էր որպէս ի վիրա և յԱղուանս. (Յ. Գ., 82): — Պլինիոս՝ Լուսիլիէնի կը կուէ զցեղդ և կը զնէ զնա Աղուանից մօտ, ի սառուստ լերանց յոր բնակին Արէի կոչեցեալ Խուճագուծ ազգին, առընթեր Տիառուրաց և Սունեաց (Ծոգէից): Կորպուք. — Տնիկն Քիւրտիսական կոյ ի հարաւայ Մակաց և գաւառին վահայ, յարեւելից ունի զՊարսից սահմանն: յարեւմուից զԱղջնիս և զՏիզրիս ցկողմանն Մօսայ, ի հարաւայ զփորք Զազգիտ. հիւսիսակոզմն և արեւմուակոզմն երկրիս ի բուն ի մեծ Հայս է, աշխարհն Կորդուաց, յորմէ և Քիւրտիսական կոչեցաւ: Տեղագիր, 97:

Ազննաց մէջ էին սյամեան խարզան (Արզն), Մուֆարզին, Ասսուն և Բաղէշ վիճակները և բաւ Տիգրանակերու: Ամիդ կամ Տիգրագէրի թէսկէտ արդ նահանգիդ մէջ կիմար, Յունաց իշխանութեան ներքի կը բանուէր: Ազնիք առանձին բգեշխութիւն (Principatu.é) մի ունէր: Էպահաւերէն Բաղդայիւ և հին պարզէրէն Բաղդայիւ. (Տես Զանտ-Բահլախի Glos-sary, էջ 182): — Մարթ է կրծառութեամարել զանունդ՝ բաժդի-խլորրա պարական բազագրաւլ բասի, որ է ոպեա կամ լծորդ աշխարհի >. Թագաւոր, փափիլան, կամ լծորդ աւելի հին փարեսի կամ փարեսիք անուան, որ ի բնեանակիրս Քրոնական առանձին կրօնական և քաղաքական զլուխ կամ իշխան >:

Մէծ Հայոց այդ կրօնին նահանգացդ զատ զտանքարտակ կը խրկուէր: Առովհետեւ իրեր առանձին իշխանութիւնն հանչցուած էին Հայաստանի յերկուս բաժանելին ի վեր: Երբ մէկ աէրութիւն մը դրացի ուրիշ ազգ մը կամ աէրութիւն մը չնշելու կ'ելլայ, սպիրութիւնն է որ նախ սահմանաց վրայ գտնուող զաւառները անջատէ և իրեն միացնէ.

Ծոգէից և ի կորդուաց, յԱղձնեաց և բազում՝ այլ տեղեաց հեռաւորաց, որոց ոչ էին օրէնք երթալ զայն ճանապարհ յառաջ ժամանակաւ։ Գունդ կաղմէր ի Հայոց մեծաց զազաս և զազասորդի, և յարքունի տանէ զուտանիկ մարդիկ<sup>2</sup>. ըստ նմին օրինակի ի վրաց և յԱղմանից կողմանց հարաւոյ, մերձ ի սահմանս ջաճկաստանի<sup>3</sup> և ի Հո-

վան զի արդ գաւառներգ ընդհանրապէս խան ժողովուրդ կը պարունակեն, արդէն առանձնաշնորհութեր կամ մասնական անկախութիւն ստացած կ'ըլլան, ու դիւրին կ'ըլլաս բաժնել զնոսա ի կեդրանէ և խրացնել։ (Տես Բուզանդ, Էջ 262) Այսպէս և զնահանգն Գուգարաց, որ Վրաց աշխարհն մասն եղեր եր ժամանակէ մ'ի վեր, Պարսիկը առանձին բգեշիսութիւն մը կազմելով կը զատեն Վրաց թագաւորութիւնն, և ուզգակի Արեաց զրան հարկատու և հպատակ կ'ընեն։

1. Ոչ թէ որիշ ճանապարհ մը կար ի Հայաստանէ յԱրար աշխարհ երթալու համար, այլ թէ այս առաջին անգամն էր որ Հայոք Քուշանաց գէց պատերազմելու կը կոչուի ինք ճանապարհը Արտաշատն ի Դավթէն և ի Միանա Կ'իջնէր, ու անոնք Գալապինի և թէ՛ւրանի վրայն։ Եր յանգէր ի Նեւշափուր շուրջ

1500 քիլոմետր։ Հայոց պյատէին Մարտիոսա կամ Հերադ գտնուած առենք իւր քնիկ երկրէն շուրջ 2000 քիլոմետր չեռացած կ'ըլլար։

2. «Եւ զունդո և պահապանս դրան արքունի պատրաստէր Վազարշակ ըզշորս, զմի մի իւրաքանչիւր վասելովք, ի նոյն հին զարժից թագաւորացն՝ որ ի Հայկայ, որ ընդ ժամանակս ժամանակս ժառանգութիւն ի հարաց ստոցեալ գեօլու և դաստակերսու։ Խոկ ասու ուրեմն Պարուից թագաւորութիւնն, որպէս լուսմ, յայլոց յարուցեալ զունդո և Ռատան անուանեալ, ոչ դիում թէ վասն ապա-

ռելոյ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրէք լինելոյ՝ շկապեալ և ի բաց ընկեցեալ զալդն, զայլս և աեղիս նոցա յարուցն զունդս անուամբ արուսնի։ Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց, որպէս և այդմ ի Վրաց աշխարհն, որ Անգիստին կոչի։ Խորեն, Պատմ., 3, 12: — Այլ ուրիշ առէ լրիշէ։ « բազում և այլ աղաս մարդիկ, զոր սսանիկս անուանեն յարքանի տանէ ։ Ու վիճուդ է արբայազն, արբայրդի։

3. Տաճկաստան, այս է Ասորոց արեւելակոզմը՝ Միջագետաց մէջ ընակող Արտարացիք կամ Արուսյիկը, որը Շապուհ երկրորդի ատենը զՏիկրոն զարկերու զԲարելաստան առաստակեր էին։ Դասդի ցյլն պարսկերէն նշանակէ ։ արաբացին։ միանգամայն և վազուկ ։ (Ճի կամ շուն), որպէս ի մեջ ։ տաճիկ։

Գորա ճնագայն ձեն էր դաշիք կամ դաշիք կամ դաշիք, յշն . զամիքսն, որ Պունտահիշի մէջ ալ Միջագետաց Արտարացոց անունն է։ Եղիշէն և Խորենացին՝ ։ տաճիկ ։ անունը կը զորմածեն, մինչ Ա. Գրաց թարգմանիչքն՝ ։ արուսյիկ։ ։ ։ Զօրք բազումը կուտեալ են յայժ. և արուսյիկ բազումն ածեալ է ի վարձու յօփնականութիւն իւրեանց ։ Մակար, Ա. 1, 39: — (Օմանեան Պետական Տաճկաստան առելը սխալ է ուրեմն ։ այդ անունդ Միջագետաց Արտարացոց կը պատկանի, որը ի հինգերորդ դարուն մահմանական ալ չէին։ — Ըստ աւան-

առնց աշխարհն և ի կորդուաց և ի գդացն՝ և ի ծո-  
դէիցն և յԱրգնարպիւն։ որք էին ամեներեան հաւասար-  
ցեալք ի մի կաթողիկէ առաքերական եկեղեցի։

11. Եւ անմեզութեամբ ոչ գիտացեալ զերկդիմի միսս  
թագաւորին, խաղացին գնացին յիւրաքանչիւր աշխար-  
հաց լրջմասութեամբ և անորսամ խնդութեամբ և տի-  
րասէր խորհրդովք, կատարեալք՝ զազա զինուորութեան  
աներկրայ վասասակովք։ Բարձին ևս ընդ իւրեանս զաս-  
տուածային սուրբ կտակարանս բազում պաշտօնէիւք և  
բազմագոյն քահանայիւք։ Բայց հրաման տուեալ աշ-  
խարհի՝ ոչ իրեւ յակնկալութիւն կենաց, այլ իրեւ ի  
վճարումն վախճանի. յանձն առնելով միմեանց զոգիս և  
զմարմինս։ Զի թէպէտ և խորհուրդ թագաւորին չէր  
յայսնեալ նոցա, սակայն կարծիք ի մոտ էին ամենեցուն.  
մանաւանդ իրեւ բեկեալ տեսին զզօրութիւնն Յունաց  
առաջի նորա, յոյժ հարեալ խոցեցան և խորհուրդն  
իւրեանց։

գութեան՝ զոր ի մէջ բերէ Արմենէլ իւթ-  
թագարիփի հեղինակը, այդպէս յորջոր-  
ջեալ են Արաւացիքը յանուն Դամ շն  
նահապետին իւրեանց, որ հաստատեր է  
զրակութիւն իւր ի Բարելոն, և որոյ  
թռանը թռան է եղեր Շիւրասպի Ար-  
դահակ։ — Դամիք՝ ըստ արդի պարսիկ  
բառագրաց է այր արարացի սնեալ ի  
Պարսկաստան։

1. Թէ Գութը կամ Գողթը մինչեւ  
Եփրատայ մասերը եկեր ու զաղթակա-  
նութիւններ հաստատեր էին, առև կի-  
պըն, հատ. 3, էջ 191։

2. Ե Աղձնեաց Արձն կամ Արզն գա-  
ւառ, յորմէ ելած կ'երեի Աղնարդիւն.  
Arzaneu կը յորջորջէին Հառոմք զԱղ-  
ձնիս։ Դիմուի է թէ Եղիշէ որ կը  
կրինէ միւս աշխարհաց անունները, Աղ-  
նարդիւն կը դէ փոխանակ Աղձնեաց։

3. Թէոդոսիայ տպ, կատարեալ, կոս-  
տանդուազուոյ Բը՝ կատարել։

4. Տարակոյա շկայ՝ թէ Արդան այ-  
րուձիոյն հետ վուշանաց ուշմ զնացեր

և ի Արավիսոս մեծամեծ քաջութիւններ  
ըսեր էր. (տես Յ. Ե., 5. և Փարագ. 233)։ Բայց չեմ կարծեր՝ թէ Եղիշէ այս  
անզամ ընկերացած ըլլայ նմա. վաճն զի  
անշուշու Վարդանայ արութեանց վրայ  
լուութեամբ չեր անցներ. և այն կոզմե-  
րուն իրաց, ապգաց և տեղեաց վրայ կը  
հազորդէր այնպիսի կենակնի՝ որոշ և  
մանրամասն տեղեկութիւններ, զորս կու-  
տայ առհասարակ իւր ականատես եղած-  
ներուն։ Մեղ կ'երեի թէ Եղիշէ զնաց  
ի Պարսկա երր Վարդան ուրիշ նախարա-  
րաց հետ կոչեցաւ յարբունին՝ կաթողի-  
կոսին պատասխանէն ետքը. և թէ անդ  
էր նա նախարարաց արեգակն պաշտօն  
մատուցած ատենը, առև Յ. Գ., 1, 8n.  
1. « Թէոդոս և ոչ իցեմք բաւական ա-  
ռել զամենայն շարիսն, որ անցը անցին  
անդէն ի կարաւանին ընդ գունդն Հայոց . . .  
այլ ասացուք փարը ի շատէ, զի ձայ-  
նակիցք լիցուք այնացիկ՝ որք դառնապէս  
զմեզ ողբային ։ , և այլն։

12. Բայց քանզի պատուիրանապահք էին սուրբ կոսակարանացն Աստուծոյ, հանապաղ յիշեին զպատուիրեալսն ի Պաւղոսէ, եթէ «Ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց, մի սուտակասպակը<sup>1</sup> և առ աչս աշառելով, այլ սրափ մոռք ծառայել իրբեւ Աստուծոյ, և մի իրբեւ մարդկամն. քանզի ի Տերանէ է հատուցումն վաստակոց ձերոց »։ Եւ ամենայնիւ այսու բարեմտութեամբ յուղարկեալք յաշխարհէ և յանձն եզեալք սուրբ Հոգւյն, յանդիման լինէին, փութով կատարեալ զհրամաննն, և զամենայն արարեալ ըստ կամաց նորա։ Յոյժ ուրախ լինէր թագաւորն, իրը այն եթէ կատարեցան կամք կարծեաց նորա. և ահա առնէր ընդ նոսա զայն ինչ, զոր պաշտօնեայքն ամբարշտութեան նորա խրատեցին։

13. Որդ իրբեւ ետես թագաւորն զամենայն կազմութիւն և զբազմութիւն գնդին բարբարսաց<sup>2</sup>, որք սրափ մոռք եկեալ էին ի վաստակ արքունի, առաւելապէս ուրախ եղեւ առաջի մեծամեծացն և ամենայն բազմութեան զօրաց իւրոց։ Ի վերին երես թագուցանէր զկամն մոտաց իւրոց, և ակամայ առաստապէս պարզեցր զնոսա։ Խաղաց գնաց միանդամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն. և զերկեամ մի կոռեալ, ոչ ինչ կարաց ազգել նոցա։ Ապա արձակեաց զմարդիկն<sup>3</sup> յիւրաքանչիւր տեղիս, և զայր ի նոցա տեղիս փոխանակ առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ։ Այսպէս ամ՝ յամէ սովորութիւն կարծեաց, և իւր անդէն քաղաք ընակութեան շինեաց, սկսեալ ի չորրորդամէ տէրութեանն իւրոց մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն։

14. Եւ իրբեւ ետես եթէ հաստատուն կացին Հոռոմէր

1. Թուզզմ առ կողոսացիս, Գ. 22, Աստուակասա կարծեմ աստանօր՝ ոչ սուտ ծառայութիւն, ապա մատուցող, այլ սուտ գովեստ ընող, շաղոքարք։ Որտու բազանա լեզուա, որպէս և սիրաս արդի պրսկ. է զովեստ, գովեստիւն, շնորհակալութիւն։ Շարադրութիւնս տարբեր է կոսակարանի թարգմանութենէն։

2. Այսպէս Հելլէնք սովոր էին կոչեւ իրենցմէ ուրիշ ազգերն. Եղիշէ ալ Պարսից բերնէն խօսելով իմանայ այդ բառով զու Պարսիկս։

3. Միիթարեկանց առաջին սովագիրքն զմարդիկն կամ զմարդիկն. միայն 1864ինը զմարդիկն։

յուխատին իւրեանց՝ զոր եղին ընդ նմա, և դադարեցին  
խայլընդուրք՝ ելանել ընդ պահակն ձորայ<sup>2</sup>, և յամե-

1. Խայլընդուրք և Մասքութք կը կոչէ  
Եղիշէ Կովկասու հրասիսակողմը ընակող  
ազգերը: Թէպէտ աստ զխայլընդուրք  
Ճորայ մօտերը կը ցուցանէ, բայց ը  
յեղանակին 144 և 145 հաստածներուն  
մէջ աւելի որոշ կը զրուցէ մէջ՝ թէ խայ-  
լընդուրք այժմեան Վայսիբաւքասի կամ  
Ալանաց գրան մօտերը, և Մասքութք  
Ճորայ պահակին հրասիսային կողմը կը  
բնակէին: — Մասքութք, կամ ըստ յօյն  
պատմագրաց Massagedet, այն ազգն են  
որոց գէմ զնաց կիւրոս, և չկարելով  
յազմէլ՝ պատերազմին մէջ մեռաւ (Քրիս-  
տոս 559 տարի յառաջ): Բայց այն ա-  
տեն Մասքութք կամ ծովուն արեե-  
լակոյմն էին՝ Աբսոսի ափանց մօտ:  
Եղիշէ, Խորհնացին, Բուզանդ և Ալա-  
մանկեզոս իրենց ժամանակակից թէպէր  
պատմած ատեննին՝ կը զնեն զնասա ի  
մուսու կասրից և ի հիւսիսոյ կովկասու,  
և չէին կընար սիսալած ըլլալ, որովհետեւ  
Հայք յաճախ վերաբերութիւն ունեին  
նոցա հետ: Մասքութաց աեղափոխու-  
թիւնը հաւանօրէն Քրիստոսէ 200 տարի  
յառաջ Քուշանաց կամ ըստ Ճենացի  
պատմաց՝ Եսաշնիքուն Ռքսոսի մօտերը  
արշաւած և հաստատուած ատենը եղած  
էր, մէկ մասը գէպ ի հարաւ իջեր էր  
մինչ ի Ապաստան, միւս մաս մ'ալ ան-  
ցեր էր ի մուսու կասրից: Մասքութք  
և Ալանք թուրքական կամ Ֆինեան ցեղէ  
կը կարծուին լինել: Մասքութք անունը  
կը բաղկանայ Ճերկուց բառից մաս -  
ցուրք՝ «մեծ Գոլթք»: Նոյն թուրքանեան  
ցեղէն էին և Պարթեք. վասն որոյ Փաւա-  
տոս Բուզանդ ազգակից կը համարէ  
Մասքութաց մէր Արշակունի թագաւոր-  
ները (առև յէջ 14). և Բուզանդ չէր  
յանդգներ պըդպիսի բան մը զրուցելու՝  
եթէ իւր ժամանակին առհասարակ ըն-  
դունուած կարծիքը շըւլար: Մասքութք,

ըստ նկարագրոյ նոյն պատմագրին, աս-  
պատակութեամբ և աւարառութեամբ  
ապրող ձիամարտիկ ազգ մի էին, ու  
թագաւոր ունեին: «Զի ոչ յափշտա-  
կեցուք, զի ոչ աւարեսցուք, զի ոչ  
ապցուք զավոյ, զի ոչ յերիվար չեծցուք  
ըստ ընութեան օրինաց սովորութեանց  
մերոց, իւ կեցցուք այշափ անշափ զո-  
րաց բազմութիւնը», կըսէին, ու ամենի  
ձիու մը զուշին կապելով կը սպանանէին  
զգիրիգորիս՝ որ քրիստոնէութիւն կը  
քարողէր նոցա: Այդ նկարագիրդ կը  
համաձայնի Հերոդոտոսի կիւրոսի ժա-  
մանակակից Մասքութաց բարուց վրայք  
ըստին և այժմեան թուրքանեան ազգաց  
նկարամբ լսածներնուու:

Յարեմուտա Մասքութաց կը բնակէին  
Ալանք կամ Ալանք. բայց ինչո՞ւ այս  
ազգին Եղիշէ Խայլանդուրք կամ Խայ-  
լընդուրք կըսէ. անուն մը որ մէր ու-  
րիշ ժամանակակից պատմշաց մէջ շոե-  
սանք. միթէ Ալան-թիոնւրք կը նշա-  
նակէ: Թուրքեն, ըստ վկայութեան Մա-  
սքուտի, բնակէին ի հիւսիսոյ Ալա-  
նաց և դրացի էին նոցա: Օրբելեանց  
պատմութեան մէջ կը կարգամք. «Ի  
ժամանակու Քեքասուսայ (Թագաւորին  
Պարսից) անկաներ ազմուկ խոռվաթեան  
մեծի ի մէջ թագաւորութեան Ճենաս-  
տոն աշխարհին, որ յարեւելու կոյս անդր  
է քան զաշխարհն Խալանդրաց՝ սահմա-  
նակից Խազրաց և Հռնաց»: Առեփ.  
Օրբելեան, հու. թ. էջ 115: — «Յաշ-  
խարհն Խալանդրաց, ի դաշտին Խազրաց  
զոր այժմ՝ Խփշախիք կոշեն ։ նոյն, էջ  
106:

Ի հիւսիսոյ Մասքութաց և Ալանաց, և  
Վզլկայի մօտերը կը բնակէին Խազիքը,  
ուստի և կասրից ծովն յորջորջեցաւ  
և Խազրաց ծով՝ պանրի Խազրաց: Այս  
Խազիքը ևս թագաւորն ցեղէ կը կար-

նոյն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա, և ի նեղ ևս էարկ զիմագաւորն չօնաց, քանզի աւերեաց զբազում գաւառս նորա, և յաջողեցաւ տէրութիւն նորա, աւետաւորս առափեաց ընդ ասենայն առրուշանս<sup>1</sup>

ճուին. ու ատեն ատեն ձորայ պահակէն անցնելով դէպ ի հարաւ յարձակեցան. ինչպէս մեծին խոսրվաց հօրը Ազգարշայ առենքն և հինգերորդ դարէն ետքը աւելի ստեղ:

2. Պահակ կամ կապան կամ պահաւագրման ձորայ կամ Չողայ, յանուան Չոլ կամ Չոր հին մայրաբազարին Ազուանից, որոց աւերակին նշմարելի են առակաւին յարելու Գուսապայ: Մեր ազգային պատմիչը կը յորդորէն ևս և յուսն Ազուանից՝ Հոնաց կամ Խազրաց <sup>2</sup>: Պարսիկը զայն կը կուեն Տէրպէնու, որ թարգմանի կապ-գուռն Արաբացիք՝ Պատիւ - Ապուապ: Ըստ արեւելեան աւանդութեանց շինեալ էր նախ ի Հրուգենայ գիւցազէն և յետոյ Ազերսանդը երկաթի գնել առած էր, (ուստի և անուանեցաւ երկաթի գուռն, պատիւ հունատիս, Տէմիր-գափու): առ ի արգելու զիստեգում ազին Եյնուն Մէնուն. այս է Գոգ և Մագող, որը աւերելոց են զաշխարհ ի կատարած ժամանակաց:

Պահակս այս կը բազկանայր՝ Ա, ի բերդաբազարէ միոյ Դարբանդ կամ Տէրպէնու անուն, յեզր ծովուն կասրից. Ա, երկայն պարապէ մը որ Դարբանդէն սկսելով կը ձուուէր յարեւմնաս, ու կովկասու անմասնէլի բարձրութեանց վրայ կը վերջանայր: Բերդաբազարէ և պատուարդ կը փակէին այն անցքը՝ որ կը դանուի կովկասու հիւսիսային առաջքին և կասրից ծովուն միջին: Ըստ Մատութի՛ Յազկերս ի կառայ զպատուարս զայս ազիսնէ և հողէ (Տէս հաստ. Բ, էջ 193), և յետոյ Կուչըրէւան վերատին շինեաց թէ զբերդաբազարն և թէ զպարիսն (նոյն, էջ 2): Աւելի մանրամասն աւել-

կութեանց համար տես Յաւելուած զինի Յեղանակիս:

Յազկերս իւր թագաւորութեան երկուասաներորդ տարւայն սկիբուը կրնար դուռը թեամբ աւքէ անցնել իւր ինչացի կառավարութեան յառաջ բերած մեծամեծ արդինքը. ա, Առանց երկար պատերազմաց Յունաց գոռոզութիւնը կուտրեր էր. բ, ձորայ պահակը ամրացուցեր էր, ու անդրկավասեան ազգերը դադրեր էին այդ կոզմանեկ անցնելով իւր պետութիւնը աւ ըշտկելէ. գ, Տէրութեան արեւելեան հիւսիսային սահմաններն ազատեր էին Գուշանաց ասպատակութիւններէն: Առաջին երրորդն պատմեց մեղ Եղիշէ թէ ինչպէս կատարեցան. երկորդին վրայ շխօսեցաւ. այս պարապաշանցինը լեցնել յառաջարանին մէջ (Տէս էջ 33) և ի ծանօթութեան Յ. Բ. 9, 2:

1. Այս կամ տոտր կամ տոտր պրոկ, նշանակէ և կրակ <sup>3</sup>, ոչ՝ Աւեսդայի ինչպէս և Անապրիդ լեզուաւ. է և վառել <sup>4</sup>, ոչշանձ <sup>5</sup> և արշալոյս <sup>6</sup>: Խոկ տորուչան է սեղան որս վրայ կրակը կը վասէր. և որ ի նուուց յարկածածուկ չէր ու բարձր տեղեր կը կանգնուէր: Մեր մատենացիրը շատ անգամ զարուշան՝ կրակատան իմաստով կը դործածեն, մասն արրոջին անց առնելով: — Մեծ յաջութեանէ ետքը ապիտակ ցուլ և նոխազ գունելու սովորութիւնը ի Հայաստան ալ կար հեթանոսութեան ատեն: Երբ մեծն խոսրայ յազմական կը դառնայր ի Պարսից, և ապիտակ ցլուք և ապիտակ նոխազը, սովորակ ձիովք և ապիտակ ջորովք, սովորէն և արծաթեզէն զարդուք ի վերջաւորս փողփողեալ, նշանակայ,

աշխարհին իւրոյ. ցլուք սպիտակօք և գիտաւոր նոխազօք առասացոյց զպոհս կրակին, և խիտ առ խիտ թանձրացոյց անդադար զպաշտն պղծութեան իւրոյ. պաակօք<sup>1</sup> և պատուսփք մեծարեաց զբազումն ի մոգաց և զբազմոգոյն ի մոգպեատաց: Ետ ևս հրաման յափշտակել գըրիստանէից իցնչս և զստացուածս, որք էին ի մէջ Պարսկաց աշխարհին:

15. Եւ այսպէս հպարտացաւ բարձրացաւ ի միսս իւր, ի վեր քան զմարդկային բնութիւնս ընդվկեալ ապարթանէր<sup>2</sup>, ոչ միայն յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ոմն զինքն կարծէր քան զբնութիւն հայրենի կարգին. վամն այնորիկ կեղծաւորութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեացն, և որպէս երեէր իմաստնոցն՝<sup>3</sup> յանմահից իմն կարգի դնէր զինքն: Եւ յոյժ

պալարակապ մետարախէքն և ոսկովք պոսակօք և արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամքը պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանդերձս պայծառս և ի զարդս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենացն պաշտամանց տեղիսն մեծարեք: Կա և հինգերորդ ևս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց և մեծամեծ պարզես քրթացն չնորհէր».  
Ազաթանզ. Էջ 34: Եղիշեայ զիստարը ըստ նոխազն ալ անշուշն սպիտակ էր. հաւանարէն այն զոր այժմ թիֆրիքի այծ կը կոչեմք: և որոյ գէսը Գաղատիոյ և վանայ գլխաւոր և ընտիր ըերքն է: — Ասք զահելու սովորութիւնը Հնդկաստանէն եկած էր. Նոխազն և ճիւնը՝ որուն նուիրման եղանակը երկարորէն կը նկարագրի ի վեստ: — Առաջազ կամ նաև ապարիկրէն է արու այծ կտրեալ առաջնորդ հօտի. Նոյն նշանակութիւնն ունի և հայ. «Նոխազ»:

1. Պասկօք պատուել կամ վարձատրել՝ յոյժ սովորական էր Պարսից մէջ: — «Մի մոռանայք զեւզն և զպսակն և զուռսն և զառատաձեռն պարզեմն որ չնորհի ձեզ յարբունուած: էր զոյէ Մուշ-

կան՝ զօրացը յարդոր կարդալու ատենը. (ՅԶ. 2, Ճ. 1): Ել պարսկերէն պեսք շնաւ. զոր Պիւրհանի-Գամթի կը սահմանէ. «Թագ իմ զոր կը հիսէին վարդիք, ոեհանաւ և միտենեաւ և այլք գեղեցիկ և անուշաշու ծազկօք: Իշխանը և մեծամեծք զամն զլուխնին կը գնէին տօնի և նկչուողի օրերը, և այլ մարդիկ՝ ամուսնացած ատեննին. Հին առնելը Պարսկաստանի մէջ շատ կը զործածուէր»:

2. Թէոդոսիոյ տպագիրը միայն սպարամանէր, որ ընտրելի չէ. ավար-քանի բազման լեզուաւ. է զոռոզութիւն, մազը հութիւն, ամբարհաւանութիւն, յորմէ արդի պարսկերէն պարրանի հայր (Տես Մայսո-Պիրատ, Էջ 22): Ավար և ի վերայ, ի վեր ։ քան ։ մարմին, անձն ։ Ապարթանէլ է պէր քանի խօս քոխը քերտեն, այսինքն հասակէն վեր՝ ի վեր քան զանձն յոխորուալ, հպարտանաւ, խրախտալ:

3. Խմա զշերոգէտո՛ զվարդապետս կամ զուռուցիւս օրինաց: Տես ի վերը յէջ 154 և Ճ. Հերպէտը այլք բարձրագոյն դամն էին քահանայից. այդ անուամբը

էր ցատուցեալ ընդ անանն Քրիստոսի, յորժամ լոէր՝ թէ տանջեցաւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ:

16. իբրև այսպէս օր ըստ օրէ ի այն միսս ցնորեալ դանդաշէր, մի ոմն մանկագոյն ի նախարարացն Հայոց ընդգէմք բանս եղ և առէ. « Արքայ քաջ, զու ուսափ զիտես այդպիսի բանս խօսել զՑեանէ »: Ետ պատասխանի թագաւորն և առէ. « Իմ իսկ առաջի ընթերցան զգիրս մորութեանն ձերոյ »: Ետ պատասխանի անդրէն պատանեեակն և առէ. « Ընդէր, արքայ, ցայդ վայր միայն ետուր ընթեանուր. այլ յառաջ ևս մասս զկարգացումնն, և բաս անդ զյարութիւնն, զյայտնութիւնն առ բազումն, զվերացումնն յերկինս, զնատելն ընդ աջմէ հօր, զիստ սումն երկրորդ գալստեանն՝ զհաշակերտ յարութիւնն առնելով բոլորեցունց, զհամառօտ հատուցմուննն արդար գատասասնին »: իբրև լուաւ զայս թագաւորն, ի խոր խոցեալ վեր ի վերոյ ծիծաղեցաւ, առէ. « Ամենայն այդ խարէութիւն է »: Ետ պատասխանի զինուորն Քրիստոսի և առէ. « Եթէ հաւատարիմ են քեզ մորմնաւոր չարչարնքն նորա, հաւատարմագոյն ևս լիցի քեզ երկրորդ ահաւոր գալուանն նորա »:

17. Եւ զայս լոելով թագաւորին՝ բոլորեցաւ իբրև զհուր հնոցին ի Բարիլոն, մինչեւ իւրքն իսկ անդէն գեռ ևս իբրև զբաղգէացիսն այրեցեալ լինէին: Յայնժամ զբուրը բարկութիւն սրտմութեանն եհեղ յայլն երանելի, որում անուն էր Գարեգին: Կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք զերկեամ մի տուաւ ի չարչարնս, և հանեալ ի բաց զտէրութիւնն<sup>2</sup> ի նմանէ, ընկալաւ զվճիռ մահու:

Կ'իմանային ևս « այր խելացի, խմառ տուն »: Տես Պիւրհանի-Դամթի:

1. Պիւրհի Է որ բահւասի մատենից մէջ ֆրաշաքերտ՝ գոյական անուն կը նշանակէ ընդհանուր յարութիւնն ի մեռելոց. ֆրտ սկզբնական վանկը կը փոխի ի ճրա հայերենի մէջ. որպէս ֆիրիքէ լինի հրեշտակ, ֆրման՝ հրաման. ֆերփարէ հրապարակ: Ունիմը և միք չ հրաշակերտ չ գոյական անուն:

2. Այս է գաւառը կամ վիճակը որով տէրն էր. նախարարական մէն մի ցեղին գլխաւորը « Տէր » կըսուէր. Տէրն Ախնեաց, Տէրն Մամիկոնէից, Տէրն Արծրունեաց և այն: Միթէ սպանեցին զԳարեգին, կամ միայն շարշրկեցին: Գարեգինի հաւանորէն Արուանցուեանցն է՝ որ անկաւ ի գաշտին Աւարայրի ընդ վարդակաց:

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա ՅԵՂԱՆԱԿԻՆ

ԿՈՎԿԱԾՈ ԵՒ ԿՈՎԿԱԾՈՑԻՆ ԴՐՈՒԽ

Մեր պատմչաց մէջ կովկասի անցից և զրանց յաճախ յիշաւակութիւնք կը մինին: Առանագոտիդ Ահաւ ծովան եղերքը Անոբայի մօտերը փաքրիկ ելեէցներով կը սկսի, հետզհետէ կը մեծնայ. երբ Գօտորի վերին ձորոյն կը հասնի՝ արդէն Պիւրենեանց կը հաւասարի, 1200 մեղր միջին բարձրութեամբ: Անտի դէպ յարեելու մինչև ցՔազպէք, քան զԱլպեայս անգամ կը գերազանցէ ու Հեմալպյայի միայն երկրորդ կ'ըլլայ. գրեա թէ համօրէն գագաթունք մշտնջենաւոր ձեամբ ծածկեալ են, որ այս լայնութեան աստիճանին 4000 մեղր բարձրութեան կ'ըլլայ: Կովկասու այս մասը իւր շեշտակի և վիթխարի երեսութով արարչազործութեան ահաւոր հրաշալիքներէն մէկն է: Տարածութեանը մէջտեղուանքը Թէրէք և Արակովի գետերն արձակելէն ետքը՝ յերկուս յառաջս կը բաժանի, որոց հիւսիսայինը կ'երկիննայ մինչև Դարբանդայ մօտերը. իսկ հարաւայինը դեռ ծով չհասած կը ցածնու ու կը վերջանայ Զաւրանի դաշտին մէջ:

Ասիոյ խորերէն յԵւրոպա արշաւող ժողովրդոց հոսանքն կարգաւ եկան բաղխելու այս լեռնային պատուարիս գէմ. անոր նեղ անցքերէն դժուարաւ կը յաջողէին ի հարաւ իջնելու. մեծագոյն մասը յարևմուսու կը զիմէր. բայց այլ և այլ ցեղեր ալ կովկասու կրճից և ձորերուն մէջ կը հաստատուէին ու կը մնային: Այսպէս լերանցամմէջք հետզհետէ խոնկցան լեցուեցան զանազան ժողովրդոք, նուրեկքն զհինս ընդհանրապէս յառաջ մղելով: Եւ որովհետև բնական անջրապետից պատճառաւ մէկ գտաւոի կամ ձորոյ բնակիչք ուրիշ գաւառի բնակչաց հետ քիչ հազարդակցութիւն կ'ունենային, իւրաքանչիւր ցեղ իւր յատուկ լեզուն և սովորութիւնները պահեց. որով չսփազանցութիւն ըլլար՝ թէ զրուցուի, թէ կովկասու մէջ հարիւրաւոր ազգաց բեկորք կան մինչև ցայժմ:

Եղիշէ, Խորենացին ու Փաւասոս երեսնի չափ կովկասեան ազգեր կը յիշեն. որոց մէկ մասը արեւելան կրկին առաջից մէջտեղերը կամ հարաւակողմը կը բնակէին. մնացածները միջին և հիւ-

սիսային կովկասու բնակիչք էին<sup>1</sup> . իսկ արևմտեան ազգերն որ այսօր յերթս զիսաւոր ճիւղս կը բաժանին , Քապարթայք , բուն Չէրքէաք կամ Ատիղէք և Ափխազք , ասոնք Կողքիսի լեռներով արդէն զատուած ըլլալով Կուրայ դաշտէն , քիչ անգամ յարարելութիւն ունեցած ըլլալու են Հայոց և Ստանեանց հետ :

Կովկասեան լեռնագոտուոյն երկայնութիւնը չուրջ 1000 քիլոմետր է . մարթ է զայն նկատել իրրե բնական բարձրաբերձ պարիսպ մը՝ որ կ'որոշէ զԱսիա յԵւրոպիոյ : Բարձրագոյն գագաթն է Լըսպուրդ (Ա) էրաւնեան կամ Խորենացւոյ Շանթային լեռն) . յետոյ Գաղպէք՝ 16,533 սովք : Արևելեան բազկաց հիւսիսայինը , այսինքն այն որ կը յանգի ի Տէրպէնու , անջրաբետ համարեալ է այժմ Ոտուսական կովկասեան նահանգին յայսկոյս և յայնկոյս գաւառաց , թէաբէտե հարաւային տաւաջը աւելի երկայն , աւելի բարձր ու շարունակ է . ասանկով Տաղիստան որ երկուքին մէջտեղը կ'իյնայ , Անդր-Կովկասեան կամ սափական երկիր կ'ըլլայ : Նոյն էր և հին ատենը . Դարբանդեան առաջքին հարաւակողմը գտնուող լեռնաւկանք Ստանեանց ինքնակալութեան ներքե էին , ու շատ անգամ ալ զօրք կու տային նոցա :

Երկու զիսաւոր անցք ունի Կովկաս . մին՝ որ մէջտեղուանքը կ'իյնայ , Վլասիկառաքասէ Գասպաքք ելլող ու անկէ ալ ի Տփղիս իջնող չուրջ 120 քիլոմետր երկայն կիրճ մի է , որ վերին թէրքիք և Արակվիի ձորերէն կը բազկանայ . այս կրճին մէջն է Դուսն Աղանց . միւսը արևելեան հիւսիսային սուաջքին և Կասպից ծովուն մէջտեղի սափարակ հողն է , ուր կառուցեալ էր Դուսն Աղուսանից կամ Պահակն ձորայ :

#### Դ Ա Խ Ա Ն Ա Լ Ա Ն Ա Ց

Բոսթօվէն դէպ ի Կովկաս եկող երկաթուազին կը յանգի ի բերդաբաղբն Ելյատիբաւրան՝ որ թարգմանի « Զօրութիւն Կովկասու » . սա Սեաւ ծովուն երեսէն 2368 սոնաչափ<sup>2</sup> բարձր է : ի Վլասի-

1. Եղիշեայ յեշածները . Ա-Յ Եղիշեայ (որիշ է ձղբաց՝ զօրս առանձին զուանք , Աւանք , Լիինք , Ծողէք , Դաւանք , Դաւանք , Դաւանք , Դաւանք , Դաւանք , Վատ , Գաւ , Գաւար , Խորսան , Հեճառասակ , Փասի , Խիբիսան , Թաւառպարան , Խիբիսան , Մարտունիքը , Խորենացւորը : — Բուզանդարքը մէջ կը զանեմք ևս՝ Խմելանիք , Գամքը ,

Եղիշեայ (որիշ է ձղբաց՝ զօրս առանձին յիշէ) , Բազասէք , Եպերսուանք (գուցէ այժմեան Սուանքն) , Փոխիք (Եղիշեայ Փոխիքն) . Տես Յ , Փ . 15 : — Խորենացին ալ կը յիշէ զանգիրս և զ'կես :

2. Անհաջափ արքունի (Pied du roi, O մեդր , Յ24.84) . իսկ վերստ է 1.067 մեդր :

քառարասէ ցՏփղիս ոռւստեկան կառավարութիւնը մաքատամ՝ այս է խճայատակ ճանապարհ մի շինել տուաւ, որ ճարտարգիտութեան հոյակատ ձեռակերտներէն մին կրնայ սեպուիլ, երկաթուղին ի Տփղիս բերելը անհնարին կամ զոնեա Մօնարնիի չափ մհծածախ և երկայն գետնափոր անցքի մը կարօս ըլլալուն համար: Այս ճանապարհս մինչև ցԳագպէք շարունակ Թէրէքի ձորոյն մէջէն վեր կ'եւէլ: Ասային օթեանը կամ կայարանն է Պալթա յ12<sup>1/4</sup> դ վերստ, ուր ուղոյն երեսը 2454 ոսք բարձր է Աեաւ ծովէն, երկրորդ օթեանն է Լարս, 17<sup>1/4</sup> վերստ հեռի ի Պալթայէ, աստ սեպացեալ ժայռի մը վրայ հին պահակի մը աւերակները կեցած են, որոյ սև սև որմերն և աշտարակները կարծես կայծակնահար խամրեալ են: Լարսէ և երրորդ օթեանէն՝ Գագպէքէ հաւսար հեռաւորութեամբ կը գտնուի նորակառոյց կամուրջ մի, որով ճանապարհը գետոյն ձախ կողմէն յաջակողմն կ'անցնի, ուրանար է այժմեան քառակուսի պահակը իւր գեղեցիկ կրկին աշտարակիօք, անոր վրայ կը բարձրանայ գետոյն անդիի կազմը քարաժայռի մը գագաթը՝ հին դղեակը, որոյ որմերն ալ Լարսի պահակին պէս սեպացեալ են, աս է դուռն Ալանաց, զոր Վրացիք Տար-ի-Ալան կը կոչեն ըստ պարսիկ յորդման օլլ յայսմ վայրի Թէրէքի բարձրութիւնն է 3772 ոտնաշափ: Լարսի և Գագպէքի մէջտեղի կիրճը կարգէ զուրս նեղ է, ու բնութիւնը այնքան արհաւիրս կը ներկայացնէ, որ անոնց քով Ալպեան լեռներունը խաղալիկ կը զառնան: Տարիալանէն վեր շարունակելով գետին ձախ կողմը հետզհետէ ուրիշ հին բրդաձե աշտարակաց աւերտեկներ կ'երեան՝ այնպիսի շշտակի ափափայից վրայ, որ կը զարմացուի թէ ինչպէս մարդիկ կրցեր են ելլել: Գագպէքի կայարանը անցնելէ ետքը՝ որ համանուն լերան ստորոտն է, 14 ու կէս վերսա հեռի ի Լարսայ, և ուր ուղին 6455 ոտնաշափ բարձրութիւն ունի, կիրճը կ'ընդալինի. բայց տեղ մը երկու եղերաց ժայռերը իրարու կարգէ զուրս կը մօտենան: այս տեղս ալ երկու հին բերդեր կան գէմագէմ կանգնեալ:

Չորրորդ օթեանն է Քոսիի, ուրանար ուղոյն բարձրութիւնն է 6570 ոտնաշափ, Թէրէքի ձորը իւր մէջը կ'ընդունի զհեղեղատն Պայտար ու այնուհետեւ կը շեղի յարեմուտս, ճանապարհը Պայտարի ձորուն մէջէն վեր ելլերով՝ կը հասնի վերջապէս իւր բարձրագոյն կէտին՝ խայի լերանց վրայ՝ 7957 ոտնաշափ: Ասանկով ի Վլատիքաւքասէ մինչև ցԽաչ լերան անցքը՝ 82 քիլոմետր միջոց, ուղոյն բովանդակ հակումն է 5589 ոտնաշափ: Այնուհետեւ ճանապարհը Արակըիի ձորէն վար կ'իջնէ որ Թէրէքի ձորոյն ահաւորու-

թիւնը շունի։ Թէպէտ ասաւ ևս պակաս չեն ձիւնապատ զագաթունք, 2–3000 ոսնաշափ խոր անդունդք և զահալէժք, որոց եղերքէն կ'անցնի ուղերդը՝ մինչեւ որ հասնի յԱնանուր ուր կը զագարին բնութեան սքանչելի արհաւիրքք։

Վերին թէրէքի շրջակայքը կը բնակին Յսիր կամ Օվսիր՝ որպէս յօրջորջին ի Վրաց։ Սոքա զինքեանս իրը կամ իրոնք կը կոչեն, որ նոյն ըլլայ զուցէ «Վերք» անուան հետ։ Ոմտնք ի հնագիտաց զթուիս Վրաց արգին լերանց մէջ ապաւինեալ մասն կը համարին։ Կոցա արևելակողմն են ինկոչչը, ու հարաւոյին կողմը՝ Արարելիի ձորոյն մէջ՝ խէվուորք։

Յսիք, Խնկուշք և Խէվսուրք տառենօք քրիստոնեայ էին, այժմ կէս կոսապաշտ՝ կէս քրիստոնեայ, սոցա բնակած ձորերուն մէջ շատ մը հին եկեղեցիներ կան, որոց մասնաւոր յարդ ունին։ Խէվսուրք՝ որ մինչեւ ցայժմ վերա հիւսկէն կը հազնին, վրանին յունական խաչի նշաններ կը կրեն։

### Պ Ա Հ Ա Կ Ն Ճ Ո Ր Ա Ց Կ Ա Մ Տ Ե Բ Պ Ե Կ Ն Ց

Վաստիքաւքասի կիրճը դիւրին անցք մը չէր կրնար ընծայել խուժագուժ հրոսակաց, որք իրենց խուռն բազմութեամբ միայն զօրաւոր էին։ մանաւանդ որ բարբարս ժողովուրդք չէին կրնար մտարերել կամ շինելու ձեռնարկել այժմեան ճարտարզիտութեան հնարած հարթայտակ և մեղմ ելեէջօք պարտայքը։ Մէկ կամ երկու փոքրիկ դղեակք և մի քանի հարիւր զօրական բաւական էին այդ կրճին մէջ աշագին բանակաց չանքը կամ բռնութիւնը ի գերե հանելու։ Ոչ այսպէս սակայն կովկասու արևելեան հիւսիսային բաղկին և կասրից ծովուն մէջի ասփարակ երկիրը։

Աստանօր շատ աւելի ծախք, աշխատութիւն և անձանձիր հոկու զութիւն պէտք էր։ Ենանագօտւույն ծայրի կողերուն վրայէն մինչեւ ցծով՝ քաղաք մի շինուած էր Դարբանդ կամ Տէրպէնտ, որ մինչեւ ցայժմ կեցած է իւր հին ձեռվլը, կամ գոնէ որպէս Ասսանեանք կանդնեցին կամ նորոգեցին զայն։ Այս նշանաւոր և եղական բերդագագա զուգահեռական կրկին պարսպէ կը բաղկանայ, 3000 մեղք երկայն և իրարմէ միայն չորս հարիւր մեղք հեռաւորութեամբ։ Բարձրութիւնն է 26 ոսնաշափ, թանձրութիւնը՝ ութ։ «Ի կարմիր քարանց զանգեալ և ազիտակ վիճօք արտաքուստ ագուցեալ։ Ճեմելիս լայնս ի վերայ ունելով՝ ելանելիս սանդխօք»։ Մէն մի ի պարսպացդ մարտկոցս կամ աշտարակս ունի։ Քաղաքին արևեմտեան

ծայրն է Միջնաբերդը՝ Նարին-զալա, որ բարձր դարաւանդի մը վրայ կառուցեալ կը զիտէ գքաղաքն և զպահակորմն։ Միջնաբերեան ճանապարհորդք միաբան կը վիայեն՝ թէ սպարիսպքդ ծովուն մէջ ալ կը յառաջանային կէս մղոնի չափ, բայց այդ ջրասոյդ պատուարէդ այժմ հետք չկան, գուցէ յատակին բարձրացած ըլլալուն համար։ Եօթն զրունք են քաղաքին, շորք ընդ հարաւ և մի ընդ հիւսիս և մի ի միջնաբերդն հանելով, և միւսն է գերահոչակ գուռն Երկաթի<sup>1</sup>։ Միջնաբերդէն ակսելով կը ձգի յարեմուտա՛ տեղ տեղ մեծամեծ մարտկոցիւք ամրացեալ՝ Պահակորմը՝ որ լերանց կատարեներուն վրայէն անցնելով կ'իննէ խորածորոց մէջ ու կը յանգէր անշուշտ յանմատչելի ու յանձանօթ գագաթ մի հեռաւոր։ Տերական աւանդութիւն մի կայ, ըստ որում պահակորմդ մինչև ցՈՒաւ ծով կ'երկնար։ Այս չափս յայտնի է՝ թէ այդ պարիսպդ կը փակէր արեկեան կովկասու սատրոտը զանուող համօրէն դաշտերը։ վասն զի սորտ աւերակները կամ հետաքը ծովեղերքէն 30 քիլոմետր տւելի զէպ ի ներս տեսնուած են. զանն որոյ յետ Ճենաց պարապին՝ մեծագոյնն էր։ Դարբանդ, որ 1825ին 26,000 բնակիչս ունէր կ'ըսեն, այժմ միայն 13,775 ունի։ Ի հարաւոյ սորտ են հազար հինգ հարիւրի չափ այգեստանք և պարաէզք, յորս մշակին զանազան պաղասու ծառք, քրկում, բամբակ, ծխախոտ և տորոն, և ուր թուզաս գետի ջուրը բերելու համար 17 քիլոմետր երկայնութեամբ ջրուզի մի շինուած է։ Նաւահանգիստ մի ունի ձեռակերտ ամրարտակօք փակեալ, որ երբեմն կը սասի ձեռու։ (Տես Տեղագիր Ամեշան Վարդապետի. էջ 95. — Asie Russe par Elisée Reclus. — Le Caucase par Alex. Dumas. — Lettres sur le Caucase par le général Gille).

Անցեալ գարու մէջ Տիմիզրի Քանթէմիր որ Մեծին Պետրոսի հետ ընկերացեր էր ի Դարբանդ, արձանագիր մը զտեր էր անդ սեպաձև՝ զոր օրինակեր էր։ Քանթէմիրի երկասիրութիւնքը տպագրեալ են յամին 1807, և ունին արձանագրութեանս օրինակը՝ որ կը բազկանայ յերից տողից։ Վերջին տարիներս կասառվիչ անուն Հնագէտ մը զայն ընթերցած ըլլալը և Արշակ թագաւորի մը արձան յաղթութեան լինելը հրատարակեց։ Քարը կորուսեալ է այժմ, թէպէտ բենուագրոյդ օրինակը պահուած է։

1. Երկաթի դրանս մէկ փեղկը կը կարծուի Վլաց կելաթի վանքը պահածը որուածը. որոյ վրայի գրութիւնը կ'ըսէ՝ թէ Ապուլուար (ամիրայն Դանայ) չե-

նեաց զայն յամին 1063։ Դաւիթ թագուրն Վլաց հանել տուեր էր ի Դարբանգայ ի սկիզբն ԺԲ Դարու։

# ԵՐԿՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ԻՐԱՅՆ ՊԱՏՈՀԱԽՄԱՆ ՅԻՇԽԱՆԵԼՆ ԱՐԵՒԵՎԵՑ

1. Որոց ոգիքն թուղացեալ են յերկնաւոր առաքինութենէն, յոյժ ընդ ահիւ անկեալ է ընսովթիւն մարմնաց. յամենայն հողմնց շարժի և յամենայն բանէ խռովի և յամենայն իրաց զողայ. երազագէտ<sup>1</sup> է այնպիսին ի կեանս իւրում, և յանդիւտ կրուասն յուղարկի ի մահուան իւրում: Որպէս և ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ ըդմահ, ոչ երկնչի ի նմանէ:

2. Եւ այս ասենայն շարկը մտանեն ի միտս մարդոց յանուանմութենէ: Կոյր զրկի ի ճառազայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց. լաւ է կոյր աչօք քան կոյր մոռք<sup>2</sup>: Որպէս մեծ է հոգի քան զմարմին, այսպէս մեծ է տեսաւրութիւն մտաց քան զմարմոց: Եթէ կարի ոք առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ՝ և մոտըն աղքատազոյն, այնպիսին ողորմելի է քան զրազումն. որպէս և տեսանեմք իսկ, ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յոր մեծն է քան զամենայն: Թրագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթուակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում փայելուշ գոլ: Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, որչափ ևս առաւել առ հոգեարն: Բոլոր մարմնոց հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոց և հոգւց միազ են կառավար. և որպէս առ մի մարդ՝ այս-

1. Որ անուի և անհիմն բաներով կը քօր տիւ եղիւա քօր լորմ վատրար. բառ զրագի որպէս երազահանը:

2. Այդ առածդ Պարոիկը ալ ունէին. թար. Մայմո-իսրայ, իթ:

պէս առ բոլոր աշխարհօս։ Թագաւոր ոչ զիւրն միայն տացէ պարտիս, այլ և որոց եղեւ պատճառք ի կորուսո։

3. Բայց մեք թէպէտ և չունիմք հրամանն բամբասել զիշխանս, և ոչ դովոզք կարեմք լինել այնմիկ՝ որ առառածամարտն լինին։ Այլ զանցս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցին էանց, և ոչ զանդաղիմ։ ոչ բամբասասէր մոօք, այլ ճշմարտութեամբ զելս իրացն ասերով ոչ լոեցից, ոչ ի կարծ ընդուսուցեալ, և ոչ ի լուր զարթուցեալ։ այլ ես ինքնին անձամբ անդէն ի աեղողն պատահեցի և տեսի, և լուայ զծայն բարբառոյ յանդգնար խօսերով։ իրրե զհողմ սաստիկ՝ զի բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր և տատանէր զամենայն բազմութիւն զօրաց իւրոց։ Եւ հանդէս առնէր ամենայն ուսմանց, և ընդուածէր՝ զամենայն մոզութիւնն և զքաւդէու-

1. Ծնդաձել կամ անդաձել՝ խորհրդածել, խորհրդածել, խորհրդ, քննել, փոյթ տանիլ, որպէս պարագերէն անտաշտան Նշանաձ։

Ե և զանու և բազանու լեզուաւ հայաւ անտաշաւ՝ խորհրդածութիւն, մատածութիւն։ Յազկերտ քննել կու առյ աէրութեան մէջի այլ և այլ զոնքը. մոզութիւնը, քաւդէութիւնը քրիստոնէութիւնը, հրէւտթիւնը, մանիքեցոց աղանդը, ինչպէս և որից գաւանութիւններ՝ որը յանուանէ չեն յիշառակիր յեղիշէ. զոր օրինակ պրահմանութիւնը և պուտահայութիւնը, որովհետեւ պետութիւնը սահմանակից էր Հնդկաց և առևելուր ու երթեւեկութիւն անզակասէր։ — Յանական և պարթեական դիցապաշտառութեան դրգած արհամարհնանքը, զրագաշտականութեան վերականգնիլը, քրիստոնէութեան յարեմուտա տիրանալը և արեւելից մէջ ալ ծաւալիլը՝ մըտաց մէջ առ հասարակ տարամութիւն մը յառաջ բերած էին. միանդամայն տենչ և փափագ զայնս հետազօտելու և զլաւագոյնն ընտրելու։ Ամբոփիսի քննութիւններ պաշտանական եղանակաւ կատարուած էին Յազկերտ հօրը Առամայ

Եի ժամանակն ալ, (Տես Յ. Գ., 75 և Ճն. Յ. Գ., 18), և աւելի ևս յառաջ Շապուհ Եի օրերը։ Բայց այժմ աւելի

յամբար տոնեն էր. աշխարհն՝ օտար թշնամեաց յարձակմանէն ապահովեալ՝ բազմանեայ խաղաղութիւն մի կը վայելէր։ Կրօնից բազդատման ձեռնորդութիւնը մատորական զարգացմաննշան է, գուցէ ևս արուեստից և ընդհանուր բարօրութեան վասն որոյ Յազկերտի կառավարութեան պատիւ կը բերէ։ Եթէ մանրաման տեղեկութիւնն աւանդած ըլլար մեզ պատմութիւնը, անշուշտ աւելի կարեւոր և հետաքրքրական պիտի համարէինք զնոսա այօր, քան միջ դարու վերջի կիսուն մէջ Առլիթան Արքարի հնդկական արքանեաց մէջ եղած բանախոսութիւնը, զորս բազգատական կրօնագիտութեան հնագոյն փարմք կը նկատէ Մաքս Միւլէր. (Տես Introduction to the Science of Religion, յաւելուած առաջին գասախոսութեան)։ Եղնկայ և Եղն Արանդոցը ։ այն գարուն մէջ տիրող պէտքը յազկեցնելու համար զրուած երկասիրութիւն մի է։ Յայսմանէ կը բազեմք հետազայ տեղեկութիւնը. ։ Քաւ-

թիւնն և զամենայն ուսմունս աշխարհին խրոյ: Արկանէր ի ներքո և զքրիստոնէութիւն կեղծաւորութեամբ, և առէր զայրացեալ մոօք. «Հարցէք, քննեցէք, տեսէք. թող որ լուն է՝ ընտրեալ կալցուք»: Եւ փութայր՝ որ ինչ ի մոին էր՝ զի վաղվազակի կատարեսցէ:

4. իսկ ի կողմանց կողմանց քրիստոնեայքն որ ի զօրուն էին, խմացան զհուրն<sup>1</sup> որ ի ծածուկն վառեալ բորբէր, և կամէր հրդեհել զիերինս և զգաշատ առ հասարակ: Ձեռան և նոքա անձախական հրովին, և սաստկապէս պատրաստեցան ի փորձութիւն գաղտնի մեքենայիցն: Սկսան այնուհետեւ բարձր բարբառով, սազմոսիւք և երգովք հոգեւորօք և մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին զպաշտօնն ցուցանէին, և աներկիւղ առանց զանդիմուելոյ՝ ո՞ ոք և երթայր առնուա՛ ուստւցանէին կամակար: Եւ Տէր յաջողէր նոցանշանօք և արտեստիւք. քանզի բազում հիւանդիք ընդունէին զրժչական գորուէն:

5. իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց, եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոցն, և պատրաստեալ հուրն՝ մինչ չեր ուրուք ի նա փչեալ, վառումն նորա յայտնի

գեայքն աստեղանչմարք, որ և զմննդոց պատճառ և զմահուանց՝ յաստեղաց իբրև ի կենդանեաց զնեն: Որպէս թէ յորժամ ծնանիցին, անդէն և մահուանքն իւրաքանչիւր ուրուք անվիշել սահմանիցն, և ըստ այն ոչ յառաջել ուժեք մեռնել հնար իցէ, և ոչ յատենալ Հ. էջ 154:

— Մասուտիի ժամանակները (յամի 8. 955) չին քաղչէացի մողովուրդ մը մեացեր էր տակաւին, որ Պարսպի և Վասիթի մէջանդուամքը քանի մը գիշեքը կը բնակէր. ահաւասիկ սոցա վարդապետութիւնը ըստ արաբացի պատմըն:

«Ազրիւն ամենայն աղնուութեան, բացարձակ բարին և սկզբնապատճառն կենդանութեան յերկինս են. և աստեղք երեալով կամ աներեւութեանով՝ այս

աշխարհիս գործերը կը սահմանեն: Աստղի մը իւր քալաքէն դուրս ելլելովը, տարածութեան մէջ ընթանալովը, կամ համառած երկնազնին մէկ կւորին վրայ այլ այլ աստեղաց միանալով կամ իրարմէ զատուելով կ'որոշուին ամենայն պատահարը աշխարհին, ակազութիւն կենաց, բազադրութիւնը կամ՝ քայրայմանը նախական տարիերաց. Կորօք արտաքին կերպարանքն կազմաւորին, ծովը յերեան գան կամ կը կորսուին Հ. Պրայրի թուան գունդի մէջանդուամքը քանի մը գիշեքը կը բնակէր. ահաւասիկ սոցա վարդապետութիւնը ըստ արաբացի պատմըն:

1. Թէոդոսիոյ տող զիսրնուրդն, որ ընտրելի չերեիր:

իմացաւ երկիւզածացն Աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցառել զմիսս իւրոյ չարութեանն. և անբժշկական վէրս յոգիս և ի մարմինն տեսանէր: Մ'երթ շանթէր դալարէր իրրե զօձ թիւնաւոր, մերթ պարզէր դոչէր իրրե զառիւծ զայրացեալ. գելցըր, գլորէր, տապալէր երկդիմի մոռք, վխորհուրդս կամացն կամէր կատարել: Քանզի ձեռն արկանել և ունել ոչ կարէր, փան զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա, սկսաւ այնուհետեւ յառաջ կոչել զկրսերս յաւագաց և զանարդո ի պատուականաց և զտղէտս ի գիտնոց և զանարխս ի քաջ արանց. և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանն յառաջ մատուցանէր, և զամենայն զարժանաւորն յետս տանէր. մինչեւ զհայր և զորդի քակէր ի միմեանց:

6. Թէպէտ և ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութիւնս զայս, առաւել ընդ Հայոց աշխարհին<sup>1</sup> մարտրնչէր. քանզի տեսանէր զնոսա ներմագոյնս յաստուածպաշտութեանն. մանաւանդ որք էին յազգէ նախարարացն Հայոց, և անմեզութեամբ ունէին զսուրբ քարոզութիւն առաքելոցն և զմարդարէից: Պատրէր զսմանս ի նոցանէ սկլով և արծաթով, և զրազումն այլով ևս առասպարզեօք. իսկ զոմանս ազարակօք և մեծամեծ գեղօք, և զոմանս պատուավք և իշխանութեամբք մեծամեծօք. և այլ ևս սնոսի յոյս ոգւցոցն առաջի զնէր: Եւ այսպէս հրապուրէր և յորդորէր հանապազ. « Եթէ միայն, ասէ, զօրէնս մողութեան յանձին կալիիք, և զձեր մողութիւնդ սրտի մոռք դարձուսջիք ի ճշմարտութիւն երեելի մերոյ դիւցադնական օրինացս, ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցից հաւատար իմոյ սիրելի նախարարացս, առաւել ևս զանցուցից »: Եւ այսպէս կեզծաւորութեամբ խոնարհեցուցանէր զինքն առ ամեննեսեան, խօսելով ընդ նոսա ի պատճառս սիրոյ. զի խորամանկութեամբ որսալ մարթացէ ըստ առաջին խորհրդեան խրատառացն: Եւ զայս առնէր սկսեալ ի չորրորդ ամէն մինչեւ ի մետասան ամն<sup>2</sup> իւրոյ տէրութեանն:

1. Խման ոչ իրաղէս զաշխարհն, այլ զանցուցից նախարարք, սեպուհք, աշզառք, որք ի զօրուն էին յԱպար աշխարհի կամ ի Դրան Պարսից. որովհեան

Հայրաստանի մէջ կրօնական հալածանքը գենշագոյ գալէն վերջը սկսաւ:

2. Յազկերտ մինչեւ յմետասաներորդ ասրին՝ ողոքանօք, պարզեօք, վարձա-

7. Եւ իրրի ետես, եթէ ոչ ինչ յարգեցաւ ծածոկ հնարագիտութիւնն, այլ ընդդէմքն յորվագոյն գործէին, քանի տեսանէր զբրիտաննէութիւն՝ որ օր քան զօր յորդորեալ տարածանէր ընդ ամենայն կողմանու հեռաւոր ճանապարհին՝ ընդ որ ինքն անցանէր, սկսաւ հաշել և մաշել և հառաջերով յոգւոց հանել։ Յայտնեաց ակամաց զծածուկ խորհուրդն, ետ հրաման բարձր բարբառով և առէ. « Ամենայն ազգ և լեզուք՝ որ են ընդ իմով իշխանութեամբ՝ դադարեցեն յիւրաքանչիւր մոլոր օրինացն, և միայնոյ եկեցեն յերկրպագութիւն արեգական, զոհս մասուցաներով և աստուած անուաներով, և սպաս ուներով կրակի. և ի վերայ այսր ամենայնի և զմոգութեան ևս օրէնս կատարելով, զի մի ինչ ասենեւին պակաս առնիցն»։ Զայս ասերով քարոզ կարգայր ի մեծի կարաւանին, և պատուէր սաստիւ ի վերայ գնէր ամենեցուն, և

որութեամբ միայն կը ջանայր զշայս մոգութեան դարձել, զայս ալ աւելի խոր քով գտնուող նախարարաց՝ զօրաց կ'ընէր. և կը յուսար՝ որ եթէ զսոսա համոզէր, մեացան ալ նոցա կը հետեւէին։

1. Այս է մինչև ցԱպար աշխարհ և ցիւշանս։

2. Հրեական աւանդութիւնն ալ կը հաստատէին՝ թէ մազական մոլեռանդութիւնը հաւասարապէս նեղեր և հալածեր էր զբրիտանեայս և զշրէայս, սկսեալ Յազկերոի օրերէն մինչեւ ցլաւատ, և թէ շարաթապահութիւն ալ արգելուած էր։ (Տես Milman, Պատմութիւն Հրէից. Գլ. Խլ.)։

3. Քարտսի Նաջորակ կամ քարտսի Նայօր, Բազան մասնեց մէջ ևս քար-

տուական նակարակ, է այժմ՝ բազմաթիւ խումբ ճանապարհորդաց և վաճառականաց։ Բայց ի հինգերորդ դարու աւելի ընդարձակ իմաստ մ'ունէր և երեւէ կը գործածէ իրրե Corps expéditionnaire, որով կ'իմանայ Յազկերոի հետ ուղեարեալ արքունիքը, բանակը և

պաշտոնեայրը, բազմութիւն մոգուց և մինչեւ անգամ շարժուն ատրուշան մը, եթէ ոչ նոյն իսկ Վասարական կրակը՝ և յօդնականութիւն թագաւորին։ Տես Արքէոս, յէջ 50։

Արքէն գիտենք՝ որ Պարթե թագաւորք ևս Հնդկաստանի Ազուլ ինքնակալաց պէս, իրենց Ակեւթ նախահարց հովուական բարքը պահած էին. արքունական վրանը սուէլ աեղէ աեղ կը փոխադրուէր, և անոր ետեւէն կ'երթային բազմապիսի ճոխութեանց և զեղիսութեանց հայթայթիւնն և իշխանութեան սպասաւորքն։ Ովէնիէ, որ Արքէնկղիպայ Տէլիէի ի Քաշմիք գնացած ատենը ընկերացած էր արքունի կարստ անին, մանրամասն կը նկարագրէ այդ ահագին շարժուն քարքը։ Թուուզ համարով 150,000 Ճի.

Չորի և փեղք էին ի կարաւանին. 50,000 ուզոք, նոյնքան եղինք, երեք շրոս հարիք հազար մարդիկ. զքեա թէ համարէն Տէլիէի քազաքը զհետ երթայր արքունեաց որոց շայլութիւնը գործ և վատակ կը մասակարենին ճարտարաց։

գեսազմնս ստիպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս. զբոյն պաստակէր հրամանի առ ամենեսեան արկանէր:

8. Արդ ի սկզբան երկոտասան ամի թագաւորութեանն իւրոյ գունդ կազմէր անհամնար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն խոպական<sup>1</sup>: Զայս աեսեալ թագաւորին Քուշանաց, ոչ հանդուրժէր ելանել ընդ առաջ նորա պատերազմաւ. այլ խոյս տուեալ ի կողմանս ամուր անապատին<sup>2</sup>, թագստեամբ ապրէր հանդերձ ամենայն զօրքն խրովք: Խոկ սա ասպատակ արձակէր դաւուաց, տեղեաց, վայրաց. առնոյր զբազում բերդս և զբազափս, կուտէր զգերին, զառ և զապուռ և զաւար, ածէր հասուցանէր յերկիր իւրոյ տէրութեանն: Եւ անդայնուհետեւ յընդունայն եղեալ ի նոյն խորհուրդս, հաստատէր ի կարծիս մնլորութեանն, տաերպ ցպաշտօնեացս ամբարշտութեանն. « Զի՞նչ հասուցուք մեք աստուածոցն փոխարէնս այս մեծի յաղթութեանս, որ ոչ ոք կարաց ելանել ընդդէմ մեր պատերազմաւ »:

9. Յայնմ ժամանակի առ հասարակ միարան մոգք և քաւդեսցք<sup>3</sup> բարձին զձայնս իւրեանց և ասեն. « Աս-

1. Այս է Հեփթազաց՝ Հիբրայա կամ Քուշանաց երկիրը. Տես Յ. Ա., 7, 8n. 2: Ոմանք կ'ուզեն կարդալ յերկիրն ի Տաղական, որ ընդունելի չէ. քանզի Տաղական պրակ. Թուրքան թվական քթագաք մի էր ի Քուշանս, զոր թագաւորն խօշնիւազ տուալ տուաւ. յետ մահուան Յազերանի ի բնակութիւն որդւոյ նորա Պերոզի, երբ սա հալածեալ յեղօրէն յիլուզդայ, կ'ապաւինէր առ նա. (Տես Թազարի): — < Դիմեալ զայր Սմբատ ի վերայ ազգին Քուշանաց և արքային Հեփթազեայ.... և սորս (զօրք Ամբատայ) զհետ արշաւեալ հասին ասպասաւաւ. մինչև ի Բահլշահաստան Քուշանաց, և աւար հարեալ զերկիրն ամենայն զնար և զվատազէս (այժմ՝ Պատկէս), զՏախորսոսայն ամենայն (զուցէ Մասուսին Պազազզազն) և զՏազական >. Աերէսո, էջ 106-107: — Թէսոդոսից տպ. դնէ Թիոտազական (Théotie), բայց այդ փոփոխման հարկ չկայ.

քանզի Եղիշեայ ։ Խոազականը ։ աւելի ժամ է պարսկերէն Հիբրայ անուան քան զթեսուային որով յարջորջէին յընդ զաշխարհն Հեփթազաց, պարսկերէն Խարլում Նախալ:

2. Այս է Խորազմի անապատը: Քուշանք հաւանորէն յառաջ խազացեր էին ու բանցեր մինչև Ալեքսի և Հերազայ մասերը, այդ կարեսը քազաքներդ ձեռք անցնելու համար:

3. Ասա իմանալ պարտ է կարծեմ ոչ զբաւդեայս՝ զհետեղու քաւդէութեան որ տարբեր էր ի մոգութենէ, վասն որոյ և չէին կրնար խորհրդական լինել թագաւորին, այլ ։ աստեղազէաբ ։ — Միւճէլ իւթ-Թավարիսի հեղինակը Ասանեան արքայից այլեւայլ պաշտօնէից տիտղոսները յիշատակած ատենը կ'ըսէ՛ թէ սիրորդինաս կը կոչուէին միւճէճիմքն, այս է ։ աստեղազէաբ ։

տուածքն՝ որ եսուն քեզ զտէրութիւնդ և զյաղթութիւն ի վերայ թշնամեաց քոց, ոչ ինչ են կարօտ խնդրել ի քէն յերեւելի պատուականացոս, այլ զի բարձգես զամենայն ուստօննա մողորութեան մարդկան, և ի մի գարձուացես օրէնս զբագլատական պատուիրանին »։ Հաճոյ թուեցաւ բանն առաջի թագաւորին և ամենայն մեծամեծացն, և մանաւանդ որ էին առաջիկայք օրինացն; Խորհուրդ ի մէջ առեալ, յաղթէր խրատն։ Անդէն ի ներբոյ պահ գըտնին՝ արգելոյր զբազմութիւն այրուձիոյն Հայոց և զվրաց և զԱղուանից, և զամենեցուն որ էին հաւատացեալ ի սուրբ աւետարանն Քրիստոփի։ Եւ հրաման ասսուիւ ի վերայ գոնապանացն առնէին, թէ որ յարենիր առ մեզ՝ գայցէ՝ թողեն, իսկ յարենելից յարենուաս՝ անանց լիցի ճանապարհ։

10. Եւ իրեւ արգել և փակեաց զնոսա յամուր յանել գառագիղն, որ յիրաւի սոսացի ամուր և անել, քանզի չիք անդ տեղի փախստի և թաքստի, վասն զի շուրջանակի թշնամիք են բնակեալ, յայնո՞ւ ժամանակի ձեռն արկանէր ի նոսա, և մեծաւ չարչարանօք և պէս պէս տանջանօք վատթարէր զբազումն ի նոցանէ, և ստիպէր ուրանալ զճշմարիսն Աստուած և խոսոովանել զերեւելի տարերս։ Իսկ զօրականէն առ հասարակ գեղեցիկ խորհրդով, քաջապէս զօրութեամբ միաբան ազագակէին և ասէին. « Վկայ են մեզ երկինք և երկիր, ոչ երբեք հեղգացեալ եմք յարբունի փաստակս, և ոչ խառնեալ փաստութիւն ընդ արութիւն քաջութեան. ի զուր անողորմ են հարուածքս ի վերայ մեր »։ Եւ բազմանայր գոշումն ազագակի նոցա, մինչև ինքնին թագաւորն ականատես լինէր իրացն յանդիմաննութեան, և անդէն վազվազակի երգմամբ հաստատէր և ասէր. « Ոչ թողա-

1. Այս է գուռն կասրից կամ Էլպուրի հարաւային բազկին վրայի կիրճը. (Տես 3. Ա., 7. էջ 185. ծն. 1). Թէսդոսիոյ ազագին ասս ևս դնէ Պանէ դուռն որ անընդունելի է, քանզի Յազկերու ետ զարձեր էր յԱղար աշխարհ։ Ի Բարիւ աւ ըլլար, գծուարին է կարծել, թէ անդ՝

թշնամի ազգաց մէջ ահագին անապատներ իւր ետեւ թողլով, համարձակած ըլլայ նեղել և տէաճեցնել զօրացը կարեսը մէկ մասը։

2. Այս է յԱղար աշխարհ կամ Խորաբան, որ թարգմանի և արևելք ։ Յառ զանո՞ւ սպառ, Ճնորդ հայերէն և սաստ ։ իւր

ցուցից ձեզ, մինչև կատարեածիք զամենայն կամս հրամանաց խմոց »:

11. Եւ ահա իշխանութիւն առեալ չարաշար սպասաւորացն, զի զըրս զինուորան ի բուն աւագացն մասուցեն ի փորձութիւն տանջանացն: Եւ զառաջեաւ գատեալ<sup>1</sup> բազում հարուածովք՝ նովին կապանօք անցուցին ի տեղիս արգելանին: Իսկ այլացն խարէութեամբ առժամանակ մի թողութիւն արարեալ, և զամենայն մնար առն պատճառս արկանէր զկապելովքն, և զայս առնէր սատանայական խրատուն :

12. Եւ յետ երկոտասան աւուր հրաման տայր ընթրիս գործել<sup>2</sup> առասութեամբ և աւելի քան զաւուրց սովորութիւն, և կրչէր զբազումն ի զինուորական քրիստոնէիցն: Եւ ի ժամ գահուն պատրաստութեան<sup>3</sup> զիւրագանչիւր տեղիս շնորհէր նոցա զբազմականին<sup>4</sup>: Եւ սիրով խոնարհութեամբ խօսէր ընդ նոսա ըստ առաջնում կարգին, զի թերեւս հաւանեացին ուտել զմիս զոհեալ, զոր ոչ երբեք էր օրէն ուտել քրիստոնէից: Իր-

1. Եղիշէ շզբուցեր մեզ՝ թէ ինչ ամբաստանութիւնք եղան այդ շորս անձանց դէմ. հաւանօրէն Արեգական կամ աստաւածոց դէմ նախատալից խօսք մը ըրած ըլլալու էին: Դիտելի է սակայն՝ որ Պարսիքը նախ քան զպատճեն՝ օրինական մեռվ կը դատեն միշտ:

2. Հին աշխարհին ժողովուրդք առ հասարակ դիտած էին՝ որ անկեղծ ընկերակցութիւն մի միայն անոնց մէջ կրնայ զպանակ՝ որք ի միասին կուտեն և կը մպեն: Խրբէ նշանակ այդ միութեան հաստատեալ էին զահագործութիւնքն, որք ոչ միայն զերգաստանաց՝ այլ և քաղաքաց և ամբողջ ազգաց համար կը կատարուեին, և յորս առէն կարգի մարդիկ սեղանակից կ'ըլլացին: Այդպէս էր նաև խաղաղութեան կամ նիշակակցութեան դաշին կուլու ատեննին:

3. Միսիթ. 1864ի և թէոդոսիոյ տպ. զպայտաստուրեան. առջի Միսիթ. առաջիքիք՝ զպայտաստուրեամբ: Զգիտեմք առ-

կայն՝ թէ փոփոխութիւնդ գրագրաց վրայ չիմեեալ է, թէ սոսկ սրբագրութիւն մի է: — Ի ժամ գանուն, այլուր՝ ի ժամ բազմականացն (Յ. Ը, 27): զահ, որպէս և կամ, աճ պարսկ. է աթոռացրայական, իշխանութիւն. այս է թագաւորին և իշխանաց սեղանի նստած ատենը:

4. Պարսկերէն պազմ ոյ, նշանակէ հացիերայթ, խրախունք, ժողովականք սեղանոյ, ժողով: Յազն, պազմացան. Է ևս պազմկան աշոյ, տեղի խրախութեան. և խրախակցաց ընկերութիւնը:

5. Զմիս զուկուլ. (Տես էջ 114, ձն. 2 և էջ 170). «պատրուճակք մի մեռցին անցազ»: Յ. Բ., 85: Շատ Պարսից՝ սպանանել զբարի արարածո Որմղդայ առանց կանիսաւ հաշո առնելոյ զջիս աղօթիք և արարողութեամբք, մեղք էր: Աւելորդ զարութ գրգռել էր ուրեմն քրիստոնէից կողմանէ Արքայից արքային հետ սեղանակից եղած ատեննին յազու-

բեւ ոչ կալան յանձին ամենեքին, ոչ ինչ կարի ստիւպեաց. այլ հրամայեաց՝ նոցա մասուցանել զսպորական կերակուրն. այլ առաւել գինեզն՝ յաւելոյր ի տաճարին դիրախութիւն։ Եւ անտի ի դուրս ելեալ ի սրահն արքունի, արգելին զոմանս ի նոցանէ ձեռս յետո կապելով, և զիսնիշանունսն՝ կնքելով, և զդուշութեամբ պա-

ծոյ միս չուտելնին. քանի որ Քրիստոս պատուիրել էր թէ որ ինչ մասնէ ընդ բերան ոչ պղծէ զմարդ (Մատ. ԺԵ, 11), և Պօղոս առաքեալն ալ զնոյն քարոզած էր։ Բայց սրպչեալ այդ ընթացքդ մեծ զայժմակութիւն կը պատճառէր հրէամիտ քրիստոնէից մէջ, առաքեալքն Պետրոս և Պօղոս երթալով յերուսալէմ, անդ որոշեր էին Յափրայ հետ զգուշացուցանել զհաւասացեալս ի կերակրոց կոսց (կամ ի զուելոց կոսց), ի յարենէ և ի հեղձուցելով (Գործք Առ. թէ. 11). վասն սրոյ և հայր ալ հետեւով ընդհանուր եկեղեցոյ վարդապետութեան, ասհմանեած էին «Զոր ինչ ընդ յազումն պղծութեան իւրանց էին անդուցեալ, զնաց, զինին, զինդանի անասուն, համարձակ լիցի»։ Կանոնաց Գիրք։

1. Թէոդոսիոյ՝ ինչպէս և Աննենկոյ 1852ի սպագիբն՝ այլ սռաւել զինեօնն, սրպէս եղաք. Մինիմարեանց 1864ի սպաց առաւել զինեօնն, որ անշուշտ աշքէ փախած սիալ է. — Գալով զինւոյ գործածութեան, Հերոդոտոս կ'ըսէ՛ թէ Պարսիկը գինին շատ կը սիրեն և առատօրեն կը խմեն, մանաւանդ կարեռ գործոց կրայ արքեցութեան վիճակի մէջ սովոր են միշտ խորհեւու։ Երբ հետեւեալ առառուն սմագին ի թմրութեանէ, հացատուն բազմականաց առջեւը կը դնէ առջի դիշեր ըրած սրոշութիւննին, և եթէ վերասու զարդութեանը, ըստ այնմ կը դարձեն. եթէ չհաստատեն մէկդի կը թողուն։ Երբեմն առաջին խորհուրդը զդապատութեան մէջ կ'ընեն. բայց յայն-

ժամ՝ պէտք է՝ որ ինդիրը գինւոյ ազգեցիւթեան ներեւ վերստին քննեն։

Հերոդոտոս Յազկերտ Երկրորդէն 900 տարի յառաջ նկարադրած էր այդ սովորժինդ։ Բարեկցիկ Պարսիկը այժմ իսկ կը նստին երեք շորս ժամ՝ սեղանի վրայ։ Բազմապիսի աղանդերօք և համագամօք կ'անցունեն ժամանակնին, այնպէս որ երբ հուսկ յետոյ մննդարար և հաստատուն կերակրոց կարգը դայ, ու ախորժակ չեն ուսնենար բան մ'ուտելու։ Հակառակ պատուիրանացն իսլամայ Մարգարէնն, Պարսիկը այնքան զինեպաշտ են արձմ որբան էին Հերոդոտոսի օրիրը։

Տակիսոս կը պատմէ՝ թէ նախնի Պերմանք իւրանց առաջնորդաց ընտրութիւնը, ինչպէս և ամուռնութեանց և մինչեւ անզամ պատերազմի կամ խազութեան սրոշութիւնքը ինչոյից առեն կ'ընէին։ Սա յարօնարագոյն ժամանակ կ'երեւէր նոցա՝ անկեղծ և արիտական զգացմանց արտազրութեան համար։ Բազմականք սրտերնուն մէջ եղածը զինւոյ զուարժութեամբը կը հոլանդին և ի վաղորդայն կը վերաբննէին առջի օրուան սրոշութիւնքը (Յղ. Բարուց Գերմանաց, Խլ.):

2. Խոնջանունք՝ կապ վարտեաց կամ անդրագարտեաց, զորս կը կնքէին օրերով, որպէս զի յանցաւորը իւր աղութեանց մեջ մնայ և տանջուի։ Այլանդակ շարչարանք՝ որ անհաւատից յատկացեալ կ'երեւի։ Արտավիրափ գժուոց մէջ բազում հոգիներ տեսեր էր, որ իւրենց կոկանքը շարունակ կը կւա-

հելով, եր որ զերկուս առուրս և եր որ զերիս. Եւ բաղում այլ ևս յանարժան հարուածո չարչարէին. զոր և ոչ ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել: Եւ զոմանս ի նոցանէ հեռացուցին, և քարչեցին յազնուական պատուայն անարդեալ:

13. Եւ գունդս գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր, յամնուրս անապատին ի մարտ պատերազմի թշնամեացն արքայի. և բազմաց իսկ և իսկ անդէն հասանէր վախճան մահու որով: Եւ զամենեցան զկարգեալ թոշակոն նուազեցուցանէին, և քաղցիւ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ձմերոցի տեղիս՝ զգմնեայ վայրմն հրամայէին նոցա, և անարդս և վատթարս յաչս ամենեցուն զնոսա ցուցանէին: Իսկ նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանսն վասն մեծի յօւայն՝ որ առաջոյ պատրաստեալն կայ պատուիրանապահ համբերողացն: Որչափ չարութիւն զամնարգութիւն բազմացուցանէր, նոքա ևս քան վես զօրանային ի սէր Քրիստոսի. մանաւանդ զի բազումք ի նոցանէ զգիրս ուսեալք էին ի մանկութենէ, զանձինս մխիթարէին, և զընկերսն քաջալերէին, և աշկարայ<sup>1</sup> զպաշտօնն ունէին և բազմացուցանէին: Վասն որոյ և բազումք ի հեթանոսաց՝ որոց հեշտ և ցանկալի ճայնքն թուէին, քաջալերէին զնոսա, և ասէին բանս մխիթարութեան, իբրև թէ լաւ իցէ մարդոյ մահուչափ ճգնել, քան յայրպիսի օրինաց ուրանալ:

14. Բայց սակայն թէպէտ և նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ զուարթութեամբ խնդային ըստ ներքին մարդոյն, արտաքին տեսիլն կարի ողորմ էր յօտարութեանն: Այնպիսի պատուական զինուորութիւն հասեալ էր ի չարշուոք անարգութիւն, և հայրենի ազատութիւնն չարարաչար կայր ի ծառայութեան մարդախոշոշ բոնաւորին,

Նէին, յետով դուրս կը թափէին. ապա վերստին կը կտանէին և դուրս կը հանէին: Սոքա էին ոգիք անզգամաց՝ ոքք շէին հաւատացեր Ահուրամազաեան կրօնից, հանդերձեալ կինաց և ընդհանուր

յարութեան մարմաց . The Book of Ardaviraf. Ch. 61:

1. Բառ պարոիկ՝ ալքայա . կամ աշկար . աշկար ալքանի, յայրոնապէս:

որ և ըստ հեթանոսաց օրէնս անցանէր արիւնահեղութեամբ, և ամենեին չկարծէր՝ թէ գազէ այսր ամենայնի վրէժինդիր յերկինս։ Նա և ոչ զերկլաւոր վասակառորուք յիշէր, և որ մեծն քան զամենացն է բառ մարմնաւոր կարգի, քանզի գոյին ոմանք ի նախարարացն Հայոց, որոց զեղբարս նորա մնուցեալ էր մայրենի կաթամբ իւրեանց<sup>1</sup>, առաւել ևո քան զամենեսեան զնոսագատէր :

1. Աստանոր բացատրութեան անձը դութիւն մը կորով և գեղեցկութիւն տուած է իմաստին. Եզեկէ սեռ կ'ուզէ՛ թէ գոյն ուժանք ի համարարացն Հայոց, որոց մարդն մնուցեալ էին կաթաւիք իւրեանց գեղբար Յազկերաի: Ամդ կերպով եթէ խօսած ըլլար Եզեկէ՛ բացատրութիւն սովորական և հասարակ կը լինէր: Բայց պէտք չէ կարծէլ թէ Հայ Տէկնայք Ասասնեանց արբանիքը դնացեր ու անդ ընակեր էին դայեկութեան համար. այլ թէ պարոիկ արբայորդիք յանձնուեր էին հայ նախարարաց, որոց կանայք իրենց զաւակին հետ աննոց ալ կաթ տուած էին: — « Այն ժամանակները, կ'ուշ Թավազիր՝ Յազկերուի երկրորդի հօրը Վասարոյ վրայ խօսած ատենը, թագաւորաց սովորութիւնն էր, որ երբ արբայորդի մը ծնանէր՝ բանիքուն դայեկի մը կը յանձնուէր, ու յարբունաց հետիւ տեղեր կը խնամուէր. և մինչեւ որ ձի հեծնել, զէնք գործածել չի դիտնար, ու գործոց խելահաս ըլլար, յարբունիս չէր կուտուեր: Յազկերու երկրորդի նախորդը Վասար ի Ծնելուն պէտք այլը Յազկերա Ա. զայն յանձնեց Դուռման-իպն-էւ Քայսի իշխանին Տաճկաց կամ Արարացոց, որք ընակեին յարեւուս Բարեւասանի: Դուռման առաջ զմանուկն ու իր երկիրը տարաւ ի Հիրա (այժմեան Նմէկի կամ Մէկնութ Ալիի մօտերը): Յետույ Դամասկոսէն յոյն Հարստարակն մը ըերեւ տալով, Վասարոյ բանկութեան համար Եփրամայ մօտերը քաղ-

15. Եւ յայսր ամենայնի վերայ այլ ևս չարութիւն խորանակեաց։ Զմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում անոն էր Դենշապուհ, որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի,

Վասակ և զորդիս առմին Մամիկոնէից և Կամարականաց և զայլոց տանուտերացն ժողովեալ յիշրաբանիւր դայեկաց, յամուրս բերդից իշխանութեան Սիւնեաց ես անցուցանել։ (Խոյն, 195)։ — Արաց պատմին Վաշուխտ կը պատմէ թէ Արձիլայ յաջորդը Միհրդատ՝ որ թագաւորքը էր Արաց 434էն ց446։ յորժամ ծնաւ որդին իւր Վախթանգ, հանեցաւ ի թափանձանաց սպայապետին Սուրբակայ՝ յանձնելու նման իւր զաւակին զատիքարակութիւնը։ քանզի սովորութիւն որ արքայորդիք մեծամեծաց ըսդ մեծանան։ Վեց տարի ետքը Միհրդատ աղջիկ մ'ալ ունեցաւ, զոր կասրի սպասալարին խնդրանօր յանձնեց նման, և նա տառ զայրիկն եւ իւր քաղաքը ի կարտրաց ու անդ սեռց։ Brosst. Hist. de la Géorgie, էջ 148։

Մինչև ցարմէ Լովկասառենակ Զերքեցաց մէջ ազնուական ընտանեաց մանկութ մէկ մէկ նշանաւոր և փարձառու մարդու կը յանձնուին՝ որ աշաւչդ կը կոչուի. սա կանու զերեխայն իւր տունը կը տանի, հայութիւն կ'ընէ, կը կրթէ ու կը խնամէ։ և երբ ըլլաս այս շափահան և կատարեալ զայրէկ իւր ծնողաց կը գարձունէ, Lettres sur le Caucase, par le Général Gille; էջ 132։ —

Տայա պարսկեէն հայերէն գայեակ անուան պէս կրկնն նշանակութիւն ունի, 1 ծծմայր. 2 այր խնամակալ, դաստիարակ։ Տայաէն կը կազմուի Տայէկի որ է դայեկութիւն։ Տես Յ. Բ., 62, մե. 2։

1. Այս այն Դենշապուհ է, համբարակապետ արքայից արքային, որոյ ձեռքը մեռցնել տուաւ Ցաղկերտ զեսիւ-

կոպոսունս յԱրգար աշխարհի։ Դենշապուհ, որ ոչ իրբե մարզպան խրկուած էր, այլ իրբե հայութիւնը կատարելու համար, (Տես Յ. Բ., 67)։ Այս աշխարհագրոյն նպատակն անշուշում միայն զեկեղեցականս նեղել էր։ Սասանեանց գանձուն սովորական հասոյթքն պատերազմաց ծախուց անբաւկան եղած ըլլալու էին։ Հայոց թագաւորութեան վերջանաւէն ի վեր (428) քսան և հինգ տարի անցեր էր և պդերկար միջացիդ մէջ Հայաստան կատարեալ խաղաղութիւն վայելեր էր։ Հարբատութեան՝ բարօրութեան առհմատակ աւելցած ըլլալն անկէ ալ յայտնի է, որ թէկէտ տուրքերը կրկնապատկեցան, սովորողը կրցաւ վճարել, և շեր ալ ապստամբեր եթէ կրօնից շուշէին։ — Կոյնակս կանանց և պատաց առոնին կենաց վրայօք Եղիշէի տուած աեղեկութիւններէն կը հասկցուի։ թէ վայելուշ և սիսութիւն մը ընդհանրացեր էր Հայոց մէջ։ Իսկ գանդրայից հարստութեանցը վրայօք՝ տես զշառն միանձնաց, 12-17։ — Դենշապէն զալէն յառաջ Եկեղեցականք և միայնակեացք ոչ միայն զլամահակէ ազատ էին, այլ և կրօնական հիմնարկութեանց յատկացեալ կալուածքն անենին տուրք շերն վճարեր։ Աշնքերը՝ մանքերը՝ ազատ յամենայն հարկապահանց իշխանաց՝ սահմանն ընկալան և անդա, և զերիցագլուխ պատիւ ժառանգեցին յուխտի սրբութեան ։ Ասի. հայկ. հատ. Բ, էջ 109։ — Դենշապուհ կը բազկանաց յերկուց յատուկ անուանց։ Դեմ գէն, օրէնք, այս է Դենիմազգեզն. և է անուն հրէշտակի։ որ կանձնառոքէր զարդարւ-

դողնոյն բերեալ զսեծ թագաւորին, և խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր՝ առնել ամենայն երկրին

տական հաւատու, որոյ համար ալ յառակ ի աշխատ մը կայ. իսկ շապաւէ նշանակէ արքալորդի:

1. Այս աշխարհագրին վրայսք Եղիշեի տուած տեղեկութիւնքը յայտ պիտանի են, թեպէս մեր հնատքըը թիւնը աւելի կը շարժեն քան կը յագեցնեն: — ի՞նչ հարկ էր սակայն աշխարհագիր առնել այրումին բերեցնելու համար: Եղիշե կամ Դամար Փարագի մեջի չեն զրուցեր՝ թէ որչափ հեծեալ որ տային Հայք Սասանեանց բայց ինչ որ ալ ըլլայ սոցա թիւը, եթէ յուուզեցնել հարկ ըլլար, կնային օրինակ իմ մեկ երրորդը կամ քառորդը պակաս ուզելով գոնանալ. ու այդ պակսած մասը կը բաժնուէր նախարարաց մէջ համեմատարար իւրաքանչիւրին տուածին. < համագունդ ամենայն զօրօք նախարարացն յիւրաքանչիւր տանէ ի մի վայր դային հասանէին > և այլն. Յ. Գ., 53: Այսաշխատ մարթ է հետեցնել թէ այրումինը քանակութիւնը, զոր մէն մի տանուուէր պարտական էր կազմել՝ հանդերձել և կերպերել, անոր հպատակաց թուայն կամ ունեցած եկամտին համեմատութեամբ որչուած էր ի հնուց անտի, և թէ համանակ անցնելով այդ համեմատութիւնդ խանդարած էր. գան որոյ հաւասարագէս թեթեցնելու համար իւրաքանչիւրին բաժնը՝ նոր աշխարհագիրը մը հարկաւոր էր: Բայց թէ ինչ համեմատութեամբ ի ինչ հիման վրայ կ'որոշուէին այդ զօրաբաժինդ, հայսց զինուուրութեան կանոնաց վրայ մեր ունեցած անօսօր տեղեկութիւնք չներեն մեզ հաւասանել:

Խակ հարկերը թեթեցնելու կամ ծանրացնելու նկատմամբ եղած աշխարհագիրը ընկանական է. որովհետեւ անձնական տուուը մը կամ զինահարկ մը հաստա-

տելու համար ազգահամարն անհրաժեշտ է. բայց որպէսկան լեռանց՝ գաշտաց և անուաաց և շինից և աւերակաց վրայ այլ և այլ տուուքեր գրուեցան կամ եղածներ աւելցան, պէտք է հետեցնել՝ թէ այդ աշխարհագիրը Cadastre մի էր և ոչ պարզ ազգահամար:

Թաղապարի կ'ըսէ՛ թէ Ցաղկերտ թի յաջորդին և որդւոյն՝ Պերոզի օրերը խարած չկար ի Պարսկաստան. (խարած կամ հարկ ըսելով խմանայ որոշեալ տուուը՝ = impôt fixe). Թագաւորը արտերէն և այդիներէն խարած չեին առնուը. այլ ունաց բերքին տասանորդը, ումանց հինգ կերորդը կամ քառորդը, մինչեւ անզամ կեսը, ըստ բեղնաւորութեան հողայ, կամ ըստ որում արուը կ'ոռոգուէր ջրանցինք՝ գուլի կամ անուով: Այդ խարածին հաստատութիւնը հուշեկվանայ հօրը՝ կաւատայ օրերը (487-531) ձեռնարկեցաւ: Օր մը կաւաա որսի ելած ատենը տեւաւու որ շինական կին մը կը ծեծէր զիւր ողայն քայլի այդին ողկայ մը փրցեւունին համար. և խաղողը ձեռքէն առնելով այդուով մէջ նետեց: Երբ պատճառը հարցուց, կինը՝ որ շէր ճանչեր իրեն հետ խօսողը, պատասխանեց՝ թէ շգիտին որ մինչեւ որ թագաւորը իւր դորձակաները շիրկէ ու շառնէ գիրաւունս իւր, ոչ որ կինայ վայելել իւր այդւոյն պտղէն: Զարմացաւ արքայն տրաց հաւաքաման այդ անիրաւ եղանակը տեսնելով, ի ժողով գումարեց զիսորդդականս և հրամայեց՝ որ հնար մը մոտածեն, սրպէս զի գանձին եկամոււուը առանց պակսանուուն: ամեն մարդ իւր հողին և բարեաց աղաս տէր ըլլայ: Յայնժամ մեծ հազարացեալ առաջարկեց՝ որ ամէն տեղ պաւ հականցներ հաստատուին, և իւրաքանչիւր հազէն առնուած տասանորդի, հինգ կերորդի, քառորդի ևն. փոխարէն որու-

Հայոց ի թաղաթիւն հարկաց և ի թեթևոթիւն ծանընթեան այրեածիոյ:

16. Թմէպէտ և ի վերին երեսս կեղծաւորէր, այլ ի ներքոյ խորհուրդը շարագոյն ցուցանէին: Առաջին, զագաստոթիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն<sup>1</sup>.

Հետ քանակութեամբ հարկ մը առնուի: Համեցաւ թագաւորը, բայց երբ ամէն կողմ պաշանեայներ կը զրկէր արտերը՝ արդիները, պարտէզները շափելու և արդ որոշութիւնդ ի զլուխ հանելու համար, մահը վրայ հասաւ: Որդին խոսրով անուանեալին նուչըզվան գործադրեց հօրը կամքը, համորէն խարեւասանի և Առուրեստանի աշխարհնդիր առնել տուաւ, շափել առավ զամենայ անդս և զայդիս և զեխօս: որը յատուկ մատենից մէջ արձանադրեցան:

Բայց կերեկ թէ նուչըզվան շուտ թմացու՝ թէ մեծ գմանէնթիւն կը յարուցանէ, եթէ նախկին հասից հաւասար՝ անշարժ սակ մի պահանչէ: ուստի առնաւորակ մէկ արտավարի՝ մէկ արծմի տիրունեկ կամ՝ դրամ՝ (ՅԵ-70 հարդարոդ քսանդրէ ըստ Պարսիկ որ ՄԵ-ՆԱՐԻ) և միանգամայն մէկ շիտ կամ շափ արմանիք սրուեց: Բայց այդ կրկն տուրդո վճարելի էին միայն եթէ երկիրը ցանուած և բերք առած ըլլար: Պատգաւու ծառոց համար ալ, որը մի առ մի համրուեցան: որոշեալ թէթեւ տուրդ մի յատկացաւ, որինակ իմն և ձիթենի կամ արմանիք մէկ տիրունեմ տրաց ենթարկուած էին: Այլազնէն ազգաց՝ Քրիստոնէից և Նորէից գլխահարկ հաստատուեցաւ, որ ազգաւոր կարողութեանը համարէ կամ համարէն էր, և բարեկեցիկներու համար վեցէն մինչև յերկուասան դրամն կը տարբեքը կանալը ազատ էին ի զլխահարէ:

Այս նոր դրութիւնն անշուշտ գտուարին էր կանանաւոր կերպով գործադրել, որովէնեան ամէն ասրի աշխարհնդիր ընե-

լու կը կարօտէր, այսու ամենավնիւ տառանորդի գրութենէն շատ աւելի քիչ վեսակար էր, և մեծ բարենորոգում մի էր նախնի իրաց բազդատմամբ:

Յազկերտի օրով Հայրատանի մէջ զործագրուածն այ մարթ է միացնել կաւատի ձեռնարկածին հետ: քանզի ներելի չէ արեւելեան պատմշաց պէս՝ աշխարհապարփակ յեղափոխութեան մը սկզբմանաւա զնել տղայսկան դէպ մը կամ շննծու մանրագէպ մը: Պարսիկը տասնորդաց մեծամեծ անպատեհութիւնները տեսած էին. բայց որովհետեւ գծուարին է կարէ դուրս նացաւուած հասոյթը մէկն ի մէկ անշարժ սակի մը վերածել, առաջին փորթը Հայրատան փորձել ուղեցին իրբ: Թեացեալ նաևնդուրէ աւելի բարզուած և հարստու երկիրը: Գուցե ևս վասն զի այդ նոր դրութիւնդ մասամբ կը գործադրուէր անդ ի հնուց անսի, ինչպէս Հռոմէական պետութեան մերձակայ քանի մը նահանդաց մէջ: Նոր տրոց սաստիւթենէն եղած զանգատներէն ալ մարթ է կարծել՝ թէ Դինշագհոյ պահանջան շատ աւելի ծանր էր քան զոր ինչ նուչըզվան հաստատեց աւելի վերը և Միջագետս: Զարմանաւու չէ թէ ինչու այդ նոր դրութիւնդ 60-80 տարույ կարօտացաւ ընդհանրանալու համար: Արեւելից մէջ զաղափարաց դրամակ յառաջացում եթէ ի յուշ ածեմը, այդպիսի ժամանակի միջոց մը շափազանց շերելի կարեսը և ընդարձակ բարենորոգութեան մը համար:

1. Ազատութիւն նկեղեցւոյ, այս է առուբէ ազատ ըլլալը. վասն զի ծառայութիւն կը համարուէր հարկ վա-

երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք՝ որ բնակեալ էին ի վանօրայս, ընդ նովին աշխարհագրաւ էարկ. երրորդ, զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց. չորրորդ, բանարկութեամբ զնախարարեանն էարկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խոռվութիւն: Եւ զայս ամենայն առներ, թերեա զմիաբանութիւնն քակեացէ, և զուխան եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակեացան փախուսցէ, և զշինականն փանեսցէ. և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայ գիմեսցեն յօրէնս մոզուց: Եւ ևս չարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետ<sup>1</sup> աշխարհին էր՝ իրերե զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից, գրգուեաց յարսց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և միւս ևս մոգպետ գատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյն փառն աղաւազեսցեն:

17. Բայց սակայն թէպէտ և ամենայն գործքս այս գմնեայ էին. չեւ էր ուրուք ձեռնարկեալ յայտնի յեկեղեցին. վասն այնորիկ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ և էր ծանրութիւն հարկացն: Քանզի ուստի արժանն էր առնուլ հարիւր գահեկանու<sup>2</sup> չափ, կրկին առ-

բեն: Ազատ եկեղեցի անկառ. ի ծառայութիւն հեթանոսաց. և սուրբ քահանայք նորա հռիմի շարշարին յանորէն հարկահանաց: Յշ. Միանձնաց, 16. և Յ. թ. 69. ճն. 2:

1. Այս է Աւահան Ամաստոնի, որ Հմայեկայ Մամիկոնէի հետ գատախարակեալ և աշակերտեալ էր ի Մեսրոպաց (Կորիւն, 27), զոր Վասոմ Ե՛ հազարապետ կամ ներբին ընդհանուր վերակացու և բարձրագոյն գատաւոր և կառավարի անուաներ էր Հայաստանի, յորժամ առաջին անգամ մարզպան կը զրկէր ըզ-Միքշապուհ: Ձնա Դինշապուհ գործէն հանեց ու տեղը Մշկան անուն պարսիկ մը բերաւ, օգնական տալով այս վերշնոյս մոգպետ մը. (Զամշեան, Պատմ. Հայոց): Դիմակէի է որ Դինշապուհ պաշտոնանկ շըրած օրինաւոր կերպարանք մը կ'ուղէ տալ իւր գործառնութեան. վասն

որոյ ամբաստանութիւն կը յարուցանէ: Բայց Եղիշէ Վահանայ պաշտօնանկութիւնը Դինշապուհ ըրած շարեաց մեծագոմը նկատելով փառաւոր գովեստ և շատագովութիւն մը կ'ընէ նմա:

2. Դահեկան, բազադրեալ ի տան օճառուէ որ է պարսկերէն տան, և ի կան Ո՛կ մասնէկ կամ վերջահոլովէ, համագամայն նշանակէ և տամնոց: Նորին նշանակութիւն ունի և լստին գենար՝ Տեռարիուս, որ տան աս ըսել է. և առ էր պղնձի գրամ Հոմայուցուց: Արծաթի գենարը մէկ փանոնք կ'արծէր, իսկ մէկ ոսկի զենար հաւասար էր 25 արծաթ գենարաց, կամ աւելի չշգին՝ 26  $\frac{1}{2}$  ֆանարի: Պարսկերէն տանկամի և այնար (denarius) ոսկի գրամի անուն են. ու այդ իմաստով կը գործածէ Եղիշէ աստ և ի Յ. թ. 118. քանզի պարսիկ հարկապահանջաց կեղեքած ստակին մեծ քա-

նուին. այնպէս և եպիտկոպոսաց և երիցանց գնէին, ոչ  
միայն շնչաց, այլ և աւերակաց։ Նա բնաւ ով իսկ կարէ  
պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և  
հասից և հարկաց լերանց և գաշտաց և մայրեաց։ Ու  
ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինա-  
բար յափշտակելով. մինչեւ ինքեանք խոկ մեծապէս զար-  
մանային, թէ սաստի այս ամենայն դանձ ելանէ, զիարդ  
շէն կայցէ աշխարհն։

18. Եւ իբրև տեսին, թէ այսու ամենայնիւ չկա-  
րացաք ձանձրացուցանել, յայնժամ յայտնապէս հրաման  
ետուն մողաց և մողպետաց նամակ մի գրել ըստ ձա-  
խողակի գենին խրեանց։ Եւ է պատճէն նամակին այս։

19. Միհրներաեհ վզուրկ հրամատար երան և Անե-  
րան<sup>2</sup>, Հայոց մեծաց ողջոյն շատ։

Նակութիւնը կ'ուզէ ցուցանել։ Պարսկա-  
կան արքաթ սուսին էր տիրամ բարձ  
կամ տրամ բամ, հայերէն չ դրամ։  
Շահապիվանի մողովոյն մէջ հաստակեալ  
տուգանաց կանոնին մէջ (յամի Տ. 445)  
միայն չ դրամ ։ անունը ի կիր առած  
են մեր եկեղեցւոյ հարբ։ Տես և Յ. Ը.  
118։

1. Եղիշէ արց այլ և այլ անուններ  
կու տայ՝ որոց նշանակութիւնը չէդելը  
շատ դիւրին չէ. որովհետեւ միենոյն  
բառը երբեմն մասնական, երբեմն ընդ-  
հանուր առմամբ կը գործածուի. — Սակ'  
հոգէ մը կամ չէնքէ մը առնուած այն  
տուրքն է, որոյ քանակը կանխաւ որո-  
շեալ և ու չփոփոխիր բերց կամ եկամ-  
տից շատալովի կամ նուազելովի։ —  
Բամ է Պարսից և Օսմանեանց պատը  
կամ պայը, և ուստի Քեաց, որ կը հա-  
տուցւէր մերթ վաճառօր կամ բերօր,  
en nature, և մերթ զբանաւ Համ' հոգի  
մերքն առնուած մասն է կամ տասա-  
նորդ մի, որ հարիւրին հինգէն մինչեւ<sup>3</sup>  
ցյիսուն կը զանազանէր. Բաժին և հա-  
սին տարբերութիւնը յայսմ է, թէ ա-

ռաջինը աւելի փոխադրութեան (circula-  
tion) տուրք մի էր՝ որ ի մուսու քա-  
զաբաց կամ ձանապարհի, կրծի կամ  
անցքի մը վրայ կը վճարուէր. մինչ վեր-  
ջինը աւելի արտերու. և ազարակներու  
մէջ կ'առնուէր, ինչպէս տասմորդը  
մինչեւ ցայսօր։ — Հարկը (պրոկ. խա-  
րաճ) աւելի ընդարձակ և զանազանեալ  
իմաստ ունի. մերթ նշանակէ սրոշեալ  
գումար մը, որ երբ մարդ զլու Խ գրուած  
ըլլայ՝ « զլխահարկ » (խարանի սեր) կը  
կոչի. մերթ մէկ գիւղի՝ բովանդակ գա-  
ւառի կամ աշխարհի սահմանեալ հաւա-  
քական տուրք, ինչ կերպով որ ալ հա-  
տուցուի, բերօր կամ գրամով։

2. Միհրներաեհի տիազան է Վազրի  
ձրամահատար Երան ու Աներան։ Շապուչ  
առաջնոյ ժամանակի հատուկաիր զրուա-  
ծոց մէջ վազարք, վազարքամ է և աւագ,  
աւագանի ։ վզուրկը, աւելի վերջերս  
կը նշանուէր վուզուրք կամ սիւզուրք, որ  
է մեծ, աւագ։ Մեր գրապաց մէջ  
վզուրկը, վզըրկ կամ վզուրկ զրուած է,  
բայց ընտրելին չ վզուրկ ։ է։ Անգիր  
վուզուրքի արաբացեալն է։ — Մասնւոր

Դուք գիտասցիք, ամենայն մարդ որ բնակեալ է ի ներքոյ երկնի, և ոչ ունի զօրէնս գենիմազդեղն<sup>1</sup>, նա

առէ՛ թէ Մովպետան մովպետէն եաբը բարձրագոյն պաշտօնեայն պարսից պետութեան՝ ոփոփիւրք ֆերմատարի է, որ թարգմանի աւագ հրամանատարը։ Համար, թէ, 355։ Է և ի գրշագիրս վաղորդի հրամատար։

Երան ու Աներան, այս է Արիք և Անարիք, կամ Արեաց և Անարեաց, որովհետեւ յոզնակի սեռականը ուզզականին է։ Սասանեան արձանագույնեանց և դրամոց վերայ այրան վկ աներան կը զրուի. Բազանտ մատենից մէջ ու անըն ճայլ զար պարտ է ընթեռնուէ երան ու աներան, որպէս ուշած յա՞ և յա՞ ու գեկ, կարիճ շը ճնշուին այժմ իսկ տեկ և նեվ։ Ասան որոյ թէպէտ Սասանեանք այրան վկ աներան կը գրէին, բայց Երան ու Աներան կը կարդային, ինչպէս որ մեկնեցինք մեր « Յազազս լեզուին պարսից » մակագրեալ բանախօսութեան մէջ (տես յէջ 101–109)։ Եղիշեայ համօրէն տպագրաց մէջ, ի բաց առնելով զԱնձեացեացն, Տաներան գըրուած է, որ անշուշտ գրշագրի վրիսակ մի է, զար ժամ է արդ ուզգել։ Հաւանական է թէ ՈՒ շազկազը Տ կարդացուած է յօրինակողաց։ Մնաց որ պար բազամայնդ բացասական մասնիկ համարի որպէս ի տպեղ, ապէտ ։ անհնարէ, քանզի աներան արդէն ունի իւր բացասական մասնիկն է ան։ Եղիշէ աստանօր Միհրներսէի պաշտօնեական տիտղոսը գրեաթէ պարսկերէն բառերով և քերականութեամբ կը դնէ։ Միհրներսէի վիշտիւրք ֆերմատար Երան ու Աներան, որոյ հայերէն է Միհրներսէ աւագ հրամանատար Արեաց և Անարեաց։ Սասանեան արձանագույնեանց, դրամոց, մատենից մէջ չկայ բնաւ Տաներան։ Եպիսկոպոսն ալ իրենց պատասխանւոյն մէջ Միհրներսէի է մեծ

պետ Արեաց և Անարեաց ու պատուանունը կաւ տան, որ նոյնպէս պաշտօնեական էր։

Նամակիս Միհրներսէի կողմանէ գըրուելուն երկու պատճառ կրնայ տրուիլ. նամակ Յազգերոտ ի Նիշափուր, գուցէ ևս աւելի հեռաւոր տեղեր՝ պատերազմի զրազած էր ու տեղակալ կարգեր էր զնան. երկրորդ աւելի հաւանական էր որ շայք պիտի մերժէին Դիրան առաջարկութիւնը. որ եթէ թագաւորին կողմանէ եղած ըլլար, անարգանքը աւելի ծանր և անմիջապէս խիստ միջոցներուն Անընարկել հարկաւոր կըլլար։

1. Ամէ Ընթերցուած՝ զօրինն դեմիմազդէն, զօրենն մազդեկանց, զօրենն դեմիմազդաց։ Աւեստայի մէջ տակես—մազդայսի նշանակէ մազդէական օրէնք. տակես՝ որ Սասանեանց օրէրը տես կը ճնշուէր, յօրմէ Արաբացիք տիմ ուշածեցին, ի սկզբան նշանակէր օրէնք կամ պատուիրանք Ահուրամազտայ կամ Որմզդիք. իսկ մազդայսան կը բազկանայ ի մազդա և ի ետուն բառից։ Մազդա, և իմաստաւն ։ կը գրծածուի շատ անգամ փոխանակ Ահուրամազտայ, եսան է պաշտել, յազել. ապա ուրեմն մազդայսան է Որմզդապաշտ կամ հետևող վիճ գենի (պամ—ոմ), ի հուռմն վիճ—ոմն, որպէս Արաբացիք ասեն Շէր—ի—իրիֆ), զոր ուսուցին Զրադաշտն Արիդաման և նաև յաջորդող քահանապազետք։ Արշերներս այդ բարդ ամփոփուելով՝ կը գրուէր ու կը ճնշուէր մազդան կամ մազդիս, և հայ մատենից մէջ չմազդէկն։ որով չ գենիմազդեղն։ պարսկական Որբնաց անունն է։ Միհր չմազդեղն ։ դրինք ըստ սովորական ուղղագրութեան, թէպէտ Եղիշեայ գրշագրաց մամանց մէջ և տառով ալ կը գտնեմք մազդէս, որ աւելի ուղիղ է։ (տես ապ-

խուլ է և կոյր, և դիւաց Հարամանոյ<sup>1</sup> խարեալ; Քանզի  
մինչ և էին երկինք և երկիր, Զբուան<sup>2</sup> մեծն աստուած  
յաշտ առնէր զհագար ամ, և ասէր. Թերես լիցի խմ  
որդի մի Որմիզդ<sup>3</sup> անուն, որ արասցէ զերկին և զեր-  
կիր: Եւ յղացաւ երկուս յորսայնի, մի վասն յաշտ

(ԽՄՀ, Վենետիկ, Էջ 232, 287): « Զօ-  
րէնս գենի մազդեզանց > ալ սիալ չեր  
ըլլար, բայց անշուշտ Արիներսէն պաշ-  
տօնական զրութեան մը մէջ յասուկ և  
հանրածանօթ անունը զործածած է: Ար  
ընդունած ընթերցմամբ՝ ունիմազգիկն բա-  
ցայացիէ կը լլաւայ օրինաց: Աւեսայի  
մէջ յասուկ եացի մի կայ (Տիհ-եացի)  
նուիրեալ մազդեզն կրօնի, որ կը նկա-  
տուի իրեւ Ահուրամազդայ իմաստու-  
թիւնը անձնաւորող հրեշտակ մը: —  
Բազրատունին իւր Խլիքանին հրաշալի  
թարգմանութեան մէջ < մազդեզն Լայեր-  
տեան > կը կոչէ զՈդիսեւս, < դիւցազնի >  
համանիշ կարծելով, որ անպատշաճ է:

1. Հարաման, խարաման, Արհմե՛ է  
անուն չար Ռիւզին. կրծատեալ յԱնդրօ-  
մայնուշէ. (աեւ յէջ 119, 121, 156):  
Արիստուուէլ Արէիմայնու կը կոչէ զՈդին  
շարութեան: Բազանս մատենից մէջ այլ  
և այլ մեով կը գրուի, Անդրաման, Ան-  
դրաման, Անդրւան, Անդրւան. պահաւիկ ձե-  
ռազդաց մէջ Այսորման:

2. Զէր՝ արդի պարսկերէն է ծեր.  
վերպամ, վերպամ ծեր զառամեալ. այս  
վերջին անունն Արրահամու ալ կը տը-  
րուի: Աւեսայի և Բազանս գրոց մէջ  
Զբուան կամ Զբուանա նշանակէ « ժա-  
մանակ »: Տես յէջ 158-159: — Յաշտ  
(Ետղի): ուստի և այժմեան պարսկերէն  
եացիկն, և պաշտել աղօմիւք և զոհա-  
զործութեամբ. (Haug Essays. 194):  
Ճեշտ այս իմաստա կու տայ Եղնիկ (Էջ  
119): — « Յաշտից տեղիք թագաւո-  
րացն Հայոց Ահեծաց >, Յաշտիշատ Տա-  
րանոյ. (Արաթանգեղոս): Այլ է հաշտ,

հաշտութիւն, որ բազանս լեզուաւ է  
արդի, և զանո՞ւ ախզի. ուսուի և անաշի:  
անհաշտութիւն:

Յ. Որմիզդ է անուն բարի աստուա-  
ծոյ, Աւեսայի մէջ սորա Շագոյն ձեն  
և Ահուրա-մազդա կամ շատ անզամ  
սոսկ Արագա: Ահուրա՝ սանպքիդ ա-  
սուրա՝ կը թարգմանի հոգի, զուցէ ևս  
ձուր կամ աւր արմատէ ելած. իսկ մազաւ  
իմաստութիւն կամ իմաստուն, (Ապա-  
տա՞մ, մա՞մ մեծ, տա՞մ գիտոց, մեծագէտ,  
ամենագէտ): Ավելենեան արձանագրու-  
թեանց մէջ (Քրիստոնէ 500 ամբ յա-  
ռաջ) այդ անենիթական և հոգեղէն էա-  
կին անունն է Ահուրամազտ, որ անշուշտ  
կրծատեալ յԱհուրա-մազտայ, ու կը մեր-  
ձենու յայտ Արիստոտէլի յիշատական  
Օրուատէսի և քիչ կը տարբերի ի հայ-  
կական < Արամազդէ >: Վշտամազեան  
Դարեհի սեպագրոց մէջ տեղ մը անունդ  
սեպական զործածուած ասեն, գոխամակէ  
միոյ բառի՝ կը տեսնեմք զայն յերկուս  
նախնական մատունս բաժանեալ, իւրա-  
քանչիւր մասն ունելով զիւր վերջահո-  
լովք, ուրամիյա մազտան: որով Դա-  
րեհի Աստուծոյն Աւեսայի Ահուրամազ-  
տան ըլլալուն տարակոյս չմեար: Սասա-  
նեանց ժամանակը այդ անունդ զարձեալ  
սեպաւելով Հօրմիզդ Ճյայք կամ Որ-  
միզդ եղած էր, և աւելի ի վերջոյ Ճյայ-  
քիւր յար:

Մեր նախնիքն ալ ուրեմն պաշտած են  
Զրադաշտայ Ահուրամազտան, թէօլէտ  
յետոյ Արշակունեաց առենը Արամազդ  
անունդ յունական Դիսոսի պատկանեցաւ:

առնելոյ, և զմիւսն ես ի թերեւմն առելոյ<sup>1</sup>: Իբրի գիտաց, եթէ երկու են յարովայնիս, Որ վաղ եկեսցէ, ասէ, նմա տաց զիմագաւորութիւնս: Իսկ որ էր ի թերահաւասութիւնէն յդացեալ, պատառեաց զորովայնն, և ել ի դուրս: Ասէ ցնա Զրուանն, Ո՞վ ես դու: Ասէ, Որդին քո Որմիզդ: Ասէ ցնա Զրուանն, իմ որդին լուսաւոր է և անուշահատ, դու խաւարային ես և չարասէր: Եւ իբրի կարի գառնապէս ելաց, ետ ցնա զիմագաւորութիւնն հազար ամ<sup>2</sup>:

20. Իբրի ծնաւ զմիւս ես որդին, անուանեաց զնա Որմիզդ, եհան զիմագաւորութիւնն յԱրհմիէ. և ետ ցՈրմիզդն, և ասէ ցնա, Ցայժմ՝ ես քեզ յաշտ արարի, արդ գու ինձ արար: Եւ Որմիզդ արար զերկին և զերկիր. Իսկ Արհմն ընդդէմ չար զործեաց: Եւ այսպէս բաժանին արարածքս. Հրեշտակք Որմիզդի են, իսկ գեքն Արհմայն. և ամենայն բարիք որ յերկնից և այսր լինին՝ Որմիզդի են, և ամենայն ֆսագք որ անտի և այսր գործին՝ զայն Արհմն արար: Սոյնակէս և յերկրիս որ ինչ բարի է՝ զայն Որմիզդն արար. և որ ոչն է բարի՝ զայն Արհմն արար, որպէս զմարդ Որմիզդ արար, և զախտ և զհիւանդութիւնս և զմահ Արհմն արար: Եւ ամենայն թշուառութիւնք և պատահարք որ լինին, և պատերազմունք դառնութեան՝ չարին մասին արարածք են: Իսկ յաջողութիւնք և տէրութիւնք և փառք և պատիւք և առողջութիւնք մարմնոց, գեղեցկութիւնք գիմաց և ճարտարութիւնք բանից և երկայնակեցութիւնք ամաց, այդք ի բարւոյն առնուն զգոյացութիւն. և ամենայն որ ոչ այդպէս է, ի նա չարին արարած խառնեալ է<sup>3</sup>:

1. Բարեպաշտութիւնը և հաւատը զՄիրիզդ յառաջ բերին, տարակոյսը և անհաւատութիւնը՝ զԱրհմ:

2. «Ինն հազար ։ պարս և ընթեռնու. առս ծանօթ. 2. յէջ 159. և Եղանիկ 115.։

3. Ասու կը լմնայ պարսկական գենին յայտարարութիւնը . ասէի ետքի մասը քրիստոնէութեան գէմ առարկութիւններ են. Զարմանալի է սակայն՝ որ Մէր-

ներսէն մի միայն բարւոյ և չարի երկու ութեան վրայ կը հիմնէ պարսկական քէշը. և ոչ զարեգակ կը յիշէ, ոչ բոպաշտամունս տարերաց և ոչ զայլ մոգական կարգս: Այդ էր անշուշտ աւելի չին ժամանակի պարսից կրօնքը, որ կոտպաշտութենէ և նպն ինքն բազմաստուածութիւնէն զերծ էր: Բայց հետզհետէ շատ մը երկրորդական և նիւթական ասոտուածութիւններ աւելցեր էին: Արտաշիր ա-

21. Եւ ամենայն մարդիկ մոլորեալ են, որ ասեն եթէ զմահ Աստուած արար, և շար և բարի ի նմանէ լինին. մանաւանդ որպէս քրիստոնեայքդ ասեն՝ թէ Աստուած նախանձոտ է, վասն թզի միոյ ուտերոյ ի ծառոյն Աստուած զմահ արար, և զմարդն էարկ ընդ այնու պատուհասիւ: Զայդպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդունի, թող թէ Աստուած առ մարդիկ. զի որ զայս առէ՝ նա խուլ է և կոյր և ի դիւաց Հարամանոյ խարեալ:

22. Դարձեալ միւս ևս այլ մոլորութիւն ասեն. Աստուած, ասեն, որ զերկինս և զերկիր արար, եկն և ի կնոջէ ումեմնէ ծնաւ, որում անուն էր Մարիամն և առն նորա Յավէփ<sup>1</sup>: Եւ զէետ այսպիսի մարդոյ մոլորեալ են բազումք: Եթէ աշխարհն Հոռոմոց առ յոյժ յիմարութեան տգիտարար մոլորեալ են, և զրկեալ են ի կատարեալ գենէս մերմէ, յանձանց պարմայեն<sup>2</sup> զինասն իւ-

ռաջնոյ բնալէս և Յազկերոտի ժամանակ կատարուած կրօնական քննութիւններն պարսկական դենին այլ և այլ ձեւերն յերեան հանած էին. Միհներսէի շատ պատիւ կը բերէ, որ սոցա մէջէն ամեն խելքի յարմար և աննիւթականը մնդունած և պատշաճ գատած ըլլայ քրիստոնէից առաջարկելու: — Այս նամակիս և ամա որուած պատասխանույն գաւերական ըլլալուն տարակոյս չկրնար ըլլալ. ասոր ապացոյց են ոչ միայն քրութեանցորդ ձեւը և Եղիշեայ հշմարտախօսութիւնը, այլ մանաւանդ նոցա հիւսուածքը, պարունակած իմաստները և իրարու հետ ունեցած կապակցութիւնը: Միհներսէի թզմին մէջ պարսկական կրօնը իւր ամենէն աւելի վայելուշ և բանաւոր կերպարանօք կը ներկայանայ. իսկ քրիստոնէութեան դէմ եղած առարկութիւնն մի առ մի համաձայն են մազգեզն վարդապետութեանց և մատենից:

1. Աստանօր անշուշտ պակաս մը Քրիստոսի համար նախատական խօսք մ' ըլլալու է, զոր գրչագիրը առհասարակ, գուցէ Եղիշէ ևս, պատշաճ դատեր են

ջնջել. բազդատէ Եղիսկոպոսազետին պատասխանւոյն մէջ պյուղարքերութեած հեղուումը. « այն է ճշմարիտ Աստուած... զոր գու աներասանուկ արձուկ բերտուով անան աներկիւզ համարձակ նայնոյն: թողեալ զջիսու Քրիստոս զգիրական անունն, Փաթեդուրակոյ որդի անուանես: » ... Այս պակաս կը լեցնէ թէոդոսիոյ տպագիրը. « յորում կը գտնեմք... » և առն նորա Յավէփ. այլ ճշմարտարեամբ թամրուկայ ուրումն եղեալ ես որդի յանկարդ խասեակուրենէ: Եւ զէետ այդպիսի և են: Բայց քանի որ թէոդոսիոյ տպագրին հրատարակելը շպրուցեր մեզ թէ ո՞վ է այն հնասէր պատուական անձը Աըր Զարուայթ անուն, որոյ քով տեսեր էր Անձեացեաց օրինակը, և ուր պահուած է այժմ այդ ձեռագիրը, շհամարձակեցանք փոփոխել առհասարակ ընկունուած:

2. Այլ ընթերց. ոպայմանեն. պարմասիսն կամ պարմաշիտակ պրա. և զգալ, չոշագիր, զգիրծ առնուլ. վասն որոյ պարմայնն ընտրելի թուեցաւ մեզ:

բեանց . դուք ևս ընդէր զհետ նոցա մոլորութեանն ցնուրիք : Այլ զոր օրէնս աէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք . մանաւանդ զի և առաջի Աստուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ :

23. Մի հաւատայք առաջնորդացն ձերոց , դոր նածրացիսգ՝<sup>1</sup> անուանէք , քանզի յոյժ են խարեբայք . զոր բանիւքն ուստցանեն , գործովք ոչ կարեն յանձն առնուլ : Միս ուտել , ասեն , ոչ են մեղք , և ինքեանք ուտել ոչ կամին . կին առնել արժան է , բայց ինքեանք և հայել ի նա ոչ կամին . կարասի որ ժողովէ , ասեն , յոյժ մեղք են , բայց զաղքասութիւն առաւել քան զյոյժ դովին . յարգեն զթշուառութիւն , և պարսաւեն զյաջողուածա , ծալը

1. Կածրացի կամ Կածրացին է Կածրացիք : Նազարէոն :

Ա սկզբան Քրիստոսի հաւատացաղներն ամենէն աւելի Պազեստնու և հեթանոս աշխարհաց մէջ գտնուող հրեայք եղան : Մինչ սոքա իրարու . « Եղբայր » , « աշակերտ » կամ « հաւատացեալ » կըսէին , բուն Հրեայք արհամարհանոք Կազովիցին կը յորդորիչէին զնոսա : Քրիստոնեայ անունը առաջին անդամ Անտիքացիք առին , երբ անսան որ կարելի պիտի շըլլաց համաձայնութիւն գոյացնել Պազեստնու . և Ասուրոց հրեասեռ հաւատացելոց հետ , ոքը զԱվախսական օրէնսն անոյլայլակ պահել ուզելով : Խոզի մին ուտելէ կը խորչէին , թշկասութիւն կը պահանջէին , և միութեան Աստուծոյ հնաւանդ գաղափարը փոփոխել յանձն շառնելով՝ զթիստոս սոսկ Մեսխամարդարէ կը ճանաչէին : Ասանկով Կազովիցին յօրդորչումը Քրիստոնէից մէջ առակա . առ առակա յատկացաւ հրեամին (judaisants) հաւատացելոց : Այս յետիքս այլ Բնոլիննին « Երիմեանք է այս է « աղքատք » կանուանէին , անշուշտ Քրիստոսի երանի տալուն համար աղքատաց (Մատթէոս , Ե , 3) : Եւ յիրարէ ամերան խեղճ և աղքատիք էին , որ շատ անդամ ուրիշ աշխարհաց քրիս-

տոնէից խրկած պարգեներով և հանգանակութեամբը կ'աղքէին : Բայց հինգերորդ գարու սկիզբները իրեն հերձուած մերժուեցն , և հետզհետէ նուազելով մէկ մասն հրէութեան և միւսն ուզգափառ Եկեղեցեաց խառնուեցն , և յէ դարու ոչ ոք մեաց ի նոյցանէ :

Միհրներսէն սակայն Կազովիցի ըսելով կ'իմանայ զքրիստոնեայս առհասարակ : Հրեայ անարգական մնօք սովորեցուցած անունը փոխելու պատճառ միշտնէին պարսիկք : Բնշապէս որ մինչեւ ցայժմ Արաբացիք ալ Կոստոմի կ'ըսեն Քրիստոնէից : Արեաց մեծ հազարապետը Կածրացի կամ քրիստոնեայ զեկեղեցական միայն կ'ուզէ համարել , որպէս զի զնոսա միայն մեզապարս և սոյզանելի ցուցանելով , ժողովուրդը իրեն ձգէ . այդ վարժունքը համաձայն ալ էր պարսկական մնաց . քանզի մոգերն միակ աւանդապահ ըլլալով դենին , ժողովուրդը անոնցմէ կ'ուսանէր իւր հաւատալիքը : Վերջի ժամանակի պատմապրաց մէջ քերաս Լայաւելի ի կիր առեալ է ։ քրիստոնեայ ըսելու համար : Պահման եռչդի մէջ ալ կը գանենք բալտայիկ եկեղեցական , և շալտայիկ եկեղեցականութիւն , ուխտ եկեղեցւոյ :

առնեն զանուն բախտի, և զփառաւորան յոյժ այլանեն.  
սիրեն զանչքութիւն հանգերձից, և յարգեն զանարդո  
քան զպատուականս. գովեն զմահ, և պարսաւեն զկեանտ.  
անարդեն զծնունդո մնարդոյ, և գովեն զանորդիութիւն:  
Եւ եթէ լրէ որ դոցա և ի կանայս ոչ մերձենայ, աշ-  
խարհի վախճան վաղվազակի հասանէ:

24. Այլ ես ոչ կամեցայ զամենայն ըստ մասանց բնդ  
դրով արկանել առ ձեզ. զի բազում այն ինչ է, զոր

1. Ինչ որ մոաց, սրտի և մարմեոյ՝  
զօրութիւն, հանգիստ և շքեղութիւն  
կու տայ, որպէս զիտութիւն, հարսու-  
թիւն, յաջողութիւնք, մնարար կերա-  
կուր, Որմզդայ ստեղծածն էին, որով և  
յարգելի, մահ, ազքատութիւն, անոր-  
դութիւն Հարամանայ գործերն ըլլալով,  
պիզծ էին և խորչելի: Աւետան կը պա-  
տուիրէ մազգեզանց ի բաց կալ և է  
կրթութենէ կամ հզնութենէ որ զմար-  
մինը կը ակարացնէ. կը դատապարտէ  
այդպիսի քարգազետութիւն ընողները:  
և Մասեղն կերակուրը, կըսէ, կը մնու-  
ցանէ և կազդուրէ զմարմին և կը պահէ  
ի նա զոյին սրբութեան, կը հետացնէ  
զգեն մահու և գդեն ձմերան: Այդպիսի  
սուտակար մնադեամբ մարդու ձմերան  
սասակութենէն շզարհուրիք, և օրինացո  
չետեւելով կը մերժէ այն պիզծ, շարա-  
նախանձ և դժնդակ զաւանութիւնքը որք  
կ'արգելուն խնամ տանելու մարմնոյ չ:  
Այդ շափով ես շգուանալով, սոսկալի  
պատուհամներ կը սահմանէ նոցա դէմ՝  
որք մահացուցմունս պատուիրելով՝ հի-  
մայաբառակ կործանելու կը նկրուն զերկ-  
արմանակն գրութիւնն:

Այլուր ասէ Ահուրամազտա. «Քեզ  
ասեմ, ով սրբակացդ Զբագաշա, որ  
ամուսին մի ունիս. վեհ է կանարին  
քան զամուրի, տանուտերն քան զայր  
անգերդատան, զաւակաց հայրն քան  
զանորդի, կալուածատերն քան զոք ան-  
սուացուած»: Ահուրիստա զլ. Պ:

Ճակատազրի կամ բախտի վարդապե-

տութիւնը շկայ բնաւ յԱւեսդա. կոյլ ե  
անդիմադրելի զօրութիւն մը և կապեալ  
հրամանիք՝ որոց պարտին նազանդիւ աս-  
տուածքն ինքնին, հակառակ էր ամենն ին  
Զբագաշայ ստուածարանութեան և  
բարոյական քարոզութեանց: Յայց վեր-  
ջեր բախտի հաւատքը մնու և հասաւ-  
տութիւն գտաւ. Պարսից մէջ, ինչպէս որ  
Մայնո-խրատի այլ և այլ զլուխներէն  
կը հետեւի, «Երբ 9000 ամք լրանան,  
Արձն պիտի ոչչանայ. և բարեպաշտն  
Սրու պիտի խորտակէ զբարկութիւն. և  
Մինք և Ժամանակն անսահման (Զրուանի  
աբարան) և ոգին արդարութեան՝ որ  
ոչ երբէ դրժէ ումեք, և Բախտն և  
Բաշխը բախտի (պակո-պախու, որ շատ  
անգամ մասնաւոր հրեշտակի անհնաւու-  
րութիւն կ'առնու) պիտի խորտակն  
զհամայն արարածն Արմենի չ: — «Ոչ  
իմաստից և ոչ իսկ զիտութեան ուժով  
մարթ է յազմեն բախտի. երբ կապեալ  
հրամանն հասնի, իմաստունը կը խելա-  
գարի, տպէտը խելահաս կ'ըլլայ, վասա-  
սիրու՛ կարիք, կարիք՛ վասասիրու,  
յեզդաբարոյն՝ աշխատասէր, և աշխա-  
տասէր՝ ծոյլ չ: — «Բախտն անգատին  
ի սկզբանէ հրամայեալն է, իսկ Բաշխը  
բախտի, այն զոր Եազատք կը հայթհայ-  
թեն մարդկան՝ երբ սոքա հայցեն ազո-  
թիւք և բարի գործօք (քիրու) չ: —  
«Լու է իմաստութիւն քան զամենայն  
ինչս և զբարիս. իսկ բախտն իշխէ ի  
վերայ ամենայնի չ: զլ. 8, 23, 24, 27:

խօսին դոքա, որ չարագոյն ևս է քան զոր գըեցափդ<sup>1</sup>. զԱստուած ի խաչ ելեալ ի մարդկանէ քարոզեն, և զնոյն մեռեալ և թաղեալ, և ապա յարուցեալ և վերացեալ յերկինս; Ո՞չ ահա ձեզէն խոկ արժան էր անդրէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսամանց : Դեւք որ չարք են, ոչ ըմբոնին և տանջին ի մարդկանէ, թող թէ Աստուած արարիչ ամենայն արարածոց. զոր ձեզ ամօթ է ասել, և մեղ կարի անհաւատալի բանք:

25. Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարեք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք ի դուռն եկայք, յանդիման լերուք մեծի հրապարակին<sup>2</sup>:

### ԱՆՌԵԱՆՎԻ ԵԳԻՍԿՈՊՈՍԱՅՆ, ԱՐՔ ՊԱՏԱՍԽԱԿ ԵՑԻՆ ՆԱՄԱԿԻ ԻՆ<sup>3</sup>

26. Յովսէփ<sup>4</sup> եպիսկոպոս Այրարատոց, Աահակ եպիսկոպոս Տարոնոց, Մելետ եպիսկոպոս Մանագերոց,

1. Մարդացեալ Աստուածոյ խաչելութիւնը և մեանիլը (որ է ըսել Մազդեցնց ըմբռնամը՝ Հարամանոյ յազմազ ելլելը Որմղաս վրայ և զԱմենասուրբը մահուամը պղծելը) մազդեղանց համար բոլորովին անիմանակ էր:

2. Անլադենից դէմ խիստ միջացներու ձեռնարկելէ յառաջ հրաժարակ մը զրկել և այլ և այլ կրօնական հարցմանց պատասխան մի պահանջելը՝ Աասանեանց մամանակ պետական սովորութիւն մի եղած կերեքի Պահման Եաշդի պարսկերէն որին մէջ խոսք կը տեսնենք, թէ խոսքով նաւշիքան Մազդակու քառականց ազանդը բանալու համար՝ ի ճողով գումարեց զառաջիկայս մոզպետաց և զիսնոց: Յետոյ նամակ մը գրուեցաւ առ աղանդապեսն Մազդապ, յորում մահ կը սպառնալու նմա թագաւորը եթէ շնուաներ պատասխանել հարցուածոց ժողովոյն: Մաստաք յանձն առաւ տան կրօնական խոդիր առաջարկուեցան նմա. բայց նաշկարողանալով և ոչ միոյն պատասխանը

տալ անմիջապէս, դատապարտեցաւ ի մահ: Pahlavi texts by West, էջ 194, ձն. 2:

3. Միհներենէի նամակը Հայոց Մեծաց ուղղեալ էր. պատասխանը կամուղիկոսը կը գրէ. խոդիրը կը նական ըւլալուն աւելի եկեղեցականաց կը վերաբերէ. բայց այդպիսի պատասխան մը գրեն ալ համարձակութեան և անհնուիրութեան կը կարուեր, որ այն ժամանակի եկեղեցականաց քով պակաս չէր:

4. Անուանքս այս, թէ պէտ տարբեր կարգաւ, զտանին և ի ֆարազեցի. ի բաց առեալ զեպիսկոպոսն Մարդարայ՝ Երազու, փօխան որոյ ֆարազեցին գնէ «Զաւեկն եպիսկոպոս Մանանազւոյ»: Մանանազի գաւառ է Բարձր Հայոց ի հիւսիսոյ Տէրսիմ լերանց, ուր թէրմանայ վիճակին մէջ այժմ խոկ զիւդ մի կոյ Մանանազի անուն: Բայտ Ալեհան վարդապետի գաւառդ բաղկացեալ էր արդի թէրման և Շուշար վիճակներէ. խոկ Մարդարայի կամ Մարդոյ ազի, այժմ

**Եղնիկ եպիսկոպոս Բագրեւանդայ, Սուրբնիկ եպիսկոպոս  
Բղնունեաց, Տաճատ եպիսկոպոս Տայրց, Թաթիկ եպիս-**

կարդո, և զաւառ Տուրուրերանի, ի  
հարաւոյ Տէրսիմ լերանց՝ որք բաժանեն  
զնա ի Մանանազւոյ: Հաւանական է թէ  
Մանանազի Յունաց բամոյն մէջ էր.  
վասն օրոյ Եղիշեայ յիշածը աւելի ու-  
ղիւ կը թուի:

**ՑԱՎԱՓԱՓ. Ծնած էր Վայրց Զորոյ գա-  
ւառին Խոզոյիմք անուն գիւղը. Լամբո-  
զիկոս էր Հայոց (441ւն ց452), թէպէտ  
երէց բառ ձեռնազրութեան, և նախա-  
զահ ժողովոյ. (Փարաբցի 106, 124,  
207. Եղիշէ Յ. Բ., 67. տես և Դեն-  
շազոյ ըրած գովասննըը):**

**ՄԵՐԱՑՏ. Կամ Մերակու կամոզիկոս  
եղաւ. Հայոց յամի Տ. 452. յետ նահաւ-  
տակութեան Յովսեփայ. (Փարապ. 333):  
Երկու Մանազկերս կամ, երկուքն ալ  
երբեմն քաջար եպիսկոպոսանիս: Ա.  
Մանազկերս կամ Մճնիկրտ ի ստորին  
Բասեան, յարեւլս հիւսիսոյ Խորասա-  
նայ. Բ. Մանազկերս կամ Մանաչազա-  
կերս, այժմ Մերազկերս, յահեկէ Ալա-  
ծանույ և ի հիւսիսոյ Վանայ ծովու, հին  
քաջար Մանաւազեան ցեղի: Երբ այդ  
ցեղդ բնաջինջ եղաւ, Տրդատայ որդին  
Խոսրով ի տուաւ քաջարս զայս (343ին)  
Ալզիանոսի մեծի եպիսկոպոսին, ամե-  
նայն սահմանօքն և գաւառակաւն հան-  
գերձ: (Բուզանդ): Ի ԺԱ. դարս պա-  
շարեցաւ ի Տուրիւայ վայրազար և ա-  
ռաւ ապա Ալբաւալանայ և աւերեցաւ:  
Ալնունեաւե շկրաւ վերստին կանգնիլ:  
Դարերէ սեցած թմանձր և հզօր պա-  
րիսպները իրենց աշուարակաք և միջա-  
րերդաւը՝ թէպէտ կիսակործան, և կո-  
փածոյ քարերու ահազին շեղջերն կը  
վկայեն տակաւին թէ հզյակապ և մեծա-  
տարած ստան մի եղած էր ատենօք:  
Բնեռածի և արաբացի արձանազիբը,  
խաչածե քանդակեալ վէմք որ պատե-  
րուն մէջ աղուցեալ կը մնան, և շատ մը**

մարմարեայ դեղնցիկ շիրիմեր հայկական  
արձանազրութեամբը, նշանաւոր կ'ընձն  
զքաջարը Շաղինաց համար: Ցերզու-  
մայ ի Վան գնացող ձանապարհն վրայ  
գտնուելովն վաճառաշահ կեղրոն մի եղած  
ըլլալու էր. գուցէ պյուհնուու ևս ըլ-  
լայ: Բնագրոյն Մանազկերուը՝ Մանաւա-  
զեանց նախնի Ոստանն է, որոյ եպիս-  
կոպոսը ժառանգական տանուաէր աչ  
եղած ըլլալու է քաջարին:

**ՑԱՎԱՔԱՆԵԿ գաւառն որ կը պարու-  
նակէ արդի Ալաշկերտ և հահիչէ վի-  
ճակիներն, այս ահազին հրաբիսային բա-  
ժակն է, որուն ըոլորաձե կողերէն իշուզ  
հասանին ի մի խառնուելով կազմեն դի-  
րածանին. ի հնուց հետէ նշանաւոր եղած  
էր կրօնական յիշատակօք: Անդ էր մե-  
հեռաջան բագուան, հեթանոսութեան  
մեծ սրբավայրն, ուր կատարուեին և  
հաւատարդի հանդէսք: Անդանոր ծագե-  
ցաւ քրիստոնէական լրյոն այլ ձեռամբը  
Ոսկեանց. ի նմա բնակեցան Առեքիա-  
սեանիք և վկայեցին. անդ առաջին ան-  
գամ մկրտեցաւ արքայն Տրդատ և հայ  
ազգն. անդ կատարուել Յովհ. Մկրտչի  
մեծահանգէս տօնախմբութիւնը ի հա-  
ւատարդի, որ Փօխանակեց գնախկին հե-  
թանոս հանդէսան: Վասն որոյ երրորդ  
աթոռ էր Բագրեւանդ. Եղիսկոսոնն է  
անուանին Եղիշէ, որ վարեւալ քաջ հել-  
լէն գարութեամբ (Խորենացի Գ. Ա.) և  
ճոխացեալ ասորերէն, երբայցերէն և  
պարոկերէն եղուաց գիտութեամբ (Բազ-  
մազէպ, 1893), գործակցեր էր Ալհակայ  
ի թարգմանութեան Առլը գրոց և այլ  
և այլ մատենագրաց: Ժողովոյս գումար-  
ման տարին 60-64 տարեկան ըլլալու  
էր: Ասկէ եռքը շարադրեց և Եղին Ա-  
զանդոց:**

**ԱՅԻՒՄԱԿ. Բգնունեաց Եղիսկոսոս-  
Տամուակը, զոր Խորենացին՝ «արծ-**

**կոպոս Բառենոյ, թասու եպիսկոպոս Տարուբերանոյ, Երեմիա եպիսկոպոս Մարդաստանի, Եւղալ եպիսկոպոս**

կէացի փառամու Երէց կը կոչէ. սա զնացեր էր Ընդ նախարարու յարբունիու Վասմայ, չարախօսել և աղտեղի բանիւք զ զարգայէն Արտաշրէ և զմեծէն Ասհակայ. և ի կնողանութեան իսկ հայրապետիս կաթողիկոս կարգուեր էր յարքայից արքայէն (428ին). տարի մը այդ պաշտօնի վարելէ յետոյ վանտուեր էր յաթունէն նոյն ինքն նախարարաց ձեռոքք որք բարձրացացեր էին զնա յայն բարձր աստիճան: Անունեաւ. և զիւրոյ գաւառին բաղնունեաց Եպիսկոպոսութիւնն ի Պարսից արքայէն Եղիտ ունել ազգաւ ։ այսինքն իրեւ սեփականութիւն իւր ցեղին, քանզի բաղնունեաց նախարարութիւնը նշանած էր հարիւր տարութենէ ի վեր: Շմուելի ժամանակն ալ ատելի դեր մը խաղաց (432–439), ու Մեսրոպայ մահաւընէն ետքը (441ին) վերասին կաթողիկոս անուանեցաւ ի Յաղկերաւ, ու այդ պաշտօնի անուանաւուէս վեց տարի վարելէ յետոյ, քանզի Վասմայ հաստատուեր էր որ Եկեղեցւոյ ընտրեալն իշխանութիւն ունենայ վարդապետութեան, բայց զանս միամն կարենայ ձեռնադրել՝ որոց համար հաւանի պարաից դրան կարգած կաթողիկոսն, մազուց զայն Յօվանիքայ, որ արդեամբք հայրապետ էր Հայոց: — Բաղնունեաց մայրաքաղաքն էր Խալիդ:

Տայք՝ նահանգ յարեմուտա Սօզանու լեռնեց, ոռոգի Ոլթի – սուի և Ճարուի ջրերով. Տայք և Տարօն սեփականութիւն էին Մամիկոննեանց:

Բասեան, որ ի հնամե որպէս և այժմ բաժանի ի Վերին և ի Ատորին, է հովիտն Երասխայ միսեալ ի Տէվէ-Պոյնու լեռնեց ցկազզուան: Որդ կամ Որդորու երբեմ սասան Որդունեաց (Վերին Բասսեան) ի հիսխայ Հասան Գալայի, եպիսկոպոսանիստ էր Խոսրովայ երկրոր-

դէն ի վեր: Կարելի ալ է սակայն որ ի ձինքերորդ դարու Բասենոյ եպիսկոպոսին աթոռա ի Մանճկերտ (Ատորին Բասեան)

եղած ըլլայ, այս վերջնոյս աւելի նոր ըլլալուն ապացոյց մի շունինք: — Թվի-Դիկ՝ Մեսրոպայ մահուանէն եռքը անոր տեղապահութեան պաշտօնը վարեր էր:

Տարուրերան է նահանգ՝ որ Վանոյ ծովուն հիսխային և արեւմտեան կողմերը կը պարունակէր և կը ձգէր ցՏէրուիմ լեան, յորում են Տարօն, Հարք, Բաղնունիք, Ապահունիք, Աղիսպիտ, և այլն: Բայց սրբիւրե Տարօն Բաղնունիք՝ Ապահունիք և Մարդաղի առանձին եպիսկոպոսութիւնը ունէին, Տարուրերանի եպիսկոպոսութիւնը մահացած զաւաները միայն ունէիր:

Մարդաստան՝ գաւառ Վասպուրականի, զոր Ամելչան Վասպահան Ամամարէ, ի Հարաւայ Արտազու: Արծրունեաց եպիսկոպոսը Մուշէ՝ աղբակացի վեց Եկեղեց զամ և երէց ։ ալ կանուանէ, նզազէս և Փարակեցին. (Տես Յ. Բ., 19, հն. Յ.): Պէտք չէ շփոթել զամ ընդ Մուշէի տարօնեցոյ՝ որ աշակերտ էր Մեսրոպայ և ընկերացեր էր իւր վարդապետին ի Գողթման, յործամ առ յետ հնարելով զնանագիրս, երկրորդ անգամ զնաց անդ ուսուցանել զրնակիւս գաւառին. (Կորին, 14): Արծրունիք Վասպուրական նահանգին մեծի մասին տէրն էին:

Որունիք՝ Վանայ ծովուն արեւելեան հարաւային կողմը:

Մոկի՝ լեռնուն գաւառ Կորճայց, ի հարաւայ ծովակին Վանայ:

Վանանդ՝ այժմեան կարսի գաւառը՝ Արզանլու ի արեւելեան կողերով:

Ամասաննեաց բնակութեան տեղին էր Արագածուն գաւառը:

Անձեւացի՝ գաւառ Վասպուրականի ի

Մարդագոյ, Անանիս եպիսկոպոս Սիւնեաց, Մուշէ եպիսկոպոս Արծրունեաց, Մահակ եպիսկոպոս Ռշտունեաց, Բասիլ եպիսկոպոս Մոկաց, Գագ եպիսկոպոս Վանանդաց, Եղիշայ եպիսկոպոս Ամասունեաց, Եղբայր եպիսկոպոս Անձեւացւոց, Երեմիս եպիսկոպոս Ապահունեաց :

27. Այս ամենայն եպիսկոպովք և բազում՝ քորեպիսկոպովք՝ և պատուական երիցունք՝ ի տեղեաց տեղեաց հանդերձ սուրբ ուխտիւ եկեղեցւոյ միաբանք և միահաւանք, միահամուռ ժողովեալք ի թագաւորանիստ

հարաւոյ Խօջապ գետոյ, արմենան Քարպաշ վիճակ. յորում անուանի և հին ուխտաեղիք, Հայոց վանք: Ազգականութեան անուններ, որպէս Եղբայր, Դատրիկ, Թօսնիկ, իբրև յատուկ անուն կը գործածուէին ի հայու, ինչպէս որ սուզոր էր ալ Պարից և Սեմականաց մէջ: – Յեպիսկոպոսաց՝ Ցովսէփ, Մուշէ, Եղիշիկ, Թօսնիկ, Երեմիսներէն մին զիտեմք որ յառաջին աշակերտացն էին Ասհակայ և Մեսրոպաց:

1. Քորեպիսկոպոս է գաւառատեսուչ, այցելու գիւղից և գաւառաց, Եթէ եպիսկոպոս իցեւ և Եթէ լոկ քահանայ փախանակ առաջնորդի. Chorepiscopus, regionis inspector. Քրիստոնէամենան առջի դարերուն մէջ երբ մեծամեծ քաղաքներէ հեռի գիւղից և աւանից մէջ նոր ժողով մը հաւատացելոց կազմուէր, այն տեղի քահանան քորեպիսկոպոս անունը կ'առնէր, որ յոնարէն ըսել է և գիւղական եպիսկոպոս: Սա բազմամարդ քաղաքաց եպիսկոպոսն նման անկախ տեսուչ էր իր վիճակին հաւատացելոց:

Բայց երբ քրիստոնէութեան տարածուելով և ընդհանրանեալով՝ եպիսկոպոսական թեմը հաստատեցաւ, որ այլ և այլ ժողովրդապետութիւնն (paroisses) և ամրող գաւառն կը պարունակէր, եպիսկոպոսին իշխանութիւնը ամրացնել և քորեպիսկոպոսինը սեղմել

հարէ եղաւ: Վաճ որոյ ՑԼԱԷն ի գերայլ և այլ ժողովոց մէջ հետզհետէ որոշուեր էր՝ որ գիւղական եպիսկոպոսունք քահանայ և սարկաւագ չկարենան ձեռնագրեւ, վերջապէս Լաւողիկէի ժողովը սահմաներ էր՝ որ այնուհետև քորեպիսկոպոս չնեմագրուի բնաւ, և անոնց տեղ ութօնեացւաւ անուամբ նուիրակը կարգուին, որը ի դիմաց եպիսկոպոսին անոր պատկանող վիճակաց այցելութիւն ընեն: Այս պատճառաւ հինգերորդ դարուն մէջ քորեպիսկոպոսութիւն չէր մնացեր յԱրևելս: Գ Յեղանակին Ը տնէն այլ յայս Է՝ որ թէպէտ անունք պահուեր էր ի Հայու, քորեպիսկոպոսը եպիսկոպոսին հրամանին ներքեւ պաշտօնեայք էին, զորս եպիսկոպոսը կ'անուանէր կամ կ'առաքէր ի տեղութիւն ուր որ պատշաճ զատէր: Տես և կանոնք Ասհակայ ի Ասփեր հիկ. Բ, էջ 71, 82:

2. Յերիցանց Փարպեցին յանուանէ յիշէ զԱ. Ղեռնդ, զիսրէն ի Արենեայ, և գԴասիթ: (տես ՑՆ. 1 յէջ 173), և զարդարէի եւ գիրելուակակոս զՏէրն Ազան՝ վարդապէտ Փարպեցոյ և վանահայը Աքճրունեաց և քեռի մեծին Վահանայ Մամիկոնէի: Երէց է քահանայ՝ որ կայ ի պալատան նախարարի, կամ յեպիսկոպոսարնի իբր խորհրդական եպիսկոպոսին՝ որպէս փոխանորդ ալ կ'ըլլոյ ի բացակայութեան նորա. Presbyter.

քաղաքն յԱրտաշատ, հաւանութեամբ մեծամեծ նախարարացն՝ և ամենայն բազմութեամբ աշխարհին արարին նամակին պատասխանի:

28. Յափուէի եպիսկոպոս հանդերձ ամենայն միաբաներով ի մեծամեծաց մինչև ցփռունս, Միհրներակհիմ մեծի հազարապիտիդ՝ Արեաց և Անարեաց՝ բազում խաղաղատէր մոռք բազմացի ողջոյն առ քեզ և ամենայն մեծի սպահիդ՝ Արեաց:

1. Թեպէտ Եղիշէ հաւանութեամբ նախարար, առ ըսելով կը շատանայ: Ըստ Փարակեցւոյ կը գտնուէին ի ժողովին Տէրն Ակենեաց Վասակ, Տէրն Արծունեաց Ներշապուհ, Վրին Մազար, Տէրն Մամիկոնէից և պարապետն Հայոց Վարդան, Տէրն Վահեռնեաց Գիւտ, Տէրն Մուկաց Արտակ, Տէրն Անձեւացեաց Շմաւոն, Տէրն Ալահառնեաց Մանէճ, Տէրն Վահանդեայ Առաւան, Տէրն Արշառունեաց Արշաւիր, Տէրն Ամառանեաց Վահան, Տէրն Գնանեաց Առուճ, Տէրն Պաւանեաց Վարազշապուհ, Տէրն Աւոցայ Հրահատ, Տէրն Դիմաքսներից Հմայեակ, Տէրն Արեղենից Գազրիկ, Տէրն Առաւելենից Փափառ, Վրէն Զիւնական: — Ի սոցանէ Վասակ, Գիւտ, Մանէճ, Վարազշապուհ՝ յետոյ քրիստոնէութեան զէմ զէնք վերուցին: Իսկ Վասակայ Նիզակակիցներէն՝ Արտաշատայ ժողովին ներկայ գտնուիլ չողեցին կամ Հրցան՝ Տէրն Խշտանեաց Արտակ, Տէրն Խորիսունեաց Գադիշոյ, Տէրն Բագրատունեաց Տէրոց, Տէրն Գարեղենից Արտէն, Խշխանն Ակէոյ Ծնչուզ, Տէրն Արծայ Ներսէն, Արտէն ներկայ էին յԱրտաշատ 18 Եպիսկոպոսունք, 18 աւագ Տանուտեարք, բազում սեպուհք, քորեպիսկոպոսք, երեցք և աւագ վանականք:

2. Հետիքիսո կ'ըսէն մէջ Պարսից արքունեաց մէջ պաշտօնեայք կային որոց աշխառութէն անունը կը արուէր. Կոմե-

սիսս ալ չ'օչպարիտից կը դնէ: Բայց ընդհանրապէս թզն և Լատին Մատենագիրք որոք թարգմանութիւնը Խիլաքչին, շիլաքու կը զործածեն, որ նշանակէ Գլուխ Հազարաց: Թէպէտ այդ անունդ զննուորական աստիճան մը կը ցուցանէ, բայց մեր պատմիշներէ յայտնի է՝ մէջ քաջաքաբան աւագագոյն պաշտօնն էր, և հազարապետը ամենայն իշխանութիւն կը վարէր յանոն արքայի, Chiliarchum qui secundum imperii gradum tenebat. Կոռն. Ենեպոս, Կոռնոն, գլ. Գր. Թազարի ալ կ'ըսէն թէ Միհրներակհի Պարսից մէջ ամենէն աւելի հանրածանօթ պատուանութը հազարպետն էր (անշուշտ զրշագրի սիստ մի փոխան հազարպետի), զոր կը մէկն իրրե բազմաթիւ ծառայից Տէր:

3. Պրոկ. Սիրամ գլամ, բանակ, զօրք, հեծելապունդ, սիրահաւալոր, սիրամապետ Ակիս սորասաւար, սորայապետ կամ սորաբապետ: — Սիրուհ ալ նոյն բառէն ելած է. պարսկերէն սիրահի հիման է զրական, ձիաւոր, ասպետ, ամանուտէր քաջաքի կամ աւանի: Բայց սեպուհ անունդ հայերէն՝ իշխանէն զատ տանուտէրական ցեղէ պայշազատաց կը տրուէր: Այդ միհրներին արմատոյ այլինչը ձեւրդ Բանաւար սոսպար կամ ասօվար և ձիաւոր՝ բառէն ելած են, որ պարսկերէնի մէջ սովար յաջուած կամ սիւզար յաջուած է Հայոց մէջ սոսպարապետ կամ սովարապետ եղաւ: Ինչ որ է սկզբան միայն

29. Ի նախնեաց սւնիմք սովորութիւն ասսուածաւ տուր պատուիրանաւ՝ աղօթս առնել ի վերայ կենաց թագաւորի, և անձանձրոյթ խնդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց դորա, զի խաղաղութեամբ վարեսցէ զափեզերական իշխանութիւնդ, զոր աւանդեալ է դմայ յԱստուծոյ. զի ի դորա յերկար խաղաղութեանն և մեք առողջութեամբ և աստուածալաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր:

30. Վասն նամակին, որ քո ի մեր աշխարհս տուալ էր, յառաջ ժամանակաւ մի ոմն ի մողպետաց, որ կատարելազդյն էր ի գենիդ ձերում, և դուք առաւել քան զբնութիւն մարդկան ի վեր համարեէիք զնա, հաւատաց նա յԱստուած կենդանի յարարիչն երկնի և երկրի, և բան առ բան երց և իմացոյց ձեզ զօրէնս ձեր: Եւ իրեն ոչ կարացին բանիւ զգէմ ունել նորա, քարկոծեալ մեռաւ յՈւրմզդէ արքայէ<sup>1</sup>: Եւ եթէ հաւատարիմ համարիցիս զմեր բանա լսել, ի բազում տեղիս այդրէն յաշխարհիդ ձերում դատանին գիրք նորա, ընթերցիր, և անտի տեղեկանաս:

31. Այլ վասն օրինացս մերոց, ոչ ինչ աներեսոյթ են, և ոչ յանկեան տրեք աշխարհիս քարողին. այլ համաստած ընդ ամենայն երկիր, ընդ ծով և ընդ ցամաք և ընդ կղզիս. ոչ միայն ընդ արևմուսս, այլ և ընդ արեւելս, այլ և ընդ հիւսիս և ընդ հարաւ և ի միջոցս<sup>2</sup> լի է հոծութեամբ: Ոչ ի մարդ ապաստան<sup>3</sup>, եթէ վերակացուաւ տարածեսցի ընդ աշխարհս, այլ ինքն յինքնէ ունի զհաստատութիւն: Ոչ առ այլովք վատթարօքն վեհ երեխ, այլ ի վերուստ յերկնուստ ունի զանսուստ օրէնսդրութիւնն. ոչ միշնորդաւ, զի մի է յԱստուած, և

Հեծեալ > կը նշանակէր, վերջերը աւելի ընդարձակ առմամբ ամենայն տեսակ զորք կ'իմացնէր:

1. Երկու Որմիզդ կան Յաղկերտ Երկորդէ յառաջ. մին յաջորդեց Շապուհ Առաջնոյ 271ին և թագաւորեց մէկ տարի միայն: Որմիզդ երկորդ՝ որ Երկայնակաց Շապուհ հայրն է, թագաւորեց 301-309: Բայց թէ ովք էր այդ

մողպետ՝ որոյ զրութիւնքն մեացեր էին 450ին, օտար պատմագիրը շտան ինչ հաւատաել:

2. Հին առենը իւրաքանչիւր ազգ զիւր բնակած աշխարհը կենդրոն կը համարէր երկրի:

3. Բաղանա՝ ավաստամ. արդի պարկ կամ օտան զոր այժմ հնէն օսդամ, օսդմ, ազա + ազա:

շիք այլ ոք բայց ի նմանէ, ոչ երիցագոյն և ոչ կըստերագոյն: Ոչ ակիզիքն տռեալ յումեքէ լինել Աստուած, այլ ինքն ինքեամբ մշտնջենաւոր . ոչ ի տեղով՝ ուրեք, այլ ինքն ինքեան տեղի. և ոչ ի ժամանակի խմիք, այլ ժամանակը ի նմանէ դոյցացն: ոչ միայն քան զերկինս երիցագոյն, այլ և քան զկարծիս մտաց մարդկան և հրեշտակաց: Ոչ ձեանայ ի տեսիլ տարրեղէն, և ոչ անկանի ընդ տեպեամբ ական, և ոչ միայն ձեսին չփնի, այլ և ոչ ընդ միտս տրուք հարկանի, ոչ միայն ընդ մարմնականաց, այլ և ոչ ընդ անմտրմին հրեշտակացն. բայց եթէ ինքն կամի՝ խրոց արժանաւորացն մտաց իմանի, այլ ոչ աչաց տեսանի. և մտաց՝ ոչ երկրաւորացս, այլ որ յԱստուածն են հաւատացեալ ճշմարտիւ:

32. Եւ անսան նորա Արարիչ երկնի և երկրի, խակ յառաջ քան զերկին և զերկիր, որպէս ինքնագոյ՝ ինքնանուն է: ինքն անժամանակ է, խակ արարածոցս յորժամ կամեցաւ սկիզբն արար լինելոց, ոչ յընչէ, այլ յոչընչէ. զի ինչ՝ նա միայն է, և այս ամենայն ի նմանէ ընչացաւ: Ոչ եթէ իբրև յետոց իմացաւ և արար, այլ մինչ չեւ արարեալ էր նորա՝ ի կանուխ գիտութեանն խրում տեսանէր զարարածս. որպէս և այժմ մինչ չեւ է դործեալ մարդոյ բարի ինչ կամ չար, Աստուածոյ յայտնի են անգործք մարդոյն: Սոյնպէս և յայնժամ, մինչ չի էր արարեալ. ոչ խառն ի խառն ինչ ճանաչէր զանեղսն, այլ կարդեալ և յարմարեալ կային առաջի նորա խրագանչիւր մտանցն տեսակքն. խակ մարդկան և հրեշտակաց՝ և տեսակքն և որ ի տեսակին լինելոց էին:

33. Եւ քանզի արարող զօրութիւն է, ոչ կարէր խափանել զնորա բարերարութիւնն մեր չարութիւնս. որպէս և եղի խակ. և ունիսք գտառաւոր զայն արարչին: Զեռք, որ զերկինս և զերկիր հաստատեցին, նոյնք և տախտակս քարեղէնս փորագրեցին և ետան մեզ գպրութիւն՝ որ տնի զօրէնս խաղաղականս և փրկականս. զի գիտացուք զմի Աստուած արարիչ երեելեաց և աներեսութից. ոչ այլ և այլ, իբրև թէ ոմն բարի և ոմն չար, այլ մի և նոյն և համակ բարի:

34. Բայց եթէ թուիցի քեզ չար ինչ գոլ յարարածս Աստուածոյ, ասու համարձակ. զի թերիս ուսցիս զջմա-

բիսն բարի; Զդեմ չար ասացեր. գոն և զեք բարի,  
զոր և զուք և մեք հրեշտակս՝ անուանեմք. եթէ կամին՝  
և զեք բարի լինին, և եթէ կամին՝ և հրեշտակք չար  
լինին: Այդ և ի մարդիկ երեխ, և առաւել ի միոյ հօր  
որդիս. է որ հնազանդ և հպատակ է հօրն, և է որ չա-  
րագոյն քան զատանայ: Նա և ինքն իսկ մարդն առան-  
ձինն յերկուս բաժանեալ տեսանի, երբեմն չար և եր-  
բեմն բարի. և որ բարին էր՝ նոյն և չարացաւ, գեպ ե-  
ղե՛ զի դարձեալ անդրէն ի բարի շրջեցաւ, և ընու-  
թիւն մի է:

35. Բայց այն որ ասեսն, եթէ վասն թղոյ միոյ մահ արար Աստուած, վատթարագոյն՝ է պատառ մի մադա-  
զաթ քան զթուզ. ապա եթէ բան թագաւորին նկարի  
ի նմա, ո պատառէ զնա՛ մահու ընդունի զպատուհաս.  
իսկ արդ չար արժան է ասել թագաւորին. քաւ, ես ոչ  
ասեմ: այլ խրաս ի գործ արկեալ զայլս ուսուցանեմ:  
Յայնժամ էր Աստուած նախանձոտ, թէ չէր պատուի-  
րեալ չուտել ի ծառոյ անտի. ապա եթէ յառաջագոյն  
զգուշացաւ, զգութ բնական սիրոյն իւրոյ յայտնեաց  
նմա: իսկ արհամարհելով մարդն՝ ընկալաւ զպատիժու  
մահուն :

36. Բայց այն զոր ասացեր, եթէ Աստուած ի կոտը  
ծնաւ, յայդմ չեր արժան քեզ խորչել և փախչել. զի  
ահաւասիկ Արհմին և Որմիպպ ի հօրէ ծնան և ոչ ի մօրէ.  
որում եթէ քաջ միտս դնես, և ոչ դու յանձն առնուա;  
Եւ միւս և այլ ծաղրագոյն քան զայդ. Միհր աստուած  
ի կոտը ծնանի, եթէ ոք ընդ իւրում ծնողին անկցի:

1 - Պլակ. գիրիշը քրեական վարսելն էաւդ յէջ 138:

2. Արդի պարսկ՝ վատրար՝ և աւելի  
վաս, յասի. ուստի արդէն բաղդատա-  
կան ըլլալուն վատրարագոյն աւելորդ  
գրութիւն մի է. բայց թէ Հայ չկղինա-  
կաց և թէ բազան մատենից մէջ վատ-  
թար իր սոսկ ածական գործածուած է:  
Աստ որոյ Միջնադարեան Պարսիկը ևս  
առէնքն վաս, վարար, վարարիւմ, որ է  
վատթարագոյն. է և վատրատան մեռա-

Նել, անցանել, վատանալ. վատաիլ՝ վա-  
տասիրա:

Յ. Արդի համօրեն տպագիրըն դանեն.  
և Միկր ասուուած ի կողէն ծնաւ, եթէ  
որ ընդ իւրաւմ ծնողին անկցի ։ որ Կը  
մէկուսի երկ եկերելի է որ մէկը ընդ իւ-  
րաւմ ծնողին անկցի։ Պ. Լանկուա Կը  
թարգմանեն. Comme si quelqu'un  
pouvait avoir commerce avec sa pro-  
pre mère. Այդ մեկուսինամբ ծնողը  
Զրուանք կըլուս, ընդ որում մտանելով

37. Առև առկաւիկ մի եթէ ի բայց թողացուցանէիր  
զիքումն տէրութեանդ, և ընկերաբար գայիր ի պայ-

Որմիդշ՝ ունեցած էր զարեգակն, բնագէս  
որ կը զուոցն Եղնիկ (Տես ի վերջ 161,  
և Եղնիկ էջ 188-142): Բայց մեր կար-  
ծեաբ այդ իմաստով շկրմար տրամիլ սոսկ  
թէսկանով կցեալ պարերութեանդ :  
Մասց որ ծնունդն ի կնոք է . Զուունայ  
կարելի էր ճայր կամ առ առաւելն մայր  
զրուցուիլ՝ իրը ծնող Ումզդայ և Ալրա-  
մենի . բայց կին անունը չէր կրնար պատ-  
շաճի նմա . և երբէք չէ նկատուած իրքն  
իգական էակ . մանաւանդ որ իրքն արու-  
հ հայր կը նկատուի միշտ, բնագէս և  
աստանօր: Որդ հօր մը յդութեամբ զա-  
ւակի ծնունդ տալը որբան ալ ծնորելի  
է, Եպիփառոսունք աւելի ծաղքելի վար-  
դապետութիւն մը ի մէջ բնրած ատեն-  
նին չէին կրնար ըսկ՝ թէ Միհր աս-  
տաւած ի կնոք ծնու, այս բնքն ի Զրուա-  
նայ: որ էր կին և ոչ այր:

Կոստանդնուպոլայ 1828ի տպագիրը  
դնէ . « Միհր աստուած ի կնոք ծնաեի,  
եթէ ոք ընդ իւրում ծնողին անկցի » .  
որ քերականաբար ուզիկ և հասկանալի  
է. և ասել է թէ Միհր աստուած որ  
ըստ մազեղն գնեն որդի է Ուրմզդայ,  
միշնորդ ընդ հայրն և ընդ մարդիկ, և  
բարեկամ՝ որ անդուլ և աներուն հսկէ  
վասն երժանկութեան արարածոց, և որ  
ամենուրեք գտանի, ամէն մայրենի ա-  
սականօր վերատին կը ծնանի կամ յաշ-  
խարհ կու գայ և մարդկան բնակակից և  
ազգակից կ'ըլլայ: Լարելի չէ աւելի  
վսկէ գազափար մը աւելի քատմելի  
պղծութեամբ խանզարել: Զզարմանայ ոք  
սակայն՝ թէ զիա՞րդ պարսիկը այդքան  
հակառակ տարերօք կազմեցին այդ վար-  
դապետութիւնդ: վասն զի արեանառու  
մերձաւորաց—մինչեւ անգամ մօր և որդ-  
ւոյ, հօր և գտար, եղօր և եռ, հաւու  
և թռաբն—զուգութիւնը ամենաբարի՝ հո-  
գեշան և սուրբ համարեալ էին ի մազ-

գեզանց, և սոյդուսի խնամութեանց ար-  
գելք ըլլալը աւելի մեծ մեղք էր բան  
զԱռամայ կրակն ապահանել: Տես Մոյ-  
նուիրատ, Գլ. 1.9:

Եղնիկ իւր ։ Եղն Ազանդոց ։ մէջ  
կ'անարգիք զԱռարդապետութիւնդ: (առա  
էջ 161): Դիւրին է տարբեր փաստերով  
աշխատանիւմեր ընտրած ընթերցուածը:

Հասի ուշ գնենք, որ Եպիսկոպոսունք  
Միհրներանի կ'ըսեն՝ թէ Աստուածոյ  
(Քրիստոնոյ) ի կնոյէ այս է ի Մարմայ  
ծնաներուն պէտք չէ զարմանայ, քանի  
որ Պարսիկը ալ Միհր աստուածոյ համար  
զնոյն ասեն: Երկրորդ՝ երբ նիւթական  
արարածոց համար Աստուածոյ տարած հոգը  
և խնամքը բացատրելէ ետքը, առ մարդո  
ունեցած սիրոյն, այսինքն Քրիստոնոյ  
յաշխարհ գալուն և մարդկան հետ ա-  
պելաւն և նոցա համար շարշարուելուն  
կ'ուզենպատրաստել զՄիհրներսէն, Պար-  
սից մէժ իմաստունց միոյն խօսքը ի մէջ  
կը բերեն՝ թէ զՄիհրն աստուած մայ-  
րածին է մարդկան և բարգար աստուա-  
ծուաւուկ ։ Մայրածիմ չէ սոսկ ։ կա-  
նանցածին ։ այլ ի մայրենի առականաց  
ծնեալ. և աստուածագաւուկ՝ քանզի ըստ  
Աւեսդայի Միհր աստուած Ուրմզդայ ըս-  
տեղծած զաւակն էր, բնագէս ի հայու-  
թիրի Արամազդայ ։ Ասելն ընդ Պ.  
Լանկուայի. Le Dieu Mihr était né  
d'une mère *parmi les hommes*, թարգ-  
մանութիւն ըլլալը:

Զերեիր և՛ որ Միհրաց մարդեզու-  
թեան վարդապետութիւնդ քրիստոնէու-  
թեան ժամանակ հնարևած ըլլայ Պար-  
սից մէջ: ։ Պարսից մեծամեծները, կ'ըսէ  
Փիւն Երասյացին (որ Քրիստոնէ 20-30  
տարի յառաջ ծնած էր, և իրը իւր ազ-  
գակցաց կողմանէ գեսպան կ'երթար առ  
կալիգուլա կայսրն Հռոմայ, 40ին եռ-  
թանամամեննի էր), մօրհընուն հետ կ'ա-

քար, զիտեմ՝ զի իրրե այլովկ ամենայնիւ յոյժ իմաստուն ես<sup>1</sup>, և վասն ծննդեան ջետան մերոց ի սուրբ կուսէն՝ ոչ աւելաբանութիւն համարէիր, այլ առաւել քանի զարարշութիւն յոշընչէ զաշխարհս՝ մեծագոյն զվերջին փրկութիւնսն իմանայիր, աղասութեան մարդոյն զյանցաւրութիւնն զնէիր, և բարերարութեանն Աստուծոյ՝ զազատութիւնն ի ծառայութենէ:

38. Քանզի յորժամ լսես՝ եթէ յոչընչէ արար Աստուած զամենայն աշխարհս, բանիւ ծնունդ իմասջիր զարարածս: Իսկ քանզի Աստուած որ զայս մեծ մարմին առանց չարչարանաց ծնաւ, ապաքէն իրրե զհայր գոյժունի ընդ սմա: Զի որ ինքն անապական է, և զարարածս առանց ապականութեան ծնաւ, իսկ սա կամօք զլորեալ ապականեցաւ, և անձամբ ևս ոչ կարէր կանգնել կալ ի վերայ ոտից: Վասն զի էր ի հողոյ, անձամբ անձին արարեալ՝ անդրէն ի նոյն բնութիւն դարձաւ. իրրեւ ոչ եթէ յօսար զօրութենէ չարի ինչ ընկալաւ ուրուք զպատիժամին, այլ ի յիւրմէ հեղգութենէն չըել բարերար պատասխանին, խրատեցաւ ծառայական մասնի մահուամբն՝ զոր կրեաց յանձն իւր:

մուսնանան, և այսպիսի ամուսնութենէ ծնած զաւակները աւելի ազնւառում կը համարին քան զայլ համարէն մարդիկ. նա մասնաւնդ կը մեծարեն զնոսա: Որպէս առաջնորդ իրրե արժանաւոր վեճագոյն բագաւորական պատույ (digne de la plus haute autorité souveraine). Յաշակոս Պատույ Աստական օրինաց, Գ:

Այսո—Խրատի մէջ խոհական Ապին կը հարցնէ իմաստութեան լիւոյն. Հարի գործոց ո՞րն ամենէն մեծ է և ամենէն լաւն (վեճ) ։ — « Անձագոյն ի բարի գործոց (բիրուց), կը պատասխանէ լիին, Առատաձեռնութիւն (առան): Երկրորդ՝ ճշմարտախօսութիւն (բարի) և մօս ազգակցաց խնամութիւնք (բակդասար) ։ Երրորդ՝ Երանակալին տօնք (կամանար): Հորրորդ՝ զեմայն կարզս պաշտամանց կատարել (համա տին եռդա): Հինգերորդ՝ և այն: Դիտելի է թէ չշմար-

տախօսութիւնը որ ի Միք աստուած կամձնաւորի, ազգապիզծ ամուսնութեանց հետ ի միասին կը յիշատակի իրրե երկրորդ առաքինութիւն: Տես և զՄիք—Լաշդ յէջ 136—138:

1. Այս զովասանկս շողաբորթութեան համար ձրիապէս արաւած չեն. Թիապարի կ'ըսէ՛ թէ Միքներսէնի կարգէ գուրս իմաստան ըլլալուն համար զնոս ։ Անդպէտան ճերպիտ ։ Կոչեցին ։ վասն զի էւրպէս խելացի մարդոց կը զրուցուի. հատթ., 194: — Հերպէտ է հմուտ ի գիրս Օրինաց: Կրծատեալ է սա ի հնագդին ակրաբակի (ըստ Պ. Հարլեզի՝ ակրաբութիւնութիւն (բարի) և մօս ազգակցաց խնամութիւնք (բակդասար) ։ Երրորդ՝ Երանակալին տօնք (կամանար): Հորրորդ՝ զեմայն կարզս պաշտամանց կատարել (համա տին եռդա): Հինգերորդ՝ և այն: Դիտելի է թէ չշմար-

39. Արդ եթէ զմահ չար աստառածն արար, զի՞նչ  
գոյացութիւն երեխ մահու ի միջի. և ոչ ինչ. բայց զբա-  
րի Աստուծոյ զարարածն խանգարեաց: Եթէ այդ այդ-  
պէս է, նմա և բարի իսկ ասել ոչ մարթի, այլ կիսագործ  
ապականացու: Եւ որոյ աստուծոյ արարածքն ապակա-  
նեղիք են և եղծանեղիք, նմա անեղծ Աստուած չմարթի  
ասել: Տի օ՞ն անդր թողէք զյիմարութեան զբարբանջ-  
մունով: Միոյ աշխարհի երկու դեհապեսք<sup>1</sup> ոչ լինին, և  
ոչ միոյ արարածոյ երկու աստուածք: Եթէ ժաղըհեսցին  
և լինիցին երկու թագաւորք միոյ աշխարհի, աշխարհն  
սղծանի և թագաւորութիւնին խանգարին:

40. Աշխարհս նիւթեղէն է, և նիւթեղս որիշ որիշ են  
և ընդ միմեանց հակառակ. մի է արարիչ հակառակոր-  
դացու, որ ածէ զսոսա ի սիրելութիւն հաւանութեամբ.  
սրպէս մալեալ կակղէ զջերմութիւն հրոյն՝ օդոյս հովու-  
թեամբ<sup>2</sup> և զապառում բրտութիւն օդոյն՝ հրոյն եռանդ-  
մամբ, սոյնապէս և զմանրամաղ փոշիացեալ հողմ՝ ջրոյն  
սալայառակ արամացեալ հողմին կափմամբ:

1. Դեհապես . աիձ աւա կամ տիժա զապառում բրտութեան օդոյն > : Բազան  
կամ պարսկ . նշանակէ քաղաք, գիւղ, ուսուի տիժովն կամ տիժըմ գիւղա-  
պես, կալուածատէք: Բայց Աւեստայի  
մէջ տաճառ, որոյ կրտսումն է տիճ, նշանակէ Հերկեր, աշխարհ, նահանգ > .  
տաճառ-բախիդի՝ զեհապետ > : Բահլա-  
ւի-բազանատ բառարանին շինուած ա-  
տենը այդ վերջի բարեկալ բառդ սեղ-  
մուեր ու տաճիօ-բառ եղեք էր, իսկ Բա-  
զանու մատենից մէջ տաճէ վաս, զոր  
Պիւրահ-Գամթի . կը սահմանէ. ինքան-  
կալ իշխան վեհագոյն քան զայլ իշխանա: Եղիշէ ալ սոյն իմաստով զործածած է.  
որովհետեւ քիշ մը ստորե դեհապետ  
բառի տեղ թագաւոր անունը կը գնէ: Բաղդատէ դարձեալ «միոյ իշխանութեան  
երկու թագաւորը ոչ լինին» > . Յ. Բ., 61:  
2. Թէոդոսիոյ տպ . «օդոյս ձովու-  
րեամբ և զապառումն բրտութիւն այոյն > .  
այլ տպագիրք՝ «օդոյս ձաւանութեամբ,

41. Զի եթէ միարանէին տարերքս, գուցէ ոք ի կարճամտաց և Աստուած անապական զառոա կարծէր, և թողեալ զարարիչն՝ արարածոյս զերկրպագութիւն մատուցանէր, վամն այնորիկ որ արար զսա, զգուշացաւ յառաջագոյն, զի հայեցեալ մարդեկ ի յանդիմանութիւն ապականացու տարերացս, անապական միայն զկառավար տրա խմացին, զմի և ոչ զերկուու. զնոյն արարիչ չորեք- կին նիւթոյս՝, յորմ, ամենայնքս ծննդագործին հրամա- նու արարողին իւրեանց: Եւ շրջագայութեամբ՝ չորիւք յեղանակօք կատարեալ զործեն զասարեւոր սպասաւորու- թիւնն՝. և չորեքեան հային կամաց ակնարկելոյ արար- չին իւրեանց. և անզգայութեամբ լծեալ են ի զործ հար- կաւորութեանն՝ չյափշտակելով զկարգ պատույն ի մի- սեանց:

42. Եւ ահա պարզաբար ասացեալ գիւրատար լու- սաւորութիւն յականջս ամենեցուն: Զի այն որ հուրն է, զոյացութեամբ և զօրութեամբ խառնեալ է յերիսն եւս մատունս. իբրև գտանի ջերմութիւնն յորվագոյն ի քարինս և յերկաթս, և սակաւագոյն յօդ և ի ջուր, և ինքն առանձին ուրեք ոչ երեի: իսկ ջրոյն ընտթիւն զոյ առանձինն, զոյ և ի խառնուածն երիցն ևս մասանցն. յորվագոյն հողաբայսա և սակաւագոյն յօդ և ի հուր: իսկ օդն թափանցանց է ընդ հուրն և ընդ ջուրն, և ի ձեռն ջրոյն ընդ կերակուրս աճեցականն՝:

43. Եւ այսպէս խառնեալ են տարերքս այս, և գոյա-

1. Այս է հոզ, ջուր, օդ, հուր:

2. Միմարեանց և թէսոսիոյ տպա-  
զիրքն զնեն: «Եւ շրջագայութեամբը  
չորեք յեղանակը կատարեալք՝ զործեն  
զտարեւոր սպասաւորութիւնն»: որ ան-  
շուշտ զրչագրի սխալ է: խօսքը շորից  
տարերց վրայ է և ոչ եղանակաց: Հե-  
ղինակը ըսել կ'ուզէ: թէ տարերց շրջա-  
գայութեամբ՝ շորից յեղանակաց միջու-  
ցաւ կատարեալ զործեն զտարեւոր սպա-  
սաւորութիւնն, այս է թէ գարնան ծա-  
զիկ կ'ըլլան: յետոյ տերե՛ պառւզ՝ հող  
և այն: Անմիջապէս ետքը դրուած է և  
շորեքեան»: ալ տարերց կը պատկանի:

Կոստանդնուպոլիսոյ տպագիրը ունի՝ «Ե

շրջագայութեամբը չորիւք յեղանակօք  
կատարելազործեն զտարեւոր սպասաւո-  
րութիւնն»: Միմարեանց մէկ զրշա-  
գիրն ալ զնէ՝ «Յորիւք յեղանակօք»:  
Այս զանազան ընթերցուածքդ բազա-  
զրելով և առանց մեր կոզմանէ բան մ'ա-  
ւեցնելու՝ ուզզեցինք որպէս ի վերոյ:

3. Այս և ասկէ առջի պարբերու-  
թիւնը զեղեցիկ ապացոյց մը կընան ըլ-  
լալ: որ մեր Եկեղեցոյ Հարք այն ժա-  
մանակի ընական իմաստասիրութեամբն  
ալ պարագեր էին ու քաջ մշակեալ մը-  
տաց տէր էին:

յեալ իրրե զմի մարմին, և ոչ կորուսեալ զիւրաբանչիւր քնութիւնս, և ոչ երբէք զկայան առեալ հակառակութեամբ, հայելով ի մի իշխանն՝ միխառնն<sup>1</sup>, որ զիսառնուածն յարմարեալ կազմէ առ ի բնակութիւն կենգանեաց ամենեցուն, և տևազութիւն յարակայութեան բոլոր աշխարհիս:

44. իսկ եթէ առ անբան աշխարհս այրպէս հոգտանի Աստուած, որչափ ևս առաւել առ բանաւոր աշխարհս՝ մարդո: Զոր և ձեր ոմնքաջ յիմաստնոցն ասաց, Եթէ Միհրն աստուած մայրածին<sup>2</sup> է ի մարդկանէ, և թագաւոր աստուածազաւակ է և համհարդ քաջ եօթներորդաց աստուածոց: Եթէ հաւատալ արժան է առաւ պեղարանութեանդ, զոր գուք և գործափք իսկ կատարեալ ցուցանէք ի գենիդ ձերում, մեք ոչ ևս առասպել լացն հաւատակը, այլ աշակերտք եմք մեծին Մովսիսի մարդարէին, ընդ որում Աստուած խօսեցաւ ի մորենոցն ի Այնէ և գէմ՝ յանդիման օրէնս գրեաց և ետ ցնա, և ծանոյց զնիւթեղէն աշխարհն իրրե զարարածո, և զիւր աննիւթ էութիւնն՝ արարիչ նիւթոցս յոշընչէ. և զերկիրս երկրաւորօքս և զերկինս երկնաւորօք ծանոյց նմա, զի գործք ձեռաց նորա են: Բնակիչք երկնի՛ հրեշտակը, և բնակիչք երկրի՝ մարդիկ, բանաւոր՝ մարդ և հրեշտակ միայն և Աստուած ի վեր քան զերկինս և զերկիր:

45. Եւ ամենայն արարածքն անբանութեամբ կատարեն զհրամանս պատուիրանի նորա, ոչ երբէք անցանեն ըստ եղեալ սահմանն իւրեանց. բայց մարդ և հրեշտակ ազատ թողեալ ի կամս անձին իւրոյ, քանդի մսաւորք են, եթէ կայցեն ի հրամանի նորա՝ անմահք են և որ-

1. կ. Փոլսոյ տպ. միախառնե. իմա՞ ամենայն տարեք միասեղ՝ իրարու խառնուած: Թէսգոսիոյ տպ. դնէ՝ և ի մի իշխանն յանառնէ, իրրե բացայալուի իշխանի՝ այս և Աստուածո: Տես Եզնիկ 17-18:

2. Տես յէջ 232. Մն. Յ: — Համհարդ յաջ եօթներորդաց աստուածոց. այս է Արմեղոյ և նորա վեց խորհրդակցաց

կամ ամէշասորանտից. (Տես յէջ 121-123, 131, 136): Կարգի թուականդ եօթներորդ՝ գործածուած է առօ իրը պարզ թուական անուն եօթն. Տես Վերակ. հայ. Բազգատունեաց, 151: — Համրազ յաշակ է իրարու զաղանիքը զիւցող, Խորհրդակից, մասերիմ բազ և գաղանիք: Եղիշէ կը գործածէ ևս իրրե նիզակակից, արբանեակ, թիկնապահ:

գիր Աստուծոյ: Զբոլոր արարածս տուեալ է ի ծառայութիւն, զերկերս մարդկան և զերկինս հրեշտակաց. ապա եթէ ստունդանիցեն և անցանիցեն ըստ հրամանաւ, զընդդէմն զործեսցեն Աստուծոյ, յիւրաքանչիւր պատուցն զանարգանս ընկալցին. զի երեսցի տէրութիւնն անբամբաս. և յանցաւրբն ամօթալից յանցանացն :

46. Իսկ եթէ զու ի տղիսութեան վրիպեալ ես, ես որ հաստատունս գիտեմ՝ ոչ կարեմ՝ զալ զինի քո մոլորութեանդ: Եթէ աշակերտախմ անսուսամնութեանդ, երկոքինս յանդիւտ կրուսան մատնիմք, թերեւս ես չարագոյն քան գքեզ. քանզի վկայ ունիմ ինձ զինքնասաց ձայնն Աստուծոյ, ծառայ, ասէ, որ ոչ գիտէ զիամս տետան իւրոյ, և արժանի գանի ինչ զործ զործէ, ըմպել ըմպէ գան, այլ սակաւագոյն. իսկ որ տեղեկագոյն է կամաց թագաւորին, և յանցանէ ինչ առաջի նորա, առանց բարեխօսի բազմապատիկ ասնջի:

47. Արդ աղաչեմ՝ զքեզ և զամենեսեան՝ որ ընդքոյի իշխանութեամի են, մի զու ընդ իս բազմապատիկ ասնջիր, և ոչ ես ընդ քեզ սակաւագոյն. այլ ես և զու և ամենայն բազմութիւնդ հանդերձ արի թագաւորաւդ այնպէս աշակերտեսցուք ասսուածային գրոց, զի ի տանջանացն ապրեսցուք, և զգմոխս արհամարհեսցուք, և յանշէջ հրոյն զերծանիցիմք, և զարքայութիւնն ժառանգիցեմք, և անցաւուր կենք զանանց մեծութիւնն անփախան անիցիմք: Բայց յորմէ դուդ զարհուրեալ ես՝ դիւրահաւան լեր, և վաղվազակի աշակերտիս ճշմսրսութեանն :

48. Ոմն ի հրեշտակաց յանմահիցն զնդէն ստամբակեալ և ի բաց զնաց յերկնից. ի մեր աշխարհուեկեալ՝ պատիր բանիւք և սուտ խստամամի զանլինելի յոյսն առաջի զնէր, իբրև աղայ մանկան, անփորձ և անկիրթ նորաթեք մարդոյն, ի վեր հայեցուցաներով զմիսս նորա ուտեղով ի պազոյ ծառոյն, յոր հուան չհրամայեաց երթալ, զի լիցի ասսուած: իսկ նորա մուացեալ զպատուիրանն Աստուծոյ, խարեցաւ զինի մոլար խարէութեանն. կորոյս զոր ունէր զիփառս անմահութեանն, և չեհաս երազացոյս կարծեացն: վասն որոյ և մերժեալ

ի կենաց տեղւոյն, ընկեցաւ յապականելի աշխարհո՛ յուրամ՝ և գուքս էք բնակեալ այժմ; և ցնորեալ մնորիք զինի նորին խրատտուի. ոչ ևս ուտելով ի պատուիրեալ ծառոյն, այլ զարարածս աստուած անելով, և անխօս ասրեցս երկիր պագանելով, և անորովայն գիւաց կրակուր մասսացանելով և յարարչն բոլորեցունց ի բաց լինելով:

49. Ոչ յագի չար խրասսուն, այլ կամի՛ զի քան զինքն չարագոյնս արասցէ: Քանիզի գեղն ոչ եթէ բըռնաբար գրք վարեն ի կորուստ, այլ զմեզմն քաղցրացուցանեն ի կամս մարդոյն, և ողբանօք որսան զանուս մունս ի խարէութիւն, որպէս բազում մարդիկ զընկերուիւրեանց ի գողութիւն և յաւազակութիւն. իբր ոչ եթէ բանի ինչ վարելով, այլ պատիր խարէութեամբ տան գործել բազում չարիս, զամանս ի կախարդութիւն և զամանս ի պանկութիւն և զոմանս յանթիւ ի բազում յայլ իրս աղտեղութեան: Եւ արդար դաստաւորք՝ վրէժ առնուն մահու չափ. իբր ոչ եթէ բարի աստուծոյ դատաւորք իցեն բարեգործ, և չարին՝ չարագործ. զի բազում անգամ է զի ի բարի մարդկանէ չարք լինին, և յետոյ ի չարագունից անտի կատարելագոյն բարիք:

50. Եւ գատաւորք ստոյգ, որք գատին զչարագործո՛ ոչ եթէ չարք անտաւնին և չարչարիչք, այլ յոյժ բարիք և բարեգործք. և բնութիւն մի է, և ոչ երկու. իսկ ի միոջէ անափի գործք երկուութեան երկենն. ոմանց սատակիչք, և ոմանց պարգեւատորք: Եւ եթէ առ մարդիկ այս պաշտի ի ձեռն թագաւորական վիճակին խրաստինամ՝ տանել խրում իշխանութեանն, որչափ ևս առեւել Աստուծոյ բոլոր աշխարհո՛, որ ընդ ամենեցուն կեանս կամի, և ոչ զմահ: իսկ ուր բազմացաւ յանցաւորութիւն, տանջեաց զամեննեսեան մահուամբ. իսկ ուր եզի ունկնդրութիւն հնապանդութեան, շնորհեաց պարգևս անմահութեան:

51. Այն է ճշմարիտ Աստուած՝ բոլորեցունց մեր աշխարիչ, զոր դու աներեսանակ արձակ բերանով՝ անահ

աներկիւղ համարձակ հայհոյես. թողեալ զթիսուս Քրիստոս զփրկական անունն, փանդուրակայ որդի անուանես և մարդ մորոքցուցիչ կարծես, և զերկնաւոր փրրկութիւնն ազաւազես և անարգես ի կորուստ անձին և բոլոր աշխարհին: Զոր տալոց և հատուցանելոց ես զանանցական վրէժ տանջանացն յանչէջ հուրն սպառնացեալ զեհենին, հանդերձ ամենայն գործակցօք քոյովք,

1. Հայկակեան բառարանը հին բառառանեն առնելով՝ կըսէ մէկ փանդուրտի

նշանակէ Հիւսն : Բայց այդ մէկնութիւնու տրինդ ուրիշ փաստ մը շունի, բայց եթէ այն որ Ա. Յօսէփ հիւսնութեամը կը զբազէր: Պ. Եսնէսա Ռընանի առ Պ. Լանկլուս հազորդած տեղեկութեանց նայելով Նընէից մէջ հին աւանդութիւն մը կար, որոյ սկիզբը մինչեւ երկրորդ դարը կ'ելլէ, բայ որում զթիսուս Քրիստոս Panthéros անուն մարգայ միոյ զաւակը կը համարէին: Կելսոս առաջին եղաւ որ այդ բազազանին ի դիր տառւ. (Որոգինէ Հնդդէմ կելսեայ 1, 28, 32): Այս Բանթերոսի առասպելախան պատմութեան վրայ հիւսեալ են թալմուտի Քրիստոսի վրայօք կցիցած խօսքը, միանգամայն Աէֆէր թօլէտօթի Եշչու անուն հռակաւոր առասպելախան գրութիւնը որ թալմուտէն վերը շարադրեցաւ: ՈՒ դարու գերմանացի գիտնականներէն վակէնսապէլ Աէֆէր թօլէտօթի թարգմանութիւն մի հրատարակած է Հանդերձ բնագրավ, յորում առանձին բանախօսութեամբ կը հերքէ անոր մէջ գտնուած զրպարութիւնքը: Վոլթէր ալ կը ծաղրէ այդ անխմատ առասպելաբանութիւնն իւր Եպիտր sur la Calomnie անուն քերթուածոյն մէջ. Տես և Պայլի Բառարանը Schomberg. Ճանօմ. A.

Բայց զարմանալի է մէկ պարսկերէն բառագրոց սմանց մէջ է փանդուրտի կամ փանդուրտ լրացն որ երկու նշանակութիւն անի: Ա. այր տիմար, Բ. ուուու

կերծեալ տղայ, enfant supposé. Եւ և Փինուորտ լրացն զոր մարթ է ևս ըն-

թեռնուլ փանդուրտ: կարծիք, ցնորք, երեակայութիւն: — Պարսկերէնի և հայերէնի հասարակ՝ նոյնանիշ և նմանանձայն բառից մէջ, անոնք որոց պարսկերէնը ա, է, ի, ու ձայնասորով կը վերջանայ, հայերէնի մէջ շատ անզամ ակ, իկ, ուկ վերջաւորութիւնը կ'առնաւն. նեւա, նիզա, բարի, կունա, բարոի, ձիւտի կ'ըլլան համակ, նիզակ, պարմի, զունակ, պարսիկ, հոդիկ: Հայկական ձերիդ քան զարդի պարսկականը հնագոյն ըլլալը անկէ ալ յայտ է՝ մէկ բահւակ մատենից մէջ այդ բառերդ յով կը վերջանան. ասկէ զատ նոյն ինքն արդի պարսկերէնի մէջ կան այլ և այլ բառեր՝ որ տակաւին այդ ձեր կը կրեն, թէպէտ շատ գործածական չեն. այսպէս դադիք կամ դամիք տաճիկ, զանտիք զանդիկ, սիփրաք պպիսակ, որոց աւելի գործածուած ձեւն է դագի, զինտի, սկիսի: Ծայրի կէն՝ որ մերթ Աւեսպայի այս վերջաւորութեան կրհասումն է, երբեմն ալ եզակիի նշան սեմական լեզուէ մըտած, այդպէս մեկնուելէ յետոյ, փանդուրտի և գանդուրտակ: մի և նոյն բառն ըլլալուն տարակրյու շմար: Նընէից Panthéros հինգերորդ դարուն պարսկերէնի մէջ կեղծիք, ստութիւն, այր տիմար նշանակեց. կամ զպարսկական անունդ Նընէյք երկրորդ զարէն ի վերիբեկ յատուկ անուն գործածեցին, կարելի չեղաւ մեզ ստուգեկ:

տառջնովք և միջնովք և վերջնովք<sup>1</sup>: Այլ մեք այսպէս զիտեմք զԱստուած, և ի սոյն հաւասամք յաներկբայս:

52. Եւ որ արար զաշխարհս, նոյն եկն և ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամնայ, յառաջագոյն նկատելով մարդարէիցն, առանց իրիք պատճառանաց մարմնաւոր կարգի: Որպէս յոշնչէ արար զայս մեծամարմին աշխարհս, սոյնպէս առանց իրիք մարմնական միջնորդի առ զմարմինն յանփորձ կուսէն ծշմարտիւ, և ոչ առ սոսուերադիր<sup>2</sup> երկամմիր: Էր Աստուած ծշմարտիւ, և եղի մարդ ծշմարտիւ. ոչ ի լինեն մարդ՝ կորոյս զաստուածութիւնն, և ոչ ի կալ մնալ Աստուած՝ աղաւաղեաց զմարդկութիւնն, այլ նոյն և մի: Այլ քանզի ոչ կարէաք տեսանել զանտեսանելին և մերձենալ յանմերձենալին, եկն եմուտ ընդմերով մարդկութեամբա, զի և մեք մոցուք ընդ նորա աստուածութեամբն: Ոչ անարգանս ինչ համարեցաւ զգենուլ զիւր ստեղծուած մարմինս, այլ մեծարեաց իբրեւ աստուածաստեղծ զիւր գործ: Ոչ առ սակաւ սակաւ չնորհեաց ինչ սմա զանմահութեան պատիւն, իբրեւ զանմարմին հրեշտակաց<sup>3</sup>, այլ միանդամայն զրոյոր բնութիւնն մարմնավ՝ չնչով և հոգւով զգեցաւ, և միարանեաց ընդ աստուածութեանն. միութիւն, և ոչ երկուութիւն. և այսուհետեւ մի զիտեմք զաստուածութիւնն, որ յառաջէր քան զաշխարհս, նոյն և այսօր:

53. Այս Յիսուս Քրիստոս՝ որ յիւր մարմինն փրկեաց զրոյոր աշխարհս, սա եկն կամաւ ի մահ, և որպէս ինքն աստուածութիւնն գիտէ, թանձրացաւ յանաբաս կուսէն և ծնաւ և պատեցաւ ի խանձրառուրս և եղաւ ի մնուր, և շարժեաց ած զմողոն յարկելից<sup>4</sup> յերկրապատութիւնն. սնաւ իբրև զտղայ կաթամիր, ածեաց և մեծացաւ սմա

1. Արդպիսի խիստ յանդիմանութեան պատճառ մը տուած ըւլլար Միւրներսէն իւր նամակին մէջ, եթէ սպազբոց մէջ պակաս մը շենթադրենք: Տես ի վերոյ 22, ծն. 1:

2. Միիի՞՞ առասուերագիր, մէկ քառ. ի. պոլսոյ տպ. առ սոսուերագիր՝ որպէս եղաք. թէոդ. տպ՝ միայն սոսուերագիր: Առ մեզի սոսկ նախուիր երեցաւ, որպէս

«առ աշոք»: Տես Բագրատունոյ քերակ. էջ 106:

3. Պութ է բացատրութիւնդ. իմանաւի է կարծեմ՝ թէ սոսեղծուած մարմինը հրեշտակաց անմահութեան շարժանացաւ, այլ աստուածոյին անմահութեան կամ աստուածութեան:

4. Թէսդոսիոյ տպ. «յարկելից կողմանց» յերկրապատութիւնը:

երեսուն, մկրտեցաւ ի Յովհաննէ ի յամբորգւոյն ի Յորդանան զետ; Արար նշանս մեծամեծս և արուեստս ի մէջ Հրէիցն, մատնեցաւ ի քահանայից, դատապարտեցաւ ի Պիղատոսէ պոնդացւոյ: Խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ, յարեաւ յաւուր երրորդի, երեւեցաւ երկոստասն աշակերտացն և այլոց բազմաց աւելի քան զհինգ հարիւրոցն: Եւ շրջելով ընդ նոսա զաւուրս քառասուն: Վերացաւ յերկինս ի լիոնէն Զիթենեաց յանդիման խւրոց աշակերտացն, ել և նստաւ ի հայրենի աթուն: Խոստացաւ երկրորդ անդամ՝ գալ ահաւոր զօրութեամբ յարուցանել զմեռեալս, նորոգել զրոլոր աշխարհո, առնել գատաստան արդար ի մէջ արդարոց և մեզաւորաց, տալ պարզես արժանաւորաց, և հատուցանել պատիժուարագործաց՝ որ այսմ ամենայնի բարերարութեանց ոչ հաւատան :

54. Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք: Ամենայն ինչք և ստացուածք մեր ի ձեռու քո, և մարմինք մեր առաջի քո կան, ըստ կամաց քոց արա զինչ և կամիս: Եթէ սովին հաւատովք թողուս, ոչ յերկինս այլ տէր փոխանակեմք ընդ քեզ<sup>1</sup>, և ոչ յերկինս այլ Աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի, որ չիք այլ Աստուած բայց ի նմանէ: Ազա եթէ յետ այսր մեծի վկայութեան այլ ինչ հարցանես, աւասիկ կամք, զրոլոր մարմին տուեալ ի ձեռու քո. վազվազակի արա զինչ և կամիս: Ի քէն տանջանք, և ի մէնջ յանձնառութիւնք. սուր քո, և պարանոցք մեր: Զեմք ինչ լաւ մեք քան զառաջինսն, որ յայսր վկայութեան վերայ եղին զինչս և զառացուածս և զմարմինս իւրեանց:

55. Զի եթէ անմահք իսկ էաք, և մարթ էր մեզ

1. Պարսից դրան և մանաւանդ Միհրներսէի համոզութե եր՝ թէ Հայք քանի որ քրիստոնեայ թեան, պիտի հակառակին Սասանեան իշխանութեան և միանան իրենց կրօնակցացը՝ Հռոմուց հետ: Ասդ երկիւզդ էր գլխաւորապէս որ զհայս կրակազաշտ ընելու ձեռնարկել տուեր

էր: Եպիսկոպոսունք միարերան և բացարձակ խոստմունք մը կ'ընեն աստ, որ իրենց պատասխանուզն ամենէն նշանաւոր և կարեւոր կէտն է. քանզի այդ պայմանաւ միայն մարթ էր ի հաւանածել զիուռն Պարսից:

մեռանել վասն սիրոյն Քրիստոսի, արժան էր. քանզի և  
նա անմահ էր, և այնչափ սիրեաց զմեղ, մինչև մահ ի  
յանձն էառ. զի և մեք նորա մահուամբն յաւիտենական  
մահուանէն ապրեացուք: Եւ եթէ նա յիւր յանմահու-  
թիւնն ոչ խնայեաց, մեք զի կամօք եղաք մահկանացուք,  
կամօք մեռցուք վասն սիրոյ նորա, զի կամօք յանձն առցէ  
զմեղ յիւր յանմահութիւնն. մեռցուք իրրե զմահկանա-  
ցուս, զի ընկալցի զմեր մահն իրրե զանմահից:

56. Այլ դու յայսր ամենայնի այլ զմեղ մի հարցա-  
ներ. զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց,  
եթէ պատրիցիմք իրրե զաղայս. այլ անդուծութեամբ  
ընդ Աստուծոյ, որում չիք հնար քականել և ի բաց ե-  
րանել, ոչ այժմ և ոչ յապա և ոչ յաւիտեանս և ոչ յաւի-  
տենից յաւիտեանս :

1. Աւետայի մէջ մերթ ընդ մերթ կը  
հանդիսի՝ յանաէ յանաէնալիէ, որ է «յա-  
պայս յաւիտենից»: Կամ «յաւիտեանս  
յաւիտենից»:

Այս պատասխանոյս նկատմամբ այլ-  
և այլ խնդիրներ կը ծագին.

Ա. Փարզեցին իւր պատմութեան մէջ  
հրովարուակ մը և անոր տրուած պատաս-  
խան մը յառաջ կը բերէ՛ որ տարրեր են  
Եղիշէ իններէն: Ո՞րն է զաւերականը: Փարզեցին Եղիշէ գոնէ երեսուն տարի  
եռքը կը գրէր. մեր հեղինակը ակնաւ-  
տես վկայ է. մինչ Փարզեցին ուրիշներէ  
լսածը կամ ստուգածը կ'երկորդէ: Եղիշէ  
իրրե պատճեն ի մէջ կը բերէ. մինչ Փար-  
զեցին այդպիսի կերպարանք չտար: Ասկէ  
յառաջ աեսանք՝ որ Միհրներսէի նա-  
մակին պաշտօնական և հարազատ գրու-  
թիւն ըլլալուն կարելի չէ երկրայիւ:  
Ելաթողիկոսին կողմանէ զրուած պա-  
տասխանդ ալ իւր վերնագրովը, բնա-  
զանցական և փիլիսոփայական խորհր-  
դածութեամբքը, աշխատեալ և ինա-  
մեալ ոճովը պաշտօնական զրութեան ա-  
մենայն արտաքին և ներքին հանգամանքն  
ունի. մինչ Փարզեցւոյնը այնքան զուրկ  
է այդ յատկութիւններէդ, որ կարելի

չէ մեզ կարծէ՝ թէ Եպիսկոպոսաց և  
աւազ Տանուառեարց ժողովը, յորում  
Եզնակայ պէս նշանաւոր մասնենազիր մը  
և Ասհակայ և Մեսրոպայ երիշագոյն  
աշակերտներէն առ նուազն հինգն բազ-  
մեալ էին, ազգութեան և հաւատոց ա-  
մենակարեւոր ինդրոյ վրայ Փարզեցւոյն  
տուածին պէս զրութիւն մի զրկէր ի  
Դուռան Պարսից: Զամշեան վարդապետը  
երկուքին դրան ալ վաւերական կուզէ  
համարել. կարծելով թէ Հայք երկու  
զրութիւն ընդունեցան ի դրանէն, որոց  
մին հրովարտակ էր Յազկերաւ կողմանէ,  
և միւսն Յայտարարութիւն մի պարսկա-  
կան Դինին շարադրեալ ի Մոգուց. և  
թէ այս կրկին զրութեանց կրկին ալ  
պատասխան զրուեցաւ: Նորա կարծեօք  
Փարզեցին զրովարտակը և սորս պա-  
տասխանը միայն կու տայ, մինչ Եղիշէն:  
Մոգուց զրածը և անոր հերթումը: թէ  
Միհրներսէի նամակը Մոգուց շարա-  
րութիւնն է և Փարզեցւոյն Յազկերաւի  
ընծայած հրովարտակը վաւերական է,  
մինչև մեկ աստիճան մը կարելի ըլլայ  
ընդունիլ, բայց սոսկ ընթերցում մը  
բաւական է համոզելու՝ թէ Փարզեցւոյ  
յանուն ժողովոյ Արտաշատայ յառաջ բէ.

57. ի ամին մեծի հաւանութեան ամենայն բազմութիւնն միաբանեաց ի մեծամեծաց մինչ ցփոքունս. անսուտ երդմամբ եղին վկայութիւն՝ կենօք և մահու ի նմին կալ հաստատուն:

58. Եւ իրրե եհաս նամակն յարքունիս, և ընթերցան ի մեծի խոնասանի յանդիման ամենայն բազմութեան կարաւանին<sup>1</sup>, բազումք այնոքիկ էին՝ որ իրրեւ լսէին՝ գովիչին զպատասխանիմն: Թէպէտ և երկնչէին յահէ տէրութեանն, սակայն ի ծածուկ առ միմեանո զնոյն վկայութիւնո գովութեանց տային. առաւել քան ընդ ճարտարաբանութիւնն, ընդ համարձակութիւնն աներկիւդութեանն զարմանային: Եւ բազումք ահաբեկեալք սկսան զրահել պնդապէս. և զնոյն շնչիւն լսէին յամենայն շրթանց:

59. Խսկ չարասէր մողպեսն հանգերձ մեծ հազարա-

րան գիրդ և ոչ խսկ հրովարտակին գաւեռ րական պատասխանը կարելի է համարել:

Բ. Որովհետեւ ըստ մեզ տարակոյս շմեար Եղիշէի ի մէջ բերած պատասխանոյն պաշտօնական և հարազատ ըլլալուն, ինդիր մի կը ծագի՛ թէ ո՞վ ի գիր առաւ զայն կրնայ նոյն ինքն Եղիշէն ըլլալ նորա շարադրողն իրրե քարտուզար կածառայն. բայց այդ զրութեանդ ոճը այնքան կը տարրերի Եղիշէն ոճէն՝ որ հարկ է զայն ուրիշ հեղինակութեան նուիրել: Բնազանցական և աստուածաբանական ինդիրները կարգէ դուրս յստակութեամբ բացատրուած են. մինչ Եղիշէ երր այդպիսի ինորհրածութեանց կը ձեռնարկէ, կը սեղմէ ու կը միմնցնէ իւր իմաստները: Պատճառաբանութիւնը, յստակ, շարունակ և իրարու սերս կապուած են ու ֆիլխոսփայական ինդրոց վարժ միտք մը կը յայտնեն. քանի որ Եղիշէայ գրութիւնը կրօնից աւելի բարոյական և սիրոյ նշանը կը կրեն քան նորա բնազանցական վարդապետութեանց: Որ որ Եղինկայ Հեթանոսաց Աղանդոց առաջին երեք գիրը կը բաղդատէ այդ պատասխանուրդ հետ,

կարելի չէ՝ որ մի և նոյն մտածութիւնները չտեսնէ երկուքին մէջ, շատ անգամ մի և նոյն բառերով բացարեալ, ու մեզի հետ չկարծէ՝ թէ Արտաշատայ մէջ խմբագրեալ թուղթը շարադրութիւն է գլխաւորապս Եղինկայ՝ որ իւր մատենին ձականութ կը գնէ այս խօսքս. «Յորժամ զաներեւութէն և զնորին զմշանինաւոր զօրութիւնն ճառիցէ ոք, քանզի մարմարոր լեալ է, պարտի զմիսն՝ յատակել եւ զիսրնուրդս սրբէ, զյոզչ շարժմանց պարզել, զի զայն զօր առաջի եղ՝ հասանել կարասցէ»:

1. ՅԱպար աշխարհի ուր կը գոնուեր Յազկերո՞ Խոնաստան իրրեւ պալատ փորձածուած կերեկի. է պարսկերէն խունիստան ճաշակէ երջանիկ, բարեբաստիկ, որպէս խիւնյան և խիւնը՝ որ հաւանօրէն արքայական ապարանից անունն էր, ինչպէս տարիիւնատակ սամաս Ճաշակ էր առ առունն երջանիստեան ։ Կոչի Օսմանեան թագաւորաց պալատը. Խոնաստան նոյն կերեկի ընդ Աւեսդայի իսլամդա բառի, որոյ արդի պարսկերէնն է խօնուու, խիւնյան:

պետան չնշեաց շարախօսութիւն, և բորբոքեաց զիմա-  
գաւորն իբրև զհուր անշինանելի: Եւ սկսաւ կրծտել զա-  
տամունան իբրև զօրհասական վիրաւոր. և յայտ յանդի-  
ման ձայնարկեաց առ մեծ հրապարակին՝ և ասէ. Գի-  
տեմ ես զշարութիւն բազմութեան մարդկանս, որ թե-  
րահաւատեն ի մերոց օրինացս, և զինի կախարդութեան  
մնլորեալ են անդարձութեամբ: Եւ իմ եղեալ է ի մաի,  
թէ ոչ ումեք թողացուցից ի մեծամեծ հարուածոցն,  
մինչև ակամայ ի բաց կայցեն յայնպիսի վրիպական օ-  
րինաց. եթէ ոք կարի ի մերձաւորաց իցէ, զնոյն անցս  
և ընդ նոսա անցուցից:

60. Յայնժամ ծերն<sup>2</sup> դառնացեալ բանս ի ներքս ըն-  
կէց, և ասէ յթագաւորն. Առ ինչ է քոյ այդ մեծ  
տրտմութիւնդ. զի եթէ կայր չելանէ ըստ քո հրաման,  
և չնիք կան քեզ ի ծառայութեան, որ մարդ է յերկրի՝  
եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիդ: Տի-  
րաբար հրաման տուր ի ներքս, և ամենայն որ զինչ  
և ասես՝ վազվազակի կատարի:

61. Եւ անդէն թագաւորն ի ներքս կոչեալ զդպրա-  
պեան<sup>3</sup>, հրամայէր գրել հրովարտակ. և ոչ ևս ըստ սո-  
վորութեանն, այլ բանս գայրադինս իբր առ ատելիս և  
անպիտանս, չիշելով ամենեկին զմեծամեծ վաստակս ափ-  
րատէր մարդկանն<sup>4</sup>. այլ միայն կոչոյ հրաման տուեալ  
յականէ յանուանէ զարս՝ զոր ինքն ճանաչէր, որոց ա-  
նուանկն են այս, ի առհմէն Սիմեաց Վասակ անուն<sup>5</sup>,

1. Խմո՛ զընդարձակ դահլիճն ուր ժու-  
զագած էին: Ակոաները կրծտողն և ձայ-  
նարկովը Մովզետան Մովզետը կամ  
Դիենակետը չէ: որպէս կարծեցին թարգ-  
մանիչը ունակը, այլ թագաւորը. այդ  
ազանեալից՝ ի ներկայս թեան աբբային  
որիշ մը չէր կրնակ ընել:

2. Այս է Միհրներսեհ: — Հրաման  
տուր ի ներքս ։ այսինքն ի ներքս ի  
պարատն ենուրուն, ուր էին դպիր և  
այլ գործադիր պաշտօնեայք:

3. Տաղիր կամ տիպիր յօհ է դպիր-  
տիղիրիսկամ՝ գպրատուն:

4. Վարդանայ նշանաւոր ծառայու-  
թիւնը ի Քուչանս՝ տես սոորե 69 և

## Ցն. 1:

5. Վասակ՝ որ ի ժաման մարզպան  
էր Հայոց (Փարագ. էջ 131): — Տոհմ,  
բազանա՝ դոխմ, որ կրկին նշանակու-  
թիւն ունի. 1 Ակրմն. 2 Ակրոնդ:

Առաջին մարզպան որ առաքեցաւ ի  
Հայու

1. Եհմիքիշապուհ Պարսիկ, 428—441:

2. Վասակ Ամսի, 441—453.

3. Արտորմիզդ Արշական, 453—464.

4. Արտզնասոզ Յոզմանդեան, 464—  
483.

5. Սահակ Բագրատունի, 483—484.

6. Անդեկան, 486—486.

ի տոհմէն Արծրանեաց Ներշապուհ անուն, ի տոհմէն Ռշտունեաց Արտակ անուն, ի տոհմէն Խորխոսունեաց Գաղէցոյ անուն, ի տոհմէն Մամիկոնենից Վարդան անուն, ի տոհմէն Մոնկաց Արտակ անուն, ի տոհմէն Ամատունեաց Մանէճ անուն, ի տոհմէն Ամատունեաց Վահան անուն, ի տոհմէն Վահեւունեաց Գիւտ անուն, ի տոհմէն Մնձեւացոց Շմաւոն անուն։ Զայս նախարարքս յականէ յանուանէ կոչեցին ի գուռն արքունի. և կէսքն առ նմա խոկ էին ի կարաւանին, և այլը ի կողմանց հիսութայ ի Հոնաց պահակին. թողեալ էր զոմանս ի նախարարացն անդէն յաշխարհին Հայոց<sup>1</sup>։

62. Արդ թէպէտ և ոչ համագունդ ի միոջ վայրի դիպեցան ամենեքեան, սակայն յառաջազոյն դիտացեալ զիսորհուրդմն չարաբարոյ բռնաւորին, և զհեռաւորմն ևս իրքեւ զմերձաւորմն ի միոջ վայրի առ միմեանս համարէին։ Եւ ի ձեռն Յափեւկու եպիխակապոսի նովին ուխտիւ<sup>2</sup> հաստատեալ՝ խաղացին գնացին յիւրաքանչիւր տեղեաց ի գուռն արքունի։ Եւ յօդ փութային վասն եղբարց և որդեաց և սիրելի գայեկամնանդ բնակացն<sup>3</sup>,

1. Պարբերութիւնս քիչ մը խառնակ է։ Փարպեցոյ նայելով Յազկերտ երեք առանձին հրովարուակ Խրկեր էր՝ Հայոց, Վրաց և Աղուանից. հրաման ընելով որ ամենայն տանուտեարը և սեպուհք երեցունց աշխարհաց փութով և անիսովանց ի գուռով զան։ Եղիշե միայն իւր ազգակիցներուն խօսքը կ'ընէ։ Այն նախարարք՝ որ կը յիշտատակին ասս, յականէ յանուանն կուշցան յարբունիս։ Հրովարակին մէջ սոցա առանց տիտղոսի և իրքեւ սոսկ անհատ յիշուիլը տանուտերութենէ անկած ըլլարնին կը յայսնէր։ Մնացած հայ նախարարաց մէկ մասը արդէն Յազկերտի քով էին ի կարաւանին. մէկ մասն ալ ի պահակին Հոնաց (տես Փարզ. 181-184). մէկ երրորդ մասն ալ ի Հայս մասցին։ Հայաստանէն դնացող նախարարաց ընկերացեր էր Աշուշա բգեաշխն Վրաց (Փարպեցի 148)։

2. Այս է Արտաշատայ ժողովոյն մէջ եղած ուխտը։

3. Դայեկամունդ բնակը, այս է մէկ տաճ մէջ մէկ խնամակալի ձեռօք մեծցած կամ մէկ կնոջէ շարունակարար՝ երբեմն ևս միանուած կամ կերած անձնոր, որք իրերաց՝ հարազատ եղբարց և ազգականաց շափ ընտանի և կապեալ կը համարուին։ Այդ սովորութեանդ անօսր նշմարքն մնացած են տակաւին Հայոց մէջ. բայց մեծ կարեռութիւն ունեմ երբեմն, ինչպէս և դրացի Վրաց և Պարսից մէջ. տես ծն. 1, թ. Բ, 14։ - Անդ ուրեք առէ Եղիշէ և Զժիշեցան Տիեկնանց Հայոց՝ թէ գուցէ որ ամենեին ի բնականութեանց դայեկոց եւ կամ քնառ ի սիրիի հարազատաց. թ. Ը, 152։ Յայտնի է՛ թէ արինակութենէ և խնամութենէ զատ և նոյնչափ զօրաւոր և ազգային բարուց և կարգաց մէջ անցած ուրիշ կապեր կային, որով կը միամսյին և կը

որ չարաշար կային ի մեծի նեղութեանն; Վասն սրոյ և նոքա զանձինս ի մահ մատնեցին, ոչ ինչ զանգիտելով

դանակցէին հին առենը իրերաց հետ հայ գերդաստանը:

Ա. Դայեկուրին . Ընդհանրապէս արքայորդիք և նախարարազունք իրենց հօրը ապարանից մէջ չէին մեծնար. (մենք Յ. Ա., 14, ճ. 1): Թագաւորին հետ սերո կապակցութիւն հաստատել ուզող նախարարք արքայորդուց դաստիարակութիւն կը ստանձնէին, և իրենց հեռաւոր գաւառները տանելով անդ կը մնուցանէին ու խնամէին զնոսու: Ասորին գերդաստանաց տեարք ալ զնոյն առնէին աւելի հզօր և ազգեցիկ տանուտեարց զաւակաց համար, հօրեմնուն պաշտպանութիւնը ապահովելու: Նպատակաւ:

Բ. Կարենակցուրին , մննդակցութիւն . Դայեկուրին և դայեկուրուցն, ինչպէս և սոցա երկոցունց գերդաստանաց մէջ, հանգոյցը աւելի զօրաւոր կ'ըլլար՝ եթէ դայեկուր կամ դաստիարակիչը իւր տիկնոջ կամ ազգակից կոոչ կամամը մնաւցած ըլլար զմանուկն:

Ա. Կը կը զօդիւք՝ մասամբ կ'ամուքէին և կը նուազէին տանուտերական դրութեան ազէւները, ու սերո բարեկամութիւն և նիգակակցութիւն մը կը դոյսանոյր ինքնագուսիս և զոռոզ նախարարութեանց մէջ, որոց թիւը երբեմն հարիւր անցեր էր: Եթէ պրավիժ կարդ և սովորութիւն մը ըլլար, հզօրագոյնքն զոկարան անարգել պիսի խորուակէին և կուիք և պատերազմք աւելի յաճախ պիսի ըլլային:

Ա. Մարդ բարդ յայդ զօրաւոր են տակաւին Զէրքեզաց մէջ, մէկ կնոջէ կամ կերած բան և աղջկան մէջ ամուսնութիւնը արդելեալ է: Դայեկուրինը և կամենակցութիւնը ոչ միայն երկու ընտանիս, այլ այդ ընտանեաց ցեղերը իրարու կը զօդէ ու կը միացնէ: Եթէ դայեկուն ցեղին վրայ յարձակում մի ըլլայ, ինամեալ ար-

դուն հայրը իւր ցեղովը զայն պաշտպանեւ լու պարտաւոր է. ինչպէս և այդ վերջինս եթէ վտանգի մը հանդիպի, պէտք է որ իւր զաւակաց դայեկակ եղող համըրէն ցեղակից իրեն օգնութեան վազեն: Այդ դաշնակցից ցեղերը զաւակաց թիւէն շատ աւելի կրնան ըլլալ. Վասն զի որչափ հզյակապ և զօրաւոր ըլլայ ցեղապետ մը, անոր հետ բարեկամութիւն հաստատելու նպատակաւ զաւակը ինամել ու զող ցեղերն ալ նոյնչափ բազում կ'ըլլան. Վասն որոյ տզան մէկ երկու տարի կամ մի քանի ամիս մէկ ցեղի մը հիւր մնաւէն ետքը, ուրիշ ցեղի մը քով կը փոխադրուի հաճութեամբ հօրն, և որքան ցեղերս քով բնակած ըլլայ, նոցա ամենուն նես մննդակից և եղբայր կը համարի: Այդ եղբայրակցութեամբ արեան վրէմինդրութիւնը (vendetta) պարտաւորի կ'ըլլայ համօրէն դաշնակից ցեղերու մէջ. անանկ որ եթէ մէկ ցեղէ մնարդ մը սպանուի, միւսները պարտական են նորա վրէմիլ լուծանելու: Այսու ամենայնին կամենակցութիւնը այնքան յարկելի է, որ եթէ մէկը իւր թշնամիներն հալածուելով անհարին վրանանդի հանդիպի, բաւական է որ անգամ մը այդ թշնամեաց միոյն մօրը կամ նորա ցեղակից մէկ զնոջ գիրկը ապաւինի և նորա ծոցը համբուրէ, անուհան կաթնակից կը համարուի և ոչ որ կը վասէ նմա: — Թէպէտ կամ երբեմն զաւակունք՝ որը իրենց հօրը տանը կը մնան, բայց Ընդհանրապէս ցեղապետի մը համար անվայիլ և ամութ սեպուած է որ զիւր որդին քովը պանէ, զիրկը առնէ կամ զգուէ զայն. նա մանաւանդ պէտք չէ անզամ որ ճանչնայ զնա, այլ յանձնէ սուարաց և իրեւ հեռու ինամել տայ: Խոկ դայեկակ իրեն յանձնաւած տղան սովորաբար մինչեւ որ 14 կամ 15 տա-

իբրև զանարի վասասիրոս, այլ յոյժ քաջութեամբ պլըն-գէին զանձինս, զի թերևս կարացեն փրկել զնոսա ի սեծամեծ հարուածոցն:

449 63. Եւ իբրև հասին ի գուռն արքանի<sup>1</sup>, և ի մեծի զարուշաթու զատկին յանդիման լինէին մեծի թագաւորին: Բայց թէպէտ և տեսանէին զեղբարս խրեանց ի մեծամեծ վիշտս տառապանաց, որ վասն անուանն Քրիստոսի ճգնեալք էին պնդապէս, ոչ ինչ տրտում և տիտոր զերես ցուցանէին հրապարակին: Եւ որչափ նոքտ զուարթապէին երևէին ամենեցուն, առաւել զարմանային շարասէրքն:

64. Եւ զի օրէնք էին յառաջ ժամանակաւ, յորժամ ի Հայոց այրուծի ի գուռն երթայր ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք, այր ընդ յառաջ յզէր, և հարցանէր զաղցյն և զիսազազութիւն Հայոց աշխարհին. և երկիցս և երիցս անզամ զնոյն առնէր, և զհանգէս զնդին ինքնին տեսանէր<sup>2</sup>: Եւ յառաջ քան ի գործ պատերազմին հասանել, զգալին իսկ առ նա՛ մեծ չնորհակալութիւն համարէր, և առաջի աթոռաւակցացն խրոց և ամենայն մեծամեծացն՝ ամենեցուն գովութիւն մաստցանէր. և յիշէր զնախնեցն զվաստակս, և զառն առն քաջութիւն պատմէր նոցա:

65. Իսկ այն օր և ոչ մի ինչ յայսցանէ ամենեւին ինչ ոչ յիշեաց, այլ իբրև զշարագի մի՛ ոչ ևս գագարէր յուղել և շարժել զրուք ձմերայնոյ. որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ ալէկոծ խովութեան. և ոչ գուղնաքեայ վեր ի վերոց, այլ անզստին յանդնդոց բարձրանալ փրփրել կուտակել՝ վիշտապանայն որոտալով, գաղանաբար գոչերով առ հասարակ գողացուցանէր զտիեզերական իշխանութիւնն, որպէս վլեալ տարածանիցի համաստարած ամենայն ի վերայ լերանց, խորոց, ձորոց, ապականեալ միանգտամայն զլայնութիւն գաշտացն վայելչութեան<sup>3</sup>:

բեկան ըլլայ, ձիավարութեան և զինա-

շարժութեան հրահանգաց և խաղերու-

կատարելապէս կը վարժեցնէ, Առվիա-

սային լեռնաձորոց և ռուսական տա-

փերուն (steppes) արկածալց արշաւա-

նացը կ'ընդելացնէ, ու այնուհետեւ կը

առնի իւր հօրը կը վերադարձնէ:

1. Յամի 449. զարուն:

2. Զօրհանգէս' Revue կ'ըլլար, յո-

րում թագաւորը ներկայ կը գտնուէր:

3. Վահեմ և առաւոր նկարագրութիւն

Հայոստանի ձմերան և բուքին:

66. Մոնղերով բարբառ արձակեալ և ասէ. «Երդուեալ իցէ իմ՝ յարեգակն ի մեծ աստուածն, որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և ջերմութեամբն կենդանածնէ զամենայն գյացեալն՝ եթէ վաղիւ ընդ առաւատն, ընդ երեւումն պանչերւոյն, ընդ իս զիւրաքանչիւր ծունը նմա ոչ կրկնեսջիք՝ խոսսովանելով զնա ասաւած<sup>1</sup>, ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնս չարշարանաց ի վերայ ածերով, մինչև ակամայ կատարեսջիք զկամս հրամանաց իմոց »:

67. Իսկ հաւասացեալքն հաստատեալք ի Քրիստոս, ոչ ի սառնամանեաց ձմերանւոյն հովանային, և ոչ ի սապոյ խորշակին ջեռնուին, և ոչ յահագին ձայնէն սարսէին, և ոչ ի սպասնալեաց տանջանացն զանգիտէին. այլ ի վեր հայեցեալք՝ զզօրութիւնն Քրիստոսի յօդնականութիւնն եկեալ տեսանէին. և զուարթագին դիմոք և համեստ բանիւք յառաջ մասուցեալ՝ տային պատասխանի թագաւորին:

68. «Խնդրեմք ի քէն, արքայ քաջ, ունին դիր սակաւ բանից մերոց, և քաղցրութեամբ լուր զոր ասելոցս եմք: Քանզի յիշեցացանեմք քեզ զժամանակն Շապհայ արքայից արքայի, որ էր հայր հաւուն քո Յաղկերտի<sup>2</sup>.

1. Յաղկերտի պահանջած խստովանութիւնը խորշեաց նիշային կամ ազգմէն է զոր Բարսէք մինչէ ցայձմ՝ կընեն օրը երիցա, առաւօտը, օրհասարակի և իրիկուան, սրուէ և պատուիրեալ է ի Մայնո-Խրատ:

«Երկրոգագեմք պերճապայծառ և քաշաձի Արեգական. երկրոգագեմք լոյնաւածաւալ արտօրէից աստուածոյն՝ Միհրի ճշմարտասիրի և իմաստնոյ, որ հազար ականջու ունի, բիւր աշխաւու. բարեկազմէ և ե գերազոյ, ամենադէտ, հզօր, անքուն և միշտ նակօզ: Երկրոգագեմք Միհր աստուածոյ տեառն ամենայն աշխարհաց, որ Ահուրամազսա արար պայծառ քան զամենայն Եազատս երկնային: Միհր զօրավիզն ըլլան Միհր և Ահուրա > և այն: Երդումն յանուն Միհր դից կ'ըլլայ. (տես Քանոնփոնի Կիւրամարզին մէջ Արտա-

ւազայ ընդ Կիւրոսի խօսակցութիւնը և յԵղիչէ Յ. Ը. 108): Բայց Միհր՝ որ ի սկզբան ասրբեր էր ի նիւթական արեգակն, խանուեցաւ այս վերջոնյա հետ. Տես զՄիհր-եաշդ յԵջ 136:

2. Յաղկերտ ի էր որդի Վահամայ իի, որդւոյ Յաղկերտի Առաջնոյ: Յաղկերտ Ա. և ուրեմն հաւ Յաղկերտ իի: Արդ Յաղկերտ Ա. ըստ ոմանց էր որդի և ըստ պէլոց եզրայր Վահամայ Դիմ որում և յաջորդեց: Վահամ Դի ալ ըստ ոմանց որդի էր Շապուհ երրորդի և ըստ այսոց՝ եղբայր նորա: Այս վերջնոյս ատենը Հայաստանը բաժանեցաւ ընդ մէջ Հոռոմնց և Պարսից: Նախարարաց ակնարկածը Շապուհ երրորդն է, որ ըստ Եղիշեայ է հայր Յաղկերտի առաջնոյ: Շապուհ երրորդի մահուան թուականն է 379-380. անոր յաջորդեց որդին Արտաշեր Յ. 379

և ետ նմա Աստուած զերկիրն Հայոց ի ժառանգութիւն սովին օրինօք, որով և մեք իսկ վարիսկը այժմ, և հալքն մեր և հաւքն հարցն մերոց կացին նմա ի ժառայութեան վաստակս, և սիրով կատարէին զամենայն հրաման բանի նորա, և բազում անգամ ի նմանէ մեծապարդեւք լինէին: Եւ յայնց ժամանակաց մինչեւ ի քո հայրենի աժոռով և մեք զնոյն ժառայութիւն ժառայեցաք. բայց թերես քեզ լաւագոյն քան զառաջնոցն »:

69. Զայս ասելով ցուցանեին զքաջութիւն արութեանցն լաւագոյն քան զառաջնոցն ըստ զինուորութեան կարգի<sup>1</sup>: Իսկ զմտից և զսակից, և որ այլ ևս էին հարկք աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նորա երթայր յարբունիս. « Նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր աղաստ<sup>2</sup> ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և զու ընդ հարկաւ եղիր. և մեք առ

383. ամա յաջորդեց եղբայրն Շապուհ դ 383-388. Շապուհ երրորդի որդին կամ եղբայրն Վռամ դ 388-399. այս վերջնոյն յաջորդեց Շապուհ երրորդի որդին Յաղկերտ առաջին 399-420:

1. Այս քաջութեան գործերս վուշանաց պատերազմին մէջ եղած էին Մէրփի մասերը, որոյ արևմտեան հիւսիսային կողմերը կը գտնուին այժմ թէքէ թիւքքմէնք՝ որք սիմբան յոդնեցուցին զբանակս ինուսաց: — և Լուեալ արբայրն Յաղկերտի զման առն Վարդանայ, յանաւոր սուգ ընկլմեալ խոռվէր, յիշելով զքաջութիւն առնն, և զլաւութիւնն՝ զոր արարեալ էր ընդ թշնամիս բազում անզամի վերայ աշխարհին Արեաց՝ եցոյց».

Փարզ. 215:

ԶՊԿոնդեանս ամբաստանած ատենը դատաւորը այսպէս կը յանդիմանէր զնոսա. և Ապանէք զմոգեանն, կորուսէք ձերով կախարդութեամբ զամապիսի քաջայր գլարդան, զի օգտակարութիւն էր Արեաց Տեառն. և զմեծամեծ գործոց նորա յիշումն առ Արեաց աշխարհին, զոր բազում զօրագլուխը և այլ Արեք յիշեն, ընդ որո և նորս կուի եղեալ էր.

այլ և զոր իսկ աստուածանման տեամն իւրովք աշօք աեսեալ էր ի Մարգիռոսութեանց քնորա քաջանորութիւնն»: Նոյն, 233: — Գմբազդաբարը ժամանակակից պատմագիր աւելի մանրաման տեղեկութիւնն չամն մեզ այդ հեռաւոր և դժուարին տեղեաց մէջ վարդանայ կանկնած յայթանակաց վրայ. Բնուգէս և ցաւալի է որ տասն և շոր գար եռքը հիւսիսային մեծ տէրութեանն մը կողմանէ նոյն վայրերը զրկուած երկու հայ զօրավարաց՝ Լազարէֆ և Տէր Պուկասօֆ, մին կոնխանս մահուամբն, միւսը պաշտանական գմբարութեանց հանդիպելով, արգելուեցան իւրեանց պատերազմական հանձարը անդ ևս հանդիսացնէլէ:

2. Եղիշեայ այս խօսքէս մարդ է հետեցնել՝ թէ զազասս ի շինականաց որոշոց գլխաւոր հանգամանաց մին՝ հարկ շվարելնին էր: Միանձանց ճառին մէջ կ'ըսէ. և Ազատ եկեղեցի անկաւ ի ժառայութիւն հեթանոսաց և սուրբ քահանացին յանորէն հարկահանաց և: Ազատաց ուրիշ արտանութեանց վրայ տես եր. 189. Ցն. 1. և այն:

սէր քայոյ տէրութեանդ ոչ ինչ ընդդիմացաք քեզ։ Արդ վասն Էր յուղեալ իցէ ցասումնս այս ի վերայ մեր, առա դու մեզ զպատճառս վնասան։ եթէ օրէնքն մեր պատճառք իցեն անվասառակ լինելոյ առաջի քայ»։

70. Խոկ շարադեն լի ամենայն նենդութեամբ՝ զերես ի մի կոյս գարձուցեալ, և ասէ. « Վնաս՝ համարիմ՝ ընդունել ի դանձ արքունի զհարկս աշխարհին ձերոյ, և անօգուտ զքաջութիւն արութեան ձերոյ. քանզի տղի ասաբար մնլորեալ էք ի ճշմարիտ օրինացս մերոց, և զատուածս անարգէք և զկրակ սպանանէք և զջուրս պըզ-

1. Բաղանա վանս, որ մարդ է ևս ընթեռնուլ վնաս, յորմէ վանսացար կամ վանմարար. վնասակար, չարագործ ավանս անվեսաս։ Արդի պարսկէն կիշեմն, կիշեմնցար, որ էծորդ է առաջնոյն. քանզի վ յաճախ կը փոխուի ի չ:

2. Սպանանել կ'ըսէին Պարսիկք փոխանակ մարել ըսելու, որովհեռե կրակը չնշաւոր հոգի մի համարեալ էր Ահաւորիկ կապեալ քահանայից դէմ եղած ամբաստանութիւնը յատենի արքային. « Ահարեցէք զատորուշանսն, սպանեցէք զայնզիսի ճոխ կրականի, որ յաստուածոց չնորհեալ Արեաց աշխարհիս ի պահպանութիւն վասակար իրաց, որ ի թշնամեաց ուստեք յարձակէին ի վերաց մեր և յամենայն կողմանց, այն կրականոյն անվնաս պահեալ էր դեմք և պահէին ։ Փարպեցի. 233: - Յայսադլա-Յայսադ անուն Բահլաւի զրութեան մէջ կը գտնեմք Հետապայ պատուիրանքը. « Պարտ է տան մէջ պաշշաճ եղանակաւ պահէլ զկրակ, որպէս զի կանանց բեզմեաւորութիւնը չպակասի և արանց կորովը շտկարանայ։ Եթէ պաղած ածուխները հեռացնեն, այնքան հանգըստութիւն կիմանոյ կրակը, որպան երբ մէկուն հանդեռները մարդուի։ Երբ մանկ մի ծնանի, պարագանեց գիշեր կը մնանի. բուսոյն՝ միայն ջրով. մարդկանց գործածածը, ինչպէս և Վամականը, մի միայն կերակրով կը նարակի, իսկ վաղիցը ոչ կարու է կերակրով և ոչ ջրոյ։

Հերոդոտոս կըսէ թէ Պարսիկք երեք չեն պղծեր զկետու մարմանց կարեար, և ոչ խոկ ձեռուընին կը լուանան անոնց

ծէք և զմեռեալս ի հող թաղելով գերկիր ապականէք,  
և քրափեկար՝ չտնելով ոյժ տայր Հարամանոյ, և որ մեծ

մէջ, ուրիշներու ալ թող չեն տար որ  
ընէն. վասն զի գեաց մեծ յարգանք  
ունին: Բայ մազգէական մատենից, Որ-  
միզդ սաեղծեց աշխարհիս գետերը Ալ-  
պուրզ լեռան կազերէն, ի պահպանու-  
թիւն և յաճեցումն իւր արարածոց և  
արարշութեան: Խակ թէ ուր պարտ է  
զնել զմեռեալս, աես յէջ 125-127:

1. Համօրէն ապակիրք՝ քրտիկար .  
միայն թէ ոսուիս ապակիրք՝ քրտար: Եր-  
կու տեղ գործածած է Եղիշէ զրառա-  
ւիս ապանանել Վասակ զօրեղբայր իւր  
զնապինակ, և ինքն տարաւ զուրու-  
թիւնն իրըն քրտիկար յարգանիս > Յ. Յ.  
կ. 37: — Ի հայկակեան բառարանի  
քրտիկար բառ անյայտ: որպէս պաշտօն  
և պատիւ երկասիրութեամբ և ընտրո-  
ւութեամբ, և պաշտօնեայ երկասէր, հա-  
ւատարիմ, երախտաւոր > մեկնութիւն  
մը որ սոսուքարանութեան վրայ չէ  
հիմնեալ, այլ միայն իմաստին և տեղ-  
ույն համեմատ ըստ կարի յարար-  
ցուած: Արդի պարսկէրէն քիրտիկար  
քայլ, է ածական, և արարագործ >,  
և ամենակարող > (Ասուուած). և մակ-  
րայ՝ կամովին >, և կիսութեամբ >:  
Խակ քրտար յարկ է գործ. աշխա-  
տութիւն, արուեստ, վիճակ, զրազ-  
մանք, զործ (բարի կամ չար) >: Ար-  
դի պարսկէրէնով կարելի չէ ուրեմն  
զնացուցիչ մեկնութիւն մի տալ: Յազ-  
կերս ի նախարարաց ոչ սոսակ կու-  
ղէ և ոչ քաջութիւն, և զաստածս ա-  
նարգէք, տու, զիրակ սպանանէք, զջուրս  
պղձէք և զերկեր ապականէք >. ոսրա  
ունիներ են. յորոց պարուէն խորչիլ  
Հայր. Բնակ է այն հիմներորդը կամ գո-  
րելի բանը՝ որոց շատարուելովն ոյժ  
կառանուր Հարաման:

Անշուշտ պարսկական դնին պատուի-  
րած մէկ զործն էր: Արդ բազանու և

փաչլաւի մատենից մէջ յաճախ կը տես-  
նեմք քրտար, որ կը գրուի և կը հաշուի  
ևս քրտիկար (աես Մայնօխրատ . West,  
յէջ 121) յոզնակի՛ քրտիկան: այս է  
«գործք բարիք, արդիւնականք արժանի  
վարձուց, պատուիրեալ ի մազդեզն դե-  
նէ»: Այս երեսուն և երեք տեսակ  
են և մի առ մի նշանակեալ են Մայ-  
նօխրատի լի զիխոյն մէջ: զիխուորներն  
առանձնին ևս եղեալ են ի գլուխ Ու,  
որոյ թարգմանութիւնը կը զնեմք ըս-  
տորե:

«Մեծ քան զամենայն բարի զործն  
(քրտար) առասանենութիւն: երկորոր՝  
ճշմարտախօսութիւն և մօտ ազգակցաց  
խնամութիւնն: երբորդ՝ եղանակային  
տակը, չորրորդ՝ զամայն կարգու պաշտա-  
մանց կատարել: հինգերորդ՝ աստուած-  
պաշտութիւն (եազէշնի կազտա) և  
օթեանս կարաւանաց կանգնել: վեցե-  
րորդ՝ ամենուն բարիք ուզել: եօթեն-  
որդ՝ յարգել զրարբն (նուշարմի՝ որ  
թարգմանի նաեկ աշոք նայիլ): վինա-  
սկար անհները սպանանելն ալ յոյժ  
արդիւնական գործ մի է:

Ե և քրտիկար ածական, քրտիկար  
մարտ՝ մարդ որ առնէ զործն արդիւ-  
նականս:

Բայց ամենէն աւելի զործածուած է  
քրտար ուշքար < բարի զործք և պատ-  
շաճք >, կամ՝ քար ու քրտար՝ «պատ-  
շաճք և բարի զործք»: ասի ևս սոսանց  
շաղկապի քրտար կամ քրտիկար: փա-  
քրտարացար բուխոյն պուտոնն < ի բարի  
զործն փութաջան լինել >:

Արդ՝ «քրտիկար շամնելով ոյժ տայր  
Հարամանոյ >, ըսել է թէ զգատուի-  
րանս մազդեզն զենի (զարդիւնական և  
զբարի զործն) շկատարելով՝ կը զօրա-  
ցնէք զԱրհնմի. քանզի այս վերջնոյս զօ-  
րութիւնը ամենայն շարեար կ'աւելինար

քան զամենայն, զի հանապալ ի կանայս ոչ մերձենայք<sup>1</sup>. և մեծապէս լինի գիւաց խնդութիւն, շիրամերով ձեր և չպահելով զամենայն կարգս մողաց : Տեսանեմ՝ զձեղ իրրի զիսաշինս ցրուեալս և զփայրատեալս յանապատի. և յորժ զեղջ է մտաց ինոց, թէ գուցէ ասսուածքն բարկացեալ վասն ձեր՝ ի մէնջ վրէժ առնաւցոն: Այլ դուք եթէ կամիք կեալ և կեցուցանել զանձինս ձեր և մեծարանօք անդրէն յուղարկիլ, զոր ասացի՛ վաղիւ վաղվազոկի կատարեցէք<sup>2</sup> » :

ու բարի գործովք և աղօթիւք կը նուազէր: Տես ի վերոյ Արօշ, էջ 123: Խոկ և նոր տարաւ զտերութիւնն Ախնեաց իրրի քրպիկար յարբունիս ։ կը նշանակէ թէ Ախնեաց իշխանը Վաղինակ դաւաճան և յանցաւը գտնուելով պետութեան գէմ, զտերութիւննորա տարաւ կամ գրաւել տուաւ Վասակ յարբունիս իրրեա գորժ բարի, արդիւնակն եւ արծանի վարժուց: Թէպէտե համօրէն տպագիրը քրտիկար դնեն, ու Միթմարեանց օրինակին ետեւը դրուած ընթերցուածքն ալ կարծել տան մեզ՝ թէ համայն ներկայ գրչագիրը ալ զնոյն ունեն, այսու ամենայնիւ տարակոյս չունինք որ ձեռագրի սխալ մի է հասարակ ամենայն օրինակաց, որպէս Երան և Տաներաւ: Քրպիկար ինչպէս ուրիշ մազդեղն կրնից յատուկ բառեր, մահմետականութենէն եալը պարսկէրէնէ ի բաց թողուած էր (այժմ կը գործածուի արարերէնն Ակվապ). հաւանական է որ օրինակողք չաւկնալով թէ ինչ է քրպիկար, ամու ամենէն աւելի նմանող արդի պարսկէրէն ցրտիկար բառը դրած են:

Ուժ Ալենասայի Լեզուաւ ոճ. Տես Պահլավ-Պազանd Glossary, էջ 171. Ամառքրիդ՝ Օձուու:

1. Զինուորական առաքինութենէն ետքը, կ'ըսէ չերտուասու, բազմորդութիւնը արութեան գերազոյն նշանը համարուած է Պարսից մէջ. ամէն աւրի արքոյն ամենէն բազմաթիւ զաւակաց տէր

եղողներուն առաս պարգեներ կը իրկէ: Զօրութիւնը բազմութեան վրայ կը դընէն: զիրք Ա. 136: Շայասդ-Լա-Շայասդի մէջ ալ գրուած է, թէ որ որ սերունդ ունենալու կը ջանայ կը զանձէ բազում գործս բարիս (քրպա) . (Տես զւ. ժ. 22) Տես և ստորե 84, Ճ. Յ: 2.

2. Ահա մազդեզն արբայի պարտականութիւնները ըստ Այսնո-Խրատի, զւ. Ժ. ։

«Այն է բարի թագաւոր՝ որ զաշխարհն չէն, զաղքասս անվրզով (պահէ) և զձմարիս օրէնս և զկրօնս ունի և հրամայէ, և զմոլար օրէնս և զկրօնս խափանէ, որ զնուրն և զջուրս լու կը պահէ, որ կը զարգացնէ զաստուածուաշ-տութիւն գրարի գործս և զպատշանս (քար ու քրպա), և բարեկամութիւն և միջնորդութիւն կ'ընէ աղքատաց, և զանձն և զկեանս նուրիք զամն մազդեզն գենի: Եւ եթէ ոք մոլորի Աստուծոյ հանապահէն, մէկէն կը հրամայէ որ անդ գառնաց, և կը ձերբակալէ զնա և կը գերագարձնէ ի հանապարհն Աստուծոյ. որ ի ստացուածոց իւրոց հանէ բաժն Աստուծոյ, արժանեաց, բարի գործոց և անանկաց, և կը հրամարի ի մարմնոյ զամն հոգւոյ: Այդպինի բարի թագաւոր մը ի հրեշտակաց և ի հրեշտակապետաց (եազանուուամիշարէնաց) համարեալ է ։ — ։ Այն թագաւորը որ այդ բաներդ ւըներ, Արհմէնի և զիւաց նմանի ։

71. Յայնժամ երանելի նախարարքն առ հասարակ զձայնս իւրեանց բարձին և առեն յանդիման ամենեցուն.  
«Մի դու, արքայ, և մի զայդ այլ առ մեզ ասեր. քանզի ոչ է եկեղեցի՝ շինուած մարդոյ, և ոչ տուրք արեգական, որպէս դուդ այլ ընդ այլոյ կարծես՝ թէ ասաւած իցէ, ոչ միայն զի ասաւած չէ, այլ և կենդանի չէ: Այլ եկեղեցիք ոչ են պարզեք թագաւորաց, և ոչ արուեստ ճարտարաւթեանց. և ոչ գիւտք խմասնոց, և ոչ աւար քաջութեան զինուորաց, և ոչ պատիր խարէութիւնք գիւաց. նա և բնաւ խակ ամեննեխն զինչ և ասացես յերկրաւորացն, կամ ի վեհից կամ ի վատթարաց, բնաւորեք եկեղեցի ի նոցանէ ոչ գացի: Այլ չնորհք են մեծին Աստուծոյ, ոչ միում ումեք ի մարդկանէ տուեալ, այլ ամենայն բանաւոր ազգաց, որք վիճակեալք են ի բնակութիւն ի ներքոյ արեգականն: Հիմոնք նորա եղեալ են ի վերայ հաստատոն վիմի. ոչ ներքինք շարժել կարեն, և ոչ վերինք գրգռւեցուցանել: Եւ զոր երկինք և երկիր ոչ գողացուցանէ, մի ոք ի մարդկանէ խրոխտացի յագթել նմա: Հապա, որով օրինակաւ զինչ կամիս առնել՝ կատարեա. պատրաստ եմք ամեններեան առ ամենայն մեքենայս հարուածոցն տանջանաց՝ զոր սպանացար, ոչ միայն ի չարչարել, այլ և ի մեռանել: Եւ եթէ գարձեալ ևս զնոյն բանս հարցանես, ի միոջէ միոջէ լուիցես առաւել քան զգոյն պատասխանի »:

72. Յայնժամ դառնացեալ քան զլեդի թագաւորն, փուզանէր անդէն ի փորին զծավ կամսաւոր մաղձոյն իւրոյ, և ընդ քիթոն և ընդ բերանն առ հասարակ գորոշի յերմախառն եղանէր, իրքն ի սաստիկ հնոցէ ծուխ թանձրացեալ: Եւ առ չանդարտել սրտին իւրոյ՝ կոսորէր զգօրութիւն մարմայն, և ծակոտէր զբաղմամթեր ամսն խորհրդոցն. ցրուէր և վասնէր զամենայն խորհումն նենզութեան: Եւ զոր ոչ երբեք կամէր իւրոյ սիրելեացն յայտնել, ակամայ առաջի ծառայիցն Քրիստոսի մերկանայր և դնէր զամենայն կարգաւ:

1. Խմա՞ ոչ տաճար և ոչ խակ ժողով սասրե յայտնի կ'ըլլայ: — Պահման հաւատացելոց, այլ հաւատք եկեղեցւոյ, Եշշդի մէջ ալ սոյն իմաստով զսրծաքսոնեւթիւն, ինչպէս որ քիչ մը ծուած է քիլխակի:

73. Երեքկնէր և չորեքկնէր զանսուտ երդումն յարեգակն, և ասէր այսպէս. « Ոչ կարէք աւելի զանխար ամուրս իմ. և ոչ որում ցանկացեալլ էք՝ վաղվաղակի տամ' գոտանել ձեզ. այլ զամենեսեան զձեզ և որ ի գընդիս են՝ չարաչար կապանօք ի Սակաստան<sup>1</sup> տամ' անցուցանել ընդ անձանապարհ տեղիս, որ և բազումք ի ձէնջ ի խորշակէ յերթալն սատակիցին, և մնացեալքն անկցին ի բերդս ամուրս և ի բանդս անելս: Եւ ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւ հանդերձ փղօք, և զիին և զորդիս ի խուժաստան<sup>2</sup> տամ' խաղացուցանել. և զեկեղեցիս՝ և զոր անուանէք վիսյարանս<sup>3</sup> քակեցից,

1. Սակաստան, որ է Սակա-ստան, բազանդ՝ Սակասդմ, երկիր Սակաց կամ Ակիմաց. պյառէս կը յորջորջէր Փարսից պետութեան արեւելան նահանգներէն մին՝ որ սահմանակից էր Հնդկաց, և որ այժմ Աֆանիստանի մէջ կ' ինայ ու կը կըէ տակաւին իւր հին անունը > Աէիսպան : Անդր-Ալբուսեան խուժգուժ ազինք՝ Մասագէթք (Մասրութք) կամ Ակիմթք, որոց գէմ Կիւրս պատերազմի գնացեր էր (559 նախ քան գիրիստու), վանեալ վերջեր ի Փուշաց, Խաղացեր էին դէս ի հարաւու և եկեր հաստատուեր էին այն մեծ լճին բոլորտիքը որուն մէջ կը թափի Հելմէնոտ գետը. վասն որոյ և այդ կողմերդ նորս անուամբ Սակաստան կոչուեր էր. քանզի Պարսիկք՝ Սակ կ' անուանէին զԱկիմթա: Մէկ մասն ալ աւելի դէս յարել գնացեր էին ի Գասպու, մինչեւ ինդոսի հարաւու հարաւային դաշտավայրը, որ այս պատճառաւ Հնդկային Ակիմթիա ըսուեցաւ: Բուն Պարսկաստանէ ի Սակաստան երթալու համար ահազին անապատներէ անցնելու է: Մասուտի կը նկարագրէ զերկիրդ իբրեւ աւազուտ յոյժ, ուր իժք և այլ զանազան օձք կը վիստան:

2. Խուժաստան կամ Ելիմացիք (Sassiana ըստ Յունաց և այժմ Խուզիստան)՝ յելից կալով Դկլաթու և ի մը-

տից Պարսից > (Խորին . Աշխա . 1.2), բուն Պարսկաստանի մասն համարեալ էր: Խուժաստանի մէկ մասը լեռնոս է, մնացածը ջրատական հողերէ բաղկացեալ յած տեղեր են՝ որ Բաբելոնստանի հաւասար բարեբեր են: Յանցուորը Սակաստան կը խրէին որ անդ մեռնի. իսկ կինը և որդիքը Խուժաստան փոխադրուելով, ուրանոր արքունի կալուածոց մէջ աշխատելու պիտի գատապարսուէին, պիտի կորնցնցէն իրենց ազգութիւնը և մնաւանիքը պիտի ջնջուէր: Մահապարսին պատմուելովն այն ասենուան օրէնքը չէին յագենար, այլ պարս էր նորա գերգաստանն ալ ցրուել: Տես Յ. Գ. 44. և Յ. Զ. Յ. < Եւ եթէ ստամբակեալ որ ընդդէմ դարձցի, ինքն մահու պատուհաս ընդունի, և կին և որդիք այնպիսոյն անաշխարհներ եղեալ յարբունիս երթիցեն >: — « Որով ընկալան զգին մահուն իւրեանց, ուստեղը և դասերք և ամենայն ընտանիք իւրեանց յանաշխարհներ զրեցան, և ամենայն հայրենի գաւառք հատան ի նոցանէ >: — « Դմինդակ օրէնք մ'ունին Պարսիկք, կ'ըսէ Ամիմանսո Մարկեղինոս, ըստ որում մէկ մարդոյ յանցանաց համար բավանդակ զերգաստանը կը ջընջուի >. Ի՞նք, Յ:

3. Ա հայրան յն . Աքրանքու, և մար-

քանդեցից և յապականութիւն դարձուցից. և եթէ ոք ընդգեմ դարձեալ դացի, կոխան եղեալ դազանաց՝ անողորմ մեռանիցի<sup>1</sup>: Եւ զամենայն ասացեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհին »:

74. Եւ փաղվազակի հրամայեր զարտուական նախարարն համել մեծաւ անարդանաք յերեսաց իւրոց, և զգուշութեամբ հրաման տուեալ դահճապետին՝ առանց կապանաց յիւրաքանչիւր վանս պահել, և ինքն զառածեալ անդրէն դառնայր անմիթիթար որամութեամբ յօթեան ագանէր<sup>2</sup>: Իսկ հաւատացեալքն ճշմարտութեամբ ի Քրիստոս ոչ ինչ երկմութեամբ թերահաւատէին յառաջին խրառուէն ի սուրբ փարգապետացն իւրեանց. այլ տակաւին խնդրէին հնարս իրացն, թէ որպէս զանձինս

տիրոսաց կատարման կամ թազման տեղուայ վրայ չինեալ տաճարն կամ ժամառուն, յորում ամփոփին երեելի նըշխարք: Վիշայայ չին պարսկէրէն է վկայ:

1. Փղերու կոնկուել տալու սպառնալիք տոկ յոխորուանք մի չէ, այլ անզմութիւն մը զոր ասփական ինքնակալք չէին խորչեր զործադրելէ: Անտիպոս Եպիփան, որ թագաւորեր ի վերայ Ասորոց և Եպիփանսի 170 տարի յառաջ քանի գիրիստոս, և բազմաթիւ Հրեայս գերի տարեր էր յլոգիստոս, երբ չկրցաւ սոցա ընդունել տալ զափառամենս կոսց, « կոչէր զՆերման փղապետ մեծաւ սաստկութեամբ, վասել զփիլսն ի վազիւ անդր, զի առանց յապազելոյ պատրաստեացէ զինեղէնս ինկալիցմ զայրացուցեալս կնդրկաւ՝ զազանցուցեալս անապակաւ, և հրազդարակ անդէլ թուով իրը 700, անդէլ պատրաստել յահազին պատուհաս ազդին Երբայիցոց: Իսկ փղապետն իրբե լուազիրամանն սաստկութեամբ, կատարեր և ի ժամ անդր զփիլսն պատրաստէր, և այլ սպասառորդն ելնեին կապէին զտառապելոցն զոսս և զնեռուն, և զայլ պահ զիշերապահ չուրջ զնորդ զդուշութեամբ ընդուցալ բարեգի ազգի անդրէն է:

ընդ առաօտն վախճան սատակման մեծաւ ի վերայ ազգին տեսանէին »: Մակարայեց Գիրք Գւ. գլ. ի:

Երբ Մերաւան պարսկական բանակա զՆայաստան կաւերէր, « զարսնց բազմութիւնն տային ի կոխումն փրաց »: Յուզանդ, 14 : — « իրբե էր բանակն Շապէոյ ի Զարեհաւան Բարգլեանդայ, ածին ժողովեցին առաջի թագաւորին Պարսից զամենայն գերին մնացորդաց աշխարհին Հայոց, ապա հրաման տայր թագաւորին զամենայն այր ի շափ հասեալ կոխան արարեալ փզաց, և զամենայն զկին և զմանուկ հանել ընդ ցից սայլից »: Կոյն 176:

Մինչեւ ցամաց սովորութիւն է ի նահանգն Պարուսայ Հնդկաց՝ մահապարանները պառկեցնել ու զլուխներուն վրայ կոխել տալ փղաց, որք կատարեալ փարծութեամբ կը կատարեն այդ դահճական պաշտօնը:

Սասանեանց պետութիւնը սահմանակից էր Հնդկաց, փղերը՝ փղապաններն ալ Հնդկաստանէ կը բերէին:

2. Թէոդոսիոյ տպ. յօրեւանին անկանէր, Միթթ, տպ. գորեւան ազմեր. Ա. Պոլոսյ տպ. յօրեւան ազմեր, « որ ընտրելագոյն թուեցաւ մեզ:

և զսիրելիս հանցեն ի նեղութենէն։ Եւ բաղում՝ անդամ՝ ջանալով, և մեծամեծացն՝ որ օգնականք էին նոցա ի գրանն արքոնի, խոսոմունս մեծամեծո տռաջի դնէին նոցա առ ի յոյս կարառոյ, և ոչ սակաւ դանձս առ ժամայն ծախէին նոցա։

75. Եւ իրրե յամենայն կողմանց եկն փակեցաւ առ նել արգելան նոցա, յայնժամ՝ զխորհուրդն Արքահամու ի մէջ առեալ՝ ազաղակէին և ասէին ի սիրաս իւրեանց։ «Ամենեցուն մեր նուիրեալ և եղեալ զեղբարս և զորդիս և զամենայն սիրելիս ընդ կապանօք իրրե զԱրհակ ի վերայ սուրբ սեղանոյն, ընկալ Տէր զկամաւոր պատարագս մեր, և մի տար զեկեղեցի քո յայպն կատականաց անօրէն իշխանիս այսորիկ»։

76. Մի ոմն ի ներքին խորհրդակցացն<sup>1</sup> արքայի ի ծածուկ ունէր զանքակ սէրն ի Քրիստոս, քանզի մկրտեալ խակ էր յաւազանն կենդանի. և մեծապէս հոգ տանէր հնարից կենաց վշտացելոցն։ Եւ իրրե սոտեղեաց ճշգրտիւ, եթէ զոր բաղում՝ սպառնացսւ թագաւորն՝ զամենայն շարին կամի անցուցանել ընդ աշխարհն Հայոց, թէպէտ և ոչ ամենեցուն՝ այլ սակաւոց ի նոցանէ ուսոյց զիրաստ հնարից, զի առ անդամ մի ի նեղութենէ անտի զանձինս ապրեցուցեն։

77. Եւ մինչ գեռ գունդ կազմէին՝ որ զնոսա շկօթակ արացեն<sup>2</sup> յանդարձ օտարութիւն, որպէս զբաղում՝ նախարարն ի Վրաց աշխարհէն արարին, ի նմին ժամանակի գուժկան հասանէր ի կողմանցն Քուշանաց, եթէ գունդ հատաւ ի թշնամեացն, որ ելին աւերեցին զգաւոս բազումն արքունի։ Եւ այս լինէր մեծ օգնականութիւն նոցա յերկնից։ Եւ անօրէնն ճեպեալ տագնապէր զայրուձին յառաջ արձակել. և ինքն փութով ստէպ զհետ երթայր. և ի խոր խոցեալ զխորհուրդն՝<sup>3</sup> ցրուէր զառաջին հաստատուն երդում։

1. Արեիթ. այլ ձեռագիր, որպէս և ուրանը նոյն կը համարէ զբառս ընդ թեոդոսիու տպ. «մի ոմն ներքինի ի յն. իշխորհու, և լատ. իշխորհիգուս բարութակցացն»։

2. Շկօթակ առնէլ՝ տարագիր առնէլ խարհիկ։  
3. Այսպէս Արեիթ. և Կ. Պոլոս  
ՔՅՄադ. նդիշէի

78. Իսկ երկիւղածացն ջետոն զայս տեսեալ, մեծաւ յուսով աղօթելով առէին միաբան. «Դու Ցէր ամենայնի, որ գիտես զծածկեալս որտից մարդկան, և յայտնի են առաջի քո առենայն աներեսոյթք խորհրդոց, և ոչ ինչ խնդրես վկայութիւն յերելեաց, որպէս զի և զանգործու մեր տեսոին աշքքո, արդ առաջի քո հեղումքը զիանդրուածու մեր: Բնկալ, Ցէր, զծածկութիւն աղօթից մերոց, և կատարեա զմեղ ի հաճոյս պատուիրանաց քոց. զի ամաշեցէ շարն, որ խորխասցեալ մարտնչի ընդ մեղ իշխանութեամբ անօրինին: Շարժեա, Ցէր, զկամակոր խորհուրդն նենդաւորին, և խափանեցն զկամն ամբարըշտութեամբ խորհրդոցն անդրէն ի առւրբ եկեղեցին. զի մի յանկարձակի յափշտակեալ աւերեցի շարաչար ի թշնամեաց »:

79. Եւ անձամբք իւրեանց զայս ուխտ եղեալ անքակութեամբ ընդ Աստուծոյ, զի հաստատոն կայցեն ըստ առաջին խորհրդոցն, պատգամ՝ ի ներքս յդէին զնոյն խրատառոն իւրեանց, իրը թէ կատարեացին կամք անօրէնութեան նորա:

80. Զայն իրքն լուսու թագաւորն, յոյժ ցնծացեալ բերկրեցաւ, կարծեալ զդիսն հասանել նմա յօդնականութիւն, շրջեալ և աւերեալ զհաստատուն խորհուրդու ծառայիցն Աստուծոյ, և ահա մատուցանեն երկրպագութիւն արեգական, պատուեալ զնա զոհիւք և ամենայն օրինօք մոգութեանն<sup>1</sup>: Եւ զայն ոչ կարաց իմանալ ցնուրեան, եթէ անստուեր լոյն արեգականն արդարութեան՝ սպառէր և մաշէր զխաւարային խորհուրդս նորա, և եղծեալ ապականէին զամենայն խեղաթիւր կամն նորա: Եւ կուրացեալ ի ծշմարխտ յայտնութենէն՝ ոչ ինչ իմացաւ զպատրանս խարէութեանն, որով վրիպեացն: Հեղոյր արկանէր առաջի նոցա զպարգևս երկրաւորս, և վերբուտին ամենեցուն զպատիւս և զգահս նորոգէր<sup>2</sup>, յառաջ

տպագիրք. Թէսոդոսիոյ տուկ. «Խոր խոր ցեալ ի խորհուրդն որ աւելի յստակ ուղիղ է»: Տես Յ. Ա. 11. «Յոյժ հաւաքածաւ ի խորհուրդն իւրեանց»:

1. Թէ ինչ արարողութեամբք կատա-

րուած է այդ զոհգ, ուս Զոհագործութիւն, յէջ 168-170, և Յ. Բ. 66. Ծն. 1:

2. Զտանուաեարս իրենց բարձից մէջ կը հաստատէր. քանզի պաշտանանկ և

մաստոցաներով և երեւլի առնելով ընդ ամենայն տիեզերական իշխանութիւնն: Եւ անբաւ առաստութեամբ ազարակս և աւանս միում միում նոցա յարքունուսո չնորհէր, սիրելիս և բարեկամն կարդայր զնոսա . և առհպարտ յանդգնութեան մոտացն կամակորութեան՝ կարծէր եթէ փոխանակիցի ճշմարտութիւնն ընդ ստութեանն:

81. Եւ զայս արարեալ, բազում այրուձի գումարէր ընդ նոսա, և ի մոգացն ոչ սակաւս, աւելի քան զեօթն հարիւր վարդապետ յղէր ընդ նոսա, և զմեծ ոմն իշխան մոգպետ կացուցանէր ի վերայ նոցա: Խոնարհէր և աղաշէր պատուիրելով, թէ մինչ ես ի պատերազմէս դարձեալ դայցեմ խաղաղութեամբ, ձեր արարեալ և կատարեալ իցէք զամենայն ըստ կամաց խոց: Եւ այսպէս չքոյժ և պատուով առաջնորդէր նոցա զերկարութիւն ճանապարհին անդրէն յերկիրն Հայոց<sup>1</sup>: Եւ ինքն աւետիս խնդալիս առաջէր յատրուշանս բազումն, գրէր և ցուցանէր մոգաց և մոգպետաց և ամենայն մեծամեծաց կողմանց աշխարհաց, որպէս դիցն օգնականութեամբ զգործ քաջութեան խմոյ յառաջ մաստոցեալ:

82. Իսկ խոհերականքն այնուհետև յարուցեալ յիւրաքանչիւր խաւարային դարանաց՝ իղձք լինէին վաղվազակի զհրամանն կատարել. ձայն արարեալ յաշխարհս հեռաւորս՝ միանդամայն խաղալ գնալ յերկիրն արևմտից: Եւ մինչ չև հասեալ էին յերկիրն Հայոց, փայտ ընկենուին<sup>2</sup> և վիճակս արկանէին, թէ որ լեզու որում դա-

զած էին և պատիւնին ի բաց հանեալ էր. երբ կոչեցան ի գուան. Տես ի վերոյ 61. Ծի. 4: Դասակարգութիւն մը կար նախարարաց մէջ որ ամենայն նախանձաւորութեամբ կը պահուէր: Հայոց իշխանութեան տկար ատենները Պարսից թագաւորք երբեմն դիրենք ահաւ ձեցնող տանուտեարց աստիճանը իջուցեր և զոմանս ալ վարձարելու համար՝ աւելի վեր գանուողներէն յառաջ անցուցեր էին: Տես զԳահնամակն. Առփերք Հայկ. Պատմ. Ա. Ներսիսի, էջ 32. և Ծի. 111:

— 1. «Յազկերոտ ոչ արձակեաց զբդէշին Վրաց զԱշուշա և զերգուս որդիս Վասակայ, զԲարիկ և զԱտրներսէն (ապազրին մէջ սխալմամբ՝ Ամիրներսէն, աես Որբելեան էջ 99), հայելով ի յառաջիկայ իրացն անյայտութիւն, կասկածեալ զգուշացաւ» Փարագ. 159:

2. Փայտով վիճակ ձգէին. որպէս վէդ կամ ուլին (ոճկ. աշք) ընկենոււ: Մինչեւ ցայսօր Պարսկաստանի մէջ ամէն տարի վիճակարկութեամբ կ'որոշուի թէ որ մասեան (այս է մոգն) որ գիւղը պիտի երթայ: Մոգական պաշտամունքն ալ

սու հասցէ յաշակերտութիւն։ Զի առ հասարակ հրաման առեալ էր յարքունուստ, որպէս աշխարհին Հայոց՝ նոյնպէս և վրաց և Ազգանից և լինաց, Աղձնեաց և կորդուաց և ծոգէից և դասան՝, և որ այլ ևս ուրեք ուրեք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին գըրիստնէութիւն։ Եւ յանզգայ յարձակմամբ յաւարի առնուլ փութային զգանձս սուրբ եկեղեցեացն։ և իրեկ զգեստ այնուհետեւ միմեանց պատահէին։ Եւ լինէր զունդ զօրաց բազմաց, և չարասէրն սատանայ իրբեկ զօրավարի մէջ նոցա երեւէր, և անդադար յորդորելով զամենեսեան ճեզեալ փութացուցանէր։ Կէտ եկեալ զժամանակն՝ զամիսն վեցերորդ<sup>2</sup>, տաղնապէին և ստիպէին արքունի հրամանաւ։

շահու ազրիւր են պաշտօնէին համար, և ամէն զիւղ հաւասարապէս օգտարեր ըլլալուն՝ այս կերպով վիճից տեղի շարքուիր։ Որուամ դասու, այս է որ խմբին, քանզի մոգերն յայլեալ կոզմանց խումբ խումբ համբաց եւած ըլլալու էին, և որովհետեւ քահանայութիւնը յօրդուց յօրդին ժառանգական էր, ի ցեզս ցեզս ալ բաժանեալ էին։

1. Որոյ ուզգականը Դասան։ Թիսուռ-սիս տպ։ Դարսան։ Անունդ ստուգա-րանութեան կը կարօտի։ Պ. Լանկուա կարծէ մէկ Տզանն կոչեալ լեռնային ժողովուրդն են, որ կը յիշեն Մարկե-ղինու և Պրոկոպիոս։ Պրոկոպեայ տուած մանրամատ աշխարհագրական տեղեկութիւններէն յայտ է մէկ Զաննիբրդ կը բը-հակէին լեռնոտ երկիր մը հեռի ի ծո-վէ, որ սահմանապէից էր Յաւանաց կայս-րութեան (որ կը յանգէր յայնծամ ի Ռիտէ Պահապեոց) Լազերու աշխարհին, Հայոց և Տրապիզոնի դաւարին. այս է ուրեմն Խաղակը կամ Ճանիք, զոր Յայնք կը գրէին Զաննի կամ Այսնի։ Մինչեւ Յուսունիսանոսի որերը, Յոնք չէին նուանած զիսպտիս, որք ինքնազլուին էին և ըստհանքապէս դաշնակից Պար-սից։ Պէինիս մեծ Հայոց հիւսիսային

սահմանաց վրայ գոնուող ազգաց վրայ խօսած ատենը, յետ Ազուանից և Վայոց, կը յիշէ Թասի և Տրիար անուն եր-կիրն որ կը տարածուէր ցւերին «Рѣ-гъядрес» (Պարխար)։

2. Այս է Շահութար։ Պարսիկք ի հնուց հետէ արեգակնային տարի կը գործածէին, որ 12 ամիս ունի և մէն մի ամիս 30 օր, ութերորդ ամսու վերջն ալ կը դնէին հինգ օր, Աւելեաց (Փեր-վարուէկան) որով տարին կ'ըլլար 365 օր։ Նահանջ շունէին, որովհետեւ եթէ ամէն շորս տարի օր մը աւելցնէին, այդ օրդ անուն պիտի չունենար. մինչդեռ ամսոյ իւրաքանչեր օրը մէկ մէկ դից նուիրեալ էր. փոխան սորա 120 տարին մէյմը 30 օր կ'աւելցնէին, որով այն տարին 18 ամիս կ'ըլլար։ Յաւելեալ ա-միսոց Պինդէկը կը կոշտէր և ամրող տօնախմբութեամբը կ'անցնէր։ Պարս-կական տարեմուտը, ինչպէս եղիպտու-ցոցը, գարնանային գիշերահաւասարի կը հանգիպէր, որ հիկորուզ կ'ըսուի, որ է հոր Օր։ Ամիսները յաջորդութեան կարգաւ տարիին, երկուրդ, երրորդ և այլն յօրջորջեալ էին, և իւրաքանչեր ամիս մէկ մէկ դից ալ անունը կը կը որում նուիրեալ էր, 1. Ֆերվերտին.

83. « Արինչե ի նաւասարդէ նաւասարդ, ասէ, յամենայն տեղին՝ ուր իցեն ընդ իշխանութեամբ թագաւորին մեծի, բարձցին կարգք եկեղեցւոյ, փակեսցին և կնքեցցին դրունք ոռուր տաճարացն, դրով համարով

2. Արտիսկէկէդ. 3. Խարտաս. 4. Գիր. ջապէս Սելնուքան Մէլէք Շահ Առեթմանը 1089ին Պիէզէք ամիսը վերցուց, ու անոր տեղ նահանջ հաստատեց, և որովհետեւ տարին չիշդ 365 օր և 6 ժամ հաշուելով շեղեք էին Հայութիս հաշուէն, Ջերվէրտինի առաջին օրը դարձեալ գարնանայն գիշերահաւասարի բերաւ: (Տես Կէվրուզ և զանուանս ամսոց ի Պիւրհանի Գամթի):
- Արեթմ նախարարը և մողք պիտի ժողովէին ի Հայաստան Օգոստոսի կամ Նաւասարդի մէջ: Կաւասարդը առաջին ամիս հայկական տարւոյ, որ ունէր 12 ամիս, ամէն մէկ ամիսը 30 օր և ի վերջոյ 5 օր ալ Աւելեաց, որով տարին կըլլար 365 օր: Եւ որովհետեւ նահանջ ամրի չկար, ամէն չորս տարին մէկ օր, և 1461 անհանջ տարւոց միջոցին մէջ, ամբողջ մէկ տարի կը յառաջանայր: Հայկական տարեմուտը ի սկզբան հաստատած էր <sup>41/23</sup> Օգոստոսի: և Քրիստոսի 428 թուականին կամ գարմանալի զուգագիպութեամբ: Արշակունիաց հարսուութեան գերջացած տարին, անհանջ տարւոյ Կաւասարդի առաջին օրը Օգոստոսի <sup>11/23</sup>ին, այս և անանային գիշերահաւասարին էր հանդիպեր վերստին: Արդ որովհետեւ մոդուց ի Հայաստան իրկուիլը թէողոս Բի մաստանէն մէկ երկու ամիս յառաջ կիշառայ, այս է 450ին, ուրեմն նաւասարդի առաջին օրն ալ Օգոստոսի <sup>6/18</sup>ին էր. (Տես Ալիշան վարդապետի Հայկայ Շըրջանն ի Բաղմազէպի 1860. և Dularriier գաղցիացոյ Recherches sur la Chronologie arménienne, technique et historique, 1 vol. 1859. Impr. Impér.):

առցին նուիրեալ սպասքն յարկունիտ, լոեսցին ձայնք սաղմոսացն և դադարեսցեն ընթերցուածք անսուտ մարդարէիցն։ Քահանայք մի իշխեսցեն ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդո, և հաւաստացեալքն ի Քրիստոս արք և կանայք որ բնակեալ են յիւրաքանչիւր մենանոցո<sup>1</sup>, փոխեսցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց։

84. «Դարձեալ և կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոգացն։ Ուստերք և դըտերք աղասաց և շնականաց կրթեսցին ի հրապարակս<sup>2</sup> նոցուն մոգաց։ Կարձեսցին և արդելցին օրէնք սուրբ ամուսնութեան, զոր ունէին ի նախնեաց ըստ կարգի քրիստոնէութեանն. այլ փոխանակ ընդ կնոջ միոյ բազում կանայս արասցեն<sup>3</sup>, զի աճեցեալ բազմասցին ազգք Հայոց։ Դատերք հարանց լինիցին<sup>4</sup>, և քորք՝ եղբարց։

1. Այս խօսքէս հետեղնել պարու է, թէ Եղիշեայ ատենը կուսանաց վանքերը կարեորութիւն ունենալու շափ բազմաթիւ էին։ Զգեստնին ալ կը տարբերէր սովորական զգեստէն։ Տես և Յ. Գ. 28. հաշտագեալ է ասու որպէս հաւատաչոր, այս է Հիւստառոր։ «Միանձնեալ կամ» յՄիանձնեալ է։

2. Իիսելու արժանի բան մը. պարսկական կառավարութիւնը զբագչաւական օրէնքը սպահովելու համար ի Հայու, կուզէ ուսուցանել զկանայս, միանգամայն և ձեռք առնուլ առհասարակ տըզայոց դաստիարակութիւնը։ Հրապարակ է ոչ միայն արձակագոյր ի մէջ քաղաքի, այլ և յարկածածուկ տեղի, ուր ժողովի բազմութիւնն ։ Ալբունիքն հրապարակ կոչէին։ Հայկ. բառ։ Կամ իրեւ մեծ սրահ առաջ ուղիղ կը խորուակէ,

Բառ մեծ սրահ առաջ ուղիղ կը խորուակէ։ Ալլ. «Եւ նստաւ Վասակ ի ներքին դահիճան, որ էր հրապարակ մեծամեծացն։ Եղիշէ Յ. կ. 37. Պարսկ. Ֆերվարի ալ նշանակէ յարսաք, վերնասուն, չորս կողմը պատուհաններով ամառնասուն, ինչպէս և ձեռուան յար-

մար բնակարան։ (Տես Պիւրէ. Պաթի)։

3. Աւեսդայի մէջ բազմականութիւնն թոյլ որուած չէ, բայց միայն յորուած առաջին ամուսնութիւնը անորդի մեռյ։ (Տես Հարլէզի Աւեսդան էջ 67)։ Սակայն առարակոյս շկայ թէ Աստանեանց ժամանակը բազմականութիւնը յառաջացեր էր մանաւանդ արքունեաց և մեծամեծաց մէջ։ Տես եր. 253. կն. 1։

4. Զրադաշտականութեան ամենէն տարօրինակ վարդապետութիւններէն մէկն կըն է ոչ միայն ներել, այլ և պատուիրելու մոտ ազգականաց մէջ եղած խնամութիւնը (յակդվոսար ըստ Աւեսդայի և խվեռաբուտակ՝ միջնադարեան պարսկաբէն)։ Սա այնքան հոգեշահ և արդիւնական գործ մի է (քրոզա կամ քրոզի) որ դիւց բոլոր ոյնը կը խորուակէ,

մարդուս մահացու (մարկ-արժանան) մեզքը կը ջնջէ և կը տանի նորա հոգին ի համիսդաքան կամ ի Մշանչենակեացու, (այս է հոգիք, որոց առաքինութիւնը մեզացը հաւասար ըլլանուն համար դըմոխոց և երկնից մէջտեղը կը կենան անշարժ մինչև ցցարութիւն մեռելոց)։

մարք մի ելցեն՝ յորդւոց, այլ և թռուռնք ելցեն յանկողինս հաւոց:

85. «Պատրուճակը մի մեռյին անյազ<sup>1</sup>, եթէ յօդեաց իցէ և եթէ յայծեաց և եթէ յարջառոց և եթէ ի հաւոց և եթէ ի խոզաց: Հայսք առանց փանդամի<sup>2</sup> մի զանդցին, ծիւզք և քակորք<sup>3</sup> ի կրակ մի եկեսցեն,

եթէ գծոխց արժանի է, և յարբայութիւն եթէ ի համբագաքանց է: Եթէ ոք իւր ազգականին հետ նշանուելէ եռքը, նշանը աւրէ, մասն արժանի կը լույ. (Տե՛ Պահմ. Եազդ. Բ. 57. 61: — Եայ. Լա՛-Շայ. Ը. 18. Ժ. 3. 4.) Այժմ Բարսիք, Բահլաւի գրոց բռնազբունեալ մեկութիւն մի տալով, կը ջանան ապացուցանել թէ պատուիթեալ ամուսնութիւնը եղարց և քերց զաւակաց մէջ եղան է, զոր իրենք ալ յոյժ կը յարզեն և ոչ աւելի մերձաւոր արենակցաց մէջ: Բայց մազդէական մատենից, ինչպէս և մեր տահմային և օսար պատմազրաց որոշ բացարարութեանց առջեկարելի չէ գծրախտաբար ընդունիլ նուցա տուած մեկնութիւնը, որչափ ալ գովելի ըլլայ ջանքերնին: Ազգապիշճ ամուսնութիւնը Արքիմենեաց ժամանակն ալ սովորական էին. Քանիթու Արդեկեցին որ Քրիստոս գոնեն 450 ամոք յառաջ գրած էր, կըսէ թէ «մոզք կամուսնանան իրենց մարց և դասեց հետ. օրինաւոր և կը համարին ամուսնանալ ընդ քերց: Կանայք հասարակաց սուսցուած քն են. և եթէ ոք ուզենայ ուրիշէ կինն առնուլ: Խորամանկութիւն կամ բանութիւն բանեցնելու հարկ ըշկայ. հաւանութեամբ առնն կրնայ ընել ։ — Եզիւէ պլուր ասէ. ։ Եւ օրենք պարսկականք անխափիր տալով զանձին յանառակ պոռնիութիւն ։ Չարշարանաց՝ էջ 346: Տե՛ 44. Ծն. 2:

1. «Այլ յայտ են պատճառքն ուստի Պիւթագորաս զմին շնչաւորացն իրամայէր շուտել. որպէս թէ հոգի աս-

տուածելէն իցէ ի մսեղիսն, և վասն պյուրիկ չիցէ պարտ ուտել զմիս կենացնեացն: Վասն որոյ և մոգքն նախ յազեն, և ապա սպանանեն զանասանսն, զի յանզգայ եղանցիցն շուշչքն ի մարմաց անտիք: Եւ զայն ոչ զիտեն՝ թէ երկուս մահ սպանանեն. մի յազելով և միւս ևս փողոտելովն ։ Եղնիկ, 222: Զայտորուճակս առանց յազելոյ մեռցընելը մեզք էր, որովհետեւ Որմզդայ արարածն էին: Խակ յազել՝ չէ մորդել, այլ Շնուիրել զից ։ Հանգերձ պէտպէս արարուութեամբք յառաջ քան զգենուլն: ահս Էջ 114, 168:

2. Թէւզոսիոյ տոզ, փանամ: Փանամ կամ փանամ, արդի պարսկ. բառագրոց մէջ պատամին Ճաճան, նշանակէ տուեալ լաթ կամ կոտու: Աւեսդայի լեզուաւ բախիցիսանա. Բահլաւի՝ բառամ. բազանտ գրութեանց մէջ բենօն: — Փանամ՝ բամբակեայ երկու կոտոր ճերմակ լաթէ քող մի է, զոր ունչաց կամարին վրոյէն մեյլ կերպով կը կախեն, և կիշնէ առնուազն երկու ըթաւափ սոսորե և կրկին լարիք զիլուն ետելը կը կոպուի: Մոգելն երեսնին կը ծանձեն այդ քոյով կապէնն մերձեցած ասեննին: ուրիշէնուե արտանշութիւնը անսուրբ է և կրնայ պղծել զհուրն: Անշեայլ հանգամանաց մէջ աշխարհիկը ալ պարտական են փագամ գործածել, կամ փագամի տեղ բերաննին և ոնզունքներն ծածկել շապկին ծայրովը:

3. Եյիւզք և քակորք ոլիզծ են, որովհետեւ փառութիւնը և ազտեղութիւնը դիւաց գործն են. ուստի զայդոսիկ կը-

ձեռք առանց դոմիզոց<sup>1</sup> մի լուսացին. շնչրիք և աղուէսք  
և նապաստակք<sup>2</sup> մի մեռցին: Օձք և մողէզք, գորաք և  
մըջմունք, և որ այլ ևս խառնափնդոր բազմանձիք են,  
մի՛ կայցեն. այլ վաղ թուով համարով ի մէջ բերցեն  
ըստ արքունի շտիոյն<sup>3</sup>: Եւ որ այլ ևս ինչ սպասք իցեն,

բակի մերձեցնել կամ դպցնելը՝ կրակը  
անարգել ու պղձել է: Այս պատուերս  
զժուարին էր պահել տալ ի Հայոց վասն  
զի այն ատեն ալ ինչպէս այժմու, ինչ-  
պէս և ուրիշ լեռնային անփայտ տե-  
ղուանք, քակր կը վառեին դիւզացիք կե-  
րակութին եփելու կամաքնալու համար:

1. Գումակ՝ արդի պարսկ, բումիզ  
մէզ բայց աւելացի և բահւակի  
դրաց մէջ Տոմեզ է կովու մէզ, և այդ  
նշանակութեամբ իմանալի է ասու: Բար-  
սիք մինչեւ ցայսօր կովու ջրմաժ կը  
գործածեն: Ազատեղութիւնը կամ պըլ-  
ծութիւնը նախ պէտք է գոմիզաւ լուա-  
նալ ապս ջրով: Եթե սրբելու նիւթը  
կաշեայ կամ մետաղեայ է, հարկ է  
երիցո կովու միզաւ լուանալ և աւազով  
շարցնել և յետոյ երիցո ջուր արկանել  
(տես Շար-Ղա-Շայ զլ. թ. Գ): Պահա-  
մանը ալ ներլիքն ազատը մաքրելու հա-  
մար կովուն հինգ տեսակ արտահոսու-  
թիւնը կը գործածեն, որոց մին է մէզ:  
Այդ սովորութիւնդ մնացած է անշոշտ  
այնպիսի հին ժամանակէ՛ յորում կովու  
մէզը հիւանդութեանց մէկ հատիկ գեղ  
համարեալ էր: Մինչեւ ցայսօր լուսապիս  
մէջ անզամ գիւղացի բժիշկներ կովու  
թրիք և մէզ կը մատակարարեն հիւան-  
դաց (Տես Պ, Հաւկի, Եսայ, էջ 285):  
Գումակը սակայն այն ազատեցութիւնը  
մաքրելու համար է, որ մարդուս մար-  
մինը, զգեստները և գործածած անօժ-  
ները կը պղծեն, զոր օրինակ մեռելոսիք  
կամ տեսատեսութիւն:

2. Շնչրիք և աղուէսք և նապաստակք  
և ուրիշ սպասկար կենդանիք Որմզդաց  
արքածքն են, Շնչրիք գաղզ. Loutre,

է շաբասանի շատակեր՝ որ գետերու և  
լճակներու եղերքէն շրամնուիր. և այն-  
քան կը սիրէ ձուկ՝ զորու և զայլ ջրա-  
յին բազմանձիս, որ երբեմն լճերու մէջ  
կենդանի շմողուր՝ կը մաքրէ բուրու-  
վին: Շատ արագ և գիւրութեամբ կը  
լողայ: Երբ ձուկ, խեցգետին, գորս  
կամ ջրային մուկ և ասոնց նման անասուն  
շգտնէ ուսելու համար, ջրային ծառե-  
րով և խոսերով կը հարակի: Շնչրին  
ուրիշն մեծ ծառայութիւն կը մատու-  
ցանէ բարի արարչութեան:

Ազոււնն հաւանօրէն շան ցեղէն ըլ-  
լալուն համար բարի սեպուած էր:

Կապաստակն է գլուխու (իտա) երեխց  
և վայրի անամուց, որպէս ցորենն՝ ար-  
մբտեաց, սպիտակ ձին՝ ձիոց, այր ի-  
մաստուն, կրօնազգեաց, շնորհապարտ և  
ծըմբարտասու է զլուսի նմանեացն և այլն.  
Տես Մայուսիրատ կլլ:

իսկ մուկն, մողէզք, օձք, կրիայ,  
ձուկն, խեցգետին, գորս և անհասու-  
րակ ամենայն կենդանիք որ զջուրս պըզ-  
ծեն, ինչպէս և այլ բազմանձիք (իտա-  
վարար) Արհմենի կը պատկանին: Խեղճ  
մըջենն ալ այս վերջուց կարգէն էր,  
որովհետեւ ցորենի հատիկները կը վեր-  
ցնէ: Մկանց սիսերիմ թշնամին՝ կատուն  
ալ պիզէ էր, վասն որոյ մազգեզանց տանց  
մէջ կատու չեր պահուեր. թէպէտ մըկ-  
ները ջարգելու համար ուրիշ ամենայն  
միջոց անպահան կը գործածուէր: Մե-  
ռելոց հովուց համար՝ մեծապումար վր-  
ձարմամբ կը զնէին այդ լար սեպուած  
կենդանիներէն ու կը սպանանէին. Տես  
ի վերոյ էջ 145, 146:

3. Այդ սովորները և այլ վնասա-

կամ՝ զոհից կամ՝ սպանդից, ըստ տօնական կարգին՝  
տարեւոր թուականին, և ըստ կապճաթիւ մնխրաչափ  
կարգին<sup>1</sup>:

86. « Զայս ամենայն որ ասացաք, առ ժամանակ մի  
մինչեւ ի զլուխ տարւայ կատարեսցեն ամենեքեան . և  
զայլն ամենայն առ յապա պատրաստեսցեն »:

Կար կենդանիները ժողովել կու տային,  
որը թուավ համարով, որը ընդունակու-  
թեան շափով Եւ որովհետեւ այդ շա-  
փերը (բիլէ) զանազան մեծութեամբ  
էին, ինչպէս այսօր (Օսմանիան Պետու-  
թեան մէջ, Եղիշէ Կ'ըսէ՛ թէ ըստ ար-  
քառի շափոյն պիսի գանձուէրք. ինչ  
է սորտ ընդունակութիւնը. կարելի շե-  
զաւ մեզ սոսուզել. գուցէ քիլ մը ըս-  
տորեւ դրույծ կապիճն ըլլայ:

1. Եւ ուրիշ ինչ սպասք, այս է ծաշ-  
ուայութիւնը. և պարտականութիւնը որ  
կային, կամ զո՞ք և սպանդը. իմա-  
անարիւն կամ արիւնաւոր զենմունը և  
պատարագը՝ անոնք ալ ըստ տօնական  
կարգին պիտի կատարուէին և ըստ տա-  
րեւոր թուականին, պյա է ըստ արեգա-  
կային հաստատ ատարւոյ: Տօներուն  
զիսաւորներն եին վեց կամանպարք, Ա-  
ւեսպայի լեզուա նայրիս, որ է « տա-  
րեկան տանը »: Բայց զգոստ ճշգ օրը  
որին պարուէին պահել. ժամանակի շփո-  
թեանին մը ի գերեւ կը հաներ թէ  
զնանդէսն և մէջ զզո՞ւ: Տօնմարի խն-  
դիր մը մեծ երկպատակութեան և հեր-  
ձուածոց պատճառ եղած է Հնդկաստանի  
Փարսիներուն մէջ. (ուեւ Հաւկ՝ Essays.

57): Որմիզդ մէկ տարուան մէջ ի վեց  
արարուածս ստեղծեր էր զաշխարհ. ա-  
ռաջին կահանպարը՝ Մայստեր-զարամայն՝  
յորում արար զերիբնս, Արտիզահշտ  
ամսոյ 15ին այս է տարւոյ 45դ օրը  
կ'ինայ կամ լու ևս 40էն ց45, որով-  
հետեւ կահանպարը՝ հինգ օր կը տեսն,  
բայց վերջին օրն ամենէն մեծն է: Եր-

կորորդ կահանպարը՝ Մայտես-իւմա, տա-  
րւոյն 105դ օրը. Փայրիշամիյա՛ յիշտառակ  
ստեղծագործութեան ջուրց: Երրորդն՝  
Ենարեկար ամսոյ 30դ և տարւոյ 180դ  
օրը, ի յիշտառակ արարութեան երկրի:  
Չորրորդն՝ Այսորիմա յ210դ աւուր, ի  
յիշտառակ արարութեան բուսոց: Հն-  
գերորդն՝ Մայստերկու յ290դ աւուր, յո-  
րում ստեղծան հուր և անգեայք: Վե-  
ցերորդն՝ Համարաբմետոյտ, յ365 ա-  
ւուր տարւոյն ի յիշտառակ ստեղծման  
մարդոյ: Իսկ մինիրոյ զայով՝ ամենայն  
տուն կապիճով շափեալ քանակութիւն  
մը պարտական էր բերել. այդ կանոնդ  
հաստատեր էին մոգք, որպէս զի գիտ-  
անմ՝ թէ Հայք ՀՀդի: Կը կառարեն թէ  
ոչ կրօնական պարտականութիւննին: Պա-  
րսկաստան ալ կայը այդ սովորութիւնդ:  
Ամէն կիւզի կամ աւանի մէջ յարկա-  
ծածուկ կրակ մը պիտի ըլլայ: որ Ամէ-  
րամ կը կոչէ: Երբ խոհանոցի մէջ կրակ  
մը երեք անգամ ծառայէ, Փարսէք զայն  
Ալտէրան կը տանին, նոյնպէս և տան  
մէջ գտնուած որիլ կրակները և մո-  
խիրները յետ եօթն աւուրց: Ժամանակէ  
մը եռոք արտերուն մէջ կը սփռեն ի  
պարարտութիւն հողոյ: Բազանտ լե-

87. իսկ զայս ամենայն հրաման պատուիրանաց առեալ մողաց և մողպետաց, զտիւ և զգիշեր փութային հասանել յաշխարհն Հայոց. և առ յոյժ խնդութեանն ոչ երբէք յադէին երկայնութեամբ ճանապարհին:



## ԵՐԵՄԱԳ ՅԵՂԱՆԱԿ

## ՎՈՐՆ ՄԻԱՅԱՆՈՒԹԵԱՆ

ԱՐԵՎԻ ԱԿԽՈՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

1. Թէպէտ և ոչ իցեմք բաւական ասել զամենայն շարխան, որ անցք անցին անդէն ի կարաւանին ընդգումողն Հայոց, սակայն և ոչ լսել կամիմք ծածկելով

1. Περιστοις οικείων ηγεμονίας περιβάλλονται την απόφαση της συνθήκης για την παραχώρηση της Κύπρου στην Ελλάδα. Η συνθήκη αυτή διατάσσει την παραχώρηση της Κύπρου στην Ελλάδα μετά την επίτευξη της ανεξαρτησίας της Κύπρου από την Ουγγαρία και την Αυστρο-Ουγγαρία. Η συνθήκη αυτή διατάσσει την παραχώρηση της Κύπρου στην Ελλάδα μετά την επίτευξη της ανεξαρτησίας της Κύπρου από την Ουγγαρία και την Αυστρο-Ουγγαρία.

Բայս Եղիշեայ եպիսկոպոսութիւնը իշխանութիւն մի է, զոր կրնայ վարել ևս սոսկական քահանայն իմէց արժանաւոր և կարող դատուի այնմ: Ալդ էր արդարեն ընդհանուր Եկեղեցւոյ հին սովորութիւնը Բայց այդ սակաւագետական մեդ շատ այլայլութիւններ կրած էր ի Հայո Լուսուորդէն ի վեր, ինչպէս և յայլ Եկեղեցին արեկելեան կամ արեմբաւան: Հին կարգաց նորէն դասնալ պէտք եղաւ անշուշտ ապստամբութեան ժամանակ, քանզի հաւասարական դրութեամբ միայն կրնար միութիւնը զօրաւոր ըլլաւ: և ամէն բանէ աւելի յառաջազահութեան կամ սոորագաւութեան վէճ և խնդիրներէ պարտ էր զգող կալ:

Եպիսկոպոսուն ետքը կու դայ քորեպիսկոպոս, որ ինչպէս տեսանք՝ կոփակոպոսին հրամաննեն կախեալ տեսուչք (inspecteurs) էին: Ազա դան երեցք, այս է ծերագոյնքն, կամ արժանաւորագոյնքն ի քահանայից, որը կամ եղիշե կոպոսական աթոռույն խորհրդականքն

զվիշաս նեղութեանն . այլ ասասցուք փոքր ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ, որք դառնապէս զմեզ<sup>1</sup> ողբային . զի և գու<sup>2</sup> իրրե լուիցես, ոչ սակաւ արտասուս հեղուցուս ի վերայ ազգին թշուառութեան :

2. Զի ահա անդէն ի մեծ բանակին Պարսից՝ յաղգաց ազգաց, որք են հաւատացեալ ի տուրք աւետարանն Քրիստոսի, իրրե տեսին զչար յանձնառութիւնն Հայոց, յոյժ հարան ի միտս իւրեանց, և կործանեցան անկան ի վերայ գիմաց իւրեանց<sup>3</sup>: Բազումք ի նոյցանէ թաղծեալք ի սուզ ծանրութեան, հարեալ յոգիս և դառնացեալ յարտասուս, եկին և յանդիմանեցին զնախարարեանն, և յոյժ գորովեցին զուխտ քահանայութեանն: Զգուէին զամենեսեան և ասէին . « Զի<sup>4</sup> առնիցէք զսպաս աերտնեան սեղանոյն . մուանայցէք արգեօք զհոգեոր օրհնութիւնադ, և կամ լուեալ դադարիցէք ի մարգարէական ձայնիցդ: Կափուցէք զաւ

էին, և կամ նախարարական տանց մէջ աւագ քահանայ: Յետ նոյց՝ քահանայք, յետոյ ազա՞ սարկաւագունք, մենակեացք:

Լանանց մէջ ալ կային հաւատաւորք (Religieuses), որք ընակէին ի կուսանոցս: Այսկայն կրօնական գործունէու թիւնը սեփականութիւն մի չէ վերջ գրեալ դասուց և ոչ իսկ առհասարակ արօնց, ամուսնացեալ կանայք ևս կը մասնակցին ոչ միայն յայտնի կամ լուեամի հաւատութեամբ այլ և արգեամբք զինուք և սազաւարտնք: սուր ընդ մէջ և գահան ի ձեռին:

1. Եղիշէ նախարարաց չետ Պարսկաստան գանուեր էր, անսնց արեգական պաշտօն մատուցած ատենըն Հայքահանայք ալ կային, որ հաւաներ կամ մասնակցեր էին այդ ուրացութեան, ինչպէս որ ընթերցողը պիտի տեսնէ սոսորե: թէուէն շատ շանցաւ՝ անջատեցն սորա ի նախարարացն: Այսկայն եթէ տանուտեարց զլխաւարները, ինչպէս և ոսցա աւելի մտերիմ եղող եկեղեցակամք, որուեր էին մերժել անմիջապէս

զկրակապաշտութիւն, երբ է Հայուստան դառնային: այդ գաղտնի մոտածութիւնն նին չէին կրնար ամենուն հազորգել, որպէստե բազմութեան մէջէն մէկը կրքար մատնել զիբնեք և աւելի մեծ զըտանիք ենթարկել, ուստի շատերը անշուտ առանց թաքուն խորհրդայ՝ գիտաւորց հետեւելով կամ թազաւորին սաստկութենէն վախնալով ուրացեր էին ըրբքրիստոնէւթիւն:

2. Այս է Դաւիթ երեցն Ամամիկան, որում ուզզեալ է զիբու:

3. Զափէ դուրս տիբութեան ատենէ երեսի վրայ իյնալ կամ զլուխը զետին զարնել (տես Յ. Գ. 31) և կամ զնականել և զօդին պատառել (տես Յ. Գ. 64): Հինաւուրց ունակութիւն մի է: զոր Ասուրք Գրոց մէջ ալ սուէպ կը տեսնենք: Զեմ' կարծեր թէ ասս սոսկ փոխառութիւն մը ըրած ըլլայ Եղիշէ յԱստաւածաշնչէ, որով իւր միաբը և զրութիւնը տագորուած են, այլ իրական նկարագիր: արևելից համար ըսուած է թէ անփափի կը մեայ:

յընթերցուածոց, և խցէք զականջս ի լոելոյ. միթէ զմուացդ անմոռացութիւն ոչ յիշիցէք. զի՞նչ առնիցէք զպատուիրեալսն ի Ցեառնէ. Որ ուրացի զիս առաջի մարդկան, յուրաստ եղէց և ես առաջի հօր խնց, որ յերկինս է, և հրեշտակաց սրբոց:

Յ. «Վարդապետք էիք առաքելսկան քարոզութեանցն, արդ աշակերտք՝ լինիցիք մողար խարէութեանն: Ուսուցիչը էիք ճշմարտութեանն, արդ ուսուցանէք զպատիր խորեւութիւն մողաց: Քարոզք էիք արարչական զօրութեանցն, արդ զտարերս ասսուածս խոստվանիք: Յանգիմանիչք էիք ասութեանն, արդ և քան զտուտն ստագոյնք լինիցիք: Ի հուր և ի հոգի՝ էիք մկրտեալք, արդ ի մասիր և յաճիւն թաթաւիցիք. կենդանի Մարմնով և անմահ Արեամբ էիք մնեալ, արդ ի ճենճեր զոհից և ի շարաւս աղտեղիս մրճուիցիք: Ցածար էիք Հոգւոյն սրբոյ, արդ զոհարան դիւաց լինիցիք. քրիստոսազգեացք էիք ի մանկութենէ, արդ մերկացեալք ի փառացն դիւարար արեգական կաքաւիցէք<sup>1</sup>. ժառանդ էիք արքայութեանն, արդ անձամբ զանձինս արկէք ի ժառանդ գեհենին: Նոցաէ սպառնացեալ հուրն անշէջ, ընդէ՞ր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորեցայք. նոցա պարարի որդն անմահ, իսկ արդ դուք պարարիցէք զմարմինս ձեր նմա ի կերակուր. խաւարն արտաքին՝ նոցա թանձրացեալ պահի, դուք լուսազգեատք ընդէ՞ր յուղարկեցայք ընդ նոսա ի նոյն խաւար: Նոքա ի փաղնջուց հետէ էին իսկ կուրացեալք, դուք զինի կուրացն կուրացարուք. նոցա էր փորեալ զխորխորանն, դուք ընդէ՞ր լցէք յասացագոյն: Ե՞րբ ու-

1. Բազանո՞ւ ալոկերու, մինչ արդի պարսկերէն՝ բակերու:

2. «Ես մկրտեմ զձեզ ջրով, ասէք Յովհաննէս Մկրտիչ, բայց որ զինի իմ զայ նու մկրտեսց զձեզ Հոգւով սրբով և հորվ:

Յ. Մինչև ցայծը զոհական արարութիւնքն նուազարանոք կը կատարուին ի Բարսիս: Հին ժամանակաց մէջ Միք ասուուծոյ տօնին օրը թագւորն ինքնին կը կարաւէր. Տես էջ 136-137:

4. Առոր Գրոց բացարութիւն մի է ինչպէս և Աւետայի. որովհետեւ Պարսկէ զգմոխս յերկնից և յերկը դուրս և մեկուսի կը համարէին: — Պաւատահիշէ դժոխոց նկարագրութեան մէջ կը զանենք՝ «Խաւար որ ձեռօք կը բռնուի» և «Ժանտահոս որ գանակով կը կըտրուի»: (Pahlavi texts, էջ 114) որպէս և յաստուածաշունչ դիրս՝ «Խաւար շշափելի»:

սանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոցն նոցա, այն՝  
որ չկը ուրեք ի միջի և ոչ մի։ Թեթևացեալք ի ծանր  
րեռանց՝ անձին անձամբ առեք զրեռն ծանրութեան.  
ազատեալք ի մանկութենէ՝ չարաչար մոեք յանտղառելի  
ժառայութիւնն:

4. « Եթէ գիտէիք և երեկը ձեզ յայսնի, սուգ առին  
երկինք ի վերայ ձեր, և թաղծեցաւ երկիրս ի ներքոց  
ոսից ձերոց։ Հրեշտակք ի վերտաս կն ձեզ բարկա-  
ցեալք, և ի յերկրէս մարտիրոսքն են ձեզ ցասուցեալք։  
Ողորմիմ սղորմիմ սիրելեաց ձերոց, և բազում անդամ  
ողորմիմ անձանց ձերոց։ Զի թէ մարդոյ փրկեալէր  
զձեզ ի ծառայութենէ, և դուք անձամբ զանձինս այլում  
ի ծառայութիւն՝ արկանէիք, ի մեծ բարկութիւն բըր-  
դէիք զառաջին տէրն ձեր։ Խոկ արդ զի՞նչ առնիցէք  
զաստուածասաս հրամանն. Ես եմ Աստուած, և չիք այլ  
ոք բայց յինէն, և ոչ զինի իմ այլ ոք լիցի Աստուած.  
Աստուած նախանձու եմ ես, հասուցանեմ զմեզս հարց  
յորդիս, մինչև յեօթն դար։ Խոկ եթէ որդիքն արդարք  
վասն հարցն մեզաց ընդունին զառակիումն, յորժամ  
ինքեանք որդիքն խոկ մեզիցեն, ոչ ահա միանդամայն զան-  
ձանց և զհարցն ապացեն ի միասին։

5. « Դուք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի. յոր-  
ժամ ասաի վասանգ հասանէր, առ ձեզ յանդորր ելա-  
նէաք. արդ մեծ ամուրդ այդ հիմն ի վեր տապալեցաւ։  
Դուք էիք մեր պարծանս առ թշնամին ճշմարտութեան,  
արդ դուք էք մեր նախաստինք առ նոյն թշնամիս։ Յայժմ  
վասն ձերոց ճշմարիս հաւատացն և ի մեզ փոքր ի շատէ  
խնայէին. և արդ ի պատճառս ձեր և զմեզ անողորմ դա-  
տին։ Ոչ միայն զանձանց դաստաստան<sup>2</sup> տալոց էք առաջի  
ահեղ ատենին Աստուածոյ, այլ և բազմաց ամենեցուն՝ որ  
ի ձեր պատճառս և զնոսա և չարչարեսցեն։»

6. Զայս և առաւել քան զայն խօսեցան ընդ մեծու-  
մեծս աւագանւոյն, և յաւելին ցաւս ի վերայ ցաւոց։  
Յայտնել և ցուցանել նոցա զիսորհուրդն ոչ կամէին, լոել  
և չառնել պատասխանի անհնար էր. հեղձամդձուկ եղեալ

1. Ծառայութիւն՝ սորկութիւն, գե-  
րութիւն. esclavage.

2. Բազանգ՝ տաստագան։

մեծապէս յարտասուս հարկանէին; Բնդ նոսին դառնացեալ բաղկ և տեսողք յանմիթմար սուգ լինէին ամենքեան:

7. Յայնմ ժամանակի քահանայքն՝ որ էին անգէն ի զօրուն, առ չժուժալ սրտիցն բարկութեան քակեալ որոշեցան ի նախարարացն և յամենայն բազմութենէն, և զմի ոմն՝ գետպան ձիով առաքեցին փութապէս յաշխարհն Հայոց: Գոյժ ի բերան առեալ և զօձիս պատառեալ<sup>2</sup>, հասեալ ի ժողովս եպիսկոպոսացն, մեծապէս յարտասուս հարեալ կայր և պատմէր զամենայն անցս չարչարանացն. այլ ոչ յայնէր նոցա զժածկութիւն խորհրդոցն:

8. Յայնմ ժամանակի ափոեցան եպիսկոպովն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին զքորեպիսկոպոսս ի գեօդս և յագարակս և ի բազում ամուրս լեռնային դաւառացն; Դրդեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքտհանայից և զմենակեցաց. Խրատ եղին, պնդեցին և արարին զամենեան զինուորս Քրիստոսի:

9. Եւ յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. Զեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի՝ որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ, և մի խնայեացէ հայր յորդի, և մի ակն առնուցու որդի հօր պատուոյն: Կին կոռեացի ընդ առն ամուսնոյ, և ծառայդարձցի ընդգէմ տեառն իւրոյ: Օրէնք աստուածային կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դասապարտութեան:

10. Եւ իրեւ այս այսպէս հաստատեցաւ կազմեցաւ, երեեցան ամենեքեան զինեալք և սալաւարտեալք, սուրընդ մէջ և վահան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականանց:

11. իսկ գունդն Հայոց ամենայն օգնականօքն հանդերձ և մնդացն բազմութեամբ յամենեանն չորրորդի<sup>3</sup>

1. Այս պատգամաւորս ասորի քահանայ մի էր որ խրկուեցաւ ի Հայոց նախարարաց ուրացութիւնը իմացնելու համար:

2. Ահա դարձեալ մեր նախահարց սովորութեանց նկարագիր մէ:

3. Այս է Պարսից արեգակնային Դիր ամիսն որ ըստ Գունասհիցի կը սկսէր Ամառնային արեւադարձէն տասն օր յառաջ. աես զէ. իլլ. 3, այս է Յունիս Յուլիս 449:

449 Եկին հասին յաշխարհն չայոց, ի գիւղաքաղաք մի մեծ՝  
Յունիս անուն էր Անդր<sup>1</sup>: Բանակեցան, բոլորեցան, զե-  
տեղեցան, և յամենայն կողմանց անդը ժողովեցան<sup>2</sup>, և  
էին անթիւ բազմութիւն:

12. Եւ եղեւ յետ աւուրց քասն և հնդից, մոգպետն  
ինքնին մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ՝  
քակել զգրունս եկեղեցւոյն յաւուր միաշարաթուն. ըլ-  
փորձ առնուլ կամէր զառաջարկութեան զօրծոյն: Իսկ  
սուրբն Դիոնոք երէց միարանութեամբ առաջին խորհըր-  
դակցօքն<sup>3</sup> և բազում ուխտիւ ի տեղուղ անդ պատրաս-  
տական դիպեցաւ, ոչ ետ թոյց: Թէ պէտ և ոչ էր աեղե-  
կագոյն մոսացն ամեննեցուն նախարարացն, և ոչ զօրու-  
թեան ուժոյ մոգպետին, ոչ ինչ եկաց մնաց ամենայն  
եպիսկոպոսացն, և ոչ առ սակաւ մի համբեր անօրէն իշ-  
խանին թողացուցանել. այլ բազում ամբոխ ազագակի  
զօրացն և մոգացն հասուցանէր: Քանզի վիրզս ի ձեռն  
առեալ՝ զկառափունս մոգացն և մոգպետին<sup>4</sup> ջարդեցին.  
Փախտական յիւրաքանչիւր վանս արկանէին, և ինքեանք  
զպաշտնն բարձրացուցեալ յեկեղեցւոյն՝ զտերունական  
կանոնն կատարէին, մինչեւ ի նոյն միաշարաթին անդա-  
գար լինելով:

1. Ի հարաւային ծայր գիշակին Ար-  
տամետայ, յաշակողմն խօշապ գետոյ որ  
թափի ի ծովի վահայ, կայ Անդ դիւզ  
և վանք. յեկեղեցւոյն ի վիճէ միոյ ո-  
ծելոյ ի Ա. թաղէէ, որպէս աւանդենն,  
քամի իւզ որպէս քիրոն կայլակեալ  
(Տեղագիր Հայոց Մեծաց 91), Եօթա-  
նասուն տնէ բազկացեալ հայու գիւղ:  
Բայց ասիկաս չէ Եղիշեայ յիշածը Ըստ  
Փարզեցոյ՝ Անդը ամուր բերդ մի է  
(էջ 174) ի Ծաղկատան գաւառին Բա-  
զրեանդայ, և այս հանապարհաւ. կու  
զային հախարաբը և մողք ի Հայա-  
տան: Պրակոսիոս ալ կը յիշէ զաւանդ  
զօր կոչէ Անկոն, որ յայտ անմատչելի  
կիբճերու մէջ դիրք ունէր և 120 առ-  
պարիգօք հեռի էր ի Գրենայ: «Եկեալ  
հասանէր ի գետն Արածանի, որ հասի ի

ծաղկաւէտ լերանցն Անդայ գաւառին  
յակունքն Եփաստայ հանդէո լերին  
Ասրարատայ »: Պատմ. Աղեքոանդրի:

89: — Ասպարէդդ կամ Stadium է  
125 քայլ երկրաշափական կամ 184  
մէրը. արդ 120 ասպարէդ 22 քիոմէդր  
են. մինչ Դիլնէ ի Բազրիանդ առ Նը-  
ւազն 50 քիոմէդր ըլլալու է:

2. Կախարաբ, 700 մոզք և բազում  
այրաւձի ժամադիր եղեն յԱնդը, ուր և  
ժողովեցան:

3. Առաջին խորհրդակիցներն այս է  
այն եկեղեցականքն, որը խումբ խումբ  
սփռեցան ի գաւառու և ի գեօզս և ի  
լեռնային գաւառու ժողովուրդը դրդելու  
համար:

4. Ասպարէտ վիրասորուեցաւ, բայց  
շմեռաւ:

13. Եւ յետ այս տագնապի խոռվութեամնն՝ յամենայն կողմանց յաշխարհէն չայսց բազմութիւն արանց և կանանց ի տեղին հասանէին։ Եւ անդ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին։ անանք զգերարառուրն իրը յազրերականց հոտէին յաշաց իւրեանց։ այլքն բարձրածիչ աղաղակաւ՝ իրը այն թէ զերկինս դողացոցանէին։ իսկ կէսքն խիզախելով և ի զէնո ընթանարով զմոհ քան զկեանս ընտրէին։ իսկ անանք ի սուրբ ուխտէ եկեղեցցին՝ զաւետարանն ի ձեռն առեալ, աղօթիւք առ Աստուած կարգային, և այլք ըզձանային զպատառումն երկին, զի անձանց լիցի զերեզման։ Եւ այսպէս շատպ տագնապի ի վերայ մողպետին հասուցանէին։ Բազում անգամ աղաչէր զօգնականն իւր, զի ի մահուանէ կարասցեն զնտ ապրեցուցանել, և ողջանդամ անդէն յարքունիս հասուցանել։

14. Այլ վասն գործոյն յոր եկեալն էր՝ սոփակէր զնոսա և ասէր. Թող գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, զի ի բաց թողացոցանէ զպալիսի իրաց առաջարկութիւն. զի եթէ ինքեանք ասոսուածքն եկեսցին յօդնութիւն, չէ հնար օրինացս մողութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն, որպէս զփորձ առի միաբանութեան ուխտին եկեղեցցոյ։ Զի թէ էին զօրք աշխարհիս մողք<sup>1</sup>, ոչ ինչ խնայէին սոքս ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն զարտաքինան, այլ և յեղբարս և յորդիս և յասենայն մերձաւորս իւրեանց, նաև և ոչ յանձինս իւրեանց։ Մարդք, որ ոչ ի կապանաց զանգիսին, և ոչ ի տանջանաց երկնչին, և ոչ ի սասցուածոց պատկառին, և որ յետին չարն է քան զամենայն չարիս, մահ քան զկեանս ընտրեն, ով է որ կարէ նոցա դիմոկաց լինել։

1. Մոդ. Աւետայի բեկուաւ՝ մակուտ  
կամ մազաւա՞ թեկուագրոց մէջ մա-  
կուտ յուն մազո՞ս, լու մակուտ . ա-  
րար . մամուս . միջնադարեան պարսկ .  
մուղ , մոզ , մով , որոյ յոգնակին մուղան  
կամ մովան :

Մակուտ , մուղ , որպէս և Հայերէն  
« մոդ » երկու նշանակութիւն ունի , ա-  
քմանդ . նղիշէի

բահանայ , վարդապետ զբագաշոական .  
թ հետեւող մոգական կարգաց և օրինաց .  
արդ երկրորդ իմաստով խմանալու է աս-  
տանոր որպէս և ի 18 սոսորէ՝ « մողն և  
զանդիկն և հրեացն և քրիստոնեացն » .  
և Յ. թ 142 « քրիստոնեայ էր յառաջ , և  
Յազկերտ բռնի մոգ արար » :

15. « Հուեալ իսկ իմ էր ի նախնեաց մերոց, եթէ յաւուրս Շապհոյ՝<sup>1</sup> արքայից արքայի, իբրև սկսաւ ուստմով այդ աճել և բազմոնալ և ըսուլ զամենայն երկիրն Պարսից, և ևս անգը յարեելս հասանել, իսկ որ վարդապետքն էին օրինացն մերոց՝ յորդորեցին զիժադաւորն, զի մի բնաւ ամեննեին բարձրցին օրէնք մնողութեան յաշխարհէն, ետ հրաման սասափիկ, զի լուեալ դադարեացէ քրիստոնէութիւնն: Եւ որչափ նա կամեցաւ արդելու, ևս քան զիս աճեցին և բազմացան, և հասին մինչի յաշխարհն Քուշանաց, և անտի ի հարաւակողմն՝ մինչի ի Հնդիկս՝ տարածեցաւ:

16. « Եւ այնպէս աներկիւզ և համարձակք էին յաշխարհին Պարսից, մինչի յամենայն քաղաքս աշխարհին եկեղեցի շինեցին, որ զանցուցանէր պայծառութեամբ զիժադաւորաբնակ արքունեօքն՝<sup>2</sup>: Շինէին և վկայարանս իմն անուանեալս, և զնոյն զարդ եկեղեցեաց զարդարէին, և յամենայն տեղիս՝ յապասս և յանապասս միայնանոցս

1. Երրորդ գարուն սկիզբէն ի վեր, որ Յարեւական բալմուս կը կոչուի: Այդ երից կրօնից իբարու չփման և ընդդիմակցութեան միջոցին Մանի կամ Մանէս անուն ունի կը յանդդնէր սոցա իւրաքանչիւրէն, ինչպէս և ի Պուտայաւթենէ մէկ մէկ բան առնելով նոր կրօն կամ աղանդ մը ձևացնելու. և կերպով մը ցասանք իբարու համաձայնեցնելու. և անհամար հետեւողներ կը գոնէր (Տես Ուունսոնի պատմ. Սասանեաց և Միւմանի Պատմ. Հրէից): Սակայն մոզոկեմին ակնարկած թագաւորը Շապուհ երկորդ կրկայնակեաց կոշուածն է, որ քրիստոնէութիւն որ հզօրապէս կը տիրանալոր ի Հայու և կը սփուէր տարածանէր ի Բարեւաստան, ի Բակորիս և մինչեւ ցնդիկս. զշրէութիւն որ ի բազմաց հետէ հաստատեալ էր ի Միջագետս և ինդեան կեդրոնատեղի ընտրեր էր զիւրելուն. հրէութիւնն անգամ որ ընդհանրապէս այնքան անշարժ և անփօփօի է, այն ատենները կարծես թէ նոր կեանք մը և նոր ձե մը կաշխատէր առնելու այն դպրոցաց մէջ, ուր կը շարադրուէր մեծահատոր և տարօրինակ հաւաքածոյն,

2. Քրիստոնէութեան մինչև ցշնդիկս տարածուելուն քրայք տես Bohlen, das Alte Indien. հատ ա էջ 369. զոր ի վկայութիւն կը կոչէ Ուունսոն իւր Սասանեաց պատմութեան մէջ, էջ 95:

3. Կերեկի թէ այդ առաջին դարուց մէջ քրիստոնէութիւնը ժողովրդեան հարուստ և բարեկեցիկ մասին մէջ ալ մեծ ընդունելութիւն զուած էր յարեւալս, մինչ ներհակը եղած էր յարեւալս:

շինէին: Եւ իրրե ոչ ինչ երեկը յայսնի<sup>1</sup> օգնութիւն ուռտեք, աճելով աճէին և բազմանալով բազմնային, և մարմնաւոր մեծութեամբ մեծանային: Զարատճառ հարստութեան մեք ինչ ոչ դիտէաք. բայց այսչափ ինչ ճշշմարտի խմանայաք, զի տիեզերք ամենայն զինի ուսմանց նոցա գնային:

17. «Թէպէտ էարկ ի նոսա թագաւորն զձեռն իւր խստութեամբ, և զրազումն կարաւ և չարչարեաց ի նոցանէ, և զիս բազումն մահուամբ սատակեաց, դառնացաւ և ձանձրացաւ յանձն իւր, և զնոսա ոչ կարաց նուազեցուցանիլ ի բազմութենէն: Գարձեալ թէպէտ փակեաց և կնքեաց զգրունս եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն Պարսից, նոքա զամենայն տան եկեղեցի արարին. և յամենայն տեզուջ զիւրեանց օրէնսն կատարէին: Եւ զանձինս իւրաքանչիւր վիպարանս համարէին, և լաւագոյն զշինուածս մարդկեղէնս քան զհողեղէնս<sup>2</sup> հաշուէին: Ուուրք սպանողացն բթեցան, և նոցա սպարանոցին ոչ ձանձրացան. տարառուք ստացուածոց նոցա աշխատեցան, և տարին օր քան զօր աճեցեալ բազմացաւ: Որտմուեալ էր թագաւորն, և յոյժ դառնացեալ դահիճք բարկութեանն. իսկ նորա արթունք և զուարթունք, և ինդալից ընդունէին զամենայն հարուածս տանջանացն, և սիրով տանէին զամենայն յափշտակութիւն ընչից իւրեանց<sup>3</sup>:

1. Հաիդա՛ Աւեսդայի լեզուաւ՝ յայտ. հակիմ։ յարստապէս:

2. Այս բառս կը ցուցանէ թէ շինուածեան մէջ քարի գործածութիւնը առ հասարակ սակաւ էր. ներկայ աւերակներէ ալ կ'երեի թէ ազիւսը չատ աւելի սովորական էր: Այսպիսեան վարդապետը կը պատմէր մեզ թէ Պարսկաստանի հիւսիսակարանս իւրեանց, որք շատ գիւրութեամբ կը բաձրանան և բաւական ալ ամրութիւն կունենան: Ազյն եղանակաւ շինուած են Երեանաց և Եղմիածնաց պարփակները և Վանաց սները: Շարտէնի և Ֆլանարէնի վկայութիւնքն ալ կը հաստատեն մեր հանգուցեալ սովորին և հնագետին տուած տեղեկութիւնները: Աւեսդայէ ալ կը հետեւ թէ նոյն իսկ աւելի հնագոյն ժամանակաց մէջ, բնակարանը ընդհանարապէս ազիւսէ և կամ յարեւու թրծած հողով շինեալ էին: (Տես Հարլեզի Աւեսդայն. հատ. ու. էջ 165):

3. Պահուահիշի մէջ Պապիկան Արք

18. « իբրև ետես թագաւորն եթէ դռոհ տուեալ դիմեցին ի մահ իբրև խաշինք սուրբք յաղն երկնաւոր, արգել և կարճեաց ի նոցանէ զհարուածու տանջանացն. և հրաման ետ մոգաց և մոգպետացն, զի մի ամենենին ոք խուեսցէ զնոսա, այլ հաստատեալ կայցեն աներկիւ- դութեամբ յիւրաքանչիւր ուսմունս, մոգն և զանդիկն : և

տաշրի և նորա որդւոյն Շապհոյ առա- ջնոյ ժամանակը մազդէականութեան պը- զընձեալ դարը համարեալ է, քանզի երկուքն ալ յոյժ պայծառացուցին զգէնն մազդեզանց. «Շապոհ կարգաւորեց զաշ- խարչ զոր ես արարի ասէ Աւարմազու. նա հաստատեց և զօրացոյց զպուշտակի (որ է ազտառթիւն ի մեզաց՝ բարի գործովք) աշխարհին ասհմանաց մէջ և յերեան հանեց զբարութիւն ամենու- րեք : (Պարսիկք իւրեանց կրօնին Վկե- տեմ վեհ կամ բարի դէն կ'ըսէին և նորս հետեւոցաց՝ վկնտենան կամ պատի- նան : (Տես Pahlavi-Pazand Glossary), ուստի և վեհենշապուհ: Շապհոյ բար- ձրագոյն պաշտօնեալն և քրմազեան Աւ- դարու-բատ, որդի Մարտսրանուայ, իւր քարոզած կրօնին ճշմարտութիւնը ապա- ցուցանելու համար թերթաւատից, իւր կուրծքին վրայ հաւած պղինձ թափել ուստած էր (Տես Pahlavi texts հաս- էջ 199): — Այսու ամենայնին Շապուհ առաջնոյ ատենը քրիստոնեայք հալա- ծանը շկրեցին: Բայց նոյնը շկրնար զրու- ցուի Շապուհ երկրորդի նկատմամբ՝ իրկանակեաց կոչեցելուն, որուն հա- մար է մոգպետի խօսքը. սա սաստիկ հալածանս յարուց Քրիստոնեութեան

մեծնալը արդիւելու համար և ծանր հարկ

մը դրաւ քրիստոնէից վրայ (330ին). և յորդամ Սելնկիոյ եպիսկոպոսը Սիմեոն խստութեամբ քանզատեցաւ այդ հար- գէն Շապուհ Նկեղեցիները փակել ուսւաւ- նոցս ստացուածքը գրաւեց ու մեռցնել ուսուաւ զԱմենին: Կոստանդիանոս կայսրը,

որ գեռնոր քրիստոնէութիւնը ընդուներ էր, նամական յանձնաբարեց Շապհոյ որ հաւածանքը գալորեցնէ . բայց նու մոխիք չըրաւ և սկսաւ պատերազմի պատրաս- տութիւն տեմնել (Որդինըն Պատմ. Ասանեանց էջ 147): Տիկարարի հետե- ւեալ հաստուածն ալ կը հաստատէ մոց- պետին այն խօսքը թէ Շապուհ Բ հաւակ յեռոյ թուլացոյց զհարածանս և ազա- տութիւն չնորհեց ամենայն կրօնից. «Շա- պուհ արբայից աբբայն, որդի Որմզդաց, հաւարել ուսւաւ աշխարհիս ամէն կողմի բնակլաց վարդապետութիւնը առ ի քրն- նութիւն, և լուսաւորութիւն, և ճո- խացնելու համար զԱվանիանաք? : Յետ զտելոյ և որոշելոյ Ադր-Բաղայզ զվարդա- պետութիւն (Զրադաշտայ) բաղդատե- ցին զնոսա զանազան գենից հետ. հաս- քերուն թիւը ճշդեցաւ և այսպէս պա- տուիրեց Շապուհ (մազդեզանց). «Հիմա որ տեսանք գումաննս աշխարհի, ամե- նայն սք պարտի իւր գեռին հաւատարիմ մեալ, զայդ պիտի ջանամ ի զլուի հա- նել » . (Տես Pahlavi-Pazand Glossary էջ 146-147):

1. Մոդ' աստ ես իբրև մոգական ո- րինաց հետեւոյ՝ և ոչ իբրև վարդապետ նոյն օրինաց (տես ի վերոյ 14 ծն 1):

— Զանդիկ՝ պարտկերէն Շամայ զանդիք,

և ըստ Պիւրհանի-Գամթիի, հետևող Զանա- գրոց Զրադաշտայ . այս է որ հաւասա- րնձայէ ի մեկնութիւնս, յաւանդութիւնս և յաւելորդապաշտութիւնս առաւել քան- ի գիրան: Եւ ըստ Նէրիօսանկի, նա որ բարւոր խորհի զԱրմենէ և զդիւաց:

հրեայն և քրիստոնեայն, և որ այլ բազում՝ կեշոք՝ են ի կողմանու կողմանու աշխարհին Պարսից։ Եւ ասպա առ երկիրն զխազազութիւն հաստատութեամբ, և լոեալ գա-

թէսէա զանդիկ՝ առհասարակ և հերձուածնոց ալ կը նշանակէ, բայց ի մասնաւորի (և այս իմաստավոր գործածած է իցիէւ) և անոն ազանդաւորացն ոքը յարեմուեայց Մանիքեցիք կոչեցան յանուն ազանդապետին Մանեայ. (Տես ի վերոյ 15 Ճ 1. և յէջ 146—147)։ Մանիք Աւեսդայի այժմ կորուսեալ Զանտմը կամ մեկնութիւն մը հիմն առնելով, կամ Զրադաշտայ զրոց՝ ուզդափառ Մազդեանց կողմանէ հերետիկոսական համարեալ մեկնութիւն մի տալով, երկու արմատու կը քարոզէր՝ բարեայ և շարի, ինքնեւկաց, ճաւասարազօր և յաւիտենեական. մինչ մոզքն զնոսս յլութեամբ և ծննդեամբ ի Զրուանայ սերեալ առէին, և զմին յաւիտենական և զմիւսը ժամանակաւոր կը ճանաչէին։ Մանիք առան ի զրադաշտականութենէ զերգարմանեան վարդապետութիւնը, ի պուտահայութենէ զոգեփոխութիւն, ի թարմուտէ զիապալագիտութիւն (Cabalisme) և ի գրիստոնի Աւեստանէ զերրորդութեան խորհուրդը։ Քրիստոս Միհր աստուածն էր և ընակէր յարեակակ։ Խակ ինքզինքին համար կ'ըսէր թէ Միխիմարիչն էր զոր խստացաւ Ցիսուս Խրիել առ ի ցուցանել մարդոյ զանազարհ ճշմարտութեան, և թէ և լորդանկը զոր շարադրէր էր և իսր ձեռամարդ պատկերօք և նկարիսք զարդարեր էր, քանզի քաջ պատկերահան ալ էր, Աւեստարանին տեղ պիտի մասյը։ Զանդիկը շէին ընդուներ մեռելոց կամ մարմինը յարութիւնը, որ Զրադաշտայ հիմնական վարդապետութիւններէն էր (Եղնիկ 290)։ Ի մասին յարուց աւելի խստակեացք էին և պիտի կը համարէին զամուսնութիւնը. մինչ մոզք՝ զերդիք և անձնադիրք։ Իրաւ-

բու կարգէ դուրս ատելութիւն ունեին։ Մոզք աւելի բազմաթիւ էին յԱրեւանուս Տէրաւթեան՝ ի Մարաստան և ի Պարսկա ։ Խակ Զանդիկը յԱրեւելու՝ ի Բակորիա (Եղնիկ 116—117 և 287), Թափարի ալ երբ Մանեայ անունը կուտայ, Մանիքի Զանդիկ կը կոչէ զնատ Տիս և Բազմավէզ 1892 Օգոստ Անդամական։

1. Եղիշէ կը գործածէ զբառդ իրրի կրօն, գէն, երբեմն ալ մի և նոյն դենի երբեք զանազան վարդապետութիւնը, որպէս մեզնենոյ յԱրարացիս, որ այդ կըրկին իմաստու ունի։ Այս պարսկերէն քէլ կամ քայլ (Աւեսդայի մէջ տքակ) բառը չկրնար ըլլալ, վասն զի նոյնը ունիմը հայերէն՝ քէլ։ և ոչ մարդ է շփոթել ընդ եացից որոյ լծորդն է և յաշտ ։ և կեշա ։ և բազմադ զրոց յերակ բառն, (Աւեսդայի մէջ Զէսուի կամ Զէսոս), զոր Պ. Աւեսդ կը թարգմանէ վարդապետութիւն։ Է և յաշիտեն տալ ճաշակել, յայտնել, վարդապետել։ Է բաղանդ շատ պարսկերէն բառից մէջ կը փոխուի ի ճ կամ ի ։ Որո՞նք են սական այդ ուրիշ բազումը կեշորդն ոքը զտանէին ի կողման կողմանս Պարսից։ Յայտանէ էր անշուշտ Մարկիսնի ազանդը, զոր հերքելու համար Եղնիկ յասուկ գիրք մը զրած է։ Այդ ազանդիդ Պարսկաստանի մէջ ծաւալած լինելն արդէն ուրիշ ազբիւներէ ծանօթ է. բայց տարակյա չկայ թէ լունիկ սյդպիսի երկասիրութեան մը հարկ չէր տեսներ եթէ ի հինգերոց գարու տակաւին կարեսրութիւն չունենար։ Բազմաթիւ հետեւզներ ալ ունենալու էին Պրահմանութիւնը և Պրուտահայութիւնը մանաւանդ պետութեան արեւելեան սահմանաց վրայ։

դարեցին ամենայն խռովութիւնք յուզմանց։ Քանզի ընդ-  
մերոյ աշխարհին շարժմանն՝ և արևմտութք ևս՝ մեծապէս  
շարժեցան, և ամենայն ջաճկաստան ընդ նոսին խռո-  
վեցան։

19. «Զայն ահա ի լսելոյ գիտեմք. բայց այս որ ես  
ինձէն աչօք տեսի, թուի ինձ՝ թէ մեծագոյն ևս լինի  
քան զառաջինն։ Արդ դու որ մարզպանդ՝ ես աշխար-  
հիս, պարտ է քեզ հոգ յանձին ոնել. գրել և ցուցանել  
յարքութիւնիս զմիաբանութիւն բռնութեանս, որպէս աներ-  
կիւղութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի։  
Եթէ չէր մեր աճապարեալ և ի փախուստ գարձեալ,  
միտում՝ ի մէնջ ոչ տային ապրել։ Եւ եթէ անդէն մար-  
դիկ այդպէս բռնացան, եթէ յանկարծ զինուրս ևս ընդ  
ինքեանս միաբանեցացանեն, ո կարիցէ կալ առաջի գո-  
ցա յանդուգն յարձակմանդ։

20. «Ես ահա անտեղեակ էի անքակ ուխտի եկեղե-  
ցւոյդ ի միմեանց. զի այլ է՝ զոր լսէ մարդ, և այլ է՝  
զոր տեսանէ հաստատուն իւրովք աչօք։ Դու որ ի ման-  
կութենէ յայդմ օրէնս ոնեալ էիր, և ճշմարտեալ գի-  
տէիր զպնդութիւնդ մարդկանդ, եթէ առանց բազում  
արին հեղոյ գլուխ մեզ ոչ տան ձեռն արկանել յեկե-  
ղեցիսդ, ընդէ՛ր ոչ զայդ ամենայն հաստատեալ յանդի-  
ման շասացեր ցմազաւորն։ Քանզի ամենայն նախարա-  
րացն աւագ դու էիր, և զբուր աշխարհս քեզ յանձն  
արարեալ էր մարզպանութեամբ. ընդէ՛ր ոչ մեծապէս

1. Կոստանդիանոս ինքինքն համբէն  
քրիստոնէից պաշտպան կը հռչակէր։  
Լայսեր տուած խրատուցը ապարդին  
մելը և Պարսից պետութեան մէջ Քրիս-  
տոնէից գէմ կատարուած անզմտութիւն-  
ները անքան յուզութե պատճառած ըլ-  
լալու էին ի Բիւզանդիոն, որ Շապուհ  
երկրորդ կոստանդիանոսի աւելի ազգե-  
ցիկ եղանակաւ միջամտելու վախէն, պա-  
տերազմի պատրաստուելու հարկը տե-  
սաւ։ Բնական էր որ Տաճկաստանն ալ՝  
այս և Միջագետաց Արարացիք, որոց  
մէջ ալ քրիստոնէութիւնը բաւական ըն-  
դունելութիւն դառած էր, և որք անշուշտ

Շապհոյ խիստ կառավարութենէն աը-  
քոն էին, հանգարս չկենացին Հռով-  
մայեցուց և Պարսից մէջ գժառութիւն  
ծագած ատենը։

2. Վասակայ ուզգեալ են ոյդ խօս-  
քերդ։ Մոզգեալ ի սկզբան կ'ուզէ որ  
Վասակ զրէ առ արքունիս եղելութիւնը  
և զարծոց գժաւարութիւնը։ Մարզպանին  
վկայութեանը վրայ ալ Դաւոր շէր կըր-  
նար իրաց անշաղող ելքը Մոզգեալին  
անխոնէմութեանը կամ անկարողութեա-  
նը վերագրել։ Բայց երբ Վասակ յանձն  
շառնուր, ինքը կը սոխուսի անձաւը  
գրելու։

Հոգ տարար յանձն քո: Զի յայլ ժամն իմաստուն էիր, և ես գիտէի. զայս՝ դործ իմաստութեան ոչ դործեցեր: Ապա թէ ոչ, յայտ է եթէ դու ի նոցա բանի ես, և քյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս և ընդ զօրս:

21. « Արդ եթէ այդ այդպէս է, և քեզ կամք չէ ունել զմնդութիւն, մի ինչ պատկառեր դու երկիւղիւ յարքայէ. ես գրեմ և ցուցանեմ ի դուռն մովզետան մովզետի՝ և գերանդարձապետի և մեծ հաղարապետին,

1. Դիտելի է թէ Հայաստան Խըրկուած մովզետ իշխանութիւն չունի ուղղակի թագաւորին գրելու այլ պաշտօնէիցը: Ըստ Միհամէլ-իւթ-թափարինի, Պարսից պետական պաշտօնեայք կամ վէզիրքն « Տաօմեռը » կը յարջորջէին: — Մովզետան մովզետ այս և մովզետաց մովզետը կամ գենպետն Պարսից. որ Մահմետականաց քառը-իւլ-ցուռտարին կը համարատասիանէ, գհնի վերաբերեալ ինդրոց մէջ վճիռներ կու տար. և ըստ Թափարիի նոր թագաւորի նա թագ կը դնէր ու արքայական պատմուածանը կը հազցնէր: Այդմ մեան պարսկերնի մէջ յատկացեալն յառաջ կը դրուի և երկուքն մէջտեղը իրաֆետ կը մտնէ. մայդական-մովզետան բայց ի հինգերորդ դարուն կը սէին մովզետան-մովզետ: յատկացուցիւը նախադասէնզի որպէս Շահանշահ արքայից արքայ և ի Սասանեան արձանագրութիւնո՞ւ Մալրան մալրան: Անմիջապէս մովզետէն ետքը կու զային, ի մոգութեան կարգին, Մովզետը, որը գտաւաի մը կամ նահանդի մը մոգուց առաջնորդք էին, որպէս իշխանովուրքն ի մեզ, իսկ մոգքն էին վարդապետը օրինաց: Այդմ Բարսիք մասիտ որ է մովզետ, առելով իմանան՝ սոսկ վարդապետ. տասդուր անունը կու տան Եղիշեայ վարսն մովզետի տատիճան և պաշտօն ունեցող անձին, և Տասդուրիտասիրան՝ Մովզետան մովզետի:

Եղիշէ անդամ մի միայն դործածած է Դիտեանդարձապետ: այլուր կը տեսնենք առանց դեր մասնկի անդերձապետ: զոր այլ գրչագիրը զնեն հանդերձապետ: զոր օրինակ՝ Մովզետ անդերձապետ ի մեռան մովզետն մովզետի կամ սոսկ Մովզետ անդերձապետ: և այդ մարդուն պաշտօնն ինչ որ ալ ըլլար, գիտեմք յլցիշէն թէ մովզետ մի էր. (Տես 45, 93, 98. Յ. Բ. և Փարազ. Էջ 262, 291, 307):

Ըստ Հայկազետն բառարանի Դիտեանդարձապետ է փոխանորդ և օգնական հանդերձապետի, կամ դեր-հանդերձապետ: Ըստ Առձեռն Բառարանի դեր-անդերձապետ՝ գանձապետ, իբրև խաղատառ, որ պահէ թանկազին և ականակապ զեխասները: Խակ անդերձապետ ըստ Հայկ՝ Բառարանի է պաշտօն և հրամանատարութիւն ինչ ի դրան Պարսից մանաւանդ ի կարգի մոգութեանց. մովզետ: Այդ զանազան և հակասական մեկնութիւնորդ անընդունելի կ'երեին: Պարսից արքունեաց հանդերձապետը՝ (Օմանեանց Գաֆրան պատուին կամ հաւացձը պարզի) կընայ կարեոր պաշտօնեայ մ'եղած ըլլար, որպէս մարդուն և համբարապետն Պուցե և բառան սկիզբը գտնուած է բազաձայնը բառին նութիւնը շփոխեր և երկու կերպով ալ կարելի ըլլայ գրել անխափիր, ինչպէս « համբարապետ » զրի ևս « ամբարապետ »: Բայց յայնժամ ևս գժուարին կ'երեի մեզ մեկնել դեր մասնիկը, Հայաստան խրկուած

զի ածցեն զարքայ ի հաւանութիւն, որպէս զի ի բաց թողացաւսցէ ըստ առաջին հրամանին, և ի կամ մարդկան ասլաստան արացեն, զի առ սակաւ սակաւ ընդելցին ընդ օրէնս մոգութեանս . զի որք կալցին՝ սիրով երեւեցին կատարեալ զհրամանս արքունի՛: Քանդի մարդ:

մոգպեուը, երբ կրօնական և ամենաձանր խնդրոյ համար ուղղակի գենպետին և մեծ հազարապետին Դիրան կը գրէ: Ինչ չու փոխանակ ուսացին հանդերձապետին ուղղելու իւր գիրը, որ միւս երկուրին նացելով ինքն իսկ երկորորդական և առարին պաշտօնեայ մի էր, ասոր փոխանդրդին դիմէ: Դիմուելի է ևս որ գերանդապետակ Դինպետէն այս է Մագպետան մոգպետէն անժիշտապէս ետքը ու մեծ հազարապետէն այս է Միհրներսեւէն յառաջ կը յիշուի: Խակ գանձափետն սուուգարանութեանը հաստատել անհընարին կը թուի մեզ:

Ահաւասիկ մեր տալու մեկնութիւնը: Բառանդայ մէջ կը դոնեմը Մոգաց անգերձապետ, որ Շապուհ կը խրկէ Արշակայ գէմ զօրք բազմօք. արդ մոզ՝ պարսկէն է մով, ուստի և կազմի մովպետ և յոզնակի ուղղական և սեռական ալ կը լայ մովան: Եղիշեայ և Փարպեցոյ և մովան անդերձապետը > չէ այլ ինչ քան չ զմոցաց անդերձապետն > բառանդայ:

Մագան չէ յատուկ անուն, այլ յոզն, սեռական մայ հասարակ անուան: Կը մեայ մեզ մեկնել զերկորդ բառոք: Ել պարսկէն անտարդ, յշան իւրատ, խորհուրդ, կատակ, զիր կտակի: շարադրութիւն, պատմութիւն, զիր, մատեան: Բազմադ զրոց մէջ անտարդինստան, զոր Պ. Ռէսոդ կը կարգայ անտարդինստան՝ իւրատել, ուսուցանել, առաջնորդել (Տես Մայնօլիքա): Հայերէն ալ ունիմք անդարձ զոյական՝ այլ միայն չ կտակ > նշանակութեամբ: Ռատիկ անդարձապետ է խորհրդապետ, խորհրդական գոցէ, ևս զըրապետ՝ մերձականի: Եւ որովհետեւ Ե-

զիշէ և Փարպեցին առեն՝ մովան անգերձապետի և ձեռամի մովպետան մովպետի, ու այդ պաշտօնաստարիդ մոգպետ մի ըլլալն ալ մեզ կը զրոցուի, տարակոյս շմար, թէ անդարձապետ՝ մոգուց անգերձապետն կամ լաւ ևս՝ անդարձապետն է գարապետ, խոհնրդական և փոխանդր մովպետան մովպետի և հաւանօրէն ընդհանուր տեսուչ և կառավարիչ Դինպետի Դիրան, զոր ոչ միայն նկատելու է իւրեւ մոգուց և կրօնական խնդրոց բարձրագոյն առեան՝ այլ և պաշտօնարան արդարութեան և հասարակային կը թուի թեան: այդ պաշտօնէիդ պարսկէրէն տիտղոսն էր մովան անդարձապետ: Բայց աստանօր մոգպետը ոչ անդարձապետին այլ գերանդարձապետին գրելիքը մեզ կը յարանէ, այս է անոր երկորորդին կամ փոխանդրդին, քանզի անդարձապետը շայաստան խրկուած էր մոգուց բազմութեան հետ և մոգպետին զանուած տեղը չէր. Դիեր է պարսկէրէն մասնիկն Ծըր, յա և մերձ >, < ի >, < ի ներբոյ >, < յետ > և < ի ձեռանէ >: Եւ ե բուզանդայ մէջ Սակստան անգերձապետ, որ ուղղելի է Սակստան անգամապետու, և կը մեկնեմը «պաշտօնակայ» խորհրդական > կամ դոլրապետի Սակստան, քանզի ամէն կուսակալի քովը, մանաւանդ մեծամեծ նահանգաց մէջ, արբանի դոլրապետ մի կը զըտնուէր. Հերոդոդ զիրք Պ. Ճիմի. — Արտաշէրի Քարթ-Նամաքին մէջ ալ՝ Անտարձրագի ասրդարացաւսն որ թարգմանի ևսն գարձապետ պյուտէիոյ >:

1. Պարսկ. մարզ յւու գերման Mark, գոզ. Marche է ծայրը կամ եզր աշխարհէի, ուսհմանազլուի: Պարսից, Մարտաց,

է աշխարհս, դուցէ յորժամ վնաս ինչ առնիցեն, և ինչ քեանք յըտւեալ վասնեսցին յօսարութիւն, իսկ յորժամ աշխարհս թափուր լինիցի ի մարդկանէս, յայնժամ և քեզ գլխովին մեծապէս վնաս հասանէ յալզունուսս » :

22. Ետ պատասխանի մարդպանն մնդպետին, և առէ . « Ամենայն բանք խրատուգ՝ զոր ասացեր, ճշմարիտ են. բայց զառաջինն զոր չմացաք՝ տեսեր, և սեծապէս զզջացաք այժմ: Բայց դու արդ զոր ասեմն արա, և բարիոք թուեցի քեզ. սակաւիկ մի երկայնամիտ լեր և զիսրհուրդս քու արդել՝ ի բազմաց, բայց արանց՝ որոց ես առեմ, նոցա յայտնեա. մինչի ես ինձ ոյժ ժողովեցից զօր ի թիկունս ածելոց, և զուխտ եկեղեցւոյդ թերես կարացից երկիրեղել: Եւ եթէ զայդ այդպէս արարից, դիտեմ ապա թէ և զհրամանն արքունի կարող եմ կատարել » :

23. Եւ անդէն հրոս<sup>1</sup> հանեալ ի Սիւնեաց աշխար-

որպէս և Հռոմայեցոց պետութեան մէջ ազգերն յերիս կը բաժանին. ատիրոդ ազգն. բ. նուանեալ գաւառք. գ. սահմանաց մաս գտնուող ազնիք, որ խրեանց սեփական օրինոք և սահմային իշխանաց ձեռօք կը կառավարուէին, բայց կը հանաչէին պետական աւագ իշխանութիւնը, և հարկաւու պազաց կարգն էին. (ՈԽԸՆԱԾՆ՝ Հերոդոս Հատ. ա. 61): — Մարզպան պարսկերէն է և զօրապետ - կուսակալ սահմանապլիսոյ կամ աշխարհի, որ զուանի մերձ ի սահման թշնամույ ազգի : , Commandant militaire des frontières, որպէս գերմաներէն Margrave: Եղելէ Հայոց մարզպանէն զատ կը յիշէ զմարզպանն Արաց: Հայաստանի մարզպանը ամենայն նախարարաց աւագ էր, ներկայացուցիչ Պարսից Դիրան և զլուխ կառավարութեան, որում՝ յանձնուած էր աշխարհն. նա կը հաւաքէր զհարկս և կը հսկէր ի վերաց տանտեսեարց, որպէս զի անհաւատարիմ շըլլան Ասսանեան պետութեան: Յանցաւոր մը կընար մեռցնել

տալ առանց հրամանի թագաւորին. բայց չկարէր փոփոխել զնախարարութիւնս: 1. Հրոս՝ պաշտպառուգ, levée, անկանոն զօրք. Բաւզանդայ մէջ կը սեսնենք ևս գուգազ հանել : — Լեռնցի ժողովուրդք աւելի շարքաւ և աղքատ ըւրանուն, աւելի գիւրաւ կը յարմարին զինուորութեան, միանգամայն և աներնին սեղերնին աւելի քիչ դժկամակութեամբ կը թողուն քան զբնակիցս դաշտաց և քաղաքաց: Ոխնեաց լեռնականք մինչև ցլերջին ժամանակի կորիճ և առկուն պատերազմող եղած են: Վասակայ ամենը քաղաքականութիւնը և քրիստոնեութիւնն այդ աշխարհին լեռնածորց մէջ քիչ յառաջարիմութիւն ըրած էր. ասկ թէ ոչ բնակիչն աւելի եկեղեցականաց ճայնին կը լուէին քան վասկայ. և ամենը մէկ տեղ չէին ուրանար զքրիստոնէութիւն. մինչ ուրիշ գաւառաց մէջ ժողովուրդն յերկուս բաժնուեր էր: Տես էջ 45-48 և 3. Գ. 10 և Եւ բոլովանդակ զիւր բոլոր աշխարհն ապստամբեցոյց յուրացութիւն :

Հէն զիւր գունդն ասուարացայց ի թիկոնն օգնականութեան մոգաց և մոգպետին։ Եւ ապա սկսաւ ասել. « Ազէդու անդամ մի հրաժարակ ի գուն տուր փասն այրուձիոյն՝ որ յԱզտանն է տասն հազար, զի ի ձմեռոց ի Հայս եկեսցեն. և յորժամ զնոսա ի ձեռին ունիցիսմք, չիք ոք որ եղծանել կարէ զհրաման արբոնի »:

24. Պատասխանի ետ մոդպեան և ասէ ցմարզպանն. «Այդ խորհուրդ գարձեալ իմոց բանիցս ընդգէմ է. քանզի մեք յորժամ բռնութեամք կռուեցուք ընդ աշխարհիս, այխարհո ի բաց քանդի, և մեք ի պատուհանէ չապրիմք. անձանց վեսա, և արքանի մեծապէս զեան<sup>2</sup>»:

25. Եւ ոչինչ կամեցաւ ամենեին ունկն զնել նմանարդպանն, զի սրտի մոռք կալեալ էր զպարսկական օրէնսն: Միասւ այնուհետև պատրել զոմանս կարսաւավ և զոմանս սպաքական բանիւք. զամիկն ամենայն՝ ահեղ բանիւք սպառնացեալ սրտաթափ առնէր: Հանապարզորդ առասացոյց զուճիկն տաճարին, և յերկարէր զնուազոն:

449-450 ուրախովթեան , մաշելով զերկայնովթիւն զիսերացն  
Հեռզս արբեցովթեան և ի կաքաւս լիտովթեան . քաղ-  
ցրացուցանէր մանաց զիարգս երաժշական և զերգս  
հեթանոտականս . մեծապէս զոհովթիւն մնացուցանէր օրի-  
նաց թագաւորին : Բերեալ էր և յարքունուս բազմու-  
թիւն կարաւայ , և միում միում կաշառ գագոս խթէր  
ի պատճառս պարզեի և պատույ . և բազում նենգու-  
թեամբ զանելեղ մարդիկ հրապարէր և յինքն արկանէր :

26. Իսկ զայս ամենայն իրքեւ տեսին սուրբ եպիսկոպոսանքն, ևս քաջ գրգեալ յորդորեցան ի նոյն միաբանութիւն, և հնարագէտ խմասութեամբ ընդ երկուարժաննեցին զրանակն։ Մանաւանդ իրքեւ հաստատեալ գիտացին ի միտո իւրեանց, եթէ անօրէն իշխանն Սիւնեաց զօրհասական վերսն ի յոդիսն ընկալեալ էր, խորշեցան մերժեցան և ի բաց փախեան ի Նմանէ։

1. Այս այն այրումին է, զոր Պար, սիկը ունեին ձորաց մարզպանին հրամանին ներքեւ, պահակը պահպանելու և Անդր-Լուվիանան ազգերը զայելու համար: Այս միջացիս Ազուանից երեխութեան էին, անդ խրկուած մողերուապաշտպանաթեան համար: Ազգը դէմ

զնաց վարդան։ մես ստորի 44 և 5 :

2. Գիտելի է թէ մոպեաը սըրան  
կը զարտորի երկիրը աւելէ ։ մաղեա-  
կանութիւնը կը պատուիք շենցնել և  
ոչ կործանել, գասն որոյ և աւերիչը  
ազատ շեն ի պատուհատէ։

3. *Quellen* 449-450.

27. Խորհուրդ արարեալ ի գիշերի միում ամենայն ուխտին բազմութեամբ, կոչեցին և զսպարապեան՝ զօրաց ի խորհուրդն. Հարցին և քննեցին և ի վերայ հասին մոտացն անշարժութեան, որոյ ոչ սակաւ մի թերացեալ էր ի սիրոյն Քրիստոսի: Եւ միաբան աղօթս արարեալ ի վերայ նորա, վերստին ընկալան զնա յառաքինութիւն: Եւ նովաւ որսացեալ զբազումն ի նոյն միաբանութիւնն, որք ոչ էին քակեալ յառաջին միաբանութենէն, եկին և ժողովեցան զունդ զօրաց բազմաց: Եւ ևս առաւել հեռագայն զատան ի մոգացն և ի մոգպետէն և յանօրինէն վասակայ:

28. Իսկ նա այնշափ յիմարեցոյց և ափշեցոյց զմիսս մոգպետին, մինչև չետ նմա իմանալ զելս իրացն: Սկսաւ բաշխել մոգս ի տունս նախարարացն և մեծամեծ ոռճիկս կարգել, զոհել պատրուճակս<sup>1</sup>, և բռնաբար կընքաւոր մարգկանն տալ ուտել միս յազածոյ, և երկիր պագանել արեգական: Իրբե սկսաւ բազմանալ ընդ ամենայն աշխարհն այնպիսի պղծագործ խառնակութիւն, յանդգնեցան և ևս կանայք վշտիպանացն<sup>2</sup> յաւուր կիրակեի անցուցանել զճարագունս եկեղեցւոյն և պատասել զհանդերձս հաւատաւոր կանանցն:

29. Զայս գուժկան ազմկի իրբե տեսին միաբան սուրբ եպիսկոպոսանքն, զաւետարանն ի ձեռն առեալ հասին և անկան տունց հարցաներոյ ի վանս սպարապետին<sup>3</sup>, ուր ժողովեալ էին զօրքն Հայոց: Համբարձին զձայնս իւրեանց և ասեն. Աղաչեմք զձեղ զամենեսեան

1. Այս է վարդան, որ ուրիշ ուրացեալ նախարարաց հետ Պարսկաստանէ կը գուռնայր:

2. Ոսքիկ՝ որ է ուտելիք՝ թայինոր և ոչ ժոշակ կամ դրամ: — Պարսիկք զպարուճակս զոհելու առեն՝ այլ եւ ոյլ աղօթներ և արարողութիւններ կատարել յետոյ կրակին կը ցուցանէին միացն: Միս յազածոյ՝ է միս զոհեալ, Նուիրեալ, ըստ Աւեսդայի՛ միշպատ:

3. Բառ պարսիկ. փուշդ առջ է թեկըն, կանակ. փուշդիսան՝ թիկնապահ, կը կըն, ելթէ շնչք սիսւիր, Ապարշապատ:

օգնական: Փշտիպանն էին մարզպանին պաշտպանութեան համար Պարսից դրանէն տրուոծ զօրքն, որ ազգաւ պարսիկ էին. — Հաւատաւոր կանայք. այլ է կուսան, մայրապետ, տես Յ. Բ. 83 և Տն:

4. Մամիկոնեանց բնակութեան տեղին էր ի Տարօն. բայց սպարապետը ինչպէս եւ նախարարաց զլիուուրները մայրաքաղաքին մէջ ալ բնակութեան տուն ունէին. իսկ մայրաքաղաքն յայնձամ կամ զոնեա եղելս թեանդ վայրն էր, ելթէ շնչք սիսւիր, Ապարշապատ:

սուրբ աւետարանաւո, եթէ ձերով խորհրդիւ գործէ զայն անօրէնութեան չարիս մարդպանն և մոդպեան, նաև զմեր պարանոցս հատէք, և ասկա յեկեղեցին ձեռնարկեցէք. ապա թէ առանց ձեր կամաց նովա զայն չարն գործեն, այսօր խնդրեսցի վրէժդ այդ ի նացանէ:

30. Իսկ որք էին ի ներքս ի վանս սպարապետին՝ յասն կացին, միարան համբարձին զձայնս իւրեանց առ Աստուած և ասեն. « Դու, Տէր, որտագէտ ամենեցուն, ոչ ինչ պիտի քեզ վկայութիւն ի մարդկանէ. եթէ իստ առեւալ իցեմք ի քէն սրտի մոտք, զայն դու ինքնին քաջ գիտես, այսօր իսկ դատեա զմեզ ըստ մեղաց մերոց: Ապա եթէ հաստատուն կամք յուխտի սուրբ աւետարանիս, դու Տէր, լեր մեր օգնական այսօր. և տուր զի՞շնամին ճշմարտութեան ի ձեռս մեր, զի արացուք ընդ նոսա ըստ կամաց մերոց »:

31. Զայս իրբե ասացին, ամենեքեան զդյուխ զդեռնի հարկանէին. և ողջունեցան յաւետարանէն և յեպիտ կոպասացն: Իսկ մի ոմն ի նախարարացն<sup>1</sup> որ անդր գիպեցաւ, էր ի նոցա խորհրդի, և ոչ միարանեաց ընդ նոսա ի մեծ վկայութիւնն. և անդէն առ ժաման ի նոցունց ի տեղւոյն քարկոծեցաւ, և ահ մեծ անկաւ ի վերայ ամենեցունց:

32. Յայնժամ ամենեքեան ի նախանձ բարկութեան րրգեցան, մինչեւ ամենայն տեսողացն երիկամունքն գոզային, որք առ ոչինչ համարեցան զպարգևս արբանի, և առ ոմն հարին զհրամանս ահագինս: Ընթացան վաղվագի ի զէնս իւրեանց, վառեցան կալմեցան զդիշերն ամենայն, և ընդ ծագել արեգական զգունդն յերիս մասնես բաժանեալ ի բանակն արկանէին: Գունդն առաջին յարելից կուսէ, և գունդն երկրորդ յարեմորից կող-

1. Փարզեցին քիչ մը տարբեր կը պատմէ այդ գէպքդ. Սպարապետին փառաց մէջ որոշուեր էր բացէ ի բաց ընդդիմանալ Պարսից. « Մի ոմն միասանեայ տանէն, որում անուն էր Զանդազան, սերմն ճանու... լուր յամանց զնորհէալն Հայոց և երժեալ վազվակի պատմական: Որոյ բանից իրազամէր Վասական: Որոյ բանից իրազամէր Նենգաւոր քառուին աւագ նախարարըն Հայոց, կալեալ զնա ի գեօդն որ կուի Արծակ, տարեալ կապեցին ի միասում ևս ի գեօդ յանուանեալ Բերգիւնս, ի նմին Բագրեանդ գաւառի, զոր և յետ բազում աւուրց' ըստ արժանի գործոց իւրոց անօրէնութեանց՝ քարկոծեալ սատակեցին »:

մանէ, և գունդն երբորդ ի հիւսիսյ կողմանէ, շուրջանակի ի մէջ առեալ վասկեցին զբազմութիւն բանակին՝, և զբազումն կոսորեցին՝, և զես բազմագոյնս կապեցին զերեելի մարդիկ, և արկին ի բերդու ամուրս ընդ իւրեանց իշխանութեամբ։ Եւ զառ և զապուռ զաւար՝ բանակին ի մի վայր ժողովեալ պահէին իրը հրամանաւ արքունի։

33. Իսկ զմարզպանն ձերբակալ արարեալ, և միաբանէր ընդ նոսա երդմամբ՝ հաստատաւն կալ յուխտին, զզջանայր զառաջին քակումն ի նոցանէ։ Անկանէր ապաշխարութեամբ յոսա սուրբ եպիսկոպոսացն, և աղաչէր խաղապատելով՝ զի մի մերժեալ ընկեցի առ ի նոցանէ։ Իրկնէր և երեքինէր զանսուս երդումն առաջի բազմութեան ի սուրբ աւետարանն, գրէր և կնքէր զերդումն և կապէր զաւետարանէն, և ազաէր՝ զի յԱստածոյ յայտնեացի վրէժինդրութիւնն, և մի նոքա մարդկարար սասակեցեն զնա։ Իսկ նոքա թէպէտ և հաստաեալ դիտէին զնենդաւոր կեզծաւորութիւնն նորսա, և թէ խարէութեամբ դառնայ անդրէն ի հին մողորութիւնն, ոչ ինչ վոյթ առնէին ձեռն արկանել ի նա վասն առաջին յանցանացն, այլ սուրբ աւետարանին թողին ի դատապարտութիւն։

34. Իսկ որք եկեալ էին յաւարի առնուլ զառիրբ դանձն եկեղեցւոյն, ակամայ եղին զանձինս և զաւար

1. Բանակս այս է մոգաց և նախարարց հետ Պարսկաստանէ եկող զօրքն, զորս Վասակ սասուարացայց լեռնականօք, և որուն մէջ նորդ ալ կը գանուեը Աինեաց գնդաւն։ Այս բանակս էր ի Շահազարիվան Բազրեանդայ (այժմ Խուրիւնս)։ Վարդան յերի գունդս կը բանէ զջորս իւր և կու զայ կը պաշարէ զՎասակ։

2. Առասմանը դնել պարտ է Զարեհաւանի ջարդը։ Եւ արձակեալք յազգոթին սամիկ զօրացն բազմութիւն դիմեցին ի տուն մոխրանոցին։ Հմալով ընաւ աւագացն հրամանի։ և առեալ զկրակարանն վարեցին ի ջուրան զկրակ-

ոցն, որպէս ի զիրկս եղբօր, ըստ ասելոյ սուս վարդասկետացն Պարսից, զոր ըմբանեալ ջրոցն թշնամարար և ոչ եղբայրարը՝ ծախեցին։ Բայց զմողուցն բազմութիւն պահէլ առ օրն հրամայեցին զգուշութեամբ։ և ի զաղիւն ի ծագել արեւոն արս ի նոցանէ թուով ապանին սրով ի գիւղն որ կոչի Զարեհաւան։ Փարագ. էջ 182. Տես և Յ. Է. 27։

3. Բազանս լեզուաւ՝ արուրտան է յափշտակէւ, ապաել, աբուրու՝ ընդունելութիւն անցեալ։ — Այսար է աւարդութէ արարտէն աւարտութիւն, արտրտան աւարել։ ա + պար < առնուլ > զանտրանէ եւած կ'երեի։

իւրեանց տռաջի սուրբ եպիսկոպոսացն և ամենայն գօռացն. և եղծեալ ապականեցաւ հրաման թագաւորին: Եւ յաջողեալք զօրութեամբն Աստուծոյ՝ աղաղակէին և ասէին գոհանալով արք և կանայք և ամենայն ռամփիկ բազմութիւնն: «Պատրաստ եմք ի հաղածել և ի մեռանել և յամենայն նեղութիւնս և ի շարչարանս վասն սուրբ եկեղեցեաց, զոր աւանդեցին հարքն մեր առաջինք՝ զօրութեամբ զարսեան ջեան մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով վերսոին ծնաք ի մի յօյս հաւատոյն մկրտութեամբ ի Քրիստոս Յիսուս. ըստ նմին նմանութեան կամիսք շարչարանօք և արեամբ նորոգել զանձինս: Քանզի հայր մեր՝ զաւրբ աւետարանն զիտեմք, և մայր՝ զասպերական եկեղեցի կաթողիկէ. մի ոք չար անջրագետ ի մէջ անկեալ՝ զմեզ քակեսցէ ի սմանէ »:

35. Ոչ երիեր այնուհետեւ առաւել տէր քան դժուայ և ոչ աղաստ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ. և ոչ ոք քան զոք նուազեալ յարութենէ: Մի սիրո յօժարութեան ամենեցուն արանց և կանանց, ծերոց և տրդայոց և ամենայն միարանելոց ի Քրիստոս: Քանզի առհասարակ զմի զինուարութիւն զինուարեցան, և զմի աղան զրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի, և միով զօտեաւ ճշմարտութեան պնդեցին զմեջս արք և կանայք:

36. Բնկեցեալ կայր այնուհետեւ ոսկի, և ոչ սունցը իւր առանձինն արծաթ<sup>1</sup>. և արհամարհեալ առանց ագահութեան, անարգեալ պատուական հանդերձք առ ի զարդս մեծարանաց: Նա՝ իւրաքանչիւր ստացաւածք ոչ ինչ համարէին յաշս իւրեանց ստացողին, տեսանէին զանձինս իւրեանց իրբե զմեռեալ դիակունս, և զիւրագանչիւր գերեզմանս ինքեանք փորէին. և կեանք իւրեանց ի մահ համարեալ էին, և մահք իւրեանց անշուշտ կեանք:

37. Բայց այս բարբառ ստէպ ստէպ ընթանայր. «Քայլութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս եկիծ ժառանգեսցուք. զի կենդանի իցէ ի մեզ Քրիստոս, որում գիւրին է միւսանգամ նորոգել զսեզ ի հողոյ և զամենայն

1. Ոսկի և արծաթ, իմա՞ ոչ միայն ճռւթիւնը, մանաւանդ սոկունը շատ արամ այլ և անօթ, սպաս, կարասի, որովհետեւ սոկոյ և արծաթի զործա-

դրառաջագոյն զննչեցեալսն, և հաստուցանել իւրաքանչիւր ըստ դործու իւրեանց » :

38. Զայս և առաւել քան զայնս խօսելով, և մխիթարելով զանձինս և զմիմեանս, դարձեալ միւսանդամ՝ զինուորքն պատրաստեցին զզէնս իւրեանց, և աղօթականքն անդադար լինէին յազօթմն իւրեանց, և պահողքն ճգնէին ի պահս իւրեանց: Զայնք պաշտօնէիցն ի տուէ և ի զիշերի անհատ էին ի տուրբ սաղման. ընթերցուածք աստուածային կտակարանացն ոչ երբեք առնուին դադարումն յամենայն ժամ, սոյնպէս և մեկնիչքն ի մխիթարութիւն երկնաւոր վարդապետութեանն<sup>1</sup>:

39. Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին պարսիկին ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին. տապալէին քանդէին զբնակաւթիւնս նոցա: Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանոք իւրավք. և առնուին զանմասոյց ամուրմն՝ զԳասնի քաղաքն, զՄնին, զԱրտագերս, և զաւանս իւրեանց. զԵրկայնորդան և զԱրհնին, և զաւանս իւրեանց. զԲարձրարուղին, զԽորանիստն, զՄախանիստն, զանկասկածելի Ռդղականն, և ընդ նոսա և զաւանս իւրեանց. զԱրբանեալն, զՎանն աւան, ընդ նմին և զաւանսն իւր. զԳրեալն և զԿապոյսն, զԱրտան և զՎասակաշան<sup>2</sup>:

1. Ահա քանակ մը յորում զմնուորք զէնքերնին կը պատրաստէին, քահանայք և կրօնաւորք շարօնակ կազօթէին. ումանք պահէք կը պահէին, սազմոս կը զրուցէին. և քարոզիւք կը մեկնէին զաւասարան:

2. Եղիշեայ յիշատակութիւններէն կը հետեւի, թէ Արտաշատ ի էւս հինգերորդ դարու էր տակաւին « Թագաւորանիստն քաղաքն»: Հայոց, «ամրացեալ» և «կայեան» (պարսիկ) զօրաց: Անդեկան ժողովեցան յամենայն կողմանց նիշակակիցքն վարդանայ: Տեղ մի այլ կըսէ Եղիշէ « Մեծն Արտաշատ աւանոք իւրօք ։ Անդանոք՝ Պարսկաստանէն եկած մոգերն կանկներ էին ատրուշան մը, զոր քանդեցին Ասմուէլ և Արբա-

չամ: Պատճառ մը չենք տեսներ կարձելու, որ աստ յիշուած Արտաշատդ տարբեր ըլլայ Հայոց պատմական մայրաբազարէն: — « Քաղաք » անշատ նոյն է ընդ արաբացի անուան քա՞յլս: Պունտահէշի մէջ է ևս բալաք, զոր բընագիրը կը մեկնէ ։ բերդ ։

Անիս այս չէ ամրոցն որ և կոչի Լամափի, քանդի այր վերջինս կայ յարեւմուից լըրզնկայ, և այն ատեն Յաւաց իշխանութեան մէջ էր. այլ բերդն Շիրակայ որ յետոյ թագաւորանիստ եղեագրատունեաց: Մհճն Տրդատ զբերդո զայս Շիրակայ զաւառան տուած էր իւր ազգակից կամսարականաց, որոց ձեռքը մեաց մինչեւ ութերորդ դարուն վերջերը (Փորձ. 1880 մայիս. էջ 39 և

40. Զամենեսին զայտ խրաբանչիւր գեղիւք և տպա-  
րակօք, զօրօք և զօրագլխօք ի նմին ամի առեալ տասպա-

Ամիշան վարդապետի Շիրակ. էջ 6): Ի  
հմագերորդ դարուն ուրիշն Անիս այս  
էր ամուր մի անմատուց և պարապապատ  
(Փարու. 366):

Արտագերս. Ի Չանը վիճակէ (ի մուտո  
Կաղզմանայ և յահեկէ Երասիսայ), կը-  
աէ Ամիշան Վարդապետ, և ելանէ վոտակն  
կապոյս և առ նովաւ էր անշուշա բեր-  
դըն համանուն՝ ուր ամրացաւ Ամիստ  
Ա. և առ ինայելոյ յիւրան՝ անձնատուր  
եղեւ և Յուսուփ. յասաջնութեան կոչէր  
Արտագերից բերդ: Վարդան Վարդա-  
պետի աշխարհացոյցին մէջ գրեալ է.  
«Արշարունիք և Զօրն Երասիսայ Կաղ-  
զմանն է. անդ և գաւառն Գարեզենից  
և բերդն կապոյս, որ կոչէ Արտագե-  
րից» — Եղեշէ այլուր ասէ. «Եշ յա-  
ռաջ խաղային (Փարուիկը) ի միջոց աշ-  
խարհին, մարտ եգեալ կոսէնն ընդ մեծ  
ամուր կապոյս լերին»: Հաւանական է  
որ կապոյս լեռտ զԱրշարունիս կամ  
զկաղզման Շիրակէն զատող լեռնագու-  
տին է, որ այժմ կոչի Գարտատաղ. և  
այս գոտուսոյ մէկ գոտարամատուց դրից  
վրայ կառուցեալ էր անշուշտ Արտագե-  
րից բերդը, որ գոտէ լերան անուամբը  
կապոյս ալ կը յորչորչէր: Սա է Պլո-  
զուեսու՛ Artagigarta, Ստրաբոնի Ար-  
տարեալ և Ամիշանսուի Artogerassa  
կոչած Հայոց հօրագոյն ամրացներէն  
մին, որ կոնար մետասան հազար հե-  
ծեալս պահէլ ի ներքս, առև էջ 189.  
Ճ. 1: Է յարեւել կաղզմանայ և յա-  
հեկէ Երասիսայ Գերս զիւդ, որ գոտէ  
այդ բերդիդ անունը կը ցարդ: Ամայսն  
ուրիշ կապոյս բերդ մի ալ կար, զոր  
Եղեշէ քիչ մը սոսորե առանձինն կը  
յիշէ Ոինեաց աշխարհին բերդերուն  
չես:

Արհենի կամ Արխոնի ուրիշ է Արշնի  
կամ Արկանայէ, որ Տիարդէրիի արե-

մբան հիւսիսային կողմը գտնուելով  
Յունաց բամենին մէջ կ'իմար: Գուցէ  
ըլլայ Ամին, որ է յարեւելս Արճէչի,  
յեզր վանայ ծովու:

Ողակն կամ Ողկան. Լիդրասայ արե-  
ւելեան մեծ բազուկը՝ Արածանին կամ  
Մարտա Զայը Մշոյ դաշտը ուսուկելով,  
երբ կը համի անոր արեմուեան ծայրը՝  
կուրկուր կուռուած տեղ մը, երկու քա-  
րամայսի մէջ կը սեղմի և անափի կը  
զահավիմէ տամն մէդր բարձրութենէ և  
ահաւոր դգչմամբ: Ի քարավազիցդ եր-  
կու ժամոք շափ սասորե՝ մեծ սասակու-  
թեամբ կը բաղիտ գրիդրադէկ ալիշները  
ապառած բարձրաւանգակի մը գէմ, որոյ  
երեք կողմը շրջեւով երկայն քառակաւուի  
մերակզգի մը կը ձեւացնէ յաշակազմե:  
Արդ բարձրաւանգակի ջրայն երեսէն քա-  
ռասամն մէդր բարձր է և շուրջանակի  
պատահ եր պարսպաւ, որոյ աւերակ-  
ները նշմարելի են տակաւին: Որմեա-  
փակ միջոցը 140 քայլ երկայնութիւն և  
120 քայլ լոյնութիւն ունի: Քաղցրա-  
համ գազուկ ջուր մը, որ կը բջինի  
պարսպացդ հիւսիսային կողմէն, կը հայ-  
թայիմէր անշուշտ երեսն առաստապէս  
բերդականաց պիտուքը: Այդ է Ողա-  
կան բերդը՝ Ամսիկանեան ամրոցը, զոր  
մերձակայ բնակիւք: «Ալկունեաց բերդ»  
ալ կը կոչեն մինչեւ ցայսմու Վասն զի  
Ալկունեաց իշխանը՝ Ալուկ զազմնի բա-  
նակցութեամբ ընդ Շապիոյ, ապստամ-  
բեր էր Տրդտուայ գէմ և ձենացի քազ-  
թականն Ամսիկան հրամանաւ թագաւու-  
րին՝ բարեկամ և դաշնակից ձեանալույ  
Աղուկի: Խոր համօրէն ազխիւն անցեր  
էր ի Տարօն, և որ մը ամրոցէն դուրս  
իշխանին հետ որսի զնացած ատենը ա-  
ղեղամբ զարկեր սպանաներ էր զապըս-  
տամբն և փոխարէն այդ ծառալութեան,  
ընդուներ էր յորդրայէն զգեօզս և զդաս-

լեցին<sup>1</sup>, և ի գերութիւն վարեցին զարս և զկանայս բնչիւք և ստայուածովք, հանդերձ պատուական դանձիւք

տակերտս և զամենայն իշխանութիւն ազգին Ալկունեաց: Գիւղայիք աւանդութեամբ կը ցուցանեն ի հիւսիսոյ ամրոցին ըլուր մը, որ բերդէն աւելի բարձր է, ուրանոր ազանուելը է Սղուկ: Անտառոք ծածկուած է բրոստ ցղակաքքը, ուստի և յարմար որսոյ արշաւանց: Տես Խորեն: Բ. ԶԴ: Բուզանդ աւ Քըսէ: Հեւ Մուշեղ սպարապետն Հայոց էր ի գաւառին Տարոնոյ յիւրում բերդին, որում Ողական հուշեն, որ կայ ի վերայ զետոյն Եփրատայ: Ամէջ բերդէն փառ ի իջեցուցեր էր Մուշեղ ձմեռատեն զնայր մարդուեան կազմալ ձեռօր և ոտիւք և ի մօրէ մերկ ու սառած զետոյն վրայ մեռլով մեռուցեր էր զդաի վրէծ անարդանացն, զար արար նա Փառանձեմայ տիկնոջ: Բուզանդ էջ 191: Ողականի հիւսիսակողմը և անկէ քիչ հետ ըլլալու էր հին աւան Կուառք կամ Կուառատառն: Ջնոր էջ 26:

Որոտ կամ Որոտան բերդ՝ յաշխարէն Ախոնեաց (Օրբելեան հատ. ա 52). Կղուկ էր գահանիստ զաւառ Տեարց Ախոնեաց, և ի գաւառին՝ յահնէի գետոյն Թարկուշատայ: Որոտն բերդ և աւան իշխանութիւն, որոյ անուամբն դաւաս աւ կը յարջորջէր Երկիր Որոտան կամ Որոտան ջոր: Աւանը այժմ աւերեալ և ամպայցեալ է: իսկ բերդն հզօր հանդէս նորին տականին կիսականգուն կայ: քանզի յերբէց կողմանց անձեռագործ պարիսամայս ունի զբարածուայս: շորորդն ձեռքուածուամբ կամ անձական համար ամուռ իմ: — Յ. Բ. 73, Ասք Պարսիկ զօրացլիսաց և զօրաց յանձնուած էին: Ինչպէս որ աւ կը հետեւ այս և հետազայ պարբերութիւններէ: Կրղնակն էր և յլլաւանս Յ. Գ. 61: — Բահլաւի-Բազարնո Բառարանին մէջ կը զանեմք դարձաւագան՝ կոտրել, աւերել. Ըստ Պ. Հաւկի արդ բառդ լծորդ է քաղդէարէն և երբայեցերէն համանիշ արմատներու հետ, և միջնադարեան Պարսիկ զայն չէին: հնէեր որպէս զրուած է, ովլ յերազան կը կարգային: Ուրեմն բազլուսադամ տասպալել, սեմական բառ մի և հասարակ Հայոց և Քաղդէացոց:

Քմնադք, Եղիշելի

Գիւղն Զօթ կամ Ասթ, որ է յարեւելեան հարաւային կողմն ճովուն Անանայ, ի հումեւ կոչեր Վասակաշէն: կան առնորօք հին զերեզմանք և խաչվէրը և եկեղեցիք Ալիշան Վ. Տեղ, 148: Գուցէ այդ կամ Պարկաշատայ գետայն սկիզբը՝ յ 2100 մեղը բարձրութեան գտնուած Վասակակերան ըլլայ Եղիշեայ Վասակաշատն: Խորրա՞ն հին բենաազրոց մէջ և բայսն, բահւաւի լեզուաւ նշանակէ քազաք, ուստի և մեր քաղաքաց ումանց յաս վերջաւորութիւնը: Բայց Ալիշան Վ., աւերակաց մէջ չյիշտաւակեր պարբռաց նշանաւանք:

Երևաննորմք, ԱԱՐՁԱՐԱՐԱԽՎԴ, ԽԱՐԱՆԱՍԱՆԱՑ, ԱԱՐԱՆԱՆԱՑ, ԱԱՐԱՆԱՆԱՑ, ԳՈՒԱՆԱ, սոց գերբն կարելի շեղաւ մեզ հաւասարէ:

1. Լարձեմ թէ բացարձակ կերպով հասկաւու չէ: որովհետեւ այդչափ քազաքներ չէին կրնար Հայք աւերել բանդել, մանաւանդ որ ամրութեանց և բերդից պէտք ունէին: զսոսա ձեռք անդնելէ եռքը Խորսակելը յիմարութիւն Կ'Շւ-Լար: այլ իմա տասպալեցին զիշխանութիւն Պարսից: Այս բերդերում կը բանէին Պարսիկ զնայասան, ու սոցա համար էր: որ կ'ըսէր Յազկերու: և Ու կարէք աւերել զանիսար ամուռ իմ: — Յ. Բ. 73, Ասք Պարսիկ զօրացլիսաց և զօրաց յանձնուած էին: Ինչպէս որ աւ կը հետեւ այս և հետազայ պարբերութիւններէ: Կրղնակն էր և յլլաւանս Յ. Գ. 61: — Բահլաւի-Բազարնո Բառարանին մէջ կը զանեմք դարձաւագան՝ կոտրել, աւերել.

Ըստ Պ. Հաւկի արդ բառդ լծորդ է քաղդէարէն և երբայեցերէն համանիշ արմատներու հետ, և միջնադարեան Պարսիկ զայն չէին: հնէեր որպէս զրուած է, ովլ յերազան կը կարգային: Ուրեմն բազլուսադամ տասպալել, սեմական բառ մի և հասարակ Հայոց և Քաղդէացոց:

և նոցին սպասուք։ Տապալէին քանդէին զշինուածո նոցա, և այրէին կիզուին զտունս պաշտօնարկի և պաշտաման կրակի<sup>1</sup>։ Մըրէին զպղծութիւն կուապաշտութեանցն<sup>2</sup> և առնուին զկահ և զկազմածս ասորուշանացն, ըերէին և զնէին ի սուրբ եկեղեցւոցն. և ի ձեռն սուրբ քահանայիցն նուիրէին ի սպաս տէրունական սեղանոցն։ Եւ փախանակ մնոտի պաշտամանցն՝ զոր տապալէցին յամենայն տեղիս հեթանոսացն, զիրկական խաչն Քրիստոսի կանգնէին։ զամենասուրբ մեղանն ուղղէին, և զիենդանարար խորհուրդն կատարէին սրբութեամբ. պաշտօնեայս և քահանայ ի տեղուցն կացուցանէին։ Յուսով հաստատեալ խընդայր ամենայն երկիրն առ հասարակ։

41. Եւ մինչ զեռ յայսմ մեծի առաքինութեան կատարեալ գործէին զգործ նահատակութեանն, երեկը իմն ի վերաց ամենեցուն աստուածային չնորհք. քանդի ասանց հրամանի ի զօրացն Հայոց, յարեւելից կողմանէ աշխարհին, յարձակեցան ոմանք յԱմրպատական աշխարհն<sup>3</sup>, և

1. Ըստ Թուվմայի Ամքրունոյ (Թոդդար) և Վարդան պատմէի ԺԳ դարու, մեհեան Որմզդի և տուն կրակի շնուել կայր Ալլարաշատ ի ձեռն Շաւասպայ Ամքրունոյ և Վնդոյ պարսից մոզպետի, որբ քրմակեալ կարգեր էին զՇերոյ զորդին վնդոյի։ Վարդան իւր գընդաւն Ալլարաշատ եկեր էր. «սատակիր զՇաւասպ և զոիդն վնդոյ յատրուշանն հրոյ արկեալ այրէր. և զՇերոյ ի վերայ բագնին կախէր զփայտէ. և զուշ զմն շնէր եկեղեցի անուածը Արբոյ Գրիգորի Թուվմա և Վարդան կարգացեր էին զպատմութիւն Եղիշեայ. (Տես Թուվ. 26, 89 և Վարդ. Էջ 12): Բայց որդ տեղեկութիւններդ զոր կու տան մեզ, մասամբ իւրի կրնան ճշմարիս ըլլալ, քանզի ժամանակակից պատմէշք՝ Եղիշէ և Փարագեցին զՇաւասպ արծրունին դընեն ի կարգս նախարարաց որբ ետուն զանձինս ի կապանս արբունի և զնացին յաքսոր Թուվմա Ամքրունոյ պատմութիւնը որուն հետեւած կ'երեւի Վարդան,
2. Արդարացի չէ կուապաշտութեան անուանել զմազդեղն օրէսու։ Մազդեցուն նոյնքան ուժգնութեամբ կը գատապարէին զկուոց պաշտամունս որբան Եղիշեայ ժամանակից քրիստոնեայք։ Նոյն իսկ յաւորս Ամքրունեանց որբ Սասանեանց բազդամամբ Նուազ մոլեանդն եղած կ'երեին, կիւրոսի յաջորդն կամբիս եզիկուական մնապաշտութիւնքն անարգելով, Ամքանի և այլոց դից մեհեանները կործաներ էր և Ամքոնի տաճարն ալ տապալելու համար իւրէր էր բանակ մը, որ անապատին մէջ փոթորկի բռնուելով աւազու տակ թաղուէր էր։ Քակըքս ալ ի Յունաստան մեհենից արձանները խորտակեր էր. մինչ Ազեքսանդր յարգեց ընդհանրապէս զպաշտամունս Պարսից։
3. Ամրպատական աշխարհ կամ Ամրպայական երկիր. (Բուզանդ 145): Երեկ նշանաւոր կրակներ կային որբ

ի տեղիս տեղիս բաղում՝ վիաս արարին՝ առնլով և աւերելով և քանդելով զբաղում՝ ատրուշանս:

42. իսկ որ ի մեծ ամսւրսն անկանէին, խաչանշան արարեալ ի վերայ զօրսն յարձակէին. որ և երկու մեծամեծ ըերգացն պարխապքն առանց ուրուք մերձենարյ անկեալ կործանեցան. մինչև ամենայն ընակաց երկրին զահի հարեալ ի մեծ նշանէն, ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունսն այրէին. ուրանալով զօրէնս մնդութեանն՝ խստովանէին ի սուրբ աւետարանն:

43. Եւ այլ մեծամեծ աջողութիւնք կատարէին ի ձեռն զօրականին. քանզի ուր ոչ էր ակնկարութիւն, եթէ զանուն Աստուծոյ ոք յիշեսցէ, արհաւիրք մեծ անկանէին ի վերայ նոցա. և ամենայն մարդ պատմէր ընկերի խրում տեսիլս նորս և զարմանալիս: Այսնպէս և աստեղք ի յերկինս երեւէին յոյժ լուսալիր պայծառացեալ, զոր ոչ ունէին յառաջին բնութեանն: Եւ ամենայն տղայք աշխարհին իրբն զարս պատերազմողս խիզախէին:

պահէին զտիեղերս. ա. ֆրուպաք՝ ի խորազմ, ուստի յետոյ փոխագրուեր էր ի Գապուլ. բ. Այլբասադ, զոր վայ-խոսրով Զէւսադ (Արմեան) լճին կատառնեները կործանելու ասեն պյն կողմերը Ամսաւանտ լերան վրայ հաստատեր էր. գ. Պուրզին-միրոս, զոր արքայն Աքստասագ ժամանակիցն Զրադաշտայ, զետեղեր էր ի յետոն թէվանուն մերձ ի սահմանս Վադգեսի, (Պունտ. 62-64. Զատ-Սրարամ էջ 186): Վասն որս Շնագէտք ընդհանրապէս մեկնեն զանունդ Ալտրպատական իրբե ասոր + պատրան. ասոր՝ կրակ և պատրան ունող, պահապահող, լծորդ մեր «պատեան» բառի: Բայց այդ մեկնութիւնդ մեզ հաւանական չերեւիր. անունդ չէ Ալտրպատական, այլ Ալտրպատական և Պաւանահէշի մէջ զըրուած է Աղարծ-Բադաքան (Տես Pahlavi-Texts): Ցայտ է թէ արմաթը ադարուադաք՝ և քան յոգնակի վերջաւորութիւնը կը կրեն, որ կամ յոգնական և կամ հայրանունական մասնիկ է: Ալարբուր «զօրագլուխ» կը նշանակէ (Տես Pahlavi-Pazand Glossary): Արնեաց աշխարհին Սիսական յորչորչիւն ալ աւելի Պարոց յատուկ էր քան Հայոց (Տես Խորեն. Ա. ԲԲ): Ասրա հայերէնը՝ պէտք էր ըլլալ «Սիսակեանք»:

Ալորպատանից անուան մէջ, որ Ալարբուրականի գաւառ մի էր Որմեան լճին մօները (Ալեճան վ. գնէ զսա ընդ մէջ Արքայ և Քօդուր գետոց): Հին Հելլէն պատմագիրք ալ Atropatène կը հուէին. զոր Սորարոն ելած կը կարծէ Ադրօրադէս իշխանին անունէն, որ Մեծին Աղերսանդրի ժամանակ այն կողմերը ինքնազլուխ կը թագաւորէր: — Ադրօրադ կամ Ալտրպատ է կրակապէս, կրակաբուրմ: Ալորպատականի սահմանակից Վասպուրական և Սիսական նահանգներն ալ նոյն վերջաւորութիւնը կը կրեն, որ կամ յոգնական և կամ հայրանունական մասնիկ է: Ալարբուր «զօրագլուխ» կը նշանակէ (Տես Pahlavi-Pazand Glossary): Արնեաց աշխարհին Սիսական յորչորչիւն ալ աւելի Պարոց յատուկ էր քան Հայոց (Տես Խորեն. Ա. ԲԲ): Ասրա հայերէնը՝ պէտք էր ըլլալ «Սիսակեանք»:

44. Եւ ահա յետ աւուրց բազմաց եկն եհաս հազարապետն Աղուանից<sup>1</sup> սուրբ եղիսկոպոսաւ աշխարհին, մեծաւ տագնապաւ փութացուցանէր զզօրսն ասելով. « Գունդ Պարսից, որ էր ի կողմանս աշխարհին Հռնաց, դարձաւ այսրէն, եկն եմուս և այլ այրուձի՛ որ ի դրանէ՝<sup>2</sup> եկն: Եւ թող զայս ամենայն, այլ երեք հարիւր մոգ վարդապետ ածեալ ընդ իւրեանս, պառակտեցին զաշխարհն, և զոմանս ոմանս յինքեանս արկին, և կամէին յեկեղեցին ձեռն արկանել. և հրամանաւ թագաւորին ատիպէին զամենեսեան և ատէին. Եթէ կամօք յանձն առնուք զօրէնոն, պարզես և պատիւս գտանէք ի նմանէ, և թողութիւն հարկացն յարբունուստ լիցի ձեզ. ապա թէ կամօք չառնէք, հրաման ոնիմօք ի գեօդս և ի քաղաքս շինել արուշանս, և զվուամական կրակն<sup>3</sup> ի ներքս դնել, և կա-

1. Աղուանիք թագաւոր ունէին տակարին (Յ. Ը. 144):

2. Աշ ձորայ պահակէն, այլ յարբայանիստ քաղաքէն Պարսից, որ և կոշէր գուռն, որպէս և սովոր է այժմ կոշէր տէր զմոցը պարագանէն (Յամանեան Պիտութեան):

3. Վասարական կրակ- Պահրամ կամ Վաճրամ արաշ (Բահաւեի ձեռազբաց մէջ գրի ևս ըշաց վլութամ): Կրակը ինչպէս և կրակատանք երկու տեսակ են.

4. մեծ կրակատան որ Արաւ-Պահրամ կը կոչի. բ. Փարք կրակատանք, որը Ալտարան կը սուսունին: Պամպայի մէջ մինչ հարիւրի շափ ատարանք կան, վասարականը միայն երեք է: Վասարական կրակի և Ալտարան կրակի տարրերութիւնը՝ սոցա տեսակին՝ այս է ծագման և պատրաստութեան մէջ է: Տարի մը պէտք է զվասամականը պատրաստելու. տասն և վեց տեսակ կրակէ պիտի բազկանայ, որով կ'անփոփէ յինքեան ամէն կրակաց ոյժը և էռութիւնը, և յոյժ սրբազն է և յարգելի: Այդ զանազան տեսակաց նուիրագործումը երկար և մանուածոյ արարողութեանց կը կարօտի, որբ կար-

գեալ են ի վենտիտատ: Ըստ Միջայէ թաց մէն մի քաղաքի մէջ մէկ վասարական կրակ կընայ գտնուիլ: Ումանք ուսկացն ի Տամթուրաց կը պնդէն թէ բավանդակ հասարակութեան մը մէջ մէկէն առելի ըլլալու շէ. քանզի, առեն, վասարական կրակը թագաւոր է կրակաց. և միոյ աշխարհի երկու թագաւոր ըլլալոր: Ալտարան կոչուած կրակը երիցս գործածուած տնական կրակներէ կը կազմուի:

Զգոսա կերակրելու եղանակն ալ տարբեր է. այժմ ի Հնդիկս կրակարքու օրուան հինգ պահակէն իւրաքանչիւրին Հանդան (Sandale) փայտի մէկ մէկ շերս միայն կու տայ Ալտարան կրակը յատուկ Կայսյայիշն զրուցելով. մինչդեռ վասարականին շերտերն վեց պիտի ըլլան, որբ երկուս երկուս իրարու վրայ դրուելով աստիճանաւոր գահ միպէտք են կազմել թագաւորին: Կրակատանց մեր նոյն է. ընդհանըազէն Վասարական կրակի մեծեանը առելի մեծ կ'ըլլայ: Հայաւատնի մէջ հաստատեր էին Պարսիկք զկրակն Վասարական որպէս պատուիրեալ էր յօրինաց իւրեանց: Տես յէջ 143-44:

յուցանել մոզ և մոդպես օրէնսդիր<sup>1</sup> ամենայն աշխարհիք: Եւ եթէ սոսամբակեալ ոք ընդդէմ դարձցի, ինքն մահու պատուհաս ընդունի, և կին և որդիք այնպիսւոյն անաշխարհիկ եղեալ՝ յարքունիս երթիցեն»:

45. իսկ գոնդն չայցոց իբրև լուաւ զայս գոյժ դառնութեան, ոչ ինչ թուլացեալ լրան ի քաջութենէն. ոյլ դարձեալ համագունդ ժողով լինէր ամենայն աշխարհին վասն գումարեր հրեշտակացն, որ հասին տո նոսա: Եւ միաբան քաջալերս տուեալ՝ արձակեցին զնոսա, զի առժամանակ մի զնոսա պատիր խարէութեամբ կալցեն, զի խափանեցին ի չար կամաց, չեռանարկել ի սուրբ ուխտ եկեղեցւոյն խրեանց. և զօրութեամբն Աստուծոյ խորհուրդ ի մէջ առեալ՝ իրացն հնարիւք ելս խնդրէին:

46. Յայնմ ժամանակի զմի ոմն ի մեծ նախարարացն, ի առհմէն զնունեաց Աստոմ<sup>2</sup>, ճեպով առաքեցին յերկիրն արեմուից ցուցանել զայս ամենայն խորհուրդ զշարիմաց թագաւորին արելից. միանգամայն և պատմել զիւրեանց քաջութիւն արութեանցն, զոր գործալք կատարեցին՝ առ

Առամական կրակին մոխիրը կը խառնէին Առարան կրակաց մոխրոց հետ և ժամանակ մը պահէլէ յետոյ արտերուն մէջ կը առաջանակի:

1. Ահա կարճառաս տեղեկութիւն մը, որ կը ցուցանէ մեզ թէ մոզք և մոզպեաք (Օսմանցոց Ուլէմանցին պաշտօնը կը վարէին Պարսից մէջ. օրէնսդիրը էին և գատաւորք: Հորաց մարզպանին անունն էր Ալբանիա Նիխորական (Տես Յ. Գ. 56 և Փարագեցի էջ 187). առ ամենայն ջանք ըրեր էր զԱղուանս կրակապաշտ ընելու Աղուանց թագաւորն ինքնին Վաշէ բանի զրադաշտական եղան (Յ. Պ. 142):

2. Ծառ Փարագեցոյ, թէողոս կայսեր, Աղուանան իշխանին, Եղոփոց, Հաշտենից, Եկեղեցաց, որպէս և Աղմանաց բըշէնին ուղղեալ նամակները տանողներն էին Վահան Ամատունի՛ այր մը առացի և խորհրդական, Աեղուն Հմայական՝ Եղանակ՝ աղբայր ուղարագետին և Մերու-

ժան՝ եղբայր Աղմանայ ի առհմէն Արծրունեաց (Էջ 184). Այս երեքս Արտազու պատերազմին չէին հասած (Նոյն 216–220): Բայց ըստ Եղիշեայ, Վահան ամատունին ներկայ էր անդ (Յ. Ե 3): Փարագեցին Ատամայ ի Բիւզանդիան Խորհուրին բնաւայի շահէներ, մինչ Եղիշէ միայն Ատամայ գեսազանութեամբ առաքին կը զրոցէ և այս ալ երկից (Տես Յ. Ե 28): Մեր հեղինակը որ ականատեսե և գործակից էր խորհրդամած իրաց, չէր կընար սիստիլ այդպիսի կարեւոր խնդրոյ մը մէջ: Բաղդատեղով զերկու պատմագիրն, պարս է հետեւցնել որ միայն Աստոմ առաքեցան ի Կոստանդնուպոլիս, իսկ միւս երեքն Յունաց բամնին մէջ գտնուող հայ զաւառները երթալու և ի նոցանէ օգնութիւն ճարեւու պաշտօն աւնէին: Ամատունին Վահան գուցէ աւելի մօտ նահանգ մը զնացած ըլլալուն համար, չուտավ աւարտեց իւր գործը և կըցաւ համել պատերազմին:

ոսն հարկանելով՝ զհրամանն ահեղ, և մեծապէս ստուակումն ի վերայ մոդացն հասուցանել<sup>1</sup>. խնդրել ի նմանէ օդնականութիւն սաստարութեան, և եթէ նա կամեսցի նմա իսկ մուանել ի ծառայութիւն։ Եւ այս է պատճէն հրովարտակին զրո գրեցին առ Թիոդոս կայոր.

47. Յովսէփի եպիսկոպոս<sup>2</sup> բազում եպիսկոպոսակցօք իմովք և ամենայն զօրք Հայոց, Վասակ մարզպան և Ներշապուհ ուրմբուեան հանդերձ սպարապետաւ և ամենայն մեծամեծ նախարարօքս՝ առ մեծանունդ Թիոդոս կայոր, բազմացի ողջոյն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէք մարգասիրութեամբ ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յերկրաւորացս՝ որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ գառնայցէ<sup>3</sup>։ Որպէս մեք իսկ

1. «Հասուցանելով» պէտք էր ըլլաւ, որպէս կ'ուզգէ թէոդոսիոյ տապագիրը։

2. Կամակիս վերմագիրը յայժ նշանաւոր է. կը ցուցանէ թէ Եկեղեցականք կանք որբան բարձրացեր էին Կախարաց վրայ։ Թէոդոս կարսեր ուզգեալ այս թուղթս գրողներն են իրենց յիշատակութեան կարգաւ. ա. կաթողիկոսը.

3. եպիսկոպոսնք. գ. Ամենայն զօրք Հայոց. դ. Մարգասիր. ե. Արքունիք.

իշխանը. զ. Սպարապետն. է. Մեծամեծ նախարարը։ Երկիր մը ուր գահու և աստիճանի համար կարգէ դուրս նախանձախնդութիւն կար, այդ յիշատակութեան եղանակին կարեւորութիւնը անուշանալի է։ թէ Եկեղեցականք նախարարներէ և նոյն ննջն մարգասնէն առաջ անցնին, զարժանալի չէ այն ժամանակին բարուց և հանգամանաց նկատմամբ, բայց թէ Հայոց զորքն անմիջապէս եպիսկոպոսներէն վերջը ու բոլոր նախարարներէ յառաջ յիշուի, կը ցուցանէ թէ քրիստոնէութիւնը և մանաւանդ ապստամբական շարժումը մեծ յեղափոխութիւն յառաջ բերէր էին Հա-

յոց բաղաբական վիճակին մէջ։ Ուզուրքը որ զօրաց մեծագոյն մասը կը կազմէր, մանաւանդ թագաւորութեան բանաւէն եւրք աւելի եկեղեցականաց նրամանին կ'անսայր քան նախարարաց, որք ի գարուց հետէ զինքը մոշեր էին։ Նախարարաց մէջէն միայն մարզպանն վասակայ և Արքունիքաց Կերշապուհ իշխանին անունը կը տրուի, որ Հայրատանի մեծագոյն տանուտեաբն էին։ Սոցա առաջնը սաստիկ գմկամակութեամբ կը տանէր եկեղեցականաց լուծքը. իսկ երկրորդը կատարելապէս հազարնդ էր նոցա. այլոց նախարարաց և սպարապետն անզամ անունը չտրուիր. այժմ որ սաստաճային օրէնք կը թագաւորէն, կարողիկոսին սպարապետն և նախարարն են. և հանդերձ սպարապետաւ և ամենայն մեծամեծ նախարարօք։

Կերշապուհ կը բաղկանայ ի Կեր և Շապուհ անուանց. Կեր՝ պարսկերէն՝ է այր, արու և շապուհ՝ թարգմանի արքայորդի։

3. Արքելեան կայսերութիւնն այն ժամանակին առաջին ծովային զօրութիւնն

ունիմք զանսուտ յիշաստակարանն զառաքինի նախնեացն ձերոց, ունելով զեւրոպէ՝ անցին և տիրեցին և սափացւոց կողմանցն ի սահմանացն Սերաց մինչի ի կողմանո Գագերամինի<sup>2</sup>, և ոչ ոք դառաւ ստամբակեալ և ելանել ըստ ձեռն նոցա:

48. Եւ յայնչափ մեծ իշխանութեան՝ գաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին<sup>3</sup>: Վասն որոյ

Էր: Ելլեասոնտասի և Վասփրոսի ներ զուցներուն տեր եղող ազգը՝ Թրակեան թերակղզւուն և Փարր Ասիայ գէմ առ դէմ ափանց պատճառու, ամէն ժամանակ զօրաւոր նաւատորմիզ մ'ունենալու պարուաւոր Էր: Բայց այն խօսքը թէ « չիք ոք յերկրաւորացն որ ձերում անարդել աշերում մնեանդ ընդդէմ գամանայցէ », եթէ կաստանգիանոսի կամ մեծին թէնդոսի ուզգեալ ըլլար. բարեյարմար զովեաս մը կը լինէր. բայց անձեզ և ծիծազելի նկատմամբ Փրուն թէնդոսի, որ տեսեր Էր Աստիղասայ մինչեւ իւր մայրաբաղբին շրջակալքը ասպատակելն և նմա հարկասու անզամ եղեր Էր: Արդէն Եղիշէ ինքնին պատմեց մեզ թէ Յազկերոտի գէմ շկրցաւ. ելանելու ու նորա ամէն ուզածը կատարեց (Յ. Ա. Յ.): Թագաւորաց կողմանէ գրուած կամ նոցա ուզգեալ գրութեանց մէջ յոխորտական կամ շափականց գովաւթիւնը սուփական էին այն զարերուն մէջ:

1. Այս նամակիս գրութեան ատեն խորենացոյ պատմութիւնը շարագրուած չէր: Ելթէ պարբերութեան երկրորդ մասին ալ նայինք Աղամանգեղեայ կամ Դաշտանց զրոց պէս մասնական գրութեանց ալ ակնարկութիւն մի ըլլալու չէ այս խօսք: Հասվայեցւոց Ասիայ մէջ ըրած աշխարհակալութեանց վրայոք հայ թագաւորաց դիւանին մէջ պաշտօնական յիշաստակարանէր կային անշուշտ, ինչպէս և հոյակապ նախարարաց ումանց քով: Գուցէ չմեք իսկ ունիմքը ըսելով իմանայ կաթողիկոսը՝ Հասվայեցիք և

Յոյն պատմչաց բնագիրքը:

2. Գագերոն է Գատիքս կամ Գագես քաղաքն յարեմուսու հարաւոյ Սովոնիսյ, զոր Յոյնք Ռազէլք կը կոչէին. — Իսկ Սեր (Sères գլ.) կը յորջորջէին սախնի Հելլէնք և Հասվայեցիք Ասիայ արեւելեան ծայրը զտնուող ազգերն, ուրց երկրէն կը բերէին մետաքս (Séricam) և բարեկեայ ազնիւ և բարեկ կերպամները: Սերաց աշխարհը (Sérique) այժմեան նէփաւը կամ Սիամը և կամ ձենասամանը կը կարծուի (Dézobry-Dict. de Biographie, d'Histoire et de Géographie): Իսկ վաճառքը՝ կարաւաններով և թէյի ճանապահնաւ Հայաստանի և Մերնայ վաճառանոցներուն մէջ կը մմէրուէր, ուստի պարսիկ և այլ վաճառականիք կ'առնուին և Ասորեց ծովիկերեայ քաղաքները տանելով Հասվայեցւոց կը ծախիէին (Տեր Gibbon հատակ, 313): Հասվէկան պետութիւնը արդարե կը տարածուէր մինչեւ ցլատլանտեան Ավկիանոս. բայց Տիգրիսէն անգին երբէք չէր անցեր. ի կողմանէ ելից Սերաց աշխարհը սահման կրնայ դրուի Մեծին Աղեքսանգերի աշխարհակալութեանց, որբ ի մտից կը յանդէին ցլատրականն: Հայք որ Արեւելեան կամ Յունական կայսերութեան կը գրեն կը խառնեն զաշխարհակալութիւնս Հասվայեցւոց բնդ Աղեքսանգերի և Սերեկիացւոց տիրապետութեանց:

3. Պաստակերոն է ձեռակերու՝ ազարակ, աւան, նոր քաղաք. բայց աստ նմանութեամբ իմանայ հեղինակն նա-

և նախնին մեր Տրդատիս յիշելով զառաջին սէրն ձեր,  
որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդա-  
խողիսող հօրեղբարցն՝ իւրոց՝ ապրեալ սնաւ յերկրիդ

մակիս, գհամօրէն աշխարհս Հայոց :  
Հայոց թագաւորութիւնն, ասէ Յառա-  
տինոս համառօտիշն Տրոգոսի - Պամ-  
պէսսի, յետ Պարթեացն Ասիոյ մեծա-  
գոյն թագաւորութիւնն է . քանզի ի Կա-  
պաղովկիոյ չզի ցծովի կասրից : (զիրը  
իր 2) . — Պարթե թագաւորը ալ եր-  
րորդ իշխանութիւն (Potentia), կը հա-  
յարէին զՀայաստան Աստինն էր Պար-  
թեաստան, որոյ վրայ ուղղակի կ'իշ-  
իւին . երկրորդը՝ Մարտաստան . (Տես  
Տակիտոսի Տարեգիրը, զիրը ԺԵ 2) : —  
Բայ Ազաթմանպեղեալ, Մեծին Խոսրո-  
վու ատենը Հայոց թագաւորը երկրորդ  
էր Պարթեաց Տէրութեան . (ր) : Սասա-  
նանք երբ տակաւին Հայաստանի չէին  
տիրած զԱլորպատական երկրորդ տուն  
կը համարէին յետ Պարսից . (Բառանդ  
124) :

1. ԶՀայրն Տրդատայ՝ զԽոսրով ապա-  
սանողներն էին՝ Անակ և Անակայ եղ-  
բայրը որոյ անունը պատմութիւնը ա-  
ւանդած չէ մեզ : Անակ էր զԱնաւոր նա-  
հապես և անոնուէր պարթե Այրե-  
նեան ցեղին : — Հայրասպան աստանոր  
չէ զհայրն սպանանող (որդի), այլ որ-  
դւոյն նկատմանը զհայր նորին սպանա-  
նող (այլ ոմնի) : Հօրեղբարյէ՛ ոչ եղբարը  
Խոսրովու : այլ սոսնակիցք և հասկա-  
կիցք նորաւ : Հօրեղբարցն սպակյն այլ-  
և այլ մեկնութեանց տեղի տուաւ, ո-  
մանք զԱնակ հարազատ եղբայր կարծե-  
ցին Խոսրովու . (Քարագաշ. պատմ. Հ.յթ) .  
այլք Ի դարս հեղինակը՝ Գէորգայ ա-  
սորի եղբակաղասի հետեած, Լուսաւոր-  
չայ մէկ կենասպաւթեան մէջ չ Գրիգո-  
րիոս աղքատ հռամանեցիք չ ըսուած ը-  
լալը կռուան առին և Խոսրովու ընդ  
Անակայ ինչպէս և Գրիգորի ընդ Տըր  
դատայ առընչութեանց մէջ տեսնուած

Խորհրդաւոր զուգագիպութիւնքը պատ-  
մական չհամարելով, Ասասնեան աքուսի  
կողմանէ խրկուած Անակայ գրյութիւնը  
մերեցին և այս նամակին վրայ ես  
յենով զԽոսրով կարծեցին սպանեալ  
յեղարք իւրոց զրգութեաւը Պարսից :  
« Փախուցեալ ի հայրասպան մարդախոզ-  
խոզ հորեղբարցն Խոսրեն ալ արդա-  
րե աւելի չփոխութիւն կը պատճառէն :  
Քանզի եթէ ըստ Ազաթմանպեղեայ պատ-  
ճառմեան զԱնակ և զեղրար նորաւ ի-  
մանանք, Տրդատ կամ անոր պաշտպան  
դայեակն Արաւաւազդ անոնցմէ վախ մշ-  
չէին կրնար ունենալ . վասն զի Խոսրով  
հազիւ . մէկ մասարեր հարուածն ընդու-  
ներ էր և չիրո՞ ոզիքն ի ծոցոյն չե-  
էին մափեալ ։ Խախարարք զուղդագունդ  
զօրօք կամրջներն եւ պողոտայները բըս-  
նելով, զդաւաճանս գետավէժ ըրեր էին  
Երասիսայ մէջ, և զկանայս և զմանկտիս  
և զհամօրէն ազգատոսնմն նոցա կոտորեր  
էին, և միայն Անակայ երկու գետատի  
մանկունքն ազատեր էին իրենց դայեկաց  
ձեռոք, մին ի կողմանս Պարսից և միւսն  
Յունաց, մինչեւ Տրդատայ փախուստը՝  
ըստ Ազաթմանպեղեալյ, յունական օժան-  
դակ զօրաց Պարսից բանակէն վանուե-  
լուն չետեանք եղած էր :

Յունաց, և ի ձենց թագաւորեալ տիրէր հայրենի աշխարհիս, այնպէս և զհաւասան որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն<sup>1</sup> Հռովմայ, բասաւորեաց<sup>2</sup> ըդ-

ասյաթթիներն անգամ ուրանաւ, որ անշուշու զպն գրել առողջ եպիսկոպոսաց և իշխանաց մոքէն չեր անցած: Արդարէ Արտաշիր Զանացեր և յաջողեր էր Արտահապետեան և Սուրենեան պահուած տանուտեաբն իրենց ազգակցին Արտաւանայ գեմ գրգռել. բայց ասոնք Արտաւանայ եղրաբը չէին, ոյլ դարերէ ի գեր հաստատեալ նախարարական տոհմը (Խորեն, Ալ): ՀՀայս երկարուակիու հրամական էր անոնց տանուտեաց հակառակասէր և փառամունքը ձեռք առնել որը պահան չէին. ու հարի շկար դաւաճան յարուցանելու արքունական գերդաստանն մէջ, որ նախարարաց այդ ընթացից պատճառառ ընդհանրապէս ամփոփ և միաբան զբանագած էր:

Մնաց որ Անակեանց խոսրովս եղրաբը կոչեն բնաւ զարմանալի չէ: «Եղբայրուքին ձարագատուրեան զօրաւոր կապին տակ պահել ուղուած էր և այդ անուամբդ իսկ յարջորջեալ էր ոյն ազգականութինը, որ կայց զանազան պահուած տոհմից մէջ, որոց զլխաւորը Պարթեաց արքայական ցեղն էր, Կորոս-սերագոյնքն աւ Հայոց, Բաւշանաց, Մազքեաց թագաւորական տոհմերն էին: — Արտաւանայ սպանումը լսելով խոսրով և էր ի մեծի տրամաթեան վասն բնութեան եղբայրուրեան ազգատոմնին... և էր զեսպան արարեալ զի իւրեանց (Արտաւանայ և Խոսրովու) տոհմայինն ի թիկուն եկեցին»: Ոյլ նորս «միամբաւեալ և հաւանեալ էին ի տէրութին Արտաշրի քան ընդ տէրութին իւրեանց ազգատոմնի և եղբայրուրեան»: Ազամ. Ա: — Յետ սպանանելոյն զԱրտաւան և թագաւորելոյն Արտաշրի երկու ցեղք Պահաւին նախանձ պահելով ընդ թա-

գաւորեալ ցնիին իւրեանց ձարագատուրեան ազգին, կամաւ յանձն առին թագաւորել Արտաշրի որդւոյ Սասանայ, բայց երբարդն կարդիս պահելով առ եղբայրուքին ազգականուրեան տան ընդդիմացն պատերազմաւ» Խոր. Բ. ՀԱ:

1. Այսպէս զնեն Վենետիկոյ և Երուսաղեմոյ տպագիրքն ։ Կ. պօլսոյ երկրորդ և Թէոդոսիոյ ապ' եպիսկոպոսին:

2. Առաջին տպագիրքն Միիմարեանց զնեն որ յաւառուրեաց յարաբերականդ շկայ ոչ կ. Պոլսոյ և Թէոդոսիոյ տպագրաց և ոչ ալ Վենետիկոյ 1864ի տպագրին մէջ: Պարու է ի բաց թողուլ զայն քանզի գրչագրի սխալ մի է, որ իմաստը կ'եղածանէ ու պարբերութիւնը կը կազացնէ: — Լուզմանը հիւսիսոյ. այս է Հայաստան, և հանուրց հիւսիսականաց գիշագին»: Խորենացի՝ ՈՒ. Բ. Էջ 571: — «Որ զլխաւ աստուածային քոյ գիտութեան հիւսիսական ազմնց ծագեց ցեր. և ի խաւարէ կոսպաշտութեան վերածեր զմեց ի ձեռն Սուրբ Լուսաւորչին, օրհնեմը զքեզ ևն» (Յարական Որուց և Թոսունց Գրիգորի): — Միթէ սյու նամակու ալ վաերական է: Արդարէ մեր տեսած կ. պօլսոյ երկորդ, Միիմարեանց, Երուսաղեմայ, Թէոդոսիոյ, Սիխիսի տպագիրքն համալայն են: վասն որոյ պարտ է հետեցնել թէ սոցա օրինակ եղած զանազան գրչագրաց մէջ ալ էական տարբերութիւն շկայ: այսու ամենայնիւ Գրիգորի Լուսաւորչի յիշատակութիւնմանզամ շըլլալով Տըրդաստայ համար և զքիմայ եպիսկոպոսապետէն առաւ և յուսաւորեց զՀայաստան բառին այնքան տարօրինակ խօսք մի է, որ կասկած կու տալ եթէ ոչ ամբողջ նամա-

խաւարային կողմանս հիւսիսոյ . զոր և այժմ կամին ի  
մէնջ կորզել հանել խաւարասէր որդիքն արեելից :

49. Եւ մեք ի ձեր քաջութիւն արութեանդ խիզա-  
խեալ, էր ինչ՝ որ ընդդէմ դարձաք նոցա հրամանացն,  
և բազում այն է՝ որ արդ առաջի պատրաստեալ եմք:  
Ի՞նտերեցաք զմա՞ աստաւածպաշտութեամբ քանի զիւանս  
ուրացութեամբ. եթէ դուք ևս ի ձեռն առջիք զմեզ, ա-  
հա կրկին կենաց գիտեցաք և ոչ մի անդամ մահու: Եւ  
եթէ սակաւիկ մի հեղգայք, գուցէ բազում և այլ աշ-  
խարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա :

450  
28 Յուլ.

50. Եւ իրիք յանդիման եղեն մեծի թագաւորին և  
ընթերցան զգիր պալատանաց Հայոց աշխարհին և զյի-  
շաստակարանոն նախնեացն, բազում մատեանք ի մէջ ե-  
կեալ ընթերցան, որ զնոյն ովստ հաստատութեան ի  
ներքս գտանէին : Եւ մինչ գեռ երանելին թէուգոս հար-  
ցանէր զամենայն սինկըլիստան, և հնարս իրացն՝ կա-  
մէր գտանել խաղաղութեամբ, և հոգ աանէր մեծաւ յօ-  
ժարութեամբ, զի մի եկեղեցիքն արևելից յափշտակեա-  
ցին յանօրէն հեթանոսացն, ի նմին ժամանակի հա ան-  
դէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց

մակին վաւերականութեանը, գտնեա ա-  
նոր մէջ ձեռք խառնուած ըլլալուն: Մէկ  
բան մի միայն կրնայ զմեզ հաւանեցու-  
ցանել, որ ուր նամակդ ապարէն այն-  
պէս գրեցաւ ինչպէս որ կը տեսնենք  
ներկայ որինակաց մէջ: Կ'երեայ թէ Ե-  
պիսկոսուսոնը և Կախարաբը՝ Յունաց  
օգնութիւնը ստանալու համար հարկա-  
ւոր դատեր են Բիւզանդիոյ արքունեաց՝  
արեւելեան չափանացութեամբ տալ դը-  
րուատիս սրոց ամէն մէկը պատմական  
խոշոր սիսակներ են: Երբ կ'ըսուի թէ  
շիք ոք յերկրաւորացու, որ Փոքուն թէու-  
զոսի դէմ ելլէ, թէ կայսրութիւնը մին-  
չե Ակրաց աշխարհը տարածեցաւ եր-  
բեմ, թէ Հայաստան Հռովմայեցուց  
ձեռակերան է, ալ զարմանալու չէ որ  
Հայք զքրիստոնէութիւնը չոսմէն առ-  
նեն. նա մանաւանդ երբ արեւելեան ե-

կեղեցեաց մեծի մասին չփոթութեանց  
և գոյթակական կռուց պատճառաւ  
Հռովմայ եպիսկոպոսին միջամտութիւնը  
և ազեցութիւնը յօյժ մեծցած էր նոյն  
իսկ կոստանդնուպոլսոյ մէջ՝ Փոքուն  
թէովոսի վերջի ժամանակները:

1. Ազգարարութիւնդ իրաւացի էր,  
եթէ մէյ մը Հայաստան ինար, կարգը  
Յունաց աերութեանն էր: Հայք իրեանց  
դրից պատճառաւ երկու դրացի մեծազօր  
արքութեանց իրարու դէմ ըրած արշա-  
ւանաց շատ անգամ խոշնուան եղած  
էին :

2. Անշուշտ Եղիշէ կ'ակնարկէ ասս  
զգաշինս զար կռած էր Տրդատ ընդ  
կոստանդիանու (Տէս. Խորեն. Գ. Ե.  
Ագաթ, 653) և զայլ ովստ նիզակակ-  
ցութեան որ անանց յաջորդներն հաս-  
տատած էին:

նորա<sup>1</sup>, և կարի շար խափան լինէր գործոյն օդնականութեան :

51. Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս<sup>2</sup> կայսր, և ի ձեռն վատթար արանց խրաստուացն իւրոց ծառայիցն, Անտառութեայ՝ որ սպարապետն էր, և Եփլալիս<sup>3</sup> ասորի, երկոքեան անարդք և վատթար արանց, միանդամյն և անաստուածք. ի նոցա բանս ելեալ թագաւորն, ոչ կամէր անսալ միարան ուխտին Հայոց, որ ամենայն ուժովն իւրեանց ընդդէմ կացեալ էին չարութեանն. հեթանոսաց : իսկ անարիս այս լաւ համարէր պահել զուխտն<sup>4</sup> հեթանոսաց վասն մարմնաւ.

1. Թէոդոս Բ մեռաւ ի 28 Յուլիսի  
450 (աւել Lebeau, համ. Զ. էջ 287):  
Նամակն աւ քիչ յառաջ զրուած էր:

2. Թէոդոսի մահուանէն ետքը Արեւ-  
լեան կայսերութիւնը իւր քրոջը Բիւլ-  
քերիոյ անցաւ, որ թէուտէ միաձայ-  
նութեամբ թագուհի հաշակուած էր,  
ըայց խորհելով որ իւր սեռ կընար  
պատճառ տալ պատիսի նախապաշտր-  
մանց և դուռարութեանց, որք արգելք  
լինէն նմա վայելուշ կերպով վարելու  
զժագաւորութիւն, իրեն օգնական և ա-  
մուսնին ընտրեց ծերակուտաի անդամներէ  
զՄարկիանոս թարակացին, որ յայնժամ  
վաժմանակայ ծերանի մէր, և այր զգօն  
խոնեմ, և առաքինի: Յունական Եփեղե-  
ցին երկուքն ալ սրբոց կարգը դասած է:  
Բուլքերիա Մարկիանու հետ երեք տա-  
րի միայն ապրեցաւ. ու անոր մահուա-  
նէն ետքը Մարկիանոս շար տարի ս  
անձնինն թագաւորեց: Թէուտէ զգուշա-  
ցաւ ի պատերազմէ, ըայց և այնպէս ա-  
ղատեց զիսյսերութիւնն յանարգանացն  
Ատտիկասայ և պաշտպան կանգնեցաւ.  
ուղղափառութեան թազկեռոնի ժողովզին  
վեհաները յարգել տալով: Եզիշէի առ  
Մարկիանոս կշտամբանքը արդարացի  
չեն ըլլար եթէ ի յուշ ածեմք թէ բնչ  
մեծ տափնապ հասուցեր էին բարբարոսը  
և մանաւանդ Հոնք Արեւելեան կայսե-

րութեան, մինչդեռ զԱրեւանեանը բո-  
ւրովին կը քանդէին:

3. Եփլալիս ասորի ըստ Եզիշէայ,  
իսկ ըստ Փարագեցոյ՝ Փլորենու ոմն  
նորմակս ասորի ազգու, որ էր աւագ  
դրանն թագաւորին: Ո՞րն է ուղեղը.  
զուցի Եփլալիս և Փլորենու մի և նոյն  
անձին անունը և մականունն են: —  
Օտար պատմաբանք կը յիշաւակեն Փո-  
քուն թէոդոսի ժամանակակից Փլորեն-  
ուիս անունն հարուստ պատրիկ մը: Այն  
առենները տէրութեան եկամուից զԱխա-  
ւոր ազըիւնիներէն մէկն է եղեր զԱխա-  
ւորկ մը (կամ տեսակ մը բատենէ  
տուքը մի) զոր շորս տարին մէյ մը կը  
հաւաքէին միայն ի վաճառականաց, յա-  
րուեստաւորաց և ի մանրավաճառաց, և  
որ այլանդակն է՝ ի սոռնկաց: Կառա-  
վարութիւնը անբարոյականութենէ ո-  
գուտ քաղելու համար, օրինաւորութիւն  
տուած կ'ըլլար նմա: Փլորենուիս այդ  
խայրառակ տրոց բարձման համար յանձն  
առաւ իւր քսակէն վճարել անոր փոխա-  
րէնը ու թէոդոս ալ ամութ չսեպեց ըն-  
դունել զնուէրդ (աւել կիսպըն. համ-  
բ. ծանօթ):

4. Այս է դաշնոքն զոր կռեր էր  
Յազկերոս ընդ թէոդոսի. Տես Յ. Ա.  
Յ. — Յայնք ոչ միայն օգնութիւն չեն  
ըներ Հայոց, այլ և զԱխանդին կ'իմա-

կան խաղաղութեան, քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան։ Վասն այսորիկ վութացաւ արձակեաց գեղազանս առ թագաւորն Պարսից զնոյն Երփարկ'իոսն, և եմուտ ընդ նմո յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց զօրու և զինու և ամենայն օդնու կանութեամբ։

52. Եւ իբրև այսպէս հաստատեցաւ, և հասաւ օդնու կանութիւն յուաց նոցա ի մարդկանէ, դարձեալ սուրբ եպիսկոպոսն քաջալերել սկսան զանձինս և զօրսն Հայոց։ Թէպէտ և հայէին յիւրեանց սակաւութիւնն և յերկոցունց թագաւորացն միաբանութիւն, ոչ ինչ վատաշանեալ գոզացին։ այլ ըստ առաջին ուխտին խիզախէին և ասէին, Պատրաստ եմք ի սպանանել և ի մեռանել գիւրին է Աստուծոյ սակաւուք զբազմաց գործ գործել, և անարդօք զմեծամեծ իրա կատարել։

53. Թէպէտ և ոչ ունէին թագաւոր առաջնորդ, և ոչ յարտապատաստ օդնական զոք յօտարաց, սակայն անձանց առաքինութեամբ և սուրբ վարդապետաց միփթարութեամբ համագունդ ամենայն զօրօք նախարարացն յիւրաքանչիւր տանէ ի մի վայր գային հասանէին վարդապակի. բաղում և այլ այրուձի, որ յարքունի տանէ՝ անտի էր։ Եւ զամենայն զօրսն յերիս գունդս բաժանեալ։

ցնեն Պարսից, որով և կը քաջալերեն զսոսա ապաստամբութիւնն անկասկած նըւածելու։ Անշուշտ Հոռոմոց ախորեւէլի չէր կրնար ըլլալ Պարսկական Հայաստանու անկախութիւն ձեռք ձգելը, որ կրնար իւրեաց բամբին ալ անցիլ։

1. «Գունդ կազմէր ի Հայոց Մեծաց, զազատ և զազատորդի, և յարքունի տանէ, զոստանիկ մարդիկ»։ — «Բազում» և այլ ազատ մարդիկ, զոր սոստանիկս անուանեն յարքունի տանէ։ Յ. կ. 9։ — Աւգարշակ, երբ կը բարենորոգէր զՀայաստան, հին թագաւորաց զարմէն շոր զունդ կազմէր էր, իւրաքանչիւրին զատ զատ զէնքեր և զարդեր տալով և կարգեր էր զնոսա պահապան դրան արբունի բայց Պարսից տիրապե-

տութեան օրերը արդ հին ցեղերը կամ մէկի թողուեր և կամ սպառեր էին, ու նոցա տեղը ուրիշներէ հաւաքեր և կազմեր էին թիկնապահ զնդեր, զորս սոստե կամ սոստիկ կանուանէին, իբրեւ թագաւորանիստ քաղաքի յատկացեալ (տես խորեն զիբք ա. գլ. լ. և մանաւնդ զիբք բ. գլ. լ. — Տես ես Յ. 10)։ Այդ սոստանիկ զօրաց մէկ մամ ալ Ասոսկայ կողմն անցեր էին։ — Ոստան է գուռն արքունի, արքայանիստ կամ իշխանանիստ քաղաք, լըծորդ ասդա, սոփան, ասիդանէ, պրոկրառի, յոյնք ասէին անդի և լատինք անդուն և իմանային այսու մանաւնդ զլլմէնի։

Զգունդն առաջին առյին ցեղարշապտհ որմբոսեան<sup>1</sup>, և գումարէին զնա պահապան աշխարհին, մերձ ի սահմանս Ասրապատական աշխարհին: Եւ զգունդն երկրորդ առյին ի ձեռն վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս վրաց ի վերայ մարզպանին Ճորայ, որ եկեալ էր աւերել զեկեղիցին Ազուանից: Իսկ զգունդն երրորդ առյին ի ձեռն վասակայ իշխանին Սիւնեաց, որ ոչ ի բաց կացեալ էր յուխտէն հեթանոսաց ըստ ներքին խորհրդոցն իւրոց:

54. Ինտրեաց և առ ընդ իւր զորոց դիտէր զիմուրութիւն հաւատաց նոցա. զիշխանն Բագրատունեաց զօրք իւրովք, զիշխանն Խորխունեաց զօրօք իւրովք, զիշխանն Ապահունեաց զօրօք իւրովք, զիշխանն Վահունեաց զօրօքն իւրովք, զիշխանն Գարեգինից զօրօք իւրովք, զիշխանն Ռւրծայ զօրօք իւրովք: Եւ զայլս բազում զօրս յարգունի տանէն էարկ յինքն, և զեւպուհս տանս յայրմէ տահմէ: Եւ խորամանկ խարէւթեամբ դարանամուտ լինէր յամուրո իւրոց աշխարհին, ի պատճառո կեզծաւորութեան՝ եթէ ընդ ճապուկ անդր անցանէ ի վերայ զնդին Պարսից՝ հարածականս առնել յաշխարհէն Ազուանից<sup>2</sup>:

1. Այս է իշխանն Արծրունեաց: Վը առաջ հաստատած գահնամակին մէջ առաջին է Արծրուն Տէրն, Բ. Ասպետն որ է Բագրատունեաց իշխանն. Վ. Արծրունեաց Տէրն. Դ. Մամիկոնէից. Ե՛ Շահապն Մոփաց. Զ. Մոկաց Տէրն. Ե՛ Շշառնեաց Տէրն. և պին: Են և երկրորդ և երրորդ Տոհմք Արծրունեաց, որ գահնամակին մէջ իթ և Լ. Կարգը ունին: Կերշապուհ Արծրունեան առաջին տան իշխանն էր: Տես Պատմութիւն մեծին ներսեսի. ծանօթ. Էջ 133 Ափ. Հայկ: — Ի՞նչ էր սակայն Արծրունեան կոչուելուն պատճառը:

2. Զարրորդ Յեղանակին մէջ աւելի կատարեալ զօրահամար մը կու տայ Եւ զիշէ Վասակայ նիզակակցացը. Զ:

3. Սիւնեաց աշխարհին լեռներուն և ձորերուն մէջ պահութափ ու շարժիլ, և անտի Ազուանից երկիրն յարձակիլ և

Ճորայ մարզպանին առաջնորդած բանակը կողմանկի կամ ի յետուս զարնել՝ գիւրին էր. Վասակայ առարկութիւնը շատ իրաւոցի և օգտակա կը լինէր եթէ անկեղծ ըլլար: Պատերազմական խաղացմանց մէջ հայ զօրավարոց քաջ հմուտ ըլլալն Եղիշէի պատմութենէն կ'երկի. բայց պատմագիրն ինքնին տեղեակ էր ասոնց. որովհետեւ ուղիղ խորհրդառնութեամբը կը ցուցանէ մեզ չիշտ զրից և անկեաց մարտական կարեւորութեալը: — Ճապուկ է լծորդ պարսկերէն մատուց բառի, որ է արագ, շոյտ, թեթե. յորմէ և բայուր իիբամ՝ արագուն, բայուր տեսի՝ արագաձեան: Արմատը բայ գործածելի չէ արդի պարսկերէնի մէջ. բայց ունիմը հայերէն չճեզ ու ուսուի կը բաշագրին այլնայլ բառեր:

55. Իսկ նա յամբածածուկ հաւալոցէն ճեպով գետապնա արձակէր առ գունդն Պարսից<sup>1</sup>. « Ահա աւագիկ քակեցի զմիաբանութիւն ուխտիս Հայոց, և ընդ երիս կողմանս զգունդն քայլայեալ բաժանեցի: Զգունդն առաջին հեռացուցի ի կողմանս Հերայ և Զարաւանդայ. և գունդս երկրորդ ընդ իմայ ձեռամբ է, որոց ոչ ինչ տամ վեստ առնել զօրաց արքունի: Եւ զայլ ամենայն, որ այր կառուց յաշխարհի աստ գտանէր, ցանեցի ցըրտեցի ընդ ամենայն միջոցս աշխարհիս: Բայց զգունդն երրորդ արարի ընդ Վարդանայ յԱզտանո՛ սակաւածեռն և ոչ բազմաթիւ: Ե՛լ համարձակ ընդ առաջ նորա, և մի զանդիսեր ամենենին տալ պատերազմ. գիտեմ՝ զի ի պարտութիւն մատնին առաջի քայլ մեծի զօրութեանդ»:

56. Զայս գրեաց և եցոյց մարզպանին, որում առնունն էր Սերուխս: Իսկ նա իրքի լուսու զայս ամենայն զքաջալերս ի վասակայ. և ստուգեալ հաստատեաց ի միստ իւր, եթէ սակաւածեռն զնդտւ գայ սպարապեան Հայոց ի վերայ նորա, ոչ եկաց մնաց ի կողմանս Ճ'որայ. այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրու իւրոյ, և փութանակի անցանէր ընդ մեծ գետն կուր անոն, և պատահէր նմա մերձ ի ատհմանս վրաց հանդէպ խաղ-խաղ<sup>2</sup> քապաքի, որ ձմերոց էր թագաւորաց Ազտանից:

1. Գունդն Պարսից որ ընդ հրամանաւ Ճորայ մարզպանին էր:

2. Խաղխաղ. « ընդ մէջ Մըրզուզ լերին և գետոյ և Ճակիր գետոյ է Կակամ երկիր (յարեկլս հուսիսոյ Աւանայ լէի) ... ի հումն թուի Ավագամ կուցեալ վիճակին և Գարզմանայ գաւառի թւեիսյ մասն լեալ, ասու էին ձմերոցք թագաւորաց Հայոց ի ջերմահավիսու լեռնաձորոց մերձ ի դաշտն Աղուանից, այս բնիքն կուր գետոյ, և առ եզերը Կակամայ կայ ցարդ խայլանայը զիւզ, որ թուի ունել զտեղի խաղխաղ ձմեռնահանգիստն քաղաքի մադառոց մերոց Արշակունեաց և ի հանդիպոյ դաշտին եհար մեծն վարդան զՊարսօն՝ ի գալ նոցա ի պահակէն Ճ'որայ ի Հայս, առ ափամբք Լովինաս կամ

Լուրանաս գետու»: (Տեղագիր Հայոց մեծաց. 162): — Այդ Լովինաս գետը այժմեան Կակամ գետը կամ մնոր արեւելեան վտակն ըլլալու է, սոցա երկուքին իրարու խառնուած տեղը կայ ցարդ Լիփիյոց զիւզ: Վարդան Պարսից աջ թերը զարկաւ, քանզի հաւանորէն ձախը Լովինաս գետոյն կոթնած էր. ուստի և պատերազմի գաշտն ալ գետոյն արևմտեան կողմը մնառել պարսէ: — Թէ Խաղխաղ էր քաղաք ձմերոց արբայութեանն Հայոց՝ զիւզմբ յԱդամանգեղեայ (էջ 37). բայց Վարդանանց պարերազմին ատեն, ըստ վկայութեան Եղիշէի, Աղուանից թագաւորաց ձմերոց եղած էր:

Մնացանէր բաւանդակէր ամենայն զօրքը իւրովք, ուազմ՝ արարեալ զբոլոր մեծութիւն գաշտին ի ներքս փակէր; զինեալք և վառեալք ամենայն պատրաստութեամբ ի մարտ պատերազմի ընդդէմ զնդին Հայոց:

57. Իսկ քաջն վարդան և ամենայն զօրքն, որ ընդ նմա էին, իրրե տեսին զբազմութիւն պատրաստութեան զնդին հեթանոսաց, Հայեցան և յիւրեանց սակաւութիւնն, թէպէտ և կարի յոյժ նուազումք էին քան զնոսա, ոչ ինչ զանդխանցին առ յոյժ բազմութենէն, այլ հասարակ միաբանեցին և համբարձին յերկինս զձեռս իւրեանց, աղազակէին և ասէին. Գառեա, Տէր, զայնոսիկ՝ ոյք գատին զմեզ. մարտիր ընդ այնոսիկ, որ մարտնինս ընդ մեզ. զինու և ասպարաւ քով օգնեա մեզ<sup>2</sup>: Շարժեա և գողաց զգունդազունդ բազմութիւն անօրինացու ցրուեա և վասնեա զշար միաբանութիւն թշնամեաց քոց առաջի քոյոց փրկարկան մեծի նշանիս, և տուր ի ձեռն սակաւուց զքաջութիւն յաղթութեան ի վերայ անհնարին բազմութեանս: Ոչ ի պարծանա սնոտի վասաւորութեան անօգուտ վասաւակոց ինչ աղազեմք՝ յադտհութիւն

1. Առաջմ կը նշանակէ ոչ պատերազմ և ոչ բանական կարգեալ կամ ճակատ, որպէս դնեն ընդհանրազէն բառագիրքն.

այլ և Տող զօրք կարգելոց առ երի միեւանց. զզ. Rang. — « Զդիւացն քակեցեր զազմանն»: — « Յերկու կողմանէ ուազմ զազմ կարգեաց և ինքն զ8000 արօն բաժանեաց ի վեց ուազմն»: — « Հերձեալ ընդ մէջ զջութեան առաջարափակ ուազմին բազմութեան»: — « Հատեալ զոազմ՝ պարուց նորա»: — « Անկեալ ի մէջ ուազմաւոր հանդիսին, արշաւէր սիրալով յայսկոյս և յայն կոյս»: — « Լացին զօրավարը Ամսիկ կոմիտ ճակատամարտը ուազմահատք»: — « Արազմամուռ երիվարք»: — « առազմիկ հեծեալք»: այս և ուազմի մէջ մուած ուազմի մէջ պատերազմելու վարժած ու կըրթուած ձի և հեծեալ, որպէս ասի զազմեանկանն և ի թեթեազէն հրոսից:

Բ. Կարգ և շաբթ բանակաց, զզ. Line, rang d'une armée en ordre de bataille, suite de bataillons et d'es-

cadrons placés les uns près des autres sur la même ligne, et faisant face du même côté. « ուազմ արարեալ զբոլոր մեծութիւն գաշտին ի ներքս փակէր»: — « Որ զօրավարութ յորմէ կողմանէ յուազմ մուանիցէ»: — « Ճակատն և ուազմն»: — « Ճակատու ուազմի մարտկաց ընդդէմ միմեանց պատրաստէին»: — « կարգել զազմն»:

Պատէ ազմ բառին առաջին մասն ուաստ է բախդի մասնիցն, որով կը կողմանին ևս ուաստ-ասիսն»: « պատրաստ»: « պատ-նէշ»: « պատ-ուաստ»: « այն բառերն բախդի ու ինչ կայ յանդիման, ճակառակ»: բազանս զրոց մէջ բառ:

2. Առաջմու Լ. Դ:

ընշառիրութեան զանցաւոր մեծութիւն կապտելոյ, այլ զի ծանիցեն և գիտացեն ամենեքեան այնոքիկ՝ որ ոչ հնազանդին սուրբ աւետարանին քարոզութեան, եթէ դու ևս 8էր կենաց և մահու, և ի ձեռս քո է յազմութիւն և պարտութիւն։ Եւ մեք սպատրասու եմք ի մեռանել վասն քո սիրոյդ, և եթէ սպանանել ևս հասանէ վնսուա, եղիցուք վրէժինդիրք ծշմարտութեանն։

58. Եւ զայր ասելով՝ խումբ արարեալ յարձակէին, և զաջ թեն բեկեալ՝ զձախոյ կողմամբն արկեալ, և սրբոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին, և փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն գարիւքն լավնաս գեաց։ Ուր ընդդէմ դարձեալ թագաւորազանց սմանց բազասական՝ արքայի, ընկեցին զոմն ի ձիոց ի նախարարաց Հայոց, ի գնդէն Գիմաքոնից զՄուշ սպանին, և զԳազրիկ վիրաւորեցին։

59. Յայնմ տեղունջ դէտ ակն ի վեր ամբառնացը Արշաւիր Արշաւրունի<sup>2</sup>, զոչէր առիւծաբար և յարձակէր վարազաբար, հարկանէր և սատակէր զվուրին քաջ զեղրացը թագաւորին Լիխնաց<sup>3</sup>, և զբազում համհարզուն նորին ընդ նմին սատակէր։ Եւ այնպէս ամենեքեան առ հասարակ այր զախոյեան իւր յերկիր կործանէր։ Եւ առ

1. Թեփէլսիի արեելեան կոզմը կայ և Աղնագ երկիր, մասն կախեթու նահանգի Արաց. յերիս տրոհեալ գաւառու, մնաց մէջ Ալազան և Ետո գեաց, յիւրահամբար, ի բուն Աղնագ և ի Երբախ. մասն են և սոքա ննոյն Աղուանից և կոչէին ի հնումն կամբէկան կամ կամբէկից, որպէս և ցարդ գոչի վիճակ մի վաճառէշի. և Բայասական դարս որ է Խոսպանն ընդ մէջ կուրայ և Ետոաց. երկորին ևս յիշին առ պատմիւս մեր։ (Տես Տեղագիր 199. Տանօթ. 1), —

Բազասական արբային անձամբ պատերազմի գալը շահէր Եղիշէ. ուսուի մարթէ և կարծէլ, որ անոր պամնուելէն ի վեր տեղը յաջորդ դրուած շէր. Տես Յ. ի. 30, և ի վերոյ էջ 41։

2. Արշաւիր Արշարունի կամարական էր գեաց Արազանաց, ունելով

զդուսոր նորա Արագանոյ ի կնութեան և զօրագլուխ աջակողմեան թերին, նեղակակից ունելով զՄուշ Գիմաքսեան։ Զախ կոզմը յանձներ էր վարդան Խորենայ Խոսկոսունոյ, զօրավիկն տալով նմա զՀմայեակ Գիմաքսեան. և ննդն մէջուղը կը կենար։ Բաց ի վերայգրեալ նախարարացդ այս արշաւանաց մէջ Վարդանայ ընկերացեր էին թամուլ Գիմաքսեան, Արտակ Պալունի, Գիման Վահեւանեաց և այլ տանուտեարք և սեպուհը, բազումք ի զօրացն Հայոց, և այլ զունդք ի զօրացն Արգակսոական այրուծիոյ (Փարու. 185. 190)։

3. Աերուխա միայն պարսկական զօրօք շէր գար. այլ ի Լիխնաց և յԱղուանից ալ մարդ առած էր, Համհարզ՝ տես Յ. թ. 44 Ճ. 2:

յոյժ յանդուգն յարձակմանն՝ յոլովագոյն այն էր զոր գետամիջնու առնեխն քան զանկեալսն սրոց ի ցամաքի: Ի բազմութենէ դիականցն անկերոց՝ յատակ ջուրք գետայն յարին դառնային, և ոչ դատանէր որ ամենեխն ի նոցանէ ապրեալ և թափուցեալ յանառավախտ մայրեա դաշտացն<sup>1</sup>: Բայց մի ոմն ի զօրականէ թշնամեացն՝ զինու հանգերձ ելեալ ի նիւս երիվարին անցանէր ընդմեծ գետն<sup>2</sup>, մաղաղուր պրծեալ ի պատերազմէն՝ գոյժ տանէր ի մնացեալ բուն բանակն, որք փախստական անկանէխն ի մեծ շահաստանն<sup>3</sup>:

60. Յայնմ ժամանակի զօրքն Հայոց կատարելով զմեծ գործ պատերազմին՝ դիակապուտ դառնային, ժողովէին զբազում աւար բանակին, և կողոպտէին զանկեալ դիակունն. և կուտէին բազում արծաթ և ոսկի, զզէնս և զզարդ զարի արանց և զքաջ երիվարաց:

61. Դարձեալ յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ ի վերայ բերդիցն և քաղաքացն, զոր ունէին Պարսիկքն յաշխարհին Աղուանից. Հզօրապէս մարտնչելով և այրե-

1. Այժմ Տփղիսէն Գանձակ գնացող և անապարհը կուր գետոյ հարաւային կողմէն ու այդ պատերազմին տեղւոյն վրայէն կ'անցնի: Կը փափաքէնքը զիմնալ թէ Մուրզուդ շայի և նշագամաց մէջ տեղը գտնուող երկիրը այսօր ևս անուանախիտ է:

2. Մեծ գետն՝ կուր, զոր անցեր էր Սերուխտ Վարդանայ վրայ գալու համար. Տես ի վերայ 56:

3. Այս է Պարտու մայրքաղաքն Աղուանից: — «Ցեզը թէրթէր գետոյ (Տրտու ըստ նախնեաց), որ ինանէ ի լեռանց Գարապաղի և կուր, յահէկէ կողմանէ կայ Ոկրուկ գետը առ աւերան քօք հեռյ մայրքաղաքին Աղուանից որ թի՝ գար էր աթոռ կամողիկոսի և բարգաւաճ վանականութեամբ, վասն ուրոյ և Շամաստան կոչեցաւ: » Տեղագիր 180: — Թուի մեզ թէ Շամաստան հայացեալն է պարսկէրէն շամաստան բառի, որ մեծ և ամրացեալ քաղաքը ըսել

է. ուես Փարագեցի՝ «Եկեալ ի շահաստանն որ անուանեալ կոչի նելշապուհ»: և ի զզեակ շահաստանին նիւ շապուհ»: Տես և Pahlavi Pazand Glossary: Միւնէլ իւթ-թավարիեի մէջ ալ կը տեսնեմք սաէսպ. շանրիսրանի Խաֆանն, շանրիսրանի կամ շանրիսրանի թիյ: Հաւանական է թէ Հայք ի սկըզբան պարսկէրէն բառը ի կիր առնն առանց հնչելու բառոք, որպէս ի Շափումք: և յետոյ շամաստան իւր հայկական իւմաստով գործածուեցաւ իւրի վահառաշահ քաղաքը:

Կերնի թէ Սերուխտ ամբողջ բանակաւը չէր եկեր Վարդանայ վրայ. այլ միայն յառաջապահ զնդաւ: Որչափ աւ Վարդանայ զորքը կորիչ ենթադրեմք ու բանած զիզը զորառը և բարձր՝ բազգանամբ Պարսից, որք աւելի վարերը կը գտնուէին, կարելի չէր ամբողջ բանակ մը խարսակել միայն մէկ վիրաւը և մէկ մեռեալ մ'ունենալով:

լով զամուրս արդելանաց նոցա, և զերամս երամս մողացն՝ զոր պատրաստական ածեալ աշխարհին գայթակդութիւն, ուր և գտանէին յամուրս ամուրս վայրացն, որոյ ճարակ տուեալ գնէին գէշ թռչնոց երկնից և գաղանաց երկրի: Որբէին գտեղիսն յամենայն պղծագործ զոհիցն, և փրկեալ աղատէին զեկեղեցիսն յանհարին նեղութենէն:

62. Եւ բազումք ի նախարարացն Ազուանից և յամենայն շինականացն, որք վասն անուանն Աստուծոյ ցըրուեալ և վասնեալ էին յամուրս լերանց կապկոհի<sup>1</sup>, իրեն տեսին զաջողութիւն գործոյն՝ զոր կատարէր Աստուած ի ձեռն գնդին Հայոց, գային ժողովէին և նոքա, և խառնէին ի զօրս նոցա. և միաբանք և հաւասարք կցորդք լինէին գործոյն նահատակութեան: Խաղային զնային այնուհետեւ ի վերայ պահակին Հոնաց<sup>2</sup>, զոր ունէին բռնութեամբ պարսիկքն, առնուին քանդէին զպահակն, և կոսորէին զզօրսն՝ որ ի ներքս բնակեալ էին. և զգուռն տային ի ձեռն Վահանայ, որ էր յազգէ թագաւորացն Ազուանից: Եւ յայսր ամենայն քաջութեան վերայ ոչ որ անկեալ վիրաւորեցաւ ամենեին ի նոցանէ, բայց ի միոյ երանելոյ որ կատարեցաւ նահատակութեամբ ի մեծ պատերազմին<sup>3</sup>:

63. Եւ անդէն ի նմին տեղուջ զայրն՝ որում զդուռնն յանձն արարին, զնոյն գեսպան արձակեցին յաշխարհին Հոնաց, և ի բազում յայլ ազգս բարբարոսաց, որ համագործք էին Հոնաց աշխարհին, բանս զնել ընդ նոսա և ուխտ հաստատել՝ անքակութեամբ ունել զմիաբանութիւնն: Իսկ նոքա իրեն զայն ամենայն լուսն, վութապէս վաղվազակի հասանեին ի տեղին, և ականատեսք լինէին գործոյն յաղթութեան: Եւ ոչ ինչ յապաղեցին

1. Այս է կովկասու կամ կաւկասու, որ երկու մասէ կը բազկանայ. գաֆ՝ որ պարսկերէն և արաբերէն՝ կովկասի անունն է. և քօն կամ քուն՝ լեռան. Գաֆքօն բառ առ բառ՝ Գաֆ լեռան. Բնագէս մինչև ցայժմ Ակվատ-քօն, Ախոյման-քօն և այլն: Կովկաս անուան ստուգաբանութեան վրայք Եւրոպացի աշխարհագէտք տեսակ տեսակ ենթա-

դրութիւններ ըրած են. հաւանօրէն Գաֆքօնի աղաւազեալն է. և սորա առաջին մամն ալ գուցէ Աւեսպայի կաւ բառն է. որ թարգմանի և կով: — Պունտահիշի մէջ՝ կովկաս՝ Գաֆ լեռան կոչեալ է:

2. Այս է պահակն Ճորայ:

3. Այդ նահատակդ Մուշ դիմաբանն է, որոյ վերայ խօսեցաւ Եղիշէքիւ մը վերը:

երգմամբ յուխտ մտանել ըստ կարգի իւրեանց օրինաց . յանձն առին և զերդումն քրիստոնէից<sup>1</sup>, պահել ընդ նոսա հաստատութեամբ զմիաբանութիւն:

64. իսկ իրքի զայս կատարեցին և արարին իւրեանց մեծապէս հաստատութիւն, և գեռ անդէն ի տեղուցն զետեղեալ էին խաղաղութեամբ, գուժկան հասանէր<sup>2</sup> յաշ-

1. Ի նախնիս ամենայն ազգ իւր ո-րինաց որոշաց ձևով կ'երդնոյց. Հանք ալ իւրեանց սովորութեանց համեմատ երդումն առուն: Կ'երեի թէ այդ երդման ձեղ բաւական վատահութիւն չազդեց քրիստոնէայ Հայոց ուստի Հանք զնուաս աւելի և ապահովելու համար՝ քրիստոնէից պէս Աւետարանի վրայ ալ երդումնցան: — Ի՞նչ էր Հանաց երդման ձեր. չիրցանք ստուգել: Պարսից թաւաւրաց ամենէն հաւատարիմ խոստման ձեւն էր ծրաբի մը մէջ ազ զնել ու կմըել վարագ նկարագիր մտանեաւ: Բուզանդ 164. Սերէսս 64: Իսկ առ հասարակ ասէին երդումն ըմպել, յորմէտնէ: անտ իմմէք. վասն զի երդման ժամանակ մանաւոր կերպով պատրաստեալ կամ նուրբագործեալ ջուր մը կը խմէին յետ կոչելոյ զանուանս աստուածանոց ի վկայութիւն Տես Պահատահէլ էլ 207:

Ասս կը տեսնեմք վարդանայ արշաւանաց բուն նսպատակը, և թէ ինչու թողուց նա զմիջոց աշխարհին զԱյրարատ, ուր իւր ներկայութիւնը ամենահարկաւոր էր, և զսահմանս Ատրպատակնուու գէպ ի հիւսիս վանց: Ապաքէն, մինչև հետեւեալ գարնան Պարսկաստանէն բանակ չէր կրնար գալ, ուստի այն կողմանէ գամինալու բան մը չուներ վարդան առ այժմ՛ ձնորայ մարզպանը անմիշապէս կրնար վագել Հայաստանի վրայ, որպէս և ըրաւ. վասն որոյ իւր առաջին դործն էր նորա բանակը Խորոսիկել. այս ալ կատարեցա Լոփնասի ճակատամարտիւ: Բայց Վարդանայ արշաւանաց բան շարժառիթը այդ չէր. կը յաւսար վանել զԱյրութիւն նրբ և ուր որ ալ

ըլլար, բնչպէս որ շվախցաւ իւր կոնակը թողուու նորա բանակին թեացրդը գուցէ և ստուարագոյն մասը: Գաղանի խորհուրդ մի այլ ուներ, զոր անշուշտ վասակէն պահէր էր. և պահել ալ հարկ էր, վասն զի սա կրնար բոլորովին խանգարել զայն: Յունաց կողմանէ օգնութիւն չգոնուելուն վրայ, պէսք էր որ Հայք ուրիշ զօրաւոր ազգ մը նիզակակից աւնենային: մի միայն յայսերնին Հանաց վրայ էր. ուստի փութաց վարդան ժամ յառաջ հասնիլ ի պահազն ձորայ, քանդել և բանալ զդրունս, ու դաշնակցիլ անոր կովկասեան ազգաց հետ, ուր տարիներով առաջ խօստացեր էին օգնելու Հայոց (Տես յէջ 41, 43 և 8. Ա. 14 ճն 2, և 9 ճն 2): — Կ'երեի թէ այս միջոցին կամ ասկէ քիչ ետքը պահակը ստուիկ աւերեցաւ. Տես Յ. Ե. 18: Այդ արշաւանքդ Վարդանայ համարյն և արագութեանը նշանաւոր ալացանց մի է. գճրախոտարար Հայք յայսերնին բարբարս ժողովրդեան մը վրայ զնելու ստիպուած էին: Հանք թէտէտ երդութենք ընելու շգանդաղեցան, բայց կարենու օգնութիւն մը չըրբն Վարդանաց: Մէկ օգուտ մը միայն մեռք բերուեցաւ. Ճորայ մարզպանը Հանաց հետ զրազելու ստիպուելով չկրցաւ այնուհետեւ նորէն գալ ի Հայաստան. Տես Յ. Գ. 15:

2. «Պուժկանը հասանէին ի կողմանցն Գալիիացաց անախ, զօձիս պատառեալ. զճակատ հարեալ և զգործ զայս ապային»... Արաբայեցոց ու զւ. ի. 14: Տես և ի գերոյ 7. ճն 2 և 2 ճն 3:

խարհէն Հայոց, գճակատ հարեալ և զօծիս պատառեալ վասն ապատամին վասակայ, յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանուանդ զՃմերոցս արքոնի, որ կայեամկը զօրացն էին<sup>1</sup>, զԳառնին և զԵրամօնս և զԴրահանա-

1. Այս հատածիս մէջ յիշեալ վայրերէն զԳառնի և զԱրտաշատ վարդանանք ասկէ յառաջ ձեռք անցուցեր էին զա նելով զՊարտիկ բերդապահս, (Տես Յ. Գ. 39 (Գառնի որոյ հնագոյն անունն էր Գեղամէ, Երիվանու հարաւային արեւելեան կողմը կ'ինայ, չորս ու կէս ժաման հետք: Աստ էր Տրդատայ սարաւոյրը, որոյ աւերակները կը տեսնուի ին այժմ ինչոքս և միջնարերդին և այլոց շինութեանց: (Տեղագիր 140):

Երամօնս, Եղիշէ մեզ կարեսր տեղեկութիւն մի կու առայ ցուցանելով թէ ուր էին զօրաց ձմերոցքն, անշոշտ սոք կամ բերդապահներ էին որպէս Արտաշատ, Գառնի և այն, և կամ սոսկ ամրոցներ միանգաման և զինուորանոց: Գուցէ: Երամօնս զըշագրի սիսալ մի ըլլայ ու պէտք ըլլայ ընթեհանուլ Երամօնյն որ Արտաշատայ արեւմտեան կողմը մեհեան մի էր Տիր գից նուիրեալ՝ զոր կործանեց Տրդատ. (Տես Արամօնդ, էջ 584), կամ Արամօն գիւղ՝ ի գաւառին Երիվանու, յորում պայծառ եկեղեցի շինեցաւ յութերորդ դարու և նշխարը նորա մասն. (Տեղագիր 188):

Դրամանակերտ կամ Մեծ Դաստակերուն, պարտկերէն Տասդակերտ՝ որ է ձեռանկերտ: Ասդպէս կը կոշէին պարսիկ և հայ թագաւորք իրենց շինել տուած ապարանքը կամ քաղաքը. երբեմն այդ հասարակ անունդ քաղաքին յատուկ անունն եղան էր. այսպէս՝ Խոսրով երկրորդի Ապրուէզի պալատան և ոռրա շրջակայից անունը մեաց Տասդակերտ, որոյ հոյակապ աւերակները կանգուն են մինչեւ ցարդ: Խոկ Հայք և մեծ գաստակերտ» ասելով կ'իմանային

զԵրուանդակերտ, զոր Արտաշէս և Մարմէտ կոչել տուած էր Երուանդակայ անունը մոացնել առաւ համար, և որ խորենացնոյ որերը Դրասիանակերտ կամ Դրամանակերտ կը յորդորէիր. Տես Խորենացի, Յ. Խթ. Խջ. Պ. Երուանդակերտ՝ որոյ գեղեցիկ գրից և շինութեանց նկարագրիր կ'ընէ մեզ Խորենացնին, ինչպէս և հանդիպակաց Երաւանդաշատ՝ որ պարապապատ և միջնարերդին ամուր քաղաք մի էր, Կամարականաց տրուած էին ի Տրդատ թմագաւորէն, և նոցա Ռստանն էին: «Մեծ գաստակերտ» ըսելով զերկոսին ևս իմանայ վան զի Երուանդաշատ առելի յարմար էր «Ճմերոց» և «Կայեամ զօրաց» լինելու: Խոկ վերջերս Դրասիանակերտ կամ Դրուհանակերտ կոչուելուն պատճառը չգիտեմ. է պարսկերէն դարսամ երկւստ, վախոս, գուցէ այդպէս անուանեցին՝ Երուանդայ օստատիկ վախոսութեան համար, որ Արմաւրայ մէջ ինքինքը ապահով չգտնելով զԵրասիայ ձորն իրեն բնակութեան տեղի բնորեր և Երաւանդաշատայ բնական և արհեստական ամրութիւնքը բաւական չափանիք հարկածի գաղանի զարդարք, զրադինս հայրենիս 40 ասպարիզօք հեռի տեղ մի ի Բագարան հաստատեր էր:

Վարդանաշատ, էր Վարդանակերտ աւան զոր Ամենան լ. մերձ գնէ այժմեան Սալեան քաղաքի (Տեղ. 188): Բատ Մասուտիի, որ ձանապարհորդեր էր ի Հայս, Երասի գետը և Վարդան քաղաքին քովէն անցնելէն ետք կը հանի ի Աս-

**կերտն՝ զմեծ Գաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն  
Օշական, զՓառախոսն, զԱրգեանսն, զՉողկերտն աւան**

նարա ուր կը թափի ի կուր գետ չ:  
Բայց ուր քաղաքդ կամ աւանդ որ ճին  
Փայտակարան քաղաքէն քիշ հեռի էր,  
չկրնար Եղիշէի յիշատակած արքունի  
ձմերոցը լինել: - Եւ այժմ ի մուտո Ալեք-  
սանդրովուի, ի Եղիշակ դաւառի գիւղ  
մի Վարդանէ, որ գուցէ մեր փնտած  
Վարդանաշատն է. (Տես Եղիշակյ էջ 7):

Օշական. Հ դաշտին Վաղարշապա-  
տու. (Եմիհաննի) են իրեն 40 գեօղի և  
վանրայք անուանիք: յուղով յարեմբ-  
տակողմե և յաջմէ Քասազայ և են ի  
հիւսիսոյ մայրավանացն, յորս զիւա-  
ւոր և Օշական գիւղ յարեմտից հիւսի-  
սոյ երկմամաւ հեռի, առ Կարմրագոյն  
շեշարար ափամբ Քասազայ, որ առա-  
պարն Օշականայ կոչիւր առ նախնազը-  
մանդ ենար վահան Ամասունի զէնն  
հիւսիսոյ ակն արկանելով յեկեցիս  
կուսանցն, եւ ընկալաւ զգեսօնի ի  
պարզեի մասին ի խոսրովայ յորդւոյն  
Տրդատայ, և ժառանդ իւր միւս ևս  
Վահան Ամասունի (Եղիշեայ ժամանա-  
կակիցն) անդ հանգոյց զմարմին մեծին  
Մերուպայ (որտն և աշակերտն էր),  
ուր և կոյ ցարդ ընդ ֆայտածածուկ  
յարկաւ նորոգեալ եկեղեցւոյն, առ որով  
են աւերակք, զոր ապարանս և մահ-  
արձանս շիրմի վահանայ Ամասունոյ  
ասեն. (Տեղ. Հայ. Մեծ. 134):

Փառախոտ և Զողկերտ, Զողկերտ՝ այլ  
դրշագիր Զողկերտ, այլ անուամբ նա-  
հազեռական տուն մի կար՝ Զողկերտի  
(Սափերը Հայկ. Ա. Էջ 34): Խորենա-  
ցին կըսէ թէ Ամասիս որ բնակեր յԱր-  
մաւիր, անցանէ զգետովի մերձ ի լեռանն  
հորաւոյ, և չինէ անդ առ խորշիւք  
լեռնոտին մեծապէս ծախիւք երկուս  
տունս, զմին յարեւելս կոյս մօտ յակունս  
աղքերցն որ առ ստորոտով լերինն ե-  
լաննն. իսկ զմիւնն յարեմուտս կոյս

նորին տանն, բացագոյն իրրե մեծ որ  
հասարակորոյ միոյ հետեւակազնացի առն  
ամնազարհի: Եւ ես զնոսա ի ժառան  
գութիւնն երկուց որդւոց իւրաց Փառո-  
խի և Յուլակեայ. յորոց բնակեալ՝ յիւ-  
րեանց անուն զաելիմն կոչեցին Փառո-  
խոս և Յուլակերտ: Բայց զիւան՝ Ա-  
մասիա անուանէ իւր անուամբ՝ Մասիս:

Արդեկանն. Այլ ընթաց զԱրգեօնն,  
զԱրդեկօնն: « Իմեազն ձիով վաղ հա-  
սուցանէր ի գաւառն Այսարատու ի մեծ  
ի գիւղն Ընյին արցունի, որում Ար-  
գեանն կոյնե, առ թագաւորն Հայոց  
Պապ և արքունի պալատ մի կար անգ.  
անս բաւզանդ 204: Զմարթացար սա-  
կայն ասկէ աւելի ձշդել զտելի զիւղիդ:  
Դիտողալմեան արժանի է նանութիւ-  
նը զոր ունի անունդ ընդ Արդինի, որ  
էր յերբեակ աստուածոց արժենական  
բենազրոց, և որ կ'անձնաւորէր զԱ-  
րեգակն :

Արմաշիր՝ յելից Եւհրիար և ի հա-  
րաւոյ թեկիւ-ախոյի գիւղերու. Է հնա-  
գոյն ի մայրաբազարացն Հայոց, որոյ  
ասկաւ մեացուածքն կան տակաւին ի  
կարմիր լուսաբար բլրի կամ բարձրաւան-  
գակի. (Տեղագիր): Ռուսական կառա-  
գարութեան հրամանաւ Պ. Երիցեանց  
պեղմունն արար անդ:

Լուսաւ աւան. « Յելից հիւսիսոյ թա-  
լիշի, ի կոզ Արագածու կայ կոչ կամ  
կուաշ աւան, յարում նասէր կուրա-  
ցեան Տիրան արքոյ եղիշէլի և ասպար-  
ջական լեալ թռուն իւրում գնելոյ:  
վամ այն անդ ապանաւ հրամանաւ որ-  
դույ իւրոյ Արցակայ, են և առ նովա-  
աւերակք, և մերձ էր ի սա լճակն յոր-  
մէ Մեծամօրի ելանէ » (Տեղագիր 129):

Արուճ. « Ի հիւսիսոյ թալնոյ վիւա-  
կին կայ Ակակիւտիւիշ կամ Ախսախլը վի-  
ւակ. քանի գիւղօրէք, յորս և թաւէ

և զբերդն Արմաւրի, զկուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն սոմն Արագածու, և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին զլխովին, և զամենայն գեօղս և զաւանա՝ որ շուրջ զնովաւ էին, առեալ աւերեալ և հըրձիգ արարեալ<sup>1</sup>, և զամենեցուն ձեր զբնտանիս փախուցեալ մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ:

65. Զեռն արկեալ և ի սուրբ եկեղեցիսն, աարեալ և զաւրբ սպաս եկեղեցւոյն սեղանոյ. գերի վարեալ զընտանիս քահանայից, և զնոսին կապեալ և եղեալ ի բանդի և ինքն սփուեալ տարածեալ ասպատակու աւերէր զերկիրն ամենայն: Եւ գունդն՝ որ էր ի կողմանս Ատըրպատականի, ոչ ժամանեաց ձեռն տալ ի միջոց աշխարհին<sup>2</sup>: Եւ զօրքն՝ որ անդ մնացեալ էին, խոյս տուեալ յանօրինէն մերժեցան յեզր աշխարհին, և գեռ սպահեն ընդ. ձեզ զուխա միաբանութեան սիրոյն Քրիստոսի: Բայց այն որ ընդ նմայն էին, են ոմանք՝ որ փախեան յիւրաքանչիւր տեղիս, և բազումք այն են՝ որ զհետ մոլորեցան:

66. Չու արարեալ ի տեղովնէ անտի՛ զտոնալ անդըն յաշխարհն Հայոց մեծաւ սոխաղվ և բազում աւարաւ և անշափի մեծութեամբ: Եւ անտրտում ուրա-

աւան ի տեղովն հոդյն Արուճայ, ուր Գրիգոր Մամիկոնեան կանգնեաց իւր ապարանս և եկեղեցի մեծ և հայկապ յամին 671. որ և բաց ի գմբեթէն կանգուն կոյ մինչև ցայսօր հազարամայ արձանագրութեամբը. են առ նըմին և մնացուածք դղեկի» (Տեղագիր):

Աղմակ. «Ի սոսորաս Արագածու, յեւ լից Թալնոյ կոյ Աշնակ աւան ի տաշխարակ և ընդարձակ դաշտավայր տեղով. գտանի այժմ ի մնա աւերակ հին եկեղեցոյ ի տաշանու քարանց (Ստորադր. կաթ. Էջմիածնի. Շահնամենց հետանց հատ. թ. 57):

Առագածում՝ Հայաստանի շնն, բազմամարդ և բարերեր գաւառներէն մէկն էր:

1. Առեալ կամ աւերեալ և կամ հըրձիգ արարեալ՝ հասկնաւու է: Փարուշ-

ցին դեսպանին բերանը հետազայ խօսքերը կը դնէ, որք կը լուսաբանեն Եղիշէջի ըսկէ տուածը: «Զքերդեան ամբոցացն ի բաց կալան, և զիւրեանցն բերգակալս արարեալ զգուշացուցին, և զարդիս տոհմին Մամիկոնէից և կամսարականց և զայլոց Տանուաեարցն ժողովեալ յիւրաքանչիւր դայեկաց, յամուրաբերդից իշխանութեանն Ախնաւու ետ անցուցանել (Վասակ) և հրամայեաց պահէլ զամուրան զգուշութեամբ. և ապա նենզաւորն Վասակ տայ տանել զտըզայն առ թագաւորն Պարսից ։ Ասու աւերմանց և հրկիկութեանց հետեանքն եղած ըլլալու է, որ հինգերորդ դարուն վերջին կիսին մէջ Դուքն առաջին Ուտան եղէ Հայոց. Տես Փարուշ:

2. Անդ՝ այսինքն ի միջոց աշխարհին, ի նահանգն Այրարատայ:

խութեամբ երգս ի բերան առեալ և առէին ձայնիս . խոստավան եղերուք Տեառն, զի բարի է զի յաւիտեան է ողորմութիւն նորա . ո եհար զազգս մեծամեծու և սպան զիշխանս հօրս, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա : Եւ զայս սաղմասս երգերով մինչև ի վախճան կատարեալ աղօթիւք փառատրութիւն սուրբ Երրորդութեանն մատուցանէին: Անդ յանձանձէր ածէր դորավարն զիաց և զմնաց զօրսականին, առաջապահօք, վերջապահօք կողմանպահօք ողջ և առողջ հաստցեալ յաւորս երեսուն : մերձ ի սահմանս հայրենի աշխարհին:

67. Ազգ եղեւ ուրացեալն վասակայ և իշխանացն որ ընդ նման էին քաջութիւն նահատակութեան գնդին վարդանայ յաշխարհին Ազուանից, և միաբանութիւնն ևս չոնաց: Մինչ չև յանդիման եղեալ էին միմեանց, զգիշեր մի օգնական գտեալ նորա՝ փախստական անկանէր յամուրս իւրոյ աշխարհին. և այնպէս տագնապաւ մերժեցաւ, զգերի և զաւարն զոր առեալ էր յԱյրարատ գաւառէ, ակամայ զիւրն ևս եթող և փախեաւ:

450-51 68. Եւ քանդի ժամանակ ձմերայնոյ հասեալ էր, ամեռն և զառճիկս՝ թշնամեաց գնդին հարեալ էր, ոչ կարէր զմիսվ տեղեաւ համագունդ զզօրսն դարմանել. այլ ափոէր տարածանէր ընդ գաւառս գաւառս աշխարհին առ ի հանդիսա ձմերոցին: Պատուէր հրամանի տայր պատորաստական լինել կազմութեամբ առ ժամանակ դարնայնոյն: Եւ զատկաւ ի գնդին յաւադ նախարարացն դործակից իւր թողեալ, բռնանացը ի վերայ՝ ուներով զմագաւորանիստ տեղիսն:

69. Եւ գունդս գունդս արձակէր յաշխարհն Աիւ-

### 1. Ապահով Խեց:

2. Երեսուն օրուան մէջ Աարդան բանակը բերաւ Գարբանդայ դռնէն ցուանմանս Հայոց, որ 650-700 քիլոմէտր երկայնութեամբ ճանապարհ մի է. զօրքը որը 25 քիլոմէտր կ'առնուին վրայէ վրայ և այս ալ շարունակ ամիս մը: Ճորայ պահակին վրայ զնացող հայք պէտք է, որ ամբողջապէս ձիաւորեալ աւ ըլուսին: Եղեւին ամենալավ միանալ է Ապահով Խեցին Հրէաստանի :

բայեցւոց գրոց շարադրութեամբ առ գորեալ է . « Անդ յանձանձէր զիաց մեաց ժողովրդեանն, միսիթարէր զամենսին Յուգա. ընդ ամենայն շուս ճանապարհին այսպէս առնէր, մինչև ածէր հասոցնէր յերկերն Հրէաստանի » :

Վակար, ա, զւ. Ե 53:

3. Զմեռն 450-451:

4. Ոչ կարէր Վարդան:

նեաց, առնոյր և աւերէր զբաղում գտաւառս, և այնպէս ի նեղ արկանէր զնս և զամենայն զօրսն որ ընդ նման էր, զի զէշո և զձիս մեռելութիս առ սովոյն վտանգի անխտիր ուաէին: Եւ բազում՝ հարուածս հասուցանէին ի վերայ ուրացելոյն, մինչև ժողով սուրբ եպիսկոպոսացն և ամենայն ուխտ քահանայութեանն դատնապէս արտասուս իջուցանէին ի վերայ չարաշար վշտացելոցն՝ որ բակ և հետի փարէին զարս և զկանայս փափկասունս, և բազում ապայք զքարի հարեալ ընկեցան յանցս ճանապարհաց:

70. Իրրե այս ամենայն աջողութիւնն լինէր երկիւ-  
զածացն Աստուծոյ, ամենայն եպիսկոպոսունք և երիցունք  
պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամիսն  
քաղոց<sup>2</sup> պահօք և աղօթիւք առնել խնդրուածս առ Աս-  
տուած, և զոն պատերազմացն յաղթութեան խառնել  
ի սուրբ տօն յայտնութեանն՝ Քրիստոսի, զի անխտափան  
կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային ա-  
նանց տօնին: Եւ զոյն զայս ամենայն այցելութիւնս Աս-  
տուծոյ, որ ի վերայ աշխարհին Հայոց մեծապէս երեե-  
ցաւ, գրեցին սուրբ եպիսկոպոսունքն և ետուն տանել  
յաշխարհն Յունաց ի մեծ քաղաքն՝ առ սուրբ ուխտ  
եկեղեցւոյն, զի և նոքա աղօթս առնելով իննդրեսցեն  
յԱստուծոյ, որպէս սկապս ի նմին և կատարեսցուք:

451  
յունուար

71. Եւ զո՞ն յառաջին կապելոցն Պարսկաց<sup>3</sup> լուծեալ

1. Աիւնեաց զաւառը իւր ուտելիքը  
և ցորենը Այրարատայ նահանգէն կ'ըն-  
դունէր. ինչպէս որ այժմ Շիրակայ դաշ-  
տին ցորեանը մեծաւ մասամբ կը վա-  
ճառի անդ. Այրդանայ Այրարատ հաս-  
նելով ամենայն հաղորդակցութիւնք դա-  
դարեցան այդ երկու նահանգացդ մէջ.  
ուսկից և սով յառաջ եկած էր: Բայց  
ի՞նչ էր այն առեն Աիւնեաց երկրին  
բերը, զորս կու ապյին բնակիւքը փո-  
խանակ ցորենոյն որսմ պէտք ունէին:  
Անշուշո՞ւ ոչխար, բուրդ, բրինձ և բան-  
րակ ի Շարուրայ դաշտէ. Խորենացին  
յիշէ միայն զմուրտ, զգեգերի և զնուռն.  
Տես աշխարհացոյց էջ 609:

2. Եւ հնդերորդ ամիս հայկական տա-  
րոյ, որ ըստ հաշուոյ Աւելան վարդա-  
պետի, այն տարին կ'սկսէր ի 6 Դիեկ-  
տեմբերի (450) ց5 Յունուար (451):

3. Յայտնութեան տօնին օրն ալ կը  
կատարուի ի 6 Յունուարի: Այս թուա-  
կան ճիշտ ամիս մը պահէքէ եարը կու  
գայ, որով և նախընթաց ծանօթու-  
թեան մէջ զըստած հաշուոյն ուզդութիւ-  
նը կը հաստատէ:

4. Այս է կոստանդնուպոլիս:

5. Այս ինքն այն զերիներէն, որ  
Վարդանանց ձեռքն անկան, երբ սոքա  
առաջին անգամ յարձակեցան Պարսից  
բնած բերդերուն վրայ. Տես 3. Գ. 39.

և ածեալ զառաջեաւ նախարարացն, խօսէին ընդ նմա  
և ցուցանէին զամենայն վասն որ եղի, կամ աշխար-  
հացն աւերելն, կամ զօրացն արքունի հարկանելն, և  
կամ որ այլ իրք առաջոյ լիներոց էին: Եւ իրրե զայս  
ամենայն բովանդակ ցուցին նմա, միաբան լինէր ամ-  
բաստանութիւն երկոցունց կողմանցն, զառաքինեացն և  
զյետս կացելոց, որպէս զուր և տարապարտուց նեղեաց  
զնաս՝ ի հայրենի օրինացն յետս կալ. և զիսարէտիւն  
ապատամբին Վասակայ, որպէս Հայոց բանիւ խորեաց  
զժագաւորն, յանձն առնուլ զնողութիւն. իրրե չէր ու-  
րուք ընդ նմա բանս եղեալ, նա յանձնէ սուտակասպաս  
լինէր:

72. Իրրե լիով զայս ամենայն խմացուցին, արձակե-  
ցին զնաս հրեշտակութեամբ յազերս ապաբանութեան և  
ի հնարս հայթայթանաց, թերևս կարասցեն վեղբարս  
իւրեանց ի նեղութենէն գողանալ: Այլ առ նա անօ-  
րէնն Վասակայ գուժկանփն յառաջազոյն հասեալ էին,  
պատմել զազէտս տարակուսանացն, զոր անցուցեալ էր  
ընդ զօրսն արքունի, և ամենայն ամբաստանութիւնն ի  
սուրբ ուխտ եկեղեցւոյն՝ կրթեալ էր: Քանզի այն խալ  
կամք էին անօրինին, եթէ զմիաբանութիւն եպիսկոպո-  
սացն քակեսցէ ի նախարարացն. և զայս ոչ էր աեղե-  
կացեալ տակաւին, եթէ հոգի և մարմին բաժանիցին առ-  
ժամանակ մի՛ գոյ տեսանել ի ընտթեանս, այլ որ սի-  
րով Աստուծոյ յուխտ մտեալ է՝ այսմ անհնար է լինէլ:

73. Արդ երթեալ այրն ի տեղի ձմերոցին, պատ-  
մեաց զայս ամենայն յականջս թաղաւորին.

1. Այս է թէ առանց Հայոց գիտու-  
թեան՝ Հայերը մոգութիւնը յանձն առնե-  
լու պատրաստ են, ըսելով մօզալրեան  
զգացմունքը այլ ընդ այլոյ ներկայացոյց  
առ արքունիս:

2. Ուր կամ պաշտօնով և կամ իրքե-  
պատանդ մեացեալ էին ի Պարսկաստան,  
միանգամայն և որդիս Տանուաեարց,  
զորս Վասակ իրկեր էր ի Դուռն (Տես  
և ի գերայ 64. ծան. 1):

3. Այս է առ Յազկերս:

4. Աւտոս եկեղեցւոյ՝ Եկեղեցականք.  
Վասակ մի միայն սոցա վրաս կը ձգէ  
յանցանքը, ու շամբաստաներ նոցա հա-  
մամիտնախարաբբը! Եպիսկոպոսաց ձեռ-  
քըն էր ազգին որմը. եթէ մէջ մը տա-  
պաէր զնոսա կը յուսար որ իրեն հա-  
կուակող տանուաեարք ուրիշ նեցուկ  
չէին զաներ ու կը հազանդէին նմա:

5. Այս է Տիղբան, ուր գարձեր էր  
Յազկերս:

գողացոյց, որ և յամենայն զօրութենէն պակասեալ գըտաւ. մանաւանդ զի յարհելից պատերազմէն՝ կորակոր՝ և ոչ բարձրագրուխ էր գարձեալ: իբրև ստուգեալ հաստատեաց ի վերջին հրեշտակէն որ եհաս առ նա, զամենայն վնաս զիւր գործոցն զիսորհրդակցօք արկանէր: Եւ անդէն շիջանէր ի բազմաբոց բորբքմանէն. քանզի խրցաւ բերան չար խրատառացն, որ անդադար յորդուրէին զնա ի գործ գասնութեան: Խոնարհեցաւ ի բարձր հպարտութենէն, և զվայրենացեալ սիրոն գարցոյց ի մարդկային բնութիւն. հայեցաւ և ետես զինքն լի տիարութեամբ. գիտաց եթէ զամենայն զոր կամի առնել՝ ոչ կարէ կատարել: Վասն այնորիկ և գագարեաց յանդուզն յարձակմանէն, և լուցոյց զնոլեգնոտաբար դոչումնն:

74. Եւ որ մեծաձայն բարբառով որոտայր, և ևս ահագին հրամանօքն զհեռաւորս և զմերձաւորս գողացուցանէր, սկսաւ քաղցր և ազերս բանիւք խօսել ընդ ամենենեան և ասել. «Զի՞նչ ինչ վնաս գործեալ է իմ, և կամ զո՞ր յանցս յանցուցեալ կամ առ ազդս կամ առ լեզուս<sup>2</sup> կամ առ անձն խրաքանչիւր: Ո՞չ ահա բազում ուսմունք են յաշխարհիս Արեաց, և խրաքանչիւր պաշտամունք յայսնի են. ո երբէք նեղեաց պնդեաց գարձուցանել ի մի օրէնս մողութեան: մանաւանդ վասն օրինաց քրիստոնէութեանն, որպէս հաստատուն և ճըշմարիս կացեալ են յիւրեանց գենին, նոյնպէս և առ մեզ լաւագոյն քան զամենայն կեշամն նորա երևեալ են: Եւ բիծ իսկ ոչ կարէ ոք գնել ընտրեալ օրինաց նոցա. այլ զոյդ և հաւասար համարիմ գենիս մաղղեղանց, որպէս և յարդեալ իսկ էին նորա առ նախնեօքն մերովք, զոր ես ինձէն իսկ յիշեմ առ հարբն<sup>3</sup> իմով որ նստէր ի մեծ գահոյս յայսմ:

1. Ա Գուշանաց, որոց վրայ երկորդ անդամ խաղան զրադաշտ զրացեց մեզ նշիշէ (Յ. Բ. 77):

2. Լեզու արեւելեան բացատրութիւն մէկ լեզու խօսող ժողովուրդս ըսելու համար. այսպէս Բուզանդ տեղ մը կ'ըսէ. Հաշխարհ ամենայն Հայոց լեզուի» 106 — «Եւ սպային զներսէս ամենայն ազտոք

և շինականք ծագէ ի ծագ ամենայն սահմանաց երկրին Հայոց, ամենայն բընակիւք տանն թորգումայ, Հայ լեզուն առ հասարակ » 227: « Իբրև զկոյրումուրեցան երկիրն լեզուին թորգումական աշխարհին » . Կրյն 32:

3. Այս և Վասմ Ե. որ գահակալեց յամին 420: Թագաւորութեան առաջին

75. « Յորժամ սկսաւ անդամել և քննել զամենայն տամնենս և հաստատութեամբ ի վերայ եհաս, առաւել վեհ գտանէր զօրէնս քրիստոնէից քան զամենեցուն. վասն այսորիկ մեծարեալք և պատուեալք շրջէին ի դրան արքունի, և առատաձեռն պարզեօք երահիկք՝ լինէին ի նմանէ, և համարձակութեամբ շրջէին ընդ ամենայն երկիր: Նա և որ զլասաւորքն էին քրիստոնէիցն, զոր և եպիսկոպոս անուանեն, ընծայից և պատարագաց արժանիս առնէր զնոսա: Եւ իրքի հաւատարիմ ստիկանն՝ յանձն առնէր նոցա զհեռաւոր մարզն<sup>2</sup>, և ոչ երբեք սխալ լինէր ի մեծամեծ իրացն արքունի:

76. « Եւ դուք զմի զայն երբեք ոչ յիշեցէք, այլ հանապազօր ձանձրացուցէք զլսելիս իմ, խօսելով զնոցանէ զամենայն չարութիւն: Տեսէք՝ զի ետուք դործել ինձ զոր ինչ ոչ կամէի, և եղն վնասք մեծամեծք ի առհմանսն ի մէջ երկուց անհաշտ թշնամեաց<sup>3</sup>: Եւ մէք զեռ

տարիները հաւածեց վրիստոնեայս, որը խորովին կը թողուին կը թողուին իրենց հայրենիքը և յունաց երկիրը կապատանէին: Աըսաց գետպան կը խրէիր ի բիւզանդիոն և պահանջէր ի թէոզոսէ, որ իւր ձեռքը տայ այդ պանդուխաները: Երբ ուղածը չկատարուեցաւ, պատերազմ՝ հրատարակեց, որ շատ յաջող ելք մը չունեցաւ: Ե՞րեկի թէ խաղաղութեան հաստատուեն ետքը Քրիստոնէից հետ սիրով վարուեցաւ, որուն յօյժ նպաստեց Տիգրանակերտի Եպիսկոպոսին առաքինի ընթացքը:

1. Երահիկ բանի արար. Քահ է անդորր, Խաղաղ (կեանք). շարունակ կերպով արուած (պարէն): Հայկ, բառարանը լծորդ կը համարէ պրսկ: Ֆերտէ հայ և ուրախ > ածականաց:

2. Օտար պատմագրաց մէջ յիշատակութիւն մը չպատահ, որ Վասար այդպիսի հեռաւոր մարզեր յանձնած ըլլայ Եպիսկոպոսաց: Ասկէ յառաջ տեսանք որ Առարմակայ առւեր էր Բղնաւնեաց տանուառերութիւնը: Լարելի է ևս ասել

թէ մինչև այն ժամանակը, յօրում մերժեց զլսուալէս Արշակունեաց գահէն, զՊարթիւն Ասհակ յոյժ մեծարեր էր և Հայաստանի իրաց նկատմամբ նորա ամէն աղաւանքը և խորհուրդք կատարեր էր: սիալ չի լինիր ասել թէ Վասար զշայս աւելի կաթողիկոսին յանձնած էր քան Վասարապէսյ, կամ ուրիշ ու և է նախարարի և իշխանի: Յունաց հետ խաղաղութիւն կնքած միջացին Ամիդայ (Տիգրապէրի) եպիսկոպոսը Ակակիոս եկեղեցեաց ուկեղէն և ածամեղէն ըսպառը ծախեր ու սոցա փոխարէնով եօթն հազար պարսիկ գերի զներ էր ի Յունաց և նոցա ամէն պիտուրքը հայթայթել յետոյ Պարսից Թագաւորին յանձներ էր: Այս ճշմարիտ քրիստոնէավայել գործս մեծ տպաւորութիւն ըրած էր Վասարայ մտաց վրայ, ու պատճառ եղած էր, որ այնուհետեւ յարգէ զկրօնն, զոր հալածեր էր մինչև ցայն վայր:

3. Խման օտարացուցիք զշայ աղգը որ Յունաց և Պարսից՝ երկու անհաշտ թշնամեաց սահմանաց մէջուեղն է:

ի հեռաւոր ճանապարհի, և ոչ մի ինչ զործ ի պատերազմիս ի զբուխ երթեալ, և զուք ասաէն յիմում տանս յարուցէք ի վերայ պատերազմ, որոյ շարագոյն ևս լինելոց է կասոսրածն իւր քան զարտովին թշնամեացն»:

77. Զայս ամենայն և առաւել քան դայն խօսէր ընդամենայն աւագանին, և զվասս յանցանացն արկանէր զմոգպետաւն և զմոգօքն: Եւ ամենայն վզուրկքն և պատուական նախարարքն, որ նստէին յատենին և ունին գնէին յեղյեղուկ լեզուի նորա, ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պշտուին, և զգլուխ ի վեր ոչ կարէին համբառնալ:

78. Բայց ասկաւք ի նոցանէ զմիսս հաճելով ասէին զայս. « Այս, արքայ քաջ, այդ այդպէս է սրազէս ասացերգ, և արդ կարես զամենայն ուղղութեամբ նուածել, չիք ինչ այն, որ ըստ քո կամնդ արտաքս կարէ եւ լանել. զի առեալ է քեզ աստաւածոցն, զի զամենայն զոր և կամիս, կարես առնել: Մի նեղեալ տագնապիր յանձն քո և հարկաներ զմիսս մեր ամենեցուն. թերևս և գիւր իցեն հնարք իրացն կատարածի: Երկայնամիս լեր և համբերութեամբ թողացո մարդկանդ՝<sup>1</sup> անդրէն զքրիստոնէութիւն, և դրաք զապստամբոն ածցես ի հաւանութիւն »:

79. Հաճոյ թուեցաւ բանքն առաջի թագաւորին. և անդէն վաղվազակի կոչէր զառաջեաւ յամենայն աղգացն որ ունէին զքրիստոնէութիւնն, և ի զօրու նորա էին, և բանարար արգելեալ էր զնոսա, զի մի ոք իշխան լիցի յանդիման պաշտել զԱստուած. քանդի որ ընդդէմ կացին, չարչարեաց և արգել ի նոցանէ զյոյցանի պաշտօնն, և տմանց տմանց ակամայ երկիր ետ պագանել արեգականն, և նստոյց ի սուգ արտամնթեան զամենայն զօրականն :

80. Իսկ այն օր հրամայէր անդրէն համարձակութեամբ ըստ առաջին կարդին հասասառն կալ յօրէնս քրիստոնէութեանն: Իսկ որք յանցաւորքն էին, ոչ կամէին վաղվազակի առսնց մեծի ապաշխարութեանն զալ և խառնել ի կարգ քրիստոնէութեան. հրամայէր թա-

1. Այս է քրիստոնէից որ ի զօրուն էին Յազկերտի հետ:

գաւորն՝ զի բռնի կալցին և տարցեն յեկեղեցին իւրեանց։ Եւ երիցանցն համարձակէր, որպէս զիարդ և զիստիցեն՝ ըստ կարգին իւրեանց արասցեն։ Եւ զհատեալ սոճիկան կարգէր անդրէն իւրաքանչիւր, և զարգելեալ բազմականն ի նոցանէ՝ ի տեղի հրամայէր մատուցանել, և հանապազորդ յարքունիս մտանել ոչ արգելոյր զնոսա. և զամենայն որ զիարդ և կարգեալ էին յառաջագոյն՝ անդրէն յօրինէր։ Խոնարհէր և խօսէր ընդուսա սիրով ըստ առաջին սովորութեանն։

81. Եւ երրե զայս ամենայն արար և կարգեաց, յանդիման նոցա թագութեան հրովարտակս առաքէր ընդամենայն երկիր իշխանութեան տէրութեան իւրոյ վասն քրիստոնէից։ Եթէ ի կապանս ոք կայցէ, արքունի հրամանաւ արձակեալ լիցի. և եթէ ինչք ուրուք յափշտակեալ լիցի, դարձցին անդրէն։ Այնպէս և երկիրք, եթէ հայրենիք, եթէ պարգեակականք և եթէ քատկագինք, և հանեալ ուրուք լիցէ, հրամայեցաք զի դարձցին։ Եւ երրե այսո՞ւ ամենայնի զնոսա տեղեակ առնէր, խնդրէր ի նոցանէ վկայութիւն հաւատարման թեան յերկիրն Հայոց, և երգմամբ յուխտ մտանէր առաջի նոցա՝ հաստատութեամբ ամենայն մեծամեծաց իւրոց, եթէ ոչ ինչ յիշեցից ամենեին զրէն վրիժուցն խնդրելոց։ Որպէս ունէիք յառաջ ճշմարտութեամբ զօրէնս ձեր, այսուհետեւ առաւել կարարուք. բայց միայն ի ծառայութենէ մերմէ մի երանէք։

82. Զայս ամենայն դրէր և ցուցանէր երկրին Հայոց և ի բազում յայլ աշխարհս, որ ունէին զօրէնս քրիստոնէս թեանն, և ինքն գաղա խորամանկեալ վասթացեալ գեսարնս առաքէր առ Մարկիանս կայսր։ Եւ երրե սոսոգեալ ճշմարտեաց, եթէ Հռոմք ի բաց կացին ձեռն.

1. Այս առօնս և նախընթացը ներշնչեալ կ'երեան հրամարտակէն, զոր գրեր էր Մարտիմինս, երբ շարաշար յաղթուելով ի Լիկիանոսէ ազատութիւն կը շնորհէր քրիստոնէից. և զոր ի մէջ բերէ իւսերիսու. (Պատմ. Եկեղ. Ծ. 10).  
«Ես զայս ևս յաւելաք զնել յօրէնս, զի թէ իցին առնէք կամ տեղիք ինչ՝ որպէս իւրամասնէ վրիստոսնէից յառաջապն էին, և որպէս ի հրամանէ հարցն մերոց յարքունիս գրաւեցան կամ ի միոյ քաղաքոց ուսակք առան, կամ վաճառելով վաճառեցան, կամ ի պարզենի մասին ումեք առան, ամենեքին սրբ յառաջին բաժին և յիրաւունս քրիստոնէից հրամայեցաք դարձուցանել։»

տու լինել քրիստոնէութեանն ոչ զօրու օդնականութեան և ոչ այլ իրօք, գարձեալ անդրէն ի նոյն յառաջին կարծիա մոլորութեանն շրջեցաւ։ Զի յաջողութեան իրացն ի ձեռն խրոց պաշտօնէիցն հրամայէր, և այնպէս ածէր զմոտւ, եթէ ըստ առաջին կարծեացն կատարեցեն զամենայն :

83. Իսկ Հայք թէպէտ և ընկալան զգիրն խարերայ ողոքանաց թագաւորին, որ ի վերոյ ունէր զաւետիս կենաց և ի ներքոյ զգաւոնութիւն մահու, զարմացեալ ընդթերի խորհուրդս՝ ասէին ցմիմեանս. «Քանի լիրք է խորամանկ խարէութիւն նորա, զի երկիցս և երիցս զփորձ առեալ կշտամբեցաւ, և ոչ ամաչէ։ Եւ տեղեակ եղեալ մերոյ անքակ միաբանութեանս, առկաւին լրի և լինի, զհետ մոտեալ՝ կամի զմեզ լքուցանել։

84. «Իսկ հաւատասացուք անհաստատ հրամանի նորա, զոր բարեգործութիւն տեսաք առ ամենայն եկեղեցիս, որ են յաշխարհին Պարսից։ Զի որ ինքն իւր չարէ, այլում բարի ոչ կարէ լինել. և որ ինքն ընդ խաւար գնայ, այլում ոչ առաջնորդէ ճշմարտութեան լուսավ։ Որպէս զի չիք յանիրաւութենէ արդարութիւն, այսպէս ի ստութենէ ճշմարտութիւն, այդնպէս և ի խռովասէր մըտաց՝ ակնկալութիւն խաղաղութեան։

85. «Այլ մեք ասզրեալքս զօրութեամբն Աստուծոյ, և հաստատեալք հաւատավիքն ի յոյն Քրիստոսի, որ եկն և էառ ի սուրբ կուսէն զմարմին սերոյ բնութեանս, և միացեալ անբաժանելի աստուածութեամբն՝ ընկալաւ ըղշարչանս մերոյ մեղաց ի յիւր մարմինն, և նովին խաչեցաւ և թաղեցաւ և յարուցեալ երենցաւ բազմաց, և վերացաւ յանդիման աշակերտացն առ Հայր իւր, և նստաւ ընդ աջմէ զօրութեանն, զնոյն հաւատամք Աստուած ճշմարիտ, և նմին ոկն ունիմք, որ փառօք հօր և զօրութեամբ գայ յարուցանել զամենայն ննջեցեալս, և նորոգել զհնութիւն արարածոց, առնել համառօս յաւիտենից ի մէջ արդարոց և մեղաւորաց։

86. «Ոչ պատրիմք իրրե զտղայս, և ոչ մոլորիմք իրրե զամստեղեակս, և ոչ խարիմք իրրե զտղէտս. այլ պատրաստ եմք ամենայն փորձութեանց։ Եւ աղաւեմք զԱստուած, և անդադար խնդրեմք ի բազմութենէ

նորա, զի յորում ոկտաք, ի նմին և կատարեսցուք քաշութեամբ, և ոչ վասութեամբ։ Զի արդ արմելք և արեմուաք գիտացին զձեր աստուածամարտ. լինել, և զմեղ ի զուր սպանանել ի վերայ ամենայն վաստակոցն մերոց։ Վկայեն մեզ երկնելք երկնաւորօք և երկիր երկրաւորօք, եթէ չեմք ինչ մեզուցեալ ի միտս մեր անդամ։ և ի վերայ պարզեաց և բարիս առներոյ մեզ՝ զծշմարիտ կեանս կամիք հանել ի մէնջ, որում չիք հնար, և այլ միլիցի։

87. « Խոկ արդ հաւատասցմւք անարժան բերանոյ նորա, որ սոխակէր չարաչար յուրացութիւն, և այսօր առանց մի ինչ բարիս գործերոյ լինեցին նա քարոզիչ աւետեաց։ Եւ որ հայհոյէրն զբրիտասս, և ուրացուցանէր ի նմանէ զհաւատացեալս, այսօր ակամայ խոստովանութեանն ոչ կարեմք վաղվաղակի յանձն առնուլ։ Եւ որ երդնոյրն ի մնութի պաշտամունս իւրոյ մողորութեանն, անցուցանել զամենայն չարչարանս ընդ պաշտօնեայս եկեղեցւոյ, արդ եկեալ գողաճնալով գոհութիւն մատուցանէ։ և այնու կամի զամենայն չարութիւն իւր ի մեզ հեղուզ։ Ոչ այդմ հաւատամբ, և ոչ զսուտ հրամանդ յանձն առնումք»։

88. Խոկ նա իբրև գիտաց, եթէ ոչ կարեմք քակել զհաւատառութիւն միարանելոցն, յայնժամ քակեաց յինքենէ զծերն<sup>1</sup> լի գառնութեամբ, յորում հանգուցեալ էր սասանայ զօրութեամբ իւրով, և բազում գործեալ էր նորա նախճիրա<sup>2</sup>։ որոյ կերպակուր կամաց իւրոց էր ի մանկութենէ անարատ մարմին սրբոց, և ընդելի անյագութեան նորին՝ արին անմեղացն։ Յաւելցյր ևս ի վերայ չարութեան նորա և զիւր մահարեր հրամանն, գունդս գունդս յամենայն աշխարհացն գումարէր ընդ նմա, և բազում երամակս<sup>3</sup> փողաց յզէր ընդ նմա։

50-51 89. Հասեալ մերձ ի սահմանս Հայոց, մտանէր ի քամքն Փայտակարան<sup>4</sup>, և զզօրսն ամենայն ափուէր տարա-

1. Այս է Միհրներուէ։

4. Քաղաքն Փայտակարան, զոր յետ

2. Կապաճիր. Բազման՝ նախճիր։

5. Ամանակաց, Արարացիք Պալլաքան կը


3. Հին և նոր պարսկերէն բամաց, կուէին. « ի մղանաշափութիւնս ուրեք բամաց»

կուէին. « ի մղանաշափութիւնս ուրեք Հայոց քաղաքաց՝ հնգիւք և եթ մղանաք

ծանէր շուրջ գքաղաքամն առ ի զգուշութիւն պատրաստութեան խրց չարահնար խորհրդոցն։ Եւ յամուր որդն մոռեալ հին վիշտապն չարաթոյն, և բազում՝ կեզծաւորութեամբ զինքն մաքուցանելով յաներկեղութիւն, հեռաւորացն ահագին ձայնիւ սաստէր, և ի մերձաւորսն իրրիզօձ սողալով փչէր։ Այ էր իշխան և հրամանատար ամենայն տէրութեանն Պարսից, որում անունն էր Միհրներսէհ. և չէր ոք ամենեին՝ որ իշխէր ըստ ձեռն նորաելանել։ Եւ ոչ միայն մեծամեծք և փոքրներ, այլ և ինքն թագաւորն հրամանի նորա անայր. որոյ և ձախաղ իրացն խկ բուռն հարեալ էր նորա։

առասկաց ի կառրից ծովէն նշանակի և նպանքան ի վարդանակերտ աւանէ. որոց հարկ է մերձ յայժմոյս Այալիան լինել. ուրանօր և աւերակք զոն հոյ քաղաքի, և չէ պարտ շփոթել գքաղաքս բնդ

Տիխեաց և Պարտաւայ, որպէս ամանք Փայտակարան կոչեցին և զնոսին ։ Տեղ. Հայոց 188. — Միհրներսէհ հասաւ ի Փայտակարան գարնան ժամանակ յամին 451.



## ԶՈՐՉՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ՎԱՐՄԻ ԵԲԻՊԱՌՈՎԿՈՒԹԵԱՆ ԽՇԽԱՆԻՒՆ ՍԻՒՆԵԱՑ

ԵՒ ԱՆՈՐԻՆ ԸՆԿԵՐԱՑ ԽԻՔԱՑ

1. ԱՐԵՆԺԻ ցայտ վայր ոչ ինչ կարի զանդիսէի պատմել զհարուածու ազգիս մերոյ, որ յարտաքին թշնամեաց ճշմարտութեանն չարաչար յարեան ի վերայ մեր. որք սակաւագոյնք հարին զմեզ և յորմագոյնք հարեալ գըտան ի մէնջ. քանզի դեռ ևս միարանք և հաւասարք էաք: Թէպէտ և ոմանք ի ծածուկ ունէին վերկմութիւնն նենդութեանն, սակայն յաչս արտապնոցն ահաւոր երեկո միարանութիւնն. որպէս յերկուս և յերիս տեղիս ոչ կարացին կալ առաջի:

2. Արդ յայսմ հետէ և անդր, ուր սպրդեալ անկանի երկպառակութիւն ի ներքս, ընդ քակել միարանութեանն՝ և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ, և անձնընտիրք լիներով յոյժ բազմանայ լալումն ողբոյս: Քանզի հատեալ անկեալ անդամին, որ յառաջագոյն սորուն սուրբ մարմնոց էին, դառնայ մարդ յարտասաւս առաջի մերձակայ գիտականն: Եւս առաւել լնու դառնութեամբ ի վերայ այնորիկ, որ յազի և մարմին առ հասարակ գիտիսանայ: Եւ եթէ ի վերայ միոյ անձին այսպէս, որչափ ևս առաւել ի վերայ ողջոյն ազգի միոյ:

3. Այլ յայսմ տեղւո՞յ ոչ միայն ի վերայ միոյ ազգի է ողբումն մեր, այլ ի վերայ ազգաց և աշխարհաց. զո՞ր և յառաջ մասուցեալ ասացից ըստ կարդի, թէպէտ և ոչ խնդութեան մոօք: Ահա ակամայ ճառագրեմ զրադումն. որպէս կորեան ոմանք ի ճշմարիս կինացն իւ-

բեանց, և պատճառք եղեն բազմաց կորստեանն, ոմանց՝ երելեաց միայն, և այլոց՝ երելեաց և աներեւթից: Եւ այն, ևս չար է քան զամենայն. գուռն՝ զոր բացին կորստեան, Աստուծոյ միայն կարողոթիւն է փակել զնա, այլ ըստ մարդկան սահման՝ ահա անցեալ է Հնար:

4. Այս անօրէն Միհրներսէհ, քանզի յառաջազոյն ստուգեալ գիտէր զամբարշտութիւնն վասակայ, և յայնմ ժամանակի ևս յղէր և կոչէր զնա առ ինքն: Որովէս նորա իսկ յառաջազոյն զատեալ և որոշեալ էր ի միարանութենէն Հայոց, եկն և յանդիման եղի<sup>1</sup>. և ստուգէր զիւր հաւատաբնութիւնն և զչայոց անիրաւ ապստամբութիւնն: Յաւել և պատմեաց ևս առաւելաբանութեամբ զոր ինչ ոչ էր զործեալ Հայոց, և կամէր ընդաներար ընդ միտ մուանել անօրինին:

5. Բայց նա թէպէտ և ի ներքոյ յոյժ գորովիէր զնա, այլ արտաքին գիմօք մեծարեաց զնա, և եղ առաջի նորա զմեծամեծ պարգևս երկրաւորս: Եւ խոստացաւ նմոն իշխանութիւն աւելի քան զոր սնէքն. և հայեցոյց զնտ ի կարծիս մնանիս, որ ի վեր էր քան զիւր տէրութիւնն, իբր թէ անկ իցէ նմա հասանել մինչ ի թագաւորական վիճակն. բայց միայն հնարս իրացն ինդրեսցէ, թէ որպէս քակտեսցի միարանութիւն ուխտին Հայոց, և թագաւորին կամէն կատարեսցին յաշխարհին:

6. Եւ իբրև յանձն էառ զամենայն ինչ երթալ զկնի կամաց նորա, գիտաց և ծերն գառնացեալ, եթէ թըսէ բրեալ և ցնորեալ և քակեալ է ի հաստատութենէ միարանելոցն, յոյժ միսիթարեցաւ ի միտս իւր տրտմեալս, և ած զմուա՝ թէ զամենեսեան այսպէս կարիցեմք որսալ յանդիւտ կորուստն: Եւ իւրոյ հնարագիտութեանն տայր զիմաստութիւնն. և այնմ ոչ էր տեղեակ, թէ նա իւրովի զիւր անձն զատեալ և որոշեալ է ի սուրբ եկեղեցւոց, հեռացեալ և օտարացեալ ի սիրոյն Քրիստոսի:

7. Քանզի մոռացօնք եղեն նմա զալուստ որդւոյն Աստուծոյ, և ոչ յիշեաց զքարողութիւնն սուրբ աւետարա-

1. «Յանդիման եղեն» , «ստուգէր» և կանէին: Ստուգէր՝ է ասու հաստատել, «պատմեաց» բայերն Աստակաց կը պատ-

ցուցանել, ապացուցանել:

նին, ոչ ի սպառնալեացն զանգիտեաց, և ոչ յաւետին միթարեցաւ։ Ուրացաւ զաւազան՝ որ յդացաւ զնա, և ոչ յիշեաց զընկալուչ սուրբ Հոգին՝ որ ծնաւ զնա։ Ունարդեաց զՄարմինն պատուական՝ որով որբեցաւն, և առ ոտն եհար զԱրինն կենդանի՝ որով և քաւեցաւն ի մեղաց։ Ֆնջեաց զգիր որդէգրութեանն, և իւրովք ձեռօք խորտակեաց զհամատաստն կնիք մասանւոյն։ Ել ի թուայ երանելեացն, և ապատամերեցոյց ընդ իւր զբազում։

8. Զեռն արկ կամսկորութեամբ և եմուտ յորդէց զրոթին գիւապաշտութեանն, և եղի աման չարին, և ելից զնա սատանայ ամենայն խորամանկութեամբ։ Ի ձեռն էտո՞ իրրի զվահան, և ագաւ զնա իրրի զվահս, և եղի իրր զինուոր կատարեալ կամաց նորա։ Մարտեաւ հնարինք ընդ խմասաննս, և յցժ խորագիտութեամբ ընդ գիտունս, յայտնի ընդ անմեզս, և ի ծածուկ ընդ խորհրդականս։ ձեռն էտո՞ ի եհան զբազումն ի գնդէն Քրիստոփ, և խամսեաց ի գունզս գիւաց։ Եւ ի բազում յայլ աեղիս զովարար սողեցաւ. և եմուտ իրրի զօձ ի մէջ ամրացելոցն. և խրամ հատեալ յափշտակեաց և էտո և եհան յայտնութեամբ զբազումն յազատաց և զբազմազոյնս ի շինականաց, և զայլ ոմնանո յանուանեալ քահամայից։

9. Որոց անուանքն են այս՝ զործակցաց նորա։ Իշ-

1. Երկու բան մարթ է հետեցնել այս պարբերութենէս. ա՞ թէ ի հինգեւորդ դարուն ալ որդէգրութեան համար

գիր մը՝ մուրհակ մը շինուեկը. ը Ասորագրութեան ամենէն զօրաւոր ձեն էր մատանայ վրայ փորագրեալ կնիք կոխել, ոչ մելանով սակայն, այլ հաւանորէն մեղքամոմիւ. (խորսակեաց)։ Խակ գիր գրելու համար եղեգ գրիչ և թանաք կը գործածուէր. «Եղեգումը մարդիկ գրին և արձակին յազատութիւն ի շարաշար ծառայութենէ. իսկ դուք աւագիկ երկրարոյս եղեգամբ ասուածային ձեռնարկն անջինչ ուղղով գրիք և

արձակիք յերկնաւոր ազատութենէն ի սատանայական ծառայութիւնն»։ Եղիշէ՛ Զարչարանաց 268։

2. Եղիշէ նախ ամանի կը նմանցնէ գլասակ, զոր խորամանկութեամբ կը լեցնէ սատանայն. բայց այս նմանութիւն իւր տաք երեակայութիւնը շըգոհցներ, զստանայն վահան և զրահ կ'ընէ, զորս վասակ ձեռքը կ'առնէ և կը հագուի։

3. Ասկէ յառաջ ալ տուաւ մեզ Եղիշէ վասակայ նիղակակցաց անունները (Յ. Պ. 54)։ Բայց յայնժամ Որշառունեաց և Ուկեոյ իշխանները չյիշեց.

խանն Ռբշտունեաց Արտակ անուն, իշխանն Խորխոսունեաց Գաղաքայ անուն, իշխանն Վահեւունեաց Գիւտ անուն, իշխանն Բագրատունեաց Տիրոց անուն, իշխանն Ապահունեաց Մանէծ անուն, իշխանն Ակէոյ Ծննդուղ անուն, իշխանն Ռւրծայ Ներսէն անուն, իշխանն միւս ևս Պարտնեաց Վարազապուհ անուն, սեպուհ մի Ամատունեաց Մանէն ա-

զուցէ սոքա ի գերջոյ Վասակայ կողմն անցան:

Ուրունէիք՝ յարեւելից Հարաւոյ Վասայ ծովու։ — Խորխոսունէիք՝ յարեւմուից հիւսիսոյ նոյն ծովու, և այժմեան Պուլանըգ վիճակ, (Տեղագիր. Յէ)։ Գաղթեցոյ էր տանուուեր իշխան Խորխոսունեաց. իսկ Վարդանայ նիզակակիցը Խորմէն Խորխոսունէի նոյն տոհմէն սեպուհ մի ըլլալու էր։

Վաճէռունէիք՝ ուլժերորդ են ի Գահնամակն Վասակն Առամայ, և ըստ Ալիշան Վարդակեսի, բեակէին ի սոսորին Բասեն, ի մաւստ Գարեգեանց։

Գարեգեանց. Իջոտ ի գահնամակն. քը նակէին այժմեան կազմունի վիճակին մէջ, ի մաւստ Ալշարունեաց։ — Փարպեցոյ տափագրին մէջ Խշխանն Ալբեղենից Ալրունէ, որ գրչագրի սիստ մի է. զանէ տարբեր անձ մի չէ Գարեգեան Ալրունէ, զոր ըստ նոյն պատմագրի, Ալտրումիզդ Խրկեց Հմայեկայ յէմ ի Տայս ընդ Պալաւնեան Վարազապհայ. Փարպ. 216։ Եր և Ալբեղենից Խախարաբութին մի որ Խլոտ է ի գահնամակն Տես և Խորենացի բ. ի. Ալիշան Վարդակեսիուն պատմակետ զնէ կԱլբեղեան յելից Խոզանդուի և ի հարաւոյ Վահանդայ (Ներակ Էջ 6)։

Բագրատունէիք. Վասամական գահնամակին մէջ երկորդ կարգին ունին, Ախոնեաց իշխանէն եսաքը և Ալքառունեաց անուուերէն յառաջ։ Սոցա սեփական գահան, էր Ապեր՝ Բարձր Հայոց մէջ Ակէոյ Երանու Ալքառուապայ Կողովին գալախի։

ալ առին, ուր Դարդնել կամ Դարժնել (արդի Պայտազիս) գլխաւոր քաղաքնին էր։ Տես Էջ 50։

Ալպանձնէիք, այժմեան Մէլագիերու վիճակին մէջ, ի հիւսիսոյ Վահայ ծովու։

Ակէ. այժմեան Մակուայ վիճակը. Պարսից Հայաստանու մէջ, ընդ մէջ Պայտիսոյ և Երասիսոյ։ Ընդուղ, թէպէս յատուկ անուն նշանակէ փոքր արտհորդ։ Վնասնոց անուանք շատ անգամ յատուկ անուն կըլլան մարդոց, մանաւանդ նուազական մասնկաւ. զօր օրինակ. Ալքեսմն, անուն կամ մականուն կնոջ. Առիւճ, Արսոյտ, Եզմիկ կամ Եզմակ. Գոր (պարսկերէն ցօր, վայրի Էջ), Գագան. Հաւանական է ևս որ Ասեակ ալ նուազական ըլլայ առն կամ տոին հասարակ անուան, որ է արու վայրի ոչխար. Վարագ բառով ալ շատ յատուկ անուններ կազմուած են։

Ուրծեայ. Ալիշան Վ. Երակայ տեղագրութեան մէջ կը զնէ զիւրծ յարեւեան սահմանածայր նահանգին Ալքարատայ, ի մոից Հարաւոյ ծովուն Գեղամայ և յելից Եարուրայ դաշտին (Էջ 6)։

Պայտանէիք. Երկու ցեղք էին, որոց միոյն իշխանը Վարազապուհ նիզակակից էր Վասակայ. միւսոյն բնակութեան երկիրը Վասպուրականի մէջ էր, տեղը որոշ շգիսեմք. միւսը Տարծոնոյ սահմանակից կուառս և Հռուեան աւաններուն մէջ կը բնակէր։ Տես Պատմութին Տարծոնոյ և Հռափառութին ինձինեանի։

նուն. բազում և այլ աղաս մարդիկ, դոր ստանիկն անուանեն յարքունի տանէ:

10. Եւ բավանդակ զիւր բոլոր աշխարհն ապատամ բեցոյց յուրացութիւն, ոչ միայն ըստ աշխարհին բազմութեանն, այլ և զբազում յուխանէ եկեղեցւոյն. մանաւանդ սուստ երիցամբքն, որով գործէր զշարիսն. երէց մի Զանդակ անուն, երէց մի Փետրս անուն, սարկաւագ մի Սահակ անուն, զորս յղէր առ անմեղ մարդիկ, խարէր և պատրէր. սուրբ աւետարանաւն երգնութին և ասէին, եթէ ի թագաւորէն շնորհեսցի ամենեցունց քրիստոնէութիւնդ: Եւ այսպէս խորամանկ խարէութեամբ հանէին զբազում ի սուրբ միաբանութենէն, ածէին և խառնէին ի գունդս ուրացողացն<sup>1</sup>:

11. Եւ ժողովեաց զամենայն գայթակղութիւն, և արար գունդ զօրաց բազմաց. գրեաց և եցոյց զբազումն ի նոցանէ յականէ յանուանէ մեծ հաղարապետին, և զիւր քաջութիւն արութեանն, մեծապէս պարծերով՝ որպէս աշակերտեաց ի մնորութիւն խարէութեան, և բաժանեալս և երկցեզս երեկցոյց զգօրմն Հայոց:

12. Եւ իբրև այս ամենայն չարիք յաջողեցան նմա, քակեաց և զմիաբանութիւն աշխարհին վրաց<sup>2</sup> ի Հա-

1. «Վասակ ոչ երբէք դադարէք գրել նամականի առ իշխանս և շինականս և քահանաց աշխարհիս Հայոց. ցուցանէր իմ բերեալս ի դրանէ տիստ սուստ և վկայութիւն ընդունայն, թէ արքայից արքայ զքրիստոնէութիւն շնորհեաց աշխարհի, և զինաս կոսուրածի մողուցն չխնդրէ, և զազաստամբութենէն առէ, թէ բնաւ և յիշեմ իսկ ոչ, միայն թէ ի բաց դառնայք ի խրառուէ և ի բանից վարդանայ... Եւ տուեալ ի ձեռս սուստ քահանայից ըզգրեալո՞ւ որոց անուանքն են՝ Զանդակ մի սմբ, Այահակ Զայնազ և միւս սմբ Պետրոս Երկաթի: Եւ եին Այահակն և Պետրոս ի գաւառէն Ոխնեաց, յորոց ձեռս տայր զազամբքն սպարապետէն Վարդանայ՝ զգրեալսն շրջեցուցանել ընդ աշխարհն Հայոց»: (Փարզ. էջ 197):

2. «Երբ միաբան էին Հայոց հետ, թէ վասն քրիստոնէութեան և թէ ուրացինեաւ. Գուգարաց մեծ բգեաշխը Ալշուշայ, Ալծրտանեաց անէն աղջիկ առած էր, որ էր քոյլ կոոչն Հմայեկայ Մամիկոնէի, եղբօր վարդանայ: Իսկ Ալշուշայ որդին՝ վազգէն փեսոյ էր վարդանայ ունելով ի կնութիւն զգուստը նորա՛ վարդէնի ի ծնողացն կոչեցեալ և Նուշանիկ յարջորջանօր յետոյ անուանեալ: (Սափ. Հայէ. թթ): Այս այն վազգէն է, որ տանն և ութ քսան տարի վերջը՝ մողութիւնը կամովին ընդունելով Պարսից թագաւորին Պերողի կոոչը մայրը կնա տաեր էր ու եօթը տարի (468-475) անդիմաբար շարչարեր էր զվարդէնի: Աղուանից Հայաստան դեռ պան խրկենին և օգնութիւն ինդրելնին արդէն տեսանիք: — Աղմնիք ալ

յոց, և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ, և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ։ Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցու այլ ընդ այլոյ ստութեամբ, առ այր մի՛ որոյ Վասակ տնուանէր, յայնց Եշամիկոննից՝ որ կան ի ծառայութեան Յունաց։ Եւ ի թշուասութեան ժամանակին այրն այն սպարապետ էր ստորին Հայոց<sup>1</sup>, և հաւատարիմ զօրացն Հոռովմոց ի սահմանին Պարսից, և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք։ Եզիտ այս Վասակ զայն Վասակին իւր գործակից ի սեծամեծ չարիսն, զօր միաբանեցին երկպետանն։

13. Գրէր և ցուցանէր հանապալորդ նա, իրը թէ ամենայն Հայք զկնի խր միաբանեցին. և զնոյն գիր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն<sup>2</sup> տայր տանել ի թագաւորանիստ քաղաքն կայսեր. մինչեւ զսուրբ եպիսկոպոսացն զմիսոն ևս ուժացոյց ի նոցանէ, և զամենայն զօրսն Յունաց յերկրայս արար յուխտէն։ Մանաւանդ զի ի ձեռն սուտ քահանայիցն պատրէր և խարէր իրքի ճշմարիստ մարդովք, աւետարան հանդէրձ խաչիւ տայր տանել, և զիւր զամենայն սաստանայական ստութիւնն նորգոք ծածկէր։ Դնէր զինքն յաստուածպաշտութեան կարգի և զամենայն կողմ՝ ուրացելոցն. առաւել զինքն հաստատէր հաստատուն քան զամենայն զօրսն Հայոց երդնոյր և հաստատէր, ևս և զամենայն հրամանս թութեան յարբունուստ ցուցանէր։

14. Այն էին և կամք Յունաց աշխարհին<sup>3</sup>, լսել զայն ախորժութեամբ. այլ ի ձեռն նորա տուաւել ևս ի նոյն

անշուշտ տեգու էին ի Պարսից, որովհետեւ Յազկերասի խրկած մոգերուն մէկ մասը սոցա երկիրը գնացեր էր. (Տես Յ. Բ. 82):

1. Ոտորին Հայք՝ արեւմեան հարաւայն կողմանքն Յոսփաց և Տիարպէքիրի գտաւաներն, որ աւելի ցած և տաք են։

2. Այս է Մամիկոնեանն որ էր ի ծառայութեան Յունաց, որոյ մարզպանին հետ ունեցած բարեկամութենք գուցէ ցեղակցին Վարդանայ գէմ նախանձէ և տակելութենէ յառաջ եկած էր։ Մամի-

կանեանց Տունը յերկուս մասունս բաժնուեր էր, մին ի ընագաւառն խրեանց ի Տայր մեացեր էր. միւսն Յունաց բաժնին մէջ անցեր էր։

3. Որովհետեւ պատերազմ ընելու ոչ փափաք ունէին և ոչ կարողութիւն, և նոյն իսկ Պարսից Հայաստանի մէջ եւ զած ազգասամբութենէ մէտքուն էին, զախնալով որ եթէ յաջողին Հայք աշգատութիւննին ձեռք անցնելու Յունաց բաժնն ալ կը վրգովէին։

**յեղեալ տառալեցան:** Ասյնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն<sup>1</sup>, յԱրցախ<sup>2</sup> և յԱզուանն, ի Վիրս և յաշխարհն Խաղուեաց յզէր պնդէր, զի ասպնջականութեան ոք արժանի մի արասցէ:

1. Ալիշան վ.՝ զՏմորիս և զԼորդուս համանիշ կը համարէ. Խորենացին ալ իւր զատումնթեանը մէջ կըսէ տեղ մը. Տմորիս որ այժմ Խորդիք կոչին ։ Բայց Եղիշէ և Բուզանդ (էջ 160) զառաւա զատ զատ կը յիշեն իբրև առանձին զաւոս։ Մեր Եղիշինակին ուրիշ տեղ մը (Յ. Է. 11) մերժակից աշխարհին Պարսկաց և Խորենացոյ ալ Ասորեստանեաց սահմանակից համարելուն թէ նայինք՝ Տմորիք Խորդուաց աշխարհին արեւելեան հարաւային գաւառն ըլլալուէ, այս է այժմեան Հաքքեարի և Շուլամէրի. մինչ Խորդուք, գոնեա չին ժամանակաց մէջ Քիւրուխովանի արդի Պահման գաւառն էր։ Վերջապէս մեր պատմութեան մէջ Տմորիք կը յիշուի ին միշտ իրեւ կարգէ դուրս ամուր և անմատելի գտառ մի, ուր կ'առաւենին թագաւորէն ապստամբող կամ գախնալու պատճառ ունեցող իշխանք և զօրավարք։

2. Այսպիս. Աւանոյ ծովուն արևմբառակալը գոնուող լեռնուա երկիրն է, զոր կ'ոռոգէ Թարթառ գետ և որ ունէր զայժմեան Այրում գաւառը Գանձակայ և զՁաւերդ և զԼիլիխոսն գաւառո Գարապաղի։ Լեռնակոչակ և արդ խոկ անտառախիտ է յոյժ նահանգ։ Զլարերդի հւեսիսային կողմը կ'ամբանաց Գարապաղի շափեալ կատարերուն բարձրագոյն՝ Մուրով լեռոն, 11, 540 ոտնաշափ։ Այս և սոր մօտ Խոչխարա լերինը ապաւէն եղին գտանդելոց ի ժամանակս պատերազմաց անդստինյաւորց Արդարականց, որպէս ցուցանեն պատմէք, և առ Բագրատունեօք և զկնի. Տես Տեղագիր 174։

Խաղուիք. «Պայրպաւրդ կամ Բարերդ վիճակ Խաղուեաց Հայոց, որոյ քաղաք

համանուն զԼիսւոր քաղաք էր Հայաքաղաք և Արմենոխալիւրը կուեցեալ ազդի. արտաքոյ հնդեսասան աշխարհացման Հայոց Մեծաց և կոյ ի վերայ գետոյն Ճորսին ։ Տեղագիր 48. — Խոկ բուն Խաղուիք կը բնակէին, ըստ Նկարագրութեան Պրակոպիոսի, Պարիսար լերանց վրայ, որ կը բաժանեն զՊոնտու ի Հայոց։ Յստ նախնի յոյն մասեանագրաց, Խաղուիքը կը տարածուէին մինչև շինքերմողոն գետ, և աւելի հին ժամանակաց մէջ մինչև ցՈլիւս։ Խորենացին ալ կըսէ. «Ճանիւս Պանտացւոց, որ են Խաղուիքը ։ Ճանիւս անշուշտ է (Օսմանեանց Ճանիք հոչածն յորում և զըտանի Քելտիր երկիր և գետ Քալցիուդ լուսեալ և հանել և անապատ, լի հեղեղատիք, անապագ և գահավիճաք և թէ սահմանակից են Յանական և Պարսկական Հայաստանի։ Խոր ատենը տակաւին անասնաբարոյ էին և շունէին բնաւթագաւոր կամ իշխան։ Զծառու, զթըռշուն և զայլ անասուն պաշտէին։ Հազարորդութեամբ չէին պարապեր և աւարապութեամբ կ'ասպէին։ Երկիրնին յոյժ անբեր է, ոչ արօտա կը բուսուցանեկ և ոչ պաղատու ծառ. մշտառեմեռ կը տիրէ անդ. Տես Անեծոտա, որ Իսամեր էջ 623-624. Բայց Եղիշէի ամենարկած ամուր տեղուանքը աւելի դէպ յարեւուս է, այս է Պարիսար լերինը, յորս Խաղուարդ կամ Ապամարկի բարձրանայ իրեւ 12.000 ոտն. առօ Յ. Է. 8 ձն. 1։

15. Եւ ըստ մեծի չարութեան նորա առաւել ես յամանակին երեք նմա զյաջողութիւն իրացն. զի ամենին արտաքուստ օգնական ոք ոչ գտաւ գնդին Հայոց, բայց յայնց Հոնաց, որոց բանս եղեալ էր: Սակայն և վասն նոցա կուտեաց զբազում այլրուծին Արեաց, արգել և փակեաց զգրունու ելին նոցա. քանզի ոչ տայր գաղար ամենեւին թագաւորին Պարսից, այլ յշէր և կոշէր գունդս բազումն ի պահակին Ճորայ, և զվարաց աշխարհին բավանդակ գումարէր, զզօրսն Լինաց և զՃ՛րդրաց, և զվատն, զԳաւն և զԳավուարն և զԽրսանն և զՀեճմտակն, զՓասխն և զՓասխն և զՓիւքօնան և զամենայն զօրսն թաւասպարանն<sup>1</sup>, զլեռնայինն և զգաշտայինն,

1. Կովկասեան Եւանազօսւոյն արեեւից կողմէ յերկոսս առաջն կը բաժանի, յարոց մին հիւսիսայինը կը մերձենայ յարդ կարից ծովուն, Գարբանդայ քաշարին մօտերը, նեղ անցք մը միայն թողլու: Ասու անցքը փակելու Համար շինուած պարիսպը Կարգելոյր զշանս կամ զՄանքութև ունի ի հարաւ արշաւելէ: Խակ հարաւային և հիւսիսային առաջքին մէջ զանուող աշխարհին ժողովուրդք յեւանականք կամ զաշտայինք, ընական էր որ Հոնաց թշնամի լինէին, վասն զի նոցա արշաւանքէն առաջին վեասուղները իրենք պիսի ըլլային: Այդ զանազան ժողովուրդք, որոց թիւը Եղիշէ տասն և մէկի կը հանէ (Յ. Բ. 144), մէկ մէկ ալ թագաւոր ունեէին: Այս Ճորայ պահակին պահապանքն միանգամայն և Արքայից արքային նիշակակիցքն էին: Բայց որո՞նք են այդ մետասան թագաւորքն յեւանորդեալք: Այս հատածին մէջ արդարե Եղիշէ տասն և մէկ ցեղ կը յիշէ: Բայց Լիինք հեռու էին միասերէն (Տես Յ. Ա. 10 Ճ. 1): Զասսա ի բաց թողլով և առանց տեղ եօթներորդ յեղանակին մէջ յիշուած Խիբիսկանը գնելով: կը լրացնեմը Եղիշէ տուած թիւը: Ճիպք կը մնաքէին ի հարաւային ստորաս կաւ-

կասու, պյժմու Շիրվան կոչեցեալ Նահազին մէջ, և գլխաւոր քաղաք Էր նոցա Ցու, ուր քարոզեց Ո. Գրիգորիս (Տեղադիր 186): Բուզանդայ մէջ ալ կը գանեմը կովկասային շատ մը ազգաց անուններ, յորոց ոմակը նոյն հն Եղիշէիններուն հետ. ոմակը ալ տարբեր. «Յայնմ ժամանակի թագաւորին Մազք-թաց Անէսան անհնարին նիւթեաց զարմուութիւն սիսութեան ընդ իւրամ ազգակին խորովու արբային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հանաց և Փիսիաց, Թաւասպարաց, Հեճ-մտակաց, Խմախաց, Գարաց և Գը-դուռաց, Գուգարաց, Շըրաց և Ճորաց և Բաղաւաց և Եզերաւանացն և այլոց խառնազանց բազմութեամբ ան-թիւ անբնակն վաշկատուն զօրութեանց, որում միանգամ ինքն իշխեր զօրացն բազմաց: Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխար-հին: Յայսանէ Ճիպքը, Գուռար, Հեճ-մտակ Թաւասպարան միայն յիշեալ են յԵղիշէէ: Բայց Անէսանայ դաշնակիցքը միայն պահակին հարաւակողմը և արդէ Տաղիսկանի մէջ զանուող ազգերը չէին, այլ սասնց հետ կուրայ և կովկասու մէջնեղը մնակու ուրիշ ժողովուրդներ

և զամենայն ամրակաղմն լերանցն<sup>1</sup>: Եթ զոր կարասեաւ, մեծաւ պարգեօք և առատաձեռն բաշխելով զգանձնն արքունի, և էր զոր հրամանաւ թագաւորին սաստիւ տաղնապէր:

16. Զայս ամենայն իրրե արար և կատարեաց ըստ հրամանի թագաւորին, որ ըստ օրէ դրէր և ցուցանէր մեծ հաղարապետին Պարսից, որ զօգեալ և թագուցեալ էր ի քաղաքն Փայտակարան: Համարձակեցաւ<sup>2</sup> այնու հետեւ և նա ցուցանել զինքն բաղում՝ ազգաց. էր որոց ահ արկանէր, և էր որոց սիրով պարգես բաշխէր: Կոչ չէր առ ինքն զվասակ, և որք ընդ նմա իշխանքն ամենեքեան. բաղում՝ պարգես բաշխէր նոցա յարքունուստ, և զօրացն՝ որ ի նոցա բանի էին: Ցանէր զառաջեաւ և զուրացեալ երիցունան. ցուցանէր, հաստատէր և յայտ առնէր, եթէ տրքը որսացայց զնոսա՝ քակտել ի միարան ուխտէն: Խոկ հաղարապետն իրրե զայն լսէր, յոյժ շնորհակալ լինէր երկոցունցն<sup>3</sup>, և յոյս առաջի դնէր նոցա. Եթէ լիցի մեր յազմութիւն, զայլոց քահանայից կեանս դոցա շնորհեցից, և զմեծ վաստակ դոցա ցուցից թագաւորին:

17. Եւ այսպէս շարժեաց<sup>4</sup> և շփոթեաց զաշխարհն Հայոց, մինչև զբաղում եղբարս հարազատա քակեաց ի միմեանց. ոչ եթող միաբան զհայր և զորդի, և ի մէջ խաղաղութեան արար խռափութիւն:

18. Եւ անգէն խոկ յիւրամբ աշխարհին եղբօրսրդիք երկու էին նորա ի սուրբ ուխտին առաքինութեան. զրեաց և եցոյց վասն նոցա յարքունիս, և էառ իշխա-

ալ կայիս: — Դիմուելի է թէ այդ երկու պատմագիրդ ալ չեն յիշեր զՊեկս արդի Աշկեներն, որոց թագաւորը Շերպէր Հայոց գէմ պատերազմի եկեր էր ի Զիրաւ գաշտ (Խորեն 457):

Անուներէդ մի քանին մացած են մինչև ցայծմ. այսպէս թագարական, Պաւուս, Պուստ, Խիսու՞ Եղիշեայ թաւառար, Վատ, Գաւ և Խիրիովանն են: Ճիզրք այժմեան Ռիշաւիները կը կարծուին, որք փոքրիկ մողովուրդ մի են յարեւմոից թագարականի:

1. Այդ երկու ածականներդ թաւառապարի միայն կը պատկանին. քանզի այժմեան թագարականն ես բաժանի յերկուո՞ եփարիկ վերին և աղաղէ սոտրին. շարունակութիւն է գաւառին նարին- Քամայի գէմ յարեւմուս:

2. «Համարձակեցաւ» և «կոչէր» բայերն վերաբերին Միհներսէի. խոկ տաներ վասակայ:

3. Այս է երկոցունց երիցանց՝ Զահգակ և Պետրոս. Տես ի վերոյ 10:

4. Շարժեաց (Վասակ):

նութիւն ի վերայ կենաց նոցա, մերժեաց և եհան զնուսա յաշխարհէն, զի մի այլ դարձցին անդրէն<sup>1</sup>: Հարածեաց և փախոյց զամենայն միայնակեացս աշխարհին, ոյք հայհոյէին զանդարձ ամբարշտութիւն նորա, որ արար և կատարեաց զամենայն չարիսն ընդդէմ ճշմարտութեանն. և զոր ինչ ոչ գիտէին անօրէն հեթանողն՝ իմացուցանէր նոցա, և վասն ուխտին քրիստոնէութեան, եթէ որպէս հնարիւք կարասցէ բառնալ յաշխարհէն Հայոց:

19. Զայս ամենայն չարիս իրրե ետես ի նմա Միհըրներսէն, քան յանձն իւր՝ առաւել ի նա էր յուսացեալ: Հարցանէր և սստգէր, թէ քանի այր կայ ի Հայոց աշխարհին ի գնդին վարդանայ ընդ ամենայն բազմութիւնն: Իրրե լուսու ի նմանէ, թէ աւելի քան զվաթսուն հազար<sup>2</sup> են, խնդրէր ևս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեանն, և կամ քանի այն ոք իցեն՝ որ սպառազէնքն<sup>3</sup> իցեն, և կամ քանի այն ոք իցեն՝ որ

1. Ասկէ յայտնի կ'երեի թէ Սասանեաց կառավարութեան ձեզ որբան կեդրանացեալ էր: Մարզպանաց իշխանութիւնը սեղմեալ էր յոյժ նախարարաց և սեղչաց նկատմամբ: Թէպէս պարական քան քաղաքականութիւնը բացէ ի բաց քրիստոնէութեան գէմ կը կառեր ու

Սասանեաց իշխանութիւնը ի գոտնդի էր ի Հայոց և վասակայ ձեռնուութեամբ և ջանիւք էր յուսային վերահաստատուել. թէպէտ վասակ իւր եղբօրորդուց նկատմամբ տանուտերական և կէս մի ալ հայրենական իշխանութեամբ վարուելու իրաւունք որէուք էր ունենալ, այսու ամենայնիւ յարբունուստ համան շառած՝ չէր կարող զնոսա արսորելու: Խոկ եղբօրորդեաց հետ հակառակութեան պատճառը տես Յ. Ե. Ց. Ճն: Այսա անուանքն են Բարդէն և Բակուր, որք ետուն զանձինս ի կապանս արբունի, ընդ այլ նախարարս:

2. Վաթմառւն և վեց հազար, ու եթէ վասակայ հայ զօրքն ալ միատեղ հա-

շուեմք հարիւր հազարը կ'անցնէր. ահաւոր զօրութիւն. բայց ի՞նչ կանոնով կը գումարուէր այդքան մարդիկ, ի՞նչպէս կը կերակրուէր: Քանի միլիսն ժողովուրդ կար պարսկական Հայաստանի մէջ, որ պարպիսի մեծ բանակ մը կըրնար պատերազմի խրկել:

3. Հայոց զօրքը երեք տեսակ էին. ա. Ապառազեն որ ձիւոր էր. ու յազատաց և յոստանկաց կը բադկանացը. բ. Ապազնաւոր մերկ առանց զինու, այս է առանց զրահի կամ վերտի, որ հետեւակ էին. գ. Բուն ձեռեւակը որ միայն վահան մի ունէին պաշտպանութեան համար, ու նիզակ և սուր կը դործածէին: Ի բաց առեալ զիլաց գունդն, որ յատոկ էր Պարսից, հայկական զինուութիւնը պարսկականին համեմատ կազմուած ըլլալու էր, վասն որոյ յեզանակիս վերջը մանրամասն ծանօթութիւն մը կը դնենք որ բաւական լոյս կուտայ երկուց ազգաց զօրաց տարազից վրայ:

մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն. սոյնպէս և վասն վահանաւոր հետևակացն:

20. Եւ իրբեւ լուս զթիւ համարոյ բազմութեանն, առաւել ևս փութացաւ ուսանել՝ թէ քանիք իցեն պարագլուիք քաջ նահատակացն, զի երիս ընդ միոյ պատրաստեսցէ առ մի ի նոցանէ: Թող զայլ ամենացն, այլ և գրօշից անդամ՝ իւրաքանչիւրոց աեղեկանայր ի նմանէ. և թէ քանի գունդ զզօրմն բաժանիցեն, և որ ոք ի նոցանէ ասզարք<sup>2</sup> լինիցին, և որ զօրագլուխ յորմէ կողմանէ յուազմ մոտանիցէ, և զինչ անուանէք՝ իւրաքանչիւր համհարզացն իցեն<sup>3</sup>, և քանի փողահարք<sup>4</sup> ի մէջ գնդին ձայնիցեն: Դակի՛չ<sup>5</sup> զործիցեն արգեօք, եթէ արձակ բանակեսցեն. ճակատ առ ճակատ զործիցեն<sup>6</sup>, եթէ

1. Գրօշ կամ՝ գրաւչ՝ է պարսկերէն  
աշքրա տրափէ: Բայց գրօշ հ. սոսկ պարզուած պատստա կամ՝ գրօշակ չէր նշանակեր. այլ և ինչպէս առա՞ մէկ դրօշակի տակ խմբաւծ զօքք, որ զնդին ստորաբաժանութն էր, որպէս լիվա յՈՄ մանեան նշանակէ դրօշակ միանդամայն և brigad: — « բայց ուր լինէր հանդէս ի նշանաւոր տեղիս, զնդի զնդի, դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց, յերեւելի տեղեաց՝ մէն մի բանաբար առ այր հրամայիին, զի բերցեն ըսկեսցեն շեղջ կուտել, զի որշափ լիցի, այնու երեւեցի նշանակ բազմութեանն ։ Բուշ զանդ էջ 15:

2. Պարսկերէն սալոր է 1 ծէր, ծէր բանի. 2 զօրագլուխ, հրամանատար, իշխան առաջնորդ, դատաւոր:

3. Կոստանդնուպոլոսյ և թէսոսիոյ տպագիրը ինչպէս և Միհթմահեանց մի քանի գրշագիրը՝ զինչ ահւանեց՝ իւրաքանչիւր համհարզացն իցեն: որ հասկնալի է և ուզիջ: Զգիտեմք թէ ինչո՞ւ համար Միհթմահեանք ըստորեր և պահեր են իւրաքանչիւր համհարզ անցանիցն, որ ըստ մեզ իմաստ չունի: Առև ընթերցուած իւրաքանչիւր համհարզացն իցեն, որ նոյնպէս անընդունելի է:

4. Այսեաց հազարապետը իմանաւ կ'ուզ թէ իւրաքանչիւր զնդին մէջ որպան փողահարք կան. ասկէ պիտի չետեղէր անշուշտ թէ հրամաններն ինչ առագութեամբ և ապահովաթեամբ զօրաց պիտի հազորդուէին. որով և Հայոց բանակը ի՞նչ աստիճանի պնդակազմ համարել պէտք էր:

5. Ղակէլ և յարմար գրեց վրայ հազար կամ՝ շերտաւորոք ամբացեալ բանականեղի. camp retranché, retranchements: Պէտք չէ շփոթել զսոս պարսկ՝ լաշքրա և հայերէն ։ լաշկար ։ բառին հետ: Միհթմահեանէ կը հարցնէ թէ Հայք բանակնին արձակ դաշտի՝ մէջ կը դնեն.

թէ հասկեական սովորութեան համեմատ, որ քիչ շատ Պարսից և Հայոց մէջ ալ ընդհանրացած էր, զրանակառակին խրամաւ. և ցիցերով կը փակեն:

6. Այս է թէ Հայք ալ Պարսից նըման զօքք աշակողմեան, ձախակողմեան և միջին գնդերու պիտի բաժնեն, թըշնամւոյն թէկերուն դէմ՝ առ դէմ, թէ միահամուռ և մէկ տեղուոյ վրային պիտի յարձակին: Ահաւասիկ օրինակ մի ալ Եղիշէի սազմային գործոց մէջ ունեցած հմտութեանը, և նկարագրական հանձարոյն. ութ տասն տողով ցուցուց

Համագունդ ընդ մի տեղի դրվիցեն, Ո՞ ոք ի նոցանէ յերկրայս կայցէ, և կամ ո՞ ոք ի նոցանէ զանձն ի մահ զնելով դառն գործիցէ:

21. Եւ իբրև զայս ամենայն տեղեկացեալ ի նմանէ,  
կոչէր զամենայն զօրագլխեանն՝, պատուէր հրամանի  
տայր ամենեցուն յանդիման նորա, զի խրատու նորա  
լուիցեն առենեքեան։ Եւ զամենայն զօրոն զօրագլխօքն  
հանգերձ յանձն առնէր առն միտմ յաւագացն, որում  
առուն էր Մուշկան նիստալաւութու :

22. Եւ ինքն խաղայր անգրէն գնայր յերկիրն արեւ  
մլից. և յանդիման եղեալ մեծի թագաւորին, պատմեր  
զամենայն անցս իրացն, զիւր հնարաւոր իմաստութիւնն  
և զվասակայ խարերայ պատրանն հայթայթանացն, որ-  
պէս զառաջինն զիւր զամբարշտութիւնն կամեցաւ ծած-  
կել այնու՝ զի քակեալ երկպառակեաց զգոնդն հայոց:  
Իրեկ լուաւ զայս ամենայն թագաւորն ի բերանայ մեծ  
հազարապետին, դառնացաւ յանձն իւր, և ասէ անստառ  
երդմամբ. Եթէ ապրեսցի անօրէնն այն ի մեծ պատե-  
րազմէն, մեծաւ անարգանգը տամ' ըմպել նմա զբաժակն  
դառնութեան մահու:

*Ճեղ Հայոց զօրաց տեսակներն, զինոց տարագըր, պատերազմենաւն եղանակը, բանակներուն կազմովթիւնը, փողահար գործածենին և այլն:*

1. Հմուտ անձ մի՛ սահմարիդ արձա-  
նագրութիւններով կը մեկնէ զանունդ՝  
և բյինապէտ:

«Ասանեանց զինութապահն դրսէթի-  
նը քիչ կը տարբերէր Արքինենան նախ-  
կին թագաւորաց ատենի դրսէթենէն  
ժամանակը երկու նշանաւոր փոփոխու-  
թինս մասն բերերէ ՀՊ. պատերազմա-

կան կառքը զբեթէ բոլորսին երեսէ  
ընկած էր և փաց գործածութիւնը ըս-  
տացեր էր առաջին կարգի կարելու-  
թիւն մը: Չորս զիւաւոր զէնքէ կամ զօ-  
րութենէ կը կազմուէր Աստանեան բա-  
նակն՝ Փիլիպ, Ալյոսխ, Աղեղնաւորը և  
հասարակ Հետեւակը: Սոցա առաջնորդ  
կը համարուէր փաց գունդը: Գաղափրու-  
թիւնու և փապեալքն ի Հնդկաստանէ  
կը բերուէին, և թէպէտ երբէք յօրի-  
բազմաթիւ չէին, բայց և այնպէս կար-  
գէ գուրս յարգ կը լիճայտէր նոցա: և  
Արարացոց գէմ եղած առաջին պատե-  
րազմաց մէջ յալիթութիւնը զիւաւոր-  
բար սոցա միջոցաւ ձեռք ձուուած կը  
կարծուէր: Անշուշտ այդ գունդդ մէջ  
գործ կը տեսնէր արձակ և տափարակ  
տեղոյ մէջ: բայց փաց տրուած կա-  
րելութիւնը այն աստիճանին էր, որ որ-  
բան երկիրը խորժութարու, ինչնային ու

անտառախիտ ըլլար, զսոսա բանակին հետ պիտի քալեցնէին, և մինչեւ անգամ մասնաւոր խնամօք Հանապարշներ պիտի բանային, որպէս զի կարենան անցնիլ:

« Կ'երևի թէ Ասանեանը՝ միայն ծանր հեծելագունդ ունեցած են. որովհետեւ աեղ մը յիշատակութիւն չկայ այս թեմէ այրուձիոյ, որը նախկին Պարսից և Պարթևաց ժամանակ արշաւող կամ նաև հանջող թշնամի բանակաց բոլորակիք ամոզի նման պատելով անմին բազմութեամբ և արագ արագ շարժուածօք շարաչար կը Ակէին զնոսա եմէ զարութեամբ յառաջ գային, և ընաջնջ սաւակունի կը սպանային եմէ քիչ մը ձախողակ պարագայից մէջ տեսնէին զնոսա: Յուլիանոս հալածող պարսկական բանակը սպանազէն այրուձիէ, աշգեղնաւորներէ ու փերէ կը բազկանայր ու այդ աղետալի նահանջին տան, Շապիոյ գաշնակիցը Ասրակինոր միայն կը յիշուի իրք թեմէւ հեծեալք: Արդպիսի այրուձիոյ երբ Պարսիկը պէտք ունենային, ասնեցէ կը ժողովէին կամ ի կատաց (Caudisiens) որբ մասկէին յարեւուս հարաւոյ կարսից ծավու: Բայց բան Ասանեան հեծելագունդը ամբողջապէս սպասազէն էր, որոյ որինակն և սպասկերն ունիմք յորմաքանդակն Խոսրովայ երկրորդի ի թամաթի-Պոտպան: Զիսց զլուխը, պարանոցը և լանջը թանձը զրահիւք պահպանեալ էին. ու հեծեալք վերս կը հազնէր, որ մինչեւ ցդիսորն ամբողջ կը ծածկէր, և ամուր դիմակաւոր սպասարատ մը աշքիքէն զատ բոլոր զլուխը կը դոցէր: Զախ ձեռքը կը կրէր բոլորչի պղտի վահան մի ու զէնքերն էին սոսուար մկանդ, ուսւեր, աղեղ և նետր, ու կրնար անվեհեր զարնուիլ լուագոյն:

(1) Ասպարաց այս եղամակ զործածութիւնը չայոց մէջ ալ կար ի ժամանակ իմքմիշխամութեամ. Տիս Բուզամթ 201:

(2) Նիզակ է գեղարդմ փոքր, որպէս թէ մետ ծեռամբ ծզիլի. զդ. javelot:

Հռովմայեցի զբնութրին հետ Ասանեան այրուձին շատ անզամ յաջողութեամբ յարձակեր էր լեզենաց հետեակազօրուն վրայ ու վաներ էր զայն: Խազազութեան ժամանակ արքունի հեծեալքն աւելի պարզ կազմած ունէին:

« Հետեակազօրուն ամենէն մարդիկ երնոտիր ման էին Ազեղնաւորըն, որ և հասարակ հետիւնն զբնուորէն շատ աւելի բարձր թօշակ կ'ընդունէին: Մասնաւոր եղամակաւ հրահանգեալ էին նետաձգութեան մէջ և ի նպատակէն քիչ անզամ կը ըրիպէին: Այս անզամ ու զորահիւս վահաններն, զոր Արքմենեան Պարսիկը յԱսորեսուանեայց անելով մտուցեր էին, գործածական էր միշտ Ասմ վահաններէս կարգ մը կը զետեղէին վեսնոյ վրայ ու կռնիկն իրք յորմանածերովից կ'արձակէին զնետս, որ սոսկալի վեան կը հասուցանէր թշնամ. մեռյն. այնպէս որ լեզենթ հաւասար զինուք կառելու համար կ'սպասէն ընդհանրապէս, որ աղեղնաւորաց նետն ըսպասի (1): Երբեմն ալ աղեղնաւորը փոխանակ այդպէս ճակատ կազմելու ըսպասազէն ծիասորաց մէջ տեղուանիքը կը կենային, ընդ որ զուգընթաց քայլելու դժուարութիւն չէին զդար ու սաստիկ պազնապ կը սպատառէին թշնամույն առանց ինքենադր մէծ ամսակէն բիթ պախուած աստենին ալ յետ ընդդէմ կ'արձակէին փախչելով, և Հռովմայեցոց մէջ առակ եղած էր ըսկէ թէ և մանաւանդ այն առեն ահարկու են: »

« Հասարակ հետեակազօրը սուսեր, գեղարդն զուցէ ևս նիզակ (2) ունէին, և սովորաբար աղեղնաւորաց կռնակը կը կենար. թէսկանեւ այս վերջինից հետեակաց առզմից մէջ կը բաշուէին, երբ

երկու մշնամի բանակք իրարու խառնուելու սկսէին։ Հետեւակազօրը զրեալէ անզրահ է, բայց և այնպէս պընդութեամբ և արիութեամբ կը կուռէր, և ընդհանրապէս լեզէսնականաց հաւասար քաջամարտիկ և բաղում պլոց ազգաց զօրաց գերիվերոյ կրնար համարուիլ։ Այդ չորս աեսակ զինուց ներբին կազմութեան վրայօք քիչ տեղեկութիւն ունինք։ Հառվեական լեզէսնին կամ արդի բնակութիւնի համապատասխանող բաժանումն մը հաւանական է թէ ըշկար, բայց կարելի ալ չէ ենթադրել թէ այդպիսի զնդեր բնաւ եղած չըլլան։ Մէկ զնդի վրայ միայն որոշ տեղեկութիւն ունինք, այս է Անմահից շ կամ Շատենի շ գունդն, որ այրու ձիոյն մէկ մասն էր և 10.000 ձիաւորէ կը բազկանայր, վասն որոյ և արդի երրուպական զնդի կազմութիւնը շունէր<sup>(1)</sup>։ Գուցէ իւրաքանչիւր նախարար իւր գաւառին զօրաց հրամանատարն էր<sup>(2)</sup>, բայց սպարապետը յարբունուստ կ'ընարուէր, ինչպէս և հաւանորէն միւս զօրապլուխը, սոսափ և նախարարը սոցա հրամանին ներբե զնդավետն պաշտօն վարելու էին։

\* Ազգային մեծ դրօշն էր հաշակաւոր մաշկասյ գոգնոցն Քավաի, որ ի սկզբան սոսկ երկամթագործ մի էր և յետոյ Հառվեայ սպարապետն եղած էր, վասն որոյ և Տրաչի Քավան կամ տրաֆի Քավիեան էր Կոչուէր։ Սա 18 ոտնաշափ երկայնութիւն և 12 լոյնք ունէր։ Եաւ հին առեններն անպանոյն էր, բայց աւելի վերջին սպատուական ակամբ զարդարուած։ Այդ սրբազն դրօշը միայն մեծամեծ վասնաց մէջ պատերազմի կը տանէին. ու անոր տեղը աւելի սովորական դրօշներ կամ նշաններ կը զործածէին. որը աւերակաց վրայի բանդակաց նայելով երկու տեսակ էին։ Այս իւրաքանչիւրն ալ կը բաղկանայր ձողէ մը, որոյ վերի մասին վրայ խաչաձե-

ցուող մը հաստատուած էր. բայց մէկ տեսակին խաչաթեր կը կրէր շրջանակ մը, որոյ առանցքէն ցուող մը կ'անցնէր, յորմէ ասուեայ երկու ծոսք կախեալ էին. իսկ միւս տեսակին խաչաթեր կիւրայի դին երեք ակսաւոր գնոտակը զետեղեալ էին սոցա ստորե փախանակ փնջից երկու համանաման ուրիշ զնդականը Պառաւարին է ասել թէ ինչ կը նշանակէին այդ նշաններդ և թէ երկու տեսակ լինելուն պատճառն ինչ էր։ Պատերազմի տարուած նշանաց բազմաթիւ լինելն անկէ ալ կը հետեւի, որ անզամ մը պարսկական բանակ մը թէտէ պալորագին յաղթուած չէր, թէ ըշնամունի ձեռքը յայցանէ քրան և ուժի հատ թողուցեր էր։ Արեւենեան ժամանակ Պարսից դրօշը կամ նշանն արծիւ էր։ Տես Գևենովսնի Լիւրամարզ, ի 1, 2 և Եսպիկեսի՝ Պարսիկը։ Տող 205-210։

\* Ասանեան սպազմակարգը (tactique) նշանաւորութիւն մի շունէր. բանակաց գորութիւնն երեսունէն վամուուն հազար էր. թէկէտ երբեմն հարիւր հազար և անզամ մի և՛ Խոսրով առաջնոյ տանը 140.000 զօրական եղած էր։ Զօրաց մեծապահն մասը հետիւու էր. հեծելազուն դը ամրողին մէկ երրորդէն աւելի եղած ըլլալու չէր երբէք։ Ասպատակի համար երբեմն միայն այրումի, բայց երր երկի մը տիրել պէտք ըլլար, զինուց ամէն տեսակները միանգամայն կը գործածէին. այսինքն հեծելազուն գիտելազունք, հետեւակ, փիղը և մեքենայք։ Հոսվմայեցւոց էրից յարձակմանց մէջ բերգաբազաք պաշարելու հարկը անհրաժեշտ էր. և թէպէտ ի սկզբան քիչ ճարտարութիւն ցուցացեր էին Ասանեանը պաշարման արհեստին մէջ, բայց հետզէտէ պէտք եղած միջոցներն և դործիները ձեռք ձգելով, չափաւոր ժամանակի մէջ կը տիրանային ամրապարիստ բազա-

(1) Հ'րազդան գ. է. 83։

(2) Նոյի է. 26։

քաց. զարմանալի է որ վերջի տառեն-  
ները Մարտինի, Ամեդայ, Եդեսիոյ,  
Թէսգուղօլոսոյ, Անտիպոսոյ, Երուսաղե-  
մասոյ, Ազեքսանդրիոյ պէս ամուր քա-  
ղաքներ քիչ գմուտըութեամբ առնուե-  
ցան: Պաշարման ձևն ալ պյու էր. պարզու-  
ղէն շափաւոր հետաւորութեամբ կը  
սկսէին ական հատանել ու ցանկերու հո-  
վանաւորութեամբ կը յառաջանային մին-  
չև ցիրտմբ պարսպին, զոր կը լեցնէին  
հողավ և արցակոր. յետոյ սանդզոր վեր-  
ելակելու կ'աշխատէին, կամ շարժուն  
աշտարակներ մերձեղնելով որմայն՝ կը

բազիէին զայն Խոյովը կամ բարանօք  
մինչեւ որ պատառուած մը բացուէր:  
Երբեմն ալ հողէ ըլրակներ կը ձեւցը-  
նէին ու սոցա կասարէն կը ծեծէին  
պարսպաց վերի կոզմերը, որ համեմա-  
տարար աւելի տկար էր, կամ սան  
դուզք կը նետէին: Ես եթէ քաղաքը  
դարձեալ շառնուէր, կը շրջապատէին  
զայն, հազորդակցութիւնըը, ջուրը և  
սոսելիքը կը կորէին, պյուկո որ եթէ  
ոտար բանակ մը օդութեան շհամներ  
պաշարելոց, ապահով կրնային բլաւ  
սովով տիրելու քաղաքին :



## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ՅԱՐՉԱԿՈՒՄՆ ԱՐԵՒԵԼԵՑՑ

1. ՄԵծ է սէրն Աստուծոյ քան զամենայն սեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ, իբրհ զանմարմին զօրս հրեշտակաց. որպէս անդստին ի սկզբանէ է տեսանել զրագումն բազում անդամ ի բազում տեղիս: Մարդիկ, որ սիրովն Աստուծոյ իբրհ զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանդիտելով, իբրհ անարի գորով վաստահրաք, կամ ի մահ անձանց, կամ յափշտակութիւն ընչից կամ ի խողխոզումն սիրելեաց, կամ ի գերութիւն ընտանեաց, ելանել ի հայրենի երկրէն և անկանել ի սորկութիւն յօսարութեան. առ ոչ ինչ համարեցան զայս ամենայն անցս չարչարանացն. այլ միայն միաբան կալ ընդ Աստուծոյ, զի ի նմանէ միայն մի գերի ելցին, և ամենայն երևելի մեծութեանս զնա բաւական համարեցան՝ ընտրեալ ի միտս իւրեանց: Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին, և զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն և ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, և ընկենուլ զանձինս յօսարութիւն՝ ընդ Աստուծոյ գիւտից: Որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք սերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս չայց:

2. Քանզի իբրհ ետես մեծն վարդան զերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւասութեամբ զանդիտեաց: Թէպէտ և ստուգեալ գիտաց զրազմաց այլոց ևս զերկմութիւն, որ գեռ ևս ընդ նմա միաբանեալք էին, քաջալերեցաւ յանձն իւր և քաջալերեաց զզօրմն իւր. քանզի ինքն իսկ գեռ բոնացեալ ունէր

զթագաւորանիստ տեղիսն՝ միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ ուխտէն: Հրաման տրւեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ<sup>2</sup> քաղաք, փոխանակ յետո կացելոցն՝ որ ելին զհետ իշխանին Սլանեաց, զեղրարս կամ զսրդիս կամ զեղրարցն որդիս ի տեղի նոցա մասուցանէր, և զերաքանչիւր զօրս տան նոցա. զի գեռ ևս ինքն ունէր զամենայն աշխարհն<sup>3</sup>:

3. Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին՝ եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ, նորս և որ բունքն հաստատոն կացեալ էին ի տեղւոցն, Ներշապուհ Արծրունի, և Խորէն Խորխոսունի<sup>5</sup>, և ինքն սպարապետն, և Արտօնի Պալու-

1. Խմանալու է այն քաղաքները, բերդերը և ձմերցները զօրս ինքնիշխանութեան ատեն հայ թագաւորը կը բըռնէին. և որոց մէջ Աստանեանք պարսիկ զօրը կը բնակեցնէին. սոքա իւրեանց դրից և ամրութեանց պատճառաւ երկրին գոները կամ բանալիքը կրնային համարիլ. և թէպէտ վասակ՝ Վարդանայ բարդանայ բացակայութեան միջոցին՝ զուման յայցանէ զարդեր, աւելեր ու այրեր էր. բայց ի հասանելն սպարապետին, թողուցեր ու քաշուեր էր իւր երկիրը:

2. Այդ հրամանդ տուաւ Վարդան յամսեանն Ապրիլի 451:

3. «Եւ կատարեալ զաւորս ձմերայն ցրտաշունչ օգոցն, և հասեալ ի տօն մեծ Զատկին բովանդակ ուխտապահն, և ամենայն աշխարհի եղի խընդութիւն... և յետ ասկաւ ինչ աւուրց անցելոց լուսն մէկ զօր եհաս բազում ի Հեր և ի Զարեանդ գուառ: Ազարապեան ազդ առնէր ուխտապահացն, որը յազագս տօնի աւուրցն երթեալք էին ի տունս իւրեանց՝ կատարել զտօնն զատկի առ ընտանիս իւրեանց, և թէ գունդ բազում հասեալ զայ՝ բերելով պսակո երկնաւորս. արդ որ ոք ցանկաց առնուլ աճապարեցէք.... և եթէ ոք խորհի այլ ազդ ինչ, զադարեալ հան-

գիցէ ուր և թուեցի հաճոյ ումեք ։ Փարոզ:

4. Այս է Արտօնագ: — իսկ՝ որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղւոցի. իմանգունդն առաջին զոր տուեր էին Արծրունեան Ներշապուհ Արծրունեաց իշխանին, և զոր պահապան կարգեր էին մերձ ի սահմանս Արտազատականի: Եղիշէ կ'իմացնէ մեղ մէկ այդ իշխանդ իւր զօրքն արդէն յԱրտօնագ էր:

5. Տես Յ. Դ., Գ. Ծն. Յ. Դիտելի է թէ Եղիշէ թէպէտ տոհմից գասակարգութեան համեմատ զԽորէն՝ Արծրունեաց իշխանէն անմիջապէս եաբը ու սպարապետն առաջ կը յիշէ, բայց խորէն Խորիսունեաց տէրը չէր. այլ հաւանուէն աւագ սեպուհ մը:

Արտօնականութեր էր Պալունեաց մէկ ցեղին ի Մոկաց գաւառ (Յ. Դ. Գ Ծն Յ): Վահանս էր տանուաէր Ամատունեաց. և Վարդանայ ամենէն զործունեայ նիշակակիցը: Այս էր աշակերտ Մեսրոպայ և երեմն հազարապետ Հայոց. և Դիենչապուհ զսա պաշտօնէն ձգելով: անզը պարսիկ մը զոսձ էր (Ար. 217. Ծն 1. Յ. Գ 64 Ծն 2): Արտա հազարապետութեան ատենը վախանած էր Մեսրոպ, և Վահան սրբոյն մարմինը և տարածութեալ յիւր զեօնն որ անուանեալ կոչի

նի, և Վահան Ամաստոնի, և դունդն վահեռունկաց, և  
Թավթուլ Դիմաքսեան, և Արշաւիր Արշարունի, և Շմա-

Օշական և յոյժ մեծարանօք զդիր երա-  
նելողն կազմեալ, տօն յիշատակի առ-  
նեն ամենափոյթ պատուով ամենայն  
բազմութիւնքն ժաղովրդոցն Արշարա-  
տոյ ։ (Փարզ. 105-106): — Արօնական

եռանդին շափ և մթերքն առաջին սիու-  
թեան > կը դրէէին զվահան ընդդէմ  
վասակայ (Փարզ. 173) և այդ հակառա-  
կութիւնդ աւելիսաստկացեր էր վասակայ  
քսութիւնամբ և նենգութեամբն հազարա-  
պետութեան պաշտօնէն ինալէն ի վեր:

Վահեռնեաց առնուտէրը Գիւտ որ  
Արտաշատոյ ժաղովոյն ներկայ գտնուեր  
էր՝ այժմ ուրացելոց կողմն էր:

Եղիշէ ուրիշ տեղ մը և թամթու վա-  
հանդեցի > կ'ըսէ. (Յ. Զ. 5): Փարզե-  
ցին՝ և թամթու տէրն վահանդայ (210)  
և երկու տեղ ալ՝ և թամթու Դիմաք-  
սեան > : Երկու հեղինակները բաղդա-  
տելով մեզ կ'երեկի թէ այս մէկ անձ մի

է և թէ Դիմաքսենից գտնեա մէկ ճիւ-  
զին բնակութեան տեղը վահանդ էր:

Բայս Փարզեցոյ է և և Հմայեակ  
Տէրն Դիմաքսենից > . բայց սորա իշխա-  
նութեան վայրն ուր ըլլալն չգիտեմք:  
Այս տոհմէն ուրիշ նիշակակից մ'ալ կը  
յիշուի՝ Պազրիկ, որ սեպուհ մի ըլլա-  
լու էր: Բայս Գահնամակին Վասակայ,  
Դիմաքսենիք երեք ցեղք էին. Լ. Դիմ-  
աքսեան. Լ. Բուխս Դիմաքսեան. Խ. Վ.  
Միքակա Դիմաքսեան:

Արյաւիր Կամսարական փեսայ Վար-  
դանայ (Փարզ. 190) և տանուտէր Ար-  
շարունեաց ցեղին, որ Մամիկոնեան տօն  
պէս կորիճ զօրավարներ կու տար Հա-  
յաստանի: Արշարունեաց տուած էր  
Տրդատ զմեծ Գաստակերոն Արտաշիսի  
Բ.՝ զԴիրաստանակերա հանդերձ Շիրա-  
կաւ և զքաղաքն Երուանդայ (զԵրուան-  
դաշատ, որ եղեւ Ոստան Արշարունեաց)  
հանդերձ զաւառաւն որ կոչի Երասխա-

ձոր. Տես Խորեն. Բ. Պ. Արշաւրի քա-  
ջութիւնը արդէն տեսանք Աղուանից  
պատերազմին մէջ. Յ. Գ. 59:

Եմաւոմ տանուտէր Անձաւացեաց. Տես  
Յ. Բ. 26. Ճ:

Գերունիք՝ քանանացի հին գաղթակա-  
նութիւն մի էին. (Խորեն. Ա. Ժ. ԺԲ):  
Բնակութեան տեղերնին Գիշամայ ծո-  
վան քավերը կը կարծուի:

Առուն է այն իշխանն որ Հայոց  
կողմանէ նամակ մի տարաւ առ թէսողու-  
կայսր (Յ. Գ. 46): Տանուտէր էր Գնու-  
նեաց (Փարզ. 126), որոց բնակութեան  
վայրն էր Տորուբերանի Աղիովիտ դա-  
ւառը: (Հնախօս):

Խորով սեպուհ մի էր. որովհետեւ  
Գաբեզենից իշխանը Արտէն Վասակայ  
հետ էր զօրօք եւրովք (Յ. Գ. 54): Գա-  
բեզեանց բնակութեան տեղին էր Գաղ-  
զման (Տեղ. 43):

Սամառունիք ԽԵդ կարգն ունին ի  
Գահնամակին վասակայ: Այցա բնակու-  
թեան վայրն կ'երեկի լինել Շիրակոյ  
Մրէն քաղաքը (Տես Աղիշան Վ. Շիրակ  
137), որոյ երեցն Խորեն ներկայ էր  
Արտաշատոյ Ժաղովոն: Մրէն որ այժմ՝  
կոչի Գարապազ, լի է հոյսակառ աւերա-  
կօք. պայծառացաւ սա յոյժ յիշ դարս-  
բայց Եղիշեաց ժամանակն ալ կարեւր  
բաղաք կամ աւան մի եղած կ'երեկի:

Ի մոից Երկրոյ և ի հարաւոյ Պայտ-  
զիսու է հին երկիր Քայլքրութեաց և  
Արմէշահովիտ գաւառ, զոր արդ Քուրդք  
ունին: Արմէշ քաղաքուանն անուանի ի  
բերան գետակի համանուան յեզր պա-  
րանոցանե ծովուն Վանայ, գրաւեալ է  
ի ջուրցն մեծաւ մասամբ, վասն որոյ և  
լքեալ ի բնակչաց: Տեղ. 89:

Մանդակունիք բնակէին հաւանօրէն  
Հայք և Տարօն գաւառաց կողմերը. Հնա-  
խօս:

ւոն Անձաւացի, և Ցածատ Գնթունի, և Ասոմ Գնունի, և Խոսրով Գաբեղեան, և Կարէն Այահառունի, և Հմայեակ Դիմաքսեան, և միւս եւս այլ Գազրիկ Դիմաքսեան, և

Արտեմ Ընծայացի կամ Ընծային. Անձաւից ձոր, Անձախաձոր ուր ուրեք և Ընծայից կամ Ընծայից ձոր, և այժմեան Քոդուր վիճակի, և սորա աւանն Քոդուր է բերդն Խոսորոյ առ համանուն գետով. Տեղ. 103:

Այլունեաց ցեղին երկիրն էր Տարօն դաւառը. բայց Մամկուն սպանելով զնահապեսն Ալկունեաց զԱղուկ, որ ապշտամբեր էր ի Տրդատայ, ի պարզե ունեցաւ նորա երկիրը, բնշպէս որ խոստացեր էր նմա Տրդատ. Այսա ամուր բերդն էր Ողականն որ մինչև ցարդ կոչ էր Ալկունի բերդ. (Տեղ Յ. Գ. 39 Ֆ. 2): Վասմայ գահնամակին մէջ Ալկունիք սակաւին լիդ գահն ունին. բայց ուր կը բնակէին՝ չգիտեմք: Այրուկի նըշ շանակէ թզուկ:

Հիւսիսակողմեն Աղեքսանդրոփու գաւառի, ի հարաւոյ Լեալվար լերանց՝ և վիճակի Լոսի, ի հին Տաղիր սոսոգեալ յարեմտեան կամ ի սկզբնաւոր վտակաց Տեպետայ (Չորոգետպն) որբ ևն Զէնկիլէրու և Ճիկա: Տէրդաբազաքն Լոսի կամ Լոսէ, պատեալ ի Ճիկայ և ի Ճինկիլէր գետոց և հզօր պարսպօք, որոց միջավայրն աւերակ է ամայի. Տեղ. 125:

Եամ Խոսապեսն տրբունի. այլ Եմթերցուած՝ Շախուռապեսն կամ Շամախուռապեսն: Այժմ համուրէն սպազիրը գնեն Շամախուռապեսն. և կը մեկնուի՛ Շամախուռապեսն և խոսապետ՝ կուրազազազատ, իշխան յարբունիս, փախանորդ արքայի. գուցէ պարսկերէն խոռ բառէն կազմեալ, որ թարգմանի պալտս, արքունի տուն: Ապակյն եթէ այդպիսի պաշտօնեայ մը ըլլար, գահնամակաց մէջ նշանակուած պէտք էր ըլլար: Արդ խոսրովայ գահնամակին մէջ կը անսնեմք:

Եանուասպետք. վասն որոյ ուղիղ չերեւիր մեզ բաժանել զանունդ յերկուս: — Բայց ինչ էր շահուռապետին պաշտօնը. հաւանօրէն շամք և պետ բառերու բարդութիւն մի է և կը նշանակէ չ քաղաքապետ չ: Եւ թէպէտ նոյն գահնամակին մէջ կը տեսնեմք և առանձինն «Քաղաքապետք»: այսու ամենայնին մարդէ է կարծել թէ Շամուռապետն արքունի թագաւորանիստ քաղաքին իշխանն էր և նոյն ընդ քաղաքապետին արքունի: ուր Վասմայ գահնամակին «քաղաքապետքն» միւս մեծամեծ քաղաքաց իշխանք էին:

Սրուանձնեայք, Քողեանք, յիշուած են Մեկին Խոսրովայ գահնամակին մէջ. Նոյնպէս և Ալորովատունիք որ նոյն ըլլալու են ընդ Տրպատանիս. Ալորովատ նշանակէ կրակապետ կամ քուրմը կրակի: Քրիստոնէութեան ատեն այդ անունդ ականջաց գէշ հնչելուն համար կրածառուած ըլլալու էր ի Տրպատ: Ալորովատունիք՝ Շահնամթունեանի ցուցակին մէջ Ակէացոց, Անձեւացեաց, Գողթնեցեց հետ կը յիշուին, և 100 զինուոր կրնացին տալ: Ալորովատականի ահմանակից ըլլալու էին:

Այկ և Արտազ, ի հնումն երկու գաւառք, այժմեան Մակուայ վիճակին մէջ կ'ինան: Եւ Շաւարչան դաշտ և քաղաք էր գլխաւոր, ուր հովանոցք և զօրանիստ թագաւորացն Հայոց և պարանի Անաւարիոյ, թերեւս ի նոյն խոկ ի ահման Մակուայ. Տեղ. 102:

Որուանձնեաց զօրաց միայն մէկ մասը. տանուուէրն Արտակ նիզակակից էր Վասակայ:

Գործակալին արքունի: այս է վերակացուք արքունի պարապետ և գաւառաց, որբ և էին սազարք սսուանիկ զորաց:

Ներսե՞հ Քաջրերունի, և Փարտման Մանդակունի, և Արսէն Բնձայացի, եւ Այլուկ Արկունի, և Վրէն Տաշրացի, և Ապրամ Արծրունեացն, և Շահուապետն արքունի, եւ Խուրս Սրուանձտեաց եւ Քողեանիքն եւ Ակէացիքն և Տրոպատունիքն և զօրին Ռըշտունեաց և ամենայն գործակալքն արքունի խրավանչիւր զօրօքն հանդերձ:

451 4. Առքա ամենեքեան համագունդք հասանէին ի գործ պատերազմին ի գաշտն Արտազու<sup>1</sup>, և լինէր հանդէս գերշեց

1. Փարպեցին կըսէ թէ Ալարդանաց զօրքը Զատկական տօնը իրենց ընտանեաց քով կատարելու համար երթեալ էին ի տունս իրեանց: Վարդան լուր խրկեց նոցա, որ տօնը կատարեն ու աճապարեն իր հետը երթեալու Պարսից դէմ, որը հասեր էին ի Հեր և ի Զարաւրանդ: Հայք եռանդեամբ զօրծագրեցին զօրավարին հրամանը. յախժամ Վարդան միաբանութեամբ աւագանւոյն խրկեց զսեպուն Առանձար 300 հեծելովք լրտեսելու զրանակն Պարսից. սա եկաւ տեսաւ զմշնամի բանակն և անոր հզօր վերջապահ թեղին վրայ ինալով և զրագումն հանձը ի սուր և զայլս փախտական արարեալ արկանէր ի զօրն Պարսից, և ննին դարձեալ ողջանդամ հասանձը ի գունդն Հայոց: Վարդան փոթուաց ժամ յառաջ համենի ի Հեր և ի Զարաւրանդ գաւառ, ու զարնուի Պարսից հետ անդ ի սահմանազուին, որպէս զի ինչ որ ալ ըլլայ պատերազմին ելքը — յազմութիւն կամ պարտութիւն-Հայոց աշխարհը սպանութեանց և յարձակմանց ասպարէկ ըլլայ: Բայց Պարսից գունդն առաւել ստիպելով կը քալէր ու արդէն հասեր էին ի գաւառն Արտազ և հում ի զեօնն որ կոչի Աւարայր: ի շրջափակ տեղի Տղմուռ դաշտին, զոր ընտրեցին յաղագս երկիւզի զօրացն Հայոց: ամուր ապաստանի անձանց համարէին պատշաճ, և ի միջին որոր ածեալ զակիշ բանակէին: ինկ վարդան 1ին, Պետական

տէի օրը հասաւ անդ և Պարսից մոռաբանակեցաւ:

Փարպեցով տուած ոյր տեղեկութիւնք յոյժ համառօտ և անբաւական կը թուին մեզ: Արտաշառէն ցաներ և Զարաւրանդ՝ յա է արդի խոյ, ուղիզ գընզ 150 բիլանդրի շափ և արդ դըմուարին է հաւատալ, որ Վարդան, որ ատկաւին Արտաշառայ մէջ կամ մասերը կը գտնուէր, այսքան հեռու խրկէր զԱռանձար, միանի 300 հոգուով և սա ալ թշնամի հզօր թեռյ մը հետ զարնուէր: Մնաց որ պատկական տօնէն անմիջապէս ետքը ճամբար ելել հրամայեր էր զօրացը ու ամէնքն ալ հնազանդէր էին պատուէրին, ինչպէս կըլլայ ուրեմն որ մէկ ու կէս ամիս զնէ զալու համար յԱրտազ, որ աւելի մօտ էր քան պահը և ուրանօր առ առաւելն շորս հինգ օրուան մէջ կընար ժամանել:

Եղիշեայ պատմածը, մնչպէս և զինուուրական շարժմանց և գործոց նկատմամբ ամէն ըսանները, շատ աւելի մանրաման և լուրջ է. բայց որպէսէտե երկայն ճառերավ կընդուիջէ զայն, որ ընթերցողին ուշադրութիւնը կրնան ցըրուել, աստ կ'ամփոփենք, աւելցունելով միայն այն թուականները և աշխարհագրական տեղեկութիւնները զորս տապ մեզ Փարպեցին:

Իը յիշէ ընթերցողը որ առաջի տարին հայք զօրքը յերիս գունդու բաժանեցին. Վարդանայ հետ Պարբանդ գընցողը «սակաւաձեռն էր և ոչ բազ-

Համարուն վախոսւն և վեց հազար այր՝ ընդ հեծեալ և  
ընդ հետևակ: Եկին ընդ նոսա սուրբքն Յովուէփ և Ղևնդ-

մաթիւ ։ (Յ. Գ. 55). Վասակինը իւր համախոններէն կը բաղկանայր. մէկ փոքրիկ մասն մի զօրաց բերդերու. մէջ ցրուած էին, իսկ քրիստոնէութեան համար մարտնչիլ ուզող Հայոց մեծագոյն մասը, որ առաջին և սուռարագոյն դուռդը կը կազմէր, ի Հեր և ի Զարաւանդ Խրկուած էր ընդ հրամանատարութեամբ Արծրունեաց իշխանին ներշապհոյ. և Հումարէին զնա պահապան աշխարհին մերձ ի սահմանն Ալորատական աշխարհին ։ Այս գնդիս համար էր, որ Վասակ կը զիւր առ մարդկանն ձորաց Ալորէաս. և հեռացուցի ի կողմանու Հերայ և Զարաւանդայ ։ Յ. Գ. 53 և 55: Վարդան 450ին աշնան ժամանակները ի Դարբանդայ յաղթական դարձած ատենը, ձևեռն վրայ հասեր էր և որովհետեւ Վասակ պաշար չէր թողուցեր, «ոչ կարէր զմիով տեղեաւ համագունդ զզօրսն դարմանել, այլ սրփուէր տարածանէր ընդ զաւաս զաւաս աշխարհին առ ի հանդիս հմերցին. պատուէր հրամանի տալով կազմ և պատրաստ լինել դարնան ։

Զատկական տօնը (451. Ալորիւ 13) կատարելէն յետոյ, ամենայն ոք պիտի փութայր գալ հասանել յԱրտաշատ: Վարդան շատաղեցաւ ի քաղաքի, թէ պէտք բանակը շատ պականեր ունէր ու առաւ զայն իշեցուց ի դաշնան Ալորագու, ուր միացաւ Ներշապհոյ զնդին հետ, որ կը սպասէր անդ տարիէ մը ի վեր: Եւ որովհետեւ յԱրտաշատայ ցՄակուայ գետ 100 հազարամերէ է, Վարդան հասած ըլլալու է Ալորիւ ամսոյ վերջերը: Օրբելեան աւ կ'ըսէ. և անցեալ յԱրտաշ գաւառ, յետ ամսօրեայ աւուրց եղե խմբումն մեծ պատերազմին յորում պըսակէցաւ: Ա. Վարդան ։

Արկին հանապարհ տանին ի Պար-

կաստանէ յաշխարհն Արտատեան: Առցան ամենաէն հարժն և կարճն Երասխայ աջակողմեան ափունքն են: Ի հին ժամանակս զետեղեցին Հայք այդ ճանաւարին վերին մասին մէջ, և մեծագոյն ապահովութեան համար՝ Երասխայ կը ռանկը, յԱրմաւարի իրենց ամրացեալ մայր քաղաքը, զոր յետ գարուց փոխադրեցին հետագեանէ յԱրտաշատ, ի Վաղարշապատ, ի Դուբին, ինչպէս և նորագոյն տեարբ երկրին՝ յԱրեան: ՅԱրմաւրէն կամ յԱխուրեանի խառնուրդէն վեր՝ Երասխայ դաշտը կը սեղմի յորժ, աստ էին և Երուանդակերս, Երուանդաշատ և Արտագերսն անուանին:

Երկրորդը Բագրեանդայ կամ Պայտագիտի հանապարհն է, կրկին լեռնազօտեաց մէջ ամփոփեալ, զոր զնան այժմ ի Դավրինէ յԱրզրում երթեւեկող կարաւանի: Բագրեանդայ մէջ Շահապիվանի մօտերը կը գտնեւէր միշտ զօրաւոր բանակը մը, բանդի էր «բոն բանակի տեղն Արշակունեաց»: (Բուզանդ էջ 117). Նշանաւոր էին Վազարշակերտ (Թոփրագ-զալէ) և Արծափ (Արդապ) բերդաւանքն:

Արդ այս ճանապարհներէս զնըն որ ընտրէ Դավրինէի և Խոյի վրայէն եկող բանակը, պարտ է Արտազու դաշտին մէջէն կամ բովէն անցնիլ: Երասխայ աւելի վարերէն կամրջաւ անցնիլն զըսուարին էր և անօգուտ, որովհետեւ կամ յիննեաց աշխարհին լեռնային լարիւրինմուսին մէջ կը հանէր և կամ առաւել և յարեւելս՝ յանապատն Մուղանի: Շատ շատ մարմի էր Խոյէն ուղղակի դեղ ի վան յարձակիւ. բայց և այնպէս վատնպաւոր էր թշնամի բանակ մը ձգել յԱրտագ, որ ուզած տաները կընար պարսկական զօրաց կռնակը բըռնել կամ կողմնակի զարնել ու ամենայն

*երէց, բազում և այլ քահանայք, և իս բազմոգոյն պաշ-*

*հազորդակցութիւն կորել նորա կեդրո-  
նին հետ ։ Ուստի յլլատազ պէստք էին  
գիմառորել Հայք զՊարսիկս եթէ կու-  
զէին արգիլել նորա Հայաստան մօնելը,  
ինչպէս և յլլատազ դիմելու են Պար-  
սիկը եթէ Հարկ ըլլայ պաշտպանել  
զլատպատական ընդդէմ թշնամոյ մը,  
որ թէ ի Բագրեմոնդայ և թէ յլլատա-  
խայ դաշտն կընայ անդ հասանել։ Աւա-  
րայրի պատերազմէն 1063 տարի ետքը,  
այս է 22 օգոստոս 1514ին, Եավուղ  
Սուլթան Աէլիմ Շահ Խամարի բա-  
նակները նոյն տեղերը խորտակեց, քան-  
դի Զալաբրանի դաշտը նոյն ինքն Շա-  
ւարչականն է։ Աէլիմ Բագրեմոնդայ և  
Վակուայ ճամբով կու գար, Խամարի ալ  
խոյի։*

*Դառնանդ արդ մեր պատմութեան։  
Վարդան յլլատազ Համելուն պէս զս-  
րահամար ընել տուաւ, 66.000 հեծեալ  
և հետեւակ յանձն առեր էին իրեն բախ-  
տակից լինել։ Բայց ո՞րը զէն շաներ,  
ո՞ր հանդերձ շատերն արտիրնը վա-  
զեր եկեր էին և լաւագոյն էր մարզել  
և կազմել զնոսա ի սահմանագլուխն՝  
թշնամոյն մօն, քան յլլատաշատ ուր  
կընայն ժուլանալ։ Վարդան ըստ կարի  
պահաներն լեցոց և հուսկ յետոյ յոր-  
դորելով և քաջալերելով զօրականն,  
և տեղեն ի դարսին ։ յարմար տեղ մը  
զգօրմն զետեղեաց ։ ու այնուհետեւ ու-  
շագրութիւնը պյուտէին կազմելու տուաւ։*

*< Յետ բազում աւուրց > Նիւսալա-  
ւուրտ եկեալ հասաւ ի Հեր և ի Զա-  
րաւանդ ։ բայց որովհետեւ թշնամին շատ  
հեռի չեր, գաւառին մէջ կանկ առաւ,  
բանակը հաստաղեց և ամրացոյց իրեւ  
զքաղաք, և սկսաւ ասդիս անդին դուն-  
դեր իրկել ասպատակութեան համար։*

*Երկու բանակները գեռ իրարու մօ-  
տեցած և իրարու դէմ ճակատած չեին.  
նոյն միջոցին Առանձոր ասպատակողաց*

*վրայ կ'երթայ ու փախստականս առնէ  
զնսաւ ի բանակն Պարսից։*

*Վասակ վերտոնին բանակցութեան կը  
մօնէ վարդանանց հետ ։ Երցներ կը  
խրկէ երգառակութիւն ձգելու եթէ  
շյաջողին համոզել։ յ Բազում աւուրց >  
այդ բանակցութեամբ անցան։*

*Երբ Նիւսալաւուրտ կը տեսնէ, որ  
անհնարին պիտի ըլլայ համոզել զշայս  
եթէ ոչ զինու զօրութեամբ, զամբա-  
ցեալ բանակատեղին կը թողու ու գէպ  
յառաջ կու գայ յեզր Տղմուտ գետոյ ու  
կը ճակատէ զջրտն։*

*Վարդան ի ժողով կը գումարէ զաւա-  
գանին և այլեայլ զնդից զօրագլուխ-  
ներն որոշելէ ետքը հրաման կու տայ,  
որ իւր զօրին ալ յառաջ խաղան ու ճա-  
կատին դէմ յանդիման Արեաց գնդին,  
առ ափն Տղմուտ գետոյ, ի 1 Յունիսին,  
451։*

*Ճատեեալ առաւօտուն բանակները կը  
զարնուին։*

*Արդ կը մեայ մեզ պատերազմի տե-  
ղուն դրիցը վրայ խօսիլ և ճշգել ոյն  
աշխարհագրական անունները, զոր տան  
մեզ Եղիշէ և Պազար։ Պատերազմին  
վայր Մեծ դար մի է ընդ մէջ Արտազ  
և Հեր և Զարաւանդ գաւառաց։ Այդ  
մեծ դաշտով կամ և լայնատարած տեղիք  
պատերազմին ։ Արտազու կից կամ ա-  
նոր մասն ըլլալուն համար, ասի Ար-  
տազոյ դաշտ, և աւելի հին ժամանակաց  
մէջ Շաւարշակոն դաշտ։ Դաշտին մէջ  
գետ մի պիտի ըլլայ՝ Տղմուտ որոյ մէկ  
կողմը Հայք՝ միւս կողմը Պարսիկը բըռ-  
նեցին։ Կ'եւը գժուարութիւններ կը մա-  
տուցանէ Պարսից, բայց Հայք աւելի  
հմուտ վայրացն դիւրաւ կ'անցնին։ Տղ-  
մուտին ոռոգած մասն կամ դոնեա  
սորա հարաւային ափանց Փարազեցին  
և Տղմուտ դաշտ ։ կ'ըսէ, իսկ Եղիշէ  
կ'անուանէ զաշտ Աւարայրի ։ վասն*

տօնեայք<sup>1</sup>: Քանզի ոչ ինչ զանդիսեցին և նորա դալ ընդ նոսա ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական համարէին զիսիւն, այլ հոգեսր առաջինութեան. ցանկային մահակից լինել քաջ նահասակացն:

5. Ական սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն և ասէ. «Ի բաղում՝ պատերազ-

զի Աւարայր, ըստ Փարպեցոյ, զիւզ մի էր, և այդ գիւղից մոտ բանակեցան Պարսկէք ի լրտափակ տէկի Տղմուս դաշտի Դաշտին եղեքը (այս է ըստ աշխարհագրական քարտիսից՝ արևմտեան և հիւսիսյին կողմերը) կը դանուին և լեռնագաշտը և ամուբը ձորոց» :

Էջմիածնայ Աւարատ ամսագրին մէջ (1872. Նոյեմբեր և Դեկտեմբեր)՝ Պ. Գալուստ Շիրամազանեան, որ այն կողմերը բազում անձամ ճանապարհորդեր էր, կարեար տեղեկութիւններ կու տայ մեզ: Յարեել Մասեաց և ի հիւսիսյ Մակուայ գետոյ, կայ արդարե տափարակ տեղի մը, զոր մարթ է նախնեաց Գերատոյ դաշտն համարել, և որ շարունակութիւն մի է Շարուրայ դաշտին յորմէ կը բաժանի Երասիսաւ: Բայց ըստ քննութեանց Պ. Շիրամազանեանի այդ Գերատոյ կամ Մակուայ դաշտը չէ Աւարայրինը, ըստ որում չէ լրտափակ ու անյարմար է պատերազմի: Մակուայ գետն անցնելէ եռքը, գետ ի հարաւ երթալով, կը հանիս, ասէ, երկրորդ դաշտի մը, որ զիստուոր գիւղին անուամբը մարթ է կոչել զնա Քարաշեադին: Ասմ երկրորդ դաշտ ալ կը խանուու երրորդի մը ճետ, զոր այժմ Զորսի դաշտ կը կոչեն, և որ կը զատուի յերկրորդն՝ միայն Ազուու գետով: Բայ թագէի վանակնաց՝ արդ Ազուն է Տղմուս գետը, և լեռներով շրջափակ Զորսը՝ Աւարայրի դաշտը: Ուստի Պարսկէք Ազուն և Խոյ գետոց մէջուեղը Զորսի դաշտին մէջ, իսկ Վարդանակը նոյն դաշտին Ազունյի հիստոսակողմը

դանուող Քարաշեադինի մասին մէջ ըստ նական ըլլալու են: Վանականք ի հուց հետէ սովորութիւն ունին, Քարաշեադին անցնելէ եռքը Վարդանանց շարականը երգելու: Մեր ճանապարհորդը Զորսի դաշտին հողը կաւային և կարգէ դուրս տղմուտ տեսեր էր, և ամենայն կերպով յարմար բանակ մը պատապարելու: Յարեելու Զորսի դաշտին է աւանն Մառական: Այս կողմերը նշանաւոր է այժմեմի պորտին արտադրած մուշկը կամ քարացեալ արիւնը, որ գեղի համար սուզ կը վաճառի: Բամկական աւանդութիւն մը կըսէ, թէ այդ մուշկը Ապրագանց ապատերազմէն առաջ չէր ըլլար, և թէ այծեմունք այդ սրբազան տեղեաց վրայ երկք օր արածուելէ եռքը կը սկըսին արտագրել զայն: — Պայազիսի և Մակուայ և սոցա գեղերուն Հայք՝ տարին մի անգամ սաստիկ պահէ կը պահն սուրբ Վարդանայ համար Հսկուելու բրի գերշերը: Արտազու բնակիչներն Ալանաց երկրէն գաղթեալ էին: «Հրամայեալ Արտաշեսի (այս է որդույ Անանտորկոյ, Փրիստոսի երկրորդ դարուն սկիզբը) բնակեցուցանել զիլանն ի հարաւոյ յարեելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարչական գաւառ, ի վերայ պահելով զրնիկ անունն Արտազ, քանզի և աշխարհն սւստի գերեցանն Արտազ կոչի մինչև ցայսօր մամանակի»: Խորենացին Բ. Ճեկի վանուց Պ. Շիրամազանեան տեսեր էր Շաւարչան քաղաքին աւերակները:

1. Այս է սարկաւագունք, սազմուեր դուզք, զրակարդացք: Տես Յ. Ե. ՅՕ:

մունս՝ մտեալ է իմ և ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քա-  
ջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք՝ զի նորա  
մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթող գտեալ  
եմք և ոչ յաղթեալք: Եւ միանդամայն այն ամենայն էին  
մարմնայ պարծանկք: Քանզի հրամանաւ անցաւոր թա-  
գաւորին մարտնչաք. որ փախչէր, վասանուն յաշ-  
խարհի երեկը, և անողորմ մահ ի նմանէ գտանէր. իսկ  
որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժա-  
ռանդէր, և պարզես մեծամեծս յանցաւոր և ի մահ-  
կանացու թագաւորէն ընդունէր: Եւ մեք իսկ աւասիկ  
յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս բազումն.  
և բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ  
և պարզես մեծամեծս: Անարդ և անօդուտ զքաջութիւննն  
համարիմ, և առ ոչինչ զպարզեսն զբազումն. վասն զի  
ամենէքեան խափանելոց են: իսկ արդ եթէ վասն մահ-  
կանացու հրամանատուին զայն արութիւնս կատարէաք,  
որչափ ևս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ, որ  
տէրն է կենդանեաց և մեռելոց, և դատելոց է զամե-  
նայն մարդ ըստ գործոց իւրոց: Ապաքէն եթէ կարի  
շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց  
հմք ի մարմնայ աստի, զի մացուք առ Աստուած կեն-  
գանի, որ ոչ ևս երանիցեմք ի նմանէ:

6. «Արդ ազաշեմ զձեզ, ով քաջ նիզակակիցք իմ,  
մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս  
արութեամբ, և գահու ի վեր ըստ հայրենի պատուայն <sup>2</sup>.

1. Քուշանաց երկրին պատերազմերը  
կակնարկէ և ոչ տարի մը յառաջ ձու-  
րայ մարզպանին հետ եղածը. բնապէս  
որ քիչ մը տառի ալ յայտնի կըլլայ:

2. Վարդանայ հետ եղող տանուտեարց  
մէջ իրմէ բարձրաստիճան Արծրունեաց  
իշխանը միայն կար, բայց Մամիկոնէից  
ցեղէն աւագագոյն գերդաստաներէ ալ  
բազում սեպուհք էը գանուէին: Բազ-  
դատելով լրդիչէ և Փարագեցոյ տուած  
անուանց կարգը, մարթ է կարծել թէ  
պատերազմին տանեները գլխաւոր նա-  
խարարաց գահոյը հետագայ կարգն ու-  
նէին: Աիւնիք, Արծրունիք, Ոչտունիք,

Բագրատունիք, Խորիսոռունիք, Մամի-  
կոնեանք. (Եղիշէ Յ. Բ. 61. Յ. Գ.  
47. 54. Յ. Ե. Յ. Յ. Ը. 131. — Փար-  
պեցի Էջ 126. 134 և 256): Բառ գահ-  
նամակին Խորսրովայ՝ Ա. Բագրատունիք,  
Բ. Խորիսոռունիք, Գ. Արծրունիք, Դ. Մա-  
միկոնեանք, Ե. Սիւնիք, Ուշտունիք շատ  
ես մեացեր էին: իսկ Վասարայ գահնա-  
մակին մէջ՝ Ա. Սիւնեաց տէր, Բ. Աս-  
պեան, Գ. Արծրունեաց տէր, Դ. Մամի-  
կոնեաց տէր, Ե. Շահապն Կափաց, Զ  
Մոկաց տէր, Հ. Ուշտունեաց տէր, Խոր-  
իսոռունեաց անունը չկայ:

բայց յորժամ՝ ձերով կամօք և յօժարութեամբ<sup>1</sup> տռաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ և բազծալի թռեսցին բանք իմ ի ըսելիս մեծամեծաց և փոքունց: Մի երկուցեալ զանդիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք. զի թէ տացէ Տէր յազթութիւն ի ձեռս մեր, աստակեսցուք զզօրութիւնն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեանն, և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան՝ վասութիւն մի խառնեսցուք:

7. «Մանաւանդ զի անմնուաց է ինձ, յիշելով զիմ՝ և զոմնաց ի ձէնջ, ի ժամանակին՝ զի զանօրէն իշխանն խարեցաք, պատրեցաք իրրե զմանուկ մի տղոյ անպիտան. իրը այն եթէ ի վերինն երեսս զկամս նորա ամբարշտութեանն կատարեցաք. բայց ի ծածուկ զիսրհուդութիւնին վկայէ մեզ, որպէս անքակ կացեալ եմք ի նմանէ: Զոր և դուք ինքնին իսկ զիսէք, վասն սիրելեաց մերոց՝ որ ի մեծի ներդութեան էին, հնարս խնդրէաք վասն յանդորր հանելոյ. զի նոքօք հանդերձ մարտ եղեալ կուեսցուք ընդ անօրէն իշխանին վասն հայրենի ասատածատուք օրինացն: Եւ իրրե նոցա ոչ ինչ կարացաք օգնել, անհնար լիցի ոյս՝ եթէ վասն մարմնաւոր սիրոյ զԱստուած ընդ մարդկան վոխանակիցելք :

8. «Իսկ արդ յերկուս և յերիս կոխւս Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ, որպէս զի զանունս քաջութեան ժառանգեցաք, և զզօրսն արքունի չարաշար հարաք, և զմոդսն անողորմ աստակեցաք, և զպղծութիւնն կոազաշտութեանն ի տեղեաց տեղեաց սրբեցաք, զանօրէն հրաման թագաւորին եղծաք ապականեցաք, զիսու վութիւն ծովուն ցածուցաք, լեռնացեալ ալիքն դաշտացան, բարձրագէղ փրփուրն սպառեցաւ, դազանացեալ

1. Ապրդան արդէն սորատելստ և սպարապետ էր. բայց անիշխանութեան առնեն այդ պաշտօնդ կարեռութիւն մը շունէր եթէ նախարարք և զօրքը վերըստին չհաստատէին զայն : Մօտակայ

որտնաւթիւնն գաղարեաց: Որ ի վերայ ամնոց որտայր, նկուն եղեալ՝ քան զավորական բնութիւնն ի վայր գտաւ ընդ մեզ խօսելով: Որ բանիւ հրամանաւ կամէր կատարել զշարութիւնն իւր ի վերայ սուրբ եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նիղակաւ և սրով կառի: Որ իբրե զհանդերձ կարծէր ունել մեզ զբրիսաննէութիւնն, արդ իբրե զգայն ի մարմնոյ՝ չկարէ շրջել, թերիս և ոչ այլ կարասցէ մինչև ի կատարած: Քանդի հիմնաք սորա հաստատութեամբ եղեալ են ի վերայ վիմին անշարժութեան, ոչ ի վերայ երկրի, այլ ի վեր յերկինս, ուր ոչ անձրեք իջանեն և ոչ հողմք շնչեն և ոչ հեղեղս յարուցանեն: Եւ մեք թէպէտ և մարմնով յերկրի եմք, այլ հաւատովք յերկինս եմք շննեալ. ուր ոչ ոք կարէ հասնել յանձեռագործ շինուածն Քրիստոնի<sup>1</sup>:

9. «Հաստատաւն կացէք յանշուշտ զօրադրուխն մեր, որ ոչ երբեք մուտասցի զգործս նահատակութեան ձերոյ: Ո՛վ քաջք, մեզ այս մեծապէս է՝ զոր կատարեաց Աստուած ի ձեռն մերոյ բնութեանս. յորում և զօրութիւնն Աստուածոյ մեծապէս երիի: Զի եթէ զայլս կոտորելով ի վերայ աստուածային օրինացն՝ պարծանս անձանց ժառանգեցաք, և զբաջ անուն ազգատոհմին մերոյ թողաք եկեղեցւոյ, և փարձուց ակնկալութիւն ի ջեռանէ է, որ պահի իւրաքանչիւր ումեք ի մէնջ ըստ սրտին յօժարութեան և ըստ գործոց տալաջարկութեան, որչափ ևս առաւել եթէ մեք մեռանիցիմք ի վերայ մեծի վկայութեան ջեռան մերոյ Յիսուսի, որում և երկնաւորքն են ցանկացեալ, եթէ գոյր հնար: Եւ զի այս պարզեք ոչ ամենեցուն է անկ, այլ որում պատրաստի ի բարերար ջեռանէն, և մեզ այս ոչ եթէ յարդար գործոց ինչ պատահեաց, այլ յաննախանձ պարզեատէն. որպէս և ասէ խոկ ի սուրբ կատակարանին. Ուր

1. Եղէշէ մամնաւոր բերմոնք մի ունի իւր միտքը ետևէ երեք և աւելի ձեռվ կամ նմանութեամբ բացատրելու, որուն չորս հինգ օրինակ ունիմք միայն այս հատածիս մէջ. հեղենակին երեակայութեան տարութեան և բեզմաւորութեան ապացույց: Ապա-

նայ բերանը զրուած ճառը շատ ճարտասանական է և գեղեցիկ. և թէպէտ Եղէշէի շարադրութիւնն ըլլալուն տարակոյս չկայ, բայց և այնպէս անոր գըլիսւոր իմաստներն իրապէս բացատրուած ըլլալու են ի Ապարագետէն:

առաւել եղին մեզքն, անդէն առաւելան շնորհքն Առաջածոց :

10. «Եւ մեղ կարի քաջ ի գէտ ելանէ հրաման պատասխանւոյս այսորիկ. որպէս և առաւելապէս երեւցաք մարդկան ամբարշտեալք, կրկին առաւելապէս երեսոցք արդարացեալք մարդկան և հրեշտակաց և հօրն առենեցուն: Զի որ օր լուսն ապագէն զմէնջ մարդիկ ի գործ ամբարշտեանն, արտասուս բազում հեղան ի սուրբ եկեղեցւոյն, և ևս բազմագոյն ի մէջ սիրելեցն սերոց: Նա և ընկերք մեր սրով սրամուեալ սպառնային մեջ, և մահ դառնութեան ի վերոյ հասուցանել կամէին, և ծառայքն մեր սարսուցեալ<sup>1</sup> փախչէին ի մէնջ: Եւ հեռաւորաց, որոց լուեալ էր զանուն քրիստոնէալութեան մերոյ, քանզի ոչ էին տեղեակ խորհրդոցն մերոց, ողբս ի բերան: առեալ անդագար աշխարէին զմեզ, և անդիսութեամբ հայհոյութիւնս բազումն խօսէին զմէնջ: Եւ որ մեծն քան զամենայն տասցից. ոչ միայն մարդիկ յերկրի, այլ և հրեշտակք յերկինս զերես իւրեանց դարձուցին ի մէնջ, զի մի տիսուր դիմօք հայեսցին ի սեղ :

11. «Եւ ահա եկին եհաս ժամանակ, զի դամենայն զկեզտ անուան ի մէնջ ի բաց բարձցուք: Յայնժամ իրրե զիւախծեալ սգաւոր՝ յոզի և մարմին էաք արտմեալք, այսօր զուարթացեալ և զգաստացեալք յերկոսեան առ հասարակ եկիք լլացեալք. քանզի և զջէրն բարերար ընդ մեղ տեսանեմք յառաջնորդութիւն. չէ մեր մարդ զօրավար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց: Երկիւզ՝ թերահաւատութեան է նշանակ. զիւահաւատութիւն մեք ի մէնջ վաղ մերժեցաք, ընդ նմին և երկիւզն փախիցէ ի մոտաց և ի խորհրդոց մերոց »:

12. Զայս ամենայն առագինի զօրավարն խօսեցաւ ընդամենայն բազմութեանն. դարձեալ և զմի մի ի նոցանէ քաջալերէր ի ծածուկ և սրամանդէր, և զամենայն պակասութիւն աղքատութեան նոյր: Որոյ ոչ ինչ գոյր զօրականին, յանձնէ և յընկերաց մասուցանէր. որոյ զէն

1. Տես Յ. Գ. Սարտ Հայք բազանուն և յորմէ սարտի՛ ցրտութիւն. սարտրար՝ արդի պարսկերէնէ ցուրտ, սառնացուրտ.

ցրտագոյն, սարտրում՝ ցրտագին:

չեր, զին պատրաստէր. և որում՝ հանդերձ պիտոյ էր, հանդերձ զգեցուցանէր, և որում՝ երիւար՝ երիւար տայրը: Եւ առաս ոսճկօք<sup>1</sup> ուրախ առնէր զամենեսեան, և զուարթադին զինքն ցուցանէր ամենեցուն: Եւ ըստ պատրապմական կարգին զքաջ արանց զիշտակարանս հանապաղ երկրորդէր առաջի նոցա. զի և ինքն իսկ տեղեակ էր ի մանկութենէ իւրմէ ուուրբ կտակարանաց: Զոր և ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն մակարայեցւոց ընթեռնոյր ի լոելիս ամենեցուն. և յորդառաստ բանիւք զելս իրացն իմացուցանէր նոցա, որպէս մարտուցեալ կուեցան ի վերայ աստուծատուը օրինացն ընդդէմ թագաւորին Անտիոքացւոց<sup>2</sup>: Զի թէպէտ և ի նմին կատարեցան մահուամբ, սակայն անուն քաջութեան եւ կաց մինչև ցայսօր ժամանակի, ոչ միայն յերկրի, այլ և անմնուաց յերկինս: Ես և զայն յուշ առնէր զօրականին, որպէս ազգառուչմն Մատաթեռայ քակուեալ բաժանեցան ի միութենէ նորա, դարձան ի հրաման թագաւորին, շինեցին մեհեանս, մատուցին զոհո պղծութեան, խոտորեցան յԱստուծոյ, և ընկալան զապատիժս պատուհասի մահուան ի ուուրբ միաբաներցն: Իսկ Մատաթի և որք ընդ նմայն էին՝ ոչ ինչ լքեալ թուլացան, այլ ևս առաւելապէս պնդեցան, և ձեռնամուխ եղեն ի զործ պատերապմին բազում ժամանակս: Զայս ասէր, և անզէն ի զաշտին զտեղի առեալ՝ զօրան զետեղէր, և յամենայն կողմանց տակաւ զայրուձին կաղմէր<sup>3</sup>:

13. Իսկ յետ բաղում՝ աւուրց<sup>4</sup> զօրադլուխն Պարսից խաղայր դայր ամենայն հեթանոսական բազմութեամբն,

1. Ուութիկ՝ ոչ թոշակ, դրամ<sup>5</sup>, այլ պարէն պարէն, ուուելիք, ուձէ, թույլինար. պարսկէրէն րօփի չը յօց յոզ՝ և օր:

2. Այլ ընթերցուած Անտիոքոսի. երկուքն ալ ուզիզ են. վան զի Անտիոք մայրաքաղաք էր Աեւեկիացց իշխանութեան. և Անտիոքոս Եպիփան թագաւորէր յաւուրս Մատաթեռայ (167 նախ քան դՔրիստոս): Եպիփանի յաջորդեց Անտիոքոս Եւզարիք, որոյ ժամանակն է Յուդա Մակարէ:

3. Անդրութին ամրողջապէս կազմելու առեն չէր անեցած Վարդան և հետեակ զօրաց պէս ալ դիրին շէր. մանաւանդ զի սպառապէն էր:

4. Բայ Փարագեցւոյ Վարդանայ բանակը Պարսից բանակէն վերջն հասա: զնոսա անզպարաստ ու ցրաւած դաւա, ուր կընար նոցա մեծ վեաս հասուցանել եթէ անմիջապէս յարձակէր վրանին. Թէոդոսիոս տակ՝ «իսկ յետ ոչ բազում աւուրց»<sup>6</sup>:

և եկեալ հասանէր յաշխարհն չայոց ի չէր և ի Զարաւանդ գաւառ : Եւ անդէն ի գաւառին զակղի առեալ նորա, բանակ բարեկը, փաս հասանէր, պատնէշ կանդնէր, շերտաւոր փակէր, ամբացուցանէր իրքի զքաղաք ամենայն պատրաստութեամբ : Գտնդ բազում հասանէր

1. Հմաւալաւուրս ի Հեր և ի Զարաւունդ հասնելէն եռքը առ ինքն կոչեց զնիզակակիցս վասակայ, որը յահէ Վարդանայ՝ Արծեաց յեռնային նահանգը փախած էին. վասն զի Վարդան բանացեալ ունէր զթագաւորանիսս տեղիսն միաւ բանութեամբ նախարարացն, որ ոչ քահցան ի սուրբ ու խաչէն. (Տես Յ Ե-2. Յ. Զ. 4.) Պարսկական բանակը ողջակի Պարսկաստանէ կու գար, որովհետեւ Միջներօն մի կնապահու միայն բերած ըլլալու էր իւր հետք ի Փայտա-կարան, ու յեռոյ միատեղ տարած: Հեր՝ և այժմեան խոյ. և Զարաւունդ՝ արդի Ապգաւաս (Տեղագիր 104, 106):

2. Աւասիկ ամենապիտանի աեղեկ-  
կութիւններ, որը կը ցուցանեն թէ Ե-  
ղիշէ որքան ընտանեցած էր բանակաց  
գործաց: Ասկէ կ'իմանամբ թէ պարուկա-  
կան զօրքը, ինչպէս Հռովմայեցոցը, երբ  
ազանել պէտք ըլլար, անմիջապէս բա-  
նակատեղի մը կ'ընտրէր, որոյ բոլոր-  
ութը փոյ կը բանար, պատճէշ կը կան-  
գնէր, այս է փոսէն ելած հոգով կամ  
քարերով ըլլար կը չենէր փոսին ներբին  
եղեցը. և զայս ալ բանական չամա-  
րելով այդ ըլլածն հազարութին վրայ  
շերտեր կամ ցիցեր կը զարդնէր, և ինչ-  
պէս կ'ըսէ մեր պատճէշը «ամրացուցա-  
նէր իրեւ զբազաք ամենայն պատրա-  
սութեամբ»: — Օտար աղջիններէ ալ  
դիսեմք որ Ասանենամբ Հռովմական  
բանակաց նախկին կազմակերպութիւնը  
մասուցեր էին Պարսից մէջ: Վեգուտիս  
ուզմագէտ մատենագիր Հռովմայցի ի  
վերջ կրյս չորրորդ գործու, կը գանգատի  
որ Հռովմայցիք ի բազմաց հետէ թո-  
ղոցած են բանակատեղեաց բոլորակիք

փառ փարելու և ցից տնկելու սպասութեանը: «Եթէ այս զգուշութիւնները երեսն ձգած չըլլայինք, առէ, թշնամիք չէին համարձակեր ունեար լինել մեղ ի տուէ և ի գիշերի: Բնագէս որ եզաւ: Պարսիկ նախկին Հասկմայեցոց օրինակէն առւուտ քաղելով, իրենց բանականութին խրամաւ կը փակէն, և որովհետեւ իրենց երկրին հողը աւագուտ է չանդանար, խրամէն ելած աւագը կը լեցնեն խոշոր պարկերու մէջ, զոր հետեւնին ունին միշտ այս նպատակին համար, և իրարու վրայ գիղելով պատնէշ կը ձեւացնեն»: Գիրք Գ. Վ. պ. 10:

Ասլուք ասէ. « պատերազմի ժամանակ  
Հայ ամբացեալ բանականեղիէ աւելի  
հարգաւոր քան չկայ. քաղաք ինն է որ  
գորականը ամենուրիք կը շինէ ինքան»:  
Գիրք Ա. 21:

• Բանակը բոլորերէ» . — Բանակատեղոյն ձեւը կընար կիսարուոր՝ ձուածիքառակուսի կամ եռանիկինի ըլլալ . ըստ պատշաճութեան վայրիից : (Նոյն Գիրքը Ա. գլ. 23, և ծանօթ . Նիկարի Հաւասահման 1 տասնն Պատեհնապարագ) :

Ասորեն կը գնիկնք Հառվմայեցի զօրա-  
կանին Նկարագիրը . որ համաձայն է  
Եղիշէի պարսկական բանակին վրայ-  
տուած տեղեկութեան:

Հ առվմայեցի զինուորը միշտ ծանհ-  
բարեկան կ'երթար. հետո կը կրէր առե-  
նայն տեսակ գէնք, բանակելու. համար  
պէտք եղած կահը և կազմանք, պաշտը,  
մինչեւ անդամ՝ չերտե՞ր պատուիշաց առ-  
բութեան համար: Ամէն երեկոյ, ապանե-  
լու տեղերնին՝ կանոնաւոր բանակատեղի  
մը կը կազմէին, և սովոր էին միշտ  
ամրացնել զայն, սովորութիւն մը որ

ի զօրաց նորա, ասպասակաւ արշաւէր, յաւարի առնուլ կամէր զգաւառս բազումն:

14. Զայն իբրև լուան զօրքն Հայոց, սեպուհ մի յազդէն Ամաստունեաց՝ Առանձար անուն, ընտրեցին յամենայն զօրականէն լի իմաստութեամբ և քաջութեամբ: Ել ընդ առաջ նորա հազարօք երկու<sup>1</sup>, հար սաստակեաց զբազմութիւն գնդին, և զմնացեալոն ի նոցանէ անդրէն վախսական ի բանակն արկանէր: Եւ ինքն ողջանդամ այսրէն գառնայր, և լինէր տօն ուրախութեան սեծ յաւորն յայնմիկ զօրացն Հայոց:

15. Դարձեալ միւսանդամ ուրացեալն վասակ անդրէն ի հնարս հայթայիթանաց մնանէր ըստ առաջին կեղծաւորութեան իւրոյ. ըրջեցաւ ի ձեռն առա երիցանցն՝ զոր յատաջագոյն սասցաք, նոքօք հրամանաւ արքունի ի պատղամաւրութիւնն խօսէր, և երդմասմբ հաստատէր զքրիստոնէութիւնն անդրէն ունել: Եւ զայս արարեալ զբազում աւուրս՝ ոչ կարաց զմիարանութիւնն քականէլ, մանաւանդ զսուրբ ուխտ եկեղեցւոյն, որ ոչ էր հեռացեալ ի զօրականէն: Որպէս երանելի երէցն Պիոնդ հրաման առեալ ի սուրբ ընկերացն ի մեծէն Յովսեփայ և յամենայն մեծամեծացն, ի քահանացիցն և

անձանօթ էր Հելենաց: Եթէ գիշեր մը միայն կենալ հարկ ըլլար, և յանկարծահաս թշնամիկ շկասկածելու չափ ալ հեռի զանուեին, օրուան զերչը առաջին զործերնին էր բանակի չորս կողմը փոս բանալ, որոյ երեք մեդր լայնութիւն և երկու մեդրէ աւելի խորութիւն կու տային, և յետոյ խրամին ներքնակողմը բլրածն գիզուած հողերը կամրացնեին չերսիւք, որ խրաբանչիր զինուորին զինուց և կազմածոց մասն համարեալ էր: Յոյժ սամանելի՛ կեանք. և չկայ ազդմը որ նոցա հաւասար զինուորական աշխատութիւններ և զործեր կատարած ըլլայ»: Michel Chevalier. Economie politique. հատ. Բ. 188. Տես և Կիազպըն Հատ. Ա. 19:

1. Պէտք է կարդալ երկու հազար նե-

ճեղովք, որովհետեւ հետեակ զօրքը յարմար չէր գործոյն, ինչպէս որ ալ Փարպեցին կը վկայէ. թէպէտ Առանձարի 300 հեծեալ միայն որուեցաւ կըսէ, որ մեզի յայժ սակաւ կ'երեի. Տես Յ. Ե. 4. Ճանօթ. 1: Անգուս կը կոչուէր նախարարին կամ տանսւտեառն որդիքը և եղբարքը: Զգիտեմը թէ ինչ օրինոք կը բամնուէր նախարարին ստացուածքը իւր ժառանգաց մէջ: Այսչափս յայտ է թէ տանուտերը իւր գաւառին բարձրագոյն իշխան և գատաւոր և զինուորական հրամանատարն էր, տանուտիրութիւնը յանդրանիկ յանդրանիկ կ'անցնէր. բայց սեպուհը ալ կը մանակցեին խորհրդոց, ունեին իրենց յատուկ սեղնական իրաւունքը և ստացուածքը, բայց ոչ վարչական զօրութիւն:

ի զօրագլխացն, երաց զբերան իւր և ասէ բարձր բարձրառով առաջի հրեշտակացն:

16. « Յիշեցէք ամենեքեան զհարսն զառաջինս, որ յառաջ քան զժապումն որդւոյն Աստուծոյ յիւրաքանչիւր ժամանակս: Քանզի իրքի մերժեց և ընկէց զմեղ չարն յաստուածային տեղւոյն, գտաք մեք անկեալք ընդ անողորմ գատաստանօք բատ մեզացն յանցաւորութեան, որ ի կամն ազատութեան մերոյ զործեցաք զանարժանս, և զարարչական զօրութիւնն շարժեցաք ի վերայ մեր ի ցաստումն բարկութեան, և զսորումած գատաւորն յուզեցաք վրէժ առնուլ անաշառութեամբ յարարածոցս. մինչև հրաման առւեալ երկնային ծովոն հեզուլ ի վերայ ցամաքիս, և հաստատուն յատակք երկրիս ծակատեալ՝ ընդդէմ զհակառակսն գործեցին: Վերինք և ներքինք եղեն մեզ գործիք տանջանաց՝ առանց բարեխօսի վրէժ առնուլ յանցանաց մերոց:

17. « Ապաքէն արդարն Նոյ միայն գտաւ կտարեալ յազգի մարդկութեանս, որ ցածոյց զբանաւութիւն բարկութեան տերունեան ցամանն, և եզեւ սկիզբն առաջարկութեան առ աճումն բազմութեան մարդկային ազգիս: Դարձեալ և Աբրահամ ի փորձութեանն խրում գտաւ առաքինի, և զբնկալեալ պարզեան յԱստուծոյ՝ ինքեան ձեռօք փոխ անդքէն նմին մաստցանէր, վասն այսորիկ և յառակս ընկալաւ զնա Աստուծած. զի ի նմա ապաւորեալ տեսանէր զաներեւոյթ գալուաս որդւոյն Աստուծոյ, և զբմրոնումն անըրմոներոյն և զվենումն անմահին, որ իւրով մահուամբն խափանեաց զիշխանութիւն մահու: Եւ եթէ մահուամբ մահ մեռանի, մի երկիցաք մահակից լինել Քրիստոսի. զի ընդ որում մեք մեռանիմք, ընդնմին և կենդանանամք:

18. « Յիշեցէք, առաքինիք, զմեծն Մավսէս, որ մինչ հասեալ էր յարութեան հասակն՝ խորհուրդ սուրբ նահատակութեանն ի տիս տղայտութեանն երեէր նմա, և տուն թագաւորին եղիպատացւոց ի ծառայութիւն մտանէր նմա, և ակամայ դայեկութեամբ մնացանէր զնա. և ի ժամ փրկելոց զժապահուրդն ի նեզութենէն, միջնորդ եղի երկնի և երկրի, միանգամայն և աստուծ անուանեցաւ ի վերայ եղիպատացւոյն: Քանզի ուր գտաւ սուրբ խոր-

հուրդն զօրացեալ, անձամբ իւրավ վրէժ տռնոյր յեղիալ-  
տացւցն. իսկ ուր աստաւածային յայսնութիւնն ի վե-  
րայ նորա լինէր՝ ի ձեռն գաւազանին զործէր զմեծամեծ  
պանչելիսն: Եւ վասն սուրբ նախանձուն զոր ունէր՝ և հար  
զեզիապացին և ընդաւազեաց. վասն որոյ զմեծ անուն  
գնէր նմա, և առաջնորդ ժարովրդեանն զնա կացւցա-  
նէր: Եւ բազում այն է, որ հեղմամբ արեամբն արդա-  
րացաւ, և անուանեցաւ մեծ քան զամենայն մարգարէս.  
ոչ միայն զարարին թշնամիսն կասարելով, այլ զազդա-  
տոհմնն, որ փոխանակեցին զԱստուած ընդ որթուն յա-  
նապատին:

19. « Եւ եթէ նա ի հեռուստ այնպիսի վրէժ ինդրէր  
զարսեան որդւոյն Աստուծոյ, մեք որ ականատեսք եղաք,  
և մեծամեծ վայերեցաք յերկնաւոր պարգեսն չնորհաց  
նորա՝ ևս առաւել պարտիմք վրէժինդիր լինել մօտակայ  
ճշմարտութեանն: Որ եդ մահուամբ զանձն իւր ի վերայ  
մեղաց մերոց և արդարացոյց զմեղ յանհնարին դասու-  
պարատութենէն, դիցուք և մեք զանձինս մեր մահուամբ  
ի վերայ անմահ զօրութեանն, զի մի նուազք քան ըդ-  
վրէժինդիրսն զտանիցիմք:

20. « Յիշեցեք զմեծ քահանայն ֆենհնէզէզ<sup>1</sup>, որ սպան-  
մամբ երարձ զպղծութիւնն ի ժամ՝ պատերազմին, և  
յազգէ յազգ երգմամբ հաստատեաց զքահանայութիւնն:  
Մի՛ մտանայք և զուրբ մարգարէն զԵղիաս, որ ոչ կա-  
րէր հանդարտել հայել ի կռապաշտութիւնն Աքարու. և  
արդար նախանձուն իւրոյ զութ հարիւրսն ինքեան ձե-  
ռօք սատակեաց, և զերկուս յիսունն անշէջ հրոյն մա-  
տուցանէր լուցկիս. և զաստուածային վրէժն ինդրելով՝  
անըմբունելի և ահագին կառօքն յերկրէ ի յերկինս վե-  
րացաւ: Դուք՝ ևս մասին մեծի վիճակի հասեալ էք, զի  
ոչ ևս կառք սատարին ձեզ ի վերացումն, այլ ինքնին Տէրն  
կառաց և երիւարաց հզօր զօրութեամբ և որբովք հրեշ-  
տակօք ընդ առաջ եկեալ՝ ձեզ իւրաքանչիւր թես բուսու-  
ցանէ, զի նորա ուղեկիցք լինիցիմք և նմին քաղաքակիցք:

21. « Եւ այլ զբնէ ևս երկրորդեցից առաջի ձերոյ  
քաջ նահասակութեանդ, զի քան զիս տեղեկագոյնք և

Հմուտքը էք սուրբ կոտակարանացն։ Գաւիթ ի մանկութեան ժամանակին քարիւ կործանեաց զմեծ ըլուրն մնեղէն, և ոչ ինչ զանգիտեաց յահագին սրոյ հսկային. յըրուեաց զգունդս այլազգեացն, և ապրեցոյ զզօրսն ի մահուանէ, և զժողովուրդն ի գերութենէ. եղև անդրանիկ թագաւորաց իսրայելի, և անուանեցաւ հայր որդուոյն Աստուծոյ։ Նա անուանեցաւ առ ի պէտս ժամանակին, և գուք ճշմարտիւ ծնեալք ի սուրբ Հոգւոյն որդիք էք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի։ Մ'ի ոք զձեր բաժինն ի ձէնչ հաստանիցէ, և զձեղ օտարախորթ արարեալ՝ տարաբաժնին հանիցէ։

22. « Յիշեցէք զամենայն զօրավարսն իսրայելի զառաջինսն, զթեշո՞ն, զԳեդէովն, զՅեփիթային և զայլսն ամենայն. որք ճշմարիտ հաւատավք էին, հարին կոստորեցին զզօրսն հեթանոսաց, և սրբեցին զերկիրն ի պիղծ կառպաշտութենէն։ Եւ վասն հաստատուն արդարագործութեանն, որ ոչ ինչ երկմուեցին ի խորհուրդս իւրեանց, արեգակն և լուսին առանց ականջաց լուսն և կատարեցին զրան հրամանի նոցա. ծով և գետք ճանապարհ գործեցին առաջի նոցա ըստ ոչ սովորութեան. և բարձրացեալ պարիսպք քաղաքին ձայնիւ լոկով անկեալ կործանեցան։ Եւ այլքն ամենայն՝ որ ըստ հաւատոց քաջութիւնս կատարեցին ի դարս իւրաքանչիւր, զովեցան ի մարդկանէ և արդարացան յԱստուծոյ։

23. « Ապաքէն նոյն Ցէր է որ ի սկզբանէ մինչև ցայս օր և առ յաստ, և յաւիտենից յաւիտեանս, և անդրքան զամենայն յաւիտեանս։ Ոչ նորսպի, զի ոչ հնանայ. ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ. ոչ վոխի անյեղյեղուկ ընութիւնն Աստուծոյ. որպէս և ինքն իսկ առէ ըերանով սուրբ մարդարէիցն. Ես եմ, ես եմ, ի սկզբանէ նոյն մինչև յաւիտեանս. ոչ տամ զփառս իմ այլում, և ոչ զքաջութիւնս իմ դրօշելոց։

24. « Զայս գիտելով, եղրարք, մի թուլութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ սրաիւ և հաստատուն հաւատավք կամակարութեամբ յարձակեացուք ի վերայ թշնամեացն, որ յարուցեալ զան ի վերայ մեր։ Մեր յոցն մեղ կրկին երեխ. եթէ մեռանիմք՝ կեամք, և եթէ մեռուցանեմք՝ մեղ նոյն կեանք առաջի կան։ Յիշեցուք

զրանն Արտքելոյց որ ասէ, թէ վոխանակ ուրախութեան՝ որ նմա առաջի կայր, յանձն էառ դհամբերութիւն մահու, և մահու խաչի. վասն այսորիկ և Աստուած զնա առաւել բարձրացոյց, և ես նմա անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն. զի յանոն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծռնի կրկնեցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց :

25. «Եւ քանզի որ ճշմարտութեամբ միացեալ է ընդորդւոյն Աստուծոյ, հոգւոյն աչօք տեսանէ զաներեսյթ յասակ բյան ճառապայթից իմանալի արեգականն, որ յամենայն ժամ և յամենայն օր գեր ի վերոյ ծագեալ երեխ ամենեցան, և սրբատեսիկ և սրբահայեացո անպատճ յասակութեամբ ձգտեցուցանէ զհայեցուածո, և թափանցանց եղեալ ընդ երկինս՝ յանմասոյց տեսիլն մերձեցուցանէ, և կորովաթեամբ կը ու զերկրպագութիւն զերից հատուածոցն միաւոր զօրութեանն; Եւ արդ որ ընդ Աստուծոյ աստիճաննն ոտնփոխ եղեալ իցէն, և բարձրութեամբ յարքունիսն հասեալ, և զամենայն մեծութիւն բովանդակ տեսեալ, նա միայն է որ ժառանդէ զանանց ուրախութիւնն և զանտրատնական միսիթարութիւնն:

26. «Մի, տեալք իմ պատուականք, յետ այսշափի ի բարձունս վերանալոյ, այսրէն յերկիր անկեալ թաւալիցինք, այլ տեղի տեսալ անդրէն ի բարձրութեանն հաստատեսցուք: Թէպէտ և հայեսցուք ի ստորին կողմ երկիրս, տեսանեմք զսա լի տմենայն ապականութեամբ և անսուրք պղծութեամբ: Քանզի զի՞նչ աղէտք տարակուսի են, որ ոչ գործին յերկրայինս ախտաբերս. թշուառութիւնք աղքասաց և անթիւ չարչարանք նոցուն, աղցաւոր ծանրութիւնք հարկահանաց<sup>2</sup>, զզուանք և կոփանք ի բռնաւոր ընկերակցաց, քազց և ծարաւ ըստ կարօսութեան բնութեանս: Սամնամնիք ձմերայնուայ և խորշակք ամարայնուոյ<sup>3</sup>, հիւսնեղութիւնք տարաժամիք և ախորք մա-

1. Թուղթ Պաւղոսի առ Փիլիպպեցիս  
Գլ. Բ:

2. Ղեռնդ որ անշուշտ շատ մը շինականաց կ'ողջէր խօսքը, չէր կրնար աւելի յարմար բան մը յիշեցնէլ նոցա

3. Ճշգրիտ նկարագիր Հայոստանի կերպային. թէուս Մեծ և Փաքը Հայք Ապանիս լամութեան աստիճանաց ներ-

քե կը գտանին, բայց Զերմութիւնը տեղէ տեղ պյուքան կը տարբերի որ, կարգան ի հարկահանաց կը նեղութիւննին:

հարելքը համապազ տանջեն զմարդիկ. երկիւղ արտաքնոց և արհաւիրք ի ներքնոց անդադար ի վերայ հասանեն. ցանկան մտհու յառաջ քան զժամանակն, և ոչ գտանեն. և բազումք են՝ որ փորեն և խնդրեն, և խնդրից լինին յորժամ գտանեն: իսկ որ թուին մեզ, եթէ յաջաղեալք են ի մեծութեան և փափկանան ուրախութեամբք ի պակասելի կեանս, մեծամուշալ հպարտանան յանցաւոր մասունս աշխարհիս, նոքա են՝ որ կուրացեալ են ի ճշմարիս կենացն: իսկ արդ զի՞նչ այն չարիք իցեն՝ որ ի նոսա ոչ զործիցին. ընդ մեծութիւնն խառնեալ է յափշտակութիւն ընչից ազբատաց, ընդ սուրբ ամուսնութիւնն՝ գէճ պղծութիւն: Յորս վայեկեն ընտրութեամբ, նոյսուն երկըրպագութիւն իրքև Աստուծոյ մասուցանեն, մոլորեալք ի ճշմարիս կենացն:

27. « Ո՞չ ահա աշխարհս ամենայն արարչին բոլորեցուն է զոյացութիւն. և զոր նոքայն պաշտեն և պատուեն՝ ապաքէն ի ամին նիւթոյ է մասն. իսկ արդ մասունքն մասունց կան ի ծառայութիւն: Զի եթէ մի մասն աշխարհիս ապականացու է, հարկ է թէ և ամենայն մասունքն ընդ նմին ապականին: Նա և ի մասանց անտի՝ պարտ է թէ և ընտրութիւնք երեսոցին. իսկ արդ որ լաւ է՝ յայտնի է ամենեցուն, և որ զիսէն իմանալ՝ նա է ըն-

ոյն մէջտեղը գտնուած պյեացլ աստիճանաց կը միանալու միանալուն կը պարունակեն. և աւելի զարմանալին է, որ այդ հակառակ կլիմայինեն շատ անգամ ի միում վայրի կը տեսնուին: Այսպէս՝ ի կեսարիս որ հիւսայիլն 38° 42' աստիճանին տակ է և ծովուերեսէն 1, 195 մետր բարձր. ձմեռը Ամսդերտամի շափ ցուրտ և ամառը թուլուզի հաւասար տաք է: Յիշրպուշ ձմեռը Մոսկուայի և Սուրբ Բերենարդոսի շափ ցուրտ, գարունը Համազուրիկի նըման, իսկ ամառը Բրակայի ամառան շափ տաք է: Երիվանայ ձմեռը Բեդրսուպուրին հաւասար սաստիկ է (Ձերմաշափը երբեմ զրոյէն 30 աստիճան վար կ'իջնայ), իսկ ամառը շուքի մէջ

մինչ 45 և յարեւ 50 աստիճան կը բաժանայ: Արմիս ձմեռները (37° 30') ընդհանրապէս Իրկայիններուն (58°, 23') շափ ցուրտ են մինչդեռ ամառը Նիսի և Լիսապօնայի շափ տաք է: Աւելորդ կը համարնեք տեղ որ ամարուան և ձմեռան մէջ չերժութեան այդ ահազգին տարբերութիւններդ ամէն տեղ նոյնքան մէծ շնե: բայց մեր յառաջ բերած չորս օրինակները քիչ շատ գաղափար մը կնար տալ Փոքր Ասիս և Հայաստանի կլիմային. այսու ամենայնիւ դրեց բարձրութեան և անխոնա օդոց պատճառաւ բնակիչք առ հասարակ քաջառողջ են և յաղթանդամք. (Տես Պ. Չհաչեքի Փոքր Ասիս և Սու

page sur l'Orient:

տիր ի մասանցն։ Ասդա թէ այդպէս է, քան զամենայն պաշտամունս հեթանոսաց, որում երկիր պագանեն, երկրպագութիւն են առաւելեալք քան զամբան տարերսն, որոց չարաշար կան ի ժառայութեան. և զին Աստուած՝ որ ի մարդ կերպարանեցաւ՝ չպաշտեն, այլ արարածոց տանին երկրպագութիւն։ որոց մեղաց չիք քուտթիւն յարդար առենին։

28. « Օ՞ն անդր ի բաց թողցուք վխաւարացին խորհուրդս մեղորելոցն. եղկելիս և որորմելիս քան զամենայն մարդիկ զնոսա համարեցուք. մանաւանդ զի կամօք են կուրացեալք և ոչ ի հարկէ, և ոչ երբէք գտցեն զճանապարհն ճշմարտութեան։ Այլ մեր բացահայեաց առօք տեսեալ զլցոն երինաւոր, մի պատահեցէ մեզ խաւարն արտաքին։ Զի ոյք էին ի խաւարի, եկն առ նոսա լցոն ճշմարիտ, կուրացեալք վրիպեցան ի կինացն. իսկ որք ընկալայքդ հաւասոովք՝ որդիք էք և ոչ օտարախորթք, սիրելիք և ոչ թշնամիք, բաժանարդք և ժառանդորդք վերին իմանալի քաղաքին։

29. « Անդ է առաջնորդ փրկութեան մերս. առաքաջութեամբ նահատակեցաւ, և զնոյն ուսոյց ամենայն նիզակակից գործակցաց իւրոց առաքելոց. յորմէ և դուք էք այսօր կրկնն երեեալք, օրհնեալք հաւատովք ընդդէմ աներեցյիծ թշնամոյն, պատենազգէն զրահիւք դէմ ընդդէմ ընկերակից սաստանայական գործոյն։ Եւ եթէ այսպէս և եթէ այնպէս, զերկուեան կողմանսն ի պարտութիւն մատնէք, որպէս և Տէրն ինքնին արար. աշխարհի թուեցաւ թէ մեռաւ, այլ նա յայնժամ տարաւ զկատարեալ նահատակ առաքինութիւնն. զախոյեանն ընկէց, զպատերազմն եհար, զթշնամիսն ցրուեաց, զաւարն ժողովեաց, զգերին դարձոյց, զպարգևան բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց ի ձեռն իւրաքանչիւր առաքինութեանց։

30. « Գիտէք դուք ամենեքեան, յառաջ ժամանակաւ հասեալ ձեր ի գործ պատերազմի, թէպէտ և էր ձեր սովորութիւն՝ քահանայից հանապազորդել ի մէջ բանակիս, ի ժամ ճակատուցն յանձնեալ ձեզ ի նոցանէ աղօթիւք՝ յամնուր տեղուջ ուրեք թողուիք զնոսա. իսկ այսօր եղիսկապուք և երիցունք և սարկաւագունք, սազմնուեր-

գողք և գրակարդացք իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ՝  
իրը վառեալք զինու և պատրաստեալք ի պատերազմ,  
կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամիսն ճշմար-  
տութեան։ Եւ եթէ մեռանել ևս հասանէ ի նոցանէ, սա-  
կայն և յայնմանէ ոչ են զանգիտելոց . քանզի լաւագոյն  
զմեռանեն կամին քան զմեռուցանեն։ Որպէս զի կրկին  
աչս ստացեալ ունիցին. հաւատոց աչօք դքարկոծանս մար-  
դարէիցն տեսանեն, և մարմնոց աչօք դքաջութիւն ձերոյ  
նահատակութեանդ։ Մանաւանդ թէ ի ձեզ զերկուեան  
իսկ տեսանեմք. քանզի և դուք իսկ տեսանէք զարչարանս  
սուրբ առաքելոցն և զապանմունս զամենայն սուրբ մար-  
տիրացն, որոց մահուամբն հաստատեցաւ սուրբ եկե-  
ղեցի, և հեղումն արեան իւրեանց եղի ի պարծանս վեր-  
նոցն և ներքնոցն։ Արդ մինչ ի գալուստն երկրորդ՝ նոյն  
նահատակութիւն կատարի չարչարանօք<sup>1</sup> »:

31. Յայս վայր խօսեցաւ ի գիշերին յայնմիկ սուրբ  
երէցն Դևանդ, և փառատրելավ կատարեաց զամէնն ա-  
սելով։ Եւ սեղան ուղղեալ՝ զամենասուրբ խորհուրդն կա-  
տարեցին. ուղղեցին և աւազան, և եթէ զոյր ոք երա-  
խայ ի բազմութեան զօրուն՝ զզիշերն ամենայն մկրտե-  
ցին. և ընդ առաւօտս սուրբ օրինացն հազորդեցան, և  
այնպէս լուսաղղեաս եղին՝ որպէս ի տերունեան մեծի  
սուրբ զատկին։ Եւ մեծաւ զուարձութեամբ և յոյժ խըն-  
դութեամբ ազաղակեաց ամենայն բազմութիւն զօրացն  
և ասեն. Հաւատարեացէ մահ մեր ընդ մահու արդարոցն,  
և հեղումն արեան մերոյ ընդ արիւն սուրբ մարտիրո-  
սացն. և հաճեացի Աստուած կամաւոր պատարագաւո, և  
մի տացէ զեկեղեցի իւր ի ձեռու հեթանոսաց։

1. Թեոդոսիոյ ապ. կը յաւելու և ա-  
ռաքինեացն և ընտրելոց նահատակաց՝  
յորոց միջի և դուք էք հանդիսացեալ  
այսօր, և հրաւիրեալ ի լուսաւորչացն

ձեր սրբոց հասանել ի գունդու նոցա և  
ձառանգորդս խօսուցելոցն լինել ա-  
նանց բարութեանց ի Քրիստոսէ Յի-  
սուսէ, որ է օրհնեալ յաւիտեանս ։

# ՎԵՅԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ<sup>1</sup> ԸՆԴՀԱԿԵՄ ԿՈՅ ՀԱՅՈՅ ՊԱՏԵՐՈԶՈՒԹԵ

ԹԱԳԱԽՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ

1. Յետ այսորիկ իրրե ետես զօրավար գնդին Պարսից<sup>2</sup>, եթէ հասան պատգամաւորքն ի միջոյ<sup>3</sup> խարել զնոսա, և բարձաւ յոյս ակնկարութեան իւրոյ ցըռել ըղնոսա յանքակ միաբանութենէն, յայնմ ժամանակի յառաջ կոչէր զանօրէնն վասակ և զամենայն ուրացեալ իշխանան, որ էին ընդ նմա յաշխարհէն Հայոց. հարցանէր զնոսա, և ուսանէր ի նոցանէ զննարագիտութիւն յաղթութեան: Եւ իրրե տաեալ տեղեկացաւ զան առն իւրաքանչիւր քաջութիւնս, կոչէր և զբաղումն ի զօրագըլխացն՝ որ էին ընդ իւրով ձեռամք, և հրամայէր ածել զառաջեաւ զերամակս փղացն, և ի դունդս դունդս զզազանն բաժանէր, և առ մի մի փիդ երեք հազար սպառազէնք<sup>4</sup>. թող զայլ զօրսն ամենային:

1. Առաջին ընդդիմակալութիւնը Ճորայ մարզպանին դէմ եղած պատերազմն էր:

2. Մուշկան հիմալաւուրս որ էր ընդհանուր հրամանատար զօրացն՝ Պարսից: Փարագեցին Դոոլըէն անուն զիխաւոր զօրավար մի ալ կը յիշէ (էջ 201) առանց զրուցելու մեզ թէ ինչ էր այս վերջնոյս պաշտօնը կամ դիբը նիւսաւուրուի նկատմամբ:

3. Այս է պակասեցան կամ չյաջողեցան երիցունքն ի հաւան ածել զվարդանեանս

կամ երկոպառակել զնոսա: Յ. Ե. 15:

4. Որովհետեւ երկիրը տափարակ, կամ մեր հեղինակին գործածած բառերով՝ մեծ դաշտ մի էր, վշերը և սպառազէն հեծելագունդը աւելի գործ կրնային տեսնալ. վասն որոյ զայրասիկ յառաջ կը կոչէր նիւսալաւուրու: Իսկ թեթեւ ոյրուձին որ կը բազկանայր ի կատշաց և հաւանօրէն ի Հանաց, ի Գեղաց, և յԱպարհայիկ զօրաց, առ այժմ երկրորդական կամ սպառողական գրից մէջ պիտի կենայր, պատրաստ զՀայոց հալածելու

2. Խօսէր և ընդ մեծամեծան արքունի հրամանառ և ասէր . Յիշեցէք այր խրաքանչիւր զպատուէր մեծ թաղաւորին, և գիք առաջի զանոն քաջութեան . ընտրեցէք զմահ քան վկեանս վաստվթեամբ: Մի մասանայք զիւզն և զպսակն և զուռուն՝ և զառատաձեռն պարզեմն, որ շնորհի ձեզ յարքունուստ: Տեարք էք խրաքանչիւր զաւուաց, և ունիք իշխանութիւն բազում: գուք ինքնին գիտէք զքաջութիւն աշխարհին չայրց և զառն առն խրաքանչիւր նահատակութիւն արութեան . գուցէ ձեր ի պարտութիւն մասնեալ, կենդանեաւ վրիպիցէք ի մեծ կենացն զոր ունիք: Յիշեցէք զկին և զորդիս ձեր, յիշեցէք զսիրելի բարեկամն ձեր . գուցէ սանահար լինիցիք յարտաքին թշնամեաց և ողբակիցք ներքին սիրելեացն:

եթէ ի փախուստ դառնային կամ յետո ընկրկէին: — Յուշիանոս կը պատմէ թէ Մծընալ վրայ յարձակելու տաենն ալ նազուհ եղբորդ փղերուն մէջ տեղուանիքը սպառապէն այրումի կեցուցեր էր (Խոլինսըն՝ պատմ. Սասանեանց էջ 163): Խակ փղերուն քամակին վրայ երկաթեայ աշտարակներ կը բարձրանային, որոց մէջէն ազեղնաւորը կարձէին նետերնին: — Եսոյն եղանակաւ կը դորձածէին զփիզս և Աւելէկիացիք, այս տարբերութեամբ որ գիւնով և զմուսաւ կը կոտորեցնէին զգազանն: «Կազմեցին սրատաստեցին զփիզսն, ճաշակեցուցին յարիւն խաղողայ, ի զմուսաւ և ի զինի: Եր կարգեցան բաշխեցին ի զւնդո զունդու, և կարգեցին առ փիզ փիզ՝ հաշար հազար այր սպառապէն: և պահապան զլուխ զնդիզն՝ հնակ հազար հեծեալ վառեալ նժոյզ ի ձեռն պաշտպան զնդիզն՝ զի ուր և կայցին զազանքն՝ կացցեն և նորա, և ուր և զնայցին՝ զնասցեն և նորա . և վանդակակազ մարտկոց մենքնայիք ի վերայ փղացն կազմեցին, և զփզապանն ի վերայ զլուխոյն նստոցին, և զայլ այրումին յաջ և յահեակ մես զնդին կազմեցին» . Մակար . ա. զւ. Զ. 39:

1. Պատկի վրայօք տես Եր, 196. Ճն. 1: Հին աշխարհին մէջ խզն անբան ազնիւ բան մի համարեալ էր, որ մազդեզն արդարոց հոգիք արքայութեան մէջ խզով պիտի մասնէին . Pahlavi texts 83. Ճն 5: Խակ ուս որ է բարունակ որմայ, զուցէ պասկ շինելու համար կը տրուէր կամ այզի անկելու:

2. Կոստանդնուպոլսոյ տպազիրն՝ որպէս եղաք. Միսիթարեանց և Թէոդոսիոյ տպազիրըն՝ սրբակից ի ներքին սիրեկացն: Հայկազիան բառարանն ալ երկու նշանակութիւն կու տայ ողբակից ածականին. 1 կցորդ և ընկեր ուրոց.

2. Ողբաւի յամոց: Եւ այս եղբորդ իմաստիս ի հաստատութիւն ի մէջ կը բերէ Նդիշէի այս խօսք, որ անշուշտ գրչազրի վրիպակ մ'ունի: Ալմէ որիշ օրինակ մը չկայ, հարկ չեմք տեսներ նոր նշանակութիւն մը նորելու, զոր ններեր բառին կազմութիւնը, և զոր չունին ցատակից, վշտիկից և այլ նոյնամեանուններն: Այրելեաց՝ սեռական՝ յատկացուցիչ պէտք է որ ըլլայ, որով և տպազիրն կոստանդնուպոլսոյ: Նիւսաւաւուրսի խօսքը ուզգեալ են իւր մեծամեծացը, որք եթէ պատերազմին տաղնապէն վատութեամբ հեռու կենային,

3. Ետ և յուշ ես առներ նոցա զբազում ընկերակիցս փախուցեալս, որը թէպէտ և ի պատերազմէն ապրեցան, որով ընկարան զվճիռ մահուն խրեանց . ուստերք և գատերք և ամենայն ընտանիք խրեանց յանաշխարհիկո դրեցան, և ամենայն հայրենի գաւառք հատան ի նոցանէ<sup>1</sup>:

4. Զայս ասէր, և առաւել քան զայն սաստկացուցանէր զհրամանն արքունի: կարգէր կազմէր զզօրսն ամենայն, և սարածանէր երկայնէր զճակասն յերկայնութիւն դաշտին մեծի: Եւ խրաքանչիւր զաղանացն յաջմէն յահէկէ զերեքհազարեան սպառազէնն պատրաստէր, և զընտիր ընտիր նահատակացն չուրջ զիւրեաւ գումարէր. այսպէս ամրացուցանէր զզունդն մատեան<sup>2</sup> իրրե զաշտա-

կոնային ազահովագեն մահուընէ ազատիւ. «Եթէ յաղթուիք, կ'ըսէ, ի թըշնամեաց անարգեալ սոնհար լինիցիք, և երր ձեր երկիրը դանապէք, բարեկամաց և սիրելաց հետ ողբալու և լալու պիտի հարկադրուիք, որովհետեւ պիտի զրկուիք ձեր աերութենէն և իշխանական պատուէն»:

1. Տես Յ. Բ. 73 ձան. 2:

2. Մատեան գունդը վիաց գունդը չէ. Եղիշէ կ'ըսէ թէ Մատեանի չեծելադնդին մէջ մարտկոցաւոր վկէր խառնելով՝ նեխալաւուրու կ'ամրացնէր զայն. որով ամէնդը միանգամայն հզօր աշտարակի կամ անհառոյց բերդի մը կը նամանէր: Բայց զաղանաց մեծագոյն մասը բանակին ետեր կը կենար և սոցա հրամանատարն էր Արտաշեր: Խոկ մատեան գունդը՝ զոր օտարազգիք և Անմահից գունդ՝ կը կոչէին, ըստ վկայութեան չերոդոտեայ, 10,000 ընտիր ոյրունիք կը բազկանար, ու առանձին զլուխ ուներ, անման ըսուելուն պատճան ալ այն էր՝ որ երբ մէջերնէն մէջ կը մեռանէր, տեղն անմիջապէս ուրիշ մը կը դրուէր, որով թիւը երբէք չեր պակասեր (Ներ. զիրք է, զլ. 83): Ցայս ինքնիշխանութեան ատեն զօրաց ընտրադոյն և կանոնաւոր մասը Մատեան կը յորջորջէր. «Հրաման ետ արքայ խոսրով Դատարայ նահապեաի իշխանաց, գուգազ հանել յաշխարհէ առաւել քան զշամար զօրսն Մատեանի գընդուն ընդ առաջ նոցա խաղալ համանել ի զիմի հարկանել, արկանել զթշնամին»: Բուզանդ էջ 19: Մատիկամ բահլաւի և մատեանէ բազանու լեզուաւ է որպէս հայերէն մատեան, զիրք, վէտ, պատմութիւն . Տես Pahlavî-Pazand

բակ մի հզօր և կսմ իրրե զբերդ մի անմատոյց։ Նշանս բաշխէր, գրօշա արձակէր<sup>1</sup>, և ի ձայն մեծի վարդյն<sup>2</sup> պատրաստ հրամայէր լինել։ իսկ զգունդն զապարհայիկ<sup>3</sup>, և զկատչաց և զչնաց և զգեղաց, և զայլս ևս ամենայն զընտիր ընտիր զօրուն մարդիկ ի մի վայր ժողովէր, և

Glossary: — Խոսրով Ա. Շառշրէվան՝ զօրքը կարգադրելու ատենը կը պատուիք Համարազետին Պապէքայ, որ զինուորները մի առ մի աչքէ անցնէ. «Եթէ զէնքերնին և կազմածնին ամբողջ են, արձանագրի տումարին մէջ, և ամէն անգամ որ թոշակ վճարելու ըլլաս, քննէ թէ զէնքերը կատարեալ են. Եթէ պակաս ըլլան, մի վճարեր»։ Տես Թագարի և Միրտնա:

1. Բուզանդայ մէջ Հնդեանք վառեալք կարգեալք կազմեալք ի պատերազմ, ի մի վայր գումարեալք, երան արձակեալք, դրօւ դոդփողեալք. Էջ 254. 187։ — Եւ նշանակիր մի ի Միրտնայ, իրեն ետես զԱրտաւազդն, յընշացք երաց, զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անօրուս, երեսօք գեղեցիկ, ասպա զբշյանն զեխական պատեալ յարձակեցաւ ի վերայ նորա»։ 254։ — Թէ նշան և դրօւ որիշ բաներ կը նշանակին՝ տարա կոյս չանիմք։ Չորրորդ Յեղանակին վերջը Պարսից զինուորական կազմութեան վրայ խօսած ատեննիս նշաններուն ինչ կերպ ըլլալը նկարագրեցինք. Եղիշէի ասոտ ակնարկան ալ աստնցմէ ըլլալու են և ոչ կտաւեայ, թէ զոյտէս Բուզանդ նշան ըսելով կտաւէ դրօշակ կիմանայ։ Իսկ Ասաննեանց կտաւէ դրօշից ձեւն վրայօք աեղեկութիւն մի չունիմք։

2. Փողն մէնց յարձակման նշանը կուտար կամ զօրագլխին հրամանը կը հըռշակէր, և աւելի փոքր փողեր կ'երերորդէին նոյն հրամանը։ Այդ մեծ փողդ զարարափողն ըլլալու եր. Տես Եր, 366.

3. Աշարհայիկը, կատէշք և դեղք

կասրից ծովուն արեմուեան հարաւային եղերաց լեռնցի և կէս վայրենի ժողովուրզներն էին։ Պազուեսի և Սարաբոնի տուած տեղեկութեանց նայելով՝ Կատիշք (ըստ յոյն պատմչաց Cadisene կամ Caduseni) բնակէին այժմեան թաւլց նահանգը։ Կատչաց երկիրը կը նկարագրի ի Պլուտարքոսէ իրրե դժուարամատոյց և միզամած, ուր ոչ ցարեն և ոչ ուրիշ արմուիք կը բռնժէին, և որ դիւր պատերազմակը բնակիւս միայն վայրի տանձով և խնձորով և ասոնց նման պըտզօք կը մնուցանէր. հատ. Դ. 438։ Խարենացոյ Աշխարհացոյցին մէջ ոոցա երկիրը կատիշք հուշեալ է. Լիւ։

Գեղը կամ Gelae, բնակիշք այժմեան կիւանի, որ տակաւին նոցա անունը կը կրէ (Կիսակըն հատ. Ա. Էջ 441. Ճն)։ Թէ ոզոսիոյ տակ զգումդն ապարնացի։ Սարաբոն կասրից ծովուն հարաւային եղերը բնակող ազգաց վրայ խօսած ատենը կը յիշաւակէ զԱնարին (Anariaces), զԱմարդու և զՎրկանս։ Կ'երեի թէ ի սոցանէ ամենէն աւելի յարեւուսու և կատչաց մերձակից գտնուողը Անարիք էին, որոց գլխաւոր քաղաքն էր Անարիակէ մօտ ի ծով։ Սարաբոն կը յուելու սակայն թէ պյենայլ Պարհանանը (Parthasiens) իրենց բնակութիւնը Անարիաց մէջ հաստատելով պյու վերջնքը իւր ժամանակը Պարհանանք կը յարջորջէին։ Այդ ժազովուրդդէ է Եղիշէի Ապարնայիկ կաշածն, որոյ բնակութեան վայրն էր պյամեան Մազանտէրան գաւառը։

Հանք՝ Ճորաս պահակէն բերուած զօրք ըլլալու էին։

Հրամանն պատուիրանի տայրը ընդ աջմէ կողմանէ՝ գնդին  
խրոյ պատրաստ լինել ընդգէմ Հայոց զօրավարին:

5. Իսկ արին Վարդան յառաջ մասուցեալ և զաւա-  
դանին հարցանէր, և միաբան ամենեցուն խրառու բգ-  
զօրագլուին կարգէր: Զգունդն առաջին<sup>2</sup> տայրը ի ձեռն  
իշխանին Արծրունեաց, և նիդակակից նմա զմեծ իշխանն  
Մոկաց<sup>3</sup>, և զայլն ամենայն նախարարեան համահարզ  
երկոցունց, և զամենայն բազմութիւն գնդին<sup>4</sup> թևս առ-

1. Ուրեմն վարդան Հայոց բանակին  
ձախ թեր բռնած էր, բնակէս որ կը  
զբուցէ մեզ փարզեցին:

2. Այս է միջոցի զունդը: — «Մե-  
ջոցի զնդին կարգէր զիմաւոր զՏէրն  
Արծրունեաց և զմարդաբեան Միքրա-  
պուն, հանդիրձ իշխանան Արշարունեաց  
Արշաւրաւ և Արտակաւ իշխանան Մո-  
կաց և այլ աւագ նախարարօք, և կող-  
մանն աջոյ կարգէր աւագ զՄախագ Խո-  
րեն հանդիրձ թամբլաւ տեսան Վանա-  
դայ և Կերսեհի Բաջրերունոյ և այլ  
աւագ նախարարօքն: և ընդ ահեկն  
կողմանէ պատրաստէր զինդն սրազ դըն-  
դովն և իշխանան Առաեղենից փա-  
փագաւ և այլ իշխան նախարարօքն Հա-  
յոց, քանզի յայն կողմանէ առաւելապէս  
երեւը Դակիչ զնդին սինդի զօրուն և  
այլ զրաւոր արանց նշանք դրոշիցն Եւ  
զՀամազատիւն զիւր Եղբայրն Շնորոյը  
վերջապահն: Փարզեցի:

3. Որպէս անունն էր Արտակ (Յ. Բ.  
61): Բայց Եղեշէ ասկէ յառաջ Վարդա-  
նայ նիդակակցաց անունները տուած ա-  
տենը շԺԵՇ զիշխանն Մոկաց (Յ. Ե.  
3), որ սակայն Արտաշատայ ժողովոյն  
ներկայ էր (Փարզ. 126) և էր այր հա-  
մեսու, մոտացի և քաջ զոր առաւելապէս  
պատուազ սիրել Վարդան (Կոդ. 148):  
Աւարուրի մէջ մեռնող Արտակն Պալու-  
նեաց տոհմէն սեպան մի էր (Փարզ.  
213): և ոչ մեծ իշխանն Մոկաց, որ  
կերեւի թէ պատերազմէն ապրելով Մո-  
կաց անմատոյց առապարից մէջ առան-

ձնացեր էր: քանզի այնուհետեւ խոսքը  
չըլլար:

4. Պարբերութիւնս շփոթ է քիչ մը,  
Եղեշէ կուզէ ցուցանել մեզ միջին զըն-  
դին կազմութիւնը: Կերչապաւը՝ Ար-  
ծրունեաց զօրօք այս զնդիս մէջ տեղը կը  
կնար, նիդակակից ունենալով զիշխանն  
Մոկաց: շատ մը ուրիշ նախարարները  
խրեանց զօրօք այս երկուքին աջ և  
ձախ կողմը կը բռնեն, և ամենը միան-  
գամայն կը կազմեն միջին զունդը: Խո-  
րեանյ զունդը բանակին աջ թեռն էր  
(Փարզ. 210) իսկ թամբւոյ զունդը ձախ  
թեռն պէտք էր ըլլալ: Իսկ ինքն Վար-  
դան շորրորդ զունդ մ՛առաւ պահեստի  
և հաւանօրէն միւս երեքին կռնակն ան-  
ցաւ ի սկզբան պատերազմը վարելու և  
հարկ եղած տեղը համնելու համար: Ճա-  
կատին իրեք զնդերն բաւական ատեն  
լաւ ընդգիւմացն Պարսից յարձակմանց,  
մանաւանդ թէ երր ասոնց բանակը տե-  
ղուացն զժուարաւթիւնն չէր կռնար շար-  
ժիլ: Հայք մղեցին ձիերնին Տղմուտի  
մէջ ու պարսկական զօրաց զանուած ե-  
ղերը բռնեցին: առաջին յաջողութիւնը  
Հայոցն էր: Սակայն երր Վարդան աե-  
սաւ որ իւր ձախը կը տկարանայր ու  
յետո կը մղուէր, իւր գնդաւն կամ ա-  
ռանձինն անդ վազեց: Զախակոզմը բռո-  
նեց: Անդ ինցացաւ անշուշտ, որ առանց  
իւր ձեռամբ կարգէ զուրս հարուած մը  
տալու թշնամնին, կարելի պիտի ըլլ-  
ար իւր միջին և աջ թեռերուն համար  
երկար ժամանակ զիմակալել: ուստի

տի և անսովութեալ նոցա; Եւ զգունդն երկրորդ տայր  
ի ձեռն խորենայ խորխոռունեաց , և նիզակակից նմա

յանդուզն և թերեւս յուսահատական  
փորձ մը փորձել ուզեց որ աւելի նպաս-  
տաւոր պարագայից մէջ յաջողեր էր  
երբեմն չոռվայեցոց . պատուել ծակել  
թշնամի բանակը , համնել ու մանել փը-  
ղերուն մէջ , վերաւորել կատողենել զգա-  
զանս , որով կը քաջեր ու կը պղասրեր  
զկազմն և զազմո Պարսից : Իրեն ընա-  
կան արագութեամբ և բուռն քաջու-  
թեամբն ի զաւի հանեց այդ զարժութելի  
խորհուրդն ու քիչ մը դեռ և ահա  
Մատեան գունդը ի փախուստ պիտի  
դառնայր . բայց Հայոց միջին և աջա-  
կողմեան գներն , որը զորկ էրն վար-  
դանայ ներկայութենէն չկրցան պինդ  
կենալ ու զօրաց մէկ մասը կը քաշուեր  
ի հովիտ լերանց : — Յայնամ Մուշ-  
կան ժողովեց զիւր բոլոր զօրութիւն  
Վարդանայ վրայ , պաշարեց զնոս և խոր-  
տակեց վերջապէս նորս գունդը , որ եր-  
կար առեն դեռ կոռուցաւ . Վարդանայ  
անկմանէն եաքն ալ :

Ամբ է ահա Երդիշէի նկարագրութե-  
նէն մեր առած զաղափարը , աւելի կա-  
տարեալ տեղեկութիւն ուզողները պար-  
տին ընթեռնուէլ Ալիշան վարդապետի  
և կարմիր վարդանայ » ի Յուշիկս հայ-  
րենեաց . հատ . Ա : թէպէտ հեղինակը  
պատերազմին ելքը անորոշ մեաց , կըսէ .  
այդ տեսութիւնդ հաւանական չժուիր  
մեզ (առես և զփարպ . 212) . գամն զի  
եթէ Հայոց բանակը ամրազջ կեցած ըլ-  
լար պատերազմին առաջին օրը , պատ-  
ճառ մը շկար անմիջապէս ցըսուելուն .  
պատճառ մը շկար դարձեալ որ երկրորդ  
օրն ալ նոյնապէս չկենային , ու այնքան  
պատերազմոզաց մէջին մէկը գոնէ ժա-  
մանակ մը վարդանայ պակասը լեցու-  
ցած կը լինէր : Բայց Հայոց համար ինչ  
յաջողութիւն կրնար սպասուիլ երբ մէկ  
կողմանէ Սասանեանց բազմաթիւ . և

պնդակազմ և պատերազմափորձ բանակը  
Հայոց մէկ մասին հետ միացած՝ քաջ  
առաջնորդեալ բայց արտորնոր հաւա-  
քուած զօրաց հետ կը կռուէր արձակ  
դաշտի վրայ : Անջուշու եթէ վարդակ  
Հայրաստանի լեռներուն և հողան զար-  
մանազմն կերպաւորութենէն օգուտ քա-  
ղելով թողարյու որ Պարսից բանակը ներս  
մոնէ տարածուի , ու զայն շարունակ  
նեղելով , պաշարը կտրելով յոդնեցնէր ,  
շատ աւելի երկար կը դիմանար , զուցէ  
ևս բոլորովին կը յաջողէր , ինչպէս ը-  
րաւ և յաջուցաւ . պատերազմէն երե-  
սան և չինդ տարի վերջը իւր եղբօր-  
որդին վաշան : Բայց ասոր համար եր-  
կրին աւերումը՝ բնակլաց սպանումը  
պէտք էր յանձն առնուլ . և որ ոք կը  
մուարերէ Ալյարաստայ այն ժամանակին  
բարօրութիւնը ու հարստութիւնը (անս  
փարպ . 22-23) որում նմանելու էրն  
քիչ շատ ուրիշ նահանգներն , չկրնար  
մեղադրել զվարդան թէ ինչո՞ւ զարնուիլ  
ուզեց Պարսից հետ սահմանաց վրայ  
(Փարպ . 102) : Մոհաց որ ցուրիլափ պա-  
տերազմը , յորում շատ անզամ պէտք  
է փախչիլ թշնամնյն հօր եղած ա-  
տեն , մանր մանր խայթուածովք Ակել  
զայն , հոգնեցնել քան մէկ հարուածով  
խորուակելու ջանալ , և աւելի հնարք և  
խորամանկութիւն ձեռք առնուլ քան  
յայսնի պատերազմ տալ , անյարմար էր  
Վարդանայ կարիճ , վեհական և շխտակ  
բարուցը : Չմոռնանք սակայն ըսկելու թէ  
մարտիրոսութեան փափազը , որ Յով-  
սեփայ և Անոնդի պէս ջերմեռանզն քա-  
հանայից ներկայութեամբը կ'արձարձէր ,  
ինչպէս և առժամնակեայ ուրացութեան  
մը խզէի խայթէ Վարդանայ պատերազ-  
մական հանձարը քիչ մը շփոթած ըլլա-  
լու էր : Փարպէցին կը պատմէ թէ երբ  
թշնամեաց բանակին մօտ հասան , Պար-

զի՞նծայինն՝ և զներսեհ Քաջրերունի։ Եւ զգունդն երբորդ մասուցանէր ի ձեռն թաթը վանանդեցւոյ, և նիզակակից նմա հրամայէր զջաճառ Գնիժունի, և զրազումն ի քաջ արանց աստի և անտի ի թես նոցա։ Յանձն խր առնոյր զգունդն չորրորդ, և նիզակակից խր դրաշն Արշաւիր և զհարազատ եղբայր խր զշտմազասպեան։ Կարգէր և կաղմէր զճակասն յորդորելով ընդ ամենայն 151 Յուն։ Երես գաշտին դէմ յանդիման Արեաց գնդին, առ ավին ենտեկուս Տզմուտ գետոյն<sup>2</sup>։

6. Եւ իրրե այսպէս պատրաստեցան երկոքեան կողմանքն, լի սրտմութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան։ և ամբոխ աղազակին յերկոցունց կաղմանցն իրրե ի մէջ ամնոց շիտթելոց ճայթմունո զործէր, և հնչումն ձայնից գաբաննձաւս լերանցն շարժէր։ Ի բազմութենէ սաղաւարտիցն և ի փայլուն պատենազէն վասելոցն իրրե նշոյլք ճառագայթից արեգական հաստանէին։ Նա և ի բազում սուսերացն շողալ, և ի ճօճել բազմախուսն նիզակացն իրրե յերկնուստ ահազին հրածդութինք եսային։ Քանզի ով իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանարացն և ճայթմունք լսրից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին։

սիկը անպատրասս էին, և ո եթէ Հայք կամեցեալ էին՝ կարող էին մասնաւորագէ վնասել երամակաբակ ծուլացելոցն։ բայց թոյլ տուեալ գադարեցին յանաց աւուրց բանդի ոչ էր եղեալ ի մանի այնուհետե յաղթել, ոյլ տենչալի մարտիրոսութեան փոթային հասանել։ Մենք չէինք ուզեր հաւատալ, որ Վարդական այդպիսի յանցանք մէ զործած ըլլաց եթէ լըդիչէի մէջ վարդանայ առ Հայոց բանակն ուզզած խօսքերէն ալ չհետեւը որ նա ոչ թէ յաղթելու յուսով պատերազմի կ'երթար այլ նահատակութեան փափառաւ։ Զոր անշուշտ սիամունք մը պարտ է համարել մարդկացին մոտաց տեսակէտով։ Վ կայանալու

համար հարկ չկար վաթսուն և վեց հազարաւ յԱւարայր վազել ու պատերազմ մնուել։ Զօրսալարին առաջին և միակ պարտքը զթշնամին խորտակել էր երբ և ուր որ հանդիպէր, սովաւ միայն խր կրօնքը և երկիրը պիսի ազատութեան վիթէ Վարդան այդ նպաստակիդ միայն գէտ եղեալ շարժած ըլլար, իւր քաջութեամբ և երկար փորձառութեամբը զուցէ ուրիշ տեղ և ուրիշ միջոյներով մեծագոյն վեաս կրնար հասուցանել թշնամուն։

1. Այս և Արաւեն Ծնձայացի (Յ. Ե. Յ. ծան. 5), Տես և Յ. Պ. 14:

2. 1 Յունիս 451. յաւուր Արբախտութեակոստեկ:

7. Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէսս սմբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանդիթ մանձրամիտքն յիմարէին և վատասօիրագն լրանէին, քաջքն խիզախէին և նահատակին գոչէին. Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն զգեան ի մէջ վակէին, և զանդիխեալ գունդն Պարսից ի գժուարութենէ զետոյն՝ ըդտեզեան զեռալ սկսան: Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ: Ասատկապէս բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ գիտալ խաղային:

8. Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան, և տեսանէր զբնատիր ընափիր քաջնահատակաց Պարսից զօրան, զի զձախակողմն շարժեցին զՀայոց զնդին. մեծաւ ոժով յարձակէր ի տեղին, և զաջ թեն Պարսից զնդին բեկեալ՝ արկանէր զգազանօքն, և շրջան առեալ կսոսրէր մինչեւ ի նոյն տեղի: Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչի գունդն մաստեան քակուեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, գեռ ևս քաջ ի վախուստ դառնային:

9. Ասպա դէտ ակն ի վեր համբառնայր Մուշկան Նիւսալաւուրան, քակեալ զամանս տեսանէր ի զնդէն Հայոց, և զինի մնացեալ ի հովիսս լերանց: Վասն որոյ զաղակ բարձեալ՝ քաջակերէր շուրջ զիւրեաւ զզօրս Արեաց, որք զտեզի առեալ կացին ընդգէմ զնդին վարդանայ: Եւ անդէն ի տեղուցն երկրպին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ մանձը անկեալ գիտականց իրրհ դքարակոյսա գերրկաց երկեին:

10. Զայն իրքե ետես Մուշկան Նիւսալաւուրան, մնայր գազանացն Արտաշրի<sup>1</sup>, որ ի վերայ զազանացն նստէր ի բարձր դիտանոցին և կամ իրքե յամուր քաղաքի, և ի ձայն մեծ զալարավողոցն<sup>2</sup> զիւր գունդան

1. Արտաշր փզաց զնդին հրամանաւարն էր, որ կը նստէր զազանաց կրածաշտակաց միոյն մէջ:

թէ Պարսից զալարավողը շրջանակամել էր այլ պարուրամե, en spirale, զաւարեալ<sup>3</sup>:

2. Այս է զալարեալ փող. քարձեմ:

451  
2 Յառեր

ստիպէր, և յառաջամարտիկ դորօքն զնա ի մէջ վասկէր: իսկ կարտվին վարդան խւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոյն գործեաց, յորում տեղւոյն և ինքն իսկ արժանի եղե առնուլ զկատարեալ նահատակովիւնն:

11. Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարածամէր, և մօտ առ երեկս կարձատէր. բազմաց օրահասք մահու հասանէին, մանաւանդ ի թանձրութենէ անկեալ գիտականց մօտ առ մօտ խոտացեալ իրքե զփայտահարս մայրաւորաց<sup>2</sup>: Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զկարտակումն ազեղանց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոց երանելեացն. և սաստիկ խուճապ տաղնապի էր կողմանցն երկոցանց անկելոցն: Եւ որ մետացեալքն էին, վաներալք և ցրուեալք լինեին ի լեառնագաշտ և յամուրս ձորոցն. և յորժամ պատահէին միմեանց, դարձեալ միւսանգամ զմիմեանս սաստակէին: Եւ մինչե ի մուսս արեգականն անգագար լինէր գործ գասնութեանն:

12. Եւ քանզի գարնանային էր ժամնանակն, ծաղկալից գաշագն գասնային յորդահսանս արեանց բազմաց: Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ գիտականցն անկելոց, սիրտն ըեկանէր և ազիքն զալարէին՝ լսել ըզմիչին խոցելոցն և զմնչիւնս ըեկելոցն, զթաւալզգոր խաղալ սաղալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթագուստ լքելոցն, զարտաթափումն զանարի արանցն, զճշիւն կանացեացն, զողըս սիրելեաց, զաշխարումն մերձաւուրաց, զփայ և զաւաղ բարեկամացն: Քանզի ոչ եթէ կողմէր՝ որ յազմէրեաց, և կողմէ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջքընդ քաջն ելեալ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան:

1. Ճակատամարտիս թուականն է 26  
451: Արերի, որ շաբաթ, այս է 2 Յառեր  
թագահ Վարդանայ մահուան նկարագիրը ըրած առեն, բուացը մէջ ունէր Յուղա Մակարէի նահատակութիւնը. բաղդատէ Մակարայեցոց առաջն զրոց  
թ զլուխը:

2. Փայտահար է մարդ որ հատանէ

կամ հարկանէ զփայտ կամ զծառ: Մայրաւոր է, 1 Մայրի որ ունի զմայր փայտա-  
անտառ. 2 Փայտահար կամ պահապան անտառի: — Կ'երեի թէ Եղիշէ՛ փոյ-  
տանտը՝ իրք փայտ հարեալ կամ փայտի կոսորք կիմանայ աստանոր. Տես և զայկ, բառ:

13. Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնու հետեւ ի մէջ զլիսաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդն մնացերցն: Թւէպէտ և բազում՝ այն էր՝ որ ապրեցան, քան թէ որ մեռանն, առակայն ցանեալ ցրուեցան, և հասեալ անկանէին ի աեզիս տեղիս յամնուրս աշխարհին, և բոնանային ի վերայ բազում՝ գաւառաց և բերդից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր:

14. Եւ այս անուանք են քաջ նահատակացն՝ որ անդէն ի աեզւոջն կատարեցան: Յազդէն Մամիկոնէից քաջն Վարդան՝ հարիւր երեսուն և երեք արամիք. յազդէն Խորիսունեաց Խորէնն կորովի իննետասն արամիք. յազդէն Պարտնեաց արին Արտակ յիսուն և եօթն արամիք. յազդէն Գնիթունեաց գարմանալին Տաճատ իննեւտասն արամիք. յազդէն Դիմաքունից խմառունն Հմայեակ քսան և երկու արամիք. յազդէն Քաջըերունեաց հրաշակերտն Ներսէհ եօթն արամիք. յազդէն Գնունեաց մանուկն Վահան երիւք արամիք. յազդէն Ծնծայնոց արդարն Արսէն եօթն արամիք. յազդէն Արտանձայ յառաջագէմն Գարեգին երկու հարազատօքն և ութուտասն արամիք:

15. Այս երկերիւր ութառն և եօթն նահատակք, ընդինն մեծամեծ նախարարսն անդէն ի աեզւոջն կատարեցան: Եւ յարքունի տանէ և ի տանէ Արծրունեաց և յիւրաքանչիւր յայլոց նախարարացն տանէ, թող զայս երկերիւր ութառն և եօթնս, այլ ևս եօթն հարիւր և քսուտան այր, որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծի պատերազմին: Եւ միահամուռ լինի ամենայն հազար և երեսուն և վեց այր:

16. Իսկ ի կոզմանէ ուրացելոցն<sup>2</sup> անկանէր յայնու

1. 133 արք ի Մամիկոնէից՝ Վարդանէն զատկու. նոյնպէս ի Խորիսունեաց 19 ժամանական իւրեանց են: Առանկով միայն ինն տոհնէ 287 արք մեռան: Այս թուրոս վրայ եթէ յաւելումք ա. սոցա

9 տանուաերբբը, որոց 287ին մէջ հաշտուելը լլինելը յայնինի է ։ այս երկերիւր ութառն և եօթն նահատակք: ընդ

իմ մեծամեծ նախարարսն, անդէն ի աեզւոջն կատարեցան ։ բ. Արքունի և Արծրունեաց և ուրիշ նախարարաց տանէն 740 այր, կ'ունենամք Եղիշէի տուած համագումարը՝ 1036:

2. « իսկ ի զօրացն Պարսիցն (Կ'ոսէ Փարպեցին, որով կ'իմանայ անշուշտ զՊարսիկ և զուրացեալ հայս) որք ան-

աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր : Ինն այր ի նոցանէ՝ ի մեծ պատուաւորացն էր, վասն որոյ և կարի յոյժ ի խոր խոցեցաւ Մ'ուշկանն Նիւսալաւուրաւ: Մ'անաւանդ իրբե եռես զանհնարին հարուածան եօթնպատիկ զիւրոյ գնդին քան զհայոցն, բեկաւ անկաւ զօրութիւն ուժոյն իւրոյ, և ոչ հանդարտէր կալ ի վերայ խորհրդոց մտացն. քանզի ոչ որպէս կարծէր զպատերազմն՝ կատարեցաւ: Մ'անաւանդ իրբե հայեր տեսանէր զբազմութիւն անկերց իւրոյ կողմանն, և թիւ համարոյ ևս առնէր, և իրբե այնշափ յոլով գտանէր զիւր անկերան քան զհայոց գնդին, ևս առաւել վասն երկելի արանցն, զորս յականէ յանուանէ զիւրէր թագաւորն, ի մեծ տագնապի լինէր այրն յանձն իւր: Արդարութեամբ զիրսն գըել և ցուցանել՝ ի թագաւորէն երկնչէր, գարձեալ և թագուցանել ևս ոչ կարէր, քանզի ոչ ծածկէր այնպիսի մեծ կոիւ:

17. Եւ մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էր յանձն իւր և նեղէր ի միտս իւր, ուրացեալն վասակ որ զանձն իւր ի մէջ գաղանացն թագուցեալ ապրեցուցանէր, միիթար մատուցանէր մտացն լքելոց . և ուսուցանէր նմանարս նենդութեամբ, թէ որպէս կարացէ մարտնչել ընդ ամուրսն խարէութեամբ: Երդմունն կնքէր արքունի հրամանաւ և վկայութեամբ անձին իւրոյ և խարեբայ երիցամբքն, որ ընդ նմայն էին, որատգամաւորս առնէր զնոսս, և երկեցուցանէր զթողութիւն ապառամբութեանն առ ի շինութիւն եկեղեցւոյ շնորհել անդրէն, և զամենայն կարգս անդրէն յարմարել ըստ առաջին առ փորութեանն: Թէպէտ հրաման թագաւորին հաստատու-

կան ի պատերազմին յաւուրն յայնդիկ, զոր ստուգիւ պատմեցին մեզ տեղեկացեալք ի զօրագիւացն Պարսից, 3544 այր ։ Եղիշէ այլ նոյնպէս իմանալ կերեի և բնն այր ի նոցանէ ի մեծ պատռաշորացն էր ։, անշուշտ ի Պարսից, քանզի եթէ այս բնն անձննք հայ նախարարք ըլլային, մեր պատմիչքն կը յիշատակէին զնոսս: Գիշ մը ստորե Եղիշէ կ'ըսէ թէ Պարսից կորսւուը եօթնպա-

տիկ էր քան զհայոցն: Մարթ է իմանալ թէ 3544 ի մէկ ութերորդը՝ 443 յուրացեալ Հայոց էր, իսկ մացածը՝ 3101՝ ի Պարսից:

Թէոդոսիոյ տպագիրն ունի. ։ Իսկ ի կողմանէ ուրացելոցն և ներանոսաց անկանէր յայնո՞ւ աւուր 3544 այր . . . մանաւանդ իրբե եռես (Նիւսալաւուրաւ) զանհնարին հարուածան եռապատիկ զիւր գնդին ։ :

թեամբ էր տուեալ, վասն զի յոյժ բեկաւ զօրութիւն նորա, որպէս զի երկոքին կողմանք՝ նորա հարան, առ կայն զօրքն Հայոց վասն նենգութեանն վասակայ, որ բազում անգամ հասեալ էին ի վերայ ստութեան նորա, վասն այնորիկ և հրամանի թագաւորին վաղվաղակի ոչ կարէին հաւատալ:

1. Իմա՞ Քուշանաց զերջին պատերազ- Հայուսանի մէջ երաց իւանաշխաթ զի-  
մին անշաղող եւքն (Տե՛ 8. Գ. 78) և ուկը:



# ԵՕԹՆԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ՅՈՐՈՒՄ ՆԿԱՐԱԳՐԻ ԳՈՐՉԵՈԼ, Ո.Ո.ՔԻՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՅ ԵՒ ԶԱՐԱԳՈՅՆ ԵՒԾ ԵՐԵՒՆԻ ԱՆՈԲԵՆԱԹԻՒՆ

Վ. Ա. Ա. Կ. Ա. Յ

1. Արդ դարձեալ յայնժամ՝ զրդեաց<sup>1</sup> զՄուշկան Նիւ-  
սաղաւորս և զամենայն աւագանին Արեաց, առեալ ըգ-  
զօրսն՝ հասանէր ի վերաց ամրոցին<sup>2</sup>, յոր անկեալ էին  
գունդ մի ի զօրացն Հայոց հանդերձ սուրբ քահա-  
նայիւքն, և մարտ եղեալ կոտէին շուրջ զրերգաւն։ Եւ  
իբրև ոչ ինչ կարացին աղդել նոցա, դարձեալ յերդ-  
մունս ապաստան եղեալ, զի ուխտիւ իջուցեն զնոսա ա-  
ռանց զաւ ինչ զործերց, եւ երկիցս և երիցս անգամ  
ետուն տանել զաւեաարանն։ Թէպէտ և քահանայքն  
յանձն առնուեին զիջանէին կալ առաջի, բազումք ի զօրա-  
կանացն ոչ կարէին հաւասար սուտ ուխտին վասակայ-  
քանզի սկսաւ երթալ Մուշկան Նիւսալաւորտ զհետ չար  
խրաստուն վասակայ։

2. Եւ ոմն ի քաջ զօրականէն Հայոց, որ անկեալ էր  
ի բերդն փախառեամբ, Բակ անուն, ելեալ ի պարխապն  
թշնամանս դնէր անօրինին, և յիշեցուցանէր առաջի  
Պարսից զօրագլխին զամենայն շարիմն, զոր անցուցեալ  
էր նորա ընդ աշխարհն Հայոց։ Յորոց բազում իսկ  
լուեալ՝ արդարացուցանէին զամբաստանութիւնն, ոչ միայն

1. Ալասակ։

2. Ամրոցիդ անունը շտար Եղեշէ։  
Փարզեցին աւ չմիշասակեր սորա պա-

շարումը։ թէպէտե տեղ մը կը զբուցէ

եպիսկոպոսաց և Պետոնդայ ձեռք ընկած  
ըլալը։

ի Հայոց կողմանէն, այլ ևս առաւել զօրքն Պարսից։ Ապն  
այրս այս ի նմին գիշերի եօթն հարիւր արամքը ել գը-  
նաց ի բերդէ անտի, և ոչ կարացին ձեռն արկանել ի նա:

3. Իսկ որ ի ներքս յամինն մնացին, թէպէտ և  
գիտէին ճշմարտիւ զխարերայ երգմնանս նոցա, ոչ ու-  
նէին համբար ի ներքս իրիւ ոչ կամաւ իջեալ կացին  
առաջի, հրամայեաց սպանանել ի նոցանէ երկերիւր և  
երեքտասան այր։ Ազաղակեցին ամենեքեան և ասեն.  
Գոշանամակք զքէն Տէր Աստուած մեր. մինչդեռ շէն են  
եկեղեցիք և անքակ տաճարք վկայից՝ և միաբան սուրբ  
ուխտ եկեղեցւոյ առաքինսցեալ, արժանի արարեր զմեզ  
կոշմանդ երինաւորի։ Հաւասարեսցէ մահս մեր ընդ մահ  
քաջ նահատակացն, և խառնեսցի արիւնս մեր ընդ ա-  
րիւն անկեալ վիրաւորացն. և հաճեսցի Տէր ընդ եկե-  
ղեցիս իւր՝ բազմութեամբ կամաւոր զուարակացս, որ  
ելանեն ի վերաց սուրբ սեղանոյս։ Զայս ասելով ի տեղ-  
ւոջն կատարեցան երկերիւրքն և երեքտասանկին։

4. Իսկ սուրբ քահանայքն՝ որ անդ գիտեցան յա-  
մուրսն, երանելիքս այս Յովսէփ և Ղենդ բազում ըն-  
կերակցօքն իւրեանց, մատուցին և նոքա զպարանոցս  
իւրեանց առաջի որոյ դահճապետին, ասելով զնոյն բանս՝  
զոր խօսեցան երկերիւրքն։ Քանզի ոչ եթէ ակնկալու-  
թիւն ինչ էր երանելեացն ըստ մարմնաւոր կենացս, այլ  
խմասութեամբ հնարս ինդրէին լինել փոխանակ ամե-  
նայն աշխարհին շինութեան։ Վասն որոյ և բոզոք ի  
զուռն կարգային, և զամենայն ամբաստանութիւն ար-  
կանէին զանօրէինն զվասակաւ։ Զայս իրիւ լուսու Մուշ-  
կան Նիւսալաւորս, ոչ իշխեաց ի նոսա ձեռն արկանել  
մահուամբ. այլ զՅովսէփ և զՂենդ գան հարեալ, հրա-  
մայեցին պահել զգուշութեամբ. քանզի բոզոք ի դուռն  
կարգացին։ Իսկ զայլ քահանայսն արձակեցին յիւրա-  
քանչիւր տեղիս, հրաման սուեալ վասն շինութեան և  
խաղաղութեան աշխարհին։

1. Տաճարք վկայից կամ վկայարանք.  
տես Յ. Բ. 73. 8n. 3:

2. Բարձրագոյն իշխանութեան բոզո-  
քելու երաւունքը Հառմայեցիք ալ ու-

նէին, որ Պօղոս առաքելոյն մահուընէ  
ազատելուն պատճառ եղաւ. Գործք Ա-  
ռաքելոց գլ. իշ։

5. Այլ մարդիկն Հայոց<sup>1</sup>, որ հասեալ էին ի վերայ յեղյեղուկ հրամանաց թագաւորին և ուրացեալ շարիմացին վասակայ, ոչ ինչ հաւատային սուտ թաղութեանն, այլ քաջալերէին զմիմեանս և ասէին. Զի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս, և կամ ընդէր տեսանեմք զարե յետ մերոյ սիրելեացն: Զի եթէ քաջ նահասակըն մեր անկան ի մեծ պատերազմին, և բազում վիրաւորք տապալեցան յարին յապաժոյժ ի մէջ դաշտին, և ամենեցուն մարմիկըն եղեն գէշ թռչնոց և կերակուր գազանաց, և պատուական նախարարքն մեր հասին յանարդութիւն թշուառութեան, լքին զիւրագանչիւր իշխանութիւն և են ի հալածանս նեղութեան, որ և ամենայն փափկութիւնն Հայոց եհաս ի վիշտս փտանգի և յանհնարին ապականութիւն, ոչ անսամք խարերայ հրամանացդ և անկանիմք ի ձեռս անօրէն իշխանացդ:

6. Թողին այնուհետեւ իւրաքանչիւր զգեօզո և զաւանս և զագարակս. ելին հարսունք յառագաստից<sup>2</sup> և փեսայք

1. Այսինքն անոնք որ զէնք առած էին Սասանեանց իշխանութեան գէմ կամ յանցաւոր նկառուելով կրնային վախ ու նենալ կեանքերնուն համար: Կարծի չէ կառձել թէ բոլոր հայ ժողովութքը բնակութեան տեղերնին ձգելով խաղտեաց և Տմորեաց ամուսներուն և Արձախոյ անտառաց մէջ փախած ըլլար, որ այնշափ մարդ ոչ կրնային պարունակել և ոչ մնուցանել: Խոկ սոցա կանանց լեռները ապաւինելուն պատճառը նախ այն էր, որ ըստ պարսկական օրինաց ապօտամերելոց կանայք և զաւակունք իրենց արանց կամ հարց յանցանց ի պատիճ սովորաբար գերի կը տարսէին ի խուժաստան, և անդ արքունի ապարակաց մէջ ծանր աշխատութեանց կ'ենթարկուէին. և երկրորդ՝ որովհետեւ քաղաքական յուղմանց մէջ անպատսպար կանանց և ողոյոց նկատմամբ խմբքութիւնը անզական մը կ'ընէ Եղիշ այս և հատակայ էջիս մէջ, որ ուրեք ուրեք կը նամանի

Մակաբայեցոց Առաջին գրքին Բ. Գրեխոյն. «Եւ զի՞ պիտոյ են բնաւ մեզ այս կեանք»: ևն: Բայց Եղիշեայ բացատրութեանքը շատ աւելի անուշ և խորունկ տիրութեամբ խմորեալ են քան Եցրայցին հեղինակինը:

2. Առագաստ է ըստ հայկ, բառարանի ներքին սենեկակ հարսին և փեսայի: Հայաստանի մէջ չկայ մոխրով ծածկուած և պահուած Պամոլէա մը, և մինչև ցայմը անոր ծոցոյն մէջ չկատարուեցան ըստ բաւականի պեղմունք, որով կարողանայինք որոշ զագափար մի առնուլ հին բարեկեցիկ Հայոց տանց արտաքին և ներքին ձերին և բաժանմանց նկատմամբ: Մարթ է սակայն կարծել թէ հաստատուն բաժանմունքն այժմեան եւրապական տներուն մէջ տեսնուածէն շատ պակաս էին. սենեակները կամ սրահները՝ ընդարձակ և բաժրաձեղուն, բայց թուով յոյժ սակա ըլլալու էին, և սոցա մէկ մասը Ընդհանրապէս վարագուրաւ զատելով հարսին և փեսին կը յատկացը-

ի սենեկաց, անկան ծերք յաթուոց և տղայք ի գրկաց. երթային երխուսարպ-ք և կուսանք և ամենայն բազմութիւն արանց և կանանց, հասեալ ունէին զամուրս անապատին՝ և զանխար տեղիս բազում լերանց : Լաւ համարէին զգազանաբար ընակութիւնն աստուած պաշտութեամբ ի քարանձաւս կելոյ, քան ուրացութեամբ փափկանալ յիւրաքանչիւր շինուածու: Առանց տրանջելոյ համբերէին խոսաբուտ կերակրոցն, և ոչ յիշէին զսովորական խորսիկան: Համարեալ էին նոցա դարանափորքն իրբե զյարկս բարձր շինուածոց, և գետնանկողինքն իրբե զնկարեալ պատշկամ:

7. Սազմուք էին նոցա մրմունչք երգոց, և ընթերցուածք՝ սուրբ գրոց կատարեալ ուրախութիւնք: Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր սուրբ սեղան, և ոգիք նոցունց՝ պատարագ ընդունելի: Քանզի ոչ ոք ի նոցանէ ողբայր յուսահասութեամբ զանկեալսն ի սրոյ, և ոչ ոք հեծեծերով հառաչէր ի վերայ մերձաւոր սիրելեաց իւրոց: Խնդութեամբ ընկալան զյափշաակութիւն ընչից բազմաց, և ոչ յիշէին ամեննեին՝ եթէ եղեալ իցեն նոցա ստացուածք: Համբերութեամբ ճգնէին և մեծաւ առաքինութեամբ տանէին զքաջ նահասուակութիւնն: Զի եթէ ոչ բացաւ աչօք տեսանէին զյոյմն խնդալից, և ոչ կարէին խակ գործել զայնպիսի մեծ առաքինութիւն:

Նէին, ուստի և առագաստ անունդ տըրուած ըլլալու է ոսցա սենեկին: Մինչեւ ցայզմ կոստանդնուպոլսոյ և Փաք Աստիոյ՝ կրակէ և փառութենէ աղասած շատ չին շինութեանց ունանց մէջ նոյն ձարտարապետութիւնը տեսնուած է. Ներքին բաժանուակները աւելի ընդարձակ սրաներ են քան խցեր. այս սրաներուս մէկ անկեան կամ մէկ կողմէին յատակը երրեմն շատ բարձր է սրանին մետած յատակէն, և սորո չոր կողմը աղակւով և վարագուրօք զոցուած մինչեւ ցառագաստ. իսկ ներսի դին անկողին դնելու համար հաստատուն մահականեր շինուած են: Ասոր նման բան մի էր ան-

շուշտ իշիշէի քիչ մը ստորեւ նկարեալ պատշիամբք: — Կոստելու համար կ'երեկի մէկ չափ աւելի արու կը գործածէին քան տաճկական կոշուած բազմոցներ:

1. Անեպատ չէ աստանօր դարս աւագայ, այլ անշէն, անմարդ, անկոփ անզը. նալի տեղի. պատահի հակառակը: Ասի ևս անեպատ լերինք: Արդի պարոկերէն ապատ կամ ապատան. բացասականն ալ գտանի Բազանտ գրաց մէջ անավատան:

2. Թէպէտէ նախարարոց և սեպաց մէջ ալ տականին կարդալ գրել շդիոցներ կային, բայց նոր զոգրութեանց գիւտեն ի վեր ընթերցումք որ ըստ օրէ տարածուելու վրայ էր:

8. Քանդի բազումք յազգէ ի մեծ նախարարացն էին, և եղբարք և որդիք և դատելք, հանդերձ ամենայն սիրելեօք իւրեանց ի մէջ ամրական վայրացն, ոմանք յանըց երկիրն խաղուեաց<sup>1</sup>, և այլ բազումք ի կողմանս հարաւոց՝ յանմասայց ամուրսն Տմորեաց, և կէպէն ի թանձրախիտ մայրին Արձախաց<sup>2</sup>, և այլ ոմանք անդէն ի միջոց աշխարհին<sup>3</sup> բռնացան ի վերայ բազում ամրոցացն: Եւ ամենէքին մեծաւ համբերութեամբ տանէին զբազում նեղութիւնն վասն յուսոյն Աստուծոյ, ազաշերով զայս միայն խնդրէին յԱստուծոյ, մի տեսանել նոցա զաւեր սուրբ եկեղեցեաց:

9. Այլ որպէս ցուցաք բազում անդամ՝ զամբարշտին՝ չարութիւն, յորդորէր և ստիպէր զզօրսն Պարախց ի մօտաւոր կողմանց աշխարհին, զի հրամանաւ արքունի զօր եկեսցէ յօդնականութիւն նոցա: Եւ հասեալ բազում այրուձի՝ յաւերոյր ի թիւ անկելցն, և լինէր զունդ բազմութեան իրբեւ զտուածինն: Եւ յառաջ խաղային ի միջոց աշխարհին, մարտ եղեալ կոռուէին ընդ մեծ ամուրս կապոյտ լերինն<sup>4</sup>: իսկ որ ի ներքսն էին՝ քաջու-

1. Կ' նշ գեղեցիկ բացարութիւն. ան-  
ոյս երիխն խաղաւաց, որ կու յեղեցնէ  
մեզ Ոդիսականին Ափմւերեան խաւարը  
(տես ԺԱ. Դրաւագին սկիզբը): իսկ խաղ-  
աւաց գիրքը տես Էջ. 327. Ժան, 2:  
Բայց ասս Եղիշէի խաղաւաց արեեեան  
մասը՝ այս է Ճորոխի և Պարխար Լիրանց  
մէջ աեղին կիւրծիստան կոչուած վիճակը  
կ'իմանայ: Փարագեցին Հմայեկայ բռնած  
տեղը պայտս կը սահմանէ: «առ վայր  
մի առ լեռամբն որ կոչի Պարխար, մերձ  
առ սահմանակցութիւնն խաղաւաց, ամ-  
բագդին տեղի մի գանեալ դագարեցին»  
Էջ 219. բազգաւէ և Եղիշէի ըսածն Յ.  
Է. 12: — իսկ աելոյն կոչուելուն պատ-  
ճառը, երկրին անտառախօս և ընդհան-  
րագէս միզամած ըլլան է: Ճորոխի ձո-  
րը, ինչպէս և Տրագիզնի և Գասմամ-  
պուի նահանգները Օսմանեան պետու-  
թեան ամենէն հարուստ անտառները կը  
պարունակեն, ուր երկինք սովորաբար

ամպոտ են և մառախուզք անզակաս:

2. Տես Տմորիք և Արմախ Յ. Գ. 14.

Ճն. և Յ. Է. 11:

3. Այս է նահանդն Ամբարատայ:

4. Վասակայ:

5. Ըստ Ալեշան վարդապետի Երզրումի  
հիւսիսակողմը զանուող կեոր կամ Քոր-  
տապըն կապոյտ կը կոչուէր. այս լեռնէս  
կը բզին Եփրատ. Պլինիոս ալ կ'ըսէ  
թէ Եփրատ Մեծին Հայոց Կարին գա-  
ւառին մէջ կը բզինի (Prefectura Ca-  
ranitide) և թէ ի մօտոյ տեսնազնե-  
րէն Պուսես Կորբուզն զազմերակունո  
նորս գնէ ՅԱպա լեռան, և Լիկիանոս  
Մուկիանոս՝ ի սուրու լերինն որ կոչէ  
Capotes, 12000 քայլիք շափ անդը  
քան զջիմանա: — Բայց կեօր լեռնդ,  
որ կասոյոյ կը նշանակէ, Եղիշեալ ակ-  
նարկածը չկընար ըլլալ: որովհետեւ Եր-  
զրումի արեմտեան հիւսիսային կողմանքն  
Յանաց բաժնին մէջ էին: «Հ Արդա-

թեամբ մարտուցեալ հարկանէին զրագումն ի գնդէն Պարսից, և զմնացեալն փախստական ի բանակն արկանէին; իսկ նորա դարձեալ յողոքանս մատուցեալ, նուածել խարէութեամբ կամէին:

10. Իբրև ոչ ոք հաւասար իջանել առ նոսա, զի մի մասնեսցին չարաշար ի ձեռս թշնամեացն, սակայն վասն երգմանցն հարկ եղեւ քահանայի մի իջանել առ նոսա, որում անունն էր Արշէն: Խօսէր ընդ նոսա յաղերս ընտանութեամբ, և ցուցանէր<sup>1</sup> զանվասա փախուստ անմեղացն. արկանէր գութ առաջի տրացելոցն վասակայ, և պաղտաներով յիշեցուցանէր նմա զառաջին կարդ ուխախն քրիստոնէութեան, զի թերեւ սակաւիկ մի քաղցրասացի յանհնարին գառնութենէն: Այլ նա ոչ ինչ լուաւ և անսաց բազում բանիցն նորա, կապեաց և խաղացոյց զերանելին և որք ընդ նմա իջեալ էին:

11. Մանաւանդ իբրև ետես եթէ երթայ զօրավարն զհետ խրատու կամաց նորա, սկսաւ այնուհետեւ ի բազում տեղիս արձակել զասպատակաւորն, և զոր արտաքոյ քան զամնորսն զտանէր զբազմութիւն մարդկանն, վարեցին ի գերութիւն. և զամբար<sup>2</sup> ի ձեռն առեալ հրձիգ առնէին զբազում տեղիս: Իսկ որք էին յամուրս ջմորեաց, իբրև լուան զայս ամենայն չարիս, զոր գործեցն զօրքն արքունի, ոչ ինչ շահ օգտի համարէին զկալն ի մէջ ամբականացն: Քաջութեամբ ելեալ յարձակեցան օգնականութեամբ ամբականացն, և հասեալ ի մօտաւոր աշխարհն Պարսկաց, յանինայ կոտորելովն նախճիրս արեան գործէին, և զմնացեալն գերի առեալ տանէին, և անդէն յամնորսն արկանէին, և զշինուածս աշխարհն՝ զամբար ի ձեռն առեալ հրց ճարակ տային:

12. Դարձեալ և որք էին ի լերինս խաղտեաց, իբրև

նանք և ոչ Պարսիկը կընային արամանալ անոր: Ասկէ զատ Եղիշէի կապոյս լեռը ի միջոց աշխարհն վնասելու է: Կարելի է թէ Ալինիսի ակնարկած կապոյս լեռը՝ Պինէօլն ըլլայ (որպէս կարծէ և Քիփէրթ) որ օժանդակ գետ մը կ'արձակէ յշփրաս: Ասկէ յառաջ (առև էջ. 287. ծանօթ. 2) ցուցուցիչը թէ կապոյս բերդ մը կայսեր մէջ. և թէ կատոյոյ լեռուն հաւանորէն կազզմանի լեռն է:

1. Բայիկ իմասուը մը ին կ'երեի ասու.

զուցէ Եղիշէ կ'առայրիկը ըսել կ'ուզէ:

2. Ղամբարաւ հրձութիւնք միայն վասակեանց յատուկ չեւ, առև ի վերջոյ հասածիս:

տեսին եթէ յանդգնաբար զօրքն Պարսկաց յաներկիւզո  
իջանէին յամուլս աշխարհին Հայոց, յարձակեցան և  
նոքա մեծաւ զօրութեամբ ի ձորագաւառն Տայոց<sup>1</sup>: Եւ  
գտին անդ գունդ բազում ի զօրացն արքունի, որ գե-  
րի առնուլ կամէին զամբականս աշխարհին, դարձեալ և  
կարծէին ևս եթէ գանձք նախարարացն անդ իցեն,  
վասն այնորիկ և յանխնայ յուղէին զվայրան:

13. Դա տեսին ևս անդ ի գեօզս երկուս, զի զեկե-  
զեցին այրեցեալ էր, առաւել ևս վասն այնր ի նախանձ  
բրդեցան բարկութեամբ: Յարձակեցան, հարան ի գիմի  
միմեանց, և կամակարութեամբ յաղթեալ, բեկեալ ար-  
կին զզօրութիւն գնդին Պարսից, և կոտորեցին զբա-  
զումն ի նոցանէ, և զմնացեալսն փախստական հանէին  
յաշխարհէն: Եւ յայնչափ յանդուգն յարձակմանէն՝

1. Փարպեցին պյագէս կը պատմէ  
Տայոց Ճորագաւառին կախը. «Այրոր-  
միզդ գունդ կազմէր այրընտիր բազմու-  
թեամբ ի Պարսից և ի Միհեաց՝ ի զե-  
րայ ժողովելոցն առ երանելին Հմայեակ  
յամուրան Տայոց. և յերկուս բաժանեալ  
զգունդն՝ կարգէր նոցա զօրագլուխս զԱր-  
տէն Պարեզեան և զԱլարազշապուհ Պա-  
րսին: Քանդի բազմութիւն փախստէիցն  
Հայոց, նախարարը և սեպուհը, ոստանիկը  
և սամիկը՝ դիմեալ ի յերկիրն Տայոց,  
ժողովէին առ Հմայեակ էզրայը Վարդա-  
նայ, որ էր յամեալ յաշխարհին Յունաց.  
Խանդրել զօրս ի թագուարէն, ըստ յա-  
սովագյն զրելոցն կարգի. (Տես Էջ. 298. ծան. 2)... Ըստ մինչդեռ յապաշեալ  
էր զրոյց պատասխանւոյն, հասեալ զործ  
պատերազմին Հայոց և Պարսից կատա-  
րէր: Եւ տանուաեարքն Հայոց... դար-  
ձան և փութացին: Բայց ոչ ժամանեալ  
ի զործ ժամու պատերազմին, առ վայր  
մի առ լերամըն որ կոչէ Պարխար՝ մերձ  
առ սահմանակցութիւնն Խաղտեաց, առ-  
բագրի տեղի մի գտեալ դարձրեցին, թէ  
որպէս առաջիկայ իրացն մարթացեն  
պատրաստել: Յորոց վերայ տեղեակ ա-  
ռաջնորդօք եկեալ զյայրն, և ընդ ծա-

գել առաւտառն պատրաստքն զինուք  
անկանէին ի վերայ այնց նորին ընկե-  
րաց՝ Հմայեկայ Մամիկոնէի, ի գիւղն  
որ անուանի Որշնհաղ՝ ի գաւառին Տայոց.  
քանդի ի ժամուն իջեալ էին ի յամբո-  
ցացն լերին Պարխարայ. որը փախը-  
տեիցն ճեպով յիւրաքանչիւր երիվարս  
հասանէին: Ումանկը մերկանդամբ և ումանք  
զինեալք հարկանէին ի զօրացն Պարսից.  
և գարձուցեալ ընդ կրունկն անդէն փա-  
խստականս առնէին. յորոց զբազումն  
անդէն ի շինամիջին և զայլս ի մէջ այ-  
գեստանույն յերկիր կործանէին: Անդ  
զկատարելութեան պսակն ընկունէր Հը-  
մայեակ... իսկ զօրն ուխտապահացն որը  
առ սրբոյն Հմայեկի... անդէն ի վեր ի  
լեռան դառնային ի Պարխար ։ Ճորոխի  
աջակողմը կայ մինչեւ ցարդ Որշնազ գիւղ  
ի ստորե Սպերայ: Տայլք լեռնուտ, բազ-  
մանվիտ և լրաշատ՝ վասն որոյ և գե-  
ղեցիկ երկիր մի է, ունէր բազմամարդ  
մեծամեծ աւաններ, թորմում քաղաք,  
Ռեխտիք՝ այժմեան Ոլրի. Արգուին և  
այլն: — Պարսիկ զօրականք կը յուղէն  
զվայրան՝ լսելով որ ապստամբ նախարա-  
րաց թանկագին զոյքն և գանձն անդ  
տարուեր ու պահուեր են:

միայն երանելին Հմայեակ, եղբայր սպարապետին Հայոց վարդանայ, յանխնայ քաջութեամբ մարտուցեալ՝ կատարեցան ահաստակութեամբ ի վերայ սուրբ ուխտին միաբանութեան: Եւ այլքն ամենայն ողջանդամ՝ ապրեալք երթային գհետ փախատականին:

14. Եւ իբրև այս այսպէս կատարեցաւ, դադարեցին զօրք թագաւորին խառնամուխ լինել յամենայն տեղիս անխստութեամբ, և ևս առաւել ձեռնպահ լինել եկեղեցեացն<sup>1</sup>: Դարձեալ միւսանդամ՝ անդքէն հարցանել սկըսան յարգունիսն:

15. Նա և որ յԱրձախայ մայրիսն անկեալքն էին փախստականք, ոչ ինչ լրեալ դադարեցին խաղաղութեամբ. այլ հանապազ յղէին յաշխարհն Հոնաց շարժէին և յորդորէին զգունդն Հոնաց, և յիշեցուցանէին նոցա զրւխան<sup>2</sup> զոր եղեալ էր ընդ Հայու և անստու երդմամբ հաստատեալ: Հաճոյ թուէր բազմաց ի նոցանէ լսել զբանան քաղցրութեամբ: Նա և մեղադիր ևս յոյժ լինէին նոցա, եթէ ի կոին ընդէ՞ր ոչ եկիք պատրասթեամբ: Եւ իբրև յառաջնումն ինչ ոչ հնարէին զմիմեանս հաւանեցուցանել, ապա գունդ բազում գումարէին, և անդէն յարձակեալ հասանէին<sup>3</sup> ի սահմանս տէրութեանն Պարսից. և զբազում գաւառս հարեալ, բազմագոյն ևս գերի առեալ տանէին յաշխարհն իւրեանց, և յայտնի ցուցանէին թագաւորին զմիաբանութիւն՝ զոր ունէին ընդ գնդին Հայոց:

16. Իսկ իբրև այս ամենայն ազդամն հասանէր առ զօրավարն Պարսից, սրտմուեալ զայրանայր. և մեծառ բարկութեամբ կուտէր զմասն ի վերայ անօրինին վասակայ, իբր թէ նո իցէ սկիզբն և առաջնորդ ամենայն չարեացն, որ գործեցան: Եւ անդէն չու արարեալ դընայր խաղայր հասանէր յաշխարհն Պարսից. զրէր և ցուցանէր յարգունիս զամենայն ստուգութեամբ, և զվենաս գործոյն արկանէր զուրացելովս:

17. Իբրև լուաւ թագաւորն զամենայն աւեր աշխարհին, և ստուգեաց զիրս մեծի պատերազմին, բեկանէր

1. Թէոդոսիոյ առ՝ յեկեղեցեացն:  
2. Յ. Գ. 63:

3. «Լինէին» կը յարաբերի Հայոց.  
եսկ գումարէին և հասանէին Հոնաց:

անկանէր ի մեծ խրոխտալոյն, և լռեալ դադարէր ի հանապազորդ և ի խարերայ խորհրդոցն . յուղէր և քննէր զվրիսպոմ անհանձար գործոյն, և կամէր տեսանել՝ ասելով. Ո՞ ոք իցէ որ զիս ճշմարտութեամբ ի վերայ իրացդ հաստացէ: իսկ որ էր գիտակ անօրէն գործոյն, անդրէն ի գրան արքունի, նոյն հազարապետն Միհրներսէհ, յառաջ մասացեալ ասէ ցիժագաւորն . Զայդ ես ասեմ քեզ, արքայ քաջ, եթէ կամիս ատուգութեամբ լսել զարդարն, որք զլիսաւորքն քրիստոնէիցն են ի Հայս, տուր կոչել, և գան յօժարութեամբ և ասեն քեզ զամենայն արդարութեամբ:

18. Յայնժամ զմի մն յաւագ նախարարացն, Առլորմիզզ <sup>1</sup> անտոն, որոյ իշխանութիւնն իսկ խառն էր ընդ Հայոց աշխարհին և գործակից էր զօրավարին ի նմին պատերազմի, գրէր և յանձն առնէր նմա զաշխարհն Հայոց մարզպանութեամբ: Եւ զՄուշկան Նիւսալաւորա հանդերձ ամենայն մեացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից և Լինաց և Ճ'զբաց և ի Հեճմատակաց և ի Թաւասպարաց և ի Խիրխովան <sup>2</sup>, և յամենայն ամրականն, դրս աւերեալ էր զնդին Հոնաց վասն ուխտին Հայոց: Որպէս և յոյժ իսկ տրտմեալ էր թագաւորն, ոչ միայն ընդ աւել աշխարհացն և ընդ անկանել զօրացն, այլ ևս առաւել ընդ աւերել պահակին՝ զոր ի բազում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել. որ և յայնմ ժամանակի դիւրեաւ առեալ քանդեցաւ, որում և չէր իսկ ակնկալութիւն շինութեան <sup>3</sup>: իսկ զկասակ հանդերձ զլիսաւոր քրիստոնէիւքն ի դուռն հրամայեաց կոչել <sup>4</sup>:

1. Բազզատելով զԵղիշէ ընդ Փարոպեցոյ (էջ 215) Ատրորմիզզ Արշական Մուշկանաց հետ կը գանուէր ի Հայու: Արշական կոչուելէն կը հետեցնէ ԱՅՆ-Արդէն, թէ Պարթէ Արշակունեաց ցեղէ էր, որ առկաւին զօրաւոր և ազդեցիկ առնմ մի էին Պարսից մէջ: — Ի՞նչպէս մեկնելու է սակայն այս խօսք՝ որոյ իշխանութիւնն իսկ խառն էր ընդ Հայոց աշխարհին. գուցէ Ատրորմիզզ գեռ Հայաստան չեկած նիւսալաւորափափի հետ, արքունի գրան մէջ Հայաստանի վերաբերյալ գնացին ի գուռն արքունի:

բերեալ գործոց տեսուչն էր՝ իբրև քարութեանեաւը, կամ թէ ի Հայու իբրև քազարական վարիչ խրկուած էր, մինչ Նիւսալաւորա զինուորական գործոց միայն պիտի հակէր:

2. Ոչ բացառական հոլով այլ նախդրիւ արական. « յայխարձն Հեճմատակաց և յայխարձն թաւասպարաց: Տես Յ. Դ. 15 Ճն. 1:

3. Տես Յ. Ա. 9. Ճն 2:

4. Ըստ Փարոպեցոյ նախարարքն և եկեղեցականք զնացին ի գուռն արքունի

19. Արդ եկն եմուտ՝ մարզպանն Աստրորմիզդ յաշ-խարհն Հայոց սիրով խաղաղութեամբ։ Հրամանաւ ար-քունի կոչեաց առ ինքն զԱմահակ սուրբ եպիսկոպոսն Որշատնեաց, ուսանել ի նմանէ զիրացն ամբաստանու-թիւն։ Բայց թէպէտ և նորա աւերեալ էր ասրուշան մի, և բազում չարչարանօք հարեալ էր զպաշտօնեայս կրակին, ոչ ինչ զանգիտեաց դալ յատեան հրապարա-կին<sup>2</sup>. դարձեալ և ի տանէն Արծրունեաց բարեպաշտօն երէց մի Մուշէ անուն<sup>3</sup>, որ առաջնորդէր աշխարհին Արծրունեաց, աւերեալ էր և նորա զկրակատուն մի, և կապանօք և տանջանօք բազում չարչարանս անցուցեալ էր ընդ մոգսն. և սա ոչ ինչ զանգիտեաց, այլ կամաւ եկն և յանդիման եղեւ մարզպանին։ Եւ երկու ևս այլ քահանայք երանելիք, որոց անուանքն են Ատմուէլ՝ և

յերերասասներորդ ամի թափաւորու-թեան Յազկերտի (Էջ 223). այս է ըստ Պ. Լանկուռայի 452. Ըստ մեզ պատե-րազմէն քանի մը ամիս ետքն ըլլալու է 451ին վերջերը. քանզի Յազկերտի թա-դաւորութեան թուականը 438 տարւոյն սեպտեմբերէն հաշուել պարս է. Տես Էջ.

178. Ճն 2: իսկ յայնժմամ Արեաց դուռը գնացող նախարարաց անուանքն ասմաք-են. Արծրունեաց մեծ իշխանն՝ Կերշա-պուհ, իշխանն Վանանդայ, Արշաւիր Իամաւարական, իշխանն Անձեացեաց՝ Շմաւոն, Վահան Ամատունի, Գնիւ-նեաց իշխանց, Աշոցայ իշխանը, Առա-ւեկինից իշխանն՝ Փափագ, Տաշրայ իշ-խանը՝ Վըքն, Արծրունեաց իշխանն՝ Ապրամամ և ուրիշ տանուտեարք և աւագ սեպուհք. (Փարագ, 221)։ — Ասոնցմէ զատ խրկուեր էն Մամիկոնէից և կամ-սարականաց և այլ իշխանաց տղայքք, զոր վասակ կալեալ էր յառաջազդոյն (Խոյն 223). Տես Էջ. 310. Ճն 1:

1. «Եթէ երուս » էից չերեիր որով-հետեւ Աստրորմիզդ արդէն Հայաստան կը գտնուեր, ինչպէս բացորոշ կը ցուցանէ մեզ Փարպեցին, և Եղիշէ ալ ըստ, և գրէր (Յազկերտ) և յանձն առնէր նմա-

զաշխարհն Հայոց մարզպանութեամբ»։

2. Ոչտունեաց Ասհակ եպիսկոպոս ինչպէս և Մուշէ գերի չեին ընկած Յով-սեփայ և Չեռնդայ հետ յամրոցին։ Յ. Է. 1-4: — «Ատեան հրապարակին» բանզի հրապարակային էին դատա-սանք։

3. Արտաշատայ մեղովոյն անդամոց ցուցակին մէջ Եղիշէ ինչպէս և Փար-պեցին «Մուշէ եպիսկոպոս Արծրու-նեաց»։ Կըսեն. բայց աւելի վերջը Փար-պեցին զնա կը կոչէ դրան երէց իշխա-նին Արծրունեաց. Եղիշէ ալ այսուհետե զնա կ'անուանէ։ Երէց որ առաջնորդէրն աշխարհին Արծրունեաց։ Աղբակացի էր Մուշէ, (Փարագ, ԽՄ և Ծլ): Այլ է Մուշէ որ Սիւնեաց աշխարհին քահա-նայապետ եղած էր, և օգնական և ըն-կեր ուներ զիազար Փարպեցի, որ նոր գարձեր էր ի Հռոմոց (Տես Փարագ, Էջ 571): Քանի որ Աղբակացին Մուշէ, որ վկայացաւ ի Վասպէս, Արտաշատայ մո-ղովոյն ներկայ գտնուող Արծրունեաց եպիսկոպոսն է, բնինիրեն կ'իմայ այն ենթադրութիւնը ըստ որում Մովսէս Խորենացին Արծրունեաց եպիսկոպոս էր Արտաշատայ մողովոյն առնեն։

**Արքահամ<sup>1</sup>.** քանդեալ էր և սոցա զատրուշանն յԱրտաշատ, և յառաջադպյն բմբոնեալ էին ի կապանս յուրացեալն վասակայ. ածին և զնոսա յառաքինի ընկերսն: Եւ ժողովեցին ևս ի նոյն տեղի զմեծն Յովաէփ և զՂեմնդ և զԲաջաջ և զԱրչէն<sup>2</sup>: Եւ իբրեւ ուսաւ և տեղեկացաւ յամենեցունց մարզպանն, գրեաց և եցոյց յարքունիս գամենայն ճշմարտութեամբ որպէս զիարդ լուաւ ի բերանց նոցա:

20. Բայց վասակ թէպէտ և յառաջադպյն<sup>3</sup> հասեալ էր ի գուռն, ըստ կամաց իւրոց այլ ընդ այլոյ երթեալ պատմէր զամենայն ասութեամբ, սակայն ի միտ թագաւորին ոչ կարէր զանձն արդարացուցանել. այլ պատասխանի արար նմա և ասէ. Յորժամ՝ քրիստոնեայքն ևս եկեսցեն, հասարակ լուայց յատենի:

21. Իսկ զուորր քահանայն վամն զի կապանօք տանէին՝ յետ երկուց ամսոց և քսան աւուր հասանէին ի ձմերոցն արքունի<sup>4</sup>: Իբրև լուաւ մեծ հաղարապետն, եթէ ածին զնոսա ի քաղաքն, ինքնին իսկ ականատես լինէր նոցա: Բայց թէպէտ և տեղեկութեամբ լոէր ի նոցանէ զամենայն, ոչ կարէր ձեռն արկանել և չարչարել զնոսա. քանզի բաղումք ի նախարարացն Հայոց դեռ ևս բռնացեալ ունէին զամուրս աշխարհին, և զեռ ևս

1. Սամուել՝ երեց էր Արածայ գեղջ ոթիւն մ'ալ ունեցեր էր: Բայց որովհետեքահանայից ուզեռութիւնը ութուուն օքտեալ էր, հաւանական է թէ վասակ կէս ճամբէն ետքը վերստին աւելի շուտութեամբ երթալով, աւելի յառաջ ժամաներ էր ի Տիգրոն (223-228):

2. Քաջաջ սարկաւագ էր ի գաւառէն նշանակունեաց և աշակերտ եպիսկոպոսին Սահակայ: Իսկ Արշէն՝ երեց էր Եղեգեկի գեղջ, որ ի գաւառին Բագրեանդայ. Փարազ. 232: Իսկ Բասենոյ եպիսկոպոսը Թաթիկ՝ ըստ քանելոյ Արևեաց իշխանին, յառաջադպյն Խորեւեր էր ի Խուժաստան, ուր խիստ կապանօք կը պահուէր. Փարազ. 222:

3. Ծառ Փարազեցւոյ Վասակ զքահանայս իրմէ յառաջ ճամբայ էր. բայց ճամբարն աւելի հանապարհն էր ի հետեւանդուն ծեղ կ'երթցուի: Իսկ Արտազու, Խոյի, Ախուէյմանիյէի ճանապարհը շատ աւելի կարճ է (շուրջ 850 քիլոմէդր): Բայց քահանայք կապեալ էին ու մէջերնին ծերեր ալ կային. այս ալ կընայ պատճառ եղած ըլլալ ճանր երթալնուն:

մարզպանն յերկիւղի էր: Վասն որոյ զգուշութեամբ հրամայեաց պահել զաւրբան, և զաշխարհն հրամայէր սիրով նուածել:

22. Վասն որոյ և ինքն իսկ<sup>1</sup> շրջէր և ժողովէր և շինէր ուխտիւ հաստատութեան: Եւ եպիսկոպոսացն հրաման տայըր ունել զիւրաքանչիւր իշխանութիւնն, և ըստ առաջին սովորութեանն պաշտել յայտնութեամբ, և համարձակ եւս գալ ի հրապարակ: Նա և ընծայից և պատարագաց արժանի առնէր թողուլ զառաջեաւ<sup>2</sup>: Եւ քանզի բազում գաւառս առեալ և աւերեալ էր զօրականին, թողուլ հրամայէր զհարկս աշխարհին, և զայրուձին ևս զարքունի թեթևացոյց առ ժամնակ մի: Եւ միայնակեացք որք ելեալ և կորուսեալ էին, հրամայէր գալ և ունել զիւրաքանչիւր տեղին:

23. « Եւ զամենայն կարգս աստուածպաշտութեանն, որպէս զիարդ և ունէին յառաջ ժամնակաւ առ նախնազն, նոյնպէս և այժմ, ասէ, կալցին: Եւ եթէ ոք ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ իշխանութիւն յարքունուստ, ասէ մարզպանն, եթէ յազատաց իցեն, եթէ ի շինականաց իցեն, եթէ յեկեղեցւոյ, զինչ կեանս<sup>3</sup> և թողեալ իցէ, եկեսցեն և կալցեն զիւրաքանչիւր զարարս ». Երգմանի կնքէր և առաքէր ի կողմանս կողմանս: Որ և բազումք իսկ եկին և ժողովեցան, և կալան զիւրաքանչիւր կալուածու:

24. Նա և որ մեծն է քան զամենայն որ ի բանութենէ ոք ակամայ կալեալ էր զմնողութիւնն, հրավարտակս առաքէր<sup>4</sup> յարքունուստ, անդրէն ունել զքրիստո-

1. Այս է մարզպանն Ասրութիզդ:

2. Մթին է պարբերութիւնդ: Թէոդո-

սիոյ տոք՝ նա և ընծայից և պատարագաց արժանի առնէր զառաջեաւ կոչելով<sup>5</sup>:

3. « Կեանք զ դայք, ստացուածք: Կ'ե-

րեի թէ ընակութիւնը թողլավ հեռաւոր

աշխարհ գնացողներուն ստացուածքը զը-

րաւեալ էին. վասն որոյ Ասրութիզդ յար-

քունուստ իշխանութիւն շառած շկրնար

ետ դարձնել:

4. Բայց ամենէն մեծ և գժուարին

ինդիրը մազդէականութիւնը մէրմը ըն-

դունողներուն նորէն քրիստոնէութեան

դառնալու հրաման տան էր. Ասրութիզդ

իշխանութիւն չունի անձամբ այս ար-

տանութիւնս տալու, այս կը զրէ յար-

քունիս ու հրավարտակներ կը ստանայ՝

անշուշտ որիշ որիշ պարագայից և մէն

մի մարդու համար: Գիտեմք որ այլա-

դէն ազգաց զժութեամբ նայող մահմե-

տական պետութիւնք ալ մինչեւ մօտ ժա-

մանակներս, մահուան կը դատապար-

տէին, մահմետականութէնէ վերտին

իւր առաջին կրօնին դարձողը:

**Նէութիւնն:** Եւ յանդիման խօսէր թագաւորն, որք էին ի դրանն արքունի, եթէ «Որք ոչ սիրով ունին զգենիմազգէզն, այնպիսեացն և աստուածքն են յասուցեալ, և ես ոչ ինչ եմ շնորհակալ. և այսօր զնոյն հրաման տամ ամենեցուն, ի կամն մարդոյն թողեալ ըստ իւրաքանչիւր մտաց, որպէս զինչ և կամի պաշտել՝ պաշտեացէ. ամենեքեան իմ ծառայք են»: Զայս ասէր, և գրով հրաման տայր ամենայն աշխարհի:

25. Իբրև զայս լուան և տեսին բազումք՝ որ էին յանեալ և ցրուեալք ի հեռաւոր տեղիս, գային և ունէին զիւրաքանչիւր արարս: Խոկ նախարարքն որ էին յամնւրս աշխարհին և կամ ի հեռաւոր օսարութեան, իբրեւ տեսսին զշինութիւն երկրին՝ մանաւանդ զեկեղեցւոյն հաստատութիւն, քաջալերեցան համարձակեցան և նոքայանդիման լինել արքային: Վասն որս և պատզամ՝ յզեցին առ մարզպան աշխարհին, զի ի գուռն ցուցցէ զբանս նախարարացն: Խոկ նա վազվազակի յարքունուստ գիր սորբանաց և ուխտ հաստատութեան տայր տանել առ նոսս հրամանաւ արքանի: Բայց թէպէտ և դիտէին նոքա զգառնութիւն տէրութեանն՝ թէ սուտ են յամենայնի, կամեցան չարչարակից լինել որբոցն. զի եթէ մահ ևս առաջի կայցէ, ոչ ինչ զանդիտեսցեն երկիւղիւ:

26. Եւ զայս լուեալ թագաւորին, ոչ կապահօք, այլ արձակ սոտիւք և արձակ ձեռօք հրամայեաց առ ինքն կոչել: Այժին վազվազակի զեկին և զորդիւն, և զինչո իւրաքանչիւր ետուն ի ձեռու մարզպանին<sup>1</sup>. և ինքեանք փութանակի գնացին, ի ձմերոցն արքունի:

27. Եւ մինչ գեռ անդրէն ի ձմերոցին էր թագաւորն, ատեան հարցափորձի ի մէջ նոցա հրամայէր լինել: Եւ նատաւ հազարապետն<sup>2</sup> զի լուիցէ կողմանցն եր-

1. Կախարաք մարզպանին գիմելու մինչեւ մէկ աստիճան ստիպուած ալ էին, քանի որ ժողովուրդը իւր բնակութեան և զործոյն կը դասնայր, երկիրը կը իւազազանայր ու գիմակալութիւնը որ ըստ որէ աւելի կը դժուարանայր: Խակ զկանայր և զորդիս և զինչո նման յանձնելնին գուցէ մասամբ սոցա ապահովու-

թեան համար էր, բայց աւելի ևս իբրև պատանդ և զրուական Պարսից գուռն երթանուն, վասն զի առանց կապանաց և ազատ պիտի թողայր զնոսս մարզպանն:

2. Առա է Միհրներսէհ. որ և արդարութեան բարձրագոյն պաշտօնը կը վարքէր (Փարազ. 234):

**կոցունց:** Եւ իբրև յերկարեցաւ ամրաստանութիւնն զաւըրս բազումն, պարտաւորեցաւ կողմ՝ ուրացելոցն։ Քանզի ցուցանէին զիթուզիթոն՝ զոր տուեալ էր վասակայ և ամենեցուն որ ընդ նմա էին, զի միաբանք իցեն ընդ նմա յուխտ ապստամբութեանն։ Խուզիթ մի ի վրաց աշխարհէն, և թուզիթ մի յԱզուանից աշխարհէն։ սոյնպէս և թուզիթ մի յԱղձնիս, և հրովարտակ մի առ թագաւորն Յունաց, և թուզիթ մի առ մեծ սպարապետն Ունախորայ<sup>1</sup>։ Եւ ի բոլորեսին յայսափիկ թուզիթոն վաւերականի մաստանի<sup>2</sup> վասակայ եղեալ էր։ Սոյնպէս խառն էր նա և ի մահ մովուցն ի Զարեհաւանի<sup>3</sup>։ Եւ զբաղում բերդու զոր հանին ի Փարսկաց, յայտ առնէին զնորս թուզիթոն և զհրամաննան։ քանզի նա էր մարզպան ի ժամանակին։

28. Արագէս և հրեշտակութեամբ իսկ զոր յղեալ էր առ Յոյնս նախարար մի, որում անունն էր Ասոմ<sup>4</sup>,

1. Այդ նամակներդ յերեան հանողական ապօտամբ նախարարը չէին անշուշտ, վասն զի եթէ յաջողած ալ ըլլային Վրաց և Ազուանից գրուած թզմերուն բնագիրները ձեռք անցնել, կայսեր, Անտիոքյ ազարապետն խրկուաճները իրենց տրուած չէին կրնար ըլլալ։ Յունաց գրուաճները, ասոնց կողմանէ Պարսից թագաւորին՝ մասնութեամբ զըրկուած ըլլալու էին, ինչպէս մարմար է չետեցնել Եղիշէի ասկէ յառաջ ըստաձն։ Տես Յ. Գ. 51։ Այս թզմերէս միայն Յունաց կայսեր գրուածը յիշատակեց մեզ Եղիշէ ի ժամանակին։ բայց միւս ներն ալ նոյն առեն գրուեցան։ Տես Փարագ. 184։ Այս նամակներս նախ Ախենաց իշխաննին վասակայ և ապա ամենայն տանուտեաց մատանեաւ, կնքեալ էին։ — Անտիոքու ըստ Մինիժարեան տպագրաց։ և Անտիոքայ ըստ Թեոդոսիու սիրու տպագրին։ ուզիզ վերջինս է և ըստ պյամ պարտ է արբագրել զտպագիրս, որովհետեւ Արեւելից մեծ սպարապետը Անտիոք էր, որ կը նստէր ի քաղաքն Անտիոք։ Փարպեցին ալ յայտմ մասին

տարակրյա չթողուր (Տես Էջ 184 և 217)։

2. Թթէոգոսիոյ տոզ վաւերականն, իսկ Ա. պուլույ երկրորդն՝ վաւերական։ Անոական հոլովին ալ անշուշտ սիսալ չէ նոյն իսկ գոյականին ուզզական մնալովին։

3. Զարեհաւանի արկածը մեզ կը պատմէ Փարպեցին (Էջ 182)։ Բազդատիլով զսա ընդ Եղիշէի կը անսնեմք, որ այդ դէպք Երրորդ Յեղանակին 31 հաստածին մէջ նկարագրեալ իրաց կը վերաբերի։ — Զարեհաւանն զիսաւոր տեղի նշագկուան գաւառի հոյու, թուի մերձ կամ նոյն ինքն Տեսակին ի Պայազիտ գաւառի (Տեսկագիր)։

4. Տես Էջ. 293. Տան. 2։ Միթէ Ատոմ նոյն ինքն վասակայ և նախարարաց մատանեաւ կնքեալ հրովարտակը, այս է բնագիթը յառաջ կը բերէր. յեմք կարծեր. հարաւոր ալ չթուիր. ըստց միայն մէկ պարագայի մէջ եթէ Յունաց արբունիքը մերժեց կամ յետ ընթեռնլոց և երկարուէն խորհելոյ ետ զարձուց Ատոմայ զնամակն զոր բերեալն էր։ Կարծեմ թէ սորտ ամրաստանութիւնը սոսկ վկայութիւն մի է։

յազգեն գնունեաց . սա մատուցեալ յանդիմանէր զնա  
առաջի մեծի առենին հրօվարտակաւն իսկ՝ զոր առեւեալ  
էր նորա իւրով մատանեաւ : Նա և ի մէջ իսկ բերէր  
զամբաստանութիւն նորա Մուշկան նիւսալաւորտ՝ , և  
յայտ առնէր պատերազմակից ընկերօքն իւրովք , որ և  
յետ վճարելոյ պատերազմին բազում արիւն եռ հեղուլ  
վասակ . թէ որպէս սուս երդմամբք խարէր և իջուցա-  
նէր յամրոցաց անտի . էր՝ զոր կոսորէր և էր՝ զոր գե-  
րի առնէր զծառայս և զազախնայս արքոնի <sup>2:</sup> : Եւ ի  
վերայ այսր ամենայնի վասառ , և զող եւս զտանէր հար-  
կի աշխարհին , որ յարքոնիսն երթայր :

29. Նա և յուրացեալ ընկերացն նորա բազումք էին ,  
որ յայտ արարին զշարիս նորա՝ զոր գործեալ էր ընդ  
աշխարհն Հայոց : Եւ իմացեալ մոգացն և ի փշտիպա-  
նացն՝ որք ի կապանսն ապրեալ էին և ապա ածին յար-  
քոնիս , հարցին և ցնուսա վասն նորա և ասեն . Պաւք  
էք ինչ տեղեակ վասն շարութեան սորա : Ետուն պա-  
տասխանի և ասեն . Ամենայն անցք չարչարանաց՝ որ ան-  
ցին ընդ մեզ , և բազում հարուածք որ եղեն ի զօրքն  
արքունի , եւ աւեր և գերութիւն աշխարհին Հայոց , և  
կորուստ հարկացն արքունի , սկիզբն և առաջնորդ չա-  
րեաց այրդ այդ եղեւ :

30. Եւ մինչ գեռ այս ամենայն ամբաստանութիւն  
զնմանէ էր զայնչափ բազում աւուրս , յառաջ մատեան  
և իւր ազգականկըն <sup>3:</sup> , որ ևս յառաջագոյն դատախազ

1. Կ'երեի թէ գարձած էր յԱղուա-  
նից երկրէն , ուր խրկուեր էր (Յ. է  
18) : Փարզեցին առ թէ երբ Արոր-  
միզգ մարզպան կարգեցաւ , Մուշկան կո-  
չեցաւ յարունիս : Բայց Ղազար աւելի  
համառու զրած է զիւր պատութիւն  
քան Եղիշե . և շատ հաւանական ալ է ,  
որ Մուշկան Հայաստանի մէջ զրծը  
լմացընելէ յետոյ հրաման ընդունեցաւ  
Ազւանից երկիրն այցելել , այն տեղի  
խառնակ վիճակը կարգադրելու և ձո-  
րաց պահակն աչքէ անցնելու համար . ու  
այնուհետեւ գարձաւ ի Տիգրուն :

2. Արեւելեան թագաւորք սովոր են

ծառայ և ազաթին կոչել զհպատակս իւ-  
րեանց . և Ամեներեան իմ ծառայք են ։  
Կըսէ Յազկերտ Յ. է 24:

Յ. Վասակայ ազգականներէն Պարսից  
գուռը կը գտնուեին յայնժամ իւր փե-  
սայն Վարազգազան և իւր եղբօրորդիքը՝  
Բարգէն և Բակուր , զորս հալածէր էր  
Վասակ (Տես Յ. Դ. 18 և էջ 54) : Բայց  
ո՞վ էր Վասակայ եղբայրը և ինչ կո-  
ղէր Վասակ իւր եղբօրորդիներէն : Հա-  
ւանորէն պարս է իմանալ Հօրեղբօրոր-  
դի , այս է զորդիս Վազենակայ . որով-  
հետեւ հայերէն կրկն իմաստիւք ալ զոր-  
ծածուած է ի նախնեաց . և Վասակայ

լեալ էին զնմանէ առաջի արքային, սկսան կարգու ցուցանել և յայտ առնելի որպէս զի բարեկամացեալ էր նա ընդ Հեռանայ Հոնի միաբանութեամբ բաղասական արքային, ի ժամանակին՝ զի կոտորեաց Հեռանն այն զգօրսն Պարսից ԱԱղուանս, և ասպասակաւ եհաս յերկիրն Յունաց, և բաղում գերի և աւար խաղացոյց ի Հուսոնց և ի Հայոց և ի Վրաց և յԱղուանից . որպէս զի ի վերայ իսկ եհաս խորհրդոցն ինքն իսկ թագաւորն, և սպան զբաղասական արքայ<sup>1</sup>: Եւ Վաստկ մարզպան էր Հայոց ի ժամանակին, և թշնամեացն արքունի խորհրդակից գտու: Յուցին և յայտ արարին ազգականկն նորա, որպէս զի հմուտ և տեղեակ իսկ էին չար խորհրդոցն նորա, զամենայն ցուցանէին և յայտ առնեին առաջի թագաւորին, և զայլ ևս բազմագոյն խարդախութիւնն, որ սուսթեամբ վարեր զկեանս իւր՝ ոչ միայն առ ընկերս, այլ ևս թագաւորն ինքնին գլխավին. զի ոչ երբեք արդարութեամբ վաստակեալ էր ի մանկութենէ :

31. Յայնմ ժամանակի հրաման ետ հազարապետն. «Ածէք այսր և ի կապելոցն, որք են ի բանտի անդ»: Լուծին և ածին յերանելեացն զՄահակ եպիսկոպոս<sup>2</sup> Ռշտունեաց և զառ-րբն Յովակի և զՂեռնդ երեց: Եւ իրքե մերկացան ամենայն բանք ատենին առաջի նոցա, ետ պատասխանի Մահակ եպիսկոպոսն և ասէ. «Որ յայնի ուրացեան են ի ճշմարիսն Աստուծոյ, ոչ զիւեն զինչ գործեն և կամ զինչ խօսին. քանզի խաւարեալ են խորհուրդք նոցա. զտեարս պաշտեն սուստ պատճառահօք. և ընդ ընկերս մասնեն յուխտ սուստեան: Եւ են նորա դարանք սատանայի, զի նորօք իսկ կատարէ զգառնութիւն կամացն իւրոց, որպէս երեի իսկ

եղբայր Մուռեցած ըլլալուն պատմչաց մէջ յիշատակութիւն մը չզտանք: Ու այն ատեն դիւրաւ կը մեկնուի Վասակաց սոցա դէմ ունեցած ատելութիւնը, վասն զի զհայր նոցին քսութեամբ մեռցնել տուեր և Սինեաց իշխանութիւնն յափշտակեր էր:

1. Որովհետեւ Հեռանայ ասպատակու քմնադ. Նղիչէի

թիւնը վասակայ Հայոց մարզպան եղած ատենն է, որք է նորա թուականը

442էն եռքը գնել. Տես յէջ 40-41:

2. Երանելի քահանայից կողմանէ Ամակ եպիսկոպոսը կը խօսի, որպէսետ առ միայն քաջ պարսկերէն զիտէր. (Յ. Բ. 17):

ի գոյն յայդ վասակ; Քանզի մինչ ունէր զանունն քրիստոնէութեան, վերբինն երեսօք կարծէր ծածկել և թաքուցանել զամենայն չարութիւն իւր առաջի ձերոյ անգէտ տէրութեանգ, և զամենայն նենդութիւնն իւր քրիստոնէութեամբն ծածկէր:

32. « Ուստի և ձեր իսկ կարծեցեալ՝ մեծապէս պատուեցէք զգա առաւել քան զարժանն իւր։ Հաւատացէք դմա զաշարհն վրաց<sup>1</sup>։ Հարցէք, եթէ գո՞հ իցեն զդր-

Բառ Վրաց պատմութեան *Skr* Brosset, Hist. de la Géorgie I. Partie էջ 143-153), Փարաման Դ Թագաւոր էր Վրաց 405էց ց408, և էր այս կորիճ, որ Յունաց հետ բարեկամանալով ազլսա-ամարեցաւ Փարսից գեմ Հ չուզեց որո- շեալ հարկը վճարել նոցա:

« Արա յաջորդեց եղբայրն Միհրպատ  
Դ. 408-410. առ թշնամի ըրաւ թէ  
զգոյնն և թէ զՊարսիկն: Արքայից ար-  
քայն անօր գեմ իրկեց զգօրավարն Աւ-  
պարապ: Միհրպատաւց զօրքն յայծ առ-  
կաւաձեան էին, բայց և այնպէս շգան-  
դաղեցաւ պատերազմ տալու, գերի ըն-  
կաւ և տարուեցաւ ի Տիգրոն, զորքը  
ցիրուցան եղան և Պարսիկը տիրեցին  
Վրաստանու, զեկեղեցիս փոխեցին յա-  
տրուշնն և զաշխարհն կը կառավարէին  
Աղուանից և Առողջանայ մարդպաննին ձե-  
ռոք: Այդ անիշխանութեան առեն Վը-  
րաց թագաւորական ցեղը կախիմի ա-  
մուռ տեղերն ապաւինած էր, և երբ  
երեք տարի ետքը Պարսիկը ուրիշ կող-  
մեր պատերազման կը տագնապէին, վր-

բացի «Ազնաւորք» կամ «մեծամեծք պատեհական սեպեցին և զԱրձիլ թափառը կարգեցին ի Այլսիթմա:

• Հայել Ա. Թագաւորեց 410-434:  
Զնակը յիշէ և մերն Խորենացի, իբրև  
ժամանակակից Մեսրոպաց, երբ այս վեր-  
ջինն Գուգարաց բդիշելին Ալշուշյա հրա-  
ւիքանօք քարոզութեան զնաց ի պատու-  
նորա ի Տաշը (շուրջ 426ին): Ալժիւ-  
վերահաստատեց զքրիստոնէութիւն, նո-  
րացեց զեկեղեցին և Պարսից գէմ Խոր-  
կեց զիւր որդին զՄիհրդատ զօրք բազ-  
մօք, որ յաջողութեամբ ասպատակեց  
զերկին Ալշուսնից և զՄուղան: Պար-  
սիկը այս անզատ ալ պատերազմի բըռ-  
նուած ըլլալով յԱրքեւու, չեին Կրցեր  
զքրաւոր բանակ զբիւ Վարց գէմն Ար-  
ձիւ իւր թագաւորութեան վերջի մամա-  
նակները հարս առաւ իւր որդուայն Մի-  
հրդատաց զգուստը մարզպանին Ալշուս-  
նից և ասանկով վախճան արտեցաւ  
թշնամութեանց :

Ակէ մարդէ է հետեցնել 410էն հու-  
քը քանի ասրայ չափ միջց, վլրաս-  
տան՝ մերթ կատարելապէս նուաճել և  
մերթ ապատամը և խառնաշփոթ՝ պարա-  
կական նախանգ մի էր ընդ իշխանու-  
թեամը մարդպանացն Աղուանից, որը  
հետզետէ կարգեցան ի դրանէն Պար-  
սից: Կայն միջոցին պարս է վերապետ  
զմարդպանութիւն Վասուայ, որ զայտ  
պաշտօնգ ունեցել էր յառաջ քան վեց-  
խանութիւն Մինեւաց. այս է 412էն  
բառաց: Բայց թէ ուրաք առեն տեսն,

մանէ: Ետուք դմա զտէրութիւնն Սիւնեաց. լուարուք յազգականաց այսի գորա, զի՞նչ պատմեն զգմանէ: Արարէք զգա մարզպան Հայոց. զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր, դա ի միտմ ամի կորոյս զերկիրն ամենայն: Տիսե՞ր, իրեւ բարձաւ ի դմանէ պատուական անունն Աստուծոյ, զոր ունէր ստութեամբ, մերկ երեւեցաւ ամենայն չարագործութիւն դորա: Զի եթէ առ Աստուածն իւր սուտ գտաւ, առ ո՞ ոք ի մահկանացուաց աստի դա արդար գտցի:

33. «Արդ ամենայն ամբաստանութիւն՝ որ այժմ յայտնի եղեւ զգմանէ, ոչ ահա ձեր իսկ յառաջազոյն լուեալ էր. բայց յոր դէմն ծածկեցէրն, զուք ձեզէն իսկ քաջ գիտէք: Ինձ այսպէս թուի, եթէ սուտ յուսով դա զձեղ խնդացոյց<sup>1</sup>: Այդ ոչ գուք և ոչ դա և ոչ որ զինի ձեր գալոցն է, զայն ի մեզ ոչ կարէ առանձիւ: Արդ արարէք զգա որպէս և կամիք. ցմեզ զի<sup>2</sup> հարցանէք»:

34. Զարմացաւ մեծ հազարապետն ընդ միսս իւր. և ի խորհուրդս իւր քննէր զամենայն բանս ատենին: Քանզի հասեալ էր ի վերայ, եթէ յիրաւի դատապարտեցաւ այրն բատ անարժան զործոցն իւրոց, եմնւտ և եցոյց զամենայն բանս ատենին յարգունիսն: Եւ իրեւ լոււտ թագաւորն և ստուգեաց ի հազարապետն զաւնն պարտաւորութիւն, բարկացաւ յոյժ և ի խոր խոցեցաւ. բայց միայն երկայնմտութեամբ կամեցաւ հասուցանել զնա ի մեծ անարդութիւն: Լուր եկաց աւուրս երկուասան, մինչեւ ի զլուխ չոգաւ փուրսից<sup>3</sup> ամբաստանութեանն:

Կամ ինչ աջողութեամբ վարեց զայն՝ բայց ժողովուրդն առ հասարակ մոգութեան հետեւցաւ: Եղած չէին:

«Արձիւայ յաջորդեց որդին Միքըրդաւ և (434էն ց446) որ բարեկամ և հարկատաւ մեաց Պարսից և մեռաւ թողլով զեօթնամեայ զորդին զվախթանց: Ասրա կրսերութեան ատեն (446-454) Արաստան վերստին Ազուանից մարզպանին բացարձակ իշխանութեան տակ անկաւ, որ վերահաստատեց զպաշտաւմունքն էրակի, և թէպէս ազատանին հարիստ և թագավոր կամաց Պարսից, որպէս և ի չայր և յԱզուանս:

1. «Ըսելով ձեզ թէ ևս զշայս որմըզ զապաշտ կընեմ, մինչ ինքն ալ զիտէր խոստացածին սուտ ըլլալը<sup>3+1</sup>

2. Ե բառ պարսիկ. հարցումն, հարցումնէք, լծորդ ։ փորձ ։ բառի:

35. Եւ եղեւ յաւուր միոջ մեծի զամենայն երեսին  
և զպատուականն հրանցյէր յլնթրիս կոչել: Կոչեցին  
և զուրացեալն, և նա ըստ առաջի կարգի օրինացն ար-  
քունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի  
թագաւորէն<sup>1</sup>. կապէր և զպատուափւրսն, և զխցրն ու-  
կեղէն գնէր ի վերայ, և զկուննակուռ ձոյլ ոսկի կամարն  
ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ-  
մէջ իւր ածէր, և զգինդն յականջնն, և զգումսրտակն

1. Ահա դարձեալ փոքրիկ հասած մի,  
որ ժամանակին բարոց և զգեստոց  
նկարագիր կամ պատկեր մի է: Ասսա-  
նեանց թագաւորը, որ Որմղաց սերունդ  
և կրօնից զլուխ համարեալ էր, ասիս-  
կան ինքնակալաց նման միայնութեան  
մէջ շաղրիր: այլ մեծ առնի մասինի  
յընթրիս կը կոչէ իւր պետութեան ե-  
րեւէի անձինքը: Վասակ ալ կը հրաւի-  
րուի ու կ'երժայ իւր չըեղ զգեստները  
հազած, զորս արբայ տուեր էր և քիչ  
մը վերջը զահճաբետը պիտի մերկա-  
ցնէր (38): Օսմանեան թագաւորներու  
իրենց աւագ պաշտօնաատարց պատիւը  
կամ աստիճանը բարձրացներու նպատա-  
կաւ չըեղ հանդերձներ (խիտչ) պար-  
գեելու սովորութիւնը, որ մինչեւ այս  
դարուս սկզբները կար: շատ հին է  
ուրեմն, զուցէ ևս ի Պարսից անցած:  
Զգիսին թէ Ցազկերոսի պարզեած պաշ-  
տօնական զգեստը ի՞նչ էին: Ի ԺԵ  
դարու Պարտականական թագաւորաց շը-  
նորհած խիտչ կը բազկանյը: 1 ներ-  
քին զգեստէ: 2 աւելի երկայն և լայն  
վերարկուէ: 3 գոտիէ կամ կամարէ: 4  
ապարօչէ: Մազերը պատուափուրա կամ  
տեսակ մը վարսակալաւ կազուած էին,  
որոյ վրայէն կը դնէր զխցրն ոսկեղէն:  
Լուանակուռ ձոյլ ոսկի էր գոտին՝ մար-  
գարտօք եւ որիչ ակամբք ընդելուզեալ.  
բուլոր հին պատմէրք կը վկայեն արե-  
մտեան Ասիր մէջ ոսկեղէն զարդուց և  
կարսանց առատութեան, միանգամայն  
և կը հաստատեն մարգուի մեծ յարգը

և առեսուրը: Ականջը ող ունէր և գու-  
մարտակ (աճկ. կերտամնըք) ի պարանո-  
ցին. կոնըկի զգեստն ալ էր սամզյը,  
ինչպէս և Օսմանեան պաշտօնակալաց  
ընդունածը. և այդ ամէնը վասակայ  
աստիճանին և պատուայն յարմար և  
օրինական հանդերձակն էին: Բազմամ-  
րսի զունդ մի սպասաւորաց ալ ետեւէն  
կ'երթար: Եթէ Որբեւեանի նայինք՝ նոյն  
ինքն Վազարշակայ որէն յառաջ Ահե-  
նեաց իշխանաց հրաման եղած էր և ու-  
նել արծաթի զահնյը, վարսակալ ածել  
մարգարտեայ և մատանի ունել վարազա-  
գիր: Նաև կոչէկ կարմիր և մական ոսկի  
ունելով ի վերայ զիեալ զանուն և զպա-  
տիւ ցեղին: — Խակ ըստ աւանդելու  
Պրոկոպիոսի և Լոգիկ կամ քղամիդ (հայ  
նախարարաց) էր առանիւթ, ոչ ի Խա-  
շանց, այլ Ծնորսանոք հաւաքեալ ի ման-  
րաթելից ի ծովային ինչ կենդանւոյ: որ  
կոչի պինայ (աղնուագոյն տեսակ ինչ  
փինէլի): որ ի հարկանել արեւո՛ դոյն-  
զգոյն փողփողէր: Կը բանի հանդերձ նոցա-  
ունէր զարդ սոկեռուռ յայնմ մասին,  
ուր ամփոփեալ կապիւր: Ի վերին ծայր  
լոգիկն շիզգ ոսկի, ազնիւ: ակամբք յե-  
ռակալ, զորմէ երեք յակինթք կախէին  
ոսկի շղթայիւք: Մետաբանեայ պարեզօս  
նոցա համակ սոկեղէն պալարազարդ:  
Լուշիկ կարմիր նանագոյն մինչեւ ցծունկն  
պատեալ: Զորս ասէ Պրոկոպիոս ոչ այլ  
ումեր բաց ի կայսերէ և յարբայէն Պար-  
սից օրէն էր զգինուլ: Զամշէան Հա-

Ա. 215:

ի պարանոցին, զսամոյրան զթիկամբքն և զամենայն օրէնս պատույն զանձամբը արկեալ՝ երթայր յարքոնիս. շքեղ և երկեղի քան զասենեսեան երևէր բազմութեանն:

36. Իսկ նախարարքն որք կամօք ի չայոց չոգան՝ անձամբ սուեալ զանձինս ի փորձութիւնն, և սուրբքն որ յառաջադպյն հասեալ էին, կապանօք տնէին զամենեսեան առ դրանն արքունի: Իրբե տեսին զնա զարդարեալ և շքեղացեալ, և բազմամբոխ գնդաւ գայր յարքունիս, ի միսս իւրեանց սկսան այսպանել և ասել. Ով անմիտ վաճառական<sup>1</sup>, զանմահ և զանանց պատիւ ետուր, և զանցաւորդ գնեցեր, զոր և զայդ ևս ընդ մօտոյ աւուրս կորուսանելոց ես:

37. Եհաս և նատաւ ի ներքին դահլիճսն<sup>2</sup>, որ եր հրապարակ մեծամեծացն: Արդ եկն ել սենեկապանն<sup>3</sup> յարքունուստ, հարցանէր ցնա և ասէր: Արքայ յղեաց առ քեզ. յորմէ<sup>4</sup> գտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւգ, ասա ինձ վազիազակի, վասն որպէս արդար վաստակոց: Եւ յուշ առնէր նմա զամենայն բանս առենին, յորում գաստապարտեցան. նա և զոր ոչ ևս անդ խօսեցան՝ զայն ևս յայտնէր նմա: Զի ոչ ըստ կարդի ունէր նա զտէրութիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենդութեամբ և քութեամբ ետ սպանանել զհօրեղբայր իւր զվազինակ, և ինքն տարաւ զտէրութիւնն իրին քրազիկար յարքունիս<sup>5</sup>: Նա և այլ ևս բազմում բանիւք գա-

1. Բազման՝ վազարկոն:

2. Բառ Հայկ. բառարանի, գահին է սրահ վարագուրածիգ, սենեակ ընդարձակ յարքունիս. դիւնան: — Տաճիդ սպարակերէն յիշաւ է գաւիթ ընդ մէջ երկուց դրանց կամ ընդ մէջ արտաքոյ դրան և տան, portique, արտաքին գաւիթ. ձեմելիք. Տես Johnson: — Սասանեան թագաւորաց ասպարանքը միայարկ էին. սենեակները զմբեթաւոր և մէկէն միւսը կ'անցնուէր և սոցա իրարու հազորդակցութեան համար նեղ անցք կամ փողք չկային բնաւ. ուստի երբին դանիին ներքին սենեակ ըսել է. իսկ արտաքին կամ բուն գահին էր հաւա-

նորէն կամարակապ մեծ գաւիթն, որ Սասանեանց ամէն շինութեանց հակառ կը տեսնուի, որոյ երեսը ամբողջ բաց է, և որուն խորը կը գտնուի շենքին դուռ կամ մուտքը: (Տես Սասանեան ճարտարապետութեան վրայոր Ֆերկիւըն և Ուլիսանի Սասան. Պատմութիւն):

3. Ունեկազանդ կը յիշեցնէ մեզ Ուսանեան ինքնակալաց մասիշնձին, որ կը խրկուի՛ զարքայն ահաճեցնող Աէզիրէն արքանի կնիքն ետ առնելու:

4. Քրայիկար յարքունիս, ինչպէս որ Պէճիսս ալ կը վկայէ հայ նախարարութեանց մի քանին երբեմ մի մի ասանձին թագաւորութիւնը էին: Տանուաւէ-

տապարտեցին զնա, որում ամենայն աւագանին վկայ կային: Պապանձեցաւ ամենին, և չդառաւ բան ճշմարիս ի բերան նորա: Իրրե կրկնեցին և երեքրկնեցին ցուցանելով ի ներքս յարքունիսն, հատաւ վճիռ՝ մահու ի վերայ նորա:

38. Արդ եկն ել դահճապետն, և մատեաւ առաջի ամենայն սեծամեծացն մերկեաց ի նմանէ զպատիւն զոր ունէր յարքունուստ, և զգեցոյց նմա հանդերձ մահապարտի<sup>2</sup>: Կապեցին զստա և զձեռս, և կանանցարար նստուցին ի ձի մատակ<sup>3</sup>. տարան ետուն յայն զընդան<sup>4</sup>, ուր կային մահապարտք ամենայն:

39. Իսկ նախարարքն Հայոց և սուրբ եպիսկոպոսքն հանդերձ երիցամբքն, թէպէտ և էին ի մեծի պատուհասի, ոչ ինչ յիշէին զնեղութիւնն՝ որ անցեալ էր ընդնուա, և կամ որ այլ ևս ակնկալութիւն էր զալ ի վերայ, այլ զարմացեալ էին ընդ մեծ յայտնութիւնն՝ որ եղել յԱստուծոյ: Միխիթարէին զմիմեանս և ասէին . «Քաջութեամբ պատերազմնեցաք, առաւել ևս համբերու-

թութիւնը իջանէր պայշաղատաւթեամբ յարգւց յարգիս ի ժառանգս, եւ կը հաստատուէր արքունի հրամանաւ, և էր անփոփի, բայց եթէ վաճ իրիք հարկի այլում ումեք ի նոյն ցեղէ շնորհեալ լինէր ի թագաւորէն (Զամշեան. Հառ. ա. 215): Այդ իշխանութիւնդ բանեցուցեր էին հայ թագաւորք և ժամանակէ մը ի վեր Պարսից թագաւորին կը պատկանէր: Այսպէս մինչ Սիհնեաց տէրութիւնը սովորական օրինոք Բարեկէնէն որպեսոն Վասակայ պէտք էր անցնիլ: Վասար Դ. Բարեկնի սենեկապետին Սամայ տուեր էր: Տարի մը ետքը Սամ թունաւորեալ մեռնելով, հաւանօրէն Վասարապէջ կամ Սիհնեաց Պահակայ Պարթեկի խորհրդով Վասակայ հօրեղբայրը Վազենակ իշխան կարգուէր էր Սիհնեաց: Հիմայ Վաղենակայ որդիքն Բարեկն և Բակուր զորս Եղիշէ եղբօրորդիս կը կոչէ Վասակայ, հօրենուն յաջորդութեանը ցանկացող պիտի ըլլային: բայց

Վասակ ծանր ամբաստանութիւններ հանելով Վաղենակայ գէմ սպանել տուեր էր զնա, ու յանցաւոր իշխանին տէրութիւնը իրեւ յրտիկար՝ այս է գործ արդիւնական և արժանի վարձուց՝ տարեր էր յարգունիս: և այս ծառապութեան ի փոխարէն Սիհնեաց իշխանութիւնը առներ էր յարգայից արքայէն, և ետուք զմա զսէրութիւնն Սիհնեաց: Տես Յ. Է. 32, և էջ 252. Ցն. 1:

1. Վէհու բազանդ՝ վլիս արդի պարսկերէն:

2. Մահապարտի ինչ զգեստ կը հագնեին: գուցէ ձերմակ երկայն շապիկ մը :

3. Բազանտ՝ մատաք, կամ մատէք, որ անուանց սկիզբը դրուելով իդականը կը նշանակէ :

4. Պարսկերէն վիճակն ՆԱՅ բանու, ուստի՝ զինուանում բանտապան՝ զինունի բանտարկեալ:

թեամբ ճգնեսցուք: լուեալ է մեր ի սուրբ հարցն մերոց, եթէ գլուխ ամենայն առաքինութեան համբերութիւն է, և խմաստութիւն երկնաւոր՝ կատարեալ առաւածպաշտութիւն, և զայս ոչ ոք կարէ գտանել առանց չարչարանաց: իսկ չարչարանիքն յարժամ ընդերկարանայ ի վերայ, յայնժամ՝ բազմանայ վարձ հասուցմանց պարզեին:

40. « Ապա թէ այդ այրտպէս է, զայս միայն աղաչեսցուք զԱստուած, զի համբերել կարասցուք ամենայն փորձութեանց. և Տէր ինքնին արացէ հնարս մերում փրկութեան: Լուեալ է մեր զդատաստան քառասուն զինուրացն Քրիստոսի, որք բազում հարուածս տանջանաց ընկալան: Մինն ի նոցանէ փութացաւ ի բազանիսն, և վրիպեաց ի պակէն: իսկ երեսուն և ինն համբերութեամբ կատարեցան, և հօսին այնմ աւետեաց, որում ցանկացեալն էին: իսկ մեր ընկերակիցն աւանիկ, որ յառաջադոյն որոշեցաւ ի մէնջ, ահա եզեւ գործակից սաստանայի: Մինչ գեռ ոգիքն ի մարմնին են, ընկալառ զառհաւատչեաց գեհենին տանջանաց, որ ոչ միայն սրբոց է ողբալի, այլ և ամենայն գաղանարարոյ մարդկան » :

41. Զայս ասէին, և բազում արտասուս ի վերայ կորուսելոցն հեղուին. և անդէն զերգս հոգեւորս ի բերան առեալ ասէին. Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր քան յուսալ յիշխանու. ամենայն ազինք չըջեցան զինե, և անուամբ Տեառն յաղթեցի նոցա<sup>1</sup>: Քաջալերէին զմիմեանս և ասէին. Զայս գիտելով, եզրարք, մի երկիցուք յանաստաւած աղքէս հեթանոսաց, որ քան զմեզուս վատթարագոյն ևս են ի զայրանալն իւրեանց. զի և նոցա ցասումն ի սատակումն անձանց իւրեանց լիցի<sup>2</sup>. այլ մեք զանուն Տեառն կարգացուք, և վանեսցուք զամենեսեան:

1. Առաջնոր ձժի:

2. Եզիշէ կը նորանեցնէ մեզուաց, որք երե իւրեանց խոյթոցը կը միան թըշնամոյն մարմնոյն մէջ, շատ անդամ ևս չեն կրնար քաշել, ու յայնժամ խոյ-

թոցը կը փրթի ու կը բաժնուի մեզուէն. ու ասէ վերք մը կը գոյանայ, յարմէ անմիջապէս կը մեռանի մեզուն. Milne Edwards, Histoire naturelle:

42. Խոկ ուրացեալն վասակ հայէր ի միաբանութիւն սուրբ կապերցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զշարչարանն, և զուարթագոյն և պայծառք երկեին որպէս յառաջագոյն յարքունխան. Հայէր և կարօտէր, և ոչ ոք խառնեաց զնա ի նասա, այլ ուրցն նովին կապանօք պահէին: Եւ օր ըստ օրէ բերէին՝ իրրե զգէշ ընկենուին ի մեծ հրազդարակին<sup>2</sup>, ձաղէին և այպանէին, և տեսիլ ամենայն կարաւանին զնա առնէին: Կողոպտեցին հանին և ոչ ինչ թողին զոր ընդ խրն տնէր. այնպէս ձաղեցին աղքատութեամբ, մինչեւ հաց մուրանացին և բերէին նմա իւր ծառայքն: Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա, որ մինչեւ զհարց և զհաւոց և զիւր արարս և զզարդս կանաց ևս եղ ի վերայ և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հասուցանել զպարտան արքանի: Եւ յայն սեղի հասուցին, մինչեւ հարցանել նմա եթէ կայցէ<sup>3</sup> ինչ զանձ ի գերեզմանս նախնեացն<sup>4</sup> մերոց. և եթէ գտեալ էր նորա, հանէր և տայլ ընդ իւր և ընդ ընտաննեացն տուզանս. որպէս զի բազում մարդիկ խոկ չոպան ի տուժին<sup>5</sup>:

1. Այս և ուրիշ օրինակներէ յայտ է թէ Պարսից մէջ մահաւան դատապարտութիւնը զլխատմամբ կամ ուրիշ եղանակաւ կենաց անդիշական խորտակութիւնը չէր նշանակեր. այլ մահապարտը ծանր զղթայներու զարնելով բանտի մէջ կը գնէին, որ խոնաւաւթիւնը, աղտեղութիւնը, լուսոյ պակասութիւնը, կեռակրոց անբաւականութիւնը (ընդհանրապէս միայն դարեհաց և չուր կուտային) բանտարկելոյն կազմուածքին համեմատ կանուխ կամ ուշ կը քայլայէր ընութիւնը:

2. Հրասպարակ է աստանօր անշուշտ արձակավայր ի մէջ քաղաքի. խոկ կարսան բառով խմանալի է բանակ: զօրոց խումբը, որ յայնժամ ի Տիգրոն էր արքային հետ:

3. Արենին Ախնեաց նախարարք, ինչպէս և անշուշտ այլ տանուաեաբք, բացօթեայ գերեզմանատեղւոյ մէջ թա-

զուած և սոսկ մահարձանաւ ծածկուած չէին. այլ յատուկ և յարկածածուկ շիրիմներու (տէկ, բիւրպէ) մէջ, յորս կը հանգչեցնէին զմեռեալս, հանդերձիւք և մանկագին զարդուք:

4. Երբ վասակայ ստացուածքը չէին բաւած արքունի գանձին ունեցած պարտքը հատուցանելու (քանզի գոզ ևս զըտանէր հարկի աշխարհին), ընտանիքէն բազում մարդիկ բռներ էին Պարսիկը ու տարեր էին յարքունիս, ոչ իրրե պարտաւոր պատասխանատու, այլ իրրե սեփականութիւն և փոխարէն պարտուց նորին, զորս ազատելու համար կը սովուէր վասակ զանձաւ հարել: Մարդու մը յանցանքը միայն անոր անձը պատճոյ չէր ենթարկեր, այլ և բալոր գերգաստանը: Այս սկզբամբ տեսանք ո՛ւ Պարսիկը ապստամբելոց կինն և որդիքն ալ յարքունիս տարին:

43. Եւ իբրև այսպէս յամենայն կողմանց հարեալ վաստիւարացաւ, անկառ յախտս գմնդակս անդէն ի կապանսն: Ջեռաւ փոր նորա, և հարան և արտրեցան գոդք նորա, և քամեալ մզեցաւ թանձրամսութիւն նորա: Եռացին որդունք ընդ աչս նորա և ի վայր սորեցին ընդ ոնդունս նորա. խցան լսելիք նորա, և ծակուեցան չարաշար շրթունք նորա. լուծան ջիզ'ք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոսից նորա: Բղիսեաց ի նմանէ հոտ մահու, և փախստական եղին ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա: Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, և ոչ գտաւ խստավանութիւն ի շրթունս նորա: Ճաշակեաց զման հեղձամիջառկ, և էջ ի գժոխա

1. Փարզեցին որ իւր տեղեկութիւնները առեր էր «յարդարապատում» ապաստորացն վասակայ: — որը մինչեւ ցօրն մահուան տեսան իւրեանց քավը գտնուեր էին կը դրէ. «Եւ նմնգաւորն վասակ կացեալ ի դրան ամս ինչ կարի վշտագին և նեղութեամբ բազմա, մաշէր զաւուրս իւր հառաշելով և հոգոց հանելով զամենայն օր և զժամ, մինչեւ թշնամանակերպ ձաղանօք սփուեալ զթամօ ձեռաց իւրոց՝ ինքնին զիւրովին ծեծէր զդէմն: . . . վասակայ աշուըներէն վար որդեռուն վազելը բանաստեղծական չափագանցութիւն համարելու չէ, Պարսկաստանի խոնաւ բանտերսն աղտակութեանը մէջ մարմնոյն կապած թարախը կրնայ գիւրաւ որդանց փոխուիլ: Եթէ Եղիշէի համար կասկած ունենայ որ մէ վասակայ զէմ ունեցած կիրը նորա համար քսանելի մահ մը երեւկայել տուեր է, կրնայ փարատել իւր կասկածը հետազայ հատուածովս, զոր կը քաղեմք Մեծին վարդանայ գտուեր և Գուզարաց զշխոյն Շուշանկայ պատմութենէն, որոյ հեղինակը, ամենէն ին պատճառ մը չունէր, ոյդ վեհ և սիրելի վկայուհուն մահը պժգալի երեցնելու. և բերին կուաւ բարակ և լուացեալ զմարմին սրբոյն յորդանցն եւ ի բար-

իսյեց գոր ուներ ի բահուեն և ի չարշարանց: » Առփերք Հայք. Հատ. թւ:

Եղիշեայ վասակայ մահուան նկարագիրը նմանութիւններ ունի Մակարայեցոց մէջ Անսահորոսի մահուան նկարագրոյն հետո: Բայց Եղիշէ օրինակող չէ և ոչ իսկ հետեղ. մեր ոսկեդարեան մատենագիրը գրեթէ բերնուց գիտէին զաստուածաշունչ զիրս. (Փարզ. 604-606): Մատացը մէջ պատրաստ ունի երբայցի հեղինակաց այլեայլ խորհրդածութիւնը, որք յարմար առթիւ կը զարդնուն և կը խանուին իւր յատուկ մատածութեանց հետո: Նոր հոգի, նոր գոյն և նոր կենդանութիւն տալով անոնց, կ'իւրացն զնոսաւ և երկրորդ ծնող և հեղինակ կ'ըլլայ:

«Տէր Աստուած խարայելի եհար զնա աներեւյթ հարուածովք. այն ինչ բանք ի բերան նորա էին, ցաւք սաստիկը և անհնարին սուկերաց ի վերայ հասանէին. և զառնութեան իսիթք ի փոր անկանէին: Կարի յիրաւունս. զի որ բազում նորանոր յարալար ցաւս յոյց մարմինս տանշանօք հատուցներ, նոյն սաստիկարեան ցաւք զուգաւ անկեալ պայտրեալ պանիին . . . մինչեւ զէալ եղեւ նմա անկանել ի կառաց. . . անդ անկանէր նաև ի չարաշար տանչանս, զի ամենայն սոկերն առհա-

անհնարին դառնութեամբ։ Ոտնհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածավքն ամենայն թշնամիք նորա։

44. Եւ այն որ կամերն թագաւոր լինել մեղօք Հայոց աշխարհին, ոչ երևցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրև զշուն սեռաւ և իբրև զգէշ քարշեցաւ։ Ոչ յեւեցաւ անուն նորա ի մէջ սրբոց, և ոչ մաստեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոյն։ Ոչ ինչ եթող չարի՛ զոր ոչ զործեաց ի կեանս խր, և ոչ ինչ մեաց ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա։

45. Գրեցաւ յիշատակարանա այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն որ զայս լուեալ գիտասցէ, նզպս ի հետ արկցէ, և մի լիցի ցանկացող զործոց նորա։

առակ խորտակէին, և այն որ այն ինչ կամէր ի վերայ ալեաց ծովու սաստել վասն անօրէն հպարտութեան, և զիերին յերանցին նեղբին առնել և զներբին վերին, զնա ինքն յերկիր հողեալ, շատակաւ չըթեցուցանէին, յայտնապէս Աստուծոյ զօրութեանցն երեելոց, մինչեւ յաշաց անտի անօրինին հոսանքն որդանց բզիսեալ սորսորէր, և կննդանութեամբ իւրո՞վ ախտին ցաւոց զանդամն ի միմեանց յօշել, և ի նեխոյն հոսոյ զօրացն ամենայնին նեղել տազնապաւ. և որ յառաջն հպարտուցեալ մոտք զատուելու երկնից ամփոփէլ համարէր, այսր անդը չըջըջէլ ոչ ոք կարէր վասն նեխոյն հոսոյ տազնապի... զի և ինքն իսկ ոչ կարէր մոյս առնել ի նեխոյ հոսոյ անտի։ Մակարայեցոց թ. զւ. թ.։

Տես ես Եղիշեայ Զարշարանաց մեկնութեան մէջ Յուգայի մահը։ և Քանզի և աշակերտակիցքն բարկացեալ էին և քահանալիքն ցասուցեալ եւ ընտանիքն խր սասուցեալ. ոչ ոք փոյթ արար խընդրել զանդիւս կորուստ նորա, և ոչ ոք իշոց զնա ի չարաւար կախաղանէն,

ուռաւ փոր նորա, և ցրուեցան ամենալի ոսկերք նորա ի զժսիս. իբրև զշուն մեռաւ և իբրև զգէշ քարշեցաւ. և սին ի վաստակոցն, և ջնջեցաւ անուն նորա ի գպրութենէ կենաց։ Էջ 261։

Վասակ Այնեաց իշխան եղած էր յամին 412ին ծաղիկ հասակի մէջ որպէս վկայէն կորիւն և խորհնացի. և սրբինաւ հօրը Բարկայ մահուան ատեն՝ 399ին, պատանի կամ տղայ էր յարքունիս Պարսից, — զիր տասն և հինգ ամաց — ու Բարիկէն ետքը Այս և վազենակ տասն աարի իշխանութիւն վարեր էին Այնեաց, ծննդեան թուականը հաւանորէն 384ին ըլլալու է։ Այդ հաշուով Այնեաց իշխան եղած ատենը 28 տարեկան, իսկ Աւարայրի պատերազմին ատենը 67 ամաց կ'ըլլայ։ Քառասուն տարի վարեր էր Այնեաց իշխանութիւնը և տասն տարի Հայոց մարզպանութիւնը։ Իսկ ետքը Այնեաց իշխան կարգեցաւ փեսայն և թշնամին սկզբուն Այնի ուրացողն Աւարազվալան (452—476)։

# ԱՐՏԱՔՈՅՑ ԵՕԹՆ ՅԵՂԱՆԱԿԻՆ

ՈՒԹ ԵՐ ՈՐ Դ

ԴԱՐՁԵԱԼ ՎԱՅԻՆ ՇՈՐԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՒ ԶԱՐՁԱՐԱՅԱՅ

ՍՈՒՐԵԲ ՔԱՀԱՅԱՅԻՑԻ

1. Արդ ի վեշտասաներորդի ամի<sup>1</sup> տէրութեան նու 454  
րին թաղաւորի, գարձեալ անդրէն խաղայր գնայր յաշ-  
խարհն բաւշանաց մեծաւ սրտմտութեամբ ի գործ պա-  
տերազմին։ Եւ գնայրեալ ի վրկանէ<sup>2</sup>, և ելեալ յԱպար  
աշխարհ, նովին կապանօք<sup>3</sup> գնախարաբսն և զբահանայսն  
հրամայեաց պահել ի դգեկ քաղաքին ի Նիշապուհ<sup>4</sup>. և

1. Յամին 454։

2. Վրկան է աշխարհ յելո հարաւոյ  
կասրից ծովու Աւետայի լեզուաւ Վը-  
հըրան։ արդի պարսկերէն՝ կոչրին  
Նկր։ կուրիկ՝ որպէս Վըհըրան է «Գայլ»։  
հայկական անունդ՝ Աւետական բառէն  
ելած է ուրիմ։

3. Եղիշէ գապեալ նախարարն եւ  
զբահանայր յարբունի մերոցը ի Տիգրոն  
թողուց, յեօթներորդ Յեղանակին։ Բայց  
որքա Աւասակայ դատապարասւթենէն  
յետոյ Վրկան Խրկուեր էին ըստ վկայե-  
լոյ Փարագեցոյ, ուր պահեցան խիստ կա-  
պանք մինչեւ յամն վշտասաներորդ թա-  
գաւորութեան Յաղերուի։ Աս Վրկանէ  
անցնելու ատենը հետք կառնու զնոսան  
նիշշապուհի դգեկին մէջ բանարփել կու-  
տայ ու միայն զերկուս քահանայր զջեր

Ասմուել և զԱբրահամը իւր հետը կը  
տանի գանիւ և բուռն կազմանոք նեղե-  
լով հանապազօք։ Կապեալ քահանայք  
ութ են. իսկ նախարաբը 37 ըստ Եղի-  
շեայ և 34 ըստ Փարագեցոյ. բաց ի  
մանկանց սպասաւորաց. որք եկեալ էին  
ինքնակամ յաշխարհէն Հայոց։ Փարագ.  
255. 282։

4. Նիշշապուհ զոր Փարագեցին Հա-  
հաստան Նիշշապուհ Հանուանէ, եր  
զիխաւոր քաղաք Աւար աշխարհի կամ  
այժմեան խորասան նահանգի։ Պարսիկք  
ասեն Նիշշապուր։ Այս ճին քաղաքու որ  
ոյժմ հազիւ տան հազար բնակիչս ու-  
նի, քանդեցաւ ի Մեծէ Աշեքանզրէ և  
վերստին շինեցաւ ի Շապհոյ Առաջնոյ։  
Աեւուգեանց որով մայրաքաղաք եղեւ  
Պարսկաստանի, և թալթարք կործանե-

զերկուս յերանելի կապելոցն ընդ իւր խաղացոց։ Ահ արկանէր ամենային քրիստոնէութեան ընդ որ անցանէր։

2. իբրև զայն տեսանէր Հռն մի, որ էր յազգէ թագուրացն ի խայլանդրաց աշխարհէն, Բէլ անուն<sup>1</sup>, և ի ծածուկ խոնարհէր առ քրիստոնեայսն, և սիրով յօժարութեամբ ուսանէր ի նոցանէ զծմարտութիւնն և կամօք իւրովք նուաճեալ էր ընդ իշխանութեամբ թագուրին, և կարի յոց գառնանայր ի միսս իւր յորժամ տեսանէր չարչարեալ զսուրբն։ Եւ իբրև այլ ոչ ինչ էր ձեռնհաս, փախստական անկանէր առ արքայն Քուշանաց։ Երթայր և պատմէր նմա զամենայն անցո չարչարանացն, զոր անցոյց թագաւորն ընդ աշխարհն Հայոց տեղեակ ևս առնէր զնա վասն խրամատութեան պահակին Հռնաց<sup>2</sup>. ցուցանէր և զերկպատակութիւն զօրցն, որ բազում ազգք բաժանեցան ի սիրոյ թագաւորին. ազգէր նմա և զորտունչ զԱրեաց աշխարհին։

3. Զայն իբրև լուաւ թագաւորն Քուշանաց, ոչ ինչ երկմոռութեամբ թերանայր յառնէն, և ոչ կարծիք լըրտեսոի անկանէին ի միսս նորա։ Քանզի սակաւ մի յառաջազոյն նորա լուեալ էր, գարձեալ իբրև ստուգեաց ևս ի Բէլայն յայնմ<sup>3</sup> եթէ խաղացեալ զայ ի վերայ աշխարհին Քուշանաց, փութացաւ վազպակի զօր ժողովէր, զունդ կազմէր՝ ելանել նմա ընդ առաջ հզօր ձեռամբ։ Զի թէպէտ և ոչ կարէր յանդիման տալ պատերազմ՝ ընդգէմ նորա, այլ ի վերջի թեսն անկեալ, բազում հարուածս հասուցանէր ի վերայ զօրացն արքունի։ Եւ այնպէս նեղեալ շտապէր, զի անձուկ լաշկարաւ<sup>4</sup> փա-

ցին վերստին յժմն գարու։ Աւելի հին ժամանակաց մէջ կը կոչուէր Դիսկու։ Զսա ոմանիք կարծեցին Անդմըշ կամ Անդուց բերդն։ որ այնքան թշուառ յիշաւակօք նշանաւոր եզած է մեր պատմութեան մէջ։ բայց այդ Անդուց բերդդ խուժաստանի մէջ վնտաելու է և ոչ յօրբասան։ Տես Բուզանդ 202 և 205։

1. Բէլդ կովկասային Հռներէն էր, և Պարսից արքային ծառայութեան մէջ մաեր էր։ Տես Խայլանդուըք էջ 194.

Ճն. 1. Զարմանալի է սակայն այդ Բէլ անուանդ կովկասային Հռնաց մէջ զործածուիլը։

2. Այս է ձորայ պահակը։

3. Տես Փարազ. Էջ 258. « Քանզի ոչ դէմ յանդիման հակատեալ պատերազմէին ընդ զօրսն Պարսից, այլ յեղակարծումն անկեալը ի վերայ միոյ միոյ թեի՛ հանէին ընդ սուր զբազումն, և ինքեանք գարձեալ անվեսաք աներեւոյթք լինէին ։ Առաջին յեղանակի մէջ ալ

տախոտարակ արարեալ՝ այսրէն դարձուցանէր, և ինքն ասպատակաւ զհետ մասեալ աւերէր զբազում՝ գաւառս արքունի. և ինքն ողջանդամ անդրէն յերկիրն իւր գառնայր :

4. Եւ իրքի եաես եթէ անարդանօք և վատթարութեամբ դարձեալ եմ ի պատերազմէս, զիջաւ վոքր մի ի հազարտութենէն, և գիտաց եթէ յերկպառակութենէ զօրացն եղեն չարիքն ամենայն։ Եւ առ մղձկել սրտին՝ չգիտէր թէ յութափէր զթայն դառնութեանն։ իսկ մեծ հազարապեան<sup>1</sup> յոյժ էր յերկիւզի, քանզի ինքն էր պատճառք ամենայն չարեացն զոր գործեաց։

5. Ակսան բանն ի բերան գնել մոգպեսին և մոգացն, որք մասուցեալ յանդիման ասէին ցթագաւորն. Ալքայ քաջ, մեք ի գենէ խակ գիտեմք, զի ոչ ոք ի մարդկանէ կարէ կալ առաջի քրցց մեծի զօրութեանդ, այլ վամն քրիստոնէիցն, որ են ընդդէմ օրինաց մերոց, բարկացեալ են մեղ աստուածքն, զի մինչեւ ցայսօր կենդանի պահեցեր զնոսա։ Եւ յիշեցուցանէին ևս նմա, որպէս նոքա ի բանտի անդ անիծանէին զքեզ։ Եւ բազում և այլ հայհոյութիւնն խօսէին զարբոցն, և զոր հանապազ զնոսա յաջաց հանէին, և զմիսս թագաւորին ածէին ի ցասումն բարկութեան. մինչեւ վութացաւ վազվազակի հեզուլ զարիւն անմեղացն։

տեսանք, որ Յազկերս յամառութեամբ կռուեր էր Քուչանաց դէմ. բայց ան ատեն Աթէրի ճանապարհաւ զնացեր էր. այս անգամ Նիշշափուրէն ի Վադգէս (այժմ Պատկիս) և ի Հրէ (այժմ Հէրսոտ) կ'երթայ։ Անձակ յարկարտ՝ այս է սակաւաթիւ բանակաւ. պարսկ. բաշքար  
շահ. Վատախտարակի՝ կը բազկանայ վատ, ախտար բառերէ և ակ մասնէկ. վաս պարսկէն պատ չը չար, յոսի, զէշ։ Ասաւեանց ժամանակ վատ կը նշաւէր. վասն որոյ ասէին վատ-սի՛ վատասիրս, վատ-կունար՝ վատարարոյ, վատար՝ վատթար, և այլն։ Պարսկէն ախտար յաջոց բուն նշանակութիւնն է Զոդիակոսի ասաղ,

անշուշտ Յակարիական հախէորս բառի կրատառնեն, որ ասուեզաց բայլ խումբ ըսել է. մինչ արախոր որ է հակառակ կամ ընդդիմակաց ախտար, նշանակէ ո՛ և է ասազ, որ Զոդիակոսի կամ ուրիշ համաստեղութեան մը մէջ շգանուիր, զոր օրինակ մոլորակ կամ այլ ասաեզք որք առանձին կ'երեին։ — Է և արդի պարսկէն պատ-սիրար՝ թշուառ, ասողը զէշ, վատախտարակ։

1. Միթէ Միհրերսէ Յազկերոի հետ գաացմէր էր յԱպար աշխարհ. չեմ կարծեր. թուի ինձ թէ Եղիշէ կը պատճ ասա Յազկերոի անյաջող դորձոց ընդհանուր արդինքը

6. Ետ հրաման վասն երկուցն՝ որ անդէն ի կարաւանին առ իւրն էին, Սամաւէլ և Ալբահամի, զի գաղտկորուսցեն զնոսու։ Խոկ որք էին ի գզեկ քաղաքին, հեռափ էին ի կարաւանին իրրե օթիւք հնդեասասն։ Հրամայեաց համբարակապեատին, որում անոնն էր Գենշապուհ, զի յառաջ քան զնա երթիցէ ի քաղաքն, ուր էին սուրբ քահանայքն Տեան, և չարաչար տանջանօք իշխեցէ գատել և հարցանել, և սրով վախճանել։

7. Այլ զնոսա մողպետին՝ յառաջագոյն, որում յանձն

1. «Յազագո զգտանելոյ ուրուք ի քրիստոնէից և պատուելոյ զսկերա նուցա» Փարագ. 260։ Վկայեցան սուրբքն յամուեանն Հրամաց, որ որ եօթն էր ամսոյն, ի գաւառին որ անուանեալ կուի վաղգէս։ (Նոյն 261 և Եղիշէ Յ. Ը. Ը. 92)։ Այս Վաղգէս գաւառոց, որ ձեռապաց մէջ Վարդգէս, Վատպետ, Վաղգէս ալ զրուած է, գաւանի յարեւելու խրասանու և ի հիւսիսոյ Հերադայ կամ Լաւ եւս՝ Պարապամիսեան լերանց, ընդմէջ Հերի-ռուս և Միւրզապ գետոց և այժմ իսկ կոչի Պատկւ։ ըստ Պանտառհէմի Վատպետի և բնակիցքն Վատպետանք, իսկ Աւետպայի մէջ Վատպի-կուկո։ — Է և այժմ Վատպէս աւան գիտաւոր տեղի գաւառին։ Բատ պարսիկ աշխարհագրին Համու-ուլան էլ Գաղվիմի (որ մեռաւ 1449ին) Վատպէսի գաւառին մէջ պիհուակենեաց անուան մի կար հինգ փարասի (25 քիլոմէդր) լայն և նոյն շափ երկայն։ Պտղոց ատենը ամէն կողմանէ մէծ բազմութիւն մը կը ծոզովէր անդ. Խրաբանչիւր որ ուզածին չափ կը քաղէր և օսար աշխարհներ էր ատենք գաճառելու համար. էին եւս մարդիկ որ մի միայն այս առուտուրով կ'ապրէին։

2. Այս է 15 գօնաք. մէկ օժը մարթէ է հաշուել հինգ կամ վեց ժամու հանապահ կամ շուրջ 25 քիլոմէդր և ընդամենը 375 քիլ. ուզիդ գծով նոյնքան միջոց մը հաշուելու է ըստ աշխարհացոց առխառակաց ընդ մէջ նուշափուրի

և Պափկիս աւանի։ Յազկերա այս անգամ Մարգիսոսի կողմերը չէր պատերազմեր, այլ Հերի-ռուսի ընժամացքը բըռնելով իջեր էր ի վաղգէս, ի հիւսիսոյ Հրեւայ կամ Հերադ քաղաքի, ուսկից աւելի սպահովազէս կրնար յարձակի Քուշանաց կեդրոնատեղւոյն և մեծ ամրոցին Բալիսի կամ Պահլի վրայ։ Իրեն հետ տարեր էր անդ զկապեալ նախարարներ։

3. Այս այն Դենշապուհ է որ առաքեցաւ ի Հայս աշխարհագիր առնել։ (Տես Յ. Բ. 15-17 և Յ. Ը. Ը. 67)։ Համբարապետը այժմեան պետութեանց եկեմուից պաշտօնէին շափ կարեսութիւն ունէր. որպէսկաւ սպայից, զինուորաց, նախարարաց և առհասարկ ամենայն կարգի պաշտօնէից թօռակէ աւելի ուժիկ կը որուէր յարբունուսու։ Եւ Դենշապուհէն աւելի յարբար անձ մը չէր կրնար խրկել Յազկերու ի Հայս հարկերը փոփախելու կամ աւելցնելու համար։ — Յանաչ բան զետ երդիցէ ի քաղաքն, չէ թէ Յազկերա տակաւին ի Նուշափուր չէր հասեր, այլ այդ քաղաքէդ շատ յաշաջ զնացած ըլլալով։ զօրացը ուրուելովն հիմայ ետ պիտի դառնար անդր։

4. Այս է Ազար աշխարհին մոզուց առաջնորդին, որ ոչ միայն կրօնական գլուխ, այլ և իշխան - կուսակալ էր նաև հանգին։

արարեալ էր, բազում անդամ՝ աւելի քան զհրամանն արքունի չարչարեալ էր. քանզի իշխան գենպետ էր Ապար աշխարհին, և առաւել յերմագոյն էր ի մողութեանն. քան զբաղում գիտունն ևս տեղեակ էր զբացատկան օրինացն: Կա և զոր մեծ պարծանա համարէին ըստ իւրեանց մողորութեանն կարգի, համակդեն անուն էր<sup>1</sup>. գիտէր և զամենացն պարտքաշն, ուսեալ էր

1. Այս պարբերութիւնն էցէէի գըր-  
քին ամէնէն աւելի զժուարութիւն տուող  
մասն է: Եւրապացի Զագիստաց աւ ու-  
շագրութիւնը զրաւած է: բայց տակաւին  
սորա ամէն խթմնութիւնը զօնադրուցիչ  
մեկնութիւնն ըը չկրցնաւ ունենալ:

Մեր բանախօսութեան մէջ որ է Յա-  
զագոյն Դինքնին Պարսից ։ աւեսանք որ մեր  
ձեռքը հասած մազդէսկան մատեանք  
յայլի հայլ մասունք բաժանին . Ա. Ա. Աւետիս  
զրեալ զուտ Երանեան բարբառով, որ  
հնագոյն է քան զի ետայի սանսքրի ըլլ. —  
Բ. Զանտ՝ թարգմանութիւնը Աւետայի  
և ծանօթութիւնը յորինեալք պամարտիկ  
այս է Պարմեաց լեզուու, որ պարա-  
կերէնսով խան ասորերէն է: Գ. Բա-  
զան՝ այս է մեկնութիւն Զանտի կամ  
Երգորդ. ծանօթութիւն. սորա լեզուն  
շատ նման է Ֆիրուզէսիի պարսկէրէնին  
և անխան ի Աւետան արմատոց: Առ-  
քան միայն ճանչցուած են այժմ իրեւ  
կանոնական մատեանք ի Բարսի մազ-  
դեղանց, որ ի Հնդկիս: Կու յիշեցնենք  
դարձեալ, թէ Ասանեանց օրերը՝ Աւե-  
տայի լեզուն զրեթէ անիմանալի էր.  
վասն որոյ և անոր պահլաւիկ թարգ-  
մանութիւնն աւելի գործածկան էր,  
թէպէս ազօթներն և արարողական եր-  
գերն Աւետայի լեզուու կը կատա-  
րուէն: Ալք՝ ուներ զաբարչիկն, բսել է  
թէ մոզգեատ գիտեր զպահաւիկի լեզուն  
միանքամայն այն ամենայն կրօնական  
վարդապետութիւնները, որ ամփոփեա-  
են Բահրամի կամ Հիշզգարէ գրոց մէջ  
Բայց Ասանեանց մատանակակից հայ

և յոյն մատենագրաց մէջ կը գտննէք իսկ մը վարդապէտութիւններ, որ շը-  
կան բանալուի դրանքենանց մէջ. օրինակ  
իմ ջրուածայ նախագյուղութիւնը, արե-  
գական, լուսեոյ առասպելախառն ծա-  
զումը: Արդզայ սպանումը, և այլն,  
որք ի վերջոյ մտած բաներ էին, բայց  
և այնպէս զոնեա Արարակաստանի արե-  
մտեան և հարաւային նահանգաց մէջ զա-  
ւանութեանց կարգն էին: Այդ վարդա-  
պէտութեանց ամբողջութիւնը, որ ընդ-  
հանրապէս զրի վրայ առնուած շեր, որ-  
պէս վկայէ մեզ Եզզնիկ, և որ խառն էր  
բանալուի դրոց վարդապէտութեամբք, կը  
կազմեր զոր ինչ Եզզէ կը կոչէ Պար-  
կապեն:

Գիտեր և զՊարտքայն, այլ ընթեր-  
ցուած զԱվարտքայն, կրկնեա եղանակա-  
ալ գրուած է և Հայկազեան բառարա-  
նի: Ամէշան վարդապետ կը գրէ մեզ  
թէ և Եղիշեայ գժուարիմաց բառերն  
շատ ի հուց ազգային կարգացազաց  
միտքն ալ քըրքեր են ստուգելու այդ  
բառից իմաստները, և թէ չին բառա-  
զրոց մէջ գրուին զատ յայլոց հանգերձ  
մեկնութեամբք, այս բառագրաց հնա-  
գոյն օրինակաց մէջ եղեալ է ամ, պարու-  
թայ, առաջին վանկը իշտով միտքերէն  
բառնաւած ։ Կատանքնապօլսոյ 1823  
տպագրին հրատարակիլը կըսէ թէ իւր  
ձեռքն ունեցան չին բառարանին մէջ  
տպարտքաց գրուած էր. բայց սրովին-  
տե Աֆ. Ջուականը կրող ձեռագիրը,  
որ օրինակ եղած էր այդ տպագրոյ,  
ունեց զամենայի պարտքամ, անոր համար

**և զրովայիտն, ունէր և զպալհաւիկն և զպարսկագենն.**  
**քանդի այս հինգ կեշտք են՝ որ գրաւեալ ունին զամենայն**

ինքն ալ երկու բառով դրած էր: Հին բառարանի այն օրինակներն որ մէկ բառով ամբուրացու դնեն, կը մեկնեն՝ չուսակրոն: իբրև ենվերքէ, որ ընդունելի չէ: քանդի ենվիք՝ լուսաւոր, արարական բառ է, և չէր կրնար ի կիր առնուած ըլլալ ի Պարսից Եղիշեայ դարսուն, մանուանդ կրօնական յատուկ անուան կազմութեան համար: Աւզիզն է Պարսաց, ինչպէս պիտի ցացանեմք: — Բառւրեստքական կը կոչեն մազգէական մատեանք զննագոյն և զառաջին կրօնն Երանեանց, յորժամ տակաւին Զրադաշտն Արիդամաչէր նորոգեր և փոխսեր զայն. (տես էջ 161 Ճանօթ, 3): Բայց շատ անզան ալ այդ նաևնդ կու տան նոյն ինքն Արիդամայ վարդապետութեան, զանազանելու համար զամ վերջին ժամանակաց մէջ անոր պակասաւոր և աղաւաղեալ ձենէն, կամ նոյն ինքն ուզգափառ մազգեզն գենի, որ դարս կամ ժամանակի որ ըլլայ: — Պարսաց անուանդ երկու բառէ կը բազկանայ՝ որոյ վերջինը տքայէ տքանին Աւետայի, յորմէ կրատաեցաւ քէ՛ կրոնք, որէնք, քէ՛: իսկ բառւրե և առաջին: պարտաշ է ուրեմն և առաջին կրօն: և իմանաւու է ասու զի՞ ինչ մէջ բառագութեան մէջ շէմշէ միայն, այլ և զօրինս Արիդամայ: Բանաւի զրութեանց նոյն կուսուգութիւնը չենք կրնար երաշխաւորել, որովհետեւ ըստ Եղիշեի առանձին կեշտի, այս է մասնաւոր կրօնի կամ վարդապետութեան անուն լինել կը թուի բան մասնաւոր մատենի կամ ծիսարանի:

Գալով Բազգայիտի, այլ ընթերցուած՝ Բազգայիտ: զոր ուսեալ էր ևս մոպակուն նախ խոսուգանինք՝ որ մազգէական մատենագրութեան մէջ շպանք որոշ և գոհացուցիւ տեղեկութիւն մը, որպէս վերոյիշեալ երեք անուանց համար: Եթէ բառական ստուգարանութեան դիմենք՝ Բազգայիտ պարտի նշանակել՝ աղօմք,

աղերս, պաշտամունք, ավազի, որազի, և հայցել, կարդալ, սրաստ գոգել, արդարեն Եսուսի բառարանին մէջ միայն վերջնոյն ածանցը կը զտնենք՝ սրաստութիւն, որ նշանակէ զովութիւն: պատճառ մը չկայ սակայն որ առջի երկու բայցերն ալ նոյն վերջաւորութիւնը շանուն: Աւեստայի եօթնեաւասներորդ զրոց կամ նազընին անունն է Հնարամ, որ ծիսից և արարագութեանց վրայ կը խօսէր: Անդ նասակեդ մասն մի կոյ այժմ, որ Նիբաեկիսուն կը կոչի (Տես էջ 152): Եղիշե կարելի է ըսել ուզէ մէկ մոպակութիւնը ոչ միայն զՈրէնս զՊարսքաչ, այլ և զոյլ արարագութիւնն և զկարգ պաշտամանց և աղօմքից՝ զԲազգայիտ: Քանզի Պարսիկք այս վերջնոցա առջնին շափ կարեւորութիւն կու տային եթէ ոչ աւելի: Գուցէ ևս Բազգայիտ: Հուսպարամի տեղ դրուած ըլլայ, Այսու ամենայնին Բազգայիտի վրայ զրուցաներնու ստուգութիւնը չենք կրնար երաշխաւորել, որովհետեւ ըստ Եղիշեի առանձին կեշտի, այս է մասնաւոր կրօնի կամ վարդապետութեան անուն լինել կը թուի բան մասնաւոր մատենի կամ ծիսարանի:

Բայց լուսագոյն կը լինի կեշտ բառիդ բացարձակ իմաստ շտալ ու այս շորս տեսակ ուսմունքը չնկատել իբրև իրարու հակառակ և զիրար մերժող դաւանաւթեաներ, այլ զանազան վարդապետութեաներ (Տես էջ 277, Ճանօթ, 1): որը զատ զատ ուղղափառ համարեալ էին, և որոց միայն միայն հետեւին ալ օրինաւոր էր: Բայց շորսն ալ տեղեկակ եզզոյն կամ զամէնն ալ ընդունողն է համակդեն: (համայնագեն) կը կոչուէր. (արդի պարսկերէն համահին անենը կը դրուէր և կը հնչուէր և համակ, որպէս հայերէն՝ համակ):

օրէնս մոգութեանն; Յայց արտաքոյ տոցտ է միւս ևս այլ վեցերորդ, զոր մոգպեան կոչեն:

8. Թուէր իմն անձին, եթէ կատարեալ իցէ ամենայն գիտութեամբ. Հայէր ընդ երանելիսն, եթէ առ ի սովութեան մողորեալ են ի մեծ գիտութենէս մերմէ: Եղ մնատի կարծիս ի մոխ՝ անդադար չարշարել զնոսա, զի թերեւս առ չժուժալ մարմնոյն նեղութեանց՝ լուայց ի նոցանէ բանս ինչ ողոքանաց; Վասն որոյ զատ և որոշեաց ի նախարարացն զքահանայսն, և հեռացոյց ի նոցանէ բացագոյն. և արկ զնոսա ի ներքնատուն մի զէջ խաւարչուն: Եւ հրանոյէր վեց առն երկու քաշկէնս:

Բառ Եղիշեայ համակդնութիւնը զատ կեշտ մի է. որով շորս կեշտէ հինդ կեշտ ձեւցաց կ'ըլլան:

Հայասդ-լա-շայար Պարտաշի այս է ուզզափառ մազգեզն զենի վեց վարդապետութիւն (չեղուակ՝ որ է և կեշտ շ) կը յիշէ, ըստ վեց նշանաւոր վարդապետաց կամ մեկնաց, առաջնոյն վարդապետն է Կոկորաս. երկրորդին՝ Աղար-Աղար-Աղարմազդ. երրորդին՝ Այշեանս. շորորդին՝ Աղար-Ֆրաուկ-Նսայ. հինգերորդին՝ Մէտեօք-մահ. Վեցերորդին՝ Աղարի: և Ամենայն ուզզափառ մազգեզնանը (բօրեօդքշան), յաւելու հեղինակն Շայասդ-լա-շայասդի, կը հետեւն այդ վեց վարդապետութեանց. և են որը յայդցանէ ոմանց միսայն կը հետեւն առաւել կամ նուազ չ: Գլ. Ա. 3. 4: — Խակ այդ վարդապետութեանց տարբերութեանը գալով, օրինակ իմն, մին ասէ թէ վասելու վայրո՞ հատանէլէն ենքը տարի մը պահուելու է. միւն ասէ թէ մարմէ է վասել զայն անմիջապէս սովորական կրակներու համար:

« Զայս և ես իսկ ։ կ'ըսէ թովմա Արծրունի, « աեզեկացեալ զիսացի ի բազմաց յայնցանէ՝ որ Շամիրիքն կոչին, որոց դէու նզեւ և ինձ հանդիպել եկեւոց ոմանց ի յԱլպաստան աշխարհէ, որը անուանէին զինքեանս համակէնս, այ-

սինքն ամենագետ ի հաւատ կրակի ։ Էջ 27: — Գուցէ Շամիրի է բնիկ Ապար աշխարհի սրում պարսկերէն Ապրշահը կ'ըսուէր. իսկ Ապլաստան հաւանորէն կամ Զապաստան՝ Սպաստանի մէկ զաւառը պիտի ըլլայ, որ խորենացւոյ աշխարհագութեան մէջ ալ յիշուած է և կամ Ապրաստան փոխան ։ Ապր-շահը որ ըստ մարդմանի վերին աշխարհ, բարձրագաւառ ։

Ըստ Պ. Արթէկէլի՝ այս պարբերութեան մէջ ամենէն ուշագրութեան արձանի կետն այս է, թէ նոյն ինքն Եղիշեաց որը պահաւաիկ դէն մի կար, և պարակական դէն մի որիշ որիշ և միւնանց. այս երկուքս հարաւային Պարտապատանու մէջ աւելի ծաւալեալ էին, մինչ Պարտապաշն և Բոզզպային աւելի հիսխային մասին մէջ հետեւող ունէին. (Spiegel, Eran, Alterthumskunde III p. 778):

Խակ վեցերորդ կեշտը՝ որ մոգպեսն (այլ ընթերցուած պիտմոց) կոչեալ է և միւն հինգէն դուրս էր, ասոր վրացք բան մը չկրցանք սառուցել, զարմանալի է թէ Եղիշէ և թէ Հայասդ-լա-շայասդի հեղինակը վեց կեշտս կը յիշէն, թէ պէտ ուրիշ կողմանէ զրուցանին բոլորին տարբեր է:

1. Քաշկէն՝ վարեհաց. պրակ բայթին

ժամե՞ ի ժամ՞ և դորակ և կէս ջուր. և ամենեին ոչ զոք  
թողյը մօտ երթալ ի դուրս բանախն:

9. Եւ իրրե աւուրս քառասունս այսու նեղէր զնոսա,  
և ոչ լուսւ ի նոցանէ բան թուրովեան, այլ ինն ած  
զմոսա եթէ ոք յեւրոց ծառայիցն գալու եգիտ ինչ: ի  
նոցանէ, և ի ծածուկ տացէ նոցա կերակոր: ինքն եր-  
թեալ կնքէր զերդ և զդուսն բանդին, և զկարգեալ ոռ-  
ծիկն տայր յիւր հաւատարիմն տանել նոցա. և արար  
զայս աւուրս հնդետասան. սակայն և այնպէս երանելիքն  
ոչ ինչ շատապեալ տագնապեցան. այլ մեծաւ համբերու-  
թեամբ տանելին զճկնութիւնն, և անդադար տաղմախւք  
կային ի հանուպազորդ պաշտամնն. և ի կատարել ա-  
զօթիցն զուարթագին գոհաննալով, սակաւիկ մի հանգ-  
չին ի զետնախափ յանկողինն:

10. Իսկ պահապանքն, որ ի վերոյ կապելոցն կային,  
յոյժ էին զարմացեալ ընդ առողջութիւն անհիւաննդու-  
թեան նոցա, իրրե լուին զանդադար հնչումն ձայնիցն:  
վասն այնորիկ պատմեցին յականնս մոդպեափն և տան.  
Ոչ են արքն այն լոկ տանց մեծի զօրութեան. զի եթէ  
պզնձի մարմինք ունէին նոքա, արդ լուծեալ էր ի գէճ  
խոնացյ անոտի: Բազում ժամանակք են մեր, զի յանձն  
է մեզ պահապանութիւն բանդիս. ոչ յիշեմք՝ եթէ ի կո-  
պերոց ոք ամսորեայ ժամանակ կեցեալ է ի տանդ յայդ-  
միկ: Որդ մեք ասեմք քեզ. եթէ տոեր հրամանն մահու  
նոցա և սպանանես, զու զիսես<sup>2</sup>. սպա թէ ոչ, պահել  
յանձն արարաւ քեզ և ոչ դատել զնոսա, չարաչար վր-  
տանդ է կապերոցն: Նա և մեք զահի հարեալ եմք և յոյժ

**Կ** նշանակէ 1 գարեհաց . 2 ցո-  
րենի, զարոյ, բակայի և սիսեռան ա-  
լիւրէ շինուած հաց: — Ապպէն՝ Դու-  
զարաց բդեաշխը զիւր դշխայն զվար-  
դենին բանարիկէ յետոյ կը հրամայէ  
պահապանաց, որ միայն զարիէ հաց և  
ջուր տան նմա. Առփերը հայկ. թէ: —  
Դորակ. պարսկերէն՝ տօրա օյցա է շիւ.  
փարչ:

1. Առուժ է բացարարութիւնդ. իսկ  
էառ պարզե թիւ ի նոցանէ: Եզիշէի

ժամանակակից հեղինակաց բազմաթիւ  
վկայութիւններէն կը հետեւ թէ պար-  
զեք և բաշխելք այն ժամանակ մեծ  
դեր կը խաղային Պարսից մէջ:

2. Ահաւասիկ օրինակ մի եռ' որ Պար-  
սիկք գլխամամամբ շէին սպանաներ զմա-  
հազարաս, այլ զէճ և խաւարշտին բան-  
տի մէջ ծանր կապանօք կը պահէին և  
կը սպասէին որ մննդեան անբառկա-  
նութիւնն մեռնին: Տես և Յ. լ. 42 ձն. 1:

երկնչիմք, յորժամ տեսանեմք զայնալիսի անհնարին նեղութիւնն:

11. Եւ իբրև զայս լուաւ մնդպեսն, յարուցեալ ինքնին երթայր ի մէջ գիշերին յերդ բանդին: Եւ հայեցեալ ի ներքս ընդ մութ դիշերոյն, այն ինչ լինէր նոցա ի պաշտամանէն հանգչել, և տեսանէր զանձն խրաբանչւր կապելոցն, զի իբրև զիկանթեղ անշիջանելի վառեալ բորբոքէր: Զահի մեծի հարաւ, և ասէր ընդ միտս իւր ջինչ է այս մեծ սրանչելիքս. աստուածք մեր ուրեմն եկեալ իջեալ են ի բանդս, և նոցա վառաւորութիւնն լուցեալ բորբոքի: Եւ եթէ նոքա առ սոսա ոչ մերձենան, մարդոյ լոկոյ անհնարին է զայնալիսի պայծառութիւնն լուաց զգենուզ: Իմ այսպէս լուեալ էր վասն կեշտիս այսորիկ, եթէ առ յոյժ յիմնարութեանն մոլորեալ են, և սոսութեամբ կերպարանին յաջս տպէտ մարդկան. թերևս և այս տեսիլ այնպէս ինչ երենցաւ ինձ:

12. Եւ ոչ կարէր համօրէն կալ ի վերայ իրացն երեման: Եւ մինչ գեռ յայսմ մնաց խորհրդի էր, գարձեալ սուրբքն յիւրաքանչիւր խշուեկացն կանդնեցան կացին ի սովորական պաշտամանն: Յայնժամ՝ ծշմարտեալ գիտաց մնդպեսն, եթէ ոչ այլ ընդ այլոյ տեսանէր՝ որ երկեցաւն նմա, այլ ի նոցանց յանձանց վայլէր լուսաւորութիւնն: Յայնժամ՝ կրկին անդամ՝ զահի հարաւ և ասէ. Ո՞ւմ ի կապերոցն եզեւ այնալիսի յայտնութիւն. եռ և ոչ զմի ոք ոչ գիտեմ, և ոչ լուեալ է իմ ի հարցն յառաջնոց: Եւ քանզի անհնարին շարժեցաւ ի մեծ սրանչելեացն, և գողացին ամենայն մարմինքն, և թըմքը բրեալ կիսամեռ լինէր ի վերայ տանեացն մինչև յառաւոան. և ի ծագել լուսոյն իբրև զրագմօրեաց հիւանդ յարուցեալ երթայր ի վանս իւր, այլ և ոչ ումեք իշխեաց առենին պատմել զոր ինչ ետեսն:

13. Կոչեաց առ իւր զպահապանն և առէ ցնոսա.

1. Գիտելի է՛ որ Փարպեցին որ նշիքեայ ութերորդ Յեղանակին շատ տեղ տուն առ տուն կը հետեւի, մազպետիդ խօսքը լըներ ընաւ, միթէ չայսց պատմութենէ գուրս եղելութեն մը համարելուն համար. բայց և այնպէս վայել

էր համառու յիշտատկութիւն մը ընէր: Պատճառն ինչ որ աւ ըլլայ, շմոռանք որ նշիչէն աւ նիթերորդ նրանակին մէջ պատմած իրաց ականատես վկայ չէ. այլ ի լրու կը պատմէ Ապար աշխարհի և անապատին մէջ եղած դէպքը:

« Երթայք հանեք զկապեալսն ի վերնատուն մի ցամաքադոյն, և անդ պահեցէք զնոսա զգուշութեամբ, որպէս և ասացէքն »: Մի ոմն ի դահճաց անտի, իրրե լուաղ դհրամնանս մողպեախն, փուժով ընթացեալ երթայյր, իրրե մեծ իմն աւետիս տանէք նոցա : « Հրամայեաց ձեզ, տուէ, ելանել ի ցամաք վերնատուն մի. արիք վաղվագակի, և մի հեղզայք, քանզի և մեք իսկ պաղատեցաք վասն ձերոյ տառապանացդ »:

14. իսկ առրբն Յովսէփ հեղարար սկսաւ խօսել ընդգահճապետին և տուէ. « Երթ սաս ցյիմար առաջնորդն ձեր, չէ լուեալ քո վասն հանդերձեալ գալստեան ջեառն մերոյ և կամ վասն մերոյ հրաշակերտ շինուածոցն, որք մեզ կան պահին ի սկզբանէ պատրաստութիւնքն. վասն որոյ գիւրեաւ համբերեմք մեծի նեղութեանս առ սէր այնր յուսոյ՝ զոր տեսանեմք: Գու բարւոք արարեր, զի արգահատեցէր մեծի նեղութեանս մարմնոյ. այլ ոչ ինչ եմք ձանձրացեալք իրրե զանաստուած ոք, որ չիք այլ ինչ յոյս ի միսս նորա քան որ երեւինս: Այլ մեք առ սէրն Քրիստոսին մերոյ՝ ընդ այս յոյժ եմք ինդացեալ, և կատարեալ պարզես զոս իսկ համարիմք, զի ժամանակեայ վշտոքս զանժամանակ երանութիւնսն ժառանգեսուք :

15. « Եթէ շինուածոց իցեմք ցանկացեալք, ունիմք շինուածս յերկինս առանց մարմնաւոր ձեռագործի, որ ոչ երեկին ձեր արքունիքը առ նորքը: Նոյնպէս և հանգերձից և փառաց և անախս կերակրոց, զոր եթէ ոք կամեսցի ասել ձեզ, չհանգարտէ լսել ձեր տկարութիւնզ. վասն զի կուրութեան հնութեամբն շտեսանէք և ոչ լոէք և ոչ իմանայք, յայն սակս զմեզ զուր և անիրաւ առանց յանցանաց անազորմն գատիք: Այլ մեր թագաւորն առատ է և բարերար, և բաց է գուռն արքայութեան նորա, եթէ կամեսցի ոք գիմել՝ գիմեսցէ համարձակ. ի դարձելոց յապաշխարութիւն չնախանձի և ոչ ընդ ու մեք երրեք:

16. « Բայց վասն գիւրութեանս՝ որ գու հրամայեցէր առնել մեզ, էր մեր իշխանութիւն անդրէն յաշխարհին մերում շանկանել մեզ ի ձեռս թագաւորիդ, որպէս և այլքն՝ զի ապրեցան յայսպիսի փորձանաց. այլ

որպէս կամք և յօժարութեամբ եկագ, իրրե թէ զիտէագ զվիշտ փառնգիս, ոչ ինչ զանդիսեցագ յայսպիսի ճգանց, սոյնպէս և կամիմք՝ զի և այլ ևս ծանրացուցես ի վերաց մեր, մինչեւ քո չարութիւն կամացդ յագեցի ի մեզ: Զի թէ Աստուածն մեր, որ է արարիշ երկնի և երկրի և ամենայն երեւեաց և աներեսաթից, և առ սէր իւրոյ բարերարութեանն խոնարհեցաւ առ ազգս մարդկան, և զգեցաւ մարմին չարչարելի, և անց ընդ ամենայն հանգէս առաքինութեան, և կատարեաց զամենայն գործ տնտեսութեան<sup>1</sup>, ի կամն իւր մասնեցաւ ի ձեռս խաչահանուացն, մահու մեռաւ և եղաւ ի գերեզմանի, և զօրութեամբ աստուածութեանն իւրոյ յարուցեալ երեցաւ աշակերտացն և այլոց բազմաց, և վերացաւ առ հայր իւր յերկինս, և նստաւ ընդ աջմէ հայրենի ամոռոյն, և չնորհեաց մեզ զօրութիւն երկնաւոր, զի ըստ նորա անմահութեանն՝ և մեք մերավ մահկանացաւ մարմնովս կարիցեմք չարչարակից լինել անմահ մեծութեանն, և նու ոչ ևս իրրե զմահկանացու համարի զմեր մասն, այլ իրրե անմահից հաստացանէ մեզ զվարձս փաստակոց մերոց. արդ փոքր համարիմք մեք զչարչարանս զայս առ սէր փոխարինին, զոր էարկ առ ազգս մարդկան»:

17. Իրրե լոււաւ զայս ամենայն բանս մոզ պեսն ի գահճապետէ անափ, խոսվեցաւ, պղտորեցաւ ի միտս իւր, և հաստաւ քուն յաչաց նորա զբազաւմ դիշերս: Խոկ յաւուր միով յերեկուն պահուն<sup>2</sup> յարուցեալ երթայր առ

1. Տնտեսութիւն՝ խորհուրդ մարդեզութեան բանին. Հմիլ. բռ:

2. Պահը է բաժանում ժամանակի պահապահաց զիշերոյ. յերիս յերիս ժամն մի պահ համարեալ: Դիշերը ուրեմն չորս պահ ուներ, որպէս և ցերեկն: Եցիչէ պահ կը զործածէ (տես և Յ. Բ. Բ. 21) մինչ Փարուեցին ժամով ալ կը բացարեէ: «Ի վեցերորդ ժամու աւուրն . . . ։ Բայց զինն ժամու աւուրն երրորդի յարուցեալ երանելի խուժին ։ . . . էջ 283 և 309: Թուի թէ այդ երկու կերպ բաժանմունքդ ալ գործածական էին, զուցէ ժամք աւելի սովորական էին ժողովրդեան մէջ:

Երկու կերպով ալ որը առաւոսէն սկըսելով կը հաշուէին: Խոկ Պարսիկը զօրն ի հինգ կուս կը բաժանէին, 1 կուս ձաւենի, որ կը սկսէր ի ծագել արեգական: 2 Արտիրփինս, ի հասարակ աւուր. 3 Խոզաւերինս, վերթնալուսոյ հետա. 4 Ալյին բուրրեմն՝ աստեղաց լուսավառ Փայլեւու ասենը: 5. Աւշամին՝ աստեղաց լուսոյն պահացած կամ արշալուսոյ սկսած ասեն: Պ. Հաւկ՝ զառավինը կը դնէ ժամը 6-10 ասին քան զՄիջ. զեր կրորդը՝ 10-3. զերրորդը՝ 3-6 (ի մասս արեգական). զչորորդը՝ 6-12 և զհին զերորդը 12-6: Ալյն մի կան, միոյ միոյ

նոսա միայնիկ լոիկ, և ոչ զոք առնոցը ընդ իւր ի սպասուորացն։ Եւ իրքեւ եհաս ի գուրս տանն, հայէր ընդ ծակ մի ի ներքս և տեսանէր լսու առաջին տեսլեանն, բայց նոքա ի քուն կային խաղաղիկ։ Հեղարար կարգաց յանուանէ զեղիսկողոսն՝, քանզի քաջ իսկ գիտէր պարակերէն։ Եկն ի գուրս և հարցանէր, Ո՞վ ես գու։ Ես ինքն իսկ եմ, ասէ. կամիս ի ներքս մտանել և տեսանել զձեղ։

18. Եւ իրքեւ եմուս ի մէջ սրբոցն, ոչ եւս երեւէր նմա այլ նշանն. և պատմեաց նոցա զերկիցս երեսոմն պրանչելեացն։ Ետ պատասխանի Գիտնդ երէցն և ասէ. «Աստուած, որ ասաց ի խաւարի լցու ծագել<sup>2</sup>, որ և ծագեաց և լուսաւորեաց խմասաւթեամբ զաներեսյթ արարածո, նոյն զօրութիւն և այսօր ծագեաց ի խաւարեալ միսս քո, և բացան աչք կուրացեալ ոգւցդ, և տեսեր զանշիշանելի լցու չնորհացն Աստուածոյ. փութա, մի հեղգար, գուցէ դարձեալ կուրացեալ ընդ խաւար գընայցն»։

19. Եւ զայս իրքեւ ասաց, յասն կացին ամենեքեան առելով զքառասներորդ երկրորդ սազմոնն. Առաքեա, Տէր, զլցու քո և զծամարտութիւն քո, զի նոքա առաջնորդեսցն և հանցեն զմեզ ի լեռան սուրբ և ի յարկս քո։ Արդարի ճշմարտիւ, Տէր, տուաշնորդեցեր և ածեր զմորորեալս զայս յանմոց ուրախութիւնդ և յանմերժելի հանդիսադ։ Ահա նմաննեալ է օրս այս սուրբ չարչարանացն քոց. որպէս ապրեցուցեր զմահապարտ աւազակն յերկրորդ մահուանէն, և նովու բացեր զաղիսեալ գուռն Ագենայ, այսպէս գտեր և զայս կորուսեալս. որ էր պատճառք մահու բարձրաց, արդ արարեր զսա պատճառք կենաց մեզ և անձին իւրում։ Գոհաննամք զքէն, Տէր, գոհաննամք և ձայնակիցք լինիմք սուրբ մարդարէին. Մի՛

հրեշտակի նուիրեալ էր, և խրաքանչիւրէն յասուկ ազօթքներ սահմանեալ էին, զոր ամէն հաւատացեալ պարուն ասեւ. համակին երանեանք Բատուս Կըսէին փոխանակ կամի (աւս Վենաբասան Գլ. լշ.) բայց Աստուանց ժամանակը վերջի անունդ աւելի դարձածական էր։

Հաւանարէն «կահ» և «պահ» լծորդ են։ Կ և գը փոխանակին՝ որպէս և զնդ ու այսպէս պարունակըն վառ չար, յոռի. զատ, զրի ես կտու. որպէս և վհճ զեհ փոխեցաւ ի պէս։

1. Այս է զԱսհակ։
2. Սազմու ձժիւ։

մեղ Տէր, մի մեղ, այլ անուան քում առուր փառս փառն ողորմութեան և ճշմարտութեան քոյ. զի մի երբեք առացեն ի հեթանոս, թէ ուր է Առաստած նոցա՝ որպէս և այսօր իսկ յայտնի եղեւ զօրութիւն քու մեծ ի մէջ ապարատան խաւարազգեաս աղգիս:

20. Իսկ որ ձրին եղիս զաստուածառուր շնորհան, սկսու և նա առանձինն ասել. Տէր լոյս իմ և կեանք իմ; ես յումէ երկեացց. Տէր ապաւէն կենաց իմաց, ես յումէ դողացացց: Քանզի գիտեմ ճշմարտիւ, եթէ բազում են այսուհետեւ թշնամիք իմ, և կամին մերձենալ և աւտել զմարմինս իմ. այլ դու, Տէր ամենայնի, եկիր փառն ամենեցոն կենաց, զի գարձցին և կեցցեն առաջի քոյց մարդաբրութեանգ: Մի որոշեր զիս ի սուրբ գառնցու՝ յորու խառնեցայ, զի մի ըստ քո փարախու արտաքս ելեալ՝ չար գաղան գարձեալ բեկանիցէ զիս: Մի հայիր, Տէր, ի բազմամեայ ամբարշտութիւնս իմ, զի մի մնարեալ ի ճշմարիս կենացգ՝ զբազումն անդրէն ի կորուստ աշակերտիցեմ. այլ որոց եղէ պատճառք մահու՝ նոցին եղէց և պատճառք կենաց: Սատանայ՝ որ ինև խրսխասացեալ պարձէր ի մէջ մեծի կորստականացս, ինև կորացեալ ամաչեացէ ի մէջ իւրոց աշակերտացն »:

21. Եւ զայս իրի ասացին, նմին իսկ ետուն կատարել զաղօթմն, և գաղարեցին նախաւ հանդերձ մինչե ի պահն երրորդ. և այնպէս խաղաղացեալ կացին ի քուն ամենելեան մինչեւ ի ժամ առաւօտուն: Իսկ նորս յոտն կացեալ, և ի քուն ոչ մնանէր. այլ զձեռսն իւր ի վեր համբարձեալ՝ կայր յաղօթմու: Եւ մինչ գհու ընդերդ պշուցեալ հայէր յերկինս, յանկարծակի տանն ի եղեւ լուսով. և երեւեցան նմա սանդուղք լուսեղէնք՝ որ կանդնեալ էր յերկրէ յերկինս, և գունդք գունդք զօրսաց ելանէն ի վեր. և էր ամենեցուն տեսին նոր և չքնազ, ահաւոր և պանչելի իրի զաեսիլ հրեշտակի: Ունէր և զիթիւ համարոց ի միսս իւր զիւրաքանչիւր զնդիցն, զսր տեսանէր, էր՝ որ զհաղարի, էր՝ որ զերպերիւրոց և զերեքստասաւ-

նից<sup>1</sup>: Եւ այնպէս մօտագոյնս մերձենայր, մինչեւ ճանաշը նմա զերխս ի նոցանէ, զվարդան և զԱբասակ և զԽոռըէն: Եւ ունէին ինն պատկ ի ձեռին, խօսէին ընդ միռեանս և ասէին. Ահա եկն եհան ժամ, զի և սոքա խառնեցին ի գունդս մեր, քանդի և մեք սոցա իսկ մնայաք, և առհաւատչեայ պատիւ սոցա թերաք: Եւ որում ոչ եւս մնայաք՝ եկն երեւեցաւ և խառնեցաւ, և եղեւ իրրե զմի ի զինուորաց Քրիստոսի:

22. Այս երիցս անգամ երեւեցաւ չքնաղ տեսիլն առն երանելոց: Զարթոյց զսուրբան ի քնոյ անտի, և պատմեաց նոցա զամենայն տեսիլն կարգաւ: Իսկ նոքա յարուցեալ կացին յազօթս և ասէին. «Տէր, Տէր, զի պրանչելի է անուն քո յամենայն երկրի. Համբարձաւ մեծվայելութիւն քոյ ի վերոյ քան զերկինս. ի բերանոց մանկանց տղայոց սարնդիացաց հաստատեցեր զօրհնութիւն, զի եղծցի թշնամին և հակառակսրգն: Զի ոչ ևս է այսուհեակ ասել, եթէ տեսից զերկինս զգործս մասանց քոց<sup>2</sup>, այլ թէ տեսից զքեզ, Տէր երկնի և երկրի. որպէս երեւեցար իսկ այսօր ի ձեռն սուրբ զօրականացն քոց հեռաւոր ստարխս, որ անցեալ էր ըստ ակնկարութիւն կենաց իւրաց:

23. «Ահա դու, Տէր, ողորմութեամբ քոյ պատկեցեր զսիրելիս քո, և զթութեամբ քով ելեր ի իննդիր կորուսելոյս, դարձուցեր և խառնեցեր ի գասս սրբոց: Ոչ միայն ետես սա զերկինս՝ զգործս մասանց քոց, այլ ետես զերկինս և զբնակիցս նորա, և մինչ գեռ է յերկրիս խառնեցաւ ի գունդս թիւրաւոր հրեշտակաց քոց: Ետես և զագիս արգարոց կատարելոց, ետես և զնմանութիւն փառաց աներեսոյթ պատրաստութեանցն, ետես և ի ձեռին նոցա զանցուշտ սաբունայն<sup>3</sup>, որ հանդերձեալ պահի ի ձեռն ճարտարապետին: Երանի սմա վասն սուրբ տես-

1. Աբասազու մէջ ինոզ նահատակքն  
1036 չոգի էին: Մոզպետը տեսեր էր  
1000+33+3 որ են Վարդան, Ալբակ  
և Խորեն: Խակ երկու հարիւր և տան  
և երեքը պատերազմէն վերջը ամրոցէ  
մը անձնատուր եղողներն են. (Յ: Ե: Յ):

2. Այզմ. Ը:

3. Բաբունայ՝ առհաւատչեայ, գրաւական: Հատիներէն Arrabo կամ՝ Արցիհա, զգ: Arrhes մի և նոյն բառն են: արդի պարկերէն բառազոց մէջ ալ կը զանեմք Ծպաց բազում նոյն իմաստով: Աեմական բառ մի կ'երեի, որ մուտ գըտած է ի յաւարէն և անտի ի լատինս:

լիանս, և երանի է մեղ վասն սորա մերձաւորաթեանս առ մեղ. քանզի հաստատեալ գիտացաք սովաւ, եթէ ուրում այսպիսի սպանչելիք յայտնին, մեծ մասն ընկալու սա յանապառ քոց բարութեանցդ։ Անսպառ են պարգելքն քո, Տէր, և ասանց խնդրելոյ տաս ում և կամիս քոյով յորդ և աննախանձ առաստաթեամբդ։ Եւ եթէ որ ոչ խնդրեն՝ չարգելուս ի նոցանէ, բաց մեղ, Տէր, զգուռն ողորմութեան քոց, որ ի մանկութենէ մերմէ ցանկացեալ ենք բարեմանութեան սրբոց քոց։ Զնորագիւտ դատուակերտ քո բարեխօս առնեմք վասն անձանց մերոց. մի ընկղմեացի նաւ հաւասոց մերոց ի մէջ ալեկոծեալ ծովումեղաց»։

24. Եւ այսպէս յերկար կասարելով զադօթման, յորդ և առաստ արտաստու հեղուին ի վերայ անձանց իւրեանց։ Գութ սղորանաց արկանէին առաջի բարերարին, զի լսելի լիցի ձայն պազատանաց նոցա, և հաստատոն կացցեն ի վիշտո ճղանցն, զի մի զրկեսցին ի ցանկալի պասկացն, զոր ունէին սուրբքն ի ձեռս իւրեանց, որպէս և ազգեցաւ նոցա ի ձեռն չոգւոյն սրբոց, զի մերձեալ էր ժամանակ կոչման նոցա, սրպէս զի երթիցեն և աներկիւզ դադարեացեն ի կասկածելի ակնկալութենէ, որում համբերէին բազում տառապանօք, զի առհաւատչեւ փոքր հասցեն երկնաւոր մեծութեանն, որում ի վաղնջուց իսկ էին ցանկացեալք։

25. Եւ քանզի ինքն իսկ մոգպեսն իշխան էր աշխարհին, և նմա յանձն արարեալ էր զկապեալմն քազգին, վասն այնորիկ և համարձակութեամբ ընդ առաւոն հանեալ տանէր յապարանսն իւր։ Խուանայր և սրբէր զնոսա ի չարշարանաց բանդին. առնացր զջուր լուացմանն սրբոցն և արկանէր զիւր մարմնովն։ Աւզպէր և տան իւրում աւագան, և ընդունէր ի նոցանէ զսուրբ միլրութիւնն. հազորդէր ի կենդանարար մարմինն և ի քաւիչ արիւնն Տեան մերոց Յիսուսի Քրիստոսի։ Բարձր բարբառով ազագակէր և ասէր. Մկրտութիւնս այս լիցի ինձ ի լուացումն մեզաց իմնց, և ի ծնունդս նորոգութեան վերտան չոգւոյն սրբոց, և ճաշակումն անմահ խորհրդացոյս ի ժառանգութիւն երկնաւոր որդէդրութեանն։ Դնէր և ըստ մարմնոյ առաջի նոցա սեղան կերակրոց, և

միսիթարութեան բաժակ մասաւցանէր նոցա, և միտրու-  
նէր ընդ նոսա հացին օրհնութեան:

26. Այլ թէպէտ և ինքն եհաս յերկնուոր բարխն,  
և աներկիւղ էր ի մարգկանս հարուածոց, սոկայն վասն  
ընտանեացն յոյժ ունէր կառկած. զի մի իրբե վասա-  
կարք մասնեացն յիրս արքունի<sup>1</sup>: Վասն այնորիկ ի  
ծածուկ կոչէր ի գիշերի և զնախարարանն, որ ի նմին  
քաղաքի էին ի կապանս, և առնէր ծախս մեծամեծու-  
թեացն, որ երկեցաւ նոցա: Ոչ յիշէին ամենին, եթէ  
վիշտը ինչ անցեալ էին ընդ նոսա:

27. Բայց ի ժամ՝ բազմականացն կարծիք իմն եզեն  
ի միաս սրբոցն վասն երիցու միոյ<sup>2</sup>, որ էր ընդ նոսա  
ի սուրբ կապանն. զի ի մէջ շինական մարգկան կե-  
ցեալ էր, և տպիապոյն ևս էր ի գրոց միսիթարու-  
թենէ: Հրամայեցին նմա տնել զգլուխ բազմականին, ետ  
ապատախանի երանելին և տէ. «Զի՞նչ է այդ՝ զոր  
գուք գործէք, և կամ յինէն զի թափուցանէք զծա-  
ծուկս խորհրդոցք: Ես քան զկրսերս ձեր խոնարհագոյն  
եմ, և քան զիս փոքունս յաշակերտաց ձերոց տպիա-  
գոյն եմ, զիա՞րդ կարացից այդմ տանել: Այս իսկ մեծ  
էր ինձ, զի սուրբ կապանաց ձերոց հազարդեալ եմ այս-  
օր: Եթէ արժանի համարիք զիս ձերում սեղանոյդ,  
կարարուք զուք զիս բարանչիւր տեղի բազմականիդ, և  
հրամայեցէք ինձ զիմ տեղին»: Եւ բանագատեաց սուրբ  
եպիսկոպոսն միտրանութեամբ տմենայն սրբոցն, և ի  
վերոց քան զամենեսեան բազմեցուցին զնա:

28. Եւ իրբե բողոքեցաւ ակումք բաշմականին, և  
հազարդեցան ամենեկեան ի կերակուրն զուարթութեամբ,  
յան եկաց սուրբն Յովուէփի, և սկսաւ զուրախութեան  
նուազն մասաւցանել և ասել այսպէս. «Մւրախ յերուք  
ամենեկեան ի Քրիստոս. քանզի վաղիւ այս ժամ՝ իցէ,  
ահա մասացեալ իցէ սեր զամենայն նեղութիւնս և զչար-  
շարանս զոր կրեցոք: Եւ փոխանակ առկաւ աշխատու-

1. Առէ մարգոյ յանցանաց համար ընտանիքն աւ կը պատճռէին. Տես Յ. գեղջ., որ ի բազրեանդ: Տես Յ. թ. 64:  
Ե. 42. ծան., 4:

թեանս սերոյ՝ բազմապատիկ հանդիսառ ընդունելոց եմք, և փոխանակ խաւարային արգելանի բանդին՝ մասներոց եմք յերկնից քաղաքն լուսաւոր, որոյ քաղաքի քաղաքապեա ինքն Քրիստոս է, հանդիսապեա՝ յորում ասպարիսի նախ ինքն առաքինեցաւ առնելով զնշան յաղթութեան: Եւ այսօր նոյն Տէր է, որ յաջողէ մեզ զնոյն նշան ընդունելով ի փրկութիւն անձանց մերոց և ի պարծանս մեծափառ սուրբ եկեղեցւոյ: Եւ զոր օրինակ տեսէք գուք զեղբայրս զայս ի գլուխ բազմականիս մերոյ, սոյնավէս սա նախ ընդունելոց է վաղիւ զափակն ի ձեռն կատարմանն իւրօյ: Զի ահաւափկ եկն եհաս և մերձեցաւ առ մեզ թշնամին կենաց մերոց և պակիչ սուրբ չարչարանաց ծառայիցս Քրիստոսի»:

29. Զայս իրբե առաց, լուաւ ի նմանէ<sup>1</sup> բանս պընդութեան, որով յցք միսիթարեցան ամենաքեան. առէ. «Ի սուրբ աղօթից ձերոց այգավէս արացէ ինձ Քրիստոս, և կատարեցէ զելս վախճանի իմոյ յաշխարհէս ըստ բանի քում: Եւ ահա ընդ ասելով քո ազգումն եղեւ հոգւոյս իմոյ և յիշեցի ես զբարգասիրութիւնն Քրիստոսի, որոյ և զալուստ իսկ նորա յաշխարհս վասն մեր մեզացն եղի: Գիտացի յիս որպէս և յաւաղակն ի ժոմ խաչին. որպէս նովառ զդրունս վակեալ գրախատին եբաց, և յառաջնեցաւ լինել կարապեա այնոցիկ՝ որ անդրէն ի նոյն տեղի գառնալոց էին յուրախութիւն, արացէ և զիս այսօր Տէր Յիսուս Քրիստոս սպասաւոր ձերաւմ մեծաշուք զնդիպ:

30. «Աւանիկ վասն միոյ մեզուորի՛ որ գառնայ յապաշխարութիւն, անվախճան լինի ուրախութիւն հրեշտակաց յերկինս. որպէս զի գիտեն իսկ զկամն Տէրեան իւրեանց: Քանզի վասն միոյ կորուսելոյ ոչխարին եկն ի խնդիր, վասն այնորիկ և նաքա խնդակիցք լինին վասն միոյ գարձերց յապաշխարութիւն: Թերեւս վասն իմ եկեալ էր մեծ զօրավարն Հայոց բազում սուրբ ընկերակցաքն իւրավոք. զպակն վասն ձեր ըերեալ էր, այլ զուրախութեան աւետիսն հասարակաց տայր: Եւ առա-

1. Շաբագրութեան կարգաւ Արշէն զըռուած խօսքերէն յոյտ և թէ զմոգերէցն ըլլաւու էր, բայց քիչ մը սոսորե պեսն իմանալու է:

մել ևս ընդ իս էին զարմացեալ, զի ոչ ճանաչէին զիս ի կեանս խրեանց, ահա ի սուրբ մահն խրեանց՝ կամէին զի եւ ես մասն ընկալացյ ընդ երանելիսն:

31. «Աղաջեմ զձեզ, տեարք իմ եւ հարք, աղօթս աւրարէք ի վերայ անարժանութեանս իմայ, զի արժանի եղէց մեծի աւետեացն հասանելց որ յանուուա ձերաց բերանոցդ բարբառեցաւ ի լսելիս իմ: Արդ վութամ տեսանել զօրն, և յաւուր անդ զժամն եկեալ հասեալ ի վերայ մեր: Եւ ե՞րբ իցէ զի ելից ի թանձրագանդաղ ձանձրալի մարմնոց այսորիկ, ե՞րբ իցէ զի տեսից զքեզ Տէր Յիսուս, ե՞րբ իցէ զի աներկիւզ եղէց ի մահուանէ, ե՞րբ իցէ զի ագխուութիւնս իմ հասցէ ի կասարեալ զիստութիւն: Օգնեա ինձ, Տէր, օգնեա ինձ, և կարկառեա զամենազօր անդ յօդնականութիւն. զի խսանման բանիցս իմոց և գործք արդեամք կատարեացին ի վերայ մեր, և փառաւոր լիցի յիս ի մեզուորս անուն Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի »:

32. Զայս իբրի ասաց երանելին, յոտն կացին ի բազմականացն անդ, զսհանային ասելով. Փառք քեզ, Տէր, փառք քեզ թագաւոր, զի ետուր մեզ կերակուր ուրախութեան, լցո զմեզ Հագւովդ սրբով, զի դաշուք առաջի քո հաճոյք և մի ամաչեցեալք, զի դու հասուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր:

33. Ի նմին ժաման եզեւ խորհուրդ մեծ ի մէջ նոցա, թէ զինչ օրինակաւ կարացեն ապրեցացանել զմոդպեան. զի մի լուեալ յարբունիսն, իբրի զհուր բորբոքեցի բարկութիւն ի վերայ մնացելոցն: Իբրի ոչ ինչ կարացին ի ժաման վճարելց միաբանութեամբ աղօթս արարեալ՝ յԱստուած ապաստան առնեին զկեանս առնե:

34. Իսկ նախարարքն հրաժարեցին ի սրբոցն յորդառաստ արտաստոք, և սպալից տրախութեամբ անկեալ յոսս նոցա ազաշէին սեծու պապատանօք՝ յանձն առնել զնոսա Հոգւոյն սրբոյ: Զի մի ոք ի մէնջ, ասեն, թուլցեալ և ելեալ արտաքս ի հաւուար միաբանութենէս, կերակուր լիցի շարաբարոյ դաշտնին:

35. Իսկ երանելիքն միաբան քաջալերէին զնոսս և առնեին. «Զօրացարուք, եղբարք, ի Տէր, և մխիթարե-

յարուք ի մարդասիրութիւնն Աստվածոյ, որ ոչ թողու զձեզ որբս և ոչ ի բացէ ասնէ զազորմութիւն իւր ի մէնջ հաւասարի ի Քրիստոս; Բազամ բարեխօսիւքն զոր ունիմք առ նմա, ոչ շիջանի վառումն կանթեղաց ձերոց, և ոչ ուրախ լինի խաւարասէր թշնամին կենաց ձերոց: Այլ նոյն Տէր է որ զօրացոց զառաջին նահասական՝ խառներով զնոսա ի գունդս հրեշտակաց իւրոց. նոցոն սուրբ ոգիք և ամենայն դասք արդարոց հասցեն ձեզ յօդնականութիւն համբերութեան, զի ընդ նոսին նոցունց պատկացն արժանի լինիջիք »:

36. Զայս խօսէին ընդ նոսա, և զգիշերն ամենայն սազմոնիւք ի զլուխ տանիէին. խոկ ի ժամ՝ առաւօսանն սոսէին ամեներեան. Ծագեա, Տէր, զազորմութիւնս քո՛ ոյք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո ոյք ուզիկ են սրտիւք: Մ'ի եկեսցէ ի վերոյ մեր ոտն ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի զողացուցեն զմեզ. անդ անկցին ամեներեան, որ զործեն զանօրէնութիւն. մերժեցան, և այլ մի կարասցեն հաստատել:

37. Եւ անդէն վազվազակի հասին դահիճքն<sup>2</sup> ի զուան բանդին. մտին ի ներքս և աեսին, զի որ յառաջ մողպետն էր, և նմա խոկ յանձն արարեալ էր պահել զնոսա, նասէր ի մէջ նոցա և լսէր ի նոցանէ, նա և քաջարերէր ևս զնոսա չերկնչել ի մահաւանէ: իբրհ աեսին զմեծ սրանչելիսն դահիճքն. յօյժ զարմացան ընդ իրան, այլ ոչ ինչ իշխէին հարցանել ցնա. բայց շրան և պատմեցին Գենշապհոյ, որում՝ յանձն արարեալ էր զշարչարանս սրբացն: Խոկ նա իբրև լուաւ ի դահճացն արքունի, զահի մեծի հարաւ ի միտու իւր, թէ զուցէ և ինքն անձամբ ի ներքս լիցի. քանզի և ծանօթազոյն ևս էր

#### 1. Ոազմաս Լ.Ե:

2. « Ունելով > ընդ բներանս բազմութիւն դարբնաց զործուզք արուեստուրութեան իւրեանց առլիւք և առամբք, կռածոք և խարսացովք, խարսէլ և կը-արել և ի բաց հանել զերկաթմն ի ձեռաց և յօտից և ի պարանոցէ սրբոցն. և զոր ոչն կարասցեն կարել խարսոցքն, ուռամբք զարդեալ զբեռու երկաթոյն».

դնելով ի վերոյ սալիցն բնեկալ հանցեն ի բաց: Քանզի սուռարք էին և ծառ նոնք քան զբնութիւն ամենայն երկաթոյ, սրովք զալ մահապարտոն կազէին, զոր ի նոցա խոկ անուն առեալ էր առնել մոգուցն, սրուէս յանուն արանց վատախրատից և աշխարհակարուսց և աստուածասպանաց և. Փարոք. 274:

առնն։ Հրամայեաց հանելի ի բանդէ անտի զամենեսեան կապահօքն, և հեռացուցանէր ի քաղաքէ անտի երկոսուասան պարսիկ հրասախաւ<sup>1</sup>։ Եւ ի ծածուկ խօսէր ընդմնդպետին, եթէ զի՞նչ պատճառք իցեն կապանաց նորա։ Ետ պատասխանի այրն և առէ ցնա. Մի խօսիր ընդ իս ի ծածուկ, և մի լոեր զիսորհուրդու լուսոյ ի մէջ խաւարի, զի բացան աշք իմ արդ, քանզի տեսի զլորն երկնաւոր։ Եթէ կամիս լինել խորհրդակից կենաց, հարց ցիս յանդիմնն, և պատմեմ՝ քեզ զոր տեսի զմեծամեծան Աստուծոյ։

38. Եւ իբրեւ լուսու ի նմանէ զամենայն, և ստուգեաց ևս վասն իւրոյ միաբանութեանն, եթէ ոչ քակոփի ի սրբոցն հաւանութենէ, ոչ իշխեաց ձեռն արկանելի նա, թէպէտ և ունէր հրաման յարքանուսու։ Այլ վութացաւ, և ինքն երթեալ պատմելը թագաւորին ի ծածուկ զամենայն որպէս զիսորդ լուսու ի նմանէ։

39. Ետ պատասխանի թագաւորն և առէ ցիենշապուհ. «Մի ոք ամենեին լուիցէ զայդ ի քէն, մանտաւանդ վասն աեսեանն մեծի՛ որ երեկալ է նմա, զի մի տգէտ մարդիկ երկմատեալ՝ բաժանեացին ի մեր հաստատուն օրինացու։ Մինչ մեք զայլս կամէաք հնագանդեցուցանել՝ թերես գոգիս գացեն, իբրեւ նոցա ոչ ինչ կարտցաք առնել, մեր որ փարզապետ օրինացդ էին, զինի նոցա մողորութեանն խոսորեցան։

40. «Ետ և այն ևս չար է մեզ քան զամենայն, զի ոչ գուգնաքեայ ոք խոսորեցաւ ի նոցա օրէնսն, այլ այր մի համակդեն, երեկիլի ընդ ամենայն վերին աշխարհու։ Եթէ փայքարիմք<sup>2</sup> ընդ նմա, նա տեղեկագոյն է քան

1. Բազմնա՛ Ֆարսանկ, Ֆա-սասնկ, Ֆերսանկ. պարսկական փարսախը հինգ քերտուդրէ քիշ մատելի է, այս հաշտուգ դիենշապուհ վաժառուն քիլուդրի շափ հեռացնել կը հրամայէ ի նիւշափուրէ. իսկ քահանայից նահասակուած տեղը նոյնափ մը գեռ հեռի պիտի ըլլար ըստ եղիշեայ (Յ. Ը. 46) ոք շափազնց կը թուի։ — Իսկ ըստ Պահանահիշի, Ֆրանսիկ կամ Ֆարսանկ է հազար քայլ, մէն

մի քայլ՝ երկու ոտնաշափ երկայն, կամ հեռաւորութիւն մը՝ յորում սրատես մարդ մը կրնայ զանազանել թէ եզ մը ձերմակ է թէ սեաւ, (Տես և Ապահո-Խրատե (Pahlavi - Pazand Glossary):

2. Փայքար յէլ բազանու լեզուա՛ է վիճարանութիւն, կոխ, մարտ, բազ կացեալ ի բաիցի կամ բառ՝ «ընդդէմ» և ցար և գործ ։ բար և գործ ։ բառից։

գամենայն վարդապետու աշխարհիս. զուցէ ի հիմանէ խարխարեալ աւերէ զօրէնս մեր; Եւ եթէ դատիմք զնա ընդ այլ չարագործոն, նա և այնպէս հռչակեալ ելանէ համբաւ քրիստոնէութեան նորա, և մեծ անարդանք զինի դենիս ձգին: Եւ եթէ որով ևս վախճանեսցի, բազում՝ են քրիստոնեայք ի կարաւանիս, ընդ ամենայն երկիր յանեալ ցրտեսցեն զակերս նորա: Ասկաւիկ ինչ էին մեզ անարդանք առ ամենայն մարդիկս, ուր մեծարեալ պատուէին սպիրքը նածարացւոցդ. իսկ եթէ մոգացդ և մոգպետացդ զնոյն պատիս կրեսցեն, մեք մեզէն լինից քակախչք օրինացն մերոց:

41. « Այլ այժմ իմ է քեզ երդումն տուեալ յանմահ դիսն. նախ զգառնացեալ ծերն կոչես առաջի քո: Եթէ հաւանեսցի սիրով, և զզջացեալ ապաշուեսցէ զկախարդութիւն նոցա, մեծարեսջիր զնա սիրով պատուով բառ առաջին կարդին, և մի ոք դիստացէ դիմչնամանս նորս ամենեին: Ապա թէ ոչ հաւանեսցի, և ոչ կամեսցի անսալ բանից խոնց, յարուսջիր ի վերայ նորա բազում՝ ամբաստանս՝ յաշխարհէ անտի, զի վսասակար դացի յիրս արքունի. և աշխարհաւ փուրսիշ ի վերայ յարուսջիր, և չկօթակ արածջիր յայն կոյս քան զկուրան և զՄակարան<sup>2</sup>. և անդ ընկեցեալ զնա ի վիրապ մի, և ընկարցի զնահ թշուառութեան: Եւ զայլագենան<sup>3</sup> փութանակի կարծես ի կենաց աշխարհիս, զի մի դպրուցեն զօրէնս մերոյ աշխարհիս: Զի եթէ զճարտար մոգպետան այնպէս արագ աշակերտեցին, ագէտ մարդիկ զիանք կարացեն կալ առաջի նոցա պատիր խարէութեանն »:

42. Արդ ել նստաւ Դենշապոհ արտաքոյ բանակին

1. Դիտելու արժանիք է թէ Յաղերս բացարձակ անպարհան հրաման չկրնար տալ մէկու մը սպանման համար, ինչոքէս կը տեսնենք շատ անգամ նուազ քաղաքականացեալ ազգաց պատմութեան մէջ: Տակառուի մէջ շատ օրինակներ կան, որ երբ չոռվմայեցի կայսերը ուզէին անիրաւ տեղը մեռցնել զոր, նաի և յառաջ անոր գրայ շատ մը բառթիւններ և ամ-

բաստանութիւններ կը հարէին: Անիրաւ բաւելու եզակեան ալ կը ցուցանէ թէ իրաւոնքը զմնես ընդհանրապէս յարգեալ էր:

2. Կրիքին զաւառք հարաւային Պարակառուաներ. (Տես Աշխարհացոյց խորհեանց ոյ. 1.1.):

3. Այլագեն բազանտ լեզուաւ՝ աքանին:

յատենի, որպէս ասացաք, հեռի երկոտասան հրասա-  
խաւ։ Հարցանէր ցմողպեսն և ասէր։ իշխանութիւն

1. Փարզեցին աւելի ևս կը ճշգի զվայրան։ «Ղենչապոհ ի սկզբան ոչ պատմէր խումկին զառոր քահանայիցն, զոր ինչ զործելոց էր ընդ նոսաւ այլ ասէր թէ ի վրկան առնիմք և անոր արձակմօք։ Եթէ երթային այն օր ի զեղմի սի՝ սրում անուն էր լիւեան՝ (զոր պարտ է վնասել ընդ մէջ նիւշապէոյ և Արքանայ) հեռի ի նիւշապէոյ որպէս հրա- սախոր վեցիւր և թէ աւելի ևս ըստ շափոյ համարուց Պարսկացն։ Ես գաղա- րէին անդ մինչև ցառաւոսուն պահն։ Յարոցեալ փութով գալու ունին զզա- ցոցեալ ումէր ի զեղչն, և ոչ ամենե- ցունց զորս ընդ ներեանս բայց միայն երանելի խումկան և անորէն դահնադն զնացին ի զեղչն լուելեայ։ Եթէ առեալ զսորոն դահնացն զնացին զրովանդակ մնացեալ մասն ի դիշերոյն ընդ անկոխ անապատն հեռի ի զեղչն՝ որպէս պար- սիկ հրասախու միավ և թէ աւելագոյն, և ընդ ծագել առաւոտուն հասանէին ի տեղի մի քարուտ, առավարածոր, աւա- զուտ, ի տեղի յոր ոչ հասանէր արո- տական և ոչ բնաւ անցանէր ընդ նա- ուցեոր, վասն ոչ զիսելոյ երբէք ի նը- մա հանապար» 289-291։

Իսկ զքահանայք այդպիսի հեռաւոր և անկոխ տողելուուն պատճառը ի- մացուց մեզ սակաւիկ մի լցոլչւ։ Բայց Փարզեցին ամփան որոշ կը յայսոնէ մեզ և ժամանակին բարուց այնպիսի զեղե- ցիկ նկարագիր մի կ'ընէ, որ կ'ուղեք ամբողջապէս ընթերցողին առջև դնել այս զերժնոյս քրածը։

«Յոյզ պատուիրանաւ զգուշացուցանէր թագաւորն Ղենչապէոյ ոչ առաջ ումէր զիսել ոչ զանուու և զդուալ զնոսաւ ի քաղաքէն և ոչ զանապարհն ընդ որ առնիցին, և ոչ զուղի մահուանն ուր սպանանիցն զնոսաւ բանզի լուեալ է, առէ, մեր սուուղութեամբ, թէ աւելի

վասն այսր կարի խնդան ի մահ որք ի մուտար ազանզս ևն քրիստոնէից, զի այդպէս սակեն թէ սոկերք այնացիկ՝ որք յազակն Աստամոյ իւրեանց մեռանին, և որ ոք, սակէ, յիւրամ տանն ունիցիք ինչ սնոսար, թէ և փարք խրիստո թէ ուներ, և վատ ինչ և խորամանկ ի նա և ի նորա տունս և ի սիրելիս ոչ մերձնայ։ Եթէ զարս ևս ասեն, թէ ի բանս ատենի յաշակութիւնս տան և իմաստու և քաջութիւնս զտանել և պահպանու- թիւն։ Եթէ մինչև ի մահ ջանան անձամբ և կարաւուզ գոնէ ատամն մի կամ ե- զունին մի զտանել յայնախնեացն, և ի առան իւրեանց տանել Ալլ և զայն ևս ի հաւատարիմ մարդկանէ՝ որք ի մուտար ազանդին նոցա ևն եզեալ, ապա զմեր լուսաոր և զարդար որէս ունին, անզե- կացեալ եմք՝ թէ կանայք նոցա, ուս- տերք և զսերք, և զզարզս ոսկւոյ և արծաթոյ և մարգարտոյ տարեալ ու- րուք նոցա, թէ կարի փարք ինչ յոսկե- րաց այնր մեռելոց տայր նոցա, զայն մեծարդոյ և պատուական համարին։ Եթէ զինչ ևս այլ աւելի ասեմ. և զհարց և զմարց զարդս զոր յանուն նոցա արա- րեալ և մեծաւ աշխատութեամբ՝ ճիսակս և կամ զտակս ինչ մարգարտոյ կարի մեծագնյ, կանայք քրիստոնէիցդ չհա- մարին ինչ հանել յանձանց և տուլ և զնել փիրանս ինչ յոսկերաց այնպի- սեացն։ Ալլ զուք ուշիմ լերուք, և յայնմ վայրի եզիցի սպանումն նոցա- ուր յայնպիսեացն կարծեաց և պատուոյ սպանաւլքն և որք սպասեն սոկերացն վրիոգիւալ լիցին» (262-264)։ — Մար- տիրոսաց մարմինը զանողները՝ «Զիշի իւրաքանչիւր մարմնոց նոցա սոկի աս- նուին» լցոլչւ։ Յ. Բ. ԶԴ։ — Բազդա- տէ և կիսովընի Արբաց նշխարաց վրայր զրածը։ (Հատ. Գ. 297-306)։

առի վասն քո, ոչ միայն բանիւ հարցանել, այլ և ամենայն հարօւածովք տանջանաց: Մինչ չե ձեռն արկեալ է իմ ի քեզ, ընկալ զմեծարանս և արհամարհեաւ զանարգանս, և ինայեա ի պատուական ալխադ: Թող անդր ի բաց զքրիստոնէութիւնդ՝ զոր ոչ ունէիր ի բնէ, և դարձիր անդրէն ի մոգութիւնն, որպէս զի վարդապետ էիր բազմաց:

43. Ետ պատասխանի երանելին և առէ, « Աղաչեմ զքեզ, տէր, որ յառաջ իբրև զհարազատ եղբայր համարեալ էիր յաջս իմ, և այսօր թշնամի կատարեալ. մի ըստ առաջին սիրոյն գթար գու յիս, այլ կատարեաւ ի վերայ իմ զկան չարութեան թագաւորին ձերոյ. և որպէս առեր իշխանութիւն ի վերայ իմ, գատեաւ զիս »:

44. Յայնժամ իրրև ետես դենշապուհ, եթէ առ ոչինչ զապանալիմն արքունի համարեցաւ, և ոչ ողբանացն երես ինչ արար, և քան ի ծածուկ՝ յայտնի ևս կամէր զի խօսեսցի, կատարեաց ի վերայ նորա ըստ խրատոն արքունի: Եւ գաղտազողի ընկեցաւ ի հեռաւոր օտարութիւն, որպէս զիարդ և ուստւ ի վարդապետէն, և արար:

45. Եւ հրամայեաց <sup>1</sup> ևս դենշապհոյ երկուս ևս ընկերակիցս օգնականս յաւագ գործակալացն, զջնիկանն՝ որ էր մայզիտ արքունի <sup>2</sup>, և զՄովան անդարձապետ ի ձեռանէ մովազետան մովազետի:

46. Արդ երկեքան սոքա խրաքանչիւր սպասաւորօք առին զսուրբան յայնմ անապատէ, և փոխեցան նոյնչափ ևս հեռագոյն ի միւս ևս դմեդակ տեղի ի նմին գիշերի:

1. Եւ հրամայեաց (Յազկերտ): Եղիշէ իրաց կարգը կը խառնէ. որովհետեւ ոչդ երկու օգնականն արտած էին դենշապհոյ, երբ սա տակաւին Յազկերտի քովին էր: Եթէ Եղիշէ հրամայեաւ եր Յազկերտի ըստ ըլլար, աւելի ճիշդ կըլւար:

2. Այդ օգնականաց անունները խառնակ են սպազրաց մէջտ Միմիթարեանք և թէոդոսիոց սպազիրը դնեն զջնիկանն՝ որ էր մարզպետ առաջական անուն, այլ յգն. սեռական Մովառի, որ է Հմող ։ մովան անդարձապետն՝ Է Հմովուց խորհրդապետ. առաջնորդ ։ Տես Յ. Դ. 21. ծանօթ. 1:

ՔՄովագ. Եղիշէի

զՄովան ճանդերձապետ են: Բազդատեւ լով 93դ հատածին և Փարաբեցոյ հետ հարկ է ուղղե՛ զջնիկանն, որ եր մայզիտ արքունի եւ զՄովան անդարձապետ, են: — Ի ճեռանն՝ եղեալին ընդ ձեռամբ ուրուք, երկըրդ և յետ նորս ի կարգի ուեսակ, չայկացն. Բառ: Խոկ Մովան չէ յատուկ անուն, այլ յգն. սեռական Մովառի, որ է Հմող ։ մովան անդարձապետն՝ Է Հմովուց խորհրդապետ. առաջնորդ ։ Տես Յ. Դ. 21. ծանօթ. 1:

Եւ զոք ի կարաւանէն անդր ոչ թողին տեսանել, ոչ ի հայոց և ոչ յամենայն քրիստոնէից, և ոչ բնաւ յարսարին հեթանոսաց։ Եւ սպասաւորքն՝ որ էին ի վերայ կապելոցն անդէն ի քաղաքին, հրամայեցին պահել զգուշաթեամբ, զի զետս նոցա մի ոք դիտացէ՛ ընդ որ տանիցին ի մահու տեղի, մի նպատ և մի ամենեին ոք ի մարդկանէ։

47. Բայց այր մի խուժիկ անուն<sup>1</sup> ի զօրացն արքունի, որ ի ծածուկ ունէր զքրիստոնէութիւնն, և վիճակեալ էր ի դասս դահճացն, և կայր ի սպասու օրապահացն հանդերձ գործիական տանջանարանօքն, եկն եմուտ ի մէջ գիշերին և խառնեցաւ ի դասս նախարարացն։ Առաջին դասն ի միջնոյն կարծէր զնա, և միջինն երբորդին, և երեքեանն միմեեանց համարէին զնա. և ոչ ոք ի նոցանէ համրց՝ եթէ դու ով ես ընդ մեզ, ոչ ի տերանցն և ոչ ի սպասաւորացն։

48. Իրրե հասին ի տեղի անապատին<sup>2</sup>, որ ամենեին

1. Խուժիկ չէ յատուկ անուն մարդոյ՝ այլ ազգի. այս է խուժաստանցի։ Ասդ խուժաստանցոյդ անունը չեն կրցեր զիտնալ ոչ Եղիշէ և ոչ Փարագեցին (Տես այս վերջինն Էջ 313)։ — Բայ Փարագեցոյ խուժիկդ վաճառական մի էր, որ շատ անգամ առևորի համար ճանապարհորդեր էր ի Հայս, և որ և զլեցու հայերէն խօսից քաջ տեղեկաբար գիտէր. և էր ինքն այր ի մանկութենէ իւրմէ կեցեալ առաքինի վարուք, եղեալ որդի քրիստոսաւէր և հաւատացեալ ծնողաց, որ զերանելի քահանայնն Աստուծոյ և զնախարաբն Հայոց՝ որ ի կապանն էին, յոյժ ընտանութեամբ գիտէր, առ որս և բազում ծախս յընչից և տպասաւորութիւն արարեալ էր մինչ ի վըրկանին էին ուշագրելով զամենայն որ և ակն ունելով մասն նշխարաց որրոշն ի կատարում նոցա լինել արժանի ։ Սա բանակին հետ վաղգէս զնացեր էր. անդ՝ «լուեալ զհրաման թագաւորին ձեւուվ և անցազ ունի զգացուցեալ

ումեր թողոյր և զգրաստ իւր և զկարսի ի մանկունս իւր և յընկերս, և իւր առեալ ի գրասուց իւրոց գրաստութեանս և ումեզս, և նմանեալ առն կարավանի՛ զնայր ընդ ճանապարհ, որ երթայր Ալպար աշխարհն, և ուղեկցեալ ճանապարհորդէր ընդ Գենչապհոյ, ցուցանելով նմա զնանապարհայնն և յօթեանս ուր հանգչէին բազում արթնութեամբ շուտութիւնս ։

2. Ասդ է խորազմի անապատը։ Իրարից ծովուն հարաւային արեւելեան անկենն լայնատարած և մարմծ է ասել անեզ անսահման դաշտ մը չգի գէպ ի հիւսիս 800 մղնաւ շափ ցատրաս Մօգաճար լերանց, և յարեւելու նոյնքան հեռաւորութեամբ մինչև Բալիսի մօտեւը։ Ասմ ընդադակ երկիրս ուրանոր ոչ կենդանիք տեսանելի են, ոչ ծառ և ոչ խոտ, և որ տեղ տեղ Ովկիանու երեսէն ալ ցած է, առելի զօրաւոր կերպով կ'անջատէ զսափն Ոտոսիոյ ի խորասնաց քան եթէ լիովին ծովասոյզ եղած

անրոյս էր ի դալարւայ, և այնպէս էր ապառաժ դժնեայ, զի ոչ նատելոյ անգամ տեղի գտաւ անդ նոցա, իջին հեռագոյն նախարարքն երեքեան, և հրամայեցին դահացն իւրեանց կապել զստ և զձեռս նոցա: Եւ արկին պարանա երկայնս յտա նոցա, և երկու երկու լծեցան և առին ի քարչ: Եւ այնպէս ձգեցին ճողքեցին ընդ ապառաժ տեղին քարշելով, զի ամեննեին խայծ ոչ մնաց ի մարմինս երանելեացն: Եւ ապա լուծին և ածին ի մի տեղի :

49. Թուէր իմն նոցա այսպէս, եթէ կակղեցաք զիսը տութիւն նոցա, և հնազանդեցուցաք զբիրտ ապառաժ րութիւն նոցա. և արդ զինչ և խօսիցիմք, անսայցեն բանից մերոց, և առնիցեն զկամս թագաւորին, և ապրեալ լիցեն յանչնարին տանջանացն: Եւ զայն ոչ կարացին քաջ իմանալ, եթէ իրբև զքաջ զինուորս վառեցին զնոսա, և ի հրահանդս կրթութեան վարժեցին զնոսա. և իրրե զգազանս վայրենիս, արիւնախանձս ուսուցին զնոսա: Եւ եթէ ունէին սակաւ ինչ կասկած յառաջագոյն, հայեցեալ նոցա ի չարաշար վէրս մարմնոյն իւրեանց, զառաջին երկիւզն ի բաց մերժեցին: Ական իրրե արբեալք անդպայք զմիմեամբք երանել ի բանից պատասխանի, և փութային իրը ծարաւիք յազրիւր, եթէ ո՛ նախ վազ զիւր արիւնն հեղցէ յերկիր:

50. Եւ մինչ գեռ յայսմ պատրաստութեան էին սուրբքն, խօսել սկսաւ ընդ նոսա դենշապուհ և ասէ. « Արքայ յղեաց զիս առ ձեզ. ամենայն աւեր աշխարհին Հայոց, ասէ, և կոտորածք զօրացն՝ որ հասին ի վերոյ, ի ձէնչ եզեն վասպն ամենայն. և բազում նախարարք՝ որ այժմ՝ կան կապանօք չարշարեալ, վասն ձերոյ յամա-

ըլլար, և իրրե ահապին ցամքեալ խրամ զը կը պաշտպանէ Եւպուզի լեռնային պատուարը: Աւազուաւ է և ազի: չիք անդ բնակութիւն բայց միան ի դարեանդս ըլլաց, որք կը սահմանեն զայն և յեզերս գետոց՝ որք այդ ըլլուրներէն իջանելով գեռ յԱրալ կամ ի կասրից ծովն չհասած – ի բաց առեալ զմին կամ զերկուած – կը ցամաքին կամ կանչեառ-

նան: Մուրավիէֆ որ այդ կողմերդ զը- նացեր էր: Կ'ըսէ: և այդ գաշտ մահուան պատկերը կամ բնութեան մեծամեծ զդրդմանց և վրդովմանց աւերմունքը կը ներկայացնէ: անդ ոչ մոռշոն կը տես- նուի և ոչ չորբուտանի: չիք ծառաստան կամ դալարի որ հանդչեցնէ զաշո: հա- զիւ հազ կը հանդիպիս երբեմն ազազուն թփոց չ:

ռութեանդ եղի այդ ամենայն։ Այլ և արդ եթէ կամլք  
ինձ լսել, ասեմ ձեզ, որպէս եղերուք պատճառք ամե-  
նայն չարչարանաց մահուն, այսօր լերուք պատճառք կե-  
նաց ձերոց։ Եւ նախարարքն՝ որ կան ի կապանա, ի  
ձեռն ձեր է իշխանութիւն արձակել զնոսա, և աւեր աշ-  
խարհին ձերոց ձեօք շինի, և բազումք որ վարեալ են ի  
գերութիւն, անդրէն գառնան։

51. «Ահա գուք ձերոյին աշօքդ տեսէք այտօր, եթէ  
զորպիսի այր տոհմիկ, զոր թագաւորն ինքնին յականէ  
յանուանէ ճանաչէր վասն մեծի գիտութեան օրինացս  
մերոց, և կատարեալ էր յամենայնի ի գենիս և ամե-  
նայն մեծամեծաց սիրելի, և գրէ թէ բոլոր աշխարհն  
կախեալ էր զնմանէ. և վասն զի անարգեաց զգենիմազ-  
գեզն և պատրեցաւ ի ձեր տիսմար գիտութիւնդ, ոչ  
ինչ խնայեաց թագաւորն ի մեծ պատիւ նորա, այլ ի-  
րրի զգերի մի զանաշխարհիկ չփոթակ արարի զնա յայն-  
չափ օտարութիւն հեռաւոր, զի ընդ երթալն իսկ ոչ  
ժամանէ ի տեղի պատուհասին իւրոյ։

52. «Արդ եթէ ի բուն դայեկութիւնն՝ վասն պա-  
տուական օրինացն ոչ խնայեաց ի նա, որչափ ևս առա-  
ւել ի ձեզ յօտարաշխարհիկսդ, որ մահապարտ իսկ էք  
յիրս արքունի։ Եւ չիք ինչ ձեզ այլ չենար կենաց, բայց  
եթէ երկիր պագանիցէք արեգական, և կատարիցէք  
զկամս թագաւորին, որպէս և ուսոյց զեզ մեծն Զրա-  
դեշն։ Եւ եթէ զայդ առնէք, ոչ միայն արձակիք ի  
կապանացդ և ապրիք ի մահուանէ, այլ և մեծամեծ  
պարգեւոք յուզարկիք յաշխարհն ձեր»։

53. Յառաջ մատուցեալ զեմնդ երէց և թարգման  
կացոյց զԱսհակ եպիսկոպոս։ «Զիարդ լուիցուք, ասէ,  
երկդիմի հրամանացդ քոց. ահա զերկրպագութիւնդ  
նախ ետուր արեգական, և զկատարումն երկրպագու-  
թեան ի կամն թագաւորին ձգեցեր, մեծարեցեր զարե-  
գակն՝ յառաջ ճայներով զանուն նորա, և սեծացուցեր  
զթագաւորն աւելի քան զարեգակն։ և յայտ արարեր՝  
եթէ առանց կամնաց իւրոց սպասաւորէ արեգակնն ա-

1. Խմա՛ աննդակցութիւն, ազգակցու-  
թիւն. կամ զմոգպետք՝ իւր գիտութեա-

նը՝ կրօնական կերպարանին համար դա-  
յեակ և գաստիարակ համարելով։

րարածոց, իսկ թագաւորն ի կամ ազատութեանն իւրոյ՝ զոր կամի աստուածացուցանէ, և զոր կամի ծառայեցուցանէ. և ինքն ճշմարտութեանն վերայ չե հասեալ: Մի խօսիք ընդ մեղ իրբե ընդ տղայս, զի հասակաւ կատարեալ եմք, և դիտութեան ոչ եմք անտեղեակ. ուստի սկսար գու, այսի տաց քեզ պատասխանի:

54. «Ապաքէն զմեզ եդիր պատճառս աւերածոյ աշխարհին մերոց և հարուածոց զօրացն արքունի. մեր օրէնքն զմեզ այդպէս ոչ ուսուցանեն. այլ յոյժ պատճել հրամայեն զերկրաւոր թագաւորս, և սիրել զնոսա յանենայն զօրութենէ մերմէ, ոչ իրբե զմարդ ոք դուզնաքեայ ի մարդկանէ, այլ իրբե Աստուծոյ՝ ճշմարիտ կալ ի ծառայութեան. և եթէ զրկիմք ինչ ի նոցանէ, փոխանակ ընդ երկրաւորիս զերկնիցն խոստացաւ մեզ զարքայութիւն: Եւ ոչ միայն զարբանեկութիւն հպատակութեան պարտիմք հարկանել նոցա, այլ և մահու չափ զանձինս ի վերայ դնել սիրոց թագաւորին: Եւ որպէս յերկրի ոչ ունիմք իշխանութիւն փոխանակել զնա ընդ այլում տեսան, նոյնպէս և յերկինս չունիմք իշխանութիւն փոխանակել զջշմարիտ Աստուածն մեր ընդ այլում, որ չիք Աստուած բայց ի նմաննէ<sup>1</sup>:

55. «Բայց ասեմ քեզ՝ որում սակաւիկ մի տեղեկադոյն ես: Ո՞վ ի քաջ զօրականէն զինի մտանիցէ ի պատերազմ. և եթէ զայս արացէ, ոչ քաջ անուանի նա, այլ յոյժ վաստ: Եւ կամ ո յիմաստուն վաճառականաց զպատռական մարզարիտն փոխանակիցէ ընդ անարդթրուշայի<sup>2</sup>, բայց եթէ յիմարեալ իցէ տգիտութեամբ, որպէս և ձեր մնարութեան առաջնորդք:

56. «Միայն գտեր զմեզ ի բազում առաքինեացն մերոց, և կամիս գտղութեամբ աւերել զամուրս խորհրդոց մերոց. չեմք մեք միայն՝ որպէս և դուդ կարծես.

1. Թուղթ առ կողոս. Գ. 22:

2. Թրուշայ, բատ Առձեան բառարանի է քուրջ. 2. Աւլունք. 3. Ու և է շնչին բան: — Եւ բազանս տարեօլ, յգն. տարեօլ, աղքատ, անանկ, չքաւոր. (Տես Մայնո-Խրատ). Մարդարիտը որ

ստեղ կը յիշուի, ամէն գոհարեղէնէ

աւելի զործածելի և յարգի էր. պարսկերէն մարփարիտ: Բազանս լեզուին մէջ վ շատ անդամ՝ կը փոխանակի ընդ կի

այսպէս վաս և վատրար գրին ես կատ և կատրար. վասդարի գրի և կատարի:

չիք տեղի ունայն, ուր չիցէ Քրիստոս թագաւորն մեր. բայց միայն այնպիկ են թափուր ի նմանէ, որ իբրև զբեզ և զշարադե իշխանն քո, որք ուրացեալ էք ի նը- մանէ: Զի թէ զինուորք աշխարհին մերոյ, որ աշակեր- տեալքն էին մեօք ի Քրիստոս, առ ոսն հարին զահագին հրամանս թագաւորին ձերոյ, և զմեծամեծ պարզես առ ոչինչ համարեցան, և զհայրենի տէրութիւնն ի բաց կողապատեցան, շխնայեցին ի կին և յարդիս և ի դանձս մարմաւորս կենաց աշխարհիս, նա և ոչ զարիւնն իւ- րեանց ածին ինչ զմուաւ վասն սիրոյն Քրիստոսի, այլ զերկրպագուս արեգականն՝ որ ձեր վարդապետք էին, չարաչար հարուածովք սատակեցին զնոսա, և մեծամեծ չարիս հասուցին ի վերայ զօրացն ձերոց, և բազումք ի նոցանէ անկանէին ի նմին պատերազմի, և այլք մատ- նեցան ի պէսպէս փորձութիւնս, և կէպն ընկեցան ի հե- ռաւոր օտարութիւն, և ևս բազմագոյնք վարեցան ի գե- րութիւն: Եւ ամենեքին նոքա յառաջեցին քան զմեզ յարքայութիւնն Աստուծոյ, և խառնեալ են ի գունդս վերին հրեշտակացն, և ցնծան ի պատրաստեալ յուրա- խութիւնս, յոր հասեալ խառնեցաւ երանելի այրն, զոր դու ասես շիօթակ արարի: Երանի տամ նմա, և երանի երկրին՝ ընդ որ նայն անցանիցէ, և տեղոյն՝ ուր նայն վախճանեցի. ոչ միայն զարքանեօք ձերովք անցանէ պատուականութեամբ, այլ և զերկնից լուսաւորօքդ՝ ո- րում գուքդ երկիր պագանէք:

57. Ետ պատասխանի Մովան անդարձապետ և ասէ ցնոսա. «Աստուծքն բարերար են, և երկայնամուռ- թեամբ ջանան ընդ ազգի մարդկան, զի գիտացեն և ծանիցեն զիւրեանց փոքրկութիւնն և զնոցա մեծու- թիւնն, և վայելեսցեն ի պարզես աշխարհիս, զոր տը- ւեալ է յիշխանութիւն ի ձեռս թագաւորի, և ի բերա- նոյ նոցա երանեն հրաման մահու և կենաց: Եւ ձեզ ոչ է իշխանութիւն այդպէս ընդգիմանալ կամաց նոցա և ոչ առնուլ յանձն զերկրպագութիւն արեգական, որ ճա- ռագայթիւք իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և ջերմութեամբ իւրով հասուցանէ զկերակուր մարդկան և անամոց, և վասն հասարակարաշխ առասութեանն և անաշառ մատակարարութեանն անուանեցաւ Միհը աս-

տուած<sup>1</sup>, զի շիք ի նմա նենդութիւն և անխմաստութիւն; վասն որոյ և մեք երկայնամիտ լինիմք ի վերայ տգի- տութեան ձերոյ. քանիզի չեմք մարդատեացք իրբե զգաց զանս շաղղակերս և արիւնարրուս; Խնայեցէք յանձինս ձեր, և մի խառնէք զմեզ ակամայ յարիւնդ ձեր; Թողեք անդր զառաջին յանցանս ձեր, և զառաջիկայ իրս ող- դեցէք, զի և այլոցն վասն ձեր լիցի ողորմութիւն ի մեծ թագաւորէն »:

58. Առ այս ետ պատասխանի Սահակ եռիխկոպս և ասէ. « Իրբե ուսեալ և յոյժ խրատեալ՝ զգեղեցիկ հոգ յանձին ունիս շինութեան աշխարհի և փառաց թագաւ- որին. բայց զայս կարի տգիտարար ուսուցանես, զի աստուածո բազումն խոսառվանիս, և զմի կամս ոչ ասես ամենեցոն: Եթէ վեհքն առ միմեանս մարտուցեալ են, մեք խնարհադոյն քանի զնոսա զիմարդ կարացուք հաւ- անել բանից քոց: Միաբանեալ զնուր և զկրակ, զի ուս- ցուք ի նոցանէ զխազալութիւն. կոչեա զորեղակն ի տուն որպէս կրակ, և եթէ նմա ոչ մարթի գալ՝ զի մի աշխարհ ի խաւարի մնացէ, յըեա զգա առ նա, զի ուսցի ի նմանէ զանկարօսութիւնն:

59. « Եւ եթէ մի է բնութիւնն աստուածոցն քոց, հաւասարեցեն առ միմեանս զուգութեամբ. լիցի անկե- րակուր կրսկ իրբե զարեգակն, և մի խափանեցսին ծառայքն արքունի ի ծախս ոռնկաց սորս<sup>2</sup>: Արդ մինդ անյագ ուտէ, և հանապազ մեռանի. և մինն որ չուտէ, առանց օդոյն նուազի լցո ճառագայթից իւրոց. ցըր-

1. « Վասն հասարակաբաշխ առա- տութեանն և անաշառ մատակարարու- թեանն անուանեցաւ Միհր աստուած»: Տես Միհր եւորդ յէջ 136–137: Խնազէս որ որոշ կը տեսնուի առա, Արեգակն և Միհր աստուած մի և նոյն աստուածու- թիւնն համարեալ են և իրարմէ չէին զանազանուեր ի հինգերորդ գարու: Ա- նալուս մատակարար՝ քանզի ի միջին դարս Միհր աստուածոյ գատաւորու- թեան պաշտօն մի այլ կ'ընծայուէր ա- մենաց ոգիք մեռելոց Զինվատ կամրչէն

անցնելէն եռքը ահեղ առենի մը դիմաց կ'ելլէին՝ որ կը բազկանալը ի Միհր. Արածա և ի Ռաշնու աստուածոց, և որոց առջև թագաւորք և սինլքորք հաւասար էին. (Տես Մայծո–Խրառ զլ. Բ):

2. Ատրաւշաները միշտ վառ պահե- լու համար ոռնիկը, այս է, որոշեալ բա- ռակութեամբ փայտ կարգեալ էր ի ոկե- տութենէն, միանգամայն և ազառաւորք պաշտօն ունեին խնամ՝ տանելու նոցա:

տանայ ձմերայնի, և սառուցանէ զամենայն դալարաբոյս խոսոցն. տօժմանայ յամարայնի, և հրակէզ առնէ զամենայն կենդանիս : Եւ որ ինքն յար ի փոփախման կայ, ոչ կարէ հաստատուն կեանս ումեք շնորհել: Եւ քեզ ոչ կարեմ մեզագիր լինել. որոյ ոչ տեսեալ է զմեծ թագաւորն, պատուաւրացն մասուցանէ զերկրպագալթիւն . իսկ եթէ ոք զայս ի հմուտ գիտնոցն արացէ, վաղվազի մահ ի վերայ հրամայեն:

60. « Այլ վասն արեգական, եթէ կամիցիս ուսանել. զճմարխտն ասացից քեզ: Մասն է նա աշխարհիս արածոց, ի բաղամ մասանց մի մասն որոշեալ է. կէպն ի վերոյ են քան զնա, և կէպն ի ներքոյ նորա: Ոչ է նա առանձին սուրբ յատակ լուսավ, այլ ի ձեռն օդոյն հրամանաւն Աստուծոյ տարածանէ զճառագայթս իւր, և հրային մասամբ չեռուցանէ զամենայն գոյացեալս ի ներքոյ իւրոյ կայանին: Իսկ վերինքն ոչ ինչ մասն ունին ի նորա ճառագայթիցն. քանզի իրբե յաման ինչ արկեալ է զլցմն ի գունդ նորա, և ի վայր կոյս հեղու բերանացեալ՝ առ ի պէսս ներքնոցս վայելութեան: Եւ զոր օրինակ նաւ մի թռուցեալ ի վերայ ծովային ջուրցն բազմութեան, անգիտութեամբ գնայ զուղիւրութիւնն ի ձեռն հմուտ և ճարտար նաւագետին, այսպէս և արեգակն ի ձեռն կառավարին իւրոյ ունի զվարիսմունս ըրջանին իւրոյ արեւոր ժամանակին :

61. « Եւ որպէս այլ մասաւնք աշխարհիս հաստատեալ են վասն մեր կենացն, և զնա իրբե զմի յայլոց մասանց տուեալ է սեզ յառաջնորդութիւն լուսոյ, որպէս զլուսին և զաստեզս և զօդս յարածուս՝ և զամբս անձրեսրա. նոյնպէս և յերկրիս մասանց զծով և զգեստ

1. Դարձեալ Հայաստանի՝ ձմեռը սաստիկ ցուրտ և ամսուր սաստիկ տաք կլիմային նկարագիր մը. Տես Յ. Ե. 26 և ծանօթ Յ: — Իսկ արեգական վրայօք ըստածներն, որոյ ճառագայթը առանց օդոյ շեն կրնար տարածիլ և փայլիլ. որք իրը յամանի դրաւած են՝ որ դեզ ի վայր կը հոսի առանց իւր վերի գին և շածին լոյս տալու, այն դարմար է:

Դարաշխական կամ բնագիտական գաղափարները մեզ կը ցուցանեն:

2. Եզիչէ, որպէս Եզնիկ, զերկիրն անշարժ և զարեգակն պատող կենթադրէ:

3. Այլ ընթերցուած՝ յարածուփս. բայց միթէ յարածու օդոյ համար աւելի պատշաճ չէ. և ինչո՞ւ համար Աթեմարեանց վերջին տպագիրը յարածուփս կը դնեն որ ջուրց աւելի յարմար է:

և զաղբիւրս և զամենայն պիտանացու ջուրս, նոյնպէս և զցամաքայինս ամենայն պիտոյիւք իւրալք; Աստաւած և զմի ոք ի սոցանէ չէ արժան անուանել, և եթէ ժպըռհիցի ոք ասել, զանձն տգիտաբար կորուանել. և առաւածանունն մեծարելով զնոսա՝ նոքա ոչ ինչ օգտեցան; Միոյ իշխանութեան երկու թագաւորք ոչ լինին. և եթէ մարդ զայդ քեզ յանձն ոչ առնու, քանի ևս հեռի է առ ի յԱստուծոյ բնութենէն այդպիսի կարդ շփոթեալ:

62. « Արդ եթէ կամիս ուսանել զնշմարիտն, քաղցրացո զգառնութիւն սրախդ, և բաց զայս մոտացդ, և մի յարթնութեան կուրութեամբ ընդ խաւար գնայցես. որ անկեալ ես ի խորխորատ, և զամեննեսեան կամիս առքեզ ձգել: Եւ եթէ քոյքն գան զինի մողար փարգապետութեանդ՝ որ ոչ տեսանեն և ոչ խմանան, մի և զինդ կարծեր գցյն օրինակ. քանզի բաց են աչք մոտաց մերոց և սրատեսիլ եմք; Մարմնոյս աչօք զարարածս տեսանեմք, և խմանամք զօտ յայրմէ արարեալ. և ամենեքեան են ընդ ասբականութեամբ: Իսկ արարին ամենեցուն աներեսոյթ է ի մարմնաւոր աշաց, այլ մոտաց խմանի զօրութիւն նորա:

63. « Եւ վասն զի ետես զմեր ի մեծի տգիտութեան, և ողորմեցաւ մերում անուստմութեանն, յորում և մեք իրրե զձեղդ երբեմն զերենելիս կարծէաք արարիչ և գործէաք զամենայն անառակութիւնս<sup>1</sup>, վասն այնորիկ առ սէր իւր եկն մարմնացաւ ի մարդկանէ, և ուսոյց մեզ զաներեսոյթ աստուածութիւնն իւր: Այն զի բարձրացոյց զինքն ի խան կախաղանի, և զի մարդիկ զհետ լուսաւորացդ մոլորեցան, մերկեաց յարեգականէ զլցու ճառագայթիցն իւրոց, զի եղիցի խաւար սպասաւոր մարդկութեան նորա. զի որ իրրե զձեղ անարժանիք իւցեն, մի աեսցեն զկեանս իւրեանց ի մեծի անարզու-

1. Թեզէտ բացատրութիւնը ըստ բաւականի որոշ չէ, որ կնայ ևս յարմարիլ կոոց պաշտաման, բայց իրրե գնեղդ ըսելէն միանգամյն և լուսաւորաց վրայ երկարորէն ճառելէն կժեանք հետեւցնել թէ կյուշէ աստ կ'ուզէ իմացնել թէ շասք աւ կը պաշտէին զարեզակն, զլու-

սին և զաստեզու. (Տես Recherches sur le Paganisme arménien par J. — B. Emin. էջ 21–22): Իսկ անառակութիւնն ըսելով զուցէ իմանայ Եղիշէ զխառնակութիւնն, որք ըստ Ատրաբոնի Անահանայ մեհենին մէջ կը կառարուէին ի զաւառն Եկեղեց:

թեան։ Արպէս և այսօր որ ոչ խոստովանի զխաչելեանն  
Աստուած, նոյն խաւար մածեալ է զոգւոյ և մարմառվ  
նարա. որպէս և գու խակ այսօր ի նմին խաւարի կաս,  
և զմեղ գեռ ևս շարչարես։ Պատրաստ եմք ըստ օրինակի  
ջեառն մերց մեռանել. որպէս զիարդ և կամիս կատա-  
րեա զկամն դառնութեան քո»։

64. Յայնժամ իբրհ հայեցաւ ի նոսա անօրէնն գեն-  
շապուհ, և ետես ի մեծի ուրախութեան զուարթագին  
զամենեսեան, գիտաց եթէ ոչ գնան առ նոսա բանք  
սպասնալեաց և ողոքանաց։ Հրամայեաց զմի ոմն ի կը ը-  
սերագունիցն յառաջ մասուցանել, երեց մի Արշէն ա-  
նոն, վասն որյ յառաջ կասկածն խակ եղեւ սրբացն։  
Կապեցին զոսան և զձեռան, և մեծաւ ուժով պրկեցին,  
մինչե ճարճատիւն հատաւ ամենայն ջղացն. և այնպէս  
կայր մեծ ժամն յանհնարին պրկոցմ։

65. Երաց սուրբն զբերան իւր և առէ. «Ահա շր-  
ջեցան զինեւ շունք բաղումք, և ժողովք չարաց պաշարե-  
ցին զիս. ծակեցին զոսս իմ և զձեռս իմ, և փոխանակ  
ըերանոյ իմոյ աղաղակեցին ամենայն ոսկերք իմ։ Լուր  
ինձ, ջէր, և լուր ձայնի իմում, և ընկալ զոգի իմ ի  
ժողովս սուրբ զօրականին քո, որ երեւեցաւ նորակերտ  
դաստակերտին քո»<sup>1</sup>։ Ես որ կրաերս եմ՝ յամենեսեան,  
ողորմութիւն քո գթացեալ յառաջեցոյց զիս»։

66. Եւ զայս իբրեւ ասաց, ոչ ևս կարէր բանալ զբե-  
րանն յանհնարին պրկոցաց գելարանին։ Եւ անդէն վագ-  
վաղակի դահիճքն հրաման առեալ յերից նախարարացն՝  
սրով հատանել զպարանոց երանեղյն, և ընկեցին զմար-  
մինն ի խորխորատ մի ցամաք։

67. Եւ անդէն ի տեղւո՞ն մկաւ խօսել գենշապուհ  
ընդ եպիսկոպոսին և առէ. «Յորժամ եկի ես յաշխարհն  
Հայոց՝ զտարի մի և զվեց ամիս եհաս շրջել ինձ անդ-  
ոչ յիշեմ՝ ես ամեննեին՝ եթէ բան մի արտանչ յումեքէ  
լուաց վասն քո, նոյնպէս և առաւել վասն Յովսեփայ. զի  
գա խակ էր իշխան ամենայն քրիստոնէից, և հաւատա-  
րիմ՝ յամենայն իրս արքունի։ Ես և որ մարդկան աշ-

1. Այս է աեսիլն որ երեւեցաւ Առգուեան (Յ. Ը. 21)։

խարհին լեռ էր յառաջ քան զիմ՝ երթալն՝, մեծապէս գոհ էր զառնէս զայտաննէ. և ես ինձէն աչօք խնդիք տեսի, զի որպէս հայր հաստատուն համարեալ էր ամենայն աշխարհին, և անաշառութեամբ սիրէր զմեծամեծն և զփոքունս:

68. Արդ փոխանակ ընդ ձեր՝ ես աղաչեմ զձեղ. խնայեցէք ի պատուական անձինս ձեր, և մի մասնիք ի մահ չարչարանաց ըստ առաջնոյն կարգի, զոր տեսէք աչօք ձերովք: Քանզի թէ ի դոյն միտո յամառութեան կայք, և իմ եղեալ է ի մտի իմում բազում չարչարանօք կարճել զձեղ ի կենաց ձերոց: Եւ գիտեմ, զի ի հրապարա առնդ՝ այդորիկ ելեալ էք գուք. քանզի ինքն ախտացեալ է մարմնով, և ձեռնարկութեամբ բժշկաց շիք գտեալ առողջութիւն. և հիւանդաս կենօք ձարձրացեալ է, և փափակ է ի մահ քան ի կեանս»:

69. Առ այս ետ պատասխանի սուրբն Յովանէի և առէ. «Գովութիւնդ՝ զոր ետուք դու նախ եպիսկոպոսիդ և ապա ինձ, յիրաւի արարեր և ըստ կարգի պատուցեր վասն ալեացդ, այդպէս խակ արժան է: Առ ճշմարիտ ծաւայից Աստուծոյ ոչ է օրէն դիմագարձ լինել երկրաւոր իշխանաց, և ոչ զոք ի ժողովրդոց տրտունջ առնել վասն մարմնաւոր զօշաքաղութեան. այլ ցածութեամբ և հեղութեամբ ուսուցանել զպատուիրանս Աստուծոյ, և առանց խարգախ իմաստութեան խաղաղասէր լինել առ ասենեսեան, և անաշառ վարդապետութեամբ առ մի Ցէրն արարածոց առաջնորդել բոլորեցունց:

70. «Առ վասն առնս այսորիկ հրապուրանաց՝ զոր ասացեր, և զայդ ոչ սուեցեր, այլ կարի զճշմարիսն ասացեր: Զի ոչ իբրհ զօտար ոք հրապուրէ զմեղ, և ոչ իբրհ զպատրող ոք խարերայ մնորեցուցանէ զմեղ, այլ յոյժ սիրէ զսեղ: Քանզի մի է մայր մեր եկեղեցի՝ որ երկնեացն զմեղ, և մի է հայր մեր սուրբ Հոգին՝ որ

1. Վասակ մարգանութեան հասաւ յամին 442. և անձէ յառաջ Վեհափերշապուհ էր: Յովանէ կաթողիկոս եղած էր 441ին. ուստի Վեհափերշապուհ կըր-

շապհու Հայրաստան զնացած առենք Վեհափերշապուհ շատ տարիներ յառաջ Պարսկաստան դարձած ըլլալու էր:

2. Առ է Պետոնդ երէց:

3. Բժիշկ զպատկերէն պոչժիշ:

մէջ տարւոյ մը չափ. թէպէտե դեն-

ծնաւ զմեղ. զիարդ համահարք և միոյ մօր որդիք երկ-  
պառակեք լինեցին, և ոչ միաբանք: Որ քեզ թուին՝ թէ  
հրապոյրք իցեն, մեր ի տուէ և ի զիշերի դպին խոր-  
հուրդ էր՝ զի անքակ ունիցիմք զկենաց միաբանութիւնս:  
իսկ եթէ սա ձանձրացեալ իցէ՝ երանել յախտալից մար-  
մոյս, առաւել ևս մեք ամենեքեան. զի չիք ոք ամենեին  
ի ծնունդս կանանց, որ ունիցի զմարմինս առանց ցա-  
ռոց չարշարանաց:

71. Ետ պատասխանի դենչապոհ և ասէ. « Զայդ  
ոչ գիտէք, որչափ երկայնամիտ լինիմ ես ի վերայ ձեր.  
այս ոչ հրամանաւ արքունի է այշափ երկայնարան լի-  
նել ընդ ձեզ պայքարաւ, այլ յեմմէ բազցրութենէ թո-  
զացուցի ձեզ. զի չեմ իրբե զձեզ անագորսյն. զի ան-  
ձանց ասելի էք և այրոց թշնամիք: իմ զի ազ և հաց  
կերեալ է՝ յաշխարհին ձերում, գուժ և ոէր ունիմ ընդ  
աշխարհն ձեր » :

72. Ետ պատասխանի զինդ երէց և ասէ. « Որ  
առ արտաքինսն դութ և ոէր ունի, զպատուիրանսն Աս-  
տուծոյ կատարէ, այլ պարտի և յիւր ոգիսն խնայել. զի  
չեմք անձանց տեարք, այլ է որ համարո խնդրէ ի մէնջ  
և վասն արտաքնոց և վասն ներքնոց: Այլ որ ասացեր՝  
յինէն անսամբ ձեզ և ոչ հրամանաւ թագաւորին, եթէ  
դուք սովոր էք անցանել ըստ հրամանաւ թագաւորին  
ձերոյ, զայդ բարեմք առնէք, զի աւերիչ աշխարհի է և  
սատակիչ անմեղ մարդկան, բարեկամ սատանայի և թըշ-  
նամի Աստուծոյ: Այլ մեք ոչ կարեմք անցանել զհրամա-  
նաւ մերոյ թագաւորին, և ոչ զանանց կեանսն մեր կա-  
րեմք փոխանակել ընդ ապականացու պատրանս աշ-  
խարհիս:

73. « Այլ վասն իմ զի ասացեր, շգտեալ զառողջու-

լ. Պահման Եազդի մեկութեան մէջ  
Ահուրամազոս ահսիւ մի կը յարոնէ  
Զրադաշտայ. յորում կը ցուցանէ նմա  
թէ երբ հազարերորդ տարին լրանալու  
մօտենայ (սովոր կ' իմանային Աստանեանց  
վերջին ժամանակները) յարեւելից խուժ-  
զուժ ազինք պիսի յարձակին ի Պար-

քինութիւնը պիտի պակսի. խարեւու-  
թիւնը տիրէ, հաւատքը տկարանայ, ար-  
տերն հունձք պիտի շտան, մարգկանց  
ծնունդը պիտի պզտիկնայ. անարդ և  
խարդախ բարուց տէր պիտի ըլլան, ե-  
րախտագիտութիւն և յարգանք պիտի  
չունենան հացի և աղի: Pahlavi texts  
Էջ 204:

թիւն ի բժշկաց, սիրէ զմահ քան զկեանս, ոյդ լաճք  
ոչ այնոցիկ են՝ որ տեսանեն զամենայն չարշարանս աշ-  
խարհիս: Աղէ ցածո զքեզ սակաւիկ մի ի զայրագին  
սրտմութենէզ, և եկ զհետ ծմարիտ բանից իմոց, և  
հայեաց կարգաւ ընդ իրս աշխարհիս: Ո՞ ոք ի մահկա-  
նացուացս ունի կեանս անտրութենչս, ոչ ահա ամենայն  
լի են ախտիւք, է որ ի ներքոյ, և է որ արտաքոյ. ցուրտ  
և տօժ, քաղց և ծարաւ և ամենայն աղքատութիւն կա-  
րուութեան: Արտաքոյ՝ անիրաւութիւն, յափշտակութիւն,  
գէճ պղծութիւն անսաւակ յարձակմամբ. ի ներքոյ՝ ամ-  
բարշտութիւն, ուրացութիւն, տգիտութիւն, անդարձ  
մոլորութիւն ի կամաւոր աղտառութենէն:

74. « Բայց դու որ զբժիկս խստեալ անարգեցեր,  
թէ չկը իմ ի նոցանէ գտեալ զառողջութիւն, չեն ինչ  
զարմանք, վասն զի մարդիկ են նոքա, է ցաւ՝ որում  
գտանեն հնարս առողջութեան, և է՝ որ ապասամբէ ի  
հնարից նոցա. վասն զի մանեներեան եմք մահկանացուք,  
այն որ բժշկէն և որ բժշկին: Այլ երանի թէ և գուք  
ըստ բժշկական արտեստին բերէիք զնմանսութիւն, զի ոչ  
փոքր է ծմարտութիւն նոցա բժշկութեանն: Քանզի  
յորժամ տեսանեն նոքա զոք հիւանդացեալ, ոչ յապաղեն  
երթալ առ նոսա, այլ փութացեալ հնարին մատուցանել  
զառողջութիւն: Մանաւանդ եթէ յարքունիտ մի ոք ի  
սիրեւաց թագաւորին ախտանայցէ, և հասեալ ի մեծ  
հրաշարակն՝ տեսանիցէ զբաղմութիւն պատուաւորացն  
և զառողջութիւն գեղեցիկ երխուսարբացն, և եռ ի  
ներքս մատուցեալ ի սրահսն արքունի, և անդ տեսանի-  
ցէ զամենայն սպասաւորացն զշքնալ և զպանչելի տե-  
սիլն, ոչ ինչ զարմանայ ընդ հրաշակերտ տեսին: Ես և  
եթէ զահոյք ականակապք իցեն և համակ սկեզէնք՝ յո-  
րոց վերայ հիւանդն անկեալ զնիցի, չէ ինչ նմա փոյթ  
զայնմ ամենայնէ: Այլ ի բաց հրամայէ առնուլ զոսկէ-  
հուռ վերաբկուսն, և ձեռն ի ներքս տարեալ՝ զննէ զո-  
մենայն մարմինն, եթէ չերմ իցէ ընութիւնն, և եթէ  
սիրտն ի տեղուոչն հանդարտ կայցէ, և կամ թէ լեարզն  
կակուզ իցէ, և կամ թէ շարժք երակացն՝ յարմար ի-

1. Երակ. Բազմանո՞ւ բակ. որպէս՝ <երան և է պարտիկուլէն բաճ:

յեն. և ըստ նմին զգարման բժշկութեանն առնիցէ՝ չնորհելով նմա զառողջութիւն:

75. « իսկ արդ եթէ մարդկային բժշկութիւնն այսպիսի գիտէ քամահել զամենայնիւ. և միայն զիւր առուեամն յառաջ մասուցեալ՝ զգործն կատարէ, որչափ ևս առաւել ձեզ արժան էր, որ զբորը աշխարհս ունիք յիշանութեան մեծի, հոգ յանձին տանել՝ նախ զհոգիսդ բժշկիլ յամենայն ախտալից մոլորութեանց աշխարհիս, և մարմնովք իսկ կային ամենեքեան ձեզ ի ծառայութեան: Արդ այժմ զի դուք տպիտացարուք, և զանմահ հոգիսդ մահկանացու արարէք յանշէջ հուր գեհենին, մարմնովք՝ թէ կամկը և եթէ ոչ կամկը՝ ախտացեալ էք յախտաւորութիւն անառողջութեան. և զմեզ նախառէք մարմնոյ ցաւովք, որ ոչ ի կամն սերոյ ազատութեան է, այլ որպէս գիտեցաւ ի բնութեան մարմնոյ իւրաքանչիւր մարդոյ:

76. « Եւ Քրիստոս ճշմարիտ Աստուած կենդանի և կենդանարար՝ ի կամն իւրոյ բարերարութեան եղի բըժիկ հոգւոց և մարմնոց, և նա ինքն ի ցաւս չարշարանաց իւրոց բժշկեաց զամենայն ազգս մարդկան: Եւ ևս խանդաղատագոյն գիտացեալ, վերատին ծննդեամբն ծընեալ զմեզ յառողջութիւն՝ անցաւս և անվերս, և ի ծածուկ հարուածոց զհին ծակոտուածն վիշապին՝ առողջացոյց. և արար զմեզ անսպիս և անարատս հոգւով և մարմնով, զի իցեմք բանակակից հրեշտակաց և զօրք երինաւոր թագաւորին մերսյ: Եւ քո զայս ոչ գիտացեալ, և ոչ փայելեալ յերինաւոր պարգևն Աստուածոյ, և ոչ ևս այլ կամիս ուսանել ի մէնջ. այլ և զմեզ ևս վրիպեցուցանել կամիս, որում չիր հնար, և մի այլ լիցի, և ոչ կարես իսկ առնել:

77. « Այլ վասն իմոյ ախտալից մարմնոյս առացից քեզ կարճառօտա: Խնդամ՝ և ուրախ եմ յորժամ՝ տեսանեմ՝ զմարմինս իմ չարշարեալ. գիտեմ, զի զօրանոյ յիս առողջութիւն հոգւոյս իմոյ: Մանաւանդ՝ զի ունիմ

1. Վիշապ կը բազկանայ յերկուց բարից. վիշապ առ բառ՝ որ սնի թռւնաւոր ջուր. վիշապի թռւն և առ ջուր: Պ. Հաւկ Zand-Pahlavi Glossary թարգմանե՛ որ թռւնաւորէ զջուրս, կամ

ինձ գրաւական զմեծ վարդապետն հեթանոսաց<sup>1</sup>, «որ ի ցաւս մարմնոյ անձին մխիթարէր, և ի կրփումն սատանայական մարմնոյ պարծէր, և առէր. Զի եթէ տնկալիցք եղաք նմանութեան մահու նորա, որշափ ևս առաւել լիցուք հաղորդք յարութեան նորա: Այլ դու որ ունիս իշխանութիւն ի վերայ մեր, գատեա զմեզ ըստ չարութեան կամաց քոյ: Չեմք ինչ զանգիտելոց յահագին յահաւոր սպասնակեացդ քոյ, և ոչ երկիւղած ի դառն մահուանէն՝ զոր ածելոց ես ի վերայ մեր»:

78. Յայնժամ մեկուսացոյց սակաւիկ մի զերանելինն ի միմեանց, և միայն ասէ ցուուրը եպիսկոպոսն. «Գովութիւն, զոր ետու քեզ յառաջ, ոչ խմացար պատիւ անձին քոյ: Յիշեցուցանեմ քեզ զշարիսն, զոր գործեցեր դու, զի անձամբ զանձն քո արացես մահապարա: Արդարեւ գու աւերեցեր զատրուշանն յիշտունիս, և կամ զկրակն գու սպաներ. նա և որպէս լուայ և սոուզեցի, թէ և զմոգմն դու չարշարեցեր, և սպաս պաշտամանն դու տարար. արդ եթէ արդարեւ դու առեր, պատմետինձ»:

79. Ես պատասխանի սուրբն և ասէ. «Արդ կամիս ուսանել զայդ յինէն, եթէ յառաջագոյն դիտէիր»: Դենշապուհ ասէ. «Այլ է համրաւ, և այլ է ճշմարտութիւն»: Եպիսկոպոսն ասէ. «Որպէս կարծեսոդ ասա ինձ»: Դենշապուհ ասէ. «Իմ լուեալ էր, եթէ զամենայն վասն յիշտունիս դու արարեր»: Եպիսկոպոսն ասէ. «Եւ զի այդպէս հաւասառեաւ ի վերայ հասեր, կրկին զի հարցանես»: Դենշապուհ ասէ: «Զծմարիսն ի քէն կամիս ուսանել»: Եպիսկոպոսն ասէ. «Ոչ զօգուտ կենաց քոց կամիս ուսանել յինէն, այլ արեան իմոյ ցանկան միտք քոյ»: Դենշապուհ ասէ. «Չեմ գազան արիւնախանձ, այլ վրէժինգիր եմ ասուածոցն անարդութեան».

80. Եպիսկոպոսն ասէ. «Զտարերս համերս աստուածս անուանես, և զպատկերակիցս քո մարդիկ խողիսողել կամիս. տարոց հասուցանելոց ես վրէժ թագաւորաւն քով յանկաշառ ատենին Աստուծոյ: Եւ զոր քո չար

1. Այս է Պողոս առաքեալ. տես թուղթ առ Հռովմ. գ. 5:

կամօքդ կամիս լսել յինէն, զայդ եռ առեմ քեզ: Զտունն արգարի ես աւերեցի, և զմոգմն ես չարչարեցի դանիս, և զկահ պղծութեան՝ որ ի տանն էր՝ ի ծովն ես բնկեցի<sup>1</sup>: Այլ զկրակ ով կարէ սպանանել. քանզի ամէնիմաստ արարին արարածոց հոգ խնամոյ տարեալ յառաջագոյն՝ անմտնս հաստատեաց զբնութիւն չորից նիւթոցն: Ազէ սպան դու զօդ եթէ կարես, և կամ ապականեա զհող՝ զի մի բուսուսցէ զգալարի, փողսոնեազզեա՝ զի մեռցի: Եթէ զայդ երեսին կարես տռնել, ապա և զկրակ կարես սպանանել:

81. « Ապա եթէ ճարտարապեան մեր միարանեաց զսորից տարերացդ զանքակութիւն, աչա և գտանի բնութիւն հրոյ ի քարինս և յերկաթս և յամեննայն տարերս զննելիս, ընդէ՛ր ստութեամբ զրպարտես զիս, թէ դու զկրակ սպաներ: Ազէ դու սպան զներմութիւն արեգական, զի ունի նա մասն հրոյ. և կամ տուր հրաման, զի մի թափեսցի հուր յերկաթոյ: Մեռանի այն՝ որ շնչէն և շարժի և զնայ և ուտէ և ընկէ. ե՞րբ տեսեր դու զկրակ զնայուն կամ խոսւն կամ գիտան: Արդ զոր կենդանի քո չէ տեսեալ, մեռեալ խոստովանիս: Քանի անթողիի է ամրարշտութիւնդ ձեր քան զամեննայն հեթանոսաց, որ գիտնադպնդք են քան զձեղ. որ թէպէտ և ի ճշմարիտն Աստուծոյ մոլորեալ են, զանիսոս տարերս Աստուած ոչ խոստովանին: Արդ եթէ դու անգիտութեամբ կորնչելի ասես զբնութիւն հրոյ, ոչ առնուն քեզ յանձն արարածքո. քանզի խտոն է զա յամեննեցունց »:

82. Դենշապուհ ասէ. « Ոչ ինչ մտանեմ<sup>2</sup> ես ընդքեզ ի սպայքար քմնութեան վասն բնութեան արարածոցս. այլ խոստովանեա ինձ, եթէ դռւ անցուցեր զկրակին, եթէ ոչ »:

83. Պատասխանի ետ երանելին և ասէ. « Որովհետեւ ոչ կամեցար լինել աշակերտ ճշմարտութեանն, ասացից

1. Այս է ի ծովն Վանայ:

2. Սահակ վարպետութեամբ կը շըրջէ զհարցումն. կրակը մարելը Պարսցի գաղափարաց համեմատ՝ սպանելը էր. բայց Դենշապուհ կը սեղաւու.

ի բաց կը թողու սպանանել բառը.

« Դո՞ւ անցուցեր զկրակն »: Սահակ գարձեալ ճարտարութեամբ կը պատասխամէ ու Դենշապուհ ձեռքը օրինական փառացը շտալու կաշխատի:

զկամն հօրն քոյ սատանայի: Ես ինձէն մոխ ի կրակու-  
տունն ձեր, և տեսի՝ զի կային պաշտօնեայք ամբարշտու-  
թեանն մնասի կարծեացն ձերոց, և կրակարանն լի հրով  
առաջի նոցա բորբոքեալ այրէր: Հարցի ցնոսա բանիւք  
և ոչ գանիւ, թէ զի՞նչ համարիք ի միտս ձեր զկրակ  
պաշտամննս այսորիկ: Եսուն պատասխանի և ասեն.  
Մեք ինչ ոչ գիտեմք. բայց այսշափ ինչ խմանամք, զի  
սովորութիւն է նախնեացն և հրաման բուռն թագաւո-  
րին:

84. « Ասեմ դարձեալ ցնոսա. Եւ զբնութիւն կրու-  
կիդ զի՞նչ խմանայք. արարիչ կարծէր, թէ արարած:  
Ասեն միարան ամենեքեան. Արարիչ մեք զդա ոչ զի-  
տեմք, նա և ոչ հանգուցիչ աշխատելոց: Զեռք մեր փա-  
պարեալ են ի կացնի, և սղոնք մեր տեռեալ են ի փայ-  
տակիի, աչք մեր զիջացեալ են արտասուօք ի կծուու-  
թենէ ծխոյ դորա, և երեսք մեր մրտաւեալ են ի խոնա-  
ւութեան թանձրութենէ նորին ծխոյ: Եթէ շատ մո-  
տացանեմք նմա զկերակուրն, յոյժ քազցնու. և եթէ  
ընաւ չտամք, ամենեին անցանէ. և եթէ մօտ երթամք և  
երկիր պագանեմք, կիզու զմեզ. և եթէ ոչ երթամք մօտ  
ամենեին, մոխիր լինի: Մեք այդպէս հասեալ է ի վե-  
րայ բնութեան դորա:

85. « Ասեմ դարձեալ ցնոսա. իսկ լուեալ է ձեր,  
եթէ ոյր ուսուցեալ է ձեզ զայդպիսի մոլորութիւն: Ե-  
սուն պատասխանի և ասեն. Զի՞ ի լսելոյ հարցանես  
զմեզ, այլ հայեաց ընդ առաջիկաց իրագ. զի օրէնսդիրքն  
մեր ոգւովք մոտաց միայն կարացեալ են. այլ թագաւորն  
մեր մարմնով միով ակամքն կցը է<sup>2</sup>, այլ ոգւոյն ընտ  
չիր իսկ աչք:

86. « Վասն այնորիկ և ես իրրե բուայ զայս ի մո-  
դացն, յոյժ ողորմեցայ. զի ոգիսութեամբ զարդարն  
խօսեցան: Սակաւիկ մի շարշարեցի զնոսա զանիւ, և  
նոցուն իսկ եսու զկրակին ի ջուրն ընկենալ, և ասացի  
այսպէս. Աստաւածք, որ զերկինս և զերկիր ոչ արարին,

1. Զէ միայն փայտ կրող, այլ և փայ-  
տակրուրիւն, որպէս աստանօք, ոյս գեր-  
չի նշանակութիւնս աւելցնել հարկ է

Քննադար, Եղիշէի

մեր բառազրոց մէջ:  
2. Յազկերոտ Բ միականի էր:

կորիցեն ի ներքոյ երկնից. և ապա զմոգմն ի բաց արձակեցի »:

87. Զայս առնենայն իբրև լուսու դենշապուհ ի բերանոյ սուրբ եպիսկոպոսին. անհնարին զահի հարաւ ի թշնամնաց թագաւորին և յանարդանաց գենին; վասն որոյ և երկեաւ խոկ մատուցանել զնա ի ասնջանս հարուածոյ, թէ գուցէ այլ ևս մեծ անարդանս զթագաւորէն ատացէ ասել յատենին, և ի նա ձգիցին կարծիք թշնամնացն. զի երկայնմոռութեամբ պայքարեցաւ ընդնոսա :

88. Եւ քանզի սուսեր ընդ մէջ ածեալ նառէր յատենի՝ ահ արկանելով որբոցն, գոչեաց իբրև առիւծ զայրագին, և հանեալ զսուսերն գաղանարար յարձակեցաւ ի վերայ երանելեացն. և եհար եպիսկոպոսին զաջ ուսն թիկամբն հետ, և զձեռն ի վայր ընկէց: Եւ նորա յահեակ կողմն յերկիր անկեալ, և գարձեալ անդրէն պատսպարէր, առնոյր զաջ ձեռն ի վեր. աղաղակեաց մեծաճայն և ասէ. « Ծնկալ, Տէր, զկամաւոր պատարագու՝ որ ինձէն զիս քեզ մատուցի բոլորպին, և խառնեա զիս ի գունդս սուրբ զինուորացն քոյ »:

89. Գարձեալ քաջալերէր զընկերակիցն իւր և ասէր. « Հանզա առաքինիք, եհաս ժամ կատարման մերոյ. խցէք զաշս մարմնոյ վայր մի, և այժմ տեսանէք զյոյսն մեր Քրիստոս »: Եւ թաւալելով ընդ արիւնն անձին իւրոյ ասէր. « Օքհնեցից զջէր յամենայն ժամ, հանապաղ օրհնութիւն նորա ի բերան իմ: ի Տէր պարձեսցի անձն իմ, լուիցեն հեղք և ուրախ եղիցին »: Եւ ասելով զսաղմոս զայս կատարէր մինչև զայս տեղի. « Բազում նեղութիւնք են արգարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր, և պահէ զամենայն սակերս նոցա »:

1. Անապատին մէջ առեան կազմուեր բայց որովհետեւ շատ խօսեցնել տուեր էր. ըստ Փարագեցոյ զօրականք աթոռ առարեր էին, որոյ վերայ կը նառէր Դմոջապուհ: Սուսեր ընդ մէջ առեալ՝ իբրև իշխանութեան նշան, որպէս սովոր զինուորականաց՝ երբ հրաման մը կատարեն կամ գատաւորութիւն ընեն: Դահնութիւնը ինքը պիտի շկատարէր, բայց որ է < թուր >:

90. Եւ մինչ գեռ կայր յուժի մարմարյն սակաւիկ մի, իւրովք աշօք խալ հայեցեալ՝ տեսանէր յերկնից եւ կեալ գունդս բազում հրեշտակաց և վեց պատկ ի ձեռին հրեշտակապետին։ Դարձեալ և լոէր ևս բարբառ ի վերուստ որ ասէք. « Քաջալերեցարտք, սիրելիք իմ։ զի ահա մոռացայք զվասալի կեանսոդ, և հասէք երանելի պսակացդ, որ ձերով ճարտարութեամբդ կազմեցէք. առէք դիք յիւրագանչիւր գլուխ։ Զի նիւթ պատրաստական ի ձէնջ հիւթեցաւ, խակ ճշմարտութիւն գործոյդ յամենաստորը ձեռացն Քրիստոսի կազմեցաւ. զոր ի սպասաւորաց այտի խակ ընկալեալ՝ ընդ Ստեփանոսի լինիք պատկակից։ Նա և զայն ևս քաջապէս տեսանէր, զի գեռ ևս շողայր սուրն ի վերաց պարանոցի երանելեացն։

91. Զոր իրրե եռես սուրբն Ղիմնդ, եթէ ոչ ևս զմի մի կամին հարցանել և գատել, այլ միանդամացն հրաման եղե մահու, ասէ ցերանելին Յովսէփ. « Մատիր, յառաջեա ընդդէմ սրբն, զի գու աստիճանաւ ի վեր ես քան զամենեսեան։ » Եւ զայս իրրե ասաց, կարգեցան կացին մի բատ միոնէ. առ ճեպ տագնապի սոտիպելոյ գահճացն՝ միանդամայն հատին ընկեցին զպարտնոց երանելեացն առաջի սուրբ եպիսկոպոսին. և նորա ընդ հանել ոգուցն աղաղակեաց և ասէ. Տէր Յիսուս ընկալ զոդիս մեր ամենեցուն, և խառնեա զսեղ ի գունդս սիրելեացն քոց։ Եւ միանդամայն կատարեցան ամենեքեան ի նմին տեղւոց<sup>1</sup>։

92. Եւ եթէ զմոգպետն ևս, որ հաւասաց ի Քրիստոս, կամիցիս ընդ նուա ի համար արկանել, թուով են եօթն. թող զերկուսն ևս որ ի վազգեսն կատարեցան, և միւս եպիսկոպոսն Թաթիկ<sup>2</sup> անուն յասորեւ.

1. « Ի վեշտասաներորդում ամի թաշ գաւորութեան Յազկերոտի, որ որ քառն և հինգ էր ամսոյն Հրոտից, յԱպար աշխարհի, մերձ ի գեօղն Ազգուց որ անուանեալ կոչի Ռեան։ Փարու. 305 և Եղիշէ Յ. Ը. 101։ Այս է Ամուէլի և Աբրահամու նահատակութենէն 18 որ ետք։ Գիւղիդ տեղն անյայտ է ասկաւին։

2. Այս է Թաթիկ եպիսկոպոսն Բառանեց (տես Յ. Բ. 26) զոր յառաջազդոյն տռեալ էր տանել զօրագիւտցն Պարսից ի խուժաստան (երբ քահանայք դեռ ի Հայու էին) ըստ քակւոյ իշխանին Ակնեաց և անդ իստա կապանոք պահէր. Փարու. 223։ Յազկերու զսարկաւազն Աբրահամ և զԱսմուէլ մեռցել տռած

տանիի: Բայց անդէն ի տեղւո՞ն վեցերին, որոց անուանքն են այսպիկ. Մահակ եպիսկոպոս յիշտունեաց, սուրբն Յովուէփ ի Վայոց ձորոց ի գեղջէ Հոգոցմանց, Պետք երեց ի Վահանդայ՝ ի գեղջէ իջաւանից, Մուշէ երեց յԱլլակոյ՝, Արշէն երեց ի Բազրիանդայ, ի գեղջէ յԵղեգեկաց, Քաջաջ սարկաւագ՝ ուստի եպիսկոպոսն եր յիշտունեաց: Խոկ երանելի մողպեան ի Նիւշապոհ քաքէ, Ծամաէլ երեց յԱլլարարասայ՝ ի գեղջէ յԱրածոյ, Արքահամ սարկաւագ ի նմին գեղջէ:

93. Արդ զիեց զայս սուրբս յանապատին՝ ուր կտտարեցին, Գենչապոհ և մողպեան<sup>2</sup> և Ջնիկան մայպեսն անդէն ի տեղւո՞ն պահապանն ընտրեցին յիւրաքանչիւր սպասաւորացն, և պահել հրամայեցին զմորմինս երանելեացն ցաւուրս տասն կամ ևս աւելի, մինչեւ

առենը հրաման խրկան էր, որ ապանելք ևս զթաթիկէ որ յայնեամ յԱլսորեստան փոխեալ էր. (Կոյն 261): — Զերկուսն եւս որ ի վազգես: Տես Յ. Բ. 6 ծանօթ 1:

1. Տարաւազը գտառ ի հարաւոյ Գեղարբունոյ վաչչիլան լերամըք ըլլապատեալ, յարեմոից սահման ունի դՇարուր, ի հարաւոյ զնամիջեան յելից զԴարապազ նահանդ, բարձր բարձր լերամըք նորուն անջաւեալ: յարոց բըզի լեռակ Ալքիտ գետ արքուցանէ զգաւասս և ընթանայ յարեմուսս յԵրասի ընդմէջ Շարուրայ և Նախիջեանու. և է երկիրս Վայոց ձոր կամ Եղեգեամոր հին գաւառ Ալիւնեաց, լերամըք պարապեալ յամենուսս, ոչ սակաւ ի մէջն կոնակեալ. Ալիւն վ. Տեղագիր Հայոց Ա:

Ալլակէ. ի մոից Սալմաստայ գտառի Պարսից և յելից Անձեացեաց, կայ վիճակն Ալիւնազ որ է Ալլակէ, որոյ Պարխաւոր աւանն է Պաշտալէ ի բարձու բարաժայոի իբրեւ 7000: Ոչ սակաւ Հայոք բնակին ի կողմանքու, ոցի Հրեան ունանց ի հին գերութենէն Հրեցից սերեալք եւ կամ ի գերութենէն Տիգրանայ Բ. ի:

Գաւառադ ընգարձակ լեռնագաշու մի է շրջապատեալ մեծամեծ սարերէ. Ճմեռն սաստիկ ցուրտ և ձիւնապատ: Ունի նշանաւոր հնութիւնս. Աշուոյ դուռն կամ բերդն, որոյ վերայ գտանին բեռն գագիր կամ ի հիմանի բերդ, և Բարձողիմէսս առաքելոյ վանքն և սիւնազարդ տաճարն . կառուցեալ կոփածոյ ընսիր քարերէ քանդակարդ, ահաւուր, հոկայածն և պարազապատ. հաւանուրէն ի ժամանակս Տրգաւայ կառուցեալ, չին Ալեքսանդր քաղաքի մօտ. (Տես Ալեքսան վ., Տեղ. 100: — Միրախորեան Համ., Բ. 48-110: — Խորենացի Բ. 1.3):

2. Ամենայն տպագիրը դնեն՝ Դիմիշտուն, մողպեան և Ջնիկանն ևս մայուկնեն. Կաստանինուորուսս երկրորդը՝ Դիմիշտուն, մողպեան և Ջնիկանն ևս մայուկնեն: Ոմանք ի զրշագրաց Դիմիշտունն է Ջնիկանն ևս մայուկնեն: Բաղդատելով զԵղիշէ (Յ. Բ. 45) ընդ Փարուղեցոյ, յայս է թէ այդ ընթերցուածիցտ ամէկն ու սիսալ են. երեք հազի միայն պիտի ըլլան և ոչ շորս. Դենչապուն, Մովան անդարձապետն և Ջնիկան մայուկնեն: Եւ որովհետեւ անդար-

կարաւանն արքանի՝ անցեալ գնասոցէ, զի մի այլադենքն եկեալ բառնայցեն զոտիերս դոցա, և բաշխեալ ափուեացեն ընդ աշխարհս ամենայն, յոր և մարդիկ ես առաւել յորդորեալ մորթիցին զինի նածարացւոց աղանդին:

94. իսկ խուժիկն, զոր յառաջադպին ասացաք, զինու հանդերձ մնայր անդէն ընդ պահապանն որպէս զմի ի նոցանէ, այր լի խմաստոթեամբ, և կաստրեալ աստուածային գիտութեամբ, սպասէր և գէտ ակն ոճէր՝ եթէ որով օրինակու հնարս դոցէ զոսկերս որբոցն գողանալ ի նոցանէ:

95. Եւ իրրե աւուրք երեք անցին ի վերաց, արհաւիրք մեծ անկանէին ի վերաց ամենեցուն, և իրրե թմրեալ և կիսամեռք անյարիրք արկեալ գնէին վերիս աւուրմն: իսկ ի չորրորդումն աւուրն երկուք ի պահապանացն չարաշար լիկեցան ի գիւէ: Դարձեալ հասարակ գիշերաւ չափ՝ ձայնիքն ահեղք հնչէին, և թնդիւնք և որսաաձայնք ի ներքուստ՝ որպէս զզրդումն գեսնաշարժի. երկիրն գոզայր ի ներքոյ նոցա, և չողիւնք առսերաց փայլասակունս արձակէին շուրջ զնովար: Եւ զամենեսեան զդիսկանն կանգնեալ տեսանէին, և զնոյն բանս ատենին ահադինս բարբառէին ի լսելիս նոցա. մինչև խոճապել նոցա ընդ միմեանս, գեռ ևս զիերեարս աստակէին: Եւ այսպէս տագնապեալք և ցնորեալք մինչև այր զընկեր ի փախուստ չգիտէր ընդ որ երթոցր: Եւ եկեալ պասամեին մեծաւ զարմացմամբ զամենայն անցս չարշարանացն, զոր կրեցին:

96. Ի խորհուրդ մոլին նախարարքն երեքեան, և սկսան զարմանալով ասել ցմիմեանս. Զի՞նչ զործեցուք, զի՞նչ արասցուք վասն անքնին աղանդոյն քրիստոնէից, քանզի մինչ դեռ կենդանի էին, զարմանալի էր կեանք նոցա, ընչառեացք էին իրրե զանկարօսս, որրասէրք էին իրրե զանմարմինս, անաշառք էին իրրե զարդարանացն, զոր կրեցին:

Ճապետգ մոգուեալք և փոխանորդ մոզ-  
պետան մոգուեալ, որոյ կողմանէ ալ  
խրկուած էր, պարս և ուզգել այսպէս.  
«Քենչապուհ և մարդեան և ֆնիկան

1. Ամինչ որ անցնի արքանի կարա-  
պետան մոգուեալ, որոյ է բանակը՝ որ վաղգեսէն  
ես զամենալով նիւշապուհ և անուի ևս  
ի վրեան պիտի երթար. և յորում  
իրաս շատ քրիստոնեայք ալ կային:

բագատոս, աներկիւղք էին իրրե զանմահս: Եթէ զայս  
ամենայն ասեմք իրրե զոտիսաց և իրրե զյանդգնելոց,  
խել զայն զի՞ առնիցեմք, զի ցաւոտք ամենայն ի կա-  
րաւանի աստ նորօք առողջանան: Եւ կամ որ մեծու է  
քան զայր ասենայն, ոյր ուրուք դի կանգնեալ երեե-  
ցաւ ի կենդանեաց կամ բարբառ բանից ոք լուսու ի  
նմանէ:

97. Զի սուտ չեն մեր սպասաւորքն. մեր մեղէն խել  
հասեալ է ի վերայ սատութեան սոցա: Եւ եթէ կա-  
սեցեալ էր սոցա մարմաւոր ինչ ագահութիւն ի ներքո  
խառնել, սակաւ մի տկնարկէին քրիստոնէից ի կարա-  
ւանիս, զկիտ իւրաքանչիւր մարմաց նոցա ոտիկի առ-  
նուին: Դարձեալ և արքու, որ ի դիւէ չարշարեցան, զի  
յայնժամ ցաւոտք չէին՝ և մեք գիտեմք, յայտ է եթէ  
այսօր նշանն մեծ երեեցաւ: Եթէ լուռ լինիմք, այսպէս  
մեզ և անձանց մերոց կասկած խել է. և եթէ տանիմք  
զգոսա առաջի թագաւորին, լսերով նորա ի գոցանէ զայր-  
ասենայն մեծասեծ սքանչելիս, գուցէ և օրինացս մերոց  
քակտումն ինչ հասանիցէ:

98. Ետ պատասխանի մոգպեսն<sup>1</sup> և ասէ ցնոսա. Ոչ  
զիս սստիկան արարին ի վերայ ձեր երկոցունցդ. զի՞  
այդշափ նեղեալ տաղնապիք յանձինս ձեր. գուք զգործ  
ձեր կատարեցէք, և հրամանն արքունի ի գրուխ տա-  
րայք: Արդ եթէ համբաւդ այդ յայտնեսցին, և հարցա-  
փորձ ինչ լինիցին առաջի արքային, այդ ինդիր մեր  
մոգաց է. գուք անհոգ լերուք, և մի ինչ ածէք զմոտաւ:  
Եւ եթէ զարհուրեցայք ինչ յոդիս ձեր, վազագոյն ա-  
ռաւոտոցն ի գարիթիւրէ եկայք. զի վազիւ անդ մոգ-  
պետան մոլպետ ուստ յազէ<sup>2</sup>, և նոյն հաճեալ հաւանե-  
ցուցէ զմիտս ձեր:

1. Այս է մոգուց անդարձապետն.  
Տես Յ. Ը. 93 ձն. 1. և Յ. Գ. 21 ձն.  
1: — Արտիքետե մոգերը պահանջեր  
էին քահանայից սպանումք՝ մոգետան  
մոգպետին կողմանէ խրկուած էր ան-  
դարձապետն. որպէս զի եթէ քահանայք  
յանձն առնուն զմոգութիւնը, նա ըն-  
դունի նոցա գաւանանքը. միանգամայն

և ականատես ըլլայ նոցա մահուանը  
եթէ դարձի չգան: Ցերից նախարարացն  
դինշապհոյ և ջնիկանի մոտաց երկրայու-  
թիւն բերեր էր պահապանաց պատմա-  
ծը, և սկսեր էին խորհիլ քրիստոնէու-  
թեան ճշմարտութեան վրայ. Տես Փարոզ.  
310 :

2. Թեէոգոսիոյ տա՛ ի դարիթիր. Միեւ-

99. Խոկ խոռվիկն իբրև լուաւ զայս ամենայն, և գիտաց՝ եթէ փոյժ ինչ ոչ է նոցա յայնմէհետէ սուրբ սպաւ-

Հար Միհրայ՝ կը կուէին Պարսկելք մեծամեծ յաշտից յատկացեալ կրպաւունները . Le lieu du culte pour les grands sacrifices est le temple du feu ou *Dari-Mihr*, Porte ou Palais de Mithra. (*Skt.* Darmesteter, Zend-Avesta. Հա. Ա. Էջ Տնիք) : Մահմետականութեան ժամանակ Թօմաֆիցաւ առունեց ի պարսկերէն բառագրոց. և հայ գրչացիք իրենց դիտցած պարսկերէննիւն մէջ սուս ասենէն մօս բառ՝ դարիքիւր, ընտրեցին. *Skt.* Փրսիկար Էջ 252 Տն. 1:

Մագահան մովզեա՞ է Մովզեսաց  
Մովզես, գենապետին տիտղոսն էր, որ  
Օսմանեանց Հէյխ-իւլ-լալամին պէտ  
Մէծ հազարապետին հաւասար իշխան  
մի էր: Եզիկէ գենապետիդ՝ անունը լը-  
տար մեզ. ըստ Թօնագրիի Մէրմէր-  
սէհի անդրանիկի որդիին Զարաւանդ՝ այր  
ինաւուն, մովզետան մովզես եղած էր  
Վահանյ վերջին ժամանակները. (Տես  
էջ 26): Խառը արգի պարսկերէն է ա-  
ռատ, միանգամայն և բանիքուն, խե-  
լացի. առհասարակ կը կարծուի թէ  
ռատ յափ ըսել է մեծ և առա զան  
պիտի ընէ: Ասդ մեկնութիւնդ սիալ է:  
Սասանեանց ժամանակի համօքէն Բահ-  
լաւի և Բազանու դրոց մէջ՝ ռատ որ  
Աւեստայի ռադու բառն է, ոչ անսակէ  
չ աէր, գլուխ ։, և է անծեն մովզե-  
տաց մովզետին կամ այժմէան Տառ-  
րուրի Տարուրքանին. երբեմ սոսկ ռատ  
գործածուած է իրեւ գլուխ հոգեսոր,  
աէր. և կը համապատասխանէ մեր  
չ աէր, պատրիարք, Կոփիկոպս շ բա-  
ռից, ռատի՛ տէրութիւն, պատրիարքու-  
թիւն. երբեմ ալ մովզետան մովզետ  
տիտղոսն անմիջապէս վերջը կը գրուի,  
ինչպէս աստանօ մեր հէշինակին մէջ.  
և լարնամ նյանակէ ։ աէր գենապետ

նելոցն, փութացաւ վազվազակի էտ տասն այր, որոց զշափ դիտէր գքրիտանէւթեանն, և հասեալ ի տեղին՝ չէն եղիտ զամնեսեան: Եւ քանզի կառկած տնէր տակաւին ի նոցուն ի դահճացն, դարձեալ փոխեցին անտի զսուրբսն յայլ տեղի բացազոյն իբրեւ երկու հրասախօք: Եւ իբրեւ յանհոգու եղեն, սրբեցին կազմեցին զսովերու երանելքացն: բերին ի բանակն և տնէին ի ծածուկ. և առ սակաւ սակաւ յայտնեցին նախ զօրականին Հայոց, և ապա բազում՝ քրիտանէիցն՝ որ էին ի կարաւանին: Եւ զառաջին պտուղ ընծային մասուցանէին կապեալ նախարարացն: և անդէն վազվազակի արձակեցան նոքա ի կապանաց խւրեանց ։ և սպանալիք մահուանն անցին զնոքօք, և հրաժարակիք թողութեան առաքեցան յաշխարհն Հայոց:

100. Արդ այս երանելի խուժիկս, որ արժանի եղեւ ի ծածուկ սպասաւոր լինել սրբոցն, որ ինչ ի մահուա-

տէր յահանայագետ ։ Տես Պ. Ռեսդի  
Pahlavi texts. Էջ 115. 233: Պարս  
է ուրեմն որոշեւ ոստ ի բայէն. «Մով-  
պետան մովզետ ոստ՝ յազէ ։

Ըստ Մօնէլ-Խոթմավարիկի ոստ այ  
պատուանոնդ կը արուէր ևս ի սորհրա-  
կանաց և բարձրաստիհան անձանց, որ-  
պէս և ի մեզ և աէր ։

Միջնադարեան զրութեանց մէջ որոշ  
կը աեմսուի թէ խոստվանանքը հար-  
կաւոր պայման մի էր մեզաց քաւու-  
թեան: Մայնո-խրատի մէջ՝ Ոգին իմաս-  
տութեան այսպէս կ'ըսէ. «Մեղաց քաշ-  
ւութեան համար կարեոր է, որ մարդ  
մը կամովին (քամահմա) շմեզանչէ. և

եթէ որ զիսութեամբ կամ տկարու-  
թեամբ մեզք մը զործէ, պէտք է որ տաս-  
գուրաց և բարի մարդոց (վեհից) առջե-  
ապաշաւէ ։ (Տես Պ. Ծբ. 16-19): —  
Ըստ Շայասդ-լա-Շայասդի, մեզք երկու-  
տեսակ են. ա. համեմալան. բ. բաւակնիք: Առաջնին ի վեա բարի մարդոց կամ  
անասնոյ եղած յանցանին են. վեասեալն  
կ'ըլլաց յայնժամ համեմու՝ այս և դա-

տախազ: Որոյ պէտք է նախ հասուցումն  
տնել, որպէս զի խոստվանութիւնն  
առաջի մովզետաց (ստո) կամ՝ զզծումն  
կարենայ զմեզմն բաժանել և հեռացնել  
ի մեզանովէն իսկ Բուզանձիք ոչն մեզ ըն-  
են, որ մեզաւորին հոգւոյն միայն կը  
վերաբերին ու կը վեասեն, ասոնց քա-  
ւութիւնը (բագիզիք) մի միայն քահա-  
նայապետաց (ստուն) մեզքն մէջ ըլ-  
լալը խոստվանելով և առաջադրելով և  
անոր ամէն պատուիրածը կատարելով  
կ'ըլլաց: Յայնժամ մեղքը կը զատուի ի  
հոգւոյ, և այնուհետեւ մարդուս ամենայն  
բարի զործքն (ըիրոց) արդինաւոր կ'ըլ-  
լան. Տես Պ. Ծբ. 1:

1. Ու թէ ազատ թողուեցան դառ-  
նալու յաշխարհն Հայոց. այլ այնուհե-  
տեւ անկազ մեացին ու առաքեցան ի  
Հրեւ, այս և այսէնան Հերաթ քաղաքն  
Աֆզանաց (Հերէվ կամ Հրեւ ըստ Պար-  
սից). Հարզու ըստ Աւեսդոյի և Հա-  
րիւ ըստ բենաազրոց), որպէս զի անգ  
ծառային պարսկական բանակին մէջ  
ընդդէմ Քուշանաց:

նէն և այսր ասացաւ գատակնիվ վճռիս այսորիկ, առ  
երկրորդեաց մեղ՝ զամենայն կարգաւ. զշարաշար քար-  
շումն, և զհարց և զփորձ գատաւորացն, և զիւրաքան-  
չիւր անձանց սրբացն զպատախանիմն, և զկատարումն  
մահուան նոցա, և զահագին արհաւիրսն՝ որ ի վերայ  
պահապահացն անկաւ, և զհեծեծումն ըննութեան նա-  
խարարացն երեցունց, և զամփոփումն սուրբ ոսկերաց  
նոցա. ոչ խառն ի խառն ի մի վայր ժողովերսվ, այլ  
զմի մի ի նոցանէ ուրոյն ուրոյն ի վեց տապանս ժողո-  
վէր. և զանուանս խւրաքանչիւր ուսեալ և ի վերայ տա-  
պանացն նշանակեալ էր: Եւ զկապաննն երկաթիս ընդ-  
խւրաքանչիւր ոսկերսն եղեալ էր, քանզի զահացն ի  
բաց ընկեցեալ էր. որպէս և զհանգերձս զիւրաքանչիւր  
տապանի նշանակեալ էր <sup>2:</sup>:

4. 101. Եւ կատարեցան սրբա վեցերեան սուրբ և ցան-  
ան կալի մահուամբ խւրեանց որ օր քան և հինգ էր հրո-  
տից ամսոյ <sup>3:</sup>, ի մեծ անապատին յԱլպար աշխարհի ի  
սահմանն նիւշապուհ քաղաքի:

1. Եղեշէ Խոսքիկէն լսեր էր. բայց  
միթէ Եղեշէ Նիւշափուր գնացեր էր  
կազեալ նախարարաց համ, թէ Խո-  
միկ Հայաստան եկեր էր վաճառակա-  
նութեամբ: Ի երջին ենթագրութիւնն  
աւելի հաւանական է: Փարպեցին Ղեղե-  
ցեանց նահասակութեան հանգամնդը  
Ալբարունեաց իշխանէն յԱլբարէ ու-  
ղեկացեր էր յետ դառնալոյ սորս եր-  
ջայս, և Ալբարի ալ խուժիկէն տեղն  
ի տեղոքն իմացեր էր. Փարպեցին 316:

2. Ալիբիթարեանց ՈՒՄՀՀ սպազրին

Ճանօթութեանց մէջ հետագայ դիտու-  
գութիւնը կը գտնենք. «Հասուածդի՛ Եւ  
զկապանն մինչև ի նշանակեալ էր, ուսար  
թուի յԵղեցային ոճոյ և եկամուտ ի  
առողջարաց»:

3. Ըստ ժամանակագրութեան զոր  
Միհիթարեանց սպած են Տումարին վեր-  
ջը (1880), յամին անդ 454 ի 26 Յու-  
լիսի: Բայց ըստ Ալիշան վարդապետի  
դրութեան՝ պէտք էր ի 5 Օդոսառուի  
ըլլալ: Տես էջ 260 Ճանօթը 2: Ալբա-  
րի վերջի թուականս կը դնէ Պ. Լանկուաւ:

## ԳՈՐՉԵՍԻ ՎԱՐԴԱԿԱԿԱՆ ԹՈՍՈՎԱԴՈՒՅԴ,

## ԱՇԱԽԵՐՏՈՅ ՆԱՑՈՒԵՑ

102. Իսկ աշակերտք երանելեացն ի կապահու կային ի ներքս ի քաղաքին<sup>1</sup>. Եկն դահճապետ մի արքունի և եհան զնոսա ի քաղաքէ անուի արտաքս:

Եհան ի նմին քաղաքէ ասորեստաննեայս քրիստոնեայս արս հինգ, քանդի և նոքա ի կապահու էին վասն անուանն Քրիստոսի. Եհարց ցնոսա բանիւք, և ոչ հաւանեցան երկիր պագանել արեգական։ Զարչարեաց զնոսա գանիւ, և նոքա եւս առաւել ի նոյն միսս պնդեցան. կտրեաց զնոցա ունչս և զականջս, և եստ տանել յԱսորեստան<sup>2</sup>, զի կայցեն ի մշակութեան արքունի։ Երթային մեծաւ յօժարութեամբ, իրրե այն՝ թէ մեծ պարզես գտեալ ի թագաւորէն։

103. Այրդ եկն դարձեալ նոյն դահճապետն առ աշակերտս ուուրը սպանելրացն, ընտրեաց երկուս ի նոցանէ որ համեստագյնքն էին. առեալ մեկուսի յայլոցն և ասէ ցնոսա. « Զի՞նչ անուանք են ձեր »։ Ետ պատասխանի մինն և ասէ. « Առ ի ծնողաց ինձ խորէն, և դժմա Արքահամ. իսկ ըստ չնորհատուր կարգիս՝ ծառայք Քրիստոսի եմք, և աշակերտք երանելեացն՝ դոր սպանէք »։

104. Ետ պատասխանի դահճապետն և ասէ ցնոսա. « Իսկ արդ զի՞նչ գործ է ձեր, և կամ բնաւ ոյր իսկ ածեալ է զձեղ այսր »։ Առ այս ետ պատասխանի Արքահամ և ասէ ցնոսա. « Զայդ ձեզ ի վարդապետաց մերոց արժան էր ուսանել. զի ոչ դուզնապեայք ոք էին նոքա, ոյլ ունէին ստացուածս հայրենիս ըստ արժան բաւականին, ըստ նմին և սպասաւորս, էր որ իրրե զմեզ, և էր որ լաւագոյն քան զմեզ. որոց մնուցեալ և ուսուցեալն էր, ընդ նոսա եմք եկեալ. Քանզի և պատուէր իսկ ունիմք յաստուածատուր օրինացն մերոց՝

1. Այս է ի նեւշապուհ։

2. Բազանս գրութեանց մէջ Ասորիսկան։

սիրել զնոսա իբրև զառւրբ ծնողս, և սպաս տանել նոցա  
իբրև հոգեւոր տերսմնց »:

105. Ցատեաւ դահճապետն և ասէ. « Իբրև զան-  
խրատ և զաներկիւզ սոսամբակս խօսիս: Մինչդեռ ի  
խաղաղութեան և յաշխարհի էկի՛ բարիոք էր. յորժամ  
դրուահ<sup>1</sup> եղեն նոքա յիրս արքունի և մահապարտ գտան  
ըստ գործոց խւրեանց, ձեզ չէր արժան ամենեւին մօտ  
երթալ առ նոսա: Ո՞չ տեսանէք ի մեծ կարաւանիս, յոր-  
ժամ ոք ի պատուաւորացն ի դիալահւոջն արքունի լինի-  
ցի, սոյ հանդերձ ագանի, և զատեալ և որոշեալ ի  
բացէ նստի միայնիկ, և ամենեւին հուպ ոչ ոք իշխէ եր-  
թալ առ նոսա: Եւ դու այդպէս իբրև զանյանցի աշա-  
կերտ պարծերով խօսիս »:

106. Առ այս ետ պատուիսանի խորէն և ասէ. « Ոչ  
ձեր կարդդ անիրաւ է և ոչ մերս սոսամբեամբ. նախա-  
րարն յանցաւոր՝ ուստի զպարզեն գտեալ էր, այնպէս  
պարտ էր նմա հպատակ լինել, զի ի պատուսյն վերայ  
և այլ ևս պարզես մեծամեծս գտանէր ի նմանէ: Այդ-  
փոխանակ զի զայն ոչ արար, ձախողակի յետո ընդ-  
դէմքն պատահեաց նմա: Եւ մեր վարդապետքն եթէ առ  
Աստուած յանցուցեալ էին, և կտօն առ թագաւորն մե-  
զուցեալ ինչ էին, նոյն օրինակ և մեք առ նոսա առնէաք,  
ոչ յաշխարհի մօտ երթայաք, և ոչ ի տար աշխարհ այսր  
զիետ նոցա գայաք: Այսդ քանդի առ երկոսին կողմանսն  
արդարութեամբ կեցեալ են, և դուք զուր տարապար-  
տոց սպանէք զնոսա, մեք արդ ևս առաւել սպասաւո-  
րեմք սուրբ սոկերաց նոցա »:

107. Ասէ յնոսա դահճապետն. « Ես յառաջագոյն իսկ  
ասացի, եթէ կարի սոսամբակ ոմն ես դու. ահա յայտ  
եղե աւագիկ, եթէ յամենայն վնաս նոցա խառն էք  
դուք »: Աբրահամ ասէ. « Յոր վնաս »: Դահճապետն ա-  
սէ. « Առաջին ի մահ մոգուցն, ապա և յայրն ամե-  
նայն »: Աբրահամ ասէ. « Այդ ոչ միայն ի մէնջ է, այլ

1. Գրուահ<sup>1</sup> քրէական յանցաւոր ըստ կերէն բառ կը համարէ զոտ. է մէրբուժն  
Առձեռն բառարանի. կարելի չեղե մեզ յերիձ ոք նմանին գրուամի, բայց սոքա-  
ստուգել այս բառիս ծագումը: Պօլսոյ արաբական են:  
Եթիրորդ սպազրին լուսաբանողը պարա-

ըստ կարգի և ձերոց օրինացդ, թաղաւորք ձեզ տան հրաման, և դուք ի ձեռն ձերոց սպասաւորացդ դորձեք»:

108. Գահճապետն ասէ. «Ի Միհր աստուած երդուեալ իմ՝, խստագյն ևս խօսիս քան զվարդապետն քու. յայտ է եթէ վնասակարագոյնք ևս էք դուք: Արդու է հնար ձեզ ասլրել ի մահուանէ, բայց եթէ երկիր պագանիցէք արեգական, և կատարիցէք զկամն օրինացմերոց»:

109. Խորէն ասէ. «Յայժմ իրրե զմարդ չարախօսէիր, և արդ իրրե զշան անպիտան ընդ վայր հաջես: Եթէ զցր արեգական ականջք, դու տայիր նման թշնամանս դնել. արդ նա բնաթեամբ անզգայ է, և դու չարութեամբ անզգայագոյն քան զնա: Յիմ աեսեր զմեզ պակասագոյն քան զհարսն մեր. մի բանիւք զփարձ տռնուլ կամիս զմեր, այլ հանդէս ալսա քում չարութեանդ և մերում բարութեանս, և ամաչեցեալ գտանի հայրն քու սասանայ, ոչ միայն ի մէնջ՝ որ կատարելագոյնքս եւիք, այլ և որ կարի փոքրիկն թուի քեզ, նու զիցէ վերս սաստիկս յոդիս և մարմինս քու»:

110. Զայս իրրե լուսւ գահճապետն, սրամնեալ բարկացաւ ի վերայ նոցա: Ետ քարշել չարագոյն քան զաւացինան. և այնչափ սասամիկ քարշեցին, մինչեւ բազմաց կարծիք եղեն՝ թէ մեռան: Խոկ իրրե ժամք երեք ի վերայ անցին, դարձեալ խօսել սկան երկրպետնն և տան. «Փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զցաւս մարմնոյս առ մեծ ուէրն Աստածոյ, որով կատարեցան հարքն մեր հոգեսրք: Համբա, մի դլար և մի դադարեր, այլ զոր ինչ առ նսայն արարեր, զնոյն և առ մեզ կատարեաւ: Եթէ չարագոյն թուին քեզ դորձք նոցա, կըլին և զմերս համարեսնիր. զի նոքա բանիւք հրամայեին, և մեք զործովք զարդիւնան կատարէաք»:

111. Յայնժամ ևս առաւել զայրագնեցաւ ի վերայ նոցա, և հրամայեաց զմահու զան<sup>2</sup> հարկանել: Եւ առ

1. Տես Միհր եացդն էջ 120-121. և  
3. թ. 66.

2. Մահու զանը՝ ձեծելով մեռցնել

շեր. այլ կիսամեռ ձգելու չափ ձեծ մը.  
որովհետեւ աբբայն՝ աղանանել հրամայած

շեր:

մի մի ի նոցանէ փոխեցաւ վեց վեց ոյր ի դահճացն։  
Եւ մինչ գեռ կիսամեռք յերկիր անկեալ գնէին, հրա-  
մայեաց զերկոցունց ականջն մօտ կարել։ Եւ այնպէս  
ըրեցին, որպէս թէ չիցէ լեռ ի տեղունցն։

112. Զարթեան որպէս ի քնոյ ի սաստիկ հարուա-  
ծոցն, սկան աղաչերով պազաւանս մատուցանել, և տ-  
սեն. «Ազաշեմք զքեղ, քաջ զինուոր թագաւորին, կամ՝  
կատարեա զմեզ իրրի զհարսն մեր մահուամբ, և կամ՝  
արտ զպատուհասդ լոս օրինակի վերջնոց։ Զի ահա  
բնելիք մեր առողջացան զանախաւարութիւն երկնաւոր,  
իսկ հոսոսելիքս գեռ ևս աստէն ի տեղւոյ կան յանցո  
չարչարանաց. մի կիսապարգի տաներ զմեզ յերկնից  
բարութենէն։ Արբեցիր զմարմինս մեր քարշերով և զմե-  
լիս մեր կարելով, որբեա և զոքնաւանս մեր հասաներով։  
քանզի որշափ տպեզս առնես զմեզ երկրաւորաւս, զե-  
գեցկադպին առնես զմեզ երկնաւորաւն։»

113. Ետ պատասխանի հեղութեամբ դահճապեան և  
առէ. «Եթէ և այլ յամեմ եռ առ ձեզ մօտ կարսի, կար-  
ծեմ եթէ և աշակերտէք զիս ի ձեր յամառութիւնդ։  
Զի ահա արդ և զփորհուրդս արքունի ի վեր հանեմ  
ձեզ։ Յայդ վայր եղի հրաման պատուհասիդ ձերայ, և  
ի վերաց գորին պատուհասին երթալ ձեզ յԱսորեսան,  
և լինել ձեզ մշակ յարքունիս. զի որ ընդ ձեզ հայեսցի,  
մի ի զմին յամառութեան զնդեսցի ընդդէմ հրամա-  
նաց թագաւորին։»

114. Ասեն ցնա երանելիքն. «Դու զմեր երկիրս կի-  
ապործ թողեր, մեք յարքունի երկիրն կէս մարմեռովք  
մերսիք ոչ վաստակեմք։» Իրրի զայս լուսու դահճա-  
պեան աղաչեաց զզինուորան՝ որ տանեին զնոսա, և առէ.  
«Միայն աստի գուք առէք զնացէք, և հասեալ յԱս-  
րեսան՝ որ կամ իւրեանց է և շրջեսցին։»

115. Այս են Հայոց խաստավանողք, որ զիսեզութիւնն  
և զշարչարանան խնդութեամբ ընկարան յանձինս իւ-  
րեանց։ Եւ վասն զի վրխպեցին ի սուրբ մահուանէն,  
սովով և արտմնւթեամբ երթային զերկայնութիւնն ձա-  
նապարհին։ Ոչ ծանր թուէին նոցա կապանք սովիցն և  
ձեռացն, իրրի զայն՝ թէ ընդէ՞ք ոչ եղաք արժանի հա-  
ւասարել ընդ քաջ նահաստակոն։

116. Եւ իրրե տարան հասուցին զնոսա յերկիրն թարելացւոց, ի գաւառ մի զոր Շահուղն՝ անուանեն, թէպէտ և էին յարգունի պատուհասին, սակայն և յայտ և զազո մեծապէս ընկալեալ եղեն ի բնակչաց աշխարհն: Սակայն երանելիքն և յայնմ յոյժ տրամադին էին, իրր այն եթէ տակու վաստակեցաք և մեծապէս հանգչիմք. և հանապազ ի նմին զղջման կային:

117. Եւ անդէն թեսակոխէին տեսանել զսուրբ կապանն նախարարացն<sup>2</sup>, լինել սպասաւոր մարմնաւոր պիտոյից նոցա: Իմացուցին զայս մեծամեծաց աշխարհին, որք էին ի նմին սուրբ ուխտի քրիստոնէութեանն: Եւ հաւանեալ ասենեցուն մեծամեծաց և փողունց՝ ազդ առնել ամենայն երկրի, զի հաճոյ թուեսցի ամենեցուն՝ ի ձեռն մարմնաւոր պիտոյիցն կցորդ լինել սուրբ կապելցն ի հեռաւոր օտարութեանն:

118. Եւ այսպէս ամ՝ յամէ ժողովէին ըստ խրագանչիւր կարի մարդկանն, ոմն սակաւ և ոմն շատ, ոյր զինչ և ի ձեռս պատրաստութիւն լինէր, եթէ գրամոց և եթէ գահէկանաց<sup>3</sup>, ժողովէին կազմէին տային յերանելիսն՝ տանել նոցա: Եւ այսպէս յարբանեկութեան կային, մինչե տասն ամն՝<sup>4</sup> լցաւ սպասաւորութեանն:

1. Փարպեցին կը գրէ Շաբուշ. է Շաբուր կամ Շամբուր ի Պարսու յառ բեկլից Շիրազոյ, որ գանուեցաւ աւելքակը արքունի ասպարանից: Է և Շեյշու քաղաք կամ Առաջ Շեյշու յաջակողմն Եփրատոյ, ի հարաւոյ նախկին Բարեւոնի:

2. Կապանք ըսեւով կ'իմանայ ոչ միայն նախարարաց բանգարգելութիւնը, այլ և զրանի ծառայութիւն նոցին ի բանակին որ ի Հրեւ:

3. Մեր նախնիք դանեկան և գրամ շատ անգամ անխտիր գործածած են (Տես էջ 217 ծանօթ. 2) թէպէտ ի սկզբան տարբեր սասակներու յատկացեալ անուններ են: Եղիշէ ասա կը թուի զանազանել: Գրամ կամ պարսկերէն տիրհամ է. Ա. շափ կը ու որ գրեաթէ հա-

շասար է արդի Տաճկաստանի տիրհէմի. ըստ Եիրակացւով (Ե դար) գրամ է 6 դանզ և դանզն՝ 12 զարի: Բ. գրամ արծաթի նոցին կշռով. այս է 65–70 հարիւրդք ֆանիքի, կամ շուրջ 115 փարս ոսմանեան: — Դահեկան աստանոր իրրե պարսկերէն տանիսն:

Համարական

գործածած կ'երեի, որ սոկի գրամի մը անունն էր. և որպէս Պարսիկը ասեն տիրհէմ ու տիբար և խմանան ։ զրամ արծաթի և սոկի ։ Եղիշէ ալ ։ Եթէ գրամոց և եթէ զահեկանաց ։ ըսեւով կը հասկնայ արծար եւ ոսկի սուակ իսկ տիբար մէկ ու կէս տիրհէմ կշռով ոսկի գրամ մի էր, այս է 15 ֆանք:

4. Տան ամ՝ մինչե ց464. եթէ Վենդեանց նահատակութենէն անժիշտապէ ետքը արտորուեցան:

119. Եւ վասն զի յոյժ խստագոյնս պահեին ի ջերմացին, և անդադար էին ի ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ, ընդ Մեշովսկի՝ և ընդ Քաշկար և ընդ ամենայն Ասորեստան և Խուժաստան, սաստիկ տապով հարեալ ի խորշակէ մեռանէր առքըն Խորէն, և աւանդեալ լինէր ի ընակչաց աշխարհին ընդուրը վկայմն:

120. Իսկ երանելին Արբահամ կոյր ի նմին առաքինութեան անդադար, և զամենայն տուրս հաւասացելոցն շրջէր ժողովէր և տանէր ի մեծ հեռաստանն, և ինքն մատակարարէր ըստ խրագանչիւր կարօտութեան: Եւ այնպէս յերկարեցաւ մինչև յերկոտասանիերորդ ամին պատժաւորացն<sup>2</sup>, մինչև աղասիել զնա միարան ամենեցուն, զի հաւանեացի երթալ յաշխարհն Հայոց. զի ընդմունել նորա առ նոսա ի նման տեսցեն և զքաջ նահատակմն՝ որք կաստարեցան սրով, ի նման տեսցեն և զսուրը կապանս չարչարանացն:

1. Մեշովսկի է աշխարհ փոքր ի Պարս ըստ աշխարհագրութեան Խորենացւոյ. Լ.Բ. միանգամայն և մայրաքաղաք այդ աշխարհիի: Ըստ Յոյն և Հառմենյեցի պատմագրաց է Մէսեն անուն հահանգիդ: Իսկ քաղաքն կոչէր Charax, որ լճորդ կամ ազաւակեան թուի արամական քարաց և հայերէն «քաղաք» բառի: Սասանեանց օրերը կը կոչուէր Քարաք-Մէշուն, այս է «քաղաքն Մէշուն»: Կամ սոսկ «Մէշուն», որպէս զնի ի թալմուտ: Ազուրինեւ ևս կը յէլատակէ երկուս աւանն ի մերձակայս Պարսոյն Ճամակ և շուշու: Այժմ Շամի էլ Արագի մօսերը գտնուող Մանդէացիք՝ Մէշունի հին արամական բնակչաց սերունդն էն: Տես Le Muséon որ հրատակի ի Լուգէն՝ Ապրիլ 1890. և Ահե-Մարթէնի Géographie et Hist. de la Mésène et de la Characène: Է այժմ Մէշուր յեզր Պարսկային ծոցոյ: — Քաղիար: ։ Նշիմացիք որ կուին Քուստիկը խուժաստան, յելից կալով Դիկայքայ և ի մակոց Պարսիքն լաւագոյն էին քան զայս գաւառաց աշխարհին: Հատ. 9. 318, 320:

2. Այս է նոխարարաց որք գարձան յերկիրն Խորեանց 463ին: Ոսք աղաւեցին զԱրբահամ երթալ ի Հայու:

121. Եւ յորժամ՝ մարտիրոսք և խոսափանողք և կապեալք նովաւ տեսանին, նովաւ օրհնի աշխարհն ամենայն, նովաւ օրհնին և տղայք նոցա յաճամն, նովաւ զգաստանան երիտասարդք նոցա ի որբութիւն, նովաւ համեստանան ծերք նոցա յիմաստութիւն։ Նովաւ ուստինին իշխանըն նոցա զմարդասիրութիւն, նովաւ անկանի գութ յԱստուծոյ ի սիրտու թագաւորին՝ շինել և խաղաղութիւն առնել բոլոր աշխարհին։ Նովաւ եկեղեցիքն պարծին իրքի քաջ և կատարեալ զինուորաւ, նովաւ վկայարանին զարդարին, նովաւ և վկայքն ցնծացեալ բերկրին։ Նովաւ և գաղտն Աւարոյքի պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձրեարեր ամնցոց, այլ ի սուրբ և յարինաբուխ վկայից ցանեալ և ցրուեալք սպիտակութիւննք սուրբ սոկերացն։ Յորժամ՝ կոխեսցեն ասենավաստակ ոոք խոսափանողին զայնասարած տեղու պատերազմին, յորժամ՝ կենդանի մարտիրոս ընդնա շրջեացի, կենդանի առ կենդանիս երթեալ՝ ամենայն աշխարհին կրկին լինի կենդանութիւնն։

122. «Գիտեմք, ասեն, յորժամ՝ տեսցեն զատ ամենայն միայնակեւացք աշխարհին հայոց, սովաւ յիշեսցեն զհոդեսր գունդու պատերազմնացին, որ փախանակ մեր, ասեն, ետուն զանձինս ի մոհ. և հեղին զարիւնու իւրեանց ի հաշտաթիւն պատարագ Աստուծոյ։ Սովաւ յիշին սուրբ քահանայքն, որք խոզիսղեցան յօտարութեանս և ցածուցին զարտմասութիւն բարկութեան թագաւորին։ Սովաւ թերես զի և զմեր կապանս յիշեսցեն, և ազօթս առնելով խոզբացեն յԱստուծոյ զի գերեզարձ լիցի մեր անդրէն ի հայրենի երկիրն մեր։

123. «Քանդի յոյժ անձկացեալ եմք՝ ոչ միայն ըստ մարմաց կարութեան, այլ առաւել տեսանել զաւրը եկեղեցին մեր և զարբասէր պաշտօնեայսն մեր, զոր ի նմու կարգեալ հաստատեցաք։ Եւ եթէ միւսովս՝ յաջուղեսցէ սեղ Աստուծած երթալ ինուլ զկարօսութիւնն մնացելոցն, գիտեմք զի և մեզ բանայ Աստուծած զգուան ու

1. Ամեսովս՝ մակբայարար գործածուած միւս ևս, միւսանգամ. այս ձեռ բառապրոց մեջ շպանմէք. Եղիշեալ շա-

խարարաց բերանը գրած խօսքերը գրութեանս ամենէն գեղեցիկ հատուածներէն մէկն է։

գործութեան իւրոյ՝ ընդ նոյն ճանապարհ երթալ, ընդ որ ուգ սրբոյս կարապետեն »:

124. Զայս խորհուրդ խորհելով աստուածաշնորհ նուխարարացն, սեծաւ թախանձանօք ածէին զխառառիանողն ի հաւանութիւն: Եւ վասն զի ոչ էր սովորութիւն երբեք բարսցն ընդդէմ դառնալ, ըստ առաջին սովորութեան և յայսմ վայրի վութացաւ վազվազակի կատարել զհրամանն զմիաբան հաւանեցելոցն յաստուածային առաքինութիւնն: Եկն եմուտ յաշխարհն Հայոց:

125. Փութացան և ելին ընդ առաջ նորա վազվազակի արք և կանայք, մեծամեծք և փառունք, և առենայն բազմութիւն ազատաց և շինականաց: Անկանէին առաջի, փարէին զտիւք և զձեռօք սրբոյն, և ասէին. « Օրհնեալ Տէր Աստուած ի բարձունս, որ առաքեաց մեզ հրեշտակ յերկնից՝ բերել մեզ աւետիս յարութեան, զի լինիցիմք ժառանդք արքայութեան: Զի ահա ի քեզ կերպարանեալ տեսանեմք զամենեսեան զհրաժարեալսն յուսով յարութեամբ, և զկապեարսն ակնկարութեամբ արձակելով: Ի քեզ տեսանեմք և զաշխարհն շնութիւն խաղաղութեան. քե եկեղեցին մեր ցնծացեալ բերկրին, և քե սուրբ վկայքն մեր անդադար լիցին մեզ ի բարեխօսութիւն առ Աստուած: Օրհնեա զմեզ, սուրբ հայր մեր. գու ես բերան հանդուցելոցն, խօսեաց ընդ մեզ յայտնի օրհնութեամբ, զի յոդիս մեր լուիցուք ի ծածուկ զօրհնութիւնս սրբոցն:

126. « Հորդեցեր ճանապարհ այնոցիկ՝ որ անձկացեալ էին գալ յերկիր իւրեանց, խնդրեա յԱստուածոյ՝ զի սոէպ եկեցեն զէւս սուրբ կարապետիութ: Եւ սրպէս հորդեցեր զարդելեալ ճանապարհ երկրի, բաց և յերկինս զգովից մերոց. զի և մեր մեզառուաց մոցեն պազատանք առաջի Աստուածոյ ի բարեխօսութիւն նոցին կապելոց. և մինչ գեռ եմք յելանելի մարմինս, որպէս տեսաք զբու զերանելի սրբութիւնդ, տեսցուք և զսիրելի անձկալիսն մեր, որ ի բազում ժամանակաց հարեալ և պաշարեալ եմք յոդիս և մարմինս սեր: Այդ հաւատամք յանսուտ յոյսն, զի սրպէս լցեալ կատարեցաւ ի քեզ տեսիլս ի սուրբ սէր քո, այսպէս և ընդ մօտց ունիմք տեսանել զծմարիս վկայոն Քրիստուի, որ

**Հանապազ խանդակաթ եմք ի տեսիլս երկնաւոր գեղոյ նոցա :**

127. Բայց երանելի խոստովանողն, թէպէտ և այս-  
պէս սիրով ընկալեալ եղեւ յամենայն աշխարհէն, ոչ ինչ  
կամեցաւ ամենեին մերձենալ առ ոք ըստ մարմնոյ կա-  
րօտութեան, այլ ընտրեաց իւր տեղի՝ մի զատ յամե-  
նայն բազմամբուխ ժողովրդոց, և առաքինի եղբարրք ե-  
րիւք կատարեաց զիեանս իւր մեծաւ ճգնութեամբ:

128. Զոր եթէ կամիցի ոք ի կարդ արկանել, գժուա-  
րաւ կարասցէ ասել զվարս առաքինութեան նորա: Զի  
եթէ զաքնութիւնն ասիցես, իրբեւ զիանթեղ անչէջ կայր  
զամենայն գիշերս. և եթէ զսակաւապիսութիւն կերա-  
կրոցն, համարեաց՝ եթէ զանկերակուր հրեշտակացն բե-  
րէր զնմանութիւն: Եթէ զհեզութիւն ցածութեանն կա-  
միցիս ասել, ոչ զոք ի կենդանեաց կարիցես զտանել  
նման նմա. և եթէ զանընչասիրութիւնն կամիցիս ասել,  
գարձեալ զոր օրինակ չպատրի մեռեալ ի կարասի, զնոյն  
օրինակ ճշմարտութեամբ և առ երանելին խմասչիր:


129. Անյազական ձայնիւ հանապազորդեալ էր ի  
պաշտաման, և անհատ ազօթիւք միշտ ընդ Աստուծոյ ի  
բարձունս խօսէր: Աղ եղեւ նա անհամելոց, և խթան  
ընդուասուցիչ ամենայն հեղգացելոց: Դարովեցաւ նովաւ  
ագահութիւն, և կարի յոյժ ամանեաց նովաւ շուայտու-  
թիւն որկորամոլութեան: Ասողջութիւն եղեւ նա աշխար-  
հիս չայց, և բազում վիրաւորք ի ծածուկ նովաւ գր-  
տին զառողջութիւն: Եղեւ նա վարդապետ կատարեալ  
վարդապետաց իւրոց, և սուրբ հայր խրատոսու հարանց  
իւրոց: ի լուր համբաւոյ նորա խմասնացան տղէպք,  
և ի տեսիլ մերձաւորութեան նորա զգաստացան լիտիք:  
Բնակեալ էր ըստ մարմնոյ ի նեղ խցկանն, և ահ սըր-  
բութեան նորա անկեալ էր զհեռաւորօք և զմերձաւորօք:

1. Հայոց Զօրոյ կամ Երուանդունեաց  
զաւառին մէջ ի խօշազ գետոյ ժամաւ  
շափ հեռի՛ անմարդաբնակ ձոր մը ըն-  
տրած էր. ուրանոր մահուանէն ետք ի  
ստորոտ լերանց մենաստան մը շինուե-  
ցաւ հանգերձ տաճարաւ, որ կանգուն  
կայ տակաւին թէպէտ ամայի. անդ ամ-

փոփեալ մեան Աբրահամու և իւր ընկե-  
րաց մարմինքը. և տարին միանգամ  
Համբարձման տանին, ուխտաւորք կ'եր-  
թան ի մենաստան՝ որ ժամաշափ հեռի՛  
է ի խէրայ վանոց (Միրախորեան-  
հատ, Ա. Էջ 165):

**Զարհուրեցան դեք և փախեան ի նմանէ, իջին հրեշտակը և բանակեալ էին զնովաւ:**

130. Յոյնք երանի ետուն վասն նորա աշխարհիս Հայոց, և բազում՝ բարբարութ փութացան տեսանել զնա մարմնով: Սիրելի եղեւ նա սիրելեացն Աստուծոյ և ըգրագումն ի թշնամեաց ճշմարտութեանն ած ի հաւանութիւն սուրբ սիրոյ: Մկիզբն արար առաքինութեան անդըստին ի տղայ տիրոց իւրոց, և նովին առաքինութեամբ կատարեցաւ ի վախճան կենաց իւրոց: Որպէս ոչ խառնեցաւ ի կարգս սուրբ ամումնութեան աշխարհիս, այսպէս չեմուս ընդ մարմնաւոր պիտոյիւք ամենայն ապականացու իրաց աշխարհիս: Եւ եթէ պարտ է պարզաբար ասել, որպէս փոխանակեաց զպէտու մարմնոյ ընդ պիտանացու հոգեոր իրաց, այսպէս փոխադրեալ եղել յերկրէ ի յերկինս:



ԱՆՈՒԱՆՔ ՆԱԽԱՐԱՐՈՅՆ,

ՈՐՔ ԿԱԼՈՅ ՅՈԺԱՐՈՒԹԵԱՄԲ ՎԱՍՆ ՍԻՐՈՅՆ ՔՐԻՍՏՈՒ

ԵՏՈՒՆ ԶԱՆՁԻՆԸ Ի ԿԱՊԱՆԸ ԱՐՔՈՒՆԻ

131. Յազգէն Սիւնեաց երկու եղբարք Բարդէն և  
Բակուր, յազգէն Արծրունեաց Ներշապուհ և Շաւասպ  
և Շնդին և Մեհրուժան և Պարզե և Ցաճատ, յազգէն  
Մամիկոնէից Համալասպեան և Համալասպ և Արտաւազդ  
և Մուշեղ, յազգէն կամսարականաց Արշաւիր և Թառ-  
թուլ<sup>1</sup>, Վարձ<sup>2</sup>, Ներսեհ և Աշոտ, յազգէն Ամաստնեաց  
Վահան և Առանձար և Առնակ, յազգէն Գնաւնեաց Ա-  
տոմի, յազգէն Դիմաքսենից Թաթուլ և Սատոյ, երկու  
ևս այլովք ընկերօք. յազգէն Անձաւացեաց Շմաւոն և  
Զուարէն<sup>3</sup> և Առաւան, յազգէն Առուեղենից<sup>4</sup> Փասպակ  
և Վարազգէն և Դաղ<sup>5</sup>. յԱրծրունեաց առհմէն Ապրսամ,  
ի առհմէն Մանդակունեաց Սահակ<sup>6</sup> և Փարսման, յազ-  
գէն Ցաշրացեաց Վրէն, յիշափաննեան տանէն<sup>7</sup> Բարիկ  
և Յուխնան:

132. Այս երեսուն և հինգ արք<sup>8</sup>, են որ յաւագ  
նախարարացն, և են որ ի կրսերագունիցն, սակայն ա-  
մենկըեան ըստ մարմնոյ են նախարարացունք, իսկ ըստ  
հոգեոր առաքինութեանն ասենկըեան երկնային քաղա-  
քացիք: Եւ բազում ևս այլ ազատ մարդիկ, են որ յար-  
քունի տանէ, և են որ ի տանէ նախարարացն իսկ նո-  
ցուն, նիզակակիցք և մարտակիցք քաջ՝ նահատակացն:

1. Փարպեցին կը գրէ թաթ:

2. Վարժ. Փարպեցին՝ Վարժայ. և  
Հյիշեր զներսէն և զԱշոտ: Արտա- հին  
պարսկ. է անբազց, որ չքաղցիք:

3. Զուարեն չկայ ի Փարպեցի:

4. Փարպեցին՝ յազգէն առաջին Ա-

ռաւեղենից<sup>9</sup>:

5. Փարզ. Դատ. Նոյնակէս և Թէոդո-

սիոյ տպագիրն:

6. Փարպեցին Հյիշեր զԱշակ:

7. Փարպեցին՝ «յազգէն Առփաննից  
Բարիկ և Յուհան »: Սահակայ զահնամնա-  
կին մէջ՝ «Առփաննն » որ Փարպեցւոյ  
համաձայն է: Խռորզակ զահնամնակին  
մէջ՝ «Առփաննիք »:

8. Երեսուն և հինգ արք յանուանէ  
յիշեալքն. Փարպեցին միայն 31 արտ կը  
յիշէ:

Եւ ամենեքին սոքա կամօք մատնեցան ի սուրբ կապանս չարչարանացն:

133. Այլ մեք առ այժմ ոչ ընդ այս եմք զարմացեալ միայն, զի կամօք չոգան մոխն ի վորձութիւնն, այլ առաւել ընդ այն եմք պանչացեալ, զի մարդիկ փափուկ իրրե զնոսա ընդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց՝ եղեն բնակիչք խորշակաբեր դաշտաց: Որ զօրէն ազատ էրէց շրջէին ի մէջ ծաղկաբեր լերանց, ընկեցան ի բոցակէղ աշխարհն արևելից կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք<sup>1</sup>: Հաց նեղութեան և ջուր կարօտանաց, խաւարարդել ի տուէ և անլոյս ի գիշերի, անվերարկուք և անանկողինք, գաղանաբար գետնախշտիք լինէին զինն ամ և զվեց ամիս<sup>2</sup>: Եւ այնպէս մեծաւ խնդութեամբ տանէին զնեղութիւնն, զի ամենեւին ոչ որ տրատէնց հայհոյութեան ի բերանոյ նոցա լուաւ, այլ յորդառատ գոհացողութիւն ըստ նմանութեան բարեկեց ցիկ մարդկան, որ են յաստուածպաշտութեան:

134. Եւ մինչ գեռ էին յայնպիսի նեղութեան, կարծիք եղեն ի միսս թագաւորին՝ թէ առ յոյժ վշտին ձանձրացեալ են դառնութեան կենօքն իւրեանց: Յղեաց առ նոսս զմեծ հազարապետն և ասէ: « Գոնեայ յայսմ հետէ զգաստացայք յանձինս ձեր, և մի կայք ի նոյն յամառութեան. պագէք երկիր արեգական, և արձակիք ի շարաչար կապանացդ, և ոնիք անդրէն զիւրաքանչիւր հայրենի կեանս ձեր »:

135. Եսուն պատասխանի երանելիքն և ասեն. « Առ փորձ ինչ եկեալ հարցանես ցմեղ, եթէ արդարե թագաւորն իսկ յոյեաց զբեզպ »: Երդուաւ հազարապետն և ասէ. « Զիք այդը բան աւելի կամ պակաս՝ որ ոչ ի բերանոյ նորա ելեալ է »: Ասեն ցնա անդրէն: « Որք

1. Կախարաբը նախ ի Տիգրն բանապեցան. ապա ի Արկան և քանի մը տարի աւ ի նիւշապուհ: Խորսանի կիման՝ գրիցը բարձրութեան պատճառաւ՝ զոլ և քաջառոցք. խորշակաբեր և բոցակէզ սորա շյարմարիք. բայց Տիգրնի և Արկանայ համար չիշդ են:

2. Կախարաբը ի կապանս մատնեցան

451ի վերջերը կամ 452ի սկիզբները և գարձան ի Հայո 463-464. ուրեմն շուրջ 12 տարի թացին յաբսոր: — Այդ իննու վեց տարին կապեալ եղած միջնորդին և որ կը լմնայ 460ին. այս է Յազկերտի մահուանէն երկու երեք տարի ետքը. թացած երեք տարին պարսկական այրուձիոյն մէջ ծառայեցին ի Հրե:

միանդամ աշակերտեալ են ճշմարտութեանն, ոչ երբեք փոխին ի նմանէ. այլ որ ենն՝ նոյն կան: Միթէ յայնժամ առ չիմանալ ինչ պնդեցաք, և այսօր նեղութիւնս իմաստնացոյց ինչ զմեզ. այլ ոչ այնպէս: Այլ զղջումն մտաց մերոց այս է. եթէ ընդէր ընդ առաջինսն չկատարեցաք զկեանս մեր: Բայց արդ աղաւեմք դքեզ և քեւ զժագաւորն ձեր, մի այլ վասն այդպիսի իրաց հարցանէք ցմեզ. այլ զինչ եղեալ է ի մտի ձերում վասն սեր՝ կատարեցէք»:

136. իբրև բուաւ զայս մեծ հազարապետն, յոյժ գովեաց ի միսս իւր զպնդութիւն հաստատութեան նոցա. և յայնմ հետէ սկսաւ արկանսել սէր ընդ նոսա՝ իբրև ընդ սիրելիս Աստուծոյ: Եւ բազում բանիւք ողոքանօք ածէր զժագաւորն ի հաւանութիւն, զի թողութիւն արացէ նոցա ի կապանացն իւրեանց: Զի թէպէտ և փոխեցաւ նա ի գործոյ հազարապետութեանն արքունի, և ի բազում իրս գտաւ վնասակար, ինքն իսկ յանձն իւր կրթէր զաւեր աշխարհին Հայոց, վասն որոյ և մեծաւ անարգանօք յուղարկեցաւ ի տուն իւր, սակայն զկապելոցն ոչ երբեք չարախօս կամէր լինել մինչև ցօր վախճանի կենաց իւրոց:

137. իսկ յերանելեացն բազումք, ի նոցանէ՝ որ մանկադոյնքն էին, ուսան զդպրութիւն հայրենի աշխարհին իւրեանց, և եղեւ նոցա այն կերակուր հօգեոր, որով զանձինս քաջալերէին և զընկերսն միսիթարէին: Եւ այնպէս զմայլեցան ի միսս և յոգիս իւրեանց, զի և որ ձերագոյնքն էին ի նոցանէ, փափկացան մատաղացան մանկացան: Զի թէպէտ և զպրութեան ժամանակքն անցեալ էին, սակայն բազում սաղմոն ի բերան առեւալ՝ հոգեսր երգակից լինէին մատաղերամ բազմութեան մանկուոյն:

138. Եւ այնպէս բարձրացուցանէին զպաշտօնն սըրբութեան, մինչև ոմանկը ի դառն դահճացն, մեծապէս քաղցրութիւն անկաննէր ընդ լսելիս նոցա, և որչափ ի ձեռա իւրեանց էր՝ արտաքոյ արքունի հրամանին դիւրութիւն առնէին նոցա. և սէր իննամոյ ունէին առ ամենեսեան, և բազում անգամ զմարմնաւոր պէտս նոցա լնուին նորք: Մանաւանդ զի նշանք եւս բժշկութեան յԱստուծոյ

յաջողեալ լինէր ի ձեռս նոցա, որպէս զի բազումք ի գիւահարաց սրբեցան ի նմին քաղաքի ուր կապեալքն կային։ իբրև ոչ ոք դոյր առ նոսա քահանայ<sup>1</sup>, դիմէին առ նոսա հիւանդք և ախտաժեռք քաղաքին, և ընդունէին ի նոցանէ զիւրաքանչիւր ցաւոց զառողջութիւն։

139. Նա և որ մեծ իշխանն էր աշխարհին<sup>2</sup>, զոր և չարեւզոմ Շապուհ անուանէին, և նմա իսկ յանձն էին ամենայն պատմաւորքն, մեծապէս գութ սիրոյ էարկ առ ամենեւեան։ Զծերս ի նոցանէ առ հարս ունէր, և զման կապոյնս ի նոցանէ իբրև զսիրելի որդիս գգուէր։ Բազում անդամ գրեաց և եցոյց յարքունիս զվիշտ նեղու-

1. Աթին կամ պակաս թուի պարբերութիւն կամ աշխարհին։ Փարպեցին կ'ըսէ. «Հնորհեւութ աշոյ բարձրելոցն բազումք և ազգի ազգի բժշկութիւնս ախտաժետաց ի նըշխարաց սրբոցն, զոր ունէին քահանայքն՝ որ առ նոսա էին՝ գաղտ առ ինքեան»։

2. Այդ աշխարհն Հրեն է. Աէն-Մարթէն կարծէ թէ օրինակը աղաւազեալ է ասու և պէտք էր ըլլալ՝ «Նա և որ մեծ իշխանն էր Հրեն աշխարհին, զոր և Շղոմշապուհ անուանէին»։ Փարպեցին ասէ. «Իշխանն Հրեայ՝ Հրեւէնոմշապուհ»։ Ըստ մեզ բնագիրը փոփոխելու հարկ շկայ. որպէտեւ արեւելից մէջ սովորութիւնն է մինչեւ ցայծմ նահանգի մը անունը աւելիցներ կուսակալին անուան վրայ. երբ սա երկար ժամանակ անդ բնակեր և զիւր իշխանութիւնն մեծամեծ գործովք պայծառացուցեր է։ Փարպեցոյ վերոպրեալ յիշտակութիւնդ ալ զոյն կը հաստատէ, նոյնու և Եղիշեայ «զոր և... անուանէին» ըսելը, որ սոսկ անունէն աւելի բան մը կը յայսոնէ։ Բայց Հրեն չէ Ուկ քաղաքն, որպէս կարծեցին Աէն-Մարթէն և Լանկուա, այլ Հերոս Աֆրանաց։ Արդէն իսկ անսանք, որ պարսկական քանակը Հերու Հերագութեան կողմէ մի կար Արքէ յորջորջեալ։ — Հերագոյ մէջ Յաղկերս և նորս յաջորդքը զօրաւոր բանակ մը կը պահէին՝ դիտանան զսպելու համար, վասն զի այդ նահանգդ յոյժ բերբի և արքասաւոր ըլլալով կարելի էր անդ բազմախումբ զօրաց ուտեստ հայթայթել։ Այս պատճառաւ այժմ իսկ ինձոր հեռութեան կայ ընդ մէջ նուսաց և Անզգիացցց.

Եսդայի մէջ՝ Հրայու է անուն Հերագոյ։ Արդի պարսկերէնի մէջ ևս՝ հիրեվի նըշխանէկ 1 ընիկ Հերագոյ, հրեւցի. 2 գաւառաբարբառա Հերագոյ, զոր յիշտակին մահմետական այլ և այլ մատենագիրը, բայց որ կորուսեալ է այժմ։ Հերագ ի հինգերորդ պարէս և ի մեջ գարուն խորասանի, այս է Ապար աշխարհի քաղաք էր, անուանի իւր քաղաքողջ և զով օդոյն՝ գեղեցիկ պարտէզներուն և խաղողին համար։ Հին դիտացն Կերիբան կանգներ էր զնա. յետոյ կործաներ էր, և Աղեքսանդր վերըստին շիներ էր։ Ըստ պարսիկ աշխարհագրին Համուուլահայ, ըլջապատը 9000 քայլ էր. ընակիւքը զէնք և զրահ և մետաղ կը գործէին. անառիկ միջնարերդ մի ունէր Համիրամայ բերդ կոչուած։ Քաղաքէն երկու փարսախաւ հեռի յերան մը վրայ ատրուչան մի կար Արքէ յորջորջեալ։ — Հերագոյ մէջ Յաղկերս և նորս յաջորդքը զօրաւոր բանակ մը կը պահէին՝ դիտանան զսպելու համար, վասն զի այդ նահանգդ յոյժ բերբի և արքասաւոր ըլլալով կարելի էր անդ բազմախումբ զօրաց ուտեստ հայթայթել։ Այս պատճառաւ այժմ իսկ ինձոր հեռութեան կայ ընդ մէջ նուսաց և Անզգիացցց.

թեան կապերցն, և զառն առն իւրաքանչիւր զբարս ագնուականութեանն ցուցանէր նոցա. առաջի մեծամեծացն տառապէր, ջանացր ազգի ազգի հնարիւք, մինչեւ բազում՝ բարեխօսիւք ածին ի հաւան զթագաւորն։ Հրամայեաց լուծանել զկապանս նոցա. և բառնալ ի նոցանէ զուուգ պատուհասին, և ագանել նոցա հանդերձ՝ զօրէն նախարարութեանն։ կարգեաց նոցա ոոճիկ, և զգատրաստութիւն սպառաղինութեանն հրամայեաց յարքունուս։ Գրեաց և յանձն արար մեծ սպարապետին, զի ընդ զօրս արքունի երթիցեն ի գործ պատերազմի։

140. Եւ իրբե այս այսպէս կարգեցաւ, և կազմեցաւ նոր հրաման թագաւորին, ի բազում տեղիս՝ ուր և հասին՝ առաւելեալ զտան ի գործ արութեան, մինչեւ զովութեան հրովարտակ վասն նոցա ի գուռն տային։ Որպէս զի քաղցրացաւ խոկ մտաց թագաւորին, հրամայեաց զամենեսեսեան ածել զառաջեաւ։ Եկին և յանդիման եղին Յաղկերտի արքայից արքային։ Ետես զնոսա զուարթութեամբ, խօսեցաւ ընդ նոսա բանիւք խաղաղութեամբ, և խոստացաւ տալ նոցա զիւրաքանչիւր իշխանութիւն ըստ կարգի հայրենի պատուցն, և արձակել զնոսա յաշխարհն օրինօք քրիստոնէութեանն, յորոյ վերայ և մեծապէս էին չարչարեալ։

141. Եւ մինչ զեռ անդէն մեծաւ խնդութեամբ շրջէին ի կարաւանին առաջի թագաւորին, ի նմին ժամանակի հասանէր վախճան կենաց թագաւորին։ յինն և ի տասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ։ Եւ ընդ հակառակս ելեալ երկու որդիք՝ նորա՛ ի վերայ տէրու-

### 1. Տես Յ. Է. 35 Ճ. 1:

2. Սպարապետին Արեաց որոյ անունն էր Աշտատ, դայեակ Պերողի և հայր Յըզառվշնասպայ, որ առաքեցաւ առ նախարարն։ Վէրջին եղելութեանց ժամանակագրութիւնը յոյժ խառնակ է յէղդիչէ։ Յաղկերտի ժամանակին կ'ընծայէ ինչ որ կը վերաբերի Պերողի։ Տես Փարապեցի որ աւելի կարգաւ կը պատմէ։ Յըզառ - Վ. Հնասպ՝ որ այժմ՝ կը գրուի իզամ-կիւրակար. նշանակէ աստուածա-

### սպաշտ:

3. Ըստ Թագարիի և Միւճելիթթագարիին Յաղկերտ 18 տարի և 4 ամին և 8 օր թագաւորութիւն քշեց, որ կը համաձայնի Եղիշէի ըստ մուսի մեռաւ 457ին սկիզբները։

4. Երկու որդիք Յաղկերտի, մին Պերող՝ Ֆիրազ, մին ու Որմիզդ, մօրերնուն անունն էր Դինակ՝ որոյ պատկերը մնացած է զոհարի մէ վրայ։ (Կէօլդէքէ Պատմութիւն Սասանեանց, և Բ. Dorn,

թեանն կոռէին. սաստկանայր գործ դառնութեան պատերազմին զերկուս ամս:

142. Եւ մինչ գեռ նորա յայնմ խռովութեան էին,  
ապստամբեաց և Աղուանից արքայն՝ վասն զի քեռորդի  
էր նոցա, և ըստ կարգի հայրենի հաւատոցն՝ քրիստո-  
նեայ էր յառաջ, և Յաղիկերտ արքայից արքայ բռնի մոլ-  
արար։ Եւ նորա գտեալ ժամանակ անձինն պարապոյ,  
հարկեցաւ զանձնի մահ գնել. լու համարեցաւ մեռա-  
նել ի պատերազմի, քան ուրացութեամբ ունել զժա-  
գաւորութիւնն; Վասն այսր ամենայնի յապազումն եղի  
չարձակելոյն նոցա յաշխարհն։

<sup>143.</sup> Իսկ կրտսեր որդուսին Յաղթերափ դայեակին, Ուահամ անուն ի Մ'եհրան տոհմէն<sup>2</sup>, թէպէտ և ետես ըզ-

Versuch einer Erklärung der auf einer Gemme im Besitz des grafen S. Strogonov Befindlichen Pehlevy-Inschrift (compte-rendu de la commission Imp. arch. pour 1878 et 1879, 162 tf): **Ըստ Եղիշեայ և Փարսպեցով՝ Պերող կրօքը էր.** Խակ ըստ պարսպիկ պատմագրաց՝ աւագ եղբայրն էր: Միիրխօնստ կը պատմէ թէ Յազկերսոն Որմզդայ խելքին և բնաւորութեանը աւելի կը հաւելք քան Պերողին, և զԱրմիգդ միշա իւր քովը կը պատէր: Մինչ զՊերոզ կազմակալ անուաներ էր Հարաւային Խահանգաց: Խնչգէս որ ալ ըլլոյ, յայտ է թէ նորա մահուանէն ետքը երկու եղբայրը իրարու հետ պատմագրացն: Որմիգդ ամեռախ տիրացաւ և Պերոզ սուփառեցաւ փափէիլ յաշխարհէն և ապահնիլ Փուշանաց արքային քով, որոյ անունն էր Խոշիշիազ: Սա սիրով հիւրընկալեց զՊերոզ և նորա բնակութեան տեղի որոշեց զԲալագանք քաղաք: Անդ կեցաւ Պերոզ երկու ասքին աւելի: Որմիգդ չկրցաւ կառավարել և գոհացնել զժողովուրդս իւր. յորոց շատերն եկան Պերոզի քով նիզակակից ըլլալու նմա: Խօսնիւալ պատմէն առիջ սեպեց, 30 000 զօրք առօւն Պերոզի, որ եկաւ թագա-

Նորութիւնը առաւ Որմղդայ ձեռքէն և  
սպաննեց զնա. (Տես և Թագավորի 195):

մեղ արար. ոչ թէ մազ' օրէնստուսոյց  
այլ մոգութեան օրինաց հետեւոց. տես  
և Յ. Բ. 146. «զի ի բնէ մոզք էին»  
և այլն:

2. Ասանեանց պատմոթեան մէջ ե-  
րեք տանիք ամենէն առելի նշանաւոր ե-  
ղած են. Սուրենեանը, Ասպահապետը,  
և Միհրանը: Ասդ երեքն աւ Արշակունի  
էին ազգաւ, բայց հակառակելով անդըս-  
տին ի սկզբանէ իրենց ազգակից պար-  
թե անդրանիկ ճիւղին, որ կը թագա-  
սորեր, Ասանեան Արտաշըրի նիզակա-  
կից եղան Արտանանց գէմ և մինչև  
Արարացոց յարձակիման տանենք մեծա-  
մեծ պաշտօններ վարեցին: Միհրանեան  
ցեղը Ասպահապետի տոհմին մէկ ճիւղն  
էր: Ասանեանց օրերը Սուրենեանց ընդ-  
հանրապէս քաղաքական բարձր պաշ-  
տօններու մէջ կը փայլէին: Ասպահա-  
պետը կամ Ասպահապետ մեր Բագրա-  
տունի ասպետաց նման, նորընսիր թա-  
գաւորին զլուխը թագ կը գնէին: Ասց  
ընակութեան քաաը բաւն Պարթեաց  
երկրին և մանաւանդ թագարատանի մէջ  
էր: ուրանոր և ինքնազլուխ իշխեցին

գունդն Արեաց ընդ երկուս բաժանեալ, սակայն կիսովն գաղանաբար յարձակեցաւ ի վերոյ երեց սրգոյ թագաւորին, հար սատակեաց զգունդն. և ձերբակալ արարեալ զորդի թագաւորին, անդէն ի տեղութիւն հրամայէր սպանունիլ: Եւ զմնացեալ զօրսն ածէր հաւանեցուցանէր և առնէր միաբանութիւն ամենայն Արեաց գնդին. և թագաւորեցանէր զիւր սանն, որում անուն էր Պերոզ:

144. Զի թէպէտ և Արեաց աշխարհին առնէր մեծապէս խաղաղութիւն, սակայն Աղուանից արքայն ոչ կամէր նուաճել անդրէն ի ծառայութիւն. այլ խրամատեաց զպահակն ձորայ, և անցոյց յայս կոյս զզօրսն Մատք-թաց, միաբանեաց զմեռասան թագաւորս՝ զիւրանոր-դեայսն, և ընդգէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին, և բազում վնասա արար զօրացն արքունի: Թէպէտ և երկիցս և երիցս ետուն հրտվարտակս աղաջանաց, ոչ ինչ կարացին ածել զայրն ի հաւանութիւն. այլ զրով և պատգամաւ՝ յանդիմանէր զնոսա, վասն զուր աւերածի աշխարհին Հայոց: Յիշեցուցանէր նոցա զմահ նախարա-րացն և զշարչարանս կապերոցն: Ի վերոյ անշափ սիրոյ և վաստակոց, փոխանակ կեանս առներոյ՝ զարեւ հատէր, ատէր: Լաւ լիցի ինձ, ասէ, զնոցա չարչարանսն յանձն իմ առնուլ, քան թորուլ զքրիստոնէութիւնն:

145. Եւ իրին տեսին, թէ ոչ բռնութեամբ և ոչ սի-րով կարացաք ածել ի հաւանութիւն, զանձս սաստիկս

յետ կործանման Առանեան հարստու-  
թեան: Իսկ Միհրան տոհմը՝ մեծամեծ  
զօրավարներ տուած է. Միհր-Ներսէն  
ալ որոյ համար թագարի և Միհրանտ  
կըսեն թէ արշակունի էր ազգաւ, Մի-  
հրանեան տոհմէն էր: (Տես Խորեն.  
Փառակեցի և Պատկանեան Essai sur  
l'histoire des Sassanides էջ 28-32):

1. Այս մետասան ազգաց կամ ցեղե-  
րու անունները տուաւ մեզ Եզիզէ Յ. Դ.  
15: Այսք կը բնակէին կովկասու ա-  
րեւելեան երկու բազէին մէջ տեղը և  
ձորայ պահակին հարաւակոզմը. և ո՛ր  
կողմանէ շահ կամ օգուտ տեսնային,  
այն կոզմը կ'անցնէին. ոյժմ կ'ապստաց-

րին Աւաչէի հետ Պարաից դէմ: Տառը  
տարի յառաջ Եւասակ սոցա զարգեներ  
տալով իրեն նիզակակից ըրեր ու անսնց  
ձեռօք արգիլեր էր զշման, որ Վարդա-  
նայ օգնութեան չզան:

2. Բանձաւերէն Բաշկամ է գետպան,  
պատգամաւորութիւն. որպէս և հրա-  
ման, խորհուրդ, համբաւ, լուր: Լամ-  
երթալ զնալ + Բաղի, որոյ բառական  
նշանակութիւնն է «որ ինչ զայ առ  
(ոմն) որ կայ ընդզէմ»: Բաիզի է ըն-  
դունելութիւն անցեալ Բառան զանո-  
րայի: Այսպէս և զպատախան: կազ-  
մեալ է ի պատ և ի սախուն շնոր-  
շառութ բառից:

ետուն տանել յաշխարհն խայլանդրաց, բացին զգրունս  
Ալանաց՝ և հանին գունդ բազում ի հանաց, և կռուե-  
ցան տարի մի ընդ Աղուանից արքայի: Թէպէտ և թօ-  
թափեցան և ցրուեցան զօրքն իւր ի նմանէ, սակայն  
զնա ոչ կարացին հնազանդել, այլ և հարուածք ես մե-  
ծամեծք հասին ի վերաց նոցա, էր որ կռուով և էր որ  
ախտիւ չարչարանք: Եւ յայնչափ ժամանակաց ընդ եր-  
կարել պաշարմանն, մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ  
ոչ ոք ի նմանէ երկմտեալ բաժանեցաւ:

146. Յղեաց առ նա դարձեալ թագաւորն Պարսից.  
Զքոյրդ իմ, ասէ, և զքեռորդիդ ի բաց տուր ածել, զի  
ի բնէ մոդք էին՝ և դու քրիստոնեայ արարեր, և աշ-  
խարհդ քեզ լիցի: Խոկ պանչելի այրն ոչ ի տէրոթեանն  
վերայ կռուէր, այլ յաստուածպաշտոթեանն: Զմայրն և  
զիինն ետ տանել, և զաշխարհն բովանդակ ի բաց ե-  
թող. և ինքն զաւետարանն առ և յաշխարհէն ի բաց  
կամէր զնալ:

147. Զայս իբրի լուս թագաւորն, կարի զեզջ և  
ապաշաւ անկանէր ի միտս նորա, և զամենայն վնասս ի-  
րացն զհարբն իւրով արկանէր: Անսուս երգումն կնքէր  
և տայր տանել առ նա, եթէ յաշխարհէդ միայն մի  
զնար և զինչ ասես՝ առնեմ: Խոնդրեաց զմանկութեան  
սեպհականն, զոր հօր իւրոյ չնորհեալ էր նմա ի տղայու-  
թեանն՝ հազար երգ. առ զայն ի թագաւորէն, և նըս-  
տաւ ի նմա միայնակեցօք հանդերձ: Եւ այնպէս հանա-

1. Երբ ձորայ պահակէն անցընելն  
անհարին եղաւ, Ալանաց դռնէն (այժ-  
մեան Վշատիքաւքասի համբէն) զիսայ-  
լանդուրս մտուցին Պարսիկք. տես Յ.  
Ա. 14. ծան. 1 և Յաւելուած Ա. Յե-  
ղանակին:

2. Խմանալու է թէ զօրացը ցրուե-  
լէն եռքը իրեն հաւատարիմ մացող  
ընկերոք քաջութեամբ կը կռուէր Պար-  
սից գէմ, ու վնա կը հասցնէր նոցա.  
և թէպէտ առէն կողմանէ նեղեցին զին-  
քը և պաշարեցին, բայց դարձեալ քո-  
վինները զինքը շնողուցին:

3. Վաշէի մուրը քոյր էր Պերովի.

Յազկերս զաբքայն Աղուանից իրեն փե-  
սայ ըրած ատեն, մոգութիւնը ընդունել  
տուեր էր նմա: Բայց Վաշէ պապուն  
մահուանէն ետքը ապստամբելով նորէն  
իւր նախահարց կրօնին գարձեր և զմայրն  
և զքոյրն քրիստոնեայ էր ըրեր: —  
Քանի մը տող ստորեւ լոյիշէ կ'ըսէ թէ  
Վաշէ «զմայրն և զիինն ետ տանել»:  
կ'ըրեայ թէ Վաշէ կրակապաշտ եղած  
միջոցին զիւր քոյրն այս և Պերոզի քե-  
ռորդին իրեն կին առեր էր, որ ներեալ  
նա մահաւանդ պատուիրեալ էր ի մազ-  
դեզն օրինաց:

պաղորդեաց զինքն յաստուածային պաշտամննն, զի և  
չյիշէր ամեննեխն՝ թէ և թագաւոր լեալ իցէ յառաջ:

148. Եւ այս ամենայն յերկար խռովոթիւնք, որ ե-  
զեն մինչեւ ի հինգերորդ ամի Պերոզի արքայից արքայի  
պատճառք եղեն չարձակելոց նախարարացն Հայոց. այլ  
ոռծիւաւ և ի տաճար մտանել յարքոնիս մեծապէս առա-  
տացոց քան զամաց սովորութիւնն: Եւ ի նմին հինգե-  
րորդ ամին զբաղմաց նոցա անդրէն զկեանսն շնորհեաց.  
և այլոցն առ յօյն խռատացաւ. յամի վեցերորդ՝ միան-  
դամայն արձակել զամենեսեան կենօք և պատուավ:

Բայց ի տեղի այսր ինձ գարձեալ գալ պիտի<sup>2</sup>:

149. Իսկ կանայք երանելի առաքինեացն, և կապե-  
րացն և անկերցն ի պատերազմին, ընդ ամենայն աշխարհն  
Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բարում՝ այն  
են զոր ոչ գիտեմ. քան թէ գիտիցեմ: Զի հինգ հա-  
րիւրով շափ յականէ յանուանէ ճանաչեմ<sup>3</sup>. ոչ որ միայն  
աւագագոյնքն էին, այլ զբաղումն ի կրոնքագունաց  
անսով<sup>4</sup>:

150. Ամենեքեան միահամուռ զերկնաւոր նախանձ  
բերելով, ոչ ինչ ընդհատ երեւեցան յայնցանէ՝ որ ոչ  
ճաշակեցին զաշխարհ: Քանդի եթէ աւագագոյնք էին,  
և եթէ մանկագոյնք, զի տուքինութիւն հաւատոց զգե-  
ցան: Ոչ ինչ յիշեցին ամեննեխն զանուն փափկոթեան  
մայրենի ապաստոթեանն, այլ իբրև մարդք՝ որ վշտամէ  
բերք լեալ իցեն անդսամին ի շինական սովորութեանցն

1. Յամի վեցերորդ՝ այս է 463—464:

2. Եղիշէ միաք ունէր ուրեմն շաբա-  
ռակելու իւր պատմութիւնը: Բայց այդ  
վերջի տաղա զրած ատենը, նախարարք  
դարձեր էին ի Հայո. ինչպէս որ կը հե-  
տեփ հետապայ նկարագրութենէն:

3. Կապեալ կամ պատերազմի մէջ  
անկեալ և կամ ընակութեան տեղերնին  
թողլով ւենային ամրութեանց մէջ ա-  
պա ինեալ նախարարաց սեպհաց և ազա-  
տաց տիկիններէն և օրիորդներէն հինգ  
հարիւրի շափ յականէ յանուանէ ճանա-  
շելու համար պէտք էր, որ Եղիշէ Հա-

յաստանի գաւառաց խիստ շատերուն  
մէջ ճանապարհորդած ըլլար: — Կա-  
նայքը այս յանխար տեղին կամ ի քա-  
րանձաւ լերանց կը գտնուէին. ումանք  
յանլոյս երկիրն խազեաց, այլք յան-  
մատոյց ամուրոն Տմորեաց և կէսք ի  
թանձրախիս մայրիսն Արձախոյ:

4. Աւագագոյն և կրոնքագոյն՝ ապրիքի  
նկատմարի և ոչ քաղաքական պատուայ  
կամ աստիճանի, ինչպէս որ քիչ մը  
սոսորե ուսպագոյնը և մանկագոյնը ըսե-  
լէն ալ կը հետեփ:

տանջելով վարեալ զիեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա յանձն աւելն զհամբերութիւն վշտաց:

151. Ոչ միայն յոգին միսիթարեալ կացին առ աներեսցիթ զօրութիւնն յաւսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան: Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռնաստն սպասաւորս<sup>1</sup>, ոչ ոք երեկը ի նոցանէ՝ թէ որ տիկինն իցէ և կամ որ նամիշան. մի հանդերձ էր հասարակաց, և միապէս գեանախաշտիք երկօքեան: Ոչ ոք ումեք անկողնարկ լինէր<sup>2</sup>. քանզի և չճանաչէին իակ զիստեղէնան ընտրել ի միմեանց. մի դպին թխութեան փարայիցն<sup>3</sup>, և մի գոյն սեւթեան մնարից բարձիցն:

152. Ոչ դոյր նոցա համեմ խահամբքք անուշարար<sup>4</sup>

1. Այս է աղջկունք՝ զորա տղայ հասակին մէջ կածութին Տիկնայը Հացոց ի տոնս իրեանց, կը կըմէին, կը մեծցընէին և ազաւաւորութիւն ընել կու տային: Այսոր համար զերեքանառութիւն ենթադրելու հարկ չկայ, որովհետեւ տեսանք թէ զմանկունս հայրենի տնէն հեռացնելը և պլում յանձնելը՝ ժամանակին բարուց և սովորութեանց ժամներ. Տես Յ. Բ. 14 ծան. 1 և 62 ծան. Յ:

2. Երեսուն քառասուն տարի յառաջ երր Արեւելից մէջ երկամի կամ փայտեայ մահճակալը չէին գործածուեր, աղախինը կամ տան կրսերագոյն աղջկունք արկանէին զանկողինս: Մեր հինգերորդ դարու Նախնեաց սովարանից մէջ կային սենեակներ կամ սենեկաց խորչեր, ուր առանութիրաջ կամ փեսային յատկացեալ անկողինը հովանեսը և վարագուրօք միշտ զարդարուն և հանգերձեալ կը մնայր. բայց մնացեալ անկողինները իրիկութնէ կը տարածուէին ի գետին և առաւօք կը վերնային ու կամփութիւն. և փարազեցոյ զայնս բազմադիր կոչելէն (Եջ. 332) պէտք եմք կարծել թէ մի բանի կարգ իրաբու վըրա կը դրուէին. ստորինը հաւանօրէն

բրեեայ և զիսպիները աւելի փափուկ բաժբակէ կամ փետուրէ:

3. Փորայ կամ փրիսայ. բառ յուն. Փրիսսանն. խոխ, չորացեալ և արեակէզ ուս, խոտ, բայս, և հիւսեալ ի խոտոյ:

4. Արդի ստենայն սովագիբը ունին սորգէս եգաք. այլ ընթերցուած և կայլացուքը անուշարար. որ աւելի դիւրիմաց է: Դիտելի է թէ ազատաց ապարանից մէջ այլ և այլ խոհարաները կային. որը զիսորակին անուշահոտ հաշակու կը հանգերձէր, որը զհացն շազուէ միայն և եփէր ի նաշնույ խորտեաց համար, և աւելի հասարակ աւելուէ մեացուց համար, միւս ոմն կամ ոչըլք սովորական կերակութները կը պատրաստէին. զերգաստանը յոյժ բազմաթիւ էր. ոչ միայն հայր և սրբիր մէկ յարկի տակ կը ընտեղէին, այլ և եղորորդիկ իրենց հարսերով, և հեռաւոր նախարարաց պայտագալք, որը տառափառչ խնամոց յանձնուած էին և հարազատից հետ միասեղ կը սնանէին ու կը կըմուէին: Բազմաթիւն մալ կար և ձեռաստն ։ նածշտաց, աղախնայց, սպասաւորաց, ընդունաց, զինակաց և ոյլն:

առանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու  
ըստ ավատաց կարգի, այլ հասարակաց էր։ Շարաթա-  
մուտն ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատս բնա-  
կեալ են։ Ոչ ոք ումէք ջուր ի ձեռս արկանէր։ և ոչ  
կըսաերք աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ  
օշնան ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ  
իւղ ի զուարթութիւն խրախութեան։ Չեղան առաջի  
սուրբ սկանդք, և ոչ անկան բաժակակալք. յուրախու-  
թիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ  
կոչեցան պատուականկ յարանց ի տաճարս նոցա։ չյի-

1. Ասկէ յայտ է թէ նախնիքն մեր  
կոնք և քսեսո (լէյէն ելուրը) կը գոր-  
ծածէին. և յորժամ սպասուուրքն լուա-  
ցւողներուն ձեռաց վրայ ջուր կը թա-  
փէին, աղջկունք կամ տարիխով կրուք  
կանայք աւագաց դաստառակ կը մա-  
տուցանէին, որպէս սովոր էր յԱրքելու-  
և որովհետեւ խոսքը կերպակը վրայ է,  
մարդ է կարծել որ սեղանէն յառաջ  
կամ ետքը ձեռք լուալու սովորութիւն  
կար։

2. Պարագերէն իւնաս ձևալ է յօյն  
Տարոնայր, արմատ որ կը քրքի ա-  
ձառի պէս և որով մաքրին զանգերձաւ։  
Բայց ասս օշնան չէ սոսկ պրդ արմատ.  
կամ մնոր մոխիրը որ փափկասուն ձեռ-  
քեր մաքրելու շէր կրնար ծառայել, այլ  
այդ մոխրով և իւզով կամ պարարս  
նիւթերով զանգուած օճառ. բայց չկա-  
րացանք սոսուկել թէ ինչպէս կը բա-  
զարէին և կը զործէին մեր նախնիք  
զօճառ։

3. Հին աշխարհն մէջ իւղն յոյժ ազ-  
նիւ և յարգի համարեալ էր. նոր և  
քաղցր ձէթը նախամեծար էր քան զկո-  
ղի և քան զարար համ տալու համար  
կերակրոց։ Բայց աստանոր, կարծեմք,  
պարտ է իմանալ օծուելու իւղ և ոչ  
ուտելեաց վրայ անցընելու։ Զիթով կամ  
ուրիշ անուշահոս իւզերով օծելու սո-  
վորութիւնը կար նաև առ Յոյնս և առ

Հոռվմայեցիս. Կօծուէին մահուանդ հիւրք  
հրատիրեալք ի խնջոյս և յայլ ուրա-  
խութիւնն (Բառարան Ա. Գրոց)։

4. Բաժակակալ՝ 1. Ունող զրաժակ  
կամ կրող. մատուուակ. 2 Ափուայն յու-  
րոյ վերայ եղեալ իցեն բաժակ։ Աստ  
անշուշու ափեսոյ խմանալու է։

5. Եղիշէ կու յիշեցնէ մեզ զափա-  
րանս մեծատանցն արևելից, ուր տիկ-  
նոջ նատան սենեկին դրսի գին և դրան  
մատ նամիշտք կամ աղախինք կը սպա-  
սեն շարունակ, իւրեանց տիրուււոյն հրա-  
մանը փութանակի կատարելու համար.  
սրպէ և ի դուրս սենեկի տանուտեառն  
կը կենան պաշտօնեայք։ Բայց արանց  
և կանանց զատ նատելու սովորութիւնը  
չկար ի չայս. գամն որոյ նուիրակը կամ  
պատուուրք ծառայէին տիկնանց։

6. Կարեւոր տեղեկութիւն մը՝ զոր  
տայ մեզ Եղիշէ կանանց կենցաղոյն նը-  
կասմամբ, ոչ միայն հարեմ մէտամ չկար  
այլ և արանց պատուականաց։ Հետ  
տեսութիւնը բնական և զովելի էր, և  
զնոսա հրաւիրեն յոյժ պատշաճ։ —  
Երրորդ Յեղանակին մէջ զրուցեց մեզ  
Եղիշէ, որ երբ մողավուրդը եկեղեցա-  
կանաց գրգմամբ ուրբ ելու հաւատոց  
պաշտօնութեան համար, « Երեւցան  
ամեներեան զինեալք և սաղաւարսելք,  
ուր ընդ մէջ և զահան ի ձեռնին ոչ  
միայն արանց քաջաց այլ և կանանց առ

շեցան նոցա՝ թէ զուցէ ոք տաենեւին ի բնակասնունդ գայեկաց՝ և կամ՝ ընաւ ի սիրելի հարազատաց:

153. Փոշոտեցան և ծխոտեցան սրահակը և սրսկապանը<sup>2</sup> նորեկ հարսանց, և սարդի ոստայնը ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. Կործանեցան բարձրադահնը տաճարաց նոցա, և խանդակական կործանեցան սպարանը նոցա, և տապալեալ տւերեցան ամուրք ապաստանի նոցա: Չորացան ազաղեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և տաշ-

նակրսեց այս է ամուսնացեալ կանանց Քաջաքական յուզմանց և զումարմանց զիւզացի և ազնուական կանայք՝ արանց պէս կը մասնակցին «Իբրդեցին ժագովեցին» (Եպիփառուուն) զրազմութիւն արանց եւ կանանց, զինականաց եւ ազատաց, զ.քահանացից և զմենակեցաց. Խրատ եղին, պնդեցին և արարին զամենեսեան զինաւոր Քրիստոսի: — և Եւ յետ այդ տագնասի խռովութեան (մոզաց Զարդը) յամենայն կողմանց յաշխարհն Հայոց բազմութիւն արանց եւ կանանց, ծերոց և տղայոց... քանզի առահարակ զիի զինուորուրին զինուորեցան. և զմի ազան զրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի, և միով զօտեան չշմարաւութեան պնդեցին զմեջս արք եւ կանայք: — Ամեզն կ'երեւ թէ սրբէս ի Հառմայքին այդ համարձակութիւնը և ազատութիւնը միայն ամուսնաւոր կանանց յասուեկ էր. նպան իսկ հարանց՝ առագաստը մոզուլ և եկեղեցւոյ մէջ անզամ ժաղովրդեան երեւալ ամօնթ սեպուած էր: Երբ Վահանայ մարդուանութեան հրովարտակը բերին, ամէնքն ուրախութեամբ լցեալ Աստուծոյ տունը վազեցին չնորհակալ Ըլլալու. «Պրոն տուեալ առ հասարակ ամէնայն մարդոյ նախարարաց և ազատաց, սստանկաց և սամկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, այլ եւ նարսուեկ անզամ յառագաստը մուտցեալ, դիմեալ գալուց հետո աստիճան բարձրաց և ամառապէս ամուսնութիւնները առաջեկի իւրաքանչ հասակի մէջ կը կարգաւէին:

1. Բնականունդ՝ ոչ սնուցիլ ընտանի սիրով, կարծեմ, որպէս զնէ Հայկ. Բառարանը, այլ իւր տան մէջ սնուցածող դայեակը՝ զաստիարակը կամ ինամակալը. Տես Յ. Բ. 14. ծ 1. և 62 ծն Յ: Եւ նարազան բատի ինամալու է ոչ միամնայր կամ միահայր եղբարք, այլ բուն, ճշմարիտ հայր, հօրեղբարք և ամին, ընդդիմադրութեամբ՝ դայեկի, իւրանամակալի:

2. Որսկապան է առագաստ հարսանեաց, վրանաձեւ կազմած մահճաց, իալազուն: Խոչ սրամակը աստանոր կարծեմ չէ փարբիկ սրահ կամ սենեակ, քանզի քիչ մը ենոքը սենեկի առանձին յիշատակութիւն կայ, այլ վարագոյր դրանց, կամ սրմոց: Անենեակ առագաստ է ներքին սենեակ հարսին ու փետային, հարմարան. Chambre parfiale. Բարձրագան է բարձր նստարան կամ բազմոց, Sofa, divan, ուր կը նառէր ամիկնը կամ պատուասոր հիւրերն և որ սենեկին յատակէն մէկ կամ երերու աստիճան բարձր տախտակամածի վրայ հաստատուած էր:

տախիլ եղեն որթք գինէրեր այգեաց նոցա; Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց, և ականջօք իւրեանց լուան զվիշտո չարչարանաց սիրելեաց իւրեանց. առան դանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենենին զարդք երեսաց իւրեանց<sup>1</sup>:

1. Եթէ Եղիշեայ տուած մասնական տեղեկութիւններէն մեր նախնի մեծաւանց ապարանքը կազմել ուզենակը, պէտք է գաշտի մը մէջ բլոյց վրայ, կամ այդ գաշտի շրջապատող լեռնաց կազերուն վրայ և կամ աւելի ևս անմատելի և ահաւոր լեռնաձորոց և ափափայից վրայ աշտարակաւոր մարտկոցաւոր և թանձր որմերով կերտեալ դղեակ մը աշաց առջև բերել. դղեակդ երբեմն տեղոյն դրից համեմատ ատամեաւոր պարագօք ալ շրջապատեալ է, որոյ ներսի դին զետեղուած են իշխանին այլ և այլ պաշտօնեկից որպներն, շահմարանքն, ափուաներ, առապականին և այլն: Դղեկին անմիջապէս առջև կամ բոլորտիքն են և Բաւրատանք ծաղկոցաց » և աւելի հեռան այդեստանք, արտորայք և պէտպիսի մշակութիւնք: Ապարանքն քիչ պատուհան անին թշնամոյն դէմ գիւրան պաշտպանուելու համար. բայց ուրանին և սենեկները ընդարձակ և զմբէժն կամ ձեղունն բարձր ըլլալուն, բաւրական լուսաւոր էին: Ներքին բամանմանց սակաւութեանը պատճառաւ գերդաստանին մէն մի անդամոց համար յատուկ խուց ըլլալու չէր: Տանուտէրն անշուշտ իւր առանձին սենեկն ունէր բայց մեացաներն ընդհանրապէս լայնարձակ սրահից մէջ կը նստէին ու կը ննջէին, որոց խորշերն փարագուրօք փակուած կամ մէջտեղուանքն պատշպամի ձեռվ բարձրացած և նկարոք զարդարուած ամուսնացեալ սացեալ սեպհաց առագաւորն և սրական էին: Դղեկին ատենէն ապահովութեամբ և արագակ մէկ կողմէ կը զարդարէին զսեղանն. նաժիշտք է երգին մեսամիր » (լարաւոր գործեաբ) նուագ երածշտականս. խորհն. Բ. Կի:

Գինեւոյ սպասումը յայժ առաւել էր քան զիրոյն — Ասփորական բազմելու կարասին էին ամոռ և մանաւանդ բարձրագանցք և բազմականք, զարս կանայք նկարակերպ սստանանկութեամբ կազմէին (Յափ. Լամող): — Տիկնանց զգեստը կերպասեայ կամ բարակ կը տաւէ էին և ուկենաւո (Փարոզ). հանգիստուոր որերունը համակառ էր ոսկեալ (Նոյն): Զեռքերնին, ոսքերնին (Քոչիկնին?) պատուական ակամիք ընդեւուզեալ ապարանջանք և զարդուք կը պէճէին, և զպարանցն կարի մեծագնոյ մարգարուոք և մեծաւ աշխատութեամբ ձեռք և գուազալ պարանջանքն անէ զուրս, բաղարկեալ էր, բայց քողը արգելք չէր ըլլար՝ « այս անդր հայեցողութեան զաշն անձեր ի ստէպ: (Փարոզ): Զեռքագործօք կը պարապէին ինչպէս և առանին մատկարարութեամբ և որում անհնար է, կըսէ Փարպէցին, յաղթել կանանց՝ շատ-

154. Տիկնայք փափկասոմք Հայոց աշխարհին, որ գրգեալք և դգուեալք էին յիւրաքանչիւր պատեռունս՝ և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիոք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իւրեանց մնեալ էին ուզզովք դուարակաց և ամճովք էրէսց, խստաբուտ կենօք իրրե զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ. և ոչ յիշէին ամենեին զսովորական փափկութիւնն: Մեւացեալ ներկան մորթք մարմուց նոցա, վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք: Մազմոսք էին մշտընջենաւոքք մրմննչք ի բերանս նոցա, և միսիթարութիւնք կատարեալք՝ ընթերցուածք մարգարէիցն: Միաբանեցին երկու երկու իրրե ամոլք հաւանք և հաւասարք՝ ուզիդ տաներով զակօնն արքայութեանն, զի տուանց վրիպերց հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան:

155. Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արուք առաքինիք ի հոգեսր պատերազմի, մարտ եղեալ կռուեցան ընդ մեզն կարևորս, հատին կտրեցին և ընկեցին զմահարեր արմասսն նորա: Միամսութեամբ յաղթեցին խորամանկութեանն, և սուրբ սիրով լուացին զկապրտակ ներկուածս նախանձուն. հատին զարմասս ագահութեան, և չորացան մահաբեր պտուզք ոստոց նոցա: Խոնարհութեամբ կռիկեցին զամբարտաւանութիւն, և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն: Ազօթիւք բացին զփակեալ դրունս երկնից, և

խօսութեամբ. բայց մէկ զլիաւոր զրազմունքնին էր ընթեանուլ զԱռորք Գիրս, և ուսանել և բազում հոգողութեամբ ուսուցանել տալ և խրատել, ոչ իրրե զանփայթ և զանպիսան կանայս, այլ երրե զքաջայրս, զառաջիկայ զօգաարեր շքեղարար հրահանգս մանկանցն հոգացեալ ընուլ»: և յայլամ մասի Հմայեկայ Մամիկոնէի կինն Զուիկ այնախոի կատարեալ կրթութիւն մը կարող եղած էր տալու իւր երից զաւակաց, որ յամենայնի յառաջապէմք եղած էին և հոչակաւոքք, և մինչդեռ ի տիս ման-

կութեան էին՝ ամենայն տեսանող մը տաց երեկին աջողակք և զարմանալիք»: Փառապ. 334:

1. Պասառառ. պարսկերէն պասառ յայ և անկողին: matelas կամ տկութք շիրե. զլիսու կամ քովի բարձ: Գըրգեալք ի բաստեռունս՝ է մերժ ուսմկանան շիրեներու մէք մեծցած: Ասի ևս պարսկերէն ուկր պասառ'ոի իյշ ոչ ձաւդուք՝ փափուկ և հանգիստ անկողնոյ վրայ շիրեկ վրայ: — Պահաւորակ է գետպակ կամ պատզարակ՝ բանքիրէվան:

սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ի փրկութիւն. լուան աւետիս ի հեռաստանէ, և փառաւորեցին զԱռառած ի բարձուն:

156. Այրիք որ ի նոսա էին՝ եղեն վերսուին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն: Խոկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանո իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդապետք միսիթարիչք բանդարգելեացն: Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ոռնիկ<sup>1</sup> նոցայարքուած՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի միսիթարութիւն: Անարիւն ճիպուանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօղն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն:

157. Բազում ձմերաց հայեցան սառնամանիք, եհասդարուն և եկին նորեկ ծիծեռունք<sup>2</sup>, տեսին և խնդացին կենցազաէր մարդիկ, և նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիան իւրեանց: Ծաղիկք դարմանայինք յիշատակեցին զպսակասէր<sup>3</sup> ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա: Մպառեցան բարակք որսականիք<sup>4</sup>, և խցեալ կու-

1. Երբ Պերոգ արձակեր էր զկապեալ նախարար և հրաման ըրեր էր նոցա երթաւ ծառայել Հրեկի բանակին մէջ, ոռնիկ (տէկ. թագինալթ) կարգեր էր նոցա ի Հրեկ և կանանց նոցա յաշխարհի իւրեանց. (Փարոպ. 326): Տիկնայք նախարարաց, փոխանկ իւրեանց ոռնիկն առնելու և սպառելու, անոր փոխարէնը կառնուին դրամ՝ կը խրկէին նախարաց: Կ'երեկի թէ ոռնիկ ունեցողը կրնար՝ ըստ կամաց՝ պարեն կամ թոշակ առնուլ:

2. Ծիծեռունք ձմեռը տաք երկիրները կ'երթան և ամառը զով տեղեր կը փընտռեն և ասոր համար ահազին ճամբորդ գութիւններ կ'ընեն: Այսպէս յէւրոպա՝

ծիծեռունք գարնան կու դան և յաշնան յլլիքիկէ կը շուեն Միջերկրականի ամբողջ լայնութեան վրայէն անցնելով: Գարնան Հայստան եկող ծիծեռունք ալ ձմեռուան մաս գէզ ի հարաւ ի Միջակեսու և յլլարիա երթալու են:

3. Այս է հաւատարիմ ամուսնոյն Եղիշէ բառի խազ մը կ'ընէ. ծաղիկք զարմանայինք ի յուշ անէին զպսակն, որ զուգեր էր զամուսինս և որ ծաղկըներք կը հիւսուէր:

4. Հայկազեան բառարանը նոյն կը համարէ ընդ պարսկերէն պարագ բառի: Բայց այդպիսի բառ մը շդուանք բառազրոց մէջ: Ել պարիք կամ պարիյք ած. նուրբ, անօսր, որպէս հայերէն՝ «բա-

բացան արշաւանք որսորդաց: Բնագրաք յիշաստակեցան նոքա<sup>1</sup>, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յասենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բաղում արձանք<sup>2</sup> կանդնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա:

158. Եւ իրրեւ այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէ: Արտաքնացն երեւէին իրրե այրեք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և միսիթարեալք երկնաւոր սիրովս: Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իդձք աղօթից նոցա առ. Պատուած, եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրովս:

Եւ մեք և նոքա հասարակ ժառանգեսցուք դքաղաքամայրն բարեաց, և հասցուք խոստացելոց սիրելեացն Աստուծոյ ի Քրիստո ի Տէր սեր:

բակ ։ բայց գոնէ արդի պարսկերէնի մէջ շնչանակեր ևս՝ շուն: Հաւանական է ասկայն որ « բարակ » ածականն ալ գոյականապէս գործածուած է ի մեզ՝ իրրե բարակ զլիսով կամ մարմեռով շուն: Աւետայի մէջ Ամենէնի ամենէն մեծ թշնամին բարակ զլիսով շուն մի է. ըստ պահանիկ թարգմանութեան բոշման պարից կամ սար պարից. — Մեր լեզուին մէջ սրաւական շանց ասպականի ալ ըսուած է. Աւետայի լեզուաւ՝ սրա՝ արդի պարսկերէն ասկ և իսպա նշանակէն շուն: Հերոգոտոսի ժամանակ սրաքա՞ քած կամ էզ շուն. (Տես գիրք Ա. 110) Հնդեւ-

բուպական լեզուաց հասարակ է սրաց կամ սվար արմատը. որպէս յողնակին է մերն ասպական կամ ասպականի:

1. Հայկ. Բառարանը կը մեկնէ՝ «արձանագրութիւն ի յիշատակ վախճանեւոցն ի Քրիստո»: «յիշատակագիրք կամ պատկեր կենդանագրեալ հանդերձ ներբողական յիշատակարանաւ»: Բայց բերուած վկայութիւններէն այդ նշանաւութիւնը բնաւ չհետեւիր. միթէ աւելի պարզ չէ՝ ձեռագիր նամակ, autograph:

2. Ալձան՝ ասուանօր չէ պատկեր քարեղէն այլ քարէ կոթոզ, սախտակ կամ սիւն հանդերձ յիշատակագրութեամբը:

# ԹԱՆԻՐԸՍՈՒ

ՅԱԴԱԳԱՎՈՐԱԿԱՆ

1. Մարդիկ, որ են ի մարմնի և կամքը ետուն զանձինս խրեանց յաստուածպաշտութիւն, անդստին ի տըղայտութենէ խոկան՝ կրթին ի վշտամբերութիւն. հեռանան ի հայրենի բնակութենէն, և վարին յանապատյանչն երկիր. ոչ իրրի չարակնելով նախանձուաք վախուցեալք ի բազմամարդոյ աղքատաց<sup>1</sup>, այլ զի տեսանեն զաշխարհու մի ամենայն չարեօք, խոյս տան ի խորշս և ի ստորոտս անապատ վայրաց:

2. Չոր տեսանեմք իսկ յաճախ ի կողմանս հարաւոյ<sup>2</sup> բազմութիւն արանց՝ առանց կանանց՝ միաբանութեան,

1. Հայկազեան բառարանը կը գնէ՛ ի բազմամարդոյ քաղաքաց, որ առաւել յարմար կու գայ պարբերութեան. բազմամարդոյ կամ՝ բազմամարդ իրեւ բազմամարդ կամ՝ բազմամեևն գործածուածըլաւու շէ:

2. Այս է Ասորւց, Միջագետաց և մանաւանդ Եղիսոսոսի, ուրանօր յայդ բազմութիւ էին միայնակեացք:

3. Կախեկիրդ՝ առանց՝ զրչազրաց կողմանէ յաւելեալ է. Եղիշէի նկարագրած միանձունքն Փիլոնի ջատագոված չեսուեանքն են, որոց մէջ կը գտնուէին և բազմութիւ կանայք, (Տես Փիլոնի ճառք. վենետ. 1892 էջ 14 և 25, 29, 31): Եղիշէ համառօտութիւն մը կընէ Փիլոնի նկարագրութեան. արդէն իսկ «Բազմութիւն» արանց՝ ըսկէն ետքը և առանց

կանանց միաբանութեան» աւելցնելոն անյարմար և անբնական է: Ավասի որոյ պարտ է ընթեւուուլ և Բազմութիւն առանց և կանանց միաբանութեան: Հեռանեմք որոց գաւէն կը համարին սմանքը զՅովհաննէս Աղքատիչ, կարծէին թէ ամենայն շար ի մարմնոյ ելանէ վան ուրոց միւ ոչ ուտէին. չեին ամուսնանար. զամենայն ինչ ունէին հասարակաց, և Աղեռեալ ծովուն մօտերը անապատից մէջ կը ընակէին: Կողմապիսի հրեայ հասարակութիւն մի այլ կար Աղեղքանդրիոյ բուլորուիքը, որոց կենցազը կը պատմէ մեզ Փիլոն: Ի հնդկերորդ դարուն՝ սոցու հետքն անկամը չէր մեացեր և փոխանոցաց քրիստոնեայ միանձունք և վանականք լցուցեր էին զանշէն վայրու Եղիշէ առանձնութեան կենաց կատարեալ

յազգաց և ի լեզուաց զմիով վայրօք հասեալք, ժողովեալք իրեւ ի հայրենի գաւառու՝ առնեն զբնակութիւնս երկու ընդ երկուս, և կամ երեք ընդ երիս, և կամ ևս բազումն քան զայնա: Եւ շինեն իւրաքանչիւր խցկունս զատուցեալս ի միմեանց. որմք զուզնաքեայ<sup>1</sup> առ ցրտոյն պահպանութիւն, և զյու նմին ձեղուն՝ առ արեգական պահպանիլ. յատակը անպաճոյնք՝ շատացեալք խոսեղէն անկողնօր: Եւ քանզի ընութիւնս մեր զուզակ է՝ սիրէ ծածկել զմերկութիւն, առնեն և նորա հանդերձս անպաճոյն և յոյժ գձուձս, կոզորս<sup>2</sup> ամարանի և թեղանաւորս ձմերանի, արկանեն և ազարազնս մեկնաւորս:

3. Մանաւանդ ի պարս շրջագայ անդադար պաշտամանն՝ երգս հոգեորս հօրն բոլորեցուն մասուցանեն զուարթ հոգւով: Կան ընդդէմ միմեանց զաշս ի վայր արկեալ՝ զծայրս սուից մատանցն նկատելով, իրը թէ մի կէտ տեսակի ամենենքեան հայեսցին. զաջ ձեռն ի վերայ ծնօտին եղեալ և զահեակն ի վերայ կրծիցն, որպէս կարծեմ ուսեալ ի ընական հարցն<sup>3</sup>: Երկու են պա-

որինակ մը տալ ուզելով կը հետեւի Փիւնի՝ այս է Քրիստոսի ժամանակակից Հելենացեալ Հրեայ Հեսսեանց նկարագրոյն, որ արդէն թարգմանուած էր ի հայերէն, բայց բառ ամենայնի շէր կը թարգմանածի իւր ժամանակի միանձնանց<sup>4</sup>:

1. Փիւնի մէջ Հիսու տունք ի մի վայր եկելոցն յոյժ գծուձք են. առ երկուս իրս հարկաւորագոյնք. ձեղուն ի վերայ ունելով, զյարեգականէն խարշուն և զօդոյն ցրտութիւն:

2. Կոզոր՝ բառ յն. (գոր'վիօն որ է կրօստ, կարծիկ) զգեստ կարճ կամ առանց թեզանեաց. վերարկու անթե. Աղդարողոն ալ է բառ յն. վերարկու, թիկոց: — Փիւնի մէջ Համան զի և ծածկութի կրկնի տեսակ է. հանդերձ և տուն: Արդ յազագ տանն ասացեալ է յառաջազն, զի է անպաճոյն և առանց խուելոյ, առ պիտանացուն միայն գործեցեալ. և զգեստն նոյնպէս դուզնա-

քեայ և առանց պահուանաց, առ ի յապանս ի ցրտոյ և ի տօթոյ. քանզի վերարկու փախանակ թաւ մորթոյ՝ ձմերացնի և թէկնանց ամարայնի կասափ: Էջ 16: — Խոկ տանին եւ նոյս ձանդերձս, այսինքն գործեն: Այս խօսքս ալ Հենանց կը պատշաճի. վասն զի, ինչպէս որ կ'սու Եւսերիսս իւր Աւետարանի պատրաստութեան մէջ, արդ հասարակութեան մէն մի անդամը մէկ մէկ գործով կամ արհեստի. կը պարապէր. զգեստեղէնքն իրենք կը շինէին:

3. Հի մի վայր զան իրեւ ի հասարակ ժողովրդարան, և ըստ հասակի անցեալ նստին, հանդերձ վայելչական ձեռով, ի ներքս զձեսան ունելով, զաջն ի մէջ կրծիցն և ծնօտին, իսկ զահեակն զատեալ և ամփոփեալ առ կշուն: — Փիւնի էջ 14: Կարծես թէ աստանօր Եզիշէ ըսել կ'ոզէ, որ այդ սովորութիւնդ մացած էր ի նախահարց իւրեանց, այսինքն ի Հեսսեանց:

տուականագոյնք ի մարմելի, կենդանական և խոհական, երկրպումբք երկրպունց սպասաւորեալ. կենդանականին՝ սրտմնականն է հակառակ, իսկ խոհականին՝ արտարերական բանս: Արդ ձախուն զերասանակ ի ձեռն առեալ՝ զարտմտականն սանձակոծիցէ, և զաջ ձեռն ի վերաց աջոյ ծնօտին եղեալ՝ խոհականին սպաս ունի առդրան բերման բանին<sup>1</sup>, զի մի այլակութիւն յուղիդ փառատրութիւնն խառնեսցի: Եւ ընդ այսու երկու մասամբքս նահանջին ամենայն զգայութիւնքս. աչք յուղիդ տեսութիւն և ականջք ի զգասա լսողութիւն, միտք ի սուրբ իմաստութիւն, և այլն ըստ իւրաքանչիւր մասին:

4. Եւ իրեկ այսպէս կարգեալք և յօրինեալք, ամենկեան ի նմանութիւն վեցթեւեան սերովբէից շուրջ պարփակեալք ձայնս անհասոս ի վեր հնչեցուցանեն, և օրհնութիւն եռաչափս<sup>2</sup> ի խորհուրդ միաբանութեան արարչին իւրեանց բոլորեն: Զտիւն ամենայն պարապեն երգոցն քաղցրութեան, յագեալք և զմայլեալք ի կերակուրսն երկնայինս՝ առցեալք հասանեն ի ժամ երեկոյին: Եւ քանզի մարմին ունին ըստ բնութեանս մերում զգայութեանս, ուտեն՝ զի մի քաղցիցեն, և ըմպեն զի մի ծարաւեսցին:

5. Արդ դու իրեկ լիիցես զաւելին, մի առ մերս ընթանայցես<sup>3</sup>, զի հաց է նոցա անպաճոյճ և բանջար վայրենի՝ զոր համոյ աղին համեմեն, և ջուր յասակ՝ զոր յամպոց բերմտնէ ի գուրս ժողովեն: Սակայն և զայս ոչ երբեք ի տուրնջեան մատուցանեն ի դարմանս պիտոյից մարմոց. այլ միաբան պահելով զերկայնութիւն աւուրն,

1. Այսինքն երկու ձեռամբք մարմնոյն երկու մասանց՝ կենդանականին և խոհականին ծառապելով:

2. «Եւ ապա աւագն՝ յոտն կացեալ՝ երդ օրհնութեան երգէ արարեալ Աստուծոյ, զոր նորոգ իւր արարեալ, և սկըզբնաւն իմն հնոցքերթողացն քանզի շափս և նուազս բազում թողին տաղից, եռաչափաց, առձանապարհական երգոց և այլն. Փիլ. 29: — «Ի խորհուրդ միաբանութեան Արարէին» այս է Եր-

բորգութեան:

3. Յայսնի է թէ Հայոց ցրտին բարձրաւանդակին բնակէցքն, եթէ կամք աչընէին, իզիստոսի անապատներուն մէջ բնակող անձանց պէս ոչ սակաւապէտ կընալին ըլլալ և ոչ սակաւակեր: «Եւ կերակրին ոչ բազմապատիկ թու խաչիք, այլ հաց անպաճոյճ և աղ խորտիկ, զորս խահամորքն համեմեն զոպայիւ, և է ըմպելի սոցա գուակային ջուր բնքնախաղաց»: Փիլ. 15, 27:

տեղի տան արեգական մտանելոյ<sup>1</sup>. ձգեն երկայնքն զերեկունն, մինչեւ աստեղք յիւրաքանչիւր կայանո պայծառանան. գոհանան իրբեւ ընդ մի բերան ասելով. ի խաւարային ժամու զիսաւարային կերակուրս խաւարային մարմնոյս տացուք:

6. Եւ զայս ասելով, ի ձայն բարձր փառատրեն զառորբ երրորդութիւնն, խնդալից ուրախութեամբ ու կըմքին յիւրաքանչիւր տեղիս: Եւ որպէս ասացաքն՝ ու տեն հաց և զապա, և ըմպեն ջուր ցուրտ: Քանդի գոն ի նոսա՝ ծերք փափկավարք, մասուցանեն ջուր ջերմ, զոր և բարեխառն անուանեն. այլ գինի և կամ այլ ինչ զանազանեալ, և գտանի ոչ ի սուրբ միայնանոցս նոցա:

7. Եւ յարուցեալ յանպաճոյն ընթերեացն, միաբանութեամբ ասեն. Փառք քեզ, Տէր, փառք քեզ թագաւոր մեր, զի ետուր մեզ կերակուր ուրախութեան. լցո զմեզ չոգւով սրբով, զի գտցուք առաջի քո հաճոյք, և մի ամաչեցուք. զի գու հասուցանես իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց: Եւ այսպէս տեառնագրելով զինքեանս՝ տան զանձինս սակաւ մի անօսր քնոյ, զի մի տհալ կերակրովք գեղեցիկ շինուած մարմնոյն շփոթեալ խանդարիցի: Եւ և եթէ յամեն ևս ի քունն, երազ հոգեկան տեսանեն, և անդէն զանուրջմն մեկնեն իրբ զբանս սուրբ մարգարէիցն<sup>2</sup>:

8. Եւ զարթուցեալք առ հասարակ անդէն ի շրջանս պարուց բոլորին. ոչ հակառակք և ոչ ընդդիմացեալք, քաղցր հաւանութեամբ և հեզ հանդարատութեամբ:

1. « Բայց կերակուր կամ ըմպելի ոչ ոք ընկալցի յառաջ քան զմուտս արեգական, գանի զի զիմաստասիրեն արժանի լուսոյ համարին, և խաւարին՝ զմարթնոյն հարկաւորս. գան որոյ միումն զտիւն, իսկ հարկաւորացն՝ զգիշերոյն զգողոցն ինչ մասն ետուն »: Փիլոն:

2. « Գինի յաւուրան յալնոսիկ ամենեն ոչ տանին ի ներքս, այլ չուր ականակիս. յուրաց ի նոցանէ հով. բայց ջերմ ծերունեացն փափկակեցացն, և սեղան մաքուր յարիւնաւորաց, յորոյ վերայ հաց կերակուր և խորտիկ աղ,

որոց էր երբէք զի և զսպա համեմով ամոքեալ լինէր, գամն փափկավարացն »: Փիլ. Էջ 27:

3. « Քանդի միշտ անմոռաց ունին զիմաստածոյ յիշաստակն, մինչ զի և ձեռն անրիշից ոչ այլ ինչ, այլ զգեղեցիկ զաստուածային առաքինութեանցն և զօրութեանց տեսակս տեսանել . քանզի բազումք և խօսին ընդ քուն, զանուրջմն մեկնելով զաստուածայինսն իմաստութեան զմիշտերգելի և զսքանշելի ու բէնան »: Փիլ. Էջ 13:

Առաջնորդք դաստիցն հնչումն ձայնի արձակեն, երգո հոգեորականս քաղցրանուագս փոփոխելով. իսկ այլ կըր-սերագոյնքն ձայնիցն միտ դնելով, խառնեն զիւրաքան-շւր բարբառն յարմարելով և կազմելով զմիարանու-թիւն հնչմանն, զի իրու ի միոնէ բերանոյ ամենայն բազմութիւն ձայնիցն հնչիցէ: Եւ այսպէս յերկարելով զձայնաւոր պաշտօնն, ծունը դնեն ամենեքեան, յազօթու կան լուսթեամբ. և ի ձեռն առաջնորդի ազօթիցն կան-գնեալք ամենեքեան զիտատարութիւնն կտարեն:

9. Եւ կտարեալ զտուընջեան պաշտօնն, լու համա-րեցան զգիշերսն վաղայարոյց լինելով մինչե յառաւօտ ազօթիցն պարապեալք, և ընթեռնուն զգիրս սուրբս. իսկ որք ունին շնորհս վարդապետութեան, առնեն մե-կնութիւնն ի մսիթարութիւն լողացն: Պատմեն վասն լինելութեան աշխարհի յոշընչէ եղեալ, և կարգեալ մի ըստ միոնէ զիտատա բարեաց կարգեն ի բելիս ժողո-վըրդոցն վկայութեամբ սուրբ գրոց: Եւ այսպէս ուսու-ցանելով մինչե մոռանալ լողացն զամենայն իրս աշխար-հականա, և չյիշել ամենեիմբ զհարկաւոր կերակուր և ըմ-պելիս :

10. Եւ այնպէս ուրախացեալք ի սէրն Աստուծոյ, մինչե չհամարեալ զինքեանս ի մարմնի, այլ յերկինս. և հեշտութեամբ անցուցանեն զերկայնութիւն զիշերոյն մինչե յառաւօտ: Վանզի սոսկացեալք են յերկրէս և զգեցեալք զերկինս: Ամաչէ մահ սու գրունս նոցա, և դառնացան դժոխք յիջանել նոցա: Եենդանութիւն նոցա գրունք են ազօթից աշխարհի, և ոսկերք նոցա գանձ են ամենայն ապաւինելոց: Լուր նոցա յորդորիչ է ամե-նայն հեղգացելոց, և գործք նոցա վարդապետութիւն ամենայն կասեցողաց, դասակիցք են հրեշտակաց, և ո-թեանք սուրբ Երրորդութեանն:

11. Արդ զայս ամենայն գիտելով, եղբարք, պար-տիմք թեւակոխել. և զնոյն նախանձ սրբութեան յան-ձինս բերելով, նմանողք լիցուք այնպիսաց բազմագունդ միայնացելոց յաշխարհէ և գիմելոց ի քաղաքամայրն վերին, որ ազատ է յախարհ երկրաւորաց. քանզի ըն-կերակիցք են մերոյ ընութեանս, որ զօրացուցանէ զար-կարութիւնս: Միայն կամեաց, բուռն հար հաւատովք,

յուսա, սիրեա, և կարես տեսանել զայնպիսի նահատակովին՝:  
Զի ոչ ինչ համեմատ են չարչարանք ժամանակ առ կեանսն՝ որ պատրաստեալ է այնպիսի  
ճգնողաց:

12. Քանդի յոյժ խոկ երկուցեալ եմ ևս ընդ հեղ-  
դութիւնս սեր, գրեթէ զամենեսեան տեսանեմ թաւա-  
լեալ յերկրաւոր ստացուածու։ Խոկ արդ ընտոթիւնս իմ  
ոչ կշամիեալ յանդիմնէ զիս, եթէ ստեղծաց մերկ, և  
եթէ եղայ ի գրախտին սերկ, և եթէ ելի անտի մերկ,  
և եթէ ծնայ մերկ, և եթէ անդրէն յերկիր մերկանդամ  
երթամ։ Արդ եթէ տանել աստի ոչ կարեմք, զի՞ ևս աս-  
տէն ի ամին թարթափիմք յաշխարհիս։ Մերկացիր սա-  
կացիր, ով միայնակեացգ, մի թաւ ամուր ընդունակ  
լինիր նենգաւոր թշնամւոյն։ Գուցէ ի գարան մտեալ  
մօտալուտ՝ զքեզ անդէն ի քեզ արշաւեցէ կողովատել,  
զերծանել ի քէն զգանձն երկնաւորս։ Բաւական հա-  
մարեաց քեզ զտերպանեան կանոն, ոչ ոք յերկրաւորաց  
կարէ երկուց տերանց ծառայել. որ յայտնագոյն խոկ  
ցուցանէ առանց միջնորդի և մեկնութեան. Ոչ կարէք  
դուք, ասէ, Աստուծոյ հաճոյ լինել և Մամովնայի։

13. Եւ արդ ես տեսանեմ ի սերում աշխարհիս և  
ոչ զգք աղատեալ յայսավիսի աղետից: Յետու ընդդէմ ըն-  
թերցաք զգեցեցին գրեալսն. ի պատճառու ուխտաւորու-  
թեան հեռացաք ի սուրբ ծնողացն, և արարաք բազում  
հարս օտարոտիս. զորս պատուերոց արժանի էր՝ անար-  
գեցաք, և յորս ոչն ունէաք իշխանութիւն դնել մեծա-  
րան՝ զախտ աղետից մերոց յոյժ ծախեցաք: Ազատա-  
ցաք ի հարկաց արքունի՝ զորս առանց մեղաց էր հար-  
կին, և մոտաք ընդ հարկաւ ստացուածոց, որ լի են ան-  
առակ ագահութեամբ: Զելաք յանկողինս սուրբ հար-

1. Եսանէ եռե շարուած այդ հինգ  
բայցըդ ազգու և գեղեցիկ տպաւուու-  
թիւն մը կ'ընեն Ընթերցողին մուտց վր-  
բայ: Եզչէ ուրիշ զրուածոց մէջ ալ  
գործածած է այդ մէկ: «Միայն հաւա-  
տա՛, յուսա՛, սիրեա՛ և անդէն կատարեցար  
խնդութեամբ»: Տես զմենիութիւն Հայր  
մերին էջ 202: — «Առ, լուաց: սրբ-

բեաց, զգեցյաց զանգերն երկինաւոր,  
և մերձեցյաց անգեն ի նոյն որդեգրու-  
թիւն է. Նոյն էջ 200: — «Ասցից  
քեզ միայն հաւատաս, միայն յուսաս, միայն  
կամեաց, միայն ախօրմեաց, միայն բռնոն  
հար և զիւս երթ»։ մեկնութիւն Զար-  
շառանաց էջ 312:

սանեաց, և արարաք մեղ բարձրագահոյս առաւել քան  
զաշխարհի: Փափկանամք յանկողինս յարմարեալս, և  
յածեալ կոծին միաք մեր ի խորհուրդս աղտեղիս զգի-  
շերն ասենայն:

14. Կօշիկք սոմից մերոց յանդիմանեն զմեզ, եթէ ոչ  
են սուրբ ճանապարհք սեր: Հանդերձք մեր աղաղակեն  
զգործոց մերոց, եթէ մերկ եմք յերկնաւոր զգեստուցն:  
Երիւարք մեր<sup>1</sup> ցացանեն զմեզ, եթէ ոչ եմք յափշտա-  
կելոց ընդ առաջ Տեսան ի վերայ օդոց: Շինուածք տ-  
պարանից մերոց յայտ առնեն, եթէ ոչ ունիմք մեք տա-  
ճար առանց ձեռագործի յերկինս, յոր մտանելոց են  
ամենայն դասք սոսկացելոցն յերկրաւոր ախտից: Կա-  
լուածք անդաստանաց մերոց կշտամբեն զմեզ, եթէ չիք  
մեր բաժին ի վիճակսն երկնաւորս:

15. Մրգուզք անյագք եղաք ի կերակուրս, և առանց  
չափոյ արբաք զինի պղտորիչ խորհրդոց և մտաց: Խոր-  
ի քոն ննջեմք ամենեքեան, և երազ թուի մեզ ճշմար-  
տութիւնն: Կափուցեալ են աչք մտաց մերոց ի տեսա-  
կան խորհրդոց, և անյագ պակլուտեալ հայել ի կեանս  
աշխարհիս: Արդելեալք զլսելիս ի սուրբ ընթերցուածոց,  
և ունկնդիր եմք բառաշման խաչանց մերոց: Ոչ եկն մեզ  
հոտ անոյշ ի չողւոյն սրբոյ, վասն զի սիրեցաք մեք զիւզ  
ախտալից աշխարհիս: Ոչ ճաշակեցին քիմք ոդւոց մերոց  
զկերակուր երկնային, վասն զի պարարեցաք զանձինս  
մեր ի զանազան խորտիկս<sup>2</sup>: Մութէ չ գոյն գիմաց մե-

1. Քանի որ հայածանաց այլ ես  
երկիւղ շեր մացեր, և կոստանդիինո-  
սէն ի վեր քրիստոնէութիւնը բարձակից  
եղեր էր քաղաքական իշխանութեան,  
հաւատացելոց նա մանաւանդ եկեղեցա-  
կանաց բարբը շատ ինկած էր: Օգոստի-  
նոս, Ասկերերան և այլք զառնապէս  
զանդատած են իրենց ազգակից քահա-  
նայից և երբեմ ալ եպիսկոպոսաց ըն-  
թացքէն. ասոնց յանդիմանութեանց քո-  
վը Եղիշէինը յուժք քօղարկեալ և մեզմ  
կը մեայ: Ճերոնիմոս աշխարհասէր ե-  
կեղեցականաց նկարագիրը ըրած ատե-  
նը կ'ըսէ թէ իշխանաց ապարանքէն չէին

հեռանար, մեծատանց ինջոյից հրաւի-  
րել տային զինքեանս, նոր փեսայի պէս  
հագուած սպուած և անուշահոս իւզերով  
օծուած կը պտուէին. ամենէն ընտիր զի-  
նեօք և խորտկօք կը պարարէին, առնէ  
տուն պյցելութեան զնացած ատենին  
նոյն իսկ բաղաքին փողոցներուն մէջ  
աեսանելի էին չեծեալ ի նժոյդ սիկա-  
ւեմ՝ որ թրակիրոյ թագաւորաց նախան-  
ձը կընար շարժել ։

2. Բազանտ լեզուաւ՝ խօրտիք, և  
արգի պարսկէրէն խօրտի, որպէս և հայե-  
րէնն՝ և ուտելի եփեալ հանդերձանոք,  
համագամք:

բոց, վասն զի ոչ զուարթացան երեսք մեր ի խորհուրդս սրբութեան: Յաւալից են անդամք մարմնոց մերոց, վասն զի յառաջ քան զմարմինս՝ զոգիս ախտացուցաք: Գերեզմանաց բռելոց նմանեցաք յանձինս մեր, վասն զի ունայն եմք ի շնորհաց առւրբ Հոգւյն:

16. Վասն այսորիկ և ամենայն չարիք եկին հասին յաւուրս սեր. կենդանեաւ մերով տեսաք դդիակունս անձանց մերոց: Քաջ նահատակք մեր անկան ի պատերազմի, և սուրբ քահանայք մեր խողխողեցան ի ձեռաց անօրինաց. գեղեցիկ երիտասարդքն զենան ի սպանումն, և բազում կուսանք վարեցան ի գերութիւն. գիրդ կանայք անկան ի տառապանս այրութեան, և բազում որբք կականին գառնապէս: Ազատ եկեղեցի անկաւ ի ծառայութիւն հեթանոսաց, և սուրբ քահանայք նորա կոփին չարչարին յանօրէն հարկահանաց<sup>1</sup>: Բարձեալ է ողորմութիւն յաշխարհէ, և հեռացեալ է գութ յիւրաքանչիւր մտաց: Երկինք ի վերուստ բարկացեալ են, և Երկիր ի ներքուստ կայ յերերի տատանման<sup>2</sup>:

17. Շինուածք մեր եղեն գերեզմանք դիականց մերոց, և վաստակք ձեռաց մերոց տապալեցան ի վերաց մեր: Պայթեաց և պատառեցաւ թանձրութիւն երկրիս, և բազում մարդիկ ի վայր հոսեցին: Ոչ սպասեաց որդի հօր, և ոչ քոյր զաշս եղբօր կարւ, և ոչ ել ձայն լարց կանանց ի վերայ ծննդոց իւրեանց, վասն զի եքոյց սով<sup>3</sup> զբերանս նոցա: Հզօրք խորտակեցան յանկարծակի

1. Այս տունս ազատ բառին իմաստը կը ցուցանէ մեզ միանգաման և ազատաց վայելած առանձնանորութեանց զլիաւորը՝ որ էր հարկ չվճարել: Թէւ սկսաւ աշխարհիկ ազատը ամենէն ծանրագումը չզնարին արեան» կը վճարէին, բայց զինուարութիւնը պարտաւորութիւնը մը չէր ի չայս: այլ արտօնութիւն և նշան իշխանութեան: Հարկ վճարողը ծառայ այսինքն սորուկ կամ գերի համարեալ էր: Եզիչէ վարդանայ պատմութեան մէջ կը բաժնէն զժողովուրդն յազաւոս և ի շինական: — Ուրիշ գրուածոյ մը մէջ կ'ըսէ: «Ամենեցուն

փութեալ արժան է ի պատուիրանս Առառութոյ՝ առնել և կատարել, արանց և կանանց, ծառայից եւ ազատաց», մեկնութիւն Հայր մերին:

2. Միծ կենանաշարժ մը եղած կ'երեի վարդանանց պատերազմէն քիչ ետքը, հանգերձ պատառաւածօք երկրի որոյ աւաւոր նկարագրութիւն մը կ'ընէ Եզիչէ յետագայ տողերուն մէջ: Յոզբան Խորենացւոյ ևս կը գտնեմք սասանմանց և գղրգմանց յիշատակութիւնք. տես յէջ 555:

3. Խորենացւոյ Ողբոց մէջ կը կարդանիք «գարուն երաշտացեալ, ամառն

իրրե զմայրս բարձունս Լիբանանու. հնծանկը եղեն բար-  
կութեան, և ճմիցան ամենեքեան իրրե զողկոյզս ընդ ո-  
տամբ, փոխանակ գինւոյ՝ արխն անմեզաց շայտեցաւ ի  
հանդերձս մեր: Դառնացաւ քան զլեղի կերակուր ի  
քիմս մեր, և ի բացախ դարձաւ սուրբ ըմպելիք մեր:  
Ծնդ հարեալն հարազ ամենեքեան յոդի և ի մարմինս  
ոեր, և ընդ մեռեալն զմահ ճաշակեցաք: Արդ ոչ ապա-  
քէն վասն մերոյ հեղութեան անցին այս անցք շարչա-  
րանաց ընդ աշխարհ:

18. Պն անդր ի բաց կաց յաշխարհէ, որ վազդ ե-  
լեր մեկնեցար յազետից սորա. թօթափեալ ընկետ ի  
բաց զիեղեւանս ախտալից աշխարհիս: Մերիեաց իրը  
զըմբշամարտիկ, օծ իւղովն Քրիստոսի, զի մի կռուեռ-  
ցին ի քեզ ձեռք ախոյանին: Իսկ արդ եթէ հեթա-  
նոաք', որ ըմբռնեցան ի աեսական իմաստութիւն, ոչ  
միայն ի ստացուածոց ի բաց կացին, այլ և յօրինաւոր  
կերակրոց հրաժարեցին, համառօտ և անպաճոյն ըմպե-  
լեզք շատացան յանձինս իւրեանց, և առաքինի մա-  
հուամբ վախճանեցան ի կատարած կենաց իւրեանց,  
որչափ ևս առաւել մեք պարտիմք նմանողք լինել սիրե-  
լեացն Քրիստոսի, որք հրեշտակակրօնք զանձինս կար-  
գեցին, խառնելով զինքեանս ի դունդս վերնոցն:

19. Եկայք և մեք, ով միայնացեալք, զօրէն թշնա-  
մեացն մոցուք ի մերն ստացուած իրը յօտար երկիր,  
արմատախիլ զժառատոնկս թշնամեյն կոտորեացուք.  
իրրե զզերի առեալ ծախիցեալք ի նեղեալս զինչս մեր,  
ոչ զի ատիցեմք զազգականս, այլ զի սիրիցեմք զազքատ-

անձրեայրյու, աշունն ձեռնաշեալ, ձեռն  
սասակասառոյց, մրրկալից, յերկարա-  
ցեալ. հոդմք բքարարք, խորշակաբերք,  
ախտահաւակք, ամնաք հրընկեցք, կարկ-  
տածուք. անձրեք անժամանակք և ան-  
պիտանք, ոդք գառնաշռունչք, եղեմեար-  
կուք ջրոցն առաւելուն անօգուտ և  
նուազել անհնարաւոր. երկրի անբերու-  
թիւնը պողոց և անաձելուրիւնը կեն-  
դանեաց, այլ և սասանմունք և դըպըրդ-  
մունք: Եղիշէի ակնարկած սովոր կը-

նայ հետեանք մը ըլլալ ընդհանուր ան-  
քերաւթեան յորմէ կը զանզատի խորե-  
նացին, կամ մասնական սուելեաց պա-  
կառութիւն մը, որ կը յաջորդէ մեծա-  
մեծ երկրաշարժից, յարժամ ոչ բնակա-  
րան կը մեայ կանգուն, ոչ ֆակացք, ոչ  
փուռն և մողովուրդը սարսափած ցիր  
ու ցան կ'ըլլալ:

1. Կ'ակնարկէ ասու զլոտոյիկեանս և  
զայլ կարգս նախնի հեղէն իմաստնոց:

սըն, որ են զօրականք Քրիստոսի և ճշմարիտ բարեխուզք: Ապա թէ աստէն կապիս ընչիւք, և քեզէն վարես զքեզ յանդարձ գերութիւն, ուր չիք անդ գինք փրկանաց: Փութա փութա ճեպեա, եղբայր, ապրիլ յայնալիսի անողորմ գեհենէ. զի կարիցես հասանել յամուր քաղաքն, ուր ոչ գոյ քեզ կասկած կամ երկիւղ խախտիլ և վարիլ ի գերութիւն:

20. Եւ եթէ եկեսցես զհետ գեղեցիկ վարդապետաթեան հարցն, զորս վերապոյնն գծագրեցի քեզ զվարս սուրբ միայնակեցացն, յայնժամ կարասցես համբառնալ զաշո մոտացդ առանց ախտից չարչարանաց, հայել և աեսանել զքեզ գեր ի վերոյ քան զամենայն երկինս: Երանի տայցես անձինդ, քաջապէս ճողովրեալ ի վշտալից կենաց աշխարհիս, և խառնեսցիս յերամբ միայնակեցացն, ի գունդու սրբոց արդարոյն, ի վիճակ առաքելոցն, ի գումարս մարդարէիցն, ի կաճառս մարտիւրոսացն, ի բանակս հրեշտակացն և ի ժողովս անդրանկացն, ի մեծ քաղաքն երկինից, ի բազմականս արբահամեան, և ի կերակուրս երկնայինս և յըմսկելիս անկարօսս: Դու ես այնուհետե մարդարէն, որ ոչ պատուեցար ի մարմնական աշխարհիս, այլ թեածեալ թոռուցար յանմարմին աշխարհի, և հանդուցեալ դադարեցեր յանապական ուրախութիւնն: Յորս լիցի և մեզ՝ վերջին գրչութեամբ աշխատովացս<sup>1</sup> միարանութեամբ սուրբ ուխտիւս վայելել, չնորհօքն ջեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վասոք յաւխտեանս. ամէն:

1. Զեք կարծեր որ այդ երեք բառ ներդ Եղիշէին ըլլան. զսոսս բառնալով պարբերութիւնն ամրողչ է: Հաւանորէն գրչագրաց կողմանէ աւելցուած են: —

Այս ճառս ութերորդ Յեղանակին ժամանակամիջոցին մէջ զրուած կ'երեի: Քննէ զհատածս 16 և 17. ճառիս:



